Հայերենի

Fernando Aramburu

PATRIA

NOVELA

Ֆերնանդո Արամբուրու

հավերնիք

ՎԵՊ

Թարգմանությունն իսպաներենից՝
Ալիս Տեր-Ղևոնդյանի

ԵՐԵՎԱՆ
2022

ՀՏԴ 821.134.2-31 Արամբուրու
ԳՄԴ 84(4Իսպ)-44
Ա 830

Ա 830 Արամբուրու Ֆերնանդո
Հայրենիք: Վեպ / Ֆ. Արամբուրու; Թարգմանությունն իսպաներենից՝
Ա. Տեր-Ղևոնդյանի.- Եր.: Newmag, 2022.- 624 էջ:

Ֆերնանդո Արամբուրուն «Հայրենիք» վեպը գրել է, երբ բասկյան ETA ահաբեկչական խմբավորումը հայտարարել է զինված պայքարը դադարեցնելու մասին: Գրողը ցանկացել է պարզել, թե այդ ողբերգական ժամանակաշրջանում ինչ է պատահել մարդկանց հետ, ինչու էին շատերն աջակցում սպանություններին, համակրում բռնարարներին: Ինչու էին երկչոտաբար լռում նրանք, ովքեր համաձայն չէին:

Վեպի առանցքում երկու բասկ ընտանիքների հարաբերություններն են Սան Սեբաստիանի արվարձանում: Արամբուրուն, ինքն էլ ծնված լինելով այստեղ, ներկայացնում է անկախության համար պայքարի ահաբեկչական մեթոդները, որոնք թշնամություն են սերմանում երկու մտերիմ ընտանիքների միջև և խեղում են շատերի ճակատագրերը: Նաև ցուցադրում է իսպանական կենտրոնական իշխանության դաժան պատասխանը բասկերի բարձրացրած խնդիրներին: Հեղինակը հակամարտության որևէ կողմին չի արդարացնում կամ դատապարտում: Նա ի ցույց է դնում մարդկանց ողբերգությունն ու այն հաղթահարելու ճանապարհը:

ՀՏԴ 821.134.2-31 Արամբուրու
ԳՄԴ 84(4Իսպ)-44

ISBN 978-9939-884-60-8
Patria © Fernando Aramburu, 2016
Published by agreement with Tusquets Editores, Barcelona, Spain.
Ֆերնանդո Արամբուրու, «Հայրենիք» © 2022, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել TUSQUETS EDITORES գրական գործակալության հետ կնքած պայմանագրով:

Co-funded by the
Creative Europe Programme
of the European Union

The book is published and co-funded by
the Creative Europe Programme of the European Union

Գիրքը հրատարակվել է Եվրոպական
Միության «Ստեղծարար Եվրոպա» ծրագրի
համաֆինանսավորմամբ:

The content of this book represents the views of the author only and is his/her sole responsibility. The European Commission and the Agency do not accept any responsibility for use that may be made of the information it contains.

Եվրահանձնաժողովը և Գործակալությունը որևէ պատասխանատվություն չեն կրում գրքում արտահայտված մտքերի համար:

Բովանդակություն

1 Բարձրակրունկներ՝ մանրահատակին 11
2 Մեղմ հոկտեմբեր 15
3 Պոլյոե գերեզմանոցում՝ Չատոյի հետ 19
4 Դրանց տանը 23
5 Տեղափոխություն՝ մթության քողի տակ 28
6 Չատո՛, entzun. 31
7 Քարեր՝ ուսապարկում 36
8 Վաղեմի պատահար 40
9 Կարմիր 44
10 Հեռախոսազանգեր 48
11 Ջրհեղեղ 51
12 Պատնեշը 56
13 Թեքահարթակը, լոգասենյակը, խնամողը 61
15 Հանդիպումներ 69
16 Կիրակնօրյա պատարագ 73
17 Զբոսանք 78
18 Արձակուրդ՝ կղզում 83
19 Տարաձայնություններ 87
20 Վաղաժամ սուգ 92
21 Նրանցից լավագույնը 96
22 Հուշերի սարդոստայնում 101
23 Անտեսանելի մի պարան 105
24 Խաղալիք թևնոցը 109
25 Մի՛ արի 115
26 Դրա՞նց կողմից ես, թե՞ մեր 120
27 Ընտանեկան ճաշ 124
28 Եղբոր ու քրոջ զրույց 129
29 Տերևի երկու գույները 133
30 Պարպել հիշողությունը 138

31 Երկխոսություն՝ մթան մեջ 143
32 Թղթեր և իրեր 147
33 Սպառնագրեր 151
34 Թերթելով հիշողության էջերը 156
35 Հրկիզվող արկղը 160
36 Ա կետից Բ կետը 165
37 Կռվատորթը 170
38 Գրքեր 175
39 Ես կացինն եմ, դու՝ օձը 179
40 Երկու տարի՝ առանց դեմքի 185
41 Կյանքը՝ հայելու մեջ 189
42 Լոնդոնյան պատմությունը 193
43 Նշանվածները 200
44 Նախազգուշական միջոցներ 205
45 Գործադուլ 209
46 Անձրևոտ մի օր 216
47 Ի՞նչ եղավ նրանց ճակատագիրը 220
48 Երկրորդ հերթափոխ 225
49 Մի՛ փախիր պատասխանատվությունից 230
50 Սիփայի ոտքը 235
51 Քարհանքում 240
52 Մեծ երազանք 246
53 Թշնամին՝ տանը 250
54 Սուտ ջերմություն 254
55 Իրենց մայրերի նման 259
56 Սալորները 264
57 Պահեստազորում 268
58 Խաղուպար 274
59 Ապակե թել 278
60 Բժիշկներին՝ բժշկուհիներ 284
61 Հաճելի մանրուք 289
62 Տան խուզարկությունը 293

63 Քաղաքական նյութեր 297
64 Ո՞ւր է զավակս 301
65 Օրինություն 305
66 Կլաուս-Դիտերը 310
67 Սիրո երեք շաբաթ 315
68 Ուսումնառության ավարտը 320
69 Խզումը 326
70 Հայրենիքն ու ստերը 331
71 Ծուռ աղջիկը 335
72 Սրբազան առաքելություն 339
73 Եթե մնացել ես, մեջն ես 345
74 Անձնական ազատագրական շարժում 351
75 Հախճապակյա սափոր 355
76 Որքան պետք է, լա՛ց եղիր 362
77 Սև մտադրություններ 367
78 Կարճատև դասընթաց 372
79 Ծովամայրի հպումը 377
80 «Օրիա» դիվերսիոն խումբը 382
81 Միայն տխուր բժիշկն էր եկել հրաժեշտ տալու 387
82 He's my boyfriend 391
83 Չար բախտ 396
84 Մարդասպան բասկեր 401
85 Բնակարանը 407
86 Ուրիշ ծրագրեր ուներ 412
87 Սունկ ու եղինջ 416
88 Արնոտ հաց 421
89 Տրամադրությունը ճաշասենյակում 426
90 Համա՛ր թե վախեցանք 432
91 Ցանկը 438
92 Ամենասիրելի զավակը 444
93 Փակբերան մարդկանց երկիրը 450
94 Ամայա 455

95 Կժով գինի 460
96 Ներեան և միայնությունը 466
97 Մարդասպանների երթը 473
98 Հարսանիք՝ սպիտակ զգեստով 478
99 Չորրորդ անդամը 482
100 Ձախողումը 488
101 Txoria txori 493
102 Առաջին նամակը 500
103 Երկրորդ նամակը 505
104 Երրորդ ու չորրորդ նամակները 509
105 Հաշտեցում 514
106 Գերության համախտանիշ 520
107 Հանդիպումներ հրապարակում 525
108 Բժշկական տեսանկյունից 530
109 Երբ քամին փչում է ածխի վրա 535
110 Իրիկվա խոսակցությունը 540
111 Մի գիշեր՝ Կալամոչայում 545
112 Թոռնիկի հետ 552
113 Զառիվերի վերջում 556
114 Բաժանարար ապակին 561
115 Մերսում 566
116 Արաբական սրահ 572
117 Անտեսանելի որդին 578
118 Անկոչ այցելուն 584
119 Համբերություն 588
120 Աղջիկն Օնդառոայից 593
121 Զրուցասենյակի խոսակցությունները 600
122 Քո բանտը, իմ բանտը 605
123 Շրջանն ամբողջացավ 610
124 Թրջվածություն 614
125 Կիրակի առավոտ 618

1

Բարձրակրունկներ՝ մանրահատակին

Կործանվելու է խեղճը սրա ձեռքը: Ժայռերին բախվող ալիքի նման: Մի քիչ փրփուր կմնա, ու վերջ: Չի՞ տեսնում, որ մարդամեկը նրա առջև նույնիսկ դուռը չի բացում: Հնազանդ է աղջիկս, չափից ավելի հնազանդ:

Ու մեկ էլ էդ բարձրակրունկ կոշիկներն ու կարմիր շուրթերը՝ քառասունհինգ տարեկանում, հանուն ինչի՞: Քո տեսակի դեպքում, աղջի՛կս, քո պաշտոնի ու առածդ ուսման, ի՞նչն է ստիպում՝ դեռահասի պես քեզ պահես: Aita*-դ որ քեզ տեսներ, է՛…

Մեքենա նստելիս Ներեան հայացքը նետեց պատուհանին՝ ենթադրելով, որ կիսաթափանց վարագույրի հետևից մայրը, սովորության համաձայն, նրան դիտելիս կլինի: Բիչո՛րին աղջկան նայում էր ցավով, ունքերը կիտած, ինքնիրեն շշնջալով, թե էս խեղճը իսկական պարգև է էդ սնափառի համար, որի մտքով երբեք չի անցել մեկին երջանկացնել: Չի՞ հասկանում, թե ինչ աստիճանի հուսահատված պիտի լինի կինը, որ տասներկու տարվա ամուսնությունից հետո էլի փորձի գայթակղել իր ամուսնուն: Ինչ-որ տեղ էլ լավ է, որ երեխա չեն ունեցել:

Ներեան տաքսի նստելուց առաջ ձեռքով հրաժեշտ տվեց: Մայրը, երրորդ հարկում վարագույրի հետևում թաքնված, հայացքը փախցրեց: Կըղմինդրե տանիքներից այն կողմ երևում էր ծովի լայն շերտը, Սանտա Կլարա կղզու փարոսը, հեռվում՝ ամպերի ծվեններ: Եղանակի տեսության կինը արև էր խոստացել: Ու Բիչո՛րին, ա՛խ, էս ոնց եմ ծերացել, նորից նայեց փողոցին, բայց տաքսին արդեն անհետացել էր:

Հետո տանիքներից անդին, կղզու ու հորիզոնի կապույտ գծից և նույնիսկ հեռավոր ամպերից էլ անդին վաղուց կորսված անցյալում որոնեց իր դստեր հարսանիքի դրվագները: Ու նորից նրան տեսավ Բարի Հովիվ մայր տաճարում սպիտակ զգեստով, ծաղկեփնջով, անթաքույց երջանիկ: Տեսնելով, թե ինչպես է աղջիկը դուրս գալիս եկեղեցուց՝ սլացիկ, ժըպտադեմ, գեղեցիկ, վատ կանխազգացում ունեցավ: Երեկոյան, երբ տուն

* Aita (բասկ.՝ շեշտվում է վերջին վանկը՝ aitá), հայր (Ծանոթագրությունները՝ **new**mag-ի):

վերադարձավ, քիչ էր մնում՝ նստեր Չատոյի լուսանկարի առջև ու նրան խոստովաներ իր վախերը, բայց գլուխը ցավում էր, բացի այդ՝ ընտանեկան ու հատկապես աղջկան վերաբերող հարցերում Չատոն գերզգայուն դառնալու սովորություն ուներ: Լուսանկարները, անշուշտ, չեն արտասվում, բայց այդ մարդու աչքերն արագ էին լցվում. դե՛, պարզ է, չէ՞, ինչ նկատի ունեմ:

Կրունկները Կիկեի ախորժակը գրգռելու համար էին. ոչ ա՛յն ախորժակը, որ ուտելով են հագեցնում: Կը՛տ, կը՛տ, կը՛տ. քիչ առաջ լսում էր դրանց ձայնը մանրահատակի վրա: Երևի ամբողջ հատակը ծակծկել է: Տան անդորրը չխախտելու համար բան չասաց աղջկան: Մի քանի րոպեով էին մտել: Եկել էին հրաժեշտ տալու: Իսկ տղամարդու բերանից առավոտ ժամը իննին արդեն վիսկիի հոտ էր գալիս կամ էլ իր ծախած մեկ ուրիշ խմիչքի:

— Ama*, հաստա՞տ տակից դուրս կգաս:

— Ինչո՞ւ ավտոբուսով չեք գնում օդանավակայան: Էստեղից մինչև Բիլբաո տաքսին ահագին թանկ կնստի:

Տղամարդն էլ, թե.

— Մի՛ անհանգստացիր:

Ականարկեց ճամպրուկները, անհարմարությունն ու դանդաղությունը:

— Այո՛, բայց ժամանակ դեռ կա, չէ՞:

— Ama, մի՛ պնդիր: Որոշել ենք տաքսիով գնալ: Ամենահարմար տարբերակն է:

Կիկեն անհամբերության նշաններ էր ցույց տալիս.

— Միակ հարմար տարբերակն է:

Հավելեց, որ գնում է փողոցում ծխելու, մինչ նրանք կխոսեն: Այս մարդն օծանելիք էր բուրում: Բայց բերանից խմիչքի հոտ էր փչում ու էն էլ՝ առավոտ իննին: Հրաժեշտ տվեց՝ միջանցքի հայելու մեջ իրեն ուսումնասիրելով: Ինքնահավանի մեկը: Հետո էլ՝ հրամայակա՞ն, թե՞ բարյացակամ, բայց չոր, ասաց Ներեային.

— Շատ չուշանաս:

Խոստացավ հինգ րոպե: Բայց հինգը տասնհինգ դարձավ: Մենակ մնացին, ու մորն ասաց, որ այս ճամփորդությունը Լոնդոն շատ կարևոր է իր համար:

---

* Ama (բասկ.՝ շեշտվում է վերջին վանկը՝ amá), մայր:

— Չեմ պատկերացնում, թե դու ինչ երևելի դեր պիտի ունենաս ամուսնուդ և նրա հաճախորդների զրույցներում: Գուցե ինձ չես ասել, բայց իր ընկերությունո՞ւմ ես աշխատում:

— Լոնդոնում պետք է լրջորեն փորձեմ փրկել մեր ամուսնությունը:

— Եվս մի փո՞րձ:

— Վերջինն է լինելու:

— Իսկ այս անգամ մարտավարությունդ ո՞րն է լինելու: Կողքն ես մնալու, որ առաջին պատահածի հետ քեզ չդավաճանի՞:

— Ama, լա՛վ էլի: Մի՛ բարդացրու:

— Շատ գեղեցիկ ես: Վարսավիրանոցդ փոխե՞լ ես:

— Չէ՛, նույն տեղն եմ գնում:

Հանկարծ Ներեան ձայնն իջեցրեց: Նրա առաջին շշնջոցին մայրը նորից նայեց դեպի շքամուտքը, ասես վախենար, որ մեկը նրանց լսում է: Առանձնապես բան չկա, պարզապես երեխա որդեգրելու գաղափարից հրաժարվել են: Այդքան խոսելուց հետո, թե միևնույն է՝ ով կլինի՝ չինացի՞, ռո՞ւս, թե՞ սևամորթ: Տղա՞, թե՞ աղջիկ: Ներեան դեռ հույսը չէր կորցրել, բայց Կիկեն հետ էր կանգնել: Հիմա ուզում է իր երեխան ունենալ, մարմինն՝ իր մարմնից*:

— Որոշել է Աստվածաշո՞ւնչ մեջբերել:

— Իրեն ժամանակակից մարդու տեղ է դրել, բայց ավելի պահպանողական է, քան քաղցր կաթնաբրինձը**:

Ներեան հետաքրքրվել էր որդեգրության մանրամասներով և պարզել, որ իրենք համապատասխանում են բոլոր չափանիշներին: Փողը պետք էր որ խնդիր չլիներ: Պատրաստ էր աշխարհի մյուս ծայրը հասնել՝ վերջապես մայր դառնալու համար, նույնիսկ եթե ինքը չէր երեխային լույս աշխարհ բերողը: Բայց Կիկեն կտրուկ ընդհատել էր խոսակցությունը: Չէ՛ որ, չէ՛:

— Էդ տղեն մի տեսակ անզգա է, չե՞ս կարծում:

— Ցանկանում է իր տղուկին ունենալ, որ իրեն նման լինի ու մի օր էլ «Ռեալում» խաղա: Այդ գաղափարով համակված է, ama: Եվ կունենա: Ո՜ւֆ, որ մի բան է մտցնում գլուխը… դե՛, չգիտեմ՝ ում հետ: Որևէ մեկի, որը

* Ծննդոց 2:23:

** Քաղցր կաթնաբրինձ (թանձր կաթնով), Իսպանիայում ամենատարածված և դասական աղանդերն է:

պատրաստ կլինի: Հարցեր մի՛ տուր: Փոխնակ մայր կգտնի ու կվճարի՝ որքան պետք է: Ես էլ նրան կօգնեմ առողջ կին գտնել, որ իր ուզածն անի:

— Խելքդ թռցրել ես:

— Նրան դեռ չեմ ասել: Կարծում եմ՝ Լոնդոնում ձևը կգտնեմ: Շատ եմ մտածել: Նրան դժբախտացնելու իրավունք չունեմ:

Դռան մոտ հրաժեշտ տալով՝ թեթև ողջագուրվեցին: Բիչո՛րին, թե՝ իհարկե, տակից դուրս կգամ, բարի ճանապարհ: Ներեան էլ աստիճանավանդակից, մինչ վերելակի էր սպասում, ինչ-որ բան ասաց բախտը չբերելու մասին, ու որ երջանկությունից հրաժարվել պետք չէ: Հետո մորը խորհուրդ տվեց դռան առջևի գորգիկը փոխել:

2

Մեղմ հոկտեմբեր

Չատոյի դեպքից առաջ հավատացյալ էր, բայց հիմա՝ ոչ: Երիտասարդ ժամանակ այդքան բարեպաշտ լինելուց հետո: Նույնիսկ միանձնուհի դառնալու դուռն էր հասել: Ինքն ու այն ընկերուհին, որին ավելի լավ է չհիշել: Երկուսն էլ վերջին պահին տարհամոզվեցին, երբ արդեն նորընծայությունից մի քայլ էր մնում: Հիմա մեռյալների հարության, հավերժական կյանքի, Արարչի ու Սուրբ Հոգու թեմաները նրան մտացածին են թվում:

Բիչո՛րին շատ նեղվեց եպիսկոպոսի ասած որոշ բառերից, բայց չհամարձակվեց չսեղմել այդչափ կարևոր մարդու՝ մի տեսակ կպչուն ձեռքը: Փոխարենը ուղիղ նրա դեմքին նայեց՝ աչքերի փայլով լռելյայն հասկացնելով, որ այլևս հավատացյալ չէ: Չատոյին դագաղում տեսնելը բավարար էր, որ Աստծո հանդեպ հավատը փուչիկի պես պայթեր: Նույնիսկ ֆիզիկապես դա զգաց:

Այդուհանդերձ, ժամանակ առ ժամանակ գնում է պատարագի՝ երևի թե սովորությանը տուրք տալով: Նստում է եկեղեցու վերջին նստարանին, նայում է ներկաների մեջքուվզին, ինքն իր հետ խոսում: Բանն այն է, որ տանը շատ միայնակ է: Բար ու սրճարան գնացող էլ չէ: Գնումների՞: Ըստ անհրաժեշտության: Կոկետությունը (ևս մի փուչի՞կ) Չատոյի դեպքից հետո հօդս ցնդեց: Ու եթե Ներեան չդժգոհեր, ամեն օր նույն հագուստը կհագներ:

Խանութ գնալու փոխարեն նախընտրում է նստել եկեղեցում ու լուռ դավանել իր աթեիզմը: Իրեն թույլ չի տալիս անհավատությունն ու արհամարհանքն արտահայտել այնտեղ հավաքված ծխականներին: Դիտում է պատկերներն ու ասում-մտածում է՝ ո՛չ: Երբեմն այդպես ասում-մտածում է՝ մի քիչ գլուխը տարուբերելով՝ ի նշան բողոքի:

Եթե պատարագ է մատուցվում, մի քիչ ավելի երկար է մնում: Այդ ժամանակ ինչ էլ ասի քահանան՝ չի համաձայնում: Աղոթե՛նք: Ո՛չ: Սա՛ է Քրիստոսի մարմինը: Ո՛չ: Ու այդպես շարունակ: Երբեմն էլ հոգնածությունից մի փոքր մրափում է՝ գլուխը աննկատ հենելով կրծքին:

Երբ դուրս եկավ Անդիա փողոցի ճիզվիտների եկեղեցուց, արդեն մթնել էր: Հինգշաբթի էր: Հաճելի եղանակ: Օրվա երկրորդ կեսին նկատել էր,

որ դեղատան լուսացուցանակն արձանագրել է 20 աստիճան տաքություն: Խճողում, անցորդներ, աղավնիներ: Մի ծանոթ դեմք նկատեց: Անվարան մյուս մայթն անցավ: Ուղղության այդ կտրուկ փոփոխությունը նրան ստիպեց ճանապարհը շարունակել Գիպուսկոա հրապարակով: Քայլեց ջրավազանը շրջանցող ուղով: Նայեց բադիկներին: Վաղուց այս կողմերով չէր անցել: Երևի թե Ներեայի մանկության օրերից: Հիշեց, որ այն ժամանակ սև կարապներ կային: Դի՛ն-դո՛ն-դի՛ն: Խորհրդի շենքի ժամացույցը ընդհատեց նրա մտորումները:

Ժամը ութն էր: Հաճելի պահ, մեղմ հոկտեմբեր: Հանկարծ մտաբերեց, որ Ներեան առավոտյան ինչ-որ բան ասաց. որ դռան առջևի գորգի՞կը փոխի: Չէ՛, որ պետք չէ երջանկությունից հրաժարվել: Պա՛հ, մի հիմարություն, որ ասում են տարեցներին՝ տրամադրությունը բարձրացնելու համար: Բիչո՛րին պատրաստ էր ընդունել, որ երեկոն հրաշալի էր: Բայց ուրախությունից թռչկոտելու համար ավելի ծանրակշիռ պատճառ էր պետք: Օրինակ՝ ի՞նչ: Ի՞նչ իմանամ: Թող մեռածներին կենդանացնող մեքենա ստեղծեն ու ամուսնուս վերադարձնեն: Հետո մտորեց, որ այսքան տարի անց գուցե կամաց-կամաց պետք է մտածել մոռանալու մասին: Մոռանա՞լ: Ոչ մի դեպքում:

Օդը հագեցած էր ծովի ու ջրիմուռների հոտով: Ամենևին ցուրտ չէր, քամի չկար, ու երկինքն էլ պարզ էր: Ինչը բավարար առիթ էր՝ ոտքով տուն գնալու ու ավտոբուսի փողը խնայելու համար: Ուրբյետա փողոցում էր, երբ լսեց իր անունը: Հստակ լսեց, բայց չուզեց հետ նայել: Նույնիսկ արագացրեց քայլերը, բայց ապարդյուն: Հետևից լսվեցին արագ քայլեր:

— Բիչո՛րի՛, Բիչո՛րի՛:

Ձայնը չափից ավելի մոտ էր՝ չլսելու տալու համար:

— Չիմացա՞ր: Ասում են, որ էլ ահաբեկումներ չեն լինելու:

Բիչո՛րին չէր մոռացել այն օրերը, երբ այդ նույն հարևանուհին ամեն ինչ անում էր, որ չհանդիպեն աստիճանավանդակին: Նույնիսկ սպասում էր փողոցի անկյունում՝ գնումների տոպրակը ոտքերի արանքը դրած, անձրևի տակ թրջվելով, միայն թե միասին չհայտնվեն շքամուտքում:

Ստեց.

— Այո՛, քիչ առաջ ինձ ասել էին:

— Լավ նորություն է, չէ՞: Վերջապես հանգիստ կապրենք: Վաղուց էր պետք:

— Դե՛, տեսնենք, տեսնենք:

— Ես հատկապես ուրախ եմ նրանց համար, ովքեր այդքան տառապեցին դրա պատճառով: Թող այս ամենը վերջանա, ու ձեզ հանգիստ թողնեն:

— Ի՞նչը վերջանա:

— Թող մարդկանց այլևս չստիպեն տառապել ու իրենց ուզածին հասնեն առանց սպանության:

Ու քանի որ Բիչո՛րին լուռ էր ու խոսակցությունը շարունակելու ցանկություն չէր ցուցաբերում, հարևանուհին հրաժեշտ տվեց՝ հանկարծ հիշելով, որ շտապում է:

— Գնամ. տղայիս խոստացել եմ արքայաձուկ պատրաստել ընթրիքին: Շատ է սիրում: Եթե տուն ես գնում, միասին քայլենք:

— Ո՛չ, ինձ էս կողմերում սպասում են:

Միևնույն է, հարևանուհուն չտեսնելու համար մայթն արդեն փոխել էր, այնպես որ բավական երկար ժամանակ աննպատակ շրջում էր փողոցներով: «Որովհետև եթե այդ անտաշը տղայի համար (որը ոչ միայն հիմարի, մի քիչ էլ տկարամիտի տպավորություն է թողնում) ձուկը մաքրելու ընթացքում լսի, որ իրենից քիչ հետո տուն եմ հասել, կմտածի՝ տե՛ս, է՛, չէր ուզում հետս գալ: Բիչո՛րի: Ի՞նչ: Չարանում ես, բայց քանի անգամ եմ քեզ ասել որ… Լա՛վ, ինձ հանգի՛ստ թող»:

Ավելի ուշ՝ տան ճանապարհին, ձեռքը հպեց մի ծառի կնճռոտ բնին ու ինքն իրեն ասաց. «Շնորհակալ եմ, որ հանդուրժում ես այս ամենը»: Հետո ձեռքը դրեց մի շենքի պատին ու կրկնեց նույն բառերը: Շարունակելով ճանապարհը՝ նույն ձևով վարվեց աղբամանի, նստարանի, լուսացույցի ու ընթացքում հանդիպած իրերի հետ:

Շքամուտքում լույս չկար: Մի պահ ուզում էր վերելակով բարձրանալ: Ուշադրությո՛ւն: Աղմուկը կարող է ինձ մատնել: Որոշեց բոբիկ բարձրանալ երեք հարկ: Նույնիսկ իր շնորհակալությունը շշնջաց բազրիքին՝ հանդուրժող լինելու համար: Որքան հնարավոր է զգույշ՝ բանալին կողպեքը մտցրեց: Այս գորգիկի հետ Ներեան ի՞նչ խնդիր ունի: Ես չեմ հասկանում այդ աղջկան ու երևի թե երբեք էլ չեմ հասկացել:

Քիչ անց հեռախոսը զնգաց: Իկացա* կատուն՝ սև մորթու մի գունդ, մրափում էր բազմոցին: Առանց դիրք փոխելու, աչքերը կիսափակ՝ հետևեց իր տիրուհու քայլերին դեպի հեռախոսը: Բիչո՛րին սպասեց մինչև զանգերը վերջանան, ու ճանաչելով էկրանին հայտնված հեռախոսահամարը՝ ինքը զանգեց:

Շավիերն էր՝ ոգևորված: Ama, ama: Հեռուստացույցը միացրո՛ւ:

— Ինձ արդեն ասել էին: Ո՞վ: Վերևի հարևանուհին:

— Հա՛, կարծում էի՝ տեղյակ չես:

Ասաց, որ համբուրում է մորը, նա էլ թե՝ ես էլ՝ քեզ. ավել բան չխոսեցին, իրար հրաժեշտ տվեցին: Բիչո՛րին վճռեց՝ հեռուստացույց միացնողը չեմ: Բայց քիչ անց հետաքրքրասիրությունը հաղթեց: Էկրանին հայտնվեցին սեղանի մոտ նստած երեք տիպեր՝ դիմակներով ու կնգուղներով, Ku Klux Klan-ի ոճով, սպիտակ սփռոց, հայրենասիրական պաստառներ, խոսափող: Բիչո՛րիի մտքով անցավ՝ տեսնես խոսողի մայրը կճանաչի՞ որդու ձայնը: Պատկերը նրա մոտ աննկարագրելի զզվանք էր առաջացնում, նաև աղիներն էր խառնում: Չդիմացավ, անջատեց հեռուստացույցը:

Իր համար օրն ավարտվել էր: Ժամը քանի՞սն էր: Տասի մոտ էր: Կատվի ջրամանը լցրեց ու սովորականից շուտ գնաց պառկելու՝ առանց ընթրելու ու գիշերային սեղանիկի վրայի լրագիրը բացելու: Գիշերանոցով մի պահ կանգնեց ննջարանում՝ Չատոյի լուսանկարի առջև.

— Վաղը կգամ քեզ մոտ, կպատմեմ: Չեմ կարծում, որ կուրախանաս, բայց, ի վերջո, օրվա գլխավոր լուրն էր, իմանալու իրավունք ունես:

Լույսն անջատեց, փորձեց աչքերից գոնե մի արցունք քամել: Ապարդյուն: Աչքերը չոր էին: Ներեան էլ չզանգեց: Նույնիսկ իրեն նեղություն չտվեց հայտնելու, որ հասել են Լոնդոն: Դե՛, պարզ է, շատ է զբաղված իր ամուսնությունը փրկելու գործով:

* Իկացա (բասկ.), ածուխ:

3

Պոլյոե գերեզմանոցում՝ Չատոյի հետ

Արդեն մի քանի տարի է, ինչ ոտքով չի բարձրանում Պոլյոե: Կարող է, իհարկե, բայց հոգնեցուցիչ է: Ու էնպես չէ, որ ուշադրություն է դարձնում հոգնածությանը, բայց հանուն ինչի՞, ա՛խր, հանուն ինչի՞: Բացի այդ՝ օրեր են լինում, որ փորի շրջանում ծակոցներ է զգում: Բիչո՛րին ինը համարի ավտոբուսն է նստում, որն իրեն հասցնում է գրեթե գերեզմանոցի մուտքի մոտ, իսկ երբ ավարտում է այցելությունը, ոտքով իջնում է քաղաք: Դե՛, իջնելն արդեն լրիվ ուրիշ բան է:

Նստեց մի տիկնոջ հետևում. ավտոբուսում ուրիշ ուղևոր չկար: Ուրբաթ, հանգիստ օր, լավ եղանակ: Մուտքի կամարի վրա կարդաց. «ՇՈՒՏՈՎ ՁԵՐ ՄԱՍԻՆ ԿԱՍՎԻ ՆՈՒՅՆԸ, ԻՆՉ ՀԻՄԱ ՄԵՐ ՄԱՍԻՆ ԵՆ ԱՍՈՒՄ. ՄԱՀԱՑԵ՛Լ ԵՆ»: Էդ ձեր մռայլ գրվածքներով ինձ չե՛ք տպավորի: Ողջ, թե որդերի կեր դարձած, միևնույն է, մենք աստեղային փոշի ենք (այդ խոսքերը հեռուստացույցով էր լսել): Ու թեև ատում էր անդուր այդ գրությունը, չէր կարողանում գերեզմանոց մտնել՝ առանց մի պահ կանգնելու և կարդալու:

Աղջի՛կ, վերարկուն կարող էիր տանը թողնել: Ավելորդ էր: Հագել էր՝ զուտ սև հագած լինելու համար: Առաջին տարվա ընթացքում սուգը պահեց: Հետո զավակները համոզեցին, որ նորմալ կյանքով ապրի: Նորմալ կյանքը ո՞րն է: Այդ միամիտները գաղափար իսկ չունեն, թե ինչի մասին են խոսում: Ուզում էր՝ իրեն հանգիստ թողնեն, ուստի հետևեց նրանց խորհրդին: Այնուհանդերձ, գերեզմանների միջև գույնզգույն հագուստով քայլելը իր կարծիքով անհարգալից վերաբերմունքի նշան էր: Այնպես որ, վաղ առավոտյան, պահարանը բացելով, մի սև բան փնտրեց, որ քողարկի իր հագած կապույտի տարբեր երանգները: Վերարկուն ձեռքն ընկավ, վրան գցեց, թեև գիտեր, որ շոգելու է:

Չատոն թաղված էր իր մորական տատիկ-պապիկի ու մորաքրոջ կողքին: Գերեզմանը փոքր-ինչ թեք ճանապարհի մի կողմում էր ու մյուս գերեզմանների հետ շարան էր կազմում: Գերեզմանաքարին նշված են մահացածի անուն-ազգանունը, ծննդյան ու սպանության թվականները: Դամբանագիր չկա:

Թաղումից մի քանի օր առաջ Ասպեյտիայի ազգականները Բիչո՛րիին խորհուրդ տվեցին խնդիրներից խուսափելու համար զերծ մնալ գերեզմանաքարին որևէ բառ, խորհրդանիշ կամ նշան փորագրելուց, որով կակնարկվեր, որ Չատոն ETA*-ի զոհն է եղել:

Բիչո՛րին ընդդիմացել էր.

— Լսե՛ք, նրան արդեն մեկ անգամ սպանել են: Չեմ կարծում՝ երկրորդ անգամ կսպանեն:

Բիչո՛րին չէր էլ փորագրի ամուսնու մահվան պատճառը բացահայտող որևէ բան, բայց բավական էր, որ փորձեին նրան համոզել մի բան չանել, որ նա մեծ եռանդով հենց դա կաներ:

Շավիերը համաձայն էր ազգականների հետ: Ուստի գերեզմանաքարին փորագրվեցին միայն անունն ու տարեթվերը: Ներեան, Սարագոսայից զանգելով, համարձակվեց առաջարկել, որ մահվան թիվը կեղծեն: Մայրն ապշեց՝ ո՞նց թե:

— Մտածեցի՝ մի օր դնենք, որ սպանության օրվանից առաջ կամ հետո լինի:

Շավիերն ուսերը թոթվեց: Բիչո՛րին ասաց, որ բացառվում է:

Մի քանի տարի անց, երբ ներկերով նախշել էին Գրեգորիո Օրդոնյեսի գերեզմանաքարը՝ Չատոյի գերեզմանից մի հարյուր մետր այն կողմ, Ներեան մեջտեղ բերեց (ինչպիսի՜ անպատեհություն) այդ վաղուցվա խնդիրը, որի մասին բոլորն արդեն մոռացել էին: Թերթի նկարը ցույց տալով՝ ասաց մորը.

— Տեսա՞ր, որ ճիշտ կլիներ՝ aita-ին մի քիչ պաշտպանած լինեինք: Տե՛ս՝ ինչից ենք փրկվել:

Բիչո՛րին պատառաքաղը շրխկոցով դրեց սեղանին ու ասաց, որ գնում է:

— Ո՞ւր ես գնում:

— Ախորժակ չունեմ:

Ունքերը կիտած դուրս թռավ աղջկա տնից, ու Կիկեն, սիգարետը կպցնելով, հայացքը ձևական հառեց առաստաղին:

Գերեզմանների շարանը ձգվում էր ճանապարհի եզերքով: Քանի որ դրանց պռունկը գետնից երկու թիզ բարձրության վրա էր, Բիչո՛րին բարեբախտաբար կարող է նստել սալիկի վրա: Եթե անձրև գա, իհարկե ոչ:

---

* ETA (բասկ.՝ Euskadi Ta Askatasuna), «Բասկերի հայրենիք և ազատություն», բասկ ազգայնական կազմակերպության զինյալ թևի անվանումը:

Ու ամեն դեպքում, քանի որ քարը սովորաբար սառն է լինում (տարիների ընթացքում էլ վրան անխուսափելիորեն աճող մամուռով ու կուտակվող կեղտով), նա միշտ հետը բերում է սուպերմարկետի տոպրակից կտրած մի քառակուսի կտոր ու վզի թաշկինակ՝ որպես դմփիկ օգտագործելու համար: Նստում է վրան ու զրուցում Չատոյի հետ: Եթե կողքը մարդիկ են լինում, հետը մտովի է խոսում, իսկ եթե սովորականի պես ամայի է, հանգիստ զրուցում է:

— Աղջիկն արդեն Լոնդոնում է: Ենթադրում եմ, իհարկե, քանի որ չի էլ մտածել զանգել, ասել: Քեզ զանգե՞լ է: Ինձ՝ ոչ: Բայց քանի որ հեռուստացույցով օդանավային վթարի մասին բան չեն ասել, կարծում եմ, որ երկուսն էլ հասել են Լոնդոն և ոտուձեռ ընկած փորձում են փրկել իրենց ամուսնությունը:

Առաջին տարում Բիչո՛րին չորս թաղար էր տեղադրել սալիկների վրա: Խնամում էր բույսերը: Գեղեցիկ էին: Հետո որոշ ժամանակ չէր բարձրանում գերեզմանոց: Չորացել էին: Հաջորդ բույսերը դիմացան մինչև ցըրտերն ընկնելը: Մի մեծ թաղար գնեց: Շավիղները ձեռնասայլակով բերեց: Երկուսով մեջը տոսախի* ծառ տնկեցին: Մի օր էլ տեսան, որ թաղարը շուռ են տվել, կոտրել, հողի մի մասն էլ թափվել էր սալիկների վրա: Այդ օրից ի վեր Չատոյի գերեզմանը ոչ մի զարդարանք չունի:

— Ոնց ուզում եմ՝ էնպես էլ խոսում եմ, ոչ ոք ինձ չի արգելելու, հատկապես՝ դու: Կարծում ես՝ կատա՞կ եմ անում: Արդեն քո իմացածը չեմ: Վատն եմ դարձել: Լա՛վ. ոչ թե վատը, այլ սառը, անտարբեր: Եթե հարություն առնես, ինձ չես ճանաչի: Ու իմանաս, որ քո հոգյակ-աղջիկը՝ քո սիրելին, դրանում մեծ դեր է ունեցել: Ինձ նյարդայնացնում է: Ճիշտ փոքր ժամանակվա պես: Քո թողտվությամբ, իհարկե: Որովհետև միշտ նրան պաշտպանում էիր՝ ինձ հեղինակազրկելով, ու նա այդպես էլ չսովորեց հարգել ինձ:

Երկու-երեք գերեզման ավելի վեր մի ավազե հատված կար: Բիչո՛րին որոշ ժամանակ նայում էր այդ պահին վրան իջած զույգ ճնճղուկներին: Թևերը փռած՝ ծիտիկները ավազի լոգանք էին ընդունում:

— Մյուսը, որ ուզում էի քեզ ասել. հրոսակախումբը որոշել է դադարեցնել սպանությունները: Դեռ հայտնի չէ՝ այդ հայտարարությունը լո՞ւրջ է, թե՞ զուտ հնարք՝ ժամանակ շահելու ու վերազինվելու համար:

* Տոսախ, կովկասյան արմավենի:

Սպանեն-չսպանեն՝ քեզ համար առանձնապես նշանակություն չունի: Ինձ համար էլ, մի՛ կասկածիր: Բայց ես շատ եմ ուզում իմանալ: Միշտ եմ ուզել: Ու ինձ չեն կանգնեցնի: Ոչ ոք չի կանգնեցնի: Զավակներս էլ: Եթե իմանան, իհարկե: Քանի որ նրանց բան չեմ ասելու: Միայն դու իմացար: Ինձ մի՛ ընդհատիր: Միայն դու գիտես, որ վերադառնալու եմ: Ո՛չ, բանտ չեմ կարող գնալ: Նույնիսկ չգիտեմ՝ որ մեկում է նստած այդ սրիկան: Բայց նրանք հաստատ դեռ այնտեղ են՝ ավանում: Բացի այդ՝ ինձ շատ է հետաքրքրում, թե ինչ վիճակում է մեր այնտեղի տունը: Հանգի՛ստ եղիր, Չատո՛, Չատիտո՛, քանի որ Ներեան արտասահմանում է, Շավիերն էլ, ինչպես միշտ, իր աշխատանքով է տարված: Չեն իմանա:

— Երդվում եմ, որ չեմ չափազանցնում: Ինձ համար շատ կարևոր է վերջապես հաշտվել ինքս ինձ հետ, կարողանալ նստել ու ասել՝ լա՛վ, սա պըրծավ-գնաց: Ի՞նչը պրծավ-գնաց: Դե՛, տե՛ս, Չատո՛, դա էլ պիտի հասկանամ: Ու պատասխանն էլ (եթե այն կա, իհարկե) միայն ավանում կարող եմ գտնել, ու դրա համար է, որ հենց այսօր երեկոյան պիտի այնտեղ գնամ:

Ոտքի կանգնեց: Խնամքով ծալեց ու պայուսակում տեղավորեց թաշկինակը և ցելոֆանի քառակուսի կտորը:

— Մի խոսքով՝ քեզ տեղեկացրի: Դե՛, դու մնա՛, ես գնացի:

4

Դրանց տանը

Երեկոյան ժամը ինն է: Խոհանոցի պատուհանը բաց է, որ տապակած ձկան հոտն անցնի: Հեռուստալուրերի սկիզբը Միրենին արդեն ծանոթ էր: Վերջնական հրաժարում զինված պայքարից, ոչ թե ոմանց ասած ահաբեկչությունից. իմ տղան ահաբեկիչ չէ: Դառնալով աղջկան՝ հարցրեց.

— Լսեցի՞ր: Նորից են դադարեցնում: Տեսնենք՝ մինչև երբ:

Թվում է, թե Արանչան չի հասկանում, բայց իրականում ամեն ինչ էլ ընկալում է: Մի փոքր շարժում արեց իր կիսով չափ ծռված դեմքով (թե՞ իրականում պարանոցն էր ծռված), ասես ուզում էր կարծիք արտահայտել: Արանչայի դեպքում դժվար է հաստատ իմանալ, բայց Միրենը գոնե համոզվեց, որ աղջիկը հասկացել է իր ասածը: Արանչայի համար պաքսիմատով տապակած երկու կտոր ձողաձուկ էր մանրացնում պատառաքաղով: Պատառները շատ մեծ չեն, որպեսզի կարողանա կուլ տալ: Ֆիզիոթերապևտն էր խորհուրդ տվել՝ հրաշալի մի աղջիկ: Բասկ չէ, բայց դե՛ հիմա: Արանչան պետք է ջանք գործադրի, թե չէ առաջընթաց չի լինի: Պատառաքաղը, հպվելով ափսեի հախճապակուն, զրնգուն ձայն էր հանում, և պաքսիմատի ճաքած շերտից մի պահ գոլորշու սպիտակ ամպիկ էր բարձրանում:

— Տեսնենք՝ հիմա ինչ պատճառ են բռնելու՝ Խոշե Մարիին բանտից չազատելու համար:

Աչքը չկտրելով աղջկանից՝ նստեց սեղանի մոտ՝ նրա կողքին: Վախենում էր: Մի քանի անգամ պատահել էր, որ Արանչան խեղդվելուց հազիվ էր փրկվել: Վերջին անգամ ամառն էր: Ստիպված շտապօգնություն էին կանչել: Դա էլ իր ազդանշանով ամբողջ թաղով մեկ մի աղմուկ էր դրել: Ո՛նց էինք վախեցել, Աստվա՛ծ իմ: Մինչև բժիշկները տեղ հասան, Միրենն արդեն հաջողեցրել էր աղջկա կոկորդից հանել ձկան ֆիլեի մեծ կտորը:

Ֆառասունհինգ տարեկան է: Երեքից ամենամեծը: Տարիքով հաջորդը Խոշե Մարին է, որ Սանտա Մարիա Պուերտոյում է: Մեզ ստիպում են մինչև Էնտեղ հասնել: Գարշելինե՜ր: Փոքրն էլ իր կյանքով է ապրում: Դրան չենք էլ տեսնում:

Արանչան բռնեց մոր տված սպիտակ գինով գավաթը: Միակ գործող ձեռքով բարձրացրեց այն, դողացնելով տարավ դեպի բերանը: Ձախ ձեռքը մնացել է բռունցքված, գոտկատեղին կպած, անգործածելի՝ կրծկումային բռնվածության պատճառով: Արանչան գինու մի մեծ կում արեց, ինչը, ըստ Խոշիանի, ուրախալի է, եթե հիշենք, որ դեռ բոլորովին վերջերս աղջիկը սնուցման զոնդի հույսին էր:

Կզակով մի քիչ հեղուկ հոսեց, բայց ոչինչ: Միրենն արագ սրբեց անձեռոցիկով: Այդքան գեղեցիկ, առողջ, մեծ ապագա ունեցող աղջիկ էր, երկու երեխաների մայր, և խնդրեմ:

— Հը՞, դուրդ եկա՞վ:

Արանչան գլխով արեց՝ կարծես հասկացնելով, որ ձուկը մեծ ուրախություն չէր պատճառում:

— Լսի՛ր, չկարծես, թե էժան ձուկ է: Մի՛ լկստվիր:

Հեռուստացույցով մեկը մյուսի հետևից կարծիքներ էին հնչում: Պա՛հ, քաղաքական գործիչներիս տե՛ս: Խաղաղության համար կարևոր քայլ է: Պահանջում ենք ահաբեկիչ հրոսակախմբի լուծարում: Դատական գործընթաց է սկսվում: Սա հույս է ներշնչում: Մղձավանջի վերջն է: Թող զենքերը հանձնեն:

— Պայքարը դադարեցնում են, փոխարենը ի՞նչ են անելու: Բասկերի երկրի ազատագրումը մոռացա՞ն: Բա բանտում փտող բանտարկյալնե՞րը: Վախկոտնե՛ր: Պետք է սկսածը մինչև վերջ հասցնել: Հայտարարությունը կարդացողի ձայնը քեզ ծանո՞թ էր:

Արանչան դանդաղ ծամում էր ձողաձկան կտորը: Գլուխը տարուբերեց: Էլի բան էր ուզում ասել ու երկարելով առողջ ձեռքը՝ մորը խընդրեց iPad-ը մոտեցնել: Միրենը վիզը ձգեց, որ կարդա էկրանին գրածը. «Աղը քիչ է»:

Խոշիանը տուն եկավ գիշերվա տասնմեկից հետո՝ ձեռքին մի խուրձ պրաս: Օրվա երկրորդ կեսը հողամասում էր անցկացրել: Թոշակառուի սիրած գործն է: Հողամասը գետի ափին է: Երբ գետը վարարում է (վերջին անգամ տարվա սկզբին էր), ցտեսությո՛ւն, հողամա՛ս: «Ավելի վատ բաներ էլ կան աշխարհում»,– ասում է Խոշիանը: Վաղ թե ուշ ջուրը նահանջում է: Խոշիանը չորացնում է գործիքները, ավլում է տնակը, ճագարի նոր ձագեր է առնում, վնասվածների փոխարեն բանջարեղենի նոր սածիլներ է տնկում: Միայն խնձորենու, թզենու ու կաղնու բերքն է մնում, ու վերջ:

Ու վե՞րջ: Քանի որ գետը հետը արդյունաբերական թափոններ է քշում-բերում, հետո հողից ուժեղ հոտ է գալիս: Խոշիանն ասում է, որ գործարանի հոտն է: Միրենն էլ նրան պատասխանում է, թե.

— Թույնի հոտ է: Մի օր բոլորս մեռնելու ենք աղիների սարսափելի ցավից:

Խոշիանի մյուս ամենօրյա սիրելի գործը երեկոյան թղթախաղն է: Չորս ընկերներով մուս* են խաղում մի կուժ գինու վրա էնտեղ՝ «Պագոետա» բարում, որ ավանի հրապարակ իջնող ճանապարհին է: Բայց որ մի կուժը կհերիքի նրանց չորսին, իհարկե, հեքիաթ է:

Պրասը բռնելու ձևից Միրենը հասկացավ, որ քեֆը տնկոզ է եկել: Ամուսնուն ասաց, որ շուտով հանգուցյալ հոր պես կարմիր քթով է ման գալու: Երբ սկսում է աջ կողմը քորել, ասես լյարդի շրջանում մարմաջ ունենա, հաստատ գիտես, որ խմել է: Կասկած չկա: Բայց էնպես չի, որ ութեր գրելով փողոցներով քարշ գա, չէ՛: Ոչ էլ քոր ունի: Այդ շարժումն ուրիշների խաչակնքվելու կամ փայտին խփելու պես մի բան է:

«Ոչ» ասել չունի: Դա է խնդիրը: Բարում կոնծում է, որովհետև մյուսներն էլ են կոնծում: Ու եթե դրանցից մեկը հանկարծ ասի՝ «Հապա գնացինք՝ գետը գցվենք», Խոշիանը հետևներից գառնուկի պես կգնա:

Ինչևէ, տուն հասավ՝ բերետը գլխին ծուռ դրած, փայլփլող աչքերով, լյարդի շրջանում շապիկը քորելով ու շատ զգացմունքային դարձած:

Ճաշասենյակում համբուրեց Արանչայի ճակատը՝ դանդաղ, ջերմ, համարյա ճպպացնելով: Քիչ էր մնում՝ վրան ընկներ: Իսկ Միրենը չթողեց, որ իրեն համբուրի.

— Գնա՛, գնա՛, խորտկարանի հոտ է վրայիցդ փչում:

— Ա՛յ կնիկ, էդքան դաժան մի՛ եղիր:

Միրենը ձեռքերն առաջ պարզեց՝ նրան հեռավորության վրա պահելու համար:

— Խոհանոցում ձուկ կա: Սառած կլինի արդեն: Տաքացրո՛ւ, կե՛ր:

Կես ժամ անց Միրենը կանչեց ամուսնուն, որ օգնի Արանչային պառկեցնել:

Երկուսով նրան անվասայլակից վեր հանեցին՝ ամեն մեկը մի թևը բռնած:

---

* Մուս, իսպանական թղթախաղ, ստեղծվել է Նավառայում և Բասկերի երկրում:

— Բռնե՞լ ես:

— Հը՞:

— Ասում եմ՝ բռնե՞լ ես: Պիտի բռնես, որ երկու կողմից ոտքի հանենք:

Արանչայի ոտնաթաթը բռնված է, չի կարողանում քայլել: Երբեմն մի քանի անվստահ քայլ է գցում: Ձեռնափայտով կամ մեկի օգնությամբ: Տնով քայլել, ինքնուրույն ուտել, նորից խոսել. սրանք են ընտանիքի միջնաժամկետ ակնկալիքները, այն էլ՝ ոչ շուտով: Երկարաժամկետ իմաստով էլ՝ տեսնենք: Ֆիզիոթերապևտը նրանց քաջալերում է: Հրաշալի է էդ աղջիկը: Գրեթե բասկերեն չգիտի (մի քանի բառ ընդամենը), բայց էս դեպքում կարևոր չէ:

Մայրն ու հայրը միասին աղջկան ոտքի կանգնեցրին անկողնու մոտ: Առաջին անգամ չէր, արդեն փորձ ունեին: Բացի այդ՝ Արանչայի քաշն ի՞նչ էր որ: Քառասուն ու մի քիչ կիլո: Դրանից ավելի չի լինի: Իսկ ժամանակին այդքան պնդոտ էր:

Հայրը պահեց աղջկան, Միրենը անվասայլակը քաշեց դեպի պատը:

— Հանկարծ չթողնես՝ ընկնի:

— Հո՛ աղջկաս չեմ թողնի՝ ընկնի:

— Քեզնից հեռու չէ:

— Հիմար-հիմար դուրս ես տալիս:

Ու իրար նայեցին չարացած, անտրամադիր, Խոշիանը՝ ատամները սեղմած, որ հանկարծ մի վատ բառ դուրս չթռցնի բերանից: Միրենը վերմակը մի կողմ քաշեց, ու երկուսով զգուշությամբ, դանդաղ (լավ ես բռնել, չէ՞) Արանչային անկողնու վրա դրեցին:

— Կարող ես գնալ, հիմա պիտի շորերը հանեմ:

Խոշիանը կռացավ՝ աղջկա ճակատը համբուրելու: Նրան բարի գիշեր մաղթեց ու շոյելով այտը՝ ասաց. «Մինչև վաղը, polita*»: Կողերը քորելով՝ գնաց դեպի դուռը: Գրեթե դուրս էր եկել սենյակից, երբ շրջվեց ու ասաց.

— «Պագոետայից» վերադառնալիս տեսա, որ դրանց տանը լույս է վառվում: Այդ պահին Միրենը աղջկա ոտքերից կոշիկներն էր հանում:

— Երևի ինչ-որ մեկը մտել է մաքրություն անելու:

— Գիշերվա ժամը տասնմեկի՞ն:

---

* Polita (բասկ.), այստեղ՝ սիրունիկս:

— Այդ մարդիկ ինձ չեն հետաքրքրում:

— Դե՛, տեսածս եմ ասում: Երևի վերադառնան ավան:

— Գուցե: Հիմա, որ զինված պայքար չի լինելու, լրիվ սանձերը կարձակեն:

5

Տեղափոխություն՝ մթության քողի տակ

Այրիանալուց մի քանի շաբաթ անց Բիչո՛րին մի քանի օրով գնացել էր Սան Սեբաստիան՝ չտեսնելու համար այն մայթեզրը, որտեղ սպանել էին ամուսնուն, ու ստիպված չլինելու հանդուրժել հարևանների (որոնք տարիներ շարունակ այդքան սիրալիր էին ու հետո հանկարծ մեկեն թարսվեցին) ծուռ հայացքները: Բացի այդ՝ չէր ուզում ստիպված անցնել պատերի սպառնագրերի կողքով, մանավանդ հրապարակի կրպակի վրայինը, որը վերջերս էր հայտնվել՝ Չատոյի անվան վրա նկարած թիրախով: Հայտնվեց, ու մի քանի օր անց… մնա՛ս բարով:

Իրականում զավակները նրան խաբելով տարան Սան Սեբաստիան: Տե՛ր Աստված, Հիսո՛ւս քեզ Քրիստոս, բնակարանը երրորդ հարկում էր, մինչդեռ Բիչո՛րին ամբողջ կյանքում առաջին հարկում էր ապրել:

— Լա՛վ, ama, վերելակ կա:

Ներեան ու Շավիերը որոշել էին ամեն գնով նրան հանել ավանից (այն ավանից, որտեղ նա ծնվել-մեծացել-կնքվել էր, որտեղ ամուսնացել էր) ու հետո էլ նույնիսկ հեռու պահել հարազատ վայրերից:

Այսպիսով, Բիչո՛րիին տեղավորել էին այդ բնակարանում, որի պատշգամբից երևում էր ծովը: Մինչդեռ դեպքից առաջ նրանց ընտանիքը փորձում էր վաճառել այդ բնակարանը: Հայտարարություն էին տվել թերթում: Արդեն մի քանի մարդ իրենց զանգահարել էր. հետաքրքրված էին, առնվազն գինն էին ուզում իմանալ: Այդ բնակարանը Չատոն ձեռք էր բերել մահից մի քանի ամիս առաջ՝ մտածելով, որ պետք է պատսպարվելու տեղ ունենան ավանից դուրս:

Բնակարանում մի քանի լուսամփոփ կար ու մի քանի կտոր կահույք: Զավակները Բիչո՛րիին ասել էին՝ իբր ժամանակավոր է այնտեղ մնալու: Հետը խոսում էին, բայց ոնց որ չլսեր: Ոնց որ այնտեղ չլիներ: Ապատիայի մեջ էր: Էն էլ Բիչո՛րին, որն այնքան շատախոս էր: Իսկ հիմա արձանի պես էր: Երբեմն թվում էր, որ թարթելն էլ է մոռանում:

Շավիերն իր ընկերոջ հետ ավանի տնից նրա կահ-կարասին էր տեղափոխում: Ուշադրություն չգրավելու համար ավան էին գնում գիշերը՝ մթին: Երևի մի տասներկու անգամ գնացին-եկան, միշտ՝ մայրամուտից հետո: Մի

օր մի բան էին բերում, մյուս օրը՝ մեկ այլ բան: Մեքենան էլ առանձնապես տարողունակ չէր:

Ամուսնական մահճակալը ավանում թողեցին, քանի որ Բիչո՛րին առանց իր ամուսնու չէր պառկում վրան: Բայց, ի վերջո, բավական իրեր էին բերել. սպասքը, ճաշասենյակի գորգը, աման լվանալու մեքենան: Այդ ընթացքում մի օր՝ մեքենա բեռնելու պահին, մի քանիսը վրա տվեցին՝ հայհոյելով: Տիպիկ ավազակախումբ էր. Շավիերի ծանոթներն էին, դպրոցական դասընկերները: Դրանցից մեկը նրանց կատաղած սպառնաց, որ կհիշի մեքենայի համարանիշը:

Սան Սեբաստիան հետդարձի ճանապարհին Շավիերը զգաց, որ ընկերը վախի նոպայի մեջ գրեթե ցնցվում է, ու որ կարող էին վթարի ենթարկվել, եթե նա շարունակեր այդ վիճակում մեքենա վարել: Ընկերոջը համոզեց մեքենան մի կողմ քաշել ու կանգնել ճամփեզրին: Ընկերը, թե.

— Էլ չեմ կարող քեզ հետ այնտեղ գնալ: Կներես:

— Բան չկա:

— Իրոք, կներես էլի:

— Էլ պետք էլ չէ այնտեղ գնալ: Տեղափոխությունը վերջացրինք: Մայրս մեր բերածներով արդեն ամեն ինչ ունի:

— Շավիե՛ր, ինձ հասկանում ես, չէ՞:

— Իհարկե: Մի՛ անհանգստացիր:

Մի տարի անցավ, հետո՝ մյուսը, հետո էլի տարիներ անցան: Այդ ընթացքում Բիչո՛րին գաղտնի սարքել տվեց ավանի տան բանալու կրկնօրինակը, քանի որ հո ապո՞ւշ չէր: Սկզբից՝ Ներեան, մի քանի օր անց էլ Շավիերը հարցրեց, թե բանալին ո՞ւր է, տո՛ւր: Դավադիրնե՛ր: Նրանց ամեն մեկին առանձին ասել էր, որ չի հիշում՝ ուր է դրել. ուղեղս տեղը չի: Ասել էր, որ կփնտրի, ու մի քանի օր անց ձևացրեց, թե երկար փնտրելուց հետո վերջապես գտել է, բայց իր համար մի նոր բանալի էր արդեն սարքել տվել: Հին բանալին տվեց Ներեային, որը ժամանակ առ ժամանակ (տարին մե՞կ, թե՞ երկու անգամ) գնում էր տուն, փոշիները վերցնում: Այդպես էլ բանալին չվերադարձրեց. Բիչո՛րին ոչ էլ սպասում էր, որ երբևէ կվերադարձնի:

Մի առիթով Ներեան առաջարկեց մտածել ավանի տունը վաճառելու մասին: Մի քանի օր անց Շավիերը նույն բանն ասաց: Բիչո՛րին զգաց, որ այդ երկուսն իր թիկունքում համաձայնության են եկել: Հենց երեքով հավաքվեցին, անդրադարձավ այդ թեմային.

— Քանի ողջ եմ, այդ տունը չի վաճառվի: Մեռնեմ՝ ինչ ուզում եք, արեք:

Չհակաճառեցին: Իր խոսքը դեմքի խիստ արտահայտությամբ ու աչքերի բարկության փայլով ասաց: Քույր ու եղբայր արագ հայացքներ փոխանակեցին: Ու այդ թեման այլևս չշոշափեցին:

Եվ այդպես երբեմն գնում էր ավան ամենայն զգուշությամբ, հաճախ՝ անձրևոտ, քամոտ, անդուր օրերին, երբ ավելի հավանական էր, որ փողոցները դատարկ կլինեին: Գնում էր, երբ զավակները զբաղված էին կամ ճամփորդում էին: Հետո հաճախ մի յոթ-ութ ամիս չէր էլ գնում: Ավտոբուսից իջնում էր ավանից հեռու, որ ոչ մեկի հետ ստիպված չլինի խոսել: Որ նրան չտեսնեն: Ամայի փողոցներով բարձրանում էր իր տուն: Այնտեղ մեկ կամ երկու ժամ էր անցկացնում, երբեմն մի քիչ ավելի երկար էր մնում՝ լուսանկարներ նայելով, սպասելով որոշակի ժամի եկեղեցու զանգին, ու համոզվելով, որ շքամուտքի մոտ ոչ ոք չկա, նույն ճանապարհով հեռանում էր:

Գերեզմանոց չէր գնում: Ինչի՞ն էր պետք: Չատոյին Սան Սեբաստիանում էին թաղել, ոչ թե ավանում, չնայած այնտեղ՝ ընտանեկան պանթեոնում, հանգչում էին նրա հորական տատն ու պապը: Բայց ավանում թաղելը բացառվում էր, նրանց համոզել էին, որ եթե այդպես վարվեին, գերեզմանը կպղծեին. մի քանի անգամ արդեն նման բան պատահել էր:

Բիչո՛րին Պոլյոեի գերեզմանոցում թաղման արարողության ընթացքում Շավիերի ականջին մի բան շշնջաց, որ տղան այդպես էլ չկարողացավ մոռանալ: Ի՞նչ: Դե՛, որ մորը թվացել էր, որ Չատոյին ոչ թե հողին էին հանձնում, այլ կարծես թաքցնում էին:

6

Չաւոռ՛, entzun*.

Էս ի՛նչ դանդաղ է էս ավտոբուսը: Շատ-շատ են կանգառները: Խնդրեմ, ևս մեկը: Երկու կին էին կողք կողքի նստած, ամեն մեկը՝ յուրատիպ: Մայրամուտին վերադառնում էին ավան: Երկուսն էլ միաժամանակ էին խոսում՝ առանց իրար լսելու: Յուրաքանչյուրն իր ասածն էր ասում, և իրար հասկանում էին: Այն կինը, որը միջանցքի մոտ էր նստած, արմունկով թեթևակի հրեց պատուհանի մոտ նստածին: Ուշադրությունը գրավելով՝ գլխի կտրուկ շարժումով ցույց տվեց ավտոբուսի առջևում նստած կնոջը:

Հետո շշնջաց.

— Մուգ վերարկուովը:

— Էդ ո՞վ է:

— Միայն չասես, թե չճանաչեցիր:

— Միայն մեջքն եմ տեսնում:

— Չատոյի կինն է:

— Էն որ սպանե՞լ էին: Ո՛նց է ծերացել:

— Բա տարիներ են անցել, ի՞նչ էիր կարծում:

Որոշ ժամանակ լուռ մնացին: Ավտոբուսը շարունակում էր իր ճանապարհը: Ուղևորները բարձրանում-իջնում էին, երկու կանայք լռում էին՝ նայելով անորոշ ուղղությամբ: Հետո նրանցից մեկը ցածրաձայն ասաց.

— Խե՛ղճ կին:

— Այսի՞նքն:

— Դե՛, որքան է տառապել:

— Բոլորս ենք տառապել:

— Այո՛, բայց նրա համար շատ ծանր էր:

— Դժվար ժամանակներ էին, Պիլի՛, դժվար ժամանակներ:

— Դե՛, հա՛, բան չասացի:

Մի փոքր անց այն մեկը, որի անունը Պիլի չէր.

— Գրազ գա՞նք, որ գործարանային թաղամասում կիջնի:

---

* Entzun (բասկ.), լսիր:

Բիչո՛րիի՝ ոտքի ելնելուն պես այլ ուղղությամբ նայեցին: Միակն էր, որ այդտեղ իջավ:

— Քեզ ասացի, չէ՞:

— Ո՞նց իմացար:

— Էստեղ է իջնում, որ ոչ ոք չտեսնի, ու հետո տը՛կ-տը՛կ, սուսիկ-փուսիկ գնում է տուն:

Ավտոբուսը շարունակեց իր ճանապարհը, իսկ Բիչո՛րին (կարծում են՝ իրենց չտեսա՞) շարունակեց քայլել նույն ուղղությամբ՝ գործարանների ու արհեստանոցների տարածքով, դեմքի ոչ թե արհամարհական, ո՛չ, բայց լուրջ արտահայտությամբ՝ շուրթերը սեղմած, գլուխը բարձր, քանի որ արդեն ոչ մեկից չպիտի թաքնվեմ:

Ավանը, իր ավանը: Արդեն գրեթե գիշեր է: Պատուհանները՝ լուսավորված, մոտիկ դաշտերից եկող խոտի հոտ, փողոցներում՝ սակավաթիվ անցորդներ: Վերարկուի օձիքը բարձրացրած՝ կտրեց-անցավ կամուրջը, նայեց դանդաղասահ գետին, ափեզրին հարող հողամասերին: Հենց սկսեց տների արանքով քայլել, զգաց, որ շնչելը դժվար է: Ընչահե՞ղձ էր լինում: Ոնց որ թե՝ չէ: Ամեն անգամ, երբ վերադառնում է ավան, աննկատ մի ձեռք նրա կոկորդն է սեղմում: Բարձրանում էր մայթով ո՛չ արագ, ո՛չ դանդաղ՝ տարբեր մանրամասներ հիշելով. ա՛յ էս շքամուտքում ինձ առաջին անգամ սեր բացատրեցին: Նոր բաներ տեսնելով՝ զարմանում էր. այս լապտերները չէի տեսել:

Թիկունքում փսփսոց լսեց: Ասես պատուհաններից կամ չլուսավորված շքամուտքից եկող ճանճի տզզոց լիներ: Թեթև շշնջոց, որն ավարտվում էր ato վանկով: Դա բավական էր, որ ամբողջ նախադասությունը կռահեր: Գուցե պետք է ավելի ուշ գար՝ վերջին ավտոբուսով, որ մարդիկ արդեն տներում լինեին: Լա՛վ, ասենք թե եկար, բա վերադառնա՞լը: Ուրեմն, այստեղ կգիշերեմ: Տուն ունեմ, անկողին էլ ունեմ:

«Պագոետա» բարի դռան առջև ծխողների խումբ կար: Բիչո՛րին չէր ուզում անցնել նրանց մոտով: Ինչպե՞ս: Նույն ճանապարհով վերադառնալով ու եկեղեցին մյուս կողմից շրջանցելով: Մի պահ կանգ առավ ու ամաչեց՝ կանգ առնելու համար: Շարունակեց քայլել փողոցի մեջտեղով՝ ձևացնելով, թե ամեն ինչ նորմալ է: Նրա սիրտն այնքան արագ էր խփում, որ մի պահ վախեցավ, որ այդտեղ եղած տղամարդիկ կլսեն սրտի բաբախը:

Նրանց կողմը չնայելով՝ անցավ: Չորս-հինգ հոգի էին, մի ձեռքին՝ գավաթ, մյուսում՝ սիգարետ: Երևի իրեն ճանաչեցին, քանի որ մեկեն լռություն տիրեց, երբ նրանց կողքով անցավ: Մեկ, երկու, երեք վայրկյան: Ու երբ Բիչո՛րին հասավ փողոցի ծայրը, զրույցը վերսկսվեց:

Իր տան շերտավարագույրներն իջեցված էին: Տան ճակատային մասում երկու պաստառ էր երևում: Մեկը՝ տեսքից նոր, Սան Սեբաստիանում համերգի հայտարարություն էր, մյուսը՝ խամրած գույներով, տեղ-տեղ պատռած, Մեծ կրկեսի հայտարարությունն էր, որտեղ մի առավոտ հայտնվել էր արդեն հաճախ կրկնվող սպառնագրերից մեկը. TXATO ENTZUN PIM PAM PUM*:

Բիչո՛րին մտավ շքամուտք. ասես ոտք դրեց իր անցյալ: Նույն լապտերը, հին, ճռճռացող աստիճանները, փոստարկղերի շարքը, որոնց մեջ բացակայում էր իրենցը: Ժամանակին Շավիերն էր հանել՝ խնդիրներից խուսափելու համար: Հանած արկղի տակ պատի քառակուսին պահպանել էր իր սկզբնական գույնը, այն ժամանակների ներկածը, երբ դեռ ոչ Ներեան կար, ոչ էլ Միրենի տղան՝ այդ անամոթը: Ու դա միակ պատճառն է, որ ես ուզում եմ, որ գեհենը գոյություն ունենա. որ մարդասպաններն այնտեղ հավերժ տառապեն:

Ներս քաշեց թարմ փայլեցված հին փայտի հոտը: Եվ զգաց, որ անտեսանելի ձեռքը վերջապես հանգիստ է թողնում կոկորդը: Բանալի, կողպեք. ներս մտավ: Միջանցքում նորից հիշեց Շավիերին՝ շատ ավելի երիտասարդ, որ լացակումած աչքերով նրան ասում էր, թե ama, արի՛ թույլ չտանք, որ ատելությունը մեր կյանքը պղտորի, մեզ փոքրոգի դարձնի: Դրա պես մի բան էր ասում. արդեն լավ չէր հիշում: Ու իր զայրույթն այդ պահին՝ տարիներ առաջ.

— Հա՛, այսինքն՝ հե՛չ, երգուպար անենք:

— Խնդրում եմ, ama, վերքիս աղ մի՛ լցրու: Պետք է ճիգ գործադրենք, որ այն, ինչ եղավ մեզ հետ…

Ընդհատեց որդուն.

— Կներես. այն, ինչ արեցին մեզ հետ:

— Որ այդ ամենը մեզ չչարացնի:

---

* Txato entzun pim pam pum (բասկ.), Չատո՛, լսի՛ր, պի՛մ, պա՛մ, պո՛ւմ:

Բառեր: Դրանք մոռանալու տարբերակ չկա: Չեն թողնում, որ ինքն իրոք իր հետ մնա: Զզվեցնող միջատների նման: Պետք է բաց աներ բոլոր պատուհանները, որ այդ բառերը, ափսոսանքներն ու լքված բնակարանի պատերի արանքներում ծվարած հին, տխուր խոսակցությունները դուրս պրծնեին փողոց:

— Չատո՛, Չատիտո՛, ի՞նչ կուզես ընթրիքի համար:

Չատոն պատին ամրացված լուսանկարից թեթևակի ժպտում էր մի մարդու պես, որին շուտով սպանելու են: Մի հայացքն էլ բավական էր՝ գլխի ընկելու համար, որ մի օր նրան սպանելու են: Բա ականջնե՞րը: Բիչո՛րին միջնամատն ու ցուցամատը հպեց իր շուրթերին, հետո դրանք մեղմորեն հպեց սև-սպիտակ դիմանկարին:

— Ապուխտով ձվածեղ: Տեսա՞ր, քեզ այնքան լավ գիտեմ, ասես ողջ լինես:

Լոգասենյակի ծորակը բացեց: Այո՛, ջուրը գալիս էր և իր սպասածից էլ՝ պակաս պղտոր: Բացեց դարակները, սրբեց կահույքի ու իրերի վրա նստած փոշին, էս ու էն արեց, գնաց-եկավ ու մոտավորապես գիշերվա տասն անց կես ամուսնական ննջասենյակի շերտավարագույրը բարձրացրեց այնքան, որ սենյակի լույսը դրսից երևա: Կողքի սենյակի շերտավարագույրն էլ բարձրացրեց, բայց առանց լույսը վառելու: Հետո խոհանոցից մի աթոռ բերեց ու նստեց՝ շեղակի ծիկրակելու մթան մեջ, որպեսզի դրսից չերևա:

Տարբեր մարդիկ անցան: Անկապ մարդիկ: Մի աղջիկ ու տղա բարձրացան խոսելով: Տղան փորձում էր համբուրել աղջկան, նա էլ դիմադրում էր: Ապա մի ծերուկ՝ շան հետ: Վստահ էր, որ վաղ թե ուշ տան առջև տեսնելու է դրանցից մեկին: Ինչո՞ւ ես այդպես որոշել: Չեմ կարող բացատրել, Չատո՛: Կնոջ կանխազգացում է:

Այդ ցանկությունը կատարվե՞ց: Այո՛, կատարվեց, թեև Բիչո՛րին ստիպված էր բավական երկար սպասել: Եկեղեցու զանգերը տասնմեկ անգամ ղողանջեցին: Նրան միանգամից ճանաչեց: Բերետը թեք դրած, սվիտերը մեջքին, դրա թևքերը կրծքին կապած, մի քանի պրաս թևատակին: Ուրեմն դեռ մշակո՞ւմ է հողամասը: Ու քանի որ կանգնել էր լապտերի լույսի տակ, տեսավ նրա դեմքի արտահայտությունը՝ և՛ թերահավատ, և՛ զարմացած: Մի վայրկյան տևեց, ոչ ավելի, հետո շարունակեց իր ճանապարհը, բայց ասես հետևը ասեղ խրած լինեին:

— Քեզ ի՞նչ էի ասում: Հիմա կպատմի կնկան, որ լույս է նկատել մեր տանը: Կինն էլ կասի, որ խմած է: Բայց չի դիմանա ու դուրս կգա՝ ստուգելու: Գրազ գա՞նք, Չատո՛:

Արդեն տասներկուսն էր: Համբերի՛ր: Հիմա կգա, կտեսնես: Ու եկավ, իհարկե, եկավ համարյա տասներկուսն անց կես: Հազիվ մի պահ կանգնեց լապտերի լույսի ներքո և նայեց պատուհանին. նրա դեմքին ո՛չ զարմանք կար, ո՛չ էլ անվստահություն, պարզապես ունքերը ջղային կիտած: Հետո արագ շուռ եկավ ու գնաց՝ վճռական քայլքով անհետանալով մթության մեջ:

— Ասեմ, որ լավ է պահպանվել:

7

Քարեր՝ ուսապարկում

Հեծոն մտցրեց խոհանոց: Թեթև էր, հեծանվավազքի համար: Մի օր, մի սար կեղտոտ ամանների առջև կանգնած, Միրենը հարցրեց.

— Էդ թանկնոց երկաթի կտորի համար փողդ հերիքե՞ց, հա՞:

Խոշիանի պատասխանը.

— Այո՛, հերիքեց, ի՞նչ կա որ: Ես էլ եմ ամբողջ կյանքս էշի պես աշխատել, հերս անիծվեց:

Հեծանիվը նկուղից բնակարան բարձրացրեց հեշտությամբ՝ պատերին չքսելով: Լավ է, որ ցածր հարկում ենք ապրում: Հանում, ուսին է դնում, ինչպես երիտասարդ ժամանակ, երբ մրցումների էր մասնակցում: Կիրակի էր՝ առավոտվա ժամը յոթը: Կարող էր երդվել, որ աղմուկ չի հանել: Բայցևայնպես Միրենը, խոհանոցի սեղանի մոտ գիշերանոցով նստած, քիթումռութ արած սպասում էր:

— Կարելի՞ է իմանալ, այս հեծոն տանն ինչ է անում: Ի՞նչ է, ուզում ես կեղտոտե՞լ հատակը:

— Արգելակը պիտի ձգեմ, դուրս գալուց առաջ էլ վրայով մի հատ անցնելու եմ լաթով:

— Ինչո՞ւ փողոցում չես մաքրում:

— Գրողը տանի, որովհետև դեռ մութ է, ու սպանիչ ցուրտ: Իսկ դու ինչո՞ւ ես այդքան շուտ վեր կացել:

Երկու անքուն գիշեր իրար հետևից, ու իրականում կարիք չկար հարցնելու, թե ինչու: Բավական էր տեսնել այտուցված աչքերը: Պատճա՞ռը: Դրանց տան շերտավարագույրի տակի լույսը: Որ ոչ միայն ուրբաթ օրն էր վառվում, այլև երեկ, ու եթե ինձ հարցնեք, ամեն օր էլ վառվելու է: Որ հետո էլ ասեն, այո՛, մեղք էին այդ զոհերը, ու որ նրան տեսնելիս պետք է ջերմ ժպտանք: Լույսը, շերտավարագույրը, մարդիկ, որ Բիչո՛րիին տեսել էին փողոցում, ու ավելի լավ միտք չէին հղացել, քան Միրենին պատմելը: Այս ամենը վատ հուշեր էր արթնացրել Միրենի մտքում, վատ, իրոք, շատշատ վատ հուշեր:

— Էս մեր տղան մեր կյանքը բարդացրել է:

— Թե ավանում քեզ լսեն, մեր կյանքն ավելի կպայծառանա:

— Ես քեզ եմ ասում: Թե չէ էլ ո՞ւմ հետ խոսեմ:

— Բա՛ abertzale* էիր դարձել: Միշտ պիտի առաջինը լինեիր, ամենաբարձր ճչացողը, աննկուն հեղափոխականը: Ու երբ բանտի տեսակցությունների սենյակում աչքերիցս արցունք էր թափվում, բարկանում էիր: Փալաս մի՛ դարձիր, ասում էիր, լաց մի՛ եղիր զավակիդ առաջ, երեխուս մի՛ թուլացրու:

Շատ տարիներ առաջ (որքա՞ն. քսանից ավելի երևի) արդեն սկսել էին կասկածել, գլխի ընկնել, ինչ-որ բաներ պարզել: Մի օր էլ Արանչան՝ խոհանոցում, թե.

— Դե՛ լավ, դուք էլ: Իր սենյակի այդ պաստառները չե՞ք տեսել: Իսկ սեղանիկին դրած փայտե ֆիգուրը՝ կացնի շուրջ փաթաթված օձ, ձեր կարծիքով՝ ի՞նչ է:

Մի օր էլ Միրենը կեսօրից հետո տուն էր եկել անհանգստացած: Խոշե Մարիին տեսել էին փողոցային բախումների ժամանակ: Ի՞նչ է նշանակում՝ ո՛վ է տեսել:

— Էլ ո՞վ պիտի տեսներ՝ Բիչո՛րին ու ես: Թե կարծո՞ւմ ես՝ ինչ-որ մեկի հետ եմ հանդիպում:

— Լա՛վ, հանգստացի՛ր: Երիտասարդ է, տաքարյուն: Շուտով կանցնի:

Միրենը, կում-կում խմելով հապճեպ պատրաստած լորենու թեյը, մտովի դիմեց Սուրբ Իգնասիոյին՝ պաշտպանության ու խորհրդի համար: Ու մինչ սխտոր էր մաքրում՝ բրամ ձկան մեջ դնելու համար, առանց դանակը վայր դնելու՝ խաչակնքում էր: Ընթրիքի ընթացքում ընտանիքը լուռ էր, իսկ նա անվերջ մենախոսում էր՝ կանխատեսելով լուրջ անախորժություններ ու Խոշե Մարիի պահվածքը վատ շրջապատին վերագրելով: Մեղադրում էր Մանոլիի տղային, մսավաճառի տղային, ամբողջ նրանց խմբին:

— Քիչ է՝ փնթի տեսքով է ման գալիս, մի բան էլ էդ ականջողը. նյարդերս քայքայում է: Բերանին էլ թաշկինակ էր կապել:

Այդ ժամանակ Բիչո՛րին ու Միրենը ի՞նչ էին, ընկերուհինե՞ր: Ավելի շուտ՝ քույրեր: Ասելը քիչ է: Ուր որ է միասին մայրապետ պիտի դառնային, բայց մեկ էլ Խոշիանը հայտնվեց, Չատոն հայտնվեց: Ընկերներ էին, բարում

* Abertzale (բասկ.), հայրենասեր, բասկյան հայրենիքի անկախության կողմնակից:

միասին մուս էին խաղում, հաճախ շաբաթ օրերը խորտկասերների ընկերակցությունում ընթրում էին, կիրակի օրերն էլ շրջում էին հեծանիվներով:

Երկուսն էլ սպիտակ զգեստով ամուսնացան ավանի եկեղեցում, մեկը՝ հունիսին, մյուսը՝ նույն՝ 1963-ի հուլիսին: Յուրաքանչյուրի պատվին էլ եկեղեցուց դուրս գալիս aurresku* պարեցին: Երկու կիրակին էլ՝ երկինքը կապույտ, ասես հարսանիքի համար հատուկ պատվիրված լիներ: Ու իրար հրավիրել էին իրենց հարսանիքներին: Միրենն ու Խոշիանը խնջույքը ավանից դուրս մի մառանում էին կազմակերպել, որը, ճիշտն ասենք, վատը չէր, բայց դե՛, էժան էր ու ինձած խոտի ու թրիքի գյուղական հոտերով հագեցած: Բիչո՛րին ու Չատոն նշեցին մի շքեղ ռեստորանում, մատուցողները՝ կոստյումներով, քանի որ Չատոյի (որ փոքր ժամանակ ման էր գալիս ճղած ալպարգատաներով**) գործերը լավ էին իր հիմնած փոխադրամիջոցների ընկերությունում:

Միրենն ու Խոշիանը մեղրամիսը Մադրիդում անցկացրին (չորս օր, էժան հյուրատուն Պլասա Մայորի մոտակայքում): Բիչո՛րին ու Չատոն Հռոմում մնալուց ու նորընտիր Պապի՝ ժողովրդին ուղղած ողջույնի խոսքը լսելուց հետո իտալական տարբեր քաղաքներ գնացին: Միրենը՝ ընկերուհուց լսելով ճամփորդության մանրամասները.

— Զգացվում է, որ հարուստ մարդու հետ ես ամուսնացել:

— Աղջի՛կ, որ ճիշտն ասեմ, չեմ էլ իմացել՝ ոնց: Քանի որ ականջներով խաբվեցի…

Հուզումների այդ օրը ընկերուհիները վերադառնում էին Սան Սեբաստիանի Հին թաղամասի մի չուռերիայից***: Կանգ առան դեպի բուլվար տանող փողոցի սկզբում: Փողոցի մեջտեղում քաղաքային ավտոբուս էր այրվում: Շենքերից մեկի պատուհանները չէին երևում՝ ճակատային մասը սև ծխի մեջ կորած: Երևում էր, որ վարորդին ծեծել էին: Հիսուն-հիսունհինգ տարեկան մարդ էր՝ գետնին նստած, դեմքն արյունլվա, բերանը բաց, ասես չէր կարողանում շունչ առնել, կողքին էլ՝ երկու անցորդ, որ նրան

* Aurresku, մեկի պատվին կատարվող բասկյան պար:

** Ալպարգատա, իսպանական կտորե թեթև մաշիկ, որի տակացուն պատրաստվում է ջուտի պարանից:

*** Չուռերիա, սրճարան, որտեղ պատրաստում են չուռո՝ ոլորաձև, ձեթի մեջ տապակած թխվածք, որը հիմնականում մատուցվում է տաք շոկոլադով:

մխիթարում ու օգնություն էին ցուցաբերում, ու մի ertzaina*, որ, դատելով ձեռքի շարժումներից, նրանց ասում էր, որ պետք է այդտեղից հեռանան:

— Լարված վիճակ է:

Միրենը.

— Ավելի լավ է՝ կտրենք Օկենդո փողոցով. շրջանցելով կհասնենք ավտոբուսի կանգառ:

Նախքան փողոցի անկյուն հասնելը՝ հետ նայեցին: Խորքում երևում էր Ertzaintza**-ի ֆուրգոնների շարանը՝ քաղաքապետարանի մոտ կանգնած: Ոստիկանները դիրքավորվել էին՝ կարմիր սաղավարտներով, դեմքերը բալակլավաներով փակած: Ռետինե փամփուշտներով կրակում էին առջևում կուտակված տղերքին, որոնք միաձայն, մեկ բասկերեն, մեկ իսպաներեն իրենց սովորական վիրավորանքներ էին տեղում՝ ծախո՛ւ արաբածներ, մարդասպաննե՛ր, բոզի տղե՛րք:

Փողոցային ընդհարման ընթացքում ավտոբուսը շարունակում էր այրվել: Անվերջանալի սև ծուխը վեր էր բարձրանում: Այրված անիվների հոտը տարածվում էր մոտակա փողոցներով՝ ցավեցնելով լորձաթաղանթն ու կծկծացնելով աչքերը: Միրենն ու Բիչո՛րին լսեցին որոշ անցորդների ցածրաձայն բողոքը.

— Չէ՞ որ ավտոբուսների համար բոլորս ենք վճարում, սա՞ է ժողովրդի իրավունքները պաշտպանելու ձևը. դե՛, վե՛րջ տվեք:

Մի կին կամացուկ սաստեց ամուսնուն.

— Շը՛շշ, հանկարծ չլսեն:

Այդ պահին ճանաչեցին կնգուղավորներից մեկին՝ բերանը թաշկինակով կապած: Վա՛յ, Խոշե Մարին է: Էստեղ ի՞նչ է անում: Տղեն Հին թաղամասի կողմից, նույն փողոցով էր գալիս, որով ընկերուհիները մի քանի րոպե առաջ էին անցել: Վեց-յոթ հոգի, մսավաճառի ու Մանոլիի տղաներն էլ հետները, կանգնեցին ծովամթերքի խանութի մոտ: Մի քանիսը Խոշե Մարիի հետ վազում էին՝ ուսապարկերը ձեռքերին: Դրանք մայթին դրեցին ու տեսնելով մոտեցողներին՝ միջից ինչ-որ բան հանեցին. չէր երևում՝ ինչ: Բիչո՛րին լավ տեսողություն ուներ ու ընկերուհուն ասաց՝ քարեր են: Եվ, իրոք, քարեր էին: Ամբողջ ուժով դրանք նետում էին ertzaina-ների վրա:

---

* Ertzaina, տեղական ոստիկան:

** Ertzaintza, Բասկերի երկրի տեղական ոստիկանությունը:

8

Վաղեմի պատահար

Հեծանվի անվադողի փայլը գրավեց Միրենի ուշադրությունը: Բավական էր՝ առավոտվա լույսի մի փոքր շողք Խոշիանի հեծանվի վրա ընկներ, որ նա վերհիշեր վաղեմի այդ պատահարը: Որտե՞ղ էր: Հենց այս նույն խոհանոցում: Սկզբում հիշեց, թե ճաշ պատրաստելու ընթացքում ոնց էին դողում ձեռքերը: Ընդամենը դա հիշելով՝ զգաց այդ նույն շնչահեղձության նշաններ-ը, որ այն հեռավոր օրը վերագրել էր տապակից բարձրացող տաքությանն ու ծխին: Նույնիսկ բաց պատուհանը չէր օգնում, որ շունչը տեղը բերի:

Ինն անց կես, տասը. վերջապես լսեց, որ գալիս է: Աստիճաններից հաստատ նրա քայլերի ձայնն էր լսվում: Էս ի՞նչ սովորություն է՝ վազելով բարձրանալը: Դե՛, հիմա հալդ կտեսնես:

Մտավ. տասնինը տարեկան, բարձրահասակ, մազերը մինչև ուսերը, ու էդ անիծյալ ականջօղը: Խոշե Մարին՝ առողջ, պինդ, ուտող երեխան, մեծացել, բարձրահասակ ու թիկնեղ երիտասարդ էր դարձել: Ընտանիքի բոլոր անդամներից մի-մի գլուխ բոյով էր՝ բացի ամենափոքրից. սա էլ էր բարձրահասակ ստացվել, թեև լրիվ ուրիշ տիպի մարդ էր: Եսիմ, Գորկան նիհար էր, փխրուն և ըստ Խոշիանի՝ ավելի խելացի:

Ունքերը կիտած՝ մայրը թույլ չտվեց՝ տղան մոտենա՝ համբուրելու:

— Որտե՞ղ էիր:

Իբր չգիտեր: Իբր նրան չէր տեսել հետմիջօրեին Սան Սեբաստիանի բուլվարում: Իբր ինքը չէր, որ վախենում էր, որ տղան հիվանդանոցում կհայտնվի՝ հագուստն այրված, ճակատը պատռած:

Տղան սկզբում խուսափողական պատասխաններ էր տալիս: Շատ ինքնամփոփ էր դարձել: Օ՛ֆ, բառերը աքցանով էր պետք քաշել: Ու քանի որ չէր պատասխանում, մայրն ամեն ինչ ասաց՝ ժամը, տեղը, քարերով լի ուսապարկը:

— Պատահաբար դու ավտոբուսն այրողների մեջ չէի՞ր: Տե՛ս՝ մեզ պատմությունների մեջ չգցես:

Ի՞նչ պատմություն, ի՞նչ բան՝ ձենը գլուխը գցեց: Միրենն էլ ի՞նչ արեց: Նախ շտապեց պատուհանը փակել: Թե չէ ամբողջ ավանը կլսի: Զավ-

թիչնե՛ր, Բասկերի երկրի ազատությո՛ւնը: Մայրը, պատրաստ պաշտպանվելու, տապակի պոչը բռնեց. թե պետք լինի խփել, կխփեմ: Հետո տեսավ տաք ձեթը ու հասկացավ՝ չի լինի: Խոշիանը՝ «Պագոետա» բարում, իսկ նա այստեղ, մենակ՝ իր խելագարված տղայի հետ, որը գոռում էր ազատագրման, պայքարի ու անկախության մասին: Ու այնքան ագրեսիվ էր բղավում, որ Միրենը չէր կարող չմտածել. «Հեսա ինձ կծեծի»: Ու դա իր զավակն էր, իր Խոշե Մարին, որին լույս աշխարհ էր բերել, կրծքով կերակրել, ու հիմա այս ի՞նչ ձև է, զավակը մոր վրա այդպես կբղավի՞:

Գոգնոցն արձակեց, կոլոլեց ու գցեց գետնին (կատաղա՞ծ, վախեցա՞ծ), մոտավորապես այնտեղ, որտեղ հիմա Խոշիանի հեծանիվն էր. սա էլ ձև չէ, էլի՛, երկաթի կտորը տուն բերելը: Հիշեց, որ չէր ուզում, որ տղան իրեն լացելիս տեսնի: Դուրս թռավ խոհանոցից: Աչքերը կկոցած, շուրթերը փքած, լացը զսպելու պատճառով ամբողջ դեմքը ծռմռած՝ մտավ Գորկայի սենյակը՝ ասելով, որ գնա, aita-ին կանչի: Գորկան, կռացած իր գիրքտետրի վրա, հարցրեց՝ ինչ է պատահել: Մայրը շտապեցրեց, ու տասնվեց տարեկան տղան փութով վազեց դեպի «Պագոետա» բար:

Քիչ անց Խոշիանը նեղսրտած եկավ տուն. խաղը կիսատ էր թողել:

— Էդ մորդ ի՞նչ ես արել:

Հասակների տարբերության պատճառով ստիպված էր ներքևից վերև նայելով խոսել զավակի հետ: Անվադողի փայլի մեջ Միրենը տեսնում էր ամբողջ դրվագը, նույնիսկ պետք չէր հիշողությունը լարել: Տեսնում էր կես պատ բարձրության հախճասալիկների արտացոլանքը, ցերեկային լույսի ձողերը, որոնց համեստ ճառագումը՝ բանվորական դասակարգին հարիր, լուսավորում էին պլաստիկից պահարանները, զգում էր չօդափոխված խոհանոցում տարածված տապակահոտը:

Քիչ էր մնում՝ ծեծեր նրան: Ո՞վ՝ ո՞ւմ: Ամրակազմ զավակը՝ թուլամորթ հորը: Թափ տվեց Խոշիանին: Երբեք այդ ձևով չէր վարվել: Իրար հետ երբեք խնդիր չէին ունեցել: Խոշիանը ծեծող հայր չէր: Ծեծո՞ղ: Նա՞: Այն մարդկանցից էր, որ ցածրաձայն նկատողություն էր անում ու հենց ընդհարման հոտ էր առնում, փախչում էր բար: Չէ՞ որ միշտ ամեն ինչ ինձ էր բաժին հասնում՝ երեխաների ուսումը, հիվանդությունները, տան անդորրը:

Երբ թափ տվեց հորը, նրա բերետը գլխից թռավ ու ոչ թե գետնին, այլ աթոռին ընկավ, ասես հրավիրել էին, որ նստի: Խոշիանը ապշահար, ահաբեկված, ալեհեր ու նոսրացած մազերը պարտվողական խառնված,

հետ քաշվեց՝ ընդմիշտ կորցնելով ընտանիքի *ալֆա* արուի կարգավիճակը, մի ընտանիքի, որը չէր կարող համարվել աններդաշնակ. ո՛չ, ո՛չ, առնվազն մինչև այդ պահը:

Մի անգամ, երբ Արանչան եկել էր ծնողների տուն, մորն ասաց.

— Ama, գիտե՞ս՝ մեր ընտանիքի խնդիրը որն է: Գրեթե չենք խոսում իրար հետ:

— Չէ հա՛:

— Կարծում եմ՝ իրար չենք ճանաչում:

— Դե՛, ես ձեզ բոլորիդ շատ լավ եմ ճանաչում: Չափից ավելի լավ:

Այդ խոսակցությունը նույնպես մնացել էր անվադողի՝ երկու շյուղերի արանքի փայլի մեջ պահպանված էն մյուս դրվագի հետ. ա՜խ, մինչև կյանքիս վերջ չեմ մոռանա: Դեռ տեսնում էր խոհանոցից դուրս եկող Խոշիանին՝ խեղճացած ու գլխիկոր: Անկողին մտավ սովորականից շուտ՝ առանց բարի գիշեր մաղթելու, ու կինը չլսեց նրա խռմփոցը: Մարդը ամբողջ գիշեր չքնեց:

Մի քանի օր չխոսեց: Առանց այդ էլ ուրբաթախոս էր: Իսկ հիմա՝ է՛լ ավելի: Խոշե Մարին՝ նույնը. լռեց այն չորս-հինգ օրը, որ դեռ տանն էր ապրում: Բերանը միայն ուտելու համար էր բացում: Հետո՝ մի շաբաթ օր, իրերը հավաքեց ու գնաց: Այն ժամանակ չհասկացանք, որ ընդմիշտ է հեռանում: Գուցե ինքն էլ դեռ չէր հասկացել: Խոհանոցի սեղանին մի կտոր թուղթ էր թողել՝ վրան՝ Barkatu*: Նույնիսկ չէր ստորագրել: Ահավասիկ, barkatu՝ եղբոր տետրից պոկած թերթի վրա, ու վերջ: Ո՛չ muxus**, ո՛չ ուր է գնում, ո՛չ ցտեսություն:

Մի տասն օրից եկավ՝ կեղտոտ հագուստով լի մի տոպրակ ձեռքին՝ լվանալու համար, ու մի պայուսակ՝ իր սենյակում թողած իրերի մի մասը հետը տանելու: Մորն էլ մի փունջ կալաներ նվիրեց:

— Ինձ համա՞ր է:

— Բա էլ ո՞ւմ համար:

— Որտեղի՞ց ես վերցրել այս ծաղիկները:

— Խանութից, իհարկե: Էլ որտեղի՞ց: Օդի՞ց:

---

* Barkatu (բասկ.), կներեք:

** Muxus (բասկ.), պաչիկ:

Նայում էր տղային: Իր զավակին: Փոքր ժամանակ նրան լողացնում էր, հագցնում, գդալ-գդալ կերակրում խյուսով: Ինչ էլ անի՝ ինքս ինձ ասացի, միշտ իմ Խոշե Մարին է լինելու, ու պետք է նրան սիրեմ:

Մինչ լվացքը պտտվում էր մեքենայի մեջ, նստեց ուտելու: Համարյա ամբողջ բոքոնը կերավ: Համա գազա՞ն է: Ու այդ պահին հայրը հողամասից տուն եկավ:

— Kaixo*.

— Kaixo.

Սա էր ամբողջ խոսակցությունը: Լվացքի մեքենան կանգ առավ, Խոշե Մարին թաց շորերը տոպրակը դրեց: Ասաց, որ իր բնակարանում կչորացնի: Բնակարանո՞ւմ:

— Մի քանի ընկերներով բնակարան ենք վարձել դեպի Գոյսուետա տանող մայրուղու սկզբում:

Խոշե Մարին հրաժեշտ տվեց՝ համբուրելով մորն ու ձեռքը ջերմորեն հպելով հոր ուսին: Պայուսակն ու տոպրակը ձեռքին՝ գնաց դեպի իր ընկերների, ու դե՛, արի՛ ու իմացի՛ր, էլ ում աշխարհը, որը, թեև մոտիկ էր՝ հենց նույն ավանում, բայց անծանոթ էր: Միրենը հիշեց, որ պատուհանից կախվել էր՝ տեսնելու, թե ոնց է փողոցով իջնում ու հեռանում, բայց այս անգամ չկարողացավ մնալ հուշերի գրկում, քանի որ Խոշիանը շարժեց հեծանիվը, ու անվադողի փայլն անհետացավ:

* Kaixo (բասկ.), բարև՛:

9

Կարմիր

Իկա՛ցա կատուն նորից սատկած ծիտ էր բերել: Ճնճղուկ էր: Երեք օրվա մեջ երկրորդն էր: Երբեմն մուկ էր բերում: Կատուները հաճախ են ձգտում մասնակցել ընտանիքի տնտեսվարմանը կամ էլ տերերին հավաստել իրենց երախտագիտությունը՝ բարի վերաբերմունքի համար: Շագանակենու բնով հեշտորեն բարձրանում է մինչև այն ճյուղը, որտեղից կարող է ցատկել երրորդ հարկի պատշգամբ: Այդտեղից անցնում է Բիչո՛րիի պատշգամբ, որի հատակին կամ թաղարի հողի վրա թողնում է իր բռնած կենդանիներին՝ որպես ընծա: Եթե սենյակի դուռը բաց է լինում, կարող է իր նվերը թողնել սենյակի գորգին:

— Քանի՞ անգամ քեզ ասեմ՝ էլ չբերես սրանք:

Զզվա՞նք են առաջացնում: Մի քիչ, բայց ոչ այն պատճառով, որ ձևեր է թափում: Վատն այն է, որ կատվի ընծաները սպանության հուշեր են արթնացնում: Սկզբում ավելով փողոց էր գցում դրանք: Բայց երբեմն դրանք ընկնում էին ներքևում կանգնած մեքենաների վրա, ու, պարզ է, որ դա չէր իր նպատակը: Հարևանների հետ վեճերից խուսափելու համար արդեն որոշ ժամանակ է, ինչ դրանք տանում է տան հետևի կողմը և փայտի օգնությամբ դնում աղբ հավաքելու բահի վրա, որից հետո թաքուն-թաքուն գցում է մոշի թփերի մեջ:

Ռետինե ձեռնոցներով հենց դա էր անում, երբ դռան զանգը տվեցին: Շավիղները, սովորության համաձայն, նախքան դուռը բանալիով բացելն այդպես է տեղեկացնում իր գալու մասին, որ մայրը հանկարծակիի չգա:

Տեսնելով ձեռնոցները.

— Մաքրությո՞ւն էիր անում:

— Քեզ չէի սպասում:

Բարձրահասակ որդին ու ցածրահասակ մայրը միջանցքում այտերով հպվեցին:

— Փաստաբանիս հետ էի հանդիպել: Մի մեծ բան չէր, ընդամենը մի քանի րոպե տևեց: Մոտերքում էի, մտածեցի՝ քեզ տեսնեմ ու ձեռքի հետ էլ արյունդ վերցնեմ, որ վաղը ստիպված չլինես հիվանդանոց գալ:

— Լա՛վ, բայց աշխատի՛ր անցած անգամվա պես չցավեցնել:

Շավիերը, որ սովորաբար լռակյաց է, ինչի մասին ասես չէր խոսում՝ մորը շեղելու համար. բազկաթոռին թառած, թաթերը լիզող Իկա՛ցա կատվի գեղեցիկ ու քնատ աչքերի, եղանակի տեսության, շագանակների թանկության մասին:

— Քո աշխատավարձով՝ շագանակները քեզ ինչո՞ւ են անհանգստացնում:

Բիչո՛րին, թևքը քշտած, արմունկը հենած հյուրասենյակի սեղանին, ուզում էր խոսել, ոչ թե ուրիշին լսել: Լեզվի ծայրին մի թեմա էր՝ Ներեան:

Ներեան՝ էս, Ներեան՝ էն: Գանգատներ, կիտած ունքեր, նախատինք:

— Քեզ եմ ասում, որովհետև տղաս ես, ու քեզ վստահում եմ: Չեմ դիմանում նրան: Երբեք էլ չեմ դիմացել: Ասում էին, որ առաջին ծննդաբերությունն է ամենածանրը, իբր մյուս անգամների համար ճանապարհ է հարթում: Բայց նրան ունենալն ավելի ցավոտ էր, քան քեզ ծնելը: Հետո էլ, ի՛նչ բարդ աղջիկ էր: Դեռահասության շրջանի մասին է՛լ չեմ ասում: Իսկ հիմա է՛լ ավելի վատ է: Կարծում էի, որ aita-ից հետո խելքը գլուխը կհավաքի: Սուգս ավելի դաժան դարձրեց:

— Էդպես մի՛ ասա: Նա էլ իր ձևով է տառապել՝ քեզնից ու ինձնից ոչ պակաս:

— Գիտեմ՝ աղջիկս է, ու չպետք է այդպես խոսեմ, բայց հանուն ինչի՞ լռեմ մի բանի մասին, որը չասեմ էլ՝ զգալու եմ: Ավելի ու ավելի դժվար է դառնում չզայրանալը: Արդեն այն տարիքում չեմ, որ որոշակի պահվածքի դիմանամ, հասկանո՞ւմ ես: Չորս օր է, ինչ Լոնդոն է գնացել իր անպետք ամուսնու հետ:

— Հիշեցնում եմ, որ իմ փեսան անուն ունի:

— Զզվում եմ դրանից:

— Էնրիկե է անունը, եթե դեմ չես:

— Ինձ համար նա Անտանելո է:

Ասեղը հեշտությամբ մտավ երակը: Բարակ խողովակն արագ լցվեց կարմիր գույնով:

Կարմիր: Շավիե՛ր, Շավիե՛ր, արագ տուն գնա՛, հորդ բան է պատահել: Հասկանալի էր, որ վատ բան է եղել: Ու այդ բառերը՝ հորդ բան է պատահել, նրա ներսում արձագանքում էին անվերջանալի մի ներկայում՝ կտրուկ շեղված ժամանակի սովորական ընթացքից: Չմանրամասնեցին,

թե ինչ է եղել, ոչ էլ նա համարձակվեց հարցեր տալ: Բայց նորությունը հայտնած գործընկերուհու դեմքից ու միջանցքներում նրան հանդիպած մարդկանց պահվածքից արդեն կռահում էր, որ հորը երևի թե շատ վատ բան է պատահել, մի շատ կարմիր՝ ամենավատ բանը: Ոչ մի վայրկյան չմտածեց, որ կարող էր վթար լինել: Հիվանդանոցից դուրս գալու ընթացքում տեսավ ոմանց վշտացած, կիտած ունքերը, վշտակցությունից կնճռոտված ճակատները, հանդիպեց հին ընկերոջը, որը կտրուկ շրջվեց, որ հետը վերելակ չմտնի: Ուրեմն, ETA-ն է: Մինչ անցնում էր կայանատեղիի կամընջակով, պատահարի լրջության երեք աստիճան պատկերացրեց. հաշմված մարմին, ցմահ անվասայլակ, դագաղ:

Կարմիր: Ձեռքն այն աստիճան էր դողում, որ չէր կարողանում բանալին կողպեքը մտցնել: Հետո բանալին ընկավ մեքենայի հատակին, ու նա ստիպված եղավ մեքենայից դուրս գալ ու փնտրել նստարանի տակը: Գուցե ավելի ճիշտ կլիներ տաքսիո՞վ գնալ: Ռադիոն միացնե՞մ, չմիացնե՞մ: Շտապելու պատճառով մոռացել էր բժշկական խալաթը հանել: Խոսում էր ինքն իր հետ, անիծում կարմիր լուսացույցը, մի քանի անգամ հայհոյեց: Վերջապես ավանի առաջին տները երևացին, որոշեց ռադիոն միացնել: Երաժշտություն էր: Նյարդայնորեն փոխում էր ալիքները: Երաժշտություն, գովազդ, դատարկաբանություն, կատակներ:

Կարմիր: Ertzainza-ն նրան պարտադրեց շեղվել ճանապարհից: Մեքենան թողեց եկեղեցու հետնաբակում՝ կայանման համար արգելված տեղում: Ուզում են՝ թող տուգանեն: Ուժեղ անձրև էր գալիս, ու նա, որքան հնարավոր է արագ, գնաց դեպի տուն: Մինչև այդ՝ նորությունը լսել էր ռադիոյով, թեև հաղորդավարը տեղյակ չէր տուժածի ֆիզիկական վիճակի մասին: Բացի այդ՝ ազգանունը սխալ ասաց: Ավտոտնակի ու ծնողների տան արանքում Շավիերը տեսավ արյան բիծը, որը, խառնվելով անձրևաջրին, կամաց-կամաց սահում էր դեպի մայթեզր: Այնքան էր շտապում, այնքան նյարդայնացած էր, որ քիչ էր մնում բծի վրայով անցներ: Ertzainza-ի ոստիկաններին ներկայացավ որպես զավակ: Ո՞ւմ զավակը: Ոչ ոք հարց չտվեց: Սպիտակ խալաթը նրա առջև ճանապարհ հարթեց, թեև նրա տեսքից այնքան պարզ էր երևում, որ սպանվածի ազգականն է, որ ոստիկանների մտքով չանցավ հարցնել, թե ուր է գնում:

— Դեռ ինձ չի էլ զանգահարել:

— Գուցե զանգել է, իսկ դու դուրսն ես եղել: Ես քեզ երեկ էլ, նախորդ օրն

էլ զանգել եմ: Չէիր վերցնում: Դա էլ պատճառներից մեկն էր, որ եկա քեզ տեսնելու: Ուզում էի համոզվել, որ լավ ես:

— Իսկ եթե այդքան անհանգիստ էիր, ինչո՞ւ ավելի շուտ չեկար:

— Որովհետև գիտեի՝ ուր ես գնացել և որտեղ ես անցկացրել վերջին գիշերները: Ամբողջ ավանը գիտի:

— Իմ մասին ի՞նչ պիտի իմանան:

— Գիտեն, որ դու ավտոբուսից գործարանային թաղամասում ես իջնում ու հետո դեպի տուն ես քայլում այնպես, որ ոչ մեկի չհանդիպես: Ինձ հիվանդանոցից մեկը պատմեց, որ քեզ տեսել է: Ես էլ չանհանգստացա: Գուցե Ներեան բազմիցս փորձել է հետդ կապվել, խոսել: Չեմ հարցնելու՝ ինչու ես այնտեղ գնում: Քո ավանն է, քո տունը: Բայց եթե որոշել ես անցյալի պատմությունները մեջտեղ բերել, շնորհակալ կլինեմ, որ ինձ տեղյակ պահես:

— Դա իմ գործն է:

Շավիերը գործիքներն ու մոր արյան նմուշը դրեց պայուսակը:

— Ես էլ այդ գործի մի մասն եմ:

Մոտեցավ կատվին, որը սիրահոժար թույլ տվեց շոյել իրեն: Ասաց, որ ճաշին չի մնալու: Էլի մի քանի բան ասաց: Դուրս գալուց առաջ մորը համբուրեց ու քանի որ գիտեր, որ նայելու է պատուհանից, նախքան մեքենան նստելը՝ վեր նայեց ու ենթադրելով, որ վարագույրի հետևում է, ձեռքով հրաժեշտ տվեց:

10

Հեռախոսազանգեր

Հեռախոսը զնգաց: Հաստատ աղջիկն է: Բիչո՛րին չվերցրեց հեռախոսը, թեև դրա համար ընդամենը պետք էր ձեռքը մեկնել: Թող զանգի, թող զանգի: Ու աղջկան էր պատկերացնում, որ ավելի ու ավելի անհամբեր ասելիս կլինի՝ ama, վերցրո՛ւ, ama, վերցրո՛ւ: Չվերցրեց: Տասը րոպեից հեռախոսը նորից զնգաց: Ama, վերցրո՛ւ: Աղմուկից անհանգստացած կատուն դուրս եկավ փողոց, քանի որ պատշգամբի դուռը բաց էր:

Բիչո՛րին, պարային շարժումներ անելով, մոտեցավ Չատոյի լուսանկարին:

— Հետս կպարե՞ս, Չատիտո՛:

Մի քանի վայրկյան անց հեռախոսը լռեց:

— Աղջիկդ էր՝ քո սիրելին: Ի՞նչ է նշանակում՝ որտեղից իմացա: Ա՛խ, ամուսնյա՛կս, դու բեռնատարներից էիր գլուխ հանում, ես՝ իմ գործերից:

Ներեան ո՛չ հոր հոգեհանգստին եկավ, ո՛չ էլ թաղմանը:

— Ով գիտի, մի օր կարող է ալցհեյմեր ունենամ, մոռանամ, որ քեզ սպանել են, նույնիսկ սեփական անունս չհիշեմ, բայց երդվում եմ՝ եթե գլխումս գոնե մի կաթիլ խելք լինի, չեմ մոռանա, որ մեր կողքին չէր այն ժամանակ, երբ նրա կարիքը ամենից շատ էինք զգում:

Սպանության նախորդ տարին աղջիկը Սարագոսայում էր հաստատվել՝ իրավաբանություն ուսանելու համար: Լոպես Ալյուե փողոցի ուսանողական իր բնակարանում, որ վարձակալում էր երկու ընկերուհիների հետ, հեռախոս չկար: Բիչո՛րին, երբ գնացել էր աղջկան տեսնելու, մոտը գրել էր շենքի ներքևում գտնվող բարի հեռախոսահամարը՝ հրատապ դեպքերի համար: Բջջայիննե՞ր: Որքան հիշում էր, այն ժամանակ քիչ մարդ բջջային ուներ: Մինչև այդ օրը՝ Բիչո՛րին երբեք այնպիսի իրավիճակում չէր հայտնվել, որ ստիպված լիներ շտապ զանգել աղջկան:

Շավիերը մոր աղաչանքով (քանի որ Բիչո՛րին երկու հանգստացնող հաբերից հետո պապանձվել էր և ունակ չէր երկու բառ իրար կապել) զանգեց բար, բացատրեց, թե ով է, ծանրակշիռ լրջությամբ ասելիքն ասաց ու բարմենին նկարագրեց քրոջը: Մարդը՝ շատ սիրալիր, թե.

— Հենց հիմա մեկին կուղարկեմ հետևից:

Շավիերն էլ ավելացրեց, որ խնդրում է քրոջը փոխանցեն, որ անմիջապես, անհապաղ զանգահարի տուն, ու պնդեց, որ շտապ է, շատ-շատ շտապ: Պատճառը չասաց, քանի որ մայրն էր այդպես խնդրել: Այդ պահին հեռուստացույցն ու անթիվ-անհամար ռադիոկայաններ արդեն տարածել էին նորությունը, հետևաբար Շավիերն ու Բիչո՛րին ենթադրում էին, որ Ներեան արդեն տեղյակ կլինի:

Բայց նա չզանգեց: Անցան ժամեր: Առաջին հայտարարությունները եղան. վայրենի ահաբեկչություն, դաժան սպանություն, լավ մարդ էր, դատապարտում ենք, մերժում ենք և այլն: Մթնում էր: Շավիերը նորից հավաքեց բարի համարը: Բարմենը խոստացավ նորից ուղարկել իր տղային: Ու ոչ մի լուր: Ներեան զանգեց միայն հաջորդ օրը առավոտյան: Երկար ու լուռ սպասեց, որ մայրն ավարտի լացուկոծն ու սիրտը թեթևացնի՝ կերկերուն ձայնով պատմելով դեպքի մանրամասները, որից հետո մռայլ, բայց վճռական տոնով հայտնեց, թե որոշել է մնալ Սարագոսայում:

Ի՞նչ: Բիչո՛րիի հեծկլտոցը մեկեն կտրվեց:

— Առաջին իսկ ավտոբուսով տուն ես գալիս: Չհակաճառե՛ս: Հորդ սպանել են, իսկ դու Էնտեղ հանգիստ նստա՞ծ ես:

— Հանգիստ չեմ, ama: Շատ տխուր եմ: Չեմ ուզում aita-ին մեռած տեսնել: Դա նրան չի կենդանացնի: Չեմ ուզում թերթերում հայտնվել: Չեմ ուզում ավանի մարդկանց հայացքներին դիմանալ: Գիտես, թե որքան են մեզ ատում: Խնդրո՛ւմ եմ, փորձի՛ր հասկանալ ինձ:

Շատ արագ էր խոսում, որ մայրը չհասցնի ընդհատել, ու որ իր կրծքից մինչև բերանը հասնող զսպված փղձկոցից ձայնը չկտրվի:

Ու աչքերը լցրած՝ շարունակեց.

— Սարագոսայում ոչ ոք ինձ չի կապում aita-ի հետ: Նույնիսկ իմ դասախոսները: Դա ինձ հնարավորություն կտա այստեղ հանգիստ ապրել: Չեմ ուզում, որ որևէ մեկը համալսարանում փսփսա. «Նայի՛ր, սա այն սպանվածի աղջիկն է»: Իսկ եթե հիմա գամ ավան ու հայտնվեմ հեռուստացույցի էկրանին, համալսարանում ամեն ոք կիմանա, թե ես ով եմ: Այնպես որ, այստեղ եմ մնում ու խնդրում եմ, պահվածքս մի՛ քննադատիր: Ես նույնչափ վիատված եմ, որքան դու: Թո՛ւյլ տուր, որքան էլ դժվար լինի քեզ համար, որ ես իմ ուզած ձևով սգամ:

Բիչո՛րին փորձեց միջամտել խոսակցությանը, բայց Ներեան լսափողը դրեց: Ու ավանում միայն մեկ շաբաթից հայտնվեց:

Իր հաշվարկներն արեց: Ովքե՞ր գիտեին Սարագոսայում, որ նա ETA-ի վերջին, քիչ անց՝ նախավերջին, հետո էլ՝ նախանախավերջին զոհի դուստրն էր (ֆակուլտետից, հարևաններից, ընկերներից): Իր երկու դրացիներն էին, ու վերջ, եթե, իհարկե, այդ երկուսը լեզուները չէին երկարացրել: Ազգանունն էլ բավականաչափ տարածված էր Բասկերի երկրում, մյուս տեղերում էլ էր հաճախ հանդիպում: Եթե մեկը հարցնի՝ նա ETA-ի սպանած Գուիպո՛ւսկոայի գործարարի ազգակա՞նն է, կասի՝ ո՛չ:

Իր դրացիներից առաջ դեպքի մասին այն տղան՝ Խոսե Կարլոսն իմացավ: Եկել էր Ներեայի հետևից՝ միասին մոտակա բարը գնալու, որտեղ հավաքվում էին ուսանողները: Բոլորը որոշել էին, որ մի քիչ ուշ մի քանի մեքենայով գնալու են անասնաբուժական ֆակուլտետում կազմակերպված երեկույթին: Մինչ բարում կատակում ու ծիծաղում էին, նորությունը տապալեց Ներեային: Կողք քաշելով Խոսե Կարլոսին՝ խնդրեց, որ իրեն մենակ չթողնի ու ոչ ոքի չասելով՝ Ներեային ուղեկցի մինչև բնակարան: Փակվեցին սենյակում: Տղան փորձում էր մխիթարանքի բառեր գտնել, բայց չէր ստացվում: Բավական երկար դատարկաբանում էր ընդդեմ ահաբեկիչների ու ոչ մի բան չձեռնարկող կառավարության: Հետո իր վշտահար ընկերուհու խնդրանքով գիշերը մոտը մնաց:

— Իրո՞ք ուզում ես:

— Դրա կարիքն ունեմ:

Տղան նախապես ներողություն խնդրեց, որ գուցե էրեկցիա չունենա: Անընդհատ խոսում էր:

— Հորդ սպանել են, ա՛խր, սպանել են:

Չէր կարողանում կենտրոնանալ էրոտիկ խաղերի վրա, հայհոյախառը բառեր էր վրա բերում, աղջիկը փորձում էր նրա բերանը փակել համբույրներով: Կեսգիշերվա մոտ, աղջիկը վերևից, վերջապես արագ կենակցեցին: Խոսե Կարլոսը շարունակեց ինչ-որ բացականչություններ, հայհոյանքներ, պարսավանքներ արձակել, մինչև որ հոգնածությունը հաղթեց, մի կողմ շուռ եկավ ու քնեց: Լույսը մարած՝ Ներեան ամբողջ գիշեր աչք չկպցրեց: Բարձին հենված՝ ծխում էր՝ հորն առնչվող հուշերի մեջ սուզված:

Հեռախոսը նորից զնգաց: Այս անգամ Բիչո՛րին վերցրեց լսափողը:

— Ama, վերջապե՛ս: Երեք օր է՝ զանգում եմ:

— Լոնդոնում լա՞վ էր:

— Ֆանտաստիկ: Որքան էլ գովես՝ քիչ է: Դռան գորգիկը փոխե՞լ ես:

11

Ջրհեղեղ

Երեք օր տեղատարափ, ինչպես ասում են, բիբլիական անձրև էր գալիս: Գիշերները անկողնում Խոշիանն անհանգիստ ականջ էր դնում կտուրներին ու փողոցներին խփվող կատաղած կաթիլների շրխկոցին: Ու հորդառատ անձրևի ընթացքում՝ աշխատանքային ժամերին, ամեն անգամ դուրս նայելիս տարուբերում էր գլուխը՝ տեսնելով ջրի անվերջանալի այդ հոսքը, որը գունաթափում էր դիմացի սարերն ու վտանգավոր բարձրացնում էր գետի ջրերը: Հողամասը հարյուր տոկոս քաքմեջ է եղել: Արդեն երեք օր ու գիշեր այդ ջրվեժն էր: Ու վերջը չէր երևում:

Բանջարեղենի գլուխը քարը: Պա՛հ, նորից կտնկեմ: Ծառե՞րը: Կդիմանան: Ընկուզենիների նման հո չե՞ն, պետքները չէ: Խոշիանին ավելի անհանգստացնում էր գործիքների կորուստն ու այն, որ ջուրը կարող էր տանել առջևի պատնեշն ու վանդակը, որտեղ ճագարներ էր բուծում: Գործընկերոջը պատմեց իր մտահոգությունը:

— Եթե պատնեշը բետոնից ես սարքել, չի քանդվի:

Խոշիանն էլ, թե.

— Պատնեշի հերն էլ անիծած: Բայց առանց դրա՝ գետը սոսկալի քանակի հող կքշի-կտանի: Մի ահռելի խորշ կառաջանա: Լա՛վ, հեղեղատ: Ճագարները հաստատ կխեղդվեն: Խաղողի մասին էլ չեմ ասում:

— Erribera*-ի վրա է հողամասդ, դրա պատճառով է:

— Փաստորեն, որտեղ հողը պարարտ է՝ հենց էդտեղ էլ հերներս անիծվում է:

Աշխատանքային օրվա վերջում գործարանից ուղիղ գնաց հողամաս: Դեռ անձրևո՞ւմ էր: Ուղղակի հեղեղ էր թափվում: Ձառիվայրով իջնելիս՝ հովանոց, կողքի դրած բերետ. տեսավ, որ Ertzaintza-ն կանգնեցրել էր կամրջի երթևեկությունը: Արագընթաց կեղտաջուրը համարյա հասել էր ճաղաշարին: Անդուր պատկեր էր: Եթե ջուրն արդեն կամրջի վրայով է անցնում, ապա ո՞վ գիտե՝ ինչ արած կլինի հողամասը:

* Erribera (բասկ.), ափ, գետափ:

Շրջանցեց տների հետնամասով: Դե՛, պարզ է, մի բան է՝ գետը վարարի, և լրիվ ուրիշ, որ վարարելուց բացի՝ պոկի, տանի, քանդի: Սեղմեց զանգի կոճակը՝ բերանը հպելով դռան խոսասարքին, ներկայացավ, դուռը բաց արեցին: Ու ընկերոջ տան պատշգամբում, որ դեպի գետ էր նայում.

— Մատաղ լինեմ, հողամասս ո՞ւր մնաց:

Ծառերի բները խորտակված նավակների էին նման, ճյուղերը մեկ երևում, մեկ սուզվում էին կաթնասրճագույն գետի ջրերում: Մի ժանգոտած բիդոն էր սլանում՝ խենթի պես ցատկելով. բազմաթիվ պլաստիկ իրեր էին սուրում: Զայրացած գետից մամուռի ու նամշածի ուժեղ գարշահոտ էր գալիս: Ընկերը, գուցե Խոշիանի ողբն ու մտահոգությունը փարատելու համար, մատնացույց արեց դիմացի ափը՝ ասելով.

— Այն կողմ նայի՛ր, Առիսաբալգա եղբայրների արհեստանոցի վիճակը տե՛ս:

Սրա պատճառով սնանկանալու են:

— Ճագարնե՞րս, դրա… մերը:

— Եղբայրները մի վագոն փող պիտի ծախսեն:

— Ամբողջ աշխատանքս ջուրն ընկավ: Նույնիսկ վանդակներն էի իմ ձեռքով սարքել: Ժամերո՛վ տանջվել եմ:

Մի քանի օր անց անձրևը դադարեց, ջուրն իջավ: Խոշիանի ռետինե սապոգները մինչև կեսը հողամասի փափկած հողի մեջ էին խրվում: Ծառերը, ցեխի մեջ կորած, փրկվել էին, նաև ընկուզենիները, և, օ՛, հրա՛շք, խաղողը: Մնացածը՝ լացդ կգար: Պատնեշը, որը զսպում էր ջուրը, հիմքից պոկվել էր ու անհետացել: Էլ ի՛նչ լոլիկի թուփ, ի՛նչ պրաս, ոչինչ չէր մնացել: Ներքևը՝ գետի մոտ, հոսանքը մեծ քանակությամբ հող էր տարել՝ վրան եղած ելակի, կարմիր հաղարջի, կալաների ու վարդերի txoko*-ի հետ: Փայտաշեն տնակը զրկվել էր մի պատից ու ծածկից: Ճագարներն իրենց վանդակներում էին՝ տիղմի մեջ թաղված, փքված: Սատկած: Գործիքները… Աստված գիտի՝ որտեղ էին:

Խոշիանն այդ օրերին՝ իր ազատ ժամանակ, շարունակ նստում էր ճաշասենյակի բազմոցին՝ արմունկները ոտքերին հենած, գլուխը ձեռքերի մեջ: Ցավ մարմնավորող մի քանդակ: Նրան հարցեր էին տալիս. չէր պատասխանում:

* Txoko (բասկ.), անկյուն:

— Թերթ կուզե՞ս:

Պատասխան չկա: Մինչև որ Միրենի համբերությունը հատավ:

— Ա՛յ մարդ, եթե հողամասդ քեզ այդքան ցավ է պատճառում, գնա՛ ու մի բան արա՛:

Ենթարկվելով վեր կացավ: Ասես հրամանի էր սպասում: Մյուս օրն ավելի լավ տրամադրություն ուներ: Նորից հիշեց իր սովորությունը՝ «Պագոետա» բարում ընկերների հետ թուղթ խաղալը: Բարից գոհ վերադարձավ՝ համարյա երանության մեջ: Պարզվում է՝ ընկերները նրան խորհուրդ էին տվել գետի ու հողամասի միջև բետոնե պատ կանգնեցնել:

— Մեկ է, վրադ որքա՞ն է նստելու: Չորս դուրո*:

Աջ կողմը քորելով՝ ընթրիքի ընթացքում (օձաձուկ՝ թանձրուկով, մի կուժ գինի՝ գազով ըմպելիքի հետ) Միրենին պատմեց, որ Չատոն առաջարկել էր մի բեռնատար հող բերել՝ առաջացած փոսը լցնելու համար:

— Լավ հող է լինելու, գիտե՞ս: Նավառայից է բերելու: Եվ քանի որ էնտեղից եկող բեռնատար ունի, անվճար կլինի:

Բայց նախքան դա՝ պետք էր պատը կառուցել: Դրանից առաջ էլ՝ մաքրություն անել: Մի հոգու համար չափից շատ էր աշխատանքը: Ու ամենակարևորը՝ ե՞րբ: Աշխատանքից հետո՞:

Միրենը, թե.

— Ա՛հ, դու գիտես:

Ամուսնուն խորհուրդ տվեց տղաներին հարցնել. գուցե հորը ձեռք մեկնեին:

Այդ պատճառով է, որ Խոշիանը չպառկեց՝ սպասելով, որ Գորկան գար, ու թե՝ Գորկա՛, կիրակի հողամասում եղբորդ հետ ինձ օգնե՛ք և այլն: Տղան չպատասխանեց: Էս տղան հեչ եռանդ չունի: Ու ոգևորելու համար, թե.

— Կվերջացնենք, կգնանք սիդերիա՝ մի-մի հատ չուլետոն** ուտելու: Ի՞նչ կասես:

— Լա՛վ:

Էլ բան չասաց: Եկավ կիրակին: Արև, լավ եղանակ, գետն էլ՝ նորից իր ափերում: Խոշիանը չմասնակցեց հեծանվավազքի հերթական փուլին,

* Դուրո, իսպանական 5 պեսետայի ժողովրդական անվանումը:

** Չուլետոն, սթեյք:

թեև հեծոն կարևոր է, հողամասը՝ ավելի: Հողամասն իր կրոնն է: Մի անգամ այդպես էր ասել «Պագոետա» բարում՝ պատասխանելով ընկերների կատակներին: Որ երբ մեռնի, թող Աստված, դրախտ կամ նման տըխմարություններ առաջարկելու փոխարեն, իրեն հողամաս տա ունեցածի պես: Բոլորը ծիծաղեցին:

Արդեն փողոցում էին.

— Խոշե Մարիին ասե՞լ ես, որ իննին գա:

— Ո՛չ, չեմ ասել:

— Չէ հա՛: Ինչո՞ւ:

Ու այդ ժամանակ հորը պատմեց, պետք է պատմեր, էլ հնարավոր չէր թաքցնել:

— Արդեն երկու շաբաթ է, ինչ եղբայրս ավանում չի ապրում:

Խոշիանը կանգ առավ զարմացած:

— Բայց մեզ բան չի ասել: Գոնե ինձ որ՝ հաստատ: Չգիտեմ, ama-ին՝ գուցե:

Թե՛ բոլորդ, բացի ինձնից, գիտեիք: Հիմա որտե՞ղ է ապրում:

— Չգիտենք, aita: Ենթադրում եմ, որ Ֆրանսիա է գնացել: Ինձ վստահեցրին, որ երբ հնարավոր լինի, կասի:

— Ովքե՞ր:

— Ավանի ընկերներս:

Լուռ շարունակեցին ճանապարհը: Հենց հասան, Խոշիանը հարցրեց.

— Եթե Ֆրանսիայում է, բա ո՞նց է դասավորել գործի գնալու հարցը:

— Աշխատանքից դուրս է եկել:

— Բայց չէ՞ որ դեռ աշակերտելը չէր վերջացրել:

— Դե՛, էդպես է:

— Իսկ ձեռքի գնդա՞կը:

— Դա էլ է թողել:

Աշխատանքը երկուսով արեցին, ամեն մեկը՝ հողամասի մի ծայրում: Տասնմեկի կողմերը Գորկան հորն ասաց, որ պետք է գնա: Հետո՝ հրաժեշտ տալիս, տարօրինակ էր, բայց հորը գրկեց: Երբեք չէին գրկախառնվել, հիմա ի՞նչ եղավ:

Հողամասում մենակ մնալով՝ Խոշիանը մինչև ճաշի ժամը շարունակեց փորել ցեխ դարձած հողը, ջրի շիթով մաքրեց այս ու այն կողմը, ցեխից փրկված գործիքները դրեց արևի տակ՝ չորանալու: Ֆրանսիայո՞ւմ է:

Այդ դմբոն ի՞նչ է կորցրել Ֆրանսիայում: Ու եթե չի աշխատում, ապրուստն ինչպե՞ս է հոգում:

12

Պատնեշը

Դրեցին պատնեշը: Ովքե՞ր: Խոշիանը, Գորկան (որ խոստացել էր ընկերոջը հետը բերել, որն ի վերջո չեկավ) և Գիլյերմոն (Գիլյերմո՞ն)՝ այն ժամանակ դեռ հաճելի ու օգնության հասնող փեսան:

Տարիներ առաջ Արանչան՝ խոհանոցում, թե.

— Ama՛, ընկեր ունեմ:

— Հա՞: Ավանի՞ց է:

— Ռենտերիայից է:

— Անունն ի՞նչ է:

— Գիլյերմո:

— Գիլյերմո՞: Հո ռազմական ոստիկանությունի՞ց չէ:

Բայց, իհարկե, առանց Չատոյի օգնության ոչ մի բան էլ չէին կարողանա անել: Չէ մի չէ՝ կանեին: Բանն այն է, որ Չատոն, բացի տախտակ տրամադրելուց, բետոն շաղախող մի բեռնատար ուղարկեց, որի գինը Խոշիանը երբեք չիմացավ, ոչ էլ իմացավ՝ մեքենան աշխատեցնող տղան վարձատրվե՞լ էր, թե՞ ոչ: Չատոն ասել էր՝ հանգիստ եղի՛ր, կառուցապատող այդ ընկերությունն ինձ պարտք է: Այնպես որ, Խոշիանը միայն բետոնի համար վճարեց: Դեռ ոչ հողամասն էր կարգի բերել, ոչ էլ՝ ճագարների վանդակը, իսկ վարարումներից պաշտպանող նոր պատնեշն արդեն աչք էր շոյում, որը, ըստ Չատոյի, կպաշտպանի անցած ամսվա վարարումների պես աղետից:

Մեկ այլ խնդիր էլ պատնեշի առջև եղած փոսն էր, այնքան մեծ, որ կարելի էր մեջը ձուկ բուծել: Չկների մասին Խոշիանն ասաց՝ ձեռքերը տարածելով երևակայական թյունոսի չափով: Ընկերն էլ, թե՝ պա՛հ, լուծվելիք խնդիր է: Չատոն կատարեց «Պագոետա» բարում տված խոստումը: Մի քիչ ուշ, բայց կատարեց: Որքա՞ն ուշ: Մի երկու շաբաթից երևի: Մինչև որ Նավառայից՝ Անդոսիլյայից, փոխադրամիջոց գտավ: Հետդարձի ճանապարհին վարորդին ուղարկել էր, որ մի թափք պարարտ հող բերի: Ամենայն հավանականությամբ Նավառայում ևս պարտք էին Չատոյին: Չատոյին շատ մարդիկ էին պարտք: Խոշիանը, բնականաբար, շնորհակալ էր: Բայց եթե պետք լիներ վճարել, կվճարեր, իհարկե:

Եվս մի խնդիր. երբ հողը թափեցին՝ ավելի կարմրավուն, քան շուրջը եղածն ու ավելի լավ որակի, տեսան (Չատոն էր բեռնատարի ղեկին), որ եղածը չի լցնելու փոսը:

Խոշիանը, թե.

— Առնվազն երեք բեռնատար հող է պետք:

Լուծումը. դարավանդներ են պետք:

— Երկու մասի բաժանի՛ր հողամասդ ու միացրո՛ւ աստիճաններով կամ թեքահարթակով՝ ձեռնասայլակի համար: Եթե նորից ջրհեղեղ լինի, ջուրը ստորին մասում կկուտակվի: Եթե բախտդ բերի, հողամասիդ միայն ներքևի մասը կավերվի, ոչ թե ամբողջը՝ այս անգամվա պես:

Չատոն արագ էր մտածում, լիքը գաղափարներ ուներ: Բոլորը համամիտ էին, որ նա այդպիսին է: Նրա մասին խոսելիս մի հին ասացվածք էին հիշում. քաղցը խելոքացրել է: Բայց Խոշիանի միտքը ճկուն չէր: Դե՛, պատահում է: Մի քիչ ավելի ճարպիկ լիներ, կարող էր գործընկեր դառնալ բեռնատարների բիզնեսում, բայց կասկածների մեջ ընկավ, թափը չհերիքեց, Միրենն էլ հետ պահեց: Չատոն էր գործարարն ու համարձակը: Ավանում բոլորն էին այդ կարծիքին մինչև այն պահը, երբ մի օր հայտնվեց TXATO ENTZUN PIM PAM PUM գրությունը: Ու նրա անունն այլևս չտվեցին, ասես այդ մարդը երբեք գոյություն չէր ունեցել:

Մի խոսքով՝ այո՛, գաղափարներ ուներ, բայց նաև խնդիր: Ի՞նչ տիպի խնդիր:

Ասաց.

— Ինձ նորից են նամակ ուղարկել:

«ETA-ն՝ բասկյան հեղափոխության զինված կազմակերպությունը, դիմում է Ձեզ՝ պահանջելով քսանհինգ միլիոն պեսետա՝ անկախությանն ու սոցիալիզմին ուղղված բասկյան հեղափոխական գործունեության կարիքների համար: Կազմակերպության տեղեկությունների համաձայն…» և այլն:

Այդ խնդրի պատճառով քունն էր կորցրել: Խոշիանը, թե՝ բնական է, ով էլ լիներ՝ քունը կկորցներ:

— Իսկ տնեցինե՞րը:

— Չգիտեն:

— Ավելի լավ:

Որոշել էր ընտանիքը մղձավանջից հեռու պահել ու սկզբում (ի՛նչ միամիտն էր, բայց, իրոք, ի՛նչ միամիտը) մտածել էր, որ խնդիրը կարելի է

արագ լուծել՝ սովորական գործարքի նման: Կվճարեմ ու հանգիստ կապրեմ: Նամակները՝ կացնին փաթաթված օձով ու ETA-ի խորհրդանիշներով, ուղարկել էին իր ընկերության հասցեով: Առաջինը՝ 1.6 միլիոն պեսետա: Որևէ մեկին որևէ բան չասելով՝ նստեց մեքենան ու հասավ Ֆրանսիա՝ ոմն պարոն Օշիայի հետ հանդիպելու: Թեթևացած վերադարձավ ավան՝ ճանապարհին երաժշտություն լսելով: Սրիկայություն էր, իհարկե, բայց, դե՛, ինչ անես: Մի քանի օր անց ահաբեկչություն տեղի ունեցավ. զոհված մարդ, հուսահատ այրի, որբեր, դատապարտման և պարսավանքի հայտարարություններ: Ու Չատոն խղճի խայթ զգաց. վա՛յ, ձեր տիրոջ մերը, իր փողը, ով գիտի, պայթուցիկներ ու ատրճանակներ գնելուն է ծառայել: Խոշիանն ասաց, որ, այո՛, հասկանում է նրան: Ինչևէ, արդեն վճարել էր ու կարծում էր, որ որոշ ժամանակ՝ գուցե մի քանի տարի, հանգիստ կթողնեն: Այո՛, այո՛: Չորս ամիս էլ չէր անցել, երբ հաջորդ նամակը ստացավ:

— Հիմա էլ քսանհինգ միլիոն են ուզում: Շատ է, ահավոր մեծ գումար է:

Խոշիանը նույն կարծիքին էր.

— Բասկերի միջև այդպիսի բաներ չպետք է լինեն:

— Անկեղծ ասա. շահագործողի տե՞սք ունեմ: Ամբողջ կյանքում էշի պես բանել եմ ու մյուսներին աշխատանքով ապահովել: Հենց հիմա տասնչորս աշխատող ունեմ: Ի՞նչ անեմ: Ընկերությունս տեղափոխեմ Լոգրոնիո ու նրանց էստե՞ղ թողնեմ՝ առանց աշխատավարձի, ապահովագրության ու մի կտոր հացի:

— Գուցե սխալվել են ու ուրիշի համար նախատեսված նամակը քե՞զ են ուղարկել:

— Աղքատ չեմ, չէ՛, իհարկե: Բա ծախսե՛րը, մեկ սրանց հարկերը, մեկ մյուսների, էլ մնացածը չպատմեմ, գլուխդ չտանեմ, դե՛, պատկերացնում ես. նորոգումներ, վառելանյութ, վարկեր ու մնացածը: Այդքանից հետո չկարծես, թե ոսկու մեջ թաղված եմ: Չէ մի չէ: Մարդիկ չգիտես ինչեր են երևակայում: Տասը տարի առաջ առած մեքենան եմ դեռ քշում: Մի քանի բեռնատարներ հնացել են, բայց որտեղի՞ց փող վերցնեմ՝ նորերն առնելու համար: Վերջերս վարկ եմ վերցրել՝ երկու հատ գնելու նպատակով: Ու ինձ ամենից շատ ցավ է պատճառում այն, որ սրանցից մեկը, որին աշխատանքով եմ ապահովում, գնացած կլինի ահաբեկիչների մոտ՝ հեքիաթ պատմելու, թե լսե՛ք, սա փողերի մեջ թաղված է:

Գլուխը տարուբերում էր նյարդային շարժումով, աչքերի տակ՝ այտուցներ անքնության հետևանքով:

— Բայց իմ պատճառով չէ, իմանաս: Մարդասպանների այդ ոհմակը ինձ չի վախեցնում: Թող վրաս կրակեն, ու ես խաղաղվեմ: Մեռած, բայց խաղաղ: Նամակի մեջ Ներեայի անունն են տալիս, իր ուսման վայրն ու այլ մանրամասներ են նշում:

— Լա՛վ էլի:

— Ինձ դա է տապալում: Դու ի՞նչ կանեիր:

Խոշիանը ծոծրակը քորեց՝ նախքան պատասխանելը:

— Դե՛, չգիտեմ:

Թզենու ստվերում կանգնած՝ ծխում էին: Լավ եղանակ էր, քարի վրա մողեսը մոմել էր արևի տակ: Բեռնատարը հողամասի մեջտեղում էր՝ ակերը կիսով չափ խրված փափուկ հողի մեջ: Գետի մյուս կողմից անընդմեջ լսվում էր Առիսաբալգա եղբայրների արհեստանոցի մեքենայի չակա-չակա ձայնը:

— Կարծում ես՝ սրանք է՞լ են վճարում:

— Ովքե՞ր:

— Առիսաբալգա եղբայրները:

Խոշիանն ուսերը թոթվեց:

— Ընդամենը երեք տարբերակ կա: Կամ վճարում ես, կամ արտագաղթում ես, կամ ռիսկի ես դիմում: Ուղեղումս մի բան չի տեղավորվում՝ ինչո՞ւ են հետևիցս ընկել, եթե ես առանց սպասեցնելու տվեցի իրենց ուզածը:

— Ես էդ բաները չեմ հասկանում, բայց իմ կարծիքով՝ սխալմունք է եղել:

— Քեզ ասացի՝ Ներեայի անունն են տվել:

— Կամ էլ քեզ սխալմամբ ուղարկել են եկող տարվա նամակը:

Չակա՛-չակա՛: Չատոն՝ գլանակը գետնին նետելով ու տրորելով, թե.

— Կարո՞ղ եմ քեզ մի բան խնդրել:

— Իհարկե, ինչ որ ուզես:

— Տե՛ս, երկար եմ մտածել: Ճիշտ կլիներ՝ խոսեի նրանց ղեկավարի կամ ֆինանսների պատասխանատուի հետ, բացատրեի իրավիճակը: Քահանան, որի հետ հանդիպել էի, ընդամենը միջնորդ է: Գուցե պակասեցնեն գումարի չափը կամ թույլ տան մաս-մաս վճարեմ, հասկանո՞ւմ ես:

— Լավ գաղափար է:

Չակա՛-չակա՛: Նաև լսվում էին թռչունների և մոտակա կամրջով անցնող մեքենաների ու բեռնատարների շարժիչների ձայները:

— Պետք է խոսեմ Խոշե Մարիի հետ: Դա է խնդրանքս:

Խոշիանը՝ զարմացած, թե.

— Տղաս ի՞նչ կապ ունի այդ ամենի հետ:

— Ինձ պետք է մեկը, որ կապի նրանց հետ:

— Խոշե Մարին ETA-ից չէ, իմացա՞ր: Էդպիսի բան չկա: Բացի այդ՝ դուրսն է: Որտե՞ղ: Դե՛, չգիտենք: Խոշե Մարին դմբոյի ու ծույլիկի մեկն է: Աշխատանքից դուրս է եկել ու Միրենի ասելով՝ էստեղից ծլկել է՝ ընկերների հետ աշխարհ տեսնելու: Գուցե հիմա Ամերիկայում լինի:

Չակա՛-չակա՛-չակա՛:

13

Թեքահարթակը, լոգասենյակը, խնամողը

Միրենն ամեն ինչ հենց սկզբից հասկացավ: Եթե ներքևի հարկում ապրելիս չլինեին, ստիպված էին լինելու տեղափոխվել: Ինչո՞ւ: Գրողը տանի, որովհետև չէինք կարողանալու Արանչային անվասայլակով ամեն օր վերև-ներքև անել: Պատկերացնո՞ւմ ես: Շքամուտքի հարթակի ու իրենց դռան առջևի հարթակի միջև ընդամենը երեք աստիճան կար: Շատ բարձր չէր, բայց ամեն օր սայլակն իջեցնել-բարձրացնել էլ հնարավոր չէր:

— Դու դուրսն ես լինում, ու եթե ուժս չհերիքի, կամ, ենթադրենք, փողոցում վատանամ: Ի՞նչ եմ անելու: Օգնությո՞ւն խնդրեմ: Արանչային մենա՞կ թողնեմ շքամուտքում:

Ասաց ամուսնուն, որ լուծում գտնի: Առանց մեկ վայրկյան իսկ վարանելու՝ Խոշիանը դրեց բերետը, իջավ «Պագոետա» բար ու այնտեղից ընկերների խորհրդով գնաց ուղիղ ատաղձագործի արհեստանոց՝ թեքահարթակ պատվիրելու: Ատաղձագործը, չափերը վերցնելով, սարքեց, փորձարկեց ու տեղադրեց թեքահարթակը: Ու մի գեղեցիկ առավոտ հարևանները հայտնաբերեցին, որ փոքրիկ աստիճանի երեք քառորդը զբաղեցրել է փայտե մի հարմարանք, որը վերջին աստիճանից մուտքի հատակով մի կես մետր էլ էր շարունակվում՝ թեքությունը մեղմելու նպատակով: Խոշիանն ու Միրենը փորձարկեցին անվասայլակը: Այն իջեցրին-բարձրացրին նախ առանց Արանչայի, հետո՝ աղջիկը մեջը նստած, ու համոզվեցին, որ այդ երեք աստիճաններն այլևս չեն խանգարի նրան զբոսանքի տանելիս:

Այդ աստիճաններից հազիվ երկու թիզ տեղ էր մնում հարևաններին՝ անցնելու համար, եթե, իհարկե, երեխաների պես չգնային-գային հենց թեքահարթակի վրայով, ինչը և խորհուրդ տվեց Միրենը հարևանին, որը բողոքում էր, թե խնդիրը դրացիների հետ չի քննարկվել:

— Լսե՛ք, կարող եք անցնել թեքահարթակի վրայով: Ի՞նչ է պատահել:

Երկակի խնդիր էր: Նրանցից մեկը կարող էր սահել ու գլուխը ջարդել: Մենք էլ գիշեր-ցերեկ տանը լսելու էինք վրայով քայլողների ոտնաձայները ու չէինք կարողանալու քնել: Խոշիանին բարում խորհուրդ տվեցին

թեքահարթակի վրա կովրոլին ամրացնել: Միրենը հիացած էր: Կովրոլինը ո՞նց չէինք մտածել. և՛ ոտնաձայները կմեղմեր, և՛ չէր թողնի սահել: Մի ծանոթ փռեց կովրոլինը՝ կպցնելով ատաղձագործական սոսնձով ու ամրացնելով մեխերով:

Խոշիանի կանխատեսումներով.

— Կովրոլինի վրա ոտքերն են մաքրելու: Չեմ էլ ուզում մտածել՝ ինչ վիճակում կլինի անձրևի ժամանակ:

Հարևանները՝ անտարբեր կամ համակերպված, գուցե ETA-ի անդամի ընտանիքի հետ ընդհարումից խուսափելով, բողոքներն իրենց պահեցին, բացի մեկից՝ Առոնդոյից՝ երկրորդ հարկի աջ բնակարանի հարևանից: Իր փոխարեն կնոջն էր ուղարկել՝ պահանջելու, որ անմիջապես հանեն հարմարանքը: Աստիճանը բոլորինն է. իր 88 տարեկան մայրն այդտեղով չի կարող անցնել և այլն: Միրենն ու այդ կինը պատարագից դուրս գալիս մի կրքոտ վեճ ունեցան՝ կատաղած հայացքներ փոխանակելով, ատամները սեղմելով ու արհամարհանքով ծռելով բերանների վերին շուրթերը: Ու մի շաբաթ օր Առոնդոն՝ սակավախոս, բայց ծանրակշիռ խոսքի տեր մարդ, իջավ իր պայմանով. կա՛մ հանում եք թեքահարթակը, կա՛մ ձեր տիրումները:

Դուռը Միրենն էր բացել: Խոշիանը խոհանոցում էր թաքնվել:

— Դու ոչ մի բան էլ չես հանի:

— Ո՞վ ասաց:

Առոնդոն, անշուշտ, ամրակազմ է, բայց և անզգույշ: Չէր մտածել, չէր հաշվարկել հետևանքները. կնոջ դրդումով էր եկել: Վեր հանեց թեքահարթակն ու գցեց փոստարկղերի տակ: Դե՛, հալդ տե՛ս, Առոնդո՛: Լուրջ պրոբլեմի մեջ ընկար: Ու Միրենը գոգնոցով, տան կոշիկներով գնաց «Առանո» խորտկարան: Դեռ կանուխ էր, քիչ մարդ կար: Ոչինչ: Երկու հոգին էլ էր բավարար: Քսան րոպե անց Առոնդոն արդեն իր տեղն էր դրել թեքահարթակը: Դրանից հետո այլևս ոչ ոք չբողոքեց, ու թեքահարթակն էլ՝ տգեղ, բայց հարմար, մնաց իր տեղում:

Խոշիանը, թե՝ կարելի էր ամեն ինչ ուրիշ ձևով անել: Ուրիշ ձևը ո՞րն է: Դե՛, չգիտեմ, խոսելով:

— Բա ինչո՞ւ դու դուրս չեկար խոսելու, եթե ձևը գիտեիր:

Թեքահարթակը միակ փոփոխությունը չէր, որ արել էին՝ բնակարանը Արանչայի կարիքներին հարմարեցնելու համար: Լոգասենյակը լիովին ձևափոխել էին: Վերջում միանգամայն այլ բան էր դարձել: Վերափոխելիս

հետևել էին վերականգնողական կենտրոնի տրամադրած ուղեցույցին: Մի մասը Գիլյերմոն վճարեց: Միրենը, թե՝ դե՛, պարզ է, ուզում է վայրկյան առաջ կնոջը աչքից հեռու տանել: Խնդրեմ, ահավասիկ ձեր անդամալույծը, վերադարձնում եմ ձեզ, քանի որ ես արդեն ուրիշին եմ գտել, որ անկողինս տաք պահի: Ու զավակներին իր մոտ վերցրեց, իսկ Միրենը՝ եկեղեցում Լոյոլայի սրբին, թե՝ Իգնա՛սիո, խնդրում եմ՝ նրան պատժես. դու կիմանաս, թե ինչպես: Հետո էլ վերադարձրո՛ւ ինձ իմ թոռներին ու մեկ էլ Խոշե Մարիին հանի՛ր բանտից: Եթե այդ ամենն ինձ համար անես, էլ երբեք քեզ բան չեմ խնդրի: Երդվո՛ւմ եմ:

Երբ Արանչային տուն բերեցին, լոգասենյակը բարձրակարգ հիվանդանոցի հարմարություններով էր. ցնցուղը՝ հեշտ հասանելի, քանի որ ո՛չ պռունկ ուներ, ո՛չ աստիճան: Էլ ի՞նչ: Իհարկե, հատուկ բռնակներ, չսահող գորգիկներ, ծորակների փականները՝ լծակով, մի խոսքով՝ ամեն բան այնպես էին արել, ինչպես խորհուրդ էր տվել հիվանդանոցի վերականգնողական կենտրոնի տնօրենուհին, ու ինչպես նկարագրված էր գրքույկում:

Բայց աղջկան նորմալ լողացնելու համար երկու հոգի էր պետք: Միրենը մենակ տակից դուրս չէր գա, քանի որ Արանչան, որ սկզբում նիհարիկ էր, հիմա գիրացել ու իր նախկին քաշին էր հասել: Պետք է աղջկա շորերը հանել, նստեցնել լոգաաթոռին, օճառել, չորացնել ու հագցնել:

— Լա՛վ, եղա՛վ, եղա՛վ, իմացածս բաները մի՛ բացատրիր:

Այդպես Խոշիանը, որ ուզում էր վայրկյան առաջ ծլկել «Պագոետա» բար՝ թղթախաղի, համաձայնեց օգնական վարձել: Քանի որ Միրենը ոչ մի պարագայում համաձայն չէր, որ Խոշիանը, թեկուզ հայրը լինելով, տեսներ-դիպչեր-բռներ մերկ Արանչային: Ոչ մի դեպքում:

Մյուս օրն էլ Խոշիանը մտավ տուն ու ի՞նչ տեսնի: Նրան հարգանքով դիմավորում է փոքրամարմին, ժպտադեմ մի կին. երկու շար սպիտակ ատամ, հնդկացիական աչքեր ու երկար, ուղիղ, սև մազեր: Պարոն-ով է դիմում (պարո՛ն) և ասում.

— Բարի՛ օր, պարո՛ն: Իմ անունն է Սելեստե:

— Էկվադորից է: Հրաշալի է, չէ՞: Ու քաղաքավարի է:

Խոշիանը գիշերը հարցրեց անկողնում.

— Որտեղի՞ց նրան գտար:

— Դե՛, հարցուփորձ անելով: Տեսա՞ր՝ ինչ մաքրասեր ու տեղը տեղին կին է:

— Բայց որտեղի՞ց գտար:

— Մսավաճառի մոտ՝ խոսակցության ընթացքում: Նրա կինը՝ Խուա՛նին, թե՝ լսի՛ր, Էկվադորից մարդիկ կան, կինը քիչ գումարով տների մաքրություն է անում: Էնտեղ են ապրում՝ ներքևում՝ կամրջին չհասած: Ամուսինն էլ առաքիչ է աշխատում՝ փոքրիկ ֆուրգո՛նով: Ու երեկ Արանչայի հետ զբոսնելիս նրան գտա, ու հիմա այստեղ է: Մաքուր գանձ է այս կինը: Պատմեցի, որ մի տղաս Անդալուսիայում է ապրում, ամիսը մեկ գնում եմ նրա մոտ: Սելեստեն ասաց, որ չանհանգստանամ, որ նա կպահի Արանչային:

— Ու ինչքա՞ն ես վճարելու:

— Տասը եվրո ամեն գալը:

— Քիչ է:

— Աղքատ են: Նա շնորհակալ կլինի:

14

Վերջին սուրճը՝ միասին

Բիչո՛րին նախընտրում էր տոստ արած հաց ջեմով ու մեքենայի դեկաֆ սուրճը, Միրենը՝ չուռո շոկոլադով: Թեև լավ գիրացնում են, բայց իրենց համար մեկ էր: Իրար հետ լա՞վ էին: Շատ լավ, մտերմագույն ընկերուհիներ էին: Մի շաբաթ օր գնում էին Ավենիդայի սրճարան, մյուսը՝ Հին քաղաքի չուռերիան: Մշտապես՝ Սան Սեբաստիանում: Մեկ Սան Սեբաստիան էին ասում, մեկ՝ Դոնոստիա*: Խստապահանջ չէին: Սան Սեբաստիա՞ն: Թող լինի Սան Սեբաստիան: Դոնոստիա՞: Թող լինի Դոնոստիա: Զրույցը սկսում էին բասկերեն, անցնում էին իսպաներենի, հետո՝ նորից բասկերենի, ու այդպես ամբողջ հետմիջօրեին:

— Պատկերացնո՞ւմ ես՝ միանձնուհիի դառնայինք:

Ու ծիծաղում էին: Քույր Բիչո՛րի, քույր Միրեն: Եվ այդ կարգի բաներ:

Վարսավիրանոցից թարմ սանրվածքով դուրս գալով՝ վերապատմում էին ավանի բամբասանքները՝ իրար հասկանալով՝ առանց միմյանց լսելու, քանի որ մեծ մասամբ միաժամանակ էին խոսում: Քննադատում էին կնամոլ քահանային, բամբասում էին հարևանուհիներից, իրար պատմում էին ամեն ինչ՝ տուն էլ, անկողին էլ: Խոշիանի բրդոտ մեջքի, Չատոյի հեշտասիրական խոզուկությունների մասին: Մի խոսքով՝ ամեն ինչ:

Նաև այս թեմայով.

— Տեղյակ ենք, որ Ֆրանսիայում է, բայց որտեղ՝ չգիտենք: Էդ ավազակը վերջապես նամակ է ուղարկել: Խեղճ Խոշիանը հոգսից չի քնում: Ինքն իրեն հարց է տալիս՝ ո՛ր մեղքի համար ենք պատժվել:

Տոստ արած հացի, անձրևոտ ու քամոտ հետմիջօրե էր: Սրճարանը լիքն էր: Ընկերուհիներն իրենց նախընտրած անկյունում էին նստած, որտեղ կարող էին հանգիստ խոսել, ու ոչ ոք նրանց չէր անհանգստացնի:

— Չկարողացա նամակը բերել քեզ: Խոշե Մարին մեզ թույլ չի տալիս: Գրել էր, որ պատռենք: Ու խը՛շտ-խը՛շտ. չկարծես՝ սիրտս չցավեց, կտոր-կտոր արեցի նամակը: Խոշիանը գժվեց: Թե՝ չես հասկանում, կարող են

* Դոնոստիա, Սան Սեբաստիանի՝ սրբի և քաղաքի բասկերեն անվանումը:

նամակի մասերը միացնելով կարդալ: Ա՛յ տղա, ասացի, կուզես՝ կո՛ւլ տուր ուրեմն: Լուցկին վերցրեց ու փրթիկները լվացարանի մեջ այրեց:

Նամակն ընկերուհին, կամ չգիտեմ՝ ով էր, բերեց. չես էլ իմանա: Միրենի կարծիքով՝ հիմիկվա ջահելությունը զուգավորվում է ճագարների պես: Դե՛, իհարկե, քանի որ չիղիանալու միջոցներ կան: Դա հաճախ էր ակնարկում, ու Բիչո՛րին համաձայն էր: Երկուսն էլ համոզված էին, որ երեսուն տարի շուտ են ծնվել: Ֆրանկոն, քահանաները, «ինչ կասեն»-ը. տեսնել էր պետք, թե որքան միամիտ էին: Այսպես էին մտածում՝ իրենց սուրճը վայելելով, մի աչքով էլ հետևելով, որ կողքի սեղանների շուրջ նստածները հանկարծ ականջ չդնեն:

— Նամակը՝ փոստո՞վ: Ո՛չ, ա՛յ կնիկ: Իրենց խողովակներով են տեղ հասցնում: Հասցե չկար: Այնպես որ, չիմացանք՝ որտեղ է հիմա ապրում: Այցերն արգելված են: Մի քանի տարի առաջ կարող էիր մյուս կողմն անցնել ու հագուստ կամ *անհրաժեշտ* մի բան տանել: Հիմա ստիպված են զգույշ լինել, քանի որ ֆաշիստները *նրանց հետևից են ընկել*:

— Չե՞ս վախենում, որ նրա հետ մի վատ բան կարող է պատահել:

— Խոշիանն է վախենում: Խոշիանը երբեմն բար չի գնում, որ հանկարծ Խոշե Մարիի լուսանկարը հեռուստալուրերով չտեսնի: Ես հանգիստ եմ: Տղայիս ինչ լինելը գիտեմ: Խելացի է և ուժեղ: Իրեն կպաշտպանի:

Կաթով սուրճ ու քաղցրավենիք վայելելու ընթացքում Միրենը հիշողությամբ վերարտադրում էր նամակը: Գրում էր, որ ուշադրություն չդարձնեն ասեկոսեներին: Մարդիկ առանց իմանալու խոսում են: Առավել ևս չվստահեն թերթերում գրված ստերին: Որ շարժմանն անդամակցել է հանուն մեր ժողովրդի ազատագրման՝ որպես զոհաբերություն: Որ եթե մեկը aita-ի կամ ama-ի մոտ գա հեքիաթներով, իբր ինքը հանցագործ խմբի անդամ է, թող չհավատան, քանի որ իր միակ նպատակն այն է, որ ամեն ինչ տա հանուն Բասկերի երկրի, նաև հանուն այն մարդկանց իրավունքների, որոնք միայն գանգատվում են ու բան չեն անում: Ասում է՝ gudari*-ները շատ են: Ու ավելանում են: Բասկյան երիտասարդության սերուցքն են: Ու ավարտում էր. «Ձեզ սիրում եմ: Իմ քրոջն ու եղբորը չեմ մոռանում: Մի մեծ muxu**, և հուսով եմ, որ հպարտանում եք»:

---

* Gudari (բասկ.), Բասկյան դատի համար պայքարող մարտիկ:

** Muxu (բասկ.), համբույր:

Իկա՛ցան գաղտագողի մոտենում է: Մի ցատկով տեղավորվում է նրա գոգին ու համբերատար սպասում է, որ իրեն գուրգուրեն: Բիչո՛րին սահեցնում է մատները՝ համոզվելու համար, որ վզնոցը չի սեղմում կատվի վիզը: Խաղում է նրա ականջիկների հետ, շոյում կոպերը, որոնք կատուն հաճույքից փակում է: Բիչո՛րին ափով շոյում է նրա մեջքը, ու կատուն մռլտում է: Նրան ասում է, թե ես իսկապես տխրեցի, Իկացա՛, թանկագի՛նս: Պատկերացնում ես, չէ՞: Ցավ էի զգում լավագույն ընկերուհուս զավակի համար, որ թողել էր աշխատանքը, ձեռքի գնդակի թիմն ու նշանածին կամ համարյա նշանածին, որպեսզի որպես վարձու ահաբեկիչ անդամակցի սպանություններ գործող կազմակերպությանը:

Բա Միրե՞նը: Դե՛, հասկանում ես, Իկացա՛, հիմա որ հարցնում ես, ասեմ քեզ, թե ինչ եմ մտածում: Խորքում, ու թող Չատոն ինձ ների, նրան հասկանում եմ: Հասկանում եմ, թեև համաձայն չեմ ու չեմ ընդունում նրա կերպարանափոխությունը: Իմ ընկերուհի Միրենը փոխվեց՝ Ավենիդայի սրճարանի ու Հին թաղամասի չուռերիայի մեր հանդիպումների արանքում: Մեկ էլ հանկարծ ուրիշ մարդ դարձավ: Մի խոսքով՝ իր տղայի կողմը բռնեց: Կասկած իսկ չունեմ, որ մայրական բնազդը նրան մոլեռանդ դարձրեց: Իր տեղը գուցե ես էլ ինձ նույն ձևով պահեի: Ինչպե՞ս գլուխ թեքես քո զավակից, նույնիսկ եթե գիտես, որ ստորություններ է անում: Մինչև այդ օրերը Միրենը բոլորովին չէր հետաքրքրվում քաղաքականությամբ: Ինձ ոչ այն ժամանակ էր հետաքրքրում, ոչ հիմա: Չատոյի մասին է՛լ չասեմ: Չատոն միայն իր ընտանիքով էր հետաքրքրվում, կիրակիները հեծանիվ քշելով, շաբաթվա մյուս օրերին էլ՝ իր բեռնատարներով:

Ազգայնակա՞ն, նրա՞նք: Ամենևին: Շա՛տ-շա՛տ՝ քվեարկության այն օրը միայն, երբ տեղացիներին ընտրեցին: Ես, սիրելի՛ Իկացա, երբեք չեմ լսել, որ նրանք քաղաքական թեմաներով խոսեն: Թերևս Արանչան՝ որպես abertzale, բայց չափավոր, հազիվ այդքան: Իսկ փոքրը, դե՛, նա Աստծո պարգև էր: Իսկապես չեմ կարծում, որ նրանք իրենց երեխաների մեջ ատելություն սերմանած լինեին: Ընկերները, ավազակախումբը, վատ շրջապատը այդ անամոթին թունավորել են մի ուսմունքով, որը նրան ստիպել է, դե՛, արի՛ ու իմացի՛ր, քանի մարդու կործանել: Ու երևի կարծում է, թե հերոս է: Ասում են՝ աննկուն է: Աննկուններից է կամ էլ հաստագլուխներից մեկը: Ամբողջ կյանքում գիրք բացած չկա:

Հաջորդ շաբաթ օրն էր, երբ առաջին անգամ նկատեց ընկերուհու հետ տեղի ունեցած փոփոխությունը: Շոկոլադով չուռո ուտելուց հետո, սովորության համաձայն, գնացին դեպի ավտոբուսի կանգառ ու ի՞նչ տեսնեն: Բուլվարում բազմամարդ ցույց: Ինչպես միշտ, պաստառներ, անկախություն, համաներում, gora ETA*: Շատ մարդ կար: Ավանից երկու-երեք ծանոթ դեմքեր, անձրև, հովանոցներ: Ու փոխանակ բազմությունը շրջանցեն, Միրենն ասաց՝ դե՛, գեղեցկուհի՛, գնացի՛նք: Բռնեց Բիչո՛րիի թևից, քաշեց, ու երկուսով հայտնվեցին ամբոխի մեջ. ոչ շատ առջևում, ոչ էլ՝ հետևում: Ու այդ ընթացքում Միրենը հանկարծ սկսում է էդ մարդկանց կարգախոսները վանկարկել: *Դո՛ւք՝ ֆաշիստներդ, դո՛ւք եք տեռորիստը*: Բիչո՛րին էլ կողքը, մի քիչ զարմացած, բայց դե՛, հետը գնաց:

Ո՛չ մի բան չգիտեր: Չատոն նրան բան չէր պատմել: Այդպիսի բաներ, Իկացա: Խելացին գաղտնի էր պահում խնդիրը: Մեզ պաշտպանելու համար: Հետո ասաց դա: Շա՜տ լուրջ պաշտպանություն էր: Մեր ամբողջ ընտանիքը կարող էր հօդս ցնդել:

Իմացավ Միրենից, որը Խոշիանից էր լսել, ու դա հենց ինքը՝ Չատոն էր խոստովանել հողամասում այն հետմիջօրեին, երբ Անդոսիլիայից հողով բարձած բեռնատարով էր եկել: Միրենի մտքով էլ չէր անցել, որ ընկերուհին կարող է տեղյակ չլինել:

— Անհնար է նրա մոտ գնալ: Որովհետև, եթե կարողանայինք գնալ, իրեն կասեինք՝ լսի՛ր, խոսի՛ր քո ղեկավարների հետ՝ մի բան անեն, որ Չատոյին հանգիստ թողնեն:

Բիչո՛րին մի քիչ թերահավատորեն վրա բերեց.

— Իմ ամուսնո՞ւն հանգիստ թողնեն:

— Նամակների հաշվով:

— Նամակների՞: Ի՞նչ նամակներ:

— Ա՜հ, դուք այդ մասին չե՞ք խոսել:

* Gora ETA (բասկ.), Կեցցե՛ ETA-ն:

15

Հանդիպումներ

Երկու չոր ու սպիտակ ծերտ՝ տապանաքարի վրա, մեկն էլ՝ ավելի մեծը, ծորացել էր գերեզմանաքարի անունների վրա: Զզվում էր. այդ չարագործությունը վերագրեց գարշելի աղավնիներին: Մի թռչունն ինչպե՞ս է հաջողեցնում այդքան ծերտ արտադրել: Հարյուրավոր, հազարավոր, մի ամբողջ ծով գերեզմաններ կան, բայց այս խոզերը պիտի գային ու հենց Չատոյի գերեզմանաքարի վրա ծրտեին:

— Քեզ տեղը տեղին նախշել են, մա՛րդ ջան: Բայց ո՞վ գիտի, գուցե բախտդ բացվի:

Ինչպես միշտ, կատակում էր: Ճարն ի՞նչ: Հո ամեն օր վերքերին աղ չէ՞ր լցնելու: Ինչքան կարողացավ, մաքրեց չոր տերևներով ու էստեղից-էնտեղից պոկած խոտի խրձերով: Ինչը չկարողացավ մաքրել, թողեց անձրևի հույսին: Այդպես շշնջաց՝ նայելով հորիզոնում հայտնված հեռավոր ու միայնակ ամպին: Եվ, սովորության համաձայն, փռեց ցելոֆանի կտորն ու թաշկինակը:

— Ամեն օր գնում եմ ավան: Երբեմն ուտելիք եմ հետս վերցնում, այնտեղ տաքացնում: Գիտե՞ս, պատշգամբում թաղար եմ դրել խորդենիով: Լավ մեծ ու կարմիր: Թող իմանան, որ վերադարձել եմ:

Պատմեց, որ արդեն արդյունաբերական գոտում չէր իջնում ավտոբուսից: Իսկ երեկ չէ առաջին օրը, չես հավատա, ուժերս հավաքեցի ու մտա «Պագոետա» բար: Առավոտվա տասնմեկն էր: Շատ մարդ չկար: Առաջին հայացքից ոչ ոք ծանոթ չէր: Խորտկարանապանի տղան էր սպասարկում բարի մոտ: Այդքան տարի անց: Բիչո՛րին քանի օր զսպում էր բար մտնելու ցանկությունը: Ծարավ էլ չէր: Ո՛չ ծարավն էր, ո՛չ սովը, ոչ էլ հետաքրքրությունը. նրան շատ ավելի հզոր, մտքերի խորքում եռացող բան էր առաջ մղում: Նստածները մի տասը-տասներկու հոգի էին: Բիչո՛րին չհաշվեց: Բոլորը միանգամից լռեցին՝ փախցնելով հայացքները: Դեպի ո՞ւր: Դե՛, Բիչո՛րիի հակառակ ուղղությամբ: Ու տղան, որ լաթով մաքրում էր կանգնակը, նախուտեստներով փոքր ափսեների արանքով ևս նրան չէր նայում: Լռություն տիրեց. ագրեսի՞վ, թշնամակա՞ն: Ո՛չ, ավելի շուտ՝ հարցական, զարմացած: Այո՛, իհարկե, վստահ էր:

— Չատո՛, դա զգացվում էր:

Կանգնակը Լ տառի տեսք ուներ: Բիչո՛րին դրա կարճ կողմում նստեց՝ մեջքով դեպի մուտքը: Օգտվելով նրանից, որ ուշադրություն չէին դարձնում իր վրա, ուսումնասիրեց խորտկարանը: Հատակի երկգույն սալիկները, առաստաղից կախած հովհարիչը, դարակների վրա շարած գինիները. չհաշված մի քանի մանրուք՝ բարն իր սովորական տեսքն ուներ: Նույնը, ինչ և այն ժամանակ, երբ Բիչո՛րին մտնում էր բար՝ իր փոքր երեխաների համար անուշահամ սառույց գնելու: «Պագոետա»-ի նարնջի ու կիտրոնի անմոռանալի սառույցները, որոնք ընդամենը կաղապարի մեջ սառեցված քաղցրահամ ըմպելիքներ էին՝ բռնելու համար մեջը խրած փայտիկով:

— Գրեթե ոչինչ չի փոխվել, երդվում եմ: Սեղանները, որոնց շուրջ թուղթ էիք խաղում, իրենց տեղերում են՝ պատի տախտակներին կպած: Ճաշասրահը՝ խորքում: Զուգարանները՝ աստիճանի տակ: Ֆուտբոլ խաղալու մեքենան չկար, ու այն գնդերովն էլ, որ այդքան աղմուկ էր անում: Փոխարենը խաղային ավտոմատ են դրել: Էն քիչ նոր բաներից էր, որոնք տեսա: Ա՜հ, ու կանգնակի վրա էլ հանգանակության տուփն էր դրված՝ բանտարկյալներին օգնելու համար: Ֆուտբոլային ու ձկնորսական պաստառներ՝ հին՝ ցլամարտով պատկերների փոխարեն: Ու վերջ: Հիմա կարծես խորտկարանը տղան է կառավարում:

Վերջապես մոտեցավ Բիչո՛րիին:

— Ի՞նչ կցանկանաք:

Նրա հայացքը որսալու ապարդյուն փորձեր արեց: Երիտասարդը՝ երեսունն անց (Բիչո՛րիի համար՝ մի տղա), շարունակում էր լաթով իր գործողությունները, բայց ոչ թե երկու-երեք մետր հեռու, ինչպես քիչ առաջ, այլ հենց Բիչո՛րիի առջև: Նրան խոսել ստիպելու համար հարցրեց՝ մեքենայի դեկափ սուրճ կա՞: Ուներ: Մնացածը վերսկսեցին իրենց խոսակցությունները: Նրանց դեմքերը ծանոթ չէին: Չնայած այն մեկը՝ ճերմակ մազերով, կարո՞ղ է, պատահաբար…

— Կասկած նույնիսկ չունեմ, որ բոլորը նույն բանն էին մտածում: Չատոյի կինն է: Երբ դուրս էի գալիս, ո՜նց էի ուզում շրջվել ու դռան մոտից հանգիստ ասել նրանց՝ ես Բիչո՛րին եմ, ի՞նչ է պատահել: Չե՞մ կարող իմ ավանում լինել:

Ցույց չտաս, որ դառնացած ես: Լաց չլինես նրանց առաջ: Ուղիղ նայի՛ր մարդկանց աչքերի մեջ, լուսանկարչական խցիկներին: Ինքն իրեն այդպես էր խոստացել հոգեհանգստի սրահում՝ Չատոյի դագաղի մոտ:

— Ինչքա՞ն եմ տալու:

Խորտկարանապանը, աչքերը կանգնակից չկտրելով, մի թիվ ասաց: Բայց Բիչո՛րին նրան տասանոց տվեց մանրադրամի փոխարեն: Վերադարձվող գումարին սպասելիս մոտեցավ Լ-ի անկյունին: Այնտեղ էր դըրված: Ի՞նչը: Հանգանակատուփը: Առջևի մասում կպցված էր Dispersiorik ez*: Բիչո՛րին անդիմադրելի մի գայթակղություն զգաց, որը նրա ձախ ձեռքով իջնում էր մինչև արմունկը, ձեռքը, ճկույթը: Երանի չնկատեն, երանի չնկատեն: Ասես չուզելով՝ մատը երկարեց, մինչև եղունգով ներսից կպավ տուփի պռնկին: Մեկ վայրկյան էլ չտևեց, քանի որ միանգամից, ասես այրած լիներ, մատը հետ քաշեց:

— Մի՛ խնդրիր՝ քեզ բացատրեմ, թե ինչու: Որովհետև ինքս էլ չգիտեմ: Ինքնաբերաբար ստացվեց:

Դուրս եկավ փողոց: Կապույտ երկինք, մեքենաներ: Անկյուն չհասած՝ նրան տեսավ:

— Սկզբում չճանաչեցի աղջկան:

Ու երբ հասկացավ, թե ով էր, Տե՛ր Աստված, Հիսո՛ւս քեզ Քրիստոս, շվարեց ու հուզվեց: Ինչպես ասում են, կաթվածահար եղավ, ամբողջությամբ կաթվածահար: Նրանք շարունակեցին իրենց ճանապարհը, իսկ Բիչո՛րին տեղից չէր կարողանում շարժվել: Գետնին կպած էր մնացել: Բայց եթե նա…

— Սպասի՛ր, հիմա կպատմեմ:

Բիչո՛րին փողոցի արևկող մայթով էր բարձրանում: Դիմացի մայթով մարդիկ էին իջնում, և նրանց մեջ՝ ցածրահասակ մի կին՝ անդյան հնդկացիների դիմագծերով: Պերուից կամ էլ այն կողմերից էր: Դե՛, այդ կինն անվասայլակ էր հրում, մեջը մի կին էր նստած՝ գլուխը թեթևակի դեպի ուսն ընկած ու մի ձեռքը սեղմած այնպես, որ անհնար էր բացել: Մյուս ձեռքը կարողանում էր շարժել:

— Այդ պահին հասկացա, որ ինձ նշան է անում: Ամեն դեպքում, ձեռքն այնպես էր կրծքի մոտ թափահարում, ասես ինձ բարևեր: Ու ինձ էր նայում, բայց ոչ ուղիղ հայացքով: Սպասի՛ր, փորձեմ բացատրել: Դեմքը՝ կողք թեքված ու լայն, մի տեսակ վայրենի ժպիտով, շուրթերի մի կողմում՝ մի քիչ թուք հավաքված, աչքերը կկոցած: Առաջին հայացքից անճանաչելի էր, երդվում եմ: Այնպիսի տպավորություն էր, ասես կծկումների մեջ լիներ,

* Dispersiorik ez (բասկ.), Ո՛չ ցրելուն (կորչի ETA բանտարկյալների տարաբաշխումը):

հասկանո՞ւմ ես: Բայց դե՛, Արանչան էր: Կաթվածահար: Մի՛ հարցրու, թե ինչ է պատահել: Այդքան կամք չունեցա՝ փողոցն անցնեմ ու հարցնեմ:

Վստահ չէր՝ Արանչան նրան բարևո՞ւմ էր, թե՞ նշան էր անում, որ մոտենար: Նրան խնամող կինը, անվասայլակով զբաղված, ոչինչ չնկատեց: Ու նրան անշտապ տարավ փողոցով վար, իսկ Բիչո՛րին, իսկապես տխրած, մնաց տեղում, մինչև նրանք անհետացան տեսադաշտից:

— Մի խոսքով, Չատո՛, սա էր պատմելիքս: Ի՞նչ ասեմ: Տխրում եմ: Արանչան, ըստ իս, միշտ էլ այդ ընտանիքում ամենալավն էր: Դեռ երեխա ժամանակ ինձ համար հաճելի անձ էր: Ամենասթափն ու նորմալն էր նրանցից ու միակը, քեզ պատմած կլինեմ, որ ցավակցեց ինձ ու իմ զավակներին:

Վերցնելով ցելոֆանն ու թաշկինակը՝ Բիչո՛րին ուղղվեց դեպի գերեզմանոցի ելքը: Հիմնական ճանապարհը շրջանցում էր մեկ այս կողմից, մեկ այն: Միշտ ուշադիր էր՝ ոչ մեկին չհանդիպելու համար: Ճանապարհի վերջում՝ երկու գերեզմանների արանքի փոսում, աղավնիներ տեսավ, որոնք պատրաստ էին զուգավորվել: Հե՛յ: Փախցրեց թռչուններին՝ ոտքով ուժով խփելով գետնին:

16

Կիրակնօրյա պատարագ

Եկեղեցու զանգերն ամեն օր ղողանջում են, բայց կիրակի օրերը՝ վաղ առավոտյան, մի տեսակ տարբեր են հնչում: Կիրակնօրյա զանգահարությունն ավելի հանգիստ է, ոչ այդքան կտրուկ, ոչ այդքան ինքնամփոփ, ասես ղողանջները մի տեսակ ալարելով են շարվում մեկը մյուսի հետևից. հարևաննե՛ր, դլա՞ն, առավոտվա ութն է, դլա՞ն, իմ կարծիքով, դլա՞ն, կարող եք մնալ անկողնում, դլա՞ն:

Այդ ժամանակ Խոշիանն արդեն մի քառասունհինգ րոպե հեծանիվ էր քշում մարզային ճանապարհներով: Ասա՞ց, թե ուր էր գնում: Ինչ կարևոր է: Գիպո՛ւսկոայի սրտում գտնվող բարերից մեկը, որտեղ ապուխտով ձվածեղ էին մատուցում. դա որ՝ հաստատ: Ակումբականները հեծանվավազքի բոլոր փուլերն ավարտում են ապուխտով ձվածեղի շուրջ, որից հետո տուն են վերադառնում:

Արդեն ութն է, ուրեմն: Դռան զանգը համընկավ վերջին ղողանջի հետ, ու Միրենը չսանրված, գիշերանոցով գնաց՝ դուռը բացելու Սելեստեին, որը սիրահոժար (ու դա առաջին անգամը չէր) կես բոքոն թարմ հաց էր բերել նրան:

— Վա՛յ, ջա՛նս, անհանգստանալու կարիք չկար:

Երկուսով ավելի հեշտ կլինի Արանչային անկողնուց հանելը: Միրենը իր վրա է վերցնում իրանի ու գլխի մասը: Նախ և առաջ՝ շերտավարագույրը բարձրացնելու ընթացքում իր աղջկան ջերմորեն ողջունում է բասկերեն՝ egun on*, polita և այլն: Սելեստեն անդյան առոգանությամբ կրկնում է՝ egun on, ու Արանչայի ոտքերով է զբաղվում:

Հենց գալիս է աղջկան տեղից շարժելու պահը, Միրենը սկսում է հրահանգներ տալ՝ բռնի՛ր, քաշի՛ր, բարձրացրո՛ւ, իջեցրո՛ւ, ու դրանով ոչ ճնշում է ուզում գործադրել, ոչ էլ հր,ամաններ տալ: Հապա ի՞նչն է պատճառը: Բանն այն է, որ նա շատ է վախենում, որ Արանչային հանկարծ կգցեն, ու թեև նման բան մինչև օրս չէր պատահել, մեկ է, վախենում է: Աչքերը չռում

* Egun on (բասկ.), բարի օր:

է, անհանգստանում, ու հաճախ Սելեստեն ճարը կտրած սկսում է հանգըստացնել նրան.

— Հանգստացե՛ք, Միրե՛ն: Հիմա արդեն կարող ենք բարձրացնել:

Ինչպես միշտ, աղջկան դրեցին անվասայլակի վրա: Հետո Սելեստեն առաջ ընկավ՝ բացելով դռները մոր ու աղջկա առջև: Արանչան կանգնեց. կանայք երկու թևերի տակից բռնել էին նրան: Ոտքերի ուժը տեղն է: Բա ո՞րն է խնդիրը: Մի ոտնաթաթը կծկված է: Ըստ բժշկուհի Ուլասիայի՝ միջնաժամկետ հեռանկարում Արանչան, ձեռնափայտին հենված կամ որևէ մեկի օգնությամբ, ունակ է լինելու մի քանի քայլ անել: Բժշկուհին չի բացառում, որ մի օր նա կկարողանա տան մեջ քայլել:

Աղջկան նստեցրին զուգարանակոնքի վրա, հաջորդ քայլով՝ ցնցուղի տակ՝ հատուկ աթոռին: Սելեստեն սկսեց օճառել ու ցայել, քանի որ դա ավելի լավ է անում ու ավելի համբերատար է, ու, ինչպե՞ս ասեմ, ավելի մեղմ է. մի բան, որին Միրենը չէր անդրադարձել, մինչև մի օր Արանչան նրան iPad-ով հաղորդեց. «Ուզում եմ, որ միշտ Սելեստեն ինձ լողացնի»:

— Քանի ո՞ր:

Նորից տպեց. «Դու շատ կոպիտ ես»:

Ձայն չի կարողանում հանել: Երբեմն շուրթերի շարժումից կարելի է կռահել մի համր բառ, որ նա ցանկանում է արտաբերել ամեն գնով: Դեմքի մկանները լարվում են՝ փորձելով բերանի հուշած բառը դեպի դուրս մղել, սակայն հոդաբաշխ ձայնարձակում չի ստացվում: Չնայած դրան՝ պետք է գովասանքներով ոգևորել Արանչային: Այդ է խորհուրդ տալիս ֆիզիոթերապևտը, այդ են ասում նյարդաբանն ու վերականգնողական կենտրոնի տնօրենն ու լոգոպեդը:

— Պիտի գովեք, Միրե՛ն: Անընդհատ պիտի գովեք: Խոսելու կամ շարժվելու բոլոր փորձերը պիտի ողջունեք:

Միրենը (լավ բռնի՛ր, էստեղ կանգնի՛ր, զգո՛ւյշ) ու Սելեստեն միասին չորացրին ու հագցրին Արանչային, Սելեստեն սանրեց նրա մազերը, Միրենն այդ ընթացքում նախաճաշ պատրաստեց: Սանրելը հեշտ է, քանի որ մազերը կարճ են: Մազերը հիվանդանոցում էին կտրել՝ առանց համաձայնություն հարցնելու: Ինչպե՞ս կարող էր դիմադրել այն օրերին, երբ միայն կոպերն էր կարողանում շարժել:

Սելեստեն գնաց, ու ժամը տասի զանգահարությունը եղավ, հետո՝ տասնմեկի:

— Լա՛վ, գնացինք պատարագի:

Արանչան արագ փորձում է iPad-ը բացել: Մայրը, թե.

— Մի՛ արա, գիտեմ՝ ինչ ես ասելու:

Եվ, իրոք, գրավոր ասում է. «Ես աթեիստ եմ»:

— Արի՛ չսկսենք: Չես ուզում՝ մի՛ աղոթիր: Բայց չկարծես, որ այստեղ մենակ ես մնալու, կամ ես քո քմահաճույքի պատճառով զրկվելու եմ կիրակնօրյա պատարագից: Մեկ է, պատիժդ կստանաս, որտեղ էլ լինես՝ տանը, թե եկեղեցում:

Ու ձեռքից առավ iPad-ը: Որովհետև ուշ է, ասաց: Ու անտրամադիր մայրն արագ քայլերով տարավ անտրամադիր աղջկան, բայց դե՛, պատճառ կար: Բանն այն է, որ եթե ժամանակին չհասնի եկեղեցի, գուցե զբաղեցնեն իր տեղը՝ սյանը հարող նստարանի մի ծայրը: Արանչային տեղավորում է սյան առջև՝ իր կողքին: Այդ ձևով անվասայլակը անցուդարձին չի խանգարում, աղջիկը պաշտպանված է հոսանքներից, և ինքն էլ կարող է ուզածի չափ, առանց վիզը հոգնեցնելու, զրուցել Իգնասիո Լոյոլացու քանդակի հետ, որն իր կողքին է: Որտե՞ղ: Պատի կենտրոնում՝ պատվանդանի վրա: Ճիշտը որ ասենք, Միրենին ընդհանուր առմամբ քիչ է հետաքրքրում, թե քահանան ինչ է ասում: Բացի այդ՝ պատարագն անգիր գիտի: Բայց Իգնասիոյի հետ խոսելը, նրան խոստումներ տալը, պայմաններ առաջարկելը, նրան խնդրանքներ ու մեղադրանքներ ուղղելը (օրեր են լինում, որ սրբի կյանքն ուտում է կշտամբանքներով) շատ կարևոր է իր համար: Նրան երկու անգամ ավելի է վստահում, քան Խոշիանին:

Մի խոսքով՝ ոչ մի կերպ չի ուզի Արանչայի հետ նստել առջևի շարքերում: Կյանքում չի համաձայնի: Մինչև հիմա կարմրում է, երբ այն կիրակին է հիշում. ի՜նչ ամոթ էր: Առաջին անգամ էր, չգիտեր՝ ուր տեղադրել անվասայլակը: Կենտրոնական անցուղո՞ւմ: Վատ գաղափար էր: Ի՞նչ պատճառով գնաց առաջին շարք՝ մտածելով, որ այդտեղ անցուդարձ չկա, սայլակը չի խանգարի: Աստվա՜ծ իմ, եթե միայն իմանար: Արանչային նոր էին բերել հիվանդանոցից, Միրենը հրաշքի սպասումով էր: Չէ՞ որ Հայրոսի աղջկա ձեռքը բռնելով՝ Հիսուս ասել էր. «Աղջի՛կ, վե՛ր կաց»: Երանի դրա նման մի բան պատահեր, բայց մեռածի փոխարեն անդամալույծ Արանչան լիներ: Ու դեռ ոչինչ, որ դոն Սերապիոն, նախքան պատարագը սկսելը, ողջունեց Արանչային ու հետո՝ աղոթքի ժամանակ, նրան օրինակ բերեց,

որպես մեր Տիրոջ՝ Աստծո անվերջանալի գթասրտություն: Այդ բառերը, Միրենի կարծիքով, այդքան էլ վատը չէին: Եկեղեցում շատ մարդ կար, բոլորը ծանոթ էին, ու մի քիչ մխիթարանք ու կորով ստանալը, մի փոքր էլ կարևորված զգալն ավելորդ չէ, չէ՞: Ու ձեռքի հետ էլ գուցե այս անհավատը նորից հավատքի գա:

Եկավ հաղորդության պահը: Ու ի՞նչ է անում դոն Սերապիոն: Դե՛, որտեղ ասես քիթը մտցնող է: Մեկ էլ իջնում է խորանը նստարաններից անջատող երեք աստիճաններով, մոտենում է Արանչային ու շատ ջերմ, լուրջ, նույնիսկ հուզված, նրան մասունք է տալիս: Հիսո՛ւս քեզ Քրիստոս: Բայց ինչպե՞ս, չէ՞ որ չի խոստովանել: Չէ՞ որ նա չի հավատում Աստծուն: Բա որ, հաշվի առնելով աղջկա համառությունը, վերցնի ու թքի նշխարը: Կամ էլ բռնի ու խեղդվի: Պատարագից դուրս գալիս տան ճանապարհին Արանչան բերանը բացեց, ու լավ է, որ մարմին սրբոցն այնտեղ էր՝ լեզվին կպած, փափկած: Ի՞նչ անել Քրիստոսի մարմնի հետ: Դե՛, Միրենը զգուշությամբ երկու մատով վերցրեց օրհնած թաց հացը ու դրեց իր բերանը: Մայթի մեջտեղը կանգնած՝ աչքերը փակեց ու մի աղոթք շշնջաց, ու դա օրվա մեջ իր երկրորդ հաղորդությունն էր: Բա էլ ի՞նչ աներ:

Իր տեղն ազատ էր: Իգնասիո՛, էս արա՛, Իգնասիո՛, էն արա՛: Խոշե Մարին՝ խեղճը, այդքան հեռու է, ու միակ արած բանը Բասկերի երկրի համար պայքարելն էր, դու հո՛ գիտես: Աղջիկս էլ՝ հետը. դե՛, տեսնում ես՝ ինչ վիճակում եմ: Իսկ փոքրս ո՛չ մեզ զանգում է, ո՛չ էլ գալիս է: Արանչան իր կողքը քնած էր, կամ էլ, ի նշան բողոքի, ձև էր թափում, թե քնած է: Ինձ համար մեկ է: Քանի դեռ բղավել չի կարող… Բա որ նրան տեսնե՞ն: Հետո՞ ինչ: Ամենակարող Աստծո, Հոր և Որդվո և Հոգվույն սրբո օրհնությունը ձեզ վրա: Պատարագը մի ակնթարթում վերջացավ: Միրենը սպասեց, որ մարդիկ դուրս գան: Բայց ինչ դանդաղ են ոմանք, գրո՛ղը տանի: Եկեղեցին դատարկվեց, նա գնաց դեպի խորան: Իսկ Արանչա՞ն: Դե՛ լավ, մի հինգ րոպե մենակ մնալը ողբերգություն չէ:

Միանգամից բուն խնդրին անցավ:

— Նյարդերս քայքայում է, տե՛ր հայր: Գիշերներն աչք չեմ կպցնում: Զգում եմ, որ պրոբլեմներ ստեղծելու, մեզ ջղայնացնելու համար է եկել, հաստատ: Մենք պետության զոհն էինք, իսկ հիմա զոհերի զոհն ենք: Բոլոր կողմերից են հարձակվել:

Վերջում աղաչեց: Թող գնա, հետը խոսի, թող պարզի՝ ինչ նպատակով

է ամեն օր գալիս ավան, ու թող նրան համոզի, որ Սան Սեբաստիանում մնա, չգա:

Քահանան, որ ցանկասերի մեկն էր, ձեռքը դնելով նրա ուսին (բերանից տհաճ հոտ էր փչում)՝ ասաց.

— Մի՛ անհանգստացիր, Միրե՛ն: Ես կզբաղվեմ:

17

Զբոսանք

Հաճելի է, չէ՞, մի զավակ ունենալ, որ, չնայած իր բազմաթիվ և կարևոր գործերին, մի աշխատանքային օրվա առավոտ մորն է տրամադրում: Ահա գալիս է՝ լավ հագնված, թեև կոշիկները հագուստին չեն սազում: Ճաշակ, նկատի ունեմ հագնվելու ճաշակ, չունի: Մարդիկ կան, որոնց տղաները ահաբեկիչ են դառնում: Իմը բժիշկ է դարձել: Ինչո՞ւ չասել ճշմարտությունը: Քառասունութ տարեկան է, լավ դիրք ունի, սեփական տուն, բայց դեռ ո՛չ կին ունի, ո՛չ ժառանգներ: Միայնակ է, միշտ միայնակ: Նույնիսկ չի մտածում քրոջ նման ճամփորդել: Հարց է առաջանում՝ երջանի՞կ է, կյանքից բավականություն ստանո՞ւմ է:

Մայրն ու տղան համբույրներ փոխանակեցին Լա Կոնչայի ժամացույցների տակ, որտեղ և պայմանավորվել էին հանդիպել: Տղան առաջարկել էր նստել «Լոնդոն» հյուրանոցի սրճարանում, մայրն էլ թե՝ ոչ մի դեպքում: Այսքան լավ եղանակ է, ինչո՞ւ փակ տեղում նստել: Շավիերը շուրջը նայեց ու համոզվեց, որ մայրն իրավացի էր: Իսկապես որ, երկինքը, մեղմ սյուքն ու աշնանային հաճելի եղանակը տրամադրում էին զբոսանքի:

— Ի՞նչ կուզես՝ անենք:

— Գնանք այն կողմ:

Ու Բիչո՛րին կզակի շարժումով ցույց տվեց Միրակոնչա ճեմուղին: Չսպասելով զավակի համաձայնությանը՝ սկսեց քայլել այդ ուղղությամբ, ու Շավիերն անմիջապես հասավ նրան:

— Ինչպե՞ս եղավ, որ մինչև հիմա քեզ համար մի կին չես գտել: Չեմ հասկանում: Գեղեցիկ ես, հարգի մասնագիտություն ունես: Էլ ի՞նչ: Փողի պակաս չունես: Կանայք պետք է որ հետևիցդ վազեն:

— Բանն այն է, որ ես հետ չեմ նայում:

— Լսի՛ր, չկարծես, թե դա կցնցի ինձ, բայց դու պատահմամբ տղամարդկանցով չես տարված, չէ՞:

— Ես իմ աշխատանքով եմ տարված: Օգնել, բուժել հիվանդներին, այդ տիպի բաներով:

— Խոսքը կտուրն ես գցում:

— Ամուսնությունն ինձ համար չէ, ama: Այդքան բան: Քանդակագործությունը կամ ռեգբին էլ ինձ համար չեն, այդուհանդերձ չես հարցնում դրանց հետ իմ հարաբերության մասին:

Տղայի թևը մտավ: Իր զավակով հպարտ մի մայր, որ զբոսնում է Միրակոնչայով: Ձախից՝ մեքենաների խճողում, երկու ուղղությամբ սլացող հեծանվորդներ, քայլող մարդիկ, մարզական հագուստով վազորդներ: Աջից՝ ծովախորշը, ծովը, հայտնի ծովային փառատոնը՝ աչք շոյող կապույտ ու կանաչ գույներով, փրփուր, ալիք, նավեր, հեռվում՝ հորիզոնը:

Նախորդ երեկո խոսել էին հեռախոսով, ու Բիչո՛րին գիտեր, որ Շավիերը տեղեկություններ է հավաքել, թեև չգիտեր արդյունքները: Դե՛, սկսի՛ր, պատմի՛ր. մայրն անհամբեր էր:

— Նախ և առաջ պետք է ասեմ, որ վերջին անգամ եմ նման բան անում: Բուժառուին վերաբերող անձնական տեղեկություն տարածելու պատճառով կարող եմ աշխատանքից զրկվել: Այս անգամ բախտս բերեց, տվյալներ հաղորդողը վստահելի գործընկերուհի էր, բայցևայնպես, նման հարցերում շատ զգուշավոր է պետք լինել:

Մայրն էլ, թե՝ պատմություններ մի՛ պատմիր, միանգամից ասա՛, ինձ համար ի՞նչ ես իմացել: Շարունակում էին քայլել (ծովը, սպիտակ ճաղաշարը, հեռվում՝ Իգուելդո սարը), տղան էլ պատմեց.

— Երկու տարի առաջ Արանչան կաթված է ստացել: Մի՛ հարցրու՝ ինչու, քանի որ ինձ չեն ասել: Թղթերում գրված է, որ սկզբում եղել է Պալմա դե Մալյորկայի հիվանդանոցի վերակենդանացման բաժանմունքում, ինչից կարելի է եզրակացնել, որ դեպքը պատահել է կղզում՝ արձակուրդի ժամանակ: Ու վիճակը, վստահեցնում եմ, ծայրահեղ ծանր է եղել: Բազիլային զարկերակի խցանման պատճառով Արանչան, ինչպես բժիշկներս ենք ասում, «գիրության» համախտանիշ ունի:

— Զգացվում է, որ բժիշկ ես:

— Լա՛վ, հանգի՛ստ, հիմա կբացատրեմ: Այդ զարկերակը սնուցում է կենտրոնական նյարդային համակարգը և, այսպես ասած, պատասխանատու է այն շրջանի համար, որը միավորում է ողնուղեղին հասնող զարկերակները: Այդ հատվածի վնասման պատճառով ամբողջ մարմինը կարող է անշարժանալ: Արանչայի հետ հենց դա է պատահել, հասկանո՞ւմ ես: Նրա ուղեղը դարձել է անդամալույծ մարմնի գերին: Լսում ու հասկանում է, սակայն չի արձագանքում: Միայն կարող էր աչքերը շարժել ու թարթել:

Դե՛, այդ ընտանիքից Արանչան վերջին մարդն էր, որին Բիչո՛րին որևէ վատ բան կցանկանար: Մի օր Արանչան իջնում էր փողոցով: Արդեն ամուսնացա՞ծ էր Ռենտերիայից այդ տղայի հետ: Այո՛, բայց դեռ երեխա չուներ: Զատոն էլ արդեն չէր մասնակցում հեծանվավազքի փուլերին, ոչ էլ գնում էր «Պագոետա» բար՝ ընկերների հետ թուղթ խաղալու, ինչը ցավ էր պատճառում խեղճին, թեև ասում էր՝ պա՛հ, ավելի վատ բաներ էլ են պատահում: Պատերին սպառնագրեր էին հայտնվել: Դրանցից մեկը. TXATO TXIBATO*: Ենթադրում եմ, որ հանգը բռնում էր, դրա համար էին այդպես գրել, բայց նպատակը զրպարտելն ու վախեցնելն էր: Ֆլանը մի փոքր բան է անում, ֆստանը՝ մի ուրիշ փոքր բան, ու երբ դժբախտություն է պատահում, որը բոլորը միասին են հրահրել, ոչ ոք պատասխանատվություն չի զգում, որովհետև, ընդհանուր առմամբ, ես ընդամենը գրվածքն եմ արել, ես ընդամենը ասել եմ՝ որտեղ է ապրում, ես ընդամենը նրան մի քանի բան եմ ասել, որ, իհարկե, վիրավորական էր, բայց, լսի՛ր, դրանք ընդամենը բառեր էին՝ օդում վայրկենապես մարող աղմուկ: Մի օր էլ ավանում շատերը դադարեցին բարևել: Բարևե՞լ: Շատ բան եք ուզում: Խուսափում էին նրանց կողմը նայել: Ամբողջ կյանքի ընկերները, հարևանները, նաև որոշ երեխաներ: Այդ անմեղները ի՞նչ պիտի իմանային: Դե՛, պարզ է. տանը ծնողների խոսակցությունն էին լսել: Բիչո՛րին փողոցում հանդիպեց Արանչային: Աղջիկը ձայնը չիջեցրեց, հակառակը՝ բարձրաձայն արտահայտվեց: Մոտակայքում կանգնած ամեն ոք կլսեր:

— Ձեր հանդեպ արվածը ստորություն է. ես դեմ եմ դրան:

Ուրիշ բան չասաց: Պատասխանի էլ չսպասեց: Բիչո՛րիի այտերն էլ չիամբուրեց, ինչպես անում էր անցյալում: Բայց նախքան ճանապարհը շարունակելը՝ ձեռքն ընկերաբար դրեց նրա ուսին: Մի խոսքով՝ նման մի բան էր ասել: Հնարավոր է՝ մեկ-երկու բառ շփոթեր, քանի որ հիշողությունը երբեմն դավաճանում է: Բայց ամեն դեպքում նրա այդ սիրալիր պահվածքը Բիչո՛րին երբեք չի մոռանա: Ե՞ս, մոռանա՞մ: Մեռնեմ, թե մոռանամ:

— Պալմա դե Մալյորկայի հիվանդանոցում այնպիսի վիճակում է եղել, որ ստիպված տրախեոտոմիա են արել, արհեստական շնչառության համակարգ միացրել ու մնացած բաները, որ էլ չնկարագրեմ, քանի որ չեմ կարծում, որ այդ բոլորը պետք է լսես: Բավական է իմանաս, որ այն ժամանակ

* Txato txibato (բասկ.), Զատո՛ մատնիչ:

Արանչան չէր կարող շնչել, խոսել, ոչ էլ, բնականաբար, սնվել: Մի խոսքով՝ նրա կյանքն ամբողջությամբ կողմնակի օգնությունից էր կախված:

Չատոյին սպանեցին տան շքամուտքից մի քանի մետր այն կողմ հետ-միջօրեին: Անձրևոտ եղանակ էր: Ու քահանան, դրան նայի՛ր, Բիչո՛րիի ականջին էր նստել, որ հոգեհանգիստը Սան Սեբաստիանում լինի: Այ-սի՞նքն: Դե՛, գիտես, այնտեղ ավելի շատ մարդ կգա: Բիչո՛րին էլ, թե՝ նույ-նիսկ խոսք չի կարող լինել. մենք այս ավանից ենք, մեզ այստեղ կնքել են, այստեղ ամուսնացրել, ու ավանում էլ ամուսնուս սպանել են: Քահանան զիջեց: Հոգեհանգիստը տեղի ունեցավ, ղողանջեցին զանգերը հան-գուցյալի համար: Եկեղեցու հարևանությամբ ապրող մի քանի հոգի, որոշ քաղաքական գործիչներ՝ սահմանադրական թևից, փոքրաթիվ ազգա-կաններ, որ հատուկ հոգեհանգստի համար էին եկել, ու էլի սակավաթիվ մարդիկ: Չատոյի ընկերության աշխատակիցնե՞րը: Ոչ ոք: Քարոզի ըն-թացքում՝ ոչ մի բառ ահաբեկչության մասին: Ողբերգություն, որ մեզ բոլո-րիս է հուզում: Ու Արանչային էլ չտեսավ, բայց Շավիերի ասելով՝ ամուսնու հետ եկեղեցու վերջին նստարանին էին նստած: Չմոտեցան՝ ցավակ-ցություն հայտնելու համար, բայց ի տարբերություն մյուսների՝ եկել էին: Բիչո՛րին դա էլ չի մոռանում:

Մայր ու տղա քայլելով հասան Անտիգուո թաղամասի թունելին, ու թե՝ ի՞նչ անենք: Որոշեցին վերադառնալ: Շավիերը աշխատում էր պարզ ու հակիրճ բացատրել, որ մայրը լավ հասկանա: Բիչո՛րին՝ մտածկոտ, ուշա-դիր, քաղաքից, սարերից, հեռավոր ու անջատ-անջատ ամպերից անդին տեսնում էր իրեն անծանոթ պատկերները՝ խողովակների մեջ կորած Արանչային, որ միայն կոպերով էր կարողանում «այո» կամ «ոչ» ասել: Տեղն է իրենց: Իհարկե, խոսքը աղջկա մասին չէ. դա որ՝ հաստատ:

— Ama, ինձ չե՞ս լսում:

— Տուն կգա՞ս՝ ուտելու:

— Չեմ կարող:

— Ժամադրվա՞ծ ես: Այդ բախտավորի անունն ի՞նչ է:

— Անունը բժշկություն է:

Ըստ Շավիերի՝ լավագույն դեպքում Արանչան մի օր կկարողանա քայլել տան մեջ ձեռնափայտի կամ որևէ մեկի օգնությամբ: Արդեն ինքնուրույն է սնվում, բայց ցանկալի է, որ հեղուկ ու սնունդ ընդունելիս առանց վերահս-կողության չմնա: Նաև չի բացառվում, որ հետագայում կարողանա հնչել:

— Կարողանա ի՞նչ անել:

— Ձայն հանել:

Բացի դա՝ որքան էլ ջանադրաբար աշխատի վերականգնվել (ասում են՝ շատ է ջանում), Շավիերի կարծիքով՝ դժվար թե աղջիկը նորից կարողանա, ինչպես ասում են, նորմալ կյանքով ապրել:

Լա Կոնչայի ժամացույցին հասնելով՝ արդեն պիտի հրաժեշտ տային իրար.

— Արյանս անալիզի արդյունքները չե՞ս տալիս:

— Ա՛հ, լավ է, որ հիշեցրիր: Համարյա մոռացել էի: Որոշ ցուցանիշներ ինձ դուր չեն գալիս: Ուստի Առուաբառենային խնդրել եմ՝ մի հատ էլ ստուգի: Արի՛ չշտապենք, լա՞վ: Սովորական բան է: Դե՛, գիտես, վստահ լինելու համար: Մնացածի առումով՝ քարի պես պինդ ես:

Հրաժեշտ տալով՝ համբուրեցին իրար: Նրանց կողքով հեծանիվներ էին անցնում, մանկասայլակներ, ցատկոտում էին քաղաքի ճնճղուկները:

— Իսկ այդ Առուաբառենան ո՞վ է:

— Գործընկեր ու մեր լավագույն մասնագետներից մեկը:

Նայեց՝ ինչպես է տղան հեռանում: Գիտեր, զգում էր, որ մի քանի քայլից շրջվելու է: Հետաքրքրությունի՞ց, սովորության համաձա՞յն, մորն ուսումնասիրելո՞ւ: Այդպես էլ եղավ: Բիչո՛րին, որ տեղից չէր շարժվել, հանգիստ ձայնով, թե.

— Ուռուցքաբան է, չէ՞:

Շավիերը գլխով արեց: Ձեռքի իր շարժումով ասես ցանկանում էր պահը պակաս դրամատիկ դարձնել: Հեռացավ կարմրանի* ծառերի շարքերի միջով՝ մեջքը մի փոքր կոր, գուցե բարձրահասակ լինելու պատճառով, քանի որ մարդկանց հետ խոսելիս ստիպված է ներքև նայել: Աներևակայելի է, որ այս մարդը դեռ ամուսնացած չէ: Գուցե իրո՞ք անճաշակ հագնվելու պատճառով:

* Կարմրան, մոշա, իրողուն (լատ.՝ Támarix), կարմրանազգիների ընտանիքի բույսերի ցեղ:

18

Արձակուրդ՝ կղզում

Դե՛, չէ՛ էլի, դրանք պատահում են, որովհետև պիտի պատահեն, կամ, ինչպես մայրն էր ասում, որովհետև Աստված կամ նրան ներկայացնող Սուրբ Իգնասիոն այդպես է որոշել: Մարդու բախտն էլ այս աստիճան չբերի՞, հենց ի՞նձ պիտի պատահեր և այլն: Ձախորդներին հատուկ գանգատների թզբեհ ուներ (հա՛-հա՛-հա՛, այդքան ցինիկ մի՛ եղիր, աղջի՛կ ջան), որի հատիկներն անթիվ-անհամար անգամներ քաշում էր մտքում: Մի անգամ iPad-ի վրա գրեց Գորկային՝ իր տխուր կամ պարզապես վախեցած եղբայրիկին՝ չի՞ ուզի գրել իր հետ պատահածի մասին: Գորկան, աչքերում տագնապ, արագ պատասխանեց, որ ո՛չ, որ նա միայն երեխաների համար է գրում: Արանչան նորից ցույց տվեց սարքի էկրանը. «Մի օր ինքս կգրեմ ու ամեն ինչ կպատմեմ»: Առաջին անգամ չէր, որ նման բան էր հայտնում. սպառնալի՞ք էր:

Նման դեպքերում Միրենը կատաղում էր.

— Ատամներդ էլ ինքնուրույն չես կարողանում մաքրել, գրածդ ի՞նչ պիտի լինի: Ու ինչի՞ ես ուզում գրել: Որ ի լուր աշխարհի պատմես գլխներիս եկած դժբախտությունները՞ը:

Նայում էր նրանց (խոհանոց, կիրակի օր, խորոված հավ)՝ իր անվասայլակին նստած, ավելի սթափ (մի՛ մեծամտացիր, աղջի՛կ), քան նրանք բոլորը միասին: Էս ի՛նչ գավառական ընտանիք է: Հայրը՝ ծերացած, դարդերից կնճռոտած, շապիկի կրծքամասին՝ ձեթի հետք, արդեն քսան տարուց ի վեր չի հասկանում, թե ինչ է կատարվում իր շուրջբոլորը: Եղբայրը՝ Գորկան, ապրում է Բիլբաոյում թաքնվելո՞վ ու երկար ժամանակ գոյության նշան ցույց չի տալիս: Մյուս եղբայրը բացակա է, այստեղ չէ, բայց ասես ներկա լինի, քանի որ ամեն պահ զրույցների թեմա է դառնում. ընտանիքի քոթուկը, որ արդեն չեմ էլ հիշում՝ քանի տարի փտում է բանտում: Ու ama-ն, որը նույնքան զգայուն ու կարեկցող է, որքան մոտոցիկլի գազախողովակը, թեև հանուն արդարության պետք է ընդունել, որ համով բաներ է սարքում: Ու նայում էր մորն ու հորը, որոնք լուռ ծամում էին՝ յուրաքանչյուրը դեմքով դեպի իր ափսեն, ու դառնության, թե չարության

համը կերակրափողով բարձրանում էր մինչև կոկորդը (աղջի՛կ ջան, զբոսպի՛ր քեզ)։ Փակում էր աչքերը ու նորից վարձած մեքենայով քշում էր սոճիներով եզերված մայրուղով այն մի քանի կիլոմետրը, որ մնում էր մինչև Պալմա։

Արձակուրդ էին եկել Կալա Միլյոր։ Ովքե՞ր։ Մայր ու աղջիկ։ Օգոստոսյան երկու շաբաթ էժան մի հյուրանոց, որ թեև դեպի ծով տեսարան չուներ, բայց ծովափից հեռու չէր։ Էնդիկան, որ այն ժամանակ 17 տարեկան էր, չցանկացավ հետները գալ։ Չէ՛ որ, չէ՛։ Փոքրը՝ աղջիկն էլ առանձնապես ցանկություն չուներ, բայց Արանչան նրան համոզեց. զվարճանքներ խոստացավ, մի քիչ հոգեբանական ճնշում գործադրեց ու, չնայած դպրոցում վատ գնահատականներին, ֆոտոխցիկ գնեց։ Արանչայի համար կարևորը Գիլյերմոյից հեռու լինելն էր։ Որևէ տեղ մենակ էլ կգնար, բայց խիղճը կտանջեր, եթե երեխաներին հոր հույսին թողներ։ Ամուսնությո՞ւնը։ Դե՛, այս վիճակը չէր կարելի ամուսնություն անվանել։ Մի վիճաբանությունը հետևում էր մյուսին։ Օրեր շարունակ, առանց մի բառ փոխանակելու, իրար նետելով արհամարհանքով, ատելությամբ ու զզվանքով լի հայացքներ, երբ ստիպված էին միմյանց աչքերին նայել։ Բայց երեխաները։ Բայց ֆինանսական կապանքները։ Բայց տունը, որ երկուսով էին գնել։ Բայց ազգականները։ Արանչան որոշել էր, որ չի կոտրվելու, թեև արդեն ամենևին էլ ապահով չէր զգում, ամուսինն էլ ինչ-որ մեկի հետ էր հանդիպում ու չէր էլ թաքցնում դա։

— Քանի որ դու հրաժարվում ես կենակցել, ես մի տեղ պիտի մտցնե՞մ, թե՞ չէ։

Հենց այդ բառերով։ Զավակների առջև։ Եթե ոչ նրանց ներկայությամբ, ապա այնքան մոտիկ, որ հանգիստ կարող էին լսել դառը պարսավանքները, մեղադրանքներն ու բղավոցները։

Այնոան՝ 13 տարեկան, թե.

— Ես, ama, նախընտրում եմ մնալ այստեղ ընկերներիս հետ։

— Խնդրում եմ քեզ։

Ու գնացին երկուսով։ Գիլյերմոն նրանց իր մեքենայով տարավ օդանավակայան։ Այնոան խնդրեց երաժշտություն միացնել, ու հայրը շատ բարձր միացրեց։ Դե՛, չխոսելու համար, կարծում եմ։ Վերջում էլ ճամպրուկները հանեց, արագ համբուրեց աղջկան, բարի թռիչք մաղթեց, հայտնի չէր նրա՞նց, թե՞ երկնքին, քանի որ խոսում էր՝ սրբի պես վեր նայելով,

ու անմիջապես հետդարձի ճանապարհը բռնեց: Նույնիսկ չմտածեց ճամպրուկները վերցնել ու նրանց ուղեկցել մինչև ուղևորների գրանցման տեղը:

Ես, մտքերի մեջ կորած, սլանում էի ուղիղ դեպի այն նողկանքը, որն ինձ էր սպասում Մալյորկայի սոճիների մոտ հենց այն պահին, երբ ըմբոշխնում էի ընդարմության օրերս՝ առանց արցունքների, զայրույթի, վիճաբանության: Հաճույք էի ստանում աղջկաս ներկայությունից, արևից, ծովից ու նույն հյուրանոցում ապրող մի օտարերկրացու հետ թեթև ֆլիրտից: Վերջինը՝ հիմնականում նորից զգալու համար այն երբեմնի գրգիռը ու փոխհատուցելու Գիլյերմոյի պատճառած նվաստացումները: Ցույց է տալիս, թե ազնվացեղ արու է՝ Կազանովա, բայց անկողնում ընդամենը թեթևակի ցնցվող խոզուկի պես մի բան է:

Մանակորն ու էլի մի քանի գյուղեր անցան: Ախտանշաններ կայի՞ն: Ոչինչ էլ չկար: Մինչ անհավես կծոտում էր հավի կրծքամիսը, որը մայրը նախօրոք մանրացրել էր, հիշում էր այդ վարձով մեքենան՝ երջանկության մի պղպջակ: Նա ղեկին էր, Այնոան՝ արևային ակնոցով՝ նրա կողքին. իր վատ անգլերենով (ա՛յ, եթե ինձ լսեիր ու սովորեիր) բջջայինով հաղորդագրություններ էր փոխանակում մի գերմանացի տղայի հետ, որին լողափին էր հանդիպել և մինչև ականջները սիրահարվել: Ի՜նչ գեղեցիկ է սերն այդ տարիքում: Ու հեռվում՝ առավոտվա կապույտ երկնքի ներքո, երևում էին սոճիները, որոնք, արդեն պատրաստվում էին պայթեցնել երջանկության իր այդ պղպջակը:

Հանկարծ ոտքերն անզգայացան: Ու հաջողեցրեց, հայտնի չէ ինչպես, արգելակել մայրուղու մեջտեղում, եթե, իհարկե, մեքենան ինքն իրեն չկանգնեց, քանի որ ճանապարհն այդ հատվածում մի քիչ դեպի վեր էր գնում: Արանչան, որքան կարողացավ՝ ձեռքի արգելակը քաշեց. ձեռքերը կարողանում էր շարժել, նաև կարողանում էր մտածել, խոսել, տեսնել ու շնչել, ու իրականում ոչ մի տեղը չէր ցավում:

— Ama, ի՞նչ ես անում, ինչո՞ւ կանգնեցիր:

— Իջի՛ր, գնա՛, օգնություն խնդրի՛ր: Ինձ հետ ինչ-որ բան է կատարվում:

Ուրբաթ: Բախտս չբերեց. երեխանե՛րս. ա՛խր, ինչո՞ւ հենց ինձ պիտի սա պատահեր: Շտապօգնության մեքենայի մեջ էր այդպես ասում: Բուժակը հարցեր էր տալիս: Արանչային գիտակցության մեջ պահելու համա՞ր: Նա պատասխանում էր ցրված: Ամբողջ ուշադրությունն ուղղված էր երեխա-

ներին, վաճառողուհու իր աշխատանքին, իր ապագային, բայց ամենաշատը՝ երեխաներին. դեռ այդքան երիտասարդ՝ առանց ինձ ի՞նչ են անելու: Շաբաթ, կիրակի: Արանչան աստիճանաբար հանգստանում էր: Համոզված էր, որ պարզապես վախեցել է: Այնոան հիստերիկ վիճակում էր, իրեն լավ չէր պահում: Այսի՞նքն: Նախ՝ ո՛չ ուզում էր Պալմայի հյուրանոցում տեղավորվել, ո՛չ էլ մենակ վերադառնալ Կալա Միլյոր: Բացի այդ՝ հիմա արդեն կղզին նրան բանտ էր թվում, ու ուզում էր հաջորդ իսկ թռիչքով տուն վերադառնալ: Նրան թույլ տվեցին գիշերել մոր անկողնու կողքի աթոռին: Գիլյերմոյին գտնել հնարավոր չէր: Դե՛, արի՛ ու իմացի՛ր, թե Էնդիկան որտեղ էր: Տանը չէր: Հուսով եմ, որ պատմության մեջ չի ընկել: Ի վերջո, երկուշաբթի բժիշկն ասաց, որ հաջորդ օրը երևի Արանչային դուրս կգրեն, մեղմ ձայնով խորհուրդներ տվեց, ասաց, որ տեղ հասնելուն պես իր քաղաքում լուրջ բժշկական քննություն անցնի: Ուստի Արանչան հեռախոսով սկզբից՝ մորը, հետո Գիլյերմոյին ասաց, որ պետք չէ՝ գան Մալյորկա իր հետևից, որ Այնոայի հետ կվերադառնա նախատեսված օրը: Որոշեց Կալա Միլյորում անցկացնել արձակուրդի մնացած հինգ օրերը: Այնոան, թե.

— Այստեղ ձանձրանում եմ:

— Իսկ այն գերմանացի տղան ի՞նչ եղավ: Նրան հրաժեշտ չե՞ս տալու:

Մեկ էլ պարզվեց՝ գերմանացի տղան նողկալիի մեկն էր:

— Այդպես մի՛ խոսիր, կարող են լսել:

Մեկուկես ժամ հետո՝ երեկոյան կողմ, Արանչան ինտուբացված, պառկած էր վերակենդանացման բաժանմունքում: Երկրորդ կաթվածն էր ստացել, ան-տա-նե-լի ցավերի մեջ էր: Ամեն ինչ լսում էր: Բժշկին, բուժքույրերին: Ու չէր կարողանում պատասխանել նրանց, ինչը իրեն շատ էր վախեցնում: Աստվա՜ծ իմ, այս ի՞նչ վիճակ է: Նրան սարսափեցնում էր այն միտքը, որ կարծելով, թե մահացել է, նրան դագաղը կդնեն ու ողջ-ողջ կթաղեն:

— Լսի՛ր, գեղեցկուհի՛, կարելի՞ է իմանալ՝ ինչո՞ւ չես ուտում:

Բաց արեց աչքերը: Զարմացավ, նույնիսկ ապշեց՝ իր առաջ տեսնելով մորն ու ձախից՝ հորը: Յուղոտ շուրթերով: Նստած՝ հավի բուդ էին խփշտում:

19

Տարաձայնություններ

Բայց էս ի՞նչ շոգ է այս կղզիներում: Միրենի կարծիքով՝ ծովը պետք է զովացներ կղզիները:

— Ո՛չ, amona*:

— Նույնպիսի շոգ է լինում, երբ գնում եմ՝ osaba** Խոշե Մարիին տեսակցելու:

Ճամփորդությո՞ւնը: Խայտառակ մի բան էր: Պալմա հասավ հինգուկես ժամ ուշացումով՝ Բիլբաոյի օդանավակայանում անվերջանալի, ահավոր և այլն սպասելուց հետո: Երկար ժամանակ դիմացավ ծարավին, այնքան, որքան կարողացավ, բայց վերջիվերջո ստիպված եղավ չնախատեսված ծախս անել: Մի շիշ հանքային ջուր գնեց՝ առանց գազի. հո նման շքեղություն իրեն թույլ չէ՞ր տալու, մյուս կողմից՝ չէր ցանկանում զուգարանի ծորակից ջուր խմել. լուծ կկպչեր հաստատ: Մտածում էր ծարավը հագեցնել օդանավում մատուցվող բաներով, բայց ժամանակի ընթացքում (մեկ ժամ, երկու…) կոկորդում ուժեղանում էր կուտակվող ավազի զգացումը: Կարճ ասած, գնաց բար ու խնդրեց կտրուկ, ասես բարկացած, իր համեստ ջրի շիշը:

Ի՞նչն էր պատճառը: Չէ՞ որ բացի իր օդանավից՝ մնացած բոլորը թռչում էին: Բարձրախոսները, ասես հատուկ, միայն ուրիշ թռիչքներ էին հայտարարում (դեպի Մյունխեն, Փարիզ, Մալագա, մոտեցե՛ք այսինչ ելքին…), ու րոպեն մեկ՝ ապուշ-ապուշ, թե ուշադի՛ր եղեք և վերահսկե՛ք ձեր իրերը:

Չդիմանալով՝ հարցրեց մյուս ուղևորներին, որ իր նման սպասում էին դեպի օդանավ տանող ելքի մոտ: Կներեք, չէի՞ք ասի: Չէր հաջողվում օտարերկրացիներից ու մյուս՝ իր պես անտեղյակ ուղևորներից պարզել, թե ինչո՞ւ, կարո՞ղ եք ինձ բացատրել՝ ինչո՞ւ է օդանավը, ճամպրուկները մեջը, մեխվել-կանգնել, ու մեզ չեն թողնում նստել:

---

* Amona (բասկ.), տատիկ:

** Osaba (բասկ.), քեռի:

Աղջիկս էլ էնտեղ՝ հեռավոր հիվանդանոցում: Արդեն ժամացույցին ոչ թե առաջվա նման նյարդայնացած, այլ մի տեսակ ինազանդությամբ ու դանդաղ վրա տվող կատաղությամբ էր նայում: Ու որոշեց (շոգ, քրտինք) մի հարկ բարձրանալ ու ծարավը հագեցնել: Այդպես էլ արեց, հետո բաժակից կիտրոնի կլորակը բերանը դրեց ու մի քիչ կեղևի սպիտակ մասը կծոտեց, քանի որ նաև քաղցած էր:

Բարից դուրս գալիս ընդառաջ եկան երկու ռազմական ոստիկաններ: Միրենի ուշադրությունը ոչ թե նրանց դեմքին էր, այլ համազգեստին: Անսպասելի կասկածն ու անխուսափելի հակակրանքը ստիպեցին կանգ առնել բազրիքի մոտ: Արդեն մոտիկից հայտնաբերեց, որ երիտասարդ էին՝ կին ու տղամարդ: Քանի որ գալիս էին՝ իրենց զրույցով տարված, անթաքույց ուսումնասիրեց նրանց: Ի՞նչ անեմ: Txakurra*-ները հաստատ կիմանան: Երբ արդեն մոտիկ էին, Միրենը տարակուսեց՝ տեսնելով ոստիկանուհու բնական ժպիտը ու գլխարկի տակից երևացող, «պոչիկ» կապած շեկ մազերը: Նայեց իր շուրջը: Եթե իր ավանից մարդ լինի, կորած է: Վերջը համարձակվեց՝ լսե՛ք: Ոստիկանուհուն հարցրեց: Նա խոշտանգողի տեսք չուներ: Ու ոստիկանը սիրալիր տոնով (ինչը նույնպես անակնկալի բերեց Միրենին) ասաց, որ Պալմա դե Մալյորկայի օդանավակայանը փակ է:

— Ինչպե՞ս թե փակ է:

Այս անգամ պատասխանեց տղամարդ ոստիկանը.

— Այո՛, տիկին: Որովհետև մահափորձ է եղել երկու ոստիկանների նկատմամբ: Բայց մի՛ անհանգստացեք: Ամենայն հավանականությամբ, ժամանակավոր բան է, շուտով կթանապարհվենք:

— Ա՜հ, լա՛վ, եղա՛վ:

Հասավ Պալմա: Ներքևը՝ սփռվող քաղաքը՝ լուսավոր կետիկներ դարձած, ծովը՝ աներևակայելի սև, ու հեռվում՝ մայրամուտի մանուշակագույն լույսի վերջին առկայծումը: Շատ ուշ է՝ հիվանդանոց գնալու ու Արանչային տեսնելու համար: Այնոան, ինչպես պայմանավորվել էին, նրան օդանավակայանում էր սպասում:

— Լա՛վ, ասա՛՝ ո՞նց է:

— Ama-ն շատ վատ է, մարմնով մեկ խողովակներ են:

* Txakurra (բասկ.), շուն՝ ոստիկանի արհամարհական անվանում:

— Իմ փոխարեն aita-դ պիտի եկած լիներ: Ձեր կատակը վրաս շատ թանկ է նստելու:

— Ասաց, որ երկուշաբթի է գալու ու հաջորդ օրն ինձ տուն է տանելու:

— Ա՜հ, չի՞ ուզում մնալ: Դրա աներես մռութը տե՛ս: Ամբողջ աշխատանքն ու ծախսը ինձ վրա է թողնում:

— Amona, հորս մասին վատ բաներ մի՛ ասա:

Բուժքույրը՝ կարմե անունով հրաշալի մի աղջիկ, Այնոային իր հովանու տակ էր վերցրել մինչև Միրենի գալը: Ջերմ ու մխիթարող ձայնով ասել էր Այնոային, որ չանհանգստանա, որ կօգնի նրան: Իր մեքենայով տարել էր երեխային Կալա Միլյորի հյուրանոց՝ իրերը վերցնելու: Ճանապարհին էլ բացատրել էր մոր վիճակը ու քաջալերող բաներ ասել:

— Նրան պետք է շատ սիրես:

Այնոային տարել էր իր տուն՝ Պալմանովա, որտեղ ապրում էր երկու փոքր երեխաների ու սարսափելի գեր ամուսնու հետ. այդ մարդը երևի մի հարյուր հիսուն կիլո կլիներ: Իմ կարծիքով՝ նախքան չաղանալը՝ հաստատ շատ գեղեցիկ է եղել իր այդ կապույտ աչքերով: Գերմանիայից էր, դեմքը՝ մի քիչ կարմիր (լա՛վ, շատ կարմիր), ու երբ հետս խոսում էր, շեշտը զգացվում էր: Երեխաների հետ նա խոսում էր գերմաներեն, իսկ մայրը՝ Մալյորկայի բասկերեն խոսվածքով:

Երբ Միրենը հաստատեց Պալմա գալու օրը, Կա՛րմեն տատ ու թոռան համար մի պանսիոնում սենյակ վարձեց՝ երկու անկողնով, տուրիստական թաղամասերից հեռու: Հեռու էր նաև հիվանդանոցից, բայց դե՛, ի՞նչ անես: Հետևել էր Միրենի՝ հեռախոսով տված ցուցումներին:

— Լսե՛ք, չափից ավելի թանկ չլինի, հարուստ չենք:

— Ձեռքիցս եկածը կանեմ:

Ասածը արե՞ց: Ավելի քան: Պանսիոնում նախաճաշ չէր նախատեսված, դեպի ծով տեսարան չուներ, կենտրոնից հեռու էր՝ աղմկալի մայրուղու մոտ, բայց էժան էր, ինչպես որ Միրենը ցանկացել էր՝ մտածելով, որ գուցե պետք լինի երկար մնալ: Անհանգստանում էր՝ մտածելով, թե որքան գումար է ծախսելու՝ բոլոր խնդիրները լուծելու համար: Արանչային ինչպե՞ս ենք այստեղից տանելու՝ ծովը մեջտեղ: Իգնա՛սիո, այս վիճակում ինձ մի՛ թող, խնդրում եմ: Իսկ Գիլյերմո՞ն: Ինչո՞ւ նա չի զբաղվում, չէ՞ որ ամուսինն է: Դե՛, աշխատանքս չեմ կարող թողնել: Դե՛, ղեկավարս: Դե՛, մի քանի օրից, ես չեմ… Արդարացումներ:

Այնոան պատմեց տատին, որ ահաբեկչությունը Կարմեի տանը շատ մոտ է եղել, ու որ ամբողջ տունն է ցնցվել: Հյուրասենյակում պատից նկար է պոկվել, ընկել: Վրայի ապակին է կոտրվել, մեկ էլ՝ տակը եղած լապտերը, ու որ Կարմեի չաղ ամուսինը ինչ-որ բան էր դուրս տալիս իր լեզվով, երեխաները լաց էին լինում պայթյունի ձայնից, Այնոայի կարծիքով՝ նաև հոր բղավոցներից վախեցած: Կարմեն ու Այնոան նոր էին վերադարձել հիվանդանոցից: Որոշել էին միասին ուտելիք պատրաստել, երբ մի երկու փողոց այն կողմ պայթյուն որոտաց: Որտե՞ղ: Ռադիոյով իմացան, որ Ռազմական ոստիկանության զորանոցի առջև էր: Անմիջապես ազդանշանների աղմուկ-աղաղակ սկսվեց, ու օդում էլ մի տեսակ տարօրինակ հոտ կար:

— Գիտես, amona, երեկ այդ նույն ժամին Կարմեի մեքենայով այդ փողոցով անցանք: Մենք էլ կարող էինք հօդս ցնդել:

— Այդքան բարձր մի՛ խոսիր. մարդիկ կան:

Այնոան, աչքերը կլորացրած, շարունակում էր ոգևորված խոսել:

— Հարևանուհին պատմեց, որ հրշեջները ծառից մարմնի կտորներ էին հանում:

— Լա՛վ, լա՛վ, ուտում ենք, չէ՞:

Երկուսով եկել էին պանսիոնից ոչ հեռու գտնվող բար՝ մի կտոր բան ուտելու:

— Հասկացի՛ր, էս մորդ հետ պատահած պատմությունը վրաս ահագին փող է նստելու: Վաղը սուպերմարկետից ուտելիք կառնենք ու սենյակում կխփշտենք, թեկուզ սառը լինի: Սովից չենք մեռնի, հը՞:

Այնոան շարունակում էր իր թեման.

— Ինձ դուր չի գալիս, որ սպանում են: Սա շատ հեռու է Բասկերի երկրից: Էստեղ ապրողներն էնտեղի վիճակի համար մեղավոր չեն, չէ՞:

— Լսի՛ր, մենք այստեղ ընթրելո՞ւ ենք եկել, թե՞ ինչ:

— Ռումբը կարող էր ինձ ու Կարմեին սպանել:

— Այդպես չի լինում, որովհետև նրանք պայթեցնելիս ուշադիր են: Թե կարծո՞ւմ ես, որ պայթեցնում են՝ ում պատահի: Երբևէ տեսե՞լ ես, որ մեկը դպրոցում պայթի կամ էլ մարդկանցով լի ֆուտբոլի դաշտում: Ռումբերը մեր ժողովրդի իրավունքները պաշտպանելու համար են, ու դրանցով թշնամիներին են վերացնում: Այն նույն մարդկանց, որոնք խոշտանգել են osaba Խոշե Մարիին ու շարունակում են նրան տանջել բանտում: Եթե դա չես հասկանում, արդեն չգիտեմ, թե է՛լ ինչ կհասկանաս:

— Իմ aita-ին էլ դուր չի գալիս, որ սպանում են:

— Այդ գաղափարները քեզ քո aita-ն է ներշնչել:

— Գաղափարների մասին բան չգիտեմ, amona: Ասածս այն է՝ ինձ դուր չի գալիս, որ սպանում են:

— Սպանում են, ու սպանվում են: Պատերազմները այդպես են լինում: Ինձ էլ դուր չեն գալիս պատերազմները, բայց ուզածդ ի՞նչ է: Որ շարունակեն բասկերին դարերով կտոր-կտոր անե՞լ:

— Լավ մարդիկ ուրիշներին չեն սպանում:

— Իհարկե, դա էլ է քեզ Գիլյերմոն ասել:

— Ես եմ ասում:

— Մեծանաս՝ կհասկանաս: Դե՛, վերջացրո՛ւ բրդուճդ, որ գնանք: Իբր օրս քիչ ծանր էր, հիմա էլ ապուշություններ պիտի լսեմ:

Այնոան էլ ասես ինքն իր հետ խոսեր: Ասաց, շշնջաց, ձայնը՝ զսպած փղձկոցից կտրված: Էլ սոված չէր: Ու բրդուճի կեսից շատը թողեց ափսեի մեջ: Միրենն էլ իրենը մինչև վերջ չկերավ: Մռայլվել էր:

20

Վաղաժամ սուգ

Շաբաթ օրն առավոտյան Այնոան մեծ հիասթափություն ապրեց: Մե՞ծ, ո՛չ, ահռելի: Տատի գալուց ի վեր առաջին անգամ չէր. ոչ մի հարցում իրար չէին հասկանում: Գիլյերմոն նեղսրտում էր.

— Քեզ ո՞նց կհասկանա մի կին, որը քարից է:

Շաբաթ օրվա հիասթափությունը Այնոային ապտակից ավելի ուժգին ցավ պատճառեց: Հիվանդանոց գնալուց առաջ amona-ին հարցրեց՝ կարո՞ղ է իր բջջայինի համար քարտ գնել: Սա լսելով՝ Միրենը դառը ծռմռեց շուրթերը: Հետո էլ, թե՝ գնացինք, արդեն ուշ է, որտեղ են այդ բաները վաճառում, ու ինչ արժեն: Ու հենց աղջիկը ամենամեղմ ձայնով գինն ասաց, Միրենը, թե՝ չէ՛ որ, չէ՛, ու ամբողջ ճանապարհին թվարկում էր իր արած ծախսերը:

— Ընկերուհիներիդ հետ խոսելը կսպասի, լսի՛ր, երեքշաբթի արդեն գնում ես: Ի՞նչ բախտավոր ես: Ես մնում եմ՝ մորդ խնամելու:

— Ama-ն հաստատ կառներ այդ քարտը:

— Բայց ես քո ama-ն չեմ:

Միրենը շարունակում էր խոսել ու գանգատվել, ու գանգատներն անվերջ էին: Այնոան հուսահատ նայում էր ավտոբուսի մյուս ուղևորներին, տներին, անցորդներին, ամեն կողմ, բացի տատի դեմքից՝ բացահայտ հրաժարվելով նրա հետ խոսելուց:

Հիվանդանոցում, երբ մենակ էր, հորը հեռախոսով պատմեց տեղի ունեցածը: Aita, այդ պատճառով չեմ կարողանա քեզ զանգահարել և այլն: Նա էլ թե.

— Աղջի՛կս, մինչև երկուշաբթի դիմացի՛ր:

Պայմանավորվեցին այդ օրը հանդիպել Գիլյերմոյի ամրագրած հյուրանոցի նախասրահում: Նախատեսված ժամից շատ ավելի շուտ Այնոան արդեն սպասում էր հորը շատ լուրջ տեսքով՝ իր բոլոր իրերը մի ճամպրուկի մեջ դրած, քանի որ աշխարհում ոչ մի բան նրան չէր ստիպի վերադառնալ պանսիոն:

Եվ ի՞նչ ասաց Միրենը: Ի՞նչ պիտի ասեր: Հայր ու աղջիկ իրենց ուզածն

արել էին: Երեկոյան ժամը ութի կողմերը հասնելով պանսիոն ու տեսնելով, որ թոռան հագուստն անհետացել է պահարանից, հասկացավ եղածը: Դե՛, լա՛վ, ավելի լավ է: Ինձ համար շատ տեղ կմնա, ու քիչ կծախսեմ:

Գիլյերմոն տաքսուց իջավ հյուրանոցի մուտքի մոտ: Աղջիկը երջանիկ վազեց՝ նրան գրկելու: Հարցեր, պատասխաններ, արագ փոխանակած բառեր, ու վերջում՝ ևս մի գրկախառնություն, ասես հայրն ասեր՝ հանգի՛ստ, արդեն հետդ եմ, ամեն ինչ լավ կլինի: Աղջիկն էլ, թե՝ ահավոր էր, լավ էր՝ եկար: Արանչայի մասին համարյա չխոսեցին: Գիլյերմոն ամեն օր հեռախոսով հիվանդանոցից տեղեկանում էր կնոջ վիճակի մասին, ինչը հակասում էր Միրենի համոզմունքին, թե իբր նա անսիրտ մարդ է, կինն էլ իրեն չի հետաքրքրում: Սահմանափակվեց՝ աղջկան հարցնելով Արանչայի մասին՝ առաջընթաց կա՞, ու Այնոան ասաց, որ ո՛չ, որ ama-ն դեռ խողովակներով է, բայց.

— Կարծում եմ՝ երբեք չի շարժվի:

Բարձրացան սենյակ, Գիլյերմոն ցնցուղի տակ մտավ, հետո հայր ու աղջիկ դուրս եկան՝ Պալմայի կենտրոնական փողոցներով զբոսնելու, մտան խանութներ: Այնոան իր հեռախոսի համար քարտ գնեց, ու նախքան սենյակ բարձրանալը՝ ընթրեցին դեպի ծովը նայող մի ռեստորանի բացօթյա մասում:

— Զզվել եմ բաններից ու բրդուճներից:

Նավերի կայմերի ուրվագծերն առավել ցայտուն էին իրիկնամուտին: Մեղմ զեփյուռը չափազանց հաճելի էր: Ամենուրեք երևում էին արևավառ ու ժպտուն դեմքեր. զբոսնող կանայք էլեգանտ էին: Ճնճղուկները գետնին սպասում էին ուտելիքային բարեգործությանը: Այնոան մատուցողին խնդրեց երկրորդ ու ապա՝ երրորդ կոկա-կոլան՝ փոխհատուցելու համար, ասաց, նախորդ օրերին տատի չգնածները:

— Aita, վաղը հիվանդանոց չէի ուզենա գնալ: Amona-ին չեմ ուզում տեսնել: Դու մենակ գնա՛: Ես քեզ հյուրանոցում կսպասեմ, երեկոյան էլ հանգիստ կնստենք օդանավ: Մեկ է, ama-ն չի էլ իմանա:

Օդանավ չենք նստի: Ի՞նչ: Ծրագիրը փոխվել է: Աղջիկը չէր հասկանում: Գիլյերմոն առաջին անգամ էր Մալյորկայում, ու պարզ է՝ ուզում էր օգտվել դրանից: Նրա ղեկավարը նրան ազատ էր թողել մինչև հինգշաբթի:

— Վա՛յ, aita:

Ձեռքով հանգստացնող նշան արեց:

— Վաղը ես մենակ կգնամ հիվանդանոց: Հուսով եմ՝ բժիշկն ինձ կբացատրի՝ ինչ է լինելու ama-ի վիճակն ապագայում: Մեկ է, amona-ն այնտեղ կլինի՞, թե՞ ոչ: Բայց եթե նրան այնտեղ տեսնեմ ու հնարավոր լինի հետը հանգիստ խոսել, մի բան, որ կասկածում եմ, նրան կներկայացնեմ իմ ծրագրերը, որոնց դու և Էնդիկան արդեն ծանոթ եք: Այցելությունս ավարտեմ՝ կգամ քեզ կվերցնեմ: Այդ պահից սկսած՝ երկու օր կունենանք մեր ուզածն անելու համար: Կարող ենք կղզով ճամփորդել, նավ նստել: Մի խոսքով՝ ինչ որ կուզես: Միայն զվարճանք է լինելու, խոստանում եմ: Հա՛, մեկ էլ amona-ն չպիտի իմանա, որովհետև ես նույնպես չեմ ուզում, որ մեր կյանքն ուտի:

Խողովակներ, շնչառական ապարատ, զոնդեր, լարեր, սարքավորումներ ու անկողնում՝ բաց աչքերով անշարժ մարմին: Գիլյերմոն՝ սպիտակ խալաթով, բախիլներով, վիզն այնքան ձգեց, մինչև հայտնվեց Արանչայի տեսադաշտում: Որևէ արձագա՞նք: Բնա՛վ: Այտը համբուրելուն էլ չարձագանքեց: Միայն աչքերը թեթևակի թարթեց: Կոպերը նույնիսկ իրար չդիպան: Ցածր ձայնով (բժիշկները հատուկ ցուցումներ էին տվել դրա վերաբերյալ) նրան ասաց, որ եկել է՝ Այնոայով զբաղվելու, բայց ասես արձանի հետ խոսեր: Նույնպես ասաց, որ շատ է կարեկցում: Այդպես ասաց, համենայնդեպս. կինը լսողության խնդիր չուներ ու հաստատ արթուն էր:

— Լսո՞ւմ ես ինձ:

Պատասխան չկար: Փորձելու համար դեմքը մի քիչ հեռացրեց ու տեսավ, որ այո՛, կինն իրեն հայացքով հետևեց մի քիչ՝ ոչ շատ: Ուստի Գիլյերմոն չբացառելով, որ Արանչան լսում է, շնորհակալություն հայտնեց միասին անցկացրած տարիների, իրենց երեխաների ու հաճելի պահերի համար: Ներողություն խնդրեց անախորժ դրվագների համար ու արդեն սկսել էր կնոջ հանդեպ ջերմ, մտերմիկ վերաբերմունք դրսևորել, երբ սենյակ մտավ զոքանչը՝ ունքերը կիտած: Դա էլ այն պարագայում, երբ, ըստ կանոնակարգի, եկողները պետք է այցելության որոշակի ժամերի ընթացքում առանձին-առանձին մտնեին, բայց, երևում է, բուժքույրերը նրան չէին տեսել:

Միրենը սկսեց նրան կշտամբել: Նախ՝ նրա սև շապիկի պատճառով: Ժամանակից շուտ է սուգ պահում: Իրականում խնդիրն այն էր, որ նա՝ մոխրագույն տաբատով, սև մոկասիններով, որոշել էր մուգ հագուստով լինել, քանի որ դուստրը նրան հեռախոսով հայտնել էր, որ քահանան

ama-ին վերջին օծումն էր տվել: Ու Գիլյերմոն անկեղծ մտածում էր, որ Արանչան ամեն պահ կարող էր մեռնել: Այդ պատճառով, առանց հետին մտքի, մուգ հագուստ էր հետը վերցրել: Բացի այդ՝ էլ ինչ պիտի աներ իր նման մեկը, որին միշտ Արանչան էր հագցնում՝ նրա համար հագուստ գնելով ու յուրաքանչյուր առավոտ պատրաստելով օրվա հագուստը:

Խնդիրն այնքան քիչ էր հետաքրքրում Գիլյերմոյին, որ իր զոքանչի պարսավանքներից պաշտպանվելու ջանք էլ չգործադրեց: Աստվա՜ծ իմ, որքան խոժոռերես է այս կինը: Չէր էլ նայում Միրենին: Բայց պառավը՝ կողը հաստ, շարունակում էր՝ խախտելով ցածր խոսելու պահանջը: Ու երբ մեղադրանքներն անտանելի դարձան՝ մտնելով ֆինանսական ու զգացական դաշտ, Գիլյերմոն վճռեց ճակատ տալ: Ու շատ բաներ ասաց հանգիստ, առանց բղավելու, առանց հայհոյելու: Վերջացրեց այսպես.

— Արանչայից վերջնականապես բաժանվելը ոչ մի կապ չունի այս պատահարի հետ: Մեր միջև արդեն ամեն ինչ որոշված էր: Մեր զավակները տեղյակ են մեր որոշմանն ու ընդունում են այն: Այնպես որ, ես ո՛չ գլուխս եմ ազատում, ո՛չ էլ ասածդ «բեռը» վրադ եմ գցում: Մի փոքր հարգանք ցուցաբերի՛ր: Եթե ոչ իմ, ապա գոնե աղջկադ հանդեպ, որին ես, ի տարբերություն քեզ, երբեք բեռ չէի անվանի:

Երկու հիսունևվրոյանոց գցեց նրան.

— Վերցրու՛ աղջկաս համար ծախսածիդ դիմաց:

Ու հեռացավ:

21

Երանցից լավագույնը

Հիշեց իր խոստումը. հենց նոր բան կամ մանրամասն իմանա, անմիջապես կպատմի մորը: Ու իմացել էր: Աշխատանքից ազատ պահին փակվեց իր գրասենյակում ու զանգահարեց Բիչո՛րիին:

Սեղանին համակարգիչ կար, թղթեր էին, տարբեր բաներ ու արծաթե շրջանակով մի լուսանկար: Իր հայրն էր: Մահացած հոր հայացքը բաց, ազնիվ ու բարի էր, բայց և ունքերով ասես նախազգուշացներ՝ անարդար չլինե՛ս, արգելո՛ւմ եմ: Նրա դեմքն արտահայտում էր ներքին էությունը աշխատասեր ու բազմազբաղ մի մարդու, որն ուներ քիչ, բայց հստակ գաղափարներ և գործարարի անվրեպ բնազդ:

Մայրը հեռախոսը չէր վերցնում: Գնացել է ավա՞ն: Թողեց, որ զանգը երկար գնա՝ տասնչորս, տասնհինգ զանգ: Եթե պետք լինի, ամբողջ օրը կզանգի: Մինչև մայրը հասկանա, որ ո՛չ սխալվել են, ո՛չ հեռախոսային ընկերությունն է հաճախորդների հարցում անում, ո՛չ հերթական ճարպիկ գործակալն է զանգում՝ համաձայնագրի տեսքով դրախտ վաճառելու նպատակով (ո՞ւմ համար), այլ իր զավակն է: Դե՛, հերի՛ք է, վերցրո՛ւ, գիտեմ, որ տանն ես: Տասնվեց զանգ: Հաշվում էր դրանք՝ միաժամանակ գրչի ծայրով կետիկներ դնելով գրառումների թղթի տրցակին… վերջապես մայրը վերցրեց լսափողը:

Շշնջացող, կասկածող ձայնով.

— Այո՞:

— Ես եմ:

— Ի՞նչ կա:

— Ռամոնին հիշո՞ւմ ես:

— Ո՞ր Ռամոնին:

— Ռամոն Լասային:

— Շտապօգնության մեքենա էր քշո՞ւմ:

— Մինչև հիմա էլ քշում է:

Ուրեմն այդ Ռամոն Լասան, որը հավասարակշռված, մի քիչ ազգայնական, բայց ոչ արկածախնդիր մարդ է, ավանում վաղուց չի ապրում,

բայց հաճախ է այնտեղ լինում՝ ազգականներին այցելելու նպատակով: Բացի այդ՝ այնտեղի Խորտկասերների ընկերակցության անդամ է: Շավիերը նրան հանդիպել էր հիվանդանոցի սրճարանում: Մտածել էր, որ հաստատ մի բան կիմանա: Իսկ եթե բան էլ չիմանա, ոչինչ: Արժեր փորձել: Կանգնակի մոտ սուրճը գդալիկով խառնելիս իբր պատահաբար նրան տեսնելով՝ մոտեցել էր՝ հարցուփորձ անելու, ասես անսպասելի հետաքրքրության բռնկում էր ունեցել:

— Արանչային հիշո՞ւմ ես:

— Իհարկե, խեղճը: Հետմիջօրեից հետո ֆիզիոյի է գալիս: Մի երկու անգամ ես եմ նրան բերել:

Շավիերը շարունակեց.

— Որպեսզի հարցուփորձս նրան չզարմացնի, ասացի՝ իբր քիչ առաջ եմ իմացել, որ Արանչան կաթված է ստացել, ու մի երկու մանրուք ավելացրի՝ այո՛, Մալյորկայում էր, այո՛, 2009-ին: Դե՛, հասկանում ես, Ռամոնի գիտեցած բաները: Նա էլ, թե ի՞նչ ափսոս է, չէ՞: Ինչը, որ իրականություն է. իրոք, անկեղծ ցավում եմ, Արանչան նրանց մեջ լավագույնն էր:

— Լավագո՞ւյնը: Միա՛կ լավ մարդը:

Ես ուզում էի տեղեկությունները իբր հարևանցի ստանալ Ռամոնից:

— Լա՛վ, կարճ պատմի՛ր: Ի՞նչ ես իմացել:

Մի երկու բան էր իմացել, որն ավանում ոչ մեկի համար գաղտնիք չէր: Նախ և առաջ՝ Արանչայի հետ պատահածից հետո ամուսինը ծլկել էր: Հասարակության կարծիքով՝ յուրահատուկ անամոթի մեկն է:

— Յուրահատուկ բառը չասաց, բայց այն զգացվեց, երբ ծանրակշիռ կերպով արտաբերեց անամոթ բառը: Ինձ պատմեց, որ ի լրումն ամենի՝ նա է զավակների խնամակալը: Ավելի ճիշտ՝ աղջկա խնամակալն է, քանի որ տղան արդեն քսանն անց է:

— Հոր հետ է ապրո՞ւմ:

— Չհարցրի:

— Ափսո՛ս:

Ալբերտոն (իրականում Գիլյերմոյի մասին էր խոսքը, բայց բան չասացի, որ դերիցս դուրս չգամ) ուրիշի հետ է ապրում: Ռամոնը չգիտեր՝ ամուսնացա՞ծ են, թե՞ ոչ, բայց Արանչայի ամուսնալուծման մասին էլ բան չէր լսել: Ամեն դեպքում, ավանում երբեք չի երևում: Երեխաները, այո՛, գալիս են՝ մորը տեսնելու:

Ռամոնն ավելացրեց.

— Շա՞տ ես ուզում իմանալ՝ բաժանված է, թե ոչ: Մայրս հաստատ կիմանա: Եթե կուզես, զանգեմ, հարցնեմ: Այս ժամին արդեն ոտքի կլինի:

— Չէ՛, չարժի, պետք չէ: Պարզապես քիչ առաջ եմ իմացել խեղճ Արանչայի պատմությունը: Պարզապես քարացել էի:

Մի քանի բան էլ: Էդ Ալբերտո կոչեցյալը (դե՛, լա՛վ, դու էլ. ասա՛ Գիլյերմոն) վաճառել է Ռենտերիայի բնակարանն ու Արանչային հասանելիք մասը նրան է տվել: Բացի այդ՝ ավանում գումար են հավաքել՝ հանգանակության տուփեր դնելով բարերում ու խանութներում, բարեգործական վիճակախաղ ու ֆուտբոլի խաղ կազմակերպելով: Հետո էլի բարեգործական միջոցառումներ են եղել, որոնց մանրամասները Ռամոնը չգիտեր, մի խոսքով, իրոք, շատ մարդիկ էին օգնել, որ Արանչային Մալյորկայի հիվանդանոցից տեղափոխեն Կատալունիայի մասնագիտացված կենտրոն:

Շավիերը ուղիղ հոր աչքերին նայեց: Եղի՛ր արդար, պատվախնդիր ու անբիծ՝ ինչ էլ լինի, ինչ էլ ասեն: Մայրը լուռ էր:

— Լսո՞ւմ ես:

— Շարունակի՛ր:

— Ռամոնը կենտրոնի անունը չասաց, ես էլ բան չհարցրի՝ ինձ չմատնելու համար: Բայց պետք էլ չէր: Դժվար չէր իմանալ, որ Արանչան ութ ամիս Գուտտմանի կլինիկայում է բուժվել: Հիմա կարծ բացատրեմ: Բադալոնայում գտնվող մի կենտրոն է, որտեղ բուժում են ողնուղեղային և գլխուղեղային վնասվածքով հիվանդներին: Լավագույն կենտրոններից մեկն է: Բայց, իհարկե, այդպիսի ծախսերն այդ ընտանիքի ֆինանսական հնարավորություններից վեր էին:

— Որքան ճանաչում եմ նրանց՝ փող չունեն: Ու հայրդ էլ նրանց քանի անգամ թաքուն օգնել է՝ հատուցում չակնկալելով: Ու տեսար՝ ինչպես հատուցեցին:

— Արանչան Գուտտմանում է բուժվել, մինչև վերջապես կարողացել է վերադառնալ ավան ու հիմա նեյրովերականգնումը մեզ մոտ է անցնում:

— Ուրի՞շ:

— Այդքանը: Երեկ մտա՞ր Առուաբառենայի մոտ:

— Վա՛յ, մոռացել էի: Չգիտեմ՝ խելքս ուր է:

— Կարևոր է, որ նա ստուգի քեզ:

— Կարևո՞ր է, թե՞ շտապ է:

— Կարևոր է:

Երկու ողբացող հոգիներ իրար հրաժեշտ տվեցին սառը քնքշանքով, սրտանց սառնությամբ: Շավիերը՝ սպիտակ խալաթով, հայացքը կենտրոնացրեց թանաքի կետիկներին, որոնք բծավորել էին գրառումների տըրցակի վերևի թուղթը: Հետո նայեց հոր աչքերին՝ անարդար չլինես, ama-ին լավ նայի՛ր իմ փոխարեն: Գրասեղանի վրայով նայեց սպիտակ դռանը, որ մի հետմիջօրե՝ տարիներ առաջ (որքա՞ն՝ տասներկո՞ւ, տասներե՞ք), հանկարծ բացվեց, ու շեմին հայտնվեց վշտացած Արանչան:

— Եկել եմ քեզ ասելու, որ մարդասպանի քույր եմ:

Ներս հրավիրեց, բայց Արանչան արդեն ներսում էր, հրավիրեց՝ նստի, բայց նա հրաժարվեց:

— Պատկերացնում եմ՝ ինչ ահավոր է ձեր վիճակը: Անկեղծ ցավակցում եմ, Շավիե՛ր: Barkatu:

Նրա վերին շուրթը դողաց, ասես լացի նախանշան լիներ: Գուցե այդ պատճառով էր այդքան արագ վրա բերում, որ հանկարծ ձայնը չկտրվի:

Արանչան ակնհայտ նյարդայնացած խոսում էր համերաշխության, ցավի ու ամոթի մասին ու այդ ընթացքում հանկարծ սեղանին կանաչ-ոսկեգույն մի բան դրեց, որը Շավիերը սկզբում չհասկացավ՝ ինչ է: Վիատված, կաշկանդված, ասես մի բան կասկածեր: Նույնիսկ մարմնով մի քիչ հետ քաշվեց՝ զգուշանալով, որ աղջկա շարժման մեջ վտանգ կար: Հասարակ թևնոց էր՝ բիժու՝ մանկական խաղալիք:

— Քո հայրն էր ինձ համար գնել, երբ փոքր էի, ավանում ինչ-որ տոնի ժամանակ: Բոլորս քայլում էինք փողոցով, դու չես հիշի, ու Չատոն սրա պես մի բան գնեց Ներեայի համար: Խանդեցի: Ես էլ էի ուզում: Մայրս ասաց՝ ո՛չ: Ու Չատոն, բան չասելով, ինձ տարավ սևամորթ մանրավաճառի մոտ ու գնեց այս թևնոցը: Եկել եմ՝ վերադարձնեմ: Թևնոցը տանը գտա ու ինձ արժանի չեմ համարում դրան: Բիչո՛րիին կտայի, բայց չեմ համարձակվում նրա աչքերի մեջ նայել:

Շավիերը՝ իրեն հեռու պահող մի մարդ, իր լրջության մեջ ընկղմված, մի տեսակ հաստատող շարժում արեց ու դրանով սահմանափակվեց: Ոչ մի բառ չասաց: Միայն այդ շարժումն էր, որով ոնց որ ասելիս լիներ՝ լա՛վ: Կամ էլ՝ հասկանում եմ, հանգի՛ստ, քո դեմ բան չունեմ:

Դրանից մի քանի օր առաջ Ազգային դատարանը Խոշե Մարիին դատապարտել էր 126 տարվա բանտարկության: Շավիերը Ներեայից

իմացավ, որը ռադիոյով էր լսել: Մտածում էին՝ արժի՞ մորն ասել, թե՞ ոչ: Շավիերի կարծիքով՝ մի քիչ անշնորհք բան կլիներ նրանից թաքցնելը, ու զանգեց մորը: Բայց Բիչո՛րին արդեն տեղյակ էր:

Անցան տարիներ: Շավիերը, իր սենյակում նստած, ալարում է հաշվել դրանք: Քիչ առաջ խոսել է մոր հետ, նայել է դեպի դուռը, բաց է արել գրասեղանի դարակը, որտեղ, հայտնի չէ ինչու, պահում է Արանչայի պլաստմասսե թևնոցը մի շիշ արդեն կիսատ կոնյակի հետ:

22

Հուշերի սարդոստայնում

Սրա մասին, բացի ինձնից, ոչ ոք չգիտի: Իսկ աղջի՞կը: Հավանաբար, եթե ուղեղի վնասվածքը նրան հիշողությունից չի զրկել, հիշում է այն համբույրը: Եթե, իհարկե, այն ժամանակ այնքան չէր համբուրվել տարբեր տղաների հետ, որ հաշիվը կորցրած լիներ կամ այդ գիշեր այնքան խմած չէր եղել, որ մոռացած լիներ՝ ում հետ ինչ է արել:

Բանն այն է, որ այդ աղջիկները՝ այսօր քառասունն անց կանայք, երբ մեկով տարվում էին, ոչ մի բանի առաջ կանգ չէին առնում: Մինչդեռ մենք՝ տղաներս, էրոտիկ հարցերում անփորձ լակոտներ էինք. ես որ՝ հաստատ: Մի բան կա, որ Արանչան հաստատ չգիտի. նա առաջին աղջիկն էր, որը համբուրեց Շավիերի շուրթերը:

Աշխատանքային օրվա ավարտին, սովորության համաձայն, փակվել էր իր գրասենյակում: Սեղանին՝ հոր լուսանկարը ու մի շիշ կոնյակ: Ու հիշողությունն արթնացնելու համար մելամաղձոտ հանգստությամբ ուսումնասիրում էր կահույքի, առաստաղի ու պատերի մանրամասները:

Կարող էր արդեն տուն գնալ, բայց տանը աշխատանքային օրով անտանելի էր: Նույնիսկ եթե բոլոր լույսերը վառում է, նրան մթության պես մի բան է հետապնդում, որը կպչուն կեղտի նման նստում է իրերի վրա ու տխուր ծանրությամբ ճնշում է նրա կոպերը: Յուրաքանչյուր թարթումը, դլա՛նգ, ղողանջ է մեռածի պատվին, մինչև քնաբերն ազդի: Հաճախ միայնության դեմ պայքարում էր՝ կեղծանուններով հայտնվելով սոցիալական ցանցերում: Սեռական բնույթի գռեհկություններ էր փոխանակում: Ո՞ւմ հետ: Գաղափար չուներ: Պաուլայի հետ, օրինակ, կամ Պալոմիտայի. կեղծանուններ, որոնց տակ կարող էր թաքնվել և՛ Սորիա Նահանգից հեշտասեր մի ծերունի, և՝ գիշերվա ուշ ժամին դեռ արթուն մադրիդցի մի աղջիկ: Մասնակցում էր առցանց ֆորումների քննարկումներին ու, դիտմամբ մեծ քանակի ուղղագրական սխալներ թույլ տալով, պաշտպանում էր քաղաքական այն դիրքորոշումները, որոնցից զզվում էր: Նաև կծու քննադատական տեքստեր էր ուղարկում՝ մեկնաբանելով այս կամ այն թերթի առցանց հոդվածները՝ զուտ վիրավորելու նպատակով, կեղծ

ինքնության ներքո երևակայելու համար՝ իբր հաղթահարում է իր անհույս ամաչկոտությունը՝ իրեն այդ մյուսից՝ քառասունութ տարեկան տղամարդուց տարբեր մեկը զգալու համար:

Այնպես որ, շատ անգամ աշխատանքից հետո Շավիերը նախընտրում էր մեկ-երկու ժամ մնալ իր գրասենյակում. գուցե բուժակը կամ գրասենյակի աշխատողը միջանցքով անցնելիս դռան շերտավարագույրից թափանցող լույս տեսներ ու մտներ՝ հետը մի քանի րոպե զրուցելու: Բացի այդ՝ նա հավատում էր, թե այստեղ՝ ներսում, իր հուշերն ավելի հաճելի էին, քան տանը: Ձեռքի հետ մասնագիտական լրագիր էր կարդում, բժշկական եզրակացություններ թերթում կամ էլ մտածում էր անցած-գնացած, առավել հաճելի շրջադարձային իրադարձությունների մասին, մինչև որ կոնյակի ազդեցության ներքո կորցնում էր մտքի թելը: Հասնելով այդ կետին, որը հարբածության հստակ նշան էր, դուրս էր գալիս հիվանդանոցից՝ մինչև հաջորդ առավոտ:

Բայց քանի դեռ այդ պահը չի եկել, խմում է դանդաղ, ըմբոշխնելով: Հանգիստ հայացքով ուսումնասիրում է պատը՝ փնտրելով իր անցյալի այս կամ այն դրվագը: Պատի ու առաստաղի անկյունում հավաքարարը չի նկատել պստլիկ մի սարդոստայն, որը նշմարելի է միայն ուշադիր նայելու դեպքում: Հազիվ երևացող գորշ մի քուլա, որի հեղինակն անտեսանելի է: Իսկ իր հիշողության մեջ խճճվել-մնացել է Արանչայի համբույրը: Քանի՞ տարեկան կլինեի: Քսան-քսանմեկ: Իսկ նա՞: Երկու տարի փոքր:

Դրանք անսպասելի տեղի ունեցող բաներ են, որ պատահում են ավանների տոնախմբությունների ժամանակ: Մարդիկ պարում են, խմում, բոլորը միմյանց գիտեն, ու եթե երիտասարդ ես, ու կիպ կողքդ մի կուրծք է հայտնվում, հպվում ես, ու եթե մի աղջկա շուրթեր շատ մոտ են լինում, համբուրում ես: Դատարկ բաներ, մոռացության մատնված մանրուքներ, որոնք Շավիերի հիշողությունը հանկարծ մեջտեղ էր բերում, երբ նայում էր սարդոստայնին:

Զինվորական ծառայությունից առաջ էր. այդ ժամանակ Պամպլոնայում բժշկականի ուսանող էր: Անհետաքրքիր, ծանրակշիռ, ինքնամփոփ, մի խոսքով՝ լուրջ, շատ լուրջ մարդու համբավ ուներ: Ընկերներ ունե՞ր: Մշտական կուռ խումբ էին, մինչև որ մեկը մյուսի հետևից ամուսնացան ու իրարից հեռացան: Ո՛չ ուտող-խմող էր, ո՛չ ծխող, ո՛չ սպորտով էր զբաղվում, ո՛չ էլ սարեր մագլցում, այդուհանդերձ նրան լավ էին վերաբերվում.

չէ՞ որ տեղական միջավայրի մաս է կազմում, բոլորի հետ դպրոց է գնացել. Շավիերն է, որը նույնքան հարազատ է ավանին, որքան քաղաքապետարանի պատշգամբը կամ հրապարակի լորենին: Կարելի էր ասել, որ փայլուն ապագա կունենա: Բարձրահասակ էր, գեղեցիկ, այնուամենայնիվ սիրո հարցում բախտը չէր բերում: Չափից ավելի խոհե՞մ էր, չափից ավելի ամաչկո՞տ: Նրա ծանոթներն ասում էին՝ նման մի բան կա, էլի:

Կոնյակի մի կում է անում՝ աչքերը չկտրելով փոքրիկ սարդոստայնից: Ինչո՞ւ է ժպտում: Հե՛չ, պարզապես հաճույքով է հիշում այն դրվագը: Հրապարակի մի ծայրում Սուրբ Խուանի* խարույկն է բոցկլտում: Փողոցները լիքն են մարդկանցով: Երեխաները վազվզում են, երջանիկ դեմքերը փայլում են, պաղպաղակ են լպստում, տեղացիները, մի վայրկյան էլ կանգ չառնելով, մի մայթից մյուսը բղավելով, իրար ինչ-որ բան են ասում: Շոգ է: Իսկ նա Պամպլոնայում չէ՞ր ապրում: Այո՛, բայց մի քանի օրով եկել էր՝ ընտանիքի հետ ժամանակ անցկացնելու (ու որ մայրը հագուստը լվանար), հաճելի մթնոլորտը վայելելու և ընկերների հետ բարից բար գնալու: Արդեն մթնում էր, երբ փողոցում նրանց միացավ Արանչան ընկերուհիների հետ: Ծիծաղ, էլի բարեր, ու աղջիկը խոսում էր հետը. ի՞նչ էր ասում: Այդ աղմուկ-աղաղակի մեջ հազիվ էր լսում նրա խոսքը: Արանչայի դեմքը շատ մոտ էր իրեն. ա՛յ, դա, իրոք, նկատում էր: Մի դեմք, որի մեջ, չնայած ներկած աչքերին ու շուրթերին, տեսնում էր զուտ իր ծնողների լավագույն ընկերների մեծ աղջկան, որին ընկալում էր համարյա որպես զարմուհու, որին անթիվ-անհամար անգամներ տեսել էր Ներեայի հետ խաղալիս:

Ու երբ փաբի կարմիր մթության մեջ աղջիկը ափն անսպասելի դրեց նրա տաբատի շղթայի վրա, Շավիերը չընկալեց այդ խաղի իմաստը: Մտածում էր՝ կատակ է, չարաճճիություն, որի պատճառը չի հասկանում: Ու ասես անուրջներում՝ նայում է սարդոստայնի պստլիկ հետքին ու տեսնում է, թե ինչպես է իրեն ուժով համբուրում մի աղջիկ, որին նա համարյա ազգական է համարում: Արանչայի անհամբեր լեզուն փնտրում է իրենը, որն անշարժ է: Հասկանալով, որ շուրթերի այդ հպումը չի վերջանում ու ոնց որ թե լուրջ է դառնում, զարմանքից, նաև սարսափից ասես պարալիզացվել էր, քանի որ փաբի խորքից որևէ ազգական, ծանոթ, հենց իր

* Սուրբ Խուանի խարույկ, նույնն է՝ Սուրբ Խուանի գիշեր, իսպանախոս աշխարհում հունիսի 24-ին նշվող մի տոն, որը նվիրված է Սուրբ Հովհաննես Մկրտչի ծննդյան օրվան:

ընկերները կամ Ներեան կարող էին շրջվել ու տեսնել իրենց: Արանչան՝ ամբողջությամբ քրտինք ու օծանելիք, մարմնով կպել էր Շավիերին: Նրա ականջին ասում է՝ լսի՛ր, ես արդեն ուզում եմ, ու հարցնում է՝ կցանկանա իր հետ մի տեղ գնալ, որտեղ ոչ ոք չի տեսնի իրենց: Դա Շավիերի՝ նույնիսկ այսօրվա կարծիքով արյունապիղծ մի առաջարկ էր:

Հիմա իր գրասենյակում նրա ծիծաղն է բռնում: Տե՛ս՝ ոնց ես փախցրել նման հնարավորությունը: Աղջիկն առաջարկել էր, աղջիկը պատրաստ էր, ցանկանում էր ու ցանկալի էր: Չէ՛, բա Պամպլոնա՞ն, բա գո՞րծը: Իրեն թույլ չէր տալիս, չէր համարձակվում, իր ուսանողական սենյակում փակված՝ հույսը դրել էր ձեռնաշարժության վրա, որը հասցնում էր սերմնաժայթքման՝ առանց զույգի բարդ հարաբերությունների: Նայում է սարդոստայնին ու ծիծաղում է: Մի մեծ կում է անում կոնյակի շշից ու ծիծաղում է: Ինքն էլ չգիտի, թե ինչու: Իրականում իրեն կեղտոտ է զգում, տխրությունից՝ ցեխոտ ու մգլած: Եղի՛ր արդար, եղի՛ր անբիծ: Այո՛, aita: Նկատում է, որ հասել է կրիտիկական կետի, որից հետո նույնիսկ մի կաթիլ ալկոհոլը նրան պարտադրելու է մեքենան թողնել կայանատեղում ու տաքսի նստել: Ուստի շիշը դարակն է դնում, տեսնում է կանաչ-ոսկեգույն թևնոցն ու ասում՝ վաղը կվերադարձնեմ նրան: Ա՛յ քաքլան, ինչո՞ւ նրան չարեցիր: Պատասխան. որովհետև տըխ-մա-րի մեկն էիր: Հայրը լուսանկարի միջից համաձայնում է, ու Շավիերն ափերից դուրս է գալիս. իսկ դու ընդհանրապես լռի՛ր: Հաստատ ավելի լավ կլինի տաքսիով գնալ:

23

Անտեսանելի մի պարան

Մտածեց՝ ընդամենը հինգ րոպե է: Կիջնեմ ու հետ կգամ: Նախապես տեղեկացել էր՝ որ ժամին է գալու: Ու երբ արդեն մտնում էր ֆիզիոթերապիայի դահլիճ տանող միջանցք, թիկունքից լսեց Իցիար Ուլասիայի ձայնը: Բժշկուհին մոտենում էր նրան թևերի այնպիսի տագնապալի շարժումով, ասես ուզում էր կանգնեցնել նրան: Իրար ճանաչում էին, իրար դու-ով էին դիմում:

— Ուզում էի զգուշացնել, որ նրան այսօր ոչ թե խնամողն է ուղեկցում, այլ մայրը: Տե՛ս՝ ինչ ես անում:

Շավիերը նրան շնորհակալություն հայտնեց ու հետ դարձավ:

Հաջորդ օրը՝ գրեթե նույն ժամին, բժշկուհի Ուլասիան նրա բջջայինին զանգեց. եթե ուզում է Արանչային տեսնել, հանգիստ կարող է իջնել, քանի որ այս անգամ Սելեստեի հետ է եկել:

— Ո՞ւմ հետ:

— Այն էկվադորցի կնոջ հետ, որը նրան խնամում է:

Այս անգամ Շավիերը նույնքան վճռական չէր, որքան նախորդ օրը: Գնա՞մ, չգնա՞մ: Մի կողմից՝ իր մայրն ամեն օր ավան էր գնում, ավտոբուսից իջնում էր կենտրոնական փողոցում, խանութներ էր մտնում, մի խոսքով՝ չէր թաքնվում: Ու հիմա էլ ես աղջկան մոտենալու համար օգտվեմ ֆիզիոթերապիայի ժամերից: Հետո Արանչան տանը կպատմի այդ մասին: iPad-ի միջոցով հանգիստ հաղորդակցվում է: Ի՞նչ կմտածեն նրա ծնողները: Հաստատ կասկածելու են, որ մենք մի բան մտածել ենք՝ նրանց մեղադրելու ու վրեժ լուծելու համար:

Կարեկցանքը պարանոցին փաթաթված անտեսանելի մի պարանի նման ուժով քաշում էր Շավիերին: Մի՛ ժխտիր: Խղճում ես, որովհետև անցյալիդ մտերմիկ մի մասն է: Չլինի՞ անուղղակի ձևով ինքդ քեզ ես խղճում, հը՞: Չնկատելով, որ ուշադրություն է գրավում, խոսում էր ինքն իր հետ: Երկու սպիտակ խալաթով մարդ, որ ընդառաջ էին գալիս, նրան ընդհատեցին: Հարցրին՝ բան չի՞ պատահել: Ո՛չ, բան չկա: Ու չնայած գործ ուներ անելու, որոշեց մի պահ փակվել իր գրասենյակում:

Շոգ է: Վերնաշապիկի վերին կոճակներն արձակեց, փորձեց մի փոքր թուլացնել ավելի ու ավելի սեղմող պարանը, բայց ապարդյուն: Պարանն անդադար քաշում էր պարանոցից՝ մեկ ուժեղ, մեկ թույլ. վերջիվերջո ուրիշ ելք չմնաց. ենթարկվեց:

Անհավանական մի բան էր իր հետ կատարվում: Ամբողջ օրը գործ ունի տառապող, հաճախ հոգեվարքի մեջ գտնվող մարմինների հետ, անհույս վիճակում, հաշված ժամերի կյանք ունեցող մարմինների, երկու, երեք երեխաների տեր մայրերի, որոնք մինչև Նոր տարի չեն ապրելու, տղաների (մեծ մասամբ՝ բայքերների), որոնք կյանքի ամենաճաղկուն շրջանում իրենց մահկանացուն են կնքել: Բոլոր այդ մարմինները՝ իրենց անուն-ազգանուններով, շուտով կհայտնվեն թերթի մահազդի բաժնում, ու նա՝ Շավիերը, նրանց մեջ, կարեկցանք չարտահայտելով, իրեն տիրապետելով, խիստ ու պրոֆեսիոնալ կերպով հանգստացնելով վշտահար ազգականներին, ջանադրաբար (եղի՛ր արդար, պատվախնդիր, անբիծ) անում էր իր գործը: Այդուհանդերձ, հիմա լրիվ ուրիշ զգացողություն ուներ, նույնիսկ այն պարագայում, որ Արանչայի հանդեպ ոչ մի բժշկական պարտավորություն չուներ: Գուցե այդքան ազդվել էր հենց այն պատճառով, որ աղջկա հետ սովորական հիվանդի նման վերաբերվելու հնարավորություն չէ՞ր ունեցել: Հարցն օդում կախված մնաց՝ ցերեկային լամպերի թույլ լույսի ներքո: Պատասխանի համար էլ ժամանակ չկար, քանի որ արդեն դուրս էր եկել վերելակից ու միջանցքով առույգ քայլերով գնում էր, ասես մեկն իր վզի պարանն անդադրում քաշեր դեպի վերականգնողական բաժանմունք:

Միջանցքի վերջում՝ պատին հենած նստարանին, նշմարեց էկվադորցուն: Ցածրահասակ կինը՝ անդյան դիմագծերով, անվասայլակն էր հրսկում: Երբ տեսավ բժշկին, արագ ոտքի կանգնեց ու բարևեց՝ թեթևակի խոնարհվելով: Շավիերը պատասխանեց սառն ու հանդիսավոր՝ դեմքին չնայելով:

Ներս մտավ: Երկու երիտասարդ ֆիզիոթերապևտ կատակում էին տասը-տասներկու տարեկան երեխայի հետ: Պատգարակին հատուկ կապիչներով կապած երեխային ուղղահայած դիրքով էին կանգնեցրել: Վարժ մասնագիտական հայացքով Շավիերը եզրակացրեց՝ ցիտոմեգալովիրուս է: Բարևեց, ի պատասխան բարևեցին, երեխան նայեց նրան իր՝ ակնոցի պատճառով խոշորացած աչքերով, ու մի քիչ այն կողմ Շավիերը տե-

սավ մերսման սեղանին պառկած Արանչային, մի փոքր ավելի շուտ, քան աղջիկը՝ նրան: Արանչայով զբաղվող կինը ձեռքի շարժումով հասկացրեց Շավիերին, որ տեսել է նրան: Հիվանդի հետ ծնկի ձգման ու թուլացման մեղմ վարժություն էր անում: Ու Շավիերը, մինչ մոտենում էր, եզրակացրեց՝ հիպերտոնիա, գիրություն: Կողքից նայելով կարճ մազերով աղջկան՝ սկզբում նրան չճանաչեց: Հետո, մոտենալով սեղանին ու տեսնելով նրա դիմագծերը, հասկացավ, որ Արանչան է: Գուցե աղջկան անակնկալի չբերելու համար ֆիզիոթերապևտը որոշեց զգուշացնել Արանչային ու անմիջական տոնով ասաց.

— Բարձրաստիճան այցելու ունես:

Նախքան ձեռքը մեկնելը՝ Շավիերը սպասեց Արանչայի ռեակցիային: Մի պահ զարմանքի, գուցե վախի արտահայտություն տեսավ: Հետո աղջիկը դեմքի անսպասելի ծամածռությամբ նրան ժպիտ պարգևեց: Մարմնի աջ կողմը բավականաչափ շարժուն էր: Աջ ձեռքով սեղմեց Շավիերի ձեռքը: Հետո դեմքը ծռեց մի շարժումով, որը Շավիերը չհասկացավ:

— Ինչպե՞ս ես:

Արանչան պառկած գլուխը շարժեց՝ միևնույն ժամանակ շուրթերով ինչ-որ բառ արտաբերելով, որը հնչեցրեց ֆիզիոթերապևտը.

— Քաքմեջ եղած:

Նա էլ՝ ամաչկոտ, պրկված, կարծրատիպային բառերով, թե շատ է ցավում պատահարի համար. բժշկուհի Ուլասիան պատմել է կաթվածի մասին: Արանչան նրան ուրախությամբ էր լսում, հիացմունքի անթաքույց մի ժեստով, ասես չհավատար, որ իր առջև կանգնած սպիտակ խալաթով այդ կիրթ մարդը իսկապես Շավիերն է:

— Քեզ այստեղ լա՞վ են նայում:

Գլխով արեց:

Շավիերը ֆիզիոթերապևտին մի պատեհ հարց տվեց, որ վերաբերում էր աղջկա հետ կատարվող վարժությանը, ու մինչ մասնագետը նրան բացատրություններ էր տալիս, Արանչան, ձեռքը թափահարելով, փորձում էր մի բան ասել: Սկզբում նրան չէին հասկանում, բայց այն ֆիզիոթերապևտը, որը մի քանի մետր այն կողմ երեխայի հետ էր զբաղված, հասկացավ, որ Արանչան իր iPad-ն է խնդրում, ու դուրս գալով միջանցք՝ ասաց էկվադորցի կնոջը, որ սարքը բերի: Արանչան կիսանստած հանեց պատյանն ու առավել ճկուն մատով գրեց. «Միշտ քեզ հավանել եմ, սրիկա՛»:

Ու ժպտում էր իր դեմքի մկանների ամբողջ ուժով: Բերանի անկյունում մի փոքր թուք էր հավաքվել: Ժպիտը դեմքին շատ երջանիկ տեսք էր տալիս: Այնպես որ, հիմա կամ երբեք. Շավիերը խալաթի գրպանից հանեց մանկական այդ թևնոցը, բռնեց Արանչայի աջ ձեռքը, ասես զարկերակը ստուգելու լիներ ու վրան անցկացրեց բիժուտերիան:

— Այսքան տարի պահում էի քեզ համար: Խնդրում եմ՝ այլևս երբեք ինձ չվերադարձնես:

Աղջիկը որոշ ժամանակ նրան էր նայում, հետո գրեց. «Ինչի՞ն ես սպասում, դե՛, համբուրի՛ր ինձ»: Համբուրեց Արանչայի այտը: Հետո նրան ասաց, որ պետք է գնա, որ նրան առողջություն է մաղթում ու նման քաղաքավարի բաներ: Արանչան ժեստերով խնդրեց, որ մի վայրկյան սպասի: Ստեղնաշարին մատով կտկտացնելով՝ գրեց ու շրջեց էկրանը. «Եթե դու էլ կաթված ստանաս, կամուսնանանք»:

24

Խաղալիք թևնոցը

Սովորական մի խորդենի արդեն իսկ փչացրել էր տրամադրությունը, ու հիմա էլ՝ սա: Սա խորդենուց էլ վատ է, բայց իրականում (կարծում եք՝ հանձնվելո՞ւ եմ) նույն խորամանկ ծրագրի մասն է: Եթե այդ թաղարն ինքը հայտնաբերած լիներ, հիմա ավելի լավ կզգար: Ասենք, թաղար է, էլի՛, Աստված հետը: Բայց ոչ, պետք է մեկը մյուսի հետևից գային բամբասանքով:

Սկզբում Խուա՛նին եկավ.

— Տեսե՞լ ես: Խորդենի է դրել պատշգամբում:

Միրենը լռեց ու ոչ էլ գնաց՝ նայելու: Քիչ անց փողոցի մեջտեղում՝ մեկ ուրիշը.

— Լսի՛ր, տեսե՞լ ես:

Այդ ժամանակ էլ տեսնելու ցանկություն չունեցավ, չնայած իր տնից մինչև դրանց տուն երկու քայլ է:

Տեղի տվեց երեկոյան, երբ Խոշիանը «Պագոետա» բարից եկավ՝ նույնը պատմելով: Ինչ-որ մեկն ասել էր, թե ի՞նչ կմտածի Միրենը, երբ տեսնի խորդենին: Հաջորդ օրը Միրենը գնաց տեսնելու այդ հանրահայտ թաղարը: Անշուք մի խորդենի, վրան՝ երկու կարմիր ծաղիկ, ոնց որ ասելիս լիներ՝ վերադարձել եմ, սա էլ՝ իմ դրոշը, այնպես որ համակերպվե՛ք:

Խոշիանին ասաց.

— Դժգույն խորդենի է: Եթե ցրտերին ներս չտանի, վերջը կգա:

— Իր տունն է: Ինչ ուզում է՝ թող դնի:

Ու երբ արդեն ինքն իրեն համոզել էր, որ ավելի լավ է մոռանալ դրա մասին ու շարունակել ապրել սեփական կյանքով, որն արդեն իսկ մեծ գլխացավանք էր (մեկ է, նա ի՞նչ կարող է ինձ անել, ամբողջ ավանն իմ կողմից է), դռան զանգը տվեցին: Դուռը բաց արեց, ու, Սելեստեն անվասայլակը շեմից ներս չմտցրած, տեսավ թևնոցը: Միայն սա էր մնացել պակաս: Սկզբում՝ խորդենին, հիմա էլ՝ սա: Օգտվելով ողջույնի համբույրից՝ մոտիկից ուսումնասիրեց զարդ-խաղալիքը: Կասկած չկար: Մտքին հեռավոր ամառը եկավ, տոնախմբության այն շոգ հետմիջօրեն: Ֆրանկոն նախորդ տարի էր մահացել. դա էլ հիշեց: Երկու ընտանիքով իրենց երեխաների

հետ դուրս էին եկել զբոսնելու: Ծիծաղում էին bertsolari*-ների կատակների վրա: Միրենը՝ ավելի քիչ, քան մնացածը, քանի որ Խոշե Մարին իր կյանքն ուտում էր: Անհանգիստ երեխա, դժվար երեխա՝ մի փոքր լկտի: Անդադար կախվում էր բեմի տախտակներից, ու bertsolari-ն նրան սաստեց: Փորձեց պտտվող կարուսելից ցատկել, ինչ-որ մի տեղ շապիկի վրա յուղ կաթեցրեց, ու զգացվում էր՝ Խոշիանն էլ ոնց որ հպարտ լիներ, որ զավակն իրեն այծի պես է պահում:

— Ա՛յ կնիկ, նա այծ չէ: Առողջ երեխա է:

Հետո Խոշե Մարիի տաբատի կողակարը քանդվեց, ու ցանկություն ունեի հենց փողոցի մեջտեղը մի լավ ապտակ տալ դրան: Որքան լվանալու ու կարելու գործ կա՝ ինձ է բաժին հասնում: Ատամները սեղմած՝ ասաց.

— Տանը հալդ կտեսնես:

Խոշիանը երեխաների համար կրեմով էկլեր գնեց: Ու անկուշտ Խոշե Մարին վայրկենապես իր էկլերի վերջը տվեց: Հետո Ներեայի էկլերը կծեց, ու, բնական է, աղջիկն էլ չկերավ: Խոշիանն էլ մեկ ուրիշը գնեց նրա համար, թեև հարուստ չէինք: Հետո Խոշե Մարին փորձեց Գորկայի (որ այն ժամանակ հազիվ մի հինգ տարեկան էր) ձեռքից էկլերը խլել: Խեղճը փորձեց պաշտպանվել, ու չգիտես՝ ինչ արեց, բայց զայրացած եղբայրը էկլերը երեխայի դեմքին քսեց, ու ստիպված էինք բարում եղած անձեռոցիկներով մաքրել: Երեխայի վերնաշապիկն էլ կեղտոտեց: Գործս քիչ էր, ավելացավ:

Չատոն և Բիչո՛րին երեխաների հետ շուտով գնալու էին Լանսարոտե՝ հանգստանալու: Հետո, երբ վերադարձան, մեզ մի խաղալիք բերեցին՝ որպես հիշատակ: Միասապատ ուղտ էր: Այլանդակություն, բայց դե՛, դրեցին հեռուստացույցի վրա. չլինի թե մի օր գան մեր տուն ու հարցնեն՝ ուր է: Բիչո՛րին էլ, թե դե՛, Լանսարոտեն, դե՛, հյուրանոցը, երևակայի՛ր, ծիծաղելով, որովհետև ո՛չ Միրենը, ո՛չ Խոշիանը չգիտեին՝ որտեղ է գտնվում Լանսարոտեն: Ամեն դեպքում, արդեն ուշ էր, ու երկու ընտանիքներն էլ որոշեցին գնալ տուն, երեխաներին կերակրել ու պառկեցնել: Հետո կկարողանային դուրս գալ ու երեկոն վայելել, բայց իրականում Միրենի միակ ցանկությունն անկողին մտնելն էր ու հանգստանալը:

* Bertsolari (բասկ.), հանպատրաստից ոտանավորներ հորինող, ժողովրդականություն վայելող դերասան:

Տան ճանապարհին անցնում էին փողոցում մանր-մունր բաներ վաճառողների շարքերով: Ինչ ասես վաճառում էին՝ կավե իրեր, մույկեր, պայուսակներ, մի խոսքով՝ ամեն ինչ: Չատոն դրամապանակը գրպանից հանում էր այնպես, ինչպես կովբոյը՝ իր ատրճանակը: Կանգ առնելով բիժու վաճառող սևամորթի մոտ՝ Ներեայի համար մի թևնոց գնեց, որով մեր կյանքը բարդացրեց, քանի որ, պարզ է, Արանչան էլ ուզեց: Մենք, ի տարբերություն նրանց, որ երկուսը ունեն, երեք երեխայի տեր ենք: Չուլաբանում Խոշիանը գրոշներ է ստանում, իսկ նրանք բավականաչափ փող ունեին՝ Լանսարոտե գնալու ու այլևայլ շքեղությունների համար: Այնպես որ, ասացինք՝ չենք առնելու, ու վերջ: Արանչան էլ, արցունքն աչքերին, շարունակում էր պնդել: Ու այնքան նվվաց, որ Չատոն ձեռքը բռնեց ու ո՛չ ինձ հարցնելով, ո՛չ Խոշիանին՝ նրա հետ գնաց սևամորթի մոտ: Ու հիմա՝ ավելի քան երեսուն տարի անց, սա հայտնվում է հանրահայտ թևնոցով: Կասկած չկա. կանաչ ու ոսկեգույն ուլունքներով է, նույնն է: Չատոյի վրա որքա՞ն նստեց: Հինգ դուրո՞: Միրենը կուլ տվեց դժգոհությունը, բայց զայրացել էր, որ իրեն ու Խոշիանին դաս են տալիս, թե ինչպես է պետք երջանկացնել երեխային:

Թե՞ սխալվում եմ: Միրենն աչքը չէր կտրում թևնոցից: Արանչան հեռուստացույց էր նայում: Սելեստեն հրաժեշտ տվեց մի մեղմ ու սիրալիր ոճով, որ թեև այստեղ ընդունված չէ, բայց, իրոք, հաճելի է: Արանչան նրան պատասխանեց իրեն հատուկ խնդուն դեմքով՝ առողջ ձեռքով ցտեսություն ասելով, Միրենն էլ իր մի քիչ չոր ոճով արձագանքեց՝ նրան ուղեկցելով դեպի դուռը: Բայց դուռը փակելու փոխարեն՝ Սելեստեի հետ դուրս եկավ աստիճանավանդակ.

— Լսի՛ր, չգիտե՞ս՝ այդ թևնոցը որտեղից է հայտնվել աղջկաս մոտ:

— Այսօր բժիշկը նվիրեց նրան: Գեղեցիկ է, չէ՞:

— Այո՛, շատ գեղեցիկ է: Ուզում ես ասել, որ բուժա՞կ է տվել:

— Ո՛չ, ո՛չ: Մի բժիշկ եկավ, անունը չգիտեմ: Առաջին անգամ էի նրան տեսնում: Ու մտածեցի, որ գուցե այդ բժիշկը ձեր ծանոթներից էր, որովհետև եկավ զուտ Արանչային տեսնելու: Ու քիչ անց ջերմորեն համբուրեց նրա այտը: Արանչան այդ ընթացքում շատ գոհ ու երջանիկ տեսք ուներ: Իրենք խոսեցին, այսինքն՝ բժիշկը խոսում էր, իսկ Արանչան iPad-ով էր պատասխանում: Վերջում բժիշկը նրան այդ խաղալիք թևնոցը նվիրեց:

— Կարո՞ղ է պատահաբար հիշես բժշկի անունը:

— Վա՜յ, դժբախտաբար ո՛չ, տիկի՛ն Միրեն: Ֆիզիոթերապևտները նրան մի քանի անգամ «բժիշկ»-ով դիմեցին: Բայց եթե ցանկանում եք, հենց վաղն էլ կարող եմ իմանալ: Բարձրահասակ էր, ակնոցով, քունքերը՝ ճերմակ: Առաջին անգամ էի նրան տեսնում: Վատ բա՞ն է եղել:

— Ո՛չ: Պարզապես ուզում էի իմանալ:

Խոշիանը տուն վերադարձավ իր սովորական ժամին գինովցածի աչքերի սովորական փայլով՝ սովորականի պես քորելով կոնքը՝ լարդի շըրջանում: Տապակի վրա կայծկլտում էին պաքսիմատով անչոուսները, պատուհանը՝ կրնկի վրա բաց, որ ծուխը գնա: Արանչան, ասես հիպնոսացված, նայում էր իր ապուրից ելնող գոլորշուն: Խոշիանը համբուրեց դստեր ճակատը: Հետո, սեղանի մոտ նստելով, հոգոց հանեց:

— Սոված չեմ:

Միրենը՝ խիստ.

— Ձեռքերդ էլ չես լվալո՞ւ:

Այնպես տրորեց ձեռքերը, ասես ջրի շթի տակ լվանար:

— Ձեռքերս մաքուր են:

— Հո խոզ չես...

Խոշիանը մռթմռթալով, բայց հնազանդ գնաց լոգասենյակ՝ ձեռքերը լվանալու: Երբ վերադարձավ, Միրենը Արանչայի մեջքի հետևից նրան աշխույժ նշաններ էր անում, որոնք նա չէր հասկանում:

— Ի՞նչ կա:

Կինը, շուրթերը սեղմելով, զայրացած հայացք նետեց վրան, որ ձայնը կտրի: Ու գլուխը տարուբերում էր, ոնց որ ասելիս լիներ՝ Աստվա՛ծ իմ, որքան համբերատար է պետք լինել այս մարդու հետ:

Խոշիանը վերջապես նկատեց թևնոցը: Ամենևին ձևացնել չգիտի: Քիչ էր մնում՝ Միրենը տապակը նրա գլխին տար:

— Ի՞նչ գեղեցիկ է:

Աղջկան էլ, թե.

— Գնե՞լ ես:

Արանչան կատաղությամբ հերքեց և ցուցամատի ծայրով մի քանի անգամ կրծքին հարվածելով՝ շուրթերով երկու բառ ուրվագծեց. սա իմն է: Խոշիանը փորձեց կնոջ մռայլ հայացքից մի բան հասկանալ: Զուր էր: Դրանից հետո՝ մինչև ընթրիքի ավարտը, լռեց՝ պրոբլեմներից խուսափելու համար:

Ուշ ժամի՝ արդեն անկողնում, զույգը քրթմնջում էր:

— Դե՛, լա՛վ էլի… անհնա՛ր է:

— Մեռնեմ, թե սուտ է: Այդ թևնոցը Չատոն էր նրա համար գնել տոնին՝ տարիներ առաջ, երբ երեխաները փոքր էին, ու ընկերություն էինք անում:

— Լա՛վ, ի՞նչ տարբերություն: Արանչան երևի դարակում գտել, թևին է դրել:

— Բայց ի՛նչ բութ ես: Ոչ մի բան էլ չի գտել: Բժիշկ է նվիրել:

— Դու ինձ կխենթացնես: Չատոն նրա համար գնել էր…

— Սը՛սս, ցածր խոսի՛ր:

Շշնջալով շարունակեցին.

— Չատոն նվիրել էր Արանչային երեխա ժամանակ: Լա՛վ, այսքանը հասկացա: Հետո՞: Տարիներ անց մի բժիշկ մեր աղջկա թևնոցը մեր աղջկա՞ն է նվիրում: Վիզս կտրեմ, թե հասկանում եմ:

— Մի բան հաստատ է՝ միայն մի բժիշկ կա, որ Արանչային համբուրելուց բացի, կարող էր նման բան անել:

— Այսինքն՝ ո՞վ:

— Ավագ զավակը, որ ինչ-որ պատճառով մոտն է պահել թևնոցը:

— Չափից շատ ես սերիալներ նայում:

— Մի բան կա մտքներին: Չե՞ս հասկանում: Մեր կյանքին են խառնվում, արդեն մեր տանն են, նույնիսկ այստեղ՝ անկողնում: Հաջողեցրել են այնպես անել, որ անընդհատ իրենց մասին ենք խոսում: Քո կարծիքով՝ ինչո՞ւ է վերադարձել, չի թաքնվում, խորդենի է դրել պատշգամբում ու խանութներն է մտնում: Մեր հետևից են ընկել: Խոշիա՛ն, մի բան պետք է անել:

— Այո՛, քնել:

— Ես լուրջ եմ ասում:

— Ես էլ:

Քիչ անց սկսեց խռռացնել: Միրենի առջև, որ կողքին արթուն պառկած էր, մթությունը լցվեց դեմքերով, լույսերով ու ձայներով: Մեկ խորդենին էր աչքին գալիս, մեկ՝ թևնոցը: Տասնմեկ տարեկան Արանչան, որ պոկ չէր գալիս, որովհետև Ներեայի թևնոցից էր ուզում: Տեսնում էր Գորկայի դեմքին էկլեր լղոզող Խոշե Մարիին: Ու Չատոյին, որն այնպես էր դրամապանակը գրպանից հանում, ասես կինոյի կովբոյ լիներ ատրճանակը պատյանից հանելիս: Ու դրան՝ այդ կնոջն էր տեսնում, որի անունը չի տալիս, որովհետև լեզուն չի պտտվում: Այդ կինը չար մտքով է վերադարձել, բայց եթե կարծում է, որ ինձ կխեղճացնի, սխալվում է: Չէր կարողանում քնել:

Եվս մի անքուն գիշեր: Գլուխը՝ մտքերով լի, մթությունը՝ տեսիլքներով: Տասներկուսն անց էր՝ գնաց խոհանոց ու մի կտոր թղթի վրա գրեց Alde hemendik*: Երկտողը դրա դռան տակ կմտցնեմ ու կտեսնենք՝ ով ում կվախեցնի: Պատրաստվում էր դուրս գալ, բայց մտածեց՝ իսկ եթե ձեռագիրը ճանաչի՞: Նորից գրեց՝ մեծատառերով, ձեռագիրը փոխելով: Դուրս եկավ աստիճանավանդակ՝ կոշիկները ձեռքը պահած, որ քնածները նրան չլսեն, կովրոլինով իջավ շքամուտք ու դուռը բաց արեց: Դուրս եկա՞վ: Ընդամենը մեկ քայլ արեց: Ինչո՞ւ: Որովհետև անձրևում էր: Քամոտ, կատաղի անձրև էր: Կաթիլները շեղակի էին: Այս ի՜նչ զզվելի գիշեր է: Ինքն իրեն ասաց.

— Պա՜հ:

Հետո թուղթը պատռեց, կտորտանքը գրպանը դրեց ու վերադարձավ, մտավ անկողին:

* Alde hemendik (բասկ.), Կորի՛ր այստեղից:

25

Մի՛ արի

Դռան զանգը տվեցին: Կտրուկ զանգը հանկարծակիի բերեց Բիչո՛րիին, որը, հյուրասենյակի բազկաթոռին նստած, աչքի էր անցկացնում վինիլային ձայնապնակների իր հին հավաքածուն: Այն պահից, ինչ որոշել էր վերադառնալ ավանի իր տուն, առաջին անգամ էր լսում զանգի՝ այդ կըտրուկ, ժամանակին այդքան հարազատ ձայնը:

Վեր չթռավ: Մարդո՞ւ էր սպասում: Ե՛վ այո, և՛ ոչ, քանի որ ենթադրում էր, որ վաղ թե ուշ մեկը, ավելի շուտ՝ մի կին, գալու էր՝ հետաքրքրվելու, հարցեր տալու, նպատակը պարզելու:

Զուր չէր, որ մի քանի օր առաջ փողոցում մի ծանոթ կնոջ հանդիպեց, և այդ «անսպասելի» հանդիպումն այնքան վատ էր բեմադրված, որ կասկածի տեղ նույնիսկ չէր թողնում, որ պատահական չէր:

— Աստվա՛ծ իմ, Բիչո՛րի, քանի՛ տարի չենք հանդիպել: Շա՛տ ուրախ եմ: Շատ գեղեցիկ ես, ինչպես միշտ:

Բիչո՛րին մի քանի կծու խոսք էր ուզում ասել. այո՛, դե՛, գիտես, շատ է օգնում, երբ ամուսնուդ սպանում են, ու դառնում ես միայնակ այրի: Բայց իրեն զսպեց: Նրան հեռվից էր նկատել՝ անկյունում կանգնած: Ոմանց խնդրանքով ինձ հարցուփորձ է անելու: Ծանոթը հարցեր էր տալիս՝ ձևացնելով, թե մտքին եկածն է ասում: Հոգեհանգստին չեկածներից մեկն էր, նրանցից, որ ցավակցություն չէր հայտնել, որ սպառնագրերի հայտնվելուց ի վեր նույնիսկ բարև չէր տալիս: Մի՛ ատիր, Բիչո՛րի, մի՛ ատիր: Պատասխանեց անորոշ ու ընդհանուր բառերով, շինծու ժպիտով, որ նրա բերանում ժելատինի՝ սառը, սատկած ծովամայրի համ թողեց:

Դուռը բացեց: Դոն Սերապիոն էր: Ինչպիսի՜ մեղրածոր հայացք, բարություն ճառագող ունքեր: Ու այդ գունատ, մեկ իրարից հեռացող, մեկ միացող նուրբ ձեռքերը, հոգևորականի օձիքը, սափրվելուց հետո ցանած լոսյոնը: Բիչո՛րիի դեմքը ոչինչ չէր արտահայտում, ոչ մի մկանը չէր շարժվում: Զարմացա՞ծ էր: Ոչ մի գրամ: Եթե դուռը բացեր, ու աստիճանահարթակին ոչ ոք չլիներ, դեմքին նույն արտահայտությունը կլիներ:

Քահանան, ցանկանալով իր այտը Բիչո՛րիի այտին հպել, գրկախառնը-

վելու փորձ արեց: Այս մարդը միշտ մաշկային քնքշանքի ջատագով է եղել: Բիչո՛րին, դեմքը լարված, կտրուկ հետ քաշվեց՝ պահպանելով հեռավորությունը: Քահանան բասկերեն ասաց, որ այցելության է եկել: Կինը նրան ուսումնասիրում էր ակնհայտ նախապաշարումով՝ մի ձեռքը դռան շրջանակին, որ եթե պետք լիներ, դուռը նրա երեսին փակեր: «Դու»-ով դիմելով՝ իսպաներեն ասաց-հրամայեց նրան, որ ներս մտնի:

Աստծո տանը նա է տերը, իսկ իմ տանը՝ ես: Դոն Սերապիոն՝ արդեն յոթանասունն անց, մտավ բնակարան՝ պրպտուն հայացքով ուսումնասիրելով հատակն ու պատերը, կահույքն ու ներսի հարդարանքը, և բառի բուն իմաստով աչքերը լուսանկարչական խցիկի տեղ բանեցրեց: Նրա քիմքին հասավ արնաերշիկով լոբու հոտը (շուտով ժամը երկուսն էր լինելու), որը Բիչո՛րին խոհանոցում դրել էր՝ տաքացնելու:

— Այստե՞ղ ես մնում:

— Իհարկե, իմ տունն է:

Բիչո՛րին նրան զիջեց այն բազկաթոռը, որին նստած՝ քիչ առաջ ձայնապնակների իր հավաքածուն էր նայում: Հենց այդ տեղն առաջարկեց, որ ամեն անգամ, երբ քահանան հայացքը բարձրացնի, տեսնի պատին ամրացված Չատոյի լուսանկարը: Իր համար խոհանոցից աթոռ բերեց: Քահանան սկսեց քաղաքավարի զրույցը: Հաճոյախոսություններ շռայլեց՝ համեստ տոնով արտահայտվող ճոռոմաբանությունները սատարելով ձեռքերի բարյացակամ շարժումներով, փորձելով ուղղորդել զրույցը, բայց Բիչո՛րին այն քիչ դեպքերում, երբ միջամտում էր, վճռականորեն անցնում էր իսպաներենի, այնպես որ դոն Սերապիոն, որ ակնհայտորեն չէր ուզում սրել իրավիճակը, դադարեց բասկերեն խոսել:

Գորտի ճարպկությամբ մի թեմայից մյուսն էր ցատկում, սահում ենթաթեմաներով՝ թեթևակի կանգ առնելով օդերևութաբանական խնդիրների, առողջական ու ընտանեկան հարցերի վրա, մինչև որ Բիչո՛րին, որ դեռ չէր կերել ու համբերության մեծ պաշար չուներ, վրա բերեց.

— Գուցե ասե՞ս՝ ինչի մասին ես ուզում խոսել հետս:

Դոն Սերապիոն, անկախ իրենից, իր կոպիտ զրուցակցի գլխի վրայով հայացքը բնազդաբար ուղղեց դեպի Չատոյի՝ շրջանակված լուսանկարը:

— Լա՛վ: Չգիտեմ՝ տեղյա՞կ ես, որ ավանում քո ներկայությունը որոշակի անհանգստություն է առաջացնում: Անհանգստությունը ճիշտ բառը չէ:

— Տագնա՞պ:

— Սխալ արտահայտվեցի: Ներողություն եմ խնդրում: Այսպես ասենք. քո ամենօրյա ներկայությունը ավանում մարդկանց մոտ հարցեր է առաջացնում:

— Որտեղի՞ց իմացար, որ հարցեր է առաջացնում: Գալիս են եկեղեցի ու պատմո՞ւմ են:

— Ավանում նորություններն արագ են տարածվում: Բանն այն է, որ ինչ սկսել ես գալ, մարդիկ մեկնաբանություններ են անում դրա շուրջ: Քո ավանն է, գալիս ես. դա չէ խնդիրը: Ես էլ եմ ասում՝ բարով ես եկել: Այդուհանդերձ, իրավիճակն ավելի բարդ է, քան առաջին հայացքից կարող է թվալ, ուստի սեփական տունդ գալու արդարացի իրավունքդ չի բացառում հարևաններիդ իրավունքները:

— Օրինա՞կ:

— Օրինակ, որ նրանք իրենց կյանքը նոր կետից սկսելու տարբերակ ունենան: Ու երկրում խաղաղություն հաստատվելու հնարավորություն ստեղծվի: Զինված պայքարը, նաև չմոռանանք կառավարության անվտանգության ուժերի գործողությունները, դաժան հարված են հասցրել մեր ժողովրդին: Ցավոք սրտի, զոհեր ենք ունեցել. ամուսինդ, Աստված հոգին լուսավորի, ու այն երկուսը՝ ռազմական ոստիկանությունից, որոնք սպանվեցին արդյունաբերական գոտում: Չփորձելով քողարկել սարսափելի այդ դժբախտությունները, որոնք մեզ ցավ են պատճառում, չպետք է անտեսենք մյուս մարդկանց տառապանքը: Այստեղ և՛ հալածանքներ են եղել, և՛ տների խուզարկություններ, և՛ անմեղ մարդկանց են բռնել ու նրանց հանդեպ վատ վերաբերմունք ցուցաբերել կամ, ավելի ճիշտ, խոշտանգել են զորամասերում: Հենց այս պահին մեր բնակավայրի ինը զավակ բանտում է՝ երկար տարիների ազատազրկման դատապարտված: Էական չէ՝ նրանք արժանի՞ էին այդ պատժին, թե՞ ոչ: Ես ո՛չ իրավաբան եմ, ո՛չ էլ քաղաքական գործիչ: Ես ընդամենը համեստ հոգևորական եմ և ցանկանում եմ, որ իմ ժողովուրդը խաղաղ ապրի:

— Չլինի՞ ուզում ես ասել, որ խաղաղությունը վտանգված է, քանի որ սպանվածի այրին գալիս է իր սեփական տուն՝ մի քանի ժամ անցկացնելու:

— Բնա՛վ: Ես պարզապես մարդկանց անունից եկել եմ՝ քեզ խնդրելու: Եթե չմերժես, շատ շնորհակալ կլինեմ, հակառակ դեպքում՝ հնազանդորեն կընդունեմ քո որոշումը: Գիտեմ, որ տառապել ես, Բիչո՛րի: Վերջին բանը, որ կարող է մտքովս անցնել, քո զգացմունքները կասկածի տակ

դնելն է կամ քեզ կշտամբելը: Միշտ աղոթքներիս մեջ եք եղել դու և զավակներդ: Ու հավատա՛, եթե ամուսինդ հիմա Տիրոջ մոտ չէ, դա նրանից չէ, որ հազար անգամ չեմ աղաչել Բարձրյալին: Բայց ճիշտ այնպես, ինչպես Աստված է հոգ տանում մեռյալների հոգիների համար, այնպես էլ ես պետք է զբաղվեմ իմ ծխականների կենդանի հոգիներով: Լա՞վ եմ անում իմ գործը, թե՞ վատ: Վստահաբար սխալներ գործում եմ: Շատ հավանական է, որ ճիշտ բառեր չեմ կիրառում, ու մեկ անգամ չէ, որ մի բան եմ ասել, որ չպիտի կամ որ չէի ուզի ասել: Կամ էլ լռելու փոխարեն խոսել եմ, խոսելու փոխարեն՝ լռել: Ես անթերի չեմ, գուցե նույնիսկ ավելի շատ թերություն ունեմ, քան շատ-շատերը: Այդ ամենով հանդերձ՝ պետք է մինչև վերջին շունչս կատարեմ վրաս դրված պարտականությունը: Չթուլանալով և չընկճվելով: Դու հասկանում ես, չէ՞, որ ես չեմ կարող գնալ այդ ընտանիքներից մեկի տուն (որոնք նույնպես տառապել են) ու ասել՝ ցավում եմ, բայց ձեր տղան ETA-ի մարտիկ է եղել, գնացե՛ք-կորե՛ք: Իմ տեղը լինեիր՝ այդպես կվարվեի՞ր:

— Քո տեղը լինեի՝ հստակ կխոսեի: Ինձնից ի՞նչ ես ուզում:

Այս անգամ քահանան հայացքը ոչ թե վեր բարձրացրեց՝ դեպի Չատոյի լուսանկարը, այլ գետնին հառեց՝ իր ու Բիչո՛րիի միջև:

— Ուզում եմ, որ չգաս:

— Իմ տուն չգա՞մ:

— Որոշ ժամանակ, մինչև կրքերը հանդարտվեն, ու խաղաղություն հաստատվի: Աստված ողորմած է: Քո այստեղի տառապանքը քեզ այն աշխարհում կհատուցվի: Մի՛ թույլ տուր, որ չարությունը հոգուդ տիրանա:

Հաջորդ առավոտ, կոկորդը դեռ սեղմված, խեղդվելու զգացումով Բիչո՛րին բարձրացավ Պոլյոե գերեզմանոց՝ Չատոյին պատմելու: Մնաց ոտքի վրա՝ նախընտրելով չնստել թաց սալիկին, քանի որ ուժեղ անձրև էր գալիս:

— Ինձ այդպես ասաց: Որ ավան չգամ՝ խաղաղության գործընթացը չխաթարելու համար: Դե՛, հասկանում ես, զոհերը խանգարում են: Ուզում են մեզ ավլել, գորգի տակ թաքցնել: Որ չերևանք ու անհետանանք հասարակական կյանքից, որ նրանք հաջողեցնեն իրենց դատապարտվածներին բանտերից հանել: Խաղաղությունը հենց դրա համար է: Ու բոլորն այնքան գոհ կլինեն, ասես այստեղ ոչինչ էլ չի պատահել: Ասաց, որ եկել է միմյանցից ներում խնդրելու ժամանակը: Ու երբ նրան հարցրի, թե ես ումից պիտի ներողություն խնդրեմ, ասաց՝ ոչ մեկից: Բայց քանի որ ես,

դժբախտաբար, մի հակամարտության (որին ներգրավված է եղել ոչ թե լոկ մի խումբ, այլ ամբողջ հասարակությունը) մաս եմ եղել, ապա չի բացառվում, որ նրանք, ովքեր ինձնից ներողություն պիտի խնդրեին, իրենց հերթին սպասում են, որ մյուսներն իրենցից ներողություն խնդրեն: Ու քանի որ այս ամենը շատ բարդ է, քահանայի կարծիքով՝ հիմա, երբ ահաբեկչություն չկա, լավագույն տարբերակն այն է, որ իրավիճակը հանդարտվի, ու որ վերջանան ցնցումներն ու ցավը, ու վիրավորանքները մեղմվեն ժամանակի ընթացքում: Ի՞նչ կարծիքի ես, Չատո՛: Հավասարակշռությունից դուրս չեկա, բայց և չլռեցի: Լեզվիս եկածն ասացի:

Բիչո՛րին ուղիղ քահանայի աչքերին նայեց.

— Լսի՛ր, Սերապիո՛: Նա, ով չի ուզում ինձ ավանում տեսնել, թող չորս անգամ կրակի վրաս, ինչպես Չատոյի վրա կրակեցին, որովհետև մտադիր եմ գալ այնքան, որքան կցանկանամ: Մեկ է, միակ բանը, որ կարող եմ կորցնել, կյանքս է, որն արդեն շատ տարիներ առաջ ջարդուփշուր են արել: Ոչ մեկից ներողություն չեմ ակնկալում, թեև հիմա, որ մտածում եմ, դա իսկապես բավական մարդկային ժեստ կլիներ: Ու վերջացնեմ, քանի որ ուտելու ժամս եմ բաց թողնում: Քեզ ինձ մոտ ուղարկած անձնավորությանը փոխանցի՛ր, որ կանգ չեմ առնելու, մինչև չիմանամ ամուսնուս սպանության բոլոր մանրամասները:

— Բիչո՛րի, խնդրում եմ, ինչո՞ւ ես այդ վերքը նորից քրքրում:

Ու ես վրա բերեցի.

— Մեջը եղած ամբողջ թարախը հանելու համար: Թե չէ երբեք չի լավանա:

Ուրիշ բան չխոսեցինք: Տնից դուրս եկավ բավականաչափ տխուր ու նեղացած: Ինձ համար մեկ է: Հենց վարագույրի արանքից տեսա, որ դուրս է եկել փողոց, վազեցի խոհանոց՝ մի մեծ աման լոբի ուտելու, քանի որ սովից մեռնում էի: Դու ի՞նչ ես կարծում, Չատո՛: Լավ եմ արել, չէ՞: Դու հո գիտես, որ միշտ էլ վճռական եմ եղել:

26

Դրա՞նց կողմից ես, թե՞ մեր

Անձրևը, խփվելով գերեզմանաքարերին, արձագանքում էր աշնանային թարմ ու մառախլապատ ձայնով, որը դուր էր գալիս Բիչո՛րիին: Այո՛, որովհետև նախ մի քիչ լվանում է շուրջբոլորը, հետո էլ ինձ թվում է, որ հանգուցյալներին էլ մի քիչ կյանք է տալիս, չէ՞: Դե՛, ես գիտեմ՝ ինչ եմ ասում:

Այդ մտքերով տարված՝ շրջանցում էր ջրափոսերը ու քարե սալիկների վրա խխունջներ տեսնելով՝ մտածեց (առաջին անգամ չէր) դրանք հավաքել ու տուն տանել՝ կերակուր պատրաստելու համար: Իր ձեռքով հարդարած մազերը պաշտպանում էր հովանոցով: Անձրևը չէր կտրվում, ու գերեզմանոցից դուրս գալու պահին այնպես ստացվեց, որ քաղաքային ավտոբուսը մոտեցավ, նստեց: Ինչո՞վ զբաղվեմ: Հապա տեսնենք: Երեկվա լոբուց ունեմ, Իկացա կատվի ամանը լիքն է, տանն ինձ ոչ ոք չի սպասում: Նրան չափազանց նյարդայնացնում էր այն, որ կարող է պատահի՝ դոն Սերապիոն մտածի, որ նա ընդունել է իր՝ որոշ ժամանակ ավանում չերևալու խնդրանքը: Ուստի ավտոբուսից իջավ բուլվարում, մոտակա հացի խանութից երկու ամոքահունց բուլկի գնեց, ու աչքի՛դ է երևում, քահանա՛, առաջին իսկ ավտոբուսով գնաց ավան:

Այնտեղ տաքացրեց նախորդ օրվա ուտելիքից մնացածն ու կերավ: Տարբեր մանր-մունր բաներ արեց: Ամբողջ հետմիջօրեն լարերը դասավորեց ու միացրեց հոսանքին, մի բան, որ սովորաբար Չատոն էր անում: Ի վերջո հաջողեցրեց նվագարկիչը միացնել: Ու երկու հին երգերի միջև դադարի ընթացքում լսեց զանգերի ղողանջը: Շաբաթ օր էր, հովանոցը վերցրեց ու դուրս եկավ: Դեպի ո՞ւր: Էլ ո՞ւր պիտի գնար: Ժամը յոթի պատարագին: Եկեղեցի մտնելիս մի պահ ցանկացավ առաջին շարքում նըստել, ինչպես հոգեհանգստի այն հեռավոր հետմիջօրեին, բայց մտածեց, որ դա ակնհայտորեն սադրանք կընկալվի: Ընտրեց աջ մասի վերջին նըստարանի ծայրը, քանի որ այդտեղից ամբողջ եկեղեցին երևում էր, ինչը հնարավորություն էր տալիս աննկատ ուսումնասիրել եկածներին:

Պատարագի սկզբում եկեղեցին բավական լիքն էր, թեև ոչ այնքան, որքան ժամանակին էր լինում: Ոչ ոք չեկավ՝ Բիչո՛րիի կողքը նստելու, ինչից նա

եզրակացրեց, որ իր ներկայությունն աննկատ չի անցել, բայց ինձ համար մեկ է, ես չէի էլ ակնկալում, որ ծափերով են ինձ դիմավորելու Տիրոջ այս տաճարում, որտեղ համարվում է, որ մերձավորի հանդեպ սեր է քարոզվում:

Իր շուրջ եղած դատարկ տեղերը նրան տեսանելի էր դարձնում մյուսների համար, ուստի հենց կանաչ զգեստով քահանան երևաց խորանի դռնից, որքան հնարավոր էր զգույշ՝ տեղափոխվեց ձախ կողմի նստարանին: Թաքնվեց մի քանի անծանոթ մարդկանց թիկունքում: Շուրջը նայելով՝ սյուներից մեկի առջև նկատեց անվասայլակը:

Նույնիսկ չտեսնելով Բիչո՛րիին՝ Միրենը տեղեկացավ, որ նա եկեղեցում է: Ժամը յոթը դեռ չեղած՝ տեղ էր հասել աղջկա հետ: Ինչ-որ մեկը դուռը պահեց, որ նրանք հեշտ մտնեն: Ո՞վ էր: Կարևոր չէ, ինչ-որ մեկը: Ու Միրենը տեղավորվեց իր սովորական տեղում, Արանչան՝ կողքը, սուրբ Իգնասիո Լոյոլացու արձանը՝ մի քիչ այն կողմ՝ պատի ստվերում: Այդ պահին մեկը շշնջաց նրա ականջին: Միրենը աննկատ գլխով արեց ու ոչ այդ ժամանակ, ոչ էլ պատարագի ընթացքում դեպի աջ չնայեց:

Իրեն ավելի ու ավելի համարձակ է պահում: Սյան ու Արանչայի պարանոցի արանքով պարսավալից հայացք նետեց Իգնասիոյին: Դու ո՞ւմ կողմից ես՝ դրա՞նց, թե՞ մեր: Պատարագը նոր էր սկսվել. գայթակղություն ունեցավ վեր կենալ ու գնալ: Ինչպիսի՜ սրիկայություն է այստեղ գալը: Իրենց երթերով ու մամուլի միջոցով այդքան խաղաղություն էին պահանջում, ու հիմա, երբ վերջապես խաղաղություն է հաստատվել, երկու օր չանցած՝ ամեն ինչ փչացնում են: Ոտքի ելնելու շարժում արեց, բայց միտքը փոխեց: Ե՞ս ու գնա՞մ: Թող նա՛ գնա: Ու Իգնասիոյին դիմելով՝ թե նրան ես նախընտրում, կարող եք երկուսդ էլ չքվել:

Նախքան քարոզը՝ Դոն Սերապիոն նրանց տեսավ իր գրակալով բարձրահարթակից, որը որպես ամբիոն էր օգտագործում: Մեկը՝ նստարանի մի ծայրում, մյուսը՝ մյուս՝ երեք-չորս ծխականներով բաժանված: Նրանց անունը, անշուշտ, չտվեց, բայց հանկարծ թողնելով իր նախատեսած անհամ թեման՝ սկսեց հանպատրաստից ստեղծագործել: Սկզբում, ճիշտն ասենք, մի փոքր խառնաշփոթ, խաղաղության ու հաշտության, ներողամտության ու համերաշխության կոչերով, որոնք, կասկած չկար, ուղղված էին ոչ թե հիմնականում, այլ հենց այդ երկու կանանց:

Մի պատմություն, մի դիպված, մի առակ (դե՛, արի՛ ու իմացի՛ր, ինչ էր պատմածը) երկու մարդու մասին, որոնք շատ մտերիմ ու շատ երջանիկ

ընկերներ էին, հետո թշնամացան ու դժբախտացան, բայց Աստված ուզեց, որ հաշտվեն: Ու թեև հեշտ բան չէր, որոշ ժամանակ անց հաշտվեցին ու վերագտան իրենց երբեմնի երջանկությունը: Որովհետև Հիսուս Քրիստոս ասել է՝ կսիրես… և այլն: Ու ոգևորվեց՝ եկե՛ք բոլորս միասին, ու էլի խաղաղության կոչեր: Ու ստացվեց քսան րոպե ձգվող բոցաշունչ մի քարոզ, ինչը զարմանալի էր, քանի որ սովորաբար նրա խոսքը ծանրամած էր ու խիստ:

Այդ ժամանակ Միրենը էլ չէր խոսում Իգնասիո Լոյոլացու հետ: Երբեք ինձ իմ ուզածը չես պարգևում: Այդ պահից ի վեր մռայլվելով՝ այլևս նրան չդիմեց: Իր մտորումների մեջ ընկած ու նեղված՝ մի քիչ ուշացումով նկատեց, որ Արանչան ձեռքով դրան է ողջունում: Սարսափ: Նույնիսկ գլուխն էր ճոճվում ժպիտի ծանրության տակ: Ժպտում էր աչքերով, շուրթերով, ճակատով, ականջներով: Սկանդալային մի ժպիտ էր: Նորից նոպայի մե՞ջ է, ի՞նչ է: Թեև, սթափ մտածելով, գուցե ոչ թե ողջունում էր, այլ այդ մյուսին ցույց էր տալիս ուլունքներով թևնոցը, որը ոչ մի ձևով չկարողացան տանը թևից հանել: Աղջի՛կ ջան, դա ընդամենը խաղալիք է: Անվասայլակի արգելակն աննկատ շարժումով ազատեց: Ու ոտքի հպումով հաջողեցրեց սայլակը պտտել այնպես, որ Արանչան դեմքով դեպի խորանը հայտնվի, բայց քանի որ աղջիկը շատ համառն է (որքա՜ն համբերություն ինձ պիտի տաս, Աստվա՜ծ), ջանք էր գործադրում՝ դեմքը շրջելու համար, բայց մայրը մի քիչ էլ սայլակը հրեց, հետո՝ մի քիչ էլ դեպի պատը՝ Արանչային հնարավորություն չտալով հաղորդակցվել հետը:

Բիչո՛րին, երբ գլխի ընկավ, որ Արանչան նրան նշան էր անում, անընդհատ դեպի աղջկա կողմն էր նայում: Վիզը ձգելով՝ տեսնում էր երեք-չորս մարդկանց կիսադեմերից այն կողմ մոր մի հատվածն ու աղջկան՝ ամբողջությամբ: Մինչև որ մի պահ, տարօրինակ էր, համոզվեց, որ անվասայլակն այլևս նույն դիրքով չէ, ու հնարավոր չէր պատասխանել Արանչայի ողջույնին:

Ափերն իրար սեղմած՝ Միրենը մոտեցավ՝ հաղորդություն ստանալու: Երևի ինձ է նայում, զգում եմ՝ ինչպես է նրա աչքերի բոցկլտոցը մարմնովս անցնում: Եվ իսկապես, հայացքը նրանից չէր կտրում, ինչպիսի՜ սրբություն. սա կարծում է, թե ուղիղ դրախտ է գնալու: Դե՛, տեսնենք՝ նրան ինչ են ասելու, երբ հայտնվի այնտեղ՝ ամուսնուս արյունն իր հագուստի վրա: Քահանայի առջև հաղորդություն ստացողների փոքրիկ

հերթ գոյացավ: Բիչո՛րին նույնպես շարքին միանալու ցանկություն ունեցավ: Ի՞նչ կարևոր է, որ ո՛չ հավատում է, ո՛չ էլ եկեղեցու մշտական այցելու է: Ու երբ այդ մյուսը, սուրբ մասունքը լեզվին, կենտրոնական անցուղով գնա իր տեղը, ո՞վ գիտե, գուցե նրանց հայացքները մի վայրկյան խաչվեն: Այդ պահին կայծակնային էյֆորիա զգաց: Նույնիսկ վեր կենալու շարժում արեց: Հանկարծ մի սուր ծակոց զգաց փորի շրջանում (երրորդ, թե չորրորդն էր վերջին օրերին), որը նրան հնարավորություն չտվեց տեղից շարժվել: Մի հինգ րոպե դիմացավ ցավին: Գլուխն այնպես էր պտտվում, որ վախենում էր՝ ուշքը գնա: Աչքերը փակեց, դանդաղ արտաշնչեց ու ուշքի եկավ, իսկ մարդիկ (պատարագն արդեն ավարտվել էր) գնում էին դեպի ելքը: Երբ վերջապես ոտքի կանգնեց, տեսավ, որ անվասայլակն անհետացել է:

Եկեղեցուց վերջին դուրս եկողների մեջ էր: Հրապարակը մթության մեջ էր, անձրևում էր, ու հաստատ դրա պատճառով մարդիկ արագ ցրվել էին տները: Հինգ քայլ հազիվ արած լիներ, երբ աղոտ ուրվագծված երկու հոգի եկան ընդառաջ:

— Մեզ հիշո՞ւմ ես:

Ձայնն անծանոթ էր, դեմքերը լավ չէր տեսնում, ու դժվարանում էր հասկանալ՝ ովքեր էին: Բայց հետո՝ արդեն մոտիկից, այո՛, ճանաչեց՝ այսինչն էր՝ իր կնոջ հետ՝ տարեց մի զույգ՝ իրենց ավանից: Շշնջալով էին խոսում:

— Ձեզ տեսանք եկեղեցում ու շատ ուրախացանք: Ես էլ ասացի ամուսնուս՝ արի՛ սպասենք նրան: Ձեզ շատ ենք հավանում: Միշտ ենք հավանել:

Հետո ամուսինը խոսեց, բայց այնքան ցածր, որ հովանոցին կաթող անձրևը Բիչո՛րիին ստիպեց ականջը սրել.

— Մենք երբեք ազգայնական չենք եղել: Բայց, իհարկե, ցանկալի է, որ այստեղ այդ մասին ոչ ոք չիմանա:

Բիչո՛րին նրանց շնորհակալություն հայտնեց: Հետո խնդրեց, որ ներեն, քանի որ շտապում էր, պետք է գնար:

— Իհարկե: Ձեզ չուշացնենք:

Շտապո՞ւմ էր: Ամենևին: Անհետացավ մթան մեջ, կանգնեց շքամուտքի դռան մոտ: Որոշ ժամանակ մնաց այդտեղ՝ պատին հենված սպասելով, որ ցավն անցնի:

27

Ընտանեկան ճաշ

Կիրակի, պաելյա*: Ներեան առաջինը եկավ: Կոշիկները բարձրակրունկ չէին, առանց շրթներկի էր ու առանց ամուսնու: Մայր ու աղջիկ միջանցքում հպեցին այտերը:

— Լոնդոնում ինչպե՞ս էր:

Ներեան նվեր էր բերել՝ դռան առջևը գցելու մի գորգիկ: Գնել էր այսինչ տեղում:

Անվանումն արտաբերեց բերանի չափազանցված շարժումով, գուցե երկու շաբաթ այդ լեզվով խոսելու հետևանքով:

— Գեղեցիկ է, չէ՞:

Գորգիկը երկհարկանի կարմիր ավտոբուսի պատկերով էր: Բիչո՛րին համաձայնեց՝ շինծու ոգևորություն ցուցաբերելով. բայց զուր ես ծախս անում, աղջի՛կս: Ներեան դուրս եկավ աստիճանահարթակ՝ գորգիկը փոխելու: Հինը հենեց պատին՝ հետո իջեցնելու ու աղբամանը նետելու համար:

— Կիկեն ո՞ւր է: Պաելյա չի՞ սիրում:

— Կիկեն պրծավ: Հետո ձեզ կպատմեմ:

Իկացան մրափում էր բազմոցի վրա: Թույլ տվեց, որ իրեն շոյեն՝ համարյա չբացելով աչքերը: Դրսում՝ մռայլ եղանակ: Զանգը տվեցին: Շավիերը համբուրեց-գրկեց մորը, համբուրեց-գրկեց Ներեային: Ուշադրություն չդարձրեց կատվին, ոչ էլ նկատեց նոր գորգիկը, որի վրա քիչ առաջ մաքրել էր կոշիկները: Մի շիշ գինի էր բերել ու ծաղիկ: Մայրը, թե՝ ծախս անելու կարիք չկար: Հազարից մեկ էին երեքով ճաշում: Սուրբ Ծնունդին, Բիչո՛րիի տարեդարձին, իսկ այսօր պատճառն ի՞նչ էր: Դե՛, առանձնահատուկ պատճառ չկար, պարզապես Ներեան վերադարձել էր Լոնդոնից, կամ էլ որովհետև արդեն բավական ժամանակ է, ինչ երեքով մի սեղանի շուրջ չէին հավաքվել: Շավիերը մի հիվանդի մասին մի տխուր բան պատմեց, հետո մեկ ուրիշ դեպք՝ բավական զվարճալի, բայց դե էն առաջինից հետո չստացվեց ծիծաղել: Հարձակվեցին խավարտի վրա: Ներեան պատմում

* Paella (իսպ.), պաելյա՝ իսպանական ավանդական ճաշատեսակ բրնձով և ծովամթերքով:

էր տպավորությունները (մտանք, գնացինք, այցելեցինք)։ Եղբայրը զգաց, որ ինչ-որ բան այն չէ։ Հարցրեց.

— Կիկեն ո՞ւր է։

— Երևի դեռ Լոնդոնում է։

Հետաքրքրությունից ու շփոթմունքից Շավիերի ձեռքը, որ շշի խցանն էր հանում, քարացավ։

Բիչո՛րին արագ վրա բերեց.

— Նորից բաժանվել են։

— Չենք բաժանվել։

— Դե՛, առանձնացել եք։

— Նույնը չէ։

— Թեև, ամեն դեպքում, առաջ էլ ամեն մեկդ իր բնակարանում էր ապրում։ Թե՞ սխալվում եմ։

— Չես սխալվում։

Քանի որ վաղ թե ուշ իմանալու էին, Ներեան պատմեց, ներկայացրեց, մանրամասնեց։

— Հիմա իմացաք։ Առանձնացել ենք փոխադարձ համաձայնությամբ։ Վերջնական կլինի, թե ոչ, ժամանակը ցույց կտա։ Կիկեն պատրաստ է ամսական որոշակի գումար փոխանցել ինձ։ Հրաժարվեցի, իհարկե։

Մոր ունքերը վեր ելան։

— Ինչո՞ւ։

— Որովհետև նախընտրում եմ նրան պարտական չլինել։

Շավիերը մորը գինի առաջարկեց, նա հրաժարվեց, նույնն էլ՝ Ներեան։ Ուզում էր իր գավաթը լցնել, բայց միտքը փոխեց ու գինու լիքը շիշը դրեց սեղանի անկյունում։ Բիչո՛րին վեր կացավ, որ խոհանոցից պաելյան բերի։ Ներեան առաջարկեց օգնել։ Բիչո՛րին էլ, թե՝ կարիք չկա։

Մոր բացակայությամբ եղբայր ու քույր փսփսացին։ Շավիերն ասաց.

— Խնդրում եմ՝ չանդրադառնաս այդ թեմային։

Բիչո՛րին խոհանոցից վերադառնալիս լսեց վերջին բառը։

— Ի՞նչ թեմայի։

Այրվածքի բծերով ծղոտե տակդիրներն իրենց ավանի տնից էին բերել։ Դրանք օգտագործում էին, երբ զավակները փոքր էին, ու հայրն էլ ողջ էր։ Պոկված եզրով պաելյայի կաթսան՝ նույնպես։ Ներեան արդեն հոգնել էր մորը տարիներ շարունակ հորդորելուց, որ նետի նախնադարի այդ

մնացուկները ու նորերը գնի: Նույն վիճակում էին նաև անձեռոցիկները. գուցե թանգարանային ցուցանմուշ չէին, բայց ասես օգտագործված իրերի խանութից լինեին. Չատոն դրանք քսան տարի առաջ էր օգտագործում՝ յուղը մատներից մաքրելու համար:

Բրնձից դեռ գոլորշի է բարձրանում: Բիչո՛րին Շավիերի ափսեն է լցնում: Սիրելի զավա՞կն է: Սիրելին է, որովհետև պրակտիկ հարցերում անօգնակա՞ն է: Ներեան ուրիշ է: Վճռականորեն քափքաշը ձեռքն է առնում ու ափսեն է լցնում, պատմում-թվարկում է լոնդոնյան միջակ-կասկածելի որակի նախաճաշերի, ճաշերի ու ընթրիքների մասին: Ու երբ բոլորը պատրաստվում են պաելյան ուտել, սկսում է ներկայացնել իր կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերը: Ուրեմն.

— Վերջապես որոշեցի, որ երբ հնարավոր լինի, կմասնակցեմ բանտում կազմակերպվող ամոքիչ հանդիպմանը:

Լռություն է տիրում: Սա է թեման: Քանի որ ոչ ոք չի հակաճառում, Ներեան շարունակում է.

— Հեռախոսով խոսել եմ կազմակերպչի հետ: Շատ հաճելի կին է: Վրստահություն ներշնչեց: Սկզբում այնքան էլ չէ, բայց հետո ավելի լավ ճանաչեցի: Նրան ասացի, որ վերադարձել եմ Լոնդոնից ու պատրաստ եմ վերսկսել նախապատրաստական հանդիպումները: Էլ ի՞նչ: Հա՛, այս ամենը ձեզ պատմում եմ, որովհետև չեմ սիրում թաքուն բաներ անել: Երևի դուք դեմ եք:

Մայրն ու եղբայրը որոշ ժամանակ նայում էին նրան լուրջ, ավելի շուտ՝ ոչ մի բան չարտահայտող դեմքով ու հետո հայացքները փախցրին: Լուրջ չէին ընդունո՞ւմ, ի՞նչ: Ծամելու ձայնն էր լսվում: Հայացքը չէին կտրում կամաց-կամաց դատարկվող ափսեներից: Հետո Բիչո՛րին դանդաղ մի կում ջուր խմեց, մաշած անձեռոցիկը հպեց շուրթերին ու չեզոք, անարտահայտիչ ձայնով հարցրեց.

— Ակնկալիքդ ի՞նչ է:

— Գաղափար չունեմ: Դեռ չգիտեմ՝ ում հետ եմ հանդիպելու: Ինձ համար միայն մի բան է պարզ: Ուզում եմ, որ նրանցից մեկն իմանա, թե մեզ ինչ են արել, ու ինչպես է դա մեզ վրա ազդել:

— Ուզում ես ասել, թե ինչպես է քո՛ վրա ազդել:

— Այո՛:

Շավիերը լուռ ուտում էր:

— Իսկ հետո՞:

— Կլսեմ՝ ինձ ինչ կասի:

— Կարծո՞ւմ ես՝ քեզնից ներողությո՞ւն է խնդրելու:

— Իրականում այդ մասին չեմ մտածել: Ըստ կազմակերպչի՝ մինչև հիմա բոլոր մասնակիցների ինքնազգացումը դրանից միայն բարելավվել է: Ոչ ոք չի զղջացել: Ոմանք նույնիսկ իրենք իրենց ավելի լավ մարդ են համարել: Իմ կարծիքով՝ թեթևանալու զգացումը քիչ բան չէ: Դրանից հետո դրական ապրումները ողջունելի են: Այսպես ասեմ. թող վերքը փակվի: Սպին ընդմիշտ կմնա: Բայց վերքի սպիացումը նաև բուժման ձև է: Ու չգիտեմ՝ դուք ինչպես, բայց ես կցանկանայի, որ մի օր գար, երբ ես հայելու մեջ տեսնեի ավելին, քան ինչ-որ մի զոհի դեմք: Գաղտնիության ամենաբարձր մակարդակն են խոստացել ինձ: Մամուլը չի իմանա:

Շավիերը կնճռոտած ճակատով լռում էր: Նախորդ օրերի ընթացքում բազմիցս փորձել էր համոզել Ներեային, որ մորը հեռու պահեր այդ թեմայից: Ինչո՞ւ: Նրան չմտահոգելու համար: Բայց այնպես ստացվեց, որ Բիչո՛րին հանգիստ ընդունեց ասածը:

— Աղջի՛կս, արա՛ այնպես, ինչպես ճիշտ ես համարում: Ես դեմ չեմ: «Զոհերի հանդեպ ուշադրության կենտրոնից» մեկը որոշ ժամանակ առաջ ինձ պատմել է այդ հանդիպումների մասին, այնպես որ ես քիչ թե շատ տեղյակ եմ գործընթացին: Բայց գնալն ու մարդասպաններից մեկի հետ խոսելը բավարար չէ: Իմ կարծիքով դա ժամանակի վատնում է: Ինձ այնպիսի վնաս են պատճառել, որ չեն կարող ոչ մի վերք փակել: Ամբողջ մարմինս է վերք: Քեզ բացատրելու կարիք չկա, կարծում եմ: Ու եթե վերջում էլ վերքը պիտի սպիանա, ապա՝ ամբողջ մարմնովս մեկ, ինչպես ամբողջապես այրվելու դեպքում է լինում: Ես տեղով մի սպի կլինեի: Լավագույն դեպքում կգնայի՝ aita-ին սպանողի աչքերի մեջ նայելու: Այ նրան, իրոք, մի քանի բան կասեի: Դիմելով Շավիերին՝ հարցրեց.

— Դու ի՞նչ կարծիքի ես: Ի՞նչ ես լեզուդ կուլ տվել:

Շավիերը հայացքը չբարձրացրեց:

— Դա շատ անձնական հարց է: Ես չեմ խառնվի:

— Քեզ հարցնում եմ՝ նման մի հանդիպման կգնայի՞ր:

— Ո՛չ:

Վճռական ինչեց, ագրեսիվ: Ներեան, դեռ չդատարկած ափսեն հրելով սեղանի կենտրոնը, ի նշան, որ իբր վերջացրել է, ասաց.

— Մտածում եմ այդ հանդիպումից հետո ուրիշ քաղաք տեղափոխվել: Չգիտեմ՝ ուր: Չեմ բացառում ուրիշ երկիր տեղափոխվելը:

Իրենց տեղեկացված համարեցին՝ չդատելով, հարցեր չտալով: Հետո խոսեցին լուրջ ու լակոնիկ, առօրյա թեմաներով: Առաջինը Շավիերը գնաց՝ սուրճ ու քաղցրեղենից հրաժարվելով, քանի որ կիրակնօրյա խաղ կար, նա էլ փոքրուց «Ռեալ Սոսիեդադի» անդամ էր, թեև մարզադաշտ հազվադեպ էր գնում: Ներեան օգնեց սեղանը հավաքել: Մոր հետ մենակ մնալով՝ հարցրեց, թե ինչ կարծիքի է իր ծրագրերի մասին:

— Դու արդեն հասուն մարդ ես, գիտես՝ ինչ ես անում:

— Թե՞ նախընտրում ես, որ եղբորս նման լինեմ:

— Եղբո՞րդ ինչ է եղել:

— Իմ իմացած ամենատխուր մարդն է:

— Դու ի՞նչ գիտես՝ դարդն ինչ է:

— Ես էլ չափից ավելի պատճառներ ունեմ՝ հոգեպես կոտրված լինելու համար: Բայց արի՛ ու տե՛ս, որ Լոնդոնում հենց այն երեկոն, երբ Կիկեի հետ պայմանավորվեցի առանձին ապրել, գնացի գետափով զբոսնելու: Մտածում էի՝ ի՞նչ անեմ: Ջո՞ւրը նետվեմ ու պրծնեմ, թե՞ ելք փնտրեմ այն լաբիրինթոսից, որում արդեն շատ երկար, նույնիսկ չափազանց երկար ժամանակ եմ դեգերում: Տեսա գետի պղտոր ջրերը, քաղաքի արտացոլանքը գետի մեջ, հետո մարդկանց տեսա, մի մոտիկ տեղից երաժշտություն լսեցի, դեմքիս զեփյուռ խփեց, ու որոշեցի. գրո՛ղը տանի, Ներեա՛, գլո՛ւխդ բարձր, մի՛ հանձնվիր, ապրի՛ր, այո՛, ապրի՛ր, աղջի՛կ, նույնիսկ եթե կորած ես, շարժվի՛ր, պայքարի՛ր, փնտրի՛ր: Նաև իմացել էի, որ ամեն օր ավան ես գնում, ու կարծում եմ, որ շատ լավ ես անում: Ենթադրում եմ, որ դու էլ ես ինչ-որ բան փնտրում:

— Բան եմ փնտրո՞ւմ: Ե՞ս: Ես ոչ մի բան չեմ փնտրում: Ես իմ տուն եմ գնում: Չե՞մ կարող իմ տուն գնալ: Թե՞ դուր չի գալիս քեզ:

Աչքերն ու սեղմած շուրթերը զայրույթ էին արտահայտում: Էլ չխոսեցին: Քիչ հետո, տնից դուրս գալով, Ներեան նկատեց, որ հին գորգիկը անհետացել է աստիճանահարթակից:

28

Եղբոր ու քրոջ զրույց

Գորշ նոյեմբեր էր: Ներեան դուրս եկավ շքամուտքից: Կայծակները ճեղքում էին երկինքը: Զառիվարի ներքևում, որտեղով նա պիտի անցներ, սև հովանոցը թաքցնում էր այնտեղ կանգնած մարդու դեմքը: Ներեայի սիրտը խփեց: Ինչպե՞ս թե, չէ՞ որ հիմա ահաբեկչություն չկա: Նրան վախեցնում էր միայնակ մարդու ներկայությունն ու տեսքը: Համենայնդեպս, մայթը փոխեց: Քիչ անց տղամարդը շրջվեց: Շավիերն էր:

— Ասում էիր՝ ֆուտբոլի՞ ես շտապում:

— Միտքս փոխեցի:

Պատճա՞ռը: Դե՛, շատ կարևոր էր համարում քրոջ հետ խոսելը: Ներեան, թե՝ ինձ մի՛ վախեցրու: Նա էլ, թե՝ հանգի՛ստ: Իր ասելով՝ պարզապես իրար հետ խոսելու հնարավորություն շատ չէր լինում, քանի որ քիչ էին հանդիպում: Որոշեցին իջնել Սան Մարտին փողոց: Ճանապարհին Ներեան ասաց, որ փակի հովանոցը, քանի որ այլևս չէր անձրևում: Փակեց, ու քիչ անց նստեցին «Եվրոպա» հյուրանոցի սրճարանում:

— Չգիտեի, որ կոնյակ ես սիրում:

— Դե՛, մի բան պետք է խմել, չէ՞: Առանց պատվիրելո՞ւ նստենք:

Ներեան երիցուկի թուրմ ուզեց: Պաելյան յուղոտ էր, ստամոքսը ծանրացրել էր:

Շավիերն ուշադրություն չդարձրեց քրոջ գանգատներին: Առանց նախաբանի՝ անցավ բուն թեմային:

— Նախքան ama-ի մոտ մտնելը՝ պետք է ես ու դու խոսեինք: Անկեղծ ասեմ՝ ես այնտեղ նեղվեցի: Պետք է մի քանի կետի շուրջ պայմանավորվեինք՝ մեր մորը ավելորդ տառապանքից զերծ պահելու համար: Չմտածված բաներ էիր ասում, թեև ընդունում եմ, որ մասամբ իմ մեղքով է. ժամանակին պիտի միջամտեի:

— Որ ինձ ստիպեիր լռե՞լ:

— Ո՛չ, ընդամենը պետք էր, որ քո ծրագրերի մասին լուրերը փոքր չափաբաժնով լինեին: Պարզ զգուշավորությունից կամ, եթե, իհարկե, երբևէ լսել ես նման բանի մասին, նրբանկատությունից ելնելով:

— Հիմա քո ցուցաբերածի պես, չէ՞:

— Ամուսնուցդ՝ չգիտեմ որերորդ անգամ առանձին ապրելու լուրն արդեն բավարար էր: Մնացածը լավ կլիներ՝ թողնեիր մեկ այլ օրվա: Քեզ թվաց, թե ama-ն հանգիստ ընդունեց այդ ամենը: Վստահեցնում եմ, որ այդ հանգստությունը թվացյալ էր: Դա այն դիմակն է, որ այրիանալուց հետո է կրում: Զևացնում է, թե պինդ է: Բայց եթե ավելի ուշադիր լինեիր՝ ինձ նման, ama-ի ճակատին ու աչքերում կտեսնեիր, որ քո ամեն բառը նրա վրա շատ ծանր է նստում: Իսկ դու խոսում ու խոսում էիր, երբեմն՝ մի տեսակ էյֆորիկ կերպով, ինչը վատ իմաստով գրավեց ուշադրությունս:

— Ա՛խ, այդպե՛ս: Տարօրինակ է, որ դու այդպիսի բաներ ես նկատել, քանի որ ոչ մի վայրկյան աչքերդ ափսեից չբարձրացրիր:

— Կան բաներ, որ առանց նայելու էլ տեսնում ես: Լսի՛ր, Ներեա՛: Գուցե քո բաժանումը Կիկեից քեզ վրա ավելի է ազդել, քան դու ցույց ես տալիս: Դա դո՛ւ կիմանաս: Ճաշի ընթացքում ինձ վրա մի կնոջ տպավորություն թողեցիր, որը հանկարծ որոշում է միանգամից շատ բան անել՝ ամեն գնով ու առանց հաշվի առնելու, թե իր գործողություններն ինչպես կանդրադառնան մտերիմների վրա: Ճիշտն ասած, շատ հանգիստ մարդու տպավորություն չէիր թողնում:

— Իսկ եթե հենց այդպես է, ապա ի՞նչ: Թե՞ պիտի քեզ պես ապրեմ:

— Նախքան Լոնդոն գնալը մեզ վստահեցնում էիր, որ հրաժարվել ես այդ ամոքիչ հանդիպումից: Հիմա տեղեկանում ենք, որ մտադիր ես շարունակել այդ ծրագիրը: Ու ամենը՝ հանուն ինչի՞: Որ նախքան էստեղից մեկնելը հոգեբանորեն ավելի լա՞վ զգաս: Իսկապե՞ս կարող ես լավ զգալ՝ տեսնելով ama-ի վիճակը: Ես՝ ոչ: Գուցե կարողանայի մի պահ ինձ լավ զգալ՝ տեսնելով մարդասպանի զղջումը: Բայց հետո, Սան Սեբաստիան վերադառնալով, կտեսնեի, որ իմ թեթևացումը ոչ մի ձևով չի օգնում հարազատներիս: Հակառակը: Ու նորից նախկինի պես կզգայի, կամ էլ՝ ավելի վատ:

— Ինձ էգոիզմի՞ մեջ ես մեղադրում:

— Ասենք՝ միամտության:

— Շավիե՛ր, ես այլևս քո ութամյա քույրիկը չեմ: Մեր մանկությունից շատ ժամանակ է անցել: Ինձ դաստիարակ պետք չէ: Ինքնուրույն մարդ եմ:

— Չեմ ասում, որ այդպես չէ: Այդ պատճառով եմ հետդ խոսում, որովհետև ենթադրվում է, որ կարող ես որոշում կայացնել: Բայց սա չի նշանա-

կում, թե անսխալ ես: Սխալներ, որոնք կարող են ուրիշներին վնաս պատճառել, ինչպես այսօր:

— Չափազանցնում ես:

— Aita-ի հետ տեղի ունեցածը դարձրել ես անձնական օգտագործման մի իրադարձություն: Դրանից ելք ես փնտրում՝ ըստ քո կյանքի կամ քո ծրագրերի կամ, ինչպես որ կուզես անվանել: Ի վերջո դառնում ես Աստծո պես մի բան՝ նոր կյանք սկսելով դրախտային մի վայրում՝ արմավենիներով ծովափին, ու մտքովդ էլ չի անցնում, որ այդ պահվածքով գուցե խորացնում ես այստեղ մնացողների ցավը:

— Դուք էմոցիոնալ արգելափակման մեջ եք: Ama-ն և դու ցավի, չարության ու մելամաղձոտության մի փոսի մեջ եք, որից դուրս գալ չեք կարողանում: Ու չգիտեմ՝ ուզո՞ւմ եք դուրս գալ: Ես արդեն եզրին եմ: Հերիք է: Մեջս մի բան պետք է փոխվի: Դրա համար խորհրդակցելուց հետո ուզում էի գնալ այդ մարդասպաններից մեկի մոտ ու ասել. այսպիսի բան ես արել, այսպիսի հետևանքներով, կարող ես դրանք քեզ պահել, նվիրում եմ, ու հետո հեռու գնալ (իր ներողությունը լսելով կամ ոչ)՝ մի տեղ, որտեղ ինձ ոչ ոք չի ճանաչի, ոչ էլ մեջքիս հետևում կփսփսա: Որտեղ կկարողանամ ինձ նվիրել ուրիշների համար մի բան անելուն, չգիտեմ, բռնության ենթարկված կանանց, որբերին օգնելուն: Այնպես որ էգոիզմի մասին խոսք չկա: Նույնիսկ, իմ կարծիքով, ավելի էգոիստական կլիներ այստեղ ապրելով մինչև կյանքի վերջ վերքերը լիզելը: Հերի՛ք նայես այդ անասուն կոնյակի գավաթին: Ի՛նձ նայիր: Ես ամուսնալուծված մի կին եմ, երեխաներ չունեմ ու գրեթե կլիմաքսի մեջ եմ: Դու ինձ ցավ ես պատճառում: Եվ ուզում եմ այս երիցուկի թուրմը գլխովդ տալ:

Դեմքի արտահայտությունը չփոխեց: Նրան չնայեց: Հայացքը գավաթից չկտրեց նույնիսկ այն ժամանակ, երբ քրոջն ասաց.

— Մի բան կա, որ չգիտես: Կներես, որ չեմ կարողացել քեզ ավելի շուտ հայտնել: Սա ևս մի պատճառ է, որի համար պետք է հանդիպեինք: Կարծում եմ, որ ama-ն հիվանդ է: Հիվանդության բնույթը չգիտեմ: Վերջին անալիզներն ամենևին լավը չէին: Երբ դու Լոնդոնում էիր, նրա համար պայմանավորվել էի այստեղի ամենալավ ուռուցքաբանի հետ: Բայց այդ օրը ama-ն չէր գնացել նրա մոտ: Ասում է, թե մոռացել էր: Կասկածում եմ: Փորձում եմ նրան չվախեցնել: Իրեն ասել էի, որ դա սովորական ստուգում է: Պարզ է, հիմար չէ, ախտանշաններ ունի ու քիչ թե շատ հասկանում է՝

դա ինչ է: Քեզ խնդրում եմ հետաձգել ծրագրերդ: Իմ կարծիքով՝ ավելի լավ կլիներ, որ հրաժարվեիր դրանցից, առնվազն քանի դեռ մեր մայրը ողջ է: Քո կողմից մեծահոգություն կլիներ, եթե այնպիսի բաներ չանեիր, որոնք կարող են վատթարացնել նրա վիճակը:

— Քաղցկե՞ղ:

— Ամենայն հավանականությամբ:

Շավիերը մոտեցավ կանգնակին ու խնդրեց հաշիվը՝ երկու գավաթ կոնյակի ու քրոջ թեյի համար: Օգտվելով առիթից՝ մատուցողին հարցրեց ֆուտբոլային խաղի հաշիվը: Առաջին խաղակեսը՝ ոչ ոքի: Վերադարձավ քրոջ մոտ, բայց չնստեց:

— Մտածի՛ր ու երբ պատասխան ունենաս, խնդրում եմ, տեղյա՛կ պահիր:

— Մտածելու բան չկա: Վաղը կզանգեմ կազմակերպչին ու կհրաժարվեմ: Պարոն բժիշկը ևս մեկ անգամ հասավ իր ուզածին: Բայց վստահեցնում եմ, որ մի օր, չգիտեմ երբ, գնալու եմ այս անիծյալ տեղից:

Շավիերը կռացավ՝ նրա այտը եղբայրաբար համբուրելու:

— Դժվար ժամանակներ են:

— Էլ մի ասա՛…

Հրաժեշտ տվեցին միմյանց զուսպ սիրալիրությամբ՝ առանց զգացմունքայնության, չժպտալով: Ներեան մնաց նստած, ասես հիպնոսացած՝ ապակիների միջով նայելով մռայլ փողոցին:

29

Տերևի երկու գույները

Սրճարանում երկար նստելն արդարացնելու համար հանքային ջուր պատվիրեց: Արդեն մթնում էր: Մեքենաներն անցնում էին վառած լույսերով: Մարդ կա՞ր սրճարանում: Քիչ: Ու Ներեան տեղը փոխեց: Հիմա ապակե դռանն ավելի մոտ էր նստած, որտեղից ավելի լավ էր երևում մեքենաների անցուդարձը: Նրան ինքնամփոփման հաճելի զգացում էր պարուրում: Միայնակ, քնատ՝ չէր կողմնորոշվում՝ ուր գնալ:

Մեքենաներն անընդմեջ շարժման մեջ չէին, ընթանում էին՝ Սան Մարտին փողոցի լուսացույցին հետևելով: Այդ հանգամանքը Ներեային թեթև հաճույք էր պատճառում ու ավելի տանելի էր դարձնում նրա տըրտմությունը, պաելյայի ձեթահամ տրտմությունը:

Ու հանկարծ մի դռդռացող ավտոբուս անցավ, բայց քաղաքային չէր: Ու Ներեան մեջն էր: Ահա, այդքան տարի առաջ ջահելությանս հետ գնում ենք Սարագոսա՝ իրավաբանականի չորրորդ կուրսում սովորելու, aita-ի՝ ամեն գնով իր աղջկան պաշտպանելու ցանկությամբ-աղաչանքով-պարտադրանքով:

«Ռոնկալեսա» ընկերության ավտոբուսով վաղ առավոտյան գնում էր Պամպլոնա ու ողբում: Ընկերուհիներս, հինգշաբթի օրերի ընթրիքը, մոտոցիկլով զբոսանքները, դիսկոտեկը: Թողնում էր այդ ամենն այն հեռավոր հոկտեմբերին: Ու Սարագոսան էլ նրան չէր հրապուրում: Մի քաղաք, որը ո՛չ լողափ ուներ, ո՛չ ծովախորշ, ո՛չ սարեր. ահավոր է: Ինչպե՞ս կարելի է ծովից այդքան հեռու ապրել: Բայց aita-ն պնդեց՝ ուրիշ տարբերակ չկա, հավատա՛: Ու որքան ավելի շուտ հեռանաս Բասկերի երկրից, այնքան ավելի լավ: Ուր ուզում է՝ թող գնա՝ Բարսելոնա, Մադրիդ, ծախսերի համար թող չմտահոգվի: Խնդիրն ապահով տեղում լինելն էր, ուսումը հանգիստ ավարտելը: Ու քանի որ ընդունվել էր Սարագոսայի համալսարան, այնտեղ էլ գնաց՝ հեկեկալով մինչև Պամպլոնա, որտեղ պետք է փոխեր ավտոբուսը՝ ճամփորդության երկրորդ հատվածն ավելի լավ տրամադրությամբ հաղթահարելու համար: Ինչպե՞ս: Բանն այն է, որ Պամպլոնայում՝ ավտոբուսների կայարանի սրճարանում, կաթով սուրճ խմեց,

կարտոֆիլով ու ձվով տորտիլյա կերավ, ու, գրողը տանի, ստամոքսը կուշտ, կյանքը նորից նրան ժպտաց: Մի տղա, որ Լոգրոնյո էր գնում (թե՞ մեկ ուրիշ տեղ, արդեն չէր հիշում), մոտեցավ նրան՝ սիրահետելով, գրավելով, հույսեր փայփայելով: Ու Ներեան մի քիչ շեղվելու համար, պատի ժամացույցը տեսադաշտից չկորցնելով, նրան հուսադրեց, կեղծ հեռախոսահամար տվեց ու համբուրեց նրա շուրթերը: Տորտիլյան ու տղան նրա առավոտն ավելի ուրախ դարձրին: Քնեց մինչև Տուդելա ու Սարագոսա հասավ՝ սովից մեռնելով, բայց լավ տրամադրությամբ:

Այս քաղաքում միայն մեկ անգամ էր եղել: Իրոք, դժոխային տապի երկու օր ու փռի պես տաք երկու գիշեր անցկացրեց հյուրատանը: Ժամանակ չկորցնելով՝ ցուցակագրվեց համալսարանում ու սկսեց կացարան փնտրել: Սան Ֆրանցիսկո հրապարակի կրպակում գնեց «Էրալդո դե Արագոն» թերթը: Քիչ անց, պահելով վարձակալության մասին հայտարարությունների էջերը, մնացածն աղբամանը նետեց: Բնակարան Դելիսիասում, բնակարան Լաս Ֆուենտեսում, բնակարաններ այստեղ ու այնտեղ: Ոչ մի թաղամասի անուն նրան ծանոթ չէր: Ու շոգ էր: Ու կեսօրվա ժամը երկուսին փողոցում ոչ ոք չկար: Ծիտ էլ չկար կամ ճանճ: Մտավ հեռախոսի խցիկ: Լսափողն այնպես էր շիկացել, որ ստիպված անձեռոցիկով բռնեց: Համարը հավաքեց: Այնքան ցածր գին ասացին նրան, որ չհավատաց, այն աստիճան, որ հարցրեց՝ բնակարանը հենց Սարագոսա քաղաքո՞ւմ է: Ի՞նչ: Քաղաքո՞ւմ է, թե՞ համանուն շրջանի ավանում: Զգաց, որ գծի մյուս ծայրում մի տեսակ շփոթություն առաջացրեց: Հենց քաղաքում է, իհարկե: Մտածեց՝ էս ո՞ւր եմ ընկել: Տաքսի նստեց՝ բնակարանը նայելու համար, քանի որ ուզում էր արագ իր ավան վերադառնալ ու պետք էր նախ կացարանի հարցը լուծել: Տաքսիստը վայրկենապես հասկացավ, թե ուր է պետք գնալ, ինչը Ներեան որպես լավ նշան ընկալեց: Հասկացավ, որ փողոցը ճանապհված է, ու որ այնտեղ կլինեն քաղաքակիրթ վայրին հատուկ բոլոր բաները: Օրինա՞կ: Լապտերներ, մայթեր, խանութներ: Մի պահ ուզում էր տաքսու վարորդին հարցնել՝ հեռո՞ւ է, թե՞ ոչ, բայց լեզուն կծեց: Նախ՝ ամոթից, քանի որ մի քիչ խելք ունեցողն առաջին հերթին քաղաքի պլանը ձեռք բերած կլիներ, հետո էլ, եթե այս տիպը գլխի ընկնի, որ քաղաքը չեմ ճանաչում, աշխարհի շուրջ ինձ կպտտեցնի՝ ուղեվարձն ավելացնելու համար: Բարձրացան դեպի Տոռերո գերեզմանոց: Ձրանցքից այն կողմ անցնելով՝ մի տեղ, որտեղից աղոտ երևում էր գերեզմանոցը, վարորդն ասաց, որ հասան: Վճարեց ու իջավ:

Բնակարա՞նը: Լավն էր: Մաքուր էր, ամենևին մռայլ չէր, պարզ կահավորումով: Բնակարանից բացվող տեսարանը շատ տգեղ էր, բայց դե՛, լսի՛ր, արձակուրդի համար հո չե՞ս եկել: Ճիշտն ասած, Ներեան աստիճաններով բարձրանալիս, դեռ բնակարանի դուռը չբացած, արդեն որոշել էր, որ համաձայնելու է: Հիշում էր մոր տված խրատը: Որ կարևորը, աղջի՛կս, դասերը սկսվելուց առաջ գլխիդ ծածկ ունենաս, հետո արդեն՝ հանգիստ վիճակում, ավելի լավ բնակարան կփնտրես: Նաև նրան ասաց, որ մտնելիս ուշադրություն դարձնի փոստարկղին: Վա՛յ, դե՛, որովհետև աղքատները դրանք չեն խնամում, մինչդեռ բարեկեցիկ մարդիկ աշխատում են դրանք մաքուր ու սարքին պահել, ու իր դեպքում բավական է տեսնել փոստարկղը՝ գաղափար կազմելու համար, թե ինչ կարգի մարդիկ են ապրում այդ տանը: Փոստարկղը, աստիճանների ու պատերի մաքրությունը Ներեայի վրա հրաշալի տպավորություն թողեցին, ու երբ դուռը բացվեց, ու իր ապագա դրացուհու ձեռքը սեղմեց, արդեն ավելի քան համոզված էր, որ տուն է գտել Սարագոսայում:

Մի քանի ամիս ապրեց այդ տանը, բայց գրեթե չտեսավ իր դրացուհուն՝ Ուեսկայից եկած աղջկան: Փաստորեն նույնիսկ չգիտեր՝ ինչով է նա զբաղվում: Հաստատ ուսանողուհի չէր: Ամենավատն այն էր, որ համալսարանը բնակարանից շատ հեռու էր, բարերը, ժամանցի վայրերը՝ նույնպես: Հետո վրա հասան հյուսիսային քամիներն ու մառախուղը, ու այնպիսի տեղը տեղին ցուրտ, մամա՛ ջան: Էլեկտրավառարան գնեց: Առանձնապես չօգնեց. մի-երկու մետր վառարանից այն կողմ, և մարմնի միջով անցնող, ծակծկող ցուրտը նորից վրա էր տալիս: Դրա պատճառով հաջորդ տարի տեղափոխվեց Լոպես Ալյուե փողոցում գտնվող մի բնակարան, որն ավելի լավ էր ջեռուցվում ու լավ տեղում էր, թեև ավելի թանկ էր: Բնակարանի իր դրացիները Տերուելից եկած երկու աղջիկներ էին: Մեկը Ներեայից ավելի երիտասարդ էր, սովորում էր նույն՝ իրավաբանական ֆակուլտետում, երկրորդը՝ բանասիրականում: Առաջին իսկ պահից իրար հավանեցին:

Սարագոսա: Եթե միայն իմանային եղբայրը կամ մայրը: Գրեթե երջանիկ էր՝ բացի առաջին ամիսներից, երբ ցրտից դողացնում էր Տոռերոյի այդ բնակարանում և ասես միայնության ու տրտմության պատանքի մեջ լիներ: Այդ ժամանակ նույնիսկ չէր էլ գիտակցում, որ երջանիկ է: Ընդամենը փորձում էր հնարավոր հաճույքները քամել իր երիտասար-

դությունից: Շատ շուտ ընկերներ ձեռք բերեց: Այդ աստիճանի բաց, հոգով առողջ ու հանգիստ բնավորության տեր մարդկանց ուրիշ ոչ մի տեղ հանդիպած չկար: Ու նա, բարձիթողի չանելով ուսումը (ոչ մի քընություններից չէր կտրվել), ըմբոշխնում էր երեկոները, սիրով զբաղվելը, ալկոհոլը, ավելի քիչ չափով՝ գիշերային դեգերումներն ու մարիխուանան: Ու ընտելացավ առանց ծովի ու մոտոցիկլի ապրելուն, մոռացավ մտահոգիչ ու դրամատիկ բաները, որոնք գուցե չպիտի մոռանար: Լիովին չէր մոռացել, իհարկե: Դրանք կամ մեղմված էին հասնում նրան հեռավորության պատճառով կամ չէին էլ հասնում, մասամբ որովհետև ընտանիքը, հատկապես aita-ն (որ միշտ պաշտպանում էր նրան), թույլ չէր տալիս, որ նրան որևէ վատ լուր հասնի:

Այս գորշ կիրակի օրով «Եվրոպա» հյուրանոցի սրճարանում նայում էր շարվեշարան ընթացող մեքենաներին ու իր գավաթի ու հանքային շշի առջև նստած՝ հիշում էր դրվագներն ու տոնախմբությունները, ուսանողական կյանքի բազում արկածները: Ու նորից ունեցավ շատ անգամ կրկնված, ճաղկող զգացումը: Ու հանկարծ բոլոր լավ հիշողությունները պատկերացրեց ծառերի տերևների տեսքով: Ո՞ր ծառերի: Ի՞նչ կարևոր է: Այն տերևների նման, որ մի կողմից մի գույն ունեն՝ աչքին հաճելի փայլուն կանաչ, մյուս կողմից՝ ուրիշ, ավելի խամրած՝ մեղքի ու խղճի խայթի կանաչ: Նայում էր իր ձեռքերին ու ափսոսում, որ երիտասարդ է եղել ու երջանիկ:

Մայրը հեռախոսով նախատում էր, որ չի այցելում ընտանիքին: Իրենք լքված էին զգում հիմա, երբ ավանի հարևանները նրանց հետ այլևս բառ նույնիսկ չէին փոխանակում: Բայց մեկ րոպե անց հայրն էր լսափողը վերցնում ու ցածրաձայն ասում էր՝ չգա՛ս, աղջի՛կս, մտքովդ էլ չանցնի. մենք ինքներս կգանք քեզ տեսնելու, ու եթե որևէ բանի կարիք ունես, ինձ ասա՛: Գժի պես էր սիրում աղջկան: Aita-ս, ծերուկս: Ու նա Սարագոսայում մտածում էր, որ հայրը նրան ուղարկել էր դրսում սովորելու՝ հեռու պահելու համար այն հետապնդումներից, որոնց ենթարկվում էր: Ահաբեկումների ու սպառնագրերի մասին գիտեր, նաև գիտեր, որ հայրը նախապատրաստական աշխատանքներ էր ձեռնարկել՝ ընկերությունն ավելի հանգիստ վայր տեղափոխելու համար: Այդուհանդերձ, տեղյակ չէր մյուս բաների մասին: Մայրը պատմեց, երբ aita-ին արդեն հուղարկավորել էին: Դրամաշորթական նամակներից մեկում Ներեայի վերաբերյալ մանրամասներ

էին թվարկել: Բոլորը հստակ տեղեկություններ էին. իր այն ժամանակվա ուսման վայրը, ընկերական շրջապատի հինգշաբթի օրերի ընթրիքները Սան Սեբաստիանի Հին թաղամասում: Նույնիսկ տեղյակ էին, թե ինչ գույնի էր իր մոտոցիկլը, ու որտեղ էր սովորաբար կանգնեցնում:

30

Պարպել հիշողությունը

Հանքային ջուրն էլ խմեց: Յոթն անց տասնհինգին որոշեց վճարել ու դուրս գալ, բայց… Բայց ի՞նչ: Ներքին մի ձայն ասաց. «Ներեա՛, հո հիմար չե՞ս, մտքովդ չանցնի միայնակ փակվես տանը՝ հուշերի մեջ սուզված: Պարպի՛ր հիշողությունդ, որ այն քեզ չտանջի: Մտածի՛ր. գիշերը երկար է, ու նոյեմբերը մռայլ, զզվելի ամիս է»:

Այդ պահին զգաց, որ տխուր, շատ տխուր մի ծանրություն նրան գամել էր աթոռին: Մատուցողին ցույց տվեց դատարկ շիշը՝ ի նշան, որ նորը բեր, թեև ծարավ չէր: Պարզապես չէր ուզում նստած մնալ՝ առանց մի բան վերցնելու:

Ներեան, մայրն ու եղբայրը՝ երեքն էլ, սպանվածի արբանյակների էին վերածվել: Ուզած-չուզած, նրանց կյանքերն արդեն տարիներ շարունակ պտտվում էին այդ հանցագործության շուրջ, այդ անվերջանալի ինչի՞ շուրջ, գրո՜ղը տանի, դե՛, տխրության, ցավի շուրջ, ու դրան պետք է վերջ դնել, բայց ես չգիտեմ, թե ինչպես: Հազիվ մի գաղափար էր հասունացել, այն էլ վրան քար գցեցին:

Մատուցողը բերեց ջուրը, սառույցով լի գավաթն ու կիտրոնի մի շերտ: Ու Ներեան, երթևեկությանը նայելուց հոգնած, իր այդ մելամաղձից ու ձանձրույթից նեղված, նույնիսկ մոռացավ շնորհակալություն ասել: Իր մըտքերով էր տարված, կարծես բանտում ապաշխարած մի ETA-ցու դիմաց նստած՝ ասեր. ընտանիքս չգիտի, թե երբ ու որտեղ եմ իմացել: Նրանք կարծում են, թե հարևանուհիներս են ասել, որոնց պատմել էր սրճարանատիրոջ տղան: Մյուս կողմից էլ՝ ի՜նչ նշանակություն ունի: Մորն ասել էր, որ ընկերուհիների հետ էր, և ուշ գիշերին էր տուն հասել, ուստի չէր իմացել կատարվածի մասին:

Սուտ էր: Ժամը հինգի մոտ՝ գրադարանից դուրս գալիս, լսեց, որ մահափորձ է եղել: Մեկը իր մեջքի հետևում հարցրեց՝ որտե՞ղ: Բայց Ներեան, որ տուն էր շտապում՝ իրերը թողնելու ու պատրաստվելու անասնաբուժական ֆակուլտետում կազմակերպվող խնջույքին, ուշադրություն չդարձրեց երկխոսությանը: Հետո ի՞նչ. ևս մի մահափորձ: Նա պարզապես չհե-

տաքրքրվեց լսածով: Վաղը, եթե պետք լինի, թերթերից կիմանամ: Մութ բնակարանում ոչ ոք չկար: Ցնցուղի տակ կանգնեց՝ մազերը չթրջելով, քանի որ դրսում ցուրտ էր, ու անձրև էր գալիս: Այդ ընթացքում իր հարևանուհին եկավ: Բարև՛, բարև՛: Բայց ոչ մի խոսք՝ ահաբեկչության մասին: Ամենայն հավանականությամբ, Շավիերը հեռախոսով դեռ չէր կապվել բարի տիրոջ հետ կամ էլ նա բնակարանի զանգը տվել էր այն պահին, երբ տանը ոչ ոք չէր եղել: Մինչև ժամը վեցը Ներեան արդեն պատրաստ էր: Երկար չէր հարդարվում: Այդ տարիներին շպարվելու այդքան սիրահար չէր, որքան հիմա: Մի քանի կաթիլ օծանելիք, ու վերջ: Իր ընկերներից մեկը՝ (ի՞նչ էր անունը) Խոսե Կարլոսը, եկավ հետևից, ու միասին դուրս եկան:

Իրենց խմբում մի տասը-տասներկու հոգի էին. Ներեան ոմանց չէր ճանաչում: Ու այդպես հավաքվում էին Մաեստրո Տոմաս Բրետոնի փողոցի բարում՝ ռիթմի մեջ մտնելու համար, որ երբ ժամը գա (Ներեան չգիտեր՝ երբ), մի քանի մեքենայով տեղ հասնեն: Դե՛, ասում էին, չէ՞, որ անասնաբուժական ֆակուլտետը գրողի ծոցն է: Ներեան էլ գաղափար չուներ, թե դա որտեղ է: Հարցրեց՝ հնարավո՞ր է քայլելով հասնել, ծիծաղեցին: Ներեան մի տեսակ լրջացավ ու ավելի լարվեց: Տղաներից մեկը մտածելով, որ նեղվել է, նրանից ներողություն խնդրեց: Աղջիկներից մեկն էլ, թե՝ բա՞ն է պատահել: Խուսափողական պատասխան տվեց. չէ՛, բան չկա, պարզապես: Մյուս աղջիկը հարցրեց՝ լավ չէ՞, ու նա նորից ասաց՝ ո՛չ: Ի՞նչ պիտի ասեր:

Իր հոր լուսանկարը պատահաբար տեսավ հեռուստացույցով, որն ամրացված էր պատի վերին մասում՝ դարակի վրա: Ու հասկացավ: Ենթադրե՞ց: Ո՛չ, առաջին իսկ պահից հաստատ գիտեր: Պատկերի տակ հայտնված լուսագրերը հաստատեցին. ԳՈՐԾԱՐԱՐԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԻՊՈՒՍԿՈԱՅՈՒՄ: Ներեան, որի շուրջը ծիծաղում էին, պարզունակ ու երջանիկ խոսակցություններ էին վարում, թաքցրեց իր վիճակը: Սիրտն այնքան ուժգին էր բաբախում, որ կրծքով մեկ սուր ցավ էր անցնում: Հենց իրեն հանգիստ թողեցին, հայացքը կրկին հառեց հեռուստացույցին: Էկրանին խոսող մարդիկ էին, որոնց չէր կարող լսել բարում տիրող աղմուկի պատճառով: Նրանք խոսում էին խոսափողների առջև: Տեսավ սպիտակ խալաթով մի մարդու, հետո՝ լուրջ դեմքով lehendakari* Արդանսային:

* Lehendakari (բասկ.), Բասկերի երկրի Ինքնավար կառավարության նախագահի պաշտոնի անվանումը:

Վերջում էլ մի փողոց ու շենքի ճակատային մասը տեսավ, որը դժվար չէր ճանաչել:

Այդ ընթացքում չկարողացավ մեզը պահել: Լավ էր՝ սև ջինսով էր: Շարունակեց իրեն բնական ձևով պահել: Այս ամենը պատմում է երևակայական ահաբեկչին, որ իբր իր առջև նստած է «Եվրոպա» սրճարանում՝ հանպատրաստից ու մտացածին այդ ամոքիչ հանդիպմանը: Մի հինգ րոպե մնաց՝ սեղանի մոտ նստած: Նույնիսկ ձևացրեց, որ ժպտում է՝ համապատասխան ռեակցիա տալու համար տղաներից մեկի կատակին, ու շինծու հանգստությամբ մինչև վերջ խմեց իր գարեջուրը: Այսքան տարի անց բոլոր այդ մանրամասները շիկացած ածուխի պես այրվում են մարմնում: Երբեք որևէ մեկը չէր եղել, որին այդ մասին կարողանար պատմել: Իր ընտանիքի՞ն: Անհնար էր: Թեև նույն դժբախտության զոհն էին, չէին հասկանա: Կիկեի՞ն: Նա չափից շատ էր զբաղված իր բիզնեսով՝ հետաքրքրվելու համար ինչ-որ պատմություններով, առավել ևս, որ դրանք տեղի էին ունեցել մինչև մեր ծանոթությունը:

Աննկատորեն նշան արեց այն տղային՝ Խոսե Կարլոսին, որը թեև իր զույգը չէր, բայց դե՛, բարում հավաքված ուրիշ ոչ մեկի հետ այդքան մոտ չէր: Տղան հասկացավ, որ նա ցանկանում էր իր հետ առանձին զրուցել, կամ էլ չգիտեմ՝ ինչ էր հասկացել, եթե, իհարկե, ընդհանրապես որևէ բան հասկացել էր: Ամեն դեպքում, Ներեայի հետևից դուրս եկավ փողոց ու հետևից գնաց համարյա մինչև անկյունը: Արդեն մթնել էր: Ներեան, ազդրերը թաց, բարից արդեն հեռու՝ շրջվեց: Գրկեց իր ընկերոջն ու փղձկաց: Աստվա՛ծ իմ, ինչպես էր հեկեկում: Տղան ապշած էր: Ի՞նչն է խնդիրը, ի՞նչ է պատահել: Նրա՞նք են նեղացրել: Ներեան՝ aita-ս է: Միակ բանը, որ կարողանում էր արտաբերել, aita-ս է: Ու տղան զարմացած՝ ի՞նչ ես ասում, ի՞նչ է եղել: Մինչև որ Ներեան կարողացավ շունչ առնել ու խոսել: Ընկերոջը խնդրեց մինչև բնակարան ուղեկցել:

Նաև խնդրեց, որ իրեն մենակ չթողնի, գիշերը մնա հետը: Այո՛, ինչպես կուզես: Բարձրացան բնակարան: Ներեան առաջին հերթին մտավ լոգարան: Այդ պահին բնակարանի իր դրացին եկավ՝ ասելու, որ տուն զանգի, որ շտապ է: Ներեան ասաց՝ այո՛, ETA-ն սպանել է հորս: Աղջիկը, որ տեղյակ չէր, ձեռքը գլխին տարավ ու լաց եղավ: Մյուսը վախեցած՝ ի՞նչ է եղել, ի՞նչ է եղել, դուրս թռավ միջանցք: Մի շատ միամիտ բան հարցրեց. «Հայրդ ռազմական ոստիկա՞ն էր», ու նույնպես սկսեց հեկեկալ: Ներեան

աղաչեց-հրամայեց Խոսե Կարլոսին, որ նրա հետ իր սենյակ գնան: Տուն չես զանգելո՞ւ: Ներեան էլ խնդրեց, որ հետը գա, որ իրեն մենակ չթողնի: Պառկեցին, ու տղան, թե՝ հորդ սպանել են, գրո՛ղը տանի, սպանել են, ու չկարողացավ սիրով զբաղվել: Բլբլացնում էր, հայհոյում, հետո քնեց: Իսկ Ներեան անկողնում, մթի մեջ մի սիգարետը մյուսի հետևից էր ծխում, մինչև դատարկեց և՛ իր ծխախոտի տուփը, և՛ ընկերոջինը: Աշխարհի ծխախոտը կծխեր:

Վերջապես լույսը բացվեց: Շերտավարագույրի ճեղքերը լուսավորվեցին նոր օրվա փայլով: Ներեան մի պահ թեթևություն ապրեց, ասես ապաստան էր գտել այդ նոր օրվա մեջ, որին նախորդածը, գիտեր՝ հնարավոր չէր մոռանալ: Ասես երկրաշարժից կամ հրդեհից կամ որևէ կործանարար երևույթից հետո պարզվեր, որ ողջ մնացած մարդ կա փլատակներում: Դե՛, ինձ հատուկ մտքեր են: Քանի՞սն էր, առավոտվա յո՞թը, ո՞ւթը: Սենյակը ծխի մեջ կորած էր, անխնա թափ տվեց Խոսե Կարլոսին, որը երանության մեջ քնած էր նրա կողքին: Ու երկար, մազոտ ոտքերով տղան արագ հագնվեց ու վազելով դուրս թռավ: Այնքան պատրաստակամ էր իմ ուզածն անել, որ մոռացավ հաճելի բաներ ասել ու հրաժեշտի համբույր տալ:

Հետո, երբ մենակ էի, մի շատ տարօրինակ բան պարզվեց. ամեն ինչ նորմալ էր: Սովորական առավոտվա նման օդում կախվեցին փողոցի խճողման ձայները, մայթերով քայլում էին հովանոցներով անցորդները: Ուրի՞շ: Մարդիկ իրենց գործերով էին գնում այնպես, ասես նախորդ օրը ահաբեկչություն եղած չլիներ: Պատուհանից նայելով՝ մերկ Ներեան ինքն իրեն համոզեց, որ աշխարհում մի դավադրություն կա իր դեմ: Ու ատեց առավոտն ու անձրևը և դիմացի տունն ու իր շնիկի հետ փողոցով անցնող տիկնոջը: Թվում էր, որ ամեն ինչ ասում է իրեն՝ այո՛, հորդ սպանել են, և ի՞նչ: Բզեզներն ու հավերն էլ են մեռնում: Այդ միտքը մեծ ցավ պատճառեց նրան: Հանկարծ այնպիսի զգացում ունեցավ, ասես մի վատ երազից արթնացած՝ է՛լ ավելի վատ երազի մեջ ընկներ: Պայուսակից փոքր հայելի հանեց՝ առաջին անգամ նայելու համար իր՝ ահաբեկչության զոհի աչքերին, քթին, ճակատին: Մարմնով զգաց պատուհանից եկող առավոտվա զովությունն ու հանկարծ հասկացավ, որ երեկ երեկոյան պատահածն իրականություն էր, ու որ դա դեռ ամենավատը չէր, ամենավատն առջևում էր, ու նա չէր կարողանալու դա երկար հետաձգել: Ուժգին ցնցվեց՝ մտածելով, որ պետք է զանգել մորը:

Ոչ ոք չգիտեր, ոչ ոք չի իմանա: Ոչինչ չկերած, չլվացված՝ հասավ Գոյա պողոտայի հեռախոսախցիկին: Առավոտվա ութն անց կեսի մոտ էր: Բայց մինչև տասն անց չզանգեց: Փողոցով գնում-գալիս էր կամ աննպատակ քայլում էր Ֆերնանդո էլ Կատոլիկո ու Գրան Վիա փողոցներով ու հետ դառնում ու ամեն անգամ, հասնելով հեռախոսախցիկին, կողքով էր անցնում ու շարունակ թրջվում էր անձրևի տակ ու վախից ցնցվում, որ պետք է մորն ասեր, որ չէր ուզում ավան գնալ, թեև ոչ քննություն ուներ, ոչ էլ՝ շտապ գործ: Եվ ուրե՞մն: Խնդիրն այն է, որ չեմ ուզում տեսնել ո՛չ մարմինը, ո՛չ դագաղը, ո՛չ էլ գերեզմանը: Դա ինձ համար սարսափելի է: Նաև չեմ ուզում, որ ինձ կապեն այդ սպանության հետ, որ գան հարցազրույց վերցնելու ու լուսանկարեն, ու ամբողջ Սարագոսան իմանա, թե ես ով եմ: Անվերջ կրկնում էր մոր հետ խոսակցության հնարավոր տարբերակները: Նրան էս կասեմ, էն կասեմ: Գրան Վիայի կրպակում թերթի առաջին էջում իր հոր դեմքը տեսավ ու քիչ էր մնում՝ գներ թերթը, բայց չհամարձակվեց: Ինչո՞ւ: Շատ էր ամաչում:

Միայն յոթ օր անց գնաց ավան, երբ հայրն արդեն հուղարկավորված էր ու արդեն ETA-ի վերջին մեռած զոհը չէր: Ama-ն ինձ այդպես էլ չներեց: Գիտեմ: Դա ինձ ասելու կարիք էլ չունի: Ներեան տարիներ շարունակ նկատում էր ժեստերի, որոշակի բառեր արտաբերելու տոնի, երկրորդական խնդիրների վերաբերյալ կշտամբանքների մեջ: Ու այս ամենը Ներեան շատ էր ցանկանում պատմել բանտում ապաշխարած ահաբեկչին՝ իր միջից հանելու համար, փսխելու համար հին, բայց դեռ չմարած ածուխը: Ու հնարավոր չէ, քանի որ պարոն բժիշկն ասում է, որ չի կարելի, ու Ներեան չի ուզում խնդիրներ ունենալ ընտանիքի հետ. հանգիստ թողնենք այս խնդիրը:

— Հաշիվը կբերե՞ք:

31

Երկխոսություն՝ մթան մեջ

Խոհանոցում երեկոյան կողմ զայրույթը թափեց ամուսնու վրա: Նույնիսկ չհամբերեց, որ կոշիկները հանի: Հնարավո՞ր բան է՝ ETA-ն նրան նամակներ է ուղարկում, իսկ նա կնոջը բան չի ասում:

— Կարծում էի, որ մենք ամեն ինչ կամ գոնե ամենակարևոր բաների մասին իրար պատմում ենք:

Աթոռին նստած՝ Չատոն անհողդողդ արձակում էր կոշիկի կապերը՝ չնայելով Բիչո՛րիին, որը, իր դիմաց կանգնած, բարկությունից կարմրած դեմքով շարունակ խոսում էր: Էլ չասած բան չմնաց: Իսկ նա երկար աշխատանքային օրվա ավարտին հոգոց հանեց հատակի ուղղությամբ, ոնց որ ասեր՝ տեսնենք՝ որքան է շարունակվելու այս տեղատարափը:

— Ինչպե՞ս իմացար:

— Միրենից:

— Ուզում էի հարցը լուծել-վերջացնել, որ դու չանհանգստանաս:

Ու Բիչո՛րին շարունակեց իր դառը կշտամբանքները: Որոշ ժամանակ անց ամուսինն ընդհատեց նրան: Ընթրելու ի՞նչ կար:

— Կերուսուս: Ինչո՞ւ ես հարցնում:

— Որովհետև ամենևին սոված չեմ:

Ընթրիքի ժամանակ համարյա չխոսեցին՝ յուրաքանչյուրը սեփական մտորումների մեջ խորացած: Չատոն սահմանափակվեց երեք բան ասելով. որ կինը, իր կշտամբանքներով ու գանգատներով չի հեշտացնում խնդիրը, որ այս կարգի գործերը գաղտնի են արվում, և որ բերանբաց Խոշիանի լեզուն արժեր կտրել՝ իր կնոջն ու դե՛, արի՛ ու իմացի՛ր, է՛լ ում պատմելու համար:

Խոհանոցից ուղիղ անկողին գնաց: Ասում էր՝ դինջանալու: Բիչո՛րին մնաց ամանները լվանալու: Ժամանակ առ ժամանակ Ներեան մորը հիշեցնում էր, որ ընտանիքի գնողունակությունը թույլ էր տալիս սպասք լվանալու մեքենա գնել, բայց աղջկա փաստարկները նրա վրա չէին ազդում: Բիչո՛րին ասում էր, որ ո՛չ, որ երկու ձեռք ունեցողի համար այդ սարքը պարզապես անիմաստ ծախս է, որ շատ ջուր ու հոսանք է սպառում, ու երբ ամուսնանաս, տանդ ինչ ուզում ես, արա՛, իսկ ինձ հանգի՛ստ թող իմ տանը:

Չատոն ընտանեկան վեճերին սովորաբար չէր խառնվում: Սպասք լվացող մեքենա ունենալ, թե ոչ, նրա համար մեկ էր: Արթնանում էր վաղ առավոտյան ու երեկոյան էլ կանուխ էր անկողին մտնում: Աշխատանքային օրերին՝ առավոտվա ժամը վեցին, իսկ երբեմն՝ ավելի շուտ, արդեն գրասենյակում իր գործերով էր զբաղվում: Հանգստյան օրերին էլ, քանի որ կիրակնօրյա հեծանվավազքի մասնակից էր, արևածագից առաջ արդեն ոտքի էր: Երբեմն, մուս թղթախաղով տարված, գուցե մոռանար ժամացույցին նայել, բայց յուրահատուկ այդ դեպքերից բացի՝ սովորաբար գիշերվա տասին իր համար օրն արդեն ավարտված էր:

Նրան միայն բասկյան հեռուստատեսությամբ ցուցադրվող պելոտայի խաղերը կստիպեին ոտքի վրա մնալ այդ ժամերին: Խաղերը նայում էր այնքան, մինչև գալիս էր պոչը քաշելու պահը, քանի որ հեռուստացույցի տերը Բիչո՛րին էր, որը սիրում էր հաղորդումները միայնակ դիտել:

Ընթրիքն ավարտելով՝ Չատոն պառկեց, ինչպես միշտ, Բիչո՛րիի կողմի վրա: Ամուսնության առաջին օրից նրա համար տաքացնում էր անկողինը: Ամռանը՝ նույնպես: Մի սովորություն, որի մասին երբեք չէին պայմանավորվել, ու որը նա երբեք չէր մոռանում՝ նույնիսկ ամուսնական վեճերի օրերին: Երբ Բիչո՛րին ժամը տասնմեկին կամ տասներկուսին անկողին էր մտնում, նա քնած վիճակում տեղաշարժվում էր իր հատված:

Բիչո՛րին մտավ անկողին ու թեև սովորաբար պառկելիս թերթում էր կանանց որևէ ամսագիր, այս անգամ անմիջապես անջատեց մահճակալի սեղանիկի լամպը: Մթի մեջ նստած մնաց՝ թևերը ծալած, անկողնագլխին հենված: Ամուսինը, որ սովորաբար խոռոցնում էր, այս անգամ լուռ էր, ինչից Բիչո՛րին հասկացավ, որ քնած չէ:

— Ինչի՞ն ես սպասում, պատմի՛ր:

Չատոն չէր պատասխանում: Բայց Բիչո՛րին գիտեր-զգում էր, որ արթուն է, ու հարցը չկրկնեց: Մի քանի վայրկյան անց ամուսինը, ակնհայտ անհավես ու ի նշան դժգոհության, լեզուն ճպպացնելով, կնոջը պատմեց իր հետապնդման հիմնական մանրամասները՝ չթաքցնելով ո՛չ թվերը, ո՛չ էլ իր ճամփորդությունը Ֆրանսիա: Սակայն նույնիսկ բառ չասաց վերջին նամակում Ներեայի վերաբերյալ ակնարկների մասին:

— Ի՞նչ ես անելու:

— Սպասելու եմ:

— Ինչի՞ն:

Բիչո՛րին մթան մեջ զգաց, որ ամուսինն իր կողմ շրջվեց:

— Այս տարվա համար նրանց վճարել եմ, ու ինձնից ավելին չեն պոկի: Այդ սրիկաներն ահռելի գումար են ուզում. հենց այս պահին, երբ ես խըրված եմ վարկերի մեջ ու գնումներ ունեմ անելու, ու մի քանի հաճախորդ էլ ինձ պարտք են ու չեն վճարում: Հիշի՛ր նաև, որ պիտի Սան Սեբաստիանի բնակարանի մի մասը վճարենք: Ո՞վ գիտե, երևի սխալմունք է եղել: Գուցե այդ տխմարներից մեկը, որ դրանց հաշիվներով է զբաղվում, վճարումս չի նշել կամ սխալ տեղ է նշել: Ո՞վ կարող է փաստել, որ այն տիպը, որին տվեցի ծրարը, իրեն չի պահել գումարը՝ իր քեֆին ծախսելու համար: Կամ էլ գուցե Խոշիանն իրավացի է, ու երկրորդ նամակը ուրիշին է ուղղված եղել: Կարծում եմ՝ հիմա ավելի լավ է բան չանել ու սպասել, որ խնդիրը ժամանակի ընթացքում պարզվի: Իսկ եթե սխալվում եմ, նրանք էլի կպահանջեն:

— Ճիշտն ասած, ես մի քիչ վախենում եմ:

— Վախը ոչ մի բանի չի օգնի:

— Դրանք լավ մարդիկ չեն ու ավանում շատ ընկերներ ունեն:

— Ավանի մարդիկ ինձ ճանաչում են: Ես տեղացի եմ, բասկերեն եմ խոսում, քաղաքական հարցերին չեմ խառնվում, մարդկանց աշխատանք եմ տալիս: Ամեն անգամ, երբ գումար են հավաքում տոների, ֆուտբոլային թիմի կամ որևէ բանի համար, Չատոն առաջինն է քսակը բացում: Եթե դըրսից մեկը որոշի ինձ վնասել, հաստատ նրան թույլ չեն տա: Կասեն՝ նա մերոնցից է: Բացի այդ՝ ինձ նման մեկի հետ կարելի է խոսել, չէ՞:

— Շատ վստահ ես խոսում:

— Չկարծես, որ ոտքերս ամպոտ են: Որոշ նախազգուշական միջոցներ եմ ձեռնարկել: Աշխատավայրում ապահով եմ: Գիտեմ, թե ոնց եմ պաշտպանվելու:

— Չէ հա՞: Ինչպե՞ս: Դարակում ատրճանա՞կ ես պահում:

— Դարակում ինչ եմ պահում՝ իմ գործն է, բայց քեզ ասում եմ, որ այնտեղ ապահով եմ: Ասում ես՝ կբարդանա՞: Այդ դեպքում բեռնատարներն ուրիշ տեղ կտանեմ: Լա Ռիոխա կամ այդ կողմերը: Երիտասարդ ժամանակ ավելի քչով սկսեցի, ու տե՛ս, որ կարողացա մի բանի հասնել:

— Դե՛, չնայած ավանից ես, չեմ զարմանա, որ բանվորներիցդ մեկը քո տվյալները ETA-ին փոխանցած լինի:

— Հնարավոր է:

— Մյուս գործարարների հետ խոսե՞լ ես:

— Ինչի՞ համար: Հաստատ բոլորը վճարում են: Առիսաբալգա եղբայրներից մեծին ակնարկեցի: Տեսա, որ խոսքը կտուրը գցեց: Նման խնդիրները, ասում եմ քեզ, ամեն մարդ ինքնուրույն է լուծում:

Բիչո՛րին սահեց վերմակի տակ ու պառկեց մեջքի վրա: Լսվում էր փողոցի խուլ աղմուկը, երբեմն՝ մարդկանց ձայներ, աղբատար մեքենայի անցնելը: Զույգը, արդեն մեջքը մեջքին, հետույքը հետույքին տված, պառկած էր, երբ Չատոն, դեմքով դեպի պատը, էլ իրեն չզսպելով՝ բերանից մի բան թռցրեց: Ու զգացվում էր, որ շատ երկար ժամանակ էր լեզվի ծայրին.

— Ուզում եմ, որ Ներեան դրսում սովորի: Որտեղ ուզում է՝ լինի, բայց դրսում՝ ամառվանից հետո:

— Լսի՛ր, դա ի՞նչ կապ ունի:

— Կապ ունի այնքանով, որ ուզում եմ, որ աղջիկը դրսում սովորի:

— Հետը խոսե՞լ ես:

— Ո՛չ: Նրան տեսնես՝ կարող ես արդեն հող նախապատրաստել:

Լռեցին: Պատշգամբի տակով քեֆչիների խումբ անցավ: Հետո լռություն տիրեց, որը մի քանի վայրկյան խախտվեց եկեղեցու ժամազանգով: Չատոն, հակառակ իր սովորության, ամբողջ գիշեր չխռռացրեց:

32

Թղթեր և իրեր

Ու մինչ նրան ծածկում էին սալաքարով, Բիչո՛րին, աչքերը չոր, քանի որ այլևս լաց չեմ լինելու, նույնիսկ եթե աչքերս սոխ մտցնեն, մտածեց՝ մյուս անգամ այս անցքի մեջ լույս կթափանցի, երբ ինձ թաղելու լինեն: Տանջում էր սևեռուն մի միտք, որ այս մարդը հետը մի պարկ գաղտնիք է գերեզման տարել:

Ավազա՛կ. հաճախ էր այս մեղադրանքը նրան ուղղում, հատկապես գերեզմանատուն իր առաջին այցերի ժամանակ:

— Ինձ երանության մեջ էիր պահում: Կարծում եմ, որ քեզ հետ կատարվածի նույնիսկ կեսն էլ ինձ չես պատմել: Չատիտո՛, այն օրը, երբ ինձ կողքդ դնեն, դու ինձ լի՛քը բաներ պիտի պատմես:

Նախքան տուն վերադառնալը՝ նրան ներում էր: Միշտ: Ո՞նց չներեր: Խեղճ Չատոն այնքա՜ն բարի մարդ էր, այնքա՜ն էր մեզ պաշտպանում: Ու այնքա՜ն համառն էր՝ ավելացնում էր փոխված ձայնով, որ ինքն իրեն սիրտ տար ու հավատար, թե մեկ ուրիշն էլ էր իր կարծիքին:

— Քեզ սպանեց ETA-ն ու քո պնդաճակատությունը:

Գործարարը վերացավ, ընկերությունն էլ՝ հետը: Տասնչորս գործազուրկ: Բիչո՛րին ու Ներեան քանի անգամ էին Շավիերից լսել, թե այդպես են ահաբեկիչները պաշտպանում բանվոր դասակարգի շահերը: Փակեց բիզնեսը. ճարն ի՞նչ, նախապես մորը հարցնելով՝ կցանկանա՞ր ամուսնու գործը շարունակել: Ե՞ս: Նույն հարցը Ներեային ուղղեց, երբ աղջիկը վերջապես բարեհաճեց ավան գալ: Ե՞ս: Դե՛, տղան էլ ցանկություն չուներ: Ֆինանսական խորհրդատվական գործակալության օգնությամբ վաճառեցին այն ամենը, ինչ հնարավոր էր, մնացածն էլ մետաղի ջարդոն դարձավ:

Շավիերը ճաղերին մի հայտարարություն ամրացրեց. «Փակ է ձեռնարկատիրոջ մահվան պատճառով»: Մայրը, մի պահ իր թուլությունից սթափվելով, շշնջաց, որ գրի. «Փակ է ձեռնարկատիրոջ սպանության պատճառով»: Չգրեց: Իսկ աշխատակիցնե՞րը: Ոչ ոք չեկավ հոգեհանգստին: Սան Սեբաստիանում հուղարկավորմանը երկու հոգի եկավ:

Օրեր անց աշխատակիցներից մեկը՝ որպես կոլեկտիվի ներկայացուցիչ, մոտեցավ ձեռնարկատիրոջ տղային՝ հարցնելու, թե երբ պետք է նորից աշխատանքի անցնեն: Նույնիսկ այդ ժամանակ աշխատակիցը չհիշեց, որ պետք է ցավակցել: Շավիերը նրան նայեց խղճահարությամբ ու զզվանքով: Սրանք կարծում են, որ տերը մեռավ, ոչ մի բան չի՞ փոխվելու: Պատասխանեց դասախոսական տոնով ու բարձրաոճ բառերով: Ու քանի որ աշխատողը, բացատրություններին խուլ, պնդեց, որ ուզում է իմանալ՝ երբ պետք է նորից գործի անցնեն, Շավիերը, արդեն ոչ այդքան համբերատար, ասաց, որ ինքը սովորական բժիշկ է ու բավականաչափ գիտելիք չունի տրանսպորտային ընկերությունն աշխատեցնելու համար:

Արդեն բավականաչափ գլխացավանք էր գրասենյակի թղթերը վերանայելը, բանկերի հետ շփվելը, պատվերների չեղարկումը (մի քանիսը՝ արտասահմանյան), գույքի վաճառքը, ընկերության դեմոնտաժն ու հազար ու մի բյուրոկրատական խոչընդոտների հաղթահարումը, ուստի ի վերջո հիվանդանոցի գործընկերոջ խորհրդով ամենը հանձնեց մասնագետների ձեռքը:

Նույն գործընկերը նրան խորհուրդ տվեց, որը Շավիերը մորը փոխանցեց. հնարավոր լուծում գտնել՝ աշխատատեղերը պահպանելու համար: Ո՞րն էր լուծումը: Ընկերությունը վաճառել աշխատողների համար բարենպաստ ֆինանսական պայմաններով:

— Խոսք անգամ չի՛ կարող լինել:

Բիչո՛րին հանկարծ մոռացավ իր սուգը: Որդուն, թե՝ ինչպե՞ս կարող էր նման անհեթեթ բան մտածել: Նրանք այդքան գործադուլ են արել՝ որոշ դեպքերում ապակիներ փշրելով, մուտքի մոտ պիկետներ անելով, ու սպառնացել են aita-ին: Դրանց մեջ կար մեկը՝ ոմն Անդոնի՝ նրանց պարագլուխը, որ ման էր գալիս՝ բաճկոնին կպցրած LAB* արհմիության իր տարբերանշանը: Շատ ագրեսիվ պահվածքով, մշտապես առաջին դերում էր լինում, ու միայն նա հերիք էր, որ Չատոն բազում գիշերներ անքուն մնար: Չատոն նրան գործից դուրս էր շպրտել, բայց նա մի քանի ժամ անց հայտնվել էր արհմիության երկու ստահակների հետ ու պարտադրել իր վերականգնումը: Իսկ մյուս աշխատողների մասին ի՞նչ կարելի է ասել:

* LAB – Langile Abertzaleen Batzordeak (բասկ.), «Հայրենասեր բանվորների հանձնաժողով», ձախ ազգայնականներին կից բասկ ազգայնականների արհմիություն է, որը բասկերի ազգային ազատագրական շարժման մաս է:

Ոմանք, այո՛, լավ մարդիկ են, բայց սպանությունից հետո սատարում, կարեկցանք չցուցաբերեցին: Կարող էին, չէ՞, ցավակցության մի երկտող ուղարկել մեզ: Դա էլ չարեցին: Նրանցից միայն երկուսը երևացին Պոլյոե գերեզմանոցում ու ծպտուն չհանեցին:

Հետևաբար.

— Նախընտրում եմ ամեն ինչ ջուրը գցել:

Շավիերը մեքենայով տարբեր արկղեր բերեց՝ փաստաթղթերով, հաշիվ-ապրանքագրերով ու ամեն տեսակի թղթերով, որոնցից մի մասն անթերի կերպով դասավորված էր թղթապանակներով, մյուս մասը՝ առանձին-առանձին: Հանկարծ այնպես չստացվի, որ… Որ ի՞նչ: Դե՛, որ օգտվեն անտեր վիճակից ու մտնեն՝ գողանալու ու ոչնչացնելու նպատակով: Պարտապաններ, որ կցանկանային ոչնչացնել իրենց պարտքի ապացույցները: Խնդրի նվիրյալները, որոնք շարունակում են ատել՝ չնայած սպանությանը:

Ներեան, թե.

— Պարանոյիկ ենք դառնալու:

— Հնարավոր է:

Թղթերի բոլոր այդ տրցակները Բիչո՛րիի մեջ անտարբերությունից զատ ուրիշ զգացում չարթնացրին: Ասեք՝ որտեղ պիտի ստորագրեմ, ու պրծավ-գնաց: Ընկերության մասին լսել չէր ուզում: Ընկերությունը, ասում էր, Չատոյի մի մասն է, ճիշտ այնպես, ինչպես իր տնկված ականջներն էին ու հեծանվի հանդեպ սերը: Շավիերն ուշադիր նայեց մորը՝ կատակո՞ւմ է: Ո՛չ: Բիչո՛րին մռայլ կանխագուշակում էր, որ եթե զավակներն իրենց վրա վերցնեն ընկերությունը, նրանք հոր ճակատագրին են արժանանալու:

Փոխարենը նա ցանկություն հայտնեց պահպանել բոլոր այն անձնական իրերը, որոնք գտնվում էին հանգուցյալի գրասենյակում: Մի երեկո Շավիերը դրանք մի քանի ստվարաթղթե արկղերով բերեց Սան Սեբաստիանի բնակարան: Որոշ ժամանակ անց մայրն ու Շավիերը ամբողջը տարան Ներեայի տուն, որտեղ դրանք պահվում են մինչև հիմա:

Բիչո՛րին ասաց որդուն, որ կարող է գնալ, քանի որ ուզում էր մենակ լինել Չատոյի իրերը նայելիս:

— Թո՛ւյլ տուր՝ մի փոքր բան ասեմ պարունակության վերաբերյալ:

— Ո՛չ:

— Դու գիտեի՞ր, որ aita-ն…

— Քեզ ասացի՝ ո՛չ:

Այդպես էլ չցանկացավ լսել: Նրան մինչև դուռն ուղեկցեց: Պաչիկ ու agur*: Մենակ մնալով՝ Բիչո՛րին (փախի՛ր այստեղից, Իկացային քշեց բազմոցի վրայից) նստեց ու բաց արեց արկղերը: Չատոն երբեք չէր ակնարկել, որ գրասենյակում ատրճանակ էր պահում: Զարմանալի՞ էր: Բնա՛վ: Միշտ էլ ենթադրում էի: Ասում էր, չէ՞, որ այնտեղ ապահով է: Ձեռքն առավ սև զենքը: Լիցքավորվա՞ծ է: Գրողը տանի, ի՛նչ ծանր է: Մետաղը՝ սառը. մատները համենայնդեպս հեռու էր պահում ձգանից: Բայց գայթակղությունը շատ մեծ էր, ու նշան բռնեց առաստաղի լամպի վրա: Ի՞նչ է զգում կրակողը, երբ նրա զոհը ընկնում է, երբ արյունը սկսում է հոսել գընդակահար անցքերից:

Հանեց վեց հատ փոքր տուփ՝ 9x16 մմ տրամաչափի փամփուշտների քսան միավոր, որոնցից միայն մեկն էր բաց: Չատիտո՛, ա՛յ ավազակ, ա՛յ հրոսակ, ո՞ւմ վրա պիտի կրակեիր, դու, որ սուրբիկի մեկն էիր: Լսի՛ր, իսկ ինչո՞ւ զինված չէիր այն օրը, երբ… Դե՛, չգիտեմ, ասում եմ, գուցե քեզ պաշտպանեի՞ր:

Մահաբեր այդ սարքավորումները դրեց հատակին ու հանեց շրջանակների մեջ առած լուսանկարները, որոնք ամուսինը գրասենյակի դարակներից մեկի վրա էր շարել. մեկի վրա միասին էին, երիտասարդ, ժպտադեմ՝ Պիզայի աշտարակի առջև: Զավակներինը՝ առանձին-առանձին, Շավիերը՝ տասներկու, թե տասներեք տարեկան, Ներեան՝ չափազանց գեղեցիկ, առաջին հաղորդության զգեստով, ևս մեկը՝ չորսը միասին Ասպեիտիա եկեղեցու շեմին՝ ազգականներից մեկի հարսանիքի օրը, ու երկու հատ էլ՝ Չատոն՝ իր որդու, Չատոն՝ իր դստեր հետ:

Ուրիշ իրեր էլ հանեց, որ իրեն այնքան էլ չէին հետաքրքրում: Գրիչներ, ծայրով գրիչ, հեծանվավազքի ակումբի ու մուս քարտախաղի զանազան մրցանակներ, կակտուսի տեսքով մի մոմ, որը նրան ինչ-որ առիթով Ներեան էր բերել՝ նրա արքայադուստրը, նրա սիրելին, որը չեկավ թաղմանը: Մի խոսքով՝ զգացմունքային մանրուքներ, զարդարանքներ, հիշատակներ: Իսկ դրամաշորթության նամակնե՞րը: Չկային: Գուցե Չատոն ոչնչացրել էր: Կամ Շավիերը դրանք մյուս թղթերի հետ էր դրել:

* Agur (բասկ.), ցտեսություն:

33

Սպառնագրեր

Գրասենյակը միևնույն ժամանակ դիտահարթակ էր: Երկաթյա սյուների վրա տեղադրված պարզ հարթակ էր, արտադրամասին նայող պատը՝ ապակուց: Դա սեփականատիրոջը թույլ էր տալիս տեսնել, թե ինչ է կատարվում ներսում: Պատուհանից երևում էր շինությանը հարակից բաց տարածքը: Չատոն գրասենյակն այդ ձևով էր տեղադրել, ինչպես ինքն էր ասում, բակը վերահսկելու համար: Նա իր բնույթով ամեն ինչ վերահսկող մարդ էր: Թողնեիր՝ ընկերությանը վերաբերող բոլոր հարցերով անձամբ կզբաղվեր. կառավարման հարցերով, գործարքներով, բեռնման ու բեռնաթափման աշխատանքներով, շարժիչները յուղելով, անվադողերի ճնշումը ստուգելով, բեռնատարները լվանալով ու վարելով: Հսկում էր մեքենաների ելքն ու մուտքը, միաժամանակ ուշադրության կենտրոնում էր պահում հաճախորդներին ու անսպասելի այցելուներին: Հենց շարժիչի ձայն էր լսում, դուրս էր նայում պատուհանից:

Տարածքի շուրջը երկու մետր բարձրության բետոնե պարիսպ կար, որի վրա է՛լ ավելի բարձր մետաղյա ցանց էր ամրացված: Մուտքը, որ աշխատանքային օրվա ընթացքում բաց էր լինում, գիշերը փակվում էր սահող ճաղադարպասով: Երբ Ներեան փոքր էր, ավանի տղաները հարցնում էին, թե նրա aita-ն բա՞նտ է կառուցել: Նա էլ նույնպես կատակով պատասխանում էր, որ այո՛, ու որ աշխատողներն էլ բանտարկյալներ են:

Մի օր՝ վաղ առավոտյան, Չատոն պատուհանից նայում էր, թե ինչպես են բեռնատարին կցասայլ ամրացնում: Աշխատողներին չէր վստահում: Ոչ մեկին: Նույնիսկ ամենափորձված իր վարորդներին: Երբ կցումը վերջացրին, բեռնատարը տեղից շարժվեց: Այդ պահին երևաց պատի այն մասը, որը մինչև այդ բեռնատարն էր փակում: Ու Չատոն իր գրասենյակից տեսավ սփրեյով նկարած մեծ ու ծուռ տառերը՝ CHATO OPRESOR*.

Նրան ուղղված առաջին սպառնագիրն էր: Առաջին միտքն այն էր, որ սա անվայել մի արարք է: Նրան զայրացրեց մեղադրանքը, էլ ավելի՝

* Chato opresor (իսպ.), Չատո շահագործող:

կեղտոտ ու տգեղ ձևը, ու, իբր քիչ էր, որ հունից դուրս եկավ՝ տեսնելով իր մականունը իսպաներեն տառադարձությամբ* գրված, նա կատաղեց-մտահոգվեց այն բանից, որ գրվածքը պատի ներսի կողմից էր հայտնվել: Ինչը նշանակում էր, որ ինչ-որ մեկը գիշերը ներխուժել է տարածք: Բիչո՛րին, որ ձեռքերը չորացնում էր՝ գոգնոցին քսելով, չբացառեց, որ կարող է աշխատողներից մեկը լինել: Չատոն գրասենյակից իջավ մետաղական նեղ ու ուղղահայաց աստիճանով (Բիչո՛րին ասում էր՝ մի գեղեցիկ օր ընկնելու ես, մեռնես)՝ ավելի մտահոգված, թե ինչպես թաքցնի իր բարկությունը, քան թե ոտքը ուր է դնում: Հասավ մեքենաների նորոգման տարածքին: Խնդրեց՝ իրեն ներկելու «ատրճանակ» տան: Կարող էր աշխատողներից մեկին հանձնարարել, որ ծածկի պատի վրայի այդ ապուշությունը: Բայց Չատոն գործի մարդ էր, որոշումներն արագ կայացնող «շուտ արա՛»-ներից էր, շատ գործեր անձամբ ստանձնողներից՝ անկախ նրանից՝ դրանք ձեռքի՞ աշխատանքներ էին, թե՞ գրասենյակային: Այնպես որ, գնաց պատի մոտ ու շը՛փ-թը՛փ ջնջեց վիրավորանքը:

Տանը ճաշելիս պատմեց Բիչո՛րիին: Միասին անցան աշխատողների (Բիչո՛րին նրանց բանվորներ էր անվանում) ցանկով՝ փնտրելով սպառնագրի հնարավոր հեղինակին: Մեկին, որը դժգոհ լիներ կամ մտածեր, թե սեփականատերը նրա հանդեպ անարդար է: Բայց, ինչպես միշտ, առանց վկաների ու ապացույցների՝ բան չես կարող անել: Նրանց մտքով նույնիսկ չանցավ սպառնագիրը կապել դրամաշորթման նամակների հետ: Անցան շաբաթներ. շարունակելով ապրել իրենց առօրյայով՝ մոռացան պատահարի մասին:

Մինչև մարտիկեսյան շաբաթ օրը, որից սկսած՝ Չատոյի ու իր ընտանիքի կյանքում արդեն ոչ մի բան նախկինի պես չէր: Ժամը քանի՞սը կլիներ: Մոտավորապես երեկոյան տասնմեկն էր: Խոշիանի հետ գալիս էին փողոցով՝ վիճելով բոլոր հարցերի շուրջ, քանի որ նույնչափ համառ էին, որքան և լավ ընկերներ: Մուս թղթախաղի թիմ էին կազմում ու բավականաչափ լավ խաղացող էին, բայց երբեմն, հայտնի է, քարտերը հօգուտ հակառակորդների են լինում: Դրա համար տուն վերադառնալիս քիչ չէր պատահում, որ քայլեին փողոցով՝ մեկը մյուսի վրա գցելով պարտվելու մեղքը:

* Բասկերեն գրվում է Txato, իսպաներեն՝ Chato:

Ընթրել էին Խորտկասերների ընկերակցությունում: Յուրաքանչյուրը՝ իր կնոջ պատրաստած խորտիկներով: Ու քանի որ հաջորդ առավոտ պետք է լուսադեմին վեր կենային, քարտ խաղացին նախքան ընթրիքը, ոչ թե սովորականի պես՝ հետո: Հաջորդ օրը նրանց երկարատև հեծանվավազքի օրն էր, որն ավարտվելու էր Սումայայի կենտրոնի բարում:

Տուն էին վերադառնում ո՛չ հարբած, ո՛չ սթափ՝ իրենց սովորական լեզվակռվի մեջ խորացած, արտահայտվելով լիաթոք, քանի որ դա չէր վտանգում նրանց ընկերական հարաբերությունները: Թեժ քննարկումներով տարված՝ լապտերների աղոտ լույսի պատճառով ուշադրություն չդարձրին նոր սպառնագրերի վրա, որոնք ավելացվել էին տների ճակատի ներքևի հատվածն առատորեն ծածկող հին գրվածքների, պաստառների ու հայտարարությունների կողքին: Սկզբում չտեսան նաև դրանցից մեկը՝ դեռ խոնավ, Չատոյի շքամուտքի մոտ: Երկու ընկերները կանգ էին առել՝ վեճն ավարտելու համար: Արդեն իրար հրաժեշտ էին տալիս, արդեն իրար ասել էին՝ երանի վաղը անձրև չգա, մյուսն էլ, թե՝ լա՛վ, ուրեմն յոթն անց կես՝ հրապարակում, երբ հանկարծ Խոշիանի ուշադրությունը գրավեց ընկերոջ՝ պատին գրված անունը:

— Վա՛յ, Աստվա՛ծ:

— Ի՞նչ է:

TXATO TXIBATO. Տե՛ր Աստված: Խոշիանն ասաց, որ քնելուց առաջ ջնջի սպառնագիրը, քանի որ այսպիսի բաների հետ կատակ չեն անում: Միմյանց հրաժեշտ տվեցին, ու Չատոն բարկացած (ես ձեր մայրիկը…), տուն գնալու փոխարեն, գնաց ավտոտնակ, որտեղ ներկի մի քանի հին պարկուճ էր պահում: Մատնի՞չ, ե՞ս: Անիծյալ հանգի պատճառով է: Չէ՞ որ կյանքումս ոստիկանի հետ խոսած չկամ: Եվս մի խնդիր առաջացավ. մեծ վրձին չուներ: Գուցե և կար, բայց նյարդայնանալու ու բարկության պատճառով չէր գտնում: Դե՛ լավ, թերթով կներկեմ: Ներկի մեջ թեև թանձրուկներ էին առաջացել, բայց լրիվ չէր չորացել: Մի կերպ երկու բառ անընթեռնելի դարձրեց: Տաբատը կեղտոտեց, բայց հոգ չէր: Բիչո՛րին ջղայնանալու է: Թող ջղայնանա: Դավաճան: Իր ավանում ամենավատ զրպարտանքն է: Ընկերության պատին մի քանի շաբաթ առաջ հայտնված նույն սպառնագրից էր:

Որոշեց վաղը՝ հեծանվավազքից վերադառնալիս, նոր ներկ գնել: Բիչո՛րիին ասաց այդ մասին, երբ արդեն պառկած էին: Նա էլ, թե.

— Այսինքն, կարծում ես, որ կարող են նոր սպառնագրեր հայտնվել:

— Արդեն մտածում եմ, որ սա պարզ չարաճճիություն չէ: Ճիշտ կլինի՝ պատրաստվենք:

— Այդ դեպքում ի՞նչ իմաստ ունի ջնջելը: Տանուլ ես տալու բոլորը: Հա՛, նայե՞լ ես, փողոցում էլի սպառնագրեր կայի՞ն:

— Խոշիանի հետ էինք գալիս, ուրիշ ոչ մի հատ չենք տեսել:

— Հաստա՞տ:

— Դե՛, հաստատ-հաստատ չէ: Բայց արդեն ուշ է, ու ես պիժամայով եմ:

Մատնիչ, շահագործող, դավաճան: Ինչ ասես, որ չէին գրել իր մասին իսպաներեն ու բասկերեն իրենց փողոցում, հարող փողոցներում, հրապարակում: Հետապնդման դասական արշավ: Առնվազն քսան սպառնագիր՝ քաղաքի հին մասում: Այդքանը միաժամանակ արդեն խուլիգանություն չէ: Հետո էլ, արի՛ ու իմացի՛ր, ծայրամասերի տների վրա ինչեր են գրել: Էստեղ հաշվարկ ու շատ ձեռք էր զգացվում: Առավոտ շուտ դուրս էր եկել տնից հեծանվով ու հեծանվորդի իր հագուստով և աչքերին չէր հավատում: Herriak ez du barkatuko*. Ու նման բաներ: Երբ հասավ հրապարակ ու միացավ հեծանվավազքի խմբին, նկատեց, որ ողջույնը մի տեսակ խուլ ինչեց: Ու փախչող հայացքներ, որ չէին ուզում իր աչքերի մեջ նայել: Ու կարոտեց իրենց սովորական կատակներին: Բայց գուցե հանկարծ դյուրազգաց դառնալով՝ իր երևակայության ու վախերի զո՞հն էր դարձել:

Շարժվեցին: Տասնչորսն էին կամ տասնհինգը՝ մշտական իրենց խումբը: Ակումբի մնացած անդամները կամ առաջ էին ընկել, կամ ավելի ուշ նրանց պիտի միանային: Եվ միայն Խոշիանն էր իրեն մոտիկ քշում, բայց նա էլ սովորականից լուռ էր: Երբ անցնում էին ավանի վերջին տան կողքով, պատուհանից մի տղայի վիրավորական բղավոց լսվեց.

— Չատո՛, բոզի՛ տղա:

Իր հետ քշողներից և ոչ մեկը չփորձեց պաշտպանել: Ո՛չ արձագանք, ո՛չ նախատինք, ո՛չ էլ՝ վիրավորանքին պատասխան: Խումբը սկսեց ցրվել: Այդպես պատահում էր: Ոմանք ավելի արագ էին քշում, քան մյուսները: Ու Չատոն մենակ մնաց Խոշիանի հետ, որն, առանց որևէ բառ ասելու, անընդհատ երկու-երեք մետր հետ էր մնում: Ու Պուերտո Օրիո բարձրանալիս է՛լ ավելի հետ մնաց, թեև սովորաբար ավելի լավ էր հաղթահարում բարձունքը, քան Չատոն:

* Herriak ez du barkatuko (բասկ.), Ժողովուրդը չի ների:

Վերջապես Սումայան երևաց: Բարը ծանոթ էր նախորդ տարիներից: Բարում պետք է կնքեին քարտը, որի վանդակներում նշվում էր հեծանվավազքի փուլը: Այնուհետև հասնում էր նրանց ճիգերի հատուցման պահը՝ ապուխտով ձվածեղը: Բարից ձայներ էին լսվում ու ծիծաղ: Չատոն ներս մտավ: Անսպասելի լռություն տիրեց: Ու դա արդեն իր համար չափից ավելի էր: Դա արդեն դիմանալու չէր: Նույնիսկ քարտը չկնքեց: Ոչ մեկին, նույնիսկ Խոշիանին հրաժեշտ չտալով՝ միայնակ բռնեց դեպի ավան տանող ճանապարհը:

34

Թերթելով հիշողության էջերը

Երբ Խոշե Մարիին բռնեցին, նրա բաշը ուսերին էր հասնում: Ի՞նչ պատահեց ճակատին թափվող այն խոպոպիկներին, ծոծրակը խուտուտ տվող մազերին: Ավելի լավ է չմտածել: Երբ հայելու մեջ է նայում, ասում է՝ ես չեմ:

Անցավ մեկ տարի, երկու, չորս, վեց՝ յուրաքանչյուրն իր սուրբ ծնունդներով, ավանի տոներով, որոնք առանց նրա նշվեցին: Փաստացի հիմա արդեն ամեն ինչ առանց նրա է տեղի ունենում: Ո՛չ գետի ջրերի իջնելն է տեսնում, ո՛չ եկեղեցու զանգերն է լսում ու հիմա միլիոններ կտար (որոնք չունի)՝ հոր հողամասից մի քանի թուզ ուտելու համար: Որ չտանջվի, նախընտրում է չհաշվել՝ քանի տարի դեռ պիտի նստի, թեև շատ հեռավոր աղոտ հույս ունի, որ գուցե կազմակերպությունը, գուցե կառավարությունը, գուցե միջազգային ճնշումը և այլն: Երբեմն գիշերը՝ մթության մեջ, փորձում է բերանում զգալ չակոլիի* համը: Կամ էլ՝ սիդրի, մեկ է: Եվ երբեմն նրան թվում է (եսձերտիրոջ…), որ համարյա ստացվում է:

Վեցերորդ տարում նրա քունքերի մազերը թափվեցին: Լա՛վ, դա այդքան էլ կարևոր չէր: Մի անգամ գլուխը հենեց անկողնու ճաղին, ու, Աստվա՛ծ իմ, գլխամաշկով սառնություն զգաց, մի բան, որ առաջ երբեք չէր պատահել: Հիմա արդեն ճաղատ է: Լրիվ: Եթե մի օր բանտից դուրս գա, ավանում նրան չեն ճանաչի: Գլուխն ամբողջությամբ սափրում է, որ թվա՝ իբր մազ չունենալն իր որոշումն է:

Մորը դուր չի գալիս նրա ճաղատ գլուխը: Բայց եթե ճիշտն ասենք, մորը ժամանակին բաշն էլ դուր չէր գալիս, ասում էր՝ մուրացկանի ես նման, ոչ էլ ականջօղն էր հավանում ու նրա անդամակցությունը կազմակերպությանը, թեև այդ առումով մի գիշերում կարծիքը փոխեց: Հանուն որդո՞ւ: Հաստա՛տ: Ama-ն քարից էլ պինդ է: Աստվա՛ծ իմ, որքան ուժ ունի: Ծերուկը ուրիշ խմորից է՝ Գորկայի պես: Հանգիստ են, մեղմ: Ես ama-ին եմ քաշել ու դրա համար էլ այսպիսին եմ, դրա համար էլ այստեղ եմ ու

* Չակոլի, բասկյան ոչ թունդ գինի:

այստեղ էլ մնալու եմ: Որտե՞ղ: Բանտախցում: Անտեր բանտի անտեր բանտախցում, մինչև ինձ տեղափոխեն կամ էլ ազատ արձակեն:

Այսօր txapeo*-ի մեջ եմ, բայց զուտ իմ պնդերեսության պատճառով, պա՞րզ է: Սա ո՛չ պայքար է, ո՛չ էլ բողոք: Հանուն մենակ մնալու ու բակում և միջանցքներում միևնույն դեմքերը չտեսնելու: Ու ինչպես այդ դեպքերում, փռվում է անկողնու վրա՝ հուշերին հատիկ-հատիկ անդրադառնալու, լուսանկարներով ալբոմը թերթելու նման: Երբեմն երկու-երեք ժամ մտովի թերթում է հին պատմությունների էջերը: Մի կողմից կարոտը տանջում է, մյուս կողմից հաջողվում է ժամերն աննկատ անցկացնել: Լսի՛ր, էլ ի՞նչ ես ուզում. մի քանի ժամ պակասում է այն ահռելի քանակի տարիներից, որ դեռ մնում է պատժաչափից: Այդ դեպքերում ամենասիրած բանը անակընկալ հուշն էր: Որովհետև հանգիստ պառկած է՝ առաստաղին նայելով, իր մտքերի մեջ, ու հանկարծ մի բան, հետո մեկ ուրիշն է հիշում այն ժամանակներից, երբ ազատության մեջ էր ու երկար մազերով էր և հանդբոլ էր խաղում և ուզածի չափ չակոլի էր խմում: Կամ էլ՝ սիդր կամ գարեջուր. մեկ է:

Քանի՞ տարեկան կլինեին՝ տա՞սը, տասներկո՞ւ: Մի այդքան: Իր անբաժանելի ընկեր Խոկինի հետ մոտակա սարերն էին գնում՝ յուրաքանչյուրն իր պարսատիկով թռչուն որսալու: Պարսատիկները սարքում էին ընկուզենու երկմատ ճյուղերից, անվադողից կտրած ժապավենից ու մի կտոր կաշվից: Մի կիրակի, հիշում էր, օգտվելով նրանից, որ հանգստյան օր էր, ու Չատոյի ընկերությունում ոչ ոք չկար, ցատկեցին ճաղադարպասի վրայով, մտան մաշված անվադողերի պահեստ ու այնտեղ դանակով մի քանի շերտ ռետին կտրեցին: Դրանցից սարքած պարսատիկներն իրենց ունեցածների մեջ լավագույնն էին: Լուրջ: Երբ քար էիր արձակում, գետի մի ափից մյուսն էր հասնում ու շատ ավելի հեռու:

Առանցքակալներով կամ քարերով կրակելով՝ փորձում էին թռչուններ գցել, բայց որքան հիշում է, այդ եղանակով այդպես էլ չհաջողեցին: Փոխարենը շատ լավ էր ստացվում շշեր կոտրելը կամ արդյունաբերական գոտու վերջում եղած ճանապարհային նշանին հարվածելը: Դրա վրայից հաջողեցրել էին ներկը պոկել, իսկ վերջին քարկոծումից հետո էլ Աստված չէր գուշակի, թե ի սկզբանե ինչ նշան էր եղել: Մի երեկո Խոկինի մտքով անցավ պատուհաններին կրակել: Շրը՛խկ. փշրվում էին ապակիները:

* Txapeo (բասկ.), երբ բանտարկյալը հրաժարվում է դուրս գալ բակ՝ զբոսանքի, և մնում է խցում:

Շրը՛խկ: Ու վազելով փախչում էին. ի՛նչ սրիկա էին, ու ինչ-որ մեկը, որ դուրս նայեց պատուհանից, բղավեց՝ անամոթնե՛ր: Դե՛, եթե ուզում ես մեզ բռնել, վազի՛ր-հասի՛ր: Ու ծիծաղից մեռնում էին: Տասնմեկ, տասներկու տարեկան էին: Լակոտներ էին: Մոտավորապես այդ ժամանակ սկսվեց զինված պայքարը: Մենք դա մեր գեներում ունեինք: Առաստաղին նայելով՝ ժպտում է: Ի՞նչ եմ այստեղ ծիծաղում, իբր ո՞ւմ եմ խաբում: Լրջանում է: Մտովի ևս մեկ էջ է թերթում:

Ավելի մեծ տարիքում գնում էինք խայծ դնելու Խոկինն ու ես, երբեմն Կոլդոն էլ կար: Խոշե Մարին բանտախցի առաստաղին հայտնում է, որ խայծ դնելը ավելի շատ խելքի գործ է, քան ուժի: Կոլդոն ոչ մեկն ուներ, ոչ էլ՝ մյուսը, բայց զիլ երգող մի մոխրագույն կտցար ուներ: Նման բան կյանքումս չէի տեսել: Կոլդոն վանդակը տեղավորում էր թփուտներում: Սրիկա կտցարը՝ ֆյո՛ւ, ֆյո՛ւ, ու զլում էր ելևէջները: Երեք ընկերները մի քսան մետր հեռավորության վրա ծխելով սպասում էին: Անաղմուկ, լուռ: Միմյանց նշան տալով՝ անսպասելի դուրս էին թռչում իրենց թաքստոցից: Ու վախեցած թռչունները կպչում-մնում էին սոսնձապատ փայտիկներին: Թեև եթե նույնիսկ չվախեցնեինք, միևնույն է, կպչելու էին հաստատ: Փորձում էին թռչել, բայց զուր էր. որքան ավելի էին թևերը թափահարում, այնքան ավելի ամուր էին կպչում: Երեկոներ էին լինում, որ, առանց չափազանցնելու, յոթ կամ ութ կտցար էինք բռնում, միշտ ուշադիր, որ հանկարծ ոստիկանների ձեռքը չընկնենք: Ու հետո մեր amatxos*-ները դրանք տապակում էին ընթրիքի համար: Ի՛նչ հաճելի կյանք էր, ի՛նչ ափսոս, որ մարդ մեծանում է: Ավելի ուշ Կոլդոն էլ դարձավ կտցար: Այսինքն՝ երգեց: Բայց մեղադրելու չէ: Նրան տանջում էին Ինչաուռոնդո զորանոցում: Գլուխը ջրի մեջ մտցնում: Անիծյալ «գլուխլվան»: Ու պարզ է՝ անուններ էր տվել: Խոկինի հետ իրենք որոշեցին, որ չանհանգստանան, միևնույն է, վաղ թե ուշ գալու էին մեր հետևից: Փախան Ֆրանսիա, ու մի քանի ամսից պատահաբար հանդիպեցին Կոլդոյին Բրետանի բարերից մեկում:

— Լսե՛ք, ներե՛ք ինձ: Կարծում էի՝ այնտեղից ողջ դուրս չեմ գա:

— Հանգի՛ստ: Շուտով նրանք նույն հաբը կուլ կտան:

Խոկինի մանրագնդակ հրացանով ավելի քիչ էին որսում, քան խայծով, բայց հրացանը հրաշալի խաղալիք էր, երկուսով էին օգտագործում

* Amatxos (բասկ.), մամա բառի փաղաքշական ձևը:

ու չտեսնված ժամանակ էին անցկացնում: Հետո՝ արդեն կազմակերպությունում, երբ զենքերի վերաբերյալ մի փոքր դասընթաց էին անցնում, հրահանգչի բերանը բաց էր մնացել: Մեղա՛ Աստծո, տղե՛րք, որտե՞ղ եք սովորել այդպես նշան բռնել: Ավելի լավն էին, քան փորձառու մարտիկներից շատերը, որոնք անվերջ բլբլացնում էին, բայց նշանակետին խփելու պահին կուրանում էին: Խոկինը ավանի տոնախմբությունների ժամանակ հրաձգարանում՝ պի՛ֆ-պա՛ֆ, պի՛ֆ-պա՛ֆ, ոչ մի հատ չէր վրիպում, ու դա էլ այն դեպքում, երբ, իր ասելով, նշանոցը շեղված էր: Հրաձգարանի բիձեն ասաց՝ դե՛, հերի՛ք է, ու դժգոհ դեմքով ձեռքից առավ հրացանը: Իրեն էշի տեղ էր դնում՝ մրցանակը Խոկինին չտալու համար: Մենք տղերքով հավաքվեցինք հրաձգարանի ամպհովանու տակ: Բիձեն արդեն ճար չուներ, ստիպված էր մրցանակը տալ՝ մի ապուշ փափուկ խաղալիք:

Մոտավորապես այդ ժամանակ արդեն Խոշե Մարին առաջին անգամ զգացել էր, թե ինչ է նշանակում մարդու վրա կրակել: Երբեմն ինչ-որ մի կատվի վրա էին կրակում: Բայց մարդ արարածը լրիվ ուրիշ բան է: Ու շընջաց Խոկինի ականջին՝ պատկերացնո՞ւմ ես: Խոկինի մտքով երբեք նման բան չէր անցել: Հրացանը զվարճանալու համար է, ասում էր: Երազում էր, որ կմեծանա ու ավելի հզոր զենքով որսի կգնա, բնականաբար ոչ թե ծիտիկների ու կատուների վրա կրակելու, այլ վարազներ, եղջերուներ ու նման կենդանիներ որսալու: Ու երազում էր Աֆրիկա գնալ՝ սաֆարիի:

Մինչ նա պատմում էր իր երազանքների մասին, Խոշե Մարին նշան բռնեց մի մարդու վրա, որ խոտ էր հնձում դիմացի լանջին՝ գլխին տոպրակ քաշած՝ անձրևից պաշտպանվելու համար: Ու Խոշե Մարին մատը տարավ դեպի հրահանը ու պատկերացրեց մարդուն՝ անսպասելիորեն դեպի առաջ ծալվող ու մահացած զառիվար գլորվող: Խոկինը նրան ցածրաձայն ասաց, որ զենքով խաղ չեն անի: Քանի՞ տարեկան էին՝ տասնըվե՞ց: Ոչ ավելի: Գիշերը երազ տեսավ՝ իբր ոստիկանները ազդանշանները միացրած մեքենաներով եկել էին իր հետևից՝ մի ոստիկանի սպանության պատճառով, ու տարիներ անց, աչքերը հառած իր խցի առաստաղին, հիշեց խոտ հնձող այն մարդուն:

35

Հրկիզվող արկղը

Կանգնակի վրա զանազան գույների հանգանակության տուփեր ու կազմակերպության բանտարկված անդամների լուսանկարներ էին շարված, նաև վիճակահանության տոմսերի մի տրցակ, որի շահումը mariskada* էր լինելու, իսկ մյուս ծայրում՝ պատի մոտ, ցուցատախտակ էր դրված, վրան՝ կախազարդեր, կրակայրիչներ, դրոշակներ, շարֆեր: Երկու ընկեր, Խուան դե Բիլբաո փողոցի խորտկարանի մութ անկյունում նստած, սպասում էին, բայց ալկոհոլ չէին խմում: Խոկինը ծարավ էր, ծորակի ջուր խնդրեց բարի սպասուհուց (առջևի մազափունջը ուղիղ ու կարճ կտրած գլուխը տարուբերում էր երաժշտության ռիթմով), աղջիկը ջուրը բերեց:

Խոշե Մարին րոպեն մեկ ժամացույցին էր նայում: Բայց Կոլդոն չկար ու չկար: Խոկինը թերթում էր Egin**-ի էջերը: Խորտկարանն էլ, փողոցն էլ կիսադատարկ էին: Ու դա՝ երեկոյան ութն անց, երբ մարդիկ սովորաբար հավաքվում են զրուցելու ու խմելու: Երթով անցան abertzale տղերքը՝ բողոքելով զինված խմբերից մեկի ձերբակալման առիթով: Նրանց միացել էր ավանի տղաների մի ջոկատ, որ ասես պատերազմի էր եկել Սան Սեբաստիան. ոնց էլ նայես՝ եղածը պատերազմ էր: Կամ էլ՝ հակամարտություն, կամ էլ՝ ինչպես անվանեք: Կոլդոն այդ ջոկատի հետ էր քայլում. նրան հանձնարարված էր ընկերներին միանալ այն պահին, երբ երթի սկզբի շարքերը հասնեն բուլվար, որտեղ պիտի ծավալվեին ավանդական գործողությունները. Herri Batasuna*** ազգային բյուրոյի անդամներից մեկը երաժշտական կրպակի մոտ մի ուղերձ պիտի կարդար, ու ինչ-որ պահի երկու կնգուղավորներ պիտի բարձրանային հարթակ՝ Իսպանիայի

* Mariskada՝ բասկ. (mariscada – իսպ.), ծովային բազմազան մթերքներից պատրաստված կերակրատեսակ:

** Egin (բասկ.), 1977–1998 թթ. բասկերեն-իսպաներեն հրատարակվող թերթ, որ հիմնականում տարածված էր Իսպանիայի Բասկերի երկրում և Նավառայում, նաև Ֆրանսիայի բասկյան մասում:

*** Herri Batasuna (բասկ.), «Ժողովրդական միավորում», ստեղծվել է 1978 թ. որպես ETA-ի քաղաքական թև: Միավորման անդամները իրենց համարում էին ձախ հայրենասերներ: Նրանց գլխավոր նպատակն էր Բասկերի երկիրն անկախ ու սոցիալիստական դարձնելը: Վերջնականապես լուծարվել է 2003-ին:

դրոշն այրելու: Այդ ընթացքում ավանից վեց հոգի քաղաքի մյուս ծայրում իրենց ակցիան պիտի իրականացնեին, որը նախորդ օրն էին նախապատրաստել: Անհանգիստ սպասում էին Կոլդոյին, սթափ՝ առանց մի կաթիլ ալկոհոլ խմելու: Մյուսները քաջալերվելու համար խմում են, բայց նրանք՝ ոչ, որովհետև կազմակերպված են և իրենց գործում հաստատակամ ու նաև, իրենց ասելով, համոզված են, որ գործը պետք է կարգին արվի: Անբարեխիղճ աշխատանքը բասկերին հարիր չէ (Խոշե Մարի): Վախը վախկոտի համար է (Խոկին): Կոլդո՛, Կոլդիտո՛, վազելով արի՛, այստեղ պետք ես, մեզ չքաշես: Ինչո՞ւ էին այդքան շտապում: Որովհետև չէին ուզում, որ Ռենտերիայի jarraitxu*-ներն իրենցից առաջ անցնեին: Մի անգամ դրանք ավելի ճարպիկ գտնվեցին ու գնահատվեցին: Այսի՞նքն: Դե՛, վառել էին նոփ-նոր, քսան միլիոն պեսետայից ավելի արժեցող «Մերսեդես» մակնիշի մի էքսպրես ավտոբուս, ինչը իսկապես հարվածեց քաղաքապետարանի գանձարանին: Իսկ իրենց մի հին ու քայքայված «Պեգասուս» բաժին հասավ, որը շատ ավելի վատ էր այրվում ու քաղաքապետարանի վրա նախորդի կեսի չափ էլ չնստեց: Ի լրումն դրա՝ քաղաքապետարանն ազատվեց ուտիլացման ծախսից:

Կոլդոն՝ ծանրակզակ, հագին վանդակավոր շապիկ, ներս մտավ: Փոքր գավաթ գարեջուր խնդրեց: Իրենց գործից՝ ոչ մի բառ:

— Շան պես ծարավ էի, տղե՛րք, այնքան բղավեցինք՝ բերանս չորացավ:

Վիճաբանելու ժամանակ չկա: Թողնում են՝ կանգնակի մոտ մնա:

Խորտկարանի մատուցողուհին, որ հրաշալի աղջիկ է, նրանց քաջալերում է:

— Դե՛, հերոսնե՛ր, գնացե՛ք, դրանց հե՛րն անիծեք:

Շշերի զրնգոցը խլացնելու համար Խոշե Մարին ուսապարկը մարմնին պինդ կպցրած է պահում: Արագ քայլով անցնում են Նառիկա փողոցով: Կոլդոն վազելով հասնում է նրանց:

— Սպասե՛ք ինձ, սրիկանե՛ր:

Հեռվում՝ բուլվարում, լսվում է կարգախոսներ վանկարկող ամբոխի աղմուկը: Կոլդոն, ընկերներից հետ ընկած, ճանապարհ բացելով ամբոխի մեջ, շնչակտուր նրանց է հասնում: Ավտոբուսները փոխում են իրենց

* Jarraitxu (բասկ.), «Jarrai» երիտասարդական սոցիալիստական ու անկախ կազմակերպության անդամներ:

երթուղիները: Մյուս երկուսը սկզբում նրան ոչ նայում են, ոչ էլ՝ պատասխանում: Հետո Խոշե Մարին մի պահ կանգ է առնում գլխարկների խանութի առջև:

— Txacurra-ները շա՞տ են:

— Չէ հա՛: Մի քանի beltza*-ներ են:

Ցույցին չմասնակցող անցորդները՝ զգուշավոր, վախվորած, հեռանում են այդ տարածքից: Կապույտ երկինք, հաճելի երեկո, մեկ-երկու մանկասայլակ: Օդում լարվածություն է զգացվում, տարօրինակ մի թափանցիկություն, խառնաշփոթի մի նախերգանք:

Խոկինը հետաքրքրվում է՝ Կոլդոն տեսե՞լ է Ռենտերիայի տղաներին:

— Ո՛չ:

— Լա՛վ, գնացի՛նք:

Երեքով քայլում են իծաշարուկ. Խոշե Մարին՝ ամենաբարձրահասակն ու ամրակազմը՝ մեջտեղում՝ «Մոլոտով կոկտեյլներով» լի ուսապարկով: Ոչ դանդաղ, ոչ էլ արագ շարժվելով՝ խառնվում են երիտասարդներին, որոնք վանկարկում են՝ Presoak kalera**, amnistía osoa***: Նրանք երեքն էլ լուռ են: Ցույցի մասնակիցները կողք են քաշվում՝ ինչ-որ մի բան տեսնելով ու զգալով, որը նրանց ստիպում է ճանապարհ զիջել:

Ինչպես որ պայմանավորվել էին, խմբի մյուս անդամներին միանում են Գիպուսկոա հրապարակի նստարանների մոտ: Նրանց առջև մի հովվերգական պատկեր է բացվում. աղավնիներ ու ճնճղուկներ, պապիկ-տատիկները՝ իրենց թոռնիկների հետ, շների հետ անցնող տիկնայք, երիտասարդ զույգեր և վերջապես անցորդներ, որոնք խճաքարի արահետներով զբոսնում են ծառերի ստվերների ներքո:

Ողջույնների կարիք չկա: Վեց տղաներ ուղղվում են դեպի պողոտան, երեքը՝ մի մայթով, երեքը՝ դիմացի մայթով: Տեղ հասնելուց քիչ առաջ հավաքվում են մի շինարարական փայտամածի կողքը, որը շենքի ճակատի ամենաբարձր կետին է հասնում: Բերանները կապում են թաշկինակներով, կնգուղները քաշում են գլխներին: Խոկինը նախընտրում է դիմակ-

* Beltza (բասկ.), սև: Սև համազգեստի պատճառով այդպես են անվանում տեղական ոստիկանության այն գործակալներին, որոնք վերահսկում են ոչ խաղաղ ցույցերն ու երթերը:

** Presoak kalera (բասկ.), Ազատությո՛ւն բանտարկյալներին:

*** Amnistia osoa (բասկ.), ընդհանուր համաներում:

գլխարկը՝ աչքերի ու բերանի համար անցքերով: Խոշե Մարին ամուր բռնել է ուսապարկը, ուստի նրա բերանը Կոլդոն է կապում:

Հիմա արդեն նրանց տեսքը՝ նայի՛ր, նայի՛ր, մարդկանց ուշադրությունն է գրավում: Նրանց տեսնելով՝ ոմանք անցնում են մյուս մայթ ու մնում այնտեղ՝ փսփսալով, բայց ոչ ոք նրանց չի հակադրվում: Ոչ ոք նրանց չի նախատում, ոչ էլ՝ ոստիկանություն կանչում: Ու բոլորն էլ հասկանում են՝ ինչ են հիմա անելու այս տղերքը:

Ֆիչ անց տեսնում են քաղաքային ավտոբուսը: Էչայդե փողոցից մըտնում է այն պողոտան, որտեղ նրանք են սպասում: Եթե իր սովորական երթուղով գնար, ապա պետք է ուղիղ շարունակեր մինչև բուլվարը, որը հիմա զբաղեցրել են ցուցարարները: Խումբը տեսնում է, որ 5-րդ համարն է, մեջը՝ սակավաթիվ մարդիկ: Թո՛ւ, բախտներս չբերեց, ավտոբուսը նորերից չէր: Բայց դեմքերն արդեն փակել էին, ուրիշ ելք չունեին, պետք է իրենց գործն անեին: Առանց այս ու այն կողմ ընկնելու՝ Խոկինն ասաց՝ այս մեկը: Ու գնացին դեպի այդ մեկը:

Թողեցին, որ մի քանի մեքենաներ անցնեն, բայց ավտոբուսի առջևից գնացողին կանգնեցրին: Մեկը բամփեց մեքենայի կտուրին, մյուսը դուռը բացեց այն կողմից, որտեղ ղեկին երեսունն անց կին էր, ու նրան դուրս քաշեց: Եվ անմիջապես՝ մեկ-երկու, մեքենան կողքի շուռ տվեցին: Կինը ահաբեկված ճչում էր.

— Աղջի՛կս, աղջի՛կս:

Կոլդոն նրան կատաղած մի կողմ հրեց.

— Ձայնդ կտրի՛ր:

Ֆիչ էր մնում՝ կնոջը գետնին տապալեր: Կինը, մի կոշիկը կորցրած, ջանում էր վերադառնալ դեպի մեքենան: Ու փողոցի մյուս կողմից մի մարդ բղավեց.

— Հանգի՛ստ թող նրան, անասո՛ւն:

Ավտոբուսը, տեղ չունենալով անցնելու, ստիպված կանգ առավ: Ու մինչ տղերքի ուշադրությունը շեղվել էր մեքենայից, կինը, օգտվելով առիթից, հետևի նստարանից դուրս հանեց երկու կամ երեք տարեկան իր աղջնակին:

Ավտոբուսի վարորդին ի՞նչ էր եղել, հատո՞ւկ էր անում, թե՞ վախից էր սառել: Խոկինը պահանջում էր, որ դռները բացի, նա ձևեր էր թափում՝ իբր չի հասկանում: Պարսատիկի մետաղագնդիկով կրակեցին վրան:

Հարվածը դիմապակու վրա հետք թողեց, բայց միջով չանցավ: Եթե հանկարծ վարորդի դեմքին կպչեր… Նա, երևում է, վերջապես հասկացավ, թե ինչ է պահանջում դիմակ-գլխարկով տղան, ու բաց արեց դռները: Վախվորած ուղևորները՝ մի տասներկու հոգի, հապճեպ իջան: Հենց այդ պահին ներսում առաջին շիշը պայթեց: Խոշե Մարին կարգադրեց.

— Նստարանների վրա նշա՛ն բռնեք, նստարանների՛:

Վարորդը դուրս ցատկեց: Մի քանի վայրկյան անց նկատեց, որ կոշիկն այրվում է: Արագ ոտքից գցեց: Նույնիսկ վայրկյան չկորցնելով՝ փողոցը կտրեց՝ ձեռքերով թափ տալով տաբատի ծխացող փողքերը: Այդ ժամանակ ավտոբուսն ասես հրկիզվող ահռելի մի արկղ լիներ: Առատ ու խիտ ծուխը բարձրանում էր վեր՝ պարուրելով մոտակա տան ճակատը: Խելամիտ հեռավորության վրա խմբվում էին անբանները: Հարձակվողներից մեկը գրպանից հանած ֆոտոխցիկով բազմաթիվ լուսանկարներ արեց:

Վերջում Խոշե Մարին, բռունցքը վեր հանած, հայացքը չկտրելով այրվող ավտոբուսից, գոռաց.

— Gora Euskadi askatuta!*

Նրա ընկերները, նույնպես բռունցքները վեր, միացան նրան.

— Gora!

— Gora ETA!

— Gora!

Վեց տղաները վազեցին, մի մասը՝ փողոցով, մյուսները՝ զուգահեռ փողոցով դեպի բուլվար: Պայմանավորվել էին հանդիպել Գիպուսկոա հրապարակում: Ճանապարհի մնացած մասն անցան՝ դեմքերը բաց, հանգիստ զրուցելով:

— Գործն արեցինք: Գնանք խմելու:

Այդ ընթացքում քաղաքապետարանի ժամացույցի զանգերն երեկոյան մանուշակագույն օդով տարածում էին իրենց քաղցրահնչյուն ու հարմոնիկ «դինդոնները»:

* Gora Euskadi askatuta (բասկ.), Կեցցե՛ Բասկերի ազատ երկիրը:

36

Ա կետից Բ կետը

Խոշե Մարիին բոլորը շնորհավորում էին՝ ամեն րոպե ջերմ հարվածելով մեջքին, թիկնեղ ու մկանուտ, պինդ մեջքին: Զոլավոր, սպորտային շապիկով էր: Բար մտնող ամեն ոք՝ սրա քույրը, նրա քեռու տղան, բոլորը, շը՛խկ, մեջքին էին տալիս: Բանն այն է, որ Խոշե Մարին՝ տասնինը տարեկան, նստած էր «Առանո» խորտկարանի մուտքի մոտ գտնվող առաջին սեղանի մոտ: Խմբի տղաները բարձրաձայն խոսում էին՝ մենաշնորհից զրկելով խորտկարանում իշխող բարձր երաժշտությանը (բասկյան ռադիկալ ռոքը): Խոկինի կարծիքով՝ կոնսպիրացիայի համար անհաջող տեղ էր:

— Մեր ձայները փողոցից լսվում են:

Ով էլ մտներ կամ դուրս գար՝ ստիպված էր անցնել Խոշե Մարիի լայն թիկունքի կողքով: Ու նա շնորհավորանքներին պատասխանում էր արժանապատիվ հպարտությամբ, առանց ավելորդ ձևերի, քանի որ իրականում, ինչպես ասում էր՝ ասես ներողություն խնդրելով, ընդամենը իր պարտականությունն էր կատարել: Առավոտյան ավանի հանդբոլի թիմը Էլգոյբարի թիմին 25:24 հաշվով հաղթել էր: Յոթ գոլ Խոշե Մարին էր խփել: Նրան ասում էին.

— Քեզ պրոֆեսիոնալ թիմ են վերցնելու:

— Տեսնենք:

Սեղանի մյուս ծայրում Խոկինը սոցիալիզմի ու անկախության դրախտային մի պատկեր էր նկարագրում. Բասկերի երկրի յոթ տարածքները կմիավորվեն, սոցիալական դասակարգեր գոյություն չեն ունենա, և այդ երկրում, եթե կուզեք, խոտն էլ բասկերեն կխոսի: Իսկ հետո, իր կարծիքով, լավ հարաբերություններ է պետք հաստատել իսպանացիների ու ֆրանսիացիների հետ, լա՛վ. բայց նրանք թող իրենց տանը ապրեն, մենք էլ՝ մեր: Ներկայացնում էր ռազմավարական քայլերը Alternativa KAS-ի* ոճով:

* Alternativa KAS (բասկ.), ԿԱՍ կամ Սոցիալիստ հայրենասերների համակարգող այլընտրանք, 1976-ին ներկայացված քաղաքական ծրագիր, որը երկար ժամանակ բասկ ձախ հայրենասերների գործունեության առանցքում էր: ETA-ն ԿԱՍ այլընտրանքի ճանաչումը առաջադրել էր որպես զինված պայքարից հրաժարվելու պայման: ԿԱՍ այլընտրանքը 1978-ին հիմք հանդիսացավ Herri Batasuna-ի՝ ETA-ի քաղաքական թևի ստեղծման համար, որը 1986-ին վերածվեց կուսակցության, 2003-ին վերջնականապես փակվեց:

Խմբավորումը միահամուռ համաձայնում էր՝ խմելով կալիմոչո* կամ էլ գարեջուր:

Միակ մարդը, որ ժամանակ առ ժամանակ շեղվում էր՝ նայելով ուրիշ կողմ կամ հայացքը դեպի հեռուստացույցը ուղղելով, Խոշե Մարին էր, որին հաճախ դիմում էին մտնողներն ու դուրս եկողները:

Խոկինը բռունցքով հարվածեց սեղանին.

— Ով էլ մեջտեղ ընկնի՝ խոչընդոտելով մեր ժողովրդի նպատակներին՝ հերը կանիծենք: Նույնիսկ եթե aita-ս լինի, դրա տիրոջ մերը: Սա Ա կետից Բ կետը գնալու պես բան է: Հիմա Ա-ում ենք,– ցուցամատը հենեց սեղանին,– իսկ Բ-ն այնտեղ է՝ բաժակի մոտ: Ուրեմն դեպի Բ-ն պիտի գնանք ամեն գնով:

Ընկերները երկրորդում էին նրա ասածներն ու ժեստերը: Մեկն ասաց.

— Օր օրի՝ յուրաքանչյուրն իր ավանում կամ քաղաքում, միայն այդպես մեր գործն առաջ կտանենք:

Մյուսը, թե.

— Բայց դժվար է լինելու, հը՞: Կառավարությունը խիստ է տրամադրված:

— Կառավարությունն անասունի մեկն է:

Խոկինը ձեռքի մի շարժում արեց, ասես նշեր, որ խոսակցության տերն ինքն է.

— Ի վերջո մեծ կայսրություններն էլ են կործանվել: Նայե՛ք Նապոլեոնին: Դու այսօր մի զինվոր սպանի՛ր, հաջորդ օրը՝ մի ուրիշ ու կտեսնես՝ զորքը ոնց կնոսրանա:

Ուրախ, ընկերաբար խմեցին Alternativa KAS-ի գաղափարների կենացը: Խոշե Մարին ո՛չ բաժակը խփեց, ո՛չ էլ կենացի մասին տեղեկացավ, որովհետև զավզակություն էր անում իր գործարանից մի տղայի հետ, որ իր սեղանի մոտ էր կանգնած: Հարցրին իր կարծիքը:

— Գիտեք, որ քաղաքականություն չեմ սիրում: Ինձ համար մեկ է՝ սա՞ է կառավարում, թե՞ մյուսը: Ես պայքարում եմ զուտ Բասկերի երկրի ազատագրման համար: Մնացածը պետքս չէ: Խոկինն արդեն ասաց՝ Ա-ից Բ պիտի գնանք ու երբ Բ-ին հասնենք, ինձ հանգի՛ստ թողեք: Կգնամ սարերը, խնձորենիներ կտնկեմ, հավաբուն կսարքեմ, իսկ դուք կարող եք ռադներդ քաշել:

* Կալիմոչո, կարմիր գինու ու կոլայի խառնուրդ:

Հակաճառողներ եղան.

— Պետք է բանվոր դասակարգի մասին էլ մտածել:

— Բացի այդ՝ պետք է իսպանական լծից ազատվել: Այդքան էլ հեշտ բան չէ:

Խոշե Մարին կալիմոչոյից կում արեց, ու հանդուգն հանգստությամբ նայելով տղաներից մեկին՝ ասաց.

— Ամեն ինչ բարդացնում եք: Տեսե՛ք, եթե անկախ լինենք, մնացած հարցերը մենք ինքներս կլուծենք: Աշխատավորների կյա՞նքն է պետք լավացնել: Հրաշալի՜: Կլավացնենք: Ո՞վ պիտի մեզ արգելի, եթե մեզ դրսից ոչ ոք չի կառավարելու: Հիմա բասկերենի հարցը: Նույն ձևով: Այստեղ ամեն մարդ պետք է բասկերեն սովորի, և վերջ: Իսպանական ոստիկանությա՞ն, զորքի՞ հարցը: Ենթադրվում է, որ եթե անկախություն ենք ձեռք բերել, ուրեմն նրանց հետևներին արդեն տվել ենք: Մենք կունենանք մեր սեփական ոստիկանությունն ու մեր զորքը, իսկ ես՝ իմ հավերն ու խնձորենիները:

— Բա Նավառայի՞ հարցը:

Նախքան պատասխանելն անհամբեր փնչացրեց:

— Եթե Նավառան մեջը չէ, ուրեմն Բ կետին դեռ չենք հասել, ու Բասկերի երկիր չկա: Նույնը՝ Իպառալդեի տարածքները: Չե՞ք զգում՝ ոնց եք ամեն ինչ բարդացնում:

Էլ բան չասաց, քանի որ նրան փողոցից նշաններ էին անում: Խոսունեն էր՝ առջևի մազափունջը կարճ կտրած, երկար, ուղիղ մազերի «պոչիկը» մեջքին, քշտած թևքի տակից երևացող կաշվե թևնոցներ: Հաղթանդամ Խոշե Մարին գցվեց՝ նրան համբուրելու: Աղջիկը հետ քաշվեց դեմքի կոշտ արտահայտությամբ: Քանի անգամ պիտի ասի, որ չի ուզում փողոցում համբուրվել:

— Ի՞նչ է եղել:

— Դե՛, քրոջդ եմ տեսել մի տղայի հետ. ոնց որ թե նրա սիրածն է: Փաթաթված էին պարում, դրա համար եմ ասում: Արանչյան թույլ է տալիս, որ բոլորի ներկայությամբ իրեն համբուրի: Ինձ դա դուր չի գալիս:

— Եկել ես՝ ինձ բամբասանքներ պատմելո՞ւ:

— Զևացրի, թե պատահաբար եմ հանդիպել, որ ինձ ծանոթացնի: Ավանից չէ այդ տղան:

— Տե՛ս, neska*, քույրս ինձնից մեծ է: Գիտի՝ ում հետ է հանդիպում: Ես այդ հարցերին չեմ խառնվում:

* Neska (բասկ.), աղջիկ:

— Չե՞ս ուզում իմանալ՝ անունն ինչ է:

Նրա համար մեկ էր:

— Գիլյերմո:

Խոշե Մարիի կարծիքով այդ անունը ոչ լավն էր, ոչ վատը: Ուրիշ բան՝ ազգանունը:

— Ազգանունն ի՞նչ է:

— Չհարցրի:

— Եթե ընտանիքի անդամ դառնա, նրա համար մի մականուն կմտածենք: Մի՛ անհանգստացիր:

Խոշե Մարին հաստատ քունը չէր կորցնելու այն պատճառով, որ քույրը մի տղայի հետ էր հանդիպում ու նրան ավան էր բերել՝ ծանոթներին ու գուցե և ընտանիքին ներկայացնելու համար:

— Maqueto* է: Դեմքին նայես՝ հերիք է: Ու բասկերեն չի խոսում:

— Ի՞նչ գիտես:

— Գրողը տանի, որովհետև երբ Արանչան նրան ինձ ներկայացրեց, նրա հետ խոսեցի, ու այդ տիպը չէր հասկանում, ու ստիպված իսպաներեն շարունակեցինք: Չլսված մի բան կլինի, որ մի իսպանացի մտնի ձեր ընտանիք: Կարող է նույնիսկ ոստիկան լինել ու քրոջդ հետ հանդիպելով քողարկված՝ մեզ բոլորիս լրտեսել՝ քեզնից սկսած:

Խոշե Մարին ունքերը կիտեց:

— Բասկերեն չիմանալը դեռ չի նշանակում, որ…

— Ի՞նչ:

«Առանո» խորտկարանից ծիծաղ էր լսվում, աղմուկ ու երաժշտություն: Ու Խոշե Մարին, գլուխը քորելով, նկատեց, որ կողքը իր ուրախ, խմող ընկերներն են, իսկ իր առջև՝ Խոսունեն՝ մռայլ դեմքով:

— Լա՛վ, դե՛. երբ Արանչային տեսնեմ, կհարցնեմ: Գալի՞ս ես խորտկարան:

— Ինձ տանն են սպասում:

— Իսկ քեզ ե՞րբ կարելի կլինի համբուրել:

— Այստեղ՝ ոչ:

— Դե՛, գնանք այս շքամուտքը:

---

* Maqueto, Իսպանիայի այլ նահանգից եկած մարդ, որը բասկերեն չգիտի:

Գնացին այնտեղ, դռան ու փոստարկղերի արանքում մի հինգ րոպե ստվերի մեջ գրկախառնված մնացին, մինչև որ լսեցին աստիճաններով իջնող քայլերի ձայնն ու արագ դուրս եկան փողոց:

37

Կովատորթը

Գորկայի մի քիչ (եթե անկեղծ՝ բավականաչափ) տափակած քիթը, նաև ատամնաշապիկի քերծվածքն իրենց բացատրությունն ունեն: Ինը տարեկանում փոքրածավալ բեռնատարի տակ էր ընկել: Կարող էր զոհվել: Առաջինը չէր լինի ավանում: Երբ դեռ լրիվ չէր ապաքինվել, իր ծնողներին հարցրեց (իր այդ մեղմ, երգեցիկ ձայնով, որ հիմա արդեն անհետացել է, բայց որը երբեմն թեթև զգացվում է)՝ եթե մեռներ, իր համար է՞լ մայրուղու եզրին խաչ կդնեին, ինչպես արվել էր Իսիդորո Օտամենդիի համար, որը զոհվել էր մոտոցիկլով աշխատանքի գնալիս:

Հիմա արդեն, երբ վախն անցել էր, Խոշիանը որոշեց կատակել.

— Իհարկե: Ավելի մեծը կդնեինք: Ու երկաթից, որ երկար դիմանար:

Միրենին խոսակցությունը բոլորովին չէր զվարճացնում:

— Լսե՛ք, ձեննե՛րդ կտրեք: Թե չէ Աստված մեզ կպատժի:

Նիհար, նուրբ երեխա: Հետո՝ դեռահասության տարիներին, ձգվեց ու միշտ մի քիչ կռացած էր ման գալիս, ասես ամաչեր իր հասակից կամ էլ գուցե դեմքին դուրս պրծած բշտիկներից: Դրսում մորն ասում էին, որ եթե այդպես շարունակվի, ստիպված է լինելու նրան շալակն առնել, քարշ տալ: Միրենը ծանր էր տանում դիտողությունները:

— Ի՞նչ եք ինձնից ուզում: Պատժեմ, որ այլևս չաճի՞:

Տասնվեց տարեկանում արդեն ընտանիքում ամենաբարձրահասակն էր: Մեկ ուրիշը լիներ՝ ավելի ամրակազմ, ավելի ծանր, պակաս ճկուն, վրաերթից հետո ուշքի չէր գա, ասում էին: Ովքե՞ր: Նրա մայրը, հայրը, բոլորը: Գորկան սովորել էր ժպտալ՝ թաքցնելով իր կոտրված ատամը: Բայց տափակած քիթը հնարավոր չէր թաքցնել: Մոր կարծիքով՝ մի քիչ է տափակած, մի՛ չափազանցրու:

— Թե՞ կնախընտրեիր մեռնել:

Տղան, թե՝ շատ տափակ է, ama, լրիվ տափակ: Խոշե Մարին, որը նույն կարծիքին էր, նրան բռնցքամարտիկ անվանելով ու ձեռնամարտի սադրելով՝ բարդույթների մեջ էր գցում:

Ծաղրելով կանգնում էր Գորկայի առջև ու իբր վախեցած ասում էր.

— Ինձ չխփե՛ս, ինձ չխփե՛ս:

Պատահարից հետո մի քանի շաբաթ երեխան ծանր գիշերներ անցկացրեց: Վրաերթի պատկերներն անընդհատ հայտնվում էին աչքի առաջ՝ թե՛ երազներում, թե՛ կիսաարթուն գրգռված վիճակում: Միշտ նույն պատկերներն էին: Մեքենան վրան էր գալիս ու տակը գցում: Մեքենան վրան էր գալիս, իսկ նա միայն բարձով կարող էր պաշտպանվել: Խոշե Մարին, որի հետ Գորկան նույն սենյակում էր քնում, դժգոհում էր խոհանոցում:

— Ամբողջ գիշեր բղավում է ու չի թողնում՝ քնեմ:

Բացի այդ՝ նրան կրկնօրինակում էր՝ սրտաճմլիկ տնքոցների տնազն անելով: Նրան անգթորեն ծաղրում էր: Խոշիանը սովորաբար միջամտում էր հաշտեցնող ու հայրական տոնով՝ լա՛վ, լա՛վ, հանգստացի՛ր՝ խղճահարությամբ նայելով իր կրտսեր զավակին:

Միրենը սար ու ձոր չէր ընկնում.

— Լսի՛ր, գուցե թողնես՝ եղբայրդ գիշերը քնի՞:

Գորկան մղձավանջներում անիվների ճռռոցն էր լսում ու գլուխը մի կողմ էր թեքում, բայց հասցնում էր տեսնել մետաղյա գազանի լուսարձակ աչքերը: Դրանք արագ ու ուղիղ վրան էին գալիս: Արդեն մոտիկ են. երեք մետր, երկու, մեկ: Հնարավոր չէր խուսափել: Երազում իրական մանրամասներ կային, որոնք առաջ չէր հիշում. անձրևից թաց մայրուղին, գորշ երեկոյի աղոտ լույսը, բամպերը, որը նա պատկերացնում էր որպես իրեն խժռելու պատրաստ ժանգոտ մի շրջանակ:

Հետո՝ ոտքեր, որ վազելով մոտենում են նրան: Ինչ-որ մեկը (վարո՞ղը) մի հայհոյանք է տալիս իսպաներեն: Ի՞նչ հայհոյանք: Չի հիշում: Միակ բանը, որ գիտի՝ իրեն չէին հայհոյում: Գուցե դառնությունից էր: Ապշելուց: Բենզինի, խոնավ ասֆալտի հոտ է գալիս: Երբ նրան հանեցին մեքենայի տակից, գիտակից վիճակում էր ու այնպիսի զգացում ուներ, ասես մի մութ արկղի միջից հանեին: Չգիտի՝ հանողը ով էր: Երևի հենց վարորդն էր: Բերնից ու քթից արյուն էր գալիս, բայց ոչ մի տեղը չէր ցավում: Ոչ մի տե՞ղ: Կոտրված թևն էլ չէր ցավում, գոնե սկզբում: Ասես թևը թմրած լիներ: Գորկան բերանի վրա էր ընկել: Մեռնելու էր: Այնքան էր ամաչում, որ լաց չեղավ: Խոշե Մարին օրեր անց տանը նրան սադրում էր:

— Հաստատ լացել ես:

— Չեմ լացել:

— Խաբլա՛ն: Քեզ ամբողջ ավանն է լսել:

Ու այդպես շարունակ, մինչև Գորկան լացեր: Բայց դա արդեն տանն էր տեղի ունենում, երբ Գորկան դեռ ապաքինվում էր՝ դեմքին ահռելի մի կապտուկ, թևը գիպսի մեջ: Մայրուղու վրա՝ բեռնատարի կողքը, նույնիսկ արցունք չթափեց աչքերից: Ամոթից մեռնում էր: Մայթին հավաքվել էին բերանբացները, մարդիկ նայում էին պատուհաններից:

— Խոշիանի փոքրը չէ՞:

Հագուստը կեղտոտվել էր: Իր արյունն էր ու ասֆալտի կեղտը: Վա՜յ, ama-ն որ տեսնի… Մի կոշիկը չկար: Ու հենց բեռնատարի վարորդն էլ նրան իր մեքենայով հիվանդանոց հասցրեց:

Թևը կարգի բերեցին: Քիթը՝ ոչ: Երբ փոքր էր, թերությունը չէր զգացվում: Բայց հետո՝ դեռահասության տարիներին, երբ նրա դեմքի ձևն էր փոխվում, զգացվեց, որ քիթը լավ ձև չի ընդունում: Քթի ոսկորը իր տեղում չէր. տափակած էր, թե ծռված՝ չէր հասկացվում: Մայրն առանց ավելորդ քնքշության մխիթարում էր նրան:

— Ընչել կարողանո՞ւմ ես:

— Այո՛:

— Կծել կարողանո՞ւմ ես:

— Այո՛:

— Դե՛, ուրեմն, էլ ի՞նչ ես ուզում:

Գորկային վրաերթի ենթարկածը մի հիսուն տարեկան մարդ էր Անդոա՛ինից, պատրաստի քաղցրավենիք էր առաքում: Պատահարից երկու շաբաթ անց եկել էր երեխայի տուն՝ այցելության: Բարեհամբույր մարդ էր, հեռախոսով բազմիցս հետաքրքրվել էր՝ Գորկան արդեն ապաքինվե՞լ է, արդեն լա՞վ է, կարո՞ղ է նորմալ կյանքի վերադառնալ: Զգացվում էր, որ մտահոգվում է: Ամեն դեպքում, մի օր, երբ դռան զանգը տվեց, ու Միրենը դուռը բաց արեց, պարզվեց, որ Գորկան, թևը գիպսի մեջ, ikastola է գնացել: Մարդը տորթ էր նվեր բերել երեխայի համար:

— Իհարկե, ամբողջ ընտանիքի համար է:

Շաքարավազով խմորի թխվածքը՝ շոկոլադի ու սերուցքի տպավորիչ շերտով, զարդարված էր նուշի խյուսով ու բալերով:

Տարաձայնությունները սկսվեցին նախքան ճաշի ժամը: Ամենաշատը Միրենն էր բարկացել: Հիշում էր, որ երեկոյան՝ պառկելուց առաջ, չկտրած տորթը սառնարանում էր: Առավոտյան վեր կենալով՝ հայտնաբերեց, որ տորթի մեկ քառորդը չկա: Նրա առաջին, եթե չասենք միակ, կասկածյա-

լը Խոշե Մարին էր՝ այդ անկուշտ փորը: Որովհետև չեմ կարծում, որ նրա հայրը… Թե՞ նա է: Մեկը հանդբոլի իր թիմով մարզի ավաններից մեկում էր, մյուսը գնացել էր հեծանիվ քշելու: Երբ վերադառնան, երկուսից մեկը, դեռ չգիտեմ ո՛ր մեկը, իր հալը կտեսնի: Արանչան նկատեց, որ մայրը կռիվ անելով ինքն իր հետ է խոսում:

— Ի՞նչ է եղել, ama:

— Հե՛չ:

Ու էլ չխոսեցին: Հայրն ու որդին իրարից մի քանի րոպե տարբերությամբ տուն մտան: Ժամը քանի՞սը կլիներ: Մե՞կը: Մոտավորապես: Սոված, հոգնած (Խոշիանը՝ հեծանվորդի մարզահագուստով) հարցրին՝ ուտելու ինչ կա: Կշտամբանքներ, մեղադրանքներ, բարկություն. դա էր եղածը:

Խոշե Մարին խոստովանելու բան չուներ: Բայց ուշադի՛ր, երբ ինքը նախաճաշին իր կտորն էր վերցնում, տորթն արդեն կտրած էր: Ու մտածել էր, որ տորթը բոլորի համար է:

— Ինչպե՞ս թե՝ կտրած:

— Ավելի մեծ կտոր էր կտրած, քան ես կտրեցի: Աստվա՛ծ վկա, ama:

Միրենը, աչքերում զայրույթ, ատամները սեղմած, դարձավ դեպի ամուսինը ու բղավեց վրան՝ ժամանակ չտալով բացատրելու համար: Խոշիանը, գլուխը տարուբերելով, ասում էր՝ ոչ: Ընդունեց, որ տնից դուրս գալուց քիչ առաջ, չկարողանալով իրեն զսպել, նշախյուսից երեք բալ էր կերել, ու վերջ: Մնացածին չէր կպել: Խոշե Մարին չհավատաց:

— Լավ, aita, չի՛ կարող պատահել:

— Ի՞նչը:

— Երբ վեր կացա, տորթի մի մեծ կտոր արդեն չկար, իսկ դու ինձնից շուտ էիր դուրս եկել:

— Տեղում մեռնեմ, թե ես եմ: Քանի՞ անգամ պիտի կրկնեմ, որ կերածս նշախյուս է եղել: Երբ սառնարանը բացեցի, տորթի մի մասը չկար:

Նայեցին Գորկային:

— Ո՛չ, ես չէի:

Միրենը պաշտպանեց փոքրին:

— Երեխային հանգի՛ստ թողեք: Տորթն իր համար էր: Կարող էր մենակ ուտել:

Գորկան էլ խնդրեց, որ չվիճեն, և որ տորթը բոլորի համար է: Երեխայի՝ հաշտեցնող, մեղմ ձայնով ասած բառերն ավելի թեժացրին կրքերը, այն աստիճան, որ Միրենը վճռական մի պոռթկումով գոգնոցը հանեց ու

նրանց ասաց.

— Կարող եք առանց ինձ ուտել:

Կատաղած դուրս եկավ խոհանոցից ու մի րոպեից վերադարձավ դանդաղ ու կարծես հանգիստ, քանի որ այդ ընթացքում Արանչան, որին ճաշասենյակում հանդիպեց (ի՞նչ է պատահել, ama, ինչո՞ւ եք բղավում), նրան չուզելով պատմել էր, որ.

— Երեկ երեկոյան, երբ տուն եկա, սոված էի ու մի կտոր ինձ համար կտրեցի:

— Դո՞ւ ես առաջինը կտրել տորթը:

— Չէի՞ կարող:

Հինգով լուռ ճաշեցին: Երբ ափսեները հավաքեցին, Խոշե Մարին տորթը դրեց սեղանին ու դարակից մի մեծ դանակ հանեց:

— Դե՛, լա՛վ, վերջացրե՛ք… Ո՞վ է ուզում:

Արանչան գլխի շարժումով հրաժարվեց: Միրենը չպատասխանեց: Գնաց ամանները լվանալու: Խոշիանը, թե.

— Եղբորդ հետ կերե՛ք:

Գորկան փոքր կտոր էր ուզում: Խոշիանին կտրածը շատ փոքր թվաց:

— Մի քիչ էլ դի՛ր նրա համար:

Բայց Գորկան ասաց, որ սոված չէ: Խոշե Մարին ամանն իր առաջ դրեց՝ ակնհայտորեն պատրաստվելով խփշտել մնացած տորթը: Հայրն ապշած նայում էր նրան: Երկու նախուտեստից, սիսեռով ապուրից ու խորոված հավ ու կարտոֆիլից հետո, այդ ամենից հետո, որ մենակ կերել էր այնքան, որքան ընտանիքի մնացած անդամները բոլորը միասին, ինչպե՞ս կարող էր նրա ստամոքսում դեռ տեղ մնալ այդքան տորթի համար: Սեղանի տակ թեթևակի խփեց տղայի ոտքին: Գրավելով որդու ուշադրությունը՝ նրան նշան արեց, որ մի կտոր էլ իրեն տա: Խոշե Մարին զգուշությամբ մոր մեջքի հետևում կտորը նրան փոխանցեց: Հետո էլ Արանչան, ծիծաղը զսպելով, թաքուն իր համար մի կտոր խնդրեց Խոշե Մարիից:

38

Գրքեր

Գորկան իր ձգվելու-բոյ քաշելու տարիքում նախընտրում էր միայնությունը: Քույրն ու եղբայրը քիչ էին տանը լինում, իսկ նա դուրս էր գալիս՝ միայն ikastola գնալու համար: Պատճա՞ռը: Գրքերն էին պատճառը, կամ էլ, ինչպես ճակատը խոր կնճռելով՝ հայրն էր ասում, տխմար գրքերը: Տղան կարդալու ցավով էր տառապում:

Ծնողների անհանգստությունը հետզհետե ահագնանում էր: Ոչ այնքան գրքերի պատճառով: Ուրե՞մն: Այդքան ժամեր իր սենյակում փակված մնալու պատճառով էր՝ շաբաթ-կիրակիները ներառյալ, հաճախ մինչև այն ուշ ժամը, երբ Խոշե Մարին վերադառնում էր ու ստիպում սեղանի լուսամփոփն անջատել: Տարօրինակ երեխա է՝ շշնջում էին: Խոշիանն ասում էր.

— Ի՛նչ ափսոս, որ գլխի մեջ պատուհանիկ չունի՝ իմանայինք՝ մեջն ինչ կա:

Գիշերները անկողնում ամուսինները ցածրաձայն զրուցում էին.

— Տնից դուրս եկե՞լ է:

— Չէ հա՛: Ամբողջ երեկո կարդում էր:

— Երևի քննության համար է:

— Հարցրել եմ, ասաց, որ ոչ:

— Տխմա՛ր գրքեր:

Մի առավոտ խոհանոցում, մինչ տղան նախաճաշում էր, մայրը, առջևը կանգնած, նրան էր ուսումնասիրում: Կռացած իր մեծ բաժակի վրա՝ նստել էր. յուղոտ մազեր, ոսկրոտ ձեռքեր, բշտիկների մեջ կորած մաշկ: Միրենը լեզուն կծում էր, բայց ի վերջո չդիմացավ.

— Լսի՛ր, հոգեբանական խնդիրնե՞ր ունես:

Տասնչորս տարեկան էր: Նրա ընկերները գալիս էին հետևից, իսկ նա նույնիսկ չէր գալիս ընդառաջ: Մայրը հարցնում էր, թե հետը ինչ է կատարվում, գուցե հիվանդ է, կամ ընկերներն են նեղացրել: Կամաց-կամաց ընկերներն այլևս չեկան: Խոշիանը անհանգստանում էր:

— Դրա տիրոջ… Ա՛յս տղան:

Մոտենում էր Գորկային: Ընկերաբար ձեռքը ուսին էր դնում: Երկու հարյուրերեք հարյուր պեսետա էր առաջարկում:

— Գնա՛, հաճելի ժամանակ անցկացրո՛ւ:

— Aita, չեմ կարող:

— Քեզ ո՞վ է արգելում:

— Չե՞ս տեսնում, որ կարդում եմ:

— Դե՛, լա՛վ, թույլ եմ տալիս՝ ծխես:

— Ո՛չ, aita, մի՛ պնդիր:

Երբեմն Խոշիանը, հետաքրքրություն ու ընկերական մոտեցում ցուցաբերելով, նրան հարցնում էր.

— Ի՞նչ ես կարդում:

— Ռուս հեղինակի գործ է: Մի ուսանողի մասին է, որը կացնով երկու կին է սպանել:

Խոշիանը սենյակից դուրս էր գալիս շփոթված, մտահոգ: Տասնչորս տարեկան է և ամբողջ օրը ճգնավորի պես տանն է անցկացնում: Նորմա՞լ է: Այս մտքերի մեջ՝ կանգնում էր միջանցքում՝ քննող հայացքը որևէ բանի հառած. կարևոր չէ՝ Իգնասիո Լոյոլացու նկարը լիներ, թե ներկառուցված պահարանը կամ սողնակը, կարևորը՝ որևէ իր լիներ, որ նրա համար առաջին իսկ հայացքից հասկանալի էր, ու որոշ ժամանակ ինքն իր մեջ ինչ-որ բան էր փնտրում՝ անհասկանալին կանոնավոր դարձնելու, դրան պատասխան ու բացատրություն գտնելու նպատակով: Մինչև «Պագոետա» բար հասնելը մտքից դուրս չէր գալիս տղան՝ տխմար գրքի վրա կռացած Գորկան:

Գիշերն անկողնում ասում էր Միրենին.

— Սա կամ շատ խելացի է, կամ հիմար: Չգիտեմ՝ ում է քաշել:

— Եթե հիմար է, քեզ է քաշել:

— Ես լուրջ եմ խոսում:

— Ես էլ:

Ու խնդիրն այն էր, որ այդքանից հետո դպրոցում ցածր գնահատականներ էր ստանում: Իհարկե, ոչ այնքան ցածր, որքան Խոշե Մարին իր դպրոցական տարիներին: Խոշե Մարին ու սպորտը համատեղելի էին, Խոշե Մարին ու ձեռքի աշխատանքը՝ նույնպես, բայց Խոշե Մարին և ուսումը ջուր ու ձեթի պես անհամատեղելի էին (նույնը եղավ, երբ մետաղագործարանում, որտեղ աշկերտության էր մտել, ստիպված էր տեսական առարկաներ

սովորել), ինչը նրան չէր խանգարում ծիծաղել Գորկայի վրա:

— Դե՛, լա՛վ, գլուխս մի՛ տար: Այդքան գիրք ես կարդում, որ մաթեմատիկան ու անգլերենը մի կե՞րպ հանձնես:

Ընթերցելու սերը Արանչան էր ներարկել իր փոքր եղբորը: Ինչպե՞ս: Ժամանակ առ ժամանակ ծննդյան օրվա, սրբի օրվա, Սուրբ Ծննդյան տոների առթիվ կամ էլ հենց այնպես նրան կոմիքսներ էր նվիրում, հետո, երբ մեծացավ, տարբեր այլ գրքեր: Նույնը, իհարկե, Խոշե Մարիի համար էր անում, բայց ապարդյուն: Եղբայրների պարագայում Արանչայի արածը լրիվ համապատասխանում էր սերմն անպտուղ թե բերրի հող գցելու առակին: Գորկայի դեպքում՝ հողը բերրի էր, ու ընթերցանությունը սերմանվել էր:

Բացի այդ՝ Արանչան սիրում էր բարձրաձայն կարդալ եղբոր համար, երբ Գորկան փոքր էր, ինքն էլ հազիվ ինը-տասը տարեկան աղջնակ էր: Երկուսով նստում էին հատակին, կամ տղան պառկում էր, իսկ նա կողքն էր նստում ու կարդում էր դասական հեքիաթներ, պատմություններ՝ մանուկների գունազարդ Աստվածաշնչից:

Այն օրերին, երբ երեխան վերականգնվում էր վրաերթից հետո, Արանչան քաղաքային գրադարանից գրքեր էր բերում նրա համար: Գորկան այդ ժամանակ, արդեն բառերը քթի տակ ասելով, ինքնուրույն էր կարդում ու սկսել էր սեփական ճաշակը ձևավորել. Ժյուլ Վեռնի, Սալգարիի, այնուհետև՝ Սվեն Հասելի ռազմավեպերը, լրտեսների մասին պատմություններ ու դետեկտիվներ, բոլորը՝ էժան հրատարակություններ:

Ավելի ուշ, ծնողներին տեղյակ չպահելով (ի՞նչ կարիք կար), Արանչան նրան իր սեփական գրքերն էր տալիս՝ մի երեսուն գիրք, որ պահում էր պահարանի գլխին՝ ստվարաթղթե արկղում: Հիմնականում սիրային վեպեր էին, բացի այդ *«Պատերազմ և խաղաղություն»* վեպի հակիրճ տարբերակը, *«Ֆորտունատան և Խասինտան»* ու Ալվարո դե Լաիգլեսիայի վեց-յոթ գրքերը, որոնք Գորկային, ի տարբերություն Արանչայի, այդքան էլ դուր չեկան, բայց բոլորը հաճույքով կարդաց:

Ու երբ ծնողները սկսեցին նախատել նրան, որ տանն է մնում՝ ընթերցելու, փոխանակ ընկերների հետ փողոց դուրս գար՝ զվարճանալու, Արանչան, երբ մենակ էին, եղբորն առեղծվածային տոնով, որ մյուսները չլսեն, ասաց.

— Կարդա՛, որքան որ կկարողանաս: Մեջդ մշակույթ կուտակի՛ր: Որքան շատ, այնքան լավ: Որպեսզի չընկնես այն փոսը, որի մեջ այս երկրում շատերն են հայտնվում:

Անկախ այդ փոսից՝ Գորկան նվիրվել էր ընթերցանությանը, ու Խոշե Մարին, երբ նրա ձեռքը գիրք էր տեսնում, սկսում էր կյանքն ուտել.

— Լսի՛ր, քանի որ այստեղ ես, կարո՞ղ ես ձեռքիս գծերը գուշակել:

Մի գիշեր, երբ յուրաքանչյուրն իր անկողնում էր, նրան խայթելով՝ ասաց.

— Ավելի ճիշտ կանես՝ վեպերդ թողնես ու միանաս Բասկերի երկրի ազատագրման պայքարին: Վաղը՝ ժամը յոթին, ցույց կա: Հուսով եմ՝ կգաս: Քո ընկերների խումբը պայքարում է, դու չես երևում: Իրենց ի՞նչ պիտի ասեմ: Բա թե գիտեք՝ նա շատ նուրբ տղա է ու ամբողջ օրը կարդում է: Վաղը յոթին քեզ հրապարակում տեսնեմ:

Ու Գորկան գնաց, ճարն ի՞նչ: Որ իրեն տեսնեն: Սրան-նրան բարևեց, ու Խոշե Մարին, որ ցույցի առջևի շարքում պաստառը բռնողներից մեկն էր, նրան աչքով արեց: Գորկան, երիտասարդների ամբոխին խառնված, մի քանի կոչ ձայնարկեց միջին խանդավառությամբ: Նույն ձևով, մյուսների նման բռունցքը վեր պարզած, երգեց Eusko Gudariak*: Երեկոյան ժամը ութին արդեն տանն էր, ընթերցում էր:

* Eusko Gudariak (բասկ.), «Բասկ զինվորներ»: Ժողովրդական երգի անվանում է, որը ձախ հայրենասերները կատարում են որպես իրենց երկրի օրհներգ:

39

Ես կացինն եմ, դու՝ օձը

Այդպես էլ մեծացան՝ Գորկան՝ բոյ քաշելով, Խոշե Մարին՝ լենքին տված: Իրենց միավորողը ազգանունն էր, ուրիշ բան չկար: Ընկերները ծաղրում էին Խոշիանին՝ գուցե մեկին կերակրում է, մյուսին՝ ոչ: Տանը նա զգուշանում էր պատմել տղաների մասին կատակները: Թե չէ Միրենի համբերությունը հատում էր: Հարևանուհու գլխին էդ ի՛նչ բերեց. կինը համարձակվել էր ենթադրել, թե Գորկան ճիժու ունի:

Երբ Խոշե Մարին դեռ տանն էր ապրում, եղբայրները քնում էին նույն սենյակում. մեկը՝ սենյակի ձախ անկյունի մահճակալին, մյուսը՝ աջ, արանքում՝ հատակին, թաղիք էր փռած:

Քանի որ Խոշե Մարիի մահճակալը պատուհանի մոտ էր, տեղը չէր հերիքում ո՛չ իր պաստառների, ո՛չ էլ սպորտային և հայրենասիրական խորհրդանիշների համար, որոնցով նա ցանկանում էր զարդարել իրենց սենյակը: Մի օր՝ մի պաստառ, մյուս օրը մի նկար կամաց-կամաց գրավում էին Գորկայի մասը, որի սեղանիկը գտնվում էր կացնով ու օձով և Bietan Jarrai* կարգախոսով մի պաստառի տակ:

Գորկայի միակ պաստառը Café de las Salesas-ում նստած Անտոնիո Մաչադոյի հայտնի լուսանկարի մեծադիր վերատպությունն էր:

— Էս ո՞վ է էս դեմքը:

— Դե՛, լա՛վ, դու էլ… գիտե՛ս:

— Չէ՛, լո՛ւրջ: Տարզանի պապի՞ն է:

— Բանաստեղծ է:

Դրան հետևող ծաղրը հայտնի էր. Խոշե Մարին ընդամենը առիթ էր փնտրում, որ արտահայտվի իրեն հատուկ ձևով.

«Օ՛, պոե՛տ, երգի՛ր
Հույզերդ անբասիր.
Շալվարս հանի՛ր, Ձվերս քորի՛ր»:

---

* Bietan Jarrai (բասկ.), Շարժվել երկու ուղղությամբ: Կացինը խորհրդանշում է մի ուղղությունը՝ զինվորական ուժը, իսկ օձը՝ մյուսը՝ իմաստնությունը կամ քաղաքական խորամանկությունը:

Գորկայի բացակայությամբ Խոշե Մարին Անտոնիո Մաչադոյի պատկերի վրա ֆլոմաստերով բեղեր ու կույրի ակնոց էր նկարել, բերանի կողքը կոմիքսի ոճի ամպիկ էր գծել ու մեջը Gora ETA գրել: Ու ծաղրելով, խորամանկ տեսքով վստահեցնում էր, որ գլխարկով ծերուկը գիտեր, թե ինչ էր ասում: Գորկան հանձնված, նույնիսկ անտարբեր թույլ էր տալիս, որ իրեն նվաստացնեն: Արանչային դա դուր չէր գալիս ու հաճախ նրան նկատողություն էր անում.

— Ինչո՞ւ չես պաշտպանվում: Ինչո՞ւ նրա հետ նույն ձևով չես վարվում:

— Նախընտրում եմ չջղայնացնել:

— Վախենո՞ւմ ես նրանից:

— Մի քիչ:

Ինտելեկտուալ հարցերում Գորկան զգալիորեն գերազանցում էր եղբորը: Հաճախ մեծ եղբայրը, արդեն անկողնում, մթան մեջ շարունակում էր այն բանավեճերը, որոնք դրանից առաջ ունենում էր իր խմբավորման տղաների հետ «Առանո» խորտկարանում: Դեմքով դեպի առաստաղը՝ նյարդային քաշում էր օրվա վերջին սիգարետը, պաշտպանում էր զինված պայքարն ու անկախությունը, ու ոչ ոք չէր կարող սասանել նրա կարծիքը: Իր որոշ ընկերների տեսական ավելորդ բծախնդրությունը նրան սարսափելի նյարդայնացնում էր: Միայն նպատակներն էր կարևորում. միացնել Նավառան, վռնդել ռազմական ոստիկանությանը և այս կարգի բաներ, որոնք, գրողը տանի, հասկանալի են՝ առանց փիլիսոփայական էշությունների: Ու երբ այդ դիալեկտիկ վրդովմունքն անցնում էր, թեքվում էր դեպի Գորկան ու խաղաղված, ընկերաբար, եղբայրաբար հարցնում՝ քնա՞ծ ես, ու դիմում էր այս տիպի խնդրանքներով.

— Հլա՛ մի բացատրի՛ր, էդ մարքսիզմ-լենինիզմը ինչ է, բայց պարզ, հասկանալի բառերով ու արագ, որովհետև վաղը լուսադեմին պիտի վեր կենամ:

Փոքր եղբայրը բասկերենի տիրապետման հարցում էլ էր Խոշե Մարիից առաջ: Կանոնավոր կերպով կարդում էր escaldun* հեղինակների գրական գործերը, իսկ տասնվեց տարեկանից այդ լեզվով բանաստեղծություններ էր գրում, որոնք միայն Արանչային էր ցույց տալիս: Առանց չափազանցնելու՝ հազար անգամ ավելի լավ գիտեր լեզուն, քան Խոշե Մարին ու նրա ընկերները, որոնք խոսում էին իրենց իմացածի չափով, այսինքն՝

* Escaldun (բասկ.), բասկերեն իմացող անձնավորություն:

տանը ու փողոցում լսածի և ikastola-ի փոքր-ինչ հղկված տարբերակով: Հաճախ հավաքվում էին որևէ մեկի տանը՝ ձեռքով գրված պաստառներ պատրաստելու, որոնք հետո փակցնում էին ավանի շենքերի պատերին: Ժամանակ առ ժամանակ Խոշե Մարին ընկերներին իր սենյակում էր հավաքում, ու Գորկան նրանց մատնանշում էր քերականական և ուղղագրական՝ երբեմն կոպիտ սխալները:

Եղբայրը՝ խոցված, բայց անզոր, կասկածների մեջ էր ընկնում:

— Վստա՞հ ես:

— Իհարկե:

— Լա՛վ, կստուգեմ:

Ի վերջո, լսում էին նրան և ուղղում էին սխալները, ու քիչ չէին դեպքերը, որ նախքան գործի անցնելը նրան հարցնում էին՝ ինչպես է գրվում այս կամ այն բառը կամ նախադասությունը: Այդպես poliki* Խոշե Մարին ընդունեց եղբոր արժանիքները ու սկսեց հարգել նրան: Այն աստիճան, որ մի գիշեր, «Առանոյից» գալով ու անկողին մտնելով, առանց որևէ նախաբանի կամ բացատրության, թե.

— Բասկերենին մի լավ կպի՛ր, դա էլ է պայքարի մաս:

Այսինքն՝ bietan jarrai**: Պարզ է, չէ՞: Միտքը պարզ էր, կտրուկ, էլեմենտար: Նա կացինն էր լինելու, իսկ Գորկան՝ օձը: Լավ զույգ էր ստացվում: Երևի թե խմբավորման տղաներից մեկն էր Խոշե Մարիին գլխի գցել: Այսի՞նքն: Դե՛, մեկեն վերջ տվեց եղբորը ծաղրելուն՝ գրքերի հանդեպ սեր ունենալու, փողոց քիչ դուրս գալու ու նման բաների համար:

Նրան մի բան խնդրեց-աղաչեց (ոչ թե առաջվա նման հրամայեց-պահանջեց): Ի՞նչ էր խնդրածը: Երեք օրից՝ շաբաթ, ավանի բասկյան գնդակախաղի մարզապատի բարիգալստյան արարողություն էր նախատեսված Կարբուրոյի պատվին:

— Դու չէի՞ր ասում, որ ստահակի մեկն է:

— Ո՞վ: Կարբուրո՞ն: Կատարյալ ստահակ է: Դրանից վատ հնարավոր չէ: Բայց մեր գործը պաշտպանելու համար յոթ տարի փտել է բանտում ու արժանի է ongi etori***-ի:

---

* Poliki (բասկ.), կամաց-կամաց:

** Bietan jarrai (բասկ.), գնալ երկու ուղղությամբ: Մեկը՝ զինուժը, խորհրդանշվում է կացնով, մյուսը՝ քաղաքական իմացությունը կամ ճարպկությունը, խորհրդանշվում է օձով:

*** Ongi etori (բասկ.), բառացի՝ բարի գալուստ, այստեղ՝ բարիգալստյան արարողություն:

— Ես ի՞նչ պիտի անեմ:

— Պիտի լուսանկարես:

— Կարբուրոյի՞ն:

— Կարբուրոյին և շուրջը եղածներին: Վերցնում ես ֆոտոխցիկը, գնում ես մարզապատի մոտ ու սկսում ես աջուձախ լուսանկարել՝ հարսանիքի լուսանկարչի նման: Ինչքան որ կկարողանաս, եղա՞վ: Դրանցից մեկից, որը լավ ստացվի, պաստառներ կտպենք, հատը՝ երեք հարյուր պեսետա: Գաղափարը Խոկինը տվեց: Ես ասել էի, որ չտեսնված ֆոտոխցիկ ունես: Մնացած լուսանկարները կդնեմ ալբոմի մեջ, որի համար անուն էլ եմ մտածել՝ gudari*-ի ալբոմ: Մենք ծախսերի հարցը կլուծենք, եղա՞վ: Դրա մասին մի՛ մտածիր:

Շաբաթ օրը՝ երեկոյան կողմ, Գորկան առանց խանդավառության ուղղվեց դեպի մարզապատը՝ լուսանկարչական խցիկը վզից կախ: Երբ պատրաստվում էր տնից դուրս գալ, Արանչան հանդիմանելով հարցրեց, թե ինչու ես գնում, զգացվում է, որ գաղափարը դուրդ չի գալիս:

Միրենը խոհանոցի կողմից խառնվեց.

— Ա՛յ աղջիկ, թող գնա: Վերջապես դուրս է գալիս:

Մարզապատի կեսի չափով հարթակ էին սարքել: Վերևը՝ մի պաստառ՝ KARBURO ONGI ETORRI. Կողքը Կարբուրոյի սև-սպիտակ լուսանկարն էր փակցված՝ ավելի երիտասարդ ժամանակների, երբ մազերը դեռ ավելի խիտ էին, փորն ու բոխախը՝ ոչ այդքան մեծ: Պաստառի մյուս կողմը՝ կարմիր աստղի վրա, գրված էր. «Zure borroka gure eredu»:** Ոստիկանությո՞ւն: Հետքն էլ չկար, եթե, իհարկե, գործակալներից ոմանք ավանցիների հագուստով չէին քողարկվել ամբոխի մեջ, ինչը մի քիչ վտանգավոր էր առողջության համար, քանի որ այստեղ բոլորն իրար ճանաչում էին: Ծովի պես՝ ikurriñas***, մեծ քանակությամբ երիտասարդություն: Ո՛չ քառասունն անցների բերետների, ո՛չ էլ պապիկների պակաս չկար: Նաև՝ *դլա՛ն, դլո՛ն, դլա՛ն, դլո՛ն*՝ հարթակի մոտ մի տղա ու աղջիկ փայտիկներով հարվածում էին txalaparta****-ին: Մասնակիցները զբաղեցնում էին նստարան-

* Gudari (բասկ.), բասկ ազատամարտիկ:

** Zure borroka gure eredu (բասկ.), Պայքարդ՝ մեզ օրինակ:

*** Ikurriña (բասկ.), դրոշ՝ բասկյան դրոշ:

**** Txalaparta (բասկ.), դասական հարվածային գործիք, կազմված է փայտերի կտորներից, որոնց ռիթմիկ հարվածում են փայտիկներով:

ներն այնպես, ինչպես գնդակախաղի ժամանակ: Ինչ-որ մեկը բարևեց Գորկային.

— Aúpa, լուսանկարի՛չ:

Սա ևս մի ձև էր՝ ցանկում նրան նշելու, հայտնելու նրան, որ քեզ տեսել ենք, գիտենք՝ ինչ կարգավիճակով ես մասնակցում, լավ ես արել, որ եկել ես: Գորկան անընդհատ լուսանկարում էր: Նկարում էր txalaparta-ն, հանդիսատեսներին, դեռ դատարկ հարթակը: Բաճկոնի գրպանում էլ մի քանի ժապավեն ուներ: Ներեան, որ այն ժամանակ abertzale էր, անցնելիս նրան ժպտաց: Գորկան խցիկն ուղղեց աղջկա վրա, որն անշարժ մնաց նրան օդային համբույր տալու դիրքով, մինչև որ նա կոճակը սեղմեց: Լուսանկարից մի օրինակ կտա, չէ՞. Գորկան գլխով արեց: Ամեն վայրկյան տարբեր մարդիկ ֆոտոներ էին խնդրում:

Մի քանի մետր այն կողմ Խոսունեին հանդիպեց: Նրան հարցրեց Խոշե Մարիի մասին:

— Քիչ առաջ «Առանոյում» էր:

Մեկ րոպե անց ծափահարություններ հնչեցին: Կարբուրոն եկավ՝ մատները հաղթանակի նշան արած: Նրան երկու կողմից ուղեկցում էին Herri Batasuna-ի երկու ղեկավարներն ու քաղաքային խորհրդի գաղափարակից մի քանի անդամներ: Գորկան, նրանցից առաջ ընկած, լուսանկարում էր: Փաստորեն նա առաջինը բարձրացավ հարթակ: Խցիկը ձեռքին՝ բարձրացավ-իջավ, գնաց-եկավ՝ առանց որևէ մեկի ուշադրությունը գրավելու. աննկատ մի մարդ: Նկարեց նրանց, որոնք խոսափողով ելույթ ունեցան: Ու քաղաքապետին, որը չխոսեց, բայց այնտեղ էր: Նկարեց նաև aurresku պարողին ու chistulari-ին, որ մի երաժշտական ստեղծագործություն կատարեց՝ իրեն նվագակցելով տամբուրինով: Ու Կարբուրոյին՝ հուզված, շնորհակալ, գեր, վանդակավոր շապիկով, բռունցքը վեր: Արցունքն աչքերին՝ նա հիշատակեց ընկերներին, որ դեռ բանտարկված էին, ինչպես ասաց, մարդակործան պետական բանտերում: Էլի ծափահարություններ, gora ETA և ծաղիկներ, որը նրան հանձնեց ազգային տարազով մի աղջնակ:

Բոլորը ոտքի կանգնեցին՝ բռունցքները վեր պարզած՝ Eusko Gudariak երգելու համար: Երգն ավարտվելուն պես տեսան՝ ինչ-որ մեկը վազում է: Ո՞վ էր: Դիմակ-գլխարկով երկու տղաներ մի ցատկով հայտնվեցին բեմի վրա: Նրանցից մեկը բացեց իսպանական դրոշը: Ամեն կողմից բազմաձայն

սուլոցներ, հրճվանք: Մյուսը կրակի տվեց նախապես բենզինով թրջած կտորը: Գորկան լուսանկարում էր մի քանի մետր հեռավորությունից:

Մոտ հարյուր տղաների ուղեկցությամբ Կարբուրոյին տարան «Առանո» խորտկարան: Ծափերով ու gora ETA ողջույններով պատից հանեցին նրա՝ բանտարկյալի լուսանկարը: Այնուհետև ճաշասենյակի հատվածում Կարբուրոյին հյուրասիրեցին նրա պատվին պատրաստված խխունջներով կերակուրը: Ճաշասենյակում Գորկան իր ունեցած վերջին ժապավենը սպառեց ու գնաց տուն:

— Ընթրիքի չե՞ս մնում:

— Ինձ սպասում են:

Մինչև կեսգիշեր կարդում էր: Տասներկուերորդ ղողանջի հետ լապտերն անջատեց: Քիչ անց Խոշե Մարին եկավ:

— Հը՞, ինձ տեսա՞ր:

— Չգիտեմ՝ ինչի համար եք ձեր դեմքը փակում, մեկ է, բոլորը ձեզ ճանաչում են:

— Մեզ նկարե՞լ ես:

— Մի հատ նկարեցի, երբ եկաք, բայց լավ դուրս չի գա, որովհետև չափազանց արագ էիք վազում: Տասը կամ տասներկուսը, երբ դրոշն էիք այրում, ու մի քանի հատ էլ, երբ հեռանում էիք:

— Դրանք պետք է շուտ երևակել:

— Հուսով եմ, որ լուսանկարչատան աշխատողը չի վազի՝ ոստիկաններին հայտնելու:

Խոշե Մարին մի քանի վայրկյան լռեց: Մթան մեջ նրա գլանակի ծայրը բոցավառվեց:

— Կսպանե՛մ դրան:

40

Երկու տարի՝ առանց դեմքի

Չէր հիշում՝ վերջին անգամ երբ էր հայելուն նայել: Երևի Կալա Միլյորի հյուրանոցում էր: Թե չէ էլ որտե՞ղ: Ջանաց հիշողության մեջ վերականգնել հյուրանոցի իրենց սենյակը: Երկու մահճակալները՝ կողք կողքի, հարմարավետ կահույք, պատերին՝ պաստառներ: Էժան հյուրանոց էր՝ քնելու համար մի տեղ ու համեստ հարմարություններ: Նույնիսկ դեպի ծով տեսարան չուներ: Մի փոքր լոգասենյակ կար, իհարկե, ցնցուղով ու անշրջանակ մի հայելով՝ լվացարանի գլխին: Նախքան Այնոայի հետ դեպի Պալմա ճամփա ընկնելը՝ իրեն նայե՞լ էր հայելու մեջ: Այլ կերպ չէր էլ կարող լինել: Փոքր տարիքից Արանչան տնից հարդարված դուրս գալու սովորություն ուներ: Ոչ թե մոր պահանջով, թեև դա էլ կար, այլ իրեն գրավիչ զգալու-տեսնելու մղումով: Արանչան, իրոք, գեղեցիկ աղջիկ էր: Մոր համար՝ ավանում ամենագեղեցիկը: Հոր համար՝ աշխարհում ամենագեղեցիկը: Ու այդ դիմագծերի, աչքերի ու բաշի պատճառով կոկետության մեղք գործելը պարզապես իր ճակատագիրն էր:

Գիլյերմոն քսանից ավելի տարի առաջ, երբ նոր էին հանդիպում, ասում էր.

— Ի՜նչ գեղեցիկ ես: Ինչպե՞ս կարող է մարդ այդպիսի գեղեցիկ դեմք ունենալ:

— Այս դեմքն ու մեկ էլ չեմ ասի՝ ինչը նրա համար են, ով ինձ կսիրի:

— Ուրեմն ինձ համար են, որովհետև չեմ կարծում, որ գտնվի մեկը, որն ինձ չափ քեզ սիրի:

— Դա դեռ կտեսնենք:

Ոչ Պալմա դե Մալյորկայի հիվանդանոցում, որտեղ սափրել էին նրա գլուխը, ոչ «Գուտման» վերականգնողական կենտրոնում, որտեղ բուժվում էր, Արանչան հայելու մեջ չէր նայել: Դրա մասին ոչ ոք չգիտեր՝ ոչ բժիշկները, ոչ էլ բուժաշխատողները. միայն ես: Ու երբ անվասայլակով անցնում էր ապակե դռների կողքով, շտապում էր աչքերը փակել: Ոչ մի կերպ չէր ուզում իմանալ՝ ինչ տեսք ունի: Ինչո՞ւ: Որովհետև նպատակ էր դրել առավելագույն ջանք գործադրել՝ վերականգնվելու համար, ու համոզված էր, որ եթե ինքն իրեն հայելում տեսնի, սիրտը կանգ կառնի:

Սկզբում միայն կոպերն էր կարողանում շարժել: Ամեն ինչ լսում ու հասկանում էր ու հիշում էր և ուզում էր խոսել-պատասխանել-բողոքել-խնդրել ու չէր կարողանում: Չէր կարողանում շուրթերն իրարից անջատել: Նրան կերակրում էին այստեղից՝ փորի միջի մի անցքից: Արանչա՛, Արանչա՛, տե՛ս՝ ինչի ես վերածվել՝ անպետք մարմնի մեջ բանտարկված մի ուղեղի: Ահա, թե ինչ էի այն ժամանակ: Երազներում իրեն տեսնում էր միջնադարյան մի զրահի մեջ փակված, որի սաղավարտի երեսկալը վեր էր հանած՝ նայելու համար, բայց որը նրան զրկում էր շարժվելու ու խոսելու հնարավորությունից: Սարսա՜փ: Տեսողությունը լավ էր, բայց չէր ուզում իրեն տեսնել: Հաստատ շատ տգեղ է, փսլնքոտ, դիմագծերը՝ ծռված, և այդ պարագայում, մտածում էր, ավելի լավ է մեռնել:

— Աչքերդ ինչո՞ւ ես փակում:

Տունը նորոգելու ժամանակ Միրենը լոգասենյակի համար մարդահասակ մի հայելի էր գնել: Հենց այդ նպատակով, որ աղջկան հարմար լիներ իրեն նայելը: Արագ գլխի ընկավ:

— Տո՛ լա՜վ, է՛: Քեզ չես ուզում տեսնել:

Հաջորդ վայրկյանին բղավելով կանչեց Խոշիանին, որ գար ու թերթերով փակեր հայելին:

— Մինչև որ միտքդ փոխես: Որովհետև, դե՛, պարզ է, սա մի վագոն փող է նստել, ու, ինչպես հասկանում ես, դեն չենք նետելու:

Խոշիանը՝ վշտացած.

— Բան չկա, աղջի՛կս: Հիմա կծածկենք, ու պրծավ-գնաց:

Տան մնացած հայելիները հիմա կամ չափազանց բարձր էին ամրացված, ինչպես միջանցքինը կամ ճաշասենյակը զարդարողը, կամ իրեն հասանելի չէին՝ ծնողների պահարանինը կամ ձեռքի հայելին, որ երևի թե մի արկղում կլիներ: Երբ Արանչային հանում էին զբոսանքի, աշխատում էր չնայել ցուցափեղկերին: Մի-երկու անգամ չէր կարողացել խուսափել լուսանկարվելուց ֆիզիոթերապևտների թիմի հետ, բայց ինձ համար մեկ է, քանի որ այդ նկարներն այդպես էլ չտեսա:

Ավանի մարդիկ անընդհատ հաճոյախոսություններ էին հնչեցնում նրա հասցեին: Քահանան՝ նույնպես: Քահանան՝ հատկապես: Ի՜նչ գեղեցիկ ես: Ցտեսությո՛ւն, գեղեցկուհի՛: Մի խոսքով՝ այդ կարգի ոչ անկեղծ ու խղճահար նախադասություններ, որոնց մեջ գրեթե միշտ «գեղեցկուհի» բառն անպակաս էր: Արանչան դրանք ատում էր: iPad-ի էկրանին մորը գրեց. «Նրանց ասա՛, որ ինձ գեղեցկուհի չասեն»:

— Լսի՛ր, մարդկանց հանգի՛ստ թող: Եթե ասում են, ուրեմն մի բան կա:

Կաթված ստանալու չարաբաստիկ այդ առավոտից ի վեր Արանչան լոգասենյակի հայելու մեջ իրեն տեսնելու ցանկություն ունեցավ, երբ նախորդ օրը առաջին անգամ երկու ֆիզիոթերապևտների օգնությամբ ոտքի ելավ: Այդ ժամանակ արդեն ինքնուրույն էր ուտում-խմում, թեև նրան երբեք մենակ չէին թողնում՝ վախենալով, որ կարող է խեղդվել: Ավելին. աջ ձեռքի շարժունակությունն էր վերականգնվել (մյուսը դեռ կծկված էր, թեև ոչ այնքան, որքան սկզբում էր): Կամաց-կամաց, շատ դանդաղ թեթև առաջընթաց էր զգացվում ինչյուններ արտաբերելու առումով:

Մի օր տնով քայլելու, պատուհանին ինքնուրույն մոտենալու, խոհանոց գնալու, առայժմ անհասանելի առարկաներին հասնելու հույսից էր կառչում. մյուսների համար՝ սովորական գործողություններ, ինձ համար՝ հաղթանակ: Ինչպիսի՛ հրճվանք առաջացավ տանը այն հետմիջօրեին, երբ ֆիզիոյից վերադարձել էր լավ նորությունով, որ մի պահ կարողացել է իրեն ոտքի պահել: Սելեստեն, որ տեսել էր Արանչային այդ պահին, հեկեկալով պատմեց Միրենին.

— Լսի՛ր, ինչո՞ւ ես լաց լինում:

— Ներողությո՛ւն, տիկի՛ն Միրեն: Այնքան էի աղոթել, որ այս պահը գար: Չեմ կարողանում ուրախությունս զսպել:

Հաջորդ օրը նրան սովորականի պես երկուսով լողացնում էին: Ուշադի՛ր, բռնի՛ր, բա՛ց չթողնես: Ինչպես միշտ: Աղջկան չորացնելը հիմա ավելի հեշտ էր, քանի որ մոր ուժեղ ձեռքերը կարողանում էին նրան ոտքի պահել:

— Միրե՛ն, լա՞ց եք լինում:

— Ե՞ս: Աչքս ջուր թռավ:

Ու դեմքը թեքեց՝ իբր կենտրոնանալով աղջկան չորացնելու վրա:

Արանչան այդ ընթացքում մի քանի «աէ» արտաբերեց: Խոսել էր ուզում, բան էր ուզում ասել: «Աէ»-ների՝ հազիվ լսվող հերթականությունը նախադասություն արտաբերելու անհույս մի փորձ էր: Սելեստեն ենթադրեց-հասկացավ:

— Հայելի՞ն:

Արանչան գլխով արեց: Մայրը վրա բերեց.

— Ուզում ես քեզ հայելու մեջ նայե՞լ:

Պատասխանը նույնն էր: Ու Միրենը Սելեստեին խնդրեց հանել թերթերը, ու Սելեստեն, խը՛շտ-խը՛շտ, շտապեց պոկել կպչուն ժապավենով

ամրացված էջերն ու վերջապես՝ երկու տարի իր մարմինը չտեսնելուց հետո, մոր օգնությամբ, մերկ իրեն հայելու մեջ նայելու համարձակություն ունեցավ Արանչան:

Զննում էր իրեն շատ ուշադիր՝ հենվելով մի ոտքի ու մյուսի ոտնաթաթի մատների վրա: Գիրացել էր: Այո՛, այո՛, բավական: Ազդրերի վիճակը տե՛ս: Ու ամեն ինչ՝ կուրծքը, կոնքը, փորը, ամեն ինչ ասես մի քանի սանտիմետր ներքև ընկած լիներ: Մաշկը շատ գունատ էր: Ձախ ձեռքը կծկված, կողերին էր կպած: Ուսերս էլ չեմ հավանում: Իմ ուսերը երբեք կախ ընկած չեն եղել:

Էլ ավելի քիչ դեմքը հավանեց: Ես եմ, բայց ես չեմ: Աչքերը՝ նախկին կենսունակությունից զրկված, հիմարոտ: Բերանի մի ծայրը՝ մյուսից թեթևակի ցածր, ու դիմագծերն էլ՝ պակաս արտահայտիչ: Մազերի մեջ սպիտակ, այնքա՜ն սպիտակ է հայտնվել: Ճակատի կնճիռները: Այդ կնճիռների մեջ շատ մտահոգություն, շատ ցավ ու անքուն գիշերներ են կուտակվել, կաթվածից առաջ եղած խնդիրներն ու անախորժությունները, բայց դրանց մասին միայն ես գիտեմ:

Միրենը մեջքի հետևից հարցրեց՝ գոհ մնա՞ց: Առանց հայացքը հայելուց կտրելու՝ պատասխանեց՝ ո՛չ: Ուրեմն տխո՞ւր էր: Ո՛չ, դա էլ չէ:

— Վա՜յ, ի՞նչ որոշեցիր:

Արանչայի բերանից նորից «աէ»-ների մի երկար շարան դուրս պրծավ՝ աններդաշնակ, անվերծանելի:

41

Կյանքը՝ հայելու մեջ

Անձրև է գալիս: Ի՞նչ անենք: Կիրակի օրերին Սելեստեն սովորաբար չէր զբաղվում Արանչայով, եթե, իհարկե, Միրենը չէր գնում Անդալուսիա՝ Խոշե Մարիին տեսակցելու:

— Էսպես ոչ մի տեղ չենք կարողանա գնալ:

Հետմիջօրեի ժամը չորսն է: Առավոտյան դուրս չէին եկել ամենօրյա զբոսանքի անդուր եղանակի պատճառով: Խնդիրը միայն անձրևը չէր: Մի աննորմալ, ուժգին քամի էր փչում: Կարելի էր Արանչային ու անվասայլակը ծածկել հատուկ այդ նպատակի համար գնած անձրևանոցով. պատյանի պես մի բան էր՝ գլխանցքով ու կնգուղով, որ թեկուզ կարճատև դուրս գար՝ օդ շնչելու, բայց այսօրվա քամին ուժգնությամբ արդեն փոթորկի էր նմանվում:

— Լավ էր՝ երեկ գնացինք պատարագի:

Իր անվասայլակի մեջ նստած՝ Արանչան նայում էր փողոցին: Կատաղի կաթիլները ջարդուխուրդ էին լինում ապակիներին: Գորշ հետմիջօրե, հեծեծող քամի ու ձանձրացած-բարկացած Արանչան: iPad-ով գրեց. «Ինձ լոգասենյակ տա՛ր»:

Լոգասենյակում՝ հայելու առաջ հայտնվելուն պես, մորը նշաններով բացատրեց, որ գնա:

— Առաջ հրաժարվում էիր քեզ նայել, հիմա անընդհատ ուզում ես:

Արանչան մատով զայրացած սեղմեց տառերին. «Քեզ պարտավոր չեմ բացատրություններ տալ»:

Մայրը վիատված դուրս եկավ լոգասենյակից.

— Լսի՛ր, քեզ բան ասող չկար:

Դուռը շրխկացրեց: Արանչան մնաց փակված: Իր համար մեկ էր: Ի՛նչ զզվելի մայր է: Աչքին է երևում, որ այս ձևով ինձ պատժում է: Վերջապես մենակ մնալը իր ամենամեծ ցանկությունն էր. հեռու լինել խորհուրդ տվողներից, անվասայլակը հրողներից, կերակրողներից ու պաշտպանողների աչքից: Այդ մարդիկ՝ ընդհանուր առմամբ պատրաստակամ, Արանչային ցուցաբերում էին համբերության տարբեր դրսևորումների

իրենց զարմանահրաշ (ծիծաղից մեռա) շնորհները. համբերություն- սեր, համբերություն-կարեկցանք, համբերություն-վատ քողարկված բարկություն, համբերություն-չարամտություն, որ իրենց լավություն չի արել ու չի մահացել: Քաք են կերել: Դժբախտության օրից ի վեր իր կյանքի տերը չէ: Իսկ նա ցանկանում էր մենակ մնալ, գրո՛ղը տանի, մենակ: Հայելու մեջ նայելո՞ւ համար: Ասենք թե, այո՛, և ի՞նչ:

Լարված, հանդուգն նայեց իր աչքերին՝ սպասելով, որ սկսվի իր հիշողությունների կինոժապավենը՝ փշուր-փշուր եղած իր կյանքի պատմությունը: Այո՛, փշրված, գետնին ընկած շշի փշուրների նման: Ու ամեն մի փշուրի մեջ՝ մի հիշողություն, մի դրվագ, անցյալի ստվեր ու ֆիգուր:

Հայելի՛, հայելի՛, ասա՛ ինձ երբ, ասա՛ որտեղ, ասա՛ ով: Արանչան հիշողության մեջ արթնացրեց 1985-ի մի շաբաթ օր: Այդ դրվագն ուրիշ առիթներով էլ էր հիշել: Տղան ոչ գեղեցիկ էր, ոչ տգեղ, ոչ բարձրահասակ էր, ոչ ցածրահասակ: Ինչպես և ինքը, հաճախ էր լինում Իգելդոյի ԿՍ դիսկոտեկում: Դե՛, անկախ քո ցանկությունից, ի վերջո տեսողական կապ ես հաստատում: Տղան իր ընկերների հետ էր այնտեղ բարձրանում, Արանչան՝ ընկերուհիների: Բայց այդ տիպը նրան, իրոք, չէր հետաքրքրում: Գուցե հագուստի պատճառով, չգիտեմ, գուցե պարելու ոճի: Մի քիչ գորիլայի պես էր, ոչ գրավիչ էր, ոչ էլ՝ ճկուն: Նրբագեղության նշույլ նույնիսկ չուներ: Ու մեկ էլ գլխի այդ շարժումները, վա՛յ, Աստվա՛ծ: Ասես ճակատով մեխեր խփեր: Մի խոսքով՝ պարող ու երիտասարդ այդ զանգվածից ևս մեկը:

Մի երեկո ուշադրություն դարձրեց, որ իրեն է նայում: Ուրիշներն էլ էին նայում, ու երբեմն նույնիսկ, դրանցից մեկի հետ գրկախառնված, պարում էր: Արանչային այդ պահերին դուր չէր գալիս, երբ փորձում էին իրեն զվարճացնել: Բայց բոլոր տղաները, առնվազն սկզբում, փորձում էին կատակել: Այո՛, նրա աչքերում մի հզոր վճռականություն կար, գիշատիչ կենդանու մի հաստատակամություն, որը դուր եկավ Արանչային: Հենց որ լուսավորությունը փոխվեց, միացան մանուշակագույն լույսերը, ու հնչեց դանդաղ երաժշտություն, տղան դուրս թռավ դեպի իր կողմը, իսկ ինքը կանգնակի մոտ ասաց՝ ո՛չ:

Տղան (23 տարեկան էր, Արանչան՝ 19) չպնդեց: Իր պահվածքից էլ չերևաց, որ մերժումը նրան դուր չէր եկել: Թույլ չտվեց իրենից բան հասկացվի, բայց հաճելի էր բուրում: Մանուշակագույն կիսախավարի մեջ շա-

րունակեց զննել աղջկան այդ հանգիստ ու ինքնավստահ աչքերով՝ ասես սպասելով, որ Արանչան փոխի իր որոշումը: Արանչան մեջքով շրջվեց: Հաջորդ պահին գլուխը դարձնելով տեսավ, որ տղան անվրդով ու ձիգ հեռանում է պարահարթակի եզրով դեպի այն բազմոցը, որտեղ նստած էին նրա ընկերները: Օդում հաճելի բույր մնաց: Տղային նորից նկատեց մեկ ժամից, երբ ընկերուհիների հետ հանդերձարանի հերթում էր կանգնած: Շրջվեց՝ հասկանալու՝ որտեղից է գալիս այդ բույրը, ու տեսավ տղային հենց իր մեջքի հետևում:

— Տեսնենք. գուցե մյուս անգամ ավելի սիրալիր լինես:

Հանկարծ զայրացավ: Ինչպե՞ս է համարձակվում այս ծաղրածուն: Մի բան էլ դեռ՝ մարդկանց ու իր ընկերուհիների ներկայությամբ: Տղային չնայեց, չպատասխանեց: Տղան շարունակեց խոսել՝ շուրթերը աղջկա ծոծրակի մոտ: Մի կողմից՝ հաճոյախոսություն, մյուս կողմից՝ լկտիություն. իբր մի ամբողջ կյանք իրար ճանաչել են: Վերջապես Արանչային տվեցին իր վերարկուն: Ու դարձավ դեպի տղան՝ կատաղած, շուրթերը արհամարհական ծռելով, ու ասաց, որ իրեն հանգիստ թողնի, որ ընկեր ունի:

— Ճիշտ չես ասում:

— Դու ի՞նչ գիտես:

— Ճիշտ չես ասում, Ներեայից եմ իմացել:

Արանչան շվարեց.

— Ինձ հետևո՞ւմ ես:

Սադրիչ սառնասրտությամբ պատասխանեց՝ այո՛: Ավելացրեց, որ համոզված էր, որ աղջիկը դժվարություններ էր ստեղծելու, ու որ ինքը, ամեն դեպքում, հենց այնպես հանձնվող մեկը չէ: Ա՜հ, մարտահրավե՞ր է, ուրեմն: Իրեն ի՞նչ է երևակայում: Ու Արանչան ցանկացավ մի լավ ապտակել դրան:

Հիմա՝ այդքան տարի անց, ժպտում է՝ հայելու առաջ հիշելով այդ դրվագը: Ընկերուհիները հավաքվել էին ավտոկայանատեղիում: Բոլո՞րն էին այնտեղ: Ինչպես միշտ, Ներեան չկար, որը դիսկոտեկի դռանը սիլի-բիլի էր անում չգիտես ում հետ: Երբ վերջապես բոլորը հավաքվեցին, շատախոսելով շարժվեցին դեպի ավտոբուսի կանգառ: Արանչան Ներեայի կողքը նստեց: Հարցրեց, ու ընկերուհին պատասխանեց, որ.

— Անունը Գիլյերմո է: Ռենտերիայում է ապրում: Մի քիչ լուրջ է, բայց շատ համակրելի: Բանաստեղծական կայծկլտումներ ունի: Երբ գրկա-

խառնված պարում է, շատ գեղեցիկ բաներ է ասում, երևի գրքերից: Հա՛, ինձ անունդ հարցրեց, մեկ էլ՝ ընկեր ունես, թե ոչ: Երևի վրադ աչք ունի:

— Լսի՛ր, եթե այդքան համակրելի է, ինչո՞ւ հետը չես հանդիպում:

— Իրար չենք սազում: Նրա ընտանիքը Սալամանկայի կողմերից է:

— Դա ի՞նչ կապ ունի:

— Չէ՛, կապ չունի, ասում եմ՝ պարելու համար լավ է: Մնացածի առումով՝ չէ:

Ներեան հաստատ կայծկլտումներ ուներ՝ ոչ այնքան բանաստեղծական, իհարկե, այլ ռասիստի ու abertzale-ի: Բայց կյանքի բերումով ամեն ինչ այն ուղղությամբ չի ընթանում, ինչպես որ մարդ ենթադրում է, երբեմն էլ ճիշտ հակառակը. լրիվ ուրիշ ուղղությամբ է ընթանում, չէ՞, հայելի՛:

Հետո հաջորդ շաբաթ օրն եկավ: Մանուշակագույն լույսեր, դանդաղ երաժշտություն. տեսավ, որ տղան գալիս է: Չգիտեմ՝ ինչի համար է չարչարվում, միևնույն է, քիթը նորից եմ տրորելու: Եվ, իրոք, պիտի տրորեի, հայելի՛, սիրելի՛ս, այն շաբաթ օրը կամ մյուս, ամեն անգամ, երբ մոտենում էր՝ պարի հրավիրելու: Պատկերացրեց հարցը, նրա աչքերի մեջ արտացոլված սպասումը, գուցե որպես հանգուցալուծում՝ նախատինքի կամ հիասթափության մի շարժում, ու վերջում էլ՝ իրեն համակրելի կարծող, բայց ձախողակ մարդու հեռացող մեջքը: Բայց Արանչան պատրաստ չէր նրան, որ տղայից մի քիչ ավելի շուտ նրա բո՛ւյրը տեղ կհասնի:

— Դե՛ ի՞նչ, կպարե՞ս:

Յոթ ամիս անց Արանչան նրան ներկայացրեց ծնողներին:

42

Լոնդոնյան պատմությունը

Լոգասենյակի հայելու առջև (նո՞յն օրն էր, թե՞ մյուս) անձայն խոսելով. հիշում եմ, վա՜յ, ո՜նց եմ հիշում: Նման բաները չեն մոռացվում: Լոնդոնից հետո երկուսով որոշեցին, հապա տեսնենք ինչ. սկզբից Արանչան կծանոթանա նրա՝ միակ զավակի տեր ծնողների հետ, հետո՝ Գիլյերմոն աղջկա ընտանիքի հետ: Գիլյերմոն թերահավատ էր, ավելի ճիշտ՝ չէր հասկանում Արանչայի ռազմավարական հաշվարկները:

— Լողանում ու սափրվում եմ ամեն օր, քեզ հարգում եմ, աշխատանք ունեմ: Ինչո՞ւ ես մտածում, որ նրանց դուր չեմ գա:

— Իմ ավանը Ռենտերիայից փոքր է: Մեզ մոտ բոլորը միմյանց ճանաչում են: Նոր մարդկանց պետք է կամաց-կամաց ներկայացնել:

— Դա ի՞նչ կապ ունի ընտանիքիդ հետ: Ընտանիքում ձեր հարաբերությունները լավ չե՞ն:

— Դե՛, հարաբերություններ են, էլի՛:

— Էլի չհասկացա:

— Հենց որ եղբայրներիս սենյակը մտնես ու պատերին նայես, կհասկանաս:

Մեկ վայրկյան: Պետք չէր անպայման ծանոթանալ հայրեր-մայրերի, քույր-եղբայրների, հորեղբայր-քեռիների ու այլոց հետ: Ուրեմն ի՞նչ: Արանչայի գաղափար-ցանկությունն էր Լոնդոնի պատմությունից հետո պաշտոնականացնել իրենց հարաբերությունները:

Ընդհանուր առմամբ, այն պատմության ժամանակ տղան իրեն լավ պահեց: Բայց, միևնույն է, Արանչան ծանր տարավ, որ Գիլյերմոն իրեն չուղեկցեց: Այո՛, ինձ համար ծանր էր, բայց նա չէր կարող աշխատանքի չգնալ: Դա չհաշված՝ մնացած առումներով նա իրեն արժանապատիվ պահեց: Ափսո՜ս: Ի՞նչը: Դե՛, ես իմ մտքերով եմ, էլի՛: Եթե ստորի մեկը լիներ, նրան գրողի ծոցը կուղարկեր ու կխուսափեր քսան տարվա ամուսնությունից, որի վերջին տարիների կյանքը լիակատար ձախողում էր: Այո՛, բայց այդ դեպքում Էնդիկան ու Այնոան չէին ծնվի: Լա՛վ, լա՛վ, ամեն դեպքում, արդեն որևէ բան չես փոխի:

Նկատելով, որ Արանչան սարսափած է, Գիլյերմոն առաջարկեց գտնել վստահելի մի մարդ, որը նրան կուղեկցեր ճամփորդության ընթացքում:

— Լսի՛ր, ավելի շուտ ես ինքս պիտի այդ մարդուն փնտրեմ: Բացի այդ՝ նրա ծախսերը ո՞վ է հոգալու: Մեզ վրա միլիոն կնստի:

Արանչան որոշեց սիրտը բացել Ներեային: Լսի՛ր, այսպիսի բան է եղել: Ընկերուհին խանդավառվեց ճամփորդության գաղափարով: Ո՛ւխ, շաբաթավերջը անցկացնել Լոնդոնում: My name is, I come from: Ու բնականաբար ոչ մի խնդիր չունեցավ իր սիրասուն aita-ի հետ, որն ի վերջո գործարար մարդ էր, money կորզել՝ օդանավի տոմսի, հյուրանոցի ու զանազան ծախսերի համար: Ոգևորված էր, անհամբեր սպասում էր թռիչքի օրվան: Մտահոգված Արանչան ստիպված էր խնդրել, որ հանգստանա, ու նրան ասաց, թե.

— Լսի՛ր, զբոսնելու չենք գնում:

— Գիտեմ, գիտեմ: Դու անհո՛գ եղիր: Քեզ կուղեկցեմ, անընդհատ հետդ կլինեմ:

Ու ձեռքերը մեկը մյուսի վրա դրեց կրծքին բացիկի սրբապատկերների պես:

— Hello, Լոնդո՛ն: Միշտ երազել եմ այցելել քեզ:

— Զբոսնելու ժամանակ չի լինելու:

— Ի՞նչ կարևոր է: Կարևորը գլուխ գովելն է, որ եղել եմ Անգլիայում:

Ա՛խ, անզուսպ ու թեթևսոլիկ Ներեան: Այդուհանդերձ, Արանչայի կարծիքով անարդար կլիներ նեղանալ նրանից, քանի որ արդեն իսկ մեծ լավություն էր, որ հետն էր գալիս՝ իր գրպանից (ավելի ճիշտ՝ Չատոյի, Աստված հոգին լուսավորի) վճարելով տոմսի ու կեցության գումարը:

Արանչայի ծախսերը Գիլյերմոն փակեց: Ամբո՞ղջ: Մինչև վերջին լուման: Ի պատիվ իրեն՝ համոզելու կարիք չեղավ: Անվարան առաջարկեց իր խնայողությունների մի մասն օգտագործել: Որովհետև այդ մարդը, թեև մի լիքը թերություն ու մոլուցք ունի, դու հո լավ գիտես, հայելի՛, բայց երբեք գծուծ չի եղել, դա՝ հաստատ, ո՛չ ինձ հետ, ո՛չ էլ երեխաների: Ճշմարտությունն ամենից վեր է:

Այն ժամանակ աշխատում էր Papelera Española* ընկերությունում որպես ադմինիստրատիվ օգնական: Համեստ աշխատավարձ էր ստանում,

* Papelera Española, թուղթ արտադրող իսպանական խոշոր ընկերություն Բասկերի երկրում:

բայցևայնպես ուներ: Երիտասարդ, ընտանիքով չծանրաբեռնված՝ կարող էր գումար խնայել, քանի որ ապրում էր ծնողների տանը, որոնք շարունակում էին նրան կերակրել, ասես փոքր երեխա լիներ, եթե, իհարկե, երբևէ դադարել էր երեխա լինելուց:

Նրա հայրը, որ այդ տարի թոշակի էր անցել, հիսունականների սկզբից այդտեղ աշխատել էր որպես հասարակ բանվոր: Հիշում էր, թե ինչպես 65 թվականին Ֆրանկոն՝ ցածրահասակ, կոստյումով և գլխարկով, եկել էր՝ նոր սարքավորումների բացումն անելու: Գիլյերմոյի հայրը, արդեն ամուսնացած, Սալամանկա նահանգի մի ավանից էր եկել, նրան աշխատանքի էին վերցրել ընկերությունում, ու այդտեղ էլ մնացել էր մինչև թոշակը՝ իր հաստոցին կպած: Ի դեպ, դրական բնութագրով էր թոշակի գնացել, ինչը հետագայում նպաստել էր, որ որդուն վերցնեն աշխատանքի:

Բացի Գիլյերմոյից ու Ներեայից՝ ևս մեկ մարդ գիտեր Լոնդոնի պատմության մասին: Մա՞յրը: Ո՛չ: Խոշիա՞նը: Վա՜յ, նա երբեք տեղյակ չի լինում: Ուրեմն՝ ո՞վ: Ներեայի եղբայրը: Արանչան, վախից մեռած, նրան էր դիմել՝ խնդրելով, որ շտապ օգնի: Այդպիսի բաներ: Նրան խնդրել էր, որ գաղտնի պահի, ու Շավիերը, բնականաբար, այդպես էլ արել էր: 85-ին նա դեռ Պամպլոնայի բժշկականում էր սովորում: Տեղեկություններ հավաքելով՝ իր կապերի միջոցով գտել էր մեկին, որը նրա քրոջ հղի ընկերուհու համար կազմակերպել էր Լոնդոնի կլինիկային առնչվող ամեն ինչը:

Էլ ոչ ոք չիմացավ: Ո՛չ Գիլյերմոյի ընտանիքը, ո՛չ էլ Արանչայի մյուս ընկերուհիները: Ոչ էլ ավելի ուշ՝ նրա երեխաները: Երբեք չէր ցանկացել պատմել նրանց: Հանուն ինչի՞: Մորն էլ. հո չէ՞ր գժվել: Այդ էր պակաս, այն էլ՝ այդ աստվածավախ կնոջը:

Ներեան մեկ օր առաջ թռավ կանոնավոր թռիչքով: Մի քանի ժամ քայլել էր Լոնդոնի փողոցներով, հայտնի վայրեր տեսել, գնումներ արել, լուսանկարել: Փող ու ազատ ժամանակ ունենալու առավելությունը: Մեկ օր անց Արանչան չարտերային օդանավով թռավ մի երեսուն-քառասուն կանանց հետ, որոնք նույն նպատակով էին Լոնդոն գնում: Ոմանք շատ երիտասարդ չէին (իր հաշվարկով՝ երեսունն անց էին), մյուսները՝ դեռահասությունից նոր-նոր դուրս եկող: Դրանց մեջ տասնհինգ տարեկան մի աղջնակ կար լուրջ դեմքով մի տղամարդու ուղեկցությամբ, որը գուցե նրա հայրն էր:

Արանչան ուղեբեռը ստանալիս տհաճ ապրումներ ունեցավ: Ճամպրուկները՝ մեկը, երկրորդը, մյուսը, իրար հետևից հայտնվում էին ժապա-

վենի վրա: Բացի իր ճամպրուկից: Վա՛յ, ama: Իր օդանավով եկած մարդիկ կամաց-կամաց գնում էին, բեռնափոխադրող ժապավենը յուրահատուկ աղմուկ էր հանում, որն ավելի ու ավելի սահմռկեցուցիչ էր թվում, իսկ իր ճամպրուկը չկար: Գուցե կորե՞լ էր: Գուցե ճամփորդներից մեկն էր վերցրե՞լ, իսկ նա չէր նկատել: Երբ վերջապես (թեթևացած հոգոց) ճամպրուկը հայտնվեց, Արանչան մենակ էր մնացել: Հետո չէր կարողանում կողմնորոշվել: Դրա պատճառով երկար ժամանակ չէր գտնում օդանավակայանի ելքը: Նորից միայնակ զգաց: Նույնիսկ ավելի վատ՝ կորած: Ի՞նչ աներ: Ընչաքաղց տաքսի նստեց: Ձեռքերը դողում էին, երբ վարորդին ցույց տվեց տետրի մի էջի վրա գրված հյուրանոցի անունն ու հասցեն: Ճանապարհին տաքսիստը մի քանի անգամ փորձեց խոսել հետը, բայց նա, թե՝ ո՛չ, այսինքն, ո՛չ, անգլերեն չի խոսում: Այնքան երկար էին գնում, որ Արանչան մտածեց՝ Աստվա՛ծ, կարո՞ղ է այս սևամորթը ինձ առևանգել է: Ներքին մի ձայն նրան ասում էր, որ ամենայն հավանականությամբ վարորդը երկար ճանապարհով է ինձ տանում, որ հաշվիչի գումարն ավելի մեծ լինի: Վերջապես հասան հյուրանոց: Մուտքի մոտ մի ավտոբուս էր կանգնած, ու իր օդանավով ժամանած մի քանի աղջիկներ էին իջնում: Ես ձեր ինչն եմ ասել: Եթե մի փոքր ավելի արագ շարժվեի, տաքսու վրա գումար չէի ծախսի:

Հաճախորդների գրանցման կանգնակի մոտ նրան Ներեան էր սպասում. գլուխը տարավ՝ պատմելով փողոցներով ու խանութներով իր անցուդարձի մասին:

— Ներե՛, ինձ մենակ չթողնես:

Պայմանավորվեցին, որ գիշերը երկուսով մի անկողնում կքնեն:

— Վախենո՞ւմ ես:

Գրողը տանի, բա դա հարցնելու բա՞ն էր: Պառկելուց մի քիչ հետո Արանչան մեկ այս կողմ շրջվեց, մեկ՝ մյուս, տեղից վեր թռավ ու վազեց փսխելու: Բոբիկ ոտքերը՝ հին, մաշված կովրոլինի վրա: Լոգասենյակում մռթմռթո՞ւմ էր, թե՞ գանգատվում: Խուճապը սողոսկել էր ոսկորների մեջ: Ու միայն վիրահատության պատճառով չէր, թեև դա էլ կար, բայց ոչ այդքան, քանի որ Շավիերը հեռախոսով նրան որոշ հանգստացնող բացատրություններ էր տվել, ու նա շատ թե քիչ գիտեր, թե ինչ էր սպասվում: Խնդիրը բարդանում էր անգլերենի բացարձակ չիմացության պատճառով: Անօգնական վիճակում էր՝ Լոնդոնում տեղաշարժվելու, տեղը գըտնելու, անհրաժեշտության դեպքում էլ՝ օգնություն խնդրելու իմաստով:

Նրան անընդհատ ճնշում էր անպաշտպան լինելու ահռելի, ավելի ճիշտ՝ անտանելի զգացումը: Ու հայելու առաջ անվասայլակում նստած՝ հիշում է, թե ինչ էր մտածում այն ժամանակ. բա որ հանկարծ կորեմ, մեքենայի տակ ընկնեմ, բորբոքում ունենամ՝ կլինիկայում ոչ հիգիենիկ պայմանների պատճառով (ի՞նչ իմանամ), աստիճաններից իջնելիս ոտքս ոլորեմ ու չկարողանամ ժամանակին տուն վերադառնալ, և վերջապես ծնողներս իմանան, դոն Սերապիոն, ամբողջ ավանը. սոսկալի՜ է:

Եվ իրոք (ո՜նց էլ իմացավ), նույն այդ օրը իր մայրը Ներեայի մոր հետ, որոնք այն ժամանակ մտերիմ ընկերուհիներ էին, սովորության համաձայն, շաբաթ օրը՝ հետմիջօրեին, գնացել էին Սան Սեբաստիան՝ սուրճ խմելու, ու խոսել էին իրենց աղջիկների մասին. Արանչայի համար դժվար չէր պատկերացնել նրանց խոսակցությունը.

— Ներեան հինգշաբթի գնացել է Լոնդոն համալսարանի ընկերուհու հետ:

— Հա՞, իրո՞ք: Արանչաս Բիլբաո է գնացել: Երեկ է գնացել՝ ինչ-որ երգիչների համերգի, բայց հարցեր մի՛ տուր, որովհետև ժամանակակից երաժշտությունը չեմ հասկանում:

Լուսադեմին արթնացան: Ներեան իջավ նախաճաշելու: Արանչան որևէ բան կուլ տալու ունակ չէր: Բավարարվեց մի քանի կում ջրով: Ի՜նչ նյարդային վիճակ է: Ժամը եկավ, ու գնացին, մեկը՝ վճռական, աշխույժ, մյուսը՝ սրտնեղած. հասան այն փողոցը, որի վրա գտնվում էր գործը գլուխ բերող կազմակերպությունը:

Նորակառույց շենքերը՝ հնաոճ շենքերի կողքին, որոնցից մի քանիսի ճակատները, իրոք, բավականաչափ կեղտոտ էին: Կազմակերպությունը դրանցից մեկում էր: Ներեան դիմացի մայթից առաջինը նկատեց շենքը:

— Սա է, կապույտ դռնովը:

Մտնելուն պես դեմքերը ծռվեցին, հետո ուղղակի զարզանդեցին: Լուրջ: Ինչո՞ւ:

Բանն այն էր, որ նեղ, դեպի առաջին հարկ տանող աստիճանի վրա լիքը աղբ կար: Ընկած բաժակ: Բաժակը աստիճանին ի՞նչ է անում: Նույն հարցը կարելի էր տալ պլաստիկ տոպրակների, թղթերի, մի շշի ու կաթի մնացորդների մասին: Զզվելի էր:

— Ես հետ եմ գնում, Ներե՛: Նախընտրում եմ երեխա ունենալ:

— Հանգի՛ստ: Քանի որ եկել-հասել ենք, տեսնենք՝ ինչպես է, հետո կորոշես:

Շոյեց նրա մազերը, հանգստացնելով ջերմ համբուրեց նրա այտը, մի խոսքով՝ համոզեց: Ձեռք ձեռքի տված բարձրացան ու նստեցին: Իրենց հերթին էին սպասում մի սրահում, որտեղ բազմաթիվ աթոռներ կային, ճաքճքած կաշվով մի բազմոց, պատերին էլ՝ պաստառներ: Արանչան մի աղջկա տեսավ, որ նախորդ օրը իր հետ նույն օդանավում էր: Քիչ անց եկավ մոտ տասնհինգ տարեկան աղջնակն այն մարդու ուղեկցությամբ, որը հավանաբար հայրն էր: Ներս մտավ քնատ ու կեղտոտ, թմրամոլի տեսք ունեցող մի մարդ: Օդանավի այն աղջիկը լսեց նրանց խոսակցությունը ու հարցրեց՝ իսպանուհի՞ են: Ներեան պատասխանեց, որ Բասկերի երկրից են, ու աղջիկը, թեև չէին հարցրել, նրանց պատմեց իր պատմությունը:

Վերջապես նրանց ընդունեցին: Ներեան փորձեց թարգմանել: Արանչան ստորագրեց, որտեղ ցույց տվեցին: Հետո նրան մի ձևաթուղթ տվեցին, մի բժշկի համար, որը մեկ ժամ անց նրան քննեց Լոնդոնի կենտրոնում գտնվող մի կլինիկայում: Իջան աղբի մեջ կորած աստիճանով: Արանչան ցածրաձայն հարցրեց.

— Ինձ կասե՞ս՝ ինչո՞ւ էիք ծիծաղում ընդունարանի կնոջ հետ:

— Բան չկա, պարզապես նա կարծում էր, որ ես եմ եկել... դե՛, հասկանում ես:

Փողոցում նրանց սպասում էր կազմակերպության մեքենան: Երիտասարդ կանանցով ու նրանց ուղեկցողներով լի մեքենան շարժվեց սկզբից դեպի կլինիկա, ու այնտեղից համապատասխան անալիզները անելուց հետո նրանց տարան քաղաքից դուրս գտնվող մի տուն: Առանձնատների մի թաղամաս էր, տները՝ ցածրահարկ, ծխնելույզներով ու այգիներով: Մայթերին՝ ծառեր, փողոցները՝ մաքուր, մի խոսքով՝ կեղտոտ արվարձանների նման չէր: Ո՛ւֆ, փա՛ռք Աստծո:

Էլ ի՞նչ կար: Հայելի՛, որքան հետաքրքրասեր ես: Երկու ընկերուհիներին ընդունեց մի ժպտերես բուժքույր, որը մի քիչ խոսում էր իսպաներեն: Արանչան սպասեց ժամանակակից կահույքով ու բույսերով մի սրահում: Հիշում է ասիական դիմագծերով մի աղջկա, որ կարծես Հնդկաստանից էր, ու բազմաթիվ իսպանուհիների, որոնք իր օդանավով էին եկել:

Ձառասունհինգ րոպե սպասեց: Նրան մի պլաստիկ թևնոց տվեցին՝ իր անունը վրան, մի թղթե շապիկ ու խնդրեցին, որ հանվի: Եկավ բժիշկը՝ հաճելի դիմագծերով, մոխրագույն բեղերով ու քաղաքավարի պահվածքով մի մարդ, որը հանգստություն էր ներշնչում: Դոկտոր Ֆինկս:

Ա. Ֆինկս: Իր աշխատանքն արեց և արեց լավ. այսքանը, հայելի՛: Միակ բանը, երբ անզգայացումից ուշքի եկա, ուժգին կծկումներ ունեցա, բայց քանի որ ստամոքսս դատարկ էր, չփսխեցի: Ու կիրակի օրը՝ կեսօրից հետո (դա էլ եմ հիշում), օդանավում միանգամայն ուրիշ մթնոլորտ էր տիրում: Բոլոր կանայք ավելի հանգիստ էին ու հաստատ ավելի շատախոս, քան Լոնդոն գալիս:

Նշանվածները

Լոնդոնյան պատմությունը նրանց միավորեց: Այդ պահից ի վեր դասական նշանվածների վերածվեցին այն զույգերի պես, որոնք ձեռք ձեռքի տված ման են գալիս փողոցներով ու շատ չանցած՝ ամուսնանում: Գիլյերմոն, ծաղկեփունջը ձեռքին, դիմավորում էր նրան օդանավակայանում՝ մխիթարող-ջերմ, փաղաքշական-քաղաքավարի: Նրա բառերն առօրեականից դուրս էին. անկեղծ քնքշությամբ հնչող ֆրազներ, ու Արանչան ճակատը սեղմեց նրա կրծքին՝ ի նշան այն բանի, որ ներում է ժամանակից շուտ, չծրագրած բեղմնավորումը:

Գիլյերմոյին նվեր էր բերել՝ վերջին պահին Հիթրոու օդանավակայանի հուշանվերների խանութում գնած մի բացիչ: Բռնակը կարմիր հեռախոսախցիկի փոքրիկ կրկնօրինակն էր: Տարիներ անց այդ բացիչը մեջտեղ եկավ իրենց ընդհանուր բնակարանի դարակներից մեկում: Արանչան անվարան նետեց աղբամանը: Այդ մանրուքը վատ հիշողություններ էր արթնացնում. չի բացառվում, որ Գիլյերմոյի համար՝ նույնպես (նա երբեք այդ բացիչը չէր փնտրել կամ էլ փնտրել էր, բայց չէր ասում):

Գաղտնիքի մեղսակիցները լուռ պայմանավորվել էին երբեք չակնարկել հղիության ընդհատման թեման: Բայց խնդիրը կար, մշտապես կար որպես անտեսանելի մի բան, որ ծփում էր խոսակցությունների, հայացքների մեջ, իսկ ամենավատը, գոնե Արանչայի համար, ստվերի պես ներկա էր իր երեխաների ստվերների կողքին:

Ամուսնական երկու տասնամյակի ընթացքում Արանչան և Գիլյերմոն մի քանի անգամ գնացել էին արտասահման: Երկու անգամ եղել էին Փարիզում, երեխաների հետ գնացել էին Վենետիկ, Մարոկկո, Պորտուգալիա: Լոնդոն՝ երբեք: Նրանցից և ոչ ոք չէր առաջարկել, ոչ մեկի մտքով չէր անցել: Ու երբեմն, ոչ հաճախ, բայց երբեմն փողոցում կամ որևէ վճարում կատարելու ընթացքում պատահական հանդիպած վաղեմի ընկերուհիներից մեկի հարցին, թե քանի երեխա ունի, Արանչան մտորումների մեջ էր ընկնում: Ընդամենը կես վայրկյան, այնքան, որքան անհրաժեշտ էր հաշվարկը ճիշտ անելու համար: Երե՞ք: Ո՛չ, երկու:

Տարիների ընթացքում Լոնդոնի պատմությունը (այն չծնված երեխան ինչպիսի՞ն կլիներ այսօր) կամաց-կամաց հետ էր քաշվում՝ դուրս մնալով իր հիմնական մտածմունքների շրջանակից, բայց լրիվ չէր անհետանում: Ու հանկարծ կաթվածի պատճառով նորից հայտնվեց իր հիշողությունների: Աստծո պատի՞ժն էր, եթե, իհարկե, Աստված գոյություն ունի: Անշարժ մարմնի մեջ պրկված մի ուղեղի մազոխիստական քմահաճո՞ւյքն էր, որը, անցյալի դրվագներն արթնացնելով, զվարճանում էր՝ իրեն սպանելով: Ու դա սկսվել էր Պալմայի հիվանդանոցի ինտենսիվ թերապիայի բաժանմունքում: Անշարժ, ինտուբացված՝ մի գիշեր չէր կարողանում գլխից հանել այն ցավոտ արկածը, որը նույնիսկ հիմա ծնողների տանը, անվասայլակում հայելու առջև նստած, նորից, անկախ իրենից, հայտնվում է իր հիշողությունների մեջ:

Այդ պատմությունը նրանց միավորեց: Հիմա արդեն ամեն օր հանդիպում էին Սան Սեբաստիանում: Երեկոները՝ լավ եղանակին, նստում էին զբոսավայրի նստարանին ու մի թղթե տոպրակ խորոված շագանակ էին ուտում կամ պիստակ, մի տուփ թխվածք կամ կոնֆետ: Թունդ սիրահարված էին: Անձրևոտ օրերին ուրիշ ճար չունենալով՝ սիրաբանում էին որևէ սրճարանում կամ կինոսրահում: Գիլյերմոն, որն օձի լեզու ուներ, Արանչայի ականջին հիանալի բաներ էր ասում: Ժամը իննին ամեն մեկն իր ավտոբուսն էր նստում, ու այդպես՝ համբույրներ, քնքշանք՝ մի երեկոն մյուսի հետևից:

— Քաղցրի՛կս, արդեն պետք է ծանոթանալ. ես՝ ձերոնց հետ, դու՝ մերոնց:

— Ձերոնցից սկսենք:

— Այնպես ես ասում, ասես ընտանիքիդ հետ խնդիր եմ ունենալու:

— Չէ՛, նման բան չկա: Պարզապես դուք քիչ եք, ու ավելի հեշտ կլինի: Ես էլ ընթացքում մերոնց կնախապատրաստեմ:

Գիլյերմոն (կամ Գիլյեն) նրան մի շաբաթ օր հրավիրեց Ռենտերիայի իրենց տուն՝ ճաշելու: Չորրորդ հարկ: Դուռը բացվեց: Անխելիտան ցածրահասակ, գիրուկ, վաթսուն տարեկան մի կին էր: Իր տղայի նշանածին ընդունելով՝ երկու այտերն այնպես համբուրեց, ասես վրան տորթ ծեփեր՝ կլոր, կրեմային, խանդավառ: Մայրս երբեք այդպես չէր համբուրել ինձ: Այնպես որ, բնակարան մտնելու պես Արանչայի վախն անհետացավ:

Հայրն ավելի զուսպ, բայց և անկեղծ սիրալիր էր: Ռաֆայել Էրնանդես՝ պարզ, համեստ մի մարդ՝ վանդակավոր հողաթափերով ու բրդե ժակետով:

Արանչան քաղաքավարի նրան «Դուք»-ով դիմեց: Պետք չէ, ի սեր Աստծո: Անմիջապես խնդրեցին «դու»-ի անցնել: Ու Անխելիտան, ցանկանալով լավ ընդունել աղջկան, նրան ցույց տվեց բնակարանը:

— Այստեղ էլ ես ու ամուսինս ենք քնում:

Նախքան Գիլյերմոյին իր տնեցիներին ներկայացնելը՝ Արանչան բազմիցս եղավ նրա տանը: Իրեն հարցնեին՝ հաճույքով կմնար տղայի տանը՝ գիշերելու: Ինչո՞ւ չէր մնում: Գիլյերմոյի ծնողները հոգի մարդիկ էին, բայց, իհարկե, նայած՝ որ հարցում. մի քիչ (բավականաչափ) հին գլուխ էին: Արանչան փորձում էր դիմադրել. Գիլյե՛, սիրելի՛ս, չէ՞ որ ես ու դու, չէ՞ որ Լոնդոնը: Նա էլ, թե՝ այո՛, այո՛, բայց խնդրում եմ, դու էլ ինձ հասկացի՛ր: Դրա համար ժամանակ առ ժամանակ բարձրանում էին Ուրգուլ սարը՝ իրենց գործն անելու՝ չմոռանալով պահպանակի մասին, լռելյայն կենակցում էին թփուտներում՝ շտապելով, վախենալով, որ նրանց գուցե տեսնեն: Տղան գոնե կարճատև հաճույք էր ստանում, իսկ աղջիկը հաշտվել էր այդ տարբերակի հետ, թեև միշտ իրեն էին բաժին հասնում հետույքը ծակող փշերը, սուր քարերն ու խոնավ խոտը:

Լոգասենյակի հայելին նրան հարցնում է՝ սիրո՞ւմ էր տղային: Ոչ այնպես, ինչպես զավակներիս, իհարկե: Բայց որոշ իմաստով, այո՛, սիրել է, հատկապես՝ սկզբում: Հակառակ դեպքում նրան իր ընտանիքին չէր ներկայացնի: Արանչան երբեք ոչ մի տղայի տուն չէր բերել: Գիլյերմոն առաջինն էր: Եվ վերջինը: Մի օր խոհանոցում մորն ակնարկեց տղայի մասին: Ու երբ դրանից հետո ասաց, որ ապրում է Ռենտերիայում ու անունը Գիլյերմո է, Միրենը, որ լսում էր քնատ՝ առանձնահատուկ հետաքրքրություն չցուցաբերելով, կնճռոտեց ճակատը ու չկարողանալով իրեն զսպել՝ կասկածով հարցրեց՝ տղան ռազմական ոստիկանությունի՞ց է: Ո՛չ, ադմինիստրատիվ հարցերով օգնական է: Մայրը հարցրեց՝ լավ վաստակո՞ւմ է: Ու վերջ: Ոչ ուրախ եմ, ոչ ե՞րբ ես բերելու ծանոթանանք, ոչ մի բան:

Մի քանի ժամ անց այդ նորությունը հորը պատմեց: Գուցե պահը հաջող չէր: Խոշիանը պատրաստվում էր «Պագոետա» բար գնալ: Նա չէր էլ թաքցնում, որ շտապում է: Երևի ուզում էր դուրս գալ, քանի դեռ Միրենը չէր վերադարձել գնումներով: Խոշիանին չէին մտահոգում այդ բոլոր տղա-աղջիկ խնդիրները, սերը, նշանված լինելը: Բայցևայնպես աղջկան մի րոպե ժամանակ տրամադրեց: Լսելով՝ ով է, ասաց, որ ուրախ է: Հետո հարցրեց.

— Ama-ն գիտի՞:

— Իհարկե:

— Գուցե մի օր նրան բերե՞ս, ու հետս տանեմ ընկերակցություն՝ ընթրելու:

Հեծանիվ քշո՞ւմ է:

— Ո՛չ, aita, չի քշում:

Խոշիանը, ոնց որ թե դժգոհ, էլ չգիտեր ինչ ասել: Աղջկա մեջքին թփըթփացրեց՝ ասես իր համաձայնությունը արտահայտելու համար, բերետը դրեց գլխին ու տնից դուրս եկավ:

Արանչան փոքր եղբորն ավելի էր վստահում: Այն ժամանակ տասնհինգ տարեկան էր: Շատ քնքուշ էր: Ամեն դեպքում իրեն դաշնակից էր պետք, ու Գորկան ընտանիքի միակ անդամն էր, որի հետ երբեմն կարողանում էր անկեղծ լինել: Ու Գորկան նրան ավելի սթափ թվաց, քան ծնողները:

Գորկան նախ և առաջ հարցրեց տղայի անունը:

— Գիլյերմո:

— Գիլյերմո ի՞նչ:

— Գիլյերմո Էրնանդես Կառիսո:

Նստեց անկողնու մեջ, որտեղ մինչև այդ պառկած կարդում էր:

— Abertzale՞ է:

— Ոչ՛, քաղաքականությամբ չի հետաքրքրվում:

— Բայց գոնե բասկերեն խոսում է, չէ՞:

— Ոչ մի բառ:

— Դե՛, ուրեմն Խոշե Մարիին դուր չի գա:

Արանչան նայեց պաստառներով ծածկված պատերին. համաներում, անկախություն, ETA, ավանի բանտարկված մարտիկների լուսանկարներ, Herri Batasuna-ի նախընտրական պլակատներ:

— Ինչո՞ւ ես կարծում, որ նրան դուր չի գա:

— Ինքդ շատ լավ գիտես:

Ու տասնհինգ տարեկան Գորկան էր, որ նրան գաղափար տվեց Գիլյերմոյի հետ զբոսնել ավանով: Թող նրանց միասին տեսնեն, թող կիրակի օրը պարեն հրապարակում, ու հետո կերևա՝ ինչ կլինի:

Այդպես էլ արեցին: Մտան մի բար, հետո՝ մյուսը: Kaixo՝ սրան, kaixo՝ նրան: Ավանի կենտրոնով անցան ձեռք ձեռքի տված: Ու հրապարակում՝ լորենիների խիտ սաղարթների ներքո, պարեցին մի երաժշտական խմբի երգի տակ: Այդ ժամանակ Արանչան նկատեց որոշակի հեռավորությունից

իրենց ուսումնասիրող Խոսունեին ու ձևացրեց, թե չի տեսնում աղջկան, հետո Գիլյերմոյի ականջին շշնջաց.

— Այնտեղ մի աղջիկ կա, եղբորս հետ է հանդիպում: Չշրջվե՛ս: Հիմա կտեսնես՝ ինչեր է անելու, որ իմանա՝ դու ով ես ու բասկերեն խոսո՞ւմ ես, թե՞ ոչ:

Տանը՝ ընթրիքի ժամանակ, Խոշե Մարին հանդբոլի իր խաղի մասին էր պատմում: Ո՛չ նա, ո՛չ ծնողները, ո՛չ էլ Գորկան ակնարկ չարեցին Արանչայի ընկերոջ մասին, որի ներկայությունը երեկոյան պարահանդեսին այդ ժամանակ արդեն հաստատ ավանի բամբասանքի թեման էր դարձել:

Երկու օր անց Խոշե Մարին, իր բաշը մտցնելով քրոջ սենյակի դռնից ներս, ասաց.

— Ինձ մի ծիտիկ խաբար է տվել, որ դու նշանած ունես:

Դեմքը խնդուն էր: Արանչան ուշադիր նայեց նրան՝ փնտրելով թշնամանքի որևէ արտահայտություն, բայց չգտավ: Եղբայրը նույն ուրախ տոնով ավելացրեց.

— Տեսնենք՝ երբ ես ինձ քեռի դարձնելու:

Շաբաթներ անց Խոշե Մարին իր ընկերների հետ գնաց ավանի մեկ այլ տուն՝ ապրելու: Միայն դրանից հետո Արանչան համարձակվեց Գիլյերմոյին բերել ծնողների տուն:

44

Նախազգուշական միջոցներ

Չատոն այն էր, ինչ կար. ամեն ինչ ներս գցող ու համառ, աշխատանքի մեջ իր նմանը չունեցող մի մարդ: Ու այդ համառությունը, ո՛ւֆ, որ դժվարացնում էր նրա հետ գոյակցելը (նրան հակառակվե՞լ. Աստված հեռու պահի), նրան օգնեց զրոյից ընկերություն ստեղծել՝ ավելի շատ հիմնվելով պատրանքների, քան մայր գումարի վրա (այնտեղ՝ ներքևում՝ գետի մոտ՝ մոշի մեջ կորած մի կտոր հողի վրա, որը սկզբում վարձակալել էր, հետո գնեց), և պահպանել ու առաջ մղել իր բիզնեսը, եսձերտիրոջ: Բայց Բիչո՛րիի կարծիքով՝ նույն այդ համառությունը կործանեց նրան:

Սովորաբար Բիչո՛րին գերեզմանոցում հենց դրա համար էր նախատում նրան:

— Այսօր ողջ կլինեիր, բայց պնդաճակատի մեկն էիր:

— Կարող էիր վճարել: Կամ էլ կարող էիր տեղափոխել ընկերությունդ, մեկ ուրիշ տեղ տանել այդ անիծյալ բեռնատարները (քաջ իմանալով, որ ես հետդ կգայի), ինչպես միշտ ասում էիր, բայց այդպես էլ չարեցիր:

Գալիս էր տուն ու գործի մասին ոչ մի բան չէր պատմում: Երբ Բիչո՛րին հարցնում էր՝ օրը ոնց անցավ, պատասխանում էր միշտ նույն ձևով՝ չոր ու անորոշ՝ լա՛վ: Ու Բիչո՛րին երբեք չգիտեր՝ այդ «լավ»-ը նշանակում էր «վատ», «սովորական», թե իսկապես լավ: Նրա տրամադրությունը հասկանալու համար դեմքին էր նայում՝ ինչ-որ նշաններ փնտրելով: Չատոն նեղվում էր.

— Ի՞նչ ես նայում:

Ու ըստ նրա դեմքի արտահայտության, աչքերի փայլի, կամ ճակատի կնճիռների՝ Բիչո՛րին փորձում էր հասկանալ՝ իր ամուսինը հանգի՞ստ էր, թե՞ մտահոգ:

— Որքա՞ն ժամանակ է, որ քեզ չեն սպառնում:

— Բավական:

— Կարծում ես՝ քեզ մոռացե՞լ են:

— Չգիտեմ, ու ինձ չի էլ հետաքրքրում:

Ինչ Ներեան Սարագոսա էր տեղափոխվել, վախը կարծես այլևս այդքան չէր ճնշում Չատոյին: Հիմա արդեն չենք իմանա: Այս մարդը, ասում

էր Բիչո՛րին, գաղտնիքներն իր հետ գերեզման է տարել: Մի բան հաստատ էր. ինչ աղջիկը գնացել էր դրսում սովորելու, զգացվում էր, որ քիչ էր մտահոգվում: Բա Շավիե՞րը: Դե՛, քանի որ տղան ավանում չէր ապրում, հայրը մտածում էր, որ նրան վտանգ չի սպառնում:

Տանը Չատոն այլևս չէր խոսում նամակների մասին: Բայց սարսափելի զայրանում էր, երբ Բիչո՛րին հիշեցնում էր դրանց մասին:

— Տո՛, դե՛, լա՛վ էլի, եթե բան չեմ պատմում, ուրեմն նոր բան չկա:

Չատո՛, Չատիտո՛, կրկնում էր Բիչո՛րին ինքն իր համար ավելի շատ ցավով, քան ջերմությամբ՝ անկախ նրանից՝ մտքերի հետ կապ ուներ, թե ոչ: Փաստն այն էր, որ Չատոն լրիվ մենակ էր մնացել, մենավոր ընկուզենուց էլ՝ մենակ: Իսկ ընկերնե՞րը: Ո՛չ նա էր հետները շփվում, ո՛չ էլ նրանք՝ իր հետ: Չատոյին մեկուսացրել էին, բայց նա էլ իր հերթին էր ինքնամեկուսացել: Ո՛չ «Պագոետա» էր գնում՝ քարտ խաղալու, ո՛չ էլ շաբաթ օրերը՝ խորտկասերների ընկերակցություն: Մի անգամ պատահաբար Խոշիանին տեսավ փողոցում: Խոշիանը հազիվ վրան հայացք գցեց, իսկ Չատոն նայեց ուշադիր. ինքն էլ չգիտեր՝ ինչ ակնկալիքով՝ մի նշանի, մի ժեստի: Ու Խոշիանը անցնելիս ունքերը վեր հանեց՝ ասես բարևելով, կարծես ասեր՝ ես, իհարկե, քեզ հետ կխոսեի, բայց դե՛:

Չատոն նաև հեծանվից հրաժարվեց: Ընդմիշտ: Մի օր ավտոտնակ իջեցրեց ու այնտեղ էլ թողեց՝ առաստաղից կախ, երկու կեռով ու շղթաներով ամրացված: Այլևս չվճարեց հեծանվավազքի ակումբի անդամավճարը: Ոչ ոք չպահանջեց էլ: Սեզոնի վերջում նրան չուղարկեցին տարեկան համաժողովի ամսաթվով ու ժամանակացույցով հրավերը, որը ստանում էին ակումբի անդամները: Վկայականը, դիպլոմը, կամ թե ինչ են դա կոչում, որտեղ նշվում էին հեծանվով անցած հատվածներն ու վաստակած միավորները, ծալած մտցրել էին նրա փոստարկղը: Ով էլ դա բերած լիներ, պատվից ցածր էր համարել նրա դռան զանգը տալը: Չատոյին չօգնեց նույնիսկ այն, որ որոշ ժամանակ առաջ՝ հինգ տարի շարունակ, նա ակումբի նախագահն էր եղել: Թող գնան, սատկեն: Ու կիրակի օրերով Բիչո՛րին, որ առաջ դժգոհում էր, թե շաբաթվա ընթացքում թեկուզ մի օր միասին չեն անցկացնում ամուսնու հեծանվավազքի պատճառով, հիմա առավոտից երեկո ստիպված էր դիմանալ Չատոյի վատ տրամադրությանը:

Ամբողջ կյանքում Չատոն սիրել է ոտքով գնալ աշխատանքի՝ անկախ նրանից՝ անձրևո՞ւմ էր, թե՞ ոչ: Ընդամենը տասնհինգ րոպեի ճանապարհ

էր: Հեծանվով՝ ավելի քիչ: Այն կիրակի օրվանից, երբ սպառնագրերը հայտնվեցին, միայն իր հին Ռենո-21-ով էր գնում-գալիս: Ասում էր, թե չի ուզում որևէ մեկին պարտադրել հայացքը փախցնել կամ կտրուկ փոխել մայթը: Շաբաթ օրերը՝ հետմիջօրեին (ու սա արդեն նոր բան էր իր համար), Բիչո՛րիին ուղեկցում էր Սան Սեբաստիան: Պատարագի էին գնում, միասին թեյում էին այն նույն Ավենիդա դե լա Լիբերտադի վրա գտնվող սրճարանում, ուր Բիչո՛րին Միրենի հետ սովորաբար մտնում էր, երբ դեռ ընկերություն էին անում: Ու պատահում էր, որ Բիչո՛րիի և Չատոյի որոշ ծանոթներ, որոնք ավանում նրանց չէին բարևում, այստեղ՝ Սան Սեբաստիանում, նրանց ողջունում էին ու նույնիսկ մոտենում՝ մի-երկու բառ փոխանակելու՝ ի՞նչ լավ օր է, չէ՞:

Չատոն նախազգուշական միջոցներ էր ձեռնարկում: Ապուշ չէր: Նախ՝ երբեք մեքենան դրսում չէր թողնում: Բիչո՛րին էլ էր ասում.

— Մտքովդ իսկ չանցնի:

Սեփական ավտոտնակ ուներ: Բայցևայնպես նախքան մեքենա նստելը կռանում էր, տակը ստուգում: Ավելի ուշ որոշեց փայտե վահանակներ շարել մեքենայի շուրջը, որոնք այնպես էին իրար միացված, որ եթե մեկը հաջողեցներ ավտոտնակ մտնել (ինչն արդեն դժվար էր), դրանք շարժեր թեկուզ մի քանի միլիմետր, նա միանգամից կնկատեր: Ընկերության տարածքում՝ բեռնատարների կայանման հրապարակում, իր մեքենան այնպես էր կանգնեցնում, որ գրասենյակի պատուհանից տեսնի:

Ավտոտնակը մի անպատեհություն ուներ: Կողքի տան անկյունում էր: Դրա պատճառով այդտեղից մինչև իր շքամուտքը ստիպված էր լինում քառասուն-հիսուն քայլ անել: Մի անձրևոտ հետմիջօրե հենց այդտեղ էլ նրան սպանեցին: Բիչո՛րին, գերեզմանաքարի եզրին նստած, մտորում էր.

— Քեզ այնտեղ սպանեցին, բայց կարող էին նույն ձևով մեկ այլ տեղ սպանել քեզ: Որովհետև դրանք մեկի հետևից ընկնելիս չեն հանգստանում, մինչև գործը չվերջացնեն:

Սկզբում վրձնով ներկում-ջնջում էր սպառնագրերը, որոնք հայտնվում էին նրա ավտոտնակի մետաղե դռան վրա: Այդ նպատակով մի դույլ սպիտակ ներկ էր գնել, բայց անիմաստ գործ էր: Հաջորդ օրը դրանք նորից էին հայտնվում: Չատո՛, ֆաշիստ, կեղեքիչ, ETA, սպանի՛ր նրան: Այդ կարգի բաներ: Սովորություն ձեռք բերեց սպառնագրերին չնայել: Ու մեկ էլ միզում էին նրա դռան վրա. զզվելի հոտ էր գալիս:

Թերթում կարդացել էր, որ առաջին հերթին վտանգի տակ են կայուն սովորություն ունեցողները: Այսինքն՝ հեշտ թիրախ են: Մի քանի ամիս տնից տարբեր ժամերի էր դուրս գալիս: Բացի այդ՝ ճանապարհն էլ էր փոխում: Կեսօրվա ճաշի համար տուն էր գալիս մեկին, մեկն անց կես կամ երկուսին, կամ էլ գրասենյակում էր ճաշում Բիչո՛րիի պատրաստածով: Իսկ երեկոյան աշխատանքային օրն ավարտում էր ութին կամ իննին, ինն անց կես-տասին՝ ըստ իրավիճակի: Անկանոն ժամանակացույցը նրան հունից հանում էր. չէ՞ որ հպարտանում էր իր՝ ժամացույցի ճշգրտության հասնող աշխատանքով: Սակայն քանի որ աղջկան ապահով պատսպարել էր Սարագոսայում, ու միևնույն ժամանակ կյանքն անտանելի դարձնող անարդարները այդքան էլ հետևից ընկած չէին, վերադարձավ իր առօրյային ու մշտական սովորություններին: Միայն ETA-ի հերթական սպանությունից հետո ու Բիչո՛րիի պարտադրանքով նորից որոշ ժամանակ ծայրահեղ նախազգուշական միջոցներ էր ձեռնարկում:

Հաճախակի մի բան էր անում. խոհանոցի պատուհանի կամ պատըշգամբի դռան վարագույրը մի քիչ կողք էր քաշում՝ աննկատ մնալով փողոցը ուշադիր ուսումնասիրելու համար: Զգուշությամբ դուրս էր նայում՝ հետևելով, որ Բիչո՛րին չտեսնի: Բանն այն է, որ կինը ջղայնանում էր: Ինչո՞ւ: Նրա կարծիքով՝ ամուսնու մատները վարագույրների վրա կեղտոտ հետքեր էին թողնում:

Տարիներ անց՝ գերեզմանոցում.

— Այդ մարդիկ հո շքամուտքում չէի՞ն կանգնում: Մտքովդ չէ՞ր անցել, որ քեզ հետևողը հարևանն էր, որը նույնպես մի կողմ էր քաշում վարագույրը՝ քո ելումուտը նշելու ու հետո տվյալները ահաբեկիչներին փոխանցելու համար: Չէի զարմանա, որ դա այն խոզերից մեկը լիներ, որ ուտելուց առաջ ձեռքերը չէր լվանում: Դե՛, ո՛չ առաջ, ո՛չ էլ հետո: Ու հաստատ ծանոթներից մեկն է եղել, ու, ով գիտի, մեկը, որը մեզ մի լավություն էլ պարտք էր մնացել:

45

Գործադուլ

Մադրիդում՝ հյուրանոցում՝ ընթրիքի ժամանակ, սպանել էին ընտրված պատգամավոր, Herri Batasuna կուսակցության ներկայացուցիչ, երեսուն-մեկամյա Խոսու Մուգուրուսային: Այդ պատճառով հայտարարվել էր համընդհանուր գործադուլ: Խոշոր քաղաքներում բողոքները չափավոր բնույթ էին կրում: Բայց ավաններում փախչելու տեղ չունեին. աշխատանքի լիարժեք կասեցում (խանութներ, բարեր, արհեստանոցներ), այլապես ծանր հետևանքներ կլինեն: Չատոն գրասենյակի բարձունքից նկատեց իր մի քանի աշխատողների, որոնք կանգնած էին ճաղերի մոտ՝ վրան ամրացված, այդ դեպքերում մշտապես օգտագործվող պաստառով: Երեքն էին: Անդոնին՝ ականջօղով, ու ևս երկուսը: Մնացածը տանն էին մնացել: Երբ երեկ երեկոյան հեռախոսը զնգաց, Չատոն, զզված արդեն այդ սպառնական ու հայհոյական զանգերից՝ ֆաշի՛ստ, կեղեքի՛չ, բոզի՛ տղա, կտակդ գրի՛ր, մի պահ վարանեց՝ լսափողը վերցնի՞, թե՞ չէ: Ի վերջո պատասխանեց. մեկ էլ ու Ներեան լինի զանգողը, երբեք չի իմացվի, բայց նա չէր: Աշխատողներից մեկը քաղաքավարի տոնով հայտնեց, որ եթե իրեն մնար, կնախընտրեր վաղը գործի դուրս գալ:

— Եթե այդպես է, գուցե գա՛ս:

— Չէ՛, հասկանում եք, մյուսները...

Վաղ առավոտյան, երբ ճաղերի մոտ մեքենայից իջավ, Չատոն արդեն գիտեր՝ ինչ նպատակով էին այդ երեքը այնտեղ հերթապահում: Ցուրտ էր. խոտը եղյամակալել էր, գետից առավոտվա մառախուղը բարձրանում ու ժամերով կախված էր մնում ձորում: Նրանց կասկածանքով նայեց.

— Ի՞նչ կա:

Անդոնին, ամեհի արտահայտությամբ կզակը ցցելով, թե.

— Այսօր աշխատել չկա:

— Ուրեմն վարձատրություն էլ չկա:

— Դե՛, կտեսնենք՝ ով է կորցնողը:

— Կորցնողը բոլորս ենք լինելու:

Չատոն մի առիթով փորձել էր գործից հանել սանձարձակին, որ քիչ է՝

անկյալի մեկն էր, դեռ մի բան էլ միջակ մեխանիկ էր: Անդոնին առանց կարդալու շեֆի աչքի առաջ պատռեց աշխատանքից ազատման հրամանը: Մի քանի ժամ անց հայտնվեց ընկերությունում երկու անձանց ուղեկցությամբ, որոնք ներկայացան որպես LAB արհմիության անդամներ: Սպառնալիքներն այնքան լրջացան, որ Չատոն, ուրիշ ելք չգտնելով, ստիպված եղավ նորից աշխատանքի ընդունել այդ անխիղճին, որի միայն տեսքից արդեն իր արյունը եռում էր:

Երեք գործադուլավորները տաքանում էին մետաղյա մի տակառի շուրջ, որի մեջ վառել էին տախտակներ, ճյուղեր, փայտեր: Չատոն նրանց նախատեց՝ իրենց չպատկանող տակառը օգտագործելու համար: Տախտակների մասին էլ չեմ ասում: Աղոտ լույսի ներքո (արևը դեռ սարի հետևն էր) կրակը դեմքերին կարմիր երանգ էր տվել:

Չատոն ասում էր՝ անտաշներ, մշտապես դժգոհներ, կերակրող ձեռքը կծողներ: Բիչո՛րին էլ վրա էր բերում.

— Այո՛, բայց առանց նրանց բեռնատարներդ ո՞վ է վարելու, ո՞վ է նորոգելու:

Նրանց խնդրեց-հրամայեց, որ կողք քաշեն տակառը, որովհետև ճաղատարապան էր ուզում բացել: Անդոնին կոպիտ, կտրուկ կրկնեց, որ այսօր աշխատել չկա: Մյուս երկուսը լռում էին: Կաշկանդվա՞ծ էին: Դե՛, սեփականատիրոջ ճանապարհը փակելը կատակ բան չէ: Այնպես որ, իրենց պարագլուխ Անդոնիի թիկունքում, հայացքները գետնին, մի կողմ քաշեցին տակառը:

Նրանց առաջնորդը բարկացավ.

— Ի՞նչ եք անում: Չե՞ք հասկանում՝ ինչ է:

Ու զայրացած, ատելությա՞մբ, բառերը թքելով՝ ավելացրեց.

— Լա՛վ, *բայց ոչ մի բեռնատար չի մտնելու ու չի դուրս գալու:*

Չատոն փակվեց գրասենյակում: Վիզը երկարելով՝ տեսնում էր պիկետ անող երեք հոգուն: Փորձում էին տաքանալ ցատկելով, ձեռքերին փչելով: Գոլորշի էին արտաշնչում, զրուցում էին, ծխում: Նրանց գլուխները կարգախոսներով էին լցրել: Խամաճիկ կապիկներ, անուղեղ ենթարկվողներ: Արդեն մոռացել են, թե որքան շնորհակալ էին, երբ իրենց գործի ընդունեց: Բիչո՛րին միշտ ասում էր.

— Դու տեղացիների՛ն գործի վերցրու, որ աշխատավարձն այստեղ մնա:

Իսկ աներես Անդոնիին աշխատանք էր տվել, զուտ որովհետև նրանց ծանոթները եկել էին Բիչո՛րիի մոտ՝ շողոքորթելով, աղաչել-պաղատելով, որ խնդրում ենք և այլն: Եթե միայն իմանա՛ր:

Ժամանակ չկորցնելով՝ զանգահարեց տարբեր հաճախորդների ու տեղեկացրեց ստեղծված վիճակի մասին: Ու թե՝ շատ եմ ցավում ու խընդրում եմ, ըմբռնումով մոտեցե՛ք: Հետո ավելի հանգիստ, բայց, միևնույն է, բարկացած, բազմաթիվ զանգեր արեց, ժամանակացույցի մեջ փոփոխություններ մտցրեց, համաձայնեցրեց նոր ժամկետները, ստիպված եղավ չեղարկել (ձեր մերը) կարևոր մի պատվեր, այն վարորդներին, որոնք այսօր պիտի վերադառնային, հեռախոսով հանձնարարեց, որ բեռնատարները կանգնեցնեն արդյունաբերական պոլիգոնի ազատ տարածքներում: Ու տեսնելով, որ ճաղերի մոտ կանգնած գործադուլավորներին ևս երկուսը միացան, որոնցից մեկը երեկ զանգահարող այն քաղաքավարի աշխատողն էր, Չատոն մտածեց, որ այսպես շարունակվել չի կարող, այս տիպերն իրենց կամքը ինձ չեն պարտադրելու:

Հեռախոսով պարզեց, որ գործադուլի պատճառով այսօր ավտոբուսները չեն աշխատում: Առավոտվա ինն անց կեսի համար տաքսի պատվիրեց: Մուշտակը հագավ, ու, լամպը չանջատելով, որ թվա՝ իբր դեռ գրասենյակում է, դեպի գետը նայող հետևի դռնով դուրս եկավ հիմնարկից: Մի քիչ այն կողմ՝ նախքան կամրջին հասնելը, մի արահետ կար, որով կարելի էր բարձրանալ դեպի մայրուղի: Նույնիսկ հինգ րոպե էլ չսպասեց տաքսիին: Տասը դեռ չկար, հասավ Սան Սեբաստիանի Ամարա թաղամաս:

Ի զարմանս իրեն՝ դուռն այն կինը բաց արեց, որին Բիչո՛րին չէր հավանում: Ասում էր, որ նա հասարակ (վանկերն առանձին-առանձին էր արտաբերում. հա-սա-րակ) բուժքույր է: Երբ իր տղայի ընկերուհու-գործընկերուհու-սիրուհու անունն էր տալիս, թեթևակի ծռում էր քիթն ու շուրթը.

— Բժիշկներին՝ բժշկուհիներ, բուժքույրերին՝ բուժակներ:

Ու հետո սկսում էր դատողություններ անել. տեսա՞ր՝ անճաշակ է, կակազում է, օծանելիքը չարաշահում է: Չէր կարողանում թաքցնել իր նախապաշարմունքը, որ առաջին իսկ վայրկյանից ունեցել էր Արա՛նսասուի հանդեպ: Ու դա է՛լ ավելի բարդացավ՝ համարյա խորշանքի հասնելով, երբ իմացավ, որ բաժանված է ու Շավիերից էլ տարիքով մեծ է:

— Մանչո՞ւկ է, ի՞նչ է, երկրորդ մոր կարի՞ք ունի: Չի՞ տեսնում, որ այդ ճարպիկը փորձում է օգտվել իր դիրքից ու աշխատավարձից:

Չատոյի համար մեկ էր: Եթե իր տղան այդ կնոջն է ընտրել, ուրեմն այդպես պետք է լինի:

Նրան տղայի բնակարանում տեսնելով՝ հանկարծակիի եկավ:

— Չե՞մ խանգարում:

— Ո՛չ, անցե՛ք, նե՛րս եկեք:

Հարցրեց՝ որտեղ է Շավիերը: Ցնցուղ է ընդունում, հիմա կգա: Արա՛նսասուն ոտաբոբիկ էր, կիսահագնված: Միասի՞ն էին ապրում: Չատոյի համար մեկ էր: Իր տեսության համաձայն՝ զավակները պիտի երջանիկ լինեն, մնացածը երկրորդական է: Բայց Բիչո՛րին, թե.

— Դու ուզում ես, որ երջանիկ լինեն, որ քեզ հանգիստ թողնեն:

— Ասենք՝ այդպես է, և ի՞նչ:

Ֆենի աղմուկն էր լսվում, կնոջ եղունգները մուգ կարմիր գույնի էին, պատին Սան Սեբաստիանի ծովախորշի մի յուղաներկ կտավ կար՝ ոմն Ա՛բալոսի ստորագրությամբ: Շավիերը շատ անգամ էր հորը խորհուրդ տվել արվեստի գործեր ձեռք բերել, բայց բանն այն է, որ դրանից գլուխ չեմ հանում, զավա՛կս:

Չատոն հարցրեց՝ հիվանդանոցն է՞լ է գործադուլ անում:

— Գործադո՞ւլ: Որքան գիտեմ՝ ոչ:

Ու երբ Շավիերը լոգանքի սպիտակ խալաթով մտավ սենյակ, հարցրեց.

— Գործադուլի մասին լսե՞լ ես:

— Ո՛չ:

— Դե՛, հորդ բանվորները այսօր գործի չեն եկել:

Չատոն գլխով հաստատեց: Հայր ու տղա գրկախառնվեցին: Շավիերը օդեկոլոն էր բուրում: Հեգնելով ասաց.

— Հետմիջօրեին վիրահատություն ունեմ: Հանուն հիվանդի առողջության հուսանք, որ գործադուլավորների խումբն այդ ընթացքում չի ներխուժի վիրահատարան:

Հայրը չծիծաղեց: Հակառակը, ունքերը կիտեց, լուրջ հայացքով նայեց, ծանր լռեց:

— Ի՞նչ է պատահել, aita:

— Ոչ մի բան:

Արա՛նսասուն (կնոջ բնազդ) ասաց, որ գնում է, որ իրենք հանգիստ խոսեն: Խնդրեց՝ մի հինգ րոպե ժամանակ տան իրեն՝ հագնվելու համար. ավելիի կարիք չուներ: Շավիերի բերանից մի հիմար «բայց» դուրս պրծավ, ասես թքի մի թել կախվեր.

— Բայց…

Չատոն Շավիերին առաջարկեց-խնդրեց, որ հանդիպեն անկյունի բարում, որ այնտեղ կսպասի զավակին: Բարում դժվար էր առանձնանալը, լսող ականջները շատ էին, ու բացի այդ՝ Շավիերը ոչ մի բան չէր ուզում խմել: Ուստի քայլեցին փողոցներով: Ուզում էին ծառերի տակ հանգիստ զբոսնել, այնպես որ հասան Արբոլ դե Գերնիկա ճեմուղուն ու խոսելով, ծայրից ծայր քայլելով՝ հասան մինչև Մարիա Կրիստինա կամուրջը ու վերադարձան:

— Լավ կլինի՝ ama-ն չիմանա, որ եկել եմ մոտդ: Ուշադի՛ր. հիմնական բաների մասին տեղյակ է: Փոխարենը կան մանրամասներ, որ թաքցրել եմ: Չեմ ուզում, որ անհանգստանա ինչ-որ խնդիրների համար, որոնք գուցե լուծվեն: Սրա համար էի ուզում քեզ հետ առանձին խոսել: Դու խելքը գլխին մարդ ես: Հաստատ կարող ես խորհուրդ տալ:

— Իհարկե, aita: Ինչի՞ մասին է խոսքը:

— Ավանում վիճակս լավ չէ:

— Միայն չասես, որ սպառնագրերը նորից են հայտնվել:

— Վերջերս ինձ հանգիստ են թողել: Երևի գլխի են ընկել, որ ես միլիոնատեր գործարար չեմ, ինչպես կարծում էին: Կամ գուցե ձեռնարկածս վերջին միջոցները մեղմել են այդ թափթփուկների ախորժակը:

— Ո՞ր միջոցները: Ինձ բան չես պատմել:

— Ի՞նչ էիր ուզում, թերթում հայտարարությո՞ւն պիտի տայի: Մեկի միջոցով խնդրեցի, որ Ֆրանսիայում հանդիպում կազմակերպեն: Գաղափարը հետևյալն էր. ֆինանսական վիճակս նկարագրել նրանց, որ տեսնեն, որ ներդրումներ եմ արել, ու խնդրել նրանց, որ ժամանակ տան կամ թույլ տան, որ մաս-մաս վճարեմ: Ուրիշներից լսել էի, որ այդպես են անում, ու որ այդ սրիկաներն ըմբռնումով են մոտենում, եթե նրանց վճարելու տրամադրվածություն ես ցուցաբերում:

— Առաջ վճարելուն դեմ էիր:

— Հիմա էլ կողմ չեմ, բայց կյանքս կերան. ի՞նչ արած, ուզում ես ինձ առևանգե՞ն:

— Քեզ ի՞նչ ասացին:

— Գնացի հանդիպմանը: Ճիշտ ժամանակին, դե՛, ինձ գիտես: Չեմ սիրում մարդկանց սպասեցնել: Բայց սպասողը ես եղա: Մեկ ու կես ժամից

ավելի: Ոչ ոք չեկավ: Հայտնի է, որ GAL*-ի դեպքից հետո ոչ մեկի չեն վըստահում: Դե՛, արի՛ ու իմացի՛ր. գուցե ինձ քաղաքացիական հագուստով մի ոստիկան է հետևել, ես էլ չեմ իմացել, իսկ նրանք տեսել են: Եվս մի հանդիպում խնդրեցի: Մերժեցին: Ապո՛ւշ վիճակ: Կարծում եմ, երևի, տեսնելով իմ պատրաստակամությունը, ինձ այս պահին հանգիստ են թողել ու հիմա ուրիշների կյանքն են փչացնում: Բայց մի բան պետք է անեմ, Շավիե՛ր: Ավանում բոլորի աչքի առաջ եմ: Հենց այս առավոտ երեք հիմարների պատճառով գործերս կանգ են առել: Իրենց մեծ բանի տեղ են դրել: Իմ սեփական աշխատողներն են որոշում՝ գործ անե՞ն, թե՞ ոչ: Չեմ էլ կասկածում, որ դրանցից մեկը իմ ամեն քայլի մասին հայտնում է կազմակերպությանը: Անդոնիին հիշո՞ւմ ես՝ Սոտերոյի զարմիկին: Դրանց խառնակիչն է: Կեղտոտ բնավորություն ունի:

— Ի՞նչի դրան դուրս չես շպրտում:

— Այդ օրն էլ կգա, թող մի քիչ խաղաղվի մթնոլորտը:

— Տե՛ս, aita, քանի որ դու գործարար ես, չպետք է խառնվես բանվորական դասակարգին: Ասածս խտրականություն չէ, բայց ի՞նչ ասեմ: Նա, ով քեզ չի հավանում կամ նախանձում է, փորձելու է վնաս տալ: Նույնիսկ ջանք էլ չի թափելու, ամեն ինչ ձեռքի տակ է: Գուցե ամեն օր անցնում ես այդ ինչ-որ մեկի դռան կողքով: Դու և ama-ն ուրիշ տեղ պիտի ապրեք ու ավան պիտի գնաք միայն մեկին այցելելու կամ աշխատելու համար: Սպառնագրե՞ր են հայտնվում: Թող շարունակեն: Եթե դու այնտեղ չլինես, չես էլ տեսնի դրանք... Ու սպառնագրեր ասելով՝ նկատի ունեմ ամեն մի վնասակար գործողություն:

— Ես կգնայի, բայց մայրդ...

— Ama-ն էլ կգնա: Մի անգամ ինձ ասել է: Ականջովս եմ լսել: Խնդիրն այն է, որ իրար հետ չեք շփվում:

— Այն պահից, ինչ թողել եմ հեծանվավազքը ու քարտ խաղալը, ավելի շատ ժամանակ ենք իրար հետ անցկացնում: Համարյա դուրս չենք գալիս: Ես տնից գործի եմ գնում ու գործից՝ տուն, իսկ նա այլևս ավանում գնումներ չի անում:

---

* GAL, Los Grupos Antiterroristas de Liberación (իսպ. հապավում), «Ազատագրման հակաահաբեկչական խմբեր»-ը ոստիկանամերձ խմբավորումներ էին, որոնք Իսպանիայի վարչապետ Ֆելիպե Գոնսալեսի առաջին երկու կառավարությունների հրամանով 1983–1987 թթ. պետական ահաբեկչություն կամ «կեղտոտ պատերազմ» էին վարում ETA-ի ու նրա շրջապատի դեմ:

— Դա կյանք չէ:

— Ինչ որ ունենք, դա է: Կարող էր ավելի վատ լինել: Հայրս կռվի ժամանակ Ֆրանկոյի դեմ էր պայքարում: Նրա ոտքը ջնջխել էին ու երեք տարի բանտում էին պահել:

— Իսկ դու հաստա՞տ զգույշ ես:

— Այդ կողմից հանգի՛ստ եղիր: Եթե ուզեն ինձ վնասել, ավանից դուրս պիտի փորձեն: Այստեղ աչքերս չորս արած եմ ման գալիս:

— Հիմա ի՞նչ կասես. գործերդ լա՞վ են, թե՞ վատ:

— Վատ: Հաճույքով ընկերությունս ավելի հանգիստ տեղ կտանեի: Լա Ռիոխա, Սարագոսա, բայց դա բարդ է: Համարյա բոլոր իմ հաճախորդներն այս շրջանից են: Շաբաթ չի լինում, որ նրանցից մեկը շտապ ծառայության կարիք չունենա: Իսկապես շատ շտապ: Իսկ եթե հեռու լինես, գիտես՝ ինչ կլինի: Մեկ ուրիշ բեռնափոխադրողի կզանգեն, ու ցտեսությո՛ւն:

— Մյուս տարբերակը՝ մի մասնաճյուղ հիմնես ու կամաց-կամաց տեղափոխես ամբողջ ընկերությունը:

— Դրա համար գործընկերոջ կարիք կունենայի՝ վստահելի մեկի, որ ինձ համար աշխատողներ գտներ այնտեղ կամ ընկերությանս հոգսը քաշեր այստեղ: Ես չեմ կարող երկու տեղում միանգամից լինել: Ինձ հիմա ավելի պարզ լուծում է պետք, որն այդքան ժամանակատար չի լինի:

— Փակի՛ր ընկերությունը, վաճառի՛ր, ապրի՛ր խնայողություններովդ:

— Գի՞ժ ես: Այդ ընկերությունն իմ կյանքն է:

— Ուրեմն, միայն մեկ ելք է մնում: Եթե դեմ չես, ձեզ օգնեմ՝ այստեղ բնակարան գտնեք ու Սան Սեբաստիանում ապրեք: Քաղաքում ավելի պաշտպանված կլինեք: Բացի այդ՝ քեզ համար տարբերությունը ո՞րն է, մեկ է, աշխատանքի մեքենայով ես գնում:

— Բնակարանը մեծ ծախս է: Ինձ թվում է՝ մայրդ չի…

— Ուզո՞ւմ ես՝ փնտրեմ, թե՞ չէ:

— Լա՛վ, փնտրի՛ր: Հետո կտեսնենք:

46

Անձրևոտ մի օր

Այն օրը, երբ Չատոյին սպանեցին, անձրև էր գալիս: Աշխատանքային, անվերջ ձգվող գորշ այն օրերից էր, որոնց ընթացքում ամեն ինչ դանդաղ է, թաց է, ու առավոտը հետմիջօրեից ոչ մի բանով չի տարբերվում: Սովորական մի օր էր: Ավանը գոտևորող սարերի գագաթները ամպերով էին ծածկված:

Չատոն շուտ էր եկել գրասենյակ: Շո՞ւտ: Այո՛, վեցի կողմերը, դեռ մութ էր: Գրասեղանի վրա պոկովի մի օրացույց ուներ, օրվա թերթիկը պոկեց, կարդաց դարձերեսին գրածը: Հետո իր օրագրի էջում նշեց առանց ծխախոտ անցկացրած օրերի քանակը՝ 114: Հպարտանում էր՝ տեսնելով գայթակղությանը դիմանալու թվերի երկար սյունակը: Բիչո՛րին էլ գոհ էր, որ այլևս բնակարանը չի լցվում վարագույրները դեղնացնող ծխով, ու որ պատերից, կահույքից ու իրենց շնչած օդից այլևս գարշելի հոտ չի գալիս:

Չատոն չգիտեր (որտեղի՞ց իմանար), որ վերջին անգամ է մտածում, իրերը տեսնում ու հանձնարարություններ տալիս: Լույսը վերջին անգամ էր բացվել նրա համար: Նույնպես վերջին անգամ առօրյա գործողություններ արեց: Իր կյանքի վերջին առավոտվա ընթացքում վերցրեց-դրեց-շոշափեց իրերը, նայեց դրանց:

Տնից աշխատանքի հասավ սովորական բոլոր նախազգուշություններով: Փայտե տախտակներն ու պարանները՝ մեքենայի շուրջ. անզեն աչքով երևում էր՝ այն դիրքով էին, որ տեղադրել էր: Մեքենայով անցավ այսինչ փողոցներով՝ այնինչ փողոցների փոխարեն՝ մերթ-մերթ հայացք գցելով հետևի հայելուն: Իրենից անկախ՝ քիչ էր մնում՝ փչացներ պատրաստվող ահաբեկչությունը: Մի հաճախորդի հետ Բեասա՛ինում աշխատանքային ճաշ էր նախատեսել, բայց առավոտվա ժամը տասի կողմերն այդ մարդը զանգեց՝ տեղեկացնելու, որ անսպասելի գործ էր բացվել, ու խնդրեց հանդիպումը մի ուրիշ օր տեղափոխել:

— Իհարկե, ոչ մի խնդիր:

Չատոն ուրախացավ, որովհետև բոլորովին չէր ուզում այս անդուր եղանակին վատ ճանապարհներով քշել: Այդպես (ճակատագրական որոշում)

ընտրեց իր սովորական տարբերակը, որը քաջ հայտնի էր նրանց, ովքեր նրան ոչնչացնելու հրաման ունեին: Զանգեց Բիչո՛րիին, ասաց, որ տուն կգա կեսօրվա ճաշին: Եկավ, կերավ իր կյանքում վերջին անգամ:

Ավտոտնակում, մեքենայի շարժիչն արդեն հանգցրած, Չատոն մեկ կամ երկու րոպե մնաց նստած՝ մինչև վերջ լսելով ռադիոյով հաղորդվող երգը, որն իրեն դուր էր գալիս: Դուրս եկավ մեքենայից, տեղադրեց բոլոր տախտակներն ու պարանները՝ տեսնելով իր շուրջը եղածը, չիմանալով, որ այլևս երբեք չի տեսնելու դրանք՝ դարակի վրա շարած ներկի պարկուճները, առաստաղից կախված հեծանիվը, գինու կահույքները, պահուստային անիվները, գործիքներն ու սարքերը, որոնք շատ չէին ու մեքենայի համար տեղ բացելու համար պատերի տակ էին շարած: Դուրս եկավ փողոց՝ ցածրաձայն երգելով քիչ առաջ լսած երգը: Փակեց մետաղե դուռը: Հորդ անձրև էր գալիս: Հովանոց չուներ, բայց դե՛, կարևոր չէր: Միևնույն է, քառասուն-հիսուն քայլի վրա էր շքամուտքը:

Այդ պահին էր, որ նրան տեսավ՝ պնդակազմ, թիկնեղ, շենքի անկյունում կանգնած: Ո՞նց կարող էր չտեսնել, եթե եղանակի պատճառով փողոցում մարդ-մուրդ չկար: Չնայած կնգուղը քաշած էր գլխին, Չատոն նրան ճանաչեց: Իր տեսքից, մարմնից՝ մի խոսքով. մայթն անցավ ու գնաց դեպի տղան՝ նրա հետ խոսելու.

— Տե՛ս, է՛, Խոշե՛ Մարի: Վերադարձե՞լ ես: Ուրախ եմ:

Տեսավ տղայի աչքերը, սեղմված շուրթերը, լարված դիմագծերը: Մեկ վայրկյան նրանց հայացքները խաչվեցին: Խոշե Մարիի հայացքում վճռականություն-լկտիությունը, տագնապ-ապշանքը խառնվել էին իրար: Երկուսն էլ անձրևի տակ թրջվում էին. մայթերի սալիկները գորշ գույնի էին: Դրանցից մի քանիսը տեղահան էին եղած, ու այդ փոսերում կեղտոտ ջուր էր հավաքվում: Տան ճակատային պատով ինչ-որ լարեր էին վեր ձգվում:

Եկեղեցու զանգը ժամը մեկը խփեց հենց այն պահին, երբ նրանք իրար էին նայում: Մի վայրկյան մնացին դեմ դիմաց կանգնած՝ անշարժ, լուռ, Չատոն՝ սպասելով, որ Խոշե Մարին մի բան ասի, Խոշե Մարին՝ ասես պարալիզացված, ձեռքերը բաճկոնի գրպանները դրած: Հանկարծ հայացքը փախցրեց, ուզում էր ինչ-որ բան ասել, բայց չասաց, կտրուկ շրջվեց ու արագ քայլերով, համարյա վազքով իջավ փողոցով՝ անկյունում կանգնած թողնելով Չատոյին, որն ուզում էր խոսել, հարցնել:

Խոհանոցում կոշիկները հանելով՝ ասաց Բիչո՛րիին.

— Ինչո՞ւ լույսը չես վառում:

— Ինչի՞ համար, ամեն ինչ երևում է:

— Չես պատկերացնի՝ հենց նոր ում տեսա փողոցում: Մի ամիս էլ մտաբես՝ չես կռահի:

Կաթսայից գոլորշի էր դուրս գալիս, տապակի վրա բարակ անյուղ մսի մի շերտ էր կայծկլտում: Լույսը՝ մռայլ ու գորշ, անձրևի կաթիլներով ցողված, պատուհանի ապակու միջով ներթափանցում էր խոհանոց:

Բիչո՛րին գոգնոցով, Չատոյի ասածներին խուլ, բզբզում էր գազօջախի մոտ:

— Սև պղպեղ դնե՞մ:

— Խոշե Մարիին տեսա:

Այնպես շրջվեց, ասես մեջքը ասեղ խրեցին, աչքերը չռած.

— Դրանց տղայի՞ն:

— Հա՛, բա էլ ո՞ւմ:

— Խոսեցի՞ք:

— Ես՝ այո: Նա, որևէ բան չասելով, հեռացավ, թեև ընդամենը այսքան էր մնում,– ցուցամատով ու բութ մատով ճտտացրեց,–որ ինձ բարևեր: Կարծում եմ՝ մի քանի վայրկյանում հիշեց, որ իր ընտանիքը մեզ հետ չի խոսում: Նույն պնդոտ տղան է՝ միամիտի դեմքով:

Դեմ դիմաց նստած ուտում էին ու խմում: Չատոն աղմուկով էր ծամում: Ասաց, որ ուրախ է, որ ստիպված չի եղել այս եղանակով Բեա՛սաին գնալ: Բիչո՛րին այնքան էլ ուրախ չէր:

— Դե՛, եթե գնայիր, գործս ավելի քիչ կլիներ: Որովհետև միայն ինձ համար ուտելու բան չեմ սարքում: Լավ էր՝ սառցարանում միս կար:

— Այ կնիկ, եթե դա է պատճառը, կարող էինք ռեստորան գնալ:

— Որ թա՞րս նայեին մեզ:

— Պարտադիր չէ՝ հայտնի ռեստորան լիներ:

— Չարժի ծախս անել:

Որոշ ժամանակ անց Բիչո՛րին նորից անդրադարձավ այն թեմային: Ճակատին կասկածի երկու կնճիռ էր ընդգծվել:

— Բայց նա ETA-ից է, չէ՞:

— Ո՞վ:

— Էլ ո՞վ պիտի լինի: Քեզ չի՞ զարմացնում, որ ETA-ից մեկը հանգիստ ման է գալիս ավանով, մինչդեռ նորմալ կլիներ, որ խուսափեր ոստիկանությունից: Ինձ մի բան ասա՛. հովանոց ունե՞ր:

— Հովանո՞ց: Սպասի՛ր՝ մտածեմ: Ո՛չ: Կնգուղն էր քաշել գլխին: Բայց ասում եմ քեզ՝ հետը խոսել եմ: Այսինքն՝ ոչ թաքնվում էր, ոչ էլ ուրիշ բան: Երևի եկել է՝ ընտանիքը տեսնի:

— Վստա՞հ ես, որ քեզ չէր հետևում:

— Որպես ի՞նչ ինձ պիտի հետևի: Քեզ չասացի՞, որ դեմ առ դեմ էինք կանգնած, ինչպես ես հիմա՝ քո առջև: Դա ի՞նչ հետևելու ձև է: Ու եթե ուզում էր վնասել, ինչո՛ւ հեռացավ, չէ՞ որ շատ մոտիկ էի:

— Դե՛, չգիտեմ. այդ կարգի բաներից վատ հոտ եմ առնում:

— Լա՛վ, լա՛վ: Աշխարհի չվստահելու մրցաշարին ներկայանաս՝ կհաղթես: Հիշի՛ր՝ «Պագոետայում» ինչքա՜ն եմ պաղպաղակ գնել այդ տղայի համար, երբ երեխա էր: Ափսո՜ս, որ գնաց, որովհետև եթե իրոք ETA-ի անդամ է, գրո՛ղը տանի, կարող էր ինձ կապել իր ղեկավարների հետ, ու ես նրանց կբացատրեի՝ ինչ ֆինանսական վիճակում եմ հիմա:

Ճաշն ավարտեցին, ու դա Չատոյի կյանքում վերջին ճաշն էր: Բիչո՛րին անմիջապես անցավ ամանները լվանալուն: Չատոն ասաց, որ սիեստա կանի: Հագուստով պառկեց անկողնու վրա ու մի ժամի չափ իր կյանքում վերջին անգամ քնեց:

47

Ի՞նչ եղավ նրանց ճակատագիրը

Երեք տղաների միջից ամենաթուլակամը նա էր: Միրենը՝ մռայլ, թե.

— Ոչ թե ամենա, այլ հենց թուլակամը:

Կոլդոն՝ ընտանիքի երկրորդ զավակը, այն տիպերից էր, որոնք ամբողջ կյանքում որևէ մեկի հետևից են գնում: Տղաներին մատնել էր Ինչաուռոնդոյի զորանոցում:

— Հակառակ դեպքում, ձեր տղան ու Խոկինը մեզ հետ կլինեին. այստեղ, բան եմ ասում, գուցե երբեմն աղբի կոնտեյներներ շուռ կտային, բայց չէին միանա զինված պայքարին: Հետո ի՞նչ, որ ծեծ է կերել: Բա լսի՛ր, այդքան մարդիկ դիմացել են և՛ փայտերով ծեծին, և՛ «լոգանքին», բայց քիչ են բերանները բացել:

Միրենը Կոլդոյից այնքան էր զզվում, որ ասելու չէր: Անունը լսելը բավական էր, որ շնչառությունն արագանար:

Խոշիանն էլ տանել չէր կարողանում դրա հորը, որի հետ աշխատում էր ձուլարանում: Տարիներ շարունակ նույն հերթափոխում լինելով՝ միասին ոտքի վրա աշխատել են վառարանի մոտ, հարյուրավոր անգամներ միասին ձուլածո են լցրել կաղապարների մեջ: Էրմինիոն եկվոր էր՝ Անդալուսիայից քաղցի պատճառով գաղթած. երիտասարդ ժամանակ էր եկել ավան: Ամուսնանալով տեղացի միամիտ ու խոշորակազմ մի բասկուհու՝ Մանոլիի հետ, իրեն Պապից ավելի բասկ էր համարում: Խոսո՞ւմ էր բասկերեն: Այո՛, kaixo, ergun on, ու վերջ: Դրա տիպի մարդիկ լիքն էին, ու նրա տղայի՝ այդ թուլակամի մեղքով իր տղան հիմա, արի՛ ու իմացի՛ր, ինչ է անում՝ կյանքը վտանգելով, առանց մասնագիտության, առանց ապագայի, առանց ընտանիքի. խեղճ Խոկինի մասին էլ չասեմ:

Գործավորներից մեկը թոշակի անցավ: Ու Էրմինիոյին նրա փոխարեն վերցրին՝ ձուլվածքները փայլեցնելու, ելուստները տաշելու ու նման գործեր անելու համար: Այդ ժամանակից ի վեր արդեն այդքան հաճախ չէին հանդիպում Խոշիանի հետ: Բացի այդ՝ Էրմինիոն նրանցից չէր, որ գնում էին բար՝ մի պարտիա խաղալու ընկերների հետ (դրա պես մեկն ընկերներ էլ չուներ). ո՛չ հեծանվորդ էր, ո՛չ էլ մարդկանց հետ շփվող: Կամ ձուլարանում

էր՝ փոշու մեջ կորած, կամ էլ տանը՝ գրքերի կազմեր սարքելով՝ մի քիչ ավելի փող աշխատելու համար: Բայց նրան շատ վատ վերաբերվող Խոշիանի կարծիքով նույնիսկ ավելի լավ էր, որ այդ մարդը ոչ մեկի աչքին չէր երևում:

Երբեմն՝ աշխատանքային դադարների ժամանակ, երբ մեկը դուրս էր գալիս՝ գործարանի հետնաբակում ծխելու, մյուսին էր հանդիպում:

— Նորություն ունե՞ս:

— Ոչ մի բան:

Հարցը միշտ նույնն էր, պատասխանը՝ նույնպես: Դրանից ավելին խընդրի մասին չէին խոսում ու այդ երկու բառն էլ փոխանակում էին միայն այն պահին, երբ գործընկերները հեռու էին: Ֆուտբոլի մասին էին զրուցում, բասկյան գնդակի խաղի, ամեն ինչի մասին, բացի քաղաքական հարցերից ու բացակայող զավակներից, կամ էլ կողք կողքի լուռ ծխի քուլաներ էին օդ մղում՝ հայացքները դիմացի սարերին հառած:

Մի ժամանակ Էրմինիոն իր էժան գինիով կենաց էր խմում ETA-ի յուրաքանչյուր մահաբեր ահաբեկչության պատվին: Մի երեկո մյուս ընկերների ներկայությամբ Խոշիանը նրան սաստեց.

— Լա՛վ, Էրմինիո՛, համը մի՛ հանիր. դա կատակ չէ:

Տանը Միրենին ասաց.

— Կատարյալ ապուշ է այդ մարդը:

— Փորձում է սրամիտ լինել ու չի կարողանում:

Մի օր էլ՝ ծխելու պահին, երկուսով մենակ հայտնվեցին հետնաբակում: Մրի մեջ կորած, դեմքերը կարմրած, կոշիկները սևացած:

— Նորություն ունե՞ս:

— Ոչ մի բան:

— Մենք ունենք:

Նրա աչքերում Խոշիանն ուրախություն տեսավ, պատմելու ցանկություն, նկատեց նրա դեղին ատամները, մեկն էլ՝ ոսկե շապիկով: Շշընջալով, գաղտնի, թե.

— Մեխիկոյում է փախստականի կարգավիճակով:

— Որտեղի՞ց գիտես:

— Նամակ է գրել Կորդոբայում ապրող քրոջս. իր միջոցով իմացանք:

— Խոշե Մարիի մասին մի բան ասո՞ւմ է:

— Անունն էլ չի տալիս: Եթե կուզես, Մանոլին կհարցնի: Ամռանը գնալու է մոտը:

Խոշիանը ուսերը թոթվեց: Հիասթափված էր: Մինչև ամառ հինգ ամիս կար: Իր տղայի մասին Կոլդոյի իմացածն այդ ժամանակ ի՞նչ պիտի լիներ: Մյուսը շարունակում էր.

— Ճամփորդությունը միլիոն է նստելու: Հիմա մտածում ենք, որ կինս գնա ու հագուստ տանի նրան, կամ ինչ որ պետք է: Հեռու է, բայց գոնե վտանգից դուրս է: Վերջապես կարող ենք հանգիստ խղճով քնել:

Քիչ էր մնում՝ ուրախությունից ծափ տար: Խոշիանը գործից ուղիղ տուն գնաց՝ նորությունը կնոջը պատմելու: Աստվա՜ծ իմ, ինչո՞ւ լեզուն չկծեց: Միրենին վաղուց չէր տեսել այդքան դառնությամբ լացելիս: Ի՞նչ հեկեկոցներ, մամա՛ ջան: Գոգնոցը ծեփեց պատի օրացույցին: Լացուկոծ, հառաչանքներ, զայրույթ ու վիշտ, ցավ, ինչպիսի՜ ցավ: Ինչո՞ւ հենց իրենց բաժին պիտի ընկներ այս ամենը, որտե՞ղ հիմա կլինի տղան, եթե հանկարծ հիվանդանա, ո՞վ է նրան խնամելու: Խոշիանն էլ, թե՝ մի՛ գոռա, գրո՜ղը տանի, հիմա մեզ փողոցից կլսեն:

— Թող լսեն: Շատ խելացի է Կոլդիտոն. անունները երգեց ու հիմա ապահով տեղում է: Երանի՜ նրան թունավոր օձ կծի Մեքսիկայում:

— Լա՛վ, լա՛վ, հերի՛ք եղավ:

Գիշերն, արդեն անկողնում, մթի մեջ Միրենն ասաց.

— Ուզում եմ՝ ոստիկանությունը բռնի Խոշե Մարիին, ու այս ամենը վերջանա: Անընդհատ աղոթում եմ Սուրբ Իգնասիոյին: Թող ֆրանսիական ոստիկանությունը բռնի: Ոչ թե իսպանականը, հասկանո՞ւմ ես: Թող որոշ ժամանակ բանտում մնա՝ պատմություններից հեռու, ու հետո զավակիս ինձ վերադարձնեն: Ի՞նչ կարծիքի ես:

— Նույն բանն եմ մտածում: Բայց երբ ես էի ասում, ծառս էիր լինում:

— Դու ի՞նչ ես հասկանում մոր զգացմունքներից:

— Իսկ հոր զգացմունքները՝ հե՞չ:

Հաջորդ օրը ավելի հանգիստ վիճակում եկան այն եզրակացության, որ համամիտ են՝ աքսորը Խոկինի ճակատագրից ավելի լավ է: Իսկ Խոկինին ի՞նչ էր պատահել: Դե՛, խելքը թռցրել էր: 87-ին գնացել էր դաշտ ու ինքնասպան եղել: Ոչխար արածեցնող մի հովիվ շաբաթներ անց նրա մարմինը պատահաբար գտել էր Բուրգոսի շրջանի անջրդի մի տարածքում: Դին անճանաչելի էր, ծայրահեղ քայքայված, կիսով չափ հողոտած: Մոտը նույնականացման կեղծ քարտ էին գտել: Ռազմական ոստիկանությունը նույնականացրել էր լուսանկարի օգնությամբ: ETA-ն իր հաղորդագրության մեջ

ժխտել էր պաշտոնական վարկածը: Ամբոխը հավաքվել էր ավանի հրապարակում՝ ikurriña-ով փաթաթված դագաղը դիմավորելու համար: Անձրև էր գալիս: Նման դեպքերում միշտ անձրև է գալիս: Միրենն էլ, թե.

— Հիմարություն է:

Դե՛, Խոշիանի կարծիքով, երբ այս կարգի դեպքեր են լինում, միշտ անձրև է գալիս: Եկեղեցին՝ լեփ-լեցուն, մարդիկ՝ ոտքի վրա, նստարանները չէին հերիքում: Դրսից շատ մարդիկ ու քաղաքական գործիչներ էին եկել: Դոն Սերապիոն, ակներև դժվարությամբ զսպելով զգացմունքները, քարոզի ժամանակ ասաց, որ «հուսանք՝ մեր սիրեցյալ Խոկինի եղերական մահը մի օր կբացահայտվի»: Իսկ հետո հովանոցների երկար շարանը բարձրացավ դեպի գերեզմանոց: Գերեզմանի մոտ երգեցին Eusko Gudariak, ողջույնի բացականչություններ արձակեցին ETA-ին, ու ինչեցին վրեժի խոստումներ, ու վերջում բոլորը շարժվեցին դեպի ելք՝ թիկունքում անձրևի տակ թողնելով ծաղկեպսակներն ու խաչերի լռությունը:

Խոսեչոն մսի իր խանութը երկար ժամանակ փակ պահեց: Այդպես էլ չհաշտվեց զավակի կորստի հետ: Մի քանի ամիս անց նրա մոտ քաղցկեղ հայտնաբերեցին: Մի տարի դիմացավ:

Խոշիանը, թե.

— Ըստ իս՝ Խոկինի մահն է նրա հիվանդությունն առաջացրել: Այդքան ուժեղ, այդքան առողջ մարդ էր: Հակառակ դեպքում՝ ինչո՞վ բացատրես:

Թաղումից մի շաբաթ անց Միրենի դրդմամբ գնաց մսի խանութ՝ Խոսեչոյին տեսնելու: Գրկախառնություն, արցունքներ, փղձկոցներ: Ի՜նչ խոշորամարմին էր Խոսեչոն: Ու երբ մսավաճառը հանգստացավ, խանութի հետևի մասում դեմ դիմաց նստած խոսեցին: Առանց այս ու այն կողմ ընկնելու՝ Խոշիանը հարցրեց՝ իրականում ի՞նչ էր պատահել:

— Բոլորը ստում են: Ոստիկանությունը, ձախ abertzale-ները: Ամբողջ աշխարհը ստում է, Խոշիա՛ն, հաստատ բան եմ քեզ ասում: Ճշմարտությունը ոչ մեկին պետք չէ:

Վհատված էր: Կինը՝ Խուանին, նույն վիճակում էր, բայց տրվել էր աղոթելուն: Այդ երեկո Խոսեչոյի պատմածը տարիներ անց Խոշիանին հաստատեց Խոշե Մարին՝ Պիկասենտի բանտում գլուխ գլխի հանդիպման ժամանակ: Դե՛, ֆրանսիական ոստիկանությունը բռնել էր Պոտրոսին՝ Անգլետի տներից մեկում անկողնու տակ թաքնված: Մի ճամպրուկ էին առգրավել՝ մեջը տասնհինգ կիլո փաստաթուղթ, որոնց մեջ կար նաև

հարյուրավոր անուններով մի ցանկ ու տվյալներ՝ գործողություններ իրականացնող մարտիկների մասին: Հրամանատարի տնազին տե՛ս, հիմարի՛ մեկը: Նույնիսկ Սանտիին բռնեցին: Դրա մասին ընդամենը մի քանի ժամ անց հայտնեցին SER ալիքով՝ նորությունների թողարկման ընթացքում: Դե՛, պարզ է, մարդիկ խուճապահար փախան, բայց ոմանք էլ բռնվեցին: Խոկինը պարանոյայի մեջ ընկավ: Խոսեչոն դա յուրովի էր բացատրում:

— Կարծում էր, որ գալու են, իրեն բռնեն: Մի ապահով բնակարանում մենակ էր ապրում, բայց խուճապի մատնվեց: Talde*-ի իր ընկերների տեսադաշտից անհետացել էր, ու հետո՝ որոշ ժամանակ անց, նրան գտել էին: Ինքնասպան էր եղել:

Խոշե Մարին բանտի հանդիպումների սենյակում, բասկերեն շշնջալով, հաստատեց այդ վարկածը:

— Ինձ ասացին, որ այդ ժամանակ շատ տարօրինակ էր դարձել: Կարծում էր, որ լսող սարքեր են տեղադրել նույնիսկ ցնցուղի խցիկում: Ինձ պատմել են, որ հագուստի թարս կողմն էլ էր ստուգում: Ոչ մեկի չէր վըստահում: Բայց մեզնից ոչ ոք չէր պատկերացնում, որ դա կարող է այդպես վերջանալ: Սարսափելի ազդեց վրաս, aita: Էրիվ տապալեց: Ու եթե ճիշտը կուզես իմանալ, դրանից հետո մի քիչ հիասթափվեցի մեր պայքարից:

* Talde (բասկ.), դիվերսիոն խումբ:

48

Երկրորդ հերթափոխ

Այդ ամբողջ անիծյալ օրվա ընթացքում անձրև էր գալիս, իսկ նա պիտի երկրորդ հերթ աշխատեր: Ձուլարան գնալուց առաջ պատուհանից դուրս նայեց: Երկինքը՝ լրիվ ամպամած, փողոցը՝ թաց, երթևեկությունը՝ քիչ, ու երկինքը բռնած ամպն այնքան էր իջել, որ մերթ-մերթ կախվում էր եկեղեցու շանթարգելից:

Խոշիանը երբևէ ո՛չ մեքենա էր ունեցել, ո՛չ էլ վարորդական իրավունք: Աշխատանքի ոտքով էր գնում կամ հեծոյով: Իր լավ հեծանվով չէ, իհարկե: Աշխատանքային օրերին հին հեծոն էր օգտագործում, որը նախ պետք չէր լինում մանրակրկիտ չորացնել, բացի այդ՝ հետևի մասում զամբյուղ ուներ ու ցայտապահ ռետին: Միրենը զգուշացրեց, որ արդեն ուշ է: Նա տագնապած նայեց ժամացույցին: Ի՞նչ ուշ, ի՞նչ ութն անց տասնհինգ, եթե դեռ կես ժամ կար: Ա՛յ կնիկ, «տեր վռա՞զն» ես: Հրաժեշտի համբո՞յր: Սովորություն չունեին: Միջանցքում կանգ առավ ներկառուցված պահարանի առջև: Խնդիր էր. այս տեղատարափ անձրևին դեմպոնչո՞ էր պետք, թե՞ հովանոցը բավարար էր: Առաջինը կնշանակեր, որ պետք է հեծոյով գնար, երկրորդը՝ քսան րոպե ոտքով զառիվար, մինչև ձուլարանը: Նախընտրեց հովանոցը:

Փողոցները մարդաշատ չէին, տեղ հասավ, մուտքին գրանցվեց և ամեն օրվա պես բանվորական արտահագուստ հագավ, բարձրաճիտք կոշիկներ, ձեռնոց, սաղավարտ ու մտավ մութ, տաք արհեստանոցը: Ձեռնարկության ամենաածաղկուն օրերը չէին: Ոչ հենց իր՝ ձեռնարկության համար, ոչ էլ ընդհանուր մետաղագործական ոլորտի: Խոշիանը դա նկատում էր՝ նույնիսկ չխորանալով իրենց բիզնեսի գաղտնիքների մեջ: Նախկինում ավելի շատ էին արտադրում, արտադրամասն ավելի մարդաշատ էր: Հիմա՝ կարևորի մասին: Թոշակի անցնելու համար մի քանի տարի էր մնում: Ձուլափուռի օպերատորի երկարամյա փորձը նրան անփոխարինելի էր դարձնում ձեռնարկության համար, կամ էլ առնվազն ինքն էր այդպես մտածում: Երիտասարդներին ավելի վատ ապագա էր սպասում, եթե, ինչպես ասում էին, սեփականատերերը որոշեին փակել ընկերությունը: Իր երեխաները, ի վերջո, արդեն մեծ էին, ու թոշակն էլ՝ ապահովված:

Նորությունը երեկոյան կողմ բեռնատարի մի վարորդ հետը բերեց: Ավելի ճիշտ՝ նորության մի մասը, որը քիչ առաջ ճանապարհին էր լսել ռադիոյով: Դեպքը, ժամը, տեղը: Մանրամասնե՞ր: Քիչ էին ու ոչ հստակ: Հաստատ էր, որ ժամը չորսի կողմերը մի անձնավորության վրա կրակել էին ավանի կենտրոնական փողոցներից մեկում: Պարզ չէր՝ մարդը մահացե՞լ էր, թե՞ ոչ:

Խոշիանին պատմեցին դա, երբ դուրս էր եկել ծխելու: Հարցրեց.

— Ոստիկա՞ն է եղել:

— Գաղափար չունեմ:

— Լա՛վ, շուտով կիմանանք:

Աշխատանքային օրն ավարտելով՝ Խոշիանը տուն գնաց: Ամեն օր ավելի շատ եմ հոգնում: Տարիներն անհետևանք չեն անցնում: Այսպիսի սովորական բաներ էր ասում-մտածում՝ դատարկ փողոցներով քայլելով: Առավոտվա հերթափոխները նրա համար այնքան հոգնեցուցիչ չէին: Մարդ դուրս է գալիս աշխատանքից՝ ակնկալելով իր ազատ ժամերին մուս խաղալ, ընկերներին հանդիպել, քնելուց առաջ հեռուստացույցով որևէ խաղ նայել: Փոխարենը՝ միակ բանը, որ կարող էր անել հիմա՝ որևէ հաճույք չստանալով, ինչպես միշտ, ընթրիքին ձուկ ուտել, որովհետև այս կնիկը ձկնային կերակուրների մոլուցք ունի, հետո անկողին մտնել փետով ծեծ կերածի պես ու սոված արթնանալ հաջորդ առավոտյան:

Արդեն գիշեր էր. շարունակում էր անձրևել, ու ինչի վրա էլ հայացքն ընկներ՝ թվում էր կրկնվող, սովորական, ծանոթ: Տների նույն ճակատները՝ լուսավորված պատուհաններով, հրապարակի ծառերը՝ աղոտ երևացող մի քանի լապտերների լույսի ներքո, թաց ասֆալտի վրա խշխշացող անվադողեր: Ո՛չ ոստիկանություն կար, ո՛չ ազդանշաններ, ո՛չ էլ կապույտ լույսեր: Տունդարձի ճանապարհին չտեսավ ցերեկվա չորսի ահաբեկչության և ոչ մի հետք: Այստեղ տները կրակների մեջ չէին, ոչ էլ քարուքանդ էին եղած: Ամեն ինչ սովորական վիճակում էր. մութ շքամուտքեր, լապտերներ, բարերի դռներ, որտեղից լսվում էին խոսակցություններ, ու երբեմն՝ ծիծաղ: Գայթակղություն կար մտնել, երկու գավաթ գինի խմել ու ծխել, մի երկու խիլդա* բերանը գցելով՝ մի տեսակ ինքնապարգևատրվել ավարտված օրվա կապակցությամբ, բայց դե՛, այս ժամին՝ այսքան հոգնած, ու հետո էլ՝ բարկացած կինը. չարժի:

* Խիլդա (իսպ.), ձողիկի վրա շարած ձիթապտղի, անչոուսի ու կծու պղպեղի կտորներ:

Միրենը նույնիսկ հովանոցը լոգասենյակ տանելու ժամանակ չտվեց նրան:

Մեկից վրա տալով՝ ասաց.

— Չատոն է մահացել:

Արդեն վաղուց էր, որ այդ տանը երբեմնի ընկերոջ մականունը չէին տալիս:

— Համը մի՛ հանիր:

Խոշիանը քարացավ: Այան պես: Չէր թարթում: Հետո, չնայելով կնոջը, հարցրեց՝ ինչպես է պատահել:

— Դե՛, ինչպե՞ս են նման բաները պատահում: Անսպասելի չէր: Սպառնագրերով արդեն տեղեկացրել էին:

— Նա է՞ր օրվա երկրորդ կեսին սպանվողը: Համը մի՛ հանիր:

— Համը հանում եմ: Չատոն պրծավ-գնաց: Պատերազմն այդպես է լինում. մարդիկ են մեռնում:

Եսձեր, եսձերտիրոջմերը: Անվերջ հայհոյանքներ էր տեղում դառնությամբ, գլխի ժխտական տարուբերումներով: Փորձեց ընթրել: Չկարողացավ: Ձեռքն այնքան էր դողում, որ չէր կարողանում գդալը պահել, ու Միրենը նյարդայնացավ.

— Լսի՛ր, դու հո չե՞ս ընկճվելու:

Ես ձեր և այլն: Հետո նաև.

— Բասկ էր, ավանից մեկն էր՝ իմ ու քո պես: Մեղա՛յ Աստծո, գոնե ասեիր՝ ոստիկան էր, բայց ոչ Չատո՞ն: Իմ կարծիքով նա վատ անձնավորություն չէր:

— Խնդիրը լավ կամ վատ անձնավորություն լինելը չէ: Էստեղ մի ամբողջ ավանի կյանքն է խաղարկվում: Մենք abertzale ե՞նք, թե՞ ինչ: Ու մի՛ մոռացիր, որ պայքարող տղայի հայր ես:

Միրենը զայրացած վեր կացավ սեղանից: Ամանները լվաց լռության մեջ, Խոշիանն էլ տեղից չշարժվեց նույնիսկ այն ժամանակ, երբ Միրենը մտավ խոհանոց՝ ասելու, որ հեռուստացույցով հաղորդում են դեպքի մասին: Հարցրեց՝ ուզո՞ւմ է նայել, ու Խոշիանը գլխով «ոչ» ասաց:

— Դե՛, ես գնացի քնելու:

Խոշիանը մնաց խոհանոցում: Իր համար մի գավաթ գինի լցրեց լվացարանի տակը պահվող շշից, հետո՝ մի հատ էլ ու էլի մի հատ: Խմում էր ու ծխում, ու ժամը տասներկուսը դարձավ, հետո՝ մեկը, հետո՝ երկուսը: Երբ գինին վերջացավ, գնաց պառկելու: Միրենը մթան մեջ վճռական ձայնով վրա բերեց.

— Եթե դրա պատճառով ես լաց լինելու, ուրիշ սենյակ գնամ՝ քնելու:

— Ում համար կուզեմ՝ նրա համար էլ լաց կլինեմ:

Գիշերվա վերջին մութ ժամերն էլ անցան: Խոշիանը, հագուստով պառկած, կարողացա՞վ քնել: Ոչ մի վայրկյան: Երբ շերտավարագույրի ճեղքերի միջով լույսը ներս թափանցեց, վեր կացավ: Հարցին, թե ուր է գնում, չպատասխանեց: Զուգարանից լսվող մեզի երկար շթի ձայնը խախտեց տան լռությունը: Ու անկողին վերադառնալու փոխարեն՝ Խոշիանը, նախաճաշ էլ չանելով, փողոց դուրս եկավ: Այդ ժամի՞ն, այն էլ, երբ այսօր էլ էր երկրորդ հերթ աշխատելո՞ւ: Հեծանվով գնաց՝ առանց անձրևանոցի, թեև անձրև էր գալիս, մի ճանապարհով, հետո՝ մյուս: Նրա համար կարևոր չէր ուղղությունը, ամեն ինչն էր միևնույն: Ու Օրիոյի զառիվայրի կեսին՝ փոքր նավահանգստում, որտեղ ժամանակին մրցում էր Չատոյի հետ, ու Չատոն միշտ տարվում էր (դե՛, որքան էլ ոգևորված պտտեր անիվները, միևնույն է, նրա ոտքերը հեծանվի համար այդքան հզոր չէին, որքան Խոշիանինը), կանգ առավ՝ սիրտը թեթևացնելու բոլորի աչքից հեռու՝ մայրուղու եզրին. եսձերտիրոջ:

Ժամը մեկի կողմը, ոտքից գլուխ թրջված, հասավ տուն: Լողացավ ու մաքուր շորեր հագավ: Ոսպն ու տապակած սխտորով միսը մնաց սեղանի վրա: Հետը բանան վերցրեց ու ունքերը կիտած որոշեց ձուլարանում օրվա ընթացքում ոչ մեկի հետ չխոսել: Իր խոսքի տերը եղավ մինչև ուշ երեկո: Հետնաբակում ծխելու պահին նրան մոտեցավ Էրմինիոն: Հիմար Էրմինիոն եկավ ու ասաց.

— Երդվում եմ՝ երեկ Խոշե Մարիին եմ տեսել ավանում:

— Դու շատ ես երդվում:

— Չէ՛, լուրջ եմ ասում, աշխատանքի գալու ճանապարհին: Մի մեքենայի մեջ էր նստած:

— Ակնոց ա՛ռ քեզ համար ու էլ նյարդերիս չկպչես: Տղաս հեռու է: Այնքան հեռու չէ, որքան քոնը, բայց, ասենք, բավական հեռու է:

— Բայց նրա կիսադեմը տեսա, ու ինձ թվաց…

— Շփոթել ես:

Խոշիանը ծխախոտը գետնին գցեց, թեև կեսն էլ չէր ծխել: Գլանակը տրորելիս անհասկանալի մի բառ շշնջաց: Հետո վերադարձավ արհեստանոց:

49

Մի՛ փախիր պատասխանատվությունից

Նախորդ օրը, ինչպես ամեն տարվա աշնան կեսին, ճագարներ էր վաճառել Խուանիին: Տասնյոթ հատ, բոլորը՝ գեղեցիկ: Դրանք ընկերական զեղչով էր վաճառում, բայց վատ էր զգում նույնիսկ այդ քիչ գումարը վերցնելիս: Ի՞նչ պատճառով: Դե՛, շատ անգամ, երբ Միրենը մսավաճառի մոտ էր մտնում ու Խուանիից, ասենք, երկու տալաշ տավարի միս էր ուզում, Խուանին իր հաշվին մի երկու տալաշ ավելի էր դնում կամ էլ բան չասելով՝ տոպրակի մեջ մի երկու կապ նրբերշիկ էր գցում կամ արնաերշիկի մի կտոր՝ այդ պահին ձեռքի տակ ունեցածը:

Հենց վանդակները դատարկվում էին, Խոշիանը դրանք կարգի էր բերում՝ ճագարի ձագերի նոր քանակի համար: Ճագար բուծելն իր ամենասիրած գործն էր: Առավոտվա ժամը տասն էր: Արև, անդորր, ծիտիկների ծլվլոց, երբեմն՝ գետի մյուս ափից Առիսաբալագա եղբայրների արհեստանոցից լսվող սարքերից մեկի «չակա-չակա» ձայնը: Ժանգոտած ցանցը փոխեց նորով, ճագարաբուծարանից վանդակները հանեց՝ օդափոխելու, երբ տեսավ Բիչո՛րիին՝ տխուր դեմքով ու իր պայուսակով կանգնած հողամասի մուտքի մոտ:

Հազիվ մեկ վայրկյան նրան նայեց: Զարմացա՞ծ էր: Այդքան էլ չէ: Խոշիանը գիտեր, որ վաղ թե ուշ նրան հանդիպելու է փողոցում, հատկապես հիմա, որ ավանով այս ու այն կողմ էր անում: Բայց չէր սպասում, որ կգա իր մոտ: Տեսնենք, գուցե Միրենը ճիշտ է. այս խենթը, օգտվելով զինված պայքարի դադարից, հետապնդում է մեզ:

Մեջքով շրջվեց ու շարունակեց վանդակներով զբաղվել: Շուտով այդ կինը կգնա: Ծոծրակին զգում էր նրա սառը, մաքուր թույն հայացքը: Ու արդեն ոչ մի հաճույք չէր առնում իր փոքրիկ հողամասային դրախտից: Նույնիսկ ծիտիկները չէին ծլվլում: Առիսաբալագա եղբայրների սարքն էլ էր լալկվել: Խոշիանը վանդակների տեղը նորից փոխեց՝ հիմնականում իր զայրույթն արտահայտելու համար, ինքն իր վրա բարկանալով, որ այս իրավիճակին վերջ դնելու ձևը չի գտնում:

Այդքան տարի անց (որքա՞ն, առնվազն մի քսա՞ն) Բիչո՛րին նրան դիմեց:

— Խոշիա՛ն, եկել եմ՝ խոսելու:

— Դե՛, խոսի՛ր:

Տգեղ ստացվեց, Խոշիա՛ն, կոպիտ, ու քանի որ ինքն էլ դա նկատեց, ամբողջ դեմքն ամոթից կարմրեց: Աստվա՜ծ իմ, որքան հանգիստ էր այդ կինը: Խոշիանը ստիպված նայեց նրան: Բիչո՛րին, թե.

— Չե՞ս հրավիրում՝ մտնեմ:

— Մտի՛ր:

Բիչո՛րին ներս մտավ թեթևակի դեպի վար իջնող արահետով՝ սոխի ու մյուս կողմից եղերդի ու հազարների շարքերի արանքով: Կինն ամեն ինչին նայում էր դեմքի քար արտահայտությամբ: Հիշո՞ւմ էր, նորից տե՞ղն էր բերում: Խոշիանին երկու քայլ չհասած՝ կանգնեց: Գովեց հողամասը: Ի՜նչ գեղեցիկ է, ի՜նչ խնամված: Հետո, մատնացույց անելով դարավանդը, հարցրեց՝ այդ տե՞ղն էր լցվել իր ամուսնու՝ Նավառայից նվեր բերած հողը: Ու Խոշիանը գլխիկոր հաստատեց:

Հայացքներ փոխանակեցին. թշնամակա՞ն: Ո՛չ: Ավելի շուտ՝ հետաքրքրքրության. իրար ուսումնասիրելով այնպես, ասես դժվարությամբ էին միմյանց ճանաչում:

Խոշիանը՝ երկչոտ, պաշտպանվելով, թե.

— Ի՞նչի համար ես եկել:

— Խոսելու:

— Ի՞նչի մասին: Ես բան չունեմ ասելու:

— Երեկ Պոլյոե գերեզմանոցն էի գնացել: Հաճախ եմ գնում, գիտե՞ս: Գերեզմանի եզրին եմ նստում ու նրա հետ եմ խոսում: Ինձ խնդրեց, որ քեզ հիշեցնեմ:

Սրա ուզածն ի՞նչ է: Իրեն հրահրե՞լը: Չպատասխանեց: Հողամասում աշխատող ձեռքերը՝ կեղտոտ, բերետը, որը հանեց գլխից՝ թաշկինակով քրտինքը սրբելու համար, փոշոտ, բարձրաճիտք կոշիկները՝ ձուլարանում աշխատելու ժամանակներից մնացած: Ծերացել էր Խոշիանը: Գլխի երկու կողմերը ալեխառն մազեր էին, գագաթը՝ ճաղատ: Բիչո՛րիի տարիքն էլ էր զգացվում:

— Վիճելու համար չեմ եկել: Դու ինձ բան չես արել, ու կարծում եմ՝ ես քեզ ոչ մի վատ բան չեմ արել: Թե՞ այդպես չէ: Գուցե սխալվո՞ւմ եմ: Այդ դեպքում խնդիր չունեմ՝ քեզնից ներողություն խնդրելու:

— Ինձնից ներողություն խնդրելու կարիք չունես: Եղածը եղել է: Չենք կարող բան փոխել: Ո՛չ ես, ո՛չ էլ դու:

— Իսկ ի՞նչ է եղել: Ես միայն մի մասը գիտեմ: Մտածեցի՝ գուցե Խոշիանը կարողանա ամբողջացնել պատմությունը ինձ համար: Այդ հույսով եմ հողամասդ հասել: Ընդամենը ուզում եմ իմանալ... ու կգնամ: Խոստանում եմ:

— Այսինքն՝ ամեն օր գալիս ես ավան, որ մարդիկ քեզ անցյալի մասին բաներ պատմեն:

— Ավանը նույնքան քոնն է, որքան և իմը:

— Չեմ ժխտում:

— Բայց երևում է՝ դու ինձ դրսի մարդու տեղ ես դնում՝ մեկի, որը գալիս է ավան: Սխալվում ես: Նորից իմ մշտական տանն եմ ապրում: Գիտես, թե որտեղ: Հաճախ էիր մեզ մոտ լինում:

— Ինձ համար մեկ է՝ որտեղ ես ապրում:

Բիչո՛րիի դեմքին խոսակցության ընթացքում առաջին անգամ թեթևակի ժպիտ երևաց: Տխրությունն անհետացավ ունքերից: Իր կոշիկի ծայրը մի փոքր ցեխոտվել էր: Նա իր տեղում էր, Խոշիանը՝ իր՝ արահետի կարճ լայնքով բաժանված: Ու Բիչո՛րին ակնհայտորեն ամեն ինչ անում էր, որ հանկարծ հազարը չտրորի:

— Ամուսնուս լավագույն ընկերն էիր: Մինչև հիմա աչքիս առաջ եք հեծոներով, պելոտայի պատի մոտ կամ բարում քարտ խաղալիս: Միրենի ասածն էլ եմ հիշում. Բիչո՛րի, ամուսինս քո ամուսնու հետ է ամուսնացած, կացնով էլ չենք բաժանի:

— Այդպե՞ս էր ասում:

— Հարցրո՛ւ, կտեսնես:

Խոշիա՛ն, ուշադի՛ր: Այս կինը քո շուրջը ցանց է հյուսում: Ինչո՞ւ թույլ տվեցիր, որ մտնի հողամաս: Անկախ իրենից՝ ինքն իրեն տեսավ երիտասարդ ժամանակ՝ Օրիոյի նավահանգստում հեծանվով Չատոյից առաջ անցնելիս, նրա հետ գռազ գալու պահին՝ քառասուն դուրո դնելով պելոտայի պատի մոտ, ընկերակցության խոհանոցում ընթրիքը տաքացնելիս, «Պագոետայում» վիճելիս՝ միամիտ հո չե՞ս՝ անհաջող խաղաքարտերը ձեռքներին խաղադրույք դնելու համար:

Բիչո՛րիի անտարբեր աչքերի մեջ նայեց արդեն ոչ այդքան կոշտ, հուշերից փափկած հայացքով:

— Միշտ եմ նրա ընկերը եղել:

— Բայց դադարել էիր բարևել ու մեր տուն գալ:

— Մեկը մյուսի հետ ի՞նչ կապ ունի:

— Նույնիսկ թաղմանը չեկար: Քո սպանված ընկերոջ թաղմանը:

— Ի՞նչ ես երեսովս տալիս: Թեև նրա հետ չէի խոսում, ընկերս էր: Չէի խոսում, որովհետև չէի կարող խոսել: Դուք լավ չարեցիք: Պետք է գնայիք ավանից: Մեկ, երկու, քանի տարի որ պետք լիներ: Հիմա ողջ կլիներ, ու կվերադառնայիք: Ու բացի այդ, եթե դուք դրսում լինեիք, շատերը ձեզ ձեռք կմեկնեին:

— Մյուսները չգիտեմ, բայց դու ինձ օգնելու ժամանակ ունես դեռ:

— Չգիտեմ՝ ոնց: Չեմ կարող հետ դարձնել ժամանակը:

— Իրավացի ես: Չատոյին չենք կարող վերակենդանացնել: Բայց կարող ես մի լավություն անել ինձ: Շատ հեշտ է: Ընդամենը իմ կողմից մի բան պիտի հարցնես տղայիդ:

— Զուրը մի՛ պղտորիր, Բիչո՛րի: Մենք էլ ենք տառապել և դեռ տառապում ենք: Դու քո կյանքով ապրի՛ր, ու թող մենք մերն ապրենք: Ամեն մեկս՝ իր տանը: Հիմա խաղաղ է: Ավելի լավ կլինի՝ մոռանանք:

— Եթե տառապում ես, ո՞նց ես մոռանալու:

— Չեմ կարծում, որ Միրենին դուր կգան ասածներդ:

— Կարիք չկա, որ նա իմանա:

Խոշիանը կարճ տատանումից հետո մտավ տնակ՝ իր համառ լռությամբ հասկացնելով, որ խոսակցությունն ավարտված է: Բիչո՛րին, նրա տեսադաշտից դուրս, թե.

— Քեզ համար հետաքրքրիր չէ՞՝ ինչ եմ ուզում հարցնել Խոշե Մարիին:

Զուր սպասեց պատասխանի: Շարունակելով.

— Մեկը նրան տեսել էր ավանում այն ժամերին, երբ Չատոյին սպանեցին:

Տնակի ներսից լսվեց.

— Բամբասանքներ են:

— Դո՛ւրս արի, մի՛ փախիր պատասխանատվությունից:

Դուրս եկավ: Ներքևի շուրթը թեթևակի դողում էր: Աչքերի այդ փայլը ի՞նչ էր, արցո՞ւնք:

— Դատավարության ընթացքում նման բան չեն ապացուցել:

— Իմ կողմից հարցրո՛ւ նրան, Խոշիա՛ն: Մյուս անգամ, որ գնաս նրան տեսնելու, հարցրո՛ւ՝ նա՞ էր կրակողը: Ինձ պետք է արագ իմանալ, քանի որ երկար չեմ ապրելու: Հիշաչարությունից հեռու եմ, հավատա՛: Նրան չեմ մատնի: Միակ բանը, որ չէի ուզի, մեռնել՝ չիմանալով սպանության բոլոր

մանրամասները: Ասա՛ իրեն, որ եթե ինձնից ներողություն խնդրի, կներեմ, բայց նա պիտի խնդրի:

— Բիչո՛րի, խնդրում եմ: Ձրերը մի՛ պղտորիր:

Անիմաստ խնդրանք էր. արդեն պղտորել էր: Բիչո՛րին շուրջը նայեց: Դարավանդը, ցեմենտե պատնեշը, թզենին:

Բերետը ձեռքին՝ Խոշիանը տեսավ, թե ինչպես է նա հեռանում թեթևակի վեր ելնող արահետով:

50

Սիփայի* ոտքը

Նրան հարցը տվեց անհամբեր՝ չսպասելով ողջույնի համբույրին: Նորությունները նայե՞լ է: Գորկան՝ անտրամադիր, ընկճված, գլխով արեց: Ու ասաց, որ ամաչել է, շատ է ամաչել:

— Զարմանալի չէ: Ո՞վ կուզեր ընտանիքում մարդասպան ունենալ:

Գորկայի աչքերում աղաչանք առկայծեց. բառերդ շատ կոշտ են, խնդրում եմ, այդպես մի՛ ասա: Դիվերսիոն խմբին վերագրվող հանցանքների մասին լսելիս մարդու մազերը բիզ-բիզ էին կանգնում:

Արանչան քաջալերելով թփթփացրեց նրա երկար ու կոր մեջքին. լավ է, որ մեր եղբոր ճանապարհով չգնացիր: Ու կրկնօրինակելով հաղորդավարուհու ձայնը՝ ավելացրեց՝ այդ վտանգավոր ահաբեկչի: Կազմակերպության երեք մարտիկի էին փնտրում: Էկրանին նրանց լուսանկարները հայտնվեցին: Խոշե Մարին՝ երիտասարդ, երկար բաշով, ականջօղով, կենտրոնում էր:

Բնականաբար, հայտնի մարդ էր դարձել: Արանչային ավանից էին զանգել: Ո՞վ էր զանգողը: Անցած ժամանակների ընկերուհին: Աչքալուսանք տալու համար:

— Ուզում էի գրողի ծոցն ուղարկել դրան: Չհամարձակվեցի: Ի՞նչ էի շահելու: Թշնամանք, քննադատություն ու մեկուսացում:

Նրա կանխատեսումները՝ Խոշե Մարիի (որին հիմա փնտրում են՝ բանտարկելու համար) ապագայի վերաբերյալ. կամ Խոշե Մարիի ձեռքում ռումբ կպայթի՝ տեղափոխելու կամ գործողություն անելու ընթացքում, ու այդ դեպքում մեզ թաղում է սպասում icurriña-ով փաթաթված դագաղով, ազգային պարերով ու ֆոլկլորային ծրագրի մնացած մասով, կամ նրան որևէ պահի ազգային անվտանգությունն է բռնելու: Վերջին տարբերակը լավագույնը կլիներ բոլորի համար. նրա հավանական զոհերի, որովհետև կաշիները կփրկեին, նրա ազգականների, որովհետև կիմանայինք,

* Սիփայ, Ertzaintza-ի (Բասկերի երկրի տեղական ոստիկանության) գործակալների արհամարհական անվանում:

որ բանտում է ու ոչ մեկի վնաս չի տա, ոչ էլ ինքը վտանգի կենթարկվի, ու հենց իր համար, որովհետև այդ դեպքում միայնակ կմնա, ինչն օգնում է խաղաղվել ու տրամաբանել:

Գորկան դեմքի մռայլ ու տխուր արտահայտությամբ նորից գլխով արեց: Նրբանկատ տղա՝ քրոջ հանդեպ ուշադիր. եկել էր՝ նախ ծնունդը շնորհավորելու ու նաև հղիությունը. այդ լուրը ծնողներից հեռախոսով էր իմացել: Նվերնե՞րը: Երկու բան էր բերել: Փոքրիկների համար մի գիրք բասկերեն՝ *Piraten itsasontzi urdina**՝ իր առաջին տպագրված գործը (ի՜նչ գեղեցիկ է, իրոք, շա՜տ գեղեցիկ է), ու ծաղիկներ:

Քույր ու եղբայր պայմանավորվեցին Խոշե Մարիի մասին այլևս չխոսել: Հերիք եղավ: Իրենց կյանքում ուրիշ կարևոր բան չկա՞: Արանչան գնաց՝ ծաղկաման բերելու: Գիլյերմոյի հետ էր ամուսնացած, ու ապրում էին Ռենտերիայում՝ Կապուչինոս թաղամասի մի բնակարանում: Բայց Խոշե Մարիի լուսանկարը, որը հիմա, պարզ է, ավանի տղերքի համար հերոս է, դուրս չէր գալիս նրանց մտքից, այնպես որ նրան մոռանալը դժվար էր: Ուստի չկարողացան խուսափել թեմայից. ծաղիկները դնելով ապակե ծաղկամանը՝ տարբեր թեմաներ թեթևակի շոշափեցին ու նորից խոսեցին եղբոր մասին:

Արանչան, թե.

— Ես անմիջապես զանգեցի մերոնց:

— Ի՞նչ ասացին:

— Ama-ն շատ մարտական է տրամադրված: Քաղաքականություն չի հասկանում, կյանքում գիրք կարդացած չկա, բայց հրթիռ թռցնելու պես կարգախոսներ է արձակում: Ինձ թվում է՝ ավանով մեկ շրջում է՝ անգիր անելով պաստառների վրա գրածները: Նախ և առաջ իր զավակին է պաշտպանում: Չգիտեմ,– ու ձեռքերը դեպի փորը տարավ,– ես իր տեղը ինչ կանեի: Aita-ն, ինչպես միշտ, լռում է: Բայց օգտվելով նրանից, որ Խոշե Մարին տանը չի երևում, *El diario vasco*** է առնում:

— Ես հիշում եմ, թե ինչ պատմություն սարքեց մեր եղբայրը՝ ասելով, որ նա իսպանական ուղղության թերթ է առնում: Դա էլ այն պարագայում, որ aita-ին թերթում միայն սպորտի մասն է հետաքրքրում:

---

* Piraten itsasontzi urdina (բասկ.), Ծովահենների կապույտ նավը:

** El diario vasco, 1934-ից Սան Սեբաստիանում լույս տեսնող, չեզոք քաղաքական հայացքներ ունեցող իսպանալեզու օրաթերթ:

— Ու ծանուցումները:

— Հա՛, լա՛վ, մեկ էլ խաչբառը:

— Իբր երբևէ հետաքրքրվել է քաղաքականությամբ, ի սե՛ր Աստծո: Ինչո՞ւ չպիտի իրեն հետաքրքրող բաները կարդա:

— Դե՛, Խոշե Մարիի ճնշման տակ *«Էգին»* թերթին անցավ: Հետո իջնում է «Պագոետա»՝ սովորականի պես իր *Diario vasco*-ն կարդալու:

— Բա ama-ի մասին ի՞նչ ասեմ. ամեն անգամ, երբ մեզ հյուր է գալիս, հետը տանում է «Օլա» ու կանանց համար նախատեսված մյուս ամսագրերը, որոնք ես արդեն կարդացել եմ: Ինչ ուզում ես, ասա՛. խենթ ընտանիք ենք: 75-ին, դու չես հիշի, դեռ փոքր էիր, լաց եղավ Ֆրանկոյի մահվան կապակցությամբ: Իսկականից, տանը՝ հեռուստացույցի առջև, վիատված իսպանուհուն հարիր մի քանի արցունք գլորվեց դեմքով, բայց ավելի լավ է՝ դրա մասին չհիշեցնես: Վերջին անգամ, երբ հյուր էր եկել, հարցրեց՝ երեխայի համար անուն արդեն ընտրե՞լ ենք: Դեռ բան չասած՝ տեսա, որ ճակատն արդեն կնճռոտում է: Դրա համար կատակով ասացի, որ անունը Խուան Կարլոս է լինելու՝ թագավորի պատվին: Քիչ էր մնում՝ ուշաթափվեր:

Քույր ու եղբայր քաղցրավենիքով սուրճ էին խմում: Լավ հարաբերություններ ունեին: Արանչան ու Գորկան միշտ իրար հասկանում էին: Փոքր ժամանակ, դրանից հետո էլ, հիմա էլ: Պատուհանից երևում էր իրենց՝ բազմաբնակարան շենքերի թաղամասի նմանատիպ համալիրի ճակատը: Դիմացի պատշգամբում բուտանի մի բալոն էր երևում: Թևքերը քշտած մի մարդ ծխում էր: Գիլյերմոն պատմում էր, որ դեռ որոշ ժամանակ առաջ իրենց տնից կարելի էր տեսնել Խայսկիբել սարի մի մասը, բայց տեսարանին հրաժեշտ տվեցին, երբ կառուցվեց դիմացի տգեղ շենքը:

Արանչան եղբորը հարցրեց՝ երբ Խոշե Մարիի հետ նույն սենյակում էին ապրում.

— Նա չէ՞ր փորձում քեզ համոզել, որ գնաս, «ծաղկեցնես» ցույցերը:

— Անընդհատ: Ինձ այն ժամանակ փոքր տարիքս փրկեց: Ասում էր, որ երեք-չորս տարուց պիտի իր հետ առաջին շարքերում լինեմ: Հետո էլ ճիշտ հակառակն էր ասում: Մի անգամ՝ խառնակությունների պահին, ինձ տեսավ ոստիկանության դեմ ակցիայի ժամանակ ու գժվեց: Գոռաց վրաս՝ հե՛տ գնա, չե՞ս տեսնում, որ վրադ կկրակեն:

— Իսկ դու ինչո՞ւ էիր գնացել բողոքի ակցիայի:

— Գրո՜ղը տանի, որովհետև բոլորն էին գնում:

Իր կարծիքով նույն պատճառով էլ Խոշե Մարին էր այնտեղ գնում. գոնե սկզբում հաստատ այդպես էր: Ընկերական խաղի, սպորտի պես մի բան է: Գնում ես, քեզ վտանգի տակ ես դնում, ժամանակ առ ժամանակ ծեծ ես ուտում ու շարունակում ես քո կյանքով ապրել: Հետո խորտկարանում ուտում-խմում ու խմբիդ ընկերների հետ քննարկում ես: Ու այդ ժամանակ է, որ մարդ մի յուրահատուկ խուտուտ է զգում ու հասկանում, որ իր ձեռք բերած վարակը բոլորն էլ ունեն, ու դա է նրանց տաքացնում ու միավորում պայքարի կրակի շուրջ: Գիշերը, մահճակալին վեր ընկած, Խոշե Մարին գլուխ էր գովում: Որ քարով խփել է beltza-ներից մեկի սաղավարտին, ու մի «կլակ» է լսվել: Որ մի բանկոմատ է կրակի տվել, մեկ ամսում՝ հինգերորդը: Դառնում էր դեպի եղբայրը՝ նրա՝ դեռահասի աչքերի մեջ հիացմունքի կայծն ըմբոշխնելու համար: Նույն հպարտությամբ էլ խոսում էր հանդբոլի իր թիմի հաղթանակների մասին: Ինչպես որ ասում եմ. սպորտի, զվարճանքի պես մի բան էր, մինչև որ հանկարծ անդունդի եզրին կանգնեցին:

Հիմա արդեն հասկանում եմ, որ Խոշե Մարին թևակոխել էր մաքուր ատելության ու ագրեսիվ ֆանատիզմի շրջանը: Դա եղավ, երբ Բիդասոա գետում հայտնաբերեցին Դոնոստիայի ավտոբուսի վարորդի դին՝ ձեռքերը շղթայված:

— Սաբասայի՞ դին:

— Այո՛:

Գորկան հիշում էր, որ եղբայրը շատ գրգռված էր տուն եկել: Ինչպես և իր ընկերները, կասկած իսկ չուներ, որ ավտոբուսի վարորդը մահացել է Ինչաուռոնդո զորանոցում խոշտանգումից: Նրան սպանել էին, մահացել էր, ինչ ուզում է եղած լինի, հետո բեմադրել էին, իբր փախել էր, բայց այնպես, որ նույնիսկ ծծկեր երեխան չէր հավատա: Գորկան տպավորված նայում էր՝ ինչպես է եղբայրը սենյակը չափչփում: Ու Խոշե Մարիի մեջ, *ձերփրոջմերը*, մի նոր տիպի զայրույթ էր եռում՝ սովորականից ավելի հզոր ու կատաղի: Ու նրա բառերի ու հայհոյանքների մեջ զգաց ոչնչացնելու, վրեժ լուծելու ու վնաս, մեծ վնաս պատճառելու մի ցանկություն: Ո՛ւմ: Մեկ էր, որևէ վնաս, որևէ տեղում:

— Այն ժամանակ ինձ սովորեցրեց «մոլոտով» կոկտեյլներ պատրաստել: Մի շաբաթ օր ստիպված եղա հետը քարհանք գնալ: Ասաց՝ գրքերս մի կողմ դնեմ: Իր հրահանգներին հետևելով՝ վեց հատ կոկտեյլ պատրաստեցի, ու դրանք, գը՛մփ-գըգը՛մփ, մի ժայռի վրա նետեցինք:

Որոշ ժամանակ անց Դոնոստիայի բուլվարում «մոլոտով» կոկտեյլով մի սիփայի էր խփել: Նրա համար մեկ էր՝ սիփա՞յ, թե՞ ռազմաոստիկան: Մարդու ոտքը այրվել էր: Կարող էր մոխիր դառնալ: Բարեբախտաբար նրա ընկերները հասցրին միջամտել՝ կանխելով ողբերգությունը:

— Խոշե Մարին չէր տեսնում, որ համազգեստ կրող մարդը պարզապես այդպես է իր ապրուստը վաստակում, որ գուցե կին ու երեխաներ ունի: Ես չէի համարձակվում նրան դա ասել, բայց ինձ համար, երդվում եմ, սարսափելի մի բան է այն մարդը, որը մարդկային վերաբերմունք չի ցուցաբերում մյուսի հանդեպ համազգեստ կրելու պատճառով: Իսկ նա հաջորդ օրը բարկացավ, որովհետև թերթերում չէին ակնարկել սիփայի ոտքի մասին:

Խմբի տղաները նրան ընթրիքի հրավիրեցին: Դա իրենց խմբում ընդունված պարգև է նրան, ով կրակի է տալիս որևէ ոստիկանի:

51

Քարհանքում

Ասես կինո լիներ: Լուրջ: Կեսօրվա կողմ Գորկան դուրս էր եկել տնից՝ գրադարան գնալու: Շաբաթ օր էր: Ամեն ինչ խաղաղ էր: Կապույտ երկինք, մի քանի ամպ, լավ եղանակ: Նրան տեսավ դիմացի մայթին՝ խոշոր, գեր Խոշունեին, որը, փոխանակ պատասխաներ նրա ողջույնին՝ iepa, մատը տարավ շուրթերին՝ խնդրելով, որ լռի: Նրա շուրթերը շատ բարակ էին կամ էլ երևի դեպի ներս էին ծալված:

Քայլում էր՝ մի քիչ հետ ընկնելով Գորկայից:

— Չշրջվե՛ս: Գնա՛, գնա՛:

Գորկան չշրջվեց ու շարունակեց քայլել: Անկյունում թեքվելով՝ աղջիկը նրան էլի ցածրաձայն խնդրեց-հրամայեց՝ եկեղեցում սպասի: Բաժանվեցին:

Գորկան եկեղեցում ամենավերջին նստարանին նստեց: Եկեղեցին դատարկ էր: Միակ լուսավորությունը վերևի պատից՝ վիտրաժների միջով թափանցող լույսն էր: Եթե քահանան հայտնվի, ի՞նչ եմ նրան ասելու: Որ նվիրումի հանկարծակի նոպա՞ եմ ունեցել: Խոշունեն նրան քսան րոպեից ավելի սպասեցրեց: Գորկան արդեն գլխի էր ընկել, որ ինչ-որ վատ բան է եղել: Գրադարան տանելիք գրքերն էր թերթում: Նայում էր ժամացույցին, խորանին, քանդակներին, սյուներին, նորից նայում էր գրքերը: Ու վերջապես ծխնիների թեթևակի ճռռոցից ու թիկունքում միանգամից հայտնված լուսավորությունից հասկացավ, որ աղջիկը բացել է դուռը: Խոշունեն նրան նշան արեց, որ գա երգչախմբային հարթակ տանող աստիճանի տակ:

— Եթե մեկը մտնի, նույնիսկ ծանոթ մարդ, անմիջապես հակառակ կողմեր կգնանք: Քեզ զգուշացնում եմ, քանի որ ինձ հետևում են:

— Ո՞վ է հետևում:

— Դե էլ ո՞վ պիտի լինի: Երևի Chacurrada-ն: Վստահ չեմ, հասկացա՞ր: Բայց գուցե ինձ հետևեն՝ ավելի շատ մարդ բռնելու համար: Խոշե Մարին է քեզ փնտրում:

Փսփսում էին մի մութ անկյունում: Գորկան շվարած կռացել էր, որ գլուխը աստիճանին չխփի: Խոշունեն հայացքը չէր կտրում կենտրոնական անցուղուց ու նստարաններից, որ հանկարծ մեկը չհայտնվի:

— Եղբայրդ Խոկինի հետ քեզ սպասում է քարհանքում: Իրենք կասեն՝ ինչ է պետք: Ինձ պրոբլեմներ պետք չեն: Բավական է, որ լուրը քեզ հասցրի:

— Լսի՛ր, բայց ես վտանգի տա՞կ եմ:

— Աշխատի՛ր, որ քեզ մարդ չհետևի: Հետո նրանք քեզ կասեն՝ ինչ անես:

Պայմանավորվեցին, որ սկզբից աղջիկը դուրս կգա եկեղեցուց: Գորկան խոստացավ, որ քսան րոպե կսպասի: Ավելի լավ է՝ մի քիչ էլ ձգի:

— Չմոռանա՛ս եղբորդ հարցնել՝ ինձ ասելու բան ունի՞:

Գորկան որոշեց նախ և առաջ գրադարան գնալ: Ինչո՞ւ: Նախ՝ գրքերը կխանգարեին, հետո էլ կարող էին կասկած հարուցել: Հնարավոր է, որ իրեն Խոշունեի հետ տեսնելով՝ հիմա արդեն հետևելիս լինեին:

Խոշունեն, թե.

— Գիտեն, որ փախածները փորձում են կապվել ընտանիքի ու ընկերների հետ՝ օգնություն, փող կամ ինչ-որ բան խնդրելու համար: Այնպես որ, kontuz*: Ինչ որ պիտի քեզ ասեի, արդեն ասացի:

Ու հեռացավ՝ խոշորամարմին, իր անշուրթ բերանով: Եղբայրս ի՞նչ է գտել այս աղջկա մեջ: Չեմ հասկանում: Վախը նրան էր փոխանցվել: Վախը ինչի՞, ո՞ւմ հանդեպ: Գաղափար չուներ: Համենայնդեպս կես ժամ մնաց եկեղեցում: Փորձեց կարդալ, բայց չստացվեց:

Դուրս եկավ հրապարակ: Կանգ առավ, շուրջը նայեց: Աջ, ձախ, մի քիչ հեռու, պատուհաններին: Բուտանով բեռնատար, ծանոթ դեմքեր, փշրանք կտցող աղավնիներ: Շատ անհանգիստ էր: Մամա՛ ջան: Հանգիստ ինձ համար ապրում էի: Խոսեչոյի մսի խանութի մոտով անցավ: Տեսնես սա տեղյա՞կ է, որ իր տղան ու եղբայրս թաքնվում են: Չպատվիրելով իր ուզած գրքերը՝ կողային դռնով դուրս եկավ գրադարանից դեպի մի նեղ փողոց: Նայեց այս ու այն կողմ: Ոչ ոք չկար: Այսօրվանից մինչև երկուշաբթի կարդալու բան չունեմ:

Բարձրացավ քարհանք՝ շրջանցելով հիմնական արահետը: Ներքևում՝ ավանի կտուրների վրայով, լողացին կեսօրն ազդարարող զանգերը: Դաշտի բույր: Հանգիստ արածող ցաքուցրիվ կովեր: Գորկան րոպեն մեկ հետ էր նայում: Ոչ ոք չկար: Հեռացավ ճանապարհից ու կտրեց-անցավ սարի ծառազուրկ, վաղորդյան ցողից դեռ խոնավ տարածքը: Հետևում տարածվում էր խոտի լայն մի զանգված, որտեղ չէին կարող թաքնվել նրան հետապնդողները, եթե կային:

---

* Kontuz (բասկ.), զգո՛ւշ, ուշադի՛ր:

Եղբայրն ընկերոջ հետ մի քանդված տան մեջ էր: Նրան տեսնելով՝ ուժգին սուլոց արձակեցին: Այդքան զգուշություն ցուցաբերելուց հետո հարցրին՝ հետևե՞լ են: Իր կարծիքով՝ ո՛չ:

— Այստեղ ի՞նչ եք անում:

— Հե՛չ, Կոլդոյին բռնած txacurra-ները երեկ՝ ընթրիքի ժամին, մեր հետևից էին եկել: Հազիվ փրկվեցինք:

Փախել էին իրենց վրա եղած հագուստով: Գիշերը կուչ եկած անցկացրել էին այդ կիսաքանդ կտուրով պահեստանման տնակի մի անկյունում: Խոկինը, թե՝ էլի լավ է, որ ձմեռ չէ: Նրանց գլխում միայն մի գաղափար էր պտտվում. շուտ հատել Ֆրանսիայի սահմանը: Բայց այս վիճակում չէին կարող: Խոկինը հողաթափերով էր: Խոշե Մարին՝ ընդամենը վերնաշապիկով: Բողոքում էր, որ անքուն է մնացել ու սոված է: Խոկինը ծխել էր ուզում:

— Դու չես ծխում, չէ՞:

Խոշե Մարին մեջ ընկավ.

— Սրա միակ գործը գիրք կարդալն է:

Ընկերների մոտ մի համեստ գումար կար: Քիչ է, լա՛վ, բայց որքա՞ն: Իրապես շատ քիչ: Գրպանում եղած մի քանի մանրադրամ, որոնցից մի քանիսը Խոշե Մարին օգտագործել էր՝ հեռախոսախցիկից Խոշունեին զանգելու համար:

Գվարդիականների մի վրիպում նրանց փախչելու հնարավորություն էր ընձեռել:

— Ոչխարները հարկը շփոթել էին:

Սխալվել էի՞ն: Որոշակի իմաստով: Դրան մի պատմություն էր նախորդել. մի քանի օր առաջ երիտասարդ վարձակալները նկատել էին, որ երկրորդ հարկում խողովակները ծակվել են: Նրանք Կոլդոյի հետ ապրում էին առաջին հարկում: Առաստաղին խոնավության ահռելի մի բիծ կար ու էլի ինչ-որ սև հոսքաբծեր (սո՞ւնկ): Վթարը նոր չէր: Պարզապես մինչև հիմա ոչ ոք դա չէր նկատել: Ուրիշ ելք չկար, պետք էր նորոգել: Տանտերը նրանց առաջարկել էր աշխատանքի ընթացքում տեղափոխվել դիմացի բնակարան: Միևնույն ժամանակ, ի հատուցում պատճառած անհանգստության, նրանց ազատել էր իրենց ժամանակավոր կացարանի վճարից: Այդ փողը կարող էին կուտակել: Համաձայնեցին:

Picoleto*-ներն առաջին հարկի դուռը կոտրեցին՝ առաջնորդվելով Կոլդոյից կորզած տեղեկություններով: Դա էլ մեկ այլ պատմություն է: Կոլդոյին, ինչպես իմացան ամիսներ անց, «գլուխլվա» էին արել ու մտրակել մինչև ուշքը կորցնելը: Նրան երեկոյան փողոցում էին բռնել ու տարել էին Ինչաուռոնդո զորանոց: Պատահականություն չէր. բոլորին էին փնտրում, բայց մեկին էին բռնել: Կոլդոն խոստովանել էր, պարզ է. այդ դեպքերում ո՞նց կարող ես չխոստովանել: Բայց թաքցրել էր (թե՞ նախքան կարողանար ասել, ուշքն արդեն կորցրել էր) նրանց ժամանակավոր կացարանի տեղը:

Երբ ընկերները, ժամը իննին տուն վերադառնալով, նրան չտեսան, զարմացան: Որտե՞ղ կլինի այդ սրիկան: Ընթրիք պատրաստելու նրա հերթն էր: Նույնիսկ հաց չկար: Այդ պահին լսեցին երկարաձիտք կոշիկների աղմուկը: Որտե՞ղ: Աստիճաններին: Լսեցի՞ր: Խոկինը զգուշությամբ նայեց զուգարանի փոքրիկ պատուհանից: Տեսավ picoleto-ների մեքենաները:

— Մեր հետևից են եկել:

Խոհանոցի պատուհանից ծլկեցին հետնաբակ: Խոշե Մարին հեռուստացույցն անջատելու ժամանակ էլ չունեցավ: Ճարպկորեն թաքնվեցին գիշերվա մթում ու վազեցին դեպի սարը: Լուսնի լույսով էին առաջնորդվում: Հասել էին տեղ՝ շունչները կտրելով, շատ վատ էին քնել, եթե, իհարկե, դա կարելի էր «քնել» անվանել: Առանց մահճակալի ու ծածկոցի, առանց ծխախոտի սփոփիչ օգնության: Մի քաք վիճակ, բայց, շը՛շշ, լռությո՛ւն: Դա է պայքարը:

— Եղբա՛յր, հիմա մեզ պիտի օգնես:

— Ի՞նչ պետք է անեմ:

— Նախ՝ պիտի գնաս «Առանո» խորտկարանն ու խոսես Պաչիի հետ: Եթե այնտեղ չլինի, ոչ մեկի հետ չխոսես: Հասկացա՞ր: Ոչ մեկի հետ: Նա քո միջոցով մեզ կասի՝ ո՞նց հասնենք Իպառալդե**, ու նաև կտա մի քանի բուտերբրոդ ու խմելու բան: Բայց զգո՛ւշ եղիր: Ուտելիքը գլխիդ դրած սկուտեղի վրա չբերես, որովհետև ավանում հաստատ կլինեն քաղաքացիական հագուստով txacurra-ներ: Կարծում եմ՝ Պաչին քեզ մի քիչ փող կտա: Ամեն ինչ մի լավ կպահես ու մեզ կհասցնես:

---

* Picoleto (իսպ.՝ խոսակց., արհամարհական), գվարդիական:

** Իպառալդե, Հյուսիսային տարածք: Այդպես են անվանում Բասկերի երկրի ֆրանսիական մասը:

Գորկան գլխով էր անում:

— Մտքովդ չանցնի՝ գնաս տուն ու պատմես aita-ներին: Երբ կարողանամ, նրանց կգրեմ:

— Մսի խանութ էլ չգնաս: Եթե փողոցում ընտանիքից մեկին հանդիպես, ձեն չհանես, եղա՞վ:

Գորկան ամեն ինչին ասում էր՝ այո՛: Նրա եղբայրը շարունակեց.

— Հիմա՝ ամենադժվար մասը: Տան հետևի մասում մեր հեծանիվներն են դրված՝ պատին հենած, փոքր ծածկի տակ: Կողպեքները կբացես (նրան երկու բանալի տվեցին) ու հեծանիվներից մեկը և Պաչիի տվածը կբերես այստեղ: Կոլդոյինը այն մեկն է, որի բանալին չունենք: Մենք կուտենք, դու մյուս հեծանիվը կբերես: Մենք ամենաուշը ժամը չորսին պիտի ճամփա ընկնենք: Եթե ավելի շուտ կարողանանք, ավելի լավ: Ամեն ինչ քեզնից է կախված:

Գորկան իջավ ավան, կատարեց բոլոր հանձնարարությունները, վերադարձավ հեծանվով՝ հետը բերելով Պաչիի տված ծրարը, բայց առանց բուտերբրոդների ու ջրի: Փոխարենը ուտելիքի փող էր ուղարկել Խոկինին ու Խոշե Մարիին:

Գորկայի գալու պահին երկուսով խորացել էին մի բանավեճի մեջ:

— Ձեր բղավոցները հեռվից լսվում են:

Խոկինը պնդում էր, որ տղան մտնի բնակարան ու կոշիկ բերի, որ չէր ուզում հողաթափերով գնալ Ֆրանսիա: Ավելին՝ այդ տեսքով հեծանիվ քշողը ուշադրություն կգրավեր: Խոշե Մարին հանձնվեց: Եղբորն ասաց.

— Վերցրո՛ւ բանալին: Եթե տեսնես՝ մարդ չկա շուրջդ, մտի՛ր: Եթե մտնես, սրա կոշիկները կվերցնես ու իմ բաճկոնը, որ դռան հետևն է կախած:

— Մեկ էլ՝ ծխախոտ:

— Բայց միայն այն դեպքում, եթե տեսնես, որ վտանգ չկա: Չեմ ուզում, որ մեր պատճառով քեզ բռնեն:

Որոշ ժամանակ անց Գորկան վերադարձավ երկրորդ հեծոյով: Ասաց, որ բնակարան չէր մտել, քանի որ կասկածելի մարդկանց էր տեսել շքամուտքի մոտ: Մեծ սուտ էր: Պարզապես չէր ցանկացել ռիսկի դիմել:

Խոշե Մարին, թե.

— Լա՛վ, կարևոր չէ:

Խոկինն էլ, թե.

— Ո՞ր համարի կոշիկ ես հագնում:

Ու իր հողաթափերը փոխանակեց Գորկայի կոշիկների հետ:

— Միևնույն է, ընդամենը էստեղից մինչև տուն պիտի հասնես:

Իրար հրաժեշտ տվեցին՝ գրկախառնվելով-մեջքին թփթփացնելով: Ու Խոշե Մարին զրնգուն, եղբայրական համբույր տվեց Գորկային:

— Պատվով տղա ես, միշտ ես այդպիսին եղել, *քոփիրոջ:*

Արդեն գնում էին, երբ Գորկան հիշեց Խոշունեի խնդրանքը.

— Նրան բան ունե՞ս ասելու:

Խոշե Մարին այդ պահին արդեն հեծանիվ էր քշում:

— Ասա՝ թող իր կյանքով ապրի:

Ու ընկերները գնացին: Գորկան՝ այն ժամանակ տասնվեց տարեկան, տեսավ, թե ինչպես են հեծանիվներով հեռանում դեպի մայրուղի. Խոշե Մարին՝ եղբորից վերցրած բրդե ժակետով, Խոկինը՝ իր կոշիկներով: Ու Գորկան հանկարծ վատ կանխազգացում ունեցավ:

52

Մեծ երազանք

— Ինչո՞ւ այն ժամանակ ինձ բան չասացիր: Իրար վստահում էինք, չէ՞:

— Տասնվեց տարեկան էի: Շատ էի վախեցել: Պատկերացրո՛ւ, որ երբ եկան aita-ների տուն՝ խուզարկելու, համոզված էի, որ իմ հետևից են եկել, ոչ թե Խոշե Մարիի, որն արդեն փախել էր տնից: Քանի՛ անքուն գիշեր եմ անցկացրել այդ պատճառով:

— Aita-ներին էլ չէի՞ր պատմել:

— Ոչ մեկի:

Արանչան՝ պահանջկոտ-հասկացող, նրան հանդիմանեց: Չէ՞ր հասկացել, որ հեծանիվների հետևից գնալով՝ ապագա ահաբեկիչներին մեղսակից էր դառնում: Ստորություն էր համարում (ու դա ասելով՝ դիմագծերը լարվում էին, շուրթերը՝ սեղմվում, աչքերը՝ փայլում), որ Խոշե Մարին նրան օգտագործել էր՝ «Առանո» խորտկարանի հետ կապ հաստատելու համար՝ քաջ իմանալով, որ դրանով եղբորը վտանգի է ենթարկում: Այո՛, դեռահաս էր, բայց եթե գվարդիականները նրան բռնեին...

— Կաշիդ կքերթեին:

Հայացքը մեղմվում է: Միամիտ է, շատ միամիտ է եղբայրը: Բայց, վերջի-վերջո, արդեն բավական ժամանակ է անցել: Ու ժպտալով ևս մի գավաթ սուրճ է նրան առաջարկում:

— Հեծանիվներով իջնում էին դեպի մայրուղի, իսկ ես զարմանում էի՝ ինչո՞ւ են այդքան ուրախ: Ու զգացողություն ունեցա, որ շատ երկար ժամանակ չեմ տեսնելու նրանց:

— Խոկինին կարող ես գերեզմանոցում տեսնել: Մեր եղբորն էլ այսօր տեսանք՝ հեռուստալուրերի շնորհիվ: Թե՞ նրա հետ ես եղել այս վերջին տարիները:

— Ե՛ս: Գաղափար չունեմ, թե որտեղ է եղել:

Գորկան խոստովանում է, որ մինչ ինքն ավանում էր ապրում, շատ դըժվար էր abertzale մթնոլորտից հեռու մնալը: Փոքր ավանում, ասում է, չես կարող ձեռքերդ լվանալ: Երբ ցույցեր, պատվո միջոցառումներ կամ վիճաբանություններ էին լինում (իսկ այդ կարգի բաներ օրումեջ պատահում

էին), իհարկե, ներկա-բացակա չէին անում, բայց միշտ գտնվում էին մարդիկ, որոնք ստուգում էին՝ ով կա, ով չկա:

Քրոջը պատմում է, որ ժամանակ առ ժամանակ մտնում էր «Առանո»: Փոքր գավաթ գարեջուր էր վերցնում, մի քսան րոպե նստում, որ իրեն տեսնեին, ու ցտեսությո՛ւն: Նրան նույնիսկ այդտեղի հոտը դուր չէր գալիս: Երբեք ո՛չ ծխող է եղել, ո՛չ խմող, սպորտով էլ, եթե անկեղծ, խանդավառված չէր: Բոլորը գիտեին, որ շատ է սիրում կարդալ: Գիտեին, որ նա ո՛չ քեֆ անող է, ո՛չ էլ գիշերն այս ու այն կողմ գնացող: Սովոր էր տանը կամ քաղաքային գրադարանում փակվել: Նրան ծաղրում էին՝ Kartujo* անվանելով:

Բայց ուրիշ բան էլ կար: Մի հանգամանք, որը, ըստ Գորկայի, նրան պաշտպանում էր:

— Խոշե Մարիի եղբայրը լինելը պատվավոր էր: Եղբայրդ ETA-ում է՝ կարող ես հպարտանալ: Կարող էի տարօրինակ, ինքնամփոփ, քիչ շփվող թվալ նրանց, բայց ոչ ոք չէր կասկածում իմ քաղաքական հայացքներին:

— Ո՞նց թե: Դու քաղաքական հայացքներ էլ ունեի՞ր:

Գորկան չի կարողանում ժպիտը զսպել: Ի՞նչ էլ կծանն է: Ու պաշտպանվում է.

— Հինգ ամիսը մեկ մի գաղափար եմ ունենում, բայց անմիջապես մոռանում եմ:

Դրա հետ կապված մի դեպք հիշեց: Ո՞ւմ հետ կապված:

— Ama-ի: Մի երեկո մտավ սենյակս՝ մեղադրելով, որ մինչ ես տանը գըրքերովս եմ զբաղվում, եղբայրս իրեն զոհաբերում է հանուն Բասկերի երկրի, իսկ ավանի մարդիկ բողոքի ցույցի են դուրս եկել ընդդեմ, չեմ հիշում, ինչի: Ու ասաց, որ եթե Խոշե Մարին իմանար, որ ես չեմ մասնակցում, շատ կդժգոհեր:

— Իսկ դու ի՞նչ արեցիր:

— Ի՞նչ պիտի անեի: Հովանոցս վերցրի ու գնացի ցույցի՝ մի քիչ գոռալու:

Դեռ տասնյոթը չլրացած՝ Գորկան իր հաշվարկներն էր արել: Ինձ այս ճնշված վիճակից միայն օդափոխությունը (Դոնոստիայում, Բիլբաոյում, գուցե նույնիսկ՝ Բասկերի երկրից դուրս) և ուսումը կփրկեն: Համալսարանում սովորելը իր ամենամեծ երազանքն էր: Բասկյան բանասիրություն,

* Kartujo (բասկ.), կուսակրոն:

հոգեբանություն՝ այդ կարգի առարկաներ: Մի բան սովորել Փարիզում, Լոնդոնում. պատկերացնո՞ւմ ես: Ընկերներին նույնիսկ բառ չէր ասել դրա մասին:

— Բայց ինձ հետ խոսել էիր այդ թեմայով:

— Քննարկումներս aita-ից սկսեցի:

Կիրակի էր՝ հետմիջօրե: Ենթադրեց, որ հայրը հողամասում կլինի: Իջավ այնտեղ, ու հայրը տեղում էր, ճյուղ ու տերև էր հավաքում՝ կրակ անելու համար: Գիտեր, իհարկե, որ այդ մարդը, որն իր ազատ ժամանակը հողամասին էր նվիրում, իր այդ փոշոտ բերետով ու ձուլարանում տասնամյակների աշխատանքից դաբաղած ձեռքերով, վերջին խոսք ասողը չէր լինելու Գորկային հետաքրքրող հարցում, նույնիսկ եթե նա էր ընտանիք պահողը: Այդուհանդերձ, Գորկան ուզում էր տրամադրությունները տնտղել:

Ուսանե՞լ: Խոշիանի կարծիքով արտակարգ գաղափար էր: Եվս մի արթմնի երազող. զավակին պատկերացրեց բժիշկ՝ Չատոյի տղայի նման, կամ ընկերության խելացի ղեկավար կամ մի պահարան փողկապ ունեցող պարոն: Գորկան նրան հիշեցրեց, որ ուսումը (թղթեր-ձևակերպումը, գրքերը, գուցե ճամփորդությունը, ուսանողական կացարանը) ծախսեր է ենթադրելու: Հայրը, իհարկե, չէր մտածել այդ մասին.

— Ա՛, գրո՛ղը տանի: Ուրեմն, պետք է մորդ հարցնես:

Միրենը՝ անվարան. նույնիսկ խոսք լինել չի կարող:

— Եթե, իհարկե, աշխատելով ուսումդ չվճարես: Հորդ աշխատած ոչնչով հազիվ օրվա հացն ենք ապահովում: Որտեղի՞ց քեզ փող տանք: Եթե գոտիներս մի լավ ձգենք, գուցե և կարողանանք քեզ մի քիչ օգնել, բայց մեկ է, մեծ բան չի լինելու, ամբողջին չի հերիքի:

Հետո սկսեց գանգատվել, լացուկոծ դրեց: Չէ՞ որ Խոշե Մարին Ֆրանսիայում է, չէ՞ որ հազիվ մինչև ամսվա վերջ ենք ձգում:

— Իսկ եթե պարտք վերցնե՞մ:

— Ո՞ւմից:

— Չատոյից: Առաջ լավ ընկերներ էիք:

— Գի՛ժ ես: Իրար հետ չենք խոսում:

Ու գանգատներն ու լացուկոծը վերածվեցին քննադատությունների ու մեղադրանքների, արհամարհանքի ու դատապարտությունների, ու բարկությունն այն աստիճանի հասավ, որ Գորկան տանը երբեք չանդրադարձավ այդ թեմային:

— Այդ ժամանակ էր, չէ՞, երբ հետս խոսեցիր: Բայց հնար չկար: Երդվում եմ: Կոշիկի խանութի վաճառողի համեստ աշխատավարձ էի ստանում: Գիլյեն ու ես որոշել էինք ամուսնանալ ու փողի կարիք ունեինք:

— Քեզ լրիվ հասկանում եմ: Բոլորովին չէի նեղացել: Հիմա արդեն ինքս էլ կկարողանայի ուսման համար երկու-երեք տարի վճարել, բայց կարծում եմ, որ ժամանակը բաց եմ թողել: Բիլբաոյում լավ եմ: Ռադիոյում փող եմ ստանում. շատ չէ, բայց կարողանում եմ իմ սիրած բանով զբաղվել՝ գրել: Դե՛, տեսնում ես՝ արդեն մի գիրք տպել եմ: Գուցե եկող տարի ևս մեկը տպեմ: Ինձ հրավիրել են դասախոսություններ կարդալու տարբեր ikastola-ներում: Լավ են վճարում, կարելի է ասել, շատ լավ: Նպաստում եմ բասկերենի տարածմանը: Մի խոսքով՝ կամաց-կամաց: Իսկ դո՞ւ:

Արանչան ձեռքերով փորը բռնեց:

— Ես էլ կամաց-կամաց՝ չորս ամսից… Եթե ոչ մի բան թարս չգնա:

— Զարմիկիս համար արդեն անուն որոշե՞լ ես:

— Իհարկե: Ռեստիտուտո:

— Լա՛վ, դու էլ, լուրջ:

— Էնդիկա կամ Այտոր: Սրանց միջև ենք: Ո՞րն ես նախընտրում:

— Էնդիկան ավելի է դուրս գալիս:

Թշնամին՝ տանը

Ներեային շատ էր դուր գալիս բերնեբերան փոխանցվող, ավանի պատերին գրված կարգախոսը. *Ուրախ և մարտունակ երիտասարդություն*: Եվ իր ձայնը՝ երիտասարդ, ուրախ ու մարտական, տալիս էր Herri Batasuna-ին: Ուրիշ տարբերակ չէր էլ պատկերացնում: Ճիշտ է, ուրախ լինելու գաղափարը նրան ավելի էր դուր գալիս, քան մարտի գաղափարը: Քարե՞ր նետել, կրակի՞ տալ, մեքենանե՞ր շուռ տալ: Դա տղերքի գործն էր: Ներեան ու իր ընկերուհիներն այդպես էին մտածում: Այսինքն, հենց որ խառնաշփոթ էր սկսվում, գնանք, չխանգարենք. հեռանում էին տարածքից: Գնում էին հավաքների ու ցույցերի, բայց դե՛, ավանի գրեթե բոլոր երիտասարդներն էին դրանց մասնակցում: Նույնիսկ maqueto-ների* զավակները, բնականաբար նաև քաղաքապետի, որը Բասկյան ազգային կուսակցությունից էր: Նրանցից մեկը սովորում էր Ներեայի հետ, ու նրանք ուսանողների խըմբով պաստառներ էին պարզում, պլակատներ էին փակցնում, թռուցիկներ էին տարածում կամ համալսարանի պատերին գրություններ թողնում:

Ներեան 87 թվականի մարտին ուղևորվեց Առասատե (Բիչո՛րին դրան անվանում էր Մոնդրագոն): Նորությունն «Առանո» խորտկարանում էր իմացել:

— Դրանց ասածն ի՞նչ է:

— Որ մահացել է Չոմին Իտուրբեն:

— Ինչպե՞ս:

— Ալժիրում ավտովթարի է ենթարկվել:

— Հաստա՞տ:

— Ոչ մի բան հաստատ չէ:

Դեռ հայտնի չէ՝ նրա մեքենայի արգելակները Իսպանիայի գաղտնի գործակալնե՞րն են փչացրել, թե՞ GAL-ի մարդասպանները: Բազմաթիվ մարդկանց դեմքերի արտահայտությունը հաստատեց ենթադրությունը:

* Maqueto, եկվոր, Բասկերի երկրում արհամարհական բառ: Նկատի ունի Իսպանիայի այլ շրջաններից Բասկերի երկիր եկած մարդկանց, որոնք բասկերեն չգիտեն:

Պաչին պատից հանեց մահացածի շրջանակված լուսանկարը: Լաթով մաքրեց ու դրեց կանգնակի վրա, որ բոլոր մտնողներն այն տեսնեն:

Հաջորդ օրերին թերթերը հաստատեցին պաշտոնական վարկածը: Պատահարի ժամանակ զոհվել էր նաև ալժիրցի մի ոստիկան, որը նրա հետ նույն մեքենայում էր եղել: Մեքենայի ուղևորի՝ ETA-ի կին մարտիկի՝ գիպսի մեջ առած թևի ցուցադրումը ևս պիտի հաստատեր պաշտոնական վարկածը: Ամեն ինչ սուտ էր: Բայց Արանչան տխուր նկատում էր (մտածելով եղբոր մասին, որ Ֆրանսիայում սովորում էր սպանել, եթե, իհարկե, արդեն սովորածը չէր իրագործում)՝ մեր այս երկրում ճշմարտությունը վաղուց է հոգին ավանդել:

— Գնալո՞ւ ես:

Բիչո՛րիին կարծես գաղափարը բոլորովին դուր չէր գալիս:

— Իհարկե, ama: Ավանի բոլոր երիտասարդները գնալու են:

Բոլո՞րը: Արանչան չգնաց: Նախորդ օրը շաբաթ էր, ասել էր, որ վատ է: Ջերմություն, դող. հաստատ մրսած էր: Չորս ընկերուհիներով որոշեցին, որ ճիշտ կլինի՝ անմիջապես անկողին մտնի: Նախ՝ թող տաք կաթ խմի մեղրով, ու անմիջապես վերմակի տակ՝ քարաբաղնիս: Այդ դեպքում գուցե բավականաչափ լավ զգար՝ հաջորդ օրը նրանց հետ Առասատե՝ ոգեկոչում-թաղմանը գնալու համար: Այնպես որ, Արանչան շուտ տուն գնաց: Խմբի մյուս աղջիկները դիսկոտեկի ճանապարհին ծրագրեցին իրենց ճամփորդությունը:

Նրանց հայտնել էին, որ վաղը մինչև կեսօր ավանի հրապարակից երկու ավտոբուս էր շարժվելու (քաղաքապետարանի հաշվին), բայց նրանք նախընտրում էին առանձին գնալ՝ Ներեայի մեքենայով: Իրականում՝ Չատոյի մեքենայով, որը Ներեան պիտի խնդրեր հորից՝ համոզված, որ հայրը նրան կտա, քանի որ կիրակի օրերը մեքենայի կարիք չուներ ու բացի այդ՝ նրան երբեք ոչ մի հարցում չէր մերժում:

— Իմ կարծիքով՝ լավ չես անում:

— Լա՛վ էլի, ama: Ընկերուհիներս են գալու: Ի՞նչ կմտածեն, եթե ամեն ինչ ծրագրելուց հետո նրանց զանգեմ ու ասեմ, որ իրենց չեմ տանում: Նույնիսկ Արանչան, որ լավ չէր, շուտ տուն գնաց՝ պառկելու, որ մինչև վաղը ապաքինվի ու մեզ հետ գա:

— Դու գիտես, չէ՞, որ այդ մարդը ETA-ի ղեկավարն է ու շատ մարդկանց է սպանել տվել:

Ներեան, աչքերն առաստաղին հառելով, համբերությունը կորցնում էր:

— Քեզ տեղեկացնեմ, որ Չոմինը տարիներ շարունակ մեր ժողովրդի պայքարի ղեկավարն է եղել: Ամեն ինչ՝ իր տունը, աշխատանքը, ընտանիքը, թողել է հանուն Euskal Herria*-ի ու բազմիցս մահափորձի է ենթարկվել: Բասկյան երիտասարդության կուռքն է: Հերոս է: Ի՞նչ հերոս: Աստվա՛ծ է: Այնպես որ, խնդրում եմ, երբ փողոցում լինես կամ խանութներ մտնես, նախքան նրան քննադատելը լեզուդ կծես, որովհետև կարող է խնդիրներ ունենաս ու ինձ էլ վտանգի տակ դնես: Բացի այդ՝ դու ի՞նչ ես հասկանում քաղաքականությունից: Դու քո պատարագին գնա՛, ama: Աղոթի՛ր, հաղորդությո՛ւն ստացիր, մենք էլ մեր գործով զբաղվենք:

Ժամը տասն էր: Չատոն դեռ չէր վերադարձել ընկերակցությունից, որտեղ հիմա արդեն ընթրիքը վերջացնելիս կլիներ: Հաստատ շատ չէր ուշանալու, քանի որ հաջորդ օրը կիրակնօրյա հեծանվավազքի պատճառով շուտ էր վեր կենալու: Երբ տուն եկավ, Ներեան արդեն պառկել էր: Այն ժամանակ Չատոյի հասցեին սպառնագրեր դեռ չկային, դեռ ամեն օր բար էր իջնում ու շաբաթ օրերն ընթրում ընկերների հետ, բայց արդեն բազմաթիվ դրամաշորթական նամակներ էր ստացել կազմակերպությունից: Ներեան տեղյակ չէր: Շավիերը՝ նույնպես: Ու ամուսինները երկար ժամանակ շշուկով խոսում էին անկողնում:

— Այ կնի՛կ, հասկացի՛ր՝ երիտասարդ է:

— Արդեն այն տարիքում է, որ հասկանա, որ լավ բան չէ արածը:

— Դե՛, եթե սառը դատենք, կարծում եմ՝ ավելի լավ է, որ գնա Մոնդրագոն:

— Մաֆիոզների մի հրոսակախմբի սատարելու, որը նրա հորից փո՞ղ է շորթում:

— Ներեան ոչ մի բան չգիտի այդ մասին: Նախընտրում եմ, որ չիմանա ու չվախենա: Թող, թող գնա ընկերուհիների հետ ու զվարճանա:

— Ու որ կարգախոսնե՞ր բղավի ETA-ի պատվին: Խմա՞ծ ես, ի՞նչ է:

— Մի քիչ: Քանի դեռ աղջիկս abertzale-ների հետ է, նրան հանգիստ կթողնեն:

— Իմ կարծիքով՝ թշնամուն մեր տուն բերելու պես մի բան է:

— Ամեն դեպքում, իմ խնդիրն այնպես է լուծվելու, որ մեր զավակները չմտահոգվեն:

---

* Euskal Herria (բասկ.), Բասկերի երկիր:

— Խնդիրն այն է, որ դու ամեն ինչ թույլ ես տալիս այդ աղջկան: Հապա մի տե՛ս. ETA-ի ղեկավարի թաղմանը գնում է մի մարդու մեքենայով, որին սպառնո՞ւմ են: Ի սե՛ր Աստծո, ավելի անհեթեթ բան կյանքումս տեսած չկամ:

— Դե՛, պետք է նրան հասկանաս. երիտասարդ է:

Եվս քսան րոպե քրթմնջալուց ու տարաձայնություններից հետո մեջք մեջքի տված քնեցին:

Ինչպես հաճախ էր լինում, կիրակի օրը Չատոն լուսադեմին վեր կացավ: Վարագույրը թեթևակի հետ քաշելով՝ լապտերի լույսի տակ ստուգեց՝ անձրևո՞ւմ է, թե՞ ոչ: Խոհանոցում հեծանվորդի հագուստով նախաճաշի փոխարեն խմեց իր սուրճը՝ առանց շաքարի ու կաթի: Մի-մի հատ խնձոր ու տանձ վերցրեց ճանապարհի համար, ծորակի ջուր լցրեց տափակաշիշը ու գնաց՝ հեծանիվը ավտոտնակից հանելու:

Առավոտյան Բիչո՛րին նորից փորձեց՝ մեղմ ու ջերմ, համոզել արդեն դուրս գալուն պատրաստ Ներեային:

— Իսկ եթե ես քեզ խնդրե՞մ:

— Ama, ո՛չ:

— Հանուն ինձ՝ մորդ համար:

— Ուզում ես՝ ընկերուհիներիս մոտ անհարմար վիճակո՞ւմ հայտնվեմ:

Բիչո՛րին ատամներն էր սեղմում: Բարկությո՞ւնից: Ո՛չ, հանկարծ բերանից բառեր բաց չթողնելու համար: Մի րոպե էլ վիճաբանեին, ու աղջկան կպատմեր դրամաշորթման նամակների մասին: Աստվա՛ծ իմ, Հիսո՛ւս քեզ Քրիստոս: Չատոն ի՞նչ կասեր:

Սառն ու արագ հրաժեշտ տվեցին իրար, չհամբուրվեցին: Բիչո՛րին պատուհանից նայեց ու տեսավ հեռացող աղջկան, որ գնում էր՝ հոր մեքենան վերցնելու: Ներեան՝ նիհար, սլացիկ, թռչկոտելով, ասես փոքր աղջնակ լիներ, դուրս թռավ շքամուտքից:

Վարագույրի հետևում Բիչո՛րին դժգոհ գլուխը տարուբերեց.

— Հիմարի՛ մեկը:

54

Սուտ ջերմություն

Տասնմեկն անց էր: Ավելի ստո՞յգ: Անց տասնհինգ էր, գուցե՝ մի փոքր ավելի: Աչքի էր զարնում քաղաքապետարանի պատշգամբում ծածանվող, կիսով չափ իջեցված ikurriña-ն: Հեռվում՝ սարերում, ամպեր էին կուտակվում (առավոտյան մի երկու կայծակ փայլատակեց) և դեպի գետն ու դեպի Սան Սեբաստիան տանող մայրուղու կողմը՝ նույնպես, բայց ավելի նոսր: Ավտոբուսները՝ լիքը ուղևորներով, մեծամասնությունը՝ երիտասարդներ, շարժվեցին հրապարակից:

Ներեան մեքենայով մտավ հրապարակ՝ ազդանշանների ուրախ մի հերթափոխ արձակելով: Այնտեղ՝ կամարների տակ, իր երկու ընկերուհիներն էին սպասում, երկուսն էլ՝ փայտերի վրա ոլորած ikurriña-ներով: Արանչյան ո՛ւր է: Դեռ մեքենայից չիջած՝ հարցրեց Ներեան: Ընկերուհիները մտածել էին, որ Ներեան է գնացել նրա հետևից: Դեռ հիվա՞նդ է: Մոտակա փողոցում է ապրում՝ եկեղեցու հետևը: Ներեան, թե՝ հիմա կգամ: Ու մինչ ընկերուհիները տաքանում էին՝ մեքենայի մեջ նստած (իրականում ցուրտ չէր, բայց, գրո՛ղը տանի, բավականաչափ զով էր), նա արագ գնաց ընկերուհու տուն: Այն տունը, որտեղ այնքան անգամ էր եղել, որտեղ երեխա ժամանակ անթիվ-անհամար գիշերներ էր անցկացրել: Այն տունը, որտեղ (այդ պահին Ներեան դեռ չգիտեր) նա այլևս ոտք չէր դնելու:

Ծանոթ դուռը, արույրե ցուցանակը՝ վրան ազգանունով, զանգի կոճակը, որ վերջին անգամ էր սեղմում:

Միրենը դուռը բացեց:

— Տանն է, չգիտեմ՝ ինչ է եղել:

Ներեային հրավիրեց ներս, ու աղջիկն ուղիղ գնաց ընկերուհու սենյակ: Հագնված էր, բայց անկողնու մեջ էր: Լսելով, որ գալիս է, արագ պառկե՞լ էր:

— Լավ չե՞ս:

Պատասխանեց, որ այդքան էլ չէ: Թեև, ճիշտն ասած, նրա տեսքը, լիաթոք ձայնը, վճռական հայացքը հիվանդ մարդու տպավորություն չէին թողնում: Սկզբում նույն փաստարկները բերեց, ինչ Բիչո՛րին: Միակ տարբերվող բանը բառապաշարն էր: Դաժան մարդ է, դահիճների պարա-

գլուխն է, մարդկանց կենաց-մահու հարցը որոշողը: Ու բարձին թիկնած՝ նրա տնազն արեց.

— Սպանե՛ք սրան, սպանե՛ք նրան:

Ի տարբերություն Բիչո՛րիի՝ Արանչայի երիտասարդ դեմքը ո՛չ ցավ էր արտահայտում, ո՛չ էլ աչքերն էին մեծ ու վախեցած: Նա վհատված էր: Վհատվա՞ծ: Ավելի շուտ՝ դառնացած: Այդ դառնության տակից զայրույթ էր թափանցում, որը հաստատում էր բառերով:

— Առանց ինձ գնացե՛ք: Մահվան այդ դիմակահանդեսին մասնակցելու սիրտ չունեմ: Ուրիշ ժամանակ ձեզ հետ կգայի: Հիմա անհնար է:

— Խոշե Մարիի՞ պատճառով:

— Հենց կազմակերպություն մտավ, աչքերս բացվեցին: Ոչ թե մեկ էլ սկսեցի ամեն ինչին ուրիշ ձևով նայել, այլ վերջապես տեսա ամեն ինչ:

— Լա՛վ, դու էլ, հավես կլինի: Պարտադիր չէ, որ առաջին շարքում լինենք:

— Ոչ էլ հինգերորդ կամ վերջին շարքում:

— Մեկ է, երկար չենք մնալու: Հետո չորսովս այնտեղից մեքենայով կծլկենք, մի տեղ կգնանք: Ես մտածում էի՝ Սարաուս գնանք, բայց պարտադիր չէ: Եթե կուզես, ուրիշ տեղ կընտրենք: Համարի՛ր՝ էքսկուրսիա ենք գնում:

Ներեայի զվարթությունը բախվեց Արանչայի սառը հայացքին: Ընկերուհիների միջև անսպասելի լռություն տիրեց: Երկու, երեք վայրկյան աչքերը չթարթեցին. սառած մի պատկեր: Իրար էին ուսումնասիրում: Մեկը՝ զարմացած, տարակուսած, մյուսը՝ չոր, անհաղորդ, մեղադրո՞ղ:

— Լա՛վ, ի՞նչ ենք անում, ինձ սպասում են:

— Եթե պիտի գնաս, գնա՛:

Այդ պահին իրենց միջև ինչ-որ մի բան անձայն կոտրվեց: Ի՞նչ: Ընկերուհիների միջև հին ու լռելյայն մի պայմանավորվածություն, ջերմության ու վստահության մի հարաբերություն: Մի անգամ՝ վաղուց՝ շաբաթ երեկոյան, ինչ-որ մի հիմար պատճառաբանությամբ ԿՍ դիսկոտեկի դռնապանը նրանցից մեկին թույլ չտվեց ներս մտնել: Դրա պատճառով իրենց խմբից և ոչ ոք ներս չմտավ: Կա՛մ բոլորը, կա՛մ ոչ ոք: Խստադեմ ու հաղթանդամ դռնապանի աչքի առաջ պատռեցին քիչ առաջ գնած մուտքի տոմսերը: Ա՛ռ քեզ, գնա՛, կորի՛ր:

— Կարո՞ղ եմ մի բան խնդրել:

— Իհարկե:

— Աղջիկներին բան մի՛ պատմիր: Ասա՛, որ ջերմում եմ, լավ չեմ:

Մտածկոտ, թևաթափ՝ Ներեան լքեց սենյակը, ուր այլևս չէր մտնելու, անցավ ճաշասենյակով, որտեղ նույնպես այլևս չէր լինելու ու վերջին անգամ խոսեց Միրենի հետ, որը բացած դռան մոտ հարցրեց նրան.

— Դրան ի՞նչ է եղել:

— Մի քիչ տաքություն ունի:

— Ինչ սկսել է Ռենտերիայից այդ տղայի հետ հանդիպել, տարօրինակ է դարձել:

Մի քանի րոպե անց Ներեան ջերմության մասին սուտը կրկնեց մեքենայում:

Երեք ընկերուհի ճամփա ընկան: Մայրուղին չոր էր. էլի լավ է՝ դեպի Բեասաին բավական խճողված էր, բայց հետո բացվեց: Վերջինն ենք հասնելու: Նրանցից մեկն ասաց, որ առանց Արանչայի նույնը չէ, այդքան լավ ժամանակ չեն անցկացնի: Այդքան լա՞վ:

— Լսի՛ր, գեղեցկուհի՛, մենք թաղման ենք գնում:

Գվարդիականների մի ջոկատի հանդիպեցին. սովորական երևույթ էր այն ժամանակ: Առասատե հասնելուն մնացել էր ութ կամ տասը կիլոմետր: Սկզբում հերթով շարված մեքենաների վերջում կանգնեցին՝ մտածելով, որ խցանում է: Հետո տեսան, որ ոչ. առջևում picoleto-ները մեկ առ մեկ ստուգում են մեքենաները ու բոլորի ինքնության փաստաթղթերը: Մայրուղու երկու կողմերում գվարդիականների վեց մեքենա էր տեղակայված, և ստուգման հատվածի սկզբում ու վերջում ճանապարհին մետաղափշերով շղթաներ էին փռած: Ջառիվերում բազմաթիվ գվարդիականներ էին կանգնած, յուրաքանչյուրի մատը՝ ինքնաձիգի ձգանին: Մի քիչ ավելի վար՝ թփուտների հետևում թաքնվող էլի մեկը՝ նույն՝ պատրաստ վիճակում: Եվս մեկը՝ ծառի հետևում: Բոլորի զենքերը՝ մարտական վիճակում:

Նրանց հրամայական ժեստով կարգադրեցին կանգնել: Ներեան իջեցրեց ապակին: Ինքնության փաստաթղթերը պահանջեցին: Ո՛չ բարև տվեցին, ո՛չ խնդրեմ ասացին: Picoleto-ն երեքի վկայականները տարավ մի ֆուրգոն, որտեղ ստուգեցին նրանց ինքնությունը: Թղթերը մաքուր էին. նախկինում բերման ու պատժի չէին ենթարկվել: Վկայականները վերադարձնելու պահին դանդաղ, ալարկոտ, նրանց միտումնավոր ուշացնելու համար (թող իմանան, թե ով է այս մայրուղում՝ մի սարից մյուսը, տերն ու

տիրականը) հարցրին, թե ուր են գնում: Իբր չգիտեին: Ու ինչո՞ւ պիտի պատասխանեին: Բայց ավելի լավ է՝ խնդիրների մեջ չընկնեն: Այնպես որ, Ներեան՝ ակամա խոսնակ-վարորդը, պատասխանեց:

— Մոնդրագոն:

Հրամայեցին, որ դուրս գան մեքենայից: Բայց ոչ թե սիրալիր՝ խնդրում ենք մեքենայից դուրս գալ: Այլ ձայնի կացնային հարվածով.

— Երեքդ էլ՝ դո՛ւրս:

Իրենց հետ խոսող picoleto-ի ձեռքի շարժմանն արձագանքելով՝ մոտեցան ևս երկուսը: Տղայի ձեռքերը նրանց խուզարկեցին: Աղջիկներից մեկը՝ ի՛նչ նվաստացուցիչ էր: Մյուսը՝ ի՛նչ զզվելի էր: Այդ բառերով նկարագրեցին միջադեպը մյուս օրը «Առանո» խորտկարանում: Իսկ Ներեան, լացը զսպելով, ստիպված էր բեռնախցիկը բացել: Մեջն իր հոր անձրևանոցն էր, հեծոյի ակերը փչելու սարքն ու հովանոցը, նաև փաթաթված ikurriña-ները:

— Էս ի՞նչ զիբիլ է:

— Դրոշներ են:

— Բա՛ց արա:

Ներեան դրանք բաց արեց՝ ներքևի ուռած շուրթը կծելով: Մինչդեռ խոսքը վերաբերում էր Իսպանիայի սահմանադրությամբ ճանաչված դրոշի: Ու հանկարծ՝ դու-ով ու հեգնանքով.

— Էս ի՞նչ է, ETA-ականի պատարագի՞ն ես գնում: Կարծո՞ւմ ես՝ Աստծո փառքի՞ն է արժանանալու:

Ներեան արժանապատվորեն լռեց: Արդեն համոզված, որ զսպել է լացի պոռթկումը, համարձակվեց նայել ուղիղ picoleto-ի աչքերի մեջ: Սև աչքերի մեջ, որոնց մեջ արտացոլվում էր... Ի՞նչ: Իր մայրը, որ նորից երեկ գիշերվա ու առավոտվա քարոզն էր գլխին կարդում, Արանչան, որ հագնված մտել էր անկողին: Անկասկած, ավելի ճիշտ կլիներ՝ ավտոբուսով գնային՝ մարդկանց մեծ խմբի հետ: Ու մտածելով այդ մասին՝ կրծքում համարձակության մի ալիք զգաց:

— Պատասխանի եմ սպասում:

— Մենք պատարագի չենք գնում:

Գվարդիականը անեծքներ տեղաց մահացածի հասցեին. մարդասպան, ահաբեկիչ, բոլոր այդ բոզի տղերքը հենց ա՛յ այդպես են սատկելու և այլն: Գլխի հրամայական շարժումով կարգադրեց, որ երեք աղջիկները

չքվեն իր աչքից: Նրանք շարունակեցին իրենց ճամփորդությունը, ու Նե-
րեան հետահայաց հայելու մեջ տեսավ, որ picoleto-ն հաջորդ մեքենան
կանգնեցրեց:

55

Իրենց մայրերի նման

Մեկը մյուսին հարցրեց: Ի՞նչ: Այս նույն սրճարանը չէ՞ր, որտեղ իրենց մայրերը սրճում էին շաբաթ հետմիջօրեներին: Արանչան ոնց որ թե *չուռերիայի* մասին էր հիշում, բայց վստահ չէր: Բայց մի բան հաստատ է. մայրը մինչև հիմա սիրում է *չուռոս* ուտել ու երբեմն, երբ լինում է Սան Սեբաստիանում, իր համար մի վեց հատ առնում է, որ հետո տանը արդեն սառը վիճակում ուտի: Ներեան էլ պատրաստ էր երդվել, որ հենց այս սրճարան էին գալիս Միրենն ու իր մայրը (երբ դեռ ընկերություն էին անում)՝ ջեմով տաքացրած հաց ուտելու:

Իսկ իրե՞նք ինչ են անում այս սրճարանում: Բավական ժամանակ է, որ մեկը մյուսից լուր չունեին, հենց նոր պատահաբար հանդիպեցին փողոցում: Քիչ էր մնում՝ մեկը մյուսին բախվեր Չուռուկա ու Ավենիդա փողոցների անկյունում: Խուսափելն անհնար էր: Ներեայի պահվածքը կարծես զգուշավորություն էր արտահայտում: Ընդամենը անցողիկ մի զգացում, որը նաև անիմաստ էր, քանի որ Արանչան, ինչպես միշտ ջերմ ժպիտով, գցվեց նրա կողմը՝ համբուրելու: Միմյանց ուսումնասիրեցին ու մեկը մյուսին հերթ չտալով՝ իրար գովեցին:

Պայմանավորվեցին (ժամանակ ունե՞ս) իրար պատմել անձնական կյանքի նորությունները: Որտե՞ղ: Փողոցում չէ, իհարկե: Արդեն մթնում էր, ու անդուր քամի էր բարձրացել: Ներեան առաջարկեց մոտակա սրճարանը: Ու գնացին՝ իրար թև մտած:

— Ինչքա՞ն ժամանակ է, որ չենք հանդիպել:

Օ՜ֆ, դե՛ ինչ. Արանչան Գիլյերմոյի հետ գնաց Ռենտերիա՝ ապրելու. մոտավորապես մեկուկես տարի կլինի:

— Ավանում խեղդվում էի: Գիտեմ՝ լավ չէ էդպես ասելը, այնտեղ եմ ծնվել, մեծացել, ընկերուհիներս այնտեղ են: Բայց էլ չէի դիմանում: Ավանում շատ մարդիկ կան, որոնք ոստիկանության պատճառով կործանվել են: Մարդիկ, որոնք քեզ այսօր գրկում են, իսկ վաղը, ինչ-ինչ պատմություններ լսելով, հետդ չեն խոսում: Երեսովս տվեցին, որ հանդիպում եմ մեկի հետ, որը բասկ չէ: Այո՛, ինչ որ լսեցիր: Իբր, ի՞նչ կասի Խոշե Մարին, եթե տեղեկանա:

— Լա՛վ էլի, ո՞վ էր ասողը:

— Խոշունեն: Ամենաշատը վրաս ազդեց այն, որ դա ուրիշների ներկայությամբ ասաց: Ժողովրդական դատարանի պես մի բան կազմակերպեց, հասկանո՞ւմ ես: Ես լռեցի: Այս կարգի երկրում ավելի լավ է լռել: Բայց հաջորդ օրը, երբ նրան փողոցում տեսա, կանգնեցրի ու ասացի, որ սիրահարվում եմ՝ ում ուզում եմ, ու նրան գրողի ծոցն ուղարկեցի:

— Լավ ես արել:

— Միակը չէր, որ վատ էր մտածում նշանածիս մասին: Հեռու չգնանք. մայրս նույն նախապաշարումներն ուներ: Կամաց-կամաց հաշտվում է ճակատագրի հետ: Ու նույնիսկ ժամանակ առ ժամանակ մեզ հյուր է գալիս Ռենտերիա: Խե՜ղճ Գիլյե: Այնքան լավ մարդ է: Բասկերենի դասընթացի է գրվել, թեև նրա համար դժվար է: Իսկ ես գիտեմ, որ նա լեզուների առումով անտաղանդ է:

Մատուցողը մոտեցավ նրանց սեղանին: Ի՞նչ են ուզում խմել: Արանչան, թեթևակի վարանելով, մի բան խնդրեց, Ներեան անվարան՝ մեկ ուրիշ բան ու ձեռքի հետ հարցրեց մատուցողին՝ հնարավո՞ր էր երաժշտության ձայնն իջեցնել:

— Ավանի բարերն էլ չէի մտնում: Դե՛, «Առանո» արդեն բավական ժամանակ չէի գնում՝ եղբորս լուսանկարը պատին չտեսնելու համար: Իմ կյանքն ուրիշ տեղ էր՝ Սան Սեբաստիանում, իմ Գիլյեի հետ ու իմ աշխատանքի պատճառով, որը զզվելի է, բայց դե՛, մի բանով պիտի վաստակես: Ավանից գնալու մեծ ցանկություն ունեի: Ցանկությունը ճիշտ բառը չէ. մոլուցք էր: Գլուխս մտցրել էի, որ այնտեղ ապագա չունեմ: Այնտեղ հարմարավետ չէր: Նույնիսկ հիմա, հիշելով այն օրերը, տեղերի անունները, որոշ անձնավորությունների դեմքերը, բերանումս զզվելի համ է առաջանում: Կներես, որ այդքան զգացմունքային եմ: Որոշ մարդկանց հայացքները դուր չէին գալիս ինձ: Ենթադրում եմ, որ Խոշունեն իմ դեմ քարոզչություն էր ծավալել: Բայց ոչ միայն նա: Հենց հնարավոր եղավ, Գիլյեի հետ մի բնակարան գտանք: Հիմա այնտեղ ենք ապրում քաղաքացիական ամուսնությամբ: Վատ չենք. աշխատում ենք ու խնայում՝ արժանապատիվ կյանքով ապրելու համար:

— Ծնողներդ ի՞նչ ռեակցիա տվեցին:

— Մայրս հեչ չուրախացավ, որ գնացի՝ նշանածիս հետ ապրելու: «Ի՜նչ կասեն»: Երեսիս շպրտեց, թե աղջիկս անառակի կյանքով է ապրում: Ոնց

որ դեռ Ֆրանկոյի ժամանակներում ենք: Մայրս ու շատ ուրիշներ իրենց կարկառուն հեղափոխական են համարում, ցույցերի են գնում ու բղավում, բայց իրականում ապրում են՝ խխունջի պես կառչելով սովորույթներին ու ամեն ինչին անտեղյակ: Տե՛ս, ama, ասացի, այդ հարցը մի ակնթարթում կլուծենք: Ու ամուսնացա: Հունվարին՝ մի երեքշաբթի օր, առանց սպիտակ զգեստի, առանց հրավիրյալների ու բղավոցների: Մահացու մեղքի հարցը լուծեցինք. դա չէ՞ր ուզածդ: Մեր արածն իսկական ողբերգություն էր մորս համար: Նա երազում էր, որ իր զավակներին դոն Սերապիոն ամուսնացներ, որ եկեղեցու աստիճաններին երեխաներին շաքարապատ նուշ տայինք, ու հագիս էլ նորաձև հարսանեկան զգեստ լիներ: Ասաց, որ ինձ երբեք չի ների, որ մոր հետ այդպես չեն վարվում: Մեկ ամիս անց հարսանիքը ռեստորանում տոնեցինք: Գորկայի (որ կտրականապես հրաժարվեց փողկապ կապել), իմ ու Գիլյեի ծնողների հետ: Ծերուկս, ինչպես միշտ, հուզված էր: Գուցե *կավա**-ի պատճառով, որը վրան չի գալիս: Մեկ էլ վերցրեց ու հիշեց Խոշե Մարիին: Գլուխը մտցրել էր, որ բոլորս միասին չենք, ու երեխայի պես լաց եղավ: Բայց ի պաշտպանություն նրա՝ պետք է ասեմ, որ Գիլյեի հետ հրաշալի հարաբերությունների մեջ է: Նախքան հարսանիքն էլ էին իրար լավ հասկանում: Ես կարծում եմ՝ այն պահից սկսած, երբ Գիլյեն նրան ինչ-որ հարցում օգնեց հողամասում: Մի օր նրան ասացի. aita, ինչ ուրախ եմ, որ լավ ես վերաբերվում նշանածիս կամ առնվազն ավելի լավ, քան ama-ն: Նա էլ պատասխանեց, թե խնդիրը ama-ի յուրահատուկ բնավորությունն է:

Եկավ մատուցողը, բերեց նրանց պատվերը ու հաշիվը փոքրիկ ափսեով Ներեայի կողմից դրեց: Նրան պատժելո՞ւ համար, որ խնդրել էր իջեցնել երաժշտության ձայնը: Նա կրկնեց խնդրանքը: Որպես պատասխան, թե՝ արդեն իջեցրել ենք, ավելին հնարավոր չէ: Ու լռեց: Մոտեցավ մյուս սեղանին, բայց երաժշտությունը նույնչափ բարձր էր, որքան սկզբում:

— Վա՛յ, ինչ տաք է այս թուրմը:

— Երեխաներ ունե՞ս:

Թեյի տոպրակիկով զբաղված՝ Արանչան գլխով «ոչ» ասաց: Ներեան զարմացավ, որ ընկերուհին հայացքը փախցնելով է պատասխանում: Շարունակեց.

* Կավա, իսպանական շամպայն:

— Չե՞ք ծրագրում ունենալ:

Արանչան գլուխը բարձրացրեց:

— Մի բան կա, որ ոչ մեկի հետ, նաև Գիլլեի, չեմ խոսել: Քեզ կարող եմ պատմել, քանի որ դու ինձ հետ Լոնդոն էիր եկել: Արդեն մտածում եմ, որ այն հիվանդանոցում ամեն ինչ չէ, որ լավ են արել: Չնայած իմ գինեկոլոգը պնդում է, որ նման բան չկա, կարծում եմ, որ ներսս ինչ-որ բան չի աշխատում, ու դա, ես կասեի, մի քիչ ստվերում է երջանկությունս:

— Այսինքն՝ մտադիր ես երեխաներ ունենալ:

— Որոշ ժամանակ է արդեն, ինչ փորձում ենք: Ճիշտն ասած, բավական վախեցած եմ այն մտքից, որ կարող է ինձ անպտուղ թողած լինեն: Բայց, ինչևէ, քո մասին պատմի՛ր՝ կյանքդ, ծրագրերդ: Իմ մասով արդեն քեզ ամեն ինչ ասացի, ինչպես տեսնում ես, մի մեծ բան չէ: Ուսումդ շարունակո՞ւմ ես:

Ներեան որոշ ժամանակ լռեց, լեզվով գդալիկի վրայով անցավ: Ինչի՞ն է սպասում՝ պատասխանելու համար: Մի պահ իրեն թվաց, որ փորձում է իր դեմքը տեսնել Արանչայի շագանակագույն աչքերի մեջ: Անկեղծությունն անկեղծության դիմաց, ու ասաց.

— Քիչ էր մնում՝ թողնեի: Բայց ի վերջո հորս խորհրդով ամառվանից հետո ուսումս կշարունակեմ Սարագոսայում:

— Շատ ուրախ չես:

— Տանն ընդհարվեցինք: Լեզվիցս բառեր թռցրի, որ չպետք է ասեի: Ցավալի է: Դե՛, հայրս ինձ ամեն ինչ ներում է: Դա չէ խնդիրը: Մի կողմից՝ մեղքս մեղմվում է նրանով, որ ծնողներս չէին ուզում ինձ պատմել, թե ինչ է տեղի ունենում: Ինձ պաշտպանելու համար: Դա հետո իմացա: Սկզբում նրանց չէի հասկանում: Լա՛վ էլի, aita, հանուն ինչի՞ պիտի գնամ դուրս՝ սովորելու: Այստեղ լավ եմ՝ իմ միջավայրում, ընկերուհիներիս հետ: Իսկ նա, երկու ոտքը մի կոշիկի մեջ, թե պետք է մտածեմ, ինձ համար ուրիշ համալսարան գտնեմ, որովհետև արդեն որոշված է, որ չեմ շարունակելու Բասկերի երկրում: Մայրս համաձայն էր: Շավիերը՝ նույնպես, որին ավելի շուտ էին տեղյակ պահել: Հակառակվեցի՝ մտածելով, որ իրար հետ պայմանավորվել են, որ ինձ որպես երեխայի վերաբերվեն: Ու ոչ միայն հակառակվեցի: Ո՛նց էի զայրացել: Այդ ժամանակ էլ այնպիսի բառեր ասացի, որ մինչև հիմա լեզուս այրվում է:

— Գիտեմ, որ հորդ սպառնում են: Դա՞ է խնդիրը:

Ներեան գլխով հաստատեց:

— Մանրամասները չգիտեմ: Մեր տանը ձեր մասին վատ են խոսում: Մայրս գլուխը կորցրել է Խոշե Մարիի՝ Ֆրանսիա փախչելուց հետո: Նրանից շատ վատ բաներ եմ լսել Չատոյի մասին: Ու դա էլ՝ մեր ընտանիքների մտերմությունից հետո: Իմանաս, որ իմ դեպքում բան չի փոխվել: Տեսնում ես՝ հետդ նստած՝ խոսում եմ, այն էլ՝ մեծագույն հաճույքով: Նայի՛ր, եթե էստեղից դուրս գամ ու դիմացի մայթին Բիչո՛րիին տեսնեմ՝ վազելով կգնամ նրան համբուրելու: Այնպես որ, եթե ուզում ես ճիշտն իմանալ, ես հասկանում եմ՝ ինչու է հայրդ ցանկանում, որ ավանից հեռու լինես:

— Բայց հայրս չգիտի ու չպետք է իմանա, որ ինքը չէր ինձ համոզողը:

— Ա՜, իրո՞ք:

— Մի դեպք պատահեց «Առանոյում»: Քեզ չե՞ն պատմել:

— Գաղափար չունեմ՝ ինչի մասին է խոսքը: Այնտեղ հազարից մեկ եմ լինում:

— Հաստատ հորս վերաբերյալ վատ տրամադրության ալիքները հասել էին խորտկարան: Ես, բոլորովին անտեղյակ, մի երեկո մտա այնտեղ ու Պաչիից խմելու բան ուզեցի: Մտածեցի, որ զբաղված է գավաթները մաքրելով ու գուցե ինձ չի լսել: Ես էլ կրկնեցի պատվերս: Նա իմ կողմը չէր նայում: Ի՜նչ տարօրինակ էր: Երրորդ անգամ արդեն մռայլ մոտեցավ ինձ ու դեմքիս շպրտեց (բառացի, ինչպես որ պատմում եմ), թե իզուր եմ եկել ու որ այլևս չգամ: Սառել-մնացել էի: Չհամարձակվեցի հարցնել, թե ինչու:

— Նման բաներն առանց հարցնելու էլ հասկանալի են:

— Ուղիղ տուն գնացի: Հայրս գործից եկավ: Գրկեցի նրան ու, շապիկը արցունքներովս թրջելով, նրան ասացի, որ կգնամ դուրս՝ սովորելու: Այնպես որ, այդքանը. պիտի բնակարան գտնեմ Սարագոսայում՝ ինձ բոլորովին անծանոթ մի քաղաքում: Մի բան եմ հասկացել: Մենք ջանք ենք գործադրում՝ կյանքը իմաստալից, կանոնավոր դարձնելու, բայց ստացվում է, որ կյանքն է մեզ ուզածի պես պտտում:

— Էլ մի ասա՛...

56

Սալորները

Մարդ ինքն իրեն հարց է տալիս՝ արժե՞ր այդքան տառապանքը: Ի պատասխան՝ ստանում ես պատերի լռությունը, հայելու մեջ՝ ավելի ու ավելի ծերացող մի դեմք, պատուհանից հազիվ երևացող երկինքը, որը հիշեցնում է, որ դրսում կյանք կա և ծիտիկներ ու գույներ, բայց ուրիշների համար: Ու երբ ինքդ քեզ հարց ես տալիս, թե ինչն ես սխալ արել, պատասխանում ես՝ ոչինչ: Իրեն զոհաբերել է հանուն Բասկերի երկրի: Շա՛տ լավ, տղա՛ ջան: Մեկ անգամ ևս նույն հարցն է տալիս ու ինքն իրեն պատասխանում. խելացի չգտնվեցի, ինձ ապակողմնորոշեցին: Զղջո՞ւմ է: Օրեր են լինում, որ ընկճվում է: Այդ ժամանակ ափսոսում է արած որոշ բաների համար:

Այդպես մի տարի, երկու, երեք, մինչև հաշիվը կորցրեց: Մտածում է, նորից անդրադառնում: Ինչ-որ ձևով պետք է մենության դեմ պայքարել, չէ՞: Իրականում օրեցօր դժվարանում է բանտակիցների ներկայությանը դիմանալը: Աղոթե՞լ: Ո՛չ, դա իր համար չէ: Իր մոր համար է: Մայրն ամիսը մեկ գալիս է ու ասում.

— Տղա՛ս, սուրբ Իգնասիոյին ամեն օր խնդրում եմ, որ բանտից ազատի քեզ, կամ էլ գոնե մեր տանն ավելի մոտ բանտ տեղափոխեն:

Սկզբում շփման ցանկություն ուներ: Բակում մյուսների հետ սպորտի մասին էր զրուցում: ETA-ական բանտարկյալների շրջանակում կարծր, նվիրյալ, ուղղամիտ մարդու համբավ ուներ: Տարիները, լուռ պատերը, մոր աչքերը զրուցասենյակում նրան քայքայում էին, ասես ծերացած ծառերին հատուկ մի փչակ գոյանար ներսում: Վերջերս օգտվում է մենակ մնալու հնարավորությունից ու հենց այն պահին, երբ չի նախատեսում որևէ բան հիշել, ինքն իրեն տեսնում է ավանի ծայրամասում գտնվող հեռախոսախցիկի մեջ՝ մի մատով ականջը փակած՝ անցնող բեռնատարների աղմուկը նվազեցնելու համար: Խոշունեի պատասխանները նյարդային էին: Ավանում արդեն բոլորը գիտեն, որ Կոլդոյին տարել են, ու որ հետո գվարդիականները փորձել են նրանց էլ բռնել: Պայմանավորվում են, որ Խոշունեն կփոխանցի Գորկային, որ նա բարձրանա հանքավայր: Այդքան տարի անց Խոշե Մարին իր խցում գլխի է ընկնում, որ եթե Խոշունեի

հեռախոսը ոստիկանները լսելիս լինեին, աղջիկն իր պատճառով լուրջ վտանգի տակ էր լինելու, էլ չասած՝ Գորկայի մասին:

Խոկինը, թե.

— Չաղը ի՞նչ է ասում:

— Որ եղբորս կգտնի ու որ չի ուզում մեր պատճառով պրոբլեմներ ունենալ:

— Ասացի՞ր, որ Գորկան հետը քառասուներկու համարի կոշիկ բերի:

— Մոռացա:

— Եղբայրդ ո՞ր համարն է հագնում:

— Ի՞նչ իմանամ:

Հետո Պաչիի ուղարկած ծրարն է հիշում: Պարունակությունը վատը չէ. վեց հազար պեսետ: Լավ է: Մեջը՝ երկտող, որն ավարտվում է քաջալերող բառերով ու Gora Euskadi askatuta-ով: Երկտողի մեջ Օյարսունի փոստային հասցեն է և նրանց սպասող մարդու մականունը: Պետք է ոմն Չապասի անունը տային: Պարզ թուղթ էր՝ առանց ստորագրության. չկար և ոչ մի բան, որը կարող էր նրանց «Առանո»-ի հետ կապել, եթե ոստիկանությունն առգրավեր երկտողը: Համա ճարպիկն էր այդ Պաչին, ոչ թե իմ կամ խեղճ Խոկինի նման: Նրանից կյանքը խլեցին, ինձնից՝ ջահելությունս:

Մինչև Օյարսուն ճանապարհը բավական երկար էր, իսկ Խոշե Մարին սոված էր: Ի լրումն դրա՝ այս հեծանիվներն ավելի շատ զբոսանքի համար էին, քան հեծանվավազքի: Խոկինը նույնպես ո՛չ նախաճաշել-կերել էր օրվա ընթացքում, ո՛չ էլ ընթրել՝ երեկ: Այո՛, բայց դե՛, նրա համար նույնը չէ. ո՛չ Խոշե Մարիի կազմվածքն ունի, ոչ էլ նրա ստամոքսը: Իհարկե, ճանապարհին չէին վիժելու, ոչ էլ ժամանակ էին կորցնելու մի գավաթ գինով ու սիգարով ճաշի համար, որպեսզի չուշանային Օյարսունի հանդիպումից: Բայց մի տեղ պիտի կանգ առնեին՝ ուտելու: Ստացվեց: Ռենտերիայում բար մտան ու ոտքի վրա՝ կանգնակի մոտ, քաղցը հագեցրին մի քանի խորտիկով:

— Կարող էինք Դոնոստիայում ավտոբուս նստել ու մեզ խնայել: Քափքրտինք կտրած շատ քշեցինք:

— Նախ փողն է պետք խնայել: Հո չէի՞ր կարծում, որ հենց առաջին օրը ամբողջը պիտի մսխեինք:

Օյարսունում իրենց դիմավորող քառասունն անց մարդը չէր թաքցնում, որ նրանց չէր վստահում: Դեմքը մռայլ էր:

Ավելի ուշ, երբ մենակ էին, խոսեցին դրա մասին.

— Գուցե դուրը չի գալիս, երբ նրան Չապաս ենք անվանում:

— Դե՛, թող գրողի ծոցը գնա՛:

Բասկերեն չոր բարևեց: Անթարթ նայում էր, հարցերն այնպես էր ձևակերպում, որ պատասխանը «այո» կամ «ոչ» լինի՝ ասես հասկացնելով՝ այստեղ զրուցելու համար չենք եկել: Կամաց-կամաց լարվածությունն անցավ: Նրանց մի նկուղ տարավ, որտեղ պիտի գիշերն անցկացնեին: Ատաղձագործական սոսնձի ուժեղ հոտ էր գալիս: Ո՛չ մահճակալ, ո՛չ ներքնակ: Լվացարան էլ չկար: Ու քանի որ Խոկինը խնդրելու-գանգատվելու միտում ցուցաբերեց, մարդը վրա բերեց՝ եթե դուրները չի գալիս, կարող են գնալ: Երբ մենակ մնացին, վճռեցին՝ սա է պայքարը: Թե չէ ի՞նչ պիտի լիներ: Ճոխությո՞ւն, հարմարությո՞ւն: Խոշե Մարին միզապարկը մի անկյունում դատարկեց: Հետո ստվարաթղթի մի քանի կտոր փռեցին գետնին: Մի գիշեր՝ քարհանքի կիսավեր տանը, հիմա էլ՝ այստեղ: Երկու օր իրար հետևից՝ առանց ընթրելու: Հոգնությունն օգնեց, որ քնեն: Շատ չքնեցին, բայց դե՛, գոնե մի քիչ: Վաղ առավոտյան Խոշե Մարիի մտքով անցավ մի քիչ ուսումնասիրել շուրջբոլորը: Միջանցքի վերջի ցածր դռնով դուրս եկավ տնամերձ հողամաս: Առանձնապես բան չկար՝ մի պատ էր, խոտ ու չորս սալորենի: Սալորները հիմնականում կանաչ էին: Բայց մի քանիսն արդեն դեղնելու վրա էին: Խոշե Մարին մի տասը-տասներկու հատ կծոտեց ավելի հասած կողմից: Քիչ անց հայտնվեց Չապասը: Ասաց կտրուկ, հրամայական.

— Գնացի՛նք:

Բացատրությո՞ւն: Իհարկե ո՛չ: Ի՞նչ իմաստ ունի: Մենք էլ բան չհարցրինք: Բա հեծոնե՞րը: Մնացին նկուղում: Ով գիտի, մինչև հիմա դեռ այնտեղ են՝ ժանգոտած, փսկած անիվներով: Չապասը նրանց ֆուրգոնով բերեց ամայի մի տեղ, որտեղից մոտավորապես մեկ կիլոմետր հեռավորության վրա երևում էր *Մամուտ* սուպերմարկետի կայանատեղին: Դեռ ամեն ինչ վաղորդյան մշուշի մեջ էր, բայց արդեն երևում էր, որ երկինքը բացվում է, ու որ արև է դուրս գալու: Ֆուրգոնը կանգնեց սայլուղու սկզբում:

— Այստե՛ղ եք իջնում:

Ամեն մեկին մի օրինակ «*Էգին*» թերթ ու մի տուփ *Դուկադոս* ծխախոտ տվեց:

— Այստեղ կսպասեք՝ այն ծառերի մոտ:

Նրանց ասաց, որ թերթն ու ծխախոտն այնպես բռնեն, որ տեսանելի լինի:

Հիշեցրեց նշանաբառն ու հաջողություն մաղթեց: Ու հենց ընկերներն իջան մեքենայից, հեռացավ:

Խոշե Մարին, թե.

— Մեզնից մեկնումեկը կարող է արագ գնալ *Մամուտ*՝ ուտելիք ու ջուր առնելու: Իշու պես ծարավ եմ:

— Մի՛ սկսիր: Կարող է մեր հետևից գան, ու այստեղ միայն մեկս լինի: Մի քիչ դիմացի՛ր:

Բանտախցում փռված Խոշե Մարիի դեմքին ժպիտ է հայտնվում: Ի՜նչ միամիտ էին: Գոնե ծխախոտ ունեին: Խոկինը «*Էգինն*» էր թերթում: Խոշե Մարին (ու դրա համար է այդքան տարի անց ժպտում) իջավ փոքր հեղեղատով, որը նրա թիկունքում էր:

— Հեսա կգամ:

— Ո՞ւր ես գնում:

Չպատասխանեց: Անհետացավ խիտ թփուտներում: Ու բավական երկար չէր երևում: Մաքրվեց «*Էգինի*» մի քանի թերթով՝ ոչ առաջին էջերով, որոնցով նրանց պիտի ճանաչեին, ու մոտեցավ ծառերի տակ կանգնած Խոկինին:

— Ի՞նչ կա:

— Հե՛չ:

Րոպեներ անց նրանց առջև մի մեքենա կանգ առավ:

— Ժամը քանիսի՞ն է ամբարձիչն անցնելու:

— Պետք է դռնից ձյունը մաքրել:

Զուսպ ողջույններ: Էս մարդը նույնպես շատախոս չէր, բայց Չապասից շատ ավելի մարդամոտ էր: Հետը միայն Խոկինն էր զրուցում՝ կողքը նըստած: Խոշե Մարին, հետևի նստարանին, անսպասելի ինքն իրեն շշնջաց.

— Անիծյա՛լ սալորները:

Խոկինը չհասկանալով նրան նայեց: Հիմա բանտախցում, նայելով պատուհանից երևացող մի կտոր երկնքին, Խոշե Մարիին զվարճացնում է այդ հուշը:

57

Պահեստազորում

Հիշողության մեջ ինքն իրեն տեսնում է մեկ այլ պատուհանից նայելիս: Ոչ թե այս մեկից, որ բանտախցում է, այլ Բրետանի գյուղական տան պատուհանից: Ընդամենը պետք է հիշել, ու, հո՛պ, խնդրե՛մ, չնայած անցած այդքան տարիներին՝ հոտառական հիշողությունը վերարթնացնում է փայտի իրական հոտը: Չոր, ով գիտի, դարերով կուտակված մի բույր է, որը գալիս է գերաններից ու փայտե տախտակներով խփած թեք հատակից: Խոկինն ու ես խաղ էինք անում, ամեն մեկս՝ իր տասֆրանկանոց մետաղադրամով: Գլորում էինք թեք հատակով: Հաղթում էր նա, որի մետաղադրամը հասնում էր, բայց չէր դիպչում պատին, թե չէ պարտված ես: Համարյա միշտ Խոկինն էր հաղթում: Բանն այն էր, որ ավելի փոքր ու ճկուն ձեռք ուներ: Ա՛յ տղա, դե՛, ընդունի՛ր վերջապես, էլի՛: Այո՛, բայց իմ ձեռքը հանդբոլի գնդակին էր սովոր, ոչ թե այդ զզվելի, մատներիս արանքով սահող դրամին: Որը, պարզ է, կամ չէր հասնում կամ էլ շրիշակին էր խփվում:

Իրենք՝ նորաթուխ մարտիկները, բոլոր հնարավոր միջոցներով ժամանակ էին սպանում:

— Իսկ այդ բառը ի՞նչ է նշանակում:

— Նոր:

— Խաբլանի մեկն ես: Ա՛յ իմ եղբայրը՝ Գորկան, իրոք, տարօրինակ բառեր գիտի:

Դանդաղ ու անհույս ձգվում էր ժամանակը Բրետանի այն տանը, որտեղ իրենց որպես պահեստազորային էին պահում: Ո՞ր մի տանը: Բոլոր տներում: Եվ առաջինում, որտեղ նրանց տեղավորեցին, և վերջինում, որտեղ Խոկինի հետ էին ապրում, և դրանից հետո՝ այնտեղ, որտեղ մի նոր ծանոթի հետ էր ապրում, նախքան որ նրան talde-ներից մեկի անդամ դարձրին: Աչքերը փակում է ու հիշում է դաշտերի կանաչը, անվերջ անձրևները, ձանձրույթը: Ամեն օրվա ծրագիրը՝ սպասել: Ու բացի այդ՝ սարերի բացակայությունը, որը բասկի համար, գուցե չհավատաս, մահացու է, քայքայում է ուրախությունը, թևաթափ է անում:

Խոկինի գնալը պատիժ էր Խոշե Մարիի համար: Բանն այն է, որ միասին էին, խաղում էին, զրուցում: Ու մեկ էլ բաժանեցին: Ընդմի՞շտ:

— Հաստատ նորից կտեսնենք իրար:

— Մի քանի տարուց այն ղեկավարներից ենք դառնալու, որոնց անունը պատմության մեջ է մնում: Գործի լիարժեք պատասխանատվությունը մեզ վրա ենք վերցնելու: Ու մինչ մյուսները, իրենց կյանքը վտանգելով, գործը գլուխ բերեն, մենք, նպատակներ դնելով ու հրամաններ տալով, հանգիստ կնստենք Իպառալդեում:

Հիմա արդեն լուրջ պայքարի մեջ էին մտնում, գոնե Խոկինը՝ հաստատ: Այդ սրիկան գիշերը չէր կարողանում զսպել իր ուրախությունը (կամ էլ էյֆորիկ վիճակը)՝ Բրետանի իր մեկուսացումից ազատվելու պատճառով: Մի վայրկյան չէր լռում: Ոնց որ թմրադեղի ազդեցության տակ լիներ: Խոշե Մարիի համբերությունը սպառվում էր. ժամը տասներկուսը եղավ, հետո՝ մեկը, սենյակը՝ ծխի քուլաների մեջ կորած, իսկ Խոկինը դեռ ձայնը չէր կտրում. ծրագրեր, ակնկալիքներ, անցյալի հիշողություններ, ավանի պատմություններ…

— Հիշո՞ւմ ես մի անգամ, երբ…

Ու վերջին կաթիլը եղավ, երբ սրիկայաբար նրան ասաց, թե՝ հանգի՛ստ, հինգ-վեց տարուց քեզ էլ կկանչեն:

Իրականում (հիմա է այդպես մտածում՝ բանտախցի մահճակալին փըռված) ոչ մի բան մեր պատկերացրածով չստացվեց: Քանի դեռ միասին էին, երկարուձիգ պարապությունը հումորով էին ընդունում: Խոկինը մի օր, երբ զբոսնում էին դաշտում, ասաց.

— Ա՛խր, ո՞նց ենք Բասկերի երկիրը ազատագրելու, եթե մենք ինքներս ազատ չենք, եթե նույնիսկ զբոսնելու համար պիտի թույլտվություն ստանանք, ու մեզ ասեն, թե ուր պետք է գնանք:

— Մի՛ նվվա: Ձենք ստանանք՝ այդ ժամանակ կտեսնես՝ ոնց ենք ազատագրում:

— Պետք է այնպես անենք, որ ավանցիները մեզնով հպարտանան:

— Հաստա՛տ: Ավանի համբավը պիտի բարձր պահենք:

Նախքան մեքենա նստելը Խոկինը (տե՛ս, է՛, ի՞նչ գոհ է) նայեց վերև՝ դեպի պատուհանը՝ Խոշե Մարիին վերջին հրաժեշտը տալով: Վեր պարզեց բռունցքը: Առավոտ էր, ու նորից անձրևում էր: Խոշե Մարին կատակով պատասխանեց՝ աջ ափով խփելով ձախ ծալած թևի բազկին: Մենակ էր

մնում, մեն-մենակ: Տեսավ, որ Խոկինը նրան լեզու է ցույց տալիս: Սա ի՞նչ է, կարծում է՝ քեֆի՞ է գնում: Ու լեզու հանած Խոկինը վերջին պատկերն է, որ Խոշե Մարին պահում է իր ընկերոջից:

Մեքենան հեռացավ՝ ցատկոտելով սայլուղու անհարթությունների վրա: Դրանք առաջացել էին հողատիրոջ տրակտորի թողած խոր ակոսներից: Անձրևը շարունակ թափվում էր խոտի վրա, ճամփեզրի խնձորենիների ու կաղնիների (կամ ինչ որ էին, որ փակում էին հեռվում երևացող եկեղեցու զանգակատունը), ավելի մոտիկ՝ կովերի վրա: Դրանք պատկանում էին տանտիրոջը՝ կարմրաքիթ մի բրետոնացու, որ ամեն գիշեր գոռգոռալով կռիվ էր անում կնոջ հետ, և որի հետ իրենք միայն ժեստերով էին կարողանում բացատրվել:

Մի քանի ամիս առաջ Էնդայայում նրանց անշուք ձևով էին ընդունել: Իքիբիրի պես, ասում էր Խոկինը: Ըստ Խոշե Մարիի՝ գեղական ձևով: Ոչ ողջունող նվագախումբ կար, ոչ էլ պատիվ տվող ղեկավարության անդամ:

— Ֆրանսերեն գիտե՞ք:

— Ոչ մի բառ:

Ընդունող մարդը շատ չերկարացրեց: Տեսե՛ք՝ ձեզ այսպիսի բաներ են սպասում:

Նա հոգնած տեսք ուներ: Դե՛, չգիտեմ, գուցե աչքերի տակի մուգ շրջանակների պատճառով: Լիակատար գաղտնիություն, չափից դուրս զգուշավորություն, կարգուկանոն ու զոհաբերություն. բացատրեց, որ թվարկածից ոչ մի բան ավելորդ չէ: Այս բոլորը ասվում էր կարճ ֆրազներով՝ որքան հնարավոր է շուտ վերջացնելու համար: Ավելացրեց, որ մենք զամբյուղի մեջ լցված կեռասի պես մի բան ենք: Ուզում ես մի հատ վերցնել, հետը կպած՝ հինգ-վեց հատ է դուրս գալիս: Այ դրա պատճառով է, որ ամեն գնով պիտի աչալուրջ լինեք: Հասկացա՞ք: Չի կարելի թույլ տալ, որ մեկի անզգուշության պատճառով ուրիշները տուժեն:

— Պայմանները դաժան են, հո ձեզ չե՞նք խաբելու: Խաղ չենք անում:

Նրանց ժամանակավոր կացարան տրամադրեց (նաև հագուստ, ռադիո և այլ իրեր) Ասկայինի մոտ գտնվող թռչնաբուծական մի ագարակում: Դրա տերը՝ ունքերը կիտած, Բերնարդ անունով մի բասկ, Ֆրանսիայի քաղաքացի էր: Նրանց ընդունեց սառը, չոր, այնպես ձգված վզով, ասես հարցներ՝ սրա՞նք են: Տպավորություն էր, ասես իր սպասած հյուրերը չէին: Ավելի տարիքո՞վ էր պատկերացնում: Կազմակերպությունում ավելի մեծ

կշիռ ունեցողների՞: Հետո արդեն նախամուտքում իր լեզվով ինչ-որ բան բղավեց իրենց ընդունած մարդուն: Խոկինն ու Խոշե Մարին չէին հասկանում՝ ինչու էր այդքան բարկացած: Պարզ էր, որ այս երկուսի ներկայությունը նրան չէր երջանկացնում: Հայտնաբերեցին, որ բասկերենի բարբառներից մեկով է խոսում, որը, մի քիչ ջանք գործադրելով, կարելի էր որոշ չափով հասկանալ: Հաջորդ օրերին սկսեցին զրուցել: Ընդհանուր լեզու գտան: Առաջարկեցին օգնել ագարակում: Մարդը սպորտի սիրահար էր, նաև հանդբոլի: Որպես հետևանք՝ երկրորդ օրն արդեն նրա դեմքը պարզվեց: Նրա կնոջ դեմքը՝ նույնպես: Մի օր նույնիսկ ծիծաղ լսվեց տանը: Այդպիսով, երեք օր փակված մնալուց հետո ձեռքերը ծալած չնստելու համար սկսեցին քիչ-քիչ օգնել. մաքրել, տանել ու բերել՝ չհեռանալով ագարակից, որ նրանց հանկարծ որևէ անծանոթ չտեսնի:

Մի արևոտ, ծիտիկների ծլվլոցով լի առավոտ նրանց հետևից *Ռենո-5*-ով եկան: Կարևոր հանդիպման պիտի տանեին: Ընդամենը դա ասացին: Ու հենց շարժվեցին, ստիպված եղան անթափանց ապակիներով ակնոց դնել: Մեկ ժամից ավելի ոլորաններով գնացին: Վերջապես կոշիկների տակ լսվեց խճաքարի անշփոթելի ձայնը: Ասացին, որ չնայեն: Խոշե Մարին, արդեն տան մեջ, ակնոցի տակից տեսավ կարմրավուն սալիկներ ու աստիճաններ:

— Արդեն կարող եք նայել:

Ձեռք սեղմելու պահին Սանտին ժպտաց նրանց: Kaixo՝ ասաց, kaixo՝ պատասխանեցին համեստ ու հուզված: Ու հանդիպումը ճիշտ հունով գնաց, որովհետև պարզվեց, որ Սանտին ընկերներ ուներ իրենց ավանում: Այդ տեղից սկսեցին խոսակցությունը: Հետո, թե բա տոնախմբությունն՛ը, բա պարե՛րը հրապարակում: Սանտին երկուսի մասին էլ տեղեկություններ ուներ: Խոկինին ապշեցրեց՝ ասելով.

— Ուրեմն, դու մսավաճառի տղան ես:

Նրանց հարցրեց, թե ինչու էին փախել: Պատասխանեցին: Նաև նրա համար, որ ուզում էին կազմակերպության անդամ դառնալ:

Խոշե Մարին, թե.

— Մեզ արդեն մի քիչ ճանաչում էին՝ ավտոբուսներ ու ATM-ներ վառելու շնորհիվ: Ուզում էինք վերջնական քայլն անել:

Ու արեցին այդ քայլը: Արդեն արել էին: Հինգ օրվա ընթացքում փակված մնացին մի սենյակում, որ այս բանտախցից շատ մեծ չէր: Լայնքը՝ երեք

քայլ, երկարությունը՝ հինգ: Գուցե մի քիչ ավելի, բայց ոչ շատ: Հիշում էր, որ վերը մի պատուհան կար, բայց չափազանց բարձր էր՝ այնտեղից նայելու համար: Բացի այդ՝ հաստ, մուգ կապույտ կտորե վարագույրով էր փակած, լույս չէր ներթափանցում: Դրսից ձայներ էին լսվում. երեխաների ձայներն ու ծիծաղը, տրակտորի կամ էլ մեկ այլ գյուղատնտեսական մեքենայի «ռա-տա-տա»-ն ու ժամն ազդարարող զանգի ձայնը, որը մեկ հեռու էր հնչում, մեկ՝ մոտիկ՝ ըստ քամու ուղղության: Ժամանակ առ ժամանակ մի աքլոր էր կանչում:

Զենքերի վերաբերյալ դասընթա՞ցը: Հետաքրքիր էր: Տեսական մասը՝ ոչ այնքան: Գոնե զբաղվում էին: Սովորեցնողը դիմակագլխարկով մի հրահանգիչ էր: Առաջին օրերին գալիս էր բերմուդներով ու ռետինե հողաթափերով: Պայթուցիկների մասին լիքը բան գիտեր, բայց հրացան քանդել-հավաքելու հարցում անտաղանդ էր: Կողքը կանգնած՝ ամեն ինչ վերահսկում էր *լոգիստիկայի* պատասխանատուն, որի մականունը Խոկինը թաքուն փոխեց, դարձրեց Բելառի*՝ նրա վիթխարի ականջների պատճառով: Խոշե Մարին չէր կարողանում այդ մարդու հետ խոսելիս չնայել դրանց: Հրացանով պարապմունքի օրը Բելառին ստիպված եղավ միջամտել, քանի որ դիմակագլխարկով անձը գլուխ չէր հանում:

Ամենալավը հրաձգության պարապմունքներն էին: Հիշում եմ՝ որքան կրակեցինք 7.65 տրամաչափի ատրճանակով: Պումբա՛-պիմբա՛: Բելառին ապուշ էր կտրել:

— Աստծո՛ սիրուն, տղե՛րք, որտե՞ղ եք սովորել այդպես կրակել:

Զո՛ւմ-զո՛ւմ՝ մի հաճո՛յք: Բելառին զարմանքից լալկվել էր, հատկապես Խոկինի պատճառով, որը չէր վրիպում: Խոշե Մարին մտածում է, որ լավ կրակողի նրա համբավի պատճառով էր, որ Խոկինին իրենից շուտ ներգրավեցին դիվերսիոն խմբում, որտեղ շտապ պետք էր ազատ տեղը լրացնել: Բաժանումը ծանր հարված էր իր համար:

Մենությունն այդքան ծանր չտանելու համար կարող էր հանդիպել Կոլդոյին, որն այդ ժամանակ մոտիկ էր ապրում: Չէր ցանկանում: Մի հետմիջօրե Խոկինի հետ նրան պատահաբար հանդիպեցին Բրեստում՝ բարում: Մեղա՛, մեղա՛: Իհարկե, խոսեցին, բայց բառերը, տոնը, շարժումներն արդեն նույնը չէին, ինչ այն ժամանակ, երբ միասին ավանի բնակարա-

* Belarri (բասկ.), ականջ:

նում էին ապրում:

— Տղե՛րք, կներեք: Կարծում էի՝ այնտեղից ողջ դուրս չեմ պրծնի:

— Հանգի՛ստ եղիր: Հիմա նրանց նույնը կկերցնենք:

Կատակեցին, պայմանավորվեցին մեկ ուրիշ օր հանդիպել, բայց չժամադրվեցին հետը: Չէին վստահում:

58

Խաղուպար

— Խաղուպար է լինելու:

— Ես զենքով կմտնեմ, դուք դուրսը կսպասեք: Մի օր պիտի սկսեմ, չէ՞:

Ասում էին, որ թմրանյութ է վաճառում: Կազմակերպությունը այդպիսի մի հաղորդագրություն էր իրենց փոխանցել, որը ավելի ուշ պետք է հրապարակվեր «*Էգին*» թերթում: Արագ ու հեշտ մի ekintza*, որը թեև արտառոց մի բան չէր լինելու, բայց բավարար էր՝ Խոշե Մարիի սառնասրտությունը փորձելու համար: Պաչոյի բառերն էին (նրան հանգստացնելու համա՞ր), և, իրոք, այդպես էր: Խոշե Մարին հաճախ էր հիշում այդ դեպքը, քանի որ դա իր կատարած առաջին սպանությունն էր՝ ուրիշի արյունով իր մկրտությունը: Մնացած գործողությունները հիշելու համար պիտի ճիգ գործադրեր: Առաջիններից շատ մանրամասներ արդեն մոռացել էր: Հասարակ բաներ էին. մի երկու պայթուն, մի հարձակում: Իսկ այդ բարում եղածը, հակառակը, աչքի առաջ է: Սպանված մարդը չէր պատճառը: Իր համար մեկ էր, թե ով էր: Ինձ ուղարկում են՝ ինչ-որ մեկին մահապատժի ենթարկելու, ես կատարում եմ. ով ուզում է՝ լինի: Մարտիկի դերը մտածելն ու զգալը չէ, նա պետք է հրամաններ կատարի: Այ սա է, որ չեն հասկանում նրանք, որոնք հետո իրենց քննադատում են: Հատկապես լրագրողները, որ կպչուն ճանճերի պես սպասում են, մինչև ինարավորություն ունենան հարցնելու, թե չե՞ն զղջացել: Լրիվ ուրիշ բան է, երբ բանտախցի մենության մեջ ինքդ քեզ ես այդ հարցը տալիս: Լինում են անտրամադիր օրեր: Այդ վիճակն ավելի երկար է տևում: Դե՛, գրո՛ղը տանի, արդեն շատ տարիներ է բանտում:

Նրանց փոխանցեցին տեղեկությունը՝ լուսանկարի հետ: Այնպիսի քիթ ուներ ու բեղ, որ հնարավոր չէր սխալվել: Այդ երեսուն-երեսունհինգ տարեկան տիպը մի փոքր բար, ավելի շուտ՝ *փաբ* ուներ: Երբեմն նա էր հաճախորդներին սպասարկում, երբեմն՝ մի կին: Կինը Խոշե Մարիին չէր հետաքրքրում: Այն փողոցը, որտեղ բարն էր, շատ բանուկ չէր: Որևէ

* Ekintza (բասկ.), գործողություն, մահափորձ:

հսկողությո՞ւն: Չկար: Փողոցից փախչելն էլ խնդիր չէր: Պաչոն իրավացի էր, երբ ասում էր, որ խաղուպար է:

Երբեմն նրանք վիճակ էին գցում՝ որոշելու համար՝ ով է սա անելու, ով՝ մյուս գործը: Այս անգամ այդպես չէր: Խոշե Մարին պնդեց, որ ինքն է անելու, ուրիշ՝ ոչ ոք: Նրան հունից հանելու միտումով Չոպոն առաջարկեց գուշակել բռունցքի մեջ պահած մետաղադրամների քանակը:

— Վա՛յ, չէ՛, էլի՛:

— Լա՛վ, եղա՛վ:

Խոշե Մարին պիտի մտներ բար, Պաչոն պիտի սպասեր մայթին՝ նրա հետադարձն ապահովելու համար: Չոպոն, որ երեքից ամենալավ վարորդն էր, պիտի սպասեր մեքենայի մեջ: Ինչպես որ ասել էին, խաղուպար էր լինելու:

Քնեցին հատակին փռած ներքնակների վրա՝ մի բնակարանում, որտեղ նրանց հյուրընկալել էին նախորդ օրը: Ու այսօր Խոշե Մարին չի հիշում, որ հաջորդ օրվա ekintza-ի հետ կապված երազ տեսած լիներ: Հեռուստացույց ունեին, ընթրեցին սառնարանում եղած ուտեստով, կինո նայեցին: Այդքանը:

Առավոտյան առանձնապես նյարդայնացած չէր, առնվազն ոչ այնքան, որ գործընկերների առջև (գործընկերներ էին, ոչ թե ընկերներ) չկարողանար ձևացնել, որ հանգիստ է: Հանկարծ այն լարվածությունն առաջացավ, որը սովորաբար ունենում էր հանդբոլի կարևոր խաղից մի քանի ժամ առաջ: Այդ դեպքերում քիչ էր խոսում ու չէր սիրում, որ հետը խոսեին, հիմնականում՝ կենտրոնացումը չկորցնելու համար, ու որ չափից ավելի իրեն չթուլացներ:

— Գնացի՛նք:

Գնացին: Խնդիրնե՞ր, խոչընդոտնե՞ր, անսպասելի բանե՞ր: Բնա՛վ: Գործընկերները Խոշե Մարիին ավելի կատակասեր ու շատախոս էին պատկերացնում:

— Վախենո՞ւմ ես, ի՞նչ է:

— Կլինի՞ ջղերս հանգիստ թողնեք:

Շարունակեցին լռության մեջ: Փողոցն ամայի էր, մեքենաները քիչ էին. քաղաքի ծայրամաս էր: Կայանատեղի գտնելը դժվար չէր: Նրանց «թիրախը» սովորական ժամից մեկ-երկու րոպե ուշ հասավ: Բեղերը, քիթը. նա էր: Կողքերը չնայելով՝ բարձրացրեց շերտավարագույրը: Այս մարդը գլխի չէ, որ մեկ րոպեի կյանք ունի: Ու մտավ բար:

Իրականում վարորդի կողքին նստած Խոշե Մարիի սիրտն արագ էր խփում: Ճանապարհին ձեռքերը ծնկներին էր դրել. իբր այդպես էր ուզում: Բայց ոչ: Ոտքերն էր սեղմել, որ դողը զսպի: Այսօր արդեն գիտի, որ առաջին մահացու զոհից «առաջ» ու «հետո» կա, թեև այդ բաները, մտածում էր, մարդուց են կախված: Որովհետև, դե՛, պարզ է, պայթուցիկով մի ռետրանսլատոր ես օդ թռցնում կամ, օրինակ, բանկային մի մասնաճյուղ, ու, իհարկե, վնաս ես պատճառում, բայց այդ ամենը կարելի է վերականգնել: Իսկ կյանքը՝ ոչ: Հիմա կարող է սառը դատել: Իսկ այն ժամանակ նրան ուրիշ բան էր հետաքրքրում: Ի՞նչ: Որ հանկարծ նյարդերը տեղի չտան: Վախենում էր փափուկ ու անվստահ երևալ գործընկերների աչքին կամ էլ ekintza-ն ձախողել:

Ավելի լավ է գործել, քան թույլ տալ, որ գլուխդ արդուկեն: Մեքենայից իջավ վճռական տրամադրված, համոզված, որ դողն ու սրտի բաբախումը թողել է մեքենայի մեջ: Դուռն ամբողջությամբ չփակեց: Նույնն էլ՝ հետևը նստած Պաչոն: Իրար նայե՞լ, խոսե՞լ: Ինչի՞ համար: Ամեն ինչ պլանավորել էին: Արևի ուժեղ լույսն անսպասելի խփեց նրանց աչքերին:

Խոշե Մարին տեսավ շենքերը, պատշգամբներում փռած լվացքը: Հարուստների թաղամաս չէր: Ինչ տարօրինակ է, չէ՞, նման բաների մասին մտածել, երբ բաճկոնի տակ «Բրաունինգի» ծանրությունն ես զգում: Փողոցի մի կողմը դեպի սար էր նայում: Ներքևում մայրուղին էր: Տգեղ տեղ էր: Քիչ խորքում երեխաներ էին խաղում՝ թփուտներով եզերված տարածքում, որը լի էր շինարարական աղբով: Ի՞նչ է նշանակում քիչ խորքում: Դե՛, մի 100-150 մետր հեռավորության վրա: Չափից ավելի հեռու էին ու իրենց խաղով զբաղված՝ նկատելու համար երկու երիտասարդի, որոնք իրար հետևից գնում էին դեպի բար: Խոշե Մարիի սիրտն արդեն այդքան ուժգին չէր բաբախում: Հանդբոլի ժամանակ նույնն էր պատահում: Հենց մրցավարն ազդարարում էր խաղի սկիզբը, նա, չկորցնելով կենտրոնացվածությունը, հանդարտվում էր:

Քայլում էր մայթով ու ինչ-որ պահից սկսած՝ դադարեց լսել իր հետևից եկող Պաչոյի քայլերը: Մի շքամուտքի մոտով անցավ, ապակե դուռ, վրան՝ համար: Ի՞նչ թիվ էր: Այդքան տարի անց ինչպե՞ս հիշեմ՝ ինչ թիվ էր: Հիշում է, որ բար մտնելու համար պետք էր երկու աստիճան բարձրանալ: Թե՞ երեք: Շերտավարագույրը թեև լրիվ վեր հանած չէր, բայց բավարար էր՝ մտնելիս գլուխը չիջեցնելու համար: Իսկույն զգաց ծխի, վատ

օդափոխվող խղճուկ կացարանի հոտը: Մի վայրկյանից աչքերն ընտելացան մթությանը: Բարի ներսում իր «թիրախը» չտեսնելով՝ անհանգստացավ: Տարածքը այսօրվա բանտախցից շատ մեծ չէր, թեև ավելի երկար էր, խորքում՝ դռան խորշով, որտեղից մեկ էլ հայտնվեցին քիթն ու բեղերը:

— Ոչի՞նչ, որ մի քիչ սպասես: Դեռ չեմ բացել:

Մի շղթա էր զարդարում այդ մարդու պարանոցը: Վառվող միակ լապտերի թույլ լույսն արտացոլվում էր արծաթազօծ օղակների մեջ, որոնք, մարդու մազոտ կրծքով սահելով, անհետանում էին շապիկի տակ, այնպես որ Խոշե Մարին չէր տեսնում, թե ինչ զարդ էր: Հայացքը սևեռեց կոկորդի տակ՝ շղթայի երկու օղակների միջև ընկած մասին: Մոտեցրեց «Բրաունինգի» փողն ու կրակեց: Հասցրեց տեսնել ակնթարթորեն բացված արնոտ անցքը: Մարդը, ծանր ընկնելով կողքի, մի եռոտանի աթոռ շուռ տվեց:

Հատակին ընկած՝ դեռ շարժվում էր: Փորձում էր վեր կենալ, հազիվ կարողացավ բեկբեկուն ձայնով արտաբերել.

— Մի՛ կրակիր: Փողը վերցրո՛ւ:

Խոշե Մարիի համար վիրավորական էր, որ իր «թիրախը» վայրկենապես չմեռավ, և որ զինված կողոպտիչի տեղ էր դրել իրեն: Հետո էլ՝ նրա խղճուկ տոնն ու արմունկին հենվելու փորձերը: Ինքն իրեն համոզեց, որ այդ տիպը փորձում էր մարդկային երևալ՝ խղճահարություն առաջացնելու համար: Գնա՛, ուրիշներին խաբի՛ր: Տեսավ շշերի շարաններն ու ձողը, որին մարդիկ ոտքերն են հենում: Ու հիշեց հրահանգչի սովորեցրած վարքականոնը. մենք չենք սպանում, մենք մահապատիժն ենք ի կատար ածում: Դրա համար պետք է ուշադիր լինել, չվրիպել: Մեկ քայլ առաջ արեց ու աներեր կրակոցներով ջնջխեց գլուխը:

Վերջապես լռություն տիրեց: Նրանից երկու քայլի վրա դրամարկղն էր՝ բաց վիճակում: Կարող էր օգտվել: Մեկ է, ո՞վ էր իմանալու: Ոչ մի բան չվերցրեց: Ոչ էլ ծորակից ջուր խմեց: Ու դա մեր պայքարի (բարից դուրս գալով՝ այդպես ինքն իրեն ասաց) արդարության ապացույցն է:

59

Ապակե թել

Տաքսիՙստն է գիժ, թե՞ սա Հռոմի փողոցներով քշելու նորմալ ձևն է: Փողոցի մեջտեղում՝ զբոսավարի շուրջը խմբված օտարերկրացիները, որ պատմական մի շենք էին դիտում, վեր թռան նրա ազդանշանից: Բացի այդ՝ նեղ ու ոլոր-մոլոր փողոցների էս ի՛նչ լաբիրինթոս է: Պատուհանիկն իջեցնելով՝ վարորդը թևը դուրս հանեց՝ ողջունելու բարետես մի մատուցողի, որը հաճախորդներին հրավիրելու համար կանգնած էր ռեստորանի տեռասի (ամպհովանի, մեծ թաղարներով բույսեր) առջև: Կտրեցին-անցան սալահատակ հատվածներ: Հետևի նստարանին ձեռք ձեռքի տված՝ Արանսասուն ու Շավիերը դխկդխկոցների արանքում իրար էին նայում՝ կարծես ասելով՝ ի՞նչ անենք: Ծիծաղե՞նք, թե՞ օգնություն կանչենք:

Իջան «Ալբերգո դել Սենատո» հյուրանոցի մուտքի մոտ: Կողքը Պանթեոնն էր՝ իր գրանիտե սյուներով ու լուսանկարող բազմաթիվ մարդկանցով: Ոչ հեռու զբոսաշրջիկներին պտույտ առաջարկող կառք էր կանգնած՝ իր ձանձրացող ձիով ու ռոմանտիկ-քնատ կառապանով: Հրապարակի կենտրոնում գտնվող շատրվանն այդ պահին շրջապատված էր դեռահասներով (դպրոցականներո՞վ)՝ դեղին վզկապներով, նույն գույնի գլխարկներով և ուսապարկերով:

Արանսասուն վճարեց վարորդին: Ծախսերի գումարն ընդհանուր էր, ու գումարը պահողը կինն էր: Վճարն աստղաբաշխական էր: Ճարպիկ շարժուձևով տաքսիստը, buona giornata* մաղթելով, անհետացավ նույնքան արագ, որքան եկել էր: Ու նախքան ճամպրուկներով հյուրանոց մտնելը, Արանսասուն, խոր շնչելով կեսօրվա ջերմ օդը, ցածրաձայն ասաց Շավիերին.

— Աստված վկա, երդվում եմ, մի պահ մտածեցի, թե տաքսիստը մեզ առևանգել է:

Շավիերը (որքան տարբեր էր այն ժամանակ, գոնե գործից դուրս ժամերին)՝ հեգնող, սրախոս, ուրախ (հիվանդանոցում այդքան էլ չէ), պատասխանեց.

---

* Buona giornata (իտալ.), Լավ օր:

— Պատկերացնել էլ պետք չէ: Նա մեզ իրոք առևանգել էր: Ու վերցրած գումարն էլ փրկագինն էր:

Երրորդ հարկի պատուհանից պետք է որ լա Պիացցա դե լա Ռոտոնդան երևար: Չի՛ կարող պատահել: Նրանց սենյակը ոչ մի նմանություն չուներ այն նկարի հետ, որը ցույց էին տվել զբոսաշրջային գործակալությունում: Մե՞ծ էր: Այո՛: Մաքո՞ւր էր: Այո՛: Բայց պատուհանը դեպի մթոտ ներքին բակ էր նայում: Դիմացը՝ սևացած, փոքր պատուհանիկներով աղյուսե մի պատ: Պատուհանագոգին մի կատու էր կծկված, ինչն Արանսասուի կարծիքով պոետիկ մի դետալ էր: Իսկ մի քիչ ավելի բարձր՝ քիվի մոտ, կյանքին կառչելով, մի փոքրիկ ծառ էր մաքառում՝ արմատները խրած պատի ճեղքերի մեջ:

— Չենք փնթփնթում, չէ՞:

— Ո՛չ, իհարկե, կատվին հավանում եմ:

— Ներքին բակերն իրենց առավելություններն ունեն: Նրանք, որոնց սենյակի պատուհանները դեպի հրապարակ են նայում, հաստատ գիշերը աչք չեն կպցնելու աղմուկի պատճառով:

— Խե՛ղճ մարդիկ, նրանց ֆռռացրել են: Նրանց չեմ ճանաչում, բայց արդեն խղճում եմ:

— Հիշի՛ր մեր գալու նպատակը:

— Ուրիշ բանի մասին չէի էլ մտածում: Ի՞նչ հաճելի ես բուրում:

Ու սկսեց հանել կնոջ շորը հենց այդտեղ՝ պատուհանի մոտ, իսկ նա՝ հանդուրժման տիպար (համոզվելուց հետո, որ ոչ ոք նրանց չէր նայում բակից)՝ գեղեցիկ, ժպտուն շուրթերով, նրան ենթարկվելով, ոտքերն էր բացում ու ձեռքերը վեր հանում՝ ընդունելով բոլոր այն դիրքերը, որոնք հեշտացնում էին քնքուշ ձերբազատումը հագուստից:

Արանսասուն նրան ասել-խնդրել էր, որ թյուրըմբռնումներից խուսափելու համար առանց կոծկելու արտահայտի իր՝ ֆիզիկական կամ որևէ այլ բնույթի ցանկությունները, ու որ ինքն էլ նույն ձևով կվարվի: Գործընկերներ, ընկերներ, սիրեկաններ, միաձուլված «ես»-եր: Հռոմում անցկացրած այդ երեք օրերը նրանց հնարավորություն պիտի տային հասկանալ հարաբերության խորությունը: Շավիերն արագ մերկացավ: Կնոջ մեջ ներթափանցեց՝ կուրծքը կրծքին: Կռահելով նրա ցանկությունը՝ կինը մի ոտքը հենել էր աթոռի եզրին, և այդ բաց դիրքով կենակցելիս ձեռքերի օգնությանը չդիմեցին: Իրար կապակցված, մարմիններն անշարժ՝ մի պահ նայեցին

դեպի բակ: Պատը, կատուն, փոքր ծառը: Հանգիստ, միավորված, չգրկախառնվելով՝ կինը՝ ձեռքերը ծոծրակին խաչած, Շավիերը՝ ձեռքերը մեջքագոտուն հենած: Իրենց հաճելի սովորություններից մեկն էր: Այնպիսի տպավորություն էր, կարծես երկուսը մեկ են, բայց ոչ մեկը մյուսի տերը չէր: Կինը շշնջալով, ասես չուզելով անհանգստություն պատճառել, հարցրեց.

— Էլի՞ ես ուզում:

— Ավելի լավ է գիշերը:

Մնացին անշարժ, լուռ մեկ րոպե, երկու՝ ամեն մեկն իր երևակայության ու մտածմունքի մեջ խորասուզված, մինչև որ առնանդամը, կամաց-կամաց թուլանալով, դուրս սահեց իր տաք կացարանից:

— Գնա՞նք, մի բան ուտե՞նք:

Գնացին: Ո՛ւր: Որոշ ժամանակ փողոցներում դեգերեցին: Այս կողմ, այն կողմ, ու այդպես աննպատակ՝ հասան Նավոնա հրապարակ: Շատրվանն իր քանդակներով, որոնք Արանսասուին հրեշային թվացին, գարնանային առատ արևը, եկեղեցուց իջաշարուկ դուրս եկող մայրապետները, ու դիմացը՝ Սպանյոլա* գրախանութը, ուր որոշեցին մտնել սովը հագեցնելուց հետո կամ էլ վաղը:

Հրապարակի մի անկյունով դուրս գալով դեպի գետը՝ կանգ առան մի ռեստորանի մոտ: Այստեղ ենք մտնում՝ անկախ նրանից՝ լա՞վն է, թե՞ վատը, քանի որ քաղցն արդեն անտանելի է դառնում: Աղցան, *նյոկի*, իսկ Շավիերը՝ ձուկ, որը վատը չէր, բայց և մի երևելի բան էլ չէր:

— Չենք փնթփնթում, չէ՞: Տե՛ս՝ եղանակի առումով ոնց բախտներս բերեց:

— Կերածս orata**-ն շատրվանում բռնած չեն լինի, չէ՞: Արձանի ոտի հոտն էր գալիս:

— Շավիե՛ր, խնդրում եմ, քեզ կլսեն:

— Նրանք իտալացի են: Մեզ չեն հասկանա:

— Ամեն ինչ էլ հասկանում են: Եթե ուզում ես քննադատել, բասկերեն խոսի՛ր:

Ու ծիծաղի, չարաճճի հայացքների, երջանկության մեղսակիցները vino rosso da casa***-ով կենաց խմեցին: Շավիերը նրան բասկերեն ասաց.

---

* Սպանյոլա (իտալ.), իսպանական:

** Orata (իտալ.), ձկան տեսակ՝ ոսկե պերկես:

*** Vino rosso da casa (իտալ.), տնական կարմիր գինի:

— Ի՞նչ հաճելի ես բուրում:

Կինը նրան հիշեցրեց, որ երդվել էին Հռոմ գալ ու կյանքը վայելել: Այդպես էին որոշել ճամփորդությունից մի քանի օր առաջ: Արանսասուն պատկերացրեց ապակե մի թել, որի ծայրերը նրանց ձեռքերում էին: Երեք օր Հռոմում՝ ապակե մի թելով, որն ամեն պահ կարող էր փշրվել: Դա իր վախն էր: Իսկ Շավիերը՝ կատակելով, թե.

— Խմենք մեր մեղրամսի կենացը:

— Հանգի՛ստ, հոգի՛ս: Մի՛ շտապիր:

Մոտ երկու ամիս էր, ինչ Արանսասուն ապահարզան էր ստացել: Ո՛ւֆ, ամուսնական իր անցյալը ծանր թեմա էր: Մյուս կողմից իր համար դժվար էր, անհնարի՞ն, ջնջել ութ տարվա ցավոտ հիշողությունները: Շավիերն ու իր նախկին ամուսինը՝ ակնաբույժ, հանդիպում էին միջանցքներում, վերելակում, հիվանդանոցի կայանատեղիում: Նաև «Անոետա» մարզադաշտում, քանի որ երկուսն էլ «Ռեալ Սոսիեդադ»-ի անդամ էին, տրիբունայում նրանց նստարաններն իրարից ընդամենը տասը մետրի վրա էին: Շավիերն աշխատում էր խուսափել (իհարկե, ոչ ակնհայտ) նման պատահական հանդիպումներից: Ի՞նչն էր պատճառը: Որովհետև մի բանից նեղվել էր: Երբ մյուսը, արդեն բաժանված, իմացավ Արանսասուի հետ նրա կապի մասին, հիվանդանոցի սրճարանում ասաց, որ նրան լավ նայի, որ մենակ չթողնի, ու օգտվելով առիթից՝ նրան բնութագրեց որպես հրաշալի, բայց փխրուն մի կնոջ:

— Լավ խնամի՛ր նրան:

Ի՞նչ իրավունքով է քիթն իրենց կյանքը խոթում: Բայց բանն այն է, որ մարդ չի ուզում պրոբլեմ ունենալ, առավել ևս՝ աշխատանքի վայրում, ու նախընտրում է դիվանագիտության ու լռության ճանապարհը: Ուստի համաձայնության մի անորոշ ժեստ արեց՝ նայելով դեպի մատուցողը՝ հաշիվը կբերե՞ս: Իր կորտադոն* դեռ չավարտած՝ ուզում էր ցտեսություն ասել ու հեռանալ, բայց դիմացինն առաջ ընկավ:

— Ձեզ աշխարհի երջանկությունն եմ ցանկանում: Անկեղծ: Թեև հեշտ չի լինելու: Փորձով գիտեմ:

Երեկոյան Արանսասուին պատմեց, ու նա լաց եղավ՝ համոզված, որ նախկին ամուսնու ասածն «աչքով տալու» պես մի բան է:

---

* Կորտադո (իսպ.), քիչ քանակությամբ գոլ կաթի փրփուրով համեմվող «էսպրեսսո» տեսակի սուրճ:

— Երևի կարծում ես, որ չափազանցնում եմ:

Առաջին անգամ էր տեսնում, որ Արանսասուն հեկեկում է: Գեղեցիկ, համեստ, էլեգանտ տխրության մեջ ընկղմված: Զգայուն մի կին՝ երեսունյոթ տարեկան, իրենից երեք տարով մեծ: Հիացած նայում էր կնոջ թաց աչքերին: Գրկեց նրան՝ մխիթարելով, ըմբոշխնելով նրանից եկող բուրավետ ջերմությունը, այտով դիպավ նրա սևաթույր մազերին ու մեղմորեն համբուրեց շուրթերը: Թղթե թաշկինակի ծայրով արցունքները մաքրելու զգուշավոր նրա շարժման մեջ (կոպերի ստվարափոշին չփչացնելու համար) թե՛ կախարդանք կար, թե՛, հնարավոր է, կոկետություն ու նաև մեծ վախ: Տեսնենք. գուցե հենց ե՞ս եմ չափազանցնում: Վախը հաստատ կար, ու խորին վախ էր. այնտեղ՝ կնոջ ներսում, որպես բութ-անորոշ մի ցավ, բայցևայնպես ոչ պակաս անհանգստացնող: Իրական ու կայուն սիրային կապի համար պիտանի չլինելու վախ էր, մի հարաբերության, որը նրա վերջին փորձն էր լինելու: Այդպես նրան բացատրեց մի երեկո, երբ պատրաստվում էին գնալ «Տեատրո Պրինսիպալ» թատրոն՝ կատակերգական մի ներկայացում դիտելու:

— Դու հաստատ վերջինն ես: Կասկած իսկ չունեմ: Եթե մեր հարաբերությունը չստացվի, այս դժբախտ կինն այլևս երբեք չի սիրահարվի. տարբերակ չկա: Ճրագս վերջնականապես կմարի:

Այդ խոսակցության ընթացքում էր, որ Արանսասուի մտքում ճամփորդելու գաղափարը ծագեց:

— Արի՛ մի քանի օրով այստեղից՝ մեր աշխատանքից ու բոլոր ծանոթ մարդկանցից հեռու գնանք: Երեք-չորս օր լիարժեք միասին անցկացնենք: Վերջում կհասկանանք՝ մինչև ուր ենք պատրաստ հասնել, համապատասխանո՞ւմ ենք միմյանց, պատրա՞ստ ենք սեքսից բացի հարաբերություն կառուցել: Ի՞նչ կարծիքի ես: Ծախսն էլ կկիսենք:

Ու մտան թատրոն: Երբ դուրս եկան, նավահանգստով զբոսնելու ընթացքում Արանսասուն ապակե թելի մասին խոսեց: Իր վախը բացահայտեց: Երեսունյոթ տարեկանում իրեն թառամած ծաղիկ էր զգում: Ի՞նչ կարող էր Շավիերին առաջարկել: Սեր, իհարկե: Դա՝ հաստատ: Բայց եթե Շավիերն ուրիշ ցանկություններ ուներ (երեխաներ ունենալու, օրինակ), դժվար թե հետը երջանիկ լիներ: Այդ վախը դառնացնում էր նրա օրերը՝ ուղեկցելով մինչև Հռոմ, հետո նորից հայտնվեց, երբ ներքև էին իջել: Որտե՞ղ: Տիբր գետափի զբոսուղի: Երկուսով նստել էին պատի ելուստին,

որը երկարուկ նստարանի էր նման: Նոր էին ճաշել: Արևը նրանց դեմքին էր խփում: Հանդարտ հոսում էր պղտոր գետը: Գետնից գտած մի քար Շավիերին տարաբախտ-երեխայական մի գաղափար հուշեց:

— Եթե հաջողեցնեմ քարը մյուս ափ գցել, ուրեմն ոչ մի բան և ոչ ոք մեզ չի բաժանի:

— Վե՛րջ տուր, խնդրում եմ: Պետք չէ ճակատագրի հետ խաղալ:

— Կասկածո՞ւմ ես, որ կկարողանամ:

— Ո՛չ, բայց գետը բավական լայն է:

— Լա՛վ, դու է՛լ:

Բաճկոնը հանեց: Կուրծքն ու թիկունքը լայն են, բայց արդեն երիտասարդ չէ: Չի հասկանո՞ւմ: Մ'նացած հարցերում՝ այդքան ողջամիտ, տրամաբանող մի բժիշկ, հիմա իր էգին տպավորելու ցանկություն ունեցող մի արու է դարձել: Նա թափ հավաքեց ու մեծ ուժով նետեց քարը: Այն սուրաց հետմիջօրեի պարզ օդի միջով: Երկուսով հետևում էին դրա հետագծին: Քարը՝ հազիվ երևացող, հեռացող մի սև կետ, սկսեց իջնել ու, բը՛լթ, ընկավ ջուրը:

— Լա՛վ, ընդամենը խաղ էր:

Այնտեղից գնացին՝ Սիքստինյան կապելլան դիտելու:

60

Բժիշկներին՝ բժշկուհիներ

Չատոն արդեն սիեստայի էր պատրաստվում: Ասաց, որ հենց նոր է ծանոթացել կնոջ հետ, և եզրակացությունների համար շուտ է, բայց Բիչո՛րին, խիստ ու կտրական, գոգնոցը դեռ վրան, պնդում էր՝ բժիշկներին՝ բժշկուհիներ, բուժքույրերին՝ բուժակներ: Հետո, արհամարհական ծռելով շուրթն ու հեգնական կրկնելով քիչ առաջ գնացած կնոջ վզի շարժումը, ասաց.

— Զույգի՜կը: Աստծո՜ սիրույն, նրանից երեք տարով մեծ է: Ի՞նչ է, մանչուկը երկրորդ մոր կարի՞ք ունի:

— Լա՜վ, դու էլ:

— Իրավացի՞ եմ, թե՞ ոչ:

— Տղադ չլսի, թե չէ կիմանաս:

— Քեզ հետ եմ խոսում: Պարտադիր չէ, որ Շավիերն իմանա:

Մի քանի րոպե առաջ էին դուրս եկել ձեռք ձեռքի տված: Իրենց տարիքո՜ւմ: Երջանիկ զույգիկը: Ավանի ժողովուրդը ծիծաղից կմեռնի: Ամպոտ կիրակի էր: «Ռեալ»-ը ժամը հինգին էր խաղալու: Խաղի ավարտին Շավիերի ընկերուհին պիտի գնար-որսար նրան՝ շարունակելով թելից քաշել, մինչև որ կարթն ընկած ձուկն իր կողովի մեջ հայտնվեր:

Բիչո՛րին լայն բացեց պատշգամբի դուռը:

— Հնարավոր չէ շնչել: Միայն չասես, որ չափը չէր անցել: Օծանելիքի հոտը նույնիսկ կոնսոմեին կպավ:

— Դե՛, ես բան չզգացի: Բայց չես կարող ասել, որ գեղեցիկ կին չէր:

— Դու ի՞նչ գիտես: Գնա՛, անկողին մտի՛ր, բեռնատարների մասին երազներ տե՛ս:

Հանգիստ կարող էին չորսով ռեստորանում հանդիպել: Չատոն սկզբից ևեթ առաջարկեց: Թեև չէր ուզում խառնվել իրեն չվերաբերող գործերին: Շավիերը, որը «չեզոք տարածքում» հանդիպելու կողմնակից էր, հետո նույն առաջարկն արեց (Արանսասուն էր գլխի գցել. քանի ասում ենք, ամեն ինչ ասենք): Թե՛ հայրը և թե՛ տղան պատրաստ էին ծախսը հոգալ, բայց Բիչո՛րին ասաց, որ խոսք նույնիսկ չի կարող լինել: Պատճա՞ռը: Դե՛,

իր կարծիքով, ռեստորանում բոլորը իրենց ոչ հատուկ ձևով են պահում, ու որ իրար լավ ճանաչելու համար տնից լավ տեղ չկա:

Չատոն, թե.

— Նախընտրում ես ամբողջ առավոտ պատրաստե՞լ:

— Եվ ի՞նչ: Երբ ինձ տարար գյուղ՝ ընտանիքիդ հետ ծանոթացնելու, մայրդ էլ էր ճաշ պատրաստել: Սիսեռով ապուր ու տապակած հավ: Մինչև հիմա հիշում եմ: Ու վերջում նրան օգնեցի սեղանը հավաքել: Մինչդեռ այս ազնվափայլ տիկինը նույնիսկ չառաջարկեց օգնել ինձ: Շատ նրբաճաշակ, շպարված և այլն, բայց տեսնում էր, որ ես ափսեներն եմ վերցնում, ու մատը չշարժեց: Է՞ս է կրթությունը:

Մեկն անց կես էին նրանց սպասում: Բիչո՛րին քառորդ ժամ առաջ Չատոյին ուղարկել էր՝ հետևելու (բայց աննկատ, եղա՞վ) պատշգամբի դռան մոտ խիստ ցուցումներով: Առաջինը՝ մտքովդ չանցնի՝ վարագույրներին կպչես. նոր եմ լվացել. երկրորդը՝ հենց տեսնես, որ թեքվեցին դեպի մեր փողոց, ինձ կասես. ոչ մի դեպքում չեմ ուզում այդ կնոջը գոգնոցով դիմավորել:

— Այդ կնո՞ջը: Արանսասու է անունը:

— Ինձ համար մեկ է՝ անունն ինչ է:

Բացի այդ՝ ուզում էր նրան ուսումնասիրել՝ նախքան միմյանց ներկայացված լինելը: Հա՛, մեկ էլ երրորդ կետը. սեղանին դրածները համտես չանես՝ մայոնեզով ծնեբեկ, Խաբուգոյի ապուխտ, ձողաձուկ, խեցգետին, ծովախեցգետին:

— Հաշվով եմ դրել:

Չատոն ժամապահի դերում (Աստվա՜ծ, ինձ համբերություն տո՛ւր) հետևում էր կիրակնօրյա՝ գրեթե ամայի փողոցին: Պայմանավորված ժամին ճշտապահ, ձեռք ձեռքի տված նրանք հայտնվեցին իր տեսադաշտում՝ կնոջ ձեռքին մի ծաղկեփունջ: Որքա՜ն բարձրահասակ է, որքա՜ն գեղեցիկ, որքա՜ն էլեգանտ: Տպավորված մի քանի վայրկյան ըմբոշխնեց այդ պատկերը, նախքան Բիչո՛րիին տեղեկացնելը, որը նյարդային քայլերով եկավ խոհանոցից՝ արագ-արագ հանելով գոգնոցը:

— Կոշիկը հագուստին չի բռնում:

— Քանդակի պես գեղեցիկ է այս կինը:

— Վարագույրին մի՛ դիպչիր, խնդրո՜ւմ եմ:

— Ի՜նչ բարձրահասակ է: Համարյա մեր տղայի հասակին է:

— Մազերը բնական սև չեն: Իսկ կրծքազարդը հեռվից յուղի բիծ է հիշեցնում: Ես կասեի, որ այս տիկինն առանձնապես ճաշակ չունի:

Արդեն պաշտոնապես ներկայացված զույգին հրաժեշտ տալուց հետո երեք հոգու փոխարեն կերած-խմած Չատոն սիեստա արե՞ց: Դե՛, գոնե փորձեց: Բայց Բիչո՛րին, խոհանոցի գործերի մեջ, չէր կարողանում հանդարտվել: Մենախոսող, ցավ զգացող մի մայր օճառափրփուրի հետ էր անկեղծանում: Իր զավակն այդ կնոջ՝ պարզ բուժքրո՛ջ հետ: Անբարյացակամ իր կարծիքն արտահայտեց կեղտոտ ամանների լսարանին: Սեղանի շորին մի բան հայտնեց, ծորակին՝ մեկ ուրիշ: Պատասխան չէր ստանում, չէր հասնում իր ուզածին, որ իրեն հասկանան: Մարդկային ականջի կարիք ուներ ամեն գնով: Տանը այդ պահին միայն Չատոյի ականջը կար: Ուստի ցավելով նրա մարսողության ու հանգստի ժամի համար՝ մտավ, դա մտնե՞լ է կոչվում, մի խոսքով՝ ներխուժեց սենյակ: Խոհանոցից արդեն ինքն իր հետ խոսելով էր գալիս՝ ձեռքերը գոգնոցին չորացնելով: Խոսքը չընդհատելով՝ նստեց մահճակալի եզրին: Ամուսնուն թափ տվեց:

— Ո՞նց ես կարողանում այդքան հանգիստ քնել:

Մ՞նա՜ս բարով, սիեստա՜: Քնատ, լեզուն հազիվ շարժելով՝ մռթմռթաց. ի՞նչ կա, ի՞նչ է պատահել: Բիչո՛րին չպատասխանեց: Երկխոսելու տրամադիր չէր: Ոչ թե խոսակից էր փնտրում, այլ միայն իրեն լսող:

— Չեմ պատկերացնում Շավիերի երջանկությունն այդ կնոջ հետ: Կարող է ուզածդ առաքինությունն ունենալ: Թեև իրականում նման բան չեմ տեսնում: Ոտքից գլուխ մոլագարի մեկն է: Ծովամթերքը չփորձեց: Ապուխտը՝ նույնպես: Մի ամբողջ առավոտ գոճի եմ խորովել, Պամպլո՛նա էի հասել՝ դա գնելու համար, ու պարզվում է, որ բուսակեր է: Դե՛, լա՛վ էլի:

Բիչո՛րիի աչքից չվրիպեց իր հյուրի պահվածքը: Ի՞նչն էր խնդիրը: Դե՛, մտածելով, որ ոչ ոք իրեն չի տեսնում, ներկած շուրթերը մոտեցրեց Շավիերի ականջին ու արագ մի քանի բան ասաց. թախանձագին մի խընդրա՞նք էր, թե՞ հրաման: Ու այդ միամիտը, որը ենթարկվում է իր ստորադասին, մի քանի վայրկյան բան չէր ասում ու հետո ձևացնելով, թե դա իր սեփական խնդրանքն է, դիմեց մորը.

— Ama, ոչի՞նչ, եթե գոճու գլուխը սեղանից վերցնենք:

Բոլորի հայացքը սևեռվեց քիչ առաջ սեղանի մեջտեղը դրված սկուտեղին, որի վրա խաղաղ տեղավորված էր հյութալի, լավ կարմրեցրած կենդանիկը: Կես գոճին պատվիրել էին Պամպլոնայի մսի խանութում:

Լավ թանկ էր նստել՝ գումարած Բիչո՛րիի՝ Պամպլոնա ավտոբուսով գնալ-գալը: Ու այդ ամենը՝ հյուրին բարձրակարգ որակի ուտեստով ընդունելու համար:

Նախկինում Խոսեչոյից էր գնում գոժին: Իրականում ամեն ինչն էր նրա մոտից գնում: Վստահություն կար, ընկերություն: Հիմա միմյանց չեն էլ բարևում:

— Ինչո՞ւ վերցնեմ:

— Դե՛, գիտես, Արանսասուն սովոր չէ:

Պաշտպանում էր նրան. պարզ է: Իսկ նա մեզ ընկալում է որպես նախնադարյան մսակերների: Շավիերի միջամտությունը Բիչո՛րիի համար դանակահարության պես մի բան էր:

— Դու պատկերացնո՞ւմ ես մեր տղային նման մարդու հետ ապրելիս: Մեղա՛յ Աստծո: Այս տանը ամբողջ կյանքում միս ու ձուկ ենք կերել: Հետո էլ այդ բուսակերները տարօրինակ մարդիկ են՝ մոլուցքներով: Է՞դ ինչ խոսելու ձև է: Ասես պրոֆեսոր լիներ. ամեն ինչին բացատրություն էր տալիս: Հասարակ մի բուժքո՛յր: Չեմ կարծում, որ լավ լինի: Սա ճանկել է հիմարիկ բժշկին, որը շատ բան գիտի վիրահատությունների մասին, բայց կնոջ հետ կյանքը չի հասկանում ու որոշել է, որ ա՛յ այս մեկն իր համար է: Բաժանված կնիկ, որը սոված շան պես խելոք է: Արդեն օգտագործված մի կին, որն ինչ ասես տեսել է: Ծիտիկի պես է ուտում: Թխվածքին չկպավ էլ: Տեսե՛ք-տեսե՛ք. կցանկանար համտեսել, բայց այս առավոտ արդեն կարբոհիդրատների օրական իր չափաբաժինը կերել է: Մի այդ ձևականին տեսե՛ք: Դեմքին ուշադրություն դարձրի՞ր, երբ ասացի, որ առավոտ ժամը յոթին եմ վեր կացել, որ պատրաստեմ խմորեղենը: Նրան ամենևին հետաքրքիր չէինք: Նա իր նպատակն ունի. ճանկը գցել սեփական տուն ու լավ աշխատավարձ ունեցող մի վիրաբույժի: Բա տեսա՞ր, երբ հարցրի՝ չէ՞ր ցանկանա տուփով մի կտոր խմորեղեն տանել հետը: Ո՛չ, շնորհակալությո՛ւն, մի՛ անհանգստացեք: Ուզում էի դեմքին ծեփել:

— Երբ ճառդ ավարտես, ասա՛՝ իմանամ: Գուցե դեռ մի քիչ կարողանամ քնել:

— Իսկ Հռոմի այդ պատմությո՛ւնը: Վա՛տ հոտ է գալիս: Ես չեմ հավատում, որ ծախսերը կիսել են: Շավիերին գիտեմ: Վիզս կկտրեմ, թե նա չի վճարել ամբողջը:

Տարիներ անց՝ գերեզմանոց այցելելիս, շիրիմի եզրին նստած ճիշտ այն-

պես, ինչպես այն հեռավոր օրը մահճակալի եզրին, Բիչո՛րին շարունակում էր մտորել այդ հարցի շուրջ:

— Դե՛, իհարկե, կուզեի, որ Շավիերը կին ունենար: Բայց նորմալ ամուսնացած, ոչ թե առաջինի հետ, որը նրան ձևական կմեծարի ու կժըպտա, ինչպես այն մեկը, որ մեր տուն էր բերել էն կիրակի օրը. հիշո՞ւմ ես: Մոռացել եմ՝ անունն ինչ էր: Խորամանկ աղվեսի մեկն էր: Հենց տեսա, իր նպատակների հոտն առա: Դու լավ գիտես, որ իմ աչքից բան չի վրիպի: Ու հաստատ ավելի լավ է՝ միայնակ մնա, քան նրան դժբախտացնեն:

61

Հաճելի մանրուք

Այլայլված դեմք, վճռական քայլվածք: Հենց տեսավ միջանցքով իրեն մոտեցող կնոջը, հասկացավ, որ գալիս է՝ զայրույթը վրան թափելու: Քիչ առաջ այրիացած կինն էր. մտել էր հիվանդասենյակ և հայտնաբերել դատարկ մահճակալը, որի վրա երեկ իր ամուսինն էր պառկած, հարցրել էր բուժքրոջը, որը, երևի թե առանց պատշաճ հարգանքի, նրան հայտնել էր բոթը:

Հիմա եկել է՝ պատասխանատվության կանչելու: Շավիերի կարծիքով սովորաբար հենց կանա՛յք չեն համակերպվում մահվան բնական փաստի հետ, մեղավոր են փնտրում՝ մարդասպա՞ն, ու խնդրեմ, ահա և նա՝ սպիտակ խալաթով հերթապահ բժիշկն իր տրամադրության տակ՝ վիրավորանքների, կշտամբանքների, մեղադրանքների համար:

Նույն իրավիճակում հայտնված տղամարդկանց հետ ավելի հեշտ է: Նրանք սովորաբար ներս են գցում, իսկ կանայք՝ դուրս (գուցե շատ երիտասարդները՝ ոչ): Սա է հուշում քսան տարվա իր մասնագիտական փորձառությունը: Ժամանակ առ ժամանակ որևէ տիկին հունից դուրս է գալիս իր ներկայությամբ: Ոչ միայն առանձնապես կրթություն, այլև ինքնարտահայտվելու արգելակներ չունեցող, տարիքով կին էր: Շավիերը նմանատիպ պահվածքին դիմակայելու տարբեր առիթներ էր ունեցել: Այդ իրավիճակները հանգիստ էր կառավարում:

Ութսունի մոտ այս կինը չափն անցել էր: Ճիչերի ու հեկեկոցների արանքում որոշ վիրավորական բառեր էր բերանից թռցրել, որոնք Շավիերին ներքին ցավ էին պատճառել: Համոզված, որ բժիշկը չարությա՞ն, անփութությա՞ն պատճառով ամեն ինչ չէ, որ արել է՝ հիվանդին փրկելու համար, նրան նետել էր՝ «դու»-ով, այլայլված դեմքով, բղավոցներով, թե.

— Եթե հայրդ լիներ ամուսնուս տեղը, հաստատ չէիր թողնի, որ մեռնի:

Սպառնալով ասաց, որ բողոք կներկայացնի: Իսկ Շավիերը քարացել էր: Հոր մասին ակնարկը չլինի՞ հանգուցյալի տարիքի պատճառով էր: Տիկինը թևերն է թափահարում: Բերանը լայն է բացում: Մի քանի ատամ չունի: Շավիերը անհողդողդ լսում է, թե ինչպես է տիկինը պատմում, որ Լոգ-

րոնոյոյի հիվանդանոցում նրան բուժել էին... Բժշկական եզրույթը չմտաբերելով՝ ավարտում է ժողովրդական լեզվով՝ աղիքներն էին ծակվել։

Դեմքի ոչ մի մկան չշարժելով՝ Շավիերը նայում է այդ լացակումած, անմիտ, կատաղած աչքերի մեջ։ Որոշ ժամանակ անց, երբ տիկինը արդեն մի փոքր խաղաղվել էր, Շավիերը սառը հարգանքով նրան հարցրեց.

— Դուք իմ հորը ճանաչո՞ւմ եք։

— Ո՛չ։ Կարիք էլ չունեմ։ Բայց հաստատ, եթե հիվանդը հայրդ լիներ, դու ավելի շատ ջանք կգործադրեիր։

Հենց դա էր ուզում իմանալ։ Նրան ճանաչո՞ւմ էր, տեղյա՞կ էր իր հոր հետ կատարվածի մասին։ Շավիերին այլևս չէր հետաքրքրում այդ ծեր կինը։ Նույնիսկ ցավակցություն չհայտնեց։ Քաղաքավարի ձևով նրան ասաց, թե կներեք, ես պետք է մյուս հիվանդների մոտ գնամ։ Քիչ անց, լրիվ թևաթափ, նստած էր իր գրասենյակի սեղանի մոտ։ Կոնյակ է լցնում պլաստիկ բաժակի մեջ։ Մեկ կումով խմում է։ Նորից է բաժակը լցնում՝ հայացքը հոր լուսանկարից չկտրելով։ Նայում է նրա խիստ ունքերին, նրա ականջներին, որոնք, բարեբախտաբար, ո՛չ նա է ժառանգել, ո՛չ էլ քույրը։ Շավիերի ականջներում դեռ արձագանքում է ճղճղան տիկնոջ ձայնը։ Չէիր թողնի, որ մեռներ։ Aita, թողել եմ՝ մեռնե՞ս։ Ամեն դեպքում, դեմը չառար։ Դեմը չառար, Շավիե՛ր։ Ո՞վ է ասում։ Նրա հոր լուրջ աչքերն են ասում։ Ու այդ պահից ի վեր դու չես համարձակվել, ամաչում էիր, քեզ անարժան էիր համարում փորձել մի փոքր երջանկություն պոկել կյանքից։

Երկրորդ բաժակից հետո հայացքը դեպի սարդոստայնը բարձրացրեց՝ այնտեղ՝ վերևում փորձելով անցյալի լավ հիշողություններ արթնացնել. չէ՞ որ այդպիսի պահեր եղել են, իհարկե, եղել են ու ոչ միայն մանկության ընթացքում, երբ ավելի հեշտ է պատրանքներ փայփայելը։ Իսկ հիմա ասես զզվանք զգա ուրախության հանդեպ։

Քանի՛ անգամ է գայթակղություն ունեցել, որ մաքրության ծառայության աշխատակիցներին խնդրի՝ հանկարծ չպոկեն-մաքրեն սարդոստայնը։ Բանն այն է, որ միանգամից իրեն լիքը հիշողություններից կզրկեն։ Առանց շատ հեռու գնալու՝ նրան, օրինակ, կզրկեին այն բանից, որ երրորդ կումից հետո սարդոստայնը նրան անդրադարձնի Արանսասուի պատկերը։ Ե՞րբ, որտե՞ղ։ Եթե ցանկանար, նույնիսկ ամսաթիվը կարող էր ասել։ Իր կյանքի բոլոր իրադարձությունները տեղի են ունեցել հոր սպանությունից առաջ կամ հետո՝ որոշակի ժամանակային հեռավորության վրա։ Ուսումն

ավարտել է դրանից յոթ տարի առաջ, դրանից ինը տարի անց Մյունխե-նում մասնակցել է վիրաբույժ-սրտաբանների համահավաքին: Ճիշտ, ինչ-պես բոլոր պատմական իրադարձություններն են հարաբերվում Քրիստո-սի ծննդյան թվականի հետ: Ու Արանսասուն հազիվ մի քանի ժամ առաջ էր այդ զրոյական կետից, նաև մի քիչ՝ դրանից հետո:

Թե՛ տեղն է հիշում, թե՛ ժամը: Ավենիդայի վրա գտնվող «Գավիրիա» սրճարանում՝ մայրամուտին: Ամառ էր: Մի տարի ու մի քանի ամիս՝ նախ-քան դեպքը: Բայց դրա մասին այն ժամանակ չէր կարող իմանալ իրենցից և ոչ մեկը: Բացօթյա մասում բոլոր սեղանիկները զբաղեցված էին, ուստի որոշեցին ներսում նստել:

Եվս մի կում կոնյակ է ըմպում, որի պատճառով տուն գնալիս ստիպված է լինելու տաքսի վերցնել: Անհասկանալի է, թե ինչու է վերհիշում այդքան պարզունակ մի դրվագ, բայց չես կարող պահանջել, որ սարդոստայնն ի՛ր ավարն ընտրի: Ռռնում է, եթե, իհարկե, բռնում է այն, ինչ իր վրա ազ-դեցություն է ունենում, նույնիսկ եթե այս հուշի պես աննշան մի բան լինի՝ հաճելի մի մանրուք, սկսվող սիրահարվածության մի խաղ:

Շավիերը՝ դեռ ինտերնատուրա անցնող բժիշկ, նստած է այնտեղ, իսկ նա՝ բուժքույրը, դիմացն է նստած: Նրանց առաջին ժամադրությունը չէ: Երկու անգամ միասին պառկել են: Վերջին անգամ՝ երեկ գիշերը, բայց դա ի՞նչ է նշանակում: Նայում է կնոջը՝ ուսումնասիրելով, չի կարողանում իրեն զսպել: Արանսասուն արդեն որոշ ժամանակ ընդգծված լարվածությամբ անդրադառնում է իր անձնական կյանքի դրվագներին: Ի՞նչ է ասում: Իր ամուսնական շրջանի մասին մի բան: Շավիերը համարյա չի լսում: Հիա-ցած նայում է նրա շուրթերին: Ու ինչ-որ մի պահ իր համար արդեն միև-նույն է՝ կինը նկատո՞ւմ է, թե՞ ոչ: Արանսասուի այդ շուրթերը, երբ շարժվում են խոսելիս կամ երբ նրբագեղորեն՝ կոկետորե՞ն, գլանակն իրենց մեջ են առնում: Թարմ, նուրբ, գեղեցիկ եզրագծված շուրթերը շարժվում են բնա-կան ձևով և «ու» տառն արտասանելիս ասես արագ համբույր գծագրեն օդում: Կախարդական շուրթեր, որոնք պատրաստ էր հենց հիմա լեզվով դանդաղ շոյել: Արանսասուի գրավիչ դեմքին բաբախող այդ շուրթերը տանջում են իրեն: Ու ես, որ աշխատում եմ մարմինների հետ և ստիպված եմ ջանք գործադրել՝ դրանց մեջ միայն օրգաններ ու արյան անոթներ ու մկանային հյուսվածք ու ոսկորներ չտեսնելու համար, հիմա զգում եմ, որ անդիմադրելի էրոտիկ իմպուլսի եմ տրվում:

— Ի՞նչ ես նայում:

— Ենթադրում եմ՝ քեզ հաճախ են ասում, որ շատ գեղեցիկ ես:

— Այսինքն՝ ինձ չէիր լսում:

— Անհնար է:

— Ես առաջվանը չեմ: Արդեն մեծ եմ:

— Բնությունը քո հանդեպ առատաձեռն է եղել:

— Լա՛վ, Շավիե՛ր, հիմա կկարմրեմ:

Այդ ժամանակ Շավիերն իր ձեռքը, ափը վեր, դրեց սեղանին: Ասես մուրացկանի ժեստ լիներ: Շիմպանզեները նույնպես բաց ձեռքը երկարում են դեպի իրենց ցեղակիցները՝ ի նշան հաշտեցման կամ էլ, չգիտեմ, ի նշան (մի տեղ կարդացել եմ) հյուրընկալության ու խաղաղասիրության: Ու Արանսասուն Շավիերի ափի մեջ դրեց իր փոքրիկ մատիկները:

Սարդոստայնը այնտեղ՝ վերևում, շատ հստակ էր պահպանել այդ հեռավոր հուշը: Դիպչելով Արանսասուի ձեռքին՝ զգաց դրա մեջ կուտակված մարդկային ջերմությունը: Գոլ, փափուկ մի ձեռք: Այն պատկանում է մի կնոջ, որը հիասթափություններ է ապրել ու հաստատ տառապել է, որը շատ է աշխատել, որը վերցրել-տարել-բարձրացրել է ու որը հաճույքի հրաշալի գործիք է եղել ու կա:

Տեսնում է ձեռքը՝ նուրբ մաշկով, բարակ ու ինքնավստահ մատներով ու կարմիր լաքով եղունգներով: Հանկարծ իր ափում ամբողջական մի անձնավորություն է զգում, որի հպումը նրան քնքշության վիթխարի մի ալիք է խոստանում: Վա՛յ, Աստվա՛ծ, այս կինը մինչև ուղնուծուծը սիրահարված է:

62

Տան խուզարկությունը

Չորսն էլ քնած էին, երբ գիշերը խառնաշփոթ սկսվեց: Առնվազն վեց հոգի էին, ոմանք՝ դիմակագլխարկներով, ճիչեր արձակելով (իբր ի՞նչ)՝ ներխուժեցին բնակարան: Շքամուտքում է՛լ ավելի շատ էին: Մյուսներն էլ փողոցն էին փակել: Գվարդիականների մի բազմություն: Դը՛մփ-դը՛մփ, բա՛ց արեք: Միրենն անկողնում հարցրեց Խոշիանին.

— Դո՞ւ ես գնում, թե՞ ես:

— Գնա՛, տե՛ս՝ ո՞վ է:

— Էլ ո՞վ պիտի լինի՝ ոստիկանությունը:

Սկզբում զանգը տվեցին: Հետո հարվածներ տեղացին դռանը: Այդ ժամանակ արդեն բոլոր հարևաններն արթնացել էին: Միրենը, վառելով անկողնամերձ լապտերը, ոտքերը հապճեպ հողաթափերի մեջ մտցրեց, խալաթը գցեց գիշերանոցի վրա: Խոշիանին ասաց.

— Խոշե Մարիի պատճառով է:

Արդեն բացում էր, երբ դրսից դուռը հրեցին: Տեսավ զենքի փողը: Տեսավ երկու բարձրաճիտք կոշիկ դռան առջև: Հերի՛ք է, մի կողմ քաշվե՛ք: Եկել էին՝ խուզարկելու: Ու txakurra-ներն այնքան արագ ցրվեցին բնակարանով մեկ, որ նա չհասկացավ՝ քանիսն էին:

Չորսին էլ հավաքեցին ճաշասենյակում: Գորկան՝ վարտիքով ու ոտաբոբիկ: Արանչան հասցրել էր վրան հագուստ գցել, բայց ոտքերը մերկ էին: Խոշիանն էլ՝ պիժամայով, վախեցած, տաբատի վրա՝ մեզի հետք:

Դատավորի որոշո՞ւմ: Նրանց մտքով չանցավ պահանջել, որ ցույց տան: Ի՞նչ իմանային: Խոշե Մարիից էլ ոչ ոք լուր չուներ, բացի (հետո պարզվեց) Գորկայից, որը տնեցիներին ոչինչ չէր պատմել: Ամեն դեպքում, գվարդիականները հետները դատական ակտ ունեին: Այն մարդու ձեռքին էր, որը նրանց ասաց, որ վաղ թե ուշ բռնելու են ահաբեկչին, ու այն ժամանակ նա իսկապես իր հալը կտեսնի: Հրամանը գցելով գետնին՝ ասաց՝ կարող եք դրանով քթներդ սրբել: Ու հարցրեց՝ ո՞րն է Խոշե Մարիի սենյակը:

— Տղաս այստեղ չի ապրում:

— Տղադ այս տանն է գրանցված, ու գիտենք, որ զենք եք պահում:

— Նա այստեղ չի ապրում:

Դե՛, ասե՛ք, որն է ահաբեկչի սենյակը, կամ ամբողջ բնակարանը տակնուվրա կանենք: Գորկային հարցրին՝ ո՞վ է, քանի՞ տարեկան է: Միրենը մտածեց, որ եթե երկու տարով ավելի մեծ լիներ, կտանեին: Գորկան ներկայացավ: Շատ երիտասարդ էր: Ամաչելով հարցրեց՝ կարո՞ղ է հագնվել:

— Բոլորդ մնում եք ձեր տեղում:

Քիչ անց մեկ ուրիշ txakurra նրանց հրամայեց, որ չորսն էլ դուրս գան աստիճանահարթակ այն տեսքով, որով վեր էին կացել՝ ասելով, որ ոչ մի դարակի կամ որևէ իրի հանկարծ չդիպչեն: Ու հրեց Գորկային, որը նրանց ուզած արագությամբ չէր շարժվում:

Ընտանիքը բնակարանից դուրս եկավ: Քիչ անց հայտնվեց դատարանի քնատ քարտուղարուհին, որը նրանց այնպես բարևեց, ասես ամբողջ կյանքում իրար ճանաչել էին: Նրանց հսկում էին երկու գվարդիականներ, մեկը՝ դեպի առաջին հարկ տանող աստիճանների հատվածում, մյուսը՝ շքամուտքի դռանը հենված:

Միրենը, զայրույթը զսպելով, դեմքի լարված արտահայտությամբ Գորկային իր խալաթն առաջարկեց, թե կմրսես, բայց տղան՝ տխուր ու լուռ, չվերցրեց:

Վայրկյանը մեկ լույսն անջատվում էր: Դռան կողքը դիրքավորված գվարդիականն անընդհատ անջատում-միացնում էր լույսի կոճակը: Դիմացի հարևանների դիտանցքը խաչաձև փակել էին կպչուն ժապավենով: Իհարկե, հարևաններն ամեն դեպքում մի բան տեսել էին, քանի որ ինչ-որ պահ նրանցից մեկը դուռը զգուշությամբ ու կամացուկ բացել էր այնքան, որ հնարավոր լիներ, ձեռքը դուրս հանելով, աստիճանահարթակին երկու ծածկոց գցել:

Խոշիանը դողացնում էր: Գորկան՝ նույնպես: Հայր ու տղա վերցրին ծածկոցները: Արանչան ասաց, որ չի մրսում: Միրենին հարցնել պետք չէր. բարկություն-ատելությունը նրան ջերմացնում էր: Լույս-մութ: Լույս-մութ: Ու այդպես՝ երկար ժամանակ: Բնակարանի ներսից պարբերաբար աղմուկ էր լսվում:

— Տունը քարուքանդ են անելու:

Արանչան գվարդիականներին հարցրեց՝ կարելի՞ է նստել, ու նրանցից մեկը, ուսերը թոթվելով, ասաց, որ իր հոգը չէ՝ կնստեն, թե ոչ: Այնպես որ, աղջիկը նստեց վերին աստիճանին, ավելի ուշ նրան միացավ Գորկան՝

հարևանների տված ծածկոցով փաթաթված: Խոշիանը երկար ժամանակ անց նստեց հատակին: Անընդհատ ժամացույցին էր նայում, որովհետև վեցին պիտի աշխատանքի գնար: Միայն Միրենը ոտքի վրա մնաց՝ ձիգ, արժանապատիվ, ինքն իրեն ուտելով:

Հանկարծ փողոցից ձայներ եկան: Ավանի երիտասարդներն էին, որ վեր էին թռել անկողիններից ու անկյուններից մեկում կուտակված՝ գիշերվա կեսին կարգախոսներ էին բղավում: Ոստիկա՛ն, մարդասպա՛ն, Txakurrak kanpora* և այլ բաներ՝ իրենց սովորական «երգացանկից»:

Խուզարկումը մոտ չորս ժամ տևեց: Նույնիսկ շուն բերեցին, մտցրին բնակարան՝ ըստ Միրենի՝ մեր իրերը հոտոտելու ու, թե կուզես, տունը դրա մեզով ու կղանքով կեղտոտելու համար: Նրանց գնալուց հետո բնակարանն այնպիսի տեսք ուներ, ասես միջով փոթորիկ էր անցել: Ու հանուն ինչի՞ էր այդ ամենը, եթե Խոշե Մարիի նախկին սենյակում նրան պատկանող գրեթե բան չէր մնացել: Ամենաշատը Գորկան էր տուժել: Գվարդիականները տարել էին նրա դպրոցական պայուսակը, ձեռագիր բանաստեղծություններով տետրը, լուսանկարներով ալբոմն ու նմանատիպ իրեր: Արանչան հայտնաբերեց, որ իր մոտից մի տասներկու տեսաֆիլմ են տարել:

Օրը մռայլ բացվեց: Խոշիանը հեծանվով գնաց ձուլարան: Ո՛չ նախաճաշել էր, ո՛չ էլ կարգին լվացվել, բայց, միևնույն է, ուշանալու էր: Արանչան, նախքան աշխատանքի գնալը, հասցրեց իր սենյակը կարգի բերել: Գանգատվեց, որ իր օծանելիքի (Գիլյերմոյի նվերն էր) շիշն են շրջել: Կոմոդի դարակի բռնակն էին պոկել: Գորկայի սենյակն է՛լ ավելի անմխիթար վիճակում էր: Հիսո՜ւս քեզ Քրիստոս: Մայրն ասաց, որ գնա ikastola, որ նրա սենյակով ինքը կզբաղվի:

Ամբողջ առավոտ տարբեր իրեր էր հավաքում պոլիէթիլենի տոպրակների մեջ՝ աղբը նետելու: Գետնին նետված էին նաև նոր իրեր: Գուլպաներ, ներքնազգեստ, մի խոսքով՝ հագուստ ու իրեր, որոնց, իր կարծիքով, կպել էին գվարդիականներն ու շան դունչը: Ու թեև իր, ամուսնու ու երեխաների իրերն էին, զզվում էր դրանց կպչելուց: Երկու պատառաքաղով էր վերցնում, ուրիշ բան այդ րոպեին մտքին չեկավ: Ամենաարժեքավորները դրեց լվացքի մեքենայի մեջ, իսկ որը հագուստ չէր, թրջոց՝ խոհա-

* Txakurrak kanpora (բասկ.), Շներ, դուրս կորեք:

նոցի լվացարանի մեջ: Իր սեփական տանն էր, սակայն նույնիսկ շնչելն էր զզվելի: Ուստի բացեց պատուհանները, որ շատ օդ գա: Հատակը ժավելաջրով լվաց, խոնավ լաթերով անցավ կահույքի վրայով, մաքրեց-ախտահանեց դռների բռնակները: Քիչ անց նորից էր մաքրում արդեն մաքրածը, որովհետև հոտ էր առնում, դե՛ եսիմ, txakurra-ների կեղտոտ հոգիների հոտը:

Առավոտը տասին դիմացի հարևանի դուռը թակեց: Նրանց դիտանցքը դեռ փակած էր կպչուն ժապավենով: Հարցրին՝ ով է:

— Ես եմ:

Դուռը բացեցին: Ու Միրենը շնորհակալությամբ վերադարձրեց ծածկոցները: Նրան ներս հրավիրեցին: Համաձայնեց: Ասաց, որ չի ուզում մենակ մնալ իր բռնաբարված տանը:

— Ա՛յ կնիկ, ինչե՞ր ես ասում:

Հարևաններն իրենց տպավորությունները նկարագրեցին, աղմուկ-աղաղակը, վախը: Ամբողջ գիշեր չէին քնել: Միրենին սուրճ հյուրասիրեցին: Թխվածքի տուփ բացեցին: Նա էլ իր տեսածը պատմեց: Որքա՜ն անհանգստություն՝ Խոշե Մարիի պատճառով: Նրա մասին ոչինչ չգիտեին, միայն այն, որ ավանում չէ: Ժամը 11-ին ասաց, որ պիտի գնա, ու գնաց: Տուն միայն մի պահ մտավ: Հինգ րոպե էլ չմնաց: Ուզում էր Խոսեչոյի կամ Խուանիի հետ խոսել, հարցնել՝ նրանց տունն է՞լ էին խուզարկել: Դուրս եկավ տնից՝ պատուհանները կրնկի վրա բաց թողնելով: Եթե պիտի գողանան, թող գողանան:

Քաղաքական նյութեր

Մսի խանութում Խուանիին բռնեցրեց այն պահին, երբ նա մենակ էր սպասարկում հաճախորդներին, ու հարցրեց մարդկանց գլուխների վրայով.

— Խոսեչոն ո՞ւր է:

— Բժշկի է:

— Լա՛վ, թե կուզես, ավելի ուշ կգամ:

— Չէ՛, սպասի՛ր:

Որոշ ժամանակ անց, երբ մենակ մնացին, կարողացան երկու բառ փոխանակել:

— Նորություն ունե՞ս:

— Ոչ մի բան:

— Երեկ գիշեր մեր տունը քարուքանդ արեցին:

— Ավանում հենց միայն դրա մասին էին խոսում: Դե՛, այսօր էլ հաստատ մեզ մոտ կգան:

— Դրանցից սպասելի է:

— Ի՞նչ էին փնտրում:

— Խոշե Մարիի իրերը: Ասում են՝ իբր ահաբեկիչ է: Կարծում էին, որ զենք կգտնեն: Քանի որ բան չգտան, ձեռքն ընկածը տարան:

— Խոսեչոն նյարդային վիճակում է: Կարծում է, որ մեր զավակները զինված պայքարի մեջ են մտել: Այդ երկուսին, ասում է, երկար ժամանակ չենք տեսնի:

— Ի՞նչ անհեթեթ մտքեր ունի ամուսինդ:

— Պաչին էր երեկ եկել: Խոսեչոյին ասաց, որ եթե տանը Խոկինի թղթերը կան, անպայման վերացնենք: Պարզից էլ պարզ էր: Լա՛վ, կներես, գործ ունեմ:

— Չասա՞ց՝ տղերքը ուր են:

— Հարցրի, իհարկե: Չխոսկանի մեկն է: Միայն ուզում էր, որ անմիջապես վերացնենք թղթերը:

— Գրո՜ղը տանի, մեզ չէր զգուշացրել:

Արդեն փողոցում Միրենը հիշեց, դեպքերը կապեց իրար, գլխի ընկավ,

ենթադրեց: Ա՛խ, տե՛ս, է՛: Նախորդ օրը հանկարծակիի էր բերել Գորկային, որ, կոշիկներո՛վ աթոռին կանգնած, պատից պոկում էր Խոշե Մարիի պաստառները: Գետնին էլ երկու ցելոֆանե տոպրակ կար՝ թերթերով ու լրագրերով: Մի անգամ Միրենը նրան հարցրել էր, թե ինչու պատերից չես հանում էդ նողկանքը, մեկ է, եղբայրդ այլևս մեզ հետ չի ապրում: Նա էլ թե՝ ո՛չ, ama, եթե իմանա, գլուխս կպոկի:

— Լսի՛ր, այդ ի՞նչ ես անում:

— Հե՛չ: Մի քիչ սենյակի տեսքն եմ ուզում փոխել:

— Չէի՞ր կարող աթոռի վրա թերթ փռել:

Միրենը, ինքն իր հետ խոսելով, տուն էր գնում: Նրան բարևեցին, չնայելով պատասխանեց: Եթե txakurra-ները պաստառները տեսնեին, կորած էինք: Մեզ բոլորիս ձեռնաշղթաներով կտանեին զորանոց: Իսկ հիմա նրան մի բան էր հետաքրքրում: Փաստորեն, Գորկան մեր տանն արել էր այն, ինչը որ Պաչին Խուանիին ու Խոսեչոյին էր խորհուրդ տվել: Ինչ էլ զուգադիպություն է, չէ՞: Սա պետք է պարզել:

Հենց Գորկան տուն մտավ, Միրենը վրա տվեց՝ նույնիսկ ժամանակ չտալով, որ կոշիկները հանի: Հապա մի բացատրի՛ր՝ ինչո՞ւ էիր հանում Խոշե Մարիի պաստառները: Տղան պատասխանեց, թե տեղն ուրիշ պաստառ է փակցնելու:

— Բա ո՞ւր են էդ նորերը: Ես հիմա մերկ պատեր եմ տեսնում:

— Լա՛վ, ama, դրանք կամաց-կամաց են ձեռք բերվում:

— Բա եղբորդ պաստառներն ի՞նչ ես արել:

— Թափել եմ:

— Քոնը չէին:

— Հին ու կեղտոտ էին:

— Իսկ թերթերն ու լրագրե՞րը, որ Խոշե Մարիի պահարանում էին:

— Տեղ էր պետք, նա էլ էստեղ չէ:

Մոտիկից նայեց որդու աչքերի մեջ: Մեկ, երկու վայրկյան, ու երրորդին նրան այնպիսի մի ապտակ տվեց, որ այտից չլմփոց լսվեց:

— Սա՝ ինձ խաբելու համար:

Եղբոր ու Խոկինի խնդրանքով Գորկան իջել էր ավան ու «Առանոյում» պատմել էր Պաչիին այն, ինչ հանձնարարել էին: Պաչին հայհոյեց ու հետո՝ էլի ու էլի, բայց առանց ժամանակ կորցնելու՝ գործի անցավ, կազմակերպեց: Ի վերջո, հրաժեշտ տալով տղային, որը պիտի գնար առաջին

հեծանիվի հետևից՝ Խոկինի ու եղբոր համար, նրան նորից իր մոտ կանչեց: Այդ ժամանակ էր, որ հարցրեց՝ նրա aita-ների տանը դեռ Խոշե Մարիի նյութերը կայի՞ն: Նյութե՞ր:

— Քաղաքական նյութերի մասին եմ ասում, դե՛, հասկանում ես:

Գորկան հարցը մի քանի րոպե անց հասկացավ: Այսինքն՝ պաստառներ, քարոզչություն, մեկ-երկու Zutabe*: Հա՛, կա, լիքը կա: Ամեն ինչ պետք է, ուրեմն, պատռել-վերացնել:

— Որքան հնարավոր է շուտ, լսեցի՞ր:

Ո՛չ բացատրեց, թե ինչու պետք է րոպե առաջ վերացնել դրանք, ո՛չ էլ վախեցած Գորկայի մտքով անցավ բացատրություն խնդրել: Բնականաբար, հասկացավ ասածի կարևոր մասը. արագացնել է պետք:

Մորն ասաց.

— Հիմա արդեն գիտես:

— Ինչո՞ւ ինձ չասացիր, երբ հարցնում էի:

— Ի՞նչ իմաստ ուներ: Գո՞հ չես, որ txakurra-ները բան չգտան:

— Դե՛, քանի որ այդքան ակտիվ ես, գիտե՞ս՝ որտեղ է եղբայրդ:

— Գաղափար չունեմ:

— Հաստա՞տ:

— Երդվում եմ, ama: Բայց երևի ինքդ էլ ենթադրում ես:

— Որտե՞ղ է:

— Ինձնից լավ գիտես: Միայն թե հանգի՛ստ թողեք ինձ:

Դուրս թռավ ու գնաց իր սենյակ: Երկարահասակ, նիհար, ավելի ու ավելի կորացող մեջքով: Բանալիով փակեց դուռը ու դուրս չէր գալիս: Միրենը կանչեց՝ ասելով, թե ճակնդեղն է սառում, ու որ իր առավոտն արդեն բավականաչափ բարդ է եղել, որ հիմա էլ տղան ավելի մեծ խնդիրներ ստեղծի: Համբերությունը կորցնում էր, ձայնը՝ բարձրացնում, տղային տարբեր բաներով սպառնում: Այդ պահին լսվեց բանալու ձայնը: Գորկան նստեց խոհանոցի սեղանի մոտ: Գլուխը կախ՝ սկսեց ուտել: Աչքերը բորբոքված էին, ասես լաց եղած լիներ, դեմքը՝ բշտիկների մեջ կորած:

Կերավ տարբեր բաներ: Բավական ախորժակով, իհարկե: Միրենը երբեմն նրան էր նայում՝ հասկանալու համար՝ ուտո՞ւմ է, լա՞ց է լինում: Վերջում, առանց բառ ասելու, մրգամանը մոտեցրեց նրան: Ու դիմացից հավի

* Zutabe (բասկ.), «Հիմնասյուն»՝ լրատու, որը ETA-ն թողարկում էր իր անդամների համար:

ոսկորներով ամանը վերցնելիս նրա ձեռքին կպավ: Գորկան անմիջապես ձեռքը քաշեց՝ հնարավոր գուրգուրանքից խուսափելու համար:

Վեր կացավ սեղանից: Նախքան խոհանոցից դուրս կգար, Միրենը հարցրեց՝ համե՞ղ էր: Գորկան ուսերը թոթվեց, մայրը չհամառեց:

64

Ո՞ւր է զավակս

Չորսով խոհանոցում կերան իրենց սովորական ժամին: Հիմնական ուտեստը, ինչպես միշտ: Էս կնիկը ձկան մոլուցք ունի: Տապակած կամ թանձրուկի մեջ պատրաստած, մեկ է: Երկուշաբթի՝ ձուկ, երեքշաբթի՝ ձուկ, ու այդպես շարունակ, մինչև մահը մեզ ազատի ընթրիքներից: Է՛, հա՛, մեզ դուր է գալիս, մեկին՝ ավելի, մյուսին՝ պակաս, բայց, ասած Խոշիանի՝ ճաշացանկը կարելի է երբեմն փոխել:

— Կիրակի կրոկետներ էի սարքել:

— Ըհը՛, բայց էլի ձողաձկից էր. կյանքներս կերա՛վ:

Միրենն այս գանգատների հանդեպ խուլ էր: Որպես նախուտեստ պատրաստել էր ցիկորի՝ մանրացրած սխտորով, ձեթով ու քացախով: Հետո դրեց երեկվանից մնացած վերմիշելով ապուրը ու վերջում մոմլաթե սփռոցով սեղանի կենտրոնում՝ պաքսիմատով տապակած անչոուս: Կանանց համար՝ ծորակի ջուր: Իսկ տղամարդիկ սովորաբար լիմոնադի և գինու մի կուժ խառնուրդ են խմում, որի մեջ գերակշռում է լիմոնադը:

Արանչան կծու հեգնանքով ասաց.

— Հուսանք՝ picoleto-ներն այս գիշեր նորից չեն գա:

Միրենն ասես ցնցվեց.

— Լսի՛ր, ձա՛յնդ կտրիր, մեր քաշածը քիչ էր, հիմա էլ դրա մասի՞ն խոսենք:

— Գուցե ինձ վերադարձնե՞ն տեսաֆիլմերս ու նոր օծանելիքի համար փո՞ղ տան:

— Երազի՛ր:

— Համենայնդեպս, հագնված կքնեմ:

Մայրը պահանջեց, որ աղջիկը լռի, իսկ Խոշիանը, նրան պաշտպանելով, հարցրեց.

— Այս տանը խոսելն է՞լ է արգելվում:

Խոսե՞լ: Հիմա՞: Զավակների ներկայությա՞մբ: Այն էլ, երբ Արանչան իրեն սրամիտի տե՞ղ է դրել: Միրենը քիչ էր մնում՝ լեզվից թռցներ, որ այս երեկո գաղտնի խոսակցություն է ունեցել: Զսպեց իրեն ու միայն Խոշիանին

պատմեց, երբ երկուսով արդեն անկողնում էին: Առանց նախաբանի՝ վրա բերեց.

— Պաչիի հետ եմ խոսել:

— Ո՞ր Պաչիի:

— Խորտկարանի տիրոջ: Դա շատ բան գիտի:

Միրենը հետմիջօրեից հետո մտել էր «Առանո»: Քանի՞ հոգի կար՝ չո՞րս, հի՞նգ տղա: Ոչ ավելի: Երաժշտությունն այնքան բարձր էր, որ խուլերն էլ կլսեին: Չգիտեմ՝ հարևաններն ինչու չեն բողոքում: Կամ էլ երևի բողոքում են, բայց իրենց տներում, որովհետև ավելի ձեռնտու է այս տղաների հետ լավ հարաբերություններ ունենալ: Պաչին՝ ականջօղով, երեսունն անց տղան, կարծես իրեն էր սպասում: Այսի՞նքն: Դե՛, հենց իրեն տեսավ խորտկարան մտնելիս, միանգամից ժեստով ցույց տվեց, որ իր հետևից պահեստ գա:

Խոշիանը դժգոհելով գլուխը տարուբերեց:

— Չգիտեմ՝ որ ջհանդամի հետևից ես գնում մի տեղ, ուր քեզ չեն հրավիրել:

— Ուր պետք լինի՝ կգնամ որդուս համար: Հիմա պատմե՞մ, թե՞ չէ:

Մգլած պահեստում թթված գինու հոտ էր փչում: Դեռ պահպանվել էին քարե պատերն ու գերաններն այն ժամանակներից, երբ այստեղ գոմ էր: Այդքան տարի անց Միրենը հիշում էր: Դեռ երեխա էր, ու տնեցիները նրան հաճախ էին ուղարկում այնտեղ՝ տեղում նոր կթած կաթ առնելու:

Պաչին դուռը փակեց: Միրենը դեռ բան չասած՝ Պաչին նրան խնդրեց, որ չանհանգստանա: Միրենը պատասխանեց, որ հանգիստ է: Հանգի՞ստ էր: Բնա՛վ:

— Դու գիտե՞ս՝ ուր է Խոշե Մարին: Հենց հիմա ասա՛ ինձ:

— Լա՛վ, Միրե՛ն, հանգստացի՛ր:

— Գրո՜ղը տանի, ես քեզ արդեն ասացի, որ հանգիստ եմ: Ես իմ տղայի մայրն եմ: Բնականաբար ուզում եմ իմանալ, թե որտեղ է հիմա:

— Ընդհատակում է:

— Շատ լավ: Իսկ դա որտե՞ղ է: Նա չպիտի տեղից շարժվի, ե՛ս կգնամ նրա մոտ:

Անհնար է: Թե բա առաջվա պես չէ, երբ ընտանիքի անդամները շաբաթվա վերջ գնում էին Ֆրանսիայի հարավ՝ փախստականներին գումար, հագուստ ու ծխախոտ տանելու համար: GAL-ի մեղքով հիմա մարտիկները ստիպված են չափազանց զգույշ լինել:

Խոշիանը, թե.

— Ուրեմն, չե՞նք կարող գնալ նրան տեսակցության:

— Քեզ նոր նույն բանը չէի՞ ասում:

— Ուրեմն, Խոսեչոն իրավացի է: Սրանց հազար տարի էլ մնա՝ չենք տեսնի:

— Ըստ Պաչիի՝ երկու տարբերակ կա: Կա՛մ մեր զավակը գնում է Մեքսիկա կա՛մ որևէ երկիր՝ այդ կողմերում, կա՛մ էլ կազմակերպության անդամ է դառնում:

— Կնախընտրեմ, որ հեռու գնա:

— Քո նախընտրությունը ոչ մեկի չի հետաքրքրում:

— Ինձ է հետաքրքրում: Գիտեմ՝ ինչ եմ ասում:

— Քեզ խելոքի տեղ մի՛ դիր:

Նրան չպատմեց՝ ինչի՞ն էր պետք իմանալ, թե ինչպես մի պահ Պաչին ձեռքերը Միրենի ուսերին դրեց: Միրենին թվաց, որ դա ոչ թե քնքշության ժեստ էր, այլ նրան ընդունելու, պատվելու. ոնց որ ասեր՝ կարող ես զավակովդ հպարտանալ: Ու ձեռքերն ուսերին՝ նրան պատմեց՝ հանգստացնելով, բացատրելով, որ գոյություն ունեն ներքին խողովակներ, որոնցով մարտիկներն իրենց ազգականների հետ նամակներ են փոխանակում:

— Ա՜, այսինքն՝ նա կարող է գրե՞լ մեզ:

— Այո՛, դուք էլ՝ նրան:

— Կարո՞ղ եմ նրան փաթեթ ուղարկել: Շուտով ծննդյան օրն է. չէի ուզի, որ իր փոքր նվերը չստանա:

Խոշիանը կտրուկ նրան նայեց.

— Նրան այդպես ասացի՞ր: Ինչո՞ւ որոշեցիր, որ Խոշե Մարին գաղութներ* է գնացել:

— Դու էիր պակաս: Իմ որդին է: Նրան ե՛ս եմ լույս աշխարհ բերել: Թե՞ դու ես ծնել: Դու հաջորդ օրն իմացար նրա ծնվելու մասին:

— Լա՛վ, այդ բլթոցներին վե՛րջ տուր, մինչև կոկորդս կուշտ եմ ծննդաբերության այդ պատմությունից:

— Ես՝ ցավերի մեջ, իսկ դու բարում էիր, ու դուրդ չի գալիս, որ հիշեցնում եմ: Այնպես որ, իմ զավակն է, ու չեմ ուզում, որ ձմեռը մրսի, ոչ էլ ծննդյան օրը տխրի, որ նվեր չի ստացել:

---

* Այդպես էին կոչում Իսպանիայի նախկին տիրույթները Լատինական Ամերիկայում:

Պաչին ձեռքերը վերցրեց Միրենի ուսերից: Նրան ասաց, որ փաթեթի մասին մոռանա, բայց հանգիստ խղճով գնա տուն, որովհետև կազմակերպությունն իր մարտիկներին չի լքում: Նորից խոսեց հպարտության մասին՝ ավելացնելով, որ եթե Բասկերի երկրում Խոշե Մարիի պես տղաներ շատ լինեին, արդեն ազատ ժողովուրդ կլինեինք: Նախքան պահեստից դուրս գալը Պաչին նրան վստահեցրեց, որ եթե որևէ հաղորդագրություն լինի (նամակ, երկտող կամ որևէ բան), անձամբ կփոխանցի: Պահեստի դուռը մատնացույց անելով՝ ասաց.

— Այս դռնից այն կողմ չենք խոսում:

Ու հետո խորտկարանում, որտեղ հինգ-վեց տղա կար, Պաչին Միրենի այտը համբուրեց ու հրաժեշտ տվեց:

Դիմելով Խոշիանին.

— Դե՛, ինչ-որ կա՝ քեզ պատմեցի:

— Ինչի՞ մասին: Ոչ գիտենք՝ ուր է, ոչ էլ՝ ինչ է անում: Թեև իմանալու համար մեծ երևակայություն պետք չէ: Ոչ ոք ETA չի մտնում՝ այգեպան դառնալու համար:

— Չգիտենք՝ մտե՞լ է ETA, թե՞ ոչ: Մեկ է, հիմա ճամփորդում է Մեքսիկա: Բայց եթե մտել է, ուրեմն Բասկերի երկիրն ազատագրելու համար է:

— Մարդ սպանելու համար է:

— Դե որ այդպես ես ասում, էլ բան չեմ պատմի քեզ:

— Ես իմ որդուն մարդասպան չեմ դաստիարակել:

— Դաստիարակե՞լ: Դո՛ւ ես դաստիարակել: Երբեք չեմ տեսել, որ երեխաների հետ որևէ բանով զբաղվես: Դու քո կյանքի կեսը բարում ես անցկացրել, կեսը՝ հեծանվի վրա:

— Ու ամեն օր արձակուրդ եմ գնացել ձուլարան, չէ՞:

Նրանց հայացքները մի պահ խաչվեցին: Արհամարհակա՞ն, անտարբե՞ր: Ամեն դեպքում՝ ոչ սիրալիր: Հետո Միրենը լապտերը հանգցրեց ու կտրուկ շրջվեց՝ մեջքով ամուսնուն: Նա էլ մթության մեջ ասաց.

— Եթե ես մի քսան տարով երիտասարդ լինեի, հենց վաղը կգնայի նրա հետևից, մի երկու լավ ապտակ կտայի ու տուն կբերեի:

Միրենը չարձագանքեց, ու էլ չխոսեցին:

65

Օրհնություն

Այն օրերին իրար հետ դեռ խոսում էին: Միմյանց գաղտնիքներ էին վըստահում ու շաբաթ օրերը՝ հետմիջօրեներին, միասին սուրճ էին խմում Սան Սեբաստիանում: Իհարկե, կարող էին ավանի ուրիշ կանանց էլ հրավիրել: Խուանիին, որի հետ լավ ընկերուհիներ էին, կամ էլ Մանոլիին, որի հետ քիչ էին շփվում: Բայց ոչ: Իրենց՝ շաբաթ օրվա այդ ծեսում ոչ մեկի համար տեղ չկար՝ էլ չասած ամուսինների մասին: Վա՜յ, Աստծո սիրույն: Թող գնան, մի ձեռք խաղան ու հեծանիվ քշեն, իսկ մեզ հանգիստ թողնեն: Պատարագի էլ էին միասին գնում ու կողք կողքի նստում:

Միրենը չուռոն թաթախեց շոկոլադի մեջ: Հետո կծեց: Ծամելով, մատները անձեռոցիկով մաքրելով՝ ասաց, որ խուզարկման օրից ի վեր տանն անհանգիստ է:

— Ինչո՞ւ:

— Չգիտեմ՝ քեզ ոնց բացատրեմ: Ոնց որ տունս հավիտենապես կեղտոտած լինեն: Մի կեղտ, որը չի երևում, բայց նկատում ես: Ինչքան էլ լաթով անցնեմ, մեկ է, մնում է ու անտանելի զզվանք է պատճառում: Ու երբ փողոցում գվարդիական եմ տեսնում, էլ չասեմ՝ ի՞նչ եմ զգում:

— Քեզ լրիվ հասկանում եմ:

— Մի բան մեր ներսում փոխվել է: Նույնը չենք, ինչ նախքան Խոշե Մարիի *փախուստը* Ֆրանսիա: Փոքրը չի խոսում: Չգիտեմ՝ հետը ինչ է կատարվում: «Ազդվա՞ծ ես»,– հարցնում եմ: Չի պատասխանում: Արանչան բոլորի վրա ծիծաղում է՝ իմ, հոր, ավանի ժողովրդի: Ռենտերիայի այդ տղան նրան կարծես ավելի է ապուշացրել, քան կար: Իսկ Խոշիանն ու ես, դե՛, ի՞նչ ասեմ, արդեն բավական ժամանակ է, ինչ իրար չենք հասկանում: Մեկ վիճում ենք, մեկ՝ չէ:

— Երևի Խոշե Մարիի վիճակն է վրան ազդել:

— Ազդե՞լ: Տապալել է: Ինչ էլ քեզ պատմեմ՝ քիչ է՝ նկարագրելու համար: Առաջ նրան լացելիս չէի տեսել՝ նույնիսկ թաղումների ժամանակ: Հիմա ամենաանսպասելի պահին աչքերը կարմրում են, շուրթը՝ ծռվում: Վազելով գնում է զուգարան, որ իրեն չտեսնեմ:

— Իսկ դո՞ւ: Ո՞նց ես դիմանում:

— Է՛հ, ես ինչ էլ լինի՝ միշտ տղայիս կողմից եմ: Ի՞նձ ինչ՝ մարդիկ ինչ են ասում: Իհարկե, կուզեի, որ մոտիկ լիներ, աշխատեր, ընտանիք կազմեր, բայց եթե այդպես չէ, պետք է հաշտվել եղածի հետ: Իրականում մենակ քեզ եմ ասում, լա՛վ, Խոշիանի պատճառով ահավոր անվստահ եմ դարձել,– հայացք գցեց հարևան սեղաններին՝ համոզվելու համար, որ ոչ ոք չի լսում, ու շուրթերը մոտեցնելով Բիչո՛րիի ականջին՝ շշնջաց.

— Ասում է, որ եթե Խոշե Մարին զենք վերցնի ձեռքը, էլ կյանքում նրա դեմքին չի նայի: Հույս ունի, որ որպես փախստական կգնա Մեքսիկա կամ այդ կողմերը: Բայց եթե չգնա, ուրեմն, ի՞նչ: Մտածում էի խոսել դոն Սերապիոյի հետ:

— Տերտերի՞: Ի՞նչ պիտի քեզ ասի:

— Մի խորհուրդ կտա: Խուանին գնացել էր խոստովանելու ու թեթևացել էր:

— Ուրեմն, խոսի՛ր հետը: Շատ-շատ՝ ժամանակ վատնես:

Կիրակի օրը, երկու ընկերուհի իրար թև ընկած, գնացին պատարագի: Միրենը անընդհատ շուռ էր գալիս դեպի Իգնասիո Լոյոլացու արձանն ու շուրթերը թեթևակի դողացնելով՝ ինչ-որ բաներ էր շշնջում: Ի՞նչ: Որ ուշադիր լինի իր տղայի հանդեպ, որ նրան պահպանի հիմա, երբ մորից հեռու է: Ինքն իրեն համոզում էր, որ անհնար է, որ այդքան մեծահոգի ու ազնիվ տղան մտնի թերթերում հանցագործ հռչակված կազմակերպության մեջ: Խոշե Մարիի սիրտն այնքան մեծ է, որ կրծքում տեղ չի անում: Ուրիշների համար ամեն ինչի պատրաստ է. և՛ հանդբոլի թիմում, և՛ աշխատավայրում, մի խոսքով՝ ամենուրեք, բա ինչպե՞ս չանի իր հարազատ ավանի համար: Դու էլ էիր բասկ, չէ՞, Իգնասիո՛:

Բիչո՛րին, թե՝

— Ի՞նչ ասացիր:

— Հե՛չ, աղոթում էի:

Հաղորդություն ստացան: Իրար հետևից գնացին-եկան կենտրոնական անցուղով՝ գլխահակ, ափերն իրար միացրած կրծքի առջև: Համարյա միանձնուհիներին հատուկ բարեպաշտությամբ: Ժամանակին միանձնուհի դառնալու ցանկություն ունեին: Հիշո՞ւմ ես: Երիտասարդ տարիքում մենաստան մտնելուն մազ էր մնում: Այդքան տարի անց կես-կատակ, կես-լուրջ երկուսն էլ ասում էին, թե ամեն անգամ ամուսինների հետ վիճելիս զղջում են. ի՛նչ հիմարն էինք, որ նախընտրեցինք ամուսնանալ:

— Միակ բանը՝ երեխաները, քո՛ւյր Բիչո՛րի:

— Հետդարձ չկա, քույրի՛կ Միրեն:

Նախքան բերանը բացելն ու լեզուն երկարելը՝ նշխարը ստանալու համար՝ Միրենը դոն Սերապիոյին շշնջաց, որ հետո կգամ, լա՛վ, ու քահանան՝ ողջամիտ, զգուշավոր, գլխով արեց:

Պատարագի ավարտին մասնակիցներն ուղղվեցին դեպի ելքը: Դոն Սերապիոն հանգցրեց խորանի մոմերը: Սարկավագի առաջնորդությամբ, որը նրա առջև դուռը բացեց, մտավ ավանդատուն: Միրենը հենց դրան էր սպասում՝ քահանայի հետ խոսելու համար:

— Գալի՞ս ես:

— Ավելի լավ է՝ մենակ գնա՛: Շատ անձնական հարց է: Քեզ հրապարակում կսպասեմ, որ հետո ինձ ամենը պատմես:

Դոն Սերապիոն շուրջառն էր հանում, երբ Միրենը մտավ ավանդատուն: Տեսնելով նրան՝ քահանան՝ քրտնած ճակատով, դեմքի խիստ արտահայտությամբ, սարկավագին ասաց, որ դուրս գնա: Դեռահասն անմիջապես չենթարկվեց, քանի որ իրեն հանձնարարված ինչ-որ գործ էր անում:

— Լսի՛ր, քեզ չասացի՞, որ դուրս գաս:

Սարկավագը շտապեց դուրս գալ ավանդատնից, բայց այս անգամ էլ դուռը բաց թողեց: Ասացե՛ք, խնդրեմ, մի՞թե հնարավոր է սա: Փնթփնթացող քահանան առույգ քայլերով մոտեցավ ու փակեց դուռը: Մենակ մնալով կնոջ հետ՝ նրան մեղմ ժեստով առաջարկեց նստել: Ինքն էլ նստեց ու հարցրեց՝ Միրենի այցի պատճառը նույնն է, ինչ և Խոսեչոյի կնոջ՝ Խուանիի՞նը: Միրենը գլխով արեց:

Կնոջ՝ սեղանին հենած ձեռքը բռնեց իր՝ ֆիզիկական աշխատանքին անսովոր, գունատ ձեռքերով, որոնք ամենևին նման չէին Խոշիանի՝ անհարթ ու ասես այրված, քարից տաշած ձեռքերին: Եվ ինչի՞ համար է ձեռքս վերցնում: Դե՛, չգիտեմ: Քահանան, շոյելով նրա ձեռքը, ասաց.

— Գլխիցդ հանի՛ր կասկածներդ ու խղճի խայթ մի՛ ունեցիր: Մեր պայքարը՝ իմը՝ իմ ծխում, քոնը՝ ընտանիքիդ ծառայելով, և Խոշե Մարիինը, որտեղ էլ հիմա լինի, արդար պայքար է հանուն մեր ժողովրդի, որը ցանկանում է սեփական ճակատագիրը որոշելու իրավունք ունենալ: Սա Դավթի պայքարն է ընդդեմ Գողիաթի, որի մասին շատ անգամ եմ ձեզ պատմել պատարագին: Սա անձնական, եսասիրական պայքար չէ, այլ նախ և առաջ համազգային զոհաբերություն է: Խոշե Մարին, ինչպես Խոկինն ու

շատ ուրիշները, ստանձնել է իր բաժին մասնակցությունը՝ դրանից բխող բոլոր հետևանքներով. հասկանո՞ւմ ես:

Միրենը, ի նշան համաձայնության, գլխով արեց: Դոն Սերապիոն հասկացող տոնով, ջերմորեն թփթփացրեց նրա ձեռքին: Ու շարունակեց.

— Մի՞թե Աստված ասել է, թե չի ցանկանում տեսնել բասկերին: Աստված ուզում է՝ իր կողքին լինեն բարի բասկերը, նաև, ուշադի՛ր, իր բարի իսպանացիները, ֆրանսիացիներն ու լեհերը: Ու բասկերին ստեղծել է այնպիսին, ինչպիսին որ կանք. անկախության գաղափարով տոգորված, իր նպատակը համառորեն հետապնդող, աշխատող ու հաստատակամ մի ժողովուրդ: Ուստի կհամարձակվեմ պնդել, որ մեզ վրա է ընկնում մեր ինքնությունը, հետևաբար մեր մշակույթն ու ամենակարևորը՝ մեր լեզուն պահպանելու քրիստոնեական առաքելությունը: Եթե մեր լեզուն անհետանա, Միրե՛ն, անկեղծ ասա՛ ինձ՝ ո՞վ է Աստծուն աղոթելու բասկերեն, ո՞վ է նրա համար բասկերեն երգելու: Պատասխանե՞մ: Ոչ ոք: Գողիաթը՝ եռանկյունաձև իր գլխարկով ու զորանոցի նկուղում իր խոշտանգողներով, մատը մատին խփելո՞ւ է հանուն մեր ինքնության: Այն գիշեր տունդ են խուզարկել: Նվաստացած չե՞ս:

— Ա՜յ, դո՛ն Սերապիո, մի՛ հիշեցրեք, շունչս կտրվում է:

— Տեսնո՞ւմ ես: Այդ նույն նվաստացմանը, որին ընտանիքիդ հետ ստիպված ես եղել դիմանալ, Բասկերի երկրում օրական հազարավոր մարդիկ են ենթարկվում: Ու նույն այդ մարդիկ, որոնք մեզ հետ այդքան վատ են վարվում, հետո ժողովրդավարության մասին են խոսում: Նրանց ժողովրդավարությունն է, նրանցն է, որ մեզ ճնշում է որպես ժողովուրդ: Դրա համար ես, ձեռքս սըրտիս դրած, ասում եմ քեզ՝ մեր պայքարը ոչ միայն արդարացի է: Այն այսօր ավելի, քան երբևէ, անհրաժեշտ է: Այն պարտադիր է, քանի որ պաշտպանողական է, ու նպատակը խաղաղությունն է: Մեր թեմի եպիսկոպոսի խոսքը լսելու առիթ չի՞ եղել: Այնպես որ, հանգիստ գնա՛ տուն: Ու եթե մի օր՝ առաջիկա ամիսներին կամ երբ էլ լինի, տղայիդ հանդիպես, նրան իմ՝ իր ավանի քահանայի անունից ասա՛, որ օրհնում եմ ու իր համար շատ եմ աղոթում:

Միրենը դուրս եկավ ավանդատնից, անցավ եկեղեցու կողային անցուղով: Գրո՜ղը տանի, ի՜նչ քահանա է: Նրան լսելով՝ ցանկություն առաջացավ գնալ Խոշե Մարիի ուղով: Մի պահ, առանց կանգ առնելու, նայեց դեպի Իգնասիո Լոյոլացու քանդակը: Տեսնենք՝ դու մի օր կսովորե՞ս մարդկանց տրամադրությունը բարձրացնել:

Դուրս եկավ հրապարակ: Կապույտ երկինք, աղունիկներ, երեխաների ղժղժոց ու վազվզոց՝ լորենիների ստվերի տակ: Բիչո՛րին ո՞ւր է: Այնտեղ է՝ նստարանին: Միրենը գնաց նրա կողմը:

— Գնացի՛նք, ճանապարհին կպատմեմ:

— Զգացվում է, որ հանդարտվել ես:

— Մյուս անգամ, երբ Խոշիանը գա՝ իր դարդերն ու իր վախերը պատմելու, կտեսնի՝ ի՛նչ եմ ասելու: Հիմա որ հաստատ հստակ գաղափարներ ունեմ:

66

Կլաուս-Դիտերը

Ներեան ծանոթացավ Կլաուս-Դիտերի հետ: Սիրահարվեց Կլաուս-Դիտերին: Տղայի շեկ, ուղիղ թափվող մազերը չտեսնված գրավիչ էին, երբ ճոճվում էին նրա պարելու պահին, կամ պակաս չափով, երբ քայլում էր: Մետր իննսուն, աժդահա, գեղեցիկ մի տղա: Ի լրումն դրա՝ գերմանացի: Ինչը նոր հեռանկար էր խոստանում՝ նոր երկիր, ուրիշ մշակույթ, ուրիշ լեզու, ուրիշ ժեստեր, ուրիշ հոտեր, ու ցտեսությո՛ւն՝ եղած ամեն ինչին: Գուցե ընդմիշտ: Մնաս բարով կասեմ անտանելի մորս, իմ հողին, որը սիրում էի, իսկ այսօր անտարբեր եմ, երբեմն էլ ատում եմ, ինձ շրջապատող ամեն ինչին՝ այնքան ձանձրալի, այնքան կանխատեսելի: Մնաք բարով, կամ էլ մինչև հանդիպում՝ օր ծերության:

Փիլիսոփայության ու լեզվաբանության ֆակուլտետում տղան մեկ կիսամյակ սովորող երիտասարդ գերմանացիների խմբից էր: Ի՞նչ էին սովորում: Հստակ չէր: Լեզվին առնչվող մի բան կամ հենց լեզու էին սովորում: Երբեմն նրանց՝ ինը-տասը աղջիկների ու տղաների կարելի էր առավոտյան տեսնել համալսարանի սրճարանում: Սկզբնական շրջանում խմբված էին, ժպտերես, մի քիչ հիմարիկ ու հաշվի առնելով նրանց թիվը՝ գրեթե անաղմուկ: Հետո, ինչպես և ամեն տարի այդ ամիսներին, տեղի էր ունենում սովորականը: Քիչ-քիչ խառնվում էին տեղացի ուսանողների հետ: Ոչ մի արտառոց բան. ընկերանում էին, զույգեր էին կազմում՝ հիմնականում միասին մնալով մինչև այն օրը, երբ զույգի օտարերկրացին վերադառնում էր իր երկիր:

Ներեան նրան մի երկու անգամ էր տեսել: Աղջկա ուշադրությունը գրավել էր, որովհետև իսկապես գեղեցիկ էր: Եվ ի՞նչ: Չէ՞ որ նրան շատերն էին գրավում, նաև մի քանի դասախոս: Հանդիպելու առիթ չէին ունեցել ո՛չ տոնախմբության ժամանակ, ո՛չ էլ բարում, նույնիսկ հայացքներ կամ երկու բառ չէին փոխանակել: Իսպաներեն գիտե՞ր: Դե՛, գոնե սովորո՞ւմ էր, չէ՞: Բացի այդ՝ երբեմն՝ որոշ իրավիճակներում, խոսելն ավելորդ է: Ավելի ուշ ծանոթացան:

Այդ ընթացքում իր aita-ին էին սպանել: Դրա պատճառով ի՞նչ էր փոխվել. կապե՞րն էր խզել, քի՞չ էր դուրս գալիս, մեկուսացե՞լ էր: Ամենևին: Մի բացառությամբ. երբ ֆակուլտետի իր ընկերների խոսակցությունը դեպի քաղաքականն էր շեղվում, Ներեան հետաքրքրությունը կորցնում էր, հայացքը փախցնում, զուգարան էր գնում: Սեքսի այնպիսի մի պահանջ էր զգում, որ նախկինում՝ հոր մահից առաջ, երբեք չէր ունեցել, ամեն դեպքում՝ ոչ այդ աստիճանի: Ապարդյուն փորձում էր հասկանալ իր այդ մըշտական ֆիզիկական պահանջի պատճառը: Որովհետև իրական հաճույք քիչ էր ստանում: Բանն այն է, որ հեշտ օրգազմ երբեք չէր ունենում: Սեքսի ժամանակ լիցքաթափվում էր, ոչ ավելին: Նաև (սկզբում և ընթացքում, բայց ավելի շատ՝ սկզբում) ինքնագնահատականն էր բարձրանում: Օրեր էին լինում, որ այն զրո էր: Հատկապես լսարանում, երբ գլխի էր ընկնում, որ նույնիսկ կենտրոնանալով և ուշադիր լսելով՝ չէր հասկանում դասախոսների բացատրությունները: Այդ ժամանակ վախեցած հայացք էր գցում իր շուրջ՝ իր ընկերների կողմ, որոնք գրառումներ էին անում, ձեռք էին բարձրացնում՝ քննարկումներին մասնակցելու համար, նույնիսկ հակաճառում դասախոսին: Թվում էր, որ բոլորն ավելի խելացի էին ու իրենից ավելի լավ պատրաստված, ու որ նրանք փայլուն ապագա են ունենալու, մինչդեռ իրենը տունն է լինելու ու միապաղաղ կյանքը, ու նա ոչ ոքի չի հետաքրքրելու, ոչ էլ դուր է գալու: Ինքն իրեն հայելում նայելով՝ ինքնամերժման սուր զգացում էր ունենում:

Հաճախ որսի էր դուրս գալիս: Նրան պատահական մեկը չէր հետաքրքրում: Փնտրում էր ատլետիկ կազմվածքով, կոկիկ արտաքինով մեկին: Ու ինքը՝ գեղեցիկ, առինքնող, աշխույժ, միշտ հասնում էր իր նպատակին: Բավական էր մի քանի մետր հեռավորությունից ժպիտով հայացք նետել, և ճանճը մոտենում էր սարդոստայնին: Երբ Սարագոսայի փողոցներում հյուսիսային քամի էր փչում, կամ հորդառատ անձրև էր գալիս, կամ Ներեան պարզապես ծուլանում էր հագուստը փոխել, ամենահարմար տարբերակն էր ընտրում. մոտակա հեռախոսախցիկից զանգահարում էր Խոսե Կարլոսին: Նրան ասում էր՝ արի՛: Ու տղան գալիս էր իր մոտ, բավարարում ու գնում:

Կլաուս-Դիտերի պատմությունը հազիվ մարտին սկսվեց, երբ տղայի ուսումն ավարտվում էր ընդամենը մի քանի շաբաթից: Իրենց շտապելու և թյուրըմբռնման (այն էլ ի՜նչ թյուրըմբռնման) միակ պատճառը դա

էր: Մինչև հիմա, երբ հիշում է, ժպտում է: Իրենց կապի ընթացքում ամեն ինչ հաճելի էր. բացի այդ՝ չես հերքի, որ տղան, ինքն էլ չիմանալով, օգնեց ավարտել համալսարանը: Ինչպե՞ս: Քանի որ Ներեան պատրաստվում էր նրա հետևից Գերմանիա գնալ, ապա ստիպված ատամները սեղմեց ու խորացավ ուսման մեջ, բոլոր քննությունները հանձնեց ու կատարեց իր հին խոստումը, որ իր հանգուցյալ հորն էր տվել, ավարտել ուսումը: Մի ուսում, որ, պետք է ասել, նրան չէր հետաքրքրում:

Տոնախմբությունը տեղի ունեցավ մի ուրբաթ օր Կոլեխիո Մայոր Պեդրո Սերբունայում: Տրամադրություն չուներ, չէր ուզում տնից դուրս գալ: Զանգահարեց Խուան Կարլոսին՝ առանձնապես հույս չունենալով, որ նրան տանը կբռնացնի: Տղայի հարևանը պատասխանեց: Տանը չէր, գնացել էր ավան ու կիրակի էր վերադառնալու: Ներեան պատկերացրեց Խուան Կարլոսին կիրակի երեկոյան քաղաք վերադառնալիս՝ տնական երշիկեղենի իր փաթեթով (արնաերշիկ, կծու չորիսո* և այլն), և թե ինչպես, նախքան վերադառնալը՝ շաբաթ օրը, կարծում եմ, նաև կիրակի օրը, իր օրինական նշանածի ձեռքը բռնած, զբոսնում է գետի ափով, որովհետև դրանից ավելի բան աղջիկը նրան թույլ չի տալիս, ինչը տղային չի հուզում, քանի որ իր երազախաբությունների համար Ներեային ունի, որը, իր ընկերոջ ավանի պատմությունները լսելով, ոտքերը բաց, մեծ բավականություն էր ստանում իր վարձակալած սենյակի նեղ ու ճռճռան մահճակալի վրա:

Արդեն պատրաստվում էր դնել լսափողը, երբ հարցրեց.

— Չգիտե՞ս՝ քաղաքում այս գիշեր հետաքրքիր մի բան կա՞:

Տղան էլ ասաց, որ ինչ-որ տոնախմբություն կամ համերգ (վստահ չէր) էր Պեդրո Սերբունայում: Ու ավելացրեց, թեև նրա կարծիքը հարցնող չկար, որ կարծես ձանձրալի մի բան պիտի լինի հարուստների համար: Հետո Ներեան հարցրեց դրկիցներին՝ կուզե՞ն հետը գնալ: Ասացին՝ ո՛չ: Ի՞նչ անել: Իր սենյակում փակվեց՝ տրամադրվելով օրվա վերջին ժամերը սպանել վեպ կարդալով, բայց մոտը եղած պլանի մնացորդներով իրեն սթափեցրեց ու երեկոյան իննին դուրս եկավ որսի:

Ու այդտեղ էր, որ նրան տեսավ. ամենաբարձրահասակն էր իր շուրջը եղածների մեջ, պարում էր մազերի իր այդ հիասքանչ տարուբերումով:

* Չորիսո, խոզի մսից պատրաստված նրբերշիկ:

Առանց շապիկի, շատ պարելուց կարմրած դեմքով, շիկահեր, բթոտ: Քանի՞ տարեկան էր՝ քսա՞ն, քսաներկո՞ւ, քսանչո՞րս: Անկասկած, տղան հրաշալի ժամանակ էր անցկացնում: Շատ կտրուկ շարժումներով էր մարմինը թափ տալիս. հաստատ իր երկրում նման բան չէր անի: Իսկ այստեղ, բացի ֆակուլտետի մի քանի ընկերներից, ո՞վ էր նրան ճանաչողը:

Հանկարծ մի քանիսի գլուխների վրայով նրանց հայացքները խաչվեցին, ու դա բավարար էր Ներեային: Դժվար թե բացատրեր, թե ինչ զգացում ունեցավ: Մտքին կարծրատիպեր եկան՝ ներքին դող, մոգական պահ, շանթահարում: Ու տղան երևի թե զգաց նրա հիացմունքը, քանի որ Ներեային շարունակ նայում էր հիացած հայացքով ու նույնիսկ դանդաղեցրեց իր պարային շարժումներն ու ժպտաց աղջկան՝ ի ցույց դնելով հիասքանչ ատամնաշարը:

Փողոցում տղային խեղդեց համբույրներով: Ներեա՛, ի՞նչ ես անում: Ներեա՛, քեզ հետ ի՞նչ է կատարվում: Ստիպված էր նրա վզից բռնել (տղան նրանից երկու թիզ բարձր էր) ու գլուխը դեպի վար ձգել՝ իր ագահ, անհամբեր բերանով նրան հասնելու համար: Ու փարվում էր տղայի մարմնին սեփական ցանցն ընկած որսորդուհու պես՝ աճուկները թաց. քիչ էր մնում՝ ճչար: Ի՞նչ կմտածի այս տղան իմ մասին:

Բավական հեռու էր ապրում՝ գերմանացի երկու ուսանողների հետ վարձած բնակարանում՝ Սան Խոսեի կողմերը: Ներեայի համար միևնույն էր: Նրա հետևից մինչև աշխարհի ծայրը կգնար: Ուժեղ շեշտով էր խոսում: Ասում էր՝ *Նեղեա*: Ա՛խ, այս տղան երկու հացի արանքը դնելու ու խժռելու բան էր: Իր այդ շեշտը նրան է՛լ ավելի գրավիչ էր դարձնում: Տղայի քերականական սխալները Ներեային սրամիտ ու հմայիչ էին թվում: Ներեան, որ իր կյանքում ոչ մի գերմաներեն բառ արտաբերած չկար, նրա անունն էր ասում ու հաստատ կամ վատ էր արտասանում կամ ուժեղ շեշտով՝ դատելով Կլաուս-Դիտերի ծիծաղից (համա՛ սրիկան է) ու այն ակնհայտ հաճույքից, որը ստանում էր՝ աղջկան նորից ու նորից ստիպելով կրկնել իր անունը:

Արդեն գիշերվա երկուսն անց էր: Փողոցներում հատուկենտ մեքենաներ կային: Թարմ օդն ու լուսնազօծ կղմինդրներն ամբողջ գիշեր նրանցն էին: Ավելի ազատ լինել հնարավոր չէր: Ժամանակ առ ժամանակ կանգ էին առնում՝ լեզուները միահյուսելու, անշտապ իրար դեմք շոյելու, արագ դիպչելու միմյանց մարմիններին ծառերի ստվերում կամ որևէ շքամուտ-

քի մթության մեջ: Ներեան՝ մի կուռք երգչի սիրահարված տասնհինգ տարեկան աղջկա նման, տղան՝ ավելի քաղաքավարի, բայց մի տեսակ անհաղորդ: Գուցե ամաչկոտ էր: Ու երկար ճանապարհի ավարտին՝ մի մահճակալ:

67

Սիրո երեք շաբաթ

Երեք շաբաթ միասին անցկացրին: Ե՛վ աղջկա բնակարանում էին ապրում, և՛ տղայի: Ներեայի բնակարանի առավելությո՞ւնը: Համալսարանից երկու քայլի վրա էր: Հիմնական անհարմարությո՞ւնը: Նեղ ու տղայի համար կարճ մահճակալը: Կլաուս-Դիտերի բնակարանը ճիշտ հակառակն էր: Հեռու էր, բայց իրենց տրամադրության տակ ամուսնական չափի մահճակալ ունեին, որի վրա, բացի իրենց ուզածի չափ խլվլտալուց, կարող էին հանգիստ քնել:

Ի՜նչ երեք շաբաթներ էին: Նույնիսկ այսօր՝ երկու տասնամյակ անց, Ներեան դրանք ամբողջությամբ՝ իրենց գիշերուցերեկով, իրենց առավոտ-իրիկուններով, կդասեր կյանքի երևակայական աստեղային շարքին: Նրա մտքով մի անվանում է անցնում. *երջանկության անթոլոգիա*: Մտածում է, որ իր ունեցած կենսագրական փաստերը բավարար չեն հաստափոր գրքի կամ լիամետրաժ ֆիլմի համար: Դրա համար ճիշտ կլիներ ավելացնել դրվագներ մանկությունից, արժանահիշատակ ճամփորդություններից մեկը, ցաքուցրիվ ուրախություններ ու հաստատ այն երեք շաբաթները, որոնք անցկացրել էր Սարագոսայում իր գերմանացու հետ: Նրանից հետո երբեք ոչ մեկի նույնչափ կրքով ու նվիրումով չէր սիրել: Նաև Կիկեին՝ որքան էլ այդ ինքնահավանը երազեր: Չես չափազանցնո՞ւմ, Ներեա՛: Մեռնեմ, թե չափազանցնում եմ:

Շատ ափսոս, որ ուշ էր հանդիպել Կլաուս-Դիտերին, որն արդեն քիչ ժամանակ ուներ՝ Սարագոսայում կիսամյակն ավարտելու ու իր բուի՝ Գյոթինգենի համալսարան վերադառնալու համար: Երկուսն էլ, գիտակցելով այդ հանգամանքը, շտապում էին իրար սիրել: Շտապելը շտապում էին՝ բայց ոչ արհեստականորեն տրամադրվելով (դե՛, գուցե որոշ գիշերներ՝ այո): Անընդմեջ էին իրար սիրում. նույն բանը չէ: Ներեան ամեն ինչ անում էր՝ իր շիկահերի կողքին լինելու համար: Անտեսում էր համալսարանում իր դասերը, նրա դասերին էր նստում կամ էլ սպասում էր դուրսը՝ միջանցքի նստարանին ծխելով: Միասին ուտում էին, քնում ու երբեմն էլ միասին մտնում էին ցնցուղի տակ:

Այն օրերին, երբ Կլաուս-Դիտերից շուտ էր արթնանում, երկար ժամանակ հիացած նայում էր նրան: Նուրբ դիմագծեր, լավ կազմվածք: Ձեռքը մոտեցնում էր տղայի բերանին: Հրճվում էր՝ իր ափի մեջ զգալով նրա հանդարտ շնչառությունը: Կամ էլ զգուշությամբ, չարթնացնելով խաղ էր անում՝ մատին փաթաթելով տղայի մազերը: Նույնիսկ նրա ծոծրակի մազերից մի փունջ կտրեց մկրատով: Վեց-յոթ սանտիմետր հրաշալի, շեկ մի խրձիկ: Բայց ինչի՞ն էր պետք: Դե՛, նրանից մի բան ունենալու, նայելու ու ձեռք տալու համար, երբ տղան վերադառնար իր երկիր:

Ներեան սիրում էր Կլաուս-Դիտերի դեմքը լուսադեմին շոյել իր պտուկով: Շուրթերը՝ կիսաբաց, կոպերը՝ փակ, դեռ չսափրված այտը՝ շեկ աղվամազով, որը հաճելիորեն գրգռում էր իր կրծքի գերզգայուն հատվածը: Ու մեղմորեն արթնացնում էր նրան: Տղան ծանոթ էր խաղին և աչքերը չբացած՝ ժպտում էր: Գրազ գա՞նք, որ քո այդ սառը երկրում քեզ ոչ մի կին այսպես չի սիրել: Երբեմն Ներեան նրան բարձրաձայն էր հարցնում: Բայց նա ի՞նչ պիտի պատասխաներ, եթե բառերի կեսն էլ չէր հասկանում:

Հետո Ներեան իր գոլ կրծքերով շոյում էր նրա մարմնի ստորին հատվածը: Պատուհանից ներթափանցող լույսի ներքո նա մի քիչ ավելի էր դանդաղեցնում նրա փորի ու աղվամազով ծածկված ազդրերի ներքին մասերում, համբուրում ու լիզում էր առնանդամը, ու այդ ամենօրյա հաճույքը, որը երկար չէր տևելու (որն, իրոք, կարճ տևեց), գեղեցիկ էր, հագեցած ու հրաշալի, քանի դեռ կար:

Գերմանացի իր տղային հաճույք պարգևելուն պատրաստ՝ այն օրերին թեյասեր էր դարձել. նա, որ մինչև այդ այդքան սրճամոլ էր: Խոսքը սովորական ու անշուք տոպրակով թեյի մասին չէր: Մետաղյա տուփով թեյը Կլաուս-Դիտերը Գերմանիայից էր բերել: Նաև օգտագործելուց արդեն սևացած կտորե քամիչը: Խոհանոցում Ներեան հիացած դիտում էր այդ պարզ արարողությունը՝ ուշադրություն դարձնելով տարբեր մանրամասների վրա. որքան է թեյի ճիշտ չափաբաժինը, թեյով քամիչը որքան պետք է մնա թեյամանի տաք ջրի մեջ: Ու ոչ մի կաթ կամ շաքարավազ: Տղան սովորաբար առաջին կումը փակ աչքերով էր անում՝ չայրվելու համար զգուշությամբ մոտեցնելով շուրթերը, իսկ աղջիկը, կողքը նստած, լուռ նայում էր նրան, ասես մի սուրբ ծեսի ներկա լիներ:

Խնդիրն այն էր, որ նրանց համար այդքան էլ հեշտ չէր հաղորդակցվելը. Կլաուս-Դիտերը աղավաղում էր իսպաներենը, իսկ Ներեան անգլերեն

հաղորդակցվելու դժվարություն ուներ, որը ժանգոտել էր չօգտագործելու պատճառով: Միմյանց լեզուն չիմանալը զրկում էր թեկուզ փոքր-ինչ լուրջ զրույցներից: Անշուշտ, իրար հասկանում էին՝ ավելի շատ հասկացվելու հաստատակամ ջանքերի շնորհիվ՝ նշաններով, զատ-զատ բառերով, կարճ ֆրազներով կամ էլ բառարանի օգնությամբ: Աղջկա հետ խոսելով՝ Կլաուս-Դիտերը բավականաչափ լավացրել էր իր իսպաներենը: Ներեան էլ, որն իր մասնագիտական գրքերին չէր կպել սիրո այդ երեք շաբաթների ընթացքում, սկսել էր գերմաներեն սովորել Սան Ֆրանսիսկո հրապարակի գրախանութից գնած մի ձեռնարկով: Ոչ միայն Կլաուս-Դիտերը, այլև նրա հարևանները՝ Վոլֆգանգն ու Մարսելը. ամեն անգամ, երբ Ներեան մի բան էր ասում իրենց լեզվով, ծիծաղից մեռնում էին: Էլ ավելի զվարճանալու համար այդ սրիկաները նրան մատնանշում էին բառարանում այս կամ այն վավաշոտ բառը ու խնդրում, որ աղջիկը դա բարձրաձայն կարդա:

Կլաուս-Դիտերը բուսակեր էր: Նրա ներկայությամբ Ներեան միս չէր ուտում: Տղան ո՛չ ձուկ էր ուտում, ո՛չ էլ ծովամթերք: Բացառություն էին գրիլ արած ծովախեցգետինները: Շատ էր սիրում: «Գերմանիայում սա քիչ»,– ասում էր: Երբեմն հետմիջօրեին երկուսով իջնում էին մինչև էլ Տուբո և լիքը լանգուստ ու ծովախեցգետին ուտում, որոնք Կլաուս-Դիտերի համար միևնույն բանն էին. դրանց ասում էր փոքր ու մեծ խեցգետիններ: Չէր ծխում: Սա արդեն մի քիչ ավելի խնդրահարույց էր Ներեայի համար: Վախենալով նրան տհաճություն պատճառել՝ Ներեան բարերի զուգարանում էր ծխում: Իսկ որոշ դեպքերում, օրինակ, երբ տղային սպասում էր համալսարանի միջանցքում, իրար հետևից մի քանի սիգարետ էր ծխում:

Մի օր անկողնում Կլաուս-Դիտերը նրան շատ լուրջ խոստովանեց, որ հավատացյալ է:

— Ես հավատում եմ Աստված:

— Աստծուն:

— Ես հավատում եմ Աստծուն: Իսկ դո՞ւ:

— Չգիտեմ:

Լյութերական Ավետարանական եկեղեցուց էր: Ներեան, որը տրամադրվել էր նրա հետ Գերմանիայում ապրելուն, նրան հաճույք պատճառելու համար պատրաստ էր կրոնը փոխել:

Տղան ուզում էր, որ Ներեան անպայման գա Գյոթինգեն՝ իրեն այցելության: Շարունակ հարցնում էր.

— Կգա՞ս դու ինձ այցելել:

Ներեան խոստացավ: Որովհետև սրան, իհարկե, ձեռքիցս բաց չեմ թողնի: Որտեղի՞ց նրա նմանին պիտի գտնեմ: Ու նորից նույն բանը խոստացավ էլ Պորտիլյո կայարանում, մինչ կառամատույցում սպառվում էին նրանց քնքշանքի վերջին րոպեները: Վոլֆգանգը ստիպված էր ընկերոջ թևից քաշել, որ բարձրանա գնացք: Մի քանի վայրկյան անց գնացքը շարժվեց:

Ներեան տեսավ՝ ինչպես է նա հեռանում՝ պատուհանից կախված: Ցտեսությո՛ւն, շիկահե՛ր բաշ: Ցտեսությո՛ւն, հիանալի՛ ժպիտ: Նրան այնքա՛ն շատ էր սիրում, իրոք, այնքա՛ն շատ: Իրենց հերթին անցան մյուս վագոնները՝ պատուհանիկներից դուրս նայողներով, որոնց ուրիշների ձեռքերն էին հրաժեշտ տալիս: Մեկ րոպե անց կառամատույցն արդեն դատարկ էր: Ներեան մենակ մնաց՝ հայացքը հառած սյուների, մալուխների ու ռելսերի խճապատկերին: Տխո՞ւր էր: Այո՛, բայց ոչ լացակումած, որովհետև պայմանավորվել էին Գյոթինգենում հանդիպել ամառվա վերջին, երբ Կլաուս-Դիտերը համալսարանում սկսեր նոր ուսումնական կիսամյակը: Տղան խոստացել էր Գերմանիա հասնելուն պես գրել նրան: Կգրի՞, թե՞ չի գրի: Եթե խոստումը կատարի, ուրեմն սիրում է, եթե ոչ, ուրեմն նրա համար պարզապես օրգազմի հասնելու գործիք եմ եղել:

Ամեն առավոտ Ներեան իջնում էր շքամուտք՝ փոստարկղը ստուգելու: Նաև օրվա երկրորդ կեսին, թեև փոստատարը սովորաբար տասնմեկի ու տասնմեկն անց կեսի միջև էր գալիս ու էլ չէր վերադառնում: Երբ մեկ շաբաթ անցավ, աղջիկը նկատեց, որ իր հույսերն առաջին ճաքերն են տալիս: Հետո ճաքերը ճեղքվածքների վերածվեցին: Կայարանում զսպած արցունքները հիմա էին թափվում: Ու հանձնվելով՝ փակեց գերմաներենի ձեռնարկը, որը մշտապես բաց դրած էր սեղանին (էջերի արանքում՝ շեկ մազափունջը), ու այն գցեց պահարան:

Մի քանի օր անց նամակը հասավ, իրենց փոխանակած առաջին նամակը: Այս անգամ արցունքներն ուրախությունից էին: Այդ նամակը՝ մեկը մյուսից հաճելի սխալներով հագեցած, ստորագրության կողքը կպցրած կապույտ սրտիկով, փարատեց Ներեայի կասկածները: Համոզված էր, որ իր երևակայած ապագան Գերմանիայում է: Ժամանակ չկորցնելով՝

գնաց համալսարան: Իր կուրսեցիներից խնդրեց բաց թողած դասախոսությունների գրառումները՝ պատճենելու համար: Դասերից այլևս չէր բացակայում. ո՛չ տոնախմբությունների էր մասնակցում, ոչ էլ երեկոներն էր դուրս գալիս: Հիմա արդեն, ժամեր շարունակ գրադարանում կամ իր սենյակում փակված, պարապում էր այնպես, ինչպես չէր պարապել ամբողջ ուսման շրջանում: Ծրագիրն այսպիսին էր. ամռանն ավարտել համալսարանը, հավաքել ճամպրուկը, ու ցտեսությո՛ւն:

Երբ մոտենում էր քննաշրջանը, մի առավոտ համալսարանի բակում հանդիպեց Խոսե Կարլոսին: Տե՛ս, է՛, բավական ժամանակ է՝ ինձ չես զանգահարել. հիվա՞նդ ես եղել, չե՞ս ուզի՝ առաջիկա օրերին գամ մոտդ: Տղային այնպես նայեց, ասես դիմացը դատարկություն լիներ: Արհամարհանքո՞վ: Ավելի շուտ՝ անտարբեր: Ասաց՝ ո՛չ, ու շարունակեց ճանապարհը:

68

Ուսումնառության ավարտը

Ներեան հանձնեց քննությունները և ստացավ բակալավրի իր վկայականը: Ինտենսիվ պարապմունքների երկու ամսվա շնորհիվ գիտելիքների ընդունելի մի հանրագումար էր ձեռք բերել: Շաբաթ օրերը՝ երեկոյան, որպես պարգև շաբաթվա ընթացքում իր ցուցաբերած հաստատակամության գնում էր «Պալաֆոքս» կինոդահլիճ՝ ֆիլմ դիտելու: Կինոն չէր կարևորը: Երբեմն նույն ժապավենը նորից դիտում էր զուտ այն պատճառով, որ լավ տպավորություն էր ստացել նախորդ անգամ:

Գիտակցաբար էր «Պալաֆոքսն» ընտրել: Այսի՞նքն: Այդտեղից մոտիկ էր էլ Տուբո թաղամասը, ու դուրս գալուց հետո տրվում էր իր քմահաճույքներին: Բար էր մտնում ու նստած կամ, եթե տեղ չէր լինում, ոտքի վրա՝ կանգնակի մոտ մի բաժին գրիլ արած ծովախեցգետին էր ըմբոշխնում՝ ընկղմված գերմանացի իր տղայի մասին հիշողությունների մեջ: Ի՞նչ անելիս կլինի այս ժամերին: Ինձ հիշելիս կլինի՞: Ծովախեցգետինները ու ավելի ուշ արդեն տանը՝ գուցե մի յոգուրտ. դա էր իր ամբողջ ընթրիքը: Գիշերը, իր սենյակում փակված, շարունակում էր իրավաբանությանը վերաբերող գրքեր կարդալ ու գրառումներ անել, մինչև որ տաներկուսի կողմերը, երբեմն՝ ավելի շուտ, գլուխը պտտվում էր՝ աղջի՛կ ջան, այսօր հերիք եղավ: Երկու ամսվա ընթացքում չորս կիլո նիհարեց:

Քննություններին ներկայացավ ոչ միայն գիտելիքներով զինված: Թևքերում պահած հուշաթղթիկների մեջ էլ կային գիտությանը վերաբերող որոշ բաներ: Ավելի շատ այն պատճառով, որ իր ուժերին այնքան էլ վստահ չէր: Եթե չիմացության անհուն ջրերի մեջ խորտակվելիս լինեմ, փրկաժիլետի պես մի բան է, ասում էր ինքն իրեն: Փաստացի, դրանք այդպես էլ չօգտագործեց, բացառությամբ Իրավունքի փիլիսոփայության քննության ժամանակ մի քանի աննշան բան արտագրելուց:

Գերազանց գնահատականնե՞ր ստացավ: Ոչ մի հատ: Կարիք էլ չկար: Ոչ այդքան նպատակին հասնելու, որքան ծանր բեռից ազատվելու զգացողություն ուներ: Համոզվա՞ծ ես: Ավելի քան: Այն առավոտ, երբ ֆակուլտետի դռան մոտ իմացավ վերջին քննության արդյունքը, մուտքի աստիճան-

ներին կանգնած՝ ընտրեց ամպերից մեկը, ա՛յ այն մեկը՝ հեռվում՝ նրան շշնջալու, թե.

— Aita, տեսա՞ր՝ քո խնդրանքը կատարեցի: Հիմա արդեն ինքս կարող եմ ընտրել իմ ապագան:

Ոչ մի բան չէր խոչընդոտում Գերմանիա գնալուն: Փողոցով քայլելիս ինքն իրեն ծիծաղում էր: Ama-ի նման խելքս թռցնում եմ: Ամիսներ առաջ իմացել էր Շավիերից, որ մայրը բարձրանում է Պոլյոե՝ Չատոյի գերեզմանի հետ զրուցելու: Շավիերը քրոջը պատմելիս ակնհայտորեն հուզված էր: Վախենում էր, որ մայրը կընկճվի (բայց ընկճվածը հենց ինքն էր), որ մայրը չի վերականգնվի ծանր հարվածից (բայց հենց ինքն էր, որ չէր վերականգնվում): Ներեան առանձնապես նշանակություն չտվեց այդ խնդրին: Իրենց զրույցի դրամատիզմը նվազեցնելու համար ասաց, որ եթե գերեզմանատան մուտքը փողով լիներ, մայրն այնտեղ չէր գնա: Ունքերը կիտած Շավիերին կատակը չզվարճացրեց:

Համալսարանային թաղամասից դուրս գալով՝ Ներեան մտածեց հեռախոսախցիկից մորը հայտնել լավ նորությունը: Զանգե՞մ, թե՞ չզանգեմ: Ինչ-որ մի բան ստիպում էր հապաղել: Մի հեռախոսախցիկ տեսավ, անցավ կողքով: Ֆերնանդո էլ Կատոլիկո պողոտայի վրա բավական երկար տատանվելուց հետո որոշեց զանգել: Դե՛, պարզ է, ինչպե՞ս կարող եմ մորիցս թաքցնել, որ ավարտել եմ ուսումս: Մետաղադրամները լցրեց, առաջին երեք թվերը հավաքեց ու կախեց: Բայց ինչո՞ւ: Որովհետև նրան լավ գիտեմ: Մի բան կասի ու հրճվանքիս օրը կդառնացնի:

Ստացվեց, որ երկու շաբաթ մորը չէր հայտնում նորությունը: Վաղը կզանգեմ: Բայց զանգն էլի թողնում էր մյուս օրվան: Եվ այդպես շարունակ: Ժամանակ շահելու, հանգիստ լինելու համար: Մայրը Սան Սեբաստիանում էր հաստատվել: Ապրե՞լ նրա հետ: Սարսափելի է: Վերադառնալ ավա՞ն: Հաստատ ոչ: Երբ վերջին անգամ այնտեղ էր, իր ընկերուհիներն ու հին ծանոթները իրեն չէին բարևում: Հաշվարկներ արեց, բնակարանի իր հարևանուհիների հետ խոսեց ու որոշեց: Ի՞նչ: Ամբողջ ամառը Սարագոսայում մնալ: Նրան զգուշացրին.

— Սարագոսայում ամառը շոգ է, ինչպես փռում:

Կարևոր չէր: Չէ՞ որ նաև այն տեղն էր, ուր Կլաուս-Դիտերի նամակներն էին գալիս: Պարզ է, իհարկե, որ իր շիկահեր տղային կարող էր նաև Սան Սեբաստիանի փոստային տվյալները տալ: Իրո՞ք: Ո՞րը պիտի տար: Միայն

մոր տան տվյալները: Այնպես որ, ո՛չ: Պատկերացնում էր՝ ինչ է լինելու: Ներեա՛, քեզ Գերմանիայից նամակ է եկել: Ո՞վ է: Նշանած ունե՞ս: Էլ չասած, որ մայրը կարող էր բացել ծրարը՝ պատճառաբանելով, որ չի տեսել, թե ում է հասցեագրված: Ունակ է նման բան անել:

Իր հարևանուհիներից մեկը Ներեայի պես չեղարկել էր վարձակալությունը հուլիսի վերջով: Մյուսը, որը դեռ մեկ տարի ևս պետք է սովորեր, հույս ուներ շարունակել նույն տանն ապրել: Ասաց, որ արձակուրդից վերադառնալով՝ երկու նոր հարևանուհի կփնտրի: Ներեան հարցրեց՝ թույլ կտա՞, որ իր սենյակը պահի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Ու որ վարձակալության ծախսերն այդ ընթացքում ամբողջությամբ չծանրանան հարևանուհու ուսերին, առաջարկեց իր մասնաբաժինն ուղիղ նրան տալ, ոչ թե տանտիրուհուն: Հարևանուհին ուրախությամբ համաձայնեց:

Սարագոսան օգոստոսին՝ 38, 40, 44 աստիճան: Արև, ամայի փողոցներ: Այդ օրերն ասես հավերժ ձգվեին: Ներեան վեպեր էր ընթերցում. ուշ երեկոյան, երբ շոգը մի քիչ նահանջում էր, դուրս էր գալիս՝ զբոսնելու, ու գերմաներեն էր սովորում: Դժվար լեզու է: Ուղեղում չէր տեղավորվում, թե ինչպես է հնարավոր, որ մեր օրերում մարդիկ հացի խանութում, հիվանդանոցում, պատուհանից պատուհան այդ հոլովումներով արտահայտվեն, ասես հին հռոմեացի լինեին: «Դեղին էջեր»-ում փնտրեց լեզուների մի դպրոց՝ ինտենսիվ դասընթաց անցնելու համար: Օգոստոսի՞ն: Հեռախոսին չէին պատասխանում:

Հուսահատության, ձանձրույթի օրեր: Այդուհանդերձ, ավելի լավ է ժամանակն այս անապատային մենության մեջ անցկացնել, մթնշաղին զբոսնել ու ժամանակ առ ժամանակ գնալ Լա Հիպիկայի լողավազան ու մի հիանալի-հետաքրքիր ու հասկանալի դետեկտիվ ընթերցել, քան առավոտից իրիկուն մոր նախատինքը լսել: Սակավաթիվ հեռախոսազանգերի ընթացքում մայրը հարցնում էր՝ ինչո՞ւ է մնում Սարագոսայում, եթե արդեն ավարտել է ուսումը: Բանն այն է, որ… Ու մի բան հնարում, պատմում էր: Հետո ասում էր, որ լավ չի լսվում, ինչ վատ է լսվում, բան չեմ լսում, կամ էլ, որ մանրադրամն է վերջանում: Գերմանիայի ու Կլաուս-Դիտերի մասին ոչ մի բառ չէր ասում:

Ներեայի համար նամակների պակասը մենության ու դժոխային շոգից ավելի վատ էր: Արդեն հուլիսին Կլաուս-Դիտերի նամակներն ավելի ուշ-ուշ էին հասնում: Օգոստոսին ոչ մի հատ չեկավ: Ներեային հայտնի էր

պատճառը, սակայն դա չէր խանգարում, որ ամեն անգամ հիասթափվեր, երբ հայացք էր նետում փոստարկղին ու այն դատարկ տեսնում, ինչպես և երեկ ու դրա նախորդ օրը: Ի՞նչն էր խնդիրը: Կլաուս-Դիտերը մեկ ամսով գնացել էր Էդինբուրգ: Այդ ընթացքում Ներեան նրան մեկ տասնյակ գերմաներեն ֆրազներով համեմված նամակներ էր ուղարկել՝ Գյոթինգենի բնակարանի հասցեով: Որոշ ֆրազներ գերմաներենի ձեռնարկից էր արտագրել, մյուսները՝ պակաս քաղաքավարի, իր բստրածն էր, որոնք գրում էր բառարանի կիսատ-պռատ օգնությամբ: Սեպտեմբերի սկզբին ստացավ պատասխանը. ալելուիա՛: Տղան վերադարձել էր ճամփորդությունից, իր կարոտն էր արտահայտում՝ *ես կարոտում եմ քեզ*, ու հիշեցնում, որ Ներեան խոստացել էր հոկտեմբերին գալ իր մոտ:

Սարագոսա նրան բերողը հայրն էր: Սարագոսայից տանողը՝ Շավիերը:

— Ama-ն խնդրեց՝ քեզ բերեմ: Այսօր աշխատանքի չեմ, դրա համար էլ եկա: Գալու նպատակը ո՞րն էր: Որ օգներ. Ներեան բազմաթիվ իրեր ուներ: Բավական ժամանակ խլեց այդ ամենը մեքենայի մեջ տեղավորելը: Շավիերը հետևի նստարանների թիկնակները ծալեց, որ մի քիչ ավելի շատ տեղ բացվի ճամպրուկների համար: Մեքենան մինչև առաստաղը լցրեց:

— Ո՞ւր գնանք՝ ուտելու:

Նախքան ճամփա ընկնելը քույր ու եղբայր գնացին մոտակա ռեստորան: Ծամում էին, խմում ու խոսում:

— Ama-ն մտահոգվում էր, որ չես վերադառնում:

— Նրան ասել էի, որ նախքան Սարագոսայից հեռանալը գործեր կային:

— Ես այդպես էլ մտածում էի: Համալսարանակա՞ն:

— Սիրային:

Երիտասարդական-մարտահրավերային տոնով պատմածը Շավիերին չհուզեց, և նա անհաղորդ տեսքով շարունակեց կտրել հորթի էսկալոպը: Երբեմն ցրված նայում էր հարևան սեղաններին նստածներին: Քրոջ խոստովանություններն ասես ո՛չ նրա հետաքրքրությունն էին արթնացնում, ո՛չ էլ տպավորում նրան, մինչև որ ականջին մի բառ հասավ: Ի՞նչ բառ: Գերմանիա: Պատառաքաղը՝ ծայրին մսի մի կտորով, սառեց օդում, Շավիերը նայեց Ներեային՝ ապշա՞ծ: Ամեն դեպքում՝ տագնապով:

— Ի՞նչ ես որոշել:

— Ամսի իննին գնացք կնստեմ, կգնամ: Միայն գնալու տոմս կառնեմ:

— Ama-ն գիտի՞:

— Առայժմ միայն դու գիտես:

Խոսակցությունն ասես ջլատվեր: Բառերը հոսում էին՝ շրջանցելով լռության կղզյակները: Ընդհանրականությունը կորցրած այդ ալարկոտ բառերի գետը հետը բերում էր քիչ կարևոր, խուսանավող թեմաներ, անհետաքրքիր խնդիրներ: Շավիերը, ճաշը կիսատ թողնելով, հաշիվը խնդրեց:

— Թե՞ աղանդեր կուզեիր:

— Հը՞:

— Եթե աղանդեր կուզես, մի քիչ էլ կարող ենք մնալ: Չեմ ուզում քեզ շտապեցնել:

— Ո՛չ, ո՛չ: Ոչի՞նչ, որ սիգարետ ծխեմ նախքան ճանապարհ ընկնելը:

Քսան րոպե անց արդեն թիկունքում էին թողել այն, ինչ, ըստ Ներեայի, կարելի էր համարել Սարագոսայի վերջին շենքը: Շավիերը վարում էր, իսկ նա ձեռքի թատերական-ողջունող շարժումով ու ձևական կարոտախտով հրաժեշտի մի կարճ ճառ արտասանեց: Զվարճանում էր՝ մռայլ ձայնով ասելով, որ այնտեղ ավարտվում էր իր կյանքի փուլերից մեկը, որ քաղաքի մասին լավ հիշողություններ էր պահելու, բայց որ նույնիսկ երեք հազար տարի հետո էլ չի վերադառնա այս քաղաք:

Շավիերը երկար լռելուց հետո ասաց.

— Տեսնում եմ, որ ama-ն շատ մենակ է, ու վախենում եմ, որ իրականության զգացումն ամբողջությամբ կորցնի: Փորձում եմ շատ ժամանակ անցկացնել նրա հետ, բայց աշխատանքիս պատճառով քիչ եմ ազատ լինում: Նա երևակայում է, որ դու իրավաբան ես դառնալու: Քեզ չի ասե՞լ:

— Ատում եմ իրավագիտությունը:

— Դե՛, ես էլ չեմ զվարճանում հիվանդանոցում: Մի բանով պիտի ապրես, չէ՞:

— Այո՛, բայց ոչ որևէ բանով, իսկ ինձ համար իրավաբանությունը որևէ բանից էլ վատ է: Ճիշտն ասած, ես իմ ապագան այստեղից շատ հեռու եմ տեսնում: Մեկի հետ ծանոթացել եմ: Պիտի փորձեմ:

— Շատ երջանիկ տեսք ունես:

— Քեզ դուր չի՞ գալիս:

— Հակառակը: Միակ բանը, որ խնդրում եմ, որ ama-ի ներկայությամբ շատ ցույց չտաս: Դե՛, գիտես՝ մեր ընտանիքի ոչ բոլոր անդամներն ուրախության պատճառ ունեն:

— Եղբա՛յրս, ինձ ծանոթ է այդ փոսը: Մեջը չեմ ընկնելու: Կարո՞ղ եմ մի բան հարցնել: Զուտ հետաքրքրությունից: Եթե չուզես, մի՛ պատասխանիր:

Հայացքը ճանապարհից չկտրելով՝ Շավիերը գլխով արեց:

— Aita-ի մահից հետո…

— Նա չմահացավ, նրան սպանեցին:

— Արդյունքը նույնն է:

— Ինձ համար տարբերությունն էական է:

— Լա՛վ: Նրա սպանվելուց հետո շուտով արդեն մեկ տարի է, երբևէ ծիծաղե՞լ ես: Դե՛, չգիտեմ, անսպասելի, հիվանդանոցում մեկի ասած մի ապուշության վրա կամ էլ կինո նայելիս: Այդ պահին ամեն ինչի մասին չե՞ս մոռացել, գոնե թեթև չե՞ս ծիծաղել:

— Հնարավոր է: Չեմ հիշում:

— Թե՞ քեզ արգելել ես երջանիկ լինել:

— Չգիտեմ՝ երջանկությունն ինչ է: Ենթադրում եմ՝ դա մի գիտություն է, որը դու լավ գիտես: Զգացվում է, որ դրա մասնագետն ես դարձել: Ես սահմանափակվում եմ շնչելով, աշխատանքս կատարելով, ama-ին ընկերակցելով: Այդքանն ինձ բավարար է:

— Անընդհատ ama-ի անունն ես տալիս:

— Տեսնում եմ, որ ama-ն լավ վիճակում չէ, ասածդ փոսի մեջ է: Ու դա ինձ մտահոգում է:

— Լավ զավակ ես: Փոխարենը ես ոնց որ թե չեմ մտահոգվում: Դա՞ ես փորձում ասել: Որ վրայիցս գցո՞ւմ եմ: Որ ի՞մ հարցերով եմ զբաղված:

— Ոչ ոք որևէ բան չի պահանջում քեզնից, ո՛չ էլ երեսովդ է տալիս: Այդ առումով կարող ես հանգիստ լինել: Aita-ի ընկերությունը վաճառված է: Ֆինանսապես վատ չենք: Երիտասարդ ես, վայելի՛ր, քանի կարող ես:

Որոշեցին թեման փոխել: Հենց նոր հասել էին Նավառա: Արև, տափաստան, լերկ տարածքներ: Ժամանակ առ ժամանակ մի գյուղ էր ուրվագրծվում: Ու հանկարծ՝ Ներեան, թե.

— Արանսասուից լուր ունե՞ս:

— Վաղուց արդեն լուր չունեմ: Վերջին լսածս բանն այն է, որ գնացել է Գանա որպես կամավոր, բայց դա հաստատ չէ: Ինչո՞ւ ես հարցնում:

— Հենց էնպես: Ինձ դուր էր գալիս:

Խոսակցությունը դրանով ավարտվեց: Ավելի ուշ, երբ արդեն անցել էին Տուդելան, Ներեան ռադիոն միացրեց:

69

Խզումը

Չատոյի դեմ սպառնագրերը Խոշիանին զրկեցին ախորժակից: Նաև իր լավագույն ընկերոջից: Որովհետև եթե քաղաքում լիներ, ոչինչ, բայց մի ավանում, որտեղ բոլորս իրար ճանաչում ենք, չես կարող թիրախավորվածի հետ կապ ունենալ: Դրա շուրջ էր մտորում այն կիրակի՝ Սումայայից վերադառնալիս: Չատոյի հետ էր գնացել ու առանց նրա էր վերադառնում: Հիմա ո՞վ է իմ զույգը դառնալու՝ մուս խաղալու համար: Կեսօրվա ճաշից հետո (բկին էր կանգնում, չկարողացավ վերջացնել) մյուսների հետ բարից դուրս եկավ, բայց առաջին իսկ զառիվերին ձևացրեց՝ իբր ուժասպառ է, ու հետ մնաց: Հետո, նախքան Գետարիա հասնելը, որոշեց իջնել հեծանվից, ու մի որոշ ժամանակ նստելով ժայռին, դեմքով դեպի ծովը՝ մտքերը պարզեցնել: Ծովը մեծ է: Ծովը Աստծո պես է, որը թե՛ մոտ է, թե՛ հեռու, որը մեզ հիշեցնում է, թե որքան մանր ենք, *եսաերփիրոջ*, ու որը մեզ կոչնչացնի, եթե *ցանկություն ունենա:* Սովորականից շատ ավելի դժվար հասավ ավան: Օրիոյում քիչ էր մնում՝ ավտոբուս նստեր: Բա հեծո՞ն: Կարող էր մի տեղ շղթայել-թողնել: Բա որ գողանա՞ն: Ուշադիր է պետք լինել, այս կողմերում շատ օտարականներ են լինում: Շարունակեց քշել՝ անտրամադիր, ուշադրություն չդարձնելով երթևեկությանը, իր մռայլ մտորումներով կլանված:

Երբ մտավ տուն, Միրենը, գոգնոցը կապած, խոհանոցից նայեց աչքերի մեջ, բայց ոչ թե խիստ կամ մռթոշ, այլ հարցական: Խոշիանը սպասում էր, որ բարկանալու է ուշանալու համար: Բայց կինը սահմանափակվեց՝ ասելով.

— Հապա՛, գնա՛ ցնցուղի տակ:

Կնոջ տոնը քնքուշ էր՝ գրեթե հին ժամանակների պես: Կոշտ չէր հնչում, ինչպես երբեմն, ո՛չ էլ չափից ավելի մեղմ, բայց դեմքի այնպիսի արտահայտություն ուներ, որից անմիջապես կռահում ես ապագա որոտները, նույնիսկ սովորական թեմաներով խոսելիս:

— Հեչ սոված չեմ:

— Ուրեմն նստի՛ր ու նայի՛ր, թե ե՛ս ոնց եմ ուտում:

Երկուսով սեղանի մոտ նստած՝ զավակների բացակայությամբ խոսեցին. լուրջ, չոր, ապուրը գդալելով, գառան կողամիս ծամելով:

— Իմացար, չէ՞:

— Սկզբում Խոշե Մարին, հիմա էլ՝ սա:

— Նույն բանը չէ:

— Դժբախտությունը դժբախտության վրա:

— Դրա կինը զանգեց: Ժամը համարյա տասն էր: Կախեցի:

— Բայց երեկ միասին սրճարանում էիք:

— Երեկը երեկ էր, այսօր ուրիշ օր է: Էլ ընկերություն չենք անում: Կամաց-կամաց ընտելացի՛ր:

— Այդքան տարվա ընկերուհի էիք: Չե՞ս ափսոսում:

— Euskal Herria-ն եմ ափսոսում, որ չեն թողնում ազատ լինի:

— Ես չե՛մ ընտելանալու: Չատոն ընկերս էր:

— Է՛ր: Ու շատ զգո՛ւյշ եղիր նրան հանդիպելիս: Ամենաճիշտը կլինի՝ գնան: Իրենց ունեցած փողով իրենց վրա ի՞նչ պիտի նստի տուն առնելը Էնտեղ՝ ներքևում: Հատո՞ւկ են անում, ի՞նչ է:

— Չեն գնա: Չատոն պնդաճակատ է:

— Պայքարը չի ներում: Կամ կգնան, կամ կվռնդվեն: Ընտրությունն իրենցն է:

Առավոտյան տասը չեղած՝ հեռախոսը զնգաց: Միրենը ոչ մի կասկած չուներ, որ նա է՝ ընկերուհին: Մեկուկես ժամ առաջ մեկ ուրիշ զանգ նրան հանել էր անկողնուց. Խուանին էր. իմացել էր, ասում էր, որ չի զարմանում, որ արդեն բավական ժամանակ է, ինչ...

Խուանին եզրակացրեց, թե.

— Չաղացել են՝ բանվոր դասակարգը շահագործելով, ու եկել է վճարելու ժամանակը: Մենակ ես չեմ, որ այդպես եմ ասում: Ավանի ժողովուրդն է ասում: Քեզ զգուշացնում եմ, որովհետև բոլորս գիտենք, որ դուք լավ ընկերուհիներ եք:

Միրենը նոր լվացած ու դեռ թաց մազերին գլխաշոր կապեց ու հողաթափերով դուրս եկավ փողոց: Շատ հեռու պետք չէր գնալ: Սպառնագրերն ամենուր էին, նույնիսկ եկեղեցու պատերին. Txato chivato, opresor, alde hemendik, Herriak ez du barkatuko:

Ու այդ կարգի բաներ: Մեկը չէր, երկուսը չէր. տասներկու, տասնհինգ, քսան սպառնագիր կար, ու շարունակվում էին փողոցով թե վեր, թե վար:

Մի հոգու բան չէր. այդտեղ շատ ձեռք էր աշխատել: Խոշոր ու մտածված գործ էր: Կանխազգում էր, թե ինչ է ասելու. ինձ զանգում է՝ իմանալու՝ տեղ-յա՞կ եմ, թե՞ չէ, ու խնդրելու, որ գնանք, խոսենք ու շագանակները կրակից հանենք իրենց համար: Միշտ օգուտ են քաղում ուրիշներից:

Իհարկե, Բիչո՛րին զանգեց: Եկեղեցու զանգերը դեռ տասը չէին խփել: Միրենը, որ լոգասենյակում մազերին բիգուդի էր փաթաթում, վազեց հեռախոսի մոտ՝ հարաբերությանը վերջ դնելու վճռականությամբ:

— Լսում եմ:

— Միրե՛ն, ես եմ: Իմացե՞...

Հենց լսեց-ճանաչեց ձայնը, կախեց: Ի՞նչ աներեսն է: Ջավակս կյանքի հետ է խաղում Բասկերի երկրի համար, իսկ էս թափթփուկները չեն դադարում շահագործել ժողովրդին: Դե՛, իրենց ցանածն են հիմա հնձում: Այդպես մռթմռթալով՝ վերադարձավ լոգասենյակ՝ բիգուդիներ փաթաթելը վերջացնելու:

Օրեր անցան, Միրենը նրան չէր տեսնում: Քանի՞ օր: Բավական շատ՝ առնվազն երկու շաբաթ: Տնից դուրս չի՞ գալիս: Նրա ամուսնուն մի անգամ տեսել էր հեռվից, երբ նա մեքենայով դուրս էր գալիս այն փողոցից, որտեղ ավտոտնակ ուներ:

Ընկերուհու մասին միայն Խուանիի պատմածը գիտեր: Ո՞ր պատմածը: Դե՛, որ իր խանութ մտնելու երես է ունեցել: Սպասել է, մինչև իր հերթը հասնի, ու ցանկացել է միս առնել: Խուանին նրան ասել է՝ չունենք: Ուրիշ բան է խնդրել փոխարենը, հիմա չեմ հիշում ինչ, ու Խուանին նորից է ասել, թե չունենք: Այդ ժամանակ Բիչո՛րին ազնվական տիկնոջ տեսքով վճռականորեն ասել է՝ ուրեմն երկու հարյուր գրամ Յորքի այս ապուխտից կտրի՛ր՝ մատնանշելով կտորը: Խուանին նրա վրա այնպիսի հայացք է գցել, որ կարող էր պատը ծակել, ու ասել է՝ քեզ համար ոչ մի բան չունենք:

Միրենը նրան մի առավոտ փողոցում տեսավ: Շատ կարճ՝ երկու վայրկյան: Պատահաբար հանդիպել էր քահանային: Նա էլ, թե՝ նորություն ունե՞ք Խոշե Մարիից: Դեռ սպասում ենք: Իրականում ստեց: Մինչ այդ օրը Պաչին նրանց երկու նամակ էր փոխանցել՝ ասելով, որ ավելի լավ է՝ սա մեր մեջ մնա:

Խոսեցին: Դոն Սերապիոն, ինչպես միշտ, քիթն ամեն ինչի մեջ էր խոթում: Ու այդ պահին նրա ուսի վրայով Միրենը նրան տեսավ: Բիչո՛րին՝ աչքերի տակը ուռած, գալիս էր դեպի իրենց կողմը՝ ձեռքին նույն այն

ինամաշ պայուսակը, որը շաբաթ օրերը հետը Սան Սեբաստիան էր վերցնում: Այդքան փող են շահում, բայց մուրացկանի պայուսակ է բռնում: Գծուծի մեկն է: Միրենը արագ տեղը փոխեց՝ կանգնելով դոն Սերապիոյի կողքին՝ մեջքով դեպի մոտեցողը: Միրենն ու քահանան զբաղեցնում էին մայթը: Մյուսը, ուշադրությո՛ւն, ստիպված էր մայթից իջնել, որ կարողանար շարունակել ճանապարհը: Միրենն անմիջապես նորից քահանային դեմքով կանգնեց:

Մի քանի վայրկյան անց դոն Սերապիոն, թե.

— Իրար հետ չե՞ք խոսում:

— Ե՞ս: Սրա հե՞տ: Չէ մի՛:

— Հենց հանուն իրենց պետք է թողած լինեին ավանը:

— Դե՛, գնացե՛ք ու նրանց ասե՛ք, որովհետև իմ կարծիքով իրենք չեն էլ ուզում լսել:

Իսկ Խոշիանը մի անգամ գաղտնի խոսել էր Չատոյի հետ: Ավտոտնակի մոտ էր նրան սպասել: Ե՞րբ: Մի գիշեր՝ ընթրիքից հետո, աղբը թափելու պատրվակով դուրս էր եկել՝ նրան հանդիպելու: Խղճի խայթ էր զգում ու պետք է դրանից ազատվեր: Փողոցում տեսնելով՝ նախկինում էլ էր փորձել՝ ունքերը թեթևակի շարժելով ի նշան ողջույնի, բայց ապարդյուն: Ու վերջերս սովորություն էր դարձրել աղբի տոպրակով փողոցով վար իջնել, մի գործ, որ սովորաբար Գորկայինն էր:

Բայց Չատոն աշխատանքից մի օր մի ժամի էր վերադառնում, մյուս օրը՝ ուրիշ: Իհարկե, զգուշություն էր ցուցաբերում: Իսկ Խոշիանը չէր ուզում ուրիշ տեղ նրան բռնեցնել, բացի այն մութ փողոցից, որտեղ ընկերոջ ավտոտնակն էր: Վերջապես մի գիշեր կարողացավ նրան հանդիպել:

— Ես եմ:

— Ի՞նչ ես ուզում:

Խոշիանի ձեռքերն էին դողում, ձայնն էր դողում, ու անընդհատ այս ու այն կողմ էր նայում, ասես վախենում էր, որ կարող էին իրեն տեսնել Չատոյի հետ խոսելիս:

— Ոչ մի բան: Ուզում էի ասել, որ ցավում եմ, որ չեմ կարողանում քեզ բարևել, որովհետև պրոբլեմների մեջ կընկնեմ: Բայց եթե փողոցում հանդիպենք, իմացի՛ր, որ քեզ մտքումս ողջունում եմ:

— Քեզ երբևէ ասե՞լ եմ, որ վախկոտի մեկն ես:

— Ինքս ինձ անընդհատ ասում եմ: Բայց դա բան չի փոխում: Կարո՞ղ եմ քեզ գրկել: Այստեղ մեզ ոչ ոք չի տեսնում:

— Թող մնա մինչև այն ժամանակ, երբ համարձակվես օրը ցերեկով գրկել:

— Եթե միայն *կարողանայի* քեզ օգնել, երդվում եմ...

— Մի՛ մտահոգվիր: Քո մտովի ողջույնները բավարար են:

Չատոն, հանգիստ քայլելով, հեռացավ՝ աղոտ ուրվագծվելով լապտերի մեռյալ լույսի ներքո: Խոշիանը սպասեց, մինչև իր հին ընկերն անկյունից թեքվի դեպի իր տուն տանող ճանապարհ: Ու Չատոյին այլևս երբեք չտեսավ այդքան մոտիկից: Չատոն քայլում էր՝ մի ձեռքը տաբատի գրպանը դրած: Շուտով ճիշտ այն տեղով անցավ, որտեղ մի անձրևոտ հետմիջօրե (որ ավելի ու ավելի էր մոտենում) ETA-ի մարտիկը խլելու էր նրա կյանքը:

70

Հայրենիքն ու ստերը

Պատմում են, ասում են, թերթերում էր այդպես գրած, որ նրան մի հովիվ էր գտել: Հովիվն իր ոչխարների հետ Բուրգոս նահանգի չորացած դաշտերով անցնելիս հայտնաբերել էր այլանդակված ու վայրի կենդանիների կողմից հոշոտված ածյունը:

Հովիվը գվարդիականներին հայտնել էր, որ մեռածի կողքը մի ատրճանակ կար: Ներքին գործերի նախարարն այդ հանգամանքը բավարար էր համարում՝ ինքնասպանության վարկածը հաստատելու համար: Զենքի տեսակը մեռածին ETA-ի հետ կապելու հիմք էր տվել:

Գրպանում ոստիկանները գտել էին նույնականացման քարտ՝ կեղծ անունով: Երեկոյան հեռուստալուրերով ցույց էին տվել լուսանկարը: Ավանում բոլորը նրան ճանաչել էին:

Պաչին գաղտնի հայտնել էր Խուանիին և Խոսեչոյին, որ արդեն բավական ժամանակ է, որ կազմակերպությունը Խոկինից լուր չուներ:

— Պետք է պատրաստ լինեք վատագույնին:

Դագաղը եկավ՝ ikurriña-ի մեջ փաթաթված: Անձրևում էր, բոլորը անձրևանոցով էին: Հարյուրավոր մարդիկ փողոցներում վանկարկում էին. «Ոստիկաննե՛ր, մարդասպաննե՛ր»: Խոկինի հուղարկավորությանը հոծ բազմություն էր ներկա, նրա պատվին, բռունցքները վեր տնկած, երգեցին, խոստացան վրեժխնդիր լինել ու նրան հողին հանձնեցին: Իսկ ամռանը՝ ավանի սրբին նվիրված տոնակատարությունների ժամանակ, նրա մեծադիր դիմանկարը կախված էր քաղաքապետարանի պատշգամբից:

Նրա ծնողները ոչնչացված էին: Մսի խանութը օրեր շարունակ փակ մնաց: Խուանին կամաց-կամաց ուշքի էր գալիս, հաշտվում էր ցավի հետ, աղոթքի մեջ մխիթարանք էր գտնում, մինչդեռ Խոսեչոն խոր ընկճախտի մեջ էր սուզվում: Դե՛, այդպես էին ասում: Ո՞վ: Հարևանները: Նաև Խուանին, որ այդ օրերին մի երկու անգամ մտել էր Միրենի մոտ՝ սիրտը թեթևացնելու: Պատմում էր Խոսեչոյի անվերջանալի լռության ու անկողնում երկար ժամեր պառկած մնալու մասին, գանգատվում էր, որ հնարավոր չէր նրան ստիպել վեր կենալ:

Երկուսով պայմանավորվեցին-որոշեցին, որ Խոշիանը պետք է գնա, հետը խոսի, նրան ընկերակցի ու գուցե (տղամարդկանց ո՞վ է իմանում) նրա տրամադրությունը բարձրացնի: Խոշիանը, երեկոյան տուն հասնելով, ասաց.

— Արդեն մի անգամ ինձ նրա մոտ ուղարկել էիր. հեչ լավ չեղավ:

Մռթմռթում էր, անիծում, անպատվում: Խարդախ, խառնակիչ կանայք, քիթ խոթողներ:

Միրենը բաց պատուհանի մոտ անհողդողդ շարունակում էր պաքսիմատով ձուկ տապակել: Նրան թողեց խոսի՝ ասես սպասելով, որ փուքսը իջնի:

Ավելի ուշ՝ արդեն անկողնում, թե.

— Լսի՛ր, եթե չես ուզում, մի՛ գնա: Վաղը Խուանիին կասեմ, որ հրաժարվում ես, ու պրծավ-գնաց:

— Սո՛ւս մնա, էսօր արդեն կյանքս կերար:

Ու փնթփնթալով նորից գնաց Խոսեչոյի մոտ: Ենթադրում-վախենում էր, որ մսավաճառը առաջին անգամվա պես նորից կընկնի հեկեկոցների մեջ, ու մտածում էր՝ ինքն ինչպես պիտի դիմանա: Խանութը փակելու ժամը մոտենում էր: Հաճախորդ չկար: Մսի ու ճարպի հոտ էր գալիս: Խոսեչոն վաճառասեղանի հետևը արնակարմիր բծերով ցողված իր սպիտակ գոգնոցով, տեսնելով Խոշիանին, փղձկաց ուսերի ուժգին ցնցումներով, խոր, կոկորդային հեծկլտոցներով: Հաղթանդամ, թիկնեղ՝ նետվեց նրան գրկելու: Խոշիանը, մեջքին ուժեղ թփթփացնելով, նրան սիրտ էր տալիս.

— *Դրանցփրոջ*, Խոսեչո՛, *դրանցփրոջ*:

Չգիտեր՝ ուրիշ էլ ինչ ասեր: Բառեր էր փնտրում, բայց մտքով միայն հայհոյանք ու պղծություն էր անցնում: Բայց նույնիսկ վստահ չէր, որ կարողանում է դրանք ճիշտ տոնով ու ժեստով արտաբերել: Բացի դրանից՝ Խոսեչոն ընկեր էր, իհարկե, բայց շատ էլ մտերիմ չէր: Մտերիմ ընկերը Չատոն էր: Նա՝ հաստատ, թեև էլ իրար հետ չէին խոսում: Մսավաճառի հետ, որը երբեք չէր գալիս բար՝ քարտ խաղալու, ոչ էլ հեծանվորդ էր, այդքան էլ մտերիմ չէր:

Խոսեչոն որոշեց խանութը սովորականից փոքր-ինչ շուտ փակել: Խընդրեց Խոշիանին, որ իջեցնի ճաղավարագույրը, որովհետև չէր ուզում, որ պատահական անցորդները նրան այդ վիճակում տեսնեին: Քիչ անց, ձեռքերը կոնքերին, ճնշված հայացք գցելով դեպի առաստաղը, կամաց-

կամաց հանդարտվեց: Այդ ընթացքում իր ահռելի ձեռքը դրեց Խոշիանի ուսին՝ ասես ազդարարելով, որ այս պահից սկսած պատրաստ եմ խոսել:

— Գիտեի, որ գալու ես:

— Իմ ու քո կնոջ մոգոնածն է: Հիմա նորից կողքդ եմ ու չգիտեմ՝ ինչ ասեմ:

— Վերջապես մեկը, որ ձևեր չի թափում: Ընորհակալ եմ:

Առաջարկեց, որ նստեն խանութի հետնամասի սենյակում: Խմիչք առաջարկեց (ով գիտի, առանց ալկոհոլի է), որ սառնարանում էր պահում: Ուտելիք առաջարկեց: Պարզ ու հասարակ ասաց, որ ցուցափեղկից վերցնի:

— Ուզածդ վերցրո՛ւ: Հաց չունեմ:

Խոշիանը հրաժարվեց ամեն ինչից՝ բացի նստելու առաջարկից:

— Հանկարծ չփորձես ինձ մխիթարել: Եթե մի քիչ խելք ունես, վազի՛ր, տղայիդ գտի՛ր: Ֆրանսիայում որտեղ ուզում է՝ լինի: Գնա՛, բռնի՛ր, երեսը ջարդուխո՛ւրդ արա ու բե՛ր տուն կամ հանձնի՛ր ոստիկանությանը: Աղոթի՛ր, որ նրան հնարավորին չափ շուտ բռնեն: Այո՛, բանտ կնստեցնեն, բայց գոնե ինձ նման չես կորցնի նրան:

Խոշիանը, աթոռին նստած, լռում էր՝ իրավիճակին համապատասխան դեմքի արտահայտությամբ:

— Ինձ չթողեցին՝ թաղումը կազմակերպեմ: Տղայիս վերցրին ու հայրենասիրական ներկայացում սարքեցին: Նրանց գործին եկավ տղայիս ճիշտ ժամանակին *մահանալը*: Քաղաքական իրենց նպատակով օգտագործելու համար, իմացա՞ր: Ինչպես բոլորին են օգտագործում: Տղերքը ոչխարի պես դյուրահավատ են. դրա պատճառով: Միամիտ են: Ու Խոշե Մարին էլ՝ նույնը: Նրանց գլուխը լցնում են, ձեռքը զենք են տալիս, ու, հայդե՛, գնա՛, սպանի՛ր: Տանը քաղաքականության մասին երբեք չենք խոսել: Քաղաքականությունն ինձ չի հետաքրքրում: Քեզ հետաքրքրո՞ւմ է:

— Ամենևին:

— Նրանց գլուխները վատ գաղափարներ են լցնում, ու, քանի որ երիտասարդ են, թակարդն են ընկնում: Հետո իրենց հերոս են կարծում, քանի որ ատրճանակ ունեն: Թողնում են աշխատանքը, ընտանիքը, ընկերներին ու գլխի չեն ընկնում, որ դիմացը բան չեն ստանալու, որովհետև վերջում պարգևատրումը կա՛մ բանտն է, կա՛մ գերեզմանը: Ամեն ինչ թողնում են, որ կատարեն մի քանի ճարպիկների ասածները, մյուս մարդկանց կյանքը ջարդուփշուր անեն, ամենուր այրիներ ու որբեր թողնեն:

— Դրա մասին ամեն տեղ չասես, եղա՛վ:

— Մտքիս ինչ կա՝ ասում եմ:

— Կյանքդ կպղտորեն:

— Մի զավակ ունեի, նրան էլ կորցրի: Կյանքն ինչի՞ս է պետք:

— Չատոյին նայի՛ր: Արդեն ոչ ոք հետը չի խոսում:

— Դո՛ւ խոսի՛ր հետը, նրա ընկերն ես:

— Ինձ հետ էլ նույնը կանեն:

— Ստախոսների՛, վախկոտների՛ երկիր: Խոշիա՛ն, ինձ լսի՛ր: Թո՛ղ էշությունդ ու գնա՛, Խոշե Մարիին գտի՛ր:

— Այդքան էլ հեշտ չէ:

— Եթե ես իմանայի՝ Խոկինը որտեղ էր, ոստիկանությանը կհայտնեի: Հիմա զավակս, թեկուզ բանտում, *ողջ կլիներ*: Ու ինձ համար մեկ է, եթե հետս չխոսեր: Բանտից մի օր դուրս են գալիս, գերեզմանից՝ երբեք:

Մեկ ժամ զրույցից հետո Խոշիանը գլխահակ դուրս եկավ մսավաճառի մոտից: Նախատեսել էր «Պագոետա» գնալ՝ մի ձեռք թուղթ խաղալու: Ինչ-պե՞ս եմ քարտերի վրա կենտրոնանալու սրա պատմածներից հետո: Խոսեչոյի նվիրած երշիկեղենի ու արնաերշիկի փաթեթը ձեռքին՝ ուղիղ տուն գնաց:

Միրենը՝ զարմացած, թե.

— Ի՛նչ շուտ եկար: Կարողացա՞ր տրամադրությունը բարձրացնել:

— Մի միլիմետր էլ չստացվեց. փոխարենն իմ տրամադրությունը գցեց: Այլևս ինձ չխնդրես նրա մոտ գնալ:

71

Ծուռ աղջիկը

Հունվարն էր: Երեքշաբթի: Լսվա՞ծ բան է: Երեքշաբթի օրով, այն էլ՝ առավոտյան: Գործ ու անձրևային աշխատանքային օր: Այդ աստիճան կարևոր իրադարձությունը, որը ամբողջ կյանք հիշվելու է, մարդիկ նախընտրում են կազմակերպել գարնանային կամ ամառային շաբաթվա վերջին օրերին, Աստծո՛ սիրույն, որ երկինքը կապույտ լինի, եղանակը՝ հաճելի, ու որ ամբողջ բարեկամությունը հավաքվի եկեղեցու դռանը, լուսանկարչի առջև՝ երկարափեշ հագուստով ու ժպտադեմ: Իսկապես, սա ի՛նչ անմոռանալի բան էր: Արանչյան զանգահարեց: Ժամը քանի՞սն էր: Տասնմեկն անց: Միրենն էր վերցրել լսափողը: Չշնորհավորեց: Նրան չոր ու լուրջ ասաց, որ այդ ձևով մոր հետ չեն վարվում: Նույնիսկ չհետաքրքրվեց մանրամասներով, որևէ բանով, հրաժեշտ տվեց, լսափողը դրեց ու լացելու ցանկություն չունեցավ: Ե՞ս: Ուզում է՝ թող գնա, իր կյանքով ապրի:

Երկուսն անց Խոշիանը վերադարձավ մետաղաձուլարանից:

— Վատ լուր ունեմ:

— Նրան բռնե՞լ են:

— Ամուսնացել է:

— Ո՞վ:

— Աղջիկդ:

— Ու դա վա՞տ նորություն է:

— Հիմա՞ր ես, թե ի՞նչ: Քաղաքացիականով է ամուսնացել այդ սալամանկացու հետ: Իսկ հիմա մի հատ մտածի՛ր ու հաշի՛վդ առ: Առանց Աստծո օրհնության, մեզ լուր չտալով, խնջույք չանելով: Գնչո՛ւ են, ի՞նչ է:

Խոշիանի աչքերը մեկեն լայնացան: Հոգնած դեմքի վրա՝ բուի աչքերի նման. առավոտվա վեցից հրահալոցից չէր հեռացել: Չհամաձայնեց: Նախ՝ իր կարծիքով՝ աղջկա հարսանիքը լավ նորություն էր, հո ապո՛ւշ չես, նշել է պետք: Հետո էլ՝ որքա՞ն ժամանակ է, ինչ միասին էին ապրում: Չգիտե՞ր: Երկո՛ւ, երե՞ք տարի: Ամեն դեպքում, արդեն բավական երկար, որի պատճառով Միրենը նրանց անդադար քննադատում էր: Այնպես որ, հարաբերություններն օրինականացնելու ժամանակն էր: Խոշիանին տհաճություն

չէր պատճառում այն հանգամանքը, որ իր աղջիկն ամուսնացել էր սիրած տղայի հետ. հակառակը: Համ էլ տղան՝ մեր փեսան, ոչ թե Սալամանկայից է, այլ Ռենտերիայից: Նույնիսկ եթե Սալամանկայում ծնված լիներ, ի՞նչ:

— Ինձ համար մեկ է՝ նա չինացի՞ է, սևամո՞րթ, թե՞ գնչու: Աղջիկս նրան է ընտրել: Ուրեմն՝ վերջ:

— Դու հիմար ես, միշտ հիմար ես եղել ու հիմար էլ կմեռնես: Չգիտես՝ ինչ ես ասում: Այս առավոտ հաստատ գլխիդ մի բան է ընկել: Հապա՛, եթե այդքան խելացի ես, վազի՛ր, դոն Սերապիոյին պատմի՛ր, որ աղջիկդ եկեղեցով չի ամուսնացել, այն էլ՝ մի տղայի հետ, որը բասկերեն չի խոսում:

— Մի կարգին, աշխատող տղայի հետ, որը նրան հարգում ու սիրում է:

Միրենի համար դա արդեն չափից ավելի էր. գոգնոցը վրայից պոկեց բարկացած, գցեց աթոռի թիկնակին: Ու մինչ արագ քայլերով դուրս էր գալիս խոհանոցից, որ լոգարանում փակվի ու մենակով մի կուշտ լաց լինի, բացականչեց.

— Ա՛խ, Աստվա՛ծ, որքա՜ն միայնակ եմ ես, որքա՜ն միայնակ:

Էլի օրեր անցան, էլի անձրևներ եկան: Փետրվարին երկու ընտանիքներով պայմանավորվեցին մի ռեստորանում հավաքվել: Միրենը կծու հեգնանքով նկատեց՝ հավաքվում ենք նեղ շրջանակով, ոնց որ թաղում լինի: Ընդհանուր յոթ հոգի էին՝ երիտասարդ զույգը, չորս ծնողներն ու Գորկան, որ հակառակ մոր կամքի՝ հրաժարվեց կոստյում-փողկապով գալ, որովհետև ճաշից հետո պիտի ընկերներին հանդիպեր ու չէր ուզում՝ իրեն ծաղրեին: Միրենը պնդում էր անզիջում, պարտադրող: Արանչան ու Գիլյերմոն պաշտպանեցին տղային, ու նա ճաշի եկավ հուդիով ու սպորտային կոշիկներով, հետո էլ առաջինը դուրս եկավ ռեստորանից:

Մնացած տղամարդիկ հագնվել էին, ինչպես որ պարտադրում էին սովորույթներն ու նրանց կանայք: Կոստյումները կամ փոքր-ինչ լայն էին ու կախվում էին, կամ էլ մի քիչ ձգում էին: Երեքն էլ աշխատավորի տեսք ունեին, որոնց այս բացառիկ օրով զուգել-զարդարել էին իրենց կանայք, և նրանցից յուրաքանչյուրը փողկապները կապելիս բղավում էր՝ հանգի՛ստ կանգնիր, մի՛ շարժվիր:

Կանայք ավելի լավ տեսք ունեին: Ավելի ճաշակով ու ոճային էին: Երեքն էլ՝ վարսավիրանոցում արված սանրվածքով: Արանչան մուգ կանաչ զգեստով էր, որը հագել էր ամուսնության օրը, մազերի մեջ՝ նույն կտորից մի վարդ: Միրենը մուգ կապույտ հագուստով էր, որը գնել էր Սան

Սեբաստիանի խանութում, Անխելիտան իր կլորիկությունները թխմել էր սպիտակ բլուզի ու բեժ կիսաշրջազգեստի մեջ, ինչը գիշերը, արդեն անկողնում, քննադատելու առիթ տվեց Միրենին:

Խոշիանը, դեմքով դեպի պատը, զուր էր փորձում փակել նրա բերանը, որից իր ականջներին չափազանց մոտիկ բառեր էին հորդում: Կնոջն ասաց, որ օրը երկար էր, որ հանգստանալու կարիք ուներ: Միրենը, անկողնու թիկնակին հենված, նրան չէր էլ լսում: Հարցրեց.

— Ո՞նց անցավ:

— Լավ: Միսը մի քիչ կոշտ էր:

Ինչի՞ համար պատասխանեցիր: Չե՞ս տեսնում, որ այդ ձևով երկարացնում ես խոսակցությունը: Զղջաց ոչ թե իր տված պատասխանի համար, այլ ընդհանրապես խոսելու համար, բայց արդեն ուշ էր:

— Կո՞շտ: Փետի պես էր: Իսկ կոնսոմեն ոչ մի ձևի էր: Մենք ավելի լավ տեղերում ենք կերել ու ոչ այդքան թանկ: Բայց դե՛, երբ ամեն ինչ կարգուկանոնով չի արվում, այդպես է լինում:

— Եթե տեղյակ չես, վաղը աշխատանքի եմ:

— Արանչան սկեսրոջ հետ ոնց որ թե լավ է: Տեսա՞ր՝ ոնց նրան օգնեց անձեռոցիկը բացել: Ու հետո էլ՝ ոնց մաքրեց մայոնեզի բիծը այստեղից՝ բեղերի վրայից: Որովհետև եթե դա բեղ չէ, ես եպիսկոպոս եմ: Արանչան իր մորը երբեք չցուցաբերած ջերմությամբ է վարվում սալամանկացի այդ գեր տիկնոջ հետ:

— Լա՛վ, լա՛վ: Արի՛ չսկսենք:

— Երևում էր, որ դու լավ լեզու ես գտել փեսայիդ հետ: Ինչի՞ վրա էիք ծիծաղում:

— Հիմա նրան էլ ես կպչելո՞ւ: Բայց նա շատ բարի տղա է, այնքան ջերմ է, որ ուզում ես ասել՝ հերիք է: Ինձ մտահոգում է, որ մեր աղջիկը կարող է նրա վրա իշխել:

— Ոնց որ թե առանձնազրույց էիք վարում:

— Երկուսս էլ սպորտ ենք սիրում:

— Բա՛ քո զգացմունքային վիճակը: Բոլորի ներկայությամբ լացակումած պահվածքիդ մասին ի՞նչ կասես: Այդ դեպքերում մարդ կամ փողոց է դուրս գալիս, կամ զուգարանում է փակվում, ոչ թե բոլորի առաջ ներկայացում սարքում: Կյանքումս այդքան ամոթ չէի զգացել:

— Քեզ ասացի, որ չէի կարողանում զսպել ինձ:

— Դու չէիր կարողանում զսպել այդքան գինի խմելդ: Ես հո կո՞յր չեմ:

Միանգամից տեսա, որ կողերդ ես քորում:

— Մի՛ սկսիր: Մեր տղային էի հիշել: Ընտանիքը տոնում էր, իսկ նա, արի՛ ու իմացի՛ր, որտեղ է:

— Ինձ անհարմար վիճակի մեջ դրեցիր: Միայն դա էր պակաս, որ նրանց առջև սկսեիր Խոշե Մարիի մասին խոսել: Ափսեն գլխիդ կտայի, հասկացա՞ր:

— Լա՛վ: Կթողնե՞ս՝ քնեմ:

Միրենն իր կողմի լապտերը հանգցրեց: Խոշիանն իր կողմինը վաղուց էր անջատել: Ջույգը լռե՞ց: Տղամարդը՝ այո՛: Միրենը, անկողնում դիրքը չփոխելով, մթան մեջ շարունակեց իր դիտարկումներն ու քննադատությունները:

— Իրենք մի տեսակ իրենց տեղում չեն: Կարող են բարյացակամ լինել, կիրթ ու նման բաներ, բայց զգացվում է, որ այստեղից չեն: Իրենց խոսելու ձևը, ժեստերը: Նույնիսկ ինձ թվում է՝ ուրիշ ձևով են ծամում: Պատրաստվի՛ր Էրնանդես ազգանունով թոռ ունենալուն: Դրա մասին որ մտածում եմ, աղիներս ցավում են: Դա է լացելու ցանկություն առաջացնում, ոչ թե Խոշե Մարին, որը հանուն Բասկերի երկրի է պայքարում: Չգիտեմ, Խոշիա՛ն: Չգիտեմ: Ի՞նչն ենք սխալ արել: Դու գիտե՞ս: Մեր աղջիկը ինչո՞ւ է այդքան ծուռ ստացվել: Խոշիա՞ն: Քնա՞ծ ես:

72

Սրբազան առաքելություն

Սան Սեբաստիանում գրական երիտասարդական մրցանակաբաշխություն եղավ: Գիպուսկոայի նահանգային խնայբանկի ամենամյա մըրցանակն էր: Միրենը մասամբ էր հասկացել հեռախոսով իրեն հայտնած տեղեկությունները, այնպես որ, երբ Գորկան հասավ տուն, միակ բանը, որ կարողացավ նրան պատմել, հետևյալն էր.

— Մի տղամարդ էր զանգել, քեզ էր հարցնում: Ասաց, որ ինչ-որ բան ես շահել բանկում:

Մինչև հաջորդ առավոտ Գորկան (որ շուտով տասնութ տարեկան էր դառնալու) համոզված չէր, որ կիրականանա այն, ինչ կանխազգում-ցանկանում էր: Mendiko ahotsa* բանաստեղծության համար առաջին մրցանակի էր արժանացել բասկերեն պոեզիայի անվանակարգում: Նրա առաջին հաջողությունն էր:

Ոչ ոք, նույնիսկ նրա լավագույն ընկերները տեղյակ չէին, որ մասնակցել է գրական մրցույթին: Առաջին անգամ չէր: Եթե հաղթեմ, հրաշալի է, եթե ոչ՝ ո՞վ է իմանալու: Այս անգամ ամբողջ ավանն իմացավ, քանի որ մրցանակները հանձնելու օրը լրագրողը նրանից հարցազրույց էր վերցրել, ու երիտասարդ գրողի լուսանկարն ու ասածները հաջորդ օրը հայտնվել էին *Էլ դիարիո վասկո* թերթի մշակութային բաժնում: Նահանգային մյուս թերթերն էլ էին տպել նորությունը, բայց առանց լուսանկարի ու հարցազրույցի: Յուրաքանչյուր հաղթողին տասը հազար պեսետա էր հասնում:

— Տասը հազա՞ր: Աստվա՜ծ իմ,– Խոշիանը շնորհավորելով մի լավ տվեց տղայի մեջքին: Ու նայում էր նրան՝ ժպտալով, քաջալերող արտահայտությամբ, ներքևի շուրթը հպարտությունից կախված: — Ինչի՞ ես սպասում, գնա՛ սենյակդ, գրի՛ր: Քեզ տեսնեմ, գուցե հարստանաս:

Միրենը, թե.

— Ի՞նչ ես մտածում փողի հետ անել:

---

* Mendiko ahotsa (բասկ.), Լեռան ձայնը:

— Դեռ չեմ ստացել:

— Երբ ստանաս:

— Հագուստ է պետք ու կոշիկ:

Այդ, թեկուզ և համեստ, հաղթանակի համար ամենաշատը Խոշիանն էր ուրախացել: «Պագոետայում» բարեհոգաբար լսեց ընկերների կատակները: Բա թե ինչպե՞ս է ստացվել, որ նրա պես դմբոն այդքան հայտնի տղա է ունեցել: Ու այդ կարգի բաներ: Խոշիանը՝ երեխայացած, երջանիկ, գլուխ էր գովում: Գեներն են, ասում էր: Նրան պատասխանեցին.

— Կնոջդ գեներն են երևի:

Նա էլ՝ լավ տրամադրությամբ, թե.

— Դրա՞նը: Չէ մի՛:

Ստիպեցին, որ իր խաղընկերներին խոստանա, որ նույնիսկ եթե թղթախաղում հաղթի, գինու համար ինքն է վճարելու: Բարում եղածների խմիչքն էլ վճարեց:

Փառքի գագաթնակետը հաջորդ օրն էր: Ղեկավարն անձամբ եկավ հրահալոցի մոտ՝ նրան շնորհավորելու: Խոշիանը շփոթված շտապեց ձեռքից հանել սևացած ձեռնոցը՝ սեղմելու այդ ճերմակ ու իշխանավոր ձեռքը, որի դաստակը զարդարում էր հայտնի մակնիշի մի ժամացույց: Ի՞նչ մակնիշի: Գաղափար չուներ:

Խոհանոցում Գորկային ասաց.

— Այդ կարգի դատարկ բան գնելու համար ես օրերով պիտի աշխատեի, իսկ դու շատ մրցանակներ ստանայիր:

Միրենի հպարտությունը բառերով չէր արտահայտվում: Ամենակուլ հպարտություն էր՝ դրսից դեպի ներս ուղղված, ջրով հագեցող սպունգի նման: Միայն ժամանակ առ ժամանակ պարանոցն էր ճգում. ուրիշ բանով գրեթե չէր մատնում իր զգացած բավարարվածությունը:

— Ama, ուրա՞խ ես:

— Իհարկե:

Այդ օրերին, երբ Գորկան տուն էր մտնում, Միրենը անմիջապես նրան փոխանցում էր այս կամ այն մարդու շնորհավորանքը: Եվ էյֆորիայից բիբերը լայնացած՝ թվարկում էր այն անձանց, որոնց հանդիպել էր փողոցում, և որոնք խնդրել էին իրենց անունից շնորհավորել. ո՛ւմ, գրողի՞ն: Ավելի շուտ՝ տասը հազար պեսետա շահողին, որի լուսանկարը հայտնվել էլ թերթում. մի հանգամանք, որն իրականում ամենից շատ

էր նրանց վրա տպավորություն գործել: Այս ամենը Միրենի մեջ հզոր ու լուռ, ախորժալի մի կծկում էր առաջացնում, ասես նրա ոսկորները, աղիները, ներքին օրգանները, մկաններն ու նույնիսկ արյան անոթները կծկվում էին իր մարմնի կենտրոնական մի կետում, ինչը նրան հաճույք էր պատճառում և ոչ պակաս չափով հատուցված լինելու զգացում առաջացնում:

— Արդեն ժամանակն է. թող հիմա էլ մեզ նախանձեն:

Արանչան հեռախոսային զրույցի ժամանակ եղբորը հորդորեց, որ զգույշ լինի: Իհարկե, ուրախ է նրա համար: Շա՛տ: Aupa, չեմպիո՛ն, ասաց՝ կարծես այդ ուրախության վերաբերյալ որևէ կասկած ցրելու համար: Ավելացրեց, որ միշտ էլ համոզված էր, որ եղբայրը հաջողության է հասնելու: Չմոռացավ Գիլյեի շնորհավորանքը փոխանցել, որը, բացի դա, նրան ամուր գրկում էր: Հետո նրան ասաց, որ առանձնապես ուշադրության կենտրոնում չմնա:

— Դե՛, հասկացար արդեն՝ ինչ նկատի ունեմ:

Գորկան չէր հասկանում: Երևի թե Արանչան նրա՝ մի քանի վայրկյան լռությունից դա կռահեց, այնպես որ ավելացրեց.

— Ամենաճիշտը կլինի, որ դու շարունակես քո գործերը գրել ու թույլ չտաս, որ որևէ մեկը քո տաղանդից օգտվի:

— Մինչև հիմա բոլորը շատ սիրալիր էին հետս:

— Դա շատ լավ է: Ավանից որևէ մեկը հետաքրքրվե՞լ է քո բանաստեղծությամբ: Մեկը կարդացե՞լ է:

— Ոչ ոք:

— Հիմա հասկանո՞ւմ ես՝ ինչ նկատի ունեմ:

— Սկսեցի հասկանալ:

Գորկան քրոջ նախազգուշացումը հիշեց օրեր անց, երբ եկեղեցի էր գնում, որտեղ նրան դոն Սերապիոն էր սպասում: Միրենը առավոտյան հանդիպել էր քահանային, ու նա ասել էր, որ ցանկանում է խոսել Գորկայի հետ ու անձամբ շնորհավորել նրան:

— Եթե հինգին գնաս, նա ավանդատանը կլինի:

— Ի՞նչ է ուզում ասել:

— Ի՞նչ պիտի ուզի: Ուզում է քեզ շնորհավորել:

— Այս ամենն արդեն չափն անցնում է: Ես ընդամենը մի բանաստեղծություն եմ գրել:

— Այս ավանում բոլորը չեն, որ կարող են պոեզիայի մրցանակ ստանալ: Այնպես որ, հինգին գնա՛ քահանայի մոտ ու քեզ թո՛ւյլ տուր սիրելի զգալ, հը՞: Նախքան դուրս գալն անպայման ցնցուղ ընդունի՛ր:

Չուզելով, ամոթից ծռված՝ գնաց: Առաջ երբեք մենակ չէր հանդիպել քահանայի հետ: Նրա շնչառությունից պաշտպանվելու համար ամեն րոպե քիթն էր քորում: Դոն Սերապիոն խոսելիս մատներն իրար էր կպցնում: Հաճախ նրա դեմքը ծամածռվում էր տառապյալ սիրալիրության արտահայտությամբ: Խոսում էր զգուշավոր, ճեմարանային բասկերենով՝ ժամանակակից արտահայտություններով համեմված:

— Մեր ժողովուրդը միշտ նախաձեռնող, արկածատենչ, համարձակ ու գթասիրտ է եղել: Մշակել ենք փայտ, քար, երկաթ ու անցել ենք բոլոր ծովերով, բայց, դժբախտաբար, դարերի ընթացքում մենք՝ բասկերս, բավականաչափ ուշադրություն չենք դարձրել գիր ու գրականությանը: Ի՞նչ կարող եմ քեզ ասել, որ դու չիմանաս: Դու, որքան հասկանում եմ, շատ ընթերցասեր ես ու, ինչպես արդեն գիտենք, բանաստեղծ ես:

Գորկան ամաչելով գլխով էր անում: Դիմացի պատի շուրջառների կախիչի կողքի հայելին անդրադարձնում էր իր սլացիկ պատկերը, իր փոքրինչ (բավականաչափ) տափակ քիթը: Քահանան իր էշն էր քշում:

— Աստված քեզ տաղանդ ու կոչում է պարգևել, ու ես, զավա՛կս, նրա անունից խնդրում եմ, որ լինես կազմակերպված ու քո ունակությունները մեր ժողովրդին ծառայեցնես: Սա մի առաջադրանք է, որը հատկապես վերաբերում է այն երիտասարդներին, որոնք նոր են սկսել գրել: Դուք եռանդուն եք, առողջ ու մեծ ապագա ունեք ձեր առջև: Չեզնից լավ ո՞վ պիտի ձևավորի այն գրականությունը, որը պիտի մեր լեզվի պահպանման կենտրոնասյունը դառնա: Հասկանո՞ւմ ես՝ ինչ եմ ասում:

— Իհարկե:

— Բասկերենը՝ բասկերի ոգին, սեփական գրականության վրա հենվելու կարիք է զգում: Վեպեր, թատրոն, պոեզիա: Այդ ամենը: Չի կարելի բավարարվել երեխաների լոկ ikastola գնալով ու ծնողների՝ նրանց հետ բասկերեն խոսելով ու երգելով: Այսօր ավելի քան երբեք մեզ անհրաժեշտ են հեղինակավոր գրողներ, որոնք լեզուն ամենաբարձր մակարդակի կհասցնեն: Բասկերեն գրող մի Շեքսպիր, մի Սերվանտես ունենալը հրաշալի կլիներ: Պատկերացնո՞ւմ ես:

Գորկան ինքն իրեն հայելում տեսավ գլխով անելիս:

— Ա՛խ, այս իմ ոգևորությունը: Ասածս այն է, որ շարունակես կրթվել ու գրել, որպեսզի մեր ժողովուրդն իր մշակույթը նաև քո ձեռքերի միջոցով կերտի: Երբ դու գրում ես, Բասկերի երկիրն է քո մեջ գրում: Գիտենք, որ սա ահռելի պատասխանատվություն է, գուցե չափից ավելի մեծ՝ քեզ նման դեռ երիտասարդ ու անփորձ մարդու համար: Բայց սա, հավատա՛, մի գեղեցիկ, շատ գեղեցիկ ու, չեմ չափազանցնում, սրբազան առաքելություն է մեր այսօրվա պատմության համար: Օրհնում եմ քեզ, Գորկա՛: Եթե որևէ բանի կարիք ունենաս, ինչ էլ լինի, չվարանես ինձ մոտ գալ: Ամեն պահ քեզ ձեռք կմեկնվի, որպեսզի ամբողջությամբ կարողանաս նվիրվել գրելու ազնիվ գործին:

Կես ժամ անց Գորկան շշմած դուրս եկավ ավանդատնից: Քահանան, նրան հրաժեշտ տալով, գրկեց: Կուրծքը կրծքի անսպասելի այդ հպումը տպավորել էր տղային: Դա ֆիզիկական մի մոտիկություն էր, որին նա պատրաստ չէր: Ինձ ընտրյալի տե՞ղ է դրել: Փողոցով քայլելու ընթացքում նրա մոտ զարմանքի արդյունքում ներքին մի դատարկություն, գոյաբանական մի պղպջակ ձևավորվեց: Ի՞նչ տարօրինակ է, դոն Սերապիոն ոչ մի անգամ Խոշե Մարիի անունը չտվեց: Ի՞նչ տարօրինակ է, նրան չկըշտամբեց, թեև տղան համոզված էր, որ կասի, թե քեզ պատարագին քիչ եմ տեսնում: Ու հիշեց, ինչպե՞ս չհիշեր, վերջերս Արանչայի՝ հեռախոսով ասածը: Փաստորեն, քահանան էլ հետաքրքրություն չցուցաբերեց իր բանաստեղծության հանդեպ:

Հենց տուն մտավ, մայրը հարցրեց.

— Ի՞նչ էր քեզանից ուզում դոն Սերապիոն:

— Ի՞նչ պիտի ուզեր: Շնորհավորում էր:

— Ինչպես և մտածում էի:

Օրեր անց ո՞վ էր նրա հետ խոսում գրական մրցանակի մասին: Ոչ ոք: Մայրն էլ, երբ Գորկան տուն էր հասնում, այլևս օրվա շնորհավորողների ցանկ չուներ: Ուստի հանգստություն տիրեց: Վերջապես: Կամ էլ նա էր այդպես կարծում: Ու լավ է, քանի որ արդեն հոգնել էր շնորհավորանքներից ու կատակներից, մեջքին թփթփոցներից, որոնք որոշ դեպքերում անկեղծ էին, մյուս դեպքերում՝ ծաղրական: Ու ի լրումն ամենայնի՝ զզված էր հենց իր բանաստեղծությունից: Սենյակում մենակ մնալով՝ կարդացել էր գրածը, ու այն անսպասելիորեն այնքան թույլ էր թվացել, որ այլևս չէր կարողանում առանց ամաչելու նայել դրան:

Մի խոսքով՝ նրան արդեն չէին անհանգստացնում, ու մի շաբաթ օր՝ հետմիջօրեին, մտավ «Առանո» խորտկարան: Նրան ավելի ու ավելի քիչ էր դուր գալիս այնտեղ մտնելն ու եղբոր նկարը տեսնելը, նրա մասին հարցերին պատասխանելը: Տհաճ էր նաև ծուխը, աղմուկը, հոտը, վատ լվացած, երբեմն շրթներկի հետքերով բաժակները: Բայց ընկերներդ քեզ քաշ են տալիս, ու մտնում ես: Եթե չես գնում, նկատում են: Իսկ եթե նկատում են, լավ չէ:

Մոտեցավ կանգնակին: Իր ընկերները նորից կալիմոչո էին պատվիրել: Այս անգամ Գորկայի հերթն էր բաժակների հետևից գնալու: Պաչին՝ լարված դիմագծերով, կանգնակի մյուս կողմից ծանր հայացքը սևեռեց վրան: Կռացավ դեպի տղան.

— Դու սխալ ես քեզ պահում, ու դա ինձ դուր չի գալիս:

Գորկայի ունքերը մեկից վեր ելան: Երկու կամ երեք վայրկյան զարմանքից սառած մնաց: Ու վախենում էր խորտկարանատիրոջ խիստ աչքերի մեջ նայել:

— Սա վերջին անգամը լինի, որ ֆաշիստական թերթին հարցազրույց տաս ու որ ընդունես աշխատավորներին շահագործող բանկի գումարը: Առաջինը հնարավոր չէ շտկել: Հուսով եմ՝ չի կրկնվի: Երկրորդը կարելի է ուղղել: Սա գիտես՝ ի՞նչ է:

Վախեցած տղայի առջև խոնավ կանգնակի վրա դրեց բանտարկյալների համար հանգանակատուփը:

— Այստեղ ճիշտ տասը հազար պեսետա է տեղավորվում:

Եթե մնացել ես, մեջն ես

Կոշիկի խանութում աշխատանքային օրն ավարտելով՝ Արանչան դուրս եկավ փողոց ու այնտեղ մայրամուտի առաջին ստվերների ներքո տեսավ Գորկային, որ մի տեսակ տխուր շան դեմքով իրեն էր սպասում: Ի՞նչ է պատահել: Եղբորն օգնություն էր պետք: Հարցրեց՝ կարո՞ղ էր մի քանի օր իրենց բնակարանում մնալ: Պատճա՞ռը: Ավանում իր կյանքն անտանելի էր դառնում:

— Իսկ aita-ներն ի՞նչ են ասում;

— Ես սկզբում քեզ հետ էի ուզում խոսել:

Արանչան զգուշացրեց.

— Ընդամենը մեկ մահճակալ ունենք՝ ամուսնականը:

Տղայի համար կարևոր չէր, պատրաստ էր պառկել գետնին՝ ծածկոցի վրա, բարձի փոխարեն էլ ծալած սրբիչներ դնել: Արանչան, ասածը ձեռքի շարժումով ուղեկցելով, նրան ասաց, որ հանգիստ լինի: Բազմոց էլ ունեին, թեև գուցե տղայի համար չափից ավելի կարճ գար:

— Խնդիրն այն է, որ դու անվերջ բոյովանում ես:

Եղբորը հարցրեց՝ ոստիկանությունի՞ց էր փախչում: Տղան ասաց, որ ոչ: Հաստա՞տ: Հաստա՛տ: Արանչան թեթևացած շունչ քաշեց: Քո ընկերների՞ց, ուրեմն:

— Ընկերներից ու մյուսներից էլ:

Քույր ու եղբայր պայմանավորվեցին Ռենտերիայի ավտոբուսը նստել, ու որ Գորկան Գիլյեին էլ պատմեր, թե ինչ էր կատարվում ավանում:

— Քանի որ մի քանի օր մեր տանն ես մնալու, Գիլյեն պատճառն իմանալու իրավունք ունի, չէ՞:

— Բնականաբար:

Տեսարանը, ուրեմն, այսպիսին էր. ընթրիքից առաջ Գիլյերմոն ու Արանչան բազմոցին են նստած: Գորկան նրանց առջև է նստած՝ խոհանոցից բերված աթոռին: Երիտասարդ զույգը ջանադրաբար աշխատում է, բայց դեռ բավականաչափ գումար չի վաստակել բնակարանը հարկ եղածի պես կահավորելու համար: Գորկան ավելի մանրամասնեց այն, ինչի

մասին արդեն պատմել էր քրոջն ավտոբուսում: Փեսայի ներկայությամբ սկսեց եզրակացության կողմից.

— Կա՛մ պիտի հեռանամ ավանից, կա՛մ պիտի Խոշե Մարիի հետքերով գնամ: Ուրիշ տարբերակ չկա: Ինձ վրա ճնշում են գործադրում: Նրանց կարծիքով ես թույլիկ եմ: Ասում են, որ գրքերը խելքս կերել են, ու ծիծաղում են վրաս: Անունս Kartujo* են դրել: Ու ամենավատն այն է, որ կարողանում են վրաս իշխել ու ինձ ստիպել չուզածս բաներն անել: Այս պահին գեթ մի ընկեր չունեմ, որի հետ կխոսեմ այնպես, ինչպես հիմա ձեզ հետ եմ խոսում: Համարյա չեմ շփվում, որ խնդիրների մեջ չընկնեմ: Իսկ երեկվանը բաժակի վերջին կաթիլն էր: Ես շատ հոգնած եմ: Ոչ մի րոպե չեմ քնել: Արդեն մտածում էի սարերում թաքնվել, բայց հետո ձեր մասին հիշեցի:

— Գիլյեին պատմի՛ր ավտոբուսում պատմածդ:

Երեկ «Առանոյի» մի անկյունում Պեյոն նրան ու մյուս ընկերոջը շշնջացել էր, որ մի թաքստոցում չորս շիշ «Մոլոտովի կոկտեյլ» է պահում: Գիլյեն հարցրեց՝ Պեյոն ով է:

— Տղերքի խմբից մեկը, որն օրեցօր ավելի արմատական է դառնում:

Արանչան մանրամասներ ավելացրեց.

— Նրա հայրն ավանի ամենահայտնի հարբեցողն էր: Նրան ամեն օր կարելի էր փողոցում տեսնել ութեր գրելիս: Արդեն մահացել է:

Հավանաբար Պաչին Պեյոյին թույլ էր տվել հետը մի քանի դատարկ շիշ տանել: Տղեն էլ իր հերթին բենզին էր ճարել: Գնե՞լ էր: Ո՛չ, իհարկե: Խողովակի օգնությամբ քաշել էր մեքենաների ու բեռնատարների բենզաբաքերից: Դժվար չէր: Կոկտեյլներ էր սարքել: Շարժիչի յուղ էր ավելացրել, որպեսզի կրակը, ինչպես ասում էր, ավելի կպչուն լիներ: Քարհանքում միայնակ փորձարկել էր: Ու իր մոտ չորս հատ ավելացել էր:

— Շատ է հիացած զենքով ու պայքարով ու օրերից մի օր կմիանա ETA-ին:

Պեյոն առաջարկեց ekintza անել, երբ մթնի: Թիրախ ընտրելու խնդիր կար: Հարցրեց՝ ով ինչ գաղափար ունի: Սկզբում Ժողտան մասին մտածեցին: Դրա դռան վրա վերջին հրկիզումից հետո դեռ հետքեր էին մնացել:

— Գուցե batzoki**-ն:

---

* Kartujo (բասկ.), ճգնավոր:

** Batzoki (բասկ.), Բասկ ազգայնական կուսակցության քաղաքական և հասարակական նստավայրը:

Խուանկարն էլ, թե.

— Չսկսե՛ս, իմ aita-ն այնտեղ մուս խաղալիս կլինի:

Գորկան լռում էր: Լուռ խմում էր իր կալիմոչոն՝ ծածուկ նայելով ժամացույցին՝ հարմար պահի ծլկելու համար: Այդ ամենից արդեն շատ վատ հոտ էր գալիս: Տեսնում էր իր երկու ընկերների անվարան վճռականությունը, ալկոհոլից փայլփլող աչքերը: Ափսո՜ս, ասում էր Պեյոն, որ այսօր ոչ մի խռովություն չկար սիփայների հետ. դրանցից երկու-երեքին կխորովեինք: Հիմա արդեն խոսում էին Բասկերի երկրի թշնամիներից մեկի մեքենան այրելու մասին: Ու դրանց խոսակցության ու շարժուձևի պատճառով ամբողջ խորտկարանը տեղեկացավ, թե ինչ էին դրանք անթաքույց մոգոնում՝ իրենց անկյունում նստած: Այնպես որ, Պաչին նրանց մոտեցավ խորհուրդ-հրամանով, որ գնան դուրս՝ օդ շնչելու: Որովհետև, պարզ է, որ «Առանոյում» նրան խնդիրներ պետք չէին: Վարկաբեկող քննարկումների համար ներսի սենյակ գոյություն ունի: Ու այդ պահին, ասես ձեռքի հետ, նրանց գլխի գցեց ու առանց ասելու ասաց, որ այս կողմերը մեկը կա, որ բեռնատարներ ունի:

— Ես սկզբում չհասկացա, որովհետև ուշք ու միտքս այդտեղից շուտ փախչելն էր: Իսկ Պեյոն ու Խուանկարը միանգամից հասկացան, որ Պաչին Չատոյին նկատի ունի:

Գիլյեն հարցրեց՝ Չատոն ով է:

Արանչան, թե.

— Նրա մասին քեզ պատմած կլինեմ: Այն մեկը, որ տրանսպորտային ընկերություն ունի: Չի ընկրկում ETA-ի սպառնալիքներից: Երևի չի վճարում հեղափոխական հարկը կամ ուշացնում է վճարը կամ բավարար չափով չի վճարում. չգիտեմ: Այնքա՞ն ասեկոսեներ կան: Խնդիրն այն է, որ նրա դեմ հետապնդման մի արշավանք են կազմակերպել՝ նրան վախեցնելու համար, ու ավանի ամբողջ ժողովրդին նրա դեմ են հանել: Նա լավ մարդ է: Հորս համար եղբոր պես է, ինձ համար՝ գրեթե քեռու: Հիմա ո՛չ նրա հետ ենք խոսում, ո՛չ նրա ընտանիքի, թեև մեզ ոչինչ չեն արել: Խենթերի երկիր է այս երկիրը:

Գորկան, որին ընկերները պատին էին դեմ տվել, պաշտպանվում էր: Ասում էր, որ ո՛չ, լուրջ, որ չի կարող, որ պետք է գնա: Պնդեցին, որ գար: Ամենաշատը մեկ ժամ էր տևելու: Նույնիսկ՝ ավելի քիչ: Ծրագիրը շատ պարզ էր. պիտի չորս կոկտեյլ նետեին ու ավան վերադառնային, իսկ դու՝

քո տխմար գրքերի մոտ: Պաչին կանգնակի մոտից տեսավ աշակերտ gudari-ների վիճաբանությունն ու ժեստերը: Նորից գնաց դեպի նրանց անկյունը, այս անգամ՝ իբր բաժակները վերցնելու:

— Կարելի՞ է իմանալ՝ ինչ է այստեղ կատարվում:

— Էս Kartujo-ն ասում է, որ չի գալու:

— Վախկոտի մեկն է:

— Ոնց որ Խոշե Մարիի եղբայրը չլինի:

Գորկան լռում էր, ու Պաչին շրջվեց իր կողմ լուրջ ու հանգիստ, թե.

— Նայի՛ր, տղա՛, եթե մեկը խմբում տեղյակ է գործողության պլանին, գնում է մինչև վերջ ու չի դավաճանում: Եթե չէիր ուզում մասնակցել, պետք է ավելի շուտ գնացած լինեիր: Քեզ ոչ ոք չի ստիպում: Բայց եթե մնացել ես, մեջն ես: Իսկ հիմա երեքդ էլ ռա՛դ եղեք էստեղից: Հաշիվը վաղը կփակեք: Կամ էլ չեք վճարի: Ձեր պահվածքից է կախված:

Գորկային «դավաճան» բառի հետ էին կապել: Դրանից մինչև «մատնիչ» դառնալը երկու քայլ է: Դա սասանեց իր դիմադրությունը: Հանկարծ ամոթից այնքան քայքայված զգաց, որ թվում էր, թե իր երկար, ոսկրոտ մարմնով մերկ է քայլում փողոցով՝ ամբողջ ավանի աչքի առաջ: Ստոծանու շրջանում զզվանքի գունդ էր առաջացել: Իրոք, մաքուր զզվանք էր: Կարծես վախվորած, զազրելի մի տիկնիկ լիներ իր աչքին՝ տարօրինակ մի կերպար, ջրից դուրս ընկած ձկան, փետրած մի թռչնի նման, ու ամենաշատը անհանգստանում էր, որ մյուսները չնկատեն իր կարկամելը: Ու տղաները ի՞նչ արեցին: Փողոցում մեղադրական տոնով այնքան կրկնեցին Պաչիի ասածը, որ Գորկան ասաց՝ լա՛վ, հերի՛ք է, գնացի՛նք: Ու գնացին ուրախ ու բոցավառ՝ gora ETA, amnistia osoa և այլն, Պեյոյի թաքցրած չորս դյուրավառ շշերի հետևից:

Շշերը մի տոպրակի մեջ դրած՝ իջան դեպի գետ: Արդեն մութ էր, բայց սարերի գլխին դեռ մանուշակագույն մի հատված կար: Պայմանավորվեցին, որ ամեն մեկը մի կոկտեյլ նետի, իսկ Պեյոն, քանի որ նա էր պատրաստողը, երկու: Երբ արդեն մոտեցել էին նշանակետին, Խունկարը, շը՛շշ ասելով, լռություն պահանջեց: Համոզվեցին, որ մուտքի ճաղավանդակը փակ է: Վրայով ցատկելու համար չափազանց բարձր էր: Բացի այդ՝ վերևի մասում մետաղական ելուստներ ուներ: Բախտները չբերեց. ընդամենը երկու բեռնատար կար: Դրանցից մեկը՝ արհեստանոցի դարպասի մոտ:

— Գրո՛ղը տանի, որքան հեռու է:

Անհնար էր դրան խոցել այդքան տարածությունից նետած շշով: Մյուս բեռնատարը վարորդի խցիկով դեպի պատ էր կայանած: Դժվարությունը՞րը: Առնվազն երեքն էին: Առաջինը. մետաղացանցի պատճառով ստիպված էին ականանետի արկի պես նետել շշերը: Իսկ այդպես չէին կարողանալու լավ նշան բռնել: Երկրորդ դժվարությունը պատի մոտ մորու անթափանցելի թփուտն էր, որը նրանց հնարավորություն չէր տալիս մոտենալ նշանակետին: Իսկ երրորդ դժվարությունը ո՞րն էր: Բանն այն էր, որ նրանց շրջապատող ծառերի պատճառով այնքան մութ էր, որ չէին տեսնում՝ որտեղով են քայլում:

Գրասենյակում լույս չկար:

— *Տիրոջդմերը*: Մարդ չկա:

Պեյոն անհամբեր նետեց առաջին շիշը: Սարսափելի բարձր նետեց, որ ցանցին չդիպչի: Նշան չէր բռնել: Շիշն ասֆալտի վրա պայթեց: Կրակի լույսի շնորհիվ հիմա ավելի լավ էին տեսնում բեռնատարը:

— Իրենք ասացին, որ իմ հերթն է: Ես հասկանում էի, որ բեռնատարը չեմ կարող խոցել: Բայց ինչպե՞ս կարող էին ինձ մեղադրել, եթե նույնիսկ Պեյոն էր վրիպել: Մեկ էլ, մինչ կտորի լաթին կրակ էինք կպցնում, բղավոցներ լսվեցին՝ սրիկանեեե՛ր, սրիկանեեե՛ր: Բացի դրանից՝ պա՛մ, կրակոց լսվեց: Երդվում եմ: Ու տեսանք Չատոյին, որ մոտենում էր դարպասին: Պա՛մ, ևս մի կրակոց: Կրակում էր, որ սպանե՞ր. չգիտեմ: Բայց պարզ էր, որ ատրճանակ ուներ:

Թո՛ւ, ես դրա… սա մեզ սպանելու է: Ու վազեցինք: Ու ո՛չ կնգուղ ունեինք, ո՛չ էլ ուրիշ մի բան՝ դեմքներս փակելու համար: Ամեն դեպքում, կարծում եմ, որ մթի պատճառով հնարավոր չէր մեզ ճանաչել: Հետապնդելու փոխարեն Չատոն մնաց, որ կրակը հանգցնի: Իմ կարծիքով՝ Չատոն, եթե ուզեր, երեքիս լեշն էլ կփռեր: Ես ամբողջ գիշեր չկարողացա քնել ու այսօր էլ ժամեր շարունակ մի տեղից մյուսն եմ դեգերել: Ձեզ շնորհակալ կլինեմ, եթե հնարավորություն տաք՝ մի քանի օր այստեղ մնամ: Հետո կտեսնեմ՝ ինչպես եմ ավանից գնում: Եթե այնտեղ մնամ, Խոշե Մարիի պես կավարտեմ:

Արանչան վեր կացավ բազմոցից.

— Լա՛վ: Ես գնամ, ընթրիք պատրաստեմ: Այդ ընթացքում զանգահարի՛ր տուն ու aita-ներին բացատրի՛ր իրավիճակը:

— Երեկվա մասին չեմ կարող պատմել:

— Մի բան հնարի՛ր:

— Ի՞նչ:
— Գիլյե՛, իր տեղը լինեիր՝ ի՞նչ կասեիր:
— Ե՞ս: Չգիտեմ: Երևի, որ ինձ ուզում են ծեծել կամ նման մի բան:

74

Անձնական ազատագրական շարժում

Որոշ ժամանակ Գորկան միայնության մեջ պատսպարվեց: Աստիճանաբար հեռացավ իր ընկերներից: «Առանո» խորտկարան չէր էլ մտնում: Սովորում էր, կարդում էր, բանաստեղծություններ ու պատմվածքներ էր գրում: Հետո գրածները պատռում էր՝ համոզված, որ դրանք արժեք չունեն: Չէր հիասթափվում: Ես դեռ սովորում եմ: Այդ ընթացքում աղոտ հույսեր էր փայփայում, որ աշխատանք կգտնի: Բայց որտե՞ղ: Մետաղաձուլարանո՞ւմ, ինչպես բազմիցս առաջարկել էր հայրը: Խոշիանը հանձն էր առնում գրասենյակի ժողովրդի հետ խոսել: Բայց չկարողացավ Գորկային համոզել: Քսանմեկ տարեկան է և դեռ ծնողների տանն է ապրում: Հայրը տխրում էր՝ մտածելով, որ զավակը տարօրինակի մեկն է, մայրն էլ Գորկային հաճախ էր նախատում: Նրան տեղից շարժելու համար համոզված ասում էր՝ այս տղան անկյալի մեկն է ստացվել:

Ժամանակ առ ժամանակ Գորկան մասնակցում էր Սան Սեբաստիանում գրքերի շնորհանդեսների, կոնֆերանսների, կլոր սեղանների, որոնց ընթացքում ծանոթացել էր մի քանի գրողների հետ: Այլևս ավանի գրադարանից գիրք չէր վերցնում: Հիմնականում՝ փողոցում կամ ընթերցասրահում ծանոթ մարդկանց չհանդիպելու համար: Փոխարենը հաճախում էր քաղաքապետարանի գրադարան՝ Սան Սեբաստիանի Հին թաղամասում, որտեղ անցկացնում էր հետմիջօրեները՝ գրքերի, հանրագիտարանների ու թերթերի վրա կռացած:

Բայց գիտեր, քանի դեռ ծնողների տանն է ապրում, ավանից ազատվելու հնար չունի: Տոնախմբությունները, քաղաքական ակտերը, ընկերներ հեռախոսազանգերն ասես նրա մեջ եղած ինչ-որ թելից էին քաշում, որից նա չէր կարողանում ձերբազատվել: Միևնույն ժամանակ սովորել էր վարպետորեն խուսանավել. պարտադիր ներկայություն պահանջող ցույցերին ռազմավարական ճիշտ դիրքեր էր ընտրում: Սկզբում՝ ընկերների կողքը, հետո՝ նրանցից մի քանի քայլ այն կողմ և հենց տեսնում էր, որ իր ներկայությունը նկատվել է, մեկի հետ սկսում էր խոսել, ցանկալի էր մեծահասակի հետ: Ասես պատահաբար հետ էր մնում ամբոխից ու առաջին իսկ հնարավորության դեպքում ճողոպրում էր:

Հաճախ ավանից մի քանի օրով բացակայում էր: Այդպես էին պայմանավորվել Արանչայի հետ: Տեղավորվում էր նրա բնակարանում ու այդպես աստիճանաբար պոկվում էր իր խմբից: Բայց պորտաբույծի կյանք չէր վարում: Քրոջն ու փեսային ամեն հարցում օգնում էր: Մինչ նրանք աշխատանքի էին լինում, բնակարանը փայլեցնում էր: Օգնեց պաստառ կպցնել հյուրասենյակում: Ինքը միայնակ սպիտակեցրեց խոհանոցի առաստաղը: Ու ջանալով լավության դիմաց լավություն անել՝ փորձեց փեսային տարրական բասկերեն սովորեցնել: Սակայն ստիպված եղան դադարեցնել պարապմունքները: Գիլյեն լիովին անտաղանդ էր լեզուների առումով:

Բախտը մի օր ժպտաց Գորկային ու նրան օգնեց: Ինչպե՞ս: Դե՛, տղան աշխատանք գտավ, կամ աշխատանքը նրան գտավ, այն էլ՝ ավանից դուրս: Վարձատրությունը չնչին էր, բայց աշխատանքն իր սրտով էր. Սան Սեբաստիանի գրախանութում վաճառող էր: Խանութի տերերը նրան ճանաչում էին, ու մի օր՝ մի գրքի շնորհանդեսին, հարցրին՝ լսի՛ր, չէի՞ր ցանկանա և այլն: Առանց վարանելու՝ համաձայնեց: Դա, ինչպես ինքն էր անվանում, անձնական ազատագրական շարժման գործում իր առաջին հաջողությունն էր: Այդ շարժման նպատակը մեկն էր. հասնել սեփական անկախությանը: Ոչ միայն մի քիչ փող կվաստակեր, այլ նաև ինարավորություն կունենար հեռանալ ավանից՝ ստիպված չլինելով որևէ մեկին բացատրություն տալ, քանի որ բոլորը գիտեին, թե ամեն առավոտ ավտոբուսով ուր է գնում:

Գրախանութում աշխատելու ընթացքում բասկերեն հրապարակում էր գրքերի գրախոսականներ, մեկ-երկու փոքրածավալ գրական գործեր լրագրերում, դեպքից դեպք մշակութային թեմաներով հոդվածներ գրում Egin թերթում: Այդ թերթում տպագրվելը նրա անցաթուղթն էր ավանում: Ոչ ոք Գորկային չէր կշտամբում, ոչ ոք ոչ մի բանում չէր կասկածում: Նրան հազարից մե՞կ էին տեսնում: Այո՛, բայց չէ՞ որ Egin-ում էր տպագրվում:

Մի օր փողոցում Պաչիին տեսավ: Նա մայթից մայթ ասաց.

— Շատ լավն էր երեկվա քո հոդվածը: Բան չհասկացա, բայց հավանեցի: Այդպես էլ շարունակի՛ր:

Բասկերենը դարձավ նրա եկամտի հիմնական աղբյուրը: Շահադիտակա՞ն էր: Ժամանակավոր՝ տակից դուրս գալու համար: Ամեն ինչի ձեռք էր գցում: Նրան հանձնարարում էին տեքստեր գրել գրքերի հետևի կազմի համար, բրոշյուրներ կազմել, ոչ ծավալուն թարգմանություններ անել:

Մի հրատարակչություն որոշել էր տպագրել երեխաների համար իր բարալիկ գիրքը: Վերջին վայրկյանին հրատարակիչը, նրա հետ չքննարկելով, գրքի վերնագիրն էր փոխել: Դարձրել էր Piraten itsasontzi urdina*: Գորկայի համար տհաճ չէր, բայց նախընտրում էր իր մտածածը: Այդ միջամտությունը թթու համի պես բան էր թողել նրա բերանում:

Արանչան ասաց, որ սրտին շատ մոտ չընդունի, ու նրան քաջալերեց, որ ապագայում իր ստեղծագործական ներուժը նվիրի մանկական գրականությանը:

— Քանի դեռ երեխաների համար գրես, քեզ հանգիստ կթողնեն: Բայց, վա՛յ քեզ, եթե խառնվես երկրի խնդիրներին: Ամեն դեպքում, եթե որոշես մեծահասակների համար գրել, թող քո պատմությունները Բասկերի երկրից հեռու ծավալվեն: Աֆրիկայում կամ Ամերիկայում, ինչպես մյուսներն են անում:

Բախտը նրան ժպտաց, ու ավելի, քան լավ իրականացրեց իր երազանքը՝ վերջնականապես փախչել ծննդավայրից: Ինչպե՞ս: Դե՛, մի երեկո ծանոթացավ Ռամունչոյի հետ: Մաքուր պատահականություն էր. Գորկան չէր նախատեսում ներկա գտնվել բասկյան գեղանկարչության ցուցահանդեսի բացմանը Ալչեռիի պատկերասրահում, բայց բաց թողեց ավտոբուսը, անձրև էր գալիս, իսկ տեղը հեռու չէր: Ի վերջո, ժամանակ սպանելու համար մտավ ցուցասրահ, ասես անտեսանելի մի ուժ նրան ներս հրեր: Ու տեսավ Ռամունչոյին՝ ծովախեցգետնով, ձվով ու մայոնեզով կանապեն ձեռքին: Զրուցեցին: Ռամունչոյին, որը Գորկայից տասնմեկ տարի մեծ էր, ապշեցրեց տղայի փայլուն բասկերենը: Բարեկամացան: Ավելի հանգիստ զրուցելու համար պատկերասրահից իջան ներքևի բար: Իրար լավ էին հասկանում, ու վերջում՝ գիշերվա տասի կողմերը, Ռամունչոն Գորկային առաջարկեց իր մեքենայով ավան հասցնել: Գորկան շատ ուրախ էր ոչ միայն տեղ հասցնելու առաջարկից, այլև որ այդքան ժամանակ անց առաջին անգամ համոզվեց, որ աշխարհում, բացի իր քրոջից, գոյություն ունի ևս մեկը, որի հետ կարող էր խոսել՝ չզսպելով իր անկեղծությունը:

Երկու ամիս անց Ռամունչոյի հետ հաստատվեց Բիլբաոյում: Սկզբունական գաղափարն այն էր, որ Ռամունչոյի համար աշխատեր որպես քարտուղար և ռադիոհաղորդումների տեքստերի խմբագիր: Ռամունչոն

* Piraten itsasontzi urdina (բասկ.), Ծովահենների կապույտ նավը:

(ամուսնալուծված էր, մի աղջիկ ուներ՝ Ամայա անունով, որին խենթի պես սիրում էր) Գորկային տեղավորեց իր՝ Լիսենսիադո Պոսա փողոցի վրա գտնվող բնակարանում: Նրան ննջարան ու աշխատասենյակ տրամադրեց ու զգալիորեն ավելի էր վճարում, քան Սան Սեբաստիանի գրախանութի տերերը:

Նրան խնդրեց-արգելեց նույնիսկ մի տող գրել Egin-ի համար:

— Քեզ մի՛ չարչարիր: Ինձ լսի՛ր:

Գորկան այնքան գեղեցիկ, խոր ու լավ մշակված տեքստեր էր գրում, որ որոշ ժամանակ անց Ռամունչոն որոշեց նրան աշխատանքի վերցնել ռադիոյում: Դժվարություն չունեցավ համոզելու, որ իր երիտասարդ ընկերոջը գործի վերցնեն: Գորկայի համար այդ ամենը երկնքում սավառնելու պես մի բան էր:

Ռադիոն մեծ ծածկույթ չուներ: Ծրագրերի մոտավորապես ութսուն տոկոսը բասկերեն էր սփռվում: Հաղորդավարներ կային, որոնք բասկերեն լավ չգիտեին: Եվս մի առավելություն՝ Գորկայի համար, որը, հրաշալի տեքստ ընթերցող, սահուն արտահայտվող, լեզուն չտեսնված իմացող և բացի այդ՝ լավ ձայնի տեր, քիչ ժամանակ անց խմբագրից, օգնականից, ձայնապնակների ու սրճեփի պատասխանատուից ու հանձնակատարից դարձավ ռադիովարող, սկզբում՝ Ռամունչոյի հետ, հետո արդեն՝ ինքնուրույն:

Նրան ահավոր դուր էր գալիս իր գործը, այն աստիճան, որ ռադիոկայանում էր մնում նույնիսկ աշխատանքային օրվա ավարտից հետո: Նստում էր հնչյունային օպերատորի կողքին, որ նա սովորեցնի ձայնի կառավարման սարքի գաղտնիքները: Ու միշտ ուշադիր հետևում էր քաղաք եկող գրողների, արվեստագետների, երգիչների մասին լուրերին: Այդ դեպքերում, ձայնագրիչով զինված, անմիջապես գտնում էր նրանց ու հարցազրույց վերցնում: Ավելի ուշ մեծ թվով հարցազրույցներ արեց մարզիկների ու այլ հայտնի մարդկանց հետ, որոնք պատրաստ էին պատասխանել իր հարցերին:

Ռամունչոն, տեսնելով այդ աստիճանի ոգևորությունը, նրան կեսժամանոց ծրագիր վստահեց՝ բասկյան գրականությանը նվիրված, որը սփըռվում էր ամեն օր՝ բացի շաբաթ-կիրակիներից, գիշերը ժամը տասին: Գորկան երջանիկ էր:

Հախճապակյա սափոր

Արանսասուն՝ արևային ակնոցով, տեղավորվեց նավաքթի հարթակին: Շավիերը թիավարում էր: Նավախելի վրա նշմարվում էր նավի անունը՝ Lorea* Bi: Իրենց նախկին նավի անունը Lorea Bat էր: Արանսասուի եղբայրն էր նրանց տվել իրեն պատկանող նավի բանալին: Դեռ երիտասարդ ժամանակներից աղջիկը սիրում էր ծովախորշով նավարկել Lorea Bat-ով, որը ավելի ծանր ու դժվար կառավարելի էր, քան այս մեկը: Դրպրոցի ընկերուհիների հետ էր նավ նստում կամ էլ այդ պահի իր ընկերոջ. հազվադեպ էր մենակ լինում: Lorea Bi-ն շարժիչ ուներ, բայց Շավիերը որոշել էր թիավարել: Վերջիվերջո, հետմիջօրեն անցկացնելու համար պետք չէր Արանսասուի եղբոր նավակի վառելիքը սպառել:

— Ա՛յ մարդ, բա արժե՞ր երկու կաթիլի համար:

— Մի քիչ վարժություն անելը չի խանգարի: Բուժառուներիս միշտ խորհուրդ եմ տալիս, ու հետո պարզվում է, որ ես ինքս նստակյաց կյանք եմ վարում, իսկ իրենց դրա համար նախատում եմ:

Ճոպանն արձակեցին: Դանդաղ առաջ շարժվեցին մատույցին կապած նավերի արանքով՝ զգուշանալով, որ դրանցից ոչ մեկը չխազեն: Արանսասուն ուղղորդում էր. ուշադի՛ր, չկպչես, մի քիչ դեպի, այդքան արագ մի՛: Հենց նավը դուրս բերեցին ազատ տարածք, իրեն թուլացրեց ու գլանակը վառեց:

Անթերի օր էր: Գարնանավերջի կապույտ երկինք: Հետմիջօրե: Նավահանգստի ջրերը հանդարտ էին ու ձկներով լի, որոնք կտրուկ շարժումներով ջրի մութ խորքում արծաթյա առկայծումներ էին թողնում: Վերևում՝ նեղ նավամատույցի եզրին, մարդիկ էին նստած շարքով՝ վեց-յոթ ձըկնորսական կարթերով, մեծ մասամբ՝ տղաներ: Զրիմուռներով ծածկված պատի մի լայն շերտ էր բացվել տեղատվության պատճառով: Խորշերում՝ խեցգետիններ: Շավիերը՝ չարագուշակ, կասկածամիտ, թե.

— Միայն այդ էր պակաս մնացել, որ մի անուշադիր ձկնորս կարթով վնասի մեզ:

---

* Lorea (բասկ.), ծաղիկ:

Դուրս եկան ծովախորշ: Բաց տարածքում Lorea Bi-ն սկսում է ճոճվել: Արդեն զգացվում է ջրի վիթխարի ծավալն ու ալիքների ուժը, որոնք ասես մի բանի մասին զգուշացնեն: Ի՞նչ են ասում: Նույնը. որ ջուրն է ապրողը, իսկ դուք միջատիկներ եք ջրի երեսին ծփացող կեղևների վրա: Ալեկոծությո՞ւն: Չկար, բայց եթե բախտդ չբերի, ու ծովն անհանգիստ լինի, մշտական վայրիվերումն ահաբեկող է, ուժգնացող քամին՝ ագրեսիվ ու մտրակող, կփաթաթվի քո շուրջ, քանի որ գիտի, որ անզոր ես: Քամին խառնեց Արանսասուի մազերը. որքա՜ն գեղեցիկ է այսպես հերարձակ, ու կինը ստիպված եղավ դրանք «պոչ» կապել:

Բայց նա ուրիշ բանից էր վախենում:

— Ես կուզեի ճակատիդ մեջ մի անցք բացել, որ ժամանակ առ ժամանակ կարողանայի ուղեղդ տեսնել ու իմանալ քո մտածածն ու զգացածը: Երեխա ժամանակ թաղի ընկերուհիներիս հետ հիշատակարաններ էինք պատրաստում: Փոքրիկ փոսիկ էինք փորում հողում ու մեջը դնում էինք երիցուկներ, երեքնուկի տերևներ, խաղալիք-զարդեր, մի խոպոպիկ. այդ բոլորը մի կտոր ապակիով էինք փակում ու հաջորդ օրը գալիս էինք՝ նայելու: Դե՛, ես նույն բանը կանեի ճակատիդ հետ՝ ներսում կատարվողը տեսնելու համար:

— Քեզ մի՛ զսպիր: Քնած ժամանակ ինձ տրեպանացիա կանես, հաստատ չեմ զգա: Դե՛, գիտես՝ ես խորն եմ քնում:

Շավիերն անշտապ է թիավարում: Դե՛, չեմ ուզում ափերս բշտիկներով ծածկվեն: Թեթև, բայց մշտական մի հրում բավարար է, որ Lorea Bi-ն, որը թեթև է (ապակե մանրաթելով ուժեղացված պլաստիկե հիմք ունի), սահի ջրի մակերեսով: Ո՞ւր են գնում: Ոչ մի տեղ: Ուզում են մենակ մնալ: Որքան ավելի են հեռանում ծովախորշով, այնքան քիչ է նրանց հասնում թիկունքում մնացած քաղաքի խուլ աղմուկը:

Արանսասուն ճոճվելով, արդեն առանց արևային ակնոցի, անցել ու նըստել է նավախելի նստարանին՝ Շավիերի դեմքը զրույցի ընթացքում տեսնելու համար: Ավելի ապահով լինելու համար մակույկի մի կողմից մյուսն անցնելիս մի պահ Շավիերի ուսերին հենվեց: Այդ ձեռքերը ջերմ են ու նուրբ, դրանց մեջ սիրային թավիշ կա: Հետո Արանսասուն ազատվեց հողաթափեր հիշեցնող իր կոշիկներից, կապույտ բլուզից, ջինսե տաբատից ու արևին կարոտ՝ մնաց բիկինիով: Ոտնաթաթերը (եղունգները մուգ կարմիր ներկած) փոքր են, ոտքերը՝ դեռ ձիգ:

— Չգիտեմ՝ ինչ անեմ, maitia*, որ մորդ սրտով լինեմ: Իրոք, ջանք եմ գործադրում: Բայց, երդվում եմ՝ ինարքներս արդեն սպառվում են: Ինձ մի խորհուրդ կտա՞ս:

— Մայրս սահմանափակ մտայնության տեր մարդ է: Մի՛ անհանգստացիր: Շուտով կբացահայտի, թե որքան հրաշալի մարդ ես, ու կընկերանաք:

— Կասկածում եմ: Ինձ չի ներում, որ ես՝ պարզ բուժքույրս, նրանից զավակ եմ գողացել:

— Քեզ նման բան է ասե՞լ:

— Անզեն աչքով է երևում, Շավիե՛ր:

— Կյանքումս տեսած ամենագեղեցիկ աչքերն են:

Եվս մի սիրահետո՞ւմ էր: Անկասկած, տեղին էր: Կինը գեղեցիկ էր՝ ճիշտ հասունության հասած. սիրածս տիպարն է: Ո՛չ ծեր էր, ո՛չ էլ աղջնակ: Հասուն մի կին՝ աչքերի շուրջ առաջին կնճիռներով, որոնք նրան ավելի գրավիչ էին դարձնում՝ հաշվի առնելով երկրային գործերում նրա փորձառությունը. դեռ պարտվողական-ընկրկող չէր և դեռ առողջ էր, հույսի պաշար և ուրախություն ուներ, թեև ապահարզանի միջով էր անցել, որը նրան հունից հանել էր ու հոգեբանական քերծվածքներ էր թողել մինչև Շավիերի հայտնվելը:

Նրա նրբագեղ դեմքի ամենագրավիչ մասը երևի թե լիքը շուրթերն էին: Ու երբ դրանք բացվում էին, բացահայտվում էր թարմ, սպիտակ, հոյակապ ատամնաշարը: Որքա՜ն բան եմ նրա մասին հիշում: Որքան բարիխաղաղ, գեղեցիկ-ջերմ հուշեր ունեմ:

Կղզու և Ուրգուլ սարի արանքում, երբ մոտակայքում ո՛չ նավ կար, ո՛չ էլ մակույկ, իրենք էլ թեթևակի ճոճվում էին ալիքների վրա, Արանսասուն նրան խնդրեց, որ արևայրուքի քսուք շփի մեջքին: Ամեն օր մարմիններ եմ տեսնում, բայց սիրածս մարմինը սա է: Սիրում էր Արանսասուին: Շատ էր սիրում: Կինն ասաց.

— Վերջերս անընդհատ նույն երազն եմ տեսնում: Պատմե՞մ:

— Պատմի՛ր:

— Մի անտառով եմ անցնում կամ մի սարով, շուրջբոլորը՝ ահարկու անդունդներ: Ձեռքերումս՝ հախճապակե սափոր: Չեմ կարող նկարագրել՝ ինչ ձևի է: Ինչ-որ մեկն ականջիս շշնջում է, որ թանկ է: Եթե կոտրվի, սարսափելի դժբախտություն տեղի կունենա:

---

* Maitia (բասկ.), սիրելիս:

— Կռահում եմ վերջը: Սափորը ձեռքիցդ ընկնում է ու անասելի աղմուկով ջարդուփշուր լինում:

— Վերջին շաբաթների ընթացքում այս նույն երազը մի հինգ անգամ տեսել եմ: Կարծում եմ՝ համակված եմ դրանով: Սափորը, իսկ երբեմն՝ շիշը, միշտ կոտրվում է: Երազիս մեջ լաց լինելու ցանկություն ունեմ, բայց ամաչում եմ: Մարդիկ ինձ մատնացույց են անում ու փոխանակ օգնեն, քննադատում են: Չգիտեմ՝ որտեղ թաքնվեմ: Ուստի սկսում եմ խենթի պես վազել ու հանկարծ հասկանում եմ, որ ձեռքերիս մեջ նորից սափոր կամ շիշ կամ ինչ-որ փխրուն մի իր է հայտնվել, որը կոտրվելու է ու որն, իրոք, կոտրվում է:

— Պետք է գիրք գրես. հետաքրքիր գաղափարներ ունես:

Մեջքը քսուքով պատելուց հետո Շավիերը բարձրացրեց նրա բիկինիի վերին մասը՝ քսուքը տարածելու պատրվակով կրծքերին դիպչելու, դրանք շոյելու համար: Կինը խնդրե՞լ էր այդտեղ էլ քսել: Ո՛չ, բայց Արանսասուն իր մարմնի առնչությամբ որևէ բան չի մերժում նրան: Ուզում է դիպչել՝ թող դիպչի: Ուզում է լիզել՝ թող լիզի: Եթե ներթափանցում է՝ թող ներթափանցի: Դրա մասին նրան ասել էր նախքան Հռոմում անցկացրած երջանիկ օրերը: Որ չթաքցնի իր ցանկությունները, որ նրան տիրի, երբ ու ինչպես կցանկանա, փոխարենը հետն անկեղծ լինի: Կինն ասաց, որ այդքանն իրեն բավարար է: Հասկանո՞ւմ ես: Իհարկե:

Նրա կրծքերը մի քիչ փոքր են, թեթևակի ընկած, բայց չափազանց զգայուն: Այնպես որ, երբ նա դրանք նուրբ քնքշանքով մերսում-սեղմում-համբուրում է, հաճախ է լինում, որ կինը, հաճույքից ցնցվելով, էլի է ցանկանում:

Աչքերը փակ, հաճելի զգացումների վրա կենտրոնացած՝ հարցնում է Շավիերին՝ հիվանդանոցում գեղեցիկ կանանց բուժելիս էրոտիկ ազդակներ չի՞ ունենում:

— Վիրահատարանում՝ երբեք: Խորհրդատվության ժամանակ չեմ ասի, որ ոչ: Օծանելիքի կայծակնային մի բույր ինձ կարող է մի պահ ստիպել մոռանալ, որ մարմինների մեխանիկ եմ: Կարծում եմ՝ բոլորի հետ է պատահում: Քեզ հետ չի՞ լինում:

— Քիչ է պատահում:

— Շատ գրավիչ կանանց եմ բուժել, բայց ինչպե՞ս մարդ կարող է հիանալ՝ իմանալով, որ այդ մարմինների ներսում մի ուռուցք է աճում, կամ որ երիկամներն այլևս չեն գործում:

Որոշում են ափ դուրս գալ: Որտե՞ղ: Այնտեղ՝ կղզու հետևը, որտեղ լրիվ մենակ կլինեն: Շավիերը նորից թիակները ձեռքն է վերցնում:

— Այս պահին չեմ մտաբերում, որ աշխատանքային ժամերին էրեկցիա ունեցած լինեմ:

Թիավարելու ընթացքում հիշում է ցավից ծռված դեմքեր, արնածոր վերքեր, հիվանդություններ: Հիշում է մերկ և, այո՛, նաև երիտասարդ ու լավ կազմված մարմիններ, որոնք լի են տառապանքով ու վախով, ինտուբացված, անգիտակից, մահին դատապարտված այսօր, վաղը, երեք շաբաթվա ընթացքում, ու նա՝ բժիշկը, այնտեղ ազդակներ զգալու համար չէ: Դե՛, լա՛վ, լա՛վ: Ոչ էլ խղճահարվելու համար է:

Lorea Bi-ն թեթև առաջ է սահում: Ծովն ալեկոծվում է: Թիակները փափուկ ճեղքում են հետզհետե ավելի մգացող ջուրը: Մուգ է, որովհետև ավելի խորն է: Նաև ալեբախությունն է մեծ: Ոչ ոք չկա: Այստեղից մինչև հեռավոր հորիզոն ո՛չ առագաստ է երևում, ո՛չ էլ նավի եզրագիծ: Արանսասուն մի գլանակ էր կպցրել ու արևի լոգանք էր ընդունում՝ նավախելին փռած սրբիչին հենված, ոտքերը նստարանին: Շավիերն ուսումնասիրում էր նրա մարմինը: Ո՞նց կարող է մարդ այդքան գեղեցիկ լինել: Նրա ոտքերը՝ երկար, հարթ, լավ ձևավորված, որոնք այս կյանքով քայլել են, մինչև ինձ մոտ հասնելը: Ծնկները, ազդրերը՝ ցելյուլիտի թեթև նշաններով, որոնք դառնացնում են Արանսասուի կյանքը: Բանն այն է, որ թիթիզ է: Արանսասուն կասեր, որ ոչ, որ դա սեփական մարմինը սիրելու խնդիր է: Շավիերը հայացքը սևեռեց բիկինիի կարմիր լայնքի վրա՝ կտորի վրա, որի հետևում ուրիշ անգամ նուրբ ուրվագծվում էր նրա ցայլքաբլրակը, բայց այս անգամ՝ ոչ:

— Ո՞վ էր քո առաջինը:

— Եղբորս ընկերը՝ ծնողներիս տանը: Ես տասնհինգ տարեկան էի:

— Շուտ հասունացած աղջիկ:

— Մի կողմից հետաքրքիր էր: Մյուս կողմից՝ հստակ զգացի, որ եթե նրան թույլ չտամ, այդ տիպն ինձ կբռնաբարի: Դրա վերաբերյալ ոչ մի կասկած չունեի: Տանը ոչ ոք չկար: Եղբայրս դեռ չէր եկել: Զևացրի, որ ինձ դուր է գալիս, ու այդ ենթարկվելու հնարքի շնորհիվ ամեն ինչ հազիվ երկու րոպե տևեց:

— Բայց դա երևի ցմահ տրավմա է հասցրել:

— Պատկերացրո՛ւ՝ ոչ: Առանձնահատուկ ցավ էլ չզգացի:

Որոշեցին մեկուկես ժամից վերադառնալ: Մակընթացությունը սկսվել էր: Նույն ուժը գործադրելով՝ կրկնակի հեռավորություն էին կտրում-անցնում: Երբեմն Շավիերը կարողանում էր թիակների շարժումը հարմարեցնել ալիքի ռիթմին: Այդ դեպքերում Lorea Bi-ն զիլ առաջ էր մղվում: Արագ վերադարձան ծովախորշ:

Արևը մայր էր մտնում: Ծովի հորիզոնը արևմուտքի հեռուներում կրկնում էր երկնքի վառ դեղինը: Օդը զովացավ, ու Արանսասուն սկսեց հագնվել: Որոշեցին, որ քաղաքի Հին թաղամասում խորտիկներ կուտեն ու հետո տուն կգնան, քանի որ հաջորդ օրը երկուսն էլ հիվանդանոցում առաջին հերթով պիտի աշխատեին:

Ծովում արդեն Ակվարիումի մակարդակի վրա էին, երբ լսեցին առաջին ճայթյունը: Անմիջապես երկրորդը հնչեց: Տոնակատարության հրավառության պես է հնչում, բայց տեղացիները գիտեն՝ ոստիկանությունը ռետինե գնդակներով կրակում է ցուցարարների վրա:

— Բուլվարում խառնաշփոթ է:

— Ապագա ահաբեկիչներն են մարզվում: Մի ժամ կաղմկեն, որևէ բան կրակի կտան ու հետո Հին թաղամասի բարեր կգնան՝ խմելու:

Շավիերը, շարունակելով թիավարել, կատաղած բաներ էր ասում, ու Արանսասուին զարմացրեց նրա բորբոքվածությունը: Ինչո՞ւ:

— Քեզ երբեք այդպես խոսելիս չեմ տեսել: Կարծես ուրիշ մարդ լինես:

— Հորս մասին եմ մտածում ու չեմ կարողանում ինձ զսպել:

— Նրան դեռ հետապնդո՞ւմ են:

— Անընդհատ: Ինչ-որ տղաներ երեկ փորձել են այրել բեռնատարը: Հայրս ուշադիր է, այնպես որ չեն կարողացել: Փշաքաղվեցի, երբ ինձ խոստովանեց, որ քիչ էր մնում՝ սխալ գործեր, ինչպես ասաց, մարդու ամենավատ սխալը:

— Մի՛ վախեցրու ինձ: Ի՞նչ սխալի մասին էր խոսում:

— Չհարցրի: Դեմքից հասկացա, որ չի ուզում խորանալ թեմայի մեջ: Բայց ենթադրում եմ... Այսինքն՝ համարյա համոզված եմ:

— Նա բռնություն չի գործադրի, չէ՞:

— Կարծում եմ, որ գրասենյակում զենք է պահում ու դրանով պաշտպանվելու մեծ ցանկություն է ունեցել:

Մոտենում էին նավահանգստին: Հեռվում՝ տների գլխին, սև ծխի սյուն էր բարձրանում:

— Այդ կարգի սխալը կբերեր նրան, որ ուժ կգործադրվեր: Զայրացկոտների ամենամեծ ցանկությունն է, որ բոլորս իրենց խաղի մեջ ներքաշվենք: Այդ ձևով իրենք կունենան միայն իրենց գլխում գոյություն ունեցող պատերազմի ապացույցներ: Քեզ չեմ ուզում ցավ պատճառել, maitia, բայց ես այդպես եմ մտածում:

— Չէ՛, ինչի մասին է խոսքը. հայրս նույն բանն է մտածում: Սառնասըրտորեն ասում է՝ մի օր ինձ սպանելու են: Պնդում եմ, որ գա Սան Սեբաստիանի տանն ապրի, որն իմ ու քո օգնությամբ է գնել: Ասում է, որ շուտով որոշում կընդունի: Իրեն ուժեղ է ձևացնում, բայց ես մամայից իմացել եմ, որ երբեմն գիշերներն անկողնում հեկեկում է:

— Ինչպե՞ս կարող են վնասել հորդ, չէ՞ որ իսկական բասկ է ու euskaldun*:

— Այո՛, նաև մի ընկերության սեփականատեր: Ու մի՛ մոռացիր նաև զինված պայքարը պարտադիր ֆինանսավորելու մասին այդ ամբողջ զառանցանքը: Իր դեմ սպառնագրերը մինչև հիմա ավանում կան: Քո կարծիքով՝ հարևանների մտքով անցնո՞ւմ է, որ պետք է դրանք ջնջել: Որքան շատ եմ մտածում, այդքան շատ եմ զայրանում:

— Որ տեսնում եմ տառապանքդ, maitia, սիրտս կտոր-կտոր է լինում: Խորտիկները ուրիշ օրվա թողնենք, լա՞վ:

— Այդպես ավելի լավ կլինի: Ախորժակս էլ փախավ:

* Euskaldun (բասկ.), բասկերեն իմացող մարդ:

Որքան պետք է, լա՛ց եղիր

Նրան չասացին: Դեռ չգիտեր: Ես նրա զավակն եմ: Չճշտեց, թե ում: Կարիք չկար: Երևի թե դեմքի արտահայտությունից հասկացան: Բացի այդ՝ սպիտակ խալաթը, ուզես, թե չուզես, բնազդաբար հարգանք է ներշընչում: Թույլ տվեցին, որ անցնի: Մռայլ երեկո, սրտի թփթփոց. արյան բիծը վերջին րոպեին նկատեց: Թաց գետնին լավ չէր երևում: Քիչ էր մնում՝ վրան կանգներ: Ուրեմն, այստեղ է պատահել: Չգիտեր: Նրան չասացին: Պատկերացրեց կոշիկի տակացուի ձևը կրկնող կարմիր հետքերը մինչև ծնողների տուն տանող կարճ տարածության վրա: Թե՞ հիմա արդեն միայն դեպի իր մոր տունը:

Եթե Չատոն մահացած լիներ, սավանով ծածկված նրա մարմինը չպիտի՞ գետնին մնար, մինչև դատավորը սկսեր մարմինը տեղափոխելու գործընթացը: Բացի այդ՝ Ertzaintza-ի պարեկային մեքենաների կողքը շտապօգնության մեքենա չէր երևում: Հետևաբար, նրան արդեն տարել էին: Հետևաբար, քանի դեռ բժշկական գործողությունների տեղ կար, նաև հույսի նշույլ էլ կար:

Երկու ertzaina-ներ, ոչ պաշտոնական թեմաներով զրուցելով, դուրս եկան բնակարանից: Նրանցից մեկը թեթևակի ծիծաղեց: Աստիճաններին հանդիպելով սպիտակ խալաթով մարդուն՝ լռեցին: Հանգիստ բարևեցին: Շավիերը մտածեց, որ ցավակցություն կհայտնեին, եթե… Դուք հանգուցյալի, զոհվածի, սպանվածի, մահապատժվածի, մի խոսքով՝ մահացածի ազգակա՞նն եք: Կցավակցեին, կասեին, որ հասկանում են նրա զգացումները: Բայց նրանք ցավակցելու փոխարեն իջան աստիճաններով: Քիչ անց, երբ Շավիերն արդեն հրում էր ertzaina-ների կիսաբաց թողած դուռը, լսեց, որ նրանք վերադարձան առօրյա թեմաներին:

Մտավ: Մտավ զգուշավոր քայլերով, ասես մեկը քնած լիներ, ու չուզեր նրան արթնացնել: Ընտանեկան տան հոտը, միջանցքը՝ մթության մեջ: Ամիսներ առաջ էր այստեղ ոտք դրել: Պատճա՞ռը: Դե՛, խուսափում էր ավան գալ: Շատ պարզ: Զգում էր, որ նրան նայում են, վատ են նայում, ու արդեն երկու անգամ պատահել էր, որ ամբողջ կյանքում նրան ճանաչած մարդիկ

փողոցում չէին պատասխանել նրա ողջույնին: Դա էր պատճառը, որ նախընտրում էր ծնողներին տեսնել, երբ նրանք Սան Սեբաստիան էին գալիս:

Պատի կախիչին կախված էր Չատոյի հին, տարիներ շարունակ հագած մուշտակը: Շավիերը չկարողացավ իրեն զսպել ու ձեռքը երկարելով՝ դիպավ դրան: Չգիտեմ՝ ինչու ձեռք տվեցի: Հազիվ մի քանի վայրկյան տևեց, ասես փորձեր հաստատել, որ մուշտակը իր տիրոջ կյանքի մի դրոշմ էր դեռ պահում:

Ուղղվեց դեպի բնակարանի միակ լուսավոր տեղը, և իսկապես, մայրն այնտեղ էր՝ հյուրասենյակում: Տխո՞ւր, լացակումա՞ծ, հեկեկացո՞ղ: Սակայն Բիչո՛րին այդ պահին շերտավարագույրի արանքներից փողոցն էր ուսումնասիրում: Զգալով զավակի ներկայությունը՝ կտրուկ դարձավ դեպի նրա կողմը. իր դիմագծերի զայրացած հանգստության, հպարտ զսպվածության, մի տեսակ արժանապատիվ լարվածության արտահայտությունը գերիշխել էր տրտմության վրա:

— Չեմ ուզում, որ ինձ որևէ բան ներարկես:

Ասաց, որ ինքն իրեն կհանգստացնի: Զավակը հուզված նետվեց մոր գիրկը:

— Որքան պետք է, լա՛ց եղիր, եթե դա քեզ օգնում է: Իսկ իմ աչքին ոչ ոք նույնիսկ արցունք չի տեսնի: Նրանց այդ հաճույքը չեմ պարգևի:

Բայց Շավիերը իրեն չէր զսպում, կռացել էր դեպի մայրը ու հուզված գըրկել նրան: Ցավից խեղդվում էր. մայրը հին հողաթափերով էր, դրանցից մեկը՝ վրան թռած արյան բծերով, իրեն ուժեղ ձևացնող մայրը, իր ալեհեր մայրը, իր դժբախտ մայրը: Իրենցից ոչ հեռու՝ սեղանին, դրված էր Չատոյի ակնոցը, որ նա տանն էր օգտագործում, գրիչն ու խաչբառի էջի վրա բաց արած թերթը: Իմ ուժգին հեկեկոցների պահին լսեցի, որ հարցնում է՝ կուզե՞մ մի բան ուտել: Այդ աստիճանի ազդված է, որ իրականության զգացումը լրի՛վ է կորցրել: Հրաժարվո՞ւմ է ընդունել կատարվածը:

Բայց Բիչո՛րին կասկած նույնիսկ չուներ, որ ամուսինը սպանված է.

— Մահացել է: Պետք է ընտելանաս այդ մտքին:

— Քեզ ո՞վ է ասել:

— Ես գիտեմ: Երբ հասա, դեռ ողջ էր, բայց վերջին շնչի վրա էր: Քեզ վըստահեցնում եմ, որ դուրս չի պրծնելու: Ինձ թվում է՝ գլխից էին վիրավորել: Չատոն էլ չկա. կտեսնես:

— Նրան հիվանդանոց են տարել, կարծում եմ:

— Այո՛, բայց կտեսնես, որ անիմաստ է:

Խեղճ Ներեան, երբ իմանա... Պետք է հենց հիմա նրան տեղեկացնել: Շավիերը, արդեն ավելի հանգիստ, մոր մատնանշած դարակում փընտրեց հեռախոսահամարով թուղթը: Անմիջապես պատասխանեցին: Նույնիսկ երկու զանգ էլ չգնաց: Աղմուկ էր լսվում: Հաղորդագրություն թողեց՝ առանց մանրամասների: Միայն հայտնեց, թե ով է ու ձևակերպեց խընդրանքը: Ի՞նչ խնդրանք: Որ տեղեկացնեն քրոջը, որ անմիջապես տուն զանգահարի: Կրկնեց, որ շտապ է: Ապահովագրելու համար կրկնեց Ներեայի փոստային հասցեն: Բարի աշխատակիցն ասաց, որ կարիքը չկար, որ հիշում էր աղջկան:

— Դու համոզվա՞ծ ես, որ aita-ն դեռ ողջ էր, երբ նրան շտապօգնության մեքենայի մեջ էին դնում:

— Նրանից ոչ մի վայրկյան չեմ հեռացել: Կոպերը շարժում էր, իսկ ես անընդհատ հետը խոսում էի, որովհետև մտածում էի՝ եթե հետը չխոսեմ, կմեռնի: Բայց նա չէր կարող պատասխանել: Արնաքամ էր լինում: Ասեմ, որ պատկերացնես. երբ տուն վերադարձա, ստիպված էի հագուստս փոխել:

— Ես ուզում էի իմանալ՝ նրա գիտակցությունը տե՞ղն էր, թե՞ ոչ:

— Լսի՛ր, հիմա գլուխս կպտտվի: Կոպերն էր շարժում: Մի քիչ:

— Ոստիկանություն ու շտապօգնություն դո՞ւ զանգեցիր:

— Ես ոչ մեկի չեմ զանգել: Մեկ էլ եկան՝ շչակները զլած: Հարևանն էր երևի զանգել: Ես այնպես էի ճչում, որ երևի կողքի ավանում լսվում էր:

Սիեստայից հետո Չատոն սուրճ խմեց, իրականում՝ սրճեփի մեջ մնացած սառը մրուրը: Բիչո՛րին լսեց նրա փնթփնթոցն ու առաջարկեց թարմ սուրճ պատրաստել, բայց Չատոն հրաժարվեց՝ կամ կնոջը քնատ, բազմոցին թիկն տված, ձեռքերը ծալած՝ մի քանի րոպե քնելու տրամադիր տեսնելու պատճառով, կամ էլ սովորության համաձայն՝ շտապելու պատճառով:

— Եղածը ծով է, բավարար է:

Դուրս եկավ տնից: Ժամը քանի՞սն էր: Համարյա չորսն էր: Ու Բիչո՛րին հիմա տառապում էր, որ չէր գնացել միջանցք՝ Չատոյին համբուրելու, մի համբույր, որ, Աստված հեռու պահի, կարող էր վերջինը լինել: Երանի իր էներգիան ծառայեցրած լիներ ավելի սրտանց հրաժեշտ տալուն երկու զավակներով ամուսնական կյանքի այդքան տարիներից հետո՝ տաք, թե սառը սուրճի մասին ապուշ խոսակցության փոխարեն:

— Ինձ որ հարցնես, կասեմ, որ միտքս միայն աղմուկներն են գալիս: Նախ՝ դռան, երբ գնաց աշխատանքի, հետո՝ նրա ոտնաձայները աստիճանին, հետո՝ ոչինչ. ես բազմոցին, աչքերս փակ մտածելով՝ գուցե մի կես ժամ քնեմ: Ու հանկարծ՝ կրակոցներ: Մի՛ հարցրու՝ քանի հատ էին: Բայց վայրկյան էլ չեմ կասկածում, որ կրակոցներ էին, հաստատ: Դուրս թռա պատշգամբ: Տեսա Զատոյին՝ մայթին ընկած. ուրիշ ոչ ոք չկար: Չեմ տեսել, թե ով է կրակել, եթե, իհարկե, միայն մեկն էր: Դե՛, հո պատշգամբում կանգնած չէ՞ի նայելու. փութով վազեցի փողոց ու, արյունը տեսնելով, խենթի պես բղավեցի: Կարծում ես՝ մեկը հասա՞վ օգնության: Ես ուզում էի բարձրացնել հորդ: Ինքս ինձ ասում էի. այս մարդուն ես պիտի ոտքի հանեմ: Երկու-երեք հոգով կարող ենք ոտքի հանել, բայց ոչ ոք չեկավ: Այնպես որ, սկսեցի հետը խոսել: Ու պատկերացրո՛ւ, թե ինչ վիճակում էի, որ նրան ասացի՝ սիրում եմ քեզ: Մենք երբեք իրար այդպիսի բան չէինք ասել: Նույնիսկ մեր նշանված ժամանակ: Չէր ստացվում դա ասել: Միմյանց հանդեպ սերը դրսևորում էինք, ու վերջ: Բայց ես պետք է հետը խոսեի ու խոսեի, թե չէ ձեռքիցս գնում էր: Ու տե՛ս, եթե պիտի գերեզման մտնի, գոնե կիմանա, որ ես իրեն սիրել եմ: Ինձ ոչ ոք ձեռք չմեկնեց: Փողոցում մենակ էի: Պատուհանները փակ էին: Ու ի՞նչ անձրև էր գալիս: Ասում եմ քեզ՝ ոչ ոք: Երևի թե ինչ-որ մեկը, որ այդ ամենը տեսել էր՝ վարագույրի հետևը թաքնված, զանգել էր ոստիկանություն ու շտապօգնություն: Այլ կերպ անբացատրելի է՝ ինչպես նրանք այդքան շուտ հասան: Տասը րոպեից Ertzaintzan արդեն տեղում էր: Քիչ անց՝ նաև շտապօգնությունը:

Հեռախոսը զնգաց: Ներեա՞ն է: Բիչո՛րին ձեռքով նշան արեց տղային՝ շո՛ւտ արա, շո՛ւտ արա, որ նա վերցնի լսափողը: Շավիերը հեռախոսի մոտ էր, կիսով չափ թեքվեց ու ձեռքը երկարելով՝ վերցրեց:

— Լսում եմ:

— Gora ETA!

Կախեց:

— Պարզ է, որ քույրդ չէր:

— Կան մարդիկ, որ համառորեն ուզում են մեզ խոցել: Ավելի ճիշտ կլինի՝ չպատասխանենք հեռախոսին:

— Բա որ Ներեա՞ն զանգի:

Բիչո՛րին նաև հիվանդանոցից էր զանգի սպասում:

— Մի՛ անհանգստացիր: Ես կզբաղվեմ:

Համար հավաքեց: Բարևեց, ասաց, հարցրեց: Ու նրան պատասխանողը մեկ ուրիշ հեռախոսահամար տվեց, որը Շավիերը թղթի վրա գրեց: Հետո այդ նոր համարը հավաքեց: Մայրը նրա մեջքի հետևն էր՝ բազմոցին նըստած: Ու զավակը, նրան թիկունքով, ասես նրան պաշտպաներ:

— Ցավում եմ, Շավիե՛ր: Ոչ մի բան հնարավոր չէր անել:

Չեզոք տոնով շնորհակալություն հայտնեց: Շնորհակալություն՝ ինչի՞ համար: Ոչ մի բանի: Ինքնավստահություն ձևացնելու համար էր: Ու դրեց լսափողը: Մեջքով եմ, մայրս՝ հետևս, ու շրջվելու այդ դժվար պահը: Աշխատեց նրան ուղիղ չնայել, որպեսզի աչքերի մեջ չտեսնի պատասխանը: Բառեր էր փնտրում. հենց նոր հայտնեցին, որ... Պետք է իմանաս, որ... Բայց դրա փոխարեն ասաց, որ գնում է հիվանդանոց՝ տեղեկություններ իմանալու, ու այնտեղից նրան կզանգի՝ տեղյակ պահելու համար: Խնդրեց մորը.

— Եթե հեռախոսը վերցնես ու վիրավորանքներ լսես, արագ դի՛ր լսափողը: Խոստանո՞ւմ ես:

77

Սև մտադրություններ

Հոգեհանգստից երկու օր անց Չատոյի թաղումը Պոլյոե գերեզմանոցում էր: Թաղմանը քիչ մարդ եկավ: Ոչ մեկի բացակայությունն այնքան չազդեց Բիչո՛րիի վրա, որքան Ներեայինը: Ասում էր, որ դրանով իր սուգն ավելի էր դառնանում, որ նրան չէր ներելու: Շավիերը հասկացող, ողջախոհ, հաշտեցնող միջնորդի դեր էր ստանձնել մոր և քրոջ միջև: Ջուր էր: Չէր կարողանում ո՛չ մորը մխիթարել, ո՛չ էլ քրոջը համոզել: Թվում էր, որ մոր ունքամիջի բարկության կնճիռները խորանում են: Բազմիցս զանգեց Սարագոսայի բար՝ փորձելով քրոջ հետ կապվել ու նրան համոզել, որ շուտ տուն գա: Բար զանգահարելը դժվար և անշնորհակալ գործ էր. Շավիերը հասկանում էր, որ բարի տիրոջ համար գլխացավանք է դառնում: Քրոջը համոզելն էլ պարզապես չստացվեց. Ներեան հաստատ որոշել էր հոր ֆիզիկական մահվան հետ չառնչվել: Ա՛խ, ուրեմն դա՞ է պատճառը: Վրդովմունքի վերջին պոռթկումով մայրն ասաց Շավիերին, որ իր համար մեկ է, ու թող Ներեան իր կյանքն ապրի, ինչպես ուզում է: Ավելացրեց.

— Մի բան էլ ասե՞մ: Աստծուն չեմ հավատում:

Հուղարկավորման օրվա առավոտը մռայլ էր: Լավ էր՝ չէր անձրևում, քամի չկար: Հակառակ դեպքում՝ այնտեղ՝ վերևում, որտե՞ղ պիտի պատըսպարվես: Խաչեր, տապանաքարեր, արահետներ: Ավելի վար աշնանային մառախուղով պատված քաղաքի կտուրներն էին: Ասում են, որ սա գեղեցիկ գերեզմանոց է: Համա՛ թե մխիթարանք: Մի քանի հոգով հավաքվեցին ընտանեկան դամբարանի մոտ, ու սալաքարը շարժելիս Մարտին պապիկի դագաղը երևաց: Եկել էին Ասպեյտիայից իրենց այն բարեկամները, որոնց միայն հարսանիքների ու թաղումների ժամանակ ես տեսնում: Եկել էր Բիչո՛րիի քույրը, որը, մեկ է, ոչ մի բան չէր հասկանում, որովհետև խեղճի խելքը տեղը չէր: Մի վեց հարևաններ ցածրաձայն ցավակցեցին: Նրանց կողքին՝ մի երկու հոգի Չատոյի ընկերությունից: Հասկանալի է: Ավանից հեռու է, ոչ ոք նրանց չի տեսնի, ոչ ոք նրանց չի քննադատի: Բիչո՛րին՝ աչքերի տակ սև շրջանակներով, հանգիստ, բոլորին մեկ առ մեկ շնորհակալություն հայտնեց՝ գալու համար:

Թաղման օրը՝ երեկոյան, Ասպեյտիայի բարեկամները հարցրին Նեռեայի մասին:

— Չի կարողացել գալ: Դե՛, գիտեք, Սարագոսայում է սովորում:

Շավիերը՝ թիկնապահ զավակը, չէր հեռանում Բիչո՛րիից: Նրա կողքին էր, երբ մոտեցան առաջին հրաժեշտ տվողները, ու հանկարծ տեսավ սև ակնոցով մի կնոջ, որը մնացածներից մի քսան քայլ հեռավորության վրա էր, ասես եկել էր մեկի գերեզմանին այցելելու: Նա էր: Ո՞վ: Էլ ո՞վ պիտի լիներ. Արանսասուն էր: Իրենց միջև տեղի ունեցածից հետո Շավիերը չէր սպասում նրան տեսնել: Գուցե ինչ-որ մի օր անցնելիս՝ բարև-բարև՝ ավտոկայանում կամ հիվանդանոցի սրճարանում:

Մորն ասաց.

— Ելքի մոտ կսպասեմ քեզ:

— Ո՞ւր ես գնում:

Չպատասխանեց: Կարիք չկար: Բիչո՛րին ճանաչեց բուժքրոջը: Բայց չէ՞ որ ասում էր, թե խզել է իրենց հարաբերությունները:

Երբ մոտենում էր Արանսասուին, որը նախկինից գեղեցիկ էր, Շավիերը նկատեց թիկունքում ձևավորված լռությունը: Լուրջ, պրոֆեսիոնալ սեղմեց նրա ձեռքը: Դե՛, բոլորի ներկայությամբ չէր համբուրելու, չէ՞:

Քայլեցին դեպի ելքը իրարից կես մետր հեռավորության վրա՝ թեթևակի շրջադարձ անելով՝ մյուսներից հեռանալու համար:

— Մի քիչ հեռու կանգնեցի. չէի ուզում խանգարել:

— Գիտես, որ չես խանգարում:

— Հայրիկիդ հավանում էի: Առաջին օրվանից հետս սիրալիր էր: Մայրիկիդ մասին նույնը չեմ կարող ասել:

— Վե՛րջ տուր: Խնդրում եմ:

— Եկել եմ՝ հրաժեշտ տալու հորդ: Նաև որպես ընդվզում՝ ահաբեկչության դեմ: Եթե պատվով երկիր լիներ մեր երկիրը, հիմա այստեղ մարդկանց մի հոծ բազմություն կլիներ:

— Ի՞նչ կարող ես անել. սա է:

— Առիթից օգտվելով՝ նաև քեզ հրաժեշտ տալու եմ եկել. առհավետ:

— Գնո՞ւմ ես:

Լսի՛ր, Շավիե՛ր, քո ի՞նչ գործ: Ճիշտ է, չգիտեմ՝ ինչու հարցրի: Իրականում ամեն ինչ խոսել-վերջացրել էին. «Լոնդոն» հյուրանոցի սրճարանի մի անկյունում նստած՝ խոսեցին, ու Շավիերը հարաբերությանը վերջ դրեց:

Ու Արանսասուն՝ բարեսիրտ աղջիկը (դա անհերքելի է), ազնիվ ժեստ անելով, եկել է Չատոյի հուղարկավորմանը, միևնույն ժամանակ՝ հուղարկավորմանը մի սիրո, որից նա շատ սպասումներ ուներ, որին շատ էր նվիրված և որի մեջ իր ամբողջ հոգին էր դրել: Սա մետաֆորիկ է ինչում: Ոնց ուզում է՝ թող ինչի: Այդ աստիճան փխրուն, այդ աստիճան ապակուց ու հախճապակուց սերը, որը դու փշուր-փշուր արեցիր, այո՛, դու՛, հիմա մեռած-ընկած է այն նույն գերեզմանում, որտեղ քո հայրն է ննջում: Նախորդ օրը, երբ արդեն չզսպվող, անխուսափելի արցունքները կամաց-կամաց զիջում էին հաշտվելուն, Արանսասուն ասաց.

— Քո հորը սպանողը նաև փշրեց ինձ ու քեզ միացնողը:

Նեղացածի տեսք չուներ: Թեև պատճառները քիչ չէին: Շավիե՛ր, անամոթի՛ մեկը, ինչպե՞ս քեզ թույլ տվեցիր այդպես վարվել նրա հետ: Ինչպե՞ս: Քեզ հիմարի տեղ մի՛ դիր: Արանսասուն սկզբում չէր հասկանում: Քանի որ Չատոն նոր էր մահացել, կարծում էր, որ Շավիերը խոսում է՝ զայրույթից ու վշտից կուրացած: Ու աշխատելով թեթևացնել նրա տառապանքի գոնե մի մասը՝ իր ամբողջ ջերմությունը՝ անմեղ ու ազնիվ, ցուցաբերեց ու եթե կարողանար, ամբողջ ցավն իր ուսերին կառներ: Այդ ամենաողբերգական պահին նրան սեր ու հավատարմություն խոստացավ ու թաց աչքերով նրան ասաց.

— Ես քեզ կերջանկացնեմ, maitia, երդվո՛ւմ եմ:

— Բանն այն է, որ ես երջանիկ լինելու իրավունք չունեմ:

— Քեզ ո՞վ է արգելում:

— Ինքս եմ ինձ արգելում: Երջանկության ձգտելուց ավելի սարսափելի հանցանք չեմ մտաբերում այս պահին:

— Ես պարպված եմ:

Ասես ինքն իր հետ խոսելով՝ ընդունեց, որ իր բախտը չի բերում տղամարդկանց հետ: Ասաց՝ ցտեսությո՛ւն, դուրս եկավ սրճարանից, բայց հիմա գերեզմանոցում էր՝ այս մռայլ օրով սև ակնոցով պաշտպանված:

— Եթե դեմ չես, ընկերուհուս հետ կմտնեմ տուն՝ իրերս վերցնելու: Հետս քո իրերը կբերեմ, որ ինձ մոտ ես թողել:

— Ինչպես կցանկանաս: Մի՛ կարծիր, որ…

Ընդհատեց նրան.

— Կարևոր չէ՝ ինչ եմ կարծում: Առջևս մի հորիզոն բացվեց, երբ ամենաքիչն էի սպասում: Մի ծանոթի խորհրդով «Բժիշկներ առանց սահմա-

նի» անդամ դառնալու դիմում եմ ներկայացրել: Պատասխան դեռ չունեմ, բայց հեռախոսով ինձ ասացին, որ շտապ կարիք ունեն բուժքույրերի, ու որ իմ փորձը հաշվի առնելով՝ առանց որևէ խնդրի կընդունեն: Այնպես որ, գնում եմ հիվանդանոցից, գնում եմ այս քաղաքից ու շուտով վերապատրաստման դասընթաց կանցնեմ: Իսկ այն գիշեր՝ մեր հրաժեշտից հետո, ես ամենասև մտադրություններով էի քայլում *Պասեո Նուևվոյով*:

— Մի՛ վրդովեցրու:

— Ոչ ոք չկար: Մութ էր: Հեշտ կլիներ: Հրաշալի միջավայր՝ ռոմանտիկ ինքնասպանության համար: Գայթակղությունը մեծ էր: Ու հանկարծ մտածեցի. լա՛վ, Արանսասո՛ւ, այդքան մարդ կա, որ վատ վիճակում է, տառապում է սովից, համաճարակից, պատերազմից: Գուցե ծովը գցվելու փոխարեն դարդերդ ջո՞ւրը նետես ու ուրիշների համար մի բան անե՞ս: Մի բան, որ կարիքավորներին օգուտ կտա ու կյանքիդ էլ՝ դրական իմաստ: Սա է ընդունածս որոշումը:

— Իմ կարծիքով՝ արտակարգ որոշում է:

Համարյա հասան գերեզմանոցի ելքին:

— Գուցե դու էլ պիտի նման մի արկածի մեջ մտնեիր:

— Կմտածեմ:

Իրար հրաժեշտ տվեցին պաշտոնական ձեռքսեղմումով: Արանսասուն հազիվ մի քանի քայլ հեռացավ ու դարձավ՝ ժպիտը դեմքին.

— Շնորհակալությո՛ւն՝ լավ պահերի համար:

— Նույնը քեզ եմ ասում:

— Հոռմում այն քարը չպիտի գցեիր:

Ճաղերի մոտ կանգնած Շավիերը տեսավ, թե ոնց է նա հեռանում: Արանսասուի այդ ինտիմ ժպիտը քաղցրադառը զգացում ծնեց: Արցունքների, բղավոցների, մեղադրանքների մի տեսարան մարսելը շատ ավելի հեշտ կլիներ: Ցավագին հիացմունք էին առաջացնում նրա քայլվածքը, բարակ իրանն ու ուղիղ ուսերը: Նրան մերկ հիշեց: Քիչ էր մնում՝ ձայն տար: Ավելին՝ նրա հետևից վազելու ուժգին ցանկություն ունեցավ:

Բայց այդ պահին մայրը մոտեցավ նրան ու թևը մտավ:

— Չէի՞ր ասում, որ բաժանվել եք:

— Եկել էր՝ հրաժեշտ տալու: Հեռու տեղ է գնում ապրելու:

— Ավելի լավ: Նա քեզ համար չէր: Հենց առաջին վայրկյանից հասկացա, երբ մեզ նրան ներկայացրիր:

Կարճատև դասընթաց

Արդեն գիտեր, որ երկար ժամանակ է անցկացնելու պահեստազորում: Խոսել էր Խոկինի հետ: Երբ երկուսով էին, Բրետանի գորշ անձրևները, անվերջանալի սպասումն ու ձանձրույթն ավելի տանելի էին թվում: Միաժամանակ իրենց զվարճանքներից չէին զրկում՝ պատշաճ զգուշություն պահպանելով: Գիտեին, որ որոշ կարգազանց մարտիկներ կային: Բայց ոչ իրենք: Դե՛, լա՛վ, մի քիչ կար, իհարկե, բայց ուշադիր էին, որ հանկարծ ըմբոստների համբավ չվաստակեն:

Երբեմն տանտերերի հեծանիվներով շրջում էին գյուղով: Միրգ էին գողանում, գորտ էին բռնում, ծալովի դանակով ֆիգուրներ էին տաշում փայտից ու մի առիթով մասնակցել էին մոտակա գյուղի տոնախմբությանը ու այնտեղ սիդրի (եթե դա կարելի էր սիդր անվանել) պես մի բան էին խմել, որը, ըստ Խոշե Մարիի, pixa*-ի համ ուներ:

Բայց Խոկինին օպերատիվ խումբ վերցրին: Խոշե Մարին մնաց մենակ, այնուհետև՝ Պաչոյի հետ, որը կարգին տղա էր, բայց Խոկինը չէր: Նրան առանձնապես չէր վստահում: Ինչո՞ւ: Չգիտեմ: Միշտ հեռավորություն էր պահում: Հարաբերությունների մեջ դա նկատելի է: Հետը լավ ես, իհարկե: Բայց մեքենայի շարժիչի *աղմուկի* պես մի բան ես զգում: Մի բան այն չէր:

Որոշ ժամանակ անց ֆրանսիացի ժանդարմները դատական ու սահմանային ոստիկանության ու հետախուզական ծառայության գաղտնի գործակալների հետ Անգլետիտում բռնել էին Սանտի Պոտրոսին: Այդքան հորդորել էր բոլորին, որ զգույշ լինեն, ու մեկ էլ հենց իրեն բռնեցին կաշվե մի պայուսակով: Մեջը՝ ոստիկանության համար մի գանձ՝ ETA-ի չորս հարյուրից ավելի գործող մարտիկների ցանկը, նրանց կեղծանունները, գրանցման հասցեները, հեռախոսահամարները, նրանց օգտագործած ավտոմեքենաներն ու նույնիսկ դրանց համարանիշները: Հաջորդ շաբաթների ընթացքում նրանց ճանճերի պես բռնեցին:

* Pixa (բասկ.), մեզ:

Պաչոյի կարծիքով, եթե դրանից առաջ ինքն ու Խոշե Մարին ներգրավված լինեին, հիմա բռնված կլինեին: Նաև կարծում էր, որ.

— Կազմակերպությունը պետք է բացերը լրացնի: Հիմա կտեսնես՝ առաջիկա օրերին մեզ կկանչեն: Հապա՛, տղե՛րք, ի զե՞ն:

Բայց չկանչեցին: Նրանց անգործունյա վիճակը մի քանի ամիս տևեց: Այդ ժամանակ էր, որ Խոշե Մարիին կազմակերպության ներքին խողովակներով տնեցիների նամակը հասավ, որտեղ նաև կտրածո կար Egin թերթից՝ Խոկինի «տարօրինակ» մահվան մանրամասներով: Դա ծանր հարված էր Խոշե Մարիի համար: Նույնիսկ փոքր ժամանակ այդքան լաց չէր եղել: Ու որպեսզի Պաչոն չտեսնի, հիվանդ ձևացավ ու երկու օր ո՛չ կերավ, ո՛չ էլ անկողնուց վեր կացավ:

— Քեզ համար պա՞րզ է, թե ինչ է նշանակում զինված պայքարը:

Պաչոն կասկած չուներ:

— Ես սրա մեջ թաթախվել եմ՝ իմանալով բոլոր հետևանքները:

— Բա չէի՞ր ասում, որ հորդ միայն անվասայլակով է հնարավոր տեղաշարժել:

— Այո՛: Հետո ի՞նչ:

— Գուցե պետք է տնեցիներին օգնեիր:

— Դրա համար քույրերս կան:

Չէր կարողանում համակերպվել այդ տղայի հետ: Բացի այդ՝ Խոշե Մարիի համար տարօրինակ էր օրերով կպած լինել մեկին, որն իր ավանից չէր: Պաչոն Լասարտեում էր մեծացել: Ո՛չ բասկի ազգանուն ուներ, ո՛չ էլ բասկերեն էր խոսում: Ինչի՞ համար էր պայքարին միացել: Սա ի՞նչ է, սովորական է՞շ է, որն իր վրա գծեր է նկարում զեբրայի նմանվելու համար: Ու վախենում էր, որ գուցե գվարդիականների «խլուրդն» էր: Ամեն դեպքում, նախընտրում էր անձնական հարցերի շուրջ հետը չխոսել:

Տարիներ անց, երբ մայրն այցելության էր եկել բանտ, նրան պատմեց, որ այն օրերին, երբ իմացել էր Խոկինի մասին, քիչ էր մնում՝ խնդրեր, որ թույլ տան՝ դուրս գա մարտիկների շարքերից:

— Շատ ժամանակին հիշեցիր: Գիտես, չէ՞, Կոլդոն շատ հանգիստ ապրում է ավանում իր մեքսիկացի կնոջ ու երեխաների հետ:

Խոշե Մարին գրեթե որոշումն ընդունել էր: Ուզում էր տեսնելուն պես դա հայտնել իր կապավորին, բայց հենց այդ ժամանակ կապավորը փակ ծրարով երկտող բերեց, որի միջոցով նրանց հայտնում էին, թե քիչ անց

ինտենսիվ դասընթացի են մասնակցելու՝ զինված պայքարին շուտ միանալու համար:

Պաչոյի համար ամեն ինչ պարզ էր.

— Ընկե՛ր, հետդարձի ճանապարհ էլ չկա: Խրախճանքը սկսվեց:

— Ինչ ուզում է՝ թող լինի, միայն թե այստեղից դուրս գանք:

Հորդառատ անձրև էր գալիս, երբ գնացք էին նստում: Ամբողջ ճամփորդության ընթացքում անձրևը չէր կտրվում: Գնացքը մի քաղաքում կանգ առավ, մարդիկ բարձրացան, հետո՝ մեկ ուրիշ կանգառ, էլի մարդիկ նըստեցին: Երեկոյան հասան Բորդո, որտեղ անձրևը առավոտվա ուժով շարունակում էր տեղալ:

Կայարանի բարում հանդիպեցին այն մարդուն, որը նրանց պետք է տեղ հասցներ: «Տերվռազի» մեկն էր, ու ստիպված էին մի շնչով կոնծել հենց նոր մատուցված գինին: Մեքենայի մեջ նրանց հրամայեց անթափանց ակնոց դնել ու կռանալ: Խոշե Մարին գործընթացին ծանոթ էր այն ժամանակներից, երբ ինքն ու Խոկինը գնացել էին Սանտի Պոտրոսի հետ հանդիպմանը: Մեկ ժամից ավելի այս ու այն կողմ քշելուց հետո մի տուն մտան, որտեղից երաժշտություն էր լսվում: Նոր այդտեղ կարողացան հանել ակնոցները:

Ութ օր փակված մնացին այդ անպատուհան սենյակում, որի լայնքը երեք քայլ էր, երկարությունը՝ հինգ: Չափից ավելի փոքր՝ երկուսի համար: Սենյակում այնքան մոտիկ էին իրենց մարմինները, որ Խոշե Մարին հունից դուրս էր գալիս: Եթե Խոկինի հետ լիներ, հարկ եղած դեպքում ներքնազգեստ էլ կտար նրան: Սրան այդքան չէր վստահում: Ամենավատը գիշերն էր: Պաչոյի քթի միջնապատը հաստատ ծուռ էր: Իսկ շնչառական այդ աղմուկի մեջ քնելը ահավոր անդուր էր: Նա չէր խռմփացնում: Խռմփացնողը Խոշե Մարին էր: Պաչոյի հանած աղմուկն ավելի շատ պարկապզուկից դուրս պրծնող սուլոցի ձայնի էր նման: Ու այդպես՝ ժամը ժամի հետևից մինչև լուսաբաց:

Սենյակից կարող էր դուրս գալ՝ միայն ներքևի հարկում գտնվող զուգարանը գնալու համար: Ասվել էր, որ քիչ բան տեսնեն ու հիշեն: Հաճախ տան մեջ շատ բարձր երաժշտություն էր հնչում: Դրա պատճառով սենեկակիցները տեղյակ չէին միմյանց արածներին կամ ասածներին: Talde-ն, ասում էր նրանց հրահանգիչը, գործում է որպես առանձին միավոր, այնպես որ, եթե ձեզ բռնեն, չեն կարողանա այնպիսի տեղեկություն կորզել,

որը կվտանգի կազմակերպության ընդհանուր գործունեությունը, հասկանո՞ւմ եք: Երկուսն էլ միաժամանակ գլխով էին անում:

Առավոտվա տեսական դասերին Խոշե Մարին ձանձրույթից մեռնում էր: Թաքուն ժամացույցին էր նայում ու մտքում հաշվում մինչև ճաշը մնացած ժամերը: Ուսումը նրա համար տանջալից բան էր: Դեռ փոքրուց ikastola-ում կենտրոնանալը ահռելի ջանքեր էր պահանջում: Պայքարին վերաբերող դասերը՝ նույնը, բայց գալիս էր երեկոն, անցնում էին գործնականին՝ զենքով էին զբաղվում, ու այդ ժամանակ զիլ աշխուժությամբ էր համակվում ու հանկարծ հին ժամանակների պես էր զգում, երբ ընկերների հետ ավանի քարհանք էին բարձրանում՝ ինքնահրկիզվող շշեր, պայթուցիչներ ու հրթիռներ փորձարկելու: Դա էր իրենը՝ գործողությունը, շարժումը, ոչ թե պայթուցիկների տեսության տաղտկալի ժամերը, որոնք անդիմադրելի հոգնություն էին առաջացնում:

Պաչոյի հետ վարժվում էին՝ զենք հավաքել-քանդելով: Սովորեցին մահացու դարաններ ու մեքենա-պայթուցիկ պատրաստել: Էլ ի՞նչ: Դե՛, նաև սարքում էին հետաձգված պայթյունով աշխատող մեխանիզմներ: Այնուհետև ավազով լի մետաղական տակառի մեջ պայթյուն էին առաջացնում: Նրանց սովորեցրին բոլոր անհրաժեշտ բաները թաքստոցների, կապավորների վերաբերյալ, նաև մեքենաների կողպեքներ բացելը: Հրահանգիչը պնդում էր, որ պետք է պահպանել անվտանգության կանոնները, հորդորում շատ զգույշ լինել այս հարցում, ուշադիր լինել այն դեպքում, որ… Նրանց բացատրեց, թե ինչպես պիտի իրենց պահեն բռնվելու դեպքում: Կրակելու վարժանքը միայն ատրճանակով արեցի ու միայն մեկ երեկո, քանի որ ֆրանսիական ոստիկանությունը ուշադիր էր: Արդեն այդքան հեշտ չէր, ինչպես մի քանի տարի առաջ, երբ կարող էին մոտակա անտառներում կրակել: Խոշե Մարին ափսոսում էր: Ամենաշատը սիրում էր թիրախին կրակելը:

Համբուրեց «Բրաունինգի» կոթը:

— Ավելի լավ է սա, քան սեքսը:

Նրանք ծիծաղեցին: Էս կոտոշները, ի՞նչ է, կարծում են՝ կատակո՞վ եմ ասում: Հրահանգիչն էլ, թե.

— Ա՛յ մարդ, մեկը մյուսին չի խանգարում:

Այդ տանը փակված մնալու վերջին գիշերը Խոշե Մարիի քունը փախել էր: Մտորումները, քիչ առաջվա կրակոցների արձագանքը, Պաչոյի սուլող

շնչառությունը: Այնպես որ, սկսեց ինքն իր հետ խոսել: Ցածրաձա՞յն: Չէ մի՛. սովորական ձայնով, ասես ինչ-որ մեկի հետ զրուցելիս լիներ: Գիշերվա երկուսն անց էր: Պատկերացնում էր իրեն զենքը ձեռքին նշան բռնելիս, ու որ թիրախները թղթից չէին: Մյուսն արթնացավ: Մթության մեջ հարցրեց.

— Ի՞նչ ես էդտեղ խոսում:

— ETA-ից ո՞վ է ամենաշատ մահապատիժներ իրականացրել:

— Գաղափար չունեմ: Դե Խուանան կամ էլ «Մադրիդ» դիվերսիոն խըմբից մեկը:

— Չգիտե՞ս՝ հիսունի՞ց ավելի է վերացրել:

— Թո՛ւ, ինչո՞ւ ես հարցնում: Գիշերվա հազարն է, ու մի քանի ժամից պիտի շարժվենք:

Մի քանի րոպե մթան մեջ լուռ մնացին: Ու Պաչոն արդեն սկսել էր իր այդ շնչառական աղմուկը, որը Խոշե Մարիի նյարդերն էր քայքայում: Մեկ էլ, թե.

— Խոկինի մահը պետության վրա ծով արյուն է նստելու: Այնքան մարդ եմ ոչնչացնելու, որ մի օր գրքերում կհայտնվեմ որպես ETA-ի ամենաարյունարբու մարտիկը:

— Գրո՛ղը տանի, հոպա՛ր, հերի՛ք եղավ:

— Ընկերս առնվազն հարյուր սպանված արժի: Հաշիվ եմ պահելու: Հերթականին մաքրելիս տետրումս գիծ կքաշեմ:

— Ստացվում է, որ զինված պայքարը անձնական վրեժի ես վերածում:

— Քե՞զ ինչ, դմբո՛: Ավելի լավ կլինի *շնչել* սովորես, որ մարդավարի քնես:

79

Ծովամայրի հպումը

Երևի թե եղանակն ավելի սառն էր, քան Խոշե Մարին էր պատկերացնում նախքան ճամփա ընկնելը, բայց (հետևի նստարանին կռացած, դեմքերը ծնկներին մոտ՝ չտեսնելու, չիմանալու համար) այդ սառնությունը չէր զգում, մինչև ինքն ու Պաչին հասան այն տունը, որտեղ ղեկավարը (կամ ղեկավարները) նրանց էին սպասում: Բանն այն է, որ երբ իրենց զրուցակիցն ասաց, որ տանելու է տնօրինության հետ հանդիպման, Պաչոն ու Խոշե Մարին մտածեցին, որ իրենց Տերներային են ներկայացնելու, բայց այն մարդը, որին Բորդոյի կամ դրա շրջակայքի, կամ էլ, արի՛ ու իմացի՛ր, թե որ տեղի տանը տեսան, Պակիտոն էր:

Լա՛վ, բայց սառը եղանակի թեման ինչի՞ համար էր: Դե՛, երբ կանգնած էր ղեկավարի առջև, որի դեմքին մեռածի ժպիտ էր դրոշմված, աչքերն էլ նեխած ձուկ էին հիշեցնում, Խոշե Մարին մի սառը հոսանք զգաց, որի պատճառով մտածեց՝ թո՛ւ, պիտի սվիտեր հագնեի: Ճիշտ այնպես, ինչպես սուպերմարկետում մտնում ես սառեցված մթերքի բաժին ու հանկարծ ջերմաստիճանի կտրուկ անկում ես զգում: Պատուհանը փակ էր, ու Խոշե Մարիին թվաց, որ սառնությունն այդ մարդուց էր գալիս, որը, չնայած իր ղեկավար դիրքին, նրանց ընդունեց ակնհայտ ամաչկոտությամբ:

Գուցե զուտ իր երևակայությունն էր, որը պայմանավորված էր զինված պայքարի վետերանի հանդեպ սկսնակի վախվորած հիացմունքով, մի վետերանի, որին վերագրում էին մութ ու արյունարբու անցյալ: Նրա մասին պատմում էին, որ սպանել է Մորենո Բերգարեչեին՝ նույն ինքը Պերտուրին, հրամայել է վերացնել Յոյեսին, նաև Օրդիսիային ու օդ թռցրել Սարագոսայի զորանոցը, որտեղ երեխաներ կային: Ձեռքը մեկնեց Պաչոյին: Իսկ իմ մեջքին թփթփացրեց, ու այնպիսի զգացում ունեցա, ասես ծովամայր քսվեց ինձ: Դա իր օրհնությունն էր՝ ETA-ի կազմում լիովին ընդգրկվելու իմաստով: Բայց նրա անշարժ ժպիտն ու ձկան պղտոր աչքերը չփոխվեցին:

Նրանց առաջարկեց նստել բազմոցին:

— Դո՞ւ էիր հանդբոլիստը:

Շատ խելացի է: Մտածեցի՝ մեկը նրան փաստն է հայտնել, նա էլ ձևեր է թափում, թե տեղյակ է: Բայց երևում է (ինչպես պատմում էին մյուս մարդիկ, որ նույնպես հետը խոսելու առիթ էին ունեցել)՝ դա ընդամենը Խոշե Մարիին հաճույք պարգևելու համար էր: Հետո մաղթեց, որ լավ զգան օպերատիվ talde-ի կազմում:

Մանրամասներին ուշադրություն դարձնող, ամեն ինչը հաշվի առնող այդ մարդը նրանց ցույց տվեց Գիպուսկոա նահանգի քարտեզը: Թղթի վրա ցուցամատով մի շրջանակ գծեց:

— Սա ձեր գոտին է: Այստեղ ինչ կուզեք՝ արեք: Ոստիկաններ, գվարդիականներ, ertzaina-ներ՝ ով ձեր առջև հայտնվի: Պետք է ուժեղ հարվածել, որ կառավարությունը համաձայնի նստել բանակցությունների:

Խոշե Մարին անմիջապես տեսավ, որ իր ավանը Պակիտոյի նշած շրջանակում է, ինչն իր կարծիքով ոչ լավ էր, ոչ վատ: Խոսքը վերաբերում էր Վիլյաբոնայից Օրիա գետով դեպի վար ընկած գոտուն: Ու այդպես էլ կոչվելու էին. «Օրիա» դիվերսիոն խումբ, որը բաղկացած էր լինելու երեք հոգուց: Երրորդը՝ Չոպոն, արդեն նրանց է սպասում վարձակալած մի բնակարանում:

— Դոնոստիայում ոչ մի դեպքում չեք գործում: Այնտեղ ոչ մի բանի չխառնվեք: Ուրիշներն են զբաղվում: Բայց այս գոտու ներսում (նորից մատնանշեց քարտեզը) դուք եք տերը: Այստեղ կարող եք ուզածդ վնասը պատճառել:

Այնուհետև յուրաքանչյուրին «Բրաունինգ» տվեց, զենքի պահունակներ և փամփուշտներ: Բացի այդ՝ կեղծ փաստաթղթեր, պոլիէթիլենի տոպրակ փողով ու վերջում՝ մի քիչ ավելի մեծ տոպրակ՝ պայթուցիկներով, պատրույգով ու ականներ պատրաստելու նյութերով:

— Ձեզ բաժին հասած տարածքում նշանակետերը ինքներդ կընտրեք, եղա՞վ: Ու զա՛րկ տվեք: Թող ձեր ձեռքը չդողա:

Mugalari*-ների հետ ինչ-որ խնդիր կար, այնպես որ երկու սկսնակ մարտիկներին թաքցրեց ֆրանսիացի մի զույգի մեկուսի տարածքում կորած մի տան մեջ, որտեղ կարելի էր հասնել Ուռունյեից Ասկեն տանող մայրուղու կողքով: Սպասեցին վեց օր, ինչից օգտվելով՝ սարերում բավական

* Mugalari (բասկ.), տեղանքը ճանաչող այն մարդը, որն օգնում է ոտքով հատել Ֆրանսիայի ու Իսպանիայի սահմանը:

քայլեցին: Ոչ ոք նրանց չէր ասել, որ չեն կարող զբոսնել: Մի երեկո փորձարկեցին ատրճանակները: Այդ ձևով հետևում էին ուսուցման դասընթացի ժամանակ ստացած խորհուրդներին, քանի որ, ըստ հրահանգչի, նախքան որևէ գործողություն նախաձեռնելը, պետք է համոզվել, որ զենքը նորմալ է գործում: Դրա համար հողե ճանապարհով բարձրացան մեկուսացած, ծառաշատ մի տեղանք ու փոխեփոխ կրակեցին. մեկը պահակ էր կանգնում, մյուսը զվարճանում էր՝ մի քանի կրակոց արձակելով:

Մի գիշեր տհաճ անակնկալ եղավ: Խոշե Մարին արդեն (ճարն ի՞նչ) քիչ թե շատ ընտելացել էր ընկերոջ սուլող շնչառությանը: Բայցևայնպես, երբեմն անտանելի էր դառնում, ու ցանկանում էր մոտենալ ու քիթը ջարդուխուրդ անել:

Չհաջողեցնելով քնել՝ լույսը վառեց: Ուշ գիշեր էր: Մեկ էլ դրանց տեսավ: Իր անկողնու վերևը կախած նկարի տակից էին դուրս գալիս: Ովքե՞ր: Միջատները: Մուգ փորով միջատներ, որ տարբեր ուղղություններով էին շարժվում՝ ոչ արագ, ոչ դանդաղ: Մեկին, որ մնացածներից ավելի մեծ էր, ճխլեց: Մատը վրայից հանեց ու պատին արյան բիծ տեսավ: Աստվա՜ծ իմ, փայտոջիլներ են: Ոտքի հանեց Պաչոյին, ու մի ժամից ավելի դրանց սատկեցնելով էին զբաղված:

— «Օրիա» դիվերսիոն խումբը՝ գործողության մեջ:

— Պաչո՛, տե՛ս, թե մականուն ես փնտրում, քեզ համար շատ լավ մեկը ունեմ, դմբո՛:

Խոշե Մարին հասկանում էր՝ գիշերները լուսացնելը վատ է ազդում իր բնավորության վրա: Ամեն մանրուքից բարկանում էր: Դարձել էր վիճող, անհամբեր, փնթփնթան: Ֆրանսերեն ոչ մի բառ չէր խոսում, ուստի տանտիրուհու հետ բասկերեն վիճեց կերակուրի պատճառով: Բղավելով, ագրեսիվ ասաց, որ պատրաստածը զզվելի է: Քիչ է, անհամ, վատ է պատրաստած: Տանտիրուհու ամուսինը, երեկոյան վերադառնալով աշխատանքից, սպառնաց Խոշե Մարիին վռնդել:

Մութն ընկնելուն պես, Պաչոյի հետ սենյակում փակված, կարոտախտով հիշեց մոր պատրաստած կերակուրները:

— Իրենից լավ պատրաստող չեմ տեսել: Պատկերացնում եմ, որ հիմա տանը ձուկ է տապակում: Մենք միշտ ձուկ էինք ուտում ընթրիքին: Հենց հիմա զգում եմ հոտը: Չե՞ս զգում: Չե՞ս զգում պաքսիմատով սալմոնետների ու տապակած սխտորի հոտը:

Վիզը երկարելով՝ հոտոտում էր սենյակի օդը, ասես, իրոք, քթի առջև օդում ծփար մոր պատրաստած սալմոնետների բույրը:

— Լսի՛ր, դու չես հուզվելու, չէ՞:

— Ո՛չ հուզվելու եմ, ո՛չ բան: Ինչ այս տուն եկանք, սոված եմ: Ես հիմա մի մեծ չուլետոն* կուտեի՝ պղպեղով ու տապակած կարտոֆիլով:

Նույնիսկ հեռուստացույց չունեին: Այնպես որ, մի չորս-հինգ փայտոջիլ սատկեցնելուց հետո լույսը սովորականից շուտ անջատեցին: Ու երբ Պաչոն սկսեց զզվեցնել իր սուլոցով, Խոշե Մարին, որքան հնարավոր է անաղմուկ, իր ներքնակը հանեց միջանցք: Ամբողջ գիշեր մեռածի պես քնեց. մի բան, որի պակասը շատ էր զգում: Վաղ առավոտյան գնաց դաշտ, մի փունջ վայրի ծաղիկ հավաքեց ու նախաճաշի ժամանակ կատակներով, ժպտալով նվիրեց տանտիրուհուն: Հաճելի այդ մանրուքը նրան հնարավորություն տվեց հաշտվել կնոջ հետ:

Այդ նույն օրը՝ երեկոյան կողմ, սև գույնի Ռենո մակնիշի մի ֆուրգոն եկավ նրանց հետևից: Ուղղվեցին դեպի Իբարդին: Ի՞նչ եղանակ էր: Ամպամած, բայց չոր, մի քանի բացվածքներով, որտեղից երևացին առաջին աստղերը: Երբ արդեն մթնում էր, իջան մի ծառաշատ վայր: Թավուտներից դուրս եկան երկու երիտասարդներ: Ժամանակ չկորցնելով զրույցների վրա՝ վերցրին մեր ծանրաքաշ ուսապարկերը ու իրենց մեջքին գցելով՝ քայլեցին սարնիվեր, մենք էլ՝ նրանց հետևից: Քիչ անց նրանց այնպիսի մթություն պատեց, որ երկու քայլի վրա բան չէր երևում: Չգիտեմ՝ ինչպես էին այդ mugalari-ները կողմնորոշվում. երևի ճանապարհին անգիր գիտեին: Հետո լուսինը դուրս եկավ: Հիմա կարողանում էին տարբերակել ձև, եզրագիծ, ուրվապատկեր, մարդ:

Չորսով մոտ մեկ ժամ լուռ քայլեցին, մինչև հասան լեռնանցքի գլուխը: Այնտեղից երևում էին Լառո՛ւն սարի ուրվագիծն ու Վենտաս դե Իբարդինի լուսավոր կետերը: Այստեղ խումբը կանգ առավ, ու mugalari-ներից մեկը որոշ ժամանակ ականջ դնելուց հետո այծի պես մկկաց: Մոտակայքից լըսվեց նույնպիսի մի պատասխան: Դա mugalari-ների հերթափոխի ազդանշանն էր: Այդ ձևով Խոշե Մարին ու Պաչոն հասկացան, որ հատել են սահմանը: Ու անմիջապես սկսեցին վայրէջքը դեպի Վերա դե Բիդասոա:

* Չուլետոն, ծեծած, տապակած մսի կտոր:

Հասան գերեզմանոցի մատուռի հետնապատին: Նրանց ասացին, որ տեղից չշարժվեն: Համարյա կես ժամ մնացին այնտեղ իրենց ուսապարկերով, մինչև որ նշան արեցին, որ իջնեն մայրուղի: Գետից բարձրացող մշուշը քողարկում էր տները: Ու ճիշտը որ ասեմ, մրսում էինք: Արդեն լուսանում էր, երբ մեքենա նստեցին: Դեպի Իրուն ճանապարհին բազմիցս կանգ առան՝ սպասելու, որ մեկը, որ նրանց առջևից մոտոյով էր գնում, վերադառնար ու հաստատեր, որ ճանապարհը picoleto-ներից ազատ էր: Ճանապարհորդությունն ավարտվեց լուսաբացին Սան Սեբաստիանի Սարաուս պողոտայի վրա: Քաղաքային ավտոբուսի կանգառում հանդիպեցին Չոպոյին, որին մինչև այդ չէին ճանաչում:

«Օրիա» դիվերսիոն խումբը

Խոշե Մարին, բանտախցում մահճակալին մեկնված, վերհիշում էր: Ի՞նչը: Դե՛, այն տարին, երբ նա քսանմեկ տարեկան էր դարձել ու երեքից ամենաերիտասարդն էր: Այդքան էլ մեծ չէր նրանց տարիքային տարբերությունը: Չոպոն՝ քսանչորս տարեկան, ամենաավագն էր:

— Ինչո՞ւ են քեզ Չոպո ասում:

— Մանկությունից մնացած բան է:

Փոքր տարիքում ֆուտբոլ էր խաղում իր տան մոտի խոտածածկ տարածքում: Մետաղական կեռիկներով մի կախիչ երբեմն որպես դարպաս էր ծառայում: Իրական խաղ կազմակերպելու համար թե՛ խաղացողներն էին քիչ, թե՛ տարածքն էր փոքր: Այնպես որ, երեքը՝ երեքի կամ չորսը չորսի դեմ էին խաղում, իսկ նա միակ դարպասապահն էր: Չոպոն սիրով «հերարձակում էր» թե՛ մի թիմի և թե՛ մյուսի խաղը:

— Այսի՞նքն, բացատրի՛ր:

Յուրաքանչյուր խաղացողի որևէ հայտնի ֆուտբոլիստի անուն էր տալիս ու դարպասին կանգնած՝ բարձրաձայն մեկնաբանում էր խաղի դըրվագները՝ ռադիոմեկնաբանի նման: Ու քանի որ Իրիբարի* պատվին հաճախ ինքն իրեն «Չոպո»** էր անվանում, մականունը կպել-մնացել էր:

Պաչոն, որ նույնպես ֆուտբոլասեր էր, «Ռեալ Սոսիեդադ»-ի*** երկրպագու էր:

— Չասես, որ «Ատլետիկ»-ի երկրպագու ես:

— Այո՛, և մեծ պատիվ եմ համարում:

— Դե՛, համա՛ լավ սկսեցինք: Լսի՛ր, բա ինչո՞ւ «Բիսկայա» դիվերսիոն խումբը չես գրվել:

---

* Խոսե Անխել Իրիբար Կորտախարենական՝ «Չոպո» (ծնվ. 1943) , «Ատլետիկ Բիլբաո»-ի լեգենդար դարպասապահ, թիմի ավագ:

** Չոպո (բասկ.), բարդի:

*** «Ռեալ Սոսիեդադ», Սան Սեբաստիանի ֆուտբոլային թիմը:

— Որովհետև ոչ ոք ինձ չէր զգուշացրել, որ ստիպված եմ լինելու քեզ պես մեկի հետ գոյակցել:

Խոշե Մարին հաշտեցնելու համար միջամտում էր:

— Լա՛վ, հոպարնե՛ր, հերի՛ք եղավ: Ուրիշ սպորտաձևեր էլ կան:

— Հա՞, և որո՞նք են:

— Հանդբոլը:

Մի քիչ հոգու հետ խաղալու համար նրան ձեռ էին առնում.

— Դե՛, լա՛վ, դու էլ, դա սպորտաձև չէ:

— Բա՛, ի՞նչ է, ուրեմն:

— Ո՞նց կարող ես հանդբոլը ֆուտբոլի կողքը դնել. ոնց որ սեղանի թենիսը մեծ թենիսի հետ համեմատես:

— Կամ էլ ձեռնաշարժությունը՝ սեքսի հետ:

Ու սրիկաները ծիծաղում էին՝ հա՛-հա՛-հա՛, հի՛-հի՛-հի՛, մինչ նա շարունակում էր նրանց անթարթ նայել:

Չոպոն զբաղվում էր կազմակերպական գործերով: Պաչոն Չոպոյի մեջքի հետևում (նրան չբարկացնելու համար) նրան անվանում էր հանձնակատար մեր տղան կամ ուղղակի՝ ցրիչը: Իր ունեցած ոչ քիչ գիտելիքները՝ պայքարի, ֆիդայության, զենքի մասին, ինքնուրույն էր ձեռք բերել՝ չանցնելով հավաքագրման ֆրանսիական խողովակներով: Փորձառու էր, խելք ու կազմակերպական ջիղ ուներ: Նախքան Խոշե Մարիին ու Պաչոյին միանալը, երբեք ekintza-ի չէր մասնակցել, բայց Դոնոստիայի որոշ արբանյակային դիվերսիոն խմբերի քողի տակ կազմակերպական հարցեր էր լուծել. մի բան, որ հրաշալի էր ստացվում:

— Մի օր ETA-ի ղեկավարը կդառնամ:

Ես նրան սարդի պես եմ պատկերացնում՝ մշտապես անշարժ, թաքնված, որսին սպասելիս: Չոպոյին ցույցերը չէին հետաքրքրում, ոստիկանության հետ ընդհարումները՝ առավել ևս: Իր իսկ բառերով՝ նրա ռազմավարությունը սա էր. պահպանել հանգստություն, սովորել ու քիչ ուշադրություն գրավել: Պաչոն նրան չէր հասկանում.

— Քո տարիքում մարդ ո՞նց կարող է այդքան ծեր լինել:

— Մի քիչ ուղեղդ ածի՝ կհասկանաս:

Չոպոն ոստիկանությունում հաշվառված չէր: Նրան երբեք բերման չէին ենթարկել: Նվիրված էր պայքարին և գաղափարախոսական հիմք ուներ, որից զուրկ էին գործողությունների կողմնակիցներ Պաչոն ու Խոշե Մա-

րին: Նաև նրանցից ավելի կրթված էր: Դեուստոյի համալսարանի Կամպուս Մունդայսում մեկ տարի աշխարհագրություն ու պատմություն էր սովորել: Տարվա ավարտական քննություններին չէր ներկայացել: Որոշ ժամանակ անց նորից էր դասերի համար ցուցակագրվել: Ունևոր ընտանիքից էր:

Խոշե Մարիի վրա ի սկզբանե լավ տպավորություն էր թողել: Պատճա՞ռը: Չոպոն բոլոր պրակտիկ հարցերը լուծող էր: Դժվարը հեշտացնում էր, խընդիրները լուծում էր, խոհեմ էր և շրջահայաց: Բացի այդ՝ ճաշ եփել էլ գիտեր:

Սարաուս պողոտայի վրա գտնվող բնակարանը (երրորդ հարկ, վերելակ) նա էր վարձել մեկ ամիս առաջ: Կանխիկ վճարը երբեք չէր ուշացնում՝ տանտիրուհու հետ բանավոր համաձայնությունից բացի ոչ մի պայմանագիր չունենալով: Ավտոտնա՞կ: Այո՛, կար, բայց քանի որ ընդհանուր օգտագործման էր ու ավելացնում էր վարձը, հրաժարվել էր դրանից: Մինչև իր գործընկերների գալն արդեն ապրում էր այդ տանը: Շքամուտքում հանդիպողները երևի կարծում էին՝ ուսանող է: Այդ նպատակով ամեն օր ելումուտ անելիս ձեռքին թղթապանակ ու մեկ-երկու գիրք էր պահում:

Բնակարանի առավելություններից մեկն այն էր, որ կողքը ավտոբուսների կանգառներ կային, և կարելի էր թե՛ նահանգի տարբեր ծայրեր գնալ և թե՛ քաղաքի կենտրոն հասնել: Չոպոն ասում էր.

— Ավելի ճիշտ է ապրել այնտեղ, որտեղ գործողություններ չես ծավալում: Հարվածում ես և հետո գալիս ես և շարունակում սովորական կյանքով ապրել: Ու այստեղ՝ Դոնոստիայում՝ այս տիպի թաղամասում, ավելի հեշտ է թաքնվելը: Թե չէ երեք անծանոթ հոպարներ մի ավանում, որտեղ բոլորն իրար ճանաչում են և որտեղ լավագույն դեպքում մի չորս բար կա, աչք են ծակում:

— Գրո՛ղը տանի, Չոպո՛, հեսա խելքդ ականջներիցդ կթափվի:

Մեր ժամանելուց օրեր առաջ այդ հոպարը տարածքն արդեն ուսումնասիրել էր: Մրջյունի պես աշխատասեր էր, սարդի պես (որն առաջին հերթին դարան է լարում)՝ հաշվարկող: Գնում-գալիս էր, հարմար տեղեր էր փնտրում: Իգարայի մայրուղով ոտքով գնալիս հրաշալի տեղ էր հայտնաբերել, որտեղ կարելի էր թաքստոց փորել: Հեռու չէր: Տասնհինգ րոպե՝ ոտքով: Մի կիրակի երեքով այնտեղ գնացին՝ մեկը մյուսից հարյուր քայլ հեռավորություն պահելով: Հասնելով փլված կտուրով մի գյուղական տան՝ շեղվեցին մայրուղուց և զառիվերով բարձրացան դեպի Անխել դե լա Գուարդա մատուռ: Շուտով մի սոճուտ մտան: Քայլում էին մորենիների ու

եղինջի մեջ կորած մի զարտուղով. դա նշանակում էր, որ երկար ժամանակ է արդեն, ինչ այդտեղով ոչ ոք չէր անցել: Պաչոն ու Խոշե Մարին հավանեցին ընտրված տեղը:

Առանց թաքստոցների գործ չի կարելի անել: Այս հարցում երեքս էլ համամիտ էինք: Մի քանի օր առաջ տնօրինությանը առաջին հաշվետվությունն էին ուղարկել: Նշում էին իրենց բնակարանի մանրամասները, նկարագրում էին տարածքը, մեքենա ու նյութեր էին խնդրում: Պատրաստ էին: Պաչոն համաձայն էր զենքն ու պայթուցիկները տանը պահելուն: Չոպոն կտրականապես դեմ էր: Պատճառները բացատրեց: Ու Խոշե Մարին, որի կարծիքը՝ որպես դիվերսիոն խմբի պատասխանատուի, վճռորոշ էր, Չոպոյի կողմը բռնեց՝ բացառություն անելով միայն ինքնապաշտպանության ու անմիջական օգտագործման զենքի համար:

— Եթե նյութը թաքցնենք, ապա հետագայում կարող է մյուս գործընկերներին ծառայել, եթե մենք txakurra-ների ձեռքն ընկնենք: Պետք է հիմիկվանից թաքստոցներ սարքենք:

Առաջին քայլը. գնել պլաստմասսե տակառներ: Հեշտ էր: Բայց ինչպե՞ս տեղափոխել դրանք՝ առանց կասկած առաջացնելու: Մեքենա էր պետք: Պաչոն, թե.

— Եկե՛ք մեքենա գողանանք:

Չոպոն նյարդայնանում էր.

— Շատ ես կինոներ նայել:

Ասաց, որ ինքը կզբաղվի: Ի՞նչ արեց: Գաղափար չունեին: Երկու կապույտ պլաստմասսե տակառ ճարեց՝ նոփ-նոր, պտուտակ-պնդօղակ կափարիչով, յուրաքանչյուրը 220 լիտր տարողությամբ: Նրան մի ֆուրգոն էին տրամադրել: Ո՞վ: Գաղափար չունեին: Հրաժարվում էր պատասխանել: Երբ շատ պնդեցինք, ասաց, որ իր հորեղբոր տղան է տվել, որը սանտեխնիկ է, բայց դե՛, արի՛ ու իմացի՛ր: Այդ երկու տակառը թաքցրեց այն փլված գյուղական տան մեջ՝ Իգարայի ճանապարհին: Տակառների մեջ նաև նոր բահերն էր դրել՝ փոսերը փորելու համար: Այդ մարդու աչքից ոչ մի մանրուք չէր վրիպում:

— Գրո՜ղը տանի, Չոպո՛, չգիտեմ՝ ինչի համար ենք քեզ ուղեկցում, մենք իրականում ավելորդ ենք:

— Գործը կամ լավ պիտի արվի, կամ չպիտի արվի:

Չոպոն վերջն էր: Չոպոն անգին էր: ETA-ն ղեկավարներ է ունեցել, որ նրա կեսը չարժեին:

Երեքով առավոտ կանուխ գնացին սոճուտ: Անշտապ, թռչունների ճըռ-վողյունն ունկնդրելով, թաղեցին տակառները, մեկը՝ այստեղ, մյուսը՝ մի քիչ ավելի վերև: Հետո հողը ծածկեցին սոճու չոր ասեղներով: Վերջում չէր էլ զգացվում, որ այդտեղ հող է փորվել:

Բանտախցի մահճակալին մեկնված Խոշե Մարին վերհիշում էր:

81

Միայն տխուր բժիշկն էր եկել հրաժեշտ տալու

Հոկտեմբերի 9-ի առավոտյան Ներեան նստեց Փարիզ մեկնող գնացք: Այնտեղ երեկոյան պետք է փոխեր կայարանը ու նախքան ճամփորդությունը ննջավագոնում շարունակելը՝ Gare du Nord-ի շրջակայքում զբոսնելու մի քանի ժամ կունենար, եթե, իհարկե, կարողանար ուղեբեռն ապահով տեղում թողնել:

Մոտավորապես առավոտվա նույն ժամին Բիչո՛րին, որը չցանկացավ ուղեկցել աղջկան կայարան՝ ե՞ս, շատ պետքս է, բարձրացավ գերեզմանոց: Առաջին ու վերջին անգամ Էգիայի ամբողջ բլուրը ոտքով հաղթահարեց: Մաքուր օդի ու ֆիզիկական վարժության կարիք ուներ՝ թեթևանալու համար ստամոքսն այրող զայրույթից: Մինչև վերջին պահը սպասում էր, որ Ներեան կմտնի իր սենյակն ու կասի՝ ama, դու իրավացի ես, մնում եմ: Իսկապե՞ս, մնո՞ւմ ես: Այո՛, դա պարզապես խենթություն էր, չգիտեմ՝ հետս ինչ էր պատահել: Չմտավ: Ուստի և մայրը, որն արդեն մեկ ժամ էր, ինչ արթուն էր՝ ականջ դնելով Ներեայի նախապատրաստական անցուդարձին, նրան հրաժեշտ չտվեց:

Շտապելու և զայրույթի պատճառով պոլիէթիլենի քառակուսին տանն էր թողել: Կարևոր չէ: Սալաքարը արևոտ առավոտով չոր էր, իսկ փոշին՝ ոչինչ, հետո փեշս թափ կտամ, կմաքրեմ:

— Գնաց: Այո՛, Չատո՛: Քո սիրելի աղջիկը, քո աչքի լույսը. հիշում ես, չէ՞: Դե՛, մեզ լքեց, հավանաբար՝ ընդմիշտ: Գերմանիայում ինչ-որ սիրային կապ ունի: Չկարծես, որ շատ բան է պատմել: Շավիերն ինձ պատմեց: Հակառակ դեպքում չէի էլ իմանա: Ճամփորդելու մասին ինձ ասել էր, բայց ես կարծեցի, մտածեցի… դե՛, հասկացար: Դա չի վերադառնալու: Դրան մենք պետք չենք: Ինձ ասաց իր սիրածի անունը, բայց քո կարծիքով ես կարո՞ղ էի այդքան տարօրինակ մի բառ մտապահել: Այդքան փող ծախսվեց նրա ուսման վրա: Իսկ հիմա իր ապագան ջուրն է գցում. լեզու չիմանալով՝ էնտեղ ի՞նչ է անելու: Գերմանացու շապիկնե՞րն է արդուկելու: Նույնիսկ լուսանկարով նրան չեմ տեսել: Դու էլ, էստեղ վեր ընկած, չես կարող այդ կորածին շշպռել: Իր եսասիրությունից խեղդվել է: Կարող էր իրավաբան

լինել, չէ՞: Սեփական գրասենյակ ունենալ, հարմարավետ կյանքով ապրել ու իր հանգուցյալ հոր հպարտությունը լինել: Բայց ո՛չ: Կտեսնես՝ թողածդ փողը շուտով քամուն կտա:

Ներեայի համար անսպասելի կերպով Շավիերն էր եկել կայարան:

— Քանի որ չգիտեմ՝ քեզ երբ նորից կտեսնենք, ուզում էի գնալուցդ առաջ քեզ գրկել:

— Աշխատանքի չէի՞ր:

— Գործընկերս ինձ փոխարինելու է:

Պատշաճ բառեր փոխանակեցին, գովեցին արևոտ առավոտը, մի խոսքով՝ ձևեր թափեցին: Բայց մեկ էլ Ներեան ասաց, որ կնախընտրեր, որ եղբայրը ama-ին պատմած չլիներ իր ճամփորդության նպատակի մասին, որ, մեկ է, Գերմանիայից հեռախոսազանգով կամ երկար նամակով կբացատրեր: Վաղ թե ուշ ama-ն իմանալու էր: Ինչպես կարծագանքե՞ր: Դե՛, հաստատ նույնը կլիներ, բայց մայր ու աղջիկ գոնե նախորդ գիշերվա անդուր վիճաբանությունը չէին ունենա:

Շավիերը չհամաձայնելով, մի տեսակ դասախոսական տոնով ու շարժումներով ասաց.

— Դե՛, տե՛ս, այդ դեպքում ինձնից էլ պետք է թաքցրած լինեիր ծրագիրդ: Ama-ից գաղտնիք պահել չեմ ուզում՝ անկախ նրանից, թե խնդիրն ինչն է: Հարցը դա չէ՝ նա կիմանար, թե չէ: Պարզապես իր հետ, բացի մաքուր ու անկեղծ պահվածքից, ուրիշ շփման ձև չեմ պատկերացնում:

— Դե՛, քո միջամտության պատճառով ծանր սրտով եմ գնում: Չկարծես, որ ոգևորված եմ այս ճամփորդությամբ, բայց հուսով եմ՝ որքան ավելի մոտենամ նպատակիս, այնքան ամեն ինչ ավելի լավ կլինի: Երեկվա վիճաբանությունը բավական հոգեմաշ էր: Դե՛, տեսնում ես, որ ինձ հրաժեշտ տալու չի եկել: Տանն էլ ինձ մնաս բարով չասաց: Գուցե եթե բերանդ փակեիր ու թողնեիր, որ ես ամեն ինչ իմ ձևով անեի, մենք այս վիճակին չհասնեինք:

— Այսինքն՝ տակտիկական սխալ է եղել: Դա՞ նկատի ունես:

— Նկատի ունեմ, որ կարիք չկա, որ խնամակալս լինես: Արդեն բավականաչափ մեծ եմ: Հեգնելուց հեռու եմ՝ իմանաս: Գիտեմ՝ ուր և ինչի համար եմ գնում: Մեր շուրջը նայի՛ր: Ինձ հրաժեշտ տալու եկած ընկերուհիներիցս մեկին տեսնո՞ւմ ես: Ո՛չ ընկեր ունեմ, ո՛չ էլ ընկերուհի այս երկրում: Ի՞նչ պիտի անեմ այստեղ: Մենակ փտե՞մ: Ama-ի հե՞տ ապրեմ, որ ամեն կիրակի երեքով փուռը դրած հավ ուտենք ու որպես աղանդեր մի քանի

կաթ արցո՞ւնք թափենք:

— Ասածդ անարդար է ու հեգնական, թեև ասում ես, որ ոչ:

— Ուզում ես, որ չգնամ, չէ՞:

— Բոլորովին: Եկել եմ՝ քեզ ամենալավը ցանկանալու:

— Շնորհակալությո՛ւն: Բայց մի բան ասե՞մ, եղբա՛յրս: Եթե մի քիչ ուրախություն ցուցաբերեիր, տրամադրությունս կբարձրանար:

— Ուրախությունը քեզ եմ թողնում:

— Ասածդ հեգնանք չէ՞ր:

— Այստեղ մենք ավելի ուրախ լինել չենք կարող: Հաստատ լավ ես անում, որ գնում ես: Մեկ է, թիկունքում ի՞նչ ես թողնում: Կոտրված ընտանիք, սպանված հայր:

— Այստեղ մնում եք դուք՝ դու ու ama-ն: Aita-ն՝ ոչ: Նրան այստեղ եմ պահում՝ ներսում:

Ու ձեռքը արագ, կրքոտ տարավ սրտին:

— Լավ ասացիր, քո՛յրս: Չեմ պնդի մեր ցավի մասին: Միայն խնդրում եմ, որ ժամանակ առ ժամանակ զանգես ama-ին: Նրան մի երկու հաճելի բան ասա՛, մեկ-երկու նամակ ուղարկի՛ր, լա՛վ: Գուցե այնտեղի մթերքով մի փաթեթ: Որ զգա՝ իրեն սիրող կա, հասկանո՞ւմ ես: Քեզ համար դժվար չի լինի:

Շարունակեցին խոսակցությունը մինչև գնացքի ժամանելը: Ե՞րբ ես հասնելու: Քեզ դիմավորելո՞ւ են: Մեզ հասցեդ կուղարկե՞ս: Նման բաներ, ու վերջում էլ՝ բարի կամքի դրսևորում. եթե քեզ որևէ փաստաթուղթ պետք գա, անվարան ասա՛:

— Մեկ էլ կհիշեցնես՝ անունն ի՞նչ էր:

— Կլաուս-Դիտեր:

Շավիերը գլխով արեց ու ինքն իր համար անունը կրկնեց: Յուրովի հավանությո՞ւն էր տալիս: Ու նորից խնդրեց, որ ama-ին չմոռանա: Որովհետև ama-ն ու բացի այդ՝ ama-ն ու էլի ama-ն:

Վագոնի դռների մոտ ջերմ համբուրեց քրոջ այտերը: Օգնեց՝ ծանր ճամպրուկը բարձրացնի: Այնուհետև կտրուկ շրջվեց ու գնաց դեպի ելքը, երբ դեռ գնացքը չէր շարժվել: Ներեան կռահեց. չի ուզում, որ տեսնեմ իր հուզմունքը:

Իր եղբայրը՝ բժիշկ Տխուրը՝ բարձրահասակ մի տղամարդ՝ օր օրի ավելի ու ավելի նիհարող, քունքերը ալեհեր (երբվանի՞ց), քայլում էր՝ հայացքը գետնին հառած: Ինչի՞ համար, որ ծանոթի հանդիպելիս բարևելու կարիք

չունենա՞: Որքա՜ն միայնություն կա այդ հեռացող մեջքերում: Կշրջվի՞՝ քրոջը ձեռքով հրաժեշտ տալու համար: Չշրջվե՛ց:

Ու Ներեան շարունակեց մտազբաղ նրան ուսումնասիրել գնացքի պատուհանիկից: Առանց արցունքների եմ գնալու: Այդ միտքը ինչ-որ երգի բառեր հիշեցրեց: Խե՜ղճ Շավիեր, ամբողջ կյանքում ջանք է գործադրում՝ սոցիալական լավ դիրք ունենալու համար, մորն ու հորը հաճույք պարգևելու համար: Հե՛ն է, գնում է՝ մարդկանց շրջանցելով, մի մարդ, որ երբեք ոչ մի ափսե կոտրած չկա, մեկը, որ չի կարող ինքն իր համար հագուստ գնել, իր մուգ կապույտ փուլովերով, որ գցել է ուսերին ու թևքերը կրծքին կապել, և իր վանդակավոր շապիկով, որն արդուկող մեկը չկա: Մի քանի քայլ էր մնում մինչև սպասասրահ հասնելը: Այդ ժամանակ էլ հետ չնայեց:

Մի քանի վայրկյանից դռները փակվեցին: Գնացքը շարժվեց: Փոքր արագությամբ անցնում էր Գրոս թաղամասով: Այնտեղ որոշ պատուհաններից, որոնք դեպի գծերն էին նայում, լվացք էր կախված: Ներեան երկար ժամանակ ոտքի վրա մնաց՝ ըմբոշխնելով հրաժեշտի իր այդ ահռելի զգացումը: *Պասախես* նավահանգիստը, Խայսկիբել սարը, Ռենտերիայի արվարձանները. այդ ամենը, կարծում էր՝ վերջին անգամ է տեսնում, ու հոգը չէր: Ես առանց արցունքների եմ գնալու: Վերջապես սահմանին հասնելուց քիչ առաջ նստեց: Անձնագի՛րս: Բաբախող սրտով գրպանը ստուգեց: Տեղում էր: Ո՛ւֆ, ո՞նց վախեցա:

82

He’s my boyfriend*

Քունը շատ էր տանում: Ներեան Գյոթինգենի կայարանում գնացքից իջավ հոկտեմբերի 10-ի ուշ երեկոյան: Ի՜նչ անձրև էր գալիս: Աննկարագրելի բան էր: Կտուրածածկ կառամատույցից այն կողմ մառախուղը սահում էր գետնատարած: Կաթիլներն ընկնելով գոլորշիանում էին: Կամ էլ այդպես էր թվում: Իսկ հեռվում՝ կտուրների ու ծառերի սաղարթների վերևում, ամպերի միջև շողարձակող մի բացատ էր ձևավորվում: Ամբողջ երեկո լուսավորությունը մի տեսակ տարօրինակ էր, ու կատաղի անձրևի աղմուկ էր լսվում:

Մարդի՞կ: Քիչ էին: Ու իր շիկահեր տղան էլ չկար: Գուցե կայարանի սպասասրահո՞ւմ էր՝ վատ եղանակից պատսպարված: Ո՛չ: Կամ գուցե դո՞ւրսն էր՝ հրապարակո՞ւմ: Այնտեղ էլ չէր: Հաստատ, սպասելուց ձանձրացած, գնացել էր: Ներեան ժամեր առաջ պիտի հասներ, բայց Բելգիայում բախտը չբերեց. երկաթուղայինների գործադուլի պատճառով իրենց գիշերային գնացքը մի ահռելի շրջադարձ կատարեց, ու, պարզ է, աղջիկը ժամանակին չհասավ իր հաջորդ գնացքին: Հիմա Գյոթինգենի կայարանում մենակ էր՝ ծանր ճամպրուկը ձեռքին ու ավելի քան քսանչորսժամյա ճամփորդության հոգնածությունն ուսերին: Գոհունակության հայացք նետեց իր շուրջը: Շատ շուտով այս ամենը հարազատ է դառնալու:

Անգիր հիշում էր Կլաուս-Դիտերի հասցեն: Ճամփորդության ընթացքում փորձարկում էր, թե ինչպես է արտասանելու փողոցի անունն ու շենքի թիվը: Գերմաներեն մինչև հարյուրը գիտեր հաշվել: Ավելին, ճանապարհին բառերի մի երկար ցանկ էր անգիր արել: Իր ընտրած 255 բառերը: Բառեր, որ իր կարծիքով, առավել կիրառելի էին: Մի խոսքով՝ սրա ու նրա անվանումները, մի երեսուն ածական, բազմաթիվ բայեր: Այսօր առավոտյան ու երեկոյան մի քանի անգամ նորից անցել էր իր ցանկի վրայով: Ո՞վ իմանա, գուցե մի օր գերմաներենն իմ հիմնական լեզուն դառնա: Իմը ու իմ շեկոտ երեք երեխաների՝ երկու աղջկա ու մի տղայի: Ամեն ինչ երազել-պատ-

* He’s my boyfriend (անգլ.), Նա իմ նշանածն է:

կերացրել էր ու ժպտում էր. յուրաքանչյուրի մի աչքը՝ շագանակագույն, մյուսը կապույտ կլինի: Հա՛, մեկ էլ որդիս իր մահացած պապի անունը կունենա:

Մի թղթի վրա գրել էր հասցեն. Կրոյցբերգրինգ 21: Նախքան Էդինբուրգ գնալը, Կլաուս-Դիտերը հմայիչ սխալներով լի մի նամակում նրան բացատրել էր, որ այդ փողոցը համալսարանի հետնամասում է, կայարանից ոտքով՝ տասնհինգ րոպե: Որտե՞ղ է համալսարանը: Գաղափար չուներ: Անձրևը չէր դադարում: Ներեան զգում էր, որ ունակ չէ Կրոյցբերգրինգ բառը հասկանալի ձևով արտաբերել: Ու նույնիսկ եթե քիչ թե շատ ճիշտ արտաբերեր, ինչպե՞ս էր հասկանալու մարդկանց բացատրությունը: Այնպես որ, որևէ տեղացուց օգնություն խնդրելու փոխարեն տաքսի նստեց ու վարորդին ցույց տվեց թղթի կտորը:

Տաքսու մեջ քիչ էր մնում՝ քներ: Ցանկանալով իր նոր աշխարհի տպավորությունները միավորել՝ մեքենայի պատուհանից քաղաքի մանրամասներն էր ուսումնասիրում, թեև այնքան հոգնած էր, որ ասես ամեն բան ցելոֆանի հետևից տեսներ: Նորմալ էր. ամբողջ գիշեր, աչք չկպցնելով, դիմացել էր գնացքի «տըդը՛մ-տըդը՛մ» ձայնին: Ամբողջ գիշեր շարժում, շոգ՝ հինգ անցանկալի ուղեկիցների տարօրինակ-քրտնած-ոտաբոբիկ մարմինների (յուրաքանչյուրը՝ իր քնելատեղում) ընկերակցությամբ, Ներեան, էլի լավ է, պառկած էր վերևը, իսկ ներքնազգեստով մի ծերուկ հենց նրա տակը կես ժամ անց արդեն խռմփացնում էր կոտրված զանգուլակի նման:

Տաքսու ճանապարհը հինգ րոպե էլ չտևեց: Ներեան չէր պատկերացնում՝ գերմանական փողով ինչը ինչքան է: Գումարը չհաշվելու համար հարյուրանոցով վճարեց ու կարծում է, բայց վստահ չէ, որ շատ մեծ թեյավճար թողեց: Հակառակ դեպքում դժվար կլիներ բացատրել տաքսու վարորդի ոգևորությունը, որ նրա ճամպրուկը մինչև շքամուտքը հասցրեց՝ անընդհատ կրկնելով հաստատ բարյացակամ բառեր, որոնք աղջիկը չէր հասկանում:

Ներեան կանգ առավ ոչ շատ մաքուր փոստարկղերի շարանի առջև: Գտավ Կլաուս-Դիտեր Կիրստեն, որ ֆլոմաստերով գրված էր մի կտոր թղթի վրա մյուս երկու անունների կողքին: Եվ պատկերացրեց գերմանացի փոստատարի ձեռքը մետաղական փոստարկղի մեջ նամակները մտցնելիս, այդ քնքշությամբ, տրտմությամբ ու միայնությամբ լի նամակները, որ գրվում էին Սարագոսայի կիզիչ ամռանը: Պայուսակից օծանելիքի

սրվակը հանեց, վրան ցողեց ու երկու ձեռքով բռնելով ճամպրուկը՝ բարձրացավ ճռճռացող աստիճաններով առաջին հարկ, երկրորդ, երրորդ: Աստիճանահարթակին՝ դռան մոտ, մի կահույք էր պատին հենած՝ հետնամաս չունեցող պահարանի պես մի բան, որի հինգ դարակներն էլ լիքն էին կոշիկներով: Նախքան դռան զանգը տալը՝ Ներեան արագ կարգի բերեց մազերը՝ գրկախառնությանն ու շուրթեր համբուրելուն պատրաստ:

Քիչ անց բնակարանի ներսում քայլեր լսվեցին, որոնք, փայտե հատակին քստքստացնելով, մոտենում էին դռանը: Դուռը բացվեց: Կարճ մազերով շիկահեր մի աղջիկ նրան նայեց թեև ոչ թշնամական, բայց և ոչ բարյացակամ հայացքով՝ սկզբից Ներեայի աչքերին, հետո՝ ճամպրուկին ու նորից, այս անգամ արդեն ունքամեջը կնճռոտած, կրկին՝ աչքերին: Աղջիկը՝ լիքոտ, բարակ շուրթերով, նրա հետ խոսելու ոչ մի ճիգ չէր անում, ոչ էլ հրավիրեց, որ ներս անցնի: Իր լավագույն ժպիտով Ներեան հարցրեց.

— Կլաուս-Դիտե՞ր:

Աղջիկը բարձրաձայն կրկնեց, ուղղե՞ց անունը՝ դեմքն ուղղած բնակարանի խորքը: Չսպասելով, որ կանչվածը դուրս գար բեմ, սկսեց խոսել-նախատել նրան իր լեզվով: Այո՛-այո՛, կշտամբում էր նրան: Ներեան, բառերը չհասկանալով, ասես հասկանար ասածը: Դեմքի կատաղի արտահայտություն, բարձր ձայն. սա միջազգային է: Կլաուս-Դիտերն անմիջապես դռան մոտ հայտնվեց: Ամոթխած, կարմրած, լուրջ մի անհամ «բարև» արտաբերեց ու ձեռքը պաշտոնապես մեկնեց Ներեային՝ դուրս չգալով հարթակ՝ նրան գրկելու, ոչ էլ ներս հրավիրեց: Ոտքերին ահռելի ու մաշված հողաթափեր էին: Ու բրդե ժակետը՝ լոճված արմունկներով, նույնպես արքայադստերը գայթակղելուն միտված չէր:

Աղջիկն առաջին ու վերջին անգամ դիմեց Ներեային: Անգլերեն:

— He's my boyfriend. And who are you?*

Այդ պահին Ներեան արդեն ամբողջությամբ հասկացել էր իրավիճակը: Սկզբից դիմեց աղջկան արտահայտված շեշտով, սառնասրտորեն.

— I thought he was my boyfriend**.

---

* He's my boyfriend: And who are you? (անգլ.), Նա իմ նշանածն է: Իսկ դու ո՞վ ես:

** I thought he was my boyfriend. (անգլ.), Ես էլ կարծում էի, որ նա իմ նշանածն է:

Հետո, չսպասելով նրա պատասխանին, դիմեց տղային՝ անթարթ նայելով նրա աչքերի մեջ.

— Փողոցո՞ւմ պիտի քնեմ:

Ակնհայտ էր, որ գերմանուհուն համբերությունից հանեց այն, որ անծանոթուհին փորձեց իր զուգընկերոջ հետ խոսել իրեն անծանոթ լեզվով: Հիմա ավելի բարձր էր բղավում, մատ թափ տվեց Կլաուս-Դիտերի վրա, խփեց թևին ու ինչ-որ բան ասելով՝ անհետացավ բնակարանում: Կլաուս-Դիտերը մենակ մնաց Ներեայի հետ: Նույնիսկ այդ ժամանակ չբարեհաճեց դուրս գալ աստիճանահարթակ:

— Կներես՝ պրոբլեմի համար: Դու այստեղ կսպասես, խնդրեմ: Ես Վոլֆգանգին զանգեմ, այո՞: Նա, մեծ բնակարան, որ դու քնես:

Մինչ կամացուկ փակում էր դուռը, կրկնեց նյարդայնացած, վախվորած, դեմքը դռան բացվածքին կպցրած, սխալ-մխալ իսպաներենով, որ իր ընկեր Վոլֆգանգին է զանգահարելու: Ներեան մոտ մեկ րոպե մնաց աստիճանահարթակին: Ա՛յ քեզ պատմություն: Թո՛ւ, ես ձեր, ի՞նչ անեմ: Պատի հետևից ձայներ էին գալիս, աղջկա հեկեկոցն էր լսվում: Քեզ մնա, սիրո՛ւնս: Դրան ոտքից գլուխ քեզ եմ նվիրում:

Իջավ փողոց իր ծանր ճամպրուկով, որն անիվներ ուներ, իհարկե, բայց աստիճանների դեպքում դրանք բանի չեն ծառայում: Այս ամենը ի սկզբանե թյուրըմբռնո՞ւմ էր: Գուցե նա չէր կարողացել բացատրել, գուցե՝ ես: Բայց այդ դեպքում ինչո՞ւ, ինչպե՞ս, բա նամակնե՞րը, բա պնդումնե՞րը, որ իրեն այցելի, բա տված հասցեն ու գալու ամսաթիվը: Այդ տիպը պարզապես հիմարի մե՞կն է: Այսինքն՝ ես հիմարի՞ եմ սիրահարվել: Մի հիմարի մեղքով մորս հետ հարաբերությո՞ւնն փչացրի: Կարո՞ղ է՝ հիմարը ես եմ: Ու այս օտար երկրում հիմա ի՞նչ եմ անում մենակ ու հոգնությունից մեռած:

Դեռ անձրևում էր, թեև արդեն ոչ այդքան ուժեղ, ու երկնքի այն պայծառ բացատը ավելի էր մեծացել ու գրեթե քաղաքով մեկ տարածվել: Դեռ մութը չէր ընկել, բայց քիչ էր մնում: Անգլերեն հարցրեց՝ որտեղ էր քաղաքի կենտրոնը: Քայլեց այդ ուղղությամբ: Երբ կտրում-անցնում էր մի տարածք, որը երևի հենց համալսարանական համալիրն էր, հաստատ համոզված էր, որ այն տղան, որին տեսավ իրենից մի տասը մետրի վրա հակառակ ուղղությամբ քայլելիս, Վոլֆգանգն էր: Վստահ չէր, բայց ոչ էլ ցանկացավ ստուգել: Սրանք Սարագոսայում մի տեսակ էին, այստեղ՝ բոլորովին ուրիշ:

Աչքերը փակվում էին քնելու ցանկությունից, ծարավ էր, ոտքերը ցավում էին: Ոչ մի բանի մասին չէր մտածում: Ոչ մի բանի՞: Երդվում եմ՝ այն ժամանակ ինձ համար ամեն ինչ մեկ էր: Փոխարենը ուշադիր ուսումնասիրում էր շենքերի ճակատները՝ փնտրելով փրկարար բառը: Ո՞ր բառը: Էլ ո՞րը պիտի լիներ. հյուրանոց: Վերջապես մի փողոցում տեսավ մեկը: Թա՞նկ էր, էժա՞ն էր, մաքո՞ւր էր, կեղտո՞տ էր: Իր համար միևնույն էր: Հենց մտավ սենյակ, հանքային ջրի մի շիշ խմեց: Դա իր ընթրիքն էր: Դեռ ժամը ինը չկար, երբ պառկեց: Վայրկենապես քնեց:

Չար բախտ

Առավոտվա ժամը ութին ամոքիչ ցնցուղ ընդունելուց հետո Ներեան իջավ նախաճաշելու: Մինչ իր ափսեն էր լցնում, շնորհակալությամբ հիշեց aita-ին: Առանց քեզ չէի կարողանա այս շռայլությունը թույլ տալ ինձ: Երեկվա հիասթափությունը հետք անգամ չէր թողել նրա հոգում: Ինչ տարօրինակ է, չէ՞: Բա հուսահատված չպիտի՞ լիներ: Թեթևության այս զգացումի պատճառը ո՞րն է: Վճռեց, որ այն տղան, որով հիացել էր Սարագոսայում, երեկվա խեղճուկրակը չէր՝ այդ իր հողաթափերով ու բրդյա ժակետով: Այն մյուսի շեշտը, երբ խոսում էր կաստիլյերեն, նրան մոգական էր թվում, երեկվա ապուշինը, թեև կարծես նույնն էր, բայց հակակրանք առաջացրեց: Հիմա ի՞նչ է լինելու այդ երեք շեկլիկ երեխաների հետ: Դե՛, ոչինչ, աղջի՛կ ջան, նրանց փոխարեն ուրիշները կծնվեն: Մարդու լույս աշխարհ գալը վիճակախաղում հաղթելու պես մի բան է: Ջանի՛կս, բարի՛ գալուստ, ծնվելու հերթը քոնն է: Նրան մարմին են տալիս, արգանդում տեղ են ապահովում, ու հետո էլ նրան լույս աշխարհ է բերում մեկը, որին սովորաբար մայր են անվանում: Իր համար երկու կրուասան վերցրեց: Ուշադրությո՛ւն, Ներեա՛, երջանկությունը կարող է գիրացնել: Մեղրի ու տարբեր տեսակի ջեմերի թասիկներով սկուտեղը ախորժալի տեսք ուներ:

Լավ տրամադրություն ուներ, հանգստացած էր (տասնմեկուկես ժամ քնել էր), լողացել ու նախաճաշել էր: Իսկ հիմա՝ ի՞նչ: Բացեց վարագույրը, նայեց պատուհանից. ամպամած էր, բայց չէր անձրևում: Ցածրահարկ տներ, աղբի մեքենա, երկու բանվոր՝ անդրադարձնող անթևներով, աշխատում էին առվափոսի մեջ: Ինձ թվում է՝ սա շատ փոքրիկ քաղաք է: Կլաուս-Դիտերին իր գիրուկ ընկերուհու հետ (քո բուսակեր նշանածը քեզ խաբում է, ծովախեցգետիններ ու լանգուստին է ուտում) կամ Սարագոսայի որևէ այլ գերմանացի ուսանողներին հանդիպելու հավանականությունը նրան հետ պահեց Գյոթինգենին ծանոթանալու մտքից: Տո՛ւն վերադառնալ: Ինչպիսի՛ նվաստացում: Այս ի՛նչ շուտ վերադարձար: Այո՛, բանն այն է, որ...

Նախքան ճամփա ընկնելը թեթևացրեց ճամպրուկը: Հանեց դիսկերը, գըրքերը, «Ադոկինես դել Պիլար» կարամելը*, արագոնական մրգերով տուփը, չորս շիշ գարեջուր (որը նրանք սովորաբար խմում էին Սարագոսայի բարում) ու իր կյանքի սիրո համար նախատեսված մյուս նվերները: Նաև հաստափոր իսպաներեն-գերմաներեն բառարանը, քերականությունը, վարժությունների գիրքը՝ պատասխանները վերջին էջերին, ու մյուս ունեցվածքը, որն իրականում իմաստ ուներ պահել միայն Գերմանիայում երկար մնալու դեպքում: Հյուրանոցի մաքրուհիները կուրախանան, երբ հայտնաբերեն, որ այս սենյակում Սանտա Կլաուսի զարմուհին է գիշերել: Իսկ շիկահեր մազերի փունջը՝ մինչև երեկ դեռ պաշտելի սիրային տառապանքի մասունքը, որն այսօր արդեն նրան գարշելի էր թվում (Ներե՛ա, այդքան վատը մի՛ եղիր), նետեց զուգարանակոնքը:

Հյուրանոցի ընդունասրահի աղջիկը նրան Գյոթինգենի քարտեզը տվեց, որի օգնությամբ առանց դժվարության հասավ մոտակա կայարան: Նպատակ ուներ նստել առաջին իսկ գնացքը, որևէ հետաքրքիր քաղաք հասնել, նոր վայրեր տեսնել, մի խոսքով՝ պտտվել Եվրոպայով՝ նախքան տուն վերադառնալն ու իրավաբանության դոկտոր դառնալը, աշխատանք փնտրելը, հողհանալը… դե՛, կտեսնենք:

Ցերեկվա ժամը մեկին Ֆրանկֆուրտում էր: Տեղավորվեց կենտրոնի հյուրանոցում (մի քիչ ավելի էժան էր, քան նախորդը), մի իտալական ռեստորանում կերավ penne all'arrabiata, որը շատ համեղ էր, գնումներ արեց, աննպատակ քայլեց փողոցներով: Երկհարկանի մի գրախանութում նստեց՝ ատլաս թերթելու: Գիրքը գոգին՝ ուսումնասիրեց հնարավոր ճանապարհները: Սկզբում՝ Մյունխեն, հաստատ: Այնտեղ կորոշի՝ իջնել Ավստրիա, թե Շվեյցարիա, թե պոկվել Ֆրիբուրգ կամ Շվարցվալդ: Եթե Շվեյցարիա հասնեմ, ցանկության դեպքում կարող եմ շարունակել մինչև Իտալիա:

Ավելի ուշ հյուրանոցի սենյակից զանգահարեց մորը: Նրան կպատմեր, որ սիրահարվածից դարձել է զբոսաշրջիկ, բայց Բիչո՛րին հաղորդակցվելու ցանկություն չէր ցուցաբերում, այնքան չոր ու անհամ էր խոսում, որ Ներեան չուզեց մորը տեղյակ պահել իր արկածների մասին և եղանակի ու ուտելիքի մասին մի քանի դատարկ բան ասելուց հետո հրաժեշտ տվեց:

* Ադոկինես դել Պիլար, Սարագոսայում պատրաստվող կարամել է, որը մեծ չափերի է լինում, և որի կտորը երբեմն կարող է 0,5 կգ լինել: Կոնֆետի թղթի վրա պատկերված է Պիլարի տիրամայրը:

Նույնիսկ չասաց, թե որտեղից էր զանգահարում: Մայրն էլ չհարցրեց: Բացի այդ՝ չհետաքրքրվեց, թե ինչպես է աղջիկը, ոչ էլ՝ ինչպես է անցել ճամփորդությունը: Ոչ մի բան չհարցրեց:

Բացվեց հոկտեմբերի 12-ի առավոտը: Հաճելի եղանակը տրամադրում էր ֆրանկֆուրտով զբոսնելուն: Այդ գաղափարով, լուսանկարչական խցիկն ու քաղաքի քարտեզը ձեռքին, Ներեան առավոտվա տասի կողմերը դուրս եկավ հյուրանոցից: Հաջորդ օրը նոր տեղում էր լինելու, այնպես որ իր ճանապարհի յուրաքանչյուր քաղաքում մեկ լիարժեք օր ու երկու գիշեր կանցկացներ, եթե, իհարկե, այնքան չհավաներ տեղը, որ որոշեր ավելի երկար մնալ: Ի վերջո, նա իր ուզածով էր առաջնորդվում. ինչպես ուզել եմ ամբողջ կյանքում անել: Մեծ ծախսերը համարում եմ նվեր՝ համալսարանն ավարտելու կապակցությամբ: Մայրս այդքան բարյացակամ չգտնվեց՝ ճիգերս հարկ եղածին պես գնահատելու հարցում, ուստի ինքս ինձ նվիրում եմ այս ճամփորդությունը, հետոյի վրա էլ՝ թքած:

Հանդարտ տրամադրությամբ, լուսանկարելով փնտրում էր գետը ու պատահաբար հայտնվեց այն տան մոտ, որտեղ Գյոթեն էր ծնվել: Հյուրանոցում վերցրած գրքույկում կարդաց, որ տունը վերականգնել են պատերազմից հետո: Չմտավ: Ինչի՞ն էր պետք, եթե իրականը չէր: Բայցևայնպես, հայտնի տան մոտ կանգնած՝ մշակույթի ու պատմության հետ շփվելու անդիմադրելի ցանկություն ունեցավ: Ու օրը հավասարակշռելու համար այն բաշխեց մասերի. առավոտյան այցելել-տեսնել, կեսօրին ճաշել տիպիկ ռեստորանում, երեկոն նվիրել հանգստին և գնումներին:

Որոշումն ընդունելով՝ մի անկյունից թեքվեց ձախ, նշմարեց Սուրբ Պողոս եկեղեցու աշտարակն ու կարմրավուն պատերը ու գնաց այնտեղ: Մտավ եկեղեցի, որը նրան առանձնապես չտպավորեց, ու դուրս գալով՝ փոխանակ ուղիղ դեպի գետը գնար, շարունակեց փողոցով քայլել, որովհետև որոշել էր ամեն գնով մտնել Ժամանակակից արվեստի թանգարան: Տեսավ արվեստի գործերը կամ այն, ինչն այսօր արվեստ են անվանում, մայր տաճարի շուրջը պտտվեց՝ հնարավոր բոլոր անկյուններից լուսանկարելու համար, արևային ակնոց գնեց ու ոտքերը հոգնած՝ ուտելու ու խմելու ցանկությամբ հասավ գետը: Կտրեց-անցավ մի կամրջով, որը հանդիպակաց ափի մոտ անցնում էր մի ծառաշատ նեղ կղզու վրայով:

Այդ կամրջով Ներեան հասավ Զաքսենհաուզեն թաղամաս: Այդ տեղը խորհուրդ էին տվել հյուրանոցի ընդունարանում: Քարտեզի եզրին էլ

նշել էր մի ռեստորանի անունն ու հասցեն: Այնտեղ էլ կերավ՝ երկար փայտե սեղանի մոտ, որի շուրջ նաև ուրիշ այցելուներ էին նստած: Խորոված մատեր ու տապակած կարտոֆիլ՝ բավական կծու մի թանձրուկով, որը հետո անընդհատ հիշեցնում էր իր մասին: Ծարավը հագեցրեց տեղական սիդրով՝ ավելի քաղցր և թափանցիկ, քան այն, որը մատուցվում է իր ավանում: Մի բան դուրը չէր գալիս: Ի՞նչը: Բանն այն է, որ տղամարդկանց ուշադրությունն էր գրավում՝ երիտասարդների, որոնք, իր սեղանի շուրջը նստած, որսում էին նրա հայացքն ու ժպտում էին, գավաթ էին բարձրացնում՝ կենաց ասող-հաճելի-կատակասեր՝ նրան խոսակցության մեջ ներքաշելու բազում փորձեր անելով: Նրանց հանդեպ ուշադրություն դրսևորեց միայն այնքան, որքան պահանջում էին տարրական քաղաքավարության նորմերը: Կներեք, լա՛վ մարդիկ, բայց խնդիրն այն է, որ մինչև կյանքիս վերջ սպառել եմ գերմանացիների իմ մասնաբաժինը:

Սուրճը ուրիշ տեղ խմեց: Որտե՞ղ: Մայն գետի զբոսաշրջային նավի տախտակամածին: Աշնանային արևը հաճելիորեն դեմքն էր շոյում, ու Ներեան, զուտ հաճույքից ելնելով, չկարողացավ դիմադրել ու ձեռքերը կրծքին խաչած՝ ընդարմացավ՝ չլսելով անգլերեն և գերմաներեն բացատրությունները ու մերթ-մերթ հայացք գցելով երկու ափերի շենքերի շարաններին: Երբեմն դեմքին թեթև սյուք էր զգում: Թարմ շոյանքի պես մի բան էր, որ է՛լ ավելի էր խորացնում լավ ինքնազգացումը: Ոչ ոք, բացի այն կնոջից, որը նրան սուրճ մատուցեց նվեր-թխվածքաբլիթով, նրան չդիմեց: Ինքն իր հետ էր, մենակ՝ չմտածելով, չտառապելով, չհիշելով. ազատ էր: Կատարելության մի պահ էր: Աչքերը բացում էր ու տեսնում քաղաքի վրա տարածվող կապույտ երկինքը: Փակում էր աչքերը, ու շարժիչի՝ օրոր ասող ձայնը նորից քնեցնում էր նրան:

Իսկ հետո, երբ նորից ցամաքի վրա էր, ամեն ինչ փլուզվեց: Ոչ անմիջապես. Ներեան ժամանակ ունեցավ ցուցափեղկերը նայելու, խանութներ մտնելու, հագուստ փորձելու: Բայց հինգն անց տասնհինգ մի չար բախտ նրան ուղղորդեց հենց այդ, այլ ոչ թե մեկ ուրիշ փողոցով, ու այդ տեսարանին ականատես եղավ: Մոտավորապես հարյուր մետր հեռավորության վրա տեսավ խմբված մարդկանց, իսկ մի քիչ այն կողմ՝ գլուխների վրայով, կանգ առած տրամվայ ու երկու շտապօգնության մեքենա: Ներեան, հետաքրքրասիրությունից դրդված, գնումների տոպրակները ձեռքին, գնաց (չարաբաստիկ որոշում)՝ նայելու: Բազմաթիվ ոստիկաններ թույլ

չէին տալիս, որ անցորդները չափից ավելի մոտենան պատահարի վայրին: Ներեան կարողացավ իր համար ճանապարհ բացել մինչև մայթի եզրը: Սիրտն այնպես ուժով խփեց, որ վախեցավ՝ գիտակցությունը կորցնի: Անմիջապես հետ քաշվեց, բայց, ավա՛ղ, ուշ էր, քանի որ արդեն տեսել էր այն, ինչ չպիտի տեսներ. մահվան ֆիզիկական պատկերը՝ տրամվայի կողքին անշարժ մարմինը, որը գրեթե ամբողջությամբ, բացի ոտքերից, ծածկված էր, և որի կողքին կանգնած էին բուժակները՝ առանց որևէ բան անելու, քանի որ անելու բան չկար:

Ֆրանկֆուրտի քարտեզը, առանց որի իր հյուրանոցը չէր գտնի, դողում էր ձեռքերի մեջ: Aita′, aita′, ասում էր Ներեան: Ու որոշ անցորդներ շրջվում էին՝ նայելու օտարերկրացու տեսք ունեցող այդ աղջկան, որը, արագ քայլելով, հեկեկում էր: Հյուրանոցում՝ ընդունելության կանգնակի մոտ, խընդրելիս, որ առավոտվա ժամը հինգին արթնացնեն, չկարողացավ իրեն զսպել, ու ձայնը խզվեց: Վաղ առավոտյան տաքսին նրան օդանավակայան հասցրեց:

84

Մարդասպան բասկեր

Երեքով Սարագոսա գնալու միտքը Շավիերինն էր: Ծնողներին համոզեց՝ կանուխ ճամփա ընկնեն՝ օրը չկորցնելու համար, ու ինքն էլ մեքենան վարեց: Այդ չարաբաստիկ տարվա (բայց իրենք դեռ տեղյակ չէին դրան) հունվարի վերջին կիրակին էր: Զբոսանքի պատճառը, ավելի շուտ՝ արդարացումը. «Ռեալ Սոսիեդադ»-ը Ռոմարեդայում ժամը հինգին խաղում էր ընդդեմ «Ռեալ Սարագոսա»-ի: Շավիերը հորն ասաց՝ Արանսասուի աշխատանքի ժամերը փոխել են: Ափսո՜ս, չի կարողանա իր հետ գալ: Ասաց, որ չի ցանկանում մենակ գնալ, որ ափսոս է երկու բավական թանկ տոմս կորցնելը: Չատոն, մինչև պատասխան տալը, նայեց պատուհանին: Հպանցիկ հայացք գցեց միակ երևացող բանին՝ ամպին: Ու այնպես, ասես պատասխանը ամպերից եկավ, ասաց՝ այո՛, որ սիրով կգնար «Ռեալ»-ի խաղին, թեև դրանք անկյալ սատկում են:

Բիչո՛րին ոչ մի տեղ չնայեց, անվարան համաձայնեց ճամփորդել: Ֆուտբո՞լը: Անտարբեր էր: Տարվա վերջից Ներեային չէր տեսել: Չեռքի հետ որպես վերահսկող, հետաքրքրասեր մայր ուզում էր աչք գցել նոր բնակարանին: Նախորդը տեսել էր՝ այն, որ Տոռերոյում էր՝ համալսարանից բավական հեռու: Հավանել էր: Մաքուր էր և այլն: Բայց հիմիկվանը դեռ չէր ուսումնասիրել: Տեսնենք, տեսնենք:

Ճանապարհին հայր ու տղա որոշեցին, որ Ներեայի հետ կհանդիպեն նրա բնակարանից դուրս: Հակառակ դեպքում՝ ըստ Շավիերի.

— Հաստատ կմտածի, որ եկել ենք՝ կահույքի վրայի փոշին ստուգելու:

— Լսի՛ր, մաքրությունը ոչ ոքի դեռ չի խանգարել:

Չատոն լռում էր:

— Ama, երկու դրացուհիների հետ է ապրում: Հո ստուգողների բրիգադի պես չե՞նք ներխուժելու բնակարան:

— Ես նման բան չասացի:

— Իսկ եթե մենակ չլինի՞:

— Հինգշաբթի օրվանից գիտի, որ գալու ենք՝ իրեն տեսնելու:

— Երևի լավ չարտահայտվեցի: Գուցե մեկը ինտիմ բնույթի այցելության է եկել:

— Հոգ չէ:

Ու Բիչո՛րին ամեն դեպքում պետք է բարձրանար Ներեայի բնակարան: Ինչո՞ւ:

Որովհետև աղջկա համար պատրաստել էր մի բանկա կալմար՝ իր հյութի մեջ, պահածոյացված լոլիկ, կանաչ լոբի (կիլոն՝ ոչ ավելի, ոչ պակաս երկու հարյուր ութսուն պեսետա, չնայած ոսկուց չեն), Տոլոսայի լոբի ու լիքը ուրիշ բաներ, որոնք նա թվարկում էր՝ մեքենայի հետնամասում մենակ նստած, ցուցամատով անցնելով մյուս ձեռքի մատների վրայով:

— Հասկանում եք, չէ՞, որ չեմ պատրաստվում ծանրաբեռ ուտելիքով պտտվել Սարագոսայով:

Չատոն միջամտեց.

— Եթե ինձ ավելի շուտ ասեիր, բեռնատարով կգայինք: Քո կարծիքով մեր աղջիկը սովա՞ծ է, ի՞նչ է:

— Դու սո՛ւս մնա:

— Ինչո՞ւ պիտի սուս մնամ:

— Նախ՝ դու չես մայրը, համ էլ, որովհետև ես եմ ասում:

Բիչո՛րիի խնդրանքով կանգ առան Վալտիեռայի բենզալցակայանի մոտ: Բիչո՛րին գնաց թեթևանալու, հայր ու տղա իջան մեքենայից՝ ոտքերը մի քիչ շարժելու համար: Երկուսից մեկը թեթևակի առաջարկեց մտնել սրճարան: Բայց մյուսը ցանկանում էր քիչ ժամանակ կորցնել, այնպես որ տեղում մնացին: Չատոն, որ այն ժամանակ դեռ ծխում էր, մի գլանակ կպցրեց:

— Ուրբաթ օրը մեր փոստարկղի մեջ հավի փորոտիք էին մտցրել: Մխտռված վիճակը տեսնեիր: Գարշահոտն էլ խեղդում էր: Ama-ն ասում է՝ քեզ բան չպատմեմ, որ չանհանգստանաս:

— Եթե կարողանայի, ձեզ կպարտադրեի հենց այսօր՝ Սարագոսայից վերադառնալուն պես, հեռանալ ավանից:

— Բայց չես կարող: Փոստարկղն արդեն մաքրել ենք: Ինձ չեն կոտրի: Ավանցիներն են: Թե չէ էլ ո՞վ պիտի: Տղերքն են: Իհարկե, եթե մեկին բըռնեմ, հերն այնպես կանիծեմ, որ չի մոռանա: Ինքդ գիտես՝ փաստաբանս լավն է, դրանց հարցերը կլուծի:

Շավիերը շուրջը նայեց:

— Գուցե ընկերությունդ տեղափոխես այստեղ: Այս դաշտերը տե՛ս: Ի՜նչ խաղաղ է: Մայրուղին էլ մոտիկ է: Մի ակնթարթում Բասկերի երկրում ես: Ի՞նչ կասես:

Չատոն կրկնօրինակեց տղայի քննող հայացքը:

— Մի տեսակ չորուցամաք է շուրջբոլորը:

— Բայց այստեղ շնչառությունդ բացվում է:

— Ավանում էլ օդ կա: Բացի այդ՝ չմոռանաս՝ նաև աշխատողներ, մեխանիկներ ու վարորդներ են պետք: Այստեղ ոչ մեկի չեմ ճանաչում:

— Քեզ չեմ զզվեցնելու ամեն անգամ, երբ մենակ ենք լինում: Պարզապես ասում եմ, որ եթե քեզ կամ ama-ին մի լուրջ բան պատահի, ինձ երբեք չեմ ների:

— Լա՛վ, դու էլ, իրար մի՛ խառնվիր: Որքան ճիշտ էր մայրդ: Չգիտեմ՝ ինչի համար քեզ պատմեցի:

Ժամը տասին երևացին Սարագոսայի առաջին տները: Եղանակը մի քիչ սառն էր (ինն աստիճան՝ ըստ փողոցի ջերմաչափի), բայց չոր էր: Լոպես Ալյուե փողոցում մի արանք գտան՝ կայանելու համար: Այո՛, զուգահեռ փողոցի վրա է: Ու ի վերջո, չնայած այդքան խոսակցություններին, երեքն էլ մտան Ներեայի բնակարան: Ներեան հենց ինքը պնդեց, որ բարձրանան:

Դեռ աստիճաններին էին, երբ Բիչո՛րին կատակեց.

— Քեզ ասեմ՝ այս երկուսը եկել են ստուգելու, թե որքան մաքուր է բնակարանդ:

Ներսում Չատոն հարցրեց.

— Իսկ դրացուհիներդ ո՞ւր են:

— Այստեղ չեն: Երբեմն շաբաթավերջին գնում են ծնողների տուն:

Բոլորը միասին էին: Վերջին անգամ ե՞րբ էր, որ չորսով հավաքվել էին: Նոր տարի էր: Հաջորդ անգամ ե՞րբ կհավաքվեն: Չի լինելու հաջորդ անգամը, բայց նրանք դա դեռ չգիտեն: Չատոյին այդ մասին Բիչո՛րին կհիշեցնի հաջորդ տարի՝ գերեզմանի եզրին նստած:

— Վերջին անգամն էր, երբ միասին հավաքվեցինք, հիշո՞ւմ ես: — Պատկերացրեց, որ հանգուցյալը սալաքարի տակից համաձայն չէր: — Բա՛, իհարկե, վստահ եմ: Հաջորդ ամառ Ներեան մեզ հետ շաբաթ ու կես անցկացրեց: Ու այդ նույն ժամանակ Շավիերն արձակուրդ էր գնացել այն բուժքրոջ հետ, որը փորձում էր նրան չանթել՝ ամուսնանալու նպատակով: Հետո էլ կասես, թե ի՛մ հիշողությունն էն չէ:

Չատոն յուրահատուկ մի ժեստ ուներ: Բիչո՛րին այն մեկնաբանում էր որպես տարածքը նշելու ձև: Ճիշտ շների նման, որ անցած տեղերով իրենց մեզն են թողնում: Միայն թե Չատոն նույն բանը փողի միջոցով էր անում:

Ու թեև փորձեց թաքցնել, Բիչո՛րին, որ տեսնում է նույնիսկ այն, ինչ չի տեսնում ու եթե չի էլ տեսնում, հոտն է առնում, ամուսնուն բռնացրեց այն պահին, երբ նա երկու հինգհազարանոց էր մտցնում Ներեայի սեղանի գրքի տակ՝ կարծելով, թե իրեն ոչ ոք չի տեսնում:

— Շատ շռայլ էիր, ամուսի՛նս: Հատկապես աղջկադ հետ՝ քո սիրելիի, որ հետո ոչ քո հոգեհանգստին եկավ, ոչ էլ հուղարկավորությանը:

Ներեան նրանց ցույց տվեց բնակարանը: Այստեղ՝ սա, այստեղ՝ մյուս բանը: Հետո իր դրացուհիների սենյակները, որտեղ նրանք թեև չմտան, բայց թեթևակի նայեցին՝ պատկերացում կազմելու համար: Նրանք՝ կամավոր ստուգողները, աղջկա հետևից անցան ամբողջ բնակարանով՝ հավանության ժեստերով ու մեկնաբանություններով: Ու Չատոն, որ կարծես հուզվել էր՝ աղջկան տեսնելով իր համար անծանոթ միջավայրում, քաղաքում ու բնակարանում, երեք անգամ նույն բանն ասաց.

— Եթե բանի կարիք ունենաս, դե՛, գիտես:

Երրորդ անգամ Բիչո՛րին չդիմացավ.

— Փչացած ձայնապնակից բեթար ես:

Չորսով դուրս եկան փողոց: Ներեան, հոր թևը մտած, ուղղություն էր ցույց տալիս: Անշտապ, զրուցելով, ներդաշնակ քայլում էին Գրան Վիա-յով, հետո՝ ամբողջ Ինդեպենդենսիա զբոսուղով, որտեղ այս ժամին հա-մարյա անցորդ չկար, ու Էլ Տուբոյով, որտեղ տապակածի հոտ էր տարած-ված: Դեռ տասներկուսը չկար, բայց Չատոն արդեն հարցնում էր, թե որ-տեղ լավ ռեստորան կա: Չորսով մտան Բասիլիկա դել Պիլար եկեղեցին: Բիչո՛րին ծնկեց Աստվածածնի առջև՝ մի քիչ աղոթելու: Դեռ հավատում էր: Մյուսները դրսում էին սպասում նրան՝ քույր Բիչո՛րիին, ով ժամանակին ուզում էր միանձնուհի դառնալ: Կատակի մեղսակիցներ. հիմա, երբ նա նրանց չէր լսում, ծիծաղում էին: Հրապարակով զբոսնում էին «Ռեալ Սո-սիեդադ»-ի տարբերանշաններով մարդիկ: Ոմանք, տեսնելով Շավիերի սպիտակ-կապույտ շարֆը, բարևում էին նրան:

Չատոն հարցրեց.

— Ովքե՞ր են:

— Գաղափար չունեմ:

Կերակո՞ւրը: Լավն էր: Միակ գանգատվողը Բիչո՛րին էր վճարելու պահին.

— Մեր շեշտից հասկացան, որ դրսից ենք, ու որոշեցին մինչև վերջ քամել:

Ընտանիքի մնացած անդամները չհամաձայնեցին՝ համոզված, որ Սան

Սեբաստիանի գների համեմատ՝ լրիվ ընդունելի գին են ասել: Փողոցում Ներեան էլ հաստատեց, որ Սարագոսայում (հաշվի առնելով վարձակալության գները, սնունդը, ժամանցը) հանգիստ կարելի է լավ ապրել ավելի քիչ փողով, քան ուրիշ տեղերում:

Բիչո՛րին, երկու ոտքը մի կոշիկի մեջ, թե.

— Բայց մեկ է, մեզ խաբել են:

Իսպանիայի հրապարակում Չատոն ու Շավիերը տաքսի նստեցին, որը նրանց հասցրեց ֆուտբոլի դաշտ: Կանայք շարունակեցին դեպի Ինդեպենդենսիա զբոսուղու պաղպաղականոց, հետո քայլելով հասան տուն, որտեղ Բիչո՛րին՝ թող, ես կանեմ, զբաղվեց պատուհանները լվանալով: Քանի թաթախվել էր, շարունակեց ու մաքրեց զուգարանը ու խոհանոցի կահույքը: Ու դա էլ այն պարագայում, որ իր կարծիքով (որը մի քանի անգամ արտահայտեց)՝ բնակարանը մաքուր էր:

— Դե՛, ես չգիտեմ՝ ինչ է հանգիստ նստելը:

Այդ ընթացքում հայր ու տղա մարզադաշտի ստորին տրիբունայում զբաղեցրին իրենց կանգնովի տեղերը՝ խառնվելով դոնոստիացի երկրպագուներին: Ու դեռ խաղացողները չէին էլ դուրս եկել դաշտ, երբ կողքի սեկցիայից սկսեցին նրանց վիրավորել. ETA-ացիներ, կեղտոտ բասկեր, մարդասպան բասկեր և այլն: Նրանք պատասխանում էին՝ երգելով ու թափահարելով ikurruña-ները ու սպիտակակապույտ դրոշները, ու իրար ասում էին.

— Արհամարհենք. եկել ենք՝ թիմին ոգևորելու:

Չատոն վստահ չէր, որ ամեն ինչ լավ է վերջանալու:

— Ա՛յ սա չէի սպասում:

— Լա՛վ, լա՛վ, aita: Սրանից շատ ավելի վատ մարզադաշտեր կան: Պիտի ընտելանանք ու չլսելու տանք:

— Շատ մոտիկ են: Այդտեղից կարող են քարկոծել մեզ:

— Հանգի՛ստ: Սա ծիսակարգի մաս է: Ու քանի որ հաղթելու ենք, կմխիթարվենք՝ տեսնելով, թե ինչպես է նրանց ականջներից ծուխ դուրս գալիս:

Սարագոսան 2-1 հաշվով հաղթեց մի 11 մետրանոցի շնորհիվ, որը խփեց նրանց ռմբարկուն: Երբ դեռ մինչև խաղի վերջ տասը րոպե էր մնում, հաշիվը մեկ-մեկ էր: Հաղթանակը մեղմեց տեղացի երկրպագուների կրքերը, որոնք հիմա սահմանափակվում էին՝ միայն թևի անշնորհք ժեստ անելով սպիտակակապույտի երկրպագուներին: Մարզադաշտից դուրս եկան, երբ արդեն մութ էր, ու Շավիերը իր շարֆը դրեց վերարկուի գրպանը:

— Գիտես, ավելի լավ է՝ չգրգռենք: Պետք է զգույշ լինել:

Ահագին ժամանակ տևեց, մինչև ազատ տաքսի գտան: Վերջապես նստեցին ու հասան Լոպես Ալյուե փողոց: Հրաժեշտ տվեցին Ներեային: Համբույրներ ու գրկախառնություն՝ շքամուտքի մոտ: Չատոն էլ, համարյա արցունքն աչքին, ասաց.

— Աղջի՛կս, եթե բանի կարիք ունենաս, դե՛, գիտես:

Գնացին դեպի մեքենան: Մեքենայի երկու հայելիներն էին կոտրել ու երկու կողմից էլ (ոտքով էին հարվածե՞լ) կողային մասերում փոս էին գցել: Մյուս մեքենաները՝ առջևը և հետը կանգնած, ձեռք տված չէին: Դե՛, լա՛վ, գոնե կկարողանան տուն վերադառնալ: Շավիերը՝ ճանապարհին, թե.

— Չկարծես, որ չէի մտածել դրա մասին:

— Ինչի՞ մասին:

— Որ վտանգավոր էր Սան Սեբաստիանի համարանիշով մեքենան ամբողջ օրը փողոցում թողնելը:

Դիմապակու մաքրիչներն էլ էին կոտրել: Դա ավելի ուշ նկատեցին՝ Իմարկոայնի բենզալցակայանում, որտեղ Բիչո՛րին խնդրեց, որ կանգնեն, որովհետև շտապ պիտի զուգարան գնար:

Չատոն, գլանակ կպցնելով, ասաց Շավիերին.

— Մի՛ անհանգստացիր մեքենան սարքելու հարցով: Ես կզբաղվեմ:

— Դու ոչ մի բանով էլ չես զբաղվի:

— Ես կվճարեմ:

— Ոչ մի դեպքում:

Ու այդպես շարունակ, մինչև Բիչո՛րիի վերադառնալը:

Բնակարանը

Չատոն Սան Սեբաստիանում բնակարան գնելու հարցը թողեց Շավիերին, նա էլ իր հերթին՝ Արանսասուին նրանից հետո, երբ աղջիկն ասաց.

— Թո՛ղ ինձ վրա, maitia, ես կխոսեմ եղբորս հետ: Նա լավ գիտի:

Չատոն չէր ուզում, որ բնակարանը թանկանոց պալատ լինի:

— Երբեք շքեղ չեմ ապրել ու հիմա էլ կարիք չունեմ:

— Ama-ին հո անտառային խրճիթ չե՞ս տանի՝ ապրելու:

— Ama-ն ավանից դուրս ուր էլ ապրի՝ լավ չի զգալու:

— Համարի՛ր, որ բնակարան գնելով՝ ներդրում ես անում:

Ժամանակ պիտի անցներ, որ Չատոն ընտելանար Սան Սեբաստիանում ապրելու գաղափարին: Շավիերն իր հերթին պնդում էր, որ շտապ տեղափոխվեն: Ներեան՝ նույնպես, այն պահից, երբ իմացավ ավանի պատերին հայտնված սպառնագրերի մասին: Այս երկուսը մեջքիս հետևը համաձայնության են եկել: Չատոն զիջեց կամ էլ ձևացրեց, թե զիջում է՝ երեխաների հետ չընդհարվելու համար: Ժամանակ էր ձգում, խուսանավում էր՝ դե՛, հա՛, համաձայնել էր Սան Սեբաստիանում բնակարան գնել, բայց ասաց, որ ավանից կգնա, երբ ամեն ինչ իրոք շատ վատ լինի:

— Արդե՞ն ամեն ինչ շատ վատ է:

— Է՛լ ավելի վատի դեպքում:

Ու հավելեց, որ նավը լքում են ոչ թե փոթորկի ժամանակ, այլ երբ այն խորտակվում է: Իրենց կյանքն ամեն ձևով անտանելի՞ են դարձնելու: Լա՛վ. ուրեմն այդ դեպքում Բիչո՛րիի հետ կհաստատվեն Սան Սեբաստիանում, որտեղից նա կուսումնասիրի (հանգիստ պայմաններո՞ւմ, դե՛, կտեսնենք)՝ ինչ ձևով է տեղափոխում ընկերությունը Լա Ռիոխա կամ որևէ այլ՝ Բասկերի երկրին մոտիկ մի տեղ, որպեսզի շատ հեռու չլինի իր հիմնական հաճախորդներից:

— Իսկ մինչ այդ նոր բնակարանը քույրդ կարող է օգտագործել, որովհետև երբ ուսումն ավարտի, մի տեղ պիտի ապրի:

Արանսասուի եղբայրը Չատոյին առաջարկելու երկու տարբերակ գտավ շատ արագ: Երկուսն էլ բնակարաններ էին, որոնց գինը կարելի

էր առանց միջնորդի սակարկել հենց սեփականատերերի հետ: Արանսասուի եղբոր խոսելաձևը կիրթ էր, հաճելի արտաքին ուներ (թեև չափից ավելի էր օգտագործում մազերի գելը): Եզրափակելով խոսքը՝ ասաց.

— Հավատացե՛ք ինձ՝ երկուսն էլ գտած բան են:

Եթե Չատոն դրանք չառներ, ինքն էր առնելու: Ըստ Արանսասուի՝ եղբայրը դրանով էր ապրում՝ էժան առածը թանկ վաճառելով: Իսկ հետո այդ գումարներով երեք-չորս ամիս ճամփորդում էր արտասահմանում:

Կլոր տարին երկուշաբթիից կիրակի չաշխատելու գաղափարը տարօրինակ էր հնչում Չատոյի ականջին: Շավիերը նրան նշաններով խնդրեց, որ այդպիսի դիտարկումներ չանի: Չատոն թեման փոխեց:

— Լա՛վ, լա՛վ. նախ պիտի տեսնենք՝ ինչ վիճակում են:

Ու թեև ենթադրում էր, որ Բիչո՛րին երկու բնակարաններն էլ չի հավանելու, նրան տարավ հետը, որ կարծիքն իմանա: Գրոս թաղամասի բնակարանը՝ ընդարձակ, Սուռիոլա զբոսուղուն բացվող տեսարանով, Բիչո՛րիին սառն ու մռայլ թվաց. այնտեղ չափից ավելի էր զգացվում ծովի խոնավությունը: Բացի այդ՝ հինգերորդ հարկում էր: Խոսք լինել չէր կարող: Մյուսը՝ Ուրբիետա փողոցի վրա, նրան դուր չեկավ մաշված մանրահատակի և չափից ավելի բարձր առաստաղների պատճառով, բացի այդ՝ վերևի հարկից լսվող, ա՛յ քեզ զուգադիպություն, գայլիկոնի ձայնից նա հասկացավ, որ ծածկերը բավականաչափ հաստ չեն, փողոցի կողմից էլ շատ աղմկոտ է:

— Հենց այստեղից զգում եմ մեքենաների ծխի հոտը:

Դե՛, Չատոն ասում էր, չէ՞. այս կնոջը հասկանալ չի լինի: Տանը Բիչո՛րին պնդում էր, որ ճիշտ կլինի ավանից հեռանալը, բեռնատարները կտեղափոխեն ավելի հանգիստ մի տեղ ու չեն տեսնի շրջապատող բոլոր չար ու նախանձ մարդկանց, բայց հենց ամուսինը մի բան էր նախաձեռնում տեղափոխության նպատակով, Բիչո՛րին գետնով էր տալիս նրա բոլոր ծրագրերը:

Որոշ ժամանակ անց Արանսասուն հայտնեց, որ բնակարանի մի նոր առաջարկ կա: Մեջբերեց եղբոր ասածը: Որ խենթություն կլիներ ձեռքից բաց թողնելը. գտած տարբերակ էր: Ու էլի նման խոսքեր՝ գտած բանի մասին: Այս անգամ հայր ու տղա վճռեցին Բիչո՛րիին հեռու պահել գնման գործընթացից: Քայլելով բարձրացան Ալդապետայի զառիվերով:

— Հեսա կտեսնես՝ ama-ն ինչ է ասելու այս բարձունքին:

Ուսումնասիրեցին բնակարանը: Երրորդ հարկ, վերելակ՝ երեք գժտված ժառանգների սեփականություն, որոնք շտապում էին փողի վերածել ժառանգությունը, ուստի հիմա էժան վաճառում էին: Ու Արանսասուի եղբայրը՝ որպես Չատոյի ներկայացուցիչ, այն բավական լուրջ գնով առավ, բայց, միևնույն է, շատ ավելի քիչ գումարով, քան կարող էին պահանջել երեք սեփականատերերը, եթե ավելի ճարպիկ լինեին:

Բիչո՛րին բանալիները ստանալու պահին էլ ներկա չէր: Բայց վերջիվերջո, այլևս հնարավոր չէր նրանից թաքցնել բնակարան ձեռք բերելու հանգամանքը: Արանսասուն իր մեքենայով գնաց նրան բերելու, ու մինչ սպասում էին նրանց, Չատոն ու Շավիերը դուրս եկան պատշգամբ. գեղեցիկ երեկո էր, լավ եղանակ: Հեռվում Սանտա Կլարա կղզին էր ուրվագծվում: Երևում էին սարերը՝ Ուրգուլը, Իգուելդոյի կատարը, ու դեղին մայրամուտային երկնքի տակ՝ մի ծովաշերտ:

— Այստեղ գեղեցիկ է: Ama-ին դուր կգա:

— Երևի նրան լավ չգիտես: Նրան Գրանադայի Ալհամբրան էլ նվիրես՝ կնախընտրի իր ավանում մնալ:

Հայր ու տղա արմունկներով հենվեցին բազրիքին: Նրանց առջև վայրի շագանակի մի ծառ կար, և ընդամենը մի մետր էր մնում, որ սաղարթը հասնի երրորդ հարկին: Նայում էին մոտակա տներին, կայանած մեքենաներին, ամայի փողոցին: Հանգիստ վայր էր, ունևոր հարևանություն:

— Գործի տարբե՞ր ճանապարհներով ես գնում:

— Երբեմն: Երբ հիշում եմ:

— Ինձ խոստացել էիր:

— Դրանք եթե ուզեն բռնեցնել, կբռնեցնեն: Կարող եմ այսօր այս տեղով գնալ, վաղը՝ մյուս: Բայց վաղ թե ուշ անցնելու եմ այն տեղով, որտեղ արդեն սպասում են ինձ:

— Ինձ քո հանգստությունն է մտահոգում:

— Ուզում ես՝ նյարդայի՞ն լինեմ:

— Նյարդային չէ, զգոն:

— Նայի՛ր, Շավիե՛ր, այն սրիկաները, որ զանգում, վիրավորում ու սպառնում են ու սպառնագրեր են նկարում, չեն հետաքրքրում: Ես գիտեմ՝ ովքեր են: Ավանի լակոտ-լուկուտներն են: Ի՞նչ են ուզում: Դե՛, ուզում են խեղճ-խեղճ տանը նստեմ կամ գնամ ուրիշ տեղ ապրելու: Դրանք բոլորովին ինձ չեն վախեցնում: Ama-ի կարծիքով փորձում են մեր կյանքն

անտանելի դարձնել, որովհետև կարողացել ենք դուրս պրծնել աղքատությունից: Մեզ ճանաչել են մեր ամենադժվար ժամանակներում, երբ իրենց պես թշվառ մարդիկ էինք: Հիմա տեսնում են, որ բժիշկ զավակ ունենք, ուսում առնող աղջիկ, ինձ են տեսնում՝ իմ բեռնատարներով, ու չեն հանդուրժում դա: Ուրեմն այս կամ այն ձևով փորձում են դառնացնել կյանքս: Կարծում են՝ ինչ ունեմ, գողացել եմ: Այսինքն՝ այն, որ գիշեր-ցերեկ աշխատել եմ, իրենց համար նշանակություն չունի:

— Եթե դրանք վատ մարդիկ են, առավել ևս պիտի զգուշավոր լինես:

— Պա՛հ, թող գան: Նրանց ընթրիքի կհրավիրեմ: Ու քանի որ ինձ շատ են բարկացրել, այս տարի տոների կապակցությամբ նվեր չեմ տա: Շուտով կիմանան՝ Չատոն ով է: Ես ավելի բասկ եմ, քան դրանք բոլորը միասին: Ու դա իրենք գիտեն: Մինչև հինգ տարեկան ես մի բառ իսպաներեն չէի խոսում: Լուսահոգի հորս ոտքը գնդացրի կրակահերթով ջարդուփշուր էին արել Էլգետայի ճակատում՝ Բասկերի երկիրը պաշտպանելու ժամանակ: Նույնիսկ օր ծերության, երբ ոտքը շատ էր ցավում, ատամներն ուժեղ սեղմում էր: Ի՞նչ է, ցավո՞ւմ է՝ հարցնում էինք: Անիծվեն Ֆրանկոյի հերն ու բոզ մերը, ասում էր: Երեք տարի նրան բանտում պահեցին, ու հրաշք էր, որ չգնդակահարեցին:

— Ասածդ ի՞նչ է, aita: Քո կարծիքով՝ հորդ հետ եղածը ETA-ի պե՞տքն է:

— Գրո՛ղը տանի, բա չե՞ն ասում, որ բասկ ժողովրդին են պաշտպանում: Եթե ես բասկ ժողովուրդ չեմ, բա ո՞վ եմ:

— Aita, դե՛, լա՛վ էլի: Պիտի ընդունես, որ ETA-ն, ո՞նց ասեմ, գործող մեխանիզմ է:

— Եթե այդպես շարունակես, բան չեմ հասկանա:

— ETA-ն պետք է անընդհատ գործի: Ուրիշ տարբերակ չունի: Արդեն վաղուց կուրորեն գործելու ավտոմատիզմի մեջ է ընկել: Եթե վնաս չտա, ուրեմն չկա, գոյություն չունի, ոչ մի գործառույթ չունի: Նմանատիպ մաֆիոզ գործելակերպը իր անդամների կամքից վեր է: Նույնիսկ ղեկավարները չեն կարող դրան չենթարկվել: Այո՛, իհարկե, որոշում ընդունող են, բայց դա միայն թվացյալ է: Չեն կարող ուրիշ որոշում ընդունել, որովհետև հնարավոր չէ կանգնեցնել ահաբեկչության մեքենան, եթե այն արդեն արագություն է հավաքել: Հասկանո՞ւմ ես:

— Ասածիդ ոչ մի բառը չեմ հասկանում:

— Դե՛, ընդամենը պիտի թերթեր կարդաս:

— Չափից ավելի ես անհանգստանում:

— Սառնասրտորեն սպանեցին Յոյեսին, որը հրոսակախմբի ղեկավար էր: Յուրայիններին էլ չեն խղճում, ու դու ուզում ես, որ քեզ կարեկցեն, որովհետև հայրդ հիսուն տարի առաջ gudari-ների գումարտակո՞ւմ է կռվել:

— Տղա՛ս, ես քեզ նման ուսյալ չեմ: Քո ասածը ինձ համար փիլիսոփայության պես է: Ես չեմ հասկանում՝ այն մարդիկ, որոնք բասկերենն են պաշտպանում, ինչպե՞ս կարող են սպանել euskaldun-ներին: Ո՞նց կարելի է Բասկերի երկիր կառուցել՝ բասկերին սպանելով: Ուրիշ բան է, երբ հարձակվում են գվարդիականների վրա կամ դրսից եկած մարդկանց: Դա էլ է վատ, բայց ահաբեկչի տրամաբանությամբ գոնե ինչ-որ իմաստ ունի:

— Այդտեղ տրամաբանություն մի՛ փնտրիր: Այս ամենը զառանցանք է ու հավանաբար՝ բիզնես:

— Պետք է թույլ թողնել: Ժամանակ կանցնի, իմ մասին կմոռանան. ա՛յ կտեսնես: Ավանից ոմանք ինձ չե՞ն բարևում: Թող գնան, գլուխները պատով տան: Տե՛ս, միակ բանը, որ ինձ բարկացնում է, կիրակի օրերը հեծո չքշելն է: Բայց, դրանից զատ, հեչ պետքս էլ չէ:

Արանսասուի մեքենան դանդաղ իջավ թեքահարթակով: Առաջինը Բիչո՛րին դուրս եկավ մեքենայից: Մռայլ նայեց վեր, տեսավ պատշգամբից նայող ամուսնուն ու տղային: Չհամբերեց մինչև բնակարան մտնելը: Փողոցից, չանհանգստանալով, որ իրեն կողքի տներից կլսեն, ասաց.

— Իմացա, որ ինձ բան չեք ասել ու գնել եք:

Չատոն ցածրաձայն ասաց Շավիերին.

— Ա՛յ, իրոք վախենալուն այս կինն է: Բնավորություն ունի, էլ դու սուս:

Ուրիշ ծրագրեր ուներ

Անկողնում պառկած՝ լսում էր անձրևի ձայնը: Մոխրագույն մի շշուկ, որն ասես կանչում էր՝ Չատո՛, Չատո՛, արթնացի՛ր, վե՛ր կաց ու արի՛ թրջվելու: Սիեստան սովորականից ավելի երկարաձգեց՝ գուցե տհաճ եղանակին ավելի ուշ դուրս գալու կամ էլ դժգույն լույսի պատճառով, որ ներթափանցում էր վարագույրի արանքից ու ընդարմացնում էր մարմինն ու ծանրանում էր կոպերին, կամ էլ Բեասայնում իր ժամադրությունը չեղարկվելու պատճառով. օրվա երկրորդ կեսին շատ բան չուներ անելու գրասենյակում: Եվ ի՞նչ: Այն, որ մի ամբողջ ժամ քնեց՝ առանց երազների ու մտահոգությունների, մինչդեռ սովորաբար քսան-երեսուն րոպեն բավարար էր:

Մահճակալի եզրին նստած՝ ծխելու սուր ցանկություն ունեցավ, բայց ոչ, պետք չէ: Հաղթահարված մոլուցք էր, թեև երբեմն-երբեմն ուժեղ գայթակղություն էր ունենում: Վերջին գլանակը ծխելուց հետո 114 օր էր անցել: Հաշիվը պահում էր ու դա ամեն օր պարծենալու փոքր առիթ էր դարձնում: Իր ազգականների շրջանում թոքի ու կերակրափողի քաղցկեղի դեպքեր էին եղել: Նաև Բիչո՛րիի ընտանիքում ու ավանում: Նա չէր ցանկանում նույն ճակատագրին արժանանալ: Ուրիշ ծրագրեր ուներ:

Կոշիկները հագավ: Ի՞նչ անեմ: Անիմաստ մի հարց՝ այս մարդու պարագայում, որ եթե ամուրի լիներ, իր գրասենյակում կապրեր: Բացի այդ՝ պետք է ամեն ինչին հետևել: Չես կարող վստահել աշխատողներիդ, նրանց մենակ թողնել չես կարող: Բա որ հեռախոսով զանգե՞ն: Հանկարծ զգաց, որ պիտի շտապի: Շտապի՞: Խղճի խայթ էր զգում, որ մեկ ժամից ավելի մահճակալն է նախընտրել գործի փոխարեն: Որքան կարողացավ, հարդարեց ծածկոցը, որպեսզի Բիչո՛րին երեկոյան նրան չնախատի:

Հյուրասենյակի սեղանին մնացել էր թերթը՝ բացված խաչբառերի էջի վրա, կողքին՝ կարդալու ակնոցը: Եթե ավելի քիչ քներ, կարող էր փորձել ավարտել խաչբառը: Անտեր մնացած ֆիլիպինյան չորստառանոց մի կղզի, որ ուրիշ անգամներ էլ էին դրել, ու որի անունը երբեք չէր մտապահում: Պիրենեյան հովիտներին հատուկ մի պտուղ: Գաղափար չուներ:

Բիչո՛րին, բազմոցին թևերը խաչած-նստած, զգալով, որ ամուսինը սենյակ մտավ, դժվարությամբ բացեց աչքերը: Հարցրեց՝ ժամը քանիսն է:

— Ուր որ է չորսը կլինի:

— Չէի՞ր կարողանում սավանից պոկ գալ, թե՞ ինչ:

Խոհանոցում նրան հիասթափություն էր սպասում. սուրճ չկար, միայն սրճեփի մեջ առավոտվա սուրճի սառը մնացորդն էր: Չատոն կամացուկ մռթմռթաց: Բիչո՛րին, որ քնում է առանց քնելու ու երբեք, նույնիսկ գիշերը, լրիվ քնած չի լինում, լսեց նրան:

— Հիմա թարմը կպատրաստեմ:

Չատոն գիտեր, որ սուրճ էր ուզում զուտ սովորության ուժով, ու արդեն չէր ուզում սպասել՝ ցանկանալով արագ գնալ իր աշխատավայր: Թեթև չկամությամբ նշեց, որ շտապում է:

— Եղածը լրիվ բավարար է:

Ու հենց սրճեփից խմեց սև հեղուկը: Բիչո՛րին այդպես էլ քնատ վիճակում մնաց բազմոցին: Զզվելի հեղուկի դառնությունից Չատոյի դեմքը ծռմըռվեց: Ուշունց տվեց ու գլուխը ներս մտցրեց հյուրասենյակ: Ոչ ինքը մոտեցավ Բիչո՛րիին, ոչ էլ նա՝ ամուսնուն: Հրաժեշտը չոր չէր, իհարկե, բայց մի տեսակ զուսպ էր:

— Մինչև ընթրիք:

Բիչո՛րին գլխով արեց, ոնց որ ասեր՝ լսեցի, ես էլ եմ նույնը ասում, բայց քունս ահավոր տանում է, այնպես որ չեմ ուզում խոսել, լա՛վ: Ու նորից փակեց աչքերը:

Աստիճաններին Չատոն լույսը վառեց: Հետմիջօրեի մռայլ գորշությունը պատում ու գունաթափում էր ամեն ինչ, թանձրացնում էր ստվերները: Հասնելով շքամուտքին՝ Չատոն նայեց փոստարկղի մեջ: Ոչ նամակների համար: Փոստատարն արդեն առավոտյան եկել էր: Երբեմն նրանց արկղի մեջ գարշելի բաներ էին մտցնում կամ էլ վիրավորանքներով ու սպառնալիքներով թղթեր, թեև համարյա երկու ամիս է, ինչ այդ իմաստով նրանց հանգիստ էին թողել: Փոխարենը, մի քանի օր առաջ երաժշտական կրպակի պատին մի թիրախ էին նկարել, մեջը՝ իր անունը: Հարևանուհին շշուկով պատմել էր Բիչո՛րիին. բա իմացե՞լ ես: Եթե չասեր, չէին էլ իմանա, որովհետև արդեն բավական ժամանակ է, ինչ այդ կողմով երկուսից ոչ մեկը չէր անցնում: Մի խոսքով՝ դիտավորյալ վատություն: Որովհետև մի բան է, երբ քեզ զզվեցնում ու վիրավորում են, ու

լրիվ ուրիշ է, երբ հենց ավանի ժողովուրդը (թեկուզև ոչ բոլորը) քո մահն է պահանջում:

Շքամուտքից հազիվ մի ոտքն էր դուրս դրել, բայց հետ քաշվեց: Անձրև ու գորշություն էր տիրում: Մեքենաներ չէին անցնում, գուցե մի ֆուրգոն այդ պահին հեռանում էր զառիվարով: Չնայած ժամին՝ ոչ ոք չկար փողոցում, որովհետև տեսնել էր պետք, թե ինչ տեղատարափ անձրև էր գալիս: Ծածկի տակ կանգնած՝ մտածեց վերադառնալ, հովանոց վերցնել: Լա՜վ է, Բիչո՛րին քնած կլինի, ու մեկ է, այստեղից մինչև ավտոտնակ երկու քայլ է: Չատոն փորձում էր տրամադրվել անձրևի տակ վազելուն: Դրանից առաջ քննող հայացք գցեց ամպերին՝ հույսի նշույլ նույնիսկ չունենալով, որ անձրևը կտրվելու է:

Իր պատշգամբից փողոցի վրայով մինչև դիմացի լապտերը ձգված պաստառը տեղում էր. PRESOAK KALERA; AMNISTIA OSOA*: Ժամանակ առ ժամանակ նման մի բան (ոչ միշտ քաղաքական բովանդակությամբ) կախում էին՝ ամրացնելով իր պատշգամբից: Երբեմն դրանք կապված էին ավանի տոնախմբությունների հետ: Մի քանի տարի առաջ նրանից թույլտվություն էին խնդրել: Չկամությամբ համաձայնեց, բայց դե՛, ավանի ժողովրդի ու հատկապես տղերքի հետ հո չէ՞ր թարսվելու: Այնպես որ, որոշակի օր գալիս են աստիճանով ու պաստառի մի կողմը կապում են իր բազրիքին: Իսկ ինչո՞ւ հենց իր պատշգամբից ու ոչ այս մեկից կամ այն մյուսից: Որովհետև, հակառակի պես, անիծյալ այդ լապտերը հենց իր տան դիմացի մայթին էր:

Մի օր, երբ նրանց փոստարկղը գարշանքով էին լցրել, զայրացած տուն բարձրացավ: Տեսնելով նրան դանակը ձեռքին ու զայրացած՝ Բիչո՛րին հարցրեց՝ ո՞ւր ես գնում:

— Պաստառի պարանները կտրելու:

Բիչո՛րին վրա բերեց.

— Դու ոչ մի բան էլ չես կտրի:

— Կո՛ղք քաշվիր, Բիչո՛րի, չե՞ս տեսնում՝ կատաղած եմ:

— Ուրեմն, հանդարտվի՛ր: Եղածը քիչ է, մի բան էլ ուզում ես ավելացնե՞լ:

Բիչո՛րին կողք չքաշվեց, ու Չատոն, թեև վատ բաներ ասաց ու հայհոյեց, բերետն էլ կատաղած շպրտեց պատին, ստիպված էր հաշտվել այն մտքի

* Presoak kalera, amnistia osoa (բասկ.), Ազատություն բանտարկյալներին, համաներում բոլորին:

հետ, որ այսուհետև ժամանակ առ ժամանակ իր պատշգամբի բազրիքին պաստառ են կապելու:

Երեխա ժամանակների պես հաշվեց.

— Bat, bi, hiru*:

Ու գնաց դեպի ավտոտնակ: Վազելո՞վ: Միայն առաջին երեք քայլը: Հետո դանդաղեցրեց: Իրականում ո՛չ հանգիստ էր քայլում, ո՛չ էլ վազում՝ մի կողմից՝ ավելի երկար անձրևի տակ չմնալու, մյուս կողմից՝ թաց գետնին չսահելու համար: Դա տարիքն առած, մի քիչ ծանրաքաշ մարդու վազք էր: Մի տասներկու մետր անցնելուց հետո դա էլ թողեց: Վերջիվերջո գրասենյակում փոխնորդ հագուստ ուներ:

Այս ի՞նչ անձրև է, է՛: Վա՛յ ես քո... Այնպիսի տպավորություն էր, որ բոլոր ամպերը նրան էին սպասել՝ միանգամից վրան պարպվելու համար: Մայթի եզրով մի առվակ էր վազում: Դեռ չորսը չկար, բայց թվում էր՝ արդեն գիշեր է: Իսկ այս ժամին դեռ վաղ է, որ փողոցի լույսերը վառեն:

Մի երիտասարդի կերպարանք՝ ճարպիկ ու աղոտ, դուրս պրծավ դիմացի մայթի մոտ կայանած երկու մեքենաների արանքից: Կնգուղը Չատոյին հնարավորություն չտվեց նրա աչքերը տեսնել: Դեպի իր կողմն էր քայլում, բայց ոչ ուղիղ: Ո՞վ էր: Քսան տարեկանից մի քիչ ավելի մեկն էր՝ ավանի տղաներից մեկը, որը, գլուխը կռացրած, պաշտպանվում էր անձրևից: Մի ցատկով հասավ մայթին՝ Չատոյի թիկունքում: Չատոն շարունակեց իր ճանապարհը, ու քիչ էր մնում, որ հասներ անկյունին:

Այդ պահին թիկունքից՝ շատ մոտիկից, մի կրակոց հնչեց:

Հետո՝ մի հատ էլ:

Ու մի հատ էլ:

Ու մի հատ էլ:

* Bat, bi, hiru (բասկ.), մեկ, երկու, երեք:

87

Սունկ ու եղինջ

Արդեն որոշ ժամանակ է, ինչ անհանգստացնող լուրեր էին պտտվում թղթի ֆաբրիկայի ֆինանսական վիճակի մասին: Տարբեր բաներ էին ասում-խոսում: Վախենալով, որ կկորցնի իր աշխատատեղը, Գիլյերմոն սկսեց գիշերները քիչ ու վատ քնել: Էնդիկան՝ նրա որդին, այն ժամանակ երկուսուկես տարեկան էր: Աղջիկը դեռ չէր ծնվել, բայց ճանապարհին էր: Գիլյերմոն ու Արանչան, հարմարված իրենց պարզ կյանքին (կարելի է ասել, որ միջին դասակարգի էին պատկանում՝ ապագայում բարգավաճելու հեռանկարով), երջանիկ էին կամ էլ կարծում-ասում էին, որ երջանիկ են, ինչը, ու այդ հարցում համամիտ էին, նույն բանն էր: Բայց այդ ամենը ջուրը կընկներ, եթե ֆինանսական հենքը ոտքերի տակից փախչեր:

Անկողնում գիշերվա ուշ ժամին խոսում էին.

— Թղթի ֆաբրիկայի աշխատավարձը որ չլինի, չեմ պատկերացնում՝ ինչ ենք անելու:

— Գուցե բախտներս բերի, և ուրիշներին գործից հանեն:

— Ո՞ւմ:

— Մի քիչ ցածր խոսի՛ր. երեխային կարթնացնես:

— Գրասենյակի աշխատողներից, քո կարծիքով, ինձնից բացի՝ է՞լ ում կարող են ավելի հեշտ դուրս դնել:

— Գուցե ավելի տարիքով մարդկանց, որ երիտասարդներին պահեն: Լսի՛ր, ծայրահեղ դեպքում մի բան կգտնես: Իսկ այդ ընթացքում կդիմանանք իմ աշխատավարձով: Մի մեծ բան չէ, բայց ոչնչից ավելի լավ է:

— Չի հերիքի, Արանչա՛: Հաշվարկներ եմ անում ու տեսնում եմ, որ չի հերիքելու: Շուտով չորս բերան ենք լինելու:

Արանչան նրանից թաքցրել էր կոշիկի խանութում տեղի ունեցածը: Ի՞նչ էր պատահել: Դե՛, խանութի տերը, որ շատ կոշտ կին էր, նրա երեսին շպրտել էր, թե Արանչան երկար չի սպասել երկրորդ հղիության համար: Հետո էլ գործընկերուհուց իմացել էր, որ այդ կինն իր հետևից զազրախոսել է: Արանչան նախընտրեց չպատմել Գիլյերմոյին՝ ամուսնու մտահոգությունը չավելացնելու համար:

Գիլյերմոն, մտորումների մեջ ընկած, վշտահար էլի իր երգն էր երգում.

— Մոռացի՛ր, էլ ո՛չ արձակուրդ է լինելու, ո՛չ էլ նոր մեքենա ու նման բաներ:

— Հանգի՛ստ, ա՛յ մարդ: Եթե միասին պայքարենք, կտեսնես՝ դուրս կգանք այս վիճակից:

— Ես ուզում էի՝ երջանիկ լինենք, բայց հնարավոր չեղավ: Ինչո՞ւ այս աշխարհում հնարավոր չէ երջանիկ լինել: Չգիտեմ՝ ինչի համար ենք ծնվում:

— Գիլյե՛, լա՛վ էլի: Անթերի երջանկությունը միայն կինոյում է լինում: Այս կյանքից շատ բան ես ուզում:

— Չեմ ուզում, պահանջում եմ: Ես աշխատող, տեղը տեղին մարդ եմ: Ինձ հանձնարարվածը կատարում եմ: Եվ լավ եմ կատարում: Դրա դիմաց իմ համեստ հասանելիքն եմ ուզում:

Մի օր սովորականից շուտ վերադարձավ տուն: Գործից հեռացվելու նամակը դրեց խոհանոցի սեղանին ու բավական երկար ժամանակ էնդիկային կրծքին կպցրեց, պահեց: Երկու տարեկան է ձագուկը, իսկ ինքն անպետքի պես առանց աշխատանք է մնացել:

— Այդպես մի՛ ասա:

— Ես դա եմ: Մեկը, որից հրաժարվում են, իսկ ֆաբրիկան շարունակում է անխափան աշխատել: Տիպիկ մի թշվառ, որը պետք է կնոջից փող խընդրի՝ բարում խմիչք վերցնելու համար:

Բախտի քմահաճույքին մատնված Գիլյերմոն: Առավոտյան բարձրանում էր սար ու վերադառնում էր վայրի ելակով, սնկով, եղինջով: Խոհանոցի սեղանի մոտ նստած՝ դասեր էր տալիս. եղինջը ուտելի է, կարելի է թուրմը խմել: Խնդիրը ինքն իրեն համոզելն էր, որ կերակրում է ընտանիքը: Դուրս էր գալիս լուսադեմին լեռնագնացի տեսքով՝ երկարաճիտք կոշիկներով ու միրգ հավաքողի ուսապարկով: Տարբեր բաներ էր բերում, նաև խնձոր (դե՛, արի՛ ու իմացի՛ր, որտեղից էր գողանում), ընկուզենու ճյուղեր, որոնք հետո կարճացնում էր՝ երեխայի համար դղյակ սարքելու համար: Երբեմն, երբ եղանակը թույլ էր տալիս, կարթը վերցնում ու գնում էր նավահանգիստ կամ Խայսկիբելի ժայռերը՝ ձուկ բռնելու: Լռակյաց էր դարձել, սիրում էր միայնակ քայլել՝ ճակատը կնճռած, բարկացած հայացքով: Հնարավոր չէր նրան հակաճառել, որովհետև անմիջապես պայթում էր: Երբ Այնոան ծնվեց, ամեն ինչ ավելի վատացավ:

Առաջին անգամ նորածին աղջկան գրկելով՝ ասաց նրան.

— Բախտդ չի բերել, պուճո՛ւր: Աղքատ ընտանիքում ես ծնվել:

Երբեմն-երբեմն ընդհատում էր իր երկարատև լռությունը նմանատիպ հայտարարությունների համար, որոնց մեջ թրթռում էր իր սրտնեղությունը: Իրավիճակը չբարդացնելու համար Արանչան լռում էր՝ տառապող ու հաշտված: Երբեմն չէր դիմանում: Էս ի՜նչ ձև է, չէ՞ որ ես էլ իմ զգացմունքներն ունեմ: Աշխատելով չհուզվել՝ արտահայտում էր իր կարծիքը:

— Ինքնասիրությանդ են կպել, դրա համար էլ տառապում ես:

— Դու ի՞նչ գիտես, դմբոյի՛ մեկը:

Ու այդպես շարունակ: Նեղացկոտ, ագրեսիվ, դառնացած: Այլևս չէր լըսվում՝ քաղցրի՛կս, ջանի՛կս, գա՛նձս: Անկողնում Արանչան չկամությամբ զիջում էր: Որովհետև, պարզ է, եթե դրանից էլ զրկի, սա հաստատ խելքը կգցի ու ինձ կծեծի: Կենակցումներն անհամ էին, անհաճույք՝ Արանչայի համար, արագ լիցքաթափում՝ Գիլյերմոյի համար: Ջրո քնքշանք: Հակառակն էլ չէր, իհարկե: Ավելի շուտ ձևական մի բան էր, որի արդյունքը իրար խփվող փորերի տխուր թրմփոցներն էին:

Գիլյերմոն ընդամենը երկու օր գործազուրկ մնալուց հետո ընկճվել էր, արդեն ապուշություններն էր դուրս տալիս՝ գնացքի տակ նետվել կամ մի այլ բան: Ավելի ուշ իր փոքրահասակ երեխաների ներկայությամբ սկսեց մռայլ ապագայի մասին կանխատեսումներ անել: Այնպիսի ժռռոմ ֆրազներ էր գտնում, որոնք փոքրիկները չէին կարող հասկանալ և որոնք նրանց հասկանալուն չէին էլ միտված: Մեկ էլ կռանում էր Այնոայի մահճակալի վրա ու մեծերի համար նախատեսված բառերով նրան նկարագրում էր զրկումների դաժան մի պատկեր: Նույնը՝ Էնդիկայի հետ: Հանկարծ նրան գրկում էր ու բացասական, հոռետեսական, մտահոգող մի բան էր ասում:

Տան հետ կապված աշխատանք ավելի քիչ էր անում, քան ֆաբրիկայում աշխատելու ժամանակ: Պատճա՞ռը: Դե՛, պարզվեց՝ նվաստացուցիչ էր համարում փոշեկուլ աշխատեցնելը, աման լվանալը, ապակիներ մաքրելը:

— Հո տան տնտեսուհի չե՞մ ծնվել:

— Ա՛, իսկ ես, ուրեմն, այո՞:

Այդ վիճակներում Գիլյերմոն լուրջ բստրում էր գնացքի գծերին գցվելու կամ ժավելաջուր խմելու մասին: Արանչան կատաղում էր՝ ատամները սեղմած, աչքերը թաց, բայց նայում էր իր երեխաներին՝ այդքան նուրբ ու փխրուն, ու նախընտրում էր զսպել իրեն: Օրը գիտեր, երբեմն իր աշխատակցուհու հետ էր անկեղծանում: Նրան տարբեր բաներ էր պատմում,

չկապակցված մանրուքներ, բայց ոչ ամեն ինչ կամ էլ շատ անձնականը, քանի որ նրանք այդքան մտերիմ չէին: Ընկերուհիներ՝ բառի բուն իմաստով, Արանչան չուներ: Ամուսնությունը նրան հեռացրել էր ավանի իր ընկերական խմբակից: Ռենտերիայում հազարից մեկ շփվում էր հարևանուհիների հետ ու ավելի հաճախ՝ Գիլյերմոյի մտերիմների հետ: Մորն էլ չի պատմի, ավելի շուտ իր սեփական աչքը կհանի: Միրենը գիտեր, որ փեսան գործազուրկ է: Բայց մտքով էլ չէր անցնում հարցնել՝ օգնության կարիք ունե՞ն, թե՞ ոչ:

Արանչան անկեղծացավ Անխելիտայի ու Ռաֆայելի հետ: Նույնիսկ պատմեց, որ նրանց որդին սպառնում էր գնացքի տակ գցվել կամ ժավելաջուր խմել: Ռաֆայելը նրան ասաց՝ մի՛ անհանգստացիր, իսկ Անխելիտան, թե՝ հանգի՛ստ եղիր: Ու անսահման առատաձեռնությամբ նրան օգնության հասան: Ռաֆայելը մի տարի վճարում էր հիփոթեքի նրանց ամսականը, Անխելիտան ամեն շաբաթ գնում էր Արանչայի հետ սուպերմարկետ՝ իր քարտով վճարելով բոլոր գնումները (լեփ-լեցուն բարձած սայլակի համար): Իսկ Գիլյերմո՞ն: Տեղյակ էլ չէր: Նա բավարարվում էր սար գնալով ու ինքն իր հետ զրուցելով:

Այդպես շարունակվեց, մինչև գործազրկության 10-րդ ամսին անսպասելի մի բան եղավ: Մի երեկո Լոս Ֆուերոս հրապարակով Այնոայի սայլակը քշելիս Գիլյերմոն հանդիպեց իր ընկերոջը՝ Մանոլո Սամառենյային: Մանոլոն էլ նրան տեսավ, նշան արեց, որ կանգնի ու ժպտերես մոտեցավ՝ հետը բերելով հուսադրող նորություն ու ևս մի բան: Ի՞նչ: Թղթի կտորի վրա գրած մի հեռախոսահամար: Ասաց, որ անպայման զանգի, եթե հնարավոր է, այսօր ևեթ, քանի որ «Մամուտ» հիպերմարկետում մի տեղ է բացվել, ու մարդ են փնտրում:

— Զանգի՛ր: Գուցե բախտդ բերի, բայց շտապի՛ր:

Ու այդպես եղավ, որ Գիլյերմոն սնկի ու եղինջի փոխարեն սկսեց թվերով զբաղվել: Ավելի քիչ էր վաստակում, քան թղթի ֆաբրիկայում, բայց վաստակում էր: Մի քանի օրվա ընթացքում վերագտավ իր լավ տրամադրությունն ու ապրելու ցանկությունը: Դարձավ բարեհամբույր, կատակասեր, առատաձեռն ու Արանչայից ներողություն խնդրեց տհաճ ամիսների համար, որոնց Արանչան ստիպված էր եղել դիմանալ, բայց խոստովանում էր, որ այդ ամբողջ ընթացքում ինքը շատ ծանր ապրումներ է ունեցել:

— Երկու երեխա ունենալ ու չկարողանալ նրանց կերակրել. դե՛, հասկանում ես:

Առաջին իսկ աշխատավարձը ստանալուն պես կնոջը հրավիրեց ռեստորան: Մյուս օրն էլ աշխատանքից վերադառնալիս նրան մի վարդ բերեց: Արանչան շտապելով ծաղիկը անշուք մի տարայի մեջ դրեց, քանի որ Այնոան, սովորության համաձայն, լաց էր լինում իր սենյակում: Իսկ հաջորդ առավոտ, հենց ամուսինը դուրս եկավ տնից, Արանչան վարդն աղբամանը նետեց:

88

Արնոտ հաց

Հունիսի 25-ն էր, օրը՝ հինգշաբթի: Գիլյերմոն ու Արանչան ամեն ինչ արել էին, որ կարողանան վայելել մեկշաբաթյա արձակուրդը: Միշտ չէ, որ հաջողվում էր, բայց այս անգամ ստացվեց: Այդ ժամանակ երկուսն էլ աշխատում էին ու կարող էին իրենց այդ հանգիստը թույլ տալ, թեկուզև համեստ պայմաններում: Քանի որ երեխաներն արդեն այդքան էլ փոքր չէին (Էնդիկան վեց տարեկան էր, աղջիկը շուտով չորս էր դառնալու), արդեն հնարավոր էր նրանց զբոսաշրջության տանել առանց այն դժվարությունների, որոնք առաջանում են շատ փոքր երեխաների դեպքում:

Երեկ չորսով գնացել էին Բիառիցի լողափ: Այսօր պետք է ճաշեին amona Միրենի տանը, վաղը կտեսնենք, թե որտեղ: Օգտագործած մեքենա էին ձեռք բերել: Մի մեծ բան չէր, բայց բավարար էր:

Այս հինգշաբթի օրվա խնդիրն այն էր, որ ընթրիքի համար հաց չունեին: Հարցը հեշտ լուծվող էր: Գիլյերմոն, թե՝ երանի մեր բոլոր դժվարությունները սրա պես լինեին, առաջարկեց անմիջապես իջնել հացի խանութ ու մի կես բոքոն գնել: Տան դուռը բացելով՝ կենսախինդ հարցրեց՝ ո՞վ կցանկանար իր հետ գալ: Արանչան ասաց.

— Էնդիկային տա՛ր, նյարդայնացնում է:

Ու ամուսինը (գնացինք, չեմպիո՛ն) երեխային հետը տարավ: Մի հինգշաբթի, որը երբեք չեն մոռանա, քանի որ կարող էր հոր ու տղայի կյանքին վերջ դնել: Ո՛չ առաջինը կլինեին, ո՛չ էլ վերջինը: Փաստորեն, ձեռք ձեռքի տված հայր ու տղա անցան այն սև սկուտերի կողքով, որի մեջ պայթուցիկ էր դրված: Գիլյերմոն (տեղում մեռնեմ, թե սուտ է) հիշում էր այդ սկուտերը: Արանչան հարցրեց.

— Վստա՞հ ես:

Նույնիսկ կասկած չուներ, որովհետև ջղայնացել էր՝ տեսնելով, որ սկուտերը մայթի վրա են կանգնեցրել, ու երեխային ասել էր՝ այսպես չեն անում, լավ չէ, մի խոսքով՝ նման մի դիտողություն էր արել:

Այդ կետից մի քանի մետր այն կողմ՝ հացի խանութի մուտքի մոտ, հանդիպեց Մանոլո Սամառենայային, որը դուրս էր գալիս՝ բոքոնը ձեռքին: 11:15,

գուցե 11:10 էր: Ու Մանոլոն, մի քանի բառ փոխանակելով Գիլյերմոյի հետ, ջերմորեն խառնշտեց Էնդիկայի մազերը:

Փողոցում՝ իրենց կողքին, թիկնապահներն էին սպասում նրան:

Թիկնապահնե՞ր: Այո՛: Բանն այն էր, որ դեկտեմբերին «Իրունի» բարում նրա ընկերոջն էին սպանել՝ Խոսե Լուիսին, ու Մանոլոն Ռենտերիայի քաղաքային խորհրդում նրան փոխարինել էր Ժողովրդական կուսակցության անունից:

Գիլյերմոն, երբ իմացավ դա, տանն ասաց.

— Մարդ պիտի պլոժիկ ունենա՝ նման պաշտոն ստանձնելու համար:

— Տե՛ս, Գիլյե՛, ես, եթե հավատացյալ լինեի, նրա համար կաղոթեի: Լավ կլինի, որ Տերը նրան պաշտպանի: Իսկ եթե նրան մեջտեղից վերացնեն, մտքովդ չի անցնի, չէ՞, նրա տեղը զբաղեցնել:

— Ե՞ս: Գի՞ժ ես: Կյանքիցս ձեռք չեմ քաշել:

Մանոլոն մի քանի օր էր այդ պաշտոնին, ու սկզբի համար նրա մեքենան այրեցին: Նրան վիրավորում էին, իր լուսանկարով ամենուրեք ծաղրական պաստառներ էին փակցնում ու անունը գրում էին նկարած թիրախի կենտրոնում: Բայց նա չէր երերում: Մամուլին հայտարարել էր. «Այստեղ եմ ծնվել ու այստեղ էլ մնալու եմ»: Եվ այդպես անցավ մեկ շաբաթ, երկու, ոչ շատ, մինչև իր օրհասական ժամը այն հինգշաբթի, երբ առօրյա հացն էր եկել առնելու ու մի քանի վայրկյան կանգնեց՝ Գիլյերմոյի հետ խոսելու:

Մեկը մտնում էր խանութ, մյուսը դուրս էր գալիս: Կարճ խոսակցությունից հետո Մանոլոն քայլեց մայթով, թիկնապահը՝ հետևից: Գիլյերմոն սպասեց, որ իր հերթը հասնի ցուցափեղկի մոտ: Հանկարծ սարսափելի մի պայթյուն որոտաց: Էնդիկան գետնին ընկավ: Կոտրվող ապակիների ձայն լսվեց: Ու Գիլյերմոն շտապեց երեխային ոտքի կանգնեցնել: Հայրական տոնով, արագ, հանգիստ ձևանալով, ասաց.

— Լաց մի՛ եղիր, էստեղից չշարժվե՛ս, հիմա կգամ:

Ու դուրս եկավ:

7-րդ շքամուտքի մոտ սկուտերն էր պայթել: Մանոլո՞ն: Չէր երևում: Տեսավ նրա թիկնապահին՝ գետնին նստած, մեջքով մեքենային հենված, դեմքը սևացած: Վնասված մեքենաներ: Մեկ վայրկյան թանձր, ծխացող լռություն տիրեց: Ու հետո լսվեցին առաջին ձայները, ինչ-որ կնոջ ճիչեր: Մարդիկ (հարևանները) մոտենում էին նայել-օգնելու:

Իսկ Մանոլո՞ն:

Այնտեղ էր: Որտե՞ղ: Երկու մեքենաների արանքում՝ իր սեփական արյան, շատ արյան մեջ պառկած: Պայթյունից, որն ամենայն հավանականությամբ ամբողջությամբ իրեն էր բաժին ընկել, սևացել էր: Համարյա մերկ էր, վրան միայն ներքնազգեստն ու կոշիկներն էին մնացել: Դաստակին ժամացույց էր երևում: Իսկ քիչ առաջ գնած հացը երկու կես էր եղել:

Երեխան գիրկը՝ չնայե՛ս, չնայե՛ս, Գիլյերմոն ուրիշ ելք չուներ, ստիպված էր բեկորների, սպանվածի ու թիկնապահի կողքով անցնել, քանի որ ոստիկանությունը դեպքի վայր դեռ չէր հասել, ու փողոցը չէին փակել:

— Նայեցի՞ր: Ինձ ճիշտն ասա՛:

— Ո՛չ, aita:

— Երդվո՞ւմ ես:

— Բան չեմ տեսել:

Ճանապարհին հանդիպեց վախեցած աչքերով դեպի իրենց շտապող Արանչային:

— Լա՞վ եք: Ի՞նչ է պատահել:

— Մանոլո:

— Հը՞:

— Մանոլո:

Բերանը բացում էր, ու միայն դա էր դուրս պրծնում՝ Մանոլո:

— Մանոլո Սամառենյո՞ն:

Երեխան գիրկը պահած՝ գլխով արեց: Բացատրությունների կարիք չկար: Արանչան ապշած ափով իր ճակատին խփեց: Ու էլ չխոսեցին: Շտապելով բարձրացան իրենց տուն, որտեղից Արանչան խուճապահար դուրս էր վազել՝ աղջկան մենակ թողած, արդուկն էլ միացրած:

Այդ պահին հեռախոսը զնգաց: Անխելիտան էր: Թե բա՝ ի՞նչ է պատահել: Որոտն ուժգին էր: Արանչան, երեխաների ներկայությամբ նրան չպատմելով, պատմեց, չասելով ասաց, նշելով, որ մենակ չէ, ու նրա սկեսուրը, ըմբռնելով իրավիճակը, նրան վստահեցրեց, որ հասկացավ:

Գիլյերմոն, գլուխը ափերի մեջ առած, իր վիշտ-վրդովմունքով տեղավորվեց խոհանոցում (այդպես մարդիկ իրենց սահմանասյունն են գետնին խրում ու այդտեղից չեն շարժվում): Ընտանիքի մնացած անդամները գնացին երեխաների սենյակ: Վախվորած Երեխաները լուռ հետևեցին մորը: Բանն այն էր, որ նրանց հայրը բարձրաձայն տնքում էր: Արանչան ռադիոընդունիչը հետը վերցրեց: Ցածր միացնելով, ականջը սարքին

կպցնելով՝ որոշ ժամանակ անց հաստատեց իր լսածը. ականով ահաբեկչություն, Կապուչինոս թաղամաս, մեկ զոհ:

Այնոայի մազերը հյուսեց: Հետո քանդեց: Հետո նորից հյուսեց: Դեռ երկու ժամ կար մինչև ծնողների տուն ճաշի գնալը, բայց պետք է որևէ բանով զբաղվեր՝ ժամանակը լցնելու, հանգստությունը վերագտնելու ու թեթևություն, ահռելի մի թեթևություն զգալու համար. օ՜ֆ, որ իր երեխաների հետ է, կարող է նրանց դիպչել, զգալ ու իմանալ, որ նրանք առողջ են և վտանգից հեռու:

Էնդիկան, հանգիստ կողքը նստած, այնպես էր բռնել մոր փեշից, ինչպես մարդիկ ավտոբուսում բռնակն են բռնում: Մի քանի վայրկյան մայրը մի երկու քայլ հեռացավ՝ կոմոդի դարակից ծամակալներ հանելու համար, ու տղան լուռ հետևեց նրան: Հետ գալիս՝ նույնը. նրա փեշն այդպես էլ չթողեց:

Կիսաբաց դռնից լսվում էին Գիլյերմոյի՝ անհավասար դադարներով արդեն մարող հեկեկոցները՝ ավելի խուլ, քան սկզբում: Արանչան, երեխաներին պաշտպանելով, նախ ուզում էր փակել դուռը: Հետո փոխեց միտքը: Թող լսեն, թող իմանան, թող հասկանան, թե ինչ տիպի երկրում է բախտ վիճակվել մեծանալ:

Խոհանոցում Գիլյերմոն հիմա էլ քաղաքականության մասին էր շաղակրատում: Բերանը եկածն ասաց ազգայնականության մասին, նաև, որ ուղեղներ թունավորող է, որ այդքան երիտասարդ բասկերի տանում է հանցագործության ճանապարհով: Նաև մեղավորներին էր թվարկում. Lehendakari*-ն՝ իր երկսայր լեզվով, կեղծավոր եպիսկոպոսը, abertzale-ները, որ մինչև կոկորդը խրված են ուրիշների արյան մեջ, ու բոլոր այդ չարակամ հարևան-մատնիչները, որոնք ETA-ին հայտնում են, թե որ ժամին է զոհին անցնելու այս կամ այն տեղով: Զայրացած հեգնեց.

— Ահավասիկ մի իսպանացի, որի հերը կարող ես հեշտությամբ անիծել, երբ նա գնա հաց առնելու: Նա ընտանիքի հա՞յր է: Դե՛, թող դրա մասին մտածեր նախքան խորհրդի անդամ դառնալը: Նա բարի՞ է ու կյանքում ճանճ սպանած չկա՞: Այո՛, բայց նա իսպանամետ մի կուսակցությունից է, որը մեզ ճնշում է, ու բացի այդ՝ այստեղ գործ ունենք հակամարտության հետ:

Տե՜ր Հիսուս, այս մարդը հո բաց պատուհանի մոտ չի՞ խոսում: Արանչան որոշեց ստուգել:

---

* Lehendakari (բասկ.), այդպես են անվանում Բասկերի երկրի գործադիր իշխանության ղեկավարին:

— Քեզ կլսեն:

— Թող լսեն:

Խոհանոցի պատուհանը փակ էր:

— Դու մենակ չես ապրում:

— Մի սարսափելի ատելություն եմ զգում: Ոնց որ միջիցս եղինջը դաղի: Արանչա՛, կյա՛նքս, ինձ մի բան ասա՛, որ վերջ դնի այս սպանիչ ատելությանը: Ատելը վերջին բանն է, որ կուզեի այս կյանքում:

— Սիրտդ թեթևացրո՛ւ, ընդվզի՛ր, բայց առանց բղավելու: Տան դռնից դուրս՝ շը՛շշ: Եղա՞վ: Ինձ էստեղ պրոբլեմների մեջ չգցես: Կգնանք հոգեհանգստի, կցավակցենք: Արժանապատվությունը կորցնելու պատճառ չունենք:

— Երևի կհասկանաս, որ իմ այս վիճակում չեմ կարող ծնողներիդ տուն գալ: Դու երեխաների հետ գնա՛:

— Իհարկե, չես գա: Միայն էդ էր պակաս, որ եղբորս անունը տաս ու վիճես մորս հետ, որը վերջերս ավելի մոլեռանդ է դարձել:

— Իր խեղճ, բանտարկված տղան՝ բարձր հարգի մի մարդասպան:

— Լա՛վ, վե՛րջ տուր: Ինձ խոստացել ես, որ այդ թեման ծնողներիս ներկայությամբ երբեք չենք շոշափի: Երեխաները տատիկ-պապիկին այցելելու իրավունք ունեն:

Մեկն անց կեսին Արանչան տնից դուրս եկավ հարդարված, կոկիկ, հաճելի բուրող երեխաների հետ: Այնոան մոտեցավ հորը՝ համբուրելու: Էնդիկան հետևից զուսպ ձայնով հարցրեց.

— Տխո՞ւր ես, aita:

— Շատ տխուր եմ:

— Մանոլոյի հետ կատարվածի պատճառո՞վ:

— Փաստորեն, դու նայել ես...

— Բայց մի աչքով:

Գրկեց երեխային, գրկեց Արանչային, երեքին ուղեկցեց մինչև դուռը, տեսավ, թե ինչպես են իջնում աստիճաններով, ու երբ շուռ եկան՝ նրան ցտեսություն ասելու, օդային համբույր ուղարկեց:

Տրամադրությունը ճաշասենյակում

Ա՛յ որ Միրենը իմացել էր, է՛: Ի՞նչը: Դե՛, որ թոռները, երբ կողքը չէին, երբեմն նրան չար amona էին անվանում: Մայրը զուր էր փորձում ազդել նրանց վրա: Արանչան հասկանում էր. ի վերջո բան չեն ասի, որ ինձ հաճույք պարգևեն, բայց չեմ կարողանալու արգելել, որ չզգան այն, ինչ զգում են:

Նույնիսկ փոքրիկ Այնոայի մեջ, որի չորսը նոր պիտի լրանար, Արանչան զգում էր amona Միրենին վանելու նախանշանները, ինչը Էնդիկայի դեպքում, ըստ իրավիճակի, երբեմն անթաքույց թշնամանքի էր վերածվում:

Հակառակն էր Անխելիտայի ու Ռաֆայելի դեպքում: Մասամբ որովհետև ավելի շատ ժամանակ էին անցկացնում երեխաների հետ, նրանց ամեն օր էին տեսնում և զվարճացնելու ու ջերմ վերաբերմունք ցուցաբերելու ավելի մեծ հնարավորություն ունեին: Բայց միևնույն ժամանակ նրանք իրենց բնույթով մեղմ, առատաձեռն, ուրախ մարդիկ էին՝ ի տարբերություն Միրենի, որը, սովորության համաձայն, կոշտ ու խիստ էր՝ ոչ թե վատություն անելու ցանկությունից, այլ պարզապես որովհետև այդպիսի մարդ էր ու միշտ էլ այդպիսին է եղել, անհամբեր, ծանր բնավորության տեր՝ իր երեխաների, իր ամուսնու, իրականում՝ բոլորի հանդեպ:

Ա՛յ aitona* Խոշիանը, որ ճիշտն ասենք, այնքան էլ կարևոր չէր: Իրականում ամենևին կարևոր չէր: Ընդհանուր առմամբ Այնոան ու Էնդիկան նրան տեսնում էին ամիսը մեկ-երկու անգամ, բայց խնդիրն այն է, որ նույնիսկ երբ հետն էին լինում, նա մնում էր աթոռին նստած՝ անշարժ, անհետաքրքիր, լռում էր ու չէր առաջարկում ոչ մի բանով զբաղվել, ու շատ անգամ տպավորություն էր ստեղծվում, թե ներկա էլ չէր:

Մի առիթով Էնդիկան մորը հարցրեց, թե ինչու է aitona Խոշիանն այդքան քչախոս:

— Դե՛, երևի, բան չունի ասելու:

— Aita-ն ասում է, որովհետև osaba** Խոշե Մարին բանտում է:

---

* Aitona (բասկ.), պապիկ:

** Osaba (բասկ.), քեռի:

— Գուցե:

Ռենտերիայի ահաբեկչության այն հինգշաբթի օրը, երբ Արանչան երեխաների հետ եկավ ծնողների տուն, aitona Խոշիանը դեռ չէր վերադարձել «Պագոետա» բարից, ինչի պատճառով Միրենը վատ տրամադրություն ուներ:

Դուռը բաց արեց: Ուրախացա՞վ: Բնավ: Հակառակը. ունքամեջը լարված էր, աչքերը բարկությամբ էին փայլում:

— Կարծում էի՝ հայրդ է: Դեռ բարից չի վերադարձել: Հալը կտեսնի:

Հետո կտրուկ դարձավ թոռների կողմ՝ մաշված հողաթափերով, գոգնոցը խոնավության բծերով: Մտքով չի՞ անցնում հարդարվել, մեղմել դեմքի արտահայտությունը, երեխաներին մի բան ասել, որ նրանց ծիծաղեցնի ու վստահություն ներշնչի, չի՞ ուզում նրանց համար մի փոքր նվեր, մի անակնկալ պատրաստել:

Մի կարգին չի էլ կռանում, որ նրանք գոնե կարողանան իրեն համբուրել: Ու մեկ էլ Էնդիկային նկատողություն է անում, որ ներս է մտել առանց բարևելու:

— Լեզուդ կո՞ւլ ես տվել, ի՞նչ է:

Աղջնակին հարցրեց, թե ով է մազերն այդքան ծուռ հյուսել:

Արանչային էլ, թե.

— Ամուսինդ չի՞ գալու:

— Լավ չէր:

Ու ոչ էլ հարցրեց՝ հիվա՞նդ է, կամ ի՞նչ է պատահել: Ինչո՞ւ: Որովհետև չի ստացվում: Եթե հարցնես պատճառները, կպաշտպանվի՝ ասելով, որ ամբողջ կյանքում միայն աշխատել է: Ահավասիկ ապացույցը. սեղանը գցած է, տնով մեկ տարածվում է կերակրի ախորժելի հոտը, փռի տաքությունը: Էլի ջանք չի խնայել: Ամբողջ առավոտ եփել-թափել է: Ավելի ճիշտ՝ նախորդ երեկոյից, երբ կրոկետների* համար բեշամել** էր պատրաստել: Անշուշտ, հոգնած էր և համոզված, որ ոչ ոք երբեք նրան շնորհակալություն չի հայտնելու, ինչ էլ անի:

---

* Կրոկետ, ապուխտի, մսի, կամ ձկան աղացած մսով, բեշամել թանձրուկով ու ձվով, պաքսիմատով, ձեթի մեջ տապակած կոտլետի տեսակ:

** Բեշամել, սպիտակ թանձրուկ, որը պատրաստվում է ալյուրով, կաթով ու կարագով կամ ձեթով:

Մեկ էլ՝ բասկերենով իր այդ աստիճանի տոգորված լինելը: Այդ պահանջկոտությունից դրդված՝ ամեն անգամ, երբ թոռները իր տուն էին գալիս, նրանց գիտելիքներն էր ստուգում: Հարցեր էր տալիս՝ ստիպելով, որ նրանք մայրենի լեզվով խոսեն, ու նրանք էլ խոսում էին բնական ու ազատ, թեև իրենց տարիքին համապատասխան բառապաշարի որոշակի սահմանափակումներով: Բայց հաճախ, երբ Գիլյերմոն ներկա էր լինում, երեխաներն ակամա անցնում էին իսպաներենի:

Միրենը կտրուկ, խիստ միջամտում էր.

— Այս տանը բասկերեն ենք խոսում:

Դա Գիլյերմոյին մեկուսացնելու ձև էր: Հաճախ Արանչայի միջոցով էր նրա հետ խոսում.

— Ամուսնուդ հարցրո՛ւ՝ գուցե էլի՞ սիսեռ է ուզում:

Ու Արանչան, ճարն ի՞նչ, դառնալով դեպի Գիլյերմոն, թարգմանում էր հարցը: Գիլյերմոն հումորը չէր կորցնում.

— Ասա՛ նրան՝ թող տասնութ հատիկ տա:

Խոշիանը եկավ՝ կողերը քորելով. նշան, որ խմել է: Միրենի համար կարևոր չէր՝ շա՞տ, թե՞ քիչ: Զայրույթով համակվելու համար բավական էր տեսնել այդ ակամա շարժումը: Աղջկա ու երեխաների ներկայությամբ իրեն զսպեց: Բայցևայնպես, Արանչան ճաշասենյակից լսեց, որ մինչ հայրը կոշիկներն էր հանում, մայրը նրան ցածրաձայն նախատում էր: Ուշ հասնելու պատճառո՞վ էր: Բայց չէ՞ որ դեռ երկուսն անց քսանհինգ էր, իսկ նրանք պայմանավորվել էին երկուսն անց կես նստել սեղան: Թե՞ նրան ավելի շուտ էր սպասում, որ իրեն օգներ: Բայց այս մարդը տան գործերում կնոջը ե՞րբ էր օգնել:

Ճաշասենյակում սեղանին դրված էին ջանասիրաբար պատրաստված բազմաթիվ խորտիկներ: Սակայն մթնոլորտը պայթյունավտանգ էր: Այնպիսի լարվածություն կար օդում, ասես ճկվող մի կտոր լիներ, որն ամեն պահ կարող էր պատռվել: Երեխաները, որոնք յուրովի, բայց երևի զգում էին լարվածությունը, լռում էին՝ քաղաքավարի սպասելով մոր արտոնությանը՝ դիմանալով ախորժալի կրոկետների (անթերի շարված հախճապակյա ամանի վրա) գայթակղությանը:

Տան հողաթափերով, մի կերպ թաքցնելով, որ քիչ առաջ մի նկատողություն է ստացել, aitona-ն մտավ ճաշասենյակ: Դրսից գալով՝ արդեն զուսպ բարևել էր ու թեթև համբուրել երեխաներին: Հենց շարժում արեց,

որ նստի իր սովորական տեղը՝ մեջքով պատշգամբի դռանը, Միրենը նրան հարցրեց՝ լվացե՞լ է ձեռքերը: Թոռների ու աղջկա ներկայությամբ չպատասխանեց, ու որ կռիվ չլինի, գառնուկի պես գնաց լոգասենյակ:

Հինգով նստած սեղանի շուրջ՝ ուտում-խմում էին: Խոշիանը մնացածի պես ջուր էր խմում, քանի որ գինով արդեն առավոտից էր հագեցել: Օդում՝ ափսեների վրա կռացած գլուխների վրա, շարունակում էր լողալ այդ լարվածությունը, որը նույնիսկ երեխաներն էին զգում՝ սովորաբար շատ աշխույժ, հիմա չափազանց լուռ: Միայն մեծերն էին խոսում դատարկ բաների մասին՝ ձևացնելով, թե բան չի եղել: Բայց օրվա թեման օդում էր, ու բոլորը գիտեին, և ոչ ոք այն չէր ակնարկում՝ ընտանեկան հավաքույթը չխաթարելո՞ւ համար: Չէ՞ որ իրար շատ հաճախ չեն տեսնում: Իմաստ չունի. մեկ ու կես ժամից գնալու ենք:

Խոշիանից զգացվում էր, որ նրա ներսում բոցկլտում էր «Պագոետայում» լսած նորությունը: Մինչ Միրենը կեղտոտ ամանեղենը տարավ խոհանոց ու հիմա աղանդերի համար մաքուր սպասք էր հանում պահարանից, Արանչային ցածրաձայն հարցրեց, թե ով էր զոհը: Աղջիկը նույնպես շշուկով պատասխանեց.

— Գիլյեի ընկերը:

— Դե՛, լա՛վ էլի:

— Հենց ինքն էր Գիլյեին օգնել, որ գործ գտնի:

— Դե՛, լա՛վ էլի:

Միրենը, ափսեները ձեռքին վերադառնալով ճաշասենյակ, հարցրեց.

— Ի՞նչի մասին եք խոսում:

— Հե՛չ, ոչ մի բանի:

Ոչ մի բանի՞: Լարվածությունն ավելի թանձրացավ: Մի հատ կպչես՝ կպայթի: Բայց սեղանին նատիլյաս* հայտնվեց, որը երեխաները հրճվանքով ընդունեցին, ու Խոշիանն էլ շատ տեղին ամեն թոռնիկին մետաղադրամ տվեց՝ քսանական դուրո: Անդորր ու աղանդեր: Բայց հենց ինքն էլ քիչ էր մնում՝ ամեն ինչ փչացներ: Ինչպե՞ս: Դե՛, չմտածելով հեռակառավարման վահանակը ձեռքն առավ: Արդեն դեպի հեռուստացույցն էր ուղղել, ու հայտնվելու էր Ռենտերիա, ական, մեկ զոհ Կապուչինոս թաղամասում: Արանչան հաջողեցրեց ժամանակին կանգնեցնել նրան՝ սեղանի

* Նատիլյաս, սերուցքով, ձվով ու կաթով պատրաստված քաղցր աղանդեր:

տակ թաքուն ու արագ խփելով ոտքին: Բայց Միրենը նկատեց: Թե՛ արդեն որոշ ժամանակ է, ինչ կասկածում էր, որ հայր ու աղջիկ ինչ-որ բանի մասին գաղտնի զրույց են վարում:

Այնպես որ, տանջվելով կասկածներից, մի պահ, երբ խոհանոցում միայնակ ամաններն էր լվանում, ինչ-որ պատրվակով կանչեց վեցամյա Էնդիկային, ու օդը պայթեց: Ամեն ինչ արեց, որ երեխայից կորզի aita-ի չգալու պատճառը: Եվ երեխան, որին չէին սովորեցրել խույս տալ իր amona-ի ճարպկությունից, նրան պատմեց տեղի ունեցածը: Ի թիվս այլ բաների՝ ասաց, թե.

— Չար մարդիկ սպանել են aita-իս ընկերոջը:

— Ու դրա պատճառո՞վ չի եկել ճաշի:

— Ամբողջ առավոտ լաց էր լինում:

— Ո՞ր մի տղամարդն է այդքան լաց լինում:

Դա դուր չեկավ Էնդիկային, որը, վերադառնալով ճաշասենյակ, տատի ասածները պատմեց մորը: Խոշիանը մեքենայաբար փորձեց աղջկա թևը բռնել, որ նրան կանգնեցնի, բայց իր ծերացած ու արթրոզից ցավող ձեռքն այդ արագությունը չուներ: Արանչան կտրուկ-զայրացած վեր թռավ սեղանից, արագ քայլերով գնաց խոհանոց, ու այնտեղ տեղի ունեցավ այն, ինչից հնարավոր չէր խուսափել:

— Լսի՛ր, ի՞նչ ես ասել երեխային:

— Իսկ դուք նրան ի՞նչ էիք ասել չար մարդկանց մասին:

Այլայլված դեմքեր, բարկացած հայացքներ, բերաններից կրակոցի պես դուրս թռչող բառեր:

Արանչան հարձակողական, սադրող սկսեց իսպաներեն խոսել:

— Հրաշք էր, որ զավակիս չկորցրի ու այրի չդարձա: Պայթյունից կես րոպե առաջ հայր ու տղա ականի կողքով էին անցել:

— Մենք այստեղ անմեղների դեմ չենք պայքարում:

— Ա՛, ուրեմն դու պայքարո՞ւմ ես: Գուցե շնորհավորե՞մ առավոտվա դեպքի կապակցությամբ:

— Այդ խորհրդականը՝ ամուսնուդ ընկերը, ԺԿ-ից էր:

— Ցնդե՞լ ես, ի՞նչ է: Ամենից առաջ լավ անձնավորություն էր, ընտանիքի հայր ու մի մարդ, որն իր հայացքները պաշտպանելու իրավունք ուներ:

— Նա կեղեքիչ էր: Ու քեզ հիշեցնեմ, որ եղբայրդ այդպիսի լավ մարդկանց մեղքով է բանտում փտում:

— Ապացուցվել է, որ զավակդ, որով այդքան հպարտանում ես, արյունալի հանցանքներ է գործել: Ահաբեկիչ է: Դրա համար է բանտում: Կրկնում եմ, որովհետև ահաբեկիչ է, ոչ թե բասկերեն խոսելու պատճառով է, ինչպես մի անգամ Էնդիկային էիր ասել: Ստախոսի մեկը:

— Դու ի՞նչ իրավունքով ես խոսում իմ տղայի մասին, մի gudari-ի մասին, որն իր կյանքն է վտանգել հանուն Euskal Herria-ի:

— Դե՛, գնա՛ տղայիդ զոհերի տուն, հապա նրանց բացատրի՛ր: Տեսնենք՝ կհամարձակվե՞ս նրանց աչքերին նայել:

— Դրանք ամուսնուդ ընկերներն են: Թող նա էլ գնա:

— Ինչո՞ւ երբեք Գիլյերմոյի անունը չես տալիս: Լեզո՞ւդ է այրում: Երևի թե քո կարծիքով նա է՞լ է կեղեքիչ:

— Եսիմ ինչ, բասկ էլ չէ:

— Այստեղ է ծնվել, ինձնից էլ՝ շուտ:

— Էրնանդես Կառիսո, որը չի խոսում բասկերեն: Եթե դա նշանակում է բասկ լինել...

Այդ կետի վրա Արանչան խոսակցությունը ավարտված համարեց: Խոշիանի կողքով անցավ, որը դռան շեմից դիտում էր խոսակցությունը՝ նոթերը կիտած, առանց միջամտելու, անկարող:

— Թո՛ղ՝ անցնեմ, aita: Չգիտեմ՝ այդքան տարի ոնց ես նրան դիմացել:

— Աղջի՛կս, մի՛ գնա:

Արանչան երեխաներին կանչեց, կոշիկները ձեռքը վերցրեց՝ նրանց աստիճանավանդակին կամ փողոցում, մեկ էր, հագցնելու համար, ու լուռ, հրաժեշտ չտալով, բնակարանից դուրս հրեց նրանց: Միրենը խոհանոցում հուսահատ, քար լռություն էր պահպանում, ու Խոշիանը, ցավից ճոճվելով, փորձեց աղջկա ու թոռների առջև ճանապարհը կտրել:

— Մի՛ գնացեք, խնդրո՛ւմ եմ:

Ջուր էր: Արանչան հինգ տարի չխոսեց մոր հետ:

Համա՛թե վախեցանք

Այն ժամանակներում սաղավարտը մոդայիկ չէր: Դա էր մնացել պակաս: Շատ-շատ, ինքն իրեն պրոֆեսիոնալ հեծանվորդ հռչակած թեթևսոլիկ մեկը սաղավարտ դներ, ու վերջ: Որոշել էին, որ գլխարկով, արևային ակնոցով ու հեծանվորդի մարզահագուստով ոչ ոք չի ճանաչի իրենց: Մի երեկո Խոշե Մարին հեծանվով անցավ իր ավանով՝ աչքի պոչով նայելով կողքերը: Նախորդ օրը Պաչոն նրան մարտահրավեր էր նետել:

— Գրազ գա՞նք, որ էդքան պլոճիկ չունես:

— Մի մեծ բան չէ: Իմ ավանում լիքը մարդ հեծոյով է ման գալիս: Ոչ ոք չի կանգնի՝ նայի:

Ու դա էլ եղավ: Անցորդները գլխի չընկան, թե ով էր գլխարկով ու մուգ ակնոցով այդ թիկնեղ հեծանվորդը: Հրապարակը շրջանցող փողոցով անցավ, «Պագոետայի» առջևով իջավ դեպի գետը: Դիմացի ափից տեսավ հորը (բերետը, վանդակավոր շապիկը, կորացած մեջքը. որքա՜ն է ծերացել) հողամասում գործ անելիս: Պաչոն հարցրեց՝ այդ ուր էր նայում:

— Հե՛չ: Ուզում էի ավանիս հրաժեշտ տալ:

Երբ չէր անձրևում, երկուսն էլ նախընտրում էին մարզերով իրենց ճամփորդությունների համար (նշանակետեր էին փնտրում. այն օրերի նրանց հիմնական, եթե ոչ միակ զբաղմունքը) մեքենայի փոխարեն հեծանիվ քշել կամ էլ ավտոբուսով գնալ: Հեծանիվները հնարավորություն էին տալիս, իրար տեսադաշտից չկորցնելով, առանձին-առանձին նույն տեղը հասնել: Մի նշան մտածեցին, որպեսզի առջևից գնացողը հետևից եկողին զգուշացնի վտանգի մասին: Հեռավորությունը՝ հիսուն մետրից ոչ պակաս, բայց հարյուր մետրից ոչ ավելի: Որևէ բնակավայր մտնելիս երբեք միասին նույն բարը չէին մտնում: Զբոսաշրջության ավարտին սկըզբից՝ մեկը, հետո՝ մյուսը հեծանիվները վերելակով բնակարան էին բարձրացնում: Ուղղահայաց վիճակում տեղավորվում էին: Բնակարանում միանում էին Չոպոյին, որը ազատ լինելով ուսանողի սովորական կյանքով էր ապրում կամ էլ գոնե այդպես էր ձևացնում:

Զենքին վերաբերող կարճատև դասընթացների ժամանակ նրանց

սովորեցրել էին աչալուրջ լինել: Որևէ սենյակում օրվա որևէ ժամի վառվող լույսը նշանակում էր, որ վտանգ չկա, որ նրանցից մեկը տանն է, ու պրոբլեմ չկա: Եթե բոլոր լույսերը մարած էին, ու վերջին դուրս եկողը փոստարկղի մեջ մետաղադրամ էր թողնում, նշանակում էր, որ բնակարանը դատարկ է: Եթե մետաղադրամ չկար, մի՛ բարձրացիր: Նույնը, եթե պատուհանից սրբիչը կիսով չափ դուրս կախված լիներ, կամ բոլոր սենյակներում լույս լիներ, կամ էլ դռան գորգիկը իրենց պայմանավորված դիրքով չլիներ: Մի անգամ Պաչոն մոռացել էր ու չէր պահպանել կանոնները: Եթե Չոպոն չմիջամտեր, Խոշե Մարին նրա դեմքը ջարդուխուրդ էր անելու:

Սառն ու մռայլ, բայց առանց անձրևի ու քամու աշխատանքային մի օր որոշեցին ցերեկն Անդոայինի, Վիլյաբոնի ու Աստեասուի կողմերով անցնել: Հիմնականում, որ անգործ չնստեն, և որովհետև տհաճ ձմեռային շաբաթից հետո եղանակը հեծանվով զբոսնելու հնարավորություն էր տալիս վերջապես: Այս ու այն կողմ քշելուց բացի՝ ուրիշ բան չէին կարող անել, քանի որ կապավորը տնօրինության երկտողն էր ուղարկել նրանց՝ հրամանով, որ ոչինչ չձեռնարկեն, մինչև նոր հրահանգ ստանալը: Նաև իմացան, որ Դոնոստիայում մի մեծ ekintza էր նախապատրաստվում, որին նրանք չպետք է միջամտեին, կամ էլ գուցե կազմակերպությունը գաղտնի համաձայնության էր եկել կառավարության հետ:

Խոշե Մարին թևաթափ էր լինում:

— Մենք երկրորդ կարգի talde ենք:

Պաչոն փորձում էր նրա տրամադրությունը բարձրացնել:

— Մի՛ անհանգստացիր: Հենց հնարավորություն լինի, այնպիսի հարված կհասցնենք, որ կսկսեն մեզ հարգել:

— Միայն այն դեպքում, եթե Կառավարությունը չերերա: Որովհետև եթե զինված պայքարը մեկից ավարտվի, բա էլ ո՞րն է լինելու մեր ներդրումը:

— Ա՛յ մարդ, այդքան հոռետես մի՛ եղիր: Կարծում եմ՝ սա մի քանի տարի կշարունակվի:

Ռեկալդեում՝ սգո սրահի մոտ, գրեթե զբոսանքի ավարտին Խոշե Մարին կանգ առավ, ինչպես սովորաբար անում էր՝ ընկերոջը մի քանի րոպե առավելություն տալու համար, ու երբ ինքը տեղ հասավ, Պաչոյին շքամուտքի մոտ տեսնելով՝ զարմացավ՝ սա ի՞նչ է այստեղ անում: Վերևում լույսերը մարած էին:

Հանդիպեցին շենքի անկյունում:

— Մետաղադրամը տեղում չէ:

— Գնացինք:

Ժամանակ չկորցնելով՝ ուղղվեցին դեպի Հին թաղամաս: Առանց կանգ-նելու՝ քշեցին-անցան Բենտա-Բեռիի հրապարակը: Այնտեղ արդեն, ի՞նչ անենք, որոշեցին նախ ուշքի գալ, հետո՝ գործողությունների պլան մշա-կել: Լրիվ մթնեց: Ժամացույցը ինը խփեց: Հետզհետե այդ տեղով ավելի քիչ մեքենա էր անցնում: Ցուրտը, որը հեծանիվ քշելիս այդքան էլ չէին զգում, հիմա հասել էր մինչև ոսկորները: Խոշե Մարին, որի մարմինն ար-դեն ընթրիքի էր ձգտում, խփշտեց վերջին շոկոլադե սալիկը, որի պաշարը բանանների ու խնձորների հետ սովորաբար վերցնում էր հետը:

Շատ լավ հասկանում էին, որ այս ժամին հեծանվորդների իրենց հա-գուկապով չափից մեծ ուշադրություն են գրավելու:

— Էս տեսքով ո՞ւր գնանք:

— Եթե մեր թեթև հագուստով այս ցրտին փողոցում մնանք, հաստատ կսառենք:

— *Ձերփիրոջմերը*:

— Առաջարկում եմ վերադառնալ ու նայել: Չոպոն հաստատ պարզա-պես մոռացել է մետաղադրամը փոստարկղը գցել: Մի անգամ ես էլ էի մոռացել:

— Եթե անուշադրության արդյունք է, գլուխը կջարդեմ:

— Գնացինք:

Բնակարանի պատուհաններն էլի մութ էին: Ամայի փողոցում կասկա-ծելի շարժում չէր նկատվում, թեև արի՛ ու իմացի՛ր, գուցե txakurra-ները թաքնված էին կայանած մեքենայում կամ մոտակա բնակարանի վա-րագույրի հետևում: Հեծանիվները հենած թողեցին լուսանշանի սյանը: Բերաններից գոլորշու խիտ ամպիկ էր դուրս պրծնում: Պաչոն ցրտից դո-ղում էր ու չէր թաքցնում, որ վախենում է հիվանդանալ: Խոշե Մարին փոր-ձում էր տաքանալ՝ ցատկեր ու մարմնամարզական շարժումներ անելով: Անընդհատ փնթփնթում էր: Շատ վատ բառեր էր ասում ու հայհոյում էր, բայց չէր կարողանում որոշում կայացնել:

Սառած ու կարմրած քթով Պաչոն գաղափար հղացավ:

— Մեկնումեկս բարձրանա՝ հերիք է: Եթե մեզ սպասում են, մեկին կբըռ-նեն, իսկ մյուսը կկարողանա փախչել:

— Համա՛ դմբոն ես: Քեզ բռնեն՝ նույնն է, ինչ ինձ բռնեն: Ու հակառակը: Picoleto-ները զորանոցում քեզ այնպես կձաղկեն, որ «Հայր մերը» լատիներեն, ռուսերեն ու չիմացածդ լեզուներով էլ կերգես:

Սաստիկ սառնամանիքը, այդ ժամին ու տեղին անհամապատասխան հագուստը, սով-ցուրտ-հոգնությունը՝ բոլորը միասին, նրանց դրդում էին որոշում ընդունել, որն ի վերջո ընդունեցին: Մեկը վերելակով բարձրացավ բնակարան, մյուսը՝ աստիճաններով: Դռան գորգի՞կը: Տեղում էր: Լավ նշան է: Բայց, ուշադրությո՛ւն, բնակարանը կողպված չէր: Արդեն միևնույն էր, արդեն իրենց բանալին մտցրել էին կողպեքի մեջ, ու թող ինչ ուզում է՝ լինի: Պաչոն, որ առաջինը մտավ, միջանցքի լույսը վառեց: Լռություն: Իրենց «Բրաունինգներն» ապահովիչից հանել էին, որովհետև առանց զենքի ոչ մի տեղ չէին գնում: Ու դրա համար ամեն անգամ, երբ դուրս էին գալիս հեծանվով զբոսանքի, գոտկին մի պայուսակ էին ամրացնում:

Չոպոյին՝ ծռված, իր սենյակի հատակին հայտնաբերեցին (քեզ ի՞նչ են արել), մի այտը՝ փսխածի մեջ, բայց գիտակցությունը տեղն էր:

— Եթե շարժվեմ, ավելի վատ կլինի:

Կասկածամիտ ու անփորձ էին: Ուշ հասկացան, որ իրենց ընկերոջ խընդիրը բնական պատճառ ունի: Մինչև այն պահը, որ նա ասաց՝ որտե՞ղ էիք, սրիկանե՛ր, նրանք շարունակում էին ատրճանակները պատերի, առաստաղի, պահարանի, հենց նույն Չոպոյի վրա պահել: Բա ինչո՞ւ լույսը չէիր վառել: Ապուշնե՛ր, չէի կարողանում շարժվել: Չե՞ք տեսնում, ի՞նչ է: Փողոցից տուն մտնելուն պես մի սարսափելի ցավի նոպա էր ունեցել: Միանգամից էր բռնել վերելակի մեջ: Վերջին ուժերի լարումով կարողացել էր բնակարան մտնել: Որտե՞ղն էր ցավում: Էստեղ: Ու «այդտեղը» ազդրն էր, բայց նաև մեջքն էր ցավում ու կողը և փորը: Ի՞նչ անենք: Նրանց սպառնաց, որ եթե իրեն չօգնեն, բղավելով օգնություն կկանչի: Փորձեցին նրան ոտքի հանել: Անհնար էր. ցավն ուժեղանում էր: Բա փսխա՛ծը, բա գարշահո՛տը:

— Պետք է սա մաքրել:

— Ինքդ էլ մաքրի՛ր:

Խոշե Մարին նշան արեց Պաչոյին, որ գա խոհանոց: Դուռը փակեցին, շշուկով խոսեցին:

— Չենք կարող թույլ տալ, որ բժիշկները ներս մտնեն: Չափազանց վտանգավոր է:

— Բայց մի բան պիտի թափով մտածենք. եթե սա մեռնի, ավելի մեծ խնդիր կունենանք:

Խոշե Մարիին խենթացնում էին գետնին պառկած Չոպոյի տնքոցները: Եզրափակեց որպես ավտորիտար ղեկավար ու վճռական մի մարդ.

— Գնա՛, փոխվի՛ր կամ մի բաճկոն հագի՛ր վրայից, մեքենան բե՛ր ու շքամուտքի մոտ սպասի՛ր:

— Դու հո չե՞ս գժվել: Մեքենայի բեռնախցիկում զենքով արկղեր կան:

Խոշե Մարիի այրող հայացքն առարկություն չէր ընդունում: Պաչոն ստիպված ասաց, որ եթե ամեն ինչ վատ վերջանա, իր մեղքով չի լինելու: Փնթփնթալով արագ հագնվեց: Բնակարանից դուրս գալով՝ մռթմռթում էր պատասխանատվության մասին: Խոշե Մարին գլուխը մտցրեց Չոպոյի սենյակ՝ հանգի՛ստ եղիր, մի՛ մտահոգվիր, դիմացի՛ր ու նման բաներ: Հետո ինքն էլ արագ փոխվեց:

Խոհանոցի պատուհանից տեսավ, որ փողոցով գալիս է Սեատ-127, որը նրանց տրամադրել էր մեքենա գողացող խումբը: Բեռնախցում՝ լիքը արկղեր: Էշերի՛ մեկը. մի կողմից՝ քեզ զենքերի հավաքածու ու պայթուցիկներ սարքելու նյութեր են ուղարկում, մյուս կողմից՝ ասում են, որ դեռ սպասես, չգործես: Նրանք պատրաստվում էին, գիշերվա մթից օգտվելով, բեռը սպորտային պայուսակների մեջ դնել ու պատշաճ զգուշավորությամբ բարձրացնել բնակարան, ուսումնասիրել ու որոշել, թե ո՛ր մասը թաքստոց տանեն, որը՝ չէ:

Պետք չէր ժամանակ կորցնել: Խոշե Մարին Չոպոյին ոտքերից քաշեց՝ նրան հեռացնելով փսխածի վրայից: Այլ կարգի գարշանք էր: Ama-ն այս դեպքերում կիմանար անելիքը: Սրբիչով մի քիչ մաքրեց նրան: Դուրս եկավ աստիճանավանդակ ու սեղմեց վերելակի կոճակը: Հարևաննե՞րը: Իրենց տներում էին: Նրանց քիչ էին տեսնում: Ինչ-որ տեղից հեռուստացույցի ձայն էր լսվում: Առանց այս ու այն կողմ նայելու՝ ընկերոջը պիջակի պես գցեց ուսին: Դիտանցքից նայելով՝ համոզվեց, որ ոչ ոք վերելակով չէր բարձրացել: Չոպոյին ուսին հենած՝ դուրս եկավ, իջավ մինչև շքամուտք, ու երբ Պաչոն նրան նշաններով ցույց տվեց, որ փողոցը ազատ է, տառապող, տնքացող տղային արագ իջեցրեց մեքենայի հետևի նստարանին: Ինքը առջևը նստեց ու հրամայեց շարժվել:

— Ո՞ւր ենք գնում:

— Ուղիղ գնա՛: Կասեմ:

Չոպոյին անհասկանալի մի դիրքով՝ նստա՞ծ, կուչ եկա՞ծ, թողեցին Օնդառետայի այգու նստարանին՝ Իգուելդո բարձրացող մայրուղու մոտ: Պաչոն վախենում էր ընկերոջ համար:

— Սառցակալելու է:

Խոշե Մարին լռում էր մինչև այն պահը, երբ, հատելով Մատիա փողոցը, մի հեռախոսախցիկ նկատեց:

— Կանգնի՛ր: Ես այստեղ կիջնեմ: Դու գնա՛ տուն:

Նախ մտավ մոտակա բար: Սուրիտո խմեց, թերթեց հեռախոսագիրքը: Հետո հեռախոսախցիկից զանգեց Կարմիր խաչ, որի շենքի ճակատը երևում էր փողոցի մյուս կողմից: Շատ չխորանալով՝ ասաց.

— Լսե՛ք, այստեղ մի տղա ուժեղ ցավեր ունի:

Նկարագրեց տեղը ու երբ համոզվեց, որ նրան հասկացել են, կախեց լսափողը: Մեկ րոպե էլ չէր անցել՝ նրա կողքով շտապօգնության մեքենա անցավ. ենթադրվում է, որ նշված ուղղությամբ:

Երկու օր անցավ, երկու երկարուձիգ օր. Չոպոյից նորություն չկար: Մեկ էլ զանգը տվեցին: Վեր թռան: Նա՞ է: Ներքևից նրա ձայնը լսեցին. բա՛ց արեք: Պարզվեց, որ հիվանդանոց հասնելու օրը՝ գիշերը, կարողացել էր մեզի հետ դուրս մղել երիկամի քարը: Հետո նրան, համենայնդեպս, քսանչորս ժամ պահել էին հիվանդանոցում՝ հսկողության տակ: Ընկերներից ներողություն խնդրեց պատճառած անհանգստության համար ու շնորհակալություն հայտնեց ցուցաբերած օգնության համար: Հարցրեց՝ ինչ կարծիքի են, եթե առիթը նշեն: Ինչպե՞ս: Առաջարկեց մի շքեղ ընթրիք պատրաստել: Կալմարներ՝ իրենց հյութի մեջ, ձողաձուկ՝ թանձրուկով. ինչ ցանկանան: Խոշե Մարին, թե.

— Ինձ իմ amatxo-ին ես հիշեցնում: Ընթրիքի համար միշտ ձուկ է պատրաստում:

Չոպոն ասաց, որ կգնի մթերքն ու բոլոր հարցերը կլուծի: Պետք է միայն քաղցել: Շատ լավ, տղա՛: Չոպոն իր սենյակ գնաց: Այնտեղ հատակին մնացել էին չորացած փսխուկն ու կեղտոտ սրբիչը:

91

Ցանկը

Անուններով ու հասցեներով ցանկը ստացան սովորական խողովակով: Տարածքի գործարարներ, ռեստորանների ու խանութների տերեր, մի խոսքով, ունևոր մարդիկ, որոնք բաժին չէին հանել կազմակերպությանը: Ընդհանուր առմամբ՝ ինը հոգի: Ցանկի հետ չկար հանձնարարական, բայց դրա կարիքն էլ չկար: Մի անուն գրավեց Պաչոյի ուշադրությունը:

— Այստեղ մեկը քո ավանից է:

— Նրան Չատո ենք անվանում: Գետի ափին բեռնատարների ընկերություն ունի՝ հորս հողամասից մի քիչ վերև: Չգիտեի, որ նա չվճարող է: Համա՛ սրիկան է:

Չոպոյի կարծիքով, քանի որ թիրախը ծանոթ է, ու նրան գտնելը հեշտ է, գուցե հենց նրանից էլ սկսե՞նք: Պետք է իմանանք՝ ո՛ր ժամերին որտեղ է լինում, նրան ուղեկցո՞ւմ են, թե՞ ոչ և այլն:

Պաչոն, առիթից օգտվելով, հեգնեց.

— Մեկ է, Խոշե Մարիին դուր չի գալիս գաղափարը: Քանի որ ավանի իր հարևանն է. գուցե դա ինչ-որ բան է փոխում:

— Ի՞նչ պիտի փոխի: Դու աննորմա՞լ ես: Ինձ համար ի՞նչ նշանակություն ունի՝ թշնամին որտեղացի է: Այնպես ես ասում, ոնց որ իմ ազգականը լիներ: Եթե պետք է նրան վերացնել, վերացնում ենք: Մենք հրահանգները ո՛չ մեկնաբանում են, ո՛չ էլ քննարկում:

Պայմանավորվեցին, որ թիրախին հետևելու գործին Խոշե Մարին չի մասնակցի, որպեսզի վտանգի տակ չդնի ո՛չ իրեն, ո՛չ էլ խմբին: Առաջին երեկոն, իհարկե, ընկերների հետ գնաց ավան Սեատ-127-ով: Մեքենայից չիջնելով՝ նրանց բացատրություններ էր տալիս: Սա է նրա ընկերությունը: Նա այստեղ է ապրում՝ առաջին հարկում: Այնտեղ՝ «Առանո» խորտկարանում, պետք է հարցնես Պաչիին: Հետո սահմանափակվեց իրենց talde-ի գործողությունները Սան Սեբաստիանի բնակարանից վերահսկելով: Որպեսզի կասկածի առիթ չտա, ասաց.

— Վերջում, եթե որոշենք հարվածել, կգամ:

Իր սովորական շրջահայացությամբ՝ Պաչին՝ երբեք ոչ գլխավոր դերակատարը, երբեք բերման չենթարկվածը (ու դա էլ այն պարագայում, որ տեղի abertzale-ների հավաքավայրի տերն էր), երրորդ անձի միջոցով նրանց մնալու տեղ ապահովեց: Հետո բացատրեց, որ ինքը գործին չի խառնվելու ու խնդրեց, որ չգան «Առանո»: Խոշե Մարին, հասկանալով նրան, ասաց.

— Իրավացի է: Այնտեղ բոլորն իրար ճանաչում են: Դրսից եկած երկու հոգին միանգամից ուշադրություն կգրավեն: Մեկը թող մնա, հերիք է:

Պաչոն մեկ շաբաթով հաստատվեց ավանում: Չոպոյին հանձնարարվեց ամեն օր մի բնակարանից մյուսը գնալ՝ փոխանցելով տեղեկություններ, երկտողեր, հաղորդագրություններ, սակայն նա միշտ Սան Սեբաստիանի բնակարանում էր գիշերում, որտեղ նաև հաշվետվություններ էր գրում, մի բան, որի համար Խոշե Մարին սրտանց շնորհակալ էր նրան, քանի որ գրելու հետ գլուխ չուներ:

Պաչոն յոթ օրում բավականաչափ տեղեկություն հավաքեց: Նույնիսկ մի բան էլ ավելին, ասում էր: Ու ընկերներին ներկայացրեց իր պրպտումների արդյունքը:

— Պարզվեց, որ ինձ սենյակ տրամադրողը մեր թիրախի ընկերությունում է աշխատում:

— Անունն ի՞նչ է:

— Անդոնի:

— Ճանաչում եմ: LAB սինդիկատի պատուհասներից է:

— Զզվելի կապիտալիստի կյանքի մանրամասներն իմացա իր օգնությամբ:

Խոշե Մարին համաձայն չէր.

— Իմ կարծիքով՝ զինված պայքարը մարդուն սիրել-չսիրելու խնդիր չէ: Այսինքն՝ մենք չենք վերացնում նրանց, որոնց չենք հավանում: Որովհետև եթե այդպես լիներ, ես հենց հիմա պիտի մի չորս անգամ կրակեի Անդոնիի վրա: Ինչո՞ւ: Որովհետև նա շունշանորդու մեկն է: Դա ժառանգական է: Նրա հորեղբայրը՝ Սոտերոն, այն մարդկանցից էր, որոնք Ֆրանկոյի ժամանակ պատշգամբից իսպանական դրոշ էին կախում, իսկ հիմա Herri Batasuna-ի հետ է: Ես նման տպերին չեմ վստահում, ի՞նչ ասեմ: Չատոն՝ որպես մարդ, ինձ ավելի է դուր գալիս, բայց պարզ է, որ պետք է նրա դեմ լինեմ, քանի որ դա անհրաժեշտ է Euskal Herria-ի ազատագրման համար:

— Լա՛վ, մի՛ ջղայնացիր, թող Պաչոն շարունակի:

— Ուրեմն, ինչ էի ուզում ասել: Գործարարը հաճախ է փոխում իր ճանապարհը, բայց մեծ ընտրություն չունի: Մեքենայով է տեղաշարժվում: Անդոնին, որը նրա մասին լիքը բան պատմեց ինձ, նույնպես հաստատեց, որ նրա աշխատանքային ժամերը ֆիքսված չեն: Զգացվում է, որ ղեկավար է. սկսում ու ավարտում է, երբ ուզի: Բայց ուշադրությո՛ւն: Տան շքամուտքից դուրս գալով՝ նախ և առաջ ոտքով գնում է դեպի ավտոտնակ, որը իր փողոցի հետ խաչվող փողոցի վրա է:

— Պատմածդ ինձ համար նորություն չէր: Երեխա ժամանակ շատ եմ նրանց տանը եղել:

— Այդ քառասուն-հիսուն մետրի վրա՝ շքամուտքի ու ավտոտնակի արանքում, հեշտ կլինի նրան բռնացնել թե՛ գործի գնալիս, թե՛ վերադառնալիս: Հատկապես ավտոտնակի ու տան անկյան արանքում, իմ կարծիքով, չտեսնված տեղ է ekintza-ի համար: Փողոցը նեղ է, բավականաչափ մութ, ու այնտեղ համարյա մարդ չի անցնում առանց մեքենայի: Նրան առևանգելը հեշտից հեշտ է լինելու:

— Հա՛, բայց ենթակառուցվածք չունենք: Նրան որտե՞ղ ենք պահելու: Հետո, առանց տնօրինության թույլտվության, նման բան չենք կարող անել: Այնպես որ, առևանգելու մասին չենք խոսում: Չատոն փակ աչքերով, միայն ձայնիցս կճանաչի ինձ: Մոռացի՛ր:

— Ես չասացի, որ նրան առևանգելու ենք, այլ որ հեշտ կլինի դա անելը:

— Ուրեմն, ավելի հստակ արտահայտվիր:

— Երբեք բար չի գնում: Դա Անդոնին էլ էր ասել ինձ: Առաջ գնում էր: Հիմա՝ ո՛չ, որովհետև ավանի abertzale-ների խումբը նրան խեղճացրել է: Միշտ լուսադեմին է արթնանում: Ցերեկվա մեկի-մեկն անց կեսի մոտ սովորաբար գնում է տուն՝ ճաշելու: Իմ այնտեղ եղած ժամանակ միայն մի անգամ չեկավ: Անդոնին ասում է, որ երբեմն գրասենյակում է ճաշում: Գործի վերադառնալիս տնից մոտավորապես երեքն անց կես է դուրս գալիս՝ մի րոպեի տարբերությամբ: Միշտ ոտքով է գնում ավտոտնակ ու այնտեղից, իր կարմիր Ռենո-21-ը քշելով, դուրս է գալիս: Օրվա վերջին ekintza անելը դժվար կլինի: Երեկ չէ առաջին օրը գիշերվա տասնմեկն էր արդեն, բայց նա դեռ չէր վերադարձել: Ես էլ գնացի:

— Թիկնապահնե՞ր:

— Ո՛չ: Ձեզ ասում եմ՝ այս մեկը խաղ ու պար է լինելու:

Խոշե Մարիի համար ամեն ինչ այնքան էլ պարզ չէր, գլուխն էր տարուբերում, տատանվում էր. սկզբում պիտի սա արվի, ճիշտ կլիներ, որ... Իր ընկերները հեշտությամբ հակադարձում էին նրա բոլոր փաստարկներին: Ասում էին, որ խաղ ու պար է լինելու. կազմակերպական մասը շատ չէ, զոհը փախչելու տեղ չունի, մի ավանում է, որտեղ լապտերներն էլ abertzale են, դեպքի վայրից հեշտությամբ կարելի է հեռանալ: Էլ ի՞նչ է ուզում: Բայց Խոշե Մարին չէր համոզվում: Համառորեն շարունակում էր իր կասկածներն ու բայց-երը ներկայացնել: Նրանք էլ, թե՝ Պաչին արդեն վաղուց է հող նախապատրաստել սպառնագրերի ու հետապնդման արշավով, այնպես որ.

— Այս պահի դրությամբ ոչ ոք մատը մատին չի տա այդ գործարարի համար:

— Գրո՜ղը տանի, չեմ ուզում, որ Պաչին, Անդոնին ու մնացածը մտածեն, որ իրենք են ekintza-ի քավորները: Մենք նրանց որսորդական շները չենք: Ո՞վ կարող է մեզ երաշխավորել, որ հետո չեն գնա ու ավանով մեկ ավելապակաս չեն խոսի սրա մասին, կամ էլ որ դրանց մեջ մատնիչ չկա: Համագործակցե՞լ են մեզ հետ: Շա՛տ լավ: Բայց թե երբ, որտեղ ու ինչպես, մենք ենք որոշողը այստե՛ղ՝ մեր ներսում:

— Բայց չէ՞ որ հենց դրա համար ենք հարվածը որոշ ժամանակ անց հասցնելու:

— Հենց դա էի ասում, որ այնպես, ինչպես դու ես ներկայացնում, ստացվում է, որ մենք շատ ենք շտապում: Ու որքան քիչ մարդ ներգրավված լինի, այդքան ավելի լավ:

Այդպես էլ արեցին ու այդ ընթացքում՝ գարնան վերջ, ամբողջ ամառն ու աշնան մի մասը, իրենց ցանկի մյուս մարդկանցով զբաղվեցին: Դրանցից մեկը Լասարտեում մետաղագործական արհեստանոց ուներ: Քանի որ նկատել էին, որ թիրախը՝ վաթսուն տարեկան գիրուկ մի մարդ, սովորաբար մեքենան կայանում է արհեստանոցին հարող բաց տարածքում, մտածեցին. գուցե սրա մեքենայի տակ կպչուն ակա՞ն դնենք: Հիմնականում՝ փորձարկելու համար, քանի որ զենքերի դասընթացից դուրս ոչ մի հատ չէին սարքել, ու դրանք փորձարկելու ժամանակն էր: Այնպես որ, մյուս օրը Խոշե Մարին գնաց այնտեղ ու ականը մի ակնթարթում ամրացրեց մեքենայի տակ: Հետո Պաչոյի հետ գնաց մոտակա սիդրանոց՝ երեկոն անցկացնելու ու պայթյունին սպասելու: Գրազ եկան՝ պարտվողը պիտի վճարեր պատվիրած ուտելիքի համար:

— Եթե ութից առաջ պայթի, ես եմ հաղթել:

Ո՛չ պայթյուն եղավ, ո՛չ էլ որոտում. հաղթող չեղավ: Գիշերը դուրս եկան սիդրանոցից: Բայց ի՜նչ տարօրինակ է: Գուցե արհեստանոցի տերը ոտքո՞վ է տուն գնացել կամ հեծոյո՞վ, կամ էլ եկել են իր հետևից, կամ էլ՝ ի՞նչ իմանամ: Հասնելով բնակարան՝ Չոպոյին հարցրին՝ բան լսե՞լ է, թե՞ ոչ, բայց նա գաղափար իսկ չուներ: Հեռուստացույցը միացրին, հետո՝ ռադիոն, վերջում էլ՝ սկաները՝ ոստիկանության հաղորդագրությունը լսելու համար: Բան չկար: Հաջորդ օրը րոպե առ րոպե ակնկալում էին, որ նորություն կլսեն: Ջուր սպասումներ: Եվս քսանչորս ժամ համբերեցին, նախքան նորից այն տեղը գնալը: Այս անգամ հեծանիվներով գնացին: Չաղի մեքենան բաց տարածքում չէր: Գուցե արհեստանոցի կո՞ղքն էր կամ հե՞տևը: Այնտեղ էլ չկար: Եզրակացություն. ականը չէր գործել:

Խոշե Մարին վատ տրամադրությամբ հիշում էր հրահանգչի՝ հաճախ ասած խոսքը.

— Ոչ թե ականը չի գործում, այլ մենք:

Ու միասին ստուգեցին ական պատրաստելու բոլոր փուլերը: Ջենքի դասընթացի ժամանակ պնդում էին, որ անպայման նախապես փորձարկեն: Արել էին: Ի՞նչ զահրումար կարող էր լինել:

Պաչոն, թե.

— Գիտե՞ս՝ ինչ եմ մտածում: Գուցե չաղը հոտն առել էր ու txakurra-ներին էր կանչե՞լ:

— Չեմ կարծում: Եթե TEDAX*-ը միջամտած լիներ, աղմուկը մամուլին կհասներ: Եթե ինձ հարցնես, ականը պոկվել, մի առվի մեջ է ընկել:

Փուշը թողնելու համար վճռեցին չաղի արհեստանոցը պայթեցնել: Քարը քարին չենք թողնի, *եսքոտիրոջ*: Խոշե Մարին ու Պաչոն մի առավոտ գնացին՝ տարածքն ուսումնասիրելու ու որոշելու, թե որտեղ է պետք այն տեղադրել՝ մեծ վնաս պատճառելու համար, բայց մետաղագործական արհեստանոցի փոխարեն դատարկ շինություն էր: Նույնիսկ ցուցանակն էին հանել: Հասկացան, որ տերն ահաբեկվել էր ու կամ փակել էր արհեստանոցը, կամ ավելի ապահով տեղ էր տարել: Արդեն պատրաստի ականը՝ վեց կիլոգրամ ամոնալով ու ժամացույցով, որոշեցին օգտագործել

* TEDAX (հապավում, իսպ.՝ Técnico Especialista en Desactivación de Artefactos Explosivos), պայթուցիկ սարքերի վնասազերծման մասնագետ:

ցանկից մեկ ուրիշի՝ որևէ բարի տիրոջ դեմ: Լրատվամիջոցները ընդգծեցին հասցված ահռելի վնասը: Նույնիսկ մի վիրավոր էլ չէր մնացել:

Ամենասիրելի զավակը

Նրան հայտնեցին, որ այցելու ունի: Նորից ապակու հետևում մոր աչքերը տեսավ: Դրանց մեջ միշտ սկզբում անորոշության ու վախի արտահայտություն է լինում, մինչև տեսնում է, որ տղան գալիս է՝ խոշոր ու տեսքից առողջ, թեև ճաղատ: Այդ ժամանակ նրա աչքերը մեղմանում են, դառնում են պարզ, ջերմ, մայրական, ու թվում է, որ արդեն ծերացող դիմագծերը դեռ պահպանում են երիտասարդության մի երանգ:

Aita-ն քիչ է գալիս բանտ՝ տարին մեկ կամ երկու անգամ: Մայրը դա վերագրում է ավտոբուսով երկար ճամփորդության դժվարություններին, ասում է՝ հայրդ է՛լ առաջվանը չէ, ու զայրացած փնովում է կառավարությանը (Միրենը երբեք չի ասում Իսպանիա)՝ բանտարկյալներին երկրով մեկ ցրելու քաղաքականության համար: Բայց Խոշե Մարին գիտի, որ իրականում մայրն է նախընտրում, որ հայրը չգա: Բանն այն է, որ հայրը հուզվում է: Ու ամեն անգամ արտասվում է. տղա՛ս, այդքա՜ն տարի. ես մեռնելու եմ՝ քեզ չտեսնելով ազատության մեջ: Ու մոր կարծիքով՝ այդ ձևով հայրը տղային ընկճում է:

Բացի այդ՝ ճամփորդության ընթացքում անընդհատ վիճում են դատարկ բաների պատճառով: Դեռ նախքան ճամփա ընկնելը՝ տանը, ասում է, որ լավ չի սափրվել, կամ ականջների միջից մազեր են դուրս պրծնում, հետո էլ ավտոբուսի մեջ նրան զգուշացնում, նախատում ու կշտամբում է մյուս բանտարկյալների հարազատների ներկայությամբ: Այդ ձևով Խոշիանի ինքնասիրությանն է կպչում, նա ավելի ու ավելի է վիրավորվում ու ի վերջո հանդիմանում է՝ անճարակ, ջղային, կոպիտ: Հետդարձին՝ նույնը: Այնպես որ, ավելի լավ է՝ տանը մնա:

Խոշե Մարին ծանոթ գանգատներն էր ականկալում. ճամփորդության անհարմարությունները, բանտարկյալներին ցրելու անմարդկայնությունը, Անդալուսիայի շոգը: Ինչո՞ւ պետք է պատժվեն բանտարկյալների ազգականները: Ու հետո էլ՝ ավանի առօրյա բամբասանքները, վերջերս մահացածները, Արանչայի վերականգնման դանդաղ ընթացքը:

Բայց այսօր սովորականի պես չէր: Բանն այն է (զգույշ խոսենք), որ

կարծում են, որ իրենց հետևում են: Բասկերեն են խոսում, բայց հաստատ բանտապետերը նրանց ձայնագրում են ու թարգմանիչներ էլ ունեն: Այնպես որ, քաղաքական նուրբ թեմաների չեն անդրադառնում կամ, եթե ուրիշ ձև չունեն, խոսում են շշուկով, շրջասույթներով, իրար գլխի գցելով ու կիսատ-պռատ բառերով: Այսքան տարվա ընթացքում մասնագիտացել են նման ձևով հաղորդակցվելու մեջ: Միմյանց հասկանում են, ընկալում, հերիք է՝ իրար աչքերի մեջ նայեն, որ կռահեն դիմացինի մտքերը: Ու մայրը, որ ամբողջ կյանքում այդքան զուսպ էր զգացմունքներ արտահայտելու հարցում, նրան մի անգամ անսպասելիորեն հայտնեց ապակու հետևից, որ նա իր ամենասիրելի զավակն է եղել:

Եվ ո՞րն էր այսօրվա նորությունը: Խոսակցության առաջին տասը րոպեից հետո Միրենն առեղծվածային տոնով շշնջաց: Ի՞նչ: Որ մի խնդիր կա, որի պատճառով գիշերները չի քնում: Տեսնելով նրա դեմքի մտահոգ արտահայտությունը՝ Խոշե Մարին հասկացավ, որ խոսքը այն թեմաներից մեկին է վերաբերում, որի շուրջ չարժեր բացեիբաց խոսել զրուցասենյակում: Aita-ի՞ մասին է: Արանչայի՞: Միրենը ժխտական նշան արեց: Գժի՞ մասին է: Միրենը գլխով արեց: Նորի՞ց: Միրենն այս անգամ էլ գլխով արեց՝ ափը մոտեցնելով ապակուն ու նրան ցույց տալով վրան խիտ-խիտ գրած տողերը. «Ուզում է իմանալ՝ դո՞ւ ես կրակել իր ամուսնու վրա»:

— Նրան գրողի ծոցն ուղարկի՛ր:

— Պոկ չեկող մեկն է:

— Ինչո՞ւ ես թույլ տալիս, որ քեզ մոտենա:

— Ինձ հետ չի խոսել: Վա՜յ, կհամարձակվե՞ր: Բայց aita-ն, դե՛ գիտես: Նա թույլ է տվել, որ այդ կինը, նրան հողամասում բռնեցնելով, հետը խոսի: Հետո էլ Արանչան նրան հանդիպելիս բաներ է գրում iPad-ով: Ես Սելեստեին ասել եմ՝ եթե տեսնի այդ տիկնոջը, ուրիշ կողմով գնա: Բայց, տղա՛ս, ոչ ոք ինձ չի լսում:

Քողարկելու համար հիմնականը՝ խոսակցության մեջ անկարևոր մի թեմա մտցրեց: Հարցրեց՝ վերջերս լա՞վ են կերակրում:

— Ամեն ինչի մեջ չափից շատ աղ են լցնում:

Միրենը մյուս ափը մոտեցրեց ապակուն. «Նրան ի՞նչ պատասխանենք»:

— Եթե բան չպատասխանենք, մենք, իրենից վարակվելով, խելքներս կթռցնենք: Ասում եմ քեզ՝ արդեն չեմ քնում:

— Ավանում մի երկու տղա չի՞ գտնվի, որ քեզ ազատեն էդ գլուխ ցավեցնողից: Իմ ժամանակ նման բաներ չէին հանդուրժի:

— Ավանը հիմա առաջվանը չէ: Հիմա ո՛չ սպառնագրեր կան, ո՛չ էլ պաստառներ: Բոլոր այդ բաները մի քիչ սատկած վիճակում են:

— Գրո՛ղը տանի, բայց գոնե մեկը հո կգտնվի: Խոսի՛ր, գիտես՝ ում հետ:

— Ինչ խորտկարանը փակել է, նրան համարյա չենք տեսնում: Կարծես ոչ ոք ոչ մի բան չի ուզում իմանալ: Հիմա միայն խաղաղության գործընթացի մասին են խոսում, ու որ պետք է ներողություն խնդրել զոհերից: Ներողությունը աչքներին է երևում: Մենք զոհ չե՞նք: Հետզհետե ավելի ենք քչանում, մեզ մենակ են թողել: Ու եթե բերանդ բացես, կգան ու կտանեն ահաբեկչության քարոզչության մեղադրանքով:

Մահճակալին մեկնված՝ Խոշե Մարին նայում էր պատուհանի քառակուսու մեջ երևացող երկնքի մի կտորին: Օդանավի սպիտակ ծխի հետագծով կտրած մայրամուտային կապույտ երկնքին: Զգում եմ, որ խորտակվում եմ: Ստամոքսը այրվում էր: Ասում են, որ բանտարկյալներին հնազանդեցնելու համար ուտելիքին ինչ-որ փոշի են խառնում: Իսկ նրան, որ անսասան ETA-ացու համբավ ուներ, հաստատ կրկնակի են դնում: Տեսնես այդպե՞ս է, թե՞ ավելի վատ մի բան: Սարսափելի հեռանկար է, այլևս երբեք ավանը չտեսնելով, այստեղ քաղցկեղից մեռնելը: Շատ էր մտածում այդ մասին: Նման դեպքեր եղել էին:

Կապույտ երկնքի փոխարեն հիմա պատուհանում տեսնում էր մոր ձեռքերն ու դրանց վրա գրվածը: Վշտացած այրիների պատմություններով ինձ չեք հուզի: Եթե ուզում են իրենց պատմության թելը կծկել, թող գնան, պահոցները քրքրեն: Եղածը եղած է: Զինված պայքարն ավարտվե՞լ է: Լա՛վ: Gora ETA՝ ընդմիշտ, ու հիմա էլ եկե՛ք դեպի ապագան նայենք:

Հանկարծ, իր կամքին հակառակ, սկսեց բավական ուժեղ անձրևել: Որտե՞ղ: Իր հուշերում: Կամաց-կամաց խորտակվում էր: Նա՝ անսասանը՝ հացադուլներն առաջինը սկսողն ու վերջինն ավարտողը, նա, որ ձայն էր վերցնում ժողովներում՝ քամահրելով հասարակության մեջ վերաինտեգրվելու խայծը կուլ տված բանտարկյալներին:

Բայց մարդը կարող է նավ լինել: Մարդը կարող է պողպատյա մարմնով մի նավ լինել: Իսկ հետո տարիներ են անցնում, ու ճաքեր են առաջանում: Միայնությամբ վարակված կարոտախտի ջուրն է ներթափանցում դրանց միջով ու սխալված լինելու և սխալն ուղղել չկարողանալու գիտակցության ջուրը: Ա՛խ, այդ քայքայիչ ջուրը. վախից, ամոթից, ընկերների մոտ խայտառակ չլինելու պատճառով չասել, որ զղջում ես: Եվ այդպես է լինում,

որ մարդը՝ արդեն ճաքեր ունեցող նավը, ամեն վայրկյան կարող է խորտակվել:

Բանտախցի պատուհանը մեկից գորշ է դառնում: Նախորդ հետմիջօրեից անձրևը մի վայրկյան էլ չի կտրվել: Դրա առավելությունն այն է, որ վատ եղանակը մարդկանց սրբում է փողոցներից: Ոչ ոք չի ուզում կանգ առնել՝ զրուցելու, բոլորը շտապում են հասնել, ուր որ պիտի գնային: Փողոցի բերանից ոչ հեռու հեռախոսախցիկ կար: Իսկապես որ, այնպիսի տպավորություն էր, որ խցիկը հատուկ են այդ տեղում դրել՝ ekintza-ն հեշտացնելու համար: Այսի՞նքն: Դե՛, մի կողմից՝ մեջը մտնողը պատսպարվում էր անձրևից, մյուս կողմից էլ՝ հեռախոսախցիկը անգերազանցելի էր թե՛ որպես թաքստոց և թե՛ որպես դիտակետ: Իսկ եթե որևէ տեղացի մոտենա՞ր: Այդ դեպքում նա կարող էր ձևացնել, թե հեռախոսով է խոսում: Թեթևակի գոլորշիապատ ապակիները նույնպես նպաստում էին անճանաչելի մնալուն: Գլխին քաշած կնգուղի մասին էլ չասեմ: Ավանից որևէ մեկը ստիպված կլիներ գլուխը հեռախոսախցիկը մտցնել՝ հաստատելու համար, որ մեջը կանգնած մարդը հենց Խոշե Մարին է:

Տեսավ փողոցի սկզբում հայտնված կարմիր Ռենո-21-ը: Սիրտը խփեց: Նյարդե՞րն էին: Այո՛, մի քիչ, բայց առաջվա պես չէր, երբ ոտքերն էին դողում: Ահաբեկչության փորձը նրան սովորեցրել էր հանգստություն պահպանել: Դրա մասին խոսել էին Պաչոյի հետ, ու նա էլ էր խոստովանում, որ գործողությունից առաջ ամեն անգամ իր հետ նույն բանն էր կատարվում:

— Նորմալ է: Մենք հո հոգեկան հիվանդ չե՞նք:

Բնազդաբար բաճկոնի գրպանում շոշափեց «Բրաունինգը»: Ամենակարևորը՝ չվրիպել: Մեքենայի մեջ աղոտ նշմարեց Չատոյի կիսադեմը: Այդ մեծ ականջներին ամենաշատը երեք-չորս րոպե կյանք էր մնացել: Նպաստող մի հանգամանք. թիրախը մենակ էր:

Ըստ Պաչոյի, երբ հետևում էր Չատոյին, երբեք չէր տեսել որևէ մեկին, որ գնալ-գալու ժամանակ ուղեկցեր նրան:

Չատոն անկյունից թեքվեց, ու Խոշե Մարին, հայացքը վայրկենասլաքից չկտրելով, նախքան հեռախոսախցիկից դուրս գալը, կես րոպե սպասեց: Դա կյանքի այն լրացուցիչ ժամանակն էր, որ նա տրամադրում էր Չատոյին, որպեսզի զոհը առանց տագնապի բացի ավտոտնակի դուռը: Սլաքը կարծես սովորականից դանդաղ էր շարժվում: Դե՛, շո՛ւտ արա, շո՛ւտ: Ժամանակին հասավ անկյուն, տեսավ Չատոյին մեքենայով գարաժ

մտնելիս: Ծրագիրը. գարաժից դուրս գալու պահին նրան ընդառաջ կգնա ու կսպանի: Մեկ փամփուշտը քիչ էր: Ավելի լավ է ապահով լինել. մեկ էլ տեսար՝ զոհը նրան ճանաչի ու ողջ մնա: Հետո չդանդաղելով, բայց և խելակորույս չվազելով՝ հարևանների ուշադրությունը չգրավելու համար, պիտի հասներ այն տեղը, որտեղ Պաչոն մեքենայով սպասելու էր իրեն:

Չատոն դուրս չէր գալիս փողոց: Ինչի՞ն էր սպասում: Գուցե մտածում էր, որ մի քանի րոպեից անձրևը դադարելու է: Հիմա թրջվողը Խոշե Մարին էր: Շենքի անկյունում կպավ պատին, որպեսզի գլխին քիչ ջուր թափվի: Գիտեր, որ գարաժում ներքին դուռ չկար, այնպես որ վաղ թե ուշ Չատոն պետք է փողոց դուրս գար՝ տուն գնալու: Եվ, իրոք, դուրս եկավ՝ առանց հովանոցի: Ահավասիկ, մի տասը քայլի վրա էր՝ թոքերը լցնելով իր կյանքում վերջին թթվածնի չափաբաժնով: Կիսադեմից երևում էր, որ շուրթերը թեթևակի շարժվում-դողում էին, ասես բանալին պտտեցնելու ընթացքում ինքն իր հետ խոսեր կամ կամացուկ երգեր: Հենց սկսեց քայլել, ինձ տեսավ: Նա, «Բրաունինգը» գրպանում բռնած, ու Չատոն, այս ի՞նչ է անում, վա՛յ քո... փողոցն է անցնում ու ուղիղ վրաս է գալիս: Այս դրվագը սցենարով նախատեսված չէր:

— Ա՛յ տղա, Խոշե՛ Մարի: Վերադարձե՛լ ես: Ուրախ եմ:

Այդ աչքերը, այդ ահռելի ականջները, այդ բարեսիրտ արտահայտությունը: Իր հոր ընկերը, որն իրեն երեխա ժամանակ պաղպաղակ էր առնում: Եկեղեցու զանգը ժամը մեկը խփեց: Այդ ծանոթ ձայնը՝ մետաղական, վճռական, նրա ականջին «ոչ» բառի նման հնչեց: Միմյանց առջև մնացին պապանձված: Մի՛ արա: Նրան մի՛ սպանիր: Ակնհայտ էր, որ Չատոն իր բարյացակամ բառերին պատասխան էր սպասում: Ես ETA-ի անդամ եմ և եկել եմ՝ քեզ սպանելու: Բայց իրականում բան չասաց: Չստացվեց ասել: Զանգակը վերևից նրան «ոչ» էր հնչեցրել: Ա՛խր, գրո՛ղը տանի, չէ՞ որ Չատոն էր: Նրա աչքերը, ականջները, նրա ժպիտը: Ու Խոշե Մարին շրջվեց ու գնաց. չվազեց, իհարկե, բայց արագ քայլերով հեռացավ:

Նստեց մեքենան ու շրխկոցով փակեց դուռը:

— Հնարավոր չեղավ: Մի հարևան հայտնվեց մեջտեղը: Պոկվի՛ր. գնանք, մի բան ուտենք:

— Քեզ տեսա՞վ:

— Չեմ կարծում:

— Կարող ենք փորձել, երբ աշխատանքի գնա: Ի՞նչ կարծիքի ես:

— Չգիտեմ:

— Վաղուց ոչ մի գործողություն չենք արել:

— Եղա՛վ, ուրեմն դու կմտնես հեռախոսախցիկ, ես քեզ մեքենայի մեջ կսպասեմ: Այսօր արդեն բավականաչափ թրջվել եմ:

— Իմ կարծիքով...

Միրենին ասացին՝ ժամանակն արդեն սպառվում է, տիկի՛ն: Միրենն իր հետ խոսող ծառայողին հայացքի չարժանացրեց: Աթոռից վեր կենալով՝ սկսեց հրաժեշտ տալ իր զավակին:

— Լա՛վ, maitia, ոգո՛վ, դե՛, դու հասկանում ես, չէ՞: Մեկ ամսից կգամ կամ էլ ավելի շուտ, եթե քույրդ չվատանա:

— Գժի հետ չխոսես, ama: Խոստացի՛ր ինձ: Ոչ մի բառ: Եթե նրան տեղեկություններ են պետք, թող դատական արձանագրությունները նայի:

— Որոշել է մեր կյանքի մեջ քիթը խոթել: Պոկ չի գալիս:

— Դու ուշադրություն մի՛ դարձրու: Շուտով վազ կանցնի:

Փակբերան մարդկանց երկիրը

Այնպես ստացվեց, որ Ռամունչոն նորությունը տանն իմացավ ռադիոյով, փոխարենը Գորկան, որը ռադիոտանն էր, սկզբում շատ զբաղված մի հրատարակչի, այնուհետև Բիլբաոյից մի գրքավաճառի հետ հարցազրույցներ ձայնագրելով՝ գաղափար էլ չուներ տեղի ունեցածի մասին:

Սովորական աշխատանքային օրվա հետմիջօրե էր: Կողքի գրասենյակում իր երկու գործընկերներն էին զրուցում: Նրանցից մեկը, որ նոր էր ներս մտել, ի թիվս այլ բաների՝ ասաց, որ անձրևը չի կտրվում, էլի ահաբեկչություն է եղել, Ռամունչոն ե՞րբ է գալու: Գորկան այդ բառերին ուշադրություն չդարձրեց:

Ի՞նչ կարևոր էր՝ անձրևո՞ւմ է, թե՞ ոչ, եթե աշխատանքային օրը երկար էր շարունակվելու: Երկրորդ նախադասությունը. այնքան սովոր էր ETA-ի բռնություններին, որ դրանցից ևս մեկը դժվար թե զարմացներ նրան: Տարիների ընթացքում այդ նորությունների հանդեպ պաշտպանիչ «շերտ» էր ձևավորել: Չէ՞ որ միայն ես չեմ այդպես վարվում: Անշուշտ, հրոսակախմբի սպանությունների հանդեպ անտարբեր չէր, պարզապես դրանք առօրյա էին դարձել, որոնք բթացրել էին ցավի ու վրդովմունքի զգայարանները: Այնպես որ, եթե ահաբեկչությունը չէր հանգեցնում մեծաթիվ զոհերի (ինչպես եղավ Բարսելոնայի «Իպերկորում»*, որն իրոք դառնացրեց իր օրը, կամ երբ զոհվածների մեջ երեխաներ էին լինում), ապա սահմանափակվում էր տեղեկանալով ու իր կարծիքն էլ չէր հայտնում:

Փոխարենը, ամեն անգամ, երբ ականջին հասնում էր որևէ հրոսակախմբի ձերբակալման լուրը, սիրտը սկսում էր արագ խփել ու շտապում էր ստուգել՝ իր եղբայրը դրանց մե՞ջ է: Գորկան շատ էր ուզում, որ Խոշե Մարիին օր առաջ պոկեն զինված պայքարից: Դրա մասին բազմիցս խոստովանել էր Ռամունչոյին (և միայն նրան):

* 1987 թ. հունիսի 19-ին Բարսելոնայում «Հիպերկոր» առևտրային կենտրոնում պայթյունից զոհվեց 21 մարդ, վիրավորվեցին 45-ը: Դրա պատասխանատվությունը ստանձնել էր ETA-ն:

— Նրան բռնելու օրը ես կուրախանամ: Թե՛ իր համար, թե՛ ընտանիքիս: Ծնողներիս կյանքը քարուքանդ է արել:

Ռամունչոն ռադիոտուն հասավ ժամը յոթից առաջ՝ անձրևանոցի ուսագլուխները թաց:

— Լսե՞լ ես այսօրվա ահաբեկչության մասին:

— Բան չեմ իմացել:

— Մի քանի անգամ կրակելով՝ սպանել են ձեր ավանից մի գործարարի:

— Անունն ի՞նչ է:

— Չեմ հիշում, բայց եթե կուզես, հիմա կիմանանք:

— Ո՛չ, պետք չէ, պետք չէ:

Այսինքն՝ ուզում էր ասել, որ ես ինքս կիմանամ, երբ կողքս մարդ չլինի: Թեև որքան էլ անուններ ու դեմքեր էր մտաբերում, չէր կռահում, թե ով կարող է լինել զոհը: Կանխազգում էր, որ իմանալով մարդու ինքնությունը՝ տհաճ, տխո՞ւր անակնկալի է գալու:

Մտածեց գործարանների ու արհեստանոցների տերերի, վաճառականների՝ ավանում բիզնես ունեցող մարդկանց մասին: Մի քանիսին հիշեց, որոնք բոլորը, առանց բացառության, բացի escaldun լինելուց՝ ազգայնական էին համարվում, որոնց ETA-ն կարող էր, իհարկե, մի քիչ ճնշել, ինչպես բազմիցս էր արել, մասնավորապես՝ փող կորզելու համար, բայց ոչ կյանք: Քանի որ հրոսակախումբը պետք է նման դեպքերը քննարկեր PNV*-ի հետ: Այդպես էլ չէր կարողանում կռահել, թե ում մասին է խոսքը, և այս անգամ հետաքրքրասիրությունը սովորականից ավելի էր նրան տանջում: Ինչ-որ պահ, հրաժեշտ չտալով իր գործընկերներին, իջավ անկյունի բար:

Չատոն: Կանգնակի վրա դրված էր հենց նոր մատուցված, առանց կոֆեինի սուրճը: Չփորձեց էլ: Չատոն: Նրա սև-սպիտակ լուսանկարը հեռուստացույցի էկրանին էր: Սարսափելի՛ է, այս ի՛նչ բան է: Ու ռադիոտուն վերադառնալիս վերելակի մեջ կոկորդում ցավ զգաց՝ հիշելով, որ երեխա ժամանակ հենց Չատոն էր իրեն սովորեցրել հեծանիվ քշել: Հայրն էլ էր մասնակցում, բայց Չատոն էր, որ, իրոք, լավ խորհուրդներ էր տալիս ու բացատրում, թե ինչպես է պետք ոտնակները պտտել՝ չընկնելու համար: Ու իր ընկերության կայանատեղիում կողքովս էր վազում՝ մեկ պահելով,

* PNV (Partido Nacionalista Vasco), Բասկերի ազգային կուսակցություն:

մեկ բաց թողնելով Շավիերի հեծանիվի նստարանը՝ պատրաստ ինձ բըռնել ամեն պահ, եթե կտրուկ այս կամ այն կողմ թեքվեի: Գորկային խոստացավ, որ եթե սովորի քշել, հեծանիվ կնվիրի նրան, ու նվիրեց կյանքիս առաջին հեծանիվը ու հիմա մեռած է, նրան սպանել են:

Ռամունչոն, որը տեսավ նրան մտնելիս, դեմքից վայրկենապես կռահեց՝ որտեղից է գալիս ու ինչ է իմացել:

— Այսինքն՝ նրան ճանաչում էիր:

— Երևի սխալվել են: Երևի մեկ ուրիշին պիտի սպաներին, բայց նրան են սպանել:

— Գուցե նրանցից է եղել, որոնք հրաժարվո՞ւմ են հեղափոխական հարկը տալ:

— Նա և հայրս մուսի խաղընկերներ էին, ամբողջ կյանքում ընկերներ են եղել, թեև, ըստ քրոջս պատմածի, վերջերս երևի նրանց միջև մի բան էր պատահել, ու իրար հետ չէին խոսում:

— Քաղաքականության հարց կարող է լինել:

— Չեմ կարծում: Քաղաքականությունից հեռու մարդ էր ու նաև շատ լավ մարդ, որն ուրիշներին աշխատանք էր տալիս, որը ավանի մարդկանց հետ մտերիմ էր ու բնականաբար escaldun էր:

— Դե՛, լավն էր, թե չէ, մի բան արած կլինի: ETA-ն առանց պատճառի չի սպանում: Քեզ ասեմ՝ ես չեմ պաշտպանում զինված պայքարը: Ինձ սխալ չհասկանաս:

— Չգիտեմ, չգիտեմ: Վաղուց այնտեղ չեմ լինում ու որոշ բաներ հաստատ չգիտեմ:

— Կուզե՞ս՝ այս շաբաթվա վերջ գնանք, Ամայային էլ հետներս տանենք:

— Ո՛չ, չարժի:

Ավելի ուշ Ռամունչոն մտավ ձայնագրային ստուդիա՝ Բասկերի երկրի երաժշտական նորությունների ծրագիրը պատրաստելու համար: Գորկան, առիթից օգտվելով, ռադիոտան հեռախոսով զանգեց տուն: Խոշիանը վերցրեց լսափողը:

— Ama-ն տանը չէ: Գնացել է հրապարակ՝ համաներման պահանջով հավաքի:

— Ավանում սպանությունից մի քանի ժամ ա՞նց:

— Նրան ասել եմ, որ պակասի մեկն է: Այն էլ այս տեղատարափ անձրևի տակ: Բայց նա abertzale տենդով է վարակվել: Նրան կանգնեցնել չի լինի:

Խոշիանի ձայնը մարած, վախեցած, անվճռական էր հնչում: Ասաց, որ չի ուզում տնից դուրս գալ: Պատահարի մանրամասները չիմանալո՞ւ համար: Դե՛, անձրևը չի կտրվում: Դե՛, ռևմատիզմը: Ի վերջո, գուցե ավելի անկեղծ ասաց.

— Բացի այդ՝ որևէ մեկին տեսնելու ցանկություն չունեմ:

Նրանց անհավես զրույցը մտավ փակուղի, բայց մի քանի վայրկյան անց Գորկան խախտեց լռությունը.

— Որտե՞ղ են նրան սպանել:

Սպանվածի անունը չտվեց: Թե՛ հայրը, և թե՛ տղան ոչ մի անգամ չարտաբերեցին ո՛չ զոհի անունը, ո՛չ էլ նրա մականունը:

— Իր տան կողքը: Պարզ է, որ նրան սպասում էին:

— Կարծես էլ ընկերություն չէի՞ք անում:

— Որտեղի՞ց գիտես:

— Aita, երբեմն-երբեմն խոսում եմ ավանի ընկերներիս հետ:

— Իսկ Արանչայի՞:

— Նույնպես:

Խոշիանը մահացածին իր ընկերն էր համարում: Ի հեճուկս ամեն ինչի: Այստեղ է՝ սրտիս մեջ: Միմյանց հետ չէին խոսում. Խոշիանը վախենում էր, թե մարդիկ ինչ կասեն, նաև Միրենից, որը խորշում էր Չատոյից: Մըտքովդ չանցնի՛ դրա հետ հանդիպել, ասում էր: Չե՞ս հասկանում, որ կարող են տեսնել քեզ: Երևի Խոշե Մարիի պատճառով էր: Հաստատ: Դա Միրենին խելքահան է արել: Կամ գուցե նաև մսավաճառի տղայի պատճառով էր: Նրա մահը մեծ զայրույթ էր առաջացրել ավանում: Այստեղ ոչ ոք չի հավատում, որ ինքնասպան է եղել: Խոշիանը Բիչո՛րիին ցավակցություն կհայտներ, որովհետև կարգին մարդիկ այդպես կվարվեին այդքան տարի ընկերություն անելուց հետո: Բայց բացառվում է: Խոշիանը տնից դուրս գալու ուժ չուներ, թաքուն գնալու (բա էլ ո՞նց) ու նրա դեմքին նայելու: Բացի այդ՝ խեղճ կինը տառապում է, իսկ նա չգիտի՝ նման դեպքերում ինչպես է պետք վարվել: Գուցե Գորկան կարողանա՞ր Բիլբաոյից սև եզրով բացիկ ուղարկել այրիին:

— Կգրես Գորկա և ընտանիք:

— Իսկ ինչո՞ւ դու չես գրում: Նրա դեմքին նայելու կարիք չի լինի: Կգրես Խոշիան և ընտանիք, ու պրծավ-գնաց:

— Տղա՛ս, դժվա՞ր է մի երկու բառ գրելը: Հազարից մեկ բան եմ խնդրում:

— Լա՛վ, տեսնեմ:

Գիշերը Գորկան Ռամունչոյին մերսում էր ծալովի մի սեղանի վրա, որը գնել էին հատուկ այդ նպատակով: Սեղանը չկեղտոտելու համար վրան սրբիչներ էին գցում, որովհետև սովորություն ունեին յուղերով մերսել միմյանց: Ռամունչոյի մեջքը տրորելու ընթացքում Գորկան պատմում էր հոր հետ խոսակցության մանրամասները:

— Այրիին գրելո՞ւ ես:

— Իհարկե ո՛չ: Ու եթե ճարս կտրվի, aita-ին կասեմ, որ գրել եմ: Միևնույն է, չի կարող ստուգել: Ինչո՞ւ եմ այդպես վարվում:

— Որովհետև վախկոտ ես:

— Հենց դա է: Որովհետև նրա ու շատ ուրիշների պես վախկոտ եմ: Հիմա իմ ավանում մարդիկ ծածուկ (որպեսզի իրենց չլսեն) կասեն, որ սա բարբարոսություն է, այսպես հայրենիք չեն կառուցում: Բայց ոչ ոք մատը մատին չի տա: Այս ժամերին փողոցը ջրի շիթով արդեն մաքրած կլինեն, որ հանցագործության հետքը չմնա: Վաղը օդում շշուկներ կլինեն, բայց խորքում ամեն ինչ նույնը կմնա: Մարդիկ կգնան հերթական ցույցին՝ հօգուտ ETA-ի՝ իմանալով, որ արժի երևալ այդ ամբոխի մեջ: Դա այն հարկն է, որը փակբերան մարդկանց երկրում վճարվում է հանուն հանգիստ կյանքի:

— Լա՛վ, լա՛վ, կյանքդ մի՛ պղտորիր:

— Ճիշտ ես: Ես ի՞նչ իրավունք ունեմ որևէ մեկից որևէ բան պահանջելու: Ես ինքս նրանցից մեկն եմ: Կարո՞ղ ես պատկերացնել, որ ես ու դու վաղը ռադիոյով դատապարտենք այսօրվա սպանությունը: Կեսօր չեղած՝ մեր ֆինանսավորումը կդադարեցնեն կամ էլ մեզ դուրս կվռնդեն: Գրքերի դեպքում նույնն է: Հենց գծից շեղվեցիր, դառնում ես բորոտ, նույնիսկ թըշնամի: Նա, ով իսպաներեն է գրում, դեռ ելք ունի: Նրան կհրատարակեն Մադրիդում ու Բարսելոնայում, և գուցե, եթե բախտ ու տաղանդ ունենա, առաջ գնա: Բասկերեն գրողների դեպքում այդպես չէ: Ճանապարհդ են փակում, ոչ մի տեղ չեն հրավիրում, ասես գոյություն չունես: Ես գիտեմ, որ ամբողջ կյանքում երեխաների համար եմ գրելու, թեև կախարդներից, վիշապներից ու ծովահեններից արդեն կուշտ եմ:

— Իսկ այն ծրագրածդ վեպն ի՞նչ եղավ:

— Գրառումներս այստեղ են: Ամեն դեպքում գրում եմ: Բայց այնպես պիտի անեմ, որ պատմության կեսը Կանադայում տեղի ունենա, մյուս կեսը՝ հեռավոր մի կղզում:

— Այսօր քո օրը չէ, տղա՛: Արի՛, ավարտի՛ր մերսումը, ու անկողին մտնենք:

Ամայա

Ամսվա ընթացքում երկու շաբաթավերջ Ռամունչոյինն էին՝ որպես Ամայայի խնամակալի: Իր պաշտելի աղջկանով զբաղվելը նշանակում էր քառասունութ ժամ ապրել վախի, անվստահության, սթրեսի ու հիասթափությունների մեջ: Համոզված էր, որ որպես հայր չի կայացել, որ ամեն ինչ սխալ էր անում: Աղջնակն էլ իր հերթին բարի կամք չէր դրսևորում՝ դժվարությունները մեղմելու համար: Գորկան կասկած չուներ, որ երեխան անձնային ինչ-որ շեղում ունի: Հենց լսում էր, որ գալիս է, միանգամից զգաստանում էր: Տեսնենք՝ այս անգամ ինչ է անելու-կոտրելու-փչացնելու:

Ապահարզանից հետո մայրը երեխայի հետ Վիտորիա էր տեղափոխվել՝ ապրելու, ինչը Ռամունչոյին պարտադրում էր ամեն երկրորդ շաբաթավերջ մայրուղին երկու անգամ կտրել-անցնել: Մեկ՝ ուրբաթ երեկոյան, երբ գնում էր աղջկա հետևից, մեկ էլ՝ կիրակի օրերը՝ նույնպես երեկոյան, երբ նրան հետ էր տանում ու համարյա միշտ՝ ինքն իր հետ անհաշտ: Պատմությունը կրկնվում էր գրեթե առանց փոփոխությունների: Գնալիս լի էր լինում սպասումներով, որոնք աղջնակը հետո չէր արդարացնում: Ռամունչոն երեխայի հետ շփվելիս չափազանց համբերատար էր, նրան շփացնում էր ու կատարում էր նրա քմահաճույքները, ի պատասխան որի՝ Ամայան չէր արտահայտում ո՛չ ուրախություն, ո՛չ էլ ոգևորություն: Ինչպե՞ս կարող է այդքան նուրբ էակն այդ աստիճան սառը լինել: Ռամունչոյի մըտքով միայն մի բան էր անցնում, որ մայրն անընդհատ վատ բաներ է պատմում իր մասին:

Երբ Գորկան ծանոթացավ հետը, Ամայան ութ տարեկան էր: Այդ ժամանակ արդեն անհասկանալի մի էակ էր՝ դեմքի անփոփոխ ու լուրջ արտահայտությամբ: Ամեն պահ մի վատ բան էր անում, մի տեսակ չար հանգըստությամբ իրեն վատ էր պահում ու դիմացինին հունից հանելու ճիշտ ձևն էր գտնում: Մերթ թերզարգացած երեխայի պես մի բան էր անում-ասում, մերթ՝ հաջորդ իսկ րոպեին, ապացուցում էր իր չափազանց խելացի լինելը: Ժամանակի ընթացքում վիճակը չշտկվեց: Որքան ավելի էր մեծանում, այնքան ավելի բարդ, ավելի անհասկանալի ու հատկապես ավելի

դժվար բավարարվող անձ էր դառնում: Գորկայի կարծիքով՝ սադրիչի մեկն էր:

Ռամունչոն, թե.

— Այդպես մի՛ ասա. ինձ սպանում ես:

Շատ գեղեցիկ էր: Մի տիկնիկ՝ իր խոպոպիկներով, սեփ-սև աչքերով և երկար ու բարակ շուրթերով, որոնք ժամանակից շուտ կանացի արտահայտություն էին տալիս նրա նուրբ դեմքին: Օրեր էին լինում, որ քիչ էր խոսում: Ժամերով լռում էր՝ իր մտքերի մեջ խորասուզված ու անհաղորդ: Մյուս դեպքերում էլ նրան լռեցնելու համար մեծ համբերություն ու ջանք էր պետք: Հետը բասկերեն էիր խոսում՝ իսպաներեն էր պատասխանում, իսպաներեն էիր շարունակում՝ բասկերենի էր անցնում: Երբեք չգիտեիր՝ ճաշն ինչպես կավարտվի: Մի օր ախորժակով խփշտում էր լոլիկի ու պանրի թանձրուկով սպագետին, հաջորդ օրը հրաժարվում էր, թեև այդքան հավանել էր երեկ: Ու այդպես՝ ամեն ինչի իմաստով. խաղերի, այն վայրերի, ուր հայր ու աղջիկ գնում էին զվարճանալու, կամ էլ նախքան քնելը՝ Ռամունչոյի պատմած հեքիաթների: Այսօր՝ այո՛, վաղը՝ ո՛չ, և հակառակը: Ու երբեմն էլ, առանց հասկանալի պատճառի, լացում էր: Այդ պահերին Ռամունչոն խուճապի էր մատնվում. ի՞նչ անեմ, ի՞նչ: Ու նրա աչքերն էլ էին խոնավանում: Գորկային ճնշված ու տխուր խոստովանում էր, որ չգիտի՝ ինչպես վարվել աղջնակի հետ, ու թե այսպես շարունակվի՝ նրան կկորցնի:

— Երբեք չե՞ս փորձել նրան մի ապտակ տալ:

— Չեմ փորձել, չեմ էլ փորձելու: Մորը կպատմի, ու դատարանն ինձ կզրկի աղջկաս տեսնելու իրավունքից:

— Գիտես, Ամայան երևի իր ձևով դա է քեզնից ակնկալում: Aita, մի լավ խփի՛ր, ասում է, օգնի՛ր՝ դուրս գամ այս լաբիրինթոսից:

— Զգացվում է, որ հայր չես: Հենց նոր ամենամեծ ապուշությունն ասացիր, ինչ ճանաչում եմ քեզ:

Աղջնակի՝ երկու շաբաթը մեկ նրանց բնակարան գալն ուղիղ կերպով անդրադառնում էր նաև Գորկայի վրա: Ինչպե՞ս: Նախ և առաջ ստիպված էր լինում իր աշխատասենյակում քնել՝ բարակ ներքնակի վրա: Երբ երեխան տանն էր լինում, իրենց երկուսի միջև ո՛չ մերսում էր լինում, ո՛չ էլ մտերմություն: Ռամունչոն ամեն վայրկյան միայն աղջկան էր տրամադրում: Գորկան աշխատում էր երկար ժամանակ բացակայել տնից: Հաճախ ամբողջ օրը ռադիոտանն էր անցկացնում՝ գրքեր կարդալով, հեքիաթ-

ներ ու բանաստեղծություններ գրելով, հաջորդ շաբաթվա առաջադրանքները կատարելով կամ վառվում էր տարբեր կինոսրահներում կինոներ նայելու տենչով, կամ, եթե եղանակը թույլ էր տալիս, գետաբերանով քայլում էր մինչև Էրանդիո և նույնիսկ ավելի անդին՝ հասնելով Ալգորտա, ու վերադառնում էր ավտոբուսով: Երբեմն, օգտվելով առիթից, ծնողներից թաքուն, քրոջն էր այցելում Ռենտերիայում: Իր ավան քիչ էր գնում: Միայն, երբ դա անխուսափելի էր. Սուրբ Ծնունդին և նման դեպքերում: Մայրական նախատինքների տեղատարափը չլսելու, փողոցում որևէ մեկին չհանդիպելու համար էր, որ չէր ուզում այնտեղ երևալ.

— Kaixo, Kartujo. Վաղուց չենք հանդիպել:

Նախընտրում էր դիմանալ Ամայայի վարքին, թեև ցավում էր Ռամունչոյի համար: Հիմար արարքի տիպիկ օրինակ. բոլորը տանն են, ամեն ինչ խաղաղ է, աղջնակը նստած է հեռուստացույցի առջև, ու մեկ էլ՝ շրը՛խկթրը՛խկ, վեր էին թռչում՝ լսելով կոտրվող ապակու կամ հախճապակու ձայնը: Երկուսով շտապ մոտենում էին: Նրանց առջև անսովոր պատկեր էր բացվում. Ամայան՝ դեմքի անտարբեր արտահայտությամբ նստած, շուրջը՝ ցաքուցրիվ կտորներ ու փշրված ափսեներ: Ռամունչոն չէր համարձակվում վրան բղավել, որ հանկարծ աղջիկն իր ama-ին չպատմի: Բացատրում էր աղջկան, խնդրում էր, տեղի ունեցածին կարևորություն չէր տալիս, հավաքում էր փշրածը կամ Գորկային ծածուկ խնդրում էր, որ հավաքի, երբ ինքը երեխայի ուշադրությունը որևէ այլ բանի վրա շեղի: Նույն ձևով վարվեց, երբ երեխան ջարդուփշուր արեց Գորկայի ժամացույց-զարթուցիչը: Ռամունչոն շտապեց նրա համար նորը գնել՝ ձևացնելով, թե բան չի պատահել:

Երկուսից և ոչ մեկի մտքով չէր անցնում, որ Ամայան իրերը միտումնավոր է կոտրում: Անշուշտ, պատահաբար էլ չէին ընկնում: Բայց անհույս բան էր, իհարկե, փորձել նրա դեմքի արտահայտությունից կռահել նման վարքի նախանշանները:

Մի անգամ Գորկան Ամայային բռնեցրեց այն պահին, երբ նա պատառաքաղով ծակծկում էր սեփական ափը, մինչև որ արյան երկու զուգահեռ գիծ հայտնվեց: Մեկ էլ իրերը տարբեր տեղեր շարեց՝ գորգի վրա, սեղանի վրա, լոգարանում: Սառնարանից հանած գազարի շարաններ, սուրճի գդալներից՝ կլորակներ, աշտարակներ՝ գրքերից, կոմպակտ դիսկերից, այլ իրերից:

Այս աղջիկը նորմալ չէր, նրա մի ծալը պակաս էր: Խնդիրն այն էր, որ հնարավոր չէր Ռամունչոյի հետ խոսել այդ մասին, քանի որ նա անմիջապես հուսահատության գիրկն էր ընկնում:

Գորկան շաբաթ օրը վերադարձավ ավանից, որտեղ նախորդ օրն էր գնացել, քանի որ տարբերակ չուներ. Արանչան նրան ռադիոտուն զանգահարել չգնալու:

— Կարծում եմ՝ տեղյակ ես:

— Այո՛: Քեզ մի բան ասե՞մ. ուրախ եմ:

— Երևի ահավոր տանջում են նրան:

— Դա նկատի չունեի:

— Ես էլ եմ կարծում, որ հենց իր համար ավելի լավ է, որ մեջտեղից հանեցին, բայց պետք է գնաս aita-ներին տեսակցելու: Այս վիճակում չենք կարող մենակ թողնել նրանց: Ես աշխատանքից հետո գնալու եմ նրանց մոտ:

Գվարդիականները ձերբակալել էին Խոշե Մարիին: Ու նրա հետ՝ «Օրիա» խմբի երկու անդամի: Իրադարձությունն օրվա նորությունների առաջին տողում էր: Բացառիկ դեպքերի համար Գորկան միշտ նախապես ձայնագրած նյութեր էր ունենում, այնպես որ ռադիոտնից ստացավ բացակայելու թույլտվություն՝ պայմանով, որ հաջորդ օրվա երկրորդ կեսին կլինի աշխատավայրում: Ինչպես միշտ, ավտոբուսով գնաց ավան ու նստեց ծնողների կողքին, քնեց դեռահասի իր հին մահճակալի վրա ու շաբաթ առավոտյան (բա ցույցի չե՞ս մասնակցելու՝ չեմ կարող, բայց չէ՞ որ եղբորդ համար է) վերադարձավ Բիլբաո: Գալուն պես տեսավ Ռամունչոյին, որը շատ անհանգիստ էր:

— Ամայան:

— Ի՞նչ է եղել:

— Չկա, փախել է: Մի պահ իջա՝ հաց առնելու, վերադարձա ու տեսա՝ բնակարանի դուռը բաց, նա էլ չկա:

Գորկան մխիթարելով գրկեց նրան, Ռամունչոն ընկավ ամենավատ կանխատեսումների գիրկը: Աղջնակը փախչելով կարող էր ընկնել տրաֆիկանտների ձեռքը: Օրգանների վաճառքի ու մարմնավաճառության պարտադրանքի դաժան մի պատկեր նկարագրեց: Ինքն իրեն պատկերացնում էր՝ աղջկան տեսնելու իրավունքից զրկված կամ էլ երկար տարիների բանտարկության դատապարտված:

— Փողոցում փնտրե՞լ ես:

— Խանութներ ու բարեր եմ մտել, հարցրել: Ոչ ոք նրան չի տեսել: Ի՞նչ անեմ: Ertzaintza զանգե՞մ: Բայց եթե զանգեմ, նորությունը մամուլում կհայտնվի, նախկինս կիմանա, պատմությունն ուր ասես՝ կհասնի:

— Առաջարկում եմ՝ իջնենք, փնտրենք: Դու՝ այս մայթով, ես՝ դիմացի:

Շատ հեռու չգնացին: Շքամուտքում հանդիպած հարևանուհին հայտնեց, որ երեխային տեսել են տափարակ կտուրի վրա: Եվ իսկապես. այնտեղ հանգիստ նստած էր մի քառակուսու մեջտեղը, որը շարել էր հոր ալբոմից հանած լուսանկարներով: Ռամունչոն թեթևացած նրան գիրկն առավ: Գորկան լուսանկարները հավաքեց: Իսկ Ամայան՝ այն ժամանակ տասնմեկ տարեկան, բնակարան վերադառնալով, իրեն հատուկ լրջությամբ ասաց, որ ցանկանում է վերադառնալ մոր տուն:

Կժով գինի

JOXE MARI ASKATU*: Ավտոբուսից իջնելով՝ Գորկան տեսավ մի տան ճակատից մյուսը ձգվող վիթխարի մի պաստառ: Բացի այդ՝ ամեն տեղ ամրացված էր եղբոր լուսանկարը՝ նրան ազատ արձակելու պահանջով: Ահա թե ինչպես են մարդկանց մանիպուլյացիայի ենթարկում ու հերոս ստեղծում: Եթե միայն տեղացիներն իմանային, թե ինչ տհաճություն է դա պատճառում ինձ: Արագ էր քայլում՝ այն ցանկություն-հույսով, որ ծնողների տան ճանապարհին ոչ մեկի չի հանդիպի:

Բարից դուրս եկող տղաները կանգնեցրին նրան: Մայթի մեջտեղում կանգնած՝ թեթև կիսաժպիտով, անթարթ հայացքով մի կերպ դիմացավ հինգ-վեց գրկախառնությունների, որոնցից մի քանիսը՝ քրտնախառը:

— Մենք ձեր կողքին ենք:

— Եթե ձեզ բան պետք լինի, միայն ասե՛ք:

Պարզ «շնորհակալություն» բառից բացի՝ չգիտեր՝ է՛լ ինչ ասի: Երևի մտածեցին, որ Խոշե Մարիի ձերբակալման պատճառով է անտրամադիր: Նրան հրավիրեցին մի գավաթ խմելու: Դե՛, արի՛, գնանք:

Դեմքին տվեց մելամաղձոտ արտահայտություն, ոչ այնքան վիատված, որքան մարած տոնով ակնարկեց, թե հենց նոր է հասել ավան ու պետք է շուտ հասնի ծնողների մոտ: Խոսում էր լավ երանգավորված բասկերեն՝ քաջ իմանալով, որ դա տպավորիչ է: Գուցե այլ իրավիճակում նրան այնուամենայնիվ քարշ տային մինչև բարի կանգնակը: Բայց այս անգամ, դրության մեջ մտնելով, չպնդեցին: Գորկան կարողացավ ճանապարհը շարունակել ընկերական թփթփոցներից այրվող մեջքով:

Հասավ իրենց շքամուտք՝ ծանոթ հոտով ու, ինչպես միշտ, մութ: Հանկարծ, երեք աստիճանը չբարձրացած, ինչ-որ մեկը նրան գրկեց. ո՞վ էր. բերանից վատ հոտ փչող սև ֆիգուր էր: Դոն Սերապիոն էր, որ հենց նոր դուրս էր եկել Գորկայի ծնողների տնից:

* JOXE MARI ASKATU (բասկ.), Ազատությո՛ւն Խոշե Մարիին:

— Այս ծանր օրերին եկել ես՝ ընտանիքիդ կողքի՞ն լինես: Շատ լավ է, զավա՛կս: Տեսնում եմ՝ արդեն իսկական լրջմիտ մարդ ես դարձել՝ տղամարդ: Տե՛ս, ama-դ պինդ է: Երկաթե կին է, չէ՞: Ավելի շատ aita-իդ համար եմ մտահոգվում:

Մի քանի վայրկյանի ընթացքում Գորկայի աչքերն ընտելացան մթին: Ու արդեն ավելի լավ տեսավ քահանայի դեմքի մեղրածոր արտահայտությունը, աչքերի ջրոտ փայլը: Քահանան նրան ավելի ցածրահասակ թվաց: Փոքրանո՞ւմ է, ի՞նչ է:

— Խե՛ղճ Խոշիան: Աստված թող գթա նրան: Ես չգիտեմ՝ ինչպես է դիմանալու այս վիճակին: Մորիցդ իմացա, որ ամբողջ օրը հողամասում է անցկացրել: Նույնիսկ ճաշելու չի եկել:

— Ուրեմն՝ պետք է նրա հետևից գնամ:

— Գնա՛, զավա՛կս, գնա՛: Շատ եմ աղոթում ձեր ու Խոշե Մարիի համար: Աստծուն խնդրում եմ, որ նրա հետ մարդկային ձևով վերաբերվեն: Մի՛ վհատվիր: Ուժե՛ղ եղիր: Ծնողներդ քո կարիքն են զգում: Բիլբաոյում ինչպե՞ս է:

— Լավ:

Քահանան հրաժեշտ տալով նրա թևին թփթփացրեց՝ ուսի մոտ, ինչը ցավակցական ժեստ հիշեցրեց: Դոն Սերապիոն՝ ոտքից գլուխ սև հագուստով, բայց առանց շուրջառի, բերետը շտկեց ու դուրս եկավ փողոց:

Բնակարանի ներսից ձայներ էին լսվում: Կանանց հանգիստ ձայներ: Մեկը մորն էր, հաստատ: Մյո՛ւսը: Արանչան ասել էր, որ աշխատանքից հետո գալու էր, բայց նրա ձայնը չէր: Խուանիի՞ ձայնն էր: Ականջը սրեց, և, այո՛, մսավաճառի կնոջ ձայնն էր: Մթան մեջ նայեց ժամացույցին: Դեռ շատ ուշ չէր: Ի՞նչ անեմ: Աստիճանավանդակին կանգնած՝ պատկերացրեց, թե ինչպես է մտնում իրենց տուն, ինչպես է նրան ընդունում ama-ն՝ երեսին շպրտելով, որ վաղուց չի գալիս, որ հեռախոսով հազարից մեկ է զանգում, ու այդ ամենը՝ ինքնասպան եղած տղայի մոր ներկայությամբ: Թե՞ նրան սպանել էին: Երբեք հաստատ չի իմացվի: Ու ինքն իրեն ասաց՝ հո գիժ չե՞մ՝ հիմա տուն մտնեմ: Գլուխը շքամուտքից դուրս հանեց՝ համոզվելու, որ քահանան արդեն բավականաչափ հեռու է: Ու գնաց հողամաս:

Հորը տնակում գտավ ոտաբոբիկ, հարբած:

— Հը՞, եկա՞ր:

— Դե՛:

Իր համար պարզ մի սեղան էր հարմարեցրել՝ ճագարների վանդակի վրա մի տախտակ դնելով, ու նույն ձևով մեկ ուրիշ վանդակով՝ մի աթոռ: Սեղանի վրա բաժակ էր դրված ու գինով կուժ՝ փոշոտ, սարդոստայնով պատված:

— Մինչև ամբողջը չխմեմ, տուն չեմ գնա:

Խոշիանին կարծես չզարմացրեց տղայի գալը: Նրան տեսնելով՝ ռադիոն անջատեց: Ներսում խոնավության, փտած խոտի ու գինու ուժեղ հոտ էր գալիս: Ճագարները հանգիստ էին: Մի քանիսը մռութներով ծամելու նյարդային շարժում էին անում: Խոշիանի ձեռքերը հաստ երակներով էին ծածկված: Այտուցված, կոշտուկներով ձեռքերի վրա արդեն արթրոզի որոշ նշաններ էին նկատվում:

— Եղբորս մասին որևէ բան հայտնի՞ է:

— Քո եղբայրը մարդասպան է: Մեր իմացածը դա է: Քի՞չ է: Հիմա արժանի պատիժ է ստանալու, մի բան էլ կավելացնեն, որովհետև դատարանի սրիկաները ցանկանում են ատրճանակներով զինված այդ ոչխարներին դաս տալ: Ama-ն իրավացի է: Փափուկ հայր եմ եղել: Ժամանակին որ մի լավ ծեծ տայի, գուցե հարցը լուծած լինեի: Դու ի՞նչ կարծիքի ես:

— Այս երկրում չափից շատ բան է ծեծով լուծվում: Այդպես էլ ապրում ենք: Ուրեմն, դեռ բան հայտնի չէ՞:

— Մինչև նրան չձաղկեն-չվերջացնեն, չենք իմանա:

Խոշիանին հատուկ չէր հարբեցողությունը՝ առօրյա ու էժան գինու գերի լինելը:

Թեև երիտասարդ ժամանակներից էր խմում, բայց միշտ՝ չափավոր: Երբեմն պատահում էր, որ մի գավաթ ավելի էր ստացվում: Բայց այսօրվանը ի՞նչ անվանել: Իրականությունը մշուշելու ցանկությո՞ւն, ըմբոստանալու փո՞րձ, մի ինքնապատի՞ժ՝ ճիշտ հայր չլինելու համար: Շատ էր խմել, բայց բառերը հստակ էր արտաբերում: Տրամաբանելու դժվարություն չուներ: Կողերը չէր քորում: Հայացքը մի կետին էր հառում, երկար ժամանակ նայում էր անշարժ ու մեկ էլ կոնծում էր՝ չըմբոշխնելով. երբեմն գլուխը դժգոհ տարուբերում էր: Գորկան, դռան շեմին կանգնած, նրան նայում էր խղճահարությունից սեղմված կրծքով, նաև արդեն վրա տվող զզվանքով: Այս մարդն այսօր մի ծով գինի էր խմելու: Ոտքերը ձևախեղված էին, մանուշակագույն ու այտուցված:

— Լսի՛ր, դու հո հրոսակախմբի անդա՞մ չես:

— Ո՛չ, aita: Ռադիոյում եմ աշխատում, ինձ վճարում են, ոչ մեկին վնաս չեմ տալիս:

— Դե՛, շատ զգո՛ւյշ եղիր՝ եղբորդ ճանապարհով չգնաս հանկարծ, հը՞: Տեսնում ես՝ ուր հասավ: Աստվա՛ծ իմ, հլա դու տե՛ս, թե ոնց են նստեցնելու: Վրան արյուն կա: Լսե՞լ ես, թե ինչքան բան են նրան վերագրում: Չեմ կարծում, որ բանտից դուրս գալը կտեսնեմ: Հիմիկվա տարիքիս քսաներեսուն տարի ավելացրո՛ւ: Չէ՛, իհարկե: Այդ ժամանակ հողի տակ կլինեմ:

Ու կոկորդով բարձրացող հեկեկոցը զսպելու համար արագ գինու ևս մի կում արեց: Հայր ու տղա երկար ժամանակ լուռ մնացին, իրար չէին նայում, ու մեկ էլ, թե.

— Ama-ին տեսե՞լ ես:

— Ուղիղ այստեղ եկա:

— Բա ո՞նց իմացար, որ հողամասում եմ:

— Քահանան ասաց:

— Քահանա՞ն: Դրա անունը մի՛ տուր: Համա՛ լպրծունն է: Քեզ ասեմ՝ ամենավատ տեսակն է: Երիտասարդներին հեքիաթներ է պատմում, գլուխները լցնում ու նրանց տաքացնում: Ու երբ որ լինելիքը լինում է, նա հետ է քաշվում, քարոզում է ու սրբի իր դեմքով նշխար է բաժանում: Սա ama-իդ չասես. պատերով ման կգա: Իրեն ասում եմ՝ դու հո հիմա՞ր չես: Չե՞ս տեսնում, որ քահանան նրանց թույլ է տալիս, որ եկեղեցու նկուղում պահեն իրենց պաստառները, դրոշներն ու ներկերի պարկուճները: Ինձ ասում է, թե դա կապ չունի: Որքան գիտեմ՝ Խոշե Մարին ատրճանակը ձեռքին չի ծնվել: Քահանան, ընկերները, ինչ իմանամ էլ ով, դրանք են նրան վատ ճանապարհով տարել: Ու քանի որ այստեղ (մատով ճակատի կենտրոնը ցույց տվեց) շատ բան չունի, կուտը կերավ:

Հետո առաջարկեց հետը խմել: Գորկան գրեթե համաձայնում էր՝ զուտ գինու կուժն ավելի արագ դատարկելու համար: Բայց հանպատրաստից սեղանին, բացի իր հոր օգտագործած բաժակից, ուրիշը չտեսավ ու հրաժարվեց առաջարկից:

— Մի բան կա, որ ուզում եմ՝ իմանաս, aita:

— Ինձ ասել են, որ Չատոյին սպանելու ժամանակ Խոշե Մարին ավանում էր:

— Չէ՛, իմ անձնական կյանքին է վերաբերում:

— Ոնց էլ համընկնում է, չէ՞: Ո՞ր գրողուցավի համար էր այդ ապուշը ավանում այն օրը, երբ լավագույն ընկերոջս սպանեցին: Եթե պարզվի, որ իր հրոսակախումբն էր, նրան չեմ ների:

— Բիլբաոյում մի տղամարդու հետ եմ ապրում:

Խոշիանը, նոր գլանակ կպցնելով զբաղված, չէր լսում:

— Միասին ենք ապրում: Անունը Ռամոն է: Դե՛, ես իրեն Ռամունչո եմ ասում:

— Հենց նրան տեսնեմ՝ անկախ նրանից, թե որտեղ, նրան ուղիղ հարցնելու եմ: Ու ինձ՝ իր հորը, խաբել չի կարող, քանի որ իրականությունը աչքերում կտեսնեմ:

Գորկան որոշեց ընդհատել հենց նոր սկսած խոստովանությունը: Ինչպե՞ս չէր հասկացել, որ ո՛չ պահն էր հարմար, ո՛չ էլ հայրն էր այն վիճակում, որ ուշադրություն դարձներ ու հասկանար: Տեղը, իրոք, լավն էր: Բազմիցս էր երազել այդ խոսակցության մասին: Իրեն տեսնում էր Խոշիանի հետ, ինչպես հիմա՝ տնակում մորից թաքուն գաղտնիքը պատմելիս: Կարող էր ակնկալել, որ հայրը կհասկանա իրեն: Վատագույն դեպքում Խոշիանը կհաշտվեր այդ մտքի հետ: Պախարակո՞ւմ: Չէր լինի: Այս մարդը կամ օրինում է, կամ լռում: Ու հաստատ կպահեր գաղտնիքն այնպես, ինչպես պահում էր Արանչան, որն արդեն գիշերվա կողմ անսպասելի հայտնվեց հողամասում:

— Այս խոզանոցից այնպիսի հոտ է փչում, որ շնչել հնարավոր չէ: Aita, արդեն լուլ ես դարձել:

Եղբորը դիմեց.

— Դու ի՞նչ ես այստեղ անում: Ama-ն կարծում է, որ դու Բիլբաոյում ես: Ինձ ուղարկել է հասկանալու՝ ընթրիք պատրաստի՞, թե՞ չէ: Այնքան սարդինա է գնել, որ մի գունդ կկշտանա:

Գորկան օգնեց, որ հայրը վեր կենա: Արանչան, մի վայրկյան բերանը չփակելով, ճագարների վանդակների արանքներում հոր կոշիկներն էր փնտրում:

— Հաստա՞տ կարող ես քայլել:

— Հա՛, գրո՛ղը տանի:

— Gudari-ի մասին ի՞նչ կասես:

— Հիմա գոնե գիտենք՝ որտեղ է:

— Նույն բանը Գիլյեին էի ասում: Փոխարենը՝ ama-ն բոցաշունչ հեղափոխականի դերում է: Չեմ զարմանում, որ նրանից թաքնվում եք: Խուանիի հետ խոսքը մեկ են արել, ու մարդ դրանց չի դիմանում: Համա՛ թիմ են:

Ներեան և միայնությունը

Սան Սեբաստիանի իրավաբանական գրասենյակ Բիչո՛րին էր զանգել: Խոսեց աղջկա մասին՝ հնարավոր կլինե՞ր նրան վերցնել՝ մասնագիտության մեջ խորանալու համար: Ներեային աշխատանքի ընդունեցին սիմվոլիկ վճարով, քանի որ իրավաբաններից մեկը Չատոյին (Աստված հոգին լուսավորի) պարտական էր կամ էլ գուցե ցավում էր Չատոյի հետ կատարվածի համար: Աշխատանքը շատ էր, չափազանց ձանձրալի, ղեկավարները չոր էին և ամբարտավան, ֆինանսական հատուցումը՝ քիչ: Այդ բառերով Ներեան մի քանի ամսից մորը նկարագրեց իր կյանքում առաջին աշխատանքը: Մայրն այսպես պատասխանեց.

— Չեղածից լավ է: Բոլորս մի օր սկսել ենք ամենաներքևից:

Բիչո՛րին երազում էր, որ ինչպես Շավիերն էր դարձել հարգված վիրաբույժ, այնպես էլ աղջիկը դատապաշտպան կամ դատավոր կդառնա: Ննջեցյալ Չատոն, անշուշտ, կցանկանար, որ այդ երազն իրականություն դառնա:

Իրավաբանական գրասենյակում աշխատանքի անցնելուց մեկ տարի երեք ամիս անց Ներեան թողեց գործը: Հայտնեց իր որոշման մասին, ու այդ ժամանակ նրան առաջարկեցին պայմանների բարելավում ու աշխատանքային մշտական պայմանագիր: Կներեք, սիրելինե՛րս, but it's too late. Նրանց հրաժեշտ տվեց, ու Բիչո՛րին ընդմիշտ հրաժեշտ տվեց իր երազին:

Այդ ընթացքում Ներեան ծածուկ ուսումնասիրում էր աշխատանքային առաջարկներ ու, բավական բարդ քննություն հանձնելով, աշխատանքի անցավ Հարկային տեսչության՝ Օկենդո փողոցում գտնվող գրասենյակում: Ավելի ուշ նրան տեղափոխեցին Էռոտաբուրու թաղամասի գրասենյակ: Ներեայի դրդապատճառները ֆինանսական բնույթի չէին: Իրականում նրա հայրը, որ լավ ուսում չէր ստացել, բայց հրաշալի կողմնորոշվում էր վարչական և բյուրոկրատական հարցերում, նյութապես ապահովել էր աղջկան: Բացի այդ՝ Շավիերը՝ որպես գործը հասկացող եղբայր, նրան ժառանգության վերաբերյալ ճիշտ խորհուրդներ էր տվել: Ներեան խնայողություններ ու ներդրումներ էր արել, բաժնետոմսեր էր ձեռք բե-

րել, մի խոսքով՝ իրեն ապահովել էր: Բայց, իհարկե, կյանքը պետք է լցնել նպատակներով, կարգավորել այն, իմանալ՝ ո՛ր ուղղությամբ ես գնում, ամեն լուսաբացին անկողնուց ցատկելու պատճառ ունենալ, եթե ոչ պատրանքային, ապա առնվազն էներգիայով լի, ու թույլ չտալ, որ զուտ անգործության պատճառով մտքերդ ոսկրանան:

— Ա՛խ, աղջի՛կս, համա՛ թե փիլիսոփա ես դարձել:

Անշուշտ, միանվագ վճարումով երեքսենյականոց բնակարան էր գնել Ամարա թաղամասում: Նորոգել ու կահավորել էր: Մայրն էլ, թե՝ ինչո՞ւ էր այդքան ծախսում, եթե իր տանը երկուսով հրաշալի կտեղավորվեին:

— Հետաքրքիր մարդ ես, ama: Անվերջ վիճելու էինք:

Օրերը շարվեշարան անցնում էին, քսաներորդ դարն ավարտվում էր, Ներեան ծանոթանում էր տղամարդկանց հետ: Ավելի շուտ՝ նրանք էին իր հետ ծանոթանում: Այսինքն՝ իբր պատահաբար մոտենում էին գայթակղիչ ժպիտներով և հրապուրում էին՝ երկրպագու ու սիրեկան ձևանալով: Անհավատալի է, բայց նույնիսկ գրասենյակի իրավաբաններից մեկը՝ ամուսնացած, երեք երեխայի հայր, նրան ակնարկներ էր անում: Ներեան, որ օրեր առաջ էր հասկացել նրա խաղը, շտապեց վերջ դնել վավաշոտ ոտնձգություններին: Ընտանիք քանդելն իր ծրագիրը չէր:

Ընկերուհիներ էր ձեռք բերել: Թե՛ մարզադահլիճում, թե՛ աշխատավայրում: Նրանց մեջ իր ավանից մարդ չկար: Այդ բացը զգացվում էր: Ու երբ նրան հարցնում էին՝ որտեղից ես, ասում էր, թե Սան Սեբաստիանից է: Ընկերուհիների խմբում էր նաև երեսունմեկ տարեկան մի այրի: Երբեմն՝ շաբաթօրյա ընթրիքների ժամանակ, լողափին, սրճարաններում այդ կինը Ներեայի հետ զրուցում էր այն ցավի մասին, որը առաջացնում է սիրեցյալի կորուստը, ու այն մասին, թե որքան դժվար է այդ կորուստը հաղթահարելը: Ներեան լսում էր՝ առանց միջամտելու, քանի որ որոշել էր ոչ մեկի չպատմել, որ սպանվածի դուստր էր:

Բացի հազվադեպ սեռական կապերից՝ երբեմն փորձում էր սիրային կապեր հաստատել այնպես, ինչպես ինքն էր դա պատկերացնում:

— Իսկ ի՞նչ ես պատկերացնում:

Ընկերուհիներին խոստովանում էր, որ իր ցանկությունը մեկի հետ երկարատև ընտանեկան կյանքով ապրելն է երեխաների (երկուսից ոչ ավելի) հետ: Հանգիստ կյանք՝ մաքուր ու բուրժուական, ըստ հին սովորույթի՝ հարսանիքից հետո:

— Հորդ թևանցուկ արած, որը քեզ դեպի խորան կհասցնի:

— Չի ստացվի: Հայրս երկուսուկես տարի առաջ քաղցկեղից է մահացել: Շատ էր ծխում:

Երեսուն տարին բոլորելուն պես Ներեան համարեց, որ իր սիրային սպասումներն ավարտված են: Արկածնե՞ր: Ո՛չ, չեմ ուզում, շնորհակալ եմ: Եղածը բավական է: Ու ժպտերես ընկերուհիներին պատմում էր հրապուրիչ, շիկահեր գերմանացու պատմությունը, հանուն որի հիմարի պես հասել էր Գերմանիա ու ահռելի հիասթափություն ապրել: Թեև ընկերուհիները պատմության բոլոր մանրամասներին արդեն ծանոթ էին, անձանձրույթ նորից էին լսում, ու Ներեան հաճախ ստիպված էր լինում վերապատմել: Դրա պատճառը ո՞րն էր: Դե՛, այդ պատմությունը զվարճալի դիտարկումներ անելու ու ծիծաղելու հարմար առիթ էր: Բայց երբեք չէր ակնարկել Ֆրանկֆուրտում տրամվայի տակ ընկած մարդու մասին:

Տևական սեր (նաև սեփական օջախ, բազմոց, երկու բազկաթոռ, գորգ ու հողաթափեր) գտնելու նրա՝ ավելի ու ավելի հազվագյուտ փորձերն ամեն անգամ հակառակ արդյունքն էին տալիս: Հիասթափված ու տղաներից մինչև կոկորդը կուշտ՝ ինքն իրեն ասում էր՝ աղջի՛կ ջան, այլևս չպետք է տարվես նրանցով: Հետո շաբաթներ էին անցնում, ամիսներ, ու երբ ամենից քիչ էր սպասում, նորից էր զգում՝ որտե՞ղ՝ վերևը, ներքևը՝ ոտքերի արանքում, սիրային գրգիռն ու ոգևորությունը: Ասես նորից տրվեր մի մոլուցքի, որը հաղթահարված էր համարում: Մի նոր անուն, մի արտաքին, ձայնի մի նոր ելևէջ ներխուժում էին իր կյանք՝ իր վրայից պոկելով միայնության կպչուն զգացումը, որն ասես հավերժ փարված էր նրա մարմնին, նրան հագեցնում էին էյֆորիայով, հաճելի անհանգստությամբ, մինչև որ որոշ ժամանակ անց ինչ-որ մի պատճառով պատրանքն անհետանում էր՝ որերորդ անգամ հաստատելով, որ այդ հմայիչ էակը (որի ներկայությամբ նրա զարկերակն այլևս նախկինի պես չէր տրոփում) իր իսկ ցանկությունների արտացոլումն է, ու որ իրականում այդ տիպն անտանելի գռեհիկ է ու եսամոլ:

Էնեկոն՝ նրանից ութ տարով մեծ, վաղուց սպասված բացառություն էր: Իրար ճանաչում էին Տանժեր բարից, որտեղ Ներեան Օկենդո փողոցի գրասենյակում աշխատելիս կեսօրին բիտեր* խմելու սովորություն

* Բիտեր, ախորժաբեր, դառը խմիչք:

ուներ: Երկուսն էլ հաճախ նույն ժամին էին գալիս բար, քանի որ Էնեկոն մոտիկ էր աշխատում՝ Գիպուսկոա հրապարակի անշարժ գույքի գործակալությունում: Հայացքներ, ողջույններ, էլի հայացքներ, ու վերջապես նրան մոտենալու համարձակություն ունեցավ Էնեկոն: Բարև՛, ես այսինչն եմ, այստեղ՝ կողքն եմ աշխատում, դեմ չե՞ս՝ ծանոթանանք: Հենց այդպես՝ այս ու այն կողմ չընկնելով: Պարզ, ուղիղ, առանց հավակնություննե-րի մի տղամարդ: Նրանցից էր, որ, ամուսնական թթվայնությունից դեռ չայրված, ժամադրության են գալիս՝ մի վարդ կամ գիրք նվեր բերելով: Իսկ պակասություններ ունե՞ր: Առաջին հայացքից աննկատելի ոչ մի բան չկար, ընդամենը շատ ճաշակով չէր հագնվում, մի քիչ լիքն էր, ֆուտբոլի սիրահար էր:

Ներեան ընտելացավ Շավիերից տարիքով մեծ այս մարդու ընկերակցությանը, նրա թեթևակի հայրական-հովանավորչական պահվածքին, մի մարդու, որ նրան հանգստություն էր հաղորդում և գիտեր (քչերը կարող էին) նրան ծիծաղեցնելու ձևը: Էնեկո՝ մարդ-բազմոցը. հանգիստ, փափուկ, հարմար՝ հանգստանալու համար: Անձրևային օրերին հովանոցը Ներեայի վրա էր պահում՝ ինքը թրջվելով: Մի քանի ամիս անց Ներեան արդեն մտածում էր, հանդիպումներից ու միասին լինելուց բացի, նրան մի քիչ ավելին առաջարկել, որովհետև այս մարդն իսկապես իր սրտով էր: Ընկերուհիները հարցնում էին՝ իրար սիրո՞ւմ եք: Անշուշտ, բայց նաև ընկերություն ենք անում, ինչը նույնը չէ: Ներեան ասում էր, թե ընկերությունն է, որ պահպանում է զույգի հարաբերությունը, երբ սերը պակաս ինտենսիվ է դառնում ու կորցնում է նախկին թարմությունը:

Այդուհանդերձ, սև ու անհուն մի ճեղք էր բաժանում նրանց: Իրականում այդ ճեղքը նրանց կողքին էր համատեղ կյանքի գրեթե բոլոր տասն ամիսների ընթացքում: Սկզբում չէին նկատում, սակայն այդ ճեղքը հետզհետե մեծանում էր, իսկ Էնեկոն, փաստորեն, այն այդպես էլ չտեսավ: Այն աստիճանի, որ եթե դեռ ողջ է (տեսնես, ինչպե՞ս դասավորվեց նրա ճակատագիրը), գուցե մինչև հիմա իրեն հարց է տալիս, թե ի՞նչն էր սխալ ընթացել: Խնդիրն այն էր, որ ինչպես Ներեան լռում էր հոր հետ պատահածի մասին, նա էլ իր հերթին չէր պատմում եղբոր մասին, որը ահաբեկչական գործունեության համար կրում էր իր պատիժը Բադախոսի բանտում: Սերը, ընկերությունը, ծիծաղը, մարդ-բազմոցը, նվիրած վարդը կամ գիրքը՝ ամենը, մի քանի վայրկյանում կուլ գնացին այդ խոր ճեղքին:

Այսպես եղավ: 95 թվականի հունվարն էր, երկուշաբթի, մի անձրևոտ երեկո: Ներեան ու Էնեկոն պայմանավորվել էին Հին թաղամասով իրենց սովորական պտույտն անել, մի քանի պինչո ուտել, դրանք գինով ցողել ու վերջում գնալ Էնեկոյի տուն կամ Ներեայի մոտ, կամ ամեն մեկը՝ իր տուն, քանի որ վաղը, maitia, աշխատանքային օր է: Բարից բար գնալով մի հովանոցի տակ՝ 31 դե Ագոստո փողոցում հայտնվեցին: Ներեան ծիծաղում էր Էնեկոյի պատմած գռեհիկ կատակների վրա: Լա Սեպա բարի մոտ հանկարծ ծիծաղը կտրվեց: Ռադիոյով լսել էր, որ հինգ-վեց ժամ առաջ ETA-ի ահաբեկիչն այդ բարում սպանել էր ընկերների հետ ճաշող փոխքաղաքապետին:

— Այստեղ չէ՞ր, որ Գրեգորիո Օրդոնյեսին սպանեցին:

— Ես դրա համար մի կաթիլ արցունք էլ չեմ թափի: Եղբայրս դրա պես տիպերի պատճառով է բանտում:

Անցան բարի մոտով: Ներեան մի քիչ կողք քաշվեց հովանոցի տակից, նկատեց թևը թրջող ջրի կաթիլներն ու «տեսավ» ճեղքը:

— Եղբայրդ բանտո՞ւմ է:

— Այո՛, Բադախոսի բանտում է արդեն երկար ժամանակ: Քեզ չէի՞ պատմել:

— Ինչո՞ւ են նրան բանտարկել:

— Դե՛, էլ ինչի՞ համար պիտի լիներ: Որովհետև պայքարել է այն բանի համար, որ սիրում է:

Հասան Սանտա Մարիա եկեղեցի: Էնեկոն նորից սկսեց կատակել, բայց իր նշանածից ծիծաղ չլսեց: Ներեան նրան նույնիսկ չէր լսում: Իբր պայուսակի մեջ բան փնտրելու պատրվակով զգուշորեն ազատվեց նրա թևից: Ի՞նչ անեմ: Վազե՞մ: Ներեայի դիմագծերը՝ ամբողջությամբ լարված, շինծու քմծիծաղով հանգստություն էին ձևացնում: Իսկ ներսում նյարդային այնպիսի մի ալիք էր բարձրացել, որ չկարողացավ իրեն զսպել, ու մեզը ոտքերով հոսեց: Մինչև բուլվար ճանապարհը նրան մի հավերժություն թվաց: Էնեկոն խոսում էր կենսուրախ, սրամիտ, Ներեան լռում էր: Ավտոբուսի կանգառում թույլ տվեց, որ իր այտը համբուրի զզվանքի ու սարսափի զգացումով, հետո հրաժեշտ տվեց: Թեև ավտոբուսի՝ այդ կողմի պատուհանների մոտ, որտեղից երևում էր Էնեկոն (իր հովանոցով ու հրաժեշտի սովորական շարժումով), ազատ տեղեր կային, Ներեան մյուս կողմում տեղավորվեց: Մինչև Ամարա թաղամաս հասնելը իր ներ-

սում գտավ հարաբերությանը վերջ դնելու մի պատճառաբանություն: Տուն հասնելուն պես զանգահարեց Էնեկոյին: Ասաց, որ իր կյանքում մեկ այլ տղամարդ կա: Այս դեպքերում անխափան աշխատող մի սուտ: Այդպես ասաց ու, չսպասելով պատասխանին, լսափողը դրեց: Կարող էր նրան իրականությունն ասել: Բայց այդ դեպքում ստիպված էր լինելու ակնարկել հոր մասին: Ավելի շուտ կմեռներ, քան կաներ դա:

Ընկերուհիներին անորոշ բան ասաց հարաբերությունը խզելու մասին: Նրանց առանձնապես չէր էլ հետաքրքրում: Ընկերական իրենց շրջանակը հետագա տարիներին ցրվեց, թեև երբեմն խումբը ոչ ամբողջական, բայց հավաքվում էր ռեստորանում՝ ընթրելու: Սովորական բաներ էին տեղի ունենում. մեկը զուգընկեր էր գտել, այրին նորից էր ամուսնացել, մյուսին աշխատանք էին առաջարկել Բարսելոնայում: Այդ տիպի բաներ: Իսկ Ներեա՞ն: Դե՛, այդպես էլ ապրում էր իր մենության գրկում: Փոխարենը՝ աշխարհի տարբեր ծայրեր էր հասնում՝ Ալյասկա, Նոր Զելանդիա, Հարավային Աֆրիկա: Ազատ ժամանակը նույնպես գործերով էր լցնում. անգլերենը բարելավելու նպատակով լեզուների ակադեմիայում էր գրանցվել, ավելի հաճախ էր մարզադահլիճ գնում, խոհարարական դասընթացի էր մասնակցում: Երբեմն, իհարկե, հանդիպում էր բաժանված կամ շուտով բաժանվող որևէ ընկերուհու հետ, որը նրան ժամեր շարունակ պատմում էր իր ընտանեկան խնդիրների ու զուգընկերոջ մասին ու նրանից խորհուրդ էր հարցնում, մեկից, որն ամենևին փորձառու չէր ո՛չ որպես մայր, ո՛չ էլ որպես ամուսնացած կին:

Եվ այդպես՝ անձրևն անձրևի հետևից, դարձավ երեսունվեց տարեկան: Երեսունվե՜ց: Որքան արագ է կյանքն անցնում: Բայց ես հո չե՞մ դառնանալու, չէ՞: Ու քանի որ Սան Սեբաստիանի տոնակատարությունների օրերն էին, ընկերուհու հետ գնաց Կոնստիտուսիոն հրապարակ՝ դրոշը բարձրացնելու արարողությանը: Պարեցին, խմեցին էլի ու էլի, ու ինչ-որ մի պահ՝ ուշ գիշերը, Ներեան հայտնաբերեց, որ տաքսիում հայտնվել է մի հրաշալի բուրող և անթերի ատամնաշարով տղամարդու կողքին, որը նրա կուրծքն էր շոյում. ուրիշ բան մի՛ հարցրու, որովհետև էլ բան չեմ հիշում: Հիշողության մեջ աղոտ պատկերներ էին մնացել: Լսելով ջրի ձայնը՝ հասկացա, որ ցնցուղ ընդունեց լուսադեմի՝ չգիտեմ որ ժամին: Հետո եկավ, մերկացրեց Ներեային, որն այնքան խմած էր, որ գրեթե ուշաթափ վիճակում փորի վրա պառկած էր մի տարօրինակ անկողնու վրա: Առավոտյան

ազդրերի արանքում սերմնահեղուկի հետքերը տեսնելով՝ գլխի ընկավ, որ տղամարդը ներթափանցել է իր մեջ: Նա Ներեային սպասում էր շքեղ կահավորված հյուրասենյակում: Մուգ կապույտ մետաքսե խալաթով շատ գեղեցիկ մի տղամարդ, որը նստած էր նախաճաշի սեղանի մոտ՝ ծաղիկներով, մոմերով ու լիքը համեղ ուտելու ու խմելու բաներով: Ոնց էլ նկարագրես՝ քիչ է: Այդ ժամանակ էր, երբ նստելով նրա առջև՝ Ներեան իմացավ անունը՝ Էնրիկե:

— Թեև ընկերներս ինձ ասում են Կիկե:

Մարդասպանների երթը

Նրան ճանաչելուց մի քանի ժամ անց Բիչո՛րին աղջկա հետ հեռախոսազրույցի ընթացքում հայտնեց իր կարծիքը. ինքնասիրահարվածի մեկն է: Աշխարհի ամենաանափառ մարդը: Հայելիների մոլագարը, օծանելիքի մեջ կորած մեկը, որ խոսում է՝ զուտ ինքն իրեն լսելու համար: Անթաքույց դառը հեգնանքով հարցրեց Ներեային՝ այդ պարոնը գիշերները անկողին մտնելիս է՞լ է կոստյում-փողկապով: Ներեան մորը հայտնեց, որ ցանկալի է՝ կամաց-կամաց ընտելանա նրան, քանի որ Էնրիկեն իր կյանքի մաս է կազմելու:

— Չասես, որ նրան գեղեցիկ չես համարում:

— Չափից ավելի:

— Եվ էլեգանտ:

— Ո՛ւֆ, անդիմադրելի: Տեսնենք՝ ոնց ես անելու, որ ձեռքիցդ չփախցնեն: Ստիպված ես լինելու օրը քսանչորս ժամ հսկել:

Բիչո՛րին տեղյակ չէր, որ Կիկեն ու Ներեան իրենց մեջ արդեն լուծել էին այդ հարցը: Այդ համաձայնությունը Ներեային անքուն գիշերներ ու արցունքներ բերեց, բայց այդ ընթացքում, ինքն իր հետ մենակ, ծանրութեթև արեց առավելություններն ու թերությունները ու վերջիվերջո մի ընկերուհու խորհրդով որոշեց Էնրիկեի էգոիզմին հակադրել իր էգոիզմը: Թքա՛ծ այդ ամեն ինչի վրա: Ու համակերպվեց: Հենց այդ պահից սկսած՝ ներքուստ զգաց իր անձի հարստացումը: Ի՞նչ, ի՞նչ իմաստով: Դե՛, ասենք, կարծես ազատված լինեի: Դրա մեկ այլ հետևանքը եղավ այն, որ նրանց միջև ծընվեց մի փոխընկալում-գործակցություն, որը, թեև հաճախ կամ պարբերաբար խզվում էր, բայց տարիներ շարունակ ամուր պահեց նրանց կապը:

Բացատրելով, թե ինչպես է դա տեղի ունենում, Ներեան ընկերուհուն մի օրինակ բերեց.

— Չեմ կարծում, որ մեզնից ավելի հաճախ բաժանվող զույգ լինի աշխարհում: Մի անգամ իր տանն ասացի, որ վերջնական եմ թողնում նրան, որ հետդարձ չի լինելու: Բայց քանի որ անձրև էր գալիս, ես էլ մի քանի ժամ առաջ էի եկել վարսավիրանոցից ու հովանոց չունեի, որոշեցի մնալ,

ու մի գիշեր անցկացրինք, որն, ըստ իս, մեր համատեղ կյանքում ամենաջերմն էր ու ամենառոմանտիկը:

Կիկեն երբեք չէր թաքցնում իր արկածները: Մի անգամ իրենց հանդիպմանն ուշ հասավ՝ կզակին թարմ ճանկռվածք: Ներողություն խնդրեց բաց ու անվարան.

— Արև՛ս, ների՛ր, որ ուշացա: Մի ջահել աղջկա հետ էի. երկար տևեց:

Ներեայի ուղեղում ասես բոցավառ մի պայթյուն եղավ, ու մի բառ հայտնվեց՝ խզում: Այդ հրավառության արդյունքում կայծերի մի փունջ հայտնվեց, ու յուրաքանչյուր պեծի մեջ կարելի էր կարդալ՝ վերջ: Այս հոպարը ոչ միայն մեջքիս է խփում, այլև դեռ մի բան էլ իր լկտիությունը դեմքիս է շպրտում: Այդ ժամանակ հազիվ մի քանի ամիս էին միասին: Ու հիմա էլ՝ սա: Ներեան ոտքից գլուխ ու մինչև ականջների ծայրը սիրահարված էր ու կարող էր երդվել, որ Կիկեն (բարեկիրթ, քնքշալի սրիկան, շա՜տ լավն է)՝ նույնպես: Շվարած իր շուրջը նայեց, ասես թաքնված տեսախցիկ փնտրեր՝ հաստատելու համար, որ կատակ է:

— Քեզ ի՞նչ եղավ:

Կիկեի դեմքն անկեղծ զարմանք էր արտահայտում: Ներեա՛, հիմարի՛կս, բացատրե՞լ է պետք: Ու բացատրեց.

— Արև՛ս, ուրիշ մարդիկ թենիսի սիրահար են կամ մետաղադրամ են հավաքում: Իսկ ես, ի՞նչ ասեմ, սեքս եմ սիրում: Ինձ պարուրում է կանանց մարմիններին տիրելու զգացողությունը: Հարյուրավոր, հազարավոր, որքան կարողանամ ունենալ, քանի դեռ ուժերս ներում են: Մարզանքի պես մի բան է, որը շատ լավ եմ անում, հասկանո՞ւմ ես: Դա ոչ մի կապ չունի մեր հարաբերության հետ, որը պարզապես հրաշալի է: Ես քեզ մեռնելու չափ սիրում եմ: Դու իմ Ներեան ես, la only one: Կասկած նույնիսկ չունենաս: Փոխարենը՝ օրգազմ ապահովողները (որոնց հետ պառկում եմ՝ չիմանալով ո՛չ նրանց բնակության վայրը, ո՛չ էլ անունը) զգացմունքների տեսանկյունից ոչ մի նշանակություն չունեն ինձ համար: Կրկնում եմ՝ չու-նեն: Նրանք հաճույքի գործիք են: Վերջակետ: Տեսնում ես, որ դրանից գաղտնիք չեմ սարքում: Դու մարմինդ չե՞ս մարզում: Դե՛, սա էլ նույնն է, պարզապես քայլասարքին կանգնելու փոխարեն գրավիչ մարմնի հետ եմ մարզվում: Իրոք, շատ կափսոսամ, եթե դու ինձ չընդունեիր այնպիսին, ինչպես եմ:

— Ու դու դեմ չէի՞ր լինի, եթե ես նույնը անեի տղամարդկանց մարմիններիի հետ:

— Բայց ես քեզ երբևէ ասե՞լ եմ՝ էս արա՛ կամ էն մի՛ արա:

— Լա՛վ, ինձ ժամանակ տո՛ւր: Մտածել է պետք:

Վեր կացավ. Կարավանսարայի բացօթյա մասում էին, հետմիջօրե էր. կապույտ երկինք, երեխաներ, աղավնիներ: Ներեան շրջանցում էր Մայր տաճարը լուրջ, շվարած՝ ինքն իրեն հարց տալով. Աստվա՜ծ իմ, ինչո՞ւ սրան գրողի ծոցը չեմ ուղարկում: Լա՛վ, ասենք գրողի ծոցն ուղարկեմ, ինչպե՞ս եմ հետո նրան հետ բերելու: Ու մեկը մյուսից ավելի նվաստացուցիչ, ավելի վիրավորական իրավիճակներ էր պատկերացնում, բոլորը՝ իր երևակայած զույգի հարաբերությունների (դե՛, ինչ իմանամ, բազմոց-բազկաթոռներ, հողաթափեր, մեկը մյուսով ապրող, հավատարմություն, նման բաներ) ճիշտ հակառակը: Պարզ է, որ երեսունվեց տարեկանում ես էլ չպետք է բաց թողնեմ վերջին գնացքը, հատկապես՝ այսքան կատարյալ գնացքը:

Շտապ հանդիպեց մի ընկերուհու հետ, որին վստահում էր: Անքուն գիշերից հետո աչքերի տակ սև շրջանակներ էին: Սեղանին՝ կաթով սուրճ ու կրուասաններ: Լսելով խնդրի մանրամասները՝ ընկերուհին, այս ու այն կողմ չընկնելով, հարցրեց Ներեային՝ սիրո՞ւմ է Կիկեին:

— Վախենամ՝ չեմ կարող «ոչ» ասել: Թե չէ վաղուց էի նրան գրողի ծոցն ուղարկել: Խնդիրն այն է, որ չեմ ուզում նրան որևէ մեկի հետ կիսել: Ուզում եմ միայն իմը լինի:

— Դրա դիմաց դու ի՞նչ ես նրան առաջարկում: Երեսունհինգ տարեկան ես:

— Երեսունվեց:

— Տե՛ս, Ներեա՛, սիրո՛ւնս, իմ կարծիքով՝ քո վիճակն այդքան ծանր չէ, ինչպես երեկ երեկոյան ինձ հեռախոսով նկարագրեցիր: Եթե իրոք սիրում ես նրան, մեծ ընտրություն չունես: Կամ էլ անմիջապես պիտի բաժանվեք, որի հետևանքով ամեն ինչ կկորցնես ու նորից մենակ կմնաս քո երեսունյոթ տարեկանում:

— Երեսունվեց:

— Կամ էլ քարտերովդ խելոք պիտի խաղաս ու դիմանաս նրա հեշտասիրությանը: Հասկանում եմ, որ դա մաշեցնող է, բայց կարևորը այս խաղի վերջում հաղթելն է:

— Բա որ ուրիշի՞ սիրահարվի:

— Իմ կարծիքով չբավարարվելու ու պատժվելու դեպքում ռիսկն ավելի մեծ է:

— Բա որ մի բանով վարակվի՞: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով, օրինակ, ու ինձ վարակի՞:

— Հասկանում եմ: Զանգի՛ր նրան ու ասա՝ վե՛րջ:

— Խե՞նթ ես, ի՞նչ է:

— Դե՛, ուրեմն, ստիպված ես նրան ընդունել հենց այդպիսին:

— Դժվար է լինելու:

— Դժվար կլինի, բայց կարող ես:

— Խոզի մեկն է:

— Քո խոզն է, Ներեա՛: Նրան լավ վերաբերվի՛ր:

Չուզեց իրենց սովորական տեղերից մեկում հանդիպել Կիկեի հետ: Ինչո՞ւ: Դե՛, չափից դուրս ենթարկվող չերևալու համար: Կիկեն հեռախոսով շատ ջերմ էր, հարցեր չտվեց, համաձայնեց: Բուլվարի կրպակի հետևում թաքնված՝ Ներեան տեսավ, թե ինչպես նա եկավ ճիշտ ժամին անթերի տեսքով ու զբաղեցրեց Բարանդիարան սրճարանի բացօթյա մասի սեղանիկը: Ներեան այդ ընթացքում փողոցի նստարանը զբաղեցրեց, որը Կիկեի տեսադաշտից դուրս էր, ու մոտ քսան րոպե նայում էր տարբեր մարդկանց: Թող սպասի: Նախքան նրան մոտենալը՝ գրպանի հայելու օգնությամբ թարմացրեց աչքերի գունափոշին ու քիչ առաջ գնած անաստված թանկ օծանելիքի մի երկու կաթիլ ցողեց դաստակներին:

Որովհետև եթե ցանկանամ, այս փառասերը ինձ չի հաղթի ոչ էլեգանտ լինելու, ոչ էլ բույրի հարցում: Ամբոխի միջով քայլեց մոդելի ինքնավստահ քայլվածքով, տը՛կ-տը՛կ, բարձրակրունկ իր կոշիկներով, հերարձակ՝ իմանալով, որ բոլորն իրեն են նայում, նաև Կիկեն, որը սրճարանից տեսնում էր իրեն ընդառաջ եկող Ներեային: Կեսճանապարհին շուրթերը չենթարկվեցին Ներեային. այդ դավաճան ժպիտը (չփորձե՛ս ժխտել) անձնատվության էր նման: Նմա՞ն: Հենց անձնատվություն էր, որ կար: Կիկեն վեր կացավ, նրան ընդունեց համբույրով, հաճոյախոսելով ու բարեկիրթ կաբալերոյի ոճով նրան աթոռ առաջարկեց:

Ներեան միանգամից անցավ բուն խնդրին:

— Ոչ մի դեպքում իմ ներկայությամբ չպիտի լինի:

Էլ բան չասաց: Կիկեն համաձայնության թեթև ժեստ արեց, մատուցողին կանչեց, որ իրենց սպասարկի, ու պիջակի ներքին գրպանից կաշվե մի տուփ հանեց: Լուռ մեկնեց Ներեային: Մեջը ոսկե շղթա ու գինկո պատկերող կախազարդ էր: Ներեան առանց կոտրատվելու նվերը գեղեցիկ անվանեց, որից հետո Կիկեն մոտեցրեց բերանը, ու նրանց շուրթերը հանդիպեցին:

Սկսեցին զրուցել տարբեր թեմաներով: Կիկեն կում-կում խմում էր սառույցով վիսկին՝ ժամանակ առ ժամանակ բարձրացնելով գավաթը ու նայելով հեղուկի միջով: Ներեան, որ մեկ ժամից անգլերենի դասի էր, տոնիկ էր պատվիրել: Այդ պահին տեսան, որ Մայոր փողոցի կողմից՝ իրենցից ոչ հեռու, մոտենում է ETA-ի բանտարկվածների ազգականների հերթական երթը: Մարդիկ քայլում էին հանդարտ, երկու զուգահեռ շարքով, ոմանք՝ զրուցելով, մյուսները՝ լուռ: Յուրաքանչյուրի ձեռքին երկար փայտ էր, որի վրա պաստառ էր փակցված՝ բանտարկվածի լուսանկարով ու տակը՝ անունով: Լուսանկարների վրա պատկերվածները՝ բոլորն անխտիր երիտասարդ, երթի մասնակիցների զավակներն էին, եղբայրները կամ ամուսինները: Անցորդները մի կողմ էին քաշվում, որ նրանց տեղ տան:

Հին թաղամասով անցնելիս Ներեան բազմիցս հանդիպել էր նման երթերի, հաճախ՝ անսպասելի, մի անկյունից թեքվելիս: Ո՛չ մոտիկից, ո՛չ էլ հեռվից դրան բացարձակ ուշադրություն չէր դարձնում: Ասես գոյություն չունենային: Շրջվում ու գնում էր: Սրճարանի բացօթյա մասին ամենամոտ շարքում նկատեց Միրենին՝ մռայլ ու վճռական՝ իր որդու նկարը ձեռքին: Ներեան ուրիշ անգամ էլ էր նրան տեսել:

Կիկեն վրա բերեց.

— Ահավասի՛կ մարդասպանների երթը:

— Ցածր խոսի՛ր: Չեմ ուզում՝ խնդիր ունենանք:

Կիկեն երկարեց մարմինն ու Ներեայի ականջին շշնջաց.

— Ահավասի՛կ մարդասպանների երթը:

Ուղղվելով ու արդեն իր նորմալ ձայնով հարցրեց.

– Այսպես ավելի լա՞վ էր: Բարձր խոսեմ, թե ցածր, այդպես եմ մտածում:

Հիմա Ներեան ձգվեց առաջ, ու Կիկեն մոտեցրեց շուրթերը՝ նրան համբուրելու:

Հարսանիք՝ սպիտակ զգեստով

Նշանակեցին հարսանիքի օրը: Մի քանի օր էր մնացել, երբ Ամարա փողոցի վրա մի կին վրա տվեց Ներեային:

— Քո մեղքով ինքնասպան եմ լինելու:

Հավանաբար սպասում էր նրան, բայց Ներեան ո՛չ ճանաչում էր այդ կնոջը, ո՛չ էլ հարցրեց՝ անունն ինչ է: Փորձեց շրջանցել, բայց երեսունին մոտ, գրավիչ այդ կինը կտրեց նրա ճանապարհը:

— Նրան երբեք չես երջանկացնի այնպես, ինչպես ես:

Ներեան սկսեց հասկանալ: Իրեն մոտիկից նայող այդ դեմքը հուսահատություն էր արտահայտում՝ մարտահրավեր նետող, զայրացած, արտասվելուց բորբոքված աչքերով: Կինն ագրեսիվ չէր, չէր վիրավորում, սակայն հիվանդագին շեղման նշաններ էր ցուցաբերում: Սպառնացող-զգուշացնող վեր տնկելով ցուցամատը շարունակեց:

— Պատրանքներ չունենա՛ս: Կարծում ես՝ քո տարիքում կարողանալո՞ւ ես նրան բավարարել:

Ներեա՛, զսպի՛ր քեզ: Ներեա՛, զսպի՛ր քեզ: Ներեան իրեն չզսպեց:

— Իսկ գուցե գնաս, ինքնասպան լինես ու ինձ էլ հանգիստ թողնես:

Զգացվեց, որ կինը պատրաստ չէր այդ արձագանքին: Մնաց տեղում շվար՝ ասես հիպնոսացած: Ներեան, օգտվելով նրա ապշանք-շվարանքից, անցավ նրա կողքով ու վճռական քայլերով, տը՛կ-տը՛կ, շարունակեց իր ճանապարհը: Նրան այլևս չտեսավ: Գուցե, ինչպես ասաց կամ խոստացավ, ինքնասպա՞ն է եղել: Ցինիկ մի՛ եղիր, աղջի՛կ ջան:

Այս մասին Կիկեին պատմելու գայթակղություն ուներ, բայց հետո մտածեց՝ ինչի՞ համար: Ենթադրաբար այդ կինը նրանցից էր, որոնք Կիկեի առջև ոտքերն էին բացել: Մեղկո՛ւկ: Երևի նրանցից էր, որոնք չեն գոհանում սոսկ օրգազմ ապահովողի դերով, ու ցանկանում էր վիճարկել իմ գահը:

Խորհուրդ հարցրեց Շավիերից, թե ի՞նչ պահանջի Կիկեից՝ գույքի համատե՞ղ սեփականության իրավունք, թե՞ բաժնային: Եղբայրն անվարան երկրորդը խորհուրդ տվեց: Ավելացրեց, որ ասածը չի նշանակում, որ թշնամանք ունի Կիկեի հանդեպ:

— Վերջիվերջո, այդ մարդու ֆինանսական վիճակը լավ է: Բայց նկատի ունենալով ապագա հնարավոր շրջադարձերը՝ նախընտրելի է, որ ունեցվածքիդ վերաբերյալ վերջին խոսքը քոնը լինի:

Ներեան այդպես էլ վարվեց, Կիկեն դեմ չէր, նոտարով հաստատեցին: Ամուսնացան Բարի Հովվի եկեղեցում. Կիկեն՝ աթեիստ, Ներեան՝ կրոնական իր կասկածներով: Բիչո՛րին պայման դրեց, որ եկեղեցի կգա, եթե արարողությունը եպիսկոպոսը չվարի: Ասաց, որ այդ պարոնը միայն մարդասպանների հանդեպ է գթասեր, որ խնդրում է՝ իր ներկայությամբ նրա անունը չտան, թե չէ սիրտը խառնում է, ու որ հիմնականում նրա պատճառով է հավատը կորցրել: Կիկեի ծնողները՝ տուդելացի նավառացիներ, հավատը պահպանել էին: Ու ավելի շատ հանուն նրանց էր (արարողությանը նաև ձեռքի հետ շքեղություն հաղորդելու համար), որ սպիտակազգեստ հարսն ու փեսան պսակվեցին եկեղեցում:

Նորապսակների ժպիտները (Միրամար դղյակի ֆոնի վրա) Գիպուսկոա հրապարակի սյունաշարերից մեկի լուսանկարչատան ցուցափեղկում էին ամիսներ շարունակ:

Խնջույքը, որ ծովին նայող Ուլիայի ռեստորանում էին կազմակերպել, տևեց մինչև երեկո: Հրաժեշտի պահին Բիչո՛րին գինովցա՞ծ մի բան ասաց, որը հետաքրքրեց Ներեային.

— Քեզ շատ երջանկություն եմ մաղթում, դու դրա կարիքը կզգաս:

Քիչ անց Ներեան մոր ասածը պատմեց Շավիերին:

— Խնդրում եմ, կարևորություն մի՛ տուր: Ama-ն կյանքի իր պատմությունն ունի: Ու այսպիսի յուրահատուկ օրերին գուցե հիշողություններն են արթնացել:

Այս ամենը շաբաթ օրը տեղի ունեցավ: Երկուշաբթի նորապսակները գնացքով մեկնեցին Մադրիդ: Ման եկան, այցելեցին, առատորեն իրար սիրեցին, քանի որ Կիկեն տարված էր շատ շուտ հայր դառնալու մոլուցքով, այնպես որ հենց մտնում էին սենյակ, անցնում էին գործի՝ չհասցնելով նույնիսկ անկողնու ծածկոցը հավաքել: Ներեան այդ դեպքերում հիշում էր այն կնոջ այլայլված դեմքը, որը փողոցում իր դեմքին շպրտեց, որ երբեք չի կարողանալու բավարարել իր ամուսնուն: Պատրաստակամ, ենթարկվող՝ կատարում էր Կիկեի հրահանգները՝ այսպես պառկի՛ր, շո՛ւռ արի, մո՛տ արի: Կենակցելուց հետո, շունչը հազիվ տեղը բերած, նա արդեն երեխայի համար անուն էր ընտրում, ինչը դուր չէր գալիս Ներեային. ասում էր՝ դա դժբախտություն է բերում:

Մադրիդում նստեցին Պրահա տանող օդանավը: Նախատեսել էին իրենց մեղրամսի մնացած մասն այնտեղ անցկացնել: Գաղափարը Ներեայինն էր: Ընկերուհին նրան հրաշալի բաներ էր պատմել այդ քաղաքի մասին: Որ էս, որ էն, որ այդ չգիտեմ որ կամուրջը ու չգիտեմ երբվա մայր տաճարը: Գնա՞նք Պրահա: Գնացինք: Ինչ կուզես, արև՛ս: Գործընկերոջ հետ լիկյորների արտադրանքի և վաճառքի մի ընկերության սեփականատեր լինելով՝ Կիկեն որոշեց, որ այդ ճամփորդությունը հրաշալի հնարավորություն է ընձեռում տեղում վերլուծել Չեխիայում բիզնես անելու հնարավորությունը՝ մի երկրում, որտեղ մինչև հիմա հաճախորդներ չուներ: Ու բախտը փորձելու գաղափարով՝ ուղեբեռի մեջ իր արտադրանքի մասին թերթիկների մի տրցակ դրեց՝ անգլերեն տեքստով, նաև քսան տեսակի լիկյոր վերցրեց՝ փոքրիկ շշերով, ստվարաթղթե տուփով: Ասում էր.

— Գերմանիայից և Ավստրիայից ամեն տարի մեզնից լիքը պաչարան են գնում: Պատճառ չեմ տեսնում, որ չեխերին դուր չգա իրենց հարևաննե-րի հավանածը:

— Իսկ թերթիկներն ի՞նչ ես անելու: Պրահայի սուպերմարկետներո՞ւմ ես բաժանելու:

— Դա ինձ թո՛ղ. ես այդ հարցում թեթև ձեռք ունեմ:

Պրահայում, ինչպես և Մադրիդում, զբոսնեցին, լուսանկարվեցին, հետաքրքրությամբ տարբեր վայրեր այցելեցին, բեղմնավորվելու նպատակով զուգավորվեցին: Բայց մի անսպասելի բան պատահեց, որը մինչև հիմա մեջտեղ է գալիս, երբ հիշում են Պրահայում իրենց մեղրամիսը: Երկու օր էր, ինչ եկել էին, ու որոշեցին գնալ Մալա Ստրանա թաղամաս ու այնտեղ ճաշել, տեսնել ու լուսանկարել պատմական շենքերն ու ճանապարհին հանդիպած տեսարժան վայրերը: Արևոտ եղանակն ու հյուրանոցում վերցրած քարտեզը նպաստում էին ծրագրին:

Սալահատակած փողոցներով իջան մինչև Կարլի կամուրջ: Ու հիացական արտահայտություններ արձակելով՝ անցան մուտքի երկու աշտարակները իրարից բաժանող փոքրիկ թունելով: Ներեան՝ արևային ակնոցով, ցանկացավ նկարվել մի քանդակի մոտ: Մազերը կարգի բերելու ընթացքում պայուսակը թողեց բազրիքի մոտ, ու այդ պահին տասնչորս-տասնհինգ տարեկան (շատ-շատ՝ տասնվեց) մի տղա մեկ ակնթարթում ձեռքը գցեց պայուսակին ու վազեց: Ներեան հենց այդ պահին նրան տեսավ: Կիկեի, քարե արձանների ու ամբողջ Եվրոպայի ուղղությամբ

իսպաներեն մի բառ բղավեց՝ bolso*, ու հասցրեց ակնարկել նաև պասպորտ, վիզա, ինչը չտեսնված արագություն հաղորդեց իր ամուսնուն:

Կիկեն վազեց գողի հետևից: Ներեան նրան առաջին անգամ տեսավ վազելիս: Ու ի՜նչ արագ էր վազում: Բացի այդ՝ հանգամանքները նրա օգտին էին: Կիկեն անցնում էր արդեն ազատ այն ճանապարհով, որը տղան ստիպված բացում էր դանդաղ, համարյա անշարժ զբոսաշրջիկների միջով: Գողը բախվեց արևելյան դիմագծեր ունեցող մի տղամարդու: Տեսնում էր, որ այդ արագաշարժ օտարերկրացին շուտով բռնելու է իրեն, և չգիտես ինչու որոշեց պայուսակը գետը նետել, հավանաբար հետապնդողին երկընտրանքի առջև կանգնեցնելու հույսով:

Բայց չստացվեց: Անմիջապես հրաժարվելով հետապնդումից՝ Կիկեն վազեց դեպի բազրիքը: Ներեան մոտավորապես երեսուն մետր հեռավորությունից տեսավ, որ նա արագ կոշիկները հանեց ու ինչ-որ մի բան մըտցրեց կոշիկի մեջ: Երևի Patek Philippe ժամացույցն էր: Էլ ինչը պիտի լիներ: Վլտավան Պրահայով հոսելիս մեծ գետ է դառնում: Միայն թե անախորժություն չլինի: Ու ցանկություն ունեցավ բղավել, որ չցատկի, բայց Կիկեն, ոտքերն առաջ, ցատկեց, ու Ներեան շտապեց տեր կանգնել նրա կոշիկներին ու շքեղ ժամացույցին:

Եվ խնդրեմ, Կիկեն՝ իր հարյուր քսան եվրո արժողությամբ սպիտակ վերնաշապիկով, գետի պղտոր հոսանքում հանգիստ ու ժպտերես, տղայավարի լողալով դեպի մոտակա ափը, Ներեային ցույց է տալիս փրկված պայուսակը: Արևելյան երկրից եկած զբոսաշրջիկները ծափահարեցին նրան: Իսկ Ներեան, Կիկեի կոշիկները ձեռքն ու ժամացույցը ապահով տեղում, քիչ էր մնում՝ պայթեր սիրուց: Հանդիպեցին ափին: Թրջվելուն համաձայն Ներեան նետվեց Կիկեի գիրկը: Ու շրջապատի բոլոր լուսանկարչական խցիկները ֆիքսեցին նրանց համբույրը: Թրջված ամուսինն ու երջանիկ տիկինը գնացին հյուրանոց: Մինչ ձեռք ձեռքի տված անցնում էին կամրջով, Ներեան հիշեց սոսկ օրգազմ ապահովող կնոջը, որը շաբաթներ առաջ փողոցում հարձակվել էր իր վրա:

* Bolso (իսպ.), պայուսակ:

Չորրորդ անդամը

Բանտարկման երկար տարիները ճնշող են: Այն էլ ինչքա՜ն ճնշող: Ընկերների հետ վիճաբանությունները, բանտապահների հետ ընդհարումներն ու հացադուլները հոգնեցնում են, թևաթափ անում: Միայնությունը, որը մի կողմից փախուստի-պատսպարվելու ձև է, մյուս կողմից՝ վատթարագույն մղձավանջների հորձանք, դանդաղորեն հալումաշ է անում: Մահճակալի վրա մեկնված Խոշե Մարին անվստահ է: Չատոյի կնոջ նամակին պատասխանելը սխալ էր: Վա՜յ, Աստված չանի՝ ama-ն իմանա: Չեմ էլ ուզում մտածել՝ ինչ կլինի: Բայց արդեն որոշ ժամանակ է, ինչ մտածում է, Բիչո՛րիին գրելուց հետո՝ ավելի ինտենսիվ. կասկածներն է առնում-տալիս, հիշողություններով տոպրակը գետնին շուռ տալիս, մի խոսքով՝ ինքն իր կյանքն է ուտում: Այստեղ՝ բանտում, չափից շատ մտածելը թուլացնում է: Մարդուն դառը իրականության առջև է կանգնեցնում: Ահավասի՛կ քո կյանքը, տղա՛, ընդամենը թափոն՝ բանտախցիդ չորս պատերի մեջ լցրած:

Մտորումների մեջ խորացած՝ նորից հայացք է գցում հատակին ու ի՞նչ է տեսնում: Ի՞նչ պիտի տեսնի: Իր խցի հատակը, որն անմիջապես Սարաուս պողոտայի բնակարանի հատակի է վերածվում (տարիներ առաջ՝ օգոստոսի մի շաբաթ օր, երբ քաղաքում տոնախմբություն էր): Պետք է բնակարանը մաքրեր: Առաջ փոխեփոխ երեքով էին դրանով զբաղվում: Բայց դա խնդիրներ էր առաջացնում: Ի՞մ հերթն է: Քո՞ հերթն է: Ո՞ւմ հերթն է: Ու այդպես շարունակ: Աշխատանքի ամբողջ ծավալն այդ օրվա հերթապահին էր բաժին ընկնում: Դա էլ այն պարագայում, որ իրենք ընդամենը փոշեկուլով ու խոնավ շորով էին մաքրում՝ զուտ կեղտի մեջ չկորելու համար: Վերջը Խոշե Մարին որոշում կայացրեց. հոպարնե՛ր, շաբաթ օրը բոլորս միասին ենք տունը մաքրելու: Իրենց բրիգադով գործի անցան. դու լոգասենյակով ես զբաղվում, դու՝ հյուրասենյակով, ես՝ խոհանոցով: Մեկ-երկու-երեք. մի ժամում ամեն ինչ վերջացրին:

Ռադիոն միացրած էր: Ինչպես միշտ: Ռադիոն պետք է միշտ միացրած լինի: Տեղեկանալու համար: Այդպես իմանում էին՝ երեկ շուրջկա՞լ է եղել,

գուցե ekintza է տեղի ունեցել, և որտեղ է դա պատահել, որևէ talde բռնվե՞լ է: Տպավորություն էր, որ որքան ավելի գաղտնի պիտի պահվեր տեղեկությունը, այնքան ավելի արագ էին լրատվամիջոցներն այն տարածում: Ու այդ ամենը, իհարկե, շատ օգտակար է պայքարողների համար: Ինչպե՞ս: Դե՛, զգուշանալու համար, նաև ժամանակին ծլկելու, եթե ամեն ինչ թարս գնա: Երբեք չես իմանա:

Ցերեկվա ժամը երեքից գիտեին, որ Մորլանես թաղամասում ինչ-որ խոշոր բան է տեղի ունեցել: Հաղորդավարը պատմում-հայտնում էր, որ այդ թաղամասը շրջապատված է: Չէին թողնում՝ լրատվամիջոցները մոտենան: Ովքե՞ր: Գվարդիականները: Հեռվից կրակոցներ էին լսվել, շատ կրակոցներ ու մի պայթյուն: Մանրամասները քիչ էին ու ոչ հստակ, բայց բավարար էին՝ հասկանալու համար, որ picoleto-ները Սան Սեբաստիանում մեծածավալ գործողություն են իրականացնում:

Խոշե Մարիի կարծիքով հենց սկզբից դրանից վատ հոտ էր գալիս:

— Չոպո՛, անելիքդ թո՛ղ ու փողոցին հետևի՛ր:

Իրիկվա ժամը վեցին առաջին հաստատումը ստացան: Txakurra-ները հարձակվել էին «Դոնոստի» հրոսակախմբի վրա: Հայտնեցին Մորլանես թաղամասում երեք սպանվածի մասին: Հաղորդավարն ասաց նաև, որ ուրիշ տեղերում էլ ձերբակալություններ են եղել, բայց չասաց որտեղ:

Խոշե Մարին դիմեց պատուհանին կպած Չոպոյին.

— Բան կա՞:

— Ոչինչ:

Մեկ է, կասկածում էր: Ամենաանսպասելի պահին այդ սրիկաները գալիս են ու դուռդ են ջարդում: Պաչոյին ասաց.

— Կարծում եմ, որ ես ու դու պետք է գնանք, իսկ սա թող մնա:

— Մենք ի՞նչ կապ ունենք «Դոնոստի» խմբի հետ: Ո՛չ նրանց ճանաչում ենք, ո՛չ էլ նրանց աջակցող talde-ն ենք:

— Գուցե հենց նրանց են ծառայել մեր հավաքած տեղեկությունները: Բացի այդ՝ ղեկավարության հետ նույն կապի միջոցն ենք օգտագործել, ի՞նչ իմանամ: Արի՛ թեկուզ մի գիշերով գնանք: Չոպոն էլ վաղը մեզ կասի՝ փողոցում տարօրինակ տեղաշարժ եղե՞լ է, թե՞ չէ:

Մինչև այդ պահը երեքն էին, հիմա չորսով էին ապրում: Կասկածը, որ նրանց հետևում-հետապնդում են, տեղավորվել-ապրում էր նրանց հետ: Խմբի նոր անդամի էր վերածվել: Բավական ազդեցիկ, ի դեպ: Այդ

մասին խոսեցին մթան մեջ՝ Իգուելդո սարի լանջին, որտեղ տեղավորվել էին՝ քնապարկերով գիշերն անցկացնելու: Պաչոն այնքան էլ համոզված չէր:

— Լսի՛ր, ինչո՞վ ես բացատրում, որ մեր հետևից չեկան:

— Որովհետև հույս ունեն մի թելից բռնել ու ամբողջ կծիկը դուրս քաշել:

— Դու արդեն պարանոյայի մեջ ես:

— Էն օրը հարևանի հետ վերելակ նստեցի: Բարևեցինք իրար: Ու այս մի քանի օրը երկրորդ անգամ եմ այդ տպին հանդիպում: Չգիտեմ՝ դու՝ ոնց, բայց իմ կարծիքով՝ նման բաները պատահական չեն: Տե՛ս Մորլանսի այսօրվա դեպքերը: Ինչ-որ պահ txacurra-ները մեկի տեղն են հայտնաբերել: Ու որոշել են՝ ուշադրությո՛ւն, եթե այս ծիտիկին հետևենք, վաղ թե ուշ ամբողջ խումբը կհայտնաբերենք: Այս պատերազմն այսպիսին է, Պաչո՛: Ուրիշ բացատրություն մի՛ փնտրիր:

— Եթե այդքան հեշտ լիներ, ETA-ի հարցերն արդեն լուծած կլինեին:

— ETA-ի հարցը ոչ ոք չի լուծելու: Իհարկե, մարտիկներ ենք կորցնում: Բայց ամեն ընկնողի տեղը երկուսը կամ երեքն են գալիս: Մեր միջի վառոդը ահագին ժամանակ կհերիքի:

Հեռվից պայթյունի ձայն լսվեց:

— Էս ի՞նչ էր:

Ու մեկ էլ գիշերային երկինքը քաղաքի վրա բոցավառվեց լուսավառ շառաններով, մեծ ու բազմագույն վարդակներ ուրվագծող կայծերով: Ծովախորշի հրավառությունն էր Ավագ շաբաթվա կապակցությամբ: Խոշե Մարին ու Պաչոն նստեցին ծառաշարի եզրին՝ դիտելու: Մոռանալով իրենց խոսակցությունը՝ քննարկում էին երկնակամարի հրագործ ֆիգուրը:

— Նայի՛ր, նայի՛ր:

— Աստվա՜ծ իմ, ի՜նչ գեղեցիկ է:

Երբ հրավառությունն ավարտվեց, վերադարձան ծառերի տակ ու քողարկող մթության ներքո՝ ամառային գիշերով, սարի լանջին մտան քնապարկերը:

Ծղրիդները համերգ էին տալիս: Պաչոն բարկանում էր.

— Բոլոր այդ մարդիկ այնտեղ՝ ներքևում, *դրանցինչնեմասել*, քեֆ են անում՝ հերթ կանգնելով պաղպաղականոցներում, իսկ մենք հետևներս ենք ճղում նրանց ազատագրման համար: Երբեմն մտածում եմ՝ հրացանը վերցնեմ ու պի՛ֆ-պա՛ֆ... մի քիչ դրանց խելք սովորեցնեմ:

— Հանգի՛ստ մնա. երբ իշխանությունը մեր ձեռքում լինի, մեր դուդուկի տակ կպարեն:

Առավոտվա յոթին Չոպոյի հետ հանդիպեցին իրավաբանության ֆակուլտետի հետնամասում:

— Ե՞վ:

— Բան չկա:

Բայց Խոշե Մարին՝ ուռած աչքերով, գզգզված, դեռ կասկածների մեջ էր: Չոպոյին հանձնարարեց, որ իր ու Պաչոյի համար ժամանակավոր կացարան գտնի: Դեռ քնապարկերում էին քնում բաց երկնքի տակ: Պաչոն համաձայն չէր: Դե՛, Խոշե Մարին էլ առաջարկը հրամանի վերածեց ու ասաց, որ այդ թեմայով չեն խոսելու: Իր հրամայական ֆրազի վերջում մի երկու քաղցր խոսք ավելացրեց: Խոշե Մարիին հակաճառելը հեշտ բան չէր: Նրա բազուկներն ուժեղ ու մկանուտ էին, ու նա վախեցած էր:

Երկուշաբթի Չոպոն նրանց հայտնեց, որ կարող են ապրել իր ուսանողական ընկերոջ ու նրա ընկերուհու տանը, բայց նրանք որոշ պայմաններ էին դրել: Ի՞նչ պայմաններ: Որ չպետք է իջնեն փողոց, որպեսզի ոչ ոք չտեսնի, թե ինչպես են ելումուտ անում, քանի որ բնակարանը Անյորգա թաղամասի սկզբի յոթհարկանի շենքում էր՝ շատ ակտիվ հարևաններով, ու որ նրանք ամենաուշը ուրբաթ օրը պետք է հեռանան: Խոշե Մարին ասաց՝ տրամաբանական է: Մննդի մասին սովորական իր մտահոգությունն արտահայտեց: Չոպոն էլ ասաց, որ ուտելիքը խնդիր չէ, և որ տանտերերը մի հացի տեղը երկուսը կգնեն:

— Լա՛վ, եղա՛վ:

Երեկոյան կողմ նստեցին Լասարտե տանող ավտոբուսը: Իջան Անյորգայի կանգառում. աղջիկը նրանց այնտեղ էր սպասում: Ուղեկցեց մինչև իր բնակարան, որը գնացքի գծերից հեռու չէր: Թմբլիկ էր, հաճելի, շատախոս, ձախ abertzale աղջիկներին հատուկ առջևի մազափնջի կտրվածքով: Տղան ավելի շուտ լուռ ու մաղձոտ մարդու տպավորություն էր թողնում, ու քթի տակ մի տեսակ կոր սպի ուներ, ասես վիրահատած լիներ պռատ շրթաճոթռուկը: Փոխադարձ համաձայնությամբ որոշել էին թաքցնել իրենց իրական անունները, ինչը մեր պարագայում իմաստ ուներ, քանի որ նրանք մեզ չէին ճանաչում, մինչդեռ մենք կարող էինք Չոպոյից իմանալ կամ էլ մուտքի փոստարկղի վրա կարդալ նրանց անունները, բայց դե՛, մեկ է: Պետք էր մի քիչ արկածային դարձնել առօրեականը:

Մինչ ընթրում էին, բավական ծիծաղեցին մականուններ ընտրելիս: Եթե անգամ չէին մոռանում, հաջողեցնում էին շփոթել դրանք՝ առաջացնելով զվարճալի իրավիճակներ: Այնպես որ, խառնաշփոթին վերջ դնելու նպատակով որոշեցին, որ իրենց մականունները կլինեն Վալետ ու Զի, Խոշե Մարիինը ու Պաչոյինը՝ Հաց ու Շոկոլադ: Գաղափարն աղջկանն էր, որ պիտի ծառայեր միայն առաջին օրվա ժամանցի համար, բայց պետք չեկավ, քանի որ հետո իրար դիմելիս չէին օգտագործում որոշած մականունները ու պարզապես դու-ով կամ լսիր-ով էին դիմում, էլ չասած, որ Պաչոն հաճախ լեզվից թռցնում էր Խոշե Մարիի անունը, սա էլ Պաչոյին էր անունով դիմում:

«Զիու» դեմքը սկզբից ևեթ մռայլ էր: Խոշե Մարին գլխի ընկավ, որ այս տիպի հետ ինչ-որ բան է կատարվում: Ու գիշերը, երբ արդեն մահճակալներում շշուկով քննարկում էին հարցը, պարզվեց, որ Պաչոն նույնպես այն կարծիքին էր, որ այդ տիպին դուր չի գալիս, որ մենք իր տանն ենք մնում: Փոխարենը՝ աղջիկը՝ զվարճախոս ու լավ խոհարար, անընդհատ պայծառացնում էր մթնոլորտը: Գուցե հենց դա՞ էր խնդիրը:

— Խանդո՞ւմ է:

— Հաստատ:

— Դե՛, ես չեմ կարծում, որ նրան որևէ առիթ տված լինենք:

Խոշե Մարին, բանտախցի իր մահճակալին փռված, անշարժ հայացքը առաստաղին հառած, չնայած հոգեբանական ճնշվածությանը, չի կարողանում զսպել ժպիտը: «Զին» ապուշ չէր, բայց քանի որ ամառային ամիսներին *Օնդառետա* լողափում հովանոց ու թախտ էր տրամադրում, տարբերակ չուներ. առավոտյան հրաժեշտ էր տալիս ու ամբողջ օրը տնից դուրս էր անցկացնում: Իսկ երեքշաբթի օրը մեծ կրծքերով «Վալետը» շատ թեթև հագնված մտավ լոգասենյակ՝ իբր չնկատելով, որ Պաչոն ցընցուղի տակ է, թեև ջրի ձայնը ամբողջ տնով մեկ էր լսվում: Երբ մտավ (վա՛յ, կներես), Պաչոն հասկացավ նրա նպատակը ու, դե՛, էլ ինչ պիտի աներ, հրավիրեց՝ լոգախցիկ մտնի: Աղջիկը երջանիկ էր: Ու Խոշե Մարիի ականջին, որ հյուրասենյակում թերթ էր կարդում, հասան նրանց տնքոցներն ու փնչոցները:

Գիշերը խոսելիս հարցրեց.

— Չասես, որ նրա հետ էիր:

— Պատրաստվի՛ր, վաղը հաստատ քո հերթն է լինելու:

Բայց Խոշե Մարին, երբ տեսավ, որ աղջիկը մոտենում է, մարմնային որևէ շփում մերժելու ձև տվեց: Խնդիրն այն է, որ ինձ այդ կարգի իրավիճակները երբեք դուր չեն եկել: Ես էդ հարցում չկամ: Ու էդ «պարկեշտ» Խոշունեն ինձ այդպես էլ բան չսովորեցրեց: Բացի այդ՝ Պաչոյին, երբ մենակ էին, բացատրեց, որ «Ձիուն» չէր վստահում: Խանդի հողի վրա կարող էր նրանց մատնել: Այդ միտքը շատ էր անհանգստացնում Խոշե Մարիին, ինչը խորանում էր թմբլիկ աղջկա մշտական վավաշոտ նկրտումների պատճառով: Գրողը տանի, էս ինչ քոքված տիպ է: Այնպես որ, հիգշաբթի օրը, նույնիսկ չնախաճաշելով, շնորհակալություն հայտնեցին՝ իրենց հյուրընկալելու համար, ու կես ժամ տարբերությամբ դուրս գալով՝ վերադարձան Սարաուս պողոտայի բնակարան: Չոպոն վստահեցրեց, որ ամեն օր հետևել է փողոցի անցուդարձին ու կասկածելի ոչինչ չի տեսել:

100

Ձախողումը

Սկսել էին իրագործել իրենց ekintza-ների շարքը ու կարող էին ավելին անել, բայց նյութերի մատակարարումն էր ուշանում: Հարցրին, թե պատճառը որն է: Ու կապավորը վրդովված պատասխանեց, որ իրենց խումբը միակը չէր: Գվարդիականներին ուղեկցող պահակախմբի ճանապարհին իրենց դրած ամոնալի պայթուցիչը չգործեց, մինչդեռ, եթե պայթեր, picoleto-ներին օդ կիաներ, իրենք էլ կազմակերպության աչքին ահագին կբարձրանային:

Օդ թռցրին մեքենաների մի վաճառասրահ, որի տիրոջ մասին ասեկոսեներ կային: Ճշմարտությո՞ւն էր: Կարևոր չէր: Մեկ է, խանութը պայթեցրին: Նույնիսկ հարկ եղավ մարդկանց շենքից տարհանել: Բանկի մասնաճյուղի վրա հարձակումն էլ օգնեց իրենց ֆինանսական վիճակը շըտկելուն, ինչի կարիքը շատ էին զգում: Հազիվ էին ծայրը ծայրին հասցնում: Արդեն ամենայն մանրամասնությամբ պլանավորել էին թոշակի անցած մի ոստիկանի սպանությունը, երբ իմացան, որ Բիդարի վիլլաներից, թե տներից (մի խոսքով՝ կարևոր չէ) մեկում ձերբակալել են ETA-ի ամբողջ տնօրինությանը:

Էրիվ շփոթված էին: Ավելին, ասես որբ մնացած լինեին: Ի՞նչ անել: Խոշե Մարին մտահոգ ու չարագուշակ հիշեց, որ Պոտրոսին բռնելիս նրա մոտից մարտիկների մի երկար ցանկ էին առգրավել: Տեսնենք՝ այս ապիկարների՞ն էլ են բռնել՝ իրենց ունեցած ամբողջ տեղեկությամբ հանդերձ: Պաչոն միանգամից ասաց.

— Նորից սար չեմ գնա:

Որոշեցին սպասել, տեսնել՝ ինչ է լինելու, ու ոչ մի գործողություն չձեռնարկել, մինչև պարզեն իրավիճակը: Երեքն էլ ամբողջ օրը տնից դուրս էին անցկացնում: Դա Խոշե Մարիի պնդումն ու պահանջն էր. նա նույնիսկ ամպերում էր տեսնում քաղաքացիական հագուստով ոստիկանության գործակալներին: Ձուկ բռնելու կարթեր գնեցին: Եղանակը լավ լիներ, թե վատ, երկուսով ոտքով գնում էին մինչև Չիմիստառի ժայռերը, իսկ Չոպոն, կարթի շարժմանը ժամերով հետևելու փոխարեն, նախընտրում էր

կինո ու գրադարան գնալ: Նախքան տնից դուրս գալը, դռան ու շրջանակի արանքում հազիվ երևացող թելիկներ ու կպչուն ժապավենի բարակ կտորներ էին տեղադրում: Իսկ դռան առջևի գորգիկի տակ գինու կոտրըված գավաթի մի կտոր էին դնում, որը վրան կանգնելու դեպքում պիտի փշրվեր: Երեկոյան կողմ առաջին վերադարձողը ստուգում էր թողած նշանները: Եթե ամեն ինչ տեղում էր, մտնում էր բնակարան ու վառում էր այն լույսը, որի մասին պայմանավորվել էին:

Անորոշությունը ամիսներ տևեց: Գրո՛ղը տանի, ե՞րբ են վերականգնելու տնօրինությունը: Մնացել էին առանց կապավորի: Նրանց զենք չէին մատակարարում: Չոպոն ստիպված դիմեց ծնողներին, որ օգնեն բնակարանի վճարի հարցում: Այդ ընթացքում կառավարությունը, իրենից շատ գոհ, կատարեց Սևիլիայի համաշխարհային ցուցահանդեսի ու Բարսելոնայի Օլիմպիական խաղերի բացումը: Մի գեղեցիկ առավոտ Խոշե Մարին հայտարարեց, որ թքած ունի ու պատրաստ է ռիսկի դիմել: Ամարա կայանում նստեց «Տոպո» գնացքն ու մեկնեց Էնդայա: Ֆրանսիայում երեք օր անցկացնելուց հետո վերադարձավ իրենց բնակարան՝ սովից մեռած, կեղտոտ, բարոյալքված:

— ETA-ն այլևս երբեք նույնը չի լինի: Մարտին ստացած հարվածը չափից ավելի դաժան էր:

— Ովքե՞ր են նոր ղեկավարները:

— Դե՛, մի քանիսը կան: Բայց գործը չեն հեշտացնում: Աջ ձեռքը չգիտի՝ ձախն ինչ է անում:

Բայցևայնպես, ձեռնունայն չէր վերադարձել: Սուրհանդակի դեր ստանձնած մի մարտիկի միջոցով (տեսնենք՝ նրան ճի՞շտ եմ հասկացել) պայմանավորվել էր Գրոս թաղամասի բարում հանդիպել նոր տնօրինությունից կամ դրանց շրջանակից մեկի, կամ Աստված գիտի, թե ում հետ: Խոշե Մարին դրանց չէր վստահում: Մեկ ժամ առաջ Պաչոյին այնտեղ ուղարկեց՝ մի գավաթ խմելու:

— Ե՞վ, ի՞նչ վիճակ էր:

— Հանգիստ էր:

Ուստի Խոշե Մարին ինքը գնաց ու եկած տիպին փոխանցեց Չոպոյի մեքենագրած նամակը. երեքով խնդրում էին, որ իրենց թույլ տան Իպառալդե գնալ ու որոշ ժամանակ պահեստազորում մնալ: Նրանց փաստարկները հետևյալն էին. մենք արդյունավետ չենք, պետք է արդիականացնենք

պայթուցիկներ պատրաստելու գիտելիքները, մենք շատ անփորձ ենք ռազմավարության առումով: Շաբաթներ անց դրական պատասխան եկավ: Սահմանն անցնելու համար խմբին mugalaris-ներ տրամադրեցին: Չոպոն նրանց միացավ ամիսներ անց:

Պաչոյին աշխատելու ուղարկեցին թռչնաբուծական ֆերմա, որը ազգայնական դիրքորոշում ունեցող ֆրանսիացի զույգի էր պատկանում: Տանտերերի ու նրանց երեխաների հետ դասագրքի օգնությամբ սկսեց բասկերեն սովորել: Բասկերեն չէ՞ր խոսում: Դե՛, գիտեր մի քսան բառ, որոնք ինքնաբերաբար կսովորես: Դրա պատճառով ընկերները խիստ դատապարտում էին նրան: Եթե բասկերեն չես խոսում, ուրեմն բասկ չես, ասում էին, նույնիսկ եթե ETA-ի մաս ես: Պաչոն խոստանում էր անկախության հռչակումից հետո սովորել: Նրան գրողի ծոցն էին ուղարկում:

Խոշե Մարին հայտնեց, որ ուզում է պայթուցիկների մասով ավելի շատ գիտելիք ձեռք բերել: Գվարդիականների դեմ չհաջողված մահափորձը փշի պես խրվել էր նրա հիշողության մեջ: Իսկ Չոպո՞ն: Չոպոն վերջապես զենքերի դասընթացն անցավ: Երբ որոշ ժամանակ անց նրանք նորից միացան պայքարին, երեքն էլ համոզված էին, որ հիմա նախկինից ավելի պատրաստված, ավելի ուժեղ ու ավելի մահաբեր talde են:

Հինգ ամիս անց նրանց բռնեցին: Ու մինչև օրս՝ այդքան տարիներ անց, Խոշե Մարին իրեն հարց է տալիս, թե ինչն էր սխալ, ով էր սխալ: Իրոք կազմակերպության մեջ, ինչպես ասում էին, խլուրդներ էին վխտո՞ւմ: Թե՞ talde-ի երեք անդամները զգոնությունն էին թուլացրել: Ես՝ ոչ, բայց Պաչոն… Ուրիշ բացատրություն չկա: Այն, ինչ սկզբում պարզապես կասկած էր, շուտով համոզմունքի վերածվեց: Խումբը ձերբակալվեց, երբ իրենց նախաձեռնած տպավորիչ գործողությանը (ամեն ինչ պատրաստ էր՝ ժամը, տեղը, մեքենա-պայթուցիկը) ընդամենը մի քանի օր էր մնացել: Խոշե Մարին կասկած նույնիսկ չուներ, որ մատնություն է եղել: Դատարանի նիստերի ընթացքում ապակե վանդակում Պաչոյին հանդիպելիս նրա հետ մի բառ նույնիսկ չցանկացավ փոխանակել: Նույնիսկ նրա կողմ հայացք նետելու պատվից էր զրկում Պաչոյին, ասես գոյություն չունենար:

Շատ ժամանակ ուներ՝ կարծիքը փոխելու համար, թեև մինչև հիմա համոզված է, որ իրենց բռնել էին Պաչոյի մեղքով: Ընդունում եմ, որ եթե այսքան տարի շարունակ Պաչոն դեռ բանտում է, ապա դժվար թե Txakurrada-ի հետ համագործակցած լիներ. անիմաստ էր: Այնպես որ, նա

չի դավաճանել, ո՛չ, բայց ժամանակին անզգույշ է եղել:

Մի գիշեր նկատեցին, որ մի տեսակ մելամաղձոտ է, մարած:

— Ի՞նչ է եղել:

— Հայրս շատ ծանր է: Երկար չի ձգի:

Խոշե Մարիի գլխում կարմիր լույսեր վառվեցին:

— Որտեղի՞ց իմացար:

Հասկանալով, որ լեզվից թռցրել է, Պաչոն ստիպված խոստովանեց, որ գաղտնի այցելել էր ընտանիքին: Ե՞րբ: Իրականում՝ մի քանի անգամ: Դա կարգապահության լուրջ խախտում էր: Ընկերները մանրամասներ խընդրեցին-պահանջեցին: Պատմեց. մեկը՝ մյուսից ահավոր: Հայրը կմախք է դարձել, գույնը գցել է, սարսափելի ցավերի մեջ է: Նրա հայրը, որ այլևս ոչ մեկի չէր ճանաչում: Նրա հայրը, որ...

— Լա՛վ, հերիք է:

Մի ամիս էլ չկար, ինչ վախից փոխել էին բնակարանը: Ու հիմա էլ սա: Այդ գիշեր Խոշե Մարին չկարողացավ քնել: Մի քանի անգամ վեր կացավ անկողնուց: Մութ սենյակից ուսումնասիրում էր ամայի փողոցը, վառվող լապտերները, կայանած մեքենաները: Հինգ, տասը րոպե. հետո վերադառնում էր անկողին: Առավոտյան Չոպոյի հետ խոսեց:

— Վատ կանխազգացում ունեմ: Ի՞նչ կարծիքի ես:

— Գուցե նրան չե՞ն տեսել ու զուր ես անհանգստանում:

— Հաստատ ոստիկանության առգրաված թղթերում մեր անուններն էլ կան: Կամ էլ մի բանտարկված նրանց ձեռքում տապակվելիս մեր անունները տված կլինի: Ուրեմն, բավական է քաղաքացիական հագուստով մի txakurra դնեն մեր aita-ների տների մոտ: Մեկին որ բռնեն, բոլորս նրանց ձեռքում կհայտնվենք: Ի՞նչ կասես, ցրվե՞նք:

— Նորի՞ց: Արի՛ մի քանի օր սպասենք: Ekintza-ն անենք ու հետո օդը կփոխենք:

Թույլ տվեց, որ իրեն համոզեն. նա՛, որ միշտ այդքան զգույշ էր, այդքան կասկածամիտ: Գուցե հոգնած էր: Ինչի՞ց: Դե՛, այդքան գնալ-գալուց, զգոն լինելուց, կյանքը մշտապես անհանգիստ ու լարված վիճակում անցկացնելուց. էդ պոռնիկ ընդհատակը կամաց-կամաց մաշում է: Կարող էր ինքն իրեն պաշտպանել, քանի որ բնակարանի դուռը պայթեցնելու ու բղավոցներ արձակող առաջին txakurra-ի ներխուժելու արանքում ատրճանակը ձեռքը վերցնելու ժամանակ ունեցավ: Բայց հանուն ինչի՞, ես դեռ երիտա-

սարդ եմ, ու մի օր ինձ բաց կթողնեն: Գիշերվա գրեթե մեկն անց կես էր: Առաջին պահին թեթևացում զգացի: Գուցե նրանից էր, որ ես երազողի մեկն էի ու գաղափար նույնիսկ չունեի, թե ինչ է սպառնում ինձ:

Txoria txori*

Երբ նկատում է, զգում է, հոտոտում է, որ գետնից տրտմության փոշին է բարձրանում ու հիմա իրեն կհասնի, սկսում է սուլել իր սիրած մեղեդին: Մտածելու կարիք էլ չունի, ինքն իրեն է ստացվում: Խորապես երախտապարտ է այդ երգին: Դե՛, իր ձևն է: Երբեմն ճաշարանում կամ բակում կամ էլ զրուցասենյակում մորը հրաժեշտ տալուց հետո, ապավինելով այդ երգի սփոփիչ ազդեցությանը, շշնջում է «Hegoak ebaki banizkio»** այնքան ցածրաձայն, որ ասես ոչ թե երգում, այլ լոկ մտածում է՝ միշտ կրկնօրինակելով Միկել Լաբոայի*** ձայնը: Ինքն իրեն խոստացել է՝ ազատության մեջ հայտնվելու առաջին իսկ օրը, հենց հասնի իր ավան, բարձրանալու է սարն ու, խոտից ու ծառերից բացի ուրիշ վկաներ չունենալով, Txoria txori է երգելու:

Երբ նրան տանում էին բնակարանից, նրա հայացքը պատահաբար ընկավ Լաբոայի CD-սկավառակին: Վաղուց չէր լսում այդ սկավառակը: Սեղանի վրա էր ու այնտեղ էլ մնաց: Խոշե Մարիի համար դա այն ժամանակվա իր աշխարհի վերջին պատկերն էր, աշխարհի, որ հավետ թիկունքում էր մնալու:

Խուզարկությունը ժամեր տևեց: Նրանց մեկուսացրել էին յուրաքանչյուրին իր սենյակում՝ ձեռքերը մեջքի հետևը շղթայակապ: Զենք կա՞ր: Իհարկե, որոշ զենք կար: Մնացածը թաքստոցում էր, բայց դրա մասին txakurra-ներն ավելի ուշ էին իմանալու: Նրան հարցաքննում էին դատական քարտուղարի ներկայությամբ: Սա ի՞նչ է: Որտե՞ղ ես դրել: Որտե՞ղ ես պահում: Նրանց նստեցրին տարբեր մեքենաներ: Շենքից վերջինը դուրս բերեցին Խոշե Մարիին:

— Գնացի՛նք, ջանավա՛ր:

---

* Txoria txori (բասկ.), «Թռչունը թռչուն է» (երգի անվանում է):

** Hegoak ebaki banizkio (բասկ.), Եթե նրա թևերը կտրած լինեի…:

*** Միկել Լաբոա (1934–2008), բասկ հայտնի երգահան-երգիչ:

Լույսը բացվում էր: Առավոտվա կապտավուն զովություն, ծլվլացող ծիտիկներ, պատուհանից նայող հարևաններ: Արդեն ֆուրգոնի ներսում քնատ ու շշմած վիճակից նրան հանեց գվարդիականի (որը զգաց, որ իրեն է նայում) ապտակը: Բա թե՝ ինձ չնայե՛ս: Իսկ նրա կողքինը ծաղրական անտարբերությամբ նրան ասաց.

— Քաքի մեջ ես, gudari.

Նրան ստիպեցին ճամփորդության ընթացքում գլուխը ոտքերի արանքում պահել, ինչպես Պակիտոյի հետ հանդիպմանը գնալիս: Ու այդ վիճակում նրա մտքին առաջին անգամ եկավ Hegoak ebaki banizkio/nirea izango zen* երգը: Մեծ արագությամբ էին գնում: Նա մի պահ ապահովություն զգաց երգի ներսում: Երգն իր ապաստարանն էր դառնալու, իր խոր որջը: Ես այնտեղ կթաքնվեմ ու կձևացնեմ, որ ձեր ձեռքում եմ:

Տեղ հասան՝ Ինչաուռոնդո զորանոց: Մատնահետքերը վերցնելուց ու լուսանկարելուց հետո նրան մերկացրին, ու դրանցից մեկն ասաց, որ այստեղ քեզ լավ ենք վերաբերվելու, բայց պիտի վաստակես այդ վերաբերմունքը: Նվեր չենք տալու: Ականջօղը հանեցին: Էստեղ մեզ գյոթեր պետք չեն: Ու նրա գլխին գլխարկ-դիմակ քաշեցին: Երևի թե հակառակ կողմով էին գլխին քաշել՝ աչքերի համար ճեղքով դեպի ծոծրակը, քանի որ բան չէր տեսնում: Նրան մի մենախուց դրին: Չվիրավորեցին, չհրեցին, չհարվածեցին: Ժամեր էին անցնում: Խուլ ձայներ ու քայլեր էին լսվում: Հանկարծ միջնապատերի արանքով ցավի, գանգատի բղավոցներ լսվեցին: Պաչո՞ն էր: Խոշե Մարին, ձեռքերը դեռ շղթայակապ, երգը հիշելով, փորձում էր ցրտի դեմ պայքարել:

Ինչ-որ պահ՝ առավոտյան, նրան հարցաքննության տարան: Ասացին, որ ողջամիտ լինի, որ նրա ընկերներն արդեն խոստովանել են ու նրա մասին շատ վատ բաներ ասել: Վախկոտ, դավաճան, ապիկար. ինչ ասես՝ չէին ասել:

— Ի՞նչ ընկերներ են, է՛, ձեր բռնվելու մեղքը քեզ վրա են գցում:

Txakurra-ները նրան այնպիսի հարցերով էին ճնշում, որոնց պատասխանները լավ էլ գիտեին: Պարզ հարցեր. անունն ի՞նչ է, ընկերների անուններն ի՞նչ են, քանի՞ տարեկան է, որտե՞ղ էր իրենց խմբի բնակարանը: Հարցեր, հարցեր, հարցեր. այնպիսի արագությամբ էին կրկնվում, որ

* Nirea izango zen (բասկ.), իմը կլիներ:

Խոշե Մարին չէր հասցնում պատասխանել: Երբեմն, մեկի ձայնը առջևից, մյուսինը՝ հետևից կամ կողքից, երկու տարբեր հարցեր էին տալիս: Ու թեև ոչ մեկի չէր տեսնում, տարբեր ձայների, քայլերի և ինչ-որ աղմուկների միջոցով հասկանում էր, որ գվարդիականների մեծաքանակ խմբով էր շրջապատված: Մեկ էլ սկսեցին գլխին հարվածել իրար հետևից՝ վեց, յոթ, ութ հարված: Ինչ-որ մեկը բղավում էր նրա ականջի մեջ: Միայն անջատ-անջատ բառեր էր հասկանում. համբերություն, ժխտում, հոգնեցնել, գործակցել: Այդ ամենը՝ բղավելով: Ու սպառնալիքներ: Ու էլի հարվածներ: Ու վիրավորանքներ: Աթոռից ընկավ. նրան վա՛յր գցեցին: Գետնին ընկած էր, բոլոր կողմերից ոտքերով հարվածում էին՝ կեղտոտ մարդասպանի մեկը, իսկ նա, ձեռքերը մեջքի հետևը կապած, ի վիճակի չէր պաշտպանվել:

Նրան նորից նստեցրին: Ինչ-որ մեկը ցածրաձայն խոսեց: Ի՞նչ ասաց: Գաղափար չուներ: Շշուկներ: Հիմա արդեն հարցերն ուրիշ էին: Գլխի ընկավ, որ այն կարճ ժամանակահատվածում, որի ընթացքում փորձում էր պատասխանել, չէին ծեծում, այնպես որ աշխատում էր ձգել պատասխանները՝ ավելացնելով մանրամասներ, որոնք հիմնականում մակերեսային էին: Պարզ էր, որ Չոպոյից և Պաչոյից ահագին տեղեկություններ էին կորզել: Դրա համար հարցերն արդեն վերաբերում էին խմբի առօրյային, ահաբեկչական գործողությունների մանրամասներին, նյութերի ստացմանը, որոնց txakurra-ները, անկասկած, տեղյակ էին:

Անուններ էին ուզում իմանալ: Թեթև հապաղելու դեպքում անմիջապես հարված էր ուտում: Բացի այդ՝ մի գվարդիական կար՝ մի քիչ կողք կանգնած, որն առաջարկում էր սրիկա ETA-ացուի ծոծրակին կրակել ու ծովը նետել: Խոշե Մարիի դեմքը դիմակ-գլխարկի տակ այրվում էր: Երգը ի՞նչ եղավ: Չկար, չհիշեց, չէր կարողանում մտածել: Երկու-երեք ժամ ծեծելուց հետո դեռ թաքստոցի մասին հարց չէին տվել: Գուցե դա մի ծուղա՞կ էր: Որոշեց հայտնել դրա տեղը: Գուցե այդպես դադարեցնեն ծեծը: Ասաց, որ զենքերն այսինչ տեղում են: Ա՛, իրո՞ք: Իսկ ինչո՞ւ շուտ չէիր ասել: Իսկ իրենք ի՞նչ իմանան, որ սուտ չի ասում: Գլխարկ-դիմակը հանեցին: Մեկի ձեռքը կտրուկ քաշեց մազերից՝ գլուխն իջեցնելու համար. նրան արգելեցին ներկաների դեմքին նայել: Մարզի քարտեզը մոտեցրին: Նույնիսկ ջուր տվեցին: Գոլ էր, բայց ջուր էր: Ու երբ մատով ցույց տվեց կետը, տեսավ, որ թաքստոցի տեղը խաչով էր նշված: Այսինքն՝ գիտեին: Նրան նույնիսկ այնտեղ չտարան: Հաստատ արդեն գնացել էին իր ընկերներից մեկի կամ

երկուսի հետ ու փորել-հանել էին տակառները:

Գիշերը նրան մի մեքենա մտցրին, որտեղ երեք txakurra-ները շարունակում էին հարցաքննել՝ հիմնականում նվաստացնելու նպատակով: Ի՞նչ կարծիքի էր իսպանական դրոշի մասին: Ընկերուհի ունի՞ ու քանի՞ անգամ է նրան շինել: Ու նմանատիպ հարցեր: Ու չհաշված սկզբի մի քանի ապտակները՝ նրան այլևս չծեծեցին մինչև Մադրիդ հասնելը: Նախորդ օրվա ընթրիքից հետո բերանը բան չէր դրել: Բայց իր հիմնական խնդիրը դա չէր: Քնելու ցանկությունն էր սպանում: Ու հենց աչքերը փակվում էին, ու գլուխը հոգնածությունից հակվում էր, գվարդիականներն ուժեղ քաշում էին մազերից:

— Արթնացի՛ր, gudari:

Հետո անցան իրենց թեմաներին: Նրան հանգիստ թողեցին, թեև շարունակում էին հսկել, որ աչքերը հանկարծ չփակվեն: Բայց փակվում էին: Անհնար էր, որ չփակվեին: Նրան վայրենաբար թափ էին տալիս, մազերից էին քաշում: Վերջում թույլ տվեցին մի քիչ քնել: Ու հանկարծ երգը մտքիս եկավ: Ez zuen aldegingo*: Կամ գուցե պարզապես երազում լսեցի երգը: Մի քանի վայրկյան տևեց, մի քանի բառ՝ առանց պատկերի: Դա ինձ ահագին օգնեց:

Երբ նրան արթնացրին, դեռ գիշեր էր, մեքենան մեծ արագությամբ անցնում էր Մադրիդի փողոցներով: Ո՛ւր էին տանում: Գուսման էլ Բուենո փողոցում գտնվող գվարդիայի գլխավոր շտաբ: Չգիտեր՝ ինչ է լինելու: *Ես ձեր*, որտեղի՞ց իմանայի, եթե կարծում էի, որ Ինչաուռոնդոյում արդեն ստացել եմ ինձ հասանելիք ծեծի բաժինը: Կայանատեղում ստիպեցին երկար մնալ ոտքի վրա՝ դեմքով դեպի պատը: Հասկանալի էր, որ նրա ընկերներին էլ էին բերել ու այդպես էին վարվում, որ մեկը մյուսին չտեսներ: Աղյուսապատ շենք էր: Գրասենյակներ ու սրահներ: Բայց նրան տարան ստորգետնյա մի մենախուց: Զգուշացրին՝ պիտի համագործակցի, մյուս բանտարկյալներին հանդիպելու դեպքում ոչ մեկի դեմքին չպիտի նայի, ոչ մեկի հետ չպիտի խոսի:

Ու սկսվեց Խոշե Մարիի դժոխային շրջապտույտը. մենախցից՝ հարցաքննության սենյակ, այնտեղից՝ դատաբժշկի մոտ՝ ստուգման, վերադարձ՝ մենախուց, ու նորից նույնը: Չորս օր՝ առանց որևէ մեկի հետ հաղորդակցվելու՝

* Ez zuen aldegingo (բասկ.), չէր փախչի:

գումարած Ինչաուռոնդոյում անցկացրած ժամանակը: Համագործակցի՛ր, մի՛ դիմադրիր, քեզ խելոքի տեղ մի՛ դիր, համագործակցի՛ր, համագործակցի՛ր, հիմարությունները վերջացան: Նախ՝ դիմակ քաշեցին, հետո՝ վրայից գլխարկ-դիմակ, վրայից՝ ևս մեկը, ընդհանուր՝ երեք հատ: Քրտնում է, դողացնում է: Սրանք նույնպես անուններ էին ուզում լսել: Սրան հանդիպե՞լ ես, նրան տեսե՞լ ես: Ահաբեկչություններ վերագրեցին: Ժխտեց, ու միանգամից գլխին հարվածներ տեղացին մահակներով կամ ինչ-որ բանով, չգիտեմ, պենոպլաստով կամ գուցե իզոլենտով փաթաթված փայտերով: Էլի հարցեր, էլի հարվածներ: Որ պատրանքներ չունենա, նրան, ձեռքերը մեջքի հետևը, ստիպեցին ատրճանակ ու պարկուճ բռնել: Թող պինդ բռնի, որպեսզի նրա մատնահետքերը լավ դաջվեն վրան: Դե՛, շնորհավո՛ր, ETA-ական՝ ես: Հենց նոր չգիտես՝ ում ես սպանել:

— Մենք սա ծանրակշիռ ապացույց ենք համարում:

Մեկ էլ, թե՝ արի՛, տասը կքանիստ արա՛: Սկսեցին հարցեր տալ իր անձնական կյանքի, ծնողների, ընկերական խմբի, ավանի բարերի, ikastola-ի, տեղացի abertzale-ների մասին: Էլի կքանիստեր ու «վերելակ» պահանջեցին: Չհասկացավ: Դե՛, հեսա կսովորեցնենք: Նրան մի պատի առջև կանգնեցրին, ու այդտեղ պետք է պպզեր, վեր կենար, նորից պպզեր ու վեր կենար ու այդպես քրտնամխած՝ երկար ժամանակ:

Գլխին պոլիէթիլենի տոպրակ քաշեցին: Օդի պակասից կատաղում էր: Զուտ սարսափից էր դիմադրում: Ու քանի որ շատ պնդակազմ էր, նրան ուժով ստիպելու համար բազմաթիվ գործակալներ օգնության հասան: Երկուսը թե երեքը վրան նստեցին, մյուսը կարողացավ գլխին քաշած տոպրակը վզի շուրջը կապել: Մահն այդ տոպրակի մեջն էր: Մի կետ կա, որից սկսած՝ մյուս կողմում ես հայտնվում: Այդ ժամանակ արդեն ոչ մի թթվածին քեզ կյանքի չի վերադարձնի, ու ստիպված կլինեն քո մարմնից ազատվել: Բաց բերանով փորձում էր թեկուզ շատ չնչին օդի չափաբաժին ներս քաշել ամեն գնով: Բայց միակ բանը, որ ներքաշվում էր, պոլիէթիլենն էր: Նրանք գիտեին, որն է կրիտիկական այդ կետը: Խոշե Մարին զգում էր, որ թոքերը հիմա կպայթեն: Երբ գրեթե կորցնում էր գիտակցությունը, նրան, նախքան նորից խեղդելը, թույլ էին տալիս մի փոքր օդ շնչել: Եվ այդպես ութ-ինն անգամ: Վերջում, իրոք, գիտակցությունը կորցրեց:

Դատական բժշկին պատմեց, որ իրեն խոշտանգել են: Բժիշկը ձանձրացած պատասխանեց, որ միայն կարող է գնահատել փաստացի վնաս-

վածքները և ոչ մի դեպքում՝ սուբյեկտիվ կարծիքը կամ գնահատականը: Կոտրվածքնե՞ր: Արնահոսությո՞ւն: Ոչ մի բա՞ն: Ամեն դեպքում, թող խոսի դատավորի հետ, թեև շատ բանի չի ծառայի: Խոշե Մարին՝ այտուցված դեմքով, բայց առանց երևացող վերքերի, էլ չպնդեց: Ու հետագայում բուժկետ այցելություններն օգտագործում էր օրվա ու ժամի մասին տեղեկանալու ու ջուր խմելու համար:

Երկրորդ-երրորդ գիշերն էր՝ նրան էլեկտրական հարվածների ենթարկեցին: Մերկ, բայց գլխարկ-դիմակով, չոր գետնին ընկած՝ նրա ոտքերին, ամորձիներին, ականջի հետևի մասերին էլեկտրոդներ էին կպցնում: Կծկվում է, բացվում, բղավում է: Երբեմն մարմինը ուժգին ցնցվում է, երբ էլեկտրոդներն իրար կպցնելով՝ կայծեր են առաջացնում՝ նրան վախեցնելու համար: Ու էլի հարցեր ու էլի հարվածներ, մահակի հարվածներ՝ ճակատին, մեջքին, ուսերին: Ուզում էին իմանալ՝ ե՞րբ է մտել ETA, ո՞վ է նրան գրանցել, ի՞նչ մարզումներ էին անցնում, ո՞վ է հրահանգում, ո՞վ է ղեկավարում: Հարվածներ, էլեկտրոդներ: Նրան տարան դատաբժշկի մոտ. ամբողջ մարմնով մեկ՝ կարմիր կետեր, փոքրիկ այրվածքներ ու մի քանի արնատոչոր վերք: Բժիշկը դրանք ինչ-որ քսուքով ծածկեց: Խոշե Մարիին ասաց, որ իրիկվա ժամը վեցն է:

Մեկ օր անց ծրագիրը փոխվեց: Խոշե Մարիին հանեցին ստորգետնյա մենախցից: Դեպի գրասենյակ ուղեկցողը նրան զգուշացրեց.

— Շատ զգո՛յշ եղիր, որ մեզ ասածներդ հանկարծ չփոխես, թե չէ նորից քեզ ներքև կտանենք, ու ողջ դուրս չես պրծնի:

Վերևում տիրում էր մեղմություն ու քաղաքավարություն, ներկա էր հանրային պաշտպանը: Հարցերը չէին տարբերվում նկուղում հարցաքննությունների ընթացքում եղածներից, բայց առանց բղավոցների, ասես զրույց լիներ: Ենթարկվեց ուղեկցողի ցուցումներին: Իր համար մեկ էր, միայն թե խուսափեր հարցաքննությունների վայրենությունից: Ու ստորագրեց՝ արժանապատվությունից ցածր համարելով տեքստին աչք նետելը:

Էլ չտանջեցին: Առավոտյան տարան լվացվելու: Մինչ հագնվում էր, txakurra-ն հետը բարեկամաբար խոսեց: Հարցնում էր՝ արժե՞ր իր տարիքում մտնել ETA՝ բանտում լիքը ժամանակ անցկացնելու հեռանկարով, երիտասարդությունը ջուրը գցել ու ծնողներին ստիպել տառապել: Չէ՞ որ կարելի էր կյանքը վայելել, ընտանիք կազմել և այլն: Խոշե Մարիին ծխախոտ առաջարկեց:

— Չեմ ծխում:

Առավոտյան նրան տարան դատավորի մոտ՝ Ազգային դատարանի գրասենյակ: Խոշե Մարին ատելության մի գունդ ուներ կրծքում: Կարծր, տաք մի գունդ: Երբեք այդպիսի բան չէի զգացել, նույնիսկ ekintza-ների ժամանակ: Հրաժարվեց իրեն տրամադրված հանրային պաշտպանի ծառայություններից: Պահանջեց իր գաղափարական ուղղության՝ ETA-ական բանտարկյալներին պաշտպանող փորձառու մեկին: Երկար քննարկումից հետո կանչեցին մի կին իրավաբանի, ու հարցաքննությունը սկսվեց: Առաջին հարցը լսելով՝ Խոշե Մարին ասաց, որ իրեն խոշտանգել են: Դատավորը աչքերը վեր հառեց:

— Դե՛, նորից սկսվեց:

Մինչ թերթում էր փաստաթղթերը, մռայլ տոնով առաջարկեց, որ համապատասխան բողոք ներկայացնի դատարանին: Հավելեց, որ հիմա ո՛չ տեղն է, ո՛չ էլ պահը: Խոշե Մարին զգաց, որ անզոր է: Ատելության գունդը շարունակ մեծանում էր իր մարմնի ներսում, ու խորքում նրա համար ամեն ինչ մեկ էր: Հերքեց մեղադրանքները ու այդ կրկեսին վերջ դնելու համար ասաց, որ ուզում է ցուցմունքներ տալ: Խոսեց չոր ու հակիրճ, ընդգծված բասկյան շեշտով:

Ցուցմունքներից հետո նրան իջեցրին մենախուց: Այնտեղ երկար սպասեց ֆուրգոնին, որը նրան բանտ պիտի տաներ: Խոնավության, ծանր օդի հոտ էր գալիս: Իսկ պատին անակնկալ էր, բասկերեն ֆրազներ էին գրված ու ETA-անագրաման և Բասկյան երկրի ուրվագիծը՝ Gora Euskadi askatuta բառերի շուրջ: Ի՜նչ ափսոս, որ ձեռքը գրիչ չկար: Էյֆորիայի պես մի բան զգաց, գուցե որովհետև միայնություն չէր զգում, թեև միայնակ էր. դե՛, հասկանում եք: Ու սկսեց երգել, սկզբում՝ շշուկով, հետո՝ նորմալ ձայնով. «Hegoak ebaki banizkio…»:*

* Hegoak ebaki banizkio (բասկ.), Եթե նրա թևերը կտրեի:

Առաջին նամակը

«Սիրելի՛ Խոշե Մարի»: Սիրելի՞: Ահավոր է: Բառը գրած տեսնելով՝ անմիջապես ջնջեց: Բիչո՛րիի դիմաց՝ պատին, փակցված էր Չատոյի լուսանկարը: Մի՛ անհանգստացիր, ես պարզապես փորձ եմ անում: Թուղթը պղծված էր ոչ անկեղծ ողջույնի բառերով: Բիչո՛րին մեկ ուրիշը վերցրեց սեղանին դրված տրցակից: Գրում էր՝ սեղանին մարմնով հակված, լարված դիրքով: Միայն այդպես էր փորի ցավը տանելի դառնում, որը երեկոյան կողմ նրան մի վայրկյան հանգիստ չէր տալիս: Իկացան մրափում էր իրենից ոչ շատ հեռու՝ բազմոցի բարձին: Ժամանակ առ ժամանակ բացում էր աչքերը: Երբեմն մի թաթն էր լիզում: Արդեն կեսգիշերն անց էր:

«Բարև՛, Խոշե՛ Մարի»: Կեղծավոր է: «Kaixo, Խոշե՛ Մարի»: Դեմքը ծռեց: Թվում էր, թե իրենց միջև գոյություն չունեցող մտերմություն է ձևացնում: Վերջը սահմանափակվեց՝ հասցեատիրոջ անունը գրելով, որից հետո միջակետ դրեց: Մի պահ ցանկություն ունեցավ ներկայանալ որպես «Գիժը», ինչպես ինձ կոչում են նրանց ընտանիքում: Արանչայից էր իմացել, որին հաճախ հանդիպում էր փողոցում՝ հնդկացիական դիմագծեր ունեցող խնամակալուհու ուղեկցությամբ, որը նրան զբոսանքի էր տանում: «Ծնողներս քեզ Գիժ են անվանում, բայց ուշադրություն մի՛ դարձրու»: Բիչո՛րին որոշեց, որ եթե Արանչայի խոստովանածն ակնարկի, կարող է կռիվ գցել քրոջ և եղբոր միջև: Չակնարկեց: Փոխարենը գրեց. «Ես Բիչո՛րին եմ, երևի հիշում ես ինձ. քեզ անախորժություն պատճառելու նպատակ չունեմ, հավատա՛, որ ատելությունից հեռու եմ և այլն»: Դժգոհությամբ ընթերցեց առաջին պարբերությունը, բայց դե՛, ի՞նչ ես ուզում: Դու հլա շարունակի՛ր, ու թե պետք լինի, կուղղես:

Առանձին թղթի վրա նշել էր այն թեմաները, որոնց ուզում էր անդրադառնալ նամակում: Շատ չէին: Չափից ավելի երկար ծավալվել էլ չարժեր: Ինչի՞ համար այդքան ջանք թափել, եթե գուցե չպատասխանի: Այնուամենայնիվ, նույնիսկ այդ մի քանի թեմաները նրան լարված ու կասկածամիտ, անվստահ ու անքուն էին պահում մի քանի օր շարունակ: Բուն խնդրին անցավ: Գրեց, որ իր նամակի դրդապատճառը չարությունը չէր: Իսկ նամակն ինչի՞ համար էր: Ուզում էր մանրամասն իմանալ՝ ինչպես

էր իր ամուսինը սպանվել: Հատկապես՝ կրակողն ով է եղել: Ավելին. որ պատրաստ էր ներել, բայց մի պայմանով: Ի՞նչ պայմանով: Պետք է ներում խնդրի իրենից: Ավելացրեց, որ դա ոչ թե պահանջ էր, այլ խնդրանք: Չափից ավելի չե՞մ մանրանում: Իր համար մեկ էր: Գրեց, որ հիվանդության պատճառով ապրելու քիչ ժամանակ ունի: Բայց միանգամից ջնջեց նախադասությունը: Հենց այդ պահին նորից ցավի մի նոպա ունեցավ: Երևի Իկացան նկատեց, որովհետև տագնապած արթնացավ:

«Արդեն այն տարիքում եմ, որ կարծում եմ՝ շատ ժամանակ չի մնացել»: Վերընթերցեց: Այո՛, այդ բառերն ավելի համեստ էին հնչում: Ճշմարտությունը, իր կարծիքով, առավել ճնշող կլիներ: Եթե խոստովանեմ, կմտածի, որ ստում եմ: Կամ էլ՝ ավելի վատ. կմտածի, որ փորձում եմ նրա խղճահարությունն առաջացնել: Ճշմարտությունը միայն Բիչո՛րին գիտեր: Նույնիսկ իր զավակները չգիտեին, թեև Բիչո՛րիի կարծիքով, անհնար էր, որ Շավիերը կասկածներ չունենար: Հակառակ դեպքում ինչո՞ւ է պահանջում, որ մայրն ուռուցքաբանի մոտ գնա: Ամեն ինչ տարիքին վերագրելը պակաս զարհուրելի էր թվում: Այդ պարբերությունը կարդալով՝ հաստատ մորն է հիշելու, որը Բիչո՛րիի տարիքին է: Դա նրան կփափկեցնի: Ու, բնականաբար, շատ շնորհակալ կլինի, եթե Խոշե Մարին պատմի, թե ինչ պայմաններում է մահացել Չատոն, նախքան Բիչո՛րին գերեզմանում կհայտնվի: Ուզում է իմանալ, այդքան մի բան:

Հասավ այն նուրբ կետին, որով Նրան պիտի հայտներ (ինքնախաբեությամբ չզբաղվենք), որ Չատոն սպանվելու օրը, կեսօրվա ճաշին տուն գալով, Բիչո՛րիին պատմել էր, որ Խոշե Մարիին է տեսել ու մի պահ կանգնել է՝ նրա հետ խոսելու: Ու որ թեև Բիչո՛րին ներկա չի եղել դատավարությանը, որովհետև նրան նույնիսկ չէին տեղեկացրել այդ մասին, դատավճռից իմացել է, որ փաստվել է սպանության մեջ Խոշե Մարիի ներգրավված լինելը: Սպանություն բառը ջնջեց: Գրեց՝ ամուսնուս մահվան մեջ: «Թախանձագին խնդրում եմ, որ ինձ պատմես քո իմացածը տեղի ունեցածի մասին»: Եթե նա չի ցանկանում գրավոր պատասխանել, Բիչո՛րին պատրաստ է ճամփորդել ու հասնել բանտ՝ նրան տեսակցելու համար, ու այդպես ոչ մի գրավոր թուղթ չի մնա, եթե դա է խնդիրը: Կրկնեց, որ իր միակ ցանկությունը նախքան մահը ճշմարտությունն իմանալն ու ներելն է: Ջնջեց: Որ իրենից ներում խնդրի, ու ինքն էլ անմիջապես կների ու հետո խաղաղ կմեռնի:

Դոն-դոն. պատի ժամացույցը գիշերվա ժամը երկուսն ազդարարեց: Բիչո՛րին նորից կարդաց ջնջումներով նախշած նամակը: Առավոտյան մաքուր կարտագրի: Այդ պահին առաջին փսխումն ունեցավ: Վա՛յ, մայրի՛կ: Անմիջապես հետո՝ երկրորդը: Երրորդի ժամանակ փսխուկի մի մասը սեղանին թափվեց, ու քանի որ չկարողացավ իրեն զսպել, նամակի վրա ու մի քիչ էլ՝ թղթերի: Սեղանից վեր կենալով՝ ընկավ կամ իրեն թույլ տվեց ընկնել. լավ չի հիշում: Բայց հստակ հիշում է, որ փորում զգացած ցավն այնքան ուժեղ էր, որ ստիպեց գորգի վրա սաղմի ձև ընդունել: Նույնիսկ այդ իրավիճակում պատրաստ չէր Աստծուն ապավինել, ինչպես ուրիշներն են անում, երբ մեծ սևի առջև են հայտնվում: Ի՞նչ իմաստ ունի: Եթե պիտի մեռնեմ, կմեռնեմ: Ճգնեց սողալ, հեռախոսին հասնել, ընդամենը երեք մետրի վրա էր՝ կոմոդի գլխին, բայց դա այնքա՜ն հեռու էր: Հեռո՞ւ: Անհասանելի էր: Այս նոպայից դուրս չեմ պրծնի: Այստեղ էլ, ա՜խ, կմնամ: Զավակնե՜րս: Մինչև ուշքը կորցնելը վերջին տեսած բանը Իկացան էր, որը մոտեցել էր՝ նրա դեմքին քսվելու: Կատուն նրա ճակատին կպավ իր սև մորթով ու փափուկ պոչով: Լուռ Իկացա, սև Իկացա, գեղեցիկ Իկացա: Տեսնես, դո՞ւ ես լինելու կյանքումս տեսած վերջին բանը:

Արթնացավ մոտավորապես տասին առավոտվա լույսով ողողված հյուրասենյակում: Իսկ ցա՞վը: Անհետացել էր: Մարմնի առեղծված էր: Դանդաղ մաքրեց իր շուրջը՝ հավասարաչափ բաշխելով ուժերը: Հանկարծ նորից չբռնի: Դուռ ու պատուհան բացեց՝ բնակարանն օդափոխելու համար: Զանգահարեց Շավիերին, և մայր ու տղա մի հինգ րոպե պարզապես խոսեցին: Հետո զանգահարեց Ներեային, ու մայր ու աղջիկ մի կես ժամ պարզապես խոսեցին: Կեսօր էր արդեն, բայց դեռ չէր կերել: Չէր համարձակվում: Ճակնդեղի ծայրից մի քիչ պոկեց, մի փոքր խաշած կարտոֆիլ կերավ (նախորդ օրվա մնացորդներից էր, բայց կերավ ավելի շատ այն պատճառով, որ չի սիրում ուտելիքը թափել), ուրիշ ոչինչ բերանը չդրեց: Ինչո՞ւ: Որովհետև վախենում էր կոշտ սնունդ անցնի իր ցավող աղիները: Ի վերջո, սովը խաբելու համար երիցուկի եփուկ պատրաստեց:

Հինգից առա՞ջ հասնել ավան: Անիմաստ էր: Խոշիանը սիեստա անող էր, այնպես որ հողամասում իրիկվա կեսին կլինի: Առաջին անգամ Բիչո՛րին նրան սպասեց գետի մյուս ափին՝ ծառերի հետևը թաքնված: Հետո գլխի ընկավ, որ կարող էր նաև կամրջից տեսնել նրան, թեև միայն կաղնիների արանքից: Կամրջի վրա մնալը, ավտոբուսի կանգառին մոտ մեծապես

կրճատում էր ճանապարհը: Նա ընդամենը ուզում էր համոզվել, որ Խոշիանը գալիս է: Բանն այն էր, որ նրանից խուսափելով՝ Խոշիանը փակվում էր տնակում: Բայց ես խաբվողը չեմ ու չեմ պատրաստվում նրան բղավելով կանչել. դա՛ էր մնացել պակաս:

Մի պահ մտածեց, որ Խոշիանը կարող է հրաժարվել ու իր նամակը չվերցնել: Կհամարձակվի՞: Բավական վախկոտ է: Երիտասարդ ժամանակ էլ էր այդպիսին: Պայուսակից հանեց ծրարը: Բա թե՝ այնտեղ դի՛ր: Որտե՞ղ: Ճագարներով վանդակի վրա: Ասես զզվեր ծրարին դիպչելուց:

— Նամակդ քո անունից Միրենին տամ, լա՞վ: Հետո ոնց ստացվի: Միրենն է այնտեղ գնացողը:

— Դու տղայիդ չե՞ս այցելում:

— Ե՞ս: Քիչ:

Սկզբում, երբ գնում էր նրա հողամաս, Խոշիանը մռայլ էր, կոշտ, ինչը Բիչո՛րին չգիտեր՝ ամաչկոտությա՞նը վերագրել, թե՞ բարկությանը: Որովհետև այս մարդը չար չէր: Ատելությունը նրան հատուկ չէր: Ինչո՞ւ պիտի ատեր: Ու նրա հետ բարյացակամ խոսելով (թեև խեղճ մարդն իրոք ամաչում էր)՝ Բիչո՛րին կամաց-կամաց մեղմում էր նրա կոշտությունը:

Խոշիանը կարմրած դեմքով (գինո՞ւց էր), կզակով ցույց տվեց ծրարը:

— Սա ինձ համար խնդիր է դառնալու:

— Ա՛յ մարդ, ես կնոջդ կտայի, բայց կասկած ունեմ, որ նա չի ուզի դեմքիս նայել, թեև չգիտեմ՝ ինչ վատություն եմ նրան արել:

— Վատահ չեմ, որ կտանի, տղային կտա:

— Ինչո՞ւ: Ես լավ նպատակով եմ գրել:

— Գրո՛ղը տանի, բաներ կան, որոնց չարժի կպչել:

Տեսնես, նամակը Միրենին տված կլինի՞: Ինչպե՞ս իմանամ, եթե երկու օր շարունակ չի երևում հողամասում, իր սովորական ժամերին՝ հաստատ: Իհարկե, անձրևում է, ու ջրելու կարիք չունի: Բա ճագարնե՞րը: Դրանց կեր պիտի տա, չէ՞: Բիչո՛րին գլխի ընկավ, որ Խոշիանը, նրանից խուսափելով, կամ շատ ուշ է իջնում հողամաս՝ գիշերը, կամ առավոտյան՝ շատ շուտ:

Երրորդ օրը Բիչո՛րին քայլում էր ավանով՝ Խոշիանին հանդիպելու աղոտ հույսով: Այս ու այն կողմ անելուց հետո մտավ «Պագոետա» բար՝ առանց կոֆեինի սուրճ խմելու համար: Այդ ժամանակներում արդեն ավանում նրա՝ գրեթե ամենօրյա ներկայությունն այլևս ուշադրություն չէր գրավում: Բարում նստածները նրա հետ չխոսեցին, բայց վրան ծուռ նայող էլ չկար:

Վճարեց ու երբ դուրս էր գալիս, ներս մտնողները նրան բարևեցին գլխի թեթևակի շարժումով:

Չէր անձրևում, ուստի որոշեց հրապարակը կտրել-անցնել իր տան ուղղությամբ ու հետո մի փոքր պտույտ անել՝ Խոշիանի տան մոտով անցնելու համար: Մի քանի քայլից նկատեց անվասայլակն ու կողքը՝ բազրիքին նստած հնդկացիական դիմագծերով փոքրամարմին կնոջը: Լորենիների շուքի տակ անվարան գնաց նրանց կողմը: Ու Արանչան, ինչպես միշտ նրան տեսնելիս, ուրախացավ: Առողջ ձեռքի կտրուկ շարժումով պահանջեց իր iPad-ը: Խնամողը տվեց: Բիչո՛րին կռացավ՝ Արանչային համբուրելու համար, և աղջիկը, ինչպես միշտ, պատասխանեց իր լուռ, վայրի ուրախությամբ: Ու ածապարելով մի մատով սկսեց նյարդայնորեն սեղմել տառերը: Պարզ էր, որ ցանկանում էր շտապ մի բան հաղորդել: Բիչո՛րին կարդաց. «Մայրս նամակդ պատռել է»:

— Պատռե՞լ է:

Արանչան գլխով արեց: Նորից գրեց. «Նրան էլ նամակ չտաս: Չի տանելու: Նա լավ մարդ չէ»:

— Աղջի՛կ, մորդ մասին այդպես մի՛ խոսիր:

Բարակ, սփրթնած մատը ջանադրաբար անցնում է տառերով: Խնամողը լուռ է, հայացքը՝ էկրանին հառած: Բիչո՛րին կարդում է. «Եթե ուզում ես ընտանիքի ահաբեկչին գրել, ձևը կասեմ»:

— Ինչպե՞ս:

Դե՛, ուղիղ նրան գրի՛ր: Բա՞նտ: Արանչան գլխի երկու կտրուկ շարժումով հաստատում է: Փորձում է բառեր արտաբերել: Սուր, անհասկանալի ձայներ է արձակում: Երբեմն կարողանում է ինչ-որ հնչյուններ արտաբերել, բայց այսօր ի՞նչ է կատարվում, որքան էլ ջանում է՝ չի ստացվում, ու վախեցած փաթ է ընկնում: Դրա պատճառով գրում է. «Նա Պուերտո դե Սանտա Մարիա 1-ում է գտնվում՝ 3-րդ մոդուլում: Նրա անունը կգրես, ու հաստատ կհասնի»:

— Կարծում ես՝ նամակը կկարդա՞:

Արանչան ձեռքով մի շարժում է անում՝ ասես կասկած արտահայտելով: Մյուս ձեռքը՝ պրկվածը, փորին կպած է պահում:

Երկրորդ նամակը

Արանչան արդեն անուրախ, անարտահայտիչ ու ասես պաղած հայացքով ուղեկցեց Բիչո՛րիին, որը հեռացավ հրապարակով: Լավ կին է: Աղավնիներ՝ ցատկոտող ճնճղուկներով շրջապատված, կտցում էին իրենց շուրջը, կողքի փողոցում՝ տների առջև, բուտան գազի ամրապինդ բանվորը՝ ոտքից գլուխ կեղտոտ, ուսին էր գցում եսիմորերորդ մեծ բալոնը:

Սելեստեն սպասեց, մինչև Բիչո՛րին անհետացավ տեսադաշտից, ու ասաց.

— Միրենը կբարկանա, եթե իմանա՝ կանգնել ենք՝ այդ կնոջ հետ խոսելու:

Արանչայի պարանոցը հնարավորություն չէր տալիս լիարժեք շրջել գլուխը: Այդ պատճառով չկարողացավ անվասայլակի հետևում կանգնած խնամողի աչքերի մեջ նայել: Աշխույժ-բարկացած մատի շարժումներով գրեց iPad-ի վրա. «Դո՞ւ ես նրան պատմելու»:

— Իհարկե ո՛չ, Արանչա՛: Ինձ ո՞ւմ տեղն ես դրել: Բայց շուրջդ նայի՛ր՝ որքան մարդ կա, որ մեզ է նայում:

Չէր ուզում կեղծավորություն անել՝ Բիչո՛րիին հարցնելով նամակի բովանդակության մասին: Ինչի՞ համար, եթե արդեն գիտեր: Կարդացե՞լ էր նամակը: Այո՛, իհարկե: Ու յուղի բծերով թուղթը իր դարակում էր պահել:

Երեք օր առաջ պատրաստվում էին ընթրել, ու երևի մորս պատրաստած ձկան ու տապակած սխտորի հոտը տարածվել էր Գիպուսկոա նահանգով մեկ: Կանայք խոհանոցում էին: Արանչան՝ անվասայլակով, սեղանի մոտ էր: Պատուհանը բաց էր՝ օդը հոտերից ու գոլորշուց մաքրելու համար: Շուտով լսվեց կողպեքի մեջ պտտվող բանալու ձայնը: Խոշիանը մտավ՝ կողերը քորելով, բերետը մի քիչ հետ ընկած: Ցելոֆանե տոպրակով բերել էր հազար, կանաչ լոբի, հողամասի բանջարեղեն: Ամենը դրեց այնտեղ՝ Աստվածամոր սափորի կողքին (որը սովորաբար տնից տուն են տանում, և սափորը հսկելու հերթն իրենցն էր այսօր): Ազատ ձեռքով (մյուսով անդադար՝ տավիղ նվագողի պես, քորում էր կողերը) մորթյա բաճկոնի ներքին գրպանից հանեց սպիտակ ծրարը:

— Մարդամեկը տվեց, որ Խոշե Մարիին տանես:

Միրենը, շուրթերը սեղմած, կատաղած աչքերով որոշեց ճշտել.

— Ո՞վ է քեզ տվել:

— Էլ ո՞վ պիտի: Գիժը:

— Դու հետը խոսե՞լ ես:

— Բա ի՞նչ պիտի անեի. հողամաս էր եկել: Փայտով ծեծեի՞:

— Տո՛ւր՝ տեսնեմ:

Միրենը խլեց նամակը: Պատռեց՝ ճը՛ռթ: Երկու կտորները խրոխտ շարժումով իրար վրա դրեց: Ու նորից պատռեց՝ ճը՛ռթ: Ու պատառիկները նետեց խոհանոցի լվացարանի տակի աղբի դույլը:

— Հապա՛, եկե՛ք՝ ընթրենք:

Քննարկեցի՞ն եղածը: Ո՛չ: Միակ բանը. մի քանի օր հողամաս չգնաս: Բա ճագարնե՞րը: Թողնեմ՝ սատկե՞ն:

— Դե՛, ուրեմն, կանուխ դո՛ւրս արի, որ կերը տաս:

— Մարդամեկը պատի վրայով կթռչի ու նամակները դռանս արանքը կմտցնի:

— Դրանք տուն չբերես: Ավելի լավ է՝ այրես:

Հաջորդ օրն առավոտ շուտ վեր կացավ՝ համարյա ձուլարանի ժամանակների պես, որ շուտ զբաղվի իր կենդանիներով: Ու Արանչային բռնեցրեց խոհանոցում. էստեղ ի՞նչ ես անում: Իբր թե չէր տեսնում: Խոհանոցի լվացարանի առջև անվասայլակում նստած՝ Արանչան աղբի դույլը գոգն էր դրել: Մատը դեպի շուրթերը տանելով՝ հորը խնդրեց, որ ձայն չհանի: Այդ օրերին Արանչան, հենվելով ձեռնափայտին, կահույքի եզրերին կամ որևէ այլ բանի, երկաթե կամք ցուցաբերելով, ունակ էր ինքնուրույն վեր կենալ ու մի քանի (փոքր, անվստահ, դողացող) քայլ գցել՝ չնայած պրկված ու չբացվող ոտնաթաթին, ու արդեն մի երկու անգամ հասցրել էր ընկնել՝ առանց լուրջ հետևանքների: Վերջապես առողջ ձեռքի յուղոտ մատներով կարողացավ գարշահոտ դույլից դուրս քաշել նամակի վերջին կտորը:

Խոշիանը շշնջաց.

— Եթե ama-ն իմանա, ահավոր կբարկանա:

Արանչան ուսերը թոթվեց, գլխով անտարբեր շարժում արեց՝ ինձ ի՞նչ, ես նրանից չեմ վախենում: Ճղրտած նամակը մի փոքր մաքրեց մոր գոգնոցով, որը կախած էր դռան հետևը: Անվասայլակով դժվարությամբ էր տեղաշարժվում: Հայրը փորձեց նրան օգնել: Արանչան, մռայլ մերժելով, նրան հասկացրեց, որ կարիք չկա: Բայց հայրը, ինչպես միշտ, կարեկցեց:

Ինչպե՞ս էր աղջիկն անվասայլակը մի ձեռքով շարժելու: Դե՛, ճիշտ այնպես, ինչպես քիչ առաջ էր արել՝ հակառակ ուղղությամբ շարժվելով:

— Գնացի՛նք, գնացի՛նք:

Ու աշխատելով չաղմկել, որ դեռ քնած Միրենը նրանց չլսի, առանց ժամանակ կորցնելու՝ իր սենյակ տարավ աղջկան:

Երբ մենակ մնաց՝ մահճակալի՝ բռնակ չունեցող կողմի վրա նստած, որքան կարողացավ՝ հարթեցրեց խառնված սավանները ու դասավորեց նամակի կտորները: «Խոշե՛ Մարի, Բիչո՛րին եմ: Քեզ կզարմացնի…»: Այնպես որ, երբ առավոտյան Բիչո՛րիին տեսավ, արդեն տեղյակ էր նամակի բովանդակությանը: Երկմտեց՝ նամակը նորից աղբամա՞ն գցել, թե՞ պահել, բայց հանուն ինչի՞ պահել: Լա՛վ, կմտածի: Ժամանակավոր պահեց կոմոդի դարակում:

Ժամը մեկին Սելեստեն նրան հետ բերեց տուն: Բոլորը կերան. մայր ու աղջիկ հեռուստացույցով դիտում էին «Բախտի անիվը», իսկ քնատ, ինքնամփոփ Խոշիանը հետաքրքրված չէր հաղորդումով: Բացի այդ՝ նրան նյարդայնացնում էին երիտասարդ մասնակիցների ճվճվոցները:

— Կարելի՞ է մի քիչ ձայնը ցածրացնել:

Ուտելուց հետո, մինչ սպասում էր, որ շտապօգնության մեքենան գա իր հետևից՝ ֆիզիոթերապիայի տանելու, Արանչան iPad-ով գրեց եղբորը: Նրան պատմեց-բացատրեց-տեղեկացրեց, որ Չատոյի Բիչո՛րին նրան նամակ է ուղարկելու բանտ, «ու ես կցանկանայի, որ նրան պատասխանես, դրա մասին որպես քեզ հիշող քույր եմ խնդրում, կարիք չկա, որ ama-ն իմանա»: Գրել էր սրտագին, բայց վճռական, խիստ և միաժամանակ ջերմ տոնով: Ավարտելով հավելեց. «Նա լավ կին է: Muxu bat*»: Ինչպիսի դժբախտություն է, որ ձախլիկ մարդու հենց ձախ ձեռքը չի գործում: Չհամակերպվելով իր սահմանափակումների հետ՝ ավելի շատ կատաղությամբ, քան ճարպկությամբ, ջանաց տեքստը արտագրել թղթի վրա, թեև հասկանում էր, որ չի ստացվելու: Չստացվե՞ց: Բնավ:

Հինգշաբթի էր, իսկ նա մինչև շաբաթ իր զավակներին չէր տեսնելու: Ի՞նչ անել: Ո՞վ իր համար կարտագրեր նամակն ու անհապաղ փոստարկղը կնետեր: Այստեղ մի նրբություն կար. ով էլ լիներ՝ կարդալու էր այն: Հորը բացառեց: Սելեստե՞ն: Մինչև վաղը նրան չեմ տեսնելու: Բացի այդ՝ չեմ

* Muxu bat (բասկ.), համբուրում եմ, պաչիկ:

վստահում: Ոչ թե որովհետև կգնա Միրենին կպատմի, ո՛չ: Բայց հաստատ տնեցիներին պատմում է իր առօրյա աշխատանքի մասին անդամալույծի (կամ պարալիզվածի. չգիտեմ՝ այդ մարդիկ որ բառն են նախընտրում) հետ, ու ո՞վ կարող է երաշխավորել, որ նրանք դեսուդեն չեն պատմի:

Մեկ ժամ ֆիզիոթերապիա: Մտնելիս այնպես կարողացավ բարևել, որ նրան հասկացան.

— Բարև՛:

Դրա արդյունքում, սպիտակ խալաթներով շրջապատված, քաջալերանքի ու գովասանքի արժանացավ: Բուժառուի տրամադրությունը պետք է բարձրացնել: Սա հաստատության կանոնն է, թեև Արանչային բոլորովին դուր չի գալիս, որ երեխայի կամ ծերի պես են վերաբերվում իրեն: Ես պակասավոր չեմ:

Ռեաբիլիտացիայի պլանը. ձախ թևի ու ձեռքի հիպերտոնուսը պակասեցնելու վարժություններ: Հետո կաշխատեն ստորին վերջույթների հետ: Ֆիզիոթերապևտը հարցրեց՝ նորի՞ց էր զգացել ծակծկոցը: Պատասխանեց՝ ո՛չ: Լավ նշան է: Առաջընթացը շատ դանդաղ էր, բայց կար: Ու վերջում՝ մեկ ժամ անց, կաշխատեն նրան ոտքի կանգնեցնել, ու նա պետք է ինքն իրեն պահի ու մի քանի մետր քայլի՝ բռնվելով, իհարկե:

Դահլիճում իրարանցումը չափից ավելի էր. ֆիզիոթերապևտները, բուժառուներն ու ուղեկցողներն անընդհատ դուրսուներս էին անում: Ու նրանց ձայները: iPad-ը Արանչայի ձեռքում չէր, որի պատճառով հնարավոր չէր մեկնումեկին մի բան խնդրել: Բայց ավելի ուշ, երբ մենակ մնաց իր լոգոպեդի հետ ու կարողացավ նրան բացատրել, ստացվեց: Բժշկուհին հարցրեց.

— Շատ երկար է նամա՞կը:

Ի՞նչ երկար: Տասնչորս տող է: Լավ կլինի, ասաց, որ Արանչան հենց հիմա նրան էլեկտրոնային փոստով ուղարկի, իսկ ինքը խոստանում է՝ երեկոյան կարտագրի ու նամակը կգցի իր տան կողքի փոստարկղը: Կատարե՞ց խոստումը: Արանչան կասկածում էր, բայց մեկ ամիս անց Խոշե Մարիից ծրարի մեջ դրած բացիկ ստացավ (որ մայրը չկարդա՞ր): Կատակներ ու ջերմ բառեր էր գրել և մի հետգրություն. «Ինձ գրել է»: Չէր գրել՝ ով, բայց կարիք չկար: «Ես պատասխանել եմ»:

Երրորդ ու չորրորդ նամակները

Ստացավ, օ՛, զարմա՛նք, քրոջ նամակը: Բացել էին, իհարկե: Խոշե Մարին հատուկ հսկողության տակ է: Սահմանափակում են նրա բակ դուրս գալը, մոտավորապես երկու շաբաթը մեկ բանտախուցն են փոխում, նամակները կարդում, պատժենահանում ու պահպանում են:

Վերջին տասնհինգ տարում քույրն առաջին անգամ է գրել նրան: Չհաշված սուրբծննդյան բացիկները, որ ավարտվում են անփոփոխ ֆորմալ բառերով. «Քեզ միշտ հիշող ընտանիքդ երջանիկ տարի (ձե՞ռ են առնում, թե՞ ինչ) է մաղթում»:

Մի անգամ (բանտարկության սկիզբն էր) Արանչան ծնողների նամակին մի քանի քաջալերող տող էր ավելացրել, ու վերջ՝ այդքանը: Իրենց ընտանիքի իսպանուհուն՝ Արանչային, մեկ է, սիրում է: Ինձ համար քույրս ասես մեկը լինի, որ քայլում է՝ իսպանական դրոշն ուսերին: Իր ազգականներից և ոչ մեկին թույլ չէր տա նման բան, նույնիսկ իր կրտսեր եղբորը: Դրան հաստատ չէր ների: Բայց Արանչայի դեպքում ուրիշ էր: Արանչան քույրս է, գրո՛ղը տանի: Ամուսնացել էր մի տխմարի հետ, որը հիմա էլ նրան լքել է: Այնպես որ, իսպանուհի լինելու իր պատիժն արդեն ստացել է:

Խոշե Մարին այդ պահին հիշեց, թե ինչպես մայրն իրեն թույլատրված հեռախոսազանգի ժամանակ տագնապալի ձայնով պատմեց, որ քրոջը շատ վատ բան է պատահել Մալյորկայում: Քույրս Մալյորկայում ի՞նչ գործ ուներ: Այնոայի հետ արձակուրդ էին գնացել: Ու հետո էլ (դե՛, Միրենը նըրբանկատությունից հեռու մարդ է), թե.

— Այնտեղի բժշկի հետ խոսեցի: Որքան հասկացա՝ մինչև կյանքի վերջ ապուշ է մնալու:

Քրոջ ձեռագիրը չէր: Պարզ է՝ նա չի կարող, մեկը գրել է նրա անունից: Արանչան հայտնում էր, որ շուտով եղբայրը մեկ ուրիշ նամակ է ստանալու: Ումի՞ց: Դե՛, Չատոյի Բիչո՛րիից: Դա՛ էր մնացել պակաս: Հա՛, մեկ էլ խնդրում էր, որ ama-ի հետ այդ մասին չխոսի: Խոշե Մարիի սկզբնական ուրախությունն անհետացավ: Ինչո՞ւ: Մայրը վերջերս ասել էր, որ այդ կինը Մոնդրագոնի հոգեբուժարան տանելու ապրանք է և որ.

— Գլուխը մտցրել է, որ պիտի հետապնդի մեզ: Aita-ին հանգիստ չի թողնում: Հենց զինված պայքարը պրծավ, Euskal Herria-ի թշնամիները փոփոլացան: Կարծում են, թե միայն իրենք են տառապել: Պարզ է, որ վրեժ են ուզում լուծել: Ուզում են մեզ ջարդել ու ստիպել ներում խնդրել: Էդ էր պակաս, որ ես ներողություն խնդրեմ: Ավելի շուտ ինձ գետը կգցեմ:

Քրոջ հիշատակած նամակը երկու օր անց բերեցին: Նրա առաջին ցանկությո՞ւնը: Աշխատողի ներկայությամբ պատռել այն: Այդ պահին էր, որ հասկացավ, թե ինչու էր Արանչան այդքան փութով իրեն գրել: Նրան հենց այդ քայլից հետ պահելու համար: Եղբոր բնազդային պոռթկումը զսպելու համար: Հակառակ դեպքում Գժի նամակն ուղիղ զուգարանում էր հայտնվելու: Երբ մենակ մնաց, նամակը կարդաց:

Սա հոգեբանորեն ինձ ճնշելու համար է: Իբր քիչ եմ ընկճված մարդակործան իսպանական այս բանտում: Համեստ տոնով է գրել, ասես վախենար անհանգստացնել իր այդ անհեթեթ խնդրանքով: Բայց պառավն իրեն ինչի՞ տեղ է դրել: Մտածում է, որ ekintza-ի տվյալնե՞րն եմ տալու: Որ բանտի աշխատողներն իմանա՞ն: Թե՞ որ նամակը մի կեղտոտ, ֆաշիստ լրագրողի տա:

Խը՛րթ-խը՛րթ. պատռեց թուղթը: «Նա լավ կին է»: Չէ մի՛: Բայց թղթի կտորներից արագորեն ազատվելն ամենևին չօգնեց, քանի որ արդեն գիտեր բովանդակությունը: «Ես Բիչո՛րին եմ, երևի հիշում ես ինձ…»: Մեկ շաբաթ անց նրա ուղեղում դեռ պտտվում էին խնամքով գրված տողերը: Ասես Չատոյի կնոջ ձայնով ընթերցվեին: Այն ձայնով, որը Խոշե Մարին էր հիշում: Ու այդ ձայնը սկսեց նրան անդադար հետապնդել: Ճաշարանում, բակում, գիշերը՝ մահճակալին պառկած, երբ սպասում էր, որ քնելու ցանկությունը հաղթի: Մի մոլագարություն էր: Հետևից ընկած մի ուրվական: Առաջ անցած ժամանակների մասին երազներ էր տեսնում: Իսկ հիմա՝ ավելի հաճախ: Ու տեսնում էր, թե ինչպես երեխա ժամանակ «Պագոետա» բարի առջև նարնջի կամ կիտրոնի սառցակոն էին լիզում, որոնք Չատոն էր գնել իր երեխաների, Խոշե Մարիի, նրա քրոջ ու եղբոր համար: Արևոտ փողոցը լի էր կիրակնօրյա հագուստներով ճեմող մարդկանցով: Եկեղեցու զանգերը ղողանջում էին: Բարից տարածվում էր տապակվող ծովախեցգետինների բույրը, սիգարների ու ծխախոտի ծուխը:

Որոշ ժամանակ բան չգրեց, բայց վերջում հոգնեց երևակայական սառցակոներից ու ծովախեցգետինների բույրից, որ տնավորվել էին իր ուղեղի անվերահսկելի խորքերում: Ու ինքն իրեն ասաց՝ նրանից ազատվելու

համար մի ապուշ բան գրի՛ր: Որ հասկանա, որ դու իր խաղի մեջ չես ներքաշվելու: Այդպես էլ արեց: Նրան մի վայրկյանում պատասխանեց անբարյացակամ, կռվազան, մերժողական ոճով: Ընդամենը՝ մի չորս տող: Որ չի զղջում, որ իր նպատակն է անկախ, սոցիալիստական ու բասկախոս Բասկերի երկիր ունենալը, որ շարունակում է մնալ ETA-ի անդամ ու որ այլևս չի պատասխանելու նրա նամակներին: Հետո մի հատ էլ բացիկ գրեց քրոջը ու երկու ծրարները հանձնեց բանտապահներին՝ բովանդակությունը ստուգելու համար, իսկ հետո ինչ ուզում են՝ թող անեն. կուզեն՝ թող ուղարկեն, կուզեն՝ դրանցով քամակները կսրբեն կամ էլ լոլիկով ուտեն:

Խոշե Մարին շարունակում էր դիմադրել: ETA-ի անդամ մյուս բանտարկյալները կամաց-կամաց հանձնվում էին, ու դա ցավալի էր: Նույն այդ Պակիտոն. հավատալու էլ չէ: Նա, որ Խոշե Մարիին իր առաջին ատրճանակն էր տվել, և ասել էր՝ սպանի՛ր՝ ում կարողանաս: Պակիտոն, որ ծածուկ ուտում էր իր բանտախցում, երբ մյուս բանտարկյալներով եսիմորերորդ հացադուլն էինք անում: Պոտրոսը, Առոսպիդեն, մոնդրագոնցի Խոսուն, Իդոյա Լոպեսը: Ի վերջո դրանց վռնդեցի՞ն կազմակերպությունից, թե՞ ոչ: Ի՞նչ տարբերություն, եթե մարդուն դուրս ես գցում ծանծաղուտում խըրված նավից: Խոշե Մարիին նույնպես երևի մի տարի կլինի՝ հարցրել էին (առաջին անգամ չէր)՝ ստորագրելո՞ւ է այն նամակը, որով քառասունհինգ ստորագրողներ հայտնում էին, որ հրաժարվում են բռնությունից ու ներողություն են խնդրում զոհերի ընտանիքներից: Չարաճճիություն արած երեխանե՞ր են, ի՞նչ է: Հիմա՞ պիտի զղջամ ու մանավանդ՝ հանուն ինչի՞: Իրականում զղջո՞ւմ են: Սրանց ուզածը տուն վերադառնալն է: Դավաճանե՞ր: Թուլամորթնե՞ր: Եսասերնե՞ր: Կյանքդ զոհաբերես, ու արդյունքը սա՞ լինի: Հանուն ոչնչի: Բացարձակապես ոչնչի: Որոշ ժամանակ մտածում էր այդ մասին: Իրականում տարիներ շարունակ էր մտածում ամեն անգամ զրուցասենյակում մորը ծերացած ու ընկած տեսնելիս կամ երբ իմացավ քրոջ մասին, կամ երբ մտածում է իր զարմիկների մասին ու հասկանում է, որ նրանց չի ճանաչում ու նրանց հետ չի կարող խաղալ, կամ երբ տեղեկանում է, որ իր aita-ն վերածվել է տրտում, անպետք մի ծերուկի: Ի՞ր պատճառով: Երևի թե: Իսկ կառավարությունը հիմա ավելի հզոր է: Հոխորտացող կառավարությունը մեզնից հաշիվ է պահանջում: Կազմակերպությունը հրաժարվում է պայքարից՝ մի կողմ նետելով բանտարկյալներիս, ասես անպետք լաթ լինենք: Հանկարծակի պարուրած զայրույթ-

հուսահատությունից, զզվանք-տխրությունից այնպիսի ուժեղ հարված հասցրեց պատին, որ քերթեց ձեռքի մաշկը, ու երկար ժամանակ հեկեկաց իր բանտախցի միայնության մեջ, սկզբում՝ անձայն՝ ձեռքերը պատին հենած, հետո, դիրքը չփոխելով, նորից հիշելով մանկության նարնջի ու կիտրոնի սառցակոները, այնպիսի հեկեկոցով, որ հաստատ լսվում էր դրսում, բայց իր համար մեկ էր: Ամեն ինչն էր մեկ:

Հաջորդ առավոտ նստեց ու տետրի վանդակավոր թղթի վրա գրեց.

«Բիչո՛րի, ուշադրություն մի՛ դարձրու երեկվա նամակին: Բարկացած էի գրել: Երբեմն պատահում է: Հակիրճ ասեմ: Ե՛ս չէի ամուսնուդ վրա կրակողը: Նշանակություն չունի՝ ով է կրակել, քանի որ ամուսինդ ETA-ի թիրախն էր: Հնարավոր չէ ժամանակը հետ շրջել: Ես կուզեի, որ դա պատահած չլիներ: Դժվար է ներում խնդրելը: Ես դեռ պատրաստ չեմ դրան: Իրականում ես վատ մարդ դառնալու համար չեմ մտել ETA: Իմ գաղափարներն էի պաշտպանում: Իմ խնդիրն այն է, որ ես չափից ավելի էի սիրում իմ ժողովրդին: Դրա համար արժի՞ զղջալ: Սա է ամբողջ ասածս: Խնդրում եմ՝ ինձ չգրես: Նաև խնդրում եմ՝ ընտանիքիս հանգիստ թողնես: Լավագույն մաղթանքով»:

Հրաժեշտ տվեց զուսպ agur*-ով: Իսկ հիմա ո՞նց անեմ: Չէր ուզում, որ բանտի աշխատողները նամակը կարդային: Ոչ թե որովհետև վարկաբեկող կամ կարևոր տեղեկություններ էր պարունակում. նման բան չկար: Խնդիրն ուրիշ էր: Չափից ավելի անձնական բնույթի էր նամակը: Այս նամակով ասես մերկ լինեմ, թեև շատ մանրամասներ չեմ պատմում:

Ականջին հասել էր, որ Պեկասը ծառայություններ է մատուցում. սովորական բանտարկյալ էր՝ երկրորդ աստիճանի հանցագործ, թմրամոլ՝ կոտրած, տափակ քթով: Ներքևի ու վերևի պակասող ատամների պատճառով անդալուսցու արտահայտված շեշտով խոսելու ընթացքում երևում էր նրա լեզուն: Վճարի դիմաց ծառայություններ էր մատուցում: Խոշե Մարին բակում մոտեցավ նրան:

— Պեկա՛ս, զբոսանքի ե՞րբ ես դուրս գալու:

— Շաբաթ օրը:

— Հինգ եվրո կուզե՞ս վաստակել:

— Կախված է, թե ի՞նչ է պետք:

---

* Agur (բասկ.), մնաս բարով:

— Մի ծրար է պետք փոստարկղը գցել:
— Տասը եվրո արժի:
— Եղավ:

Հաշտեցում

Միրենն ու Արանչան ընդհանուր առմամբ հինգ տարի իրար հետ չխոսեցին: Իրար չէին զանգահարում, Սուրբ Ծննդի բացիկներ չէին փոխանակում, ծննդյան օրերին իրար չէին շնորհավորում: Ոչ մի բան: Ու ամբողջ այդ ժամանակվա ընթացքում Միրենը չէր տեսել իր թոռներին, ոչ էլ հրավիրվել էր նրանց առաջին հաղորդության ծեսին: Չէ՞ր հրավիրվել: Նույնիսկ փոստով չէր ստացել ավանդական հրավերները:

Խոշիանն ասում էր, որ մայր ու աղջիկ հեռագրասյան պես անսասան էին: Հեռագրասյա՞ն: Դե՛, նա այդպես էր արտահայտվում: Խոշիանը ժամանակ առ ժամանակ նստում էր Սան Սեբաստիան տանող ավտոբուս, այնտեղից էլ՝ դեպի Ռենտերիա տանողը ու գնում էր Արանչայի ու Գիլյերմոյի մոտ՝ նրանց տանելով հողամասի միրգն ու բանջարեղենը ու երբեմն էլ մի ճագար (սկզբում՝ կենդանի, բայց հետո՝ արդեն եփելու համար պատրաստ վիճակում, քանի որ երեխաները կենդանու հետ խաղալուց հետո սարսափում էին ճագարը մորթելու գաղափարից), երեկոն իր թոռների հետ էր անցկացնում, նրանց համար մանր-մունր բաներ էր առնում, հրաժեշտ տալիս էլ գրպանի փող էր տալիս: Մի խոսքով, թեև անալի մարդ էր՝ լռակյաց ու անաստղ, ջանում էր պապիկի իր դերը լավ կատարել:

Լեզվակռվից խուսափելու համար Միրենից գաղտնի էր գնում աղջկա մոտ: Ասում էր, որ հողամաս է գնում ու որ ընթրիքի չի գալու: Երրորդ թե չորրորդ անգամ Միրենը նրան ազատեց երեխայական այդ ստից:

— Քո կարծիքով՝ ես չգիտե՞մ, թե ուր ես գնում:

Ինչպե՞ս էր հայտնաբերել: Գաղափար չուներ: Հետագայում Խոշիանը չէր թաքնվում: Հողամաս գնալիս հստակ այդպես էլ ասում էր, իսկ եթե Ռենտերիա պիտի գնար՝ երեխաներին այցելելու, ուրեմն սահմանափակվում էր ասելով, որ գնում է:

Երբ այնտեղից վերադառնում էր, Միրենը կարճ հարցնում էր.

— Հը՞:

— Լավ են:

Դրանով էլ ավարտում էին, եթե, իհարկե, Խոշիանը տրտում ունքերով

չէր որոշում շարունակել երկխոսությունը՝ կնոջը հարցնելով՝ չի՞ պատրաստվում մի օր տեսնել թոռներին:

— Ե՛ս: Նրանք իմ տան տեղը գիտեն:

Բայց կար մի բան, որի մասին Խոշիանը չէր պատմում Միրենին. որ Արանչայի ու Գիլյերմոյի հարաբերությունները սարսափելի են: Երբեմն, երբ գալիս էր նրանց մոտ, արդեն աստիճանավանդակին՝ բնակարանի դռան հետևից, լսվում էին նրանց բղավոցները: Ու երեխաներն էլ մշտապես ներկա էին ծնողների անվերջանալի կռիվներին: Խոշիանը, ձեռքը մի կապ պրաս կամ մի տոպրակ խնձոր, բնակարան մտնելով, տեսնում էր արտասվաթոր աղջկան, վախեցած թոռներին ու Գիլյերմոյին, որը խենթի տեսքով, նրան չբարևելով, դուռը շրխկացնելով, նետվում էր փողոց:

Արանչան ցածրաձայն ասում էր հորը.

— Հանուն երեխաների եմ դիմանում:

Այլևս չէր կենակցում Գիլյերմոյի հետ: Ավելին. նույնիսկ թույլ չէր տալիս, որ ամուսինը կողքով անցնելիս դիպչի իրեն: Բնակարանում շատ տեղ չկար, բայց դեռ որոշ ժամանակ նույն մահճակալին էին քնում այն գիշերից հետո, երբ Արանչան որոշել էր ամուսնու հետ այլևս սեռական հարաբերություն չունենալ: Տասը-տասներկու օր մեջք մեջքի քնելուց հետո Արանչան իր համար բարակ ծալովի ներքնակ գնեց, ու, բացելով հատակի վրա, այդ օրվանից քնում էր աղջկա սենյակում:

Վերջին կենակցումը, հիշում է, ավելի քան զզվելի էր: Ասես միջատներ լինեին: Ոչ մի ջերմ բառ կամ անտեր մնացած մի համբույր՝ վերջում: Ընթրիքի ժամանակ վիճել էին ինչ-որ մի բանի համար. վեճերն արդեն որևէ հստակ թեմայով չէին, այլ բոլոր թեմաներով ու անիմաստ, մանավանդ՝ անիմաստ: Անկողնում մեկ էլ ամուսինը ցանկություն ունեցավ: Հապա պառկի՛ր: Վայրկենապես պրծավ: Արանչան ինքն իրեն ասաց՝ սա վերջին անգամ էր: Ես այս հոպարի սեփականությունը չեմ: Ատում էր նրա հոտը, որը նախկինում հավանում էր, ու անտանելի էր նրա ձայնի ռընգային տեմբրը, նրա խոսելու բացատրողական ձևը, իրեն գիտունիկի տեղ դնելը:

Գիլյերմոն գոռոզ ու վիրավորական տոնով հայտնեց.

— Դե՛, ես էլ բոզերի մոտ կգնամ:

— Ա՛խ, ուրեմն մինչև հիմա ես էի քո բոզը, ընդ որում՝ ձրի:

Արանչան ուժգնացող մի ցանկություն ուներ, որը չէր կարողանում

իրականացնել: Ինչո՞ւ: Որովհետև կոշիկի խանութում բավականաչափ չէր վաստակում: Մորից ի՞նչ օգնություն պիտի ակնկալեր, եթե չէին էլ խոսում: Հորից, իհարկե, հազար, կաղին ու ժամանակ առ ժամանակ՝ մխիթարանքի անճար խոսքեր: Իր սկեսուր-սկեսրոջից, որոնք լավ մարդիկ էին, նույնը՝ լավ ու ջերմ վերաբերմունք, որի համար Արանչան շնորհակալ էր, և դա նրա կյանքը ավելի տանելի էր դարձնում, բայց չէր ապահովում իր երազած ֆինանսական անկախությունը:

Ասես ծուղակի մեջ ընկած լիներ: Գիլյերմոն ավելի շատ չէր վաստակում, բայց իրենց երկուսի աշխատավարձով կարողանում էին կենցաղային ծախսերը հոգալ՝ առանց մեծ դժվարությունների: Աշխատանքի գնալ-գալու ճանապարհին, տանը, իրականում՝ ամենուր, ամեն րոպե հաշվարկ էր անում՝ ամուսնուց բաժանվելու գաղափարի վրա սևեռված: Հիփոթեքը, սնունդը, հագուստը, դպրոցը: Այդ ծախսերին ուրիշ ծախսեր էին գումարվում, որոնց տակից, որքան էլ ցանկանար, չէր կարողանալու դուրս գալ վաճառողուհու իր համեստ աշխատավարձով, եթե որոշեր երեխաների հետ թողնել-գնալ: Հետո մոռանում էր հաշվարկների մասին: Ինքն իրեն ասում էր՝ պետք է գնամ, մի բան կգտնեմ, կյանքս նորից կսկսեմ: Այդ պահին Էնդիկան էր մի խնդրանքով խոհանոց մտնում, քիչ անց Այնոան էր մեկ ուրիշով հայտնվում, ու Արանչան նորից էր համոզվում, որ միայն իր սահմանափակ ուժերով երբեք չի կարողանալու դուրս պրծնել այն խոր փոսից, որում հայտնվել էր:

Նրան շատ չէր հետաքրքրում, որ Գիլյերմոն (այլևս նրան Գիլյե չէր ասում. արժանի չէր) ուրիշ կանանց հետ էր հանդիպում: Երբեմն գիշերները տուն չէր գալիս: Արանչան նրան բան չէր հարցնում: Խանդո՞ւմ էր: Հակառակը՝ երազում էր, որ մեկի հետ կապվեր, ապահարզան խնդրեր ու անհետանար իր կյանքից:

Մի շաբաթավերջ իր սիրուհու հետ Խակա էր գնացել: Արանչան Էնդիկայից իմացավ:

— Aita-ն մի աղջկա հետ Խակա է գնացել:

— Իսկ դու ո՞նց իմացար:

— Նրան հարցրի՝ ինձ հետը կտանի՞, ու ասաց, որ չի կարող, որովհետև մի աղջկա հետ է գնում:

— Փաստորեն, նշանած ունի:

— Դե՛, պարզ է:

Գոնե ընտանիքը չէր զրկում փողից: Անշուշտ, տանը մատը մատին չէր տալիս:

Ոչ մաքրելու, ոչ էլ պատրաստելու առումով: Երբեք չէր զբաղվել այդ հարցերով: Մայրն էր օգնում: Անխելիտան (իր հոդացավի ու մաշած կոնքոսկրի պատճառով՝ ավելի ու ավելի դժվարությամբ) հաճախ էր գալիս նրանց տուն. արդուկ էր անում, ապակիներն էր մաքրում, երեխաների համար ճաշ էր եփում: Նաև կարելի էր հույս դնել Ռաֆայելի վրա, որը երեխաներին տարբեր տեղեր էր տանում, հետո էլ գնում էր նրանց հետևից ու տուն էր բերում: Նրանց առումով Արանչան գանգատվելու տեղ չուներ: Նրա հիմնական խնդիրը ֆինանսական կախվածությունն էր: Եթե ավելի շատ եկամուտ ունենայի, արդեն բաժանված կլինեի: Բայց դե՛, բնակարանը, երեխաները: Կախվածություն, շղթաներ, անվստահություն: Վախենո՞ւմ էր: Հնարավոր է: Մենակ մնալով մխիթարվում էր՝ ծրագրեր կազմելով այն ժամանակների համար, երբ զավակները արդեն մեծ ու անկախ կլինեին:

Մայիսյան մի ուրբաթ օր նրանք, Արանչայի հիշելով, դառը վիճեցին: Վեճը վատ չավարտվեց զուտ այն պատճառով, որ Արանչան զայրույթխուճապի պոռթկումով պայուսակն առավ ու հողաթափերով դուրս թռավ փողոց: ETA-ն Սանգուեսայում այդ օրը երկու ոստիկան սպանեց մեքենայի տակ ամրացված պայթուցիկով:

Մի քանի օր առաջ Մանոլո Զամառենոյայի կյանքին վերջ դրած ահաբեկչության հինգերորդ տարին էր: Գիլյերմոն դեռ ազդված էր: Այլևս հացը չէր գնում իրենց թաղամասի այն հացի խանութից: Մի գիշեր, ներկի տարան ձեռքին, իջավ փողոց՝ իրենց շքամուտքի կողքը երեկոյան հայտնված ETA HERRIA ZUREKIN* գրվածքը ջնջելու համար: Արանչան փորձեց նրան հետ պահել. պատմությունների մեջ ես ընկնելու, բայց նա իջավ՝ թքա՛ծ ունեմ, ու հաջորդ առավոտ պատին մի ահռելի սպիտակ բիծ էր:

Ու ես կասեի, որ Գիլյերմոյին ներսից քայքայող ցավն ու տխրությունը և բարկությունն էր պատճառը, որ նա սանձերը կտրեց: Որովհետև իրոք կատաղել էր ու այն էլ՝ ինչքա՜ն: Երկար դադարից հետո կին ու ամուսին պայմանավորվել էին ընտանիքով որևէ տեղ գնալ: Երեխաների հետ գնացին պատարագի՝ սպանված ընկերոջ հիշատակին: Մի քանի օր անց,

* ETA herria zurekin (բասկ.), Ժողովուրդը քեզ հետ է, ETA:

բո՛ւմ, պայթյունի պատճառով երկու մարդ է զոհվում Մանոլոյի պատահարին շատ նման պայմաններում: Ովքե՞ր էին զոհերը: Երկու ոստիկաններ, որոնք իրենց շարժական գրասենյակով եկել էին Սանգուեսա՝ ինքնության քարտեր տրամադրելու համար: Ու Գիլյերմոն շատ դառնացավ: Դա էր երևի պատճառը: Արանչան ուրիշ բացատրություն չի գտնում: Ամբողջ օրն իրար չէին տեսել: Արանչան երեկոյան կողմ գործից տուն եկավ: Առաջին իսկ չնչին պատճառով Գիլյերմոն պայթեց: Աչքերի ինչպիսի՜ արտահայտություն, դառնություն, ճիչեր: Երեխաների տեր էին, ասում էր: Երկու խեղճ մարդ, որոնց սպանել են զուտ համազգեստ կրելու պատճառով:

— Որոնց սպանել են քո եղբոր պես մարդիկ:

Իմ եղբո՞ր պես: Նրա մասին երբեք չէին խոսել: Ինչո՞ւ է նրա անունը տալիս, գիտի, չէ՞, որ կարող է ցավ պատճառել ինձ: Իսկ ամուսինը բռնեց ու ասաց՝ երանի բանտում փտի: Ո՞վ: Խոշե Մարի՞ն: Արանչան խնդրեց-պահանջեց, որ եղբորը հանգիստ թողնի: Գիլյերմոն կարծեց, որ պաշտպանում է եղբորը, պաշտպանում է այդ կեղտոտ մարդասպանին: Ու այս ամենը՝ Էնդիկայի ներկայությամբ, որ նստած դասերն էր անում, ու Այնոան էլ իր սենյակում հաստատ ամեն ինչ լսում էր: Լսում էին, թե ինչպես է իրենց հայրը անսովոր բղավոցներ արձակում, դառը մենախոսում, հայհոյում ու անիծում է այն օրը, երբ համաձայնել էր, որ իր երեխաներին բասկյան անուններ դնեն: Եվ ինչի՞ համար: Abertzale տատիկին գոհացնելու համար, որի հետ հիմա նույնիսկ չէին էլ խոսում:

— Իմ զավակները իսպանացի են, ես էլ եմ իսպանացի:

— Քեզ կլսեն:

— Թող լսեն: Ի՞նչ է, Իսպանիայում արգելվա՞ծ է իսպանացի լինելը:

Արանչան վրայից քաշեց գոգնոցն ու նետեց հատակին: Բերանից տգեղ մի արտահայտություն փախցրեց. ընդունում է: Վիրավորված էր: Որպես բա՞սկ: Ո՛չ, որովհետև հոգ չէ՝ բա՞սկ, թե՞ իսպանացի: Բայց չցանկացավ դիմանալ, որ եղբորը վիրավորեն: Այնպես որ, ասաց, ինչ ասաց, իսկ նա, որ միշտ ծանրաշունչ էր, խոհեմ ու երբեք, գոնե մինչև օրս, չէր բռնացել, ցանկացավ իր վրա ձեռք բարձրացնել: Խփելո՞ւ համար: Բա էլ ինչի՞ համար: Այդ պահին էր, որ Արանչան, իր առջև այլայլված դիմագծերով մի հրեշ տեսնելով, վախեցած հետ քաշվեց: Իր շուրջը նայեց: Եթե դանակ, շերեփ, մկրատ, պաշտպանվելու մի բան տեսներ, հաստատ ձեռքը կվերցներ: Բայց ձեռքի տակ միայն միջանցքում կախած իր պայուսակն ընկավ, որը վերցրեց ու սրտի ուժեղ բա-

բախումով նետվեց փողոց: Նույնիսկ հողաթափերը չփոխեց: Իսկ պայուսակը վերցրել էր, որովհետև մի պահ հիշեց, որ դրամապանակը մեջն է: Դուռը փակելու պահին լսեց թիկունքում, որ Գիլյերմոն նրան ազգայնական անվանեց: Մի բան, որ ամուսնու բառապաշարում հայհոյանքի էր հավասար:

Ո՞րն էր նրա առաջին միտքը: Գիշերը սկեսուր-սկեսրայրի տանն անցկացնելը: Մոտ էին ապրում՝ իրենց կողքը, բայց ճանապարհին վարանեց: Պատկերացրեց (ահավո՜ր է)՝ ինչպես է նրանց բացատրելու իրենց անհամերաշխ ամուսնության մանրամասները: Եվ ուշադրություն. պետք չէր բացառել, որ նրանք իրենց տղայի կողմը կբռնեին (միակ զավակն էր՝ ընտանիքի թագավորը) կամ էլ Արանչային կխնդրեին, հատկապես Անխելիտան, ենթարկվել որպես կին, որպես մայր, որպես հարս: Այդ միտքը գլխում՝ մի ցուցափեղկի լույսի ներքո հաշվեց մետաղադրամները. ավելի քան բավարար էր ավտոբուսի համար:

Մեկ ժամ անց Միրենը դուռը բացեց: Զարմացած տեսք չուներ, ասես պատրաստ էր, որ այդ պահը գալու է: Նայեց աղջկա հողաթափերին: Ոչ մի բան չասաց: Ու հենց միջանցքում հինգ տարի անց աղջիկն ու մայրը համբուրվեցին ոչ սառը, ոչ ջերմ:

— Կընթրե՞ս:

— Ի՞նչ կա:

— Pisto* և ձողաձուկ:

— Լա՛վ, եթե թույլ ես տալիս սեղանի մոտ նստել…

— Ա՜յ աղջիկ, հիմարություններ դուրս մի՛ տուր: Ո՞նց կարող է՝ թույլ չտամ:

Երեքով ընթրեցին խոհանոցում: Ոչ Արանչան ծնողներին պատմեց, որ կռվել է ամուսնու հետ, ոչ էլ նրանք հարցրին իր անսպասելի այցելության պատճառը: Պատառաքաղները լուռ խրում էին ամանի միջի սխտորով ու ձեթով պատրաստած լոլիկի կլորակների մեջ: Խոշիանը գլխիկոր ժպտում էր:

Միրենը վրա բերեց.

— Կարելի՞ է իմանալ՝ ինչի վրա ես ուրախանում:

Արանչան, առաջ ընկնելով, ասաց.

— Հանգի՛ստ թող նրան: Լավ է, որ ընտանիքում գոնե մեկը կարող է ուրախ լինել:

---

* Pisto (իսպ.), շոգեխաշած բանջարեղենով ու ձվով կերակուր:

Գերության համախտանիշ

Որոշ ժամանակ անց պարզվեց, որ Արանչան տեղյակ չէր, որ մի քահանա եկել ու նրան վերջին օծումն էր տվել: Իր ամենամեծ վախն այն էր, որ կարող էին մեռած համարել իրեն: Որ հնարավոր է, անփորձ մի բժիշկ (կամ փորձառու, բայց բասկերին չսիրող) կամ մի շատ երիտասարդ բուժքույր (որը գուցե դժգոհ է ստացած աշխատավարձից, ինչի պատճառով կարող էր անհավես կատարել իր պարտականությունները) հիվանդասենյակ մտնի ու տեսնելով, որ անշարժ պառկած է, առանձնապես չխորանալով՝ ասի՝ այս կինն արդեն մահացել է, նրան տարե՛ք դիահերձարան, մի նոր հիվանդ ունենք, մահճակալ է պետք:

Արանչան՝ պառկած արձան, կարողանում էր միայն աչքերը թարթել: Ոչ մի այլ շարժում անելու ունակ չէր: Այդ պատճառով հենց մեկը մտնում էր իր սենյակ, սկսում էր անդադար թարթել: Իմանան՝ մեռած չեմ: Տեսնում էր, լսում էր, մտածում էր, բայց ո՛չ շարժվել էր կարողանում, ո՛չ խոսել: Ու վախեցած հասկանում էր իր կողքը ասված ամեն ինչը: Մարմնին միացրած էին խողովակներ ու զոնդեր, շրջապատված էր լարերով, սարքերով ու ապրում էր (եթե դա կարելի է կյանք համարել) արհեստական շնչառության մեքենայի օգնությամբ:

Անշարժացած մարմնի գերին էր: Մարմնական զրահում գերության մեջ հայտնված մի ուղեղ: Ահա թե ինչի էր վերածվել: Ու ցավով մտածում էր իր երեխաների մասին, իր աշխատանքի մասին, այն մասին, թե ինչ կասի խանութի տիրուհուն, երբ վերադառնա (ի՜նչ ապուշ վիճակ է), եթե վերադառնա, իհարկե: Բախտս ո՜նց չբերեց: Ընդամենը՝ քառասունչորս տարեկանում: Մտքով մի բան անցավ, որի մասին հետո շատ էր մտածում. գուցե ավելի լավ էր՝ մեռնե՞ր: Մեռածները գոնե խնամքի կարիք չունեն:

Հանկարծ տեսադաշտում մոր դեմքը հայտնվեց:

— Kaixo, maitia: Քանի որ բժիշկն ասում է, որ դու ամեն ինչ հասկանում ես, համենայնդեպս, քեզ զգուշացնեմ: Գիլյերմոն եկել է՝ Այնոային տանելու: Երեկ է հասել Պալմա: Հիմա բարեհամբույր է ձևանում, բայց ինձ չի խաբի: Մի քիչ խոսեցինք, այնպես որ քեզ զգուշացնում եմ՝ գալու է՝ հրա-

ժեշտ տալու: Ինձ ճիշտ հասկացի՛ր: Առհավետ հրաժեշտ տալու. դե՛, պարզ է, քո վիճակում դու նրան այլևս պետք չես: Քանի որ արդեն չես կարողանալու նրա շապիկներն արդուկել… Մի խոսքով, նախընտրում եմ լռել: Maitia, երկու անգամ աչքերդ փակի՛ր, որ իմանամ, որ ինձ հասկացար:

Կես ժամ անց Գիլյերմոն մտավ հիվանդասենյակ:

— Ինձ լսո՞ւմ ես:

Արանչան չկարողացավ խանգարել, որ նա իր ճակատը չհամբուրի: Նույնիսկ Գիլյերմոյի դեմքը այդ պահին չտեսավ: Դեմքն ի՞նչ էր արտահայտում: Կնոջ տեսադաշտից հեռու՝ նա կարեկցանքի արտահայտություն ընդունելու կարիք չուներ: Եթե նրա ձայնը չլիներ, Արանչան չէր էլ իմանա, թե ով է հետը խոսողը: Ինչո՞ւ է շշնջում: Մտածում է, որ սգո սրահո՞ւմ է, ու պետք է հանգուցյալների հանդեպ պատշաճ հարգա՞նք ցուցաբերել:

— Այնոայի համար մի՛ անհանգստացիր, եղա՞վ: Ես կզբաղվեմ նրանով: Իսկապես ցավում եմ, որ այսպիսի բան է պատահել: Մայրդ ասաց, որ դու ամեն ինչ հասկանում ես:

Գիլյերմոն դեմքն այնպես մոտեցրեց, որ Արանչան վերջապես տեսավ նրան: Փորձարկո՞ւմ էր, ի՞նչ է: Դեմքը կամաց-կամաց հեռացնում էր ու տեսավ, որ իսկապես Արանչան կարողանում էր մի փոքր հետևել նրա շարժմանը: Հենց կինը գլխի ընկավ, որ Գիլյերմոն իրեն փորձարկում է, անմիջապես փակեց աչքերը: Ասես քնած լիներ: Գիլյերմոն չհասկացավ, որ իր լռության խորքից Արանչան նրան աղաչում էր այլևս չխոսել, իրենց զավակներով զբաղվել ու իրեն էլ հանգիստ թողնել: Լա՛վ, մի՞թե այս մարդը չէր հասկանում, որ հիվանդասենյակում իր ներկայությունն Արանչայի համար ավելի ակնհայտ էր դարձնում իր հաշմվածության ողբերգությունը: Բայց համա՛ թե պնդերեսն է այս մարդը: Ու բառերով հնարավոր չէ նկարագրել, թե որքան էր նա զայրացնում Արանչային:

— Ցանկանում եմ նախքան գնալս շնորհակալություն հայտնել:

Միայն սա էր մնացել պակաս:

— Շատ բաների համար, որոնք դու գիտես: Այն տարիների համար, որ միասին ենք անցկացրել: Ինձ պարգևած զավակների համար:

Ձեզ ի՞նչ եմ տվել: Ի՞նչ տեսարան է, է՞: Խմե՞լ է, ի՞նչ է:

— Եվ մեր լավ պահերի համար: Ես ստանձնում եմ վատ պահերի պատասխանատվությունը: Լուրջ եմ ասում: Ես եմ մեղավորը և անկեղծորեն ներողություն եմ խնդրում քեզնից:

Արանչային թվում էր, թե Գիլյերմոն անգիր է արել այդ բառերը կամ էլ թղթից է կարդում դպրոցականի պես: Չէր կարողանում գլուխը թեքել՝ իր կասկածը հաստատելու համար: Մինչդեռ ամուսինը շարունակում էր.

— Կարծում եմ՝ մայրդ քեզ ասել է, որ եկել եմ՝ քեզ հրաժեշտ տալու: Այո՛: Ճիշտ նույն ձևով, ինչպես երեկ նրան ասացի, հիմա քեզ եմ ասում: Կարծում եմ՝ դու արժանի ես, որ սա ինձնից լսես՝ առանց միջնորդի: Քո իրավունքն է: Իմ որոշումը պատահածի հետ ոչ մի կապ չունի: Հիշի՛ր, որ վերջերս այդ մասին արդեն խոսել ենք:

Բնության սխալ է: Նույն ձևով, ինչպես կոպերը մեզ հնարավորություն են տալիս չտեսնել, երբ չենք ուզում, կարող էինք նման մի փական ունենալ ականջի խոռոչի համար: Կփակեինք ու ստիպված չէինք լինի լսել մեր չուզած բաները:

— Բոլորիս համար ամենալավ տարբերակն է, մեր զավակների համար էլ: Էնդիկան մեկ տարուց չափահաս է դառնում: Այնոնան՝ մի քիչ ուշ: Շուտով իրենց սեփական կյանքով են ապրելու ու արդեն մեր կարիքը չեն զգա, գոնե՝ ոչ այնքան, որքան փոքր հասակում: Ի՞նչ իմաստ ունի, որ ես ու դու միասին ծերանանք, եթե շարունակ կռվելու ենք ու դառնացնելու ենք մեր մնացած տարիները: Արդեն գիտես, թե ում հետ եմ ապրելու: Անկեղծ, կարծում եմ, որ կատարել եմ իմ հայրական պարտականությունները: Դեռ կշարունակեմ կատարել, մի՛ անհանգստացիր: Զավակներիս շատ եմ սիրում: Բայց ես էլ մի փոքր երջանկության իրավունք ունեմ:

Տեսնես, ե՞րբ է ձենը կտրելու: Արանչան աչքերը չէր բացում: Միայն մտածում էր, որ Գիլյերմոն իր երեխաներին անտեր չթողնի: Մնացածը նրան չէր հուզում: Բայց իր երեխաները… ա՜խ, երեխանե՜րը: Բա որ այդ մյուս կինը լավ չվերաբերվի՞ նրանց:

— Իհարկե, կստանաս մեր ունեցվածքի՝ քեզ հասանելիք մասը: Բնակարանի կեսը և այլն: Ամեն ինչ կանեմ, որ ավելի վատ վիճակում չհայտնվես, քան հիմա ես: Ու եթե երբևէ իմ աջակցության կարիքն ունենաս, իմացի՛ր, որ պատրաստ եմ օգնել: Շատ եմ ցավում, որ քեզ հետ սա պատահեց:

Մեկ էլ ուրիշ ձայն լսվեց: Որտեղի՞ց: Մոտիկ տեղից էր գալիս: Կոշտ, ուժեղ, բարկացած մի ձայն: Բուժքո՞ւրն էր: Ո՛չ, իր մայրն էր: Ի՞նչ էր ասում: Որ մենք քո կարեկցանքի կարիքը չունենք: Այսինքն՝ նրան լսել էր: Գիլյերմոյի դեմքին շպրտեց նրա սևազգեստ լինելը:

— Էս ի՞նչ է, ժամանակից շուտ սգո շոր հագա՞ր:

Արանչան ի վիճակի չէր տեսնել նրանց: Գիլյերմոն լուռ էր. դեռ այստե՞ղ է ու չի պաշտպանվում: Իսկ մայրը, մի վայրկյան բերանը չփակելով, շարունակում էր փեսային նախատել սրա ու նրա համար, հագուստի պատճառով, Մալյորկա ուշ հասնելու ու ամբողջ բեռն իր վրա թողնելու համար: Ama, լա՛վ էլի: Մինչդեռ Միրենը խորացավ զգայուն թեմաների մեջ՝ փողի, ջերմ վերաբերմունքի, վատ ամուսին լինելու և այլն: Նրանք կարող էին վիճաբանելու համար միջանցք դուրս գալ, բայց ոչ: Բուժքույրերն ինչպե՞ս են թույլ տալիս՝ նման աղմուկ բարձրացնեն: Կամ էլ փողոց կարող էին դուրս գալ: Բայց գուցե Միրենի նպատակն աղջկան դաս տալն էր: Ահա թե ինչպես է պետք խոսել եսասերների ու անպատկառների հետ:

Հասկանալի է, որ Գիլյերմոն էլ չդիմացավ ու պատասխանեց: Կարծես սենյակից դուրս գալու պահին էր, քանի որ ձայնը մի քիչ հեռվից էր լսվում: Նրա խոսքը հանգիստ էր, քաղաքավարի և խրատական: Եզրափակելով հայտնեց, որ Արանչայից իր վերջնական բաժանումը ոչ մի կապ չունի տեղի ունեցածի հետ:

— Մեր հարաբերությունների մասին մենք արդեն խոսել էինք: Երեխաները տեղյակ են ու դեմ չեն: Այնպես որ, խոսք լինել չի կարող գլուխս ազատելու ու ամեն ինչ վրադ թողնելու մասին: Հապա տեսնենք՝ մի քիչ հարգանք կցուցաբերե՞ս: Եթե ոչ իմ հանդեպ, ապա գոնե աղջկադ հանդեպ, որին ես երբեք բեռ չէի անվանի: Բայց դու այդպես ես ասում: Իսկ սա՝ այն ծախսերի դիմաց, որը, հնարավոր է, արել ես աղջկաս համար:

Ու գնաց: Միրենը մռթմռթոցը դրեց: Հիսունեվրոյանոց երկու թղթադրամով ձեռքը թափահարեց աղջկա տեսադաշտում.

— Այս փողը վրաս գցեց: Անդաստիարակի մեկն է:

Այդ մարդը գծուծ չէր: Որպես ամուսին կատարյալ ձախողում էր, բայց որպես հայր Արանչան գանգատ չուներ: Ու վստահ էր, որ ինչ էլ լինի, նա երբեք իր զավակներին չի լքի: Բացի այդ՝ գրո՜ղը տանի, բեռի մասին խոսելու կարիք չկար: Բեռի՞: Եթե Գիլյերմոն կաթված ստանար, ես նույն ձևով կվարվեի:

Բայց Արանչային իրոք ցավ պատճառեց ու վրդովեցրեց այն, որ թեև քիչ ջերմ զգացմունքներ ուներ ամուսնու հանդեպ, նա (իր մոր անպատեհ պահվածքի պատճառով) հրաժեշտի համբույրի չարժանացրեց կնոջն ու դուրս եկավ վերակենդանացման բաժանմունքից:

Իսկ մա՛յրը: Դեռ այստեղ էր ու շարունակում էր փրփրել: Արանչյան, աչքերը փակ, մտածում էր, թե որքան հարմար կլիներ, որ մարդ կարողանար ուզած պահին չլսել:

Հանդիպումներ՝ հրապարակում

Պելոտա խաղի պատի դիմաց՝ հրապարակի անկյունում՝ անմիջապես հասարակական զուգարանի գլխին, բազրիքով եզերված մի փոքր տարածք կա: Արդեն որոշ ժամանակ է, ինչ ամեն առավոտ Արանչան այնտեղ սպասում էր Բիչո՛րիին, կամ էլ՝ հակառակը, որովհետև երբեմն նա էր առաջինը գալիս ու նստարանին սպասում Արանչային: Այնպես որ, հանդիպումները պատահական չէին: Ժամադրվո՞ւմ էին: Ո՛չ, բայց և այո՛: Բանն այն է, որ ժամադրվելու կարիք չկար:

Ավանի մարդիկ հրաշալի տեղյակ էին Բիչո՛րիի և Արանչայի ամենօրյա հանդիպումների մասին: Մարդիկ փսփսում էին. անդամալույծը չի կարող դիմադրել կամ էլ փախչել, ուստի մյուսը դրանից օգտվում է:

— Բայց գոնե գիտե՞ք՝ ինչ է նրան ասում:

— Վա՛յ, ինչ կարևոր է: Մեկ է, խեղճ Արանչան չի էլ հասկանում…

Սկզբում հանդիպումները կարճատև էին: Այսի՞նքն: Դե՛, մի քանի րոպե էին տևում. ողջույնի համբույր, հակիրճ խոսակցություն iPad-ի օգնությամբ, հրաժեշտի համբույր: Բարերում, խանութների դռների առջև, բուժկետում կամ ավտոբուսի կանգառում մարդիկ խոսում էին, որ եթե Արանչան չի ուզում տեսնել այդ տիկնոջը, տարօրինակ է, որ թույլ է տալիս, որ ամեն օր իրեն նույն տեղը բերեն:

— Գուցե ինդկացուհու պարտադրանքո՞վ է:

— Չեմ կարծում:

Հանդիպումները հետզհետե երկարում էին: Երկու կին անվասայլակի հետևը կանգնած Սելեստեի լուռ ներկայությամբ ժպտում էին իրար ու հասկանում մեկմեկու: Մարդիկ պատմում էին Խոշիանին, Միրենն էլ էր ամուսնու ականջները լցնում գանգատներով ու բողոքներով, բայց նա ուշադրություն չէր դարձնում: Ինչպե՞ս թե: Մռայլ պատասխանում էր.

— Աղջիկս հազիվ մի բանով երջանիկ է, ի՞նչ է, դրանից է՞լ զրկենք: Գրո՛ղը տանի, թող հանդիպեն ու խոսեն: Ո՞ւմ են վնասում:

Միրենը կատաղությունից ինքն իրեն ուտում էր.

— Հիմարի մեկն ես:

Ապա պատուհանը բացելով, որ ամբողջ աշխարհը լսի, հայտարարում էր, որ դավաճանված-լքված էր: Երբեմն զայրույթի նոպայի մեջ, մեկ շարժումով վրայից պոկելով գոգնոցն ու դուռը շրխկացնելով, եռանդուն քայլերով գնում էր մսի խանութ՝ սիրտը թեթևացնելու Խուանիի հետ, որը մի օր նրան մի բան էր խորհուրդ տալիս, մյուս օրը՝ ճիշտ հակառակը՝ մշտապես տխրադեմ իր ինքնասպան եղած, թե սպանված տղայի ու իր ամուսնու պատճառով, որ մահացել էր իր վշտի չափ մեծ քաղցկեղից:

Ընկերուհիները համակարծիք էին.

— Առանց ETA-ի ապրելը ոնց որ փողոցով մերկ քայլես: Ոչ ոք մեզ չի պաշտպանում:

Միրենի բոլոր ջանքերը, որ իր աղջիկը չհանդիպի Գժի հետ, տապալվեցին: Բղավում էր՝ Արանչան վատ էր արձագանքում: Սպառնում էր՝ նույնպես: Փորձում էր ցույց տալ, որ ինքն էլ է վիրավորված, վշտացած ու դառնացած՝ նույնը: Ինչ էլ ասեր՝ աղջիկը ջղաձգվում էր: Արանչան իր iPad-ի էկրանին դաժան բառերով էր պատասխանում, քարանում էր, ափսեն շուռ էր տալիս, կերակուրը թքելով՝ հրաժարվում էր ուտել:

— Աստվա՛ծ, այս ինչ բնավորություն ունես, ինչքան աշխատանք ես անել տալիս:

Խիստ ու սպառնացող Միրենը փորձեց ազդել Սելեստեի վրա, որի մատը հաստատ խառն է այս հարցում, թե չէ առանց նրա օգնության աղջիկս ո՞նց է գնալու այն մեկի մոտ: Խոհանոցում, երբ արդեն Արանչան անվասայլակով պատրաստ էր դուրս գալ, Միրենը Սելեստեին ասաց, որ բան ունի խոսելու: Բայց քաղաքավարի-ենթարկվող խնամողը՝ այդ անվնաս արարածը՝ Անդյան լեռների այդ մեղմ դուստրը, որը արդյունավետության մարմնացում էր, ու որը, չնայած ստացած նվազագույն կրթությանը, արքեպիսկոպոսից էլ լավ էր խոսում, գրեթե ըմբոստացավ:

— Տիկի՛ն Միրեն, եթե դուք գոհ չեք իմ ծառայություններից, ստիպված եք առանց ինձ մնալ: Արանչային սիրով եմ վերաբերվում ու կարծում եմ, որ պետք է ամեն ինչ անեմ, որ լավ զգա: Սիրտս ցավում է նրա համար. չեմ ուզում, որ Արանչան բարկանա ու տխրի:

Միրենը՝ մռայլ ու իշխող, նրան ազատեց աշխատանքից: Ասաց, որ անմիջապես մեկ ուրիշ ծառա կգտնի: Ասաց ծառա՞: Այո՛, ասաց՝ նվաստացնելով այդ կնոջը, որն այդքան բան էր անում իր աղջկա համար: Սելեստեն գոնե արտաքնապես չհուզվեց: Դեմքի արտահայտությունը արժա-

նավայել, ճակատը պարզ՝ իր փոքրիկ մարմնով կռացավ, որ հրաժեշտ տալով համբուրի Արանչային: Արանչան կտրուկ դեմքը կողք տարավ. ոչ շատ, այնքան, որքան պարանոցը թույլ տվեց: Ու երկարելով առողջ ձեռքը՝ գետնին թափեց սեղանին եղած ամեն ինչը՝ մրգամանը, աղամանը, հավկիթների զամբյուղը, Պրոնտո ամսագիրը: Էլ բան չմնաց գցելու: Գլորվեցին տանձերը, բանաններն ու խնձորները, չորս-հինգ հավկիթ ճտտոցով կոտրվեց, մնացածը ճաքեցին, ու վերջում էլ աղը թափվեց կոտրված ապակու ու ամսագրի շապիկի տորերոյի ու հայտնի մի աղջկա ամուսնության լուսանկարի վրա: Արանչան բացուխուփ էր անում ծռված շուրթերով բերանն ու ձայն չէր հանում: Թափահարում էր գլուխը՝ դեմքը կարմրատակած: Ձայն չէր հանում, բայց ասես բղավեր: Իր այդ լռությունը սղոցում էր ականջները: Ու չնայած շարժումները շատ սահմանափակ էին, անհնար էր չտեսնել նրա վրդովված անհանգստությունը, ծամածռած դեմքին դաջված բարկությունը:

Միրենը ծանր հոգոց հանեց: Կարծես այդ արտաշնչած օդի հետ դուրս թափվեց իր թոքերը ճնշող ամբողջ զայրույթը: Մի վայրկյան վարանեց՝ ապշած հայացքը հառելով առաստաղին՝ ասես ցանկանալով մի փոքր էլ հետաձգել կապիտուլյացիայի պահը: Հետո կտրուկ ու շեշտված ձայնով դիմեց Սելեստեին.

— Լսի՛ր, աղջի՛կ, կներես ասածներիս համար: Ձեր պատճառով խելքս իմը չէ:

Եվ վերստին աշխատանքի ընդունված Սելեստեն կռացավ, որ հավաքի ցրված մրգերն ու մաքրի հատակի կոտրված հավկիթները, բայց Միրենը նրան կանգնեցրեց՝ ասելով.

— Դու, ավելի լավ է, դո՛ւրս տար սրան. մնացածով ես կզբաղվեմ:

Դուրս տարա՞վ Արանչային: Նույնիսկ վայրկյան չկորցնելով: Տարա՞վ հրապարակ: Ամենակարճ ճանապարհով, բացի վերջին հատվածից: Ինչո՞ւ: Քանի որ այնտեղ թեքահարթակ չկա, պետք է շրջանցեին, որ հաղթահարեին տներին կպած բարձունքը: Երբ հասնում են վերև, անվասայլակն ասֆալտով գլորելը հեշտանում է:

Բիչո՛րին սովորական տեղում սպասում էր: Երբ տեսավ նրանց, թղթի մի կտոր թափահարեց՝ օդում բարևելով: Հեռվից թաշկինակի էր նման, բայց ոչ: Ու դատելով նրա դեմքից՝ ինչ-որ ուրախալի բան էր: Հասան նրա մոտ: Արանչան այտը դեմ տվեց, ու Բիչո՛րին համբուրեց նրան՝ գովելով նրա

տեսքն ու դեմքի լավ գույնը, միաժամանակ ջերմորեն շոյելով նրա կարճ մազերը:

— Արդեն մտածում էի, որ չեք գա:

— Մի անսպասելի բան եղավ տանը. այդ պատճառով ուշացանք:

Արանչան ունքերը կիտելով գրեց իր iPad-ով. «Իրականությունն ասա՛»: Այնպես որ, Սելեստեն խախտեց իր քաղաքավարի զսպվածությունն ու ասաց.

— Միրենը ջղայնացավ վրաս ու ազատեց աշխատանքից, բայց նորից հետ վերցրեց: Որքա՞ն վատ զգացի: Նրան դուր չի գալիս, որ Դուք ու Արանչան հանդիպում եք:

Արանչան, իր խնամողի ասածը հաստատելով, գլխով էր անում, ինչ որ ասելիս լիներ՝ ճիշտ է, հենց այդպես է եղել: Իսկ Բիչո՛րիի ձեռքի թուղթը՝ բաց վիճակում, պարզվեց՝ քառակուսիներով տետրից պոկած մի էջ էր՝ Խոշե Մարիի երկրորդ նամակը: Այս մեկը տարբերվում էր այն կոշտ ու կռվազան մարտիկի, հիշաչար ու պնդաճակատ մարդու գրած առաջին նամակից:

Արանչան երկարեց ձեռքը, միակը, որ կարող էր երկարել: Ակնհայտ անհամբերությամբ ուզում էր կարդալ եղբոր նամակը: Կարդաց՝ գլուխը տարուբերելով: Դժգո՞հ էր: Ավելի շուտ՝ մեղմ հանդիմանությամբ, քույրական տարաձայնությամբ, ինչ որ ասեր՝ այդ հիմարը ճիշտ ուղղությամբ է գնում, թեև դեռ շատ ճանապարհ ունի անցնելու: Թուղթը վերադարձրեց Բիչո՛րիին: Մատի հանգիստ շարժումով գրեց iPad-ով. «Մի քիչ խեղճացած է, բայց մի անհանգստացիր: Ես նրան կստիպեմ ներողություն խնդրել»:

— Ինձ ասում է, որ էլ չգրեմ իրեն: Դու ի՞նչ կանեիր:

Ու Արանչան ժպտադեմ պատասխանեց. «Ձուկը կարթը կուլ է տվել: Մնում է ջրից հանել»: Քանի որ փոխաբերությունները Բիչո՛րիի ուժեղ կողմը չէին, նա պարզաբանում խնդրեց: «Գրի՛ր նրան: Ես էլ կգրեմ»: Ու հետո Արանչան Բիչո՛րիին խնդրեց, որ անվասայլակով իրեն պտտեցնի եկեղեցու շուրջ: Սելեստեին գրեց. «Դու էստեղ սպասի՛ր»: Բիչո՛րին զարմացած էր ու գուցե մի քիչ էլ՝ վախեցած: Հասկանում էր այդ զբոսանքի նշանակությունը: Սադրանք էր լինելու: Ավելին՝ մարտահրավեր: Երբ նրա մայրն իմանա (իսկ նա կիմանա, քանի որ այս ավանում բոլորն են ամեն ինչ իմանում), ի՞նչ պատմություն է սարքելու:

Անվասայլակը գլորեց հրապարակի լորենիների սաղարթների ստվերի ներքո ու գնաց մինչև ֆրոնտոն՝ պելոտա խաղի պատը, որը տարիներ

առաջ խզմզված էր ETA-ի օգտին գրվածքներով ու ձախ abertzale-ների խորհրդանիշներով: Ահաբեկչությունների դադարից հետո, քաղաքապետարանը հանձնարարեց պատերը ներկել անբասիր կանաչ. պետք էր էջը շրջել ու նայել դեպի ապագան, որ չլինեն ո՛չ հաղթողներ և ոչ էլ պարտվողներ: Դանդաղ, շատ դանդաղ պտտվեցին եկեղեցու շուրջ, ոչ այնքան մարդկանց աչքին երևալու (քանի որ դեռ վաղ առավոտ էր), այլ որովհետև Բիչո՛րիի ցավերն էին վերսկսվել: Իր ուժերը հավաքելով՝ զսպեց իրեն, բայց երբ Արանչային իր սայլակով հանձնեց Սելեստեին, էլ չէր դիմանում:

Հրաժեշտ տվեց նրանց, ու երբ անհետացան իր տեսադաշտից, բազրիքից բռնած՝ իջավ աստիճաններով, բայց երեսուն-քառասուն մետր էլ չանցած՝ ստիպված նստեց գետնին, հետո պառկեց փոշոտ սալահատակին, ու մինչ նրան օգնության կհասնեին այնտեղի անցորդները, ոչ հեռվից լսեց-ճանաչեց Միրենի ձայնը.

— Աղջկաս հանգի՛ստ թող:

Չկրկնեց: Այլ բան չասաց: Ու Բիչո՛րին մի քանի րոպե անց, երբ ուշքի էր գալիս, արդեն վստահ չէր՝ լսածն իրականությո՞ւն էր, թե՞ իր երևակայության արդյունքը:

Բժշկական տեսանկյունից

Ներեան զանգեց եղբորը և պատմեց, որ նրա անունը թերթում է հայտնվել:

— Ո՞ր թերթում:

— Egin-ում: Քեզ նշում են որպես մի բժշկի, որն օգնություն է ցուցաբերել նախորդ օրը հիվանդանոց բերված մի ETA-ցու: Ասում են, որ ըստ քո տված վկայությունների՝ խոշտանգման նշաններ են եղել:

— Ես հարցազրույց չեմ տվել, առավել ևս՝ այդ էժան թերթոնին: Ըստ իմ վկայությա՞ն: Դա ի՞նչ կապ ունի ինձ հետ:

Չէր կարողանում հստակ մտածել: Առավոտվա ժամը ինն էր: Երեկ ուշ էր քնել: Ո՞ր ժամին: Դե՛, արդեն չէր հիշում: Լուսադեմին՝ երեքին կամ չորսին: Դա էլ, որովհետև կոնյակը վերջացավ, հակառակ դեպքում մինչև լուսաբաց համակարգչի առջև նստած կմնար: Բերանը չոր էր, ու գլխացավի նախանշաններ ուներ: Քունը տանո՞ւմ էր: Հետմիջօրեին էր քունը տանելու հիվանդանոցում:

Դուրս եկավ՝ թերթն առնելու: Դեռ չէր նախաճաշել: Իրականում Ներեայի զանգը նրան անկողնուց էր հանել: Սովորաբար թերթ առնում էր մոտակա գրենական խանութից: Ոչ ամեն օր, բայց հաճախ: El Diario Vasco, երբեմն El Pais էր գնում: Իսկ երբ որևէ լուրջ բան էր պատահում, երկուսն էլ:

Գրավաճառին ճանաչում է տարիներ ի վեր: Այնպես որ, դժվարանում է նրան խնդրել, որ Egin-ը տա: Հենց այդ նվիրյալ սոցիալիստ գրավաճառն էր, որն abertzale-ների թերթն էժան թերթոն էր անվանում: Շավիերն էլ «որդեգրել» էր բառը:

Գրախանութից մի քանի մետրի վրա կանգ առավ: Ես չեմ մտնի: Ու քանի որ տաք առավոտ էր՝ հարավային քամիով ու պայծառ երկնքով, զբոսնելով հասավ մինչև Ավենիդայի կրպակը: Կարդաց հոդվածն ու թերթն աղբամանը նետեց, հետո մտավ մոտակա սրճարան՝ նախաճաշելու:

Սուտ է, թե նա վկայություն է տվել:

Քսաներեք տարեկան ահաբեկիչը նախորդ երկուշաբթի իր ոտքով էր եկել հիվանդանոց՝ գվարդիականների ուղեկցությամբ: Գանգատվում էր կող-

քի ուժեղ ցավերից: Ծռված էր քայլում, դեմքը ցավից այլայլված էր, ծանր էր շնչում: Մի կապիտան նշան արեց Շավիերին. ուզում էր առանձին խոսել:

— Տեսե՛ք, բժի՛շկ, սրա ասածները մի՛ լսեք: Մարդասպան է: Դիմադրում էր, ստիպված էինք ուժ կիրառել: Սրանց հետ պետք չէ քաղաքավարի լինել: Գիտեք, թե որքան վտանգավոր են:

Ավելացրեց, որ ահաբեկիչը բռնվելու պահին զինված էր, ու որ հրոսակախմբերն այդ կարգի մարդկանց հանձնարարել են ասել, թե իրենց խոշտանգել են: Շավիերի ռեակցիա՞ն: Լռում էր: Եթե այս համազգեստավորն իմանար, թե ես ում տղան եմ: Նրա աչքերին էր նայում, մինչև դիմացինն ավարտեց իր խոսքը: Հետո ինքնավստա՞հ, ո՛չ, ավելի շուտ սառնարյուն տեսքով շրջվեց ու մտավ այն սրահ, որտեղ նրան սպասում էր բուժառուն:

— Բժի՛շկ, ինձ խոշտանգել են:

Եթե միայն այս տիպն իմանար, թե իր նմաններն ի՛նչ են արել հորս: Այդ միտքը փայլատակեց կայծակի պես: Դե՛, պարզ է, ես հո սառույցից չե՞մ: Ու Ներեան հեռախոսագծի մյուս ծայրից ասաց, որ հասկանում է նրան, որ չգիտի՝ ինչ կաներ իր տեղը, գուցե՝ նույն բանը:

Մի բուժառու: Այդպես էր Շավիերը տեսնում նրան: Մի մարմին, որը բժշկական օգնության կարիք ուներ: Թե ինչ է արել այս դեմքը, այս կուրծքը, այս վերջույթները, ինձ չի վերաբերում: Առայժմ: Երբ գործս ավարտեմ, կամ մի քանի ժամից, կամ վաղը, հաստատ ինձ կհետաքրքրի: Ավելին՝ քունս կփախցնի:

Դուռը բաց էր, լսվում էին գվարդիականների ձայներն ու քայլերը: Դրանցից ամենամոտ կանգնածին հարցրեց՝ հնարավո՞ր էր դուռը փակել: Միջանցքից նրան պատասխանեցին, որ ոչ: Անքաղաքավարի չէին, բնա՛վ: Զգացվում էր, որ սպիտակ խալաթը նրանց հարգանք էր ներշնչում:

— Անվտանգության խնդիր է, հասկացե՛ք:

Շավիերի մտքում անձնական մտորումների նույնիսկ նշույլ չմնաց, երբ նրան տեսավ գոտկատեղից վերև մերկ: Երկու բուժքույրեր օգնեցին, որ կապտուկներով մարդը հանվի: Ինքնուրույն չէր կարողանում: Նրան միայն վարտիքով թողեցին: Այդ ETA-ցուին՝ ահաբեկչին՝ այդ մարդասպանին: Հիմա է մտածում: Այն պահին հեռախոսով ասաց Ներեային՝ իր աշխատանքը լավ անելուց բացի՝ ուրիշ բանի մասին չէր մտածում:

— Գրո՛ղը տանի, եղբայրի՛կ, համա՛ թե տիրապետում ես քեզ:

— Չէ հա՛: Սահմանափակվում եմ՝ իմ պարտականությունը կատարելով: Դրա համար են ինձ վճարում:

Աչքի արնազեղումը Շավիերին հուշեց, թե ինչ տիպի վնասվածքներ է հայտնաբերելու: Նրանից հետո, երբ հանեցին բուժառուի ամբողջ հագուստը, ի վերջո նաև վարտիքը, մարմնով մեկ բազմաթիվ սալջարդեր տեսավ: Մարմնի ձախ կողմում մի թոքափքանք տեսավ, որ կողերի վերևի հատվածից մինչև կոնքն էր ձգվում. անզեն աչքով երևում էր, որ դա ծանր ներքին վնասվածք կարող է լինել: Ինչպե՞ս է առաջացել: Իր գործը չէր դրանով հետաքրքրվելը, թեև պետք է կույր լինել՝ ծնկների ու սրունքների վրա եղած վնասվածքների ու քերծվածքների պատճառը չկռահելու համար: Շավիերը եզրակացրեց, որ պետք է բուժառուին անհապաղ տեղափոխել վերակենդանացման բաժանմունք: Կապիտանը հարցրեց.

— Դուք վստա՞հ եք: Բա ի՞նչ էր կարծում, որ մենք մի քանի կտոր սպեղանի պիտի դնեինք ու վերադարձնեի՞նք:

— Ենթամաշկային թոքափքանք ունի: Հավանաբար կողերի կոտրվածք ունի՝ թոքերի պերֆորացիայով: Պետք է պատշաճ հետազոտություն արվի, բայց նախապես կարող եմ ասել, որ բուժառուի վիճակը ծանր է:

— Չգիտե՞ք, որ բուժառուն ահաբեկիչ է ու բանտարկված է: Նա խըստագույն հսկողության տակ է լինելու: Դա վերաբերելու է նաև բոլոր այն մարդկանց, որոնք կմտնեն հիվանդասենյակ:

Ինձ ի՞նչ: Բայց դե՛, պարզ է, չպատասխանեց: Նրա համար մեկ էր: Ցույց տալով իր ափերը, ասես հաստատելով իր անմեղությունը՝ ասաց.

— Ես զուտ իմ պարտականությունն եմ կատարում:

— Իսկ մենք՝ մերը, *ձերպիրոջմերը*:

Ներթափանցող մի հայացքով ուղեկցվող խոսելու այդ ձևը՝ մարտահրավեր նետող, հանդուգն, զորանոցային, վախեցրեց Շավիերին: Չցանկացավ խոսակցությունը շարունակել: Արդեն մտածում էր, որ երբ մենակ մնա, հակադեպրեսիվ մի հաբ խմի: Մեքենայորեն նայեց ձեռքի ժամացույցին: Ասես երևակայական մի պատ շարեր իր ու գվարդիականի միջև: Ու հանկարծ իր մորը հիշեց: Ինչո՞ւ: Որովհետև եթե նա չլիներ, ես հիմա բժշկությամբ կզբաղվեի հազարավոր կիլոմետրեր այստեղից հեռու, գուցե մեկ այլ մայրցամաքում, այն հեռավոր երկրում, որտեղ Արանսասուն է: Բայց ես չեմ կարող ama-ին մենակ թողնել:

Տեղյակ էր, որ հետաքննություն է ընթանում, որը նշանակել էր Սան Սեբաստիանի գվարդիայի դատարանը՝ հաշվի առնելով դատաբժշկի եզրակացությունը: Երբ եկան բուժառուի բոլոր անալիզները, Շավիերն իր եզրակացությունը գրեց. բազմաթիվ սալջարդեր, ինսերորդ ձախ կողի կոտրվածք, թոքի կոնտուզիա, ձախակողմյան պնևմոտորաքս, ձախ աչքի շուրջ արնահոսող հեմատոմա, ենթամաշկային թոքափքվածք պարանոցային ու կոնքային հատվածի միջև, երկու ոտքերին՝ հեմատոմաներ, քերծվածքներ և գրգռում: Այդ ամենը ներկայացրել էր հակիրճ ու զուսպ նախադասություններով: Մանրամասնեց, որ բուժառուին հիվանդանոց են տեղափոխել գվարդիականները նրան բերման ենթարկելուց հետո՝ վերքերը գնահատելու նպատակով: Եվ որ բուժառուի ասելով՝ նրա վերքերն առաջացել են գլխին, կրծքավանդակին, փորին ու ստորին վերջույթներին բռունցքով ու ոտքերով հասցված հարվածներից: Ավարտելով և չվերընթերցելով (սովորությանը հակառակ) տեքստը՝ ամսաթիվը դրեց ու ստորագրեց:

Երեք օր անց բուժառուին հանեցին վերակենդանացման բաժանմունքից: Շավիերին փոխանցեցին, որ մի պարոն ցանկանում է հետը խոսել: Չցանկացավ նրան իր գրասենյակում ընդունել: Այնտեղ ավելի դժվար է կպչուն մարդկանցից գլուխն ազատելը: Բացի այդ՝ գրասեղանին հոր լուսանկարն է դրված, և չէր ուզում, որ օտար մարդիկ տեսնեին: Էլ չասած, որ հնարավոր է օդում կոնյակի բույրը զգացվի: Այնպես որ, դուրս եկավ միջանցք:

Երեսունն անց մի մարդ էր՝ կարմրած դեմքով, գեր, հաղթանդամ մարմնով, ու գրազ կգամ, շաքարախտով: ETA-ցուի եղբայրն էր, որ եկել էր՝ շնորհակալություն հայտնելու: Շավիերը, թե՝ չարժի: Եվ նրան էլ հայտնեց, որ զուտ իր պարտքն էր կատարել:

Անմիջապես զգաց, որ այդ քոթուկը հիվանդանոց է եկել՝ ոչ միայն շնորհակալություն հայտնելու նպատակով: Ուզում էր, որ բժիշկը հաստատի, որ իր եղբորը կտտանքների են ենթարկել:

— Դուք ի՞նչ եք մտածում:

Ու Շավիերը բժշկական եզրակացությունը ընդամենը կրկնեց մի քիչ ավելի խոսակցական ձևակերպումներով, ինչը հաջորդ օրը տպագրվեց «Էգին» թերթում, իբր թե ինքն էր հայտնել թերթին:

Ներեան հեռախոսով, թե.

— Պիտի նրան ասեիր, որ ETA-ն մեր հորն է սպանել: Կուզեի տեսնել նրա դեմքը:

— Հոգնած էի: Մտքովս չանցավ:

— Դե՛, արի՛ ու իմացի՛ր, նա իրո՞ք ETA-ցուի եղբայրն էր:

— Սկզբից էլ այդ կասկածն ունեի: Ama-ին բան չենք ասում, չէ՞:

— Ոչ մի դեպքում: Գի՞ժ ես:

Երբ քամին փչում է ածխի վրա

Դրա մասին մի առիթով խոսել էին, երբ Չատոն արդեն մի քանի տարի այն աշխարհում էր: Դա էր մնացել պակաս, որ մենք գնանք ահաբեկչության զոհերի հանդիպումներին: Երբեք: Այդ իմաստով մայրն ու զավակները համամիտ էին:

Բիչո՛րին ասաց.

— Ես իմ ցավը ի ցույց աշխարհի չեմ դնելու: Դուք արեք, ինչ կուզեք:

Այդ պահին Ներեայի աչքին եկավ մարդու ներսում այրվող ածուխի պատկերը:

— Յուրաքանչյուրը պետք է գտնի հետզհետե հանգցնելու ձևը:

Ama-ն ավելացրեց, որ երբ այրվող ածխի վրա քամի է փչում, կրակը նորից բորբոքվում է: Իրականում երեքն էլ, միմյանց չխոստովանելով, ամեն անգամ, երբ մի նոր ահաբեկչություն էր տեղի ունենում, կրկին իրենց ներքին այրվածքն էին զգում: Այդ թեմայի շուրջ նրանք սովորաբար չէին զրուցում: ETA-ի ահաբեկչությունները չէին մեկնաբանում, ասես երեքն էլ լռելյայն համաձայնության էին եկել: Հաճախ էին խոսում Չատոյի մասին, բայց գրեթե չէին ակնարկում սպանությունը: Նախընտրում էին կատակով, ժպիտով հիշել նրա պնդաճակատությունը, նրա լոշտակ ականջները, նրա բարեսրտությունը: Ու Բիչո՛րին զավակներին ժամանակ առ ժամանակ խնդրում էր նրան չմոռանալ: Երեքից և ոչ ոք նպատակ չուներ իր կյանքի մնացած մասը՝ առավոտից գիշեր, ապրել զոհի կարգավիճակով:

Շավիերը, թե.

— Թեև անհերքելի է, որ մենք իրոք զոհ ենք:

Բիչո՛րին շերեփը դրեց կաթսայի մեջ.

— Այո՛, բայց եկեք ուտենք, թե չէ ապուրը կսառի:

Ու այդպես անցան տարիներ, անձրևներ, ականներ ու կրակոցներ: Հետո եկավ նոր դարը, ու որոշ ժամանակ անց՝ նոյեմբերյան մի առավոտ, Շավիերը թերթից տեղեկացավ, որ Սան Սեբաստիանում կայանալու է ահաբեկչության զոհերին ու ահաբեկչական բռնությանը վերաբերող մի

միջոցառում, որը Բասկերի երկրում կազմակերպել է «Ահաբեկչության զոհերի միությունը»: Նա չէր պատրաստվում գնալ այդ միջոցառմանը, քանի որ երբեք չէր մասնակցում նման բաների՝ վախենալով-համոզված լինելով, որ վերջում տրամադրությունն ընկնելու է, ու երկար ժամանակ մոլորվելու է իր խոհերի լաբիրինթոսներում:

Նման մտորումների մեջ էր, երբ միջոցառման ակնկալվող մասնակիցների ցանկում հանկարծ տեսավ այն դատավորի անունը, որը դատավճիռ էր կայացրել իր հոր սպանության գործով: Մտորեց դրա շուրջ ու հետաքրքրություն զգաց, որոշեց, որ կարող է որպես աննկատ մի ունկնդիր ներկա լինել այնտեղ: Մեկ է, ոչ ոք չի ճանաչում ինձ, շատ տարիներ են անցել, ու կարող եմ ելույթ ունեցողների ամբիոնից հեռու մի տեղ նստել:

Միջոցառումից մեկ ժամ առաջ Շավիերը դեռ տատանվում էր. վախ, կասկած, տանջալից անհանգստության նշաններ, որոնց փորձեց դիմակայել՝ դեղ խմելով: Տնից դուրս եկավ՝ դեռ հաստատ չիմանալով, թե դեպի ուր է ուղղվելու: Երկինքն արդեն սև էր, փողոցները՝ մեքենաներով լի, քայլեց՝ ոտքերին թողնելով ճանապարհի ընտրությունը: Ճանապարհը (երկար դեգերումներից հետո) նրան հասցրեց «Մարիա Քրիստինա» հյուրանոց, որի առաջին հարկի դահլիճում մի քանի րոպեից մի դատավոր, մի գրող և այլ բանախոսներ հերթով պիտի խոսեին: Ոտքերս իմ փոխարեն որոշում կայացրին. Շավիերը բաբախող սրտով իրար հետևից երկու կըրկնակի կոնյակ գցեց հյուրանոցի մոտակա «Տանժեր» բարում: Ինչպե՞ս թե: Դե՛, պետք էր նյարդերը հանգստացնել: Ի պետս քաջության: Ինձ կճանաչե՞ն: Ժամանակ ձգելու համար էր, որպեսզի դահլիճ մտնի միջոցառումը սկսվելուց հետո, ու ներկաների ուշադրությունը բեմին սևեռված լինի:

Դռների մոտ նստեց՝ նախավերջին շարքում՝ անծանոթների արանքում: Առջևում մեջքերի ու պարանոցների շարաններ, բայց և բավական դատարկ աթոռներ կային: Քառասո՞ւն, հիսո՞ւն հոգի էին: Ավելին չէին լինի: Դիմացի պատի առջև՝ խոսափողով սեղանի շուրջ, նստած էին ելույթ ունեցողները: Դատավորն այնտեղ չէր: Ինչ-որ մեկը խոսքն ավարտեց և ձայնը տվեց արձակագրին: Ջուսպ, պաշտոնական ծափեր հնչեցին:

Նա ասաց.

— Գրքեր կան, որ երկար տարիներ խմորվում են մարդու ներսում՝ սպասելով գրված լինելու պահին: Իմը, որի մասին այսօր ուզում եմ ձեզ հետ խոսել, դրանցից մեկն է: Սկզբնական գաղափարը…

Շավիերը, որքան կարելի է աննկատ, դահլիճի հետևի մասից փորձում էր ավելի լավ տեսնել ներկաներից մեկին՝ հասկանալու համար, թե ով էր: Վերջին շարքերից այդքան էլ հեշտ չէր հասկանալը: Բացի այդ՝ նա անձամբ չէր ճանաչում ETA-ի զոհերին կամ նրանց ազգականներին: Դե՛, իհարկե, ճանաչում էր այն մարդկանց, որոնց բոլորը գիտեն, քանի որ հեռուստացույցով էր տեսել կամ էլ թերթերում:

— Ու ահաբեկչական հրոսակախմբի վայրագությունները գեղարվեստական երկի միջոցով ներկայացնելու իմ ցանկությունը երկու պատճառ ունի: Մի կողմից՝ ահաբեկչության զոհերի հանդեպ կարեկցանքս: Մյուս կողմից՝ իրավական պետության դեմ ուղղված բռնության կամ որևէ ագրեսիայի մերժումը:

Շարունակելով արձակագիրն ինքն իրեն հարց է տալիս՝ ինչպե՞ս պատահեց, որ երիտասարդ ժամանակ չի դարձել ETA-ի անդամ: Դահլիճով մեկ տարածվեց շունչը պահած մարդկանց ապշած լռությունը:

— Վերջիվերջո ես էլ՝ որպես դեռահաս բասկ, այդ ժամանակների մյուս տղերքի նման անպաշտպան էի ահաբեկչության ու իր հենքային դոկտրինի քարոզարշավի առջև: Այնպես որ, շատ եմ մտածել այդ մասին ու կարծում եմ՝ գտել եմ պատասխանը:

Առջևում՝ հրավիրվածների համար նախատեսված առաջին շարքում, նստած էր դատավորը, որը պետք է ելույթ ունենար: Հայտնի անձնավորություն էր: Նրա ճաղատ, ասես փայլեցված գլուխը հեշտությամբ ճանաչելի էր դարձնում իրեն: Բացի այդ՝ այն ժամանակաշրջանում հաճախ էր հայտնվում մամուլում, արդեն չեմ հիշում ինչ դատական գործերով: Շավիերը որքան գիտեր, դատավորն արդեն Ազգային դատարանի անդամ չէր:

— Այնպես որ, գիրքս բողոք է այն տառապանքի դեմ, որը ինչ-որ մարդիկ պատճառում են ուրիշներին: Ջանացել եմ ցույց տալ, թե ինչ է այդ տառապանքը, թե ովքեր են ահաբեկիչները, ու թե ահաբեկչությունը ֆիզիկական և հոգեբանական ինչ հետք է թողնում մահից փրկված մարդկանց կյանքի վրա:

Երրորդ թե չորրորդ շարքում, երբ Շավիերի ուսումնասիրած անձը թեթևակի թեքեց գլուխը, նա տեսավ ծանոթ մի կիսադեմ:

— Գրել եմ, անշուշտ, ընդդեմ հանցագործության, որն արդարացնում են քաղաքական հիմնավորմամբ. հանուն հայրենիքի, որտեղ զինված մարդիկ հասարակության մի հատվածի ամոթալի աջակցությամբ

որոշում են, թե ով իրավունք ունի պատկանել այդ հայրենիքին և ով պետք է լքի այն կամ էլ ոչնչանա: Գրել եմ առանց ատելության՝ ընդդեմ ատելության խոսքի, ընդդեմ հիշողության կորստի ու մոռացման, որը հյուսում են նրանք, ովքեր փորձում են մի պատմություն հնարել, որը կծառայի իրենց նախագծին ու ամբողջատիրական համոզմունքներին:

Վստահ չէր: Բեժ գույնի բերետով մի կին, որը նստած էր իր ուսումնասիրած կնոջ հետևում, Շավիերին հնարավորություն չէր տալիս հասկանալ, թե ով էր, բայց, ա՛յ մարդ, չէ՞ որ նա շատ հայտնի է, Գրեգորիո Օրդոնյեսի քույրն է: Անունն ի՞նչ էր: Մարիա Օրդոնյես, Էսթեր Օրդոնյես, Մայտե Օրդոնյես: Չէր հիշում: Ու հանկարծ... Կոնսուելո Օրդոնյես: Գրո՛ղը տանի, վերջապես:

— Բայց նաև գրել եմ ինձնմաններին մի դրական բան տալու մղումով, հանուն գրականության ու արվեստի, հետևաբար՝ հանուն մարդ արարածի մեջ եղած բոլոր լավ բաների: Նաև՝ ETA-ի զոհ դարձած յուրաքանչյուր անձի համար՝ որպես անհատականություն, ոչ թե զուտ վիճակագրություն, որի ներքո վերանում է մարդու անունը, նրա դեմքը, անէանում են նրա յուրահատկությունները:

Հենց դա է, որ մայրս չի ցանկանում. որ իր ու իր երեխաների տառապանքը նյութ ծառայի մի արձակագրի՝ իր գիրքը գրելու համար, կամ մի ռեժիսորի՝ ֆիլմ նկարահանելու համար, ու որ հետո նրանց ծափահարեն, ու նրանք մրցանակներ շահեն, մենք էլ շարունակենք ապրել մեր ցավը:

— Աշխատել եմ խուսափել այն երկու սխալներից, որոնք, ըստ իս, այս տիպի գրականության համար ամենավտանգավորն են. մի կողմից՝ սըրտառուչ, սենտիմենտալ տոնից, մյուս կողմից՝ իմ քաղաքական դիրքորոշումն արտահայտելու նպատակով պատումն ընդհատելու գայթակղությունից: Իմ կարծիքով՝ դրա համար գոյություն ունեն հարցազրույցներ, հոդվածներ և այս տիպի քննարկումներ:

Երկրորդ շարքում՝ եզրին մոտիկ, Շավիերը ճանաչեց շիկահեր Կրիստինա Կուեստային, որի հորն էին սպանել: Կասկած չկար՝ նա էր: Նրա ձախից նստած էր Կատի Ռոմերոն՝ Սան Սեբաստիանի քաղաքային ոստիկանության սերժանտի այրին: Այն սերժանտի, որն, ինչպես երևում է, չգիտեմ էլ՝ որտեղ եմ կարդացել նրա մասին, ոստիկանությունը մաքրում էր ETA-ի հետ գործակցողներից ու մատնիչներից, ու որին ի վերջո, պարզ է, ահաբեկիչները երկու կրակոցով վերացրել էին:

— Ուզում էի կարևոր հարցերի պատասխանները գտնել: Ինչպե՞ս է ընթանում մարդու անձնական կյանքը ահաբեկչության պատճառով հորը, ամուսնուն կամ եղբորը կորցնելուց հետո: ETA-ի հանցագործությունից հետո ինչպե՞ս են ապրում այրին, որբը, հաշմանդամը:

Արձակագիրը հանգիստ էր խոսում: Շավիերը հասկանում է նրա բարի նպատակը, բայց չի կարծում, որ որևէ բան կարող է լուրջ փոխվել մեկի գրած գրքերի շնորհիվ: Գրողի կարծիքով բասկ արձակագիրները մինչև օրս քիչ ուշադրություն են դարձրել ահաբեկումներից տուժածներին: Ավելի շատ հետաքրքրվում են ահաբեկիչներով, նրանց գիտակցական խնդիրներով, նրանց զգացմունքներով և այլն: Բացի այդ՝ ETA-ի ահաբեկչությունը հարմար չէ՛ աջերին հարվածելու համար: Այդ նպատակով քաղաքացիական պատերազմը շատ ավելի հարմար է:

— …փորձելով տեռորի ենթարկված հասարակության ներկայացուցչական մի պատկեր ստեղծել: Գուցե չափազանցնում եմ, բայց խորապես համոզված եմ, որ գրականության միջոցով ETA-ի ջախջախումը նույնպես ընթացքի մեջ է:

Այդ պահին Կոնսուելո Օրդոնյեսի հետևում նստած կինը՝ բեժ բերետով, թեթևակի շրջեց դեմքը: Վայրկյան էլ չտևեց, բայց բավարար էր, որ Շավիերի սիրտը թպրտար: Ճանաչեց քաջ ծանոթ դիմագծերը: Քույրս այստեղ ի՞նչ է անում. չէ՞ որ մի անգամ ասել էր, որ նույնիսկ փողով չէր մասնակցի ահաբեկչության զոհերի ժողովին: Դե՛, նույն պատճառով էր այստեղ, ինչ որ ինքը՝ Շավիերը: Զգաց՝ որքան անհեթեթ է իր հարցը, որի շուրջ մի վայրկյան էլ չմտորեց, քանի որ շատ ավելի շտապ հարցեր ուներ լուծելու: Օրինա՞կ: Դե՛, ասենք, ինչ անել, որ Ներեան իրեն չտեսնի: Հաշվարկեց, որ մինչև դուռը երեք քայլ պետք է անի: Չվարանեց: Օգտվելով նրանից, որ ծափերը կխլացնեն իր շարժումների աղմուկը, դուրս եկավ միջանցք ու արագ քայլերով, համարյա վազելով, գնաց դեպի ելքը:

Իրիկվա խոսակցությունը

Վաղուց իրար չէին տեսել: Որքա՞ն: Ի՞նչ կարևոր է: Երկու-երեք շաբաթ: Այդ ընթացքում Բիչո՛րիի վերաբերյալ նորություններ եղան: Բոլորն էլ վատն էին, իսկ դրանցից մեկը հատկապես մտահոգիչ էր: Շավիերն ու Ներեան որոշեցին, որ չարժի հեռախոսով քննարկել մորը վերաբերող լուրջ խնդիրները: Ուրեմն, ի՞նչ անենք: Չե՞ս կարծում, որ… Պայմանավորվեցին ժամանակ չկորցնելու համար հանդիպել քաղաքի կենտրոնում՝ մի տեղ: Հետմիջօրեն սառն էր, բայց արևոտ: Ներեան առաջարկեց Պասեո Նուևո զբոսուղով՝ կապույտ ծովի եզրով զբոսնել ու խոսել: Շավիերը, որն այդ պահին ազատ էր, քրոջ առաջարկը մերժելու պատճառ չուներ:

Զբոսուղին լի էր մարդկանցով, երեխաներով, մի ամբողջ շարք զբաղեցնում էին ձեռքի գործեր վաճառողները: Ամբոխի պատճառով համարյա հնարավոր չէր անցնել: Մի քիչ այն կողմ քաղաքապետարանի աշխատողները, ջրմուղ սարքերով զինված, Պեսկադերիա դե լա Բրեչա շենքի պատից մաքրում էին ETA-ին ողջունող գրվածքները: Որպեսզի կեղտաջուրն իրենց չհասնի, քույր ու եղբայր անցան դիմացի մայթ:

— Հեռու չէ այն օրը, երբ քչերը կհիշեն, թե ինչեր են եղել:

— Մի՛ նեղվիր, եղբա՛յր: Կյանքի օրենք է: Վերջում միշտ մոռացումն է հաղթում:

— Բայց մենք պարտավոր չենք դրան հետևել:

— Ո՛չ իհարկե: Մեր հիշողությունը ջրմուղի շիթով չի ջնջվի: Կտեսնես՝ ինչպես են մեր երեսին շպրտելու, թե իբր հրաժարվում ենք դեմքով շրջվել դեպի ապագան: Կասեն, թե ուզում ենք վրեժխնդիր լինել: Ոմանք արդեն սկսել են ասել:

— Խանգարում ենք, փաստորեն:

— Չես էլ պատկերացնի, թե որքան:

Հասնելով Սան Տելմո թանգարանին՝ խոսեցին բուն խնդրի մասին: Շավիերը Ներեային խնդրեց, որ իրեն պատմի կատվի մասին, պատմի, թե ինչն էր խնդիրը, ինչ էր պատահել:

— Ikatza-ն սատկել է, բայց ama-ն չգիտի: Մի բան հուշում է, որ ավելի լավ է՝ չիմանա:

— Դու ինչպե՞ս իմացար:

— Երեկ նրա տուն գնացի: Կիկեն մեքենայով ինձ հասցրեց Սան Բարտոլոմե փողոց: Քանի որ նա «տերվռազն» է ու անընդմեջ բողոքում էր, որ կարևոր հանդիպում ուներ հաճախորդի հետ ու իմ պատճառով ուշ է հասնելու, նրան ասացի՝ այստեղ կանգնի՛ր, ես բարձունքը ոտքով կանցնեմ: Մի տեսակ կանխազգացում ունեի, հասկանո՞ւմ ես: Զանգահարում էի ama-ին, չէր պատասխանում: Նորից էի զանգում՝ նույնը: Ու այդպես՝ երկու օր շարունակ: Ուստի մտածեցի՝ գնամ-տեսնեմ՝ ինչ կա:

— Ամբողջ օրն ավանում է անցկացնում:

— Երբեմն գերեզմանատուն է բարձրանում: Մինչև հիմա սևեռված է aita-ի գերեզմանի վրա: Բայց ինձ զարմացրեց, որ ընթրիքի սովորական ժամին էլ հեռախոսը չէր վերցնում:

Ներեան արդեն բավական բարձրացել էր Ալդապետա զառիվերով, երբ ասֆալտի վրա նկատեց կարմրավուն մսի ու սև մորթու մի զանգված: Վրայով մեքենաներ էին անցնում, հետո՝ քաղաքային ավտոբուսը: Ներեան մի պահ կանգ առավ մայթին. ճանաչեց վզնոցը: Գնաց մոր տուն ու մեկ ժամ անց, երբ արդեն պատրաստվում էր դուրս գալ, վարանելով հարցրեց կատվի մասին:

— Կատուն աչքովս չընկավ, ո՞ւր է:

— Դա իր կյանքով է ապրում: Հեսա որևէ պահի, մի ծիտ ատամներով բռնած, կհայտնվի պատշգամբում:

Քիթուբերանը մի ձեռքով փակելով՝ Ներեան սատկած կենդանուն պոկեց ասֆալտից: Այն պահերին, երբ մեքենաները չէին անցնում, մսի ու մորթու մնացորդները հրում էր ճանապարհի մյուս կողմը, որտեղ մայթ չկար, դեպի ճամփեզրի առուն՝ հույս ունենալով, որ մայրը դրանք չի տեսնի: Այդ անդուր գործն անում էր թփից պոկած ճյուղով: Վերջում նույն այդ ճյուղի ծայրով բարձրացրեց մաշված վզնոցն ու շպրտեց ճանապարհի մյուս կողմը:

Եղբորը պատմելիս դեմքը զզվանքից այլայլվում էր:

— Դեպի Սան Բարտոլոմե իջնելիս ործկում էի: Այնպես որ, առաջին իսկ բարը մտա՝ մի բան խմելու: Ես անպատեհ ժամերին խմող չեմ, բայց պետք էր րոպե առաջ լեզվիցս վերացնել զզվանքի զգացումը:

Կողք կողքի քայլում էին՝ շնչելով ծովային քամին, նայելով ափեզրի երկար, մշուշոտ գծին: Զբոսուղուց ներքև երևում էին ալեհատների վրա փշրվող անվերջանալի փրփրախառն ալիքները: Ներեան եղբորը խընդրեց, որ ավելի մանրամասն պատմի հեռախոսով ակնարկածը:

— Ռամոն Լասային հիշո՞ւմ ես:

— Շտապօգնության մեքենայի վարորդի՞ն: Իհարկե:

— Մի շաբաթ առաջ եկավ գրասենյակ՝ պատմելու այն, ինչ իրեն էին պատմել-ասել: Ի՞նչ: Դե՛, որ մեր սուրբ մորը տեսել են Արանչայի անվասայլակը ավանի հրապարակով քշելիս: Բնականաբար, Արանչան էլ՝ անվասայլակին նստած: Պատկերացրո՛ւ. օրը ցերեկով երկուսով զբոսնում են մի տեղով, որտեղ հնարավոր չէ չտեսնել նրանց: Ի՞նչ նպատակով: Ո՞ւմ գաղափարով: Ու ինչպե՞ս է պատահել, որ Արանչային խնամողը հետները չէր: Դե՛, պատկերացնում ես, թե ինչ խոսակցության նյութ են տվել հարևանությանը:

— Մի քիչ տարօրինակ է այդ ամենը: Արդեն քանի տարի չենք խոսում նրանց ընտանիքի հետ: Արանչային ուսանողական տարիներից չեմ տեսել: Այդուհանդերձ, համարում եմ, որ ընկերուհիս է: Այդ ընտանիքից միակն էր, որ մարդկային ձևով պահեց մեզ հետ: Ama-ին բան չե՞ս հարցրել:

— Ենթադրում եմ, որ ama-ն ինչ-որ խանգարում ունի: Չէի ուզում վիճակն ավելի բարդացնել: Բայց քեզ ասեմ, որ Ռամոնը կարգին զարմացած էր:

— Տեսնես, Արանչայի aita-ներն ի՞նչ են մտածում:

— Կարծում եմ՝ Խոշիանը նույն երանավետն է, ու ինչ էլ ասեն, կհավատա: Իսկ կինը՝ չգիտեմ:

— Միրենի համար դա, անկասկած, հարված է եղել:

— Ռամոնից իմացա նաև, որ զբոսանքից հետո ama-ն փողոցում գիտակցությունը կորցրել է, ու ստիպված են եղել նրան օգնել: Այդ ժամանակ էր, որ, ինչպես քեզ ասացի հեռախոսով, որոշեցի միջամտել:

Նահանջող արևը ծովի մակերևույթի վրա նյարդային փայլատակումների մի շերտագիծ էր թողնում: Նավեր կայի՞ն: Ոչ մի հատ: Ծովախորշ վերադարձող մի նավակ կար միայն, ու վերջ: Ներեան ու Շավիերը կըռթնեցին բազրիքին: Շավիերը սկսվող իր ճաղատությունը շոտլանդական կեպիով էր քողարկում, իսկ Ներեան, որ դեռ մի քանի տարի առաջ բրդե բերետներ էր դնում, հիմա հերարձակ էր: Նրանց երկուսի թիկունքում

առաջիկա փոթորկի սպասումով ձանձրանում էր Օտեյսայի ժանգոտած քանդակը: Նրանցից մի քանի քայլի վրա մի ձկնորս սևեռուն նայում էր ալիքվող ջրերին ու սպիտակ խցանի վայրիվերումներին:

— Ama-ին մեքենայով տարա: Ո՞ւր ենք գնում: Հիմա կտեսնես: Մի քանի անգամ նրա համար ժամադրություն էի վերցրել բժիշկ Առուաբառենայի հետ: Խոստանում էր գնալ, բայց երբեք չէր գնում ու ժամանակ էր կորցնում, իսկ ես արդեն զգում էի՝ արյան անալիզները տեսնելով, որ հետը մի բան է կատարվում: Առուաբառենան նրան քննեց: Բոլոր տեսակի անալիզներն արեց: Երեկ չէ առաջին օրը ինձ զանգահարեց: Ասաց, որ անհապաղ գնամ իր մոտ: Դեմքը հենց տեսա, հասկացա, որ շատ վատ լուր է հայտնելու:

— Քաղցկեղը հաստատվե՞ց:

— Արգանդի վզիկի քաղցկեղ է՝ արդեն շատ խորացած: Եթե ավելի վաղ հայտնաբերվեր, կարելի կլիներ դեմն առնել՝ բուժվելու որոշակի հնարավորությամբ, բայց ama-ն ուշադրություն չէր դարձրել, ես էլ ուշադիր չէի, ու հիմա մյուս օրգաններն էլ են ախտահարված, լյարդն էլ: Ինչևէ, մանրամասների մեջ չմտնեմ: Հաճելի բան չէ, վստահեցնում եմ:

— Որքա՞ն ժամանակ ունի:

— Առուաբառենան նրան լավագույն դեպքում երկուսից երեք ամիս կյանք է տալիս, բայց հենց այս գիշեր էլ կարող է մահանալ: Վիրահատելով ու ինվազիվ բուժումով գուցե մինչև տարվա վերջ ձգեր, բայց չարժի այդ տառապանքը:

— Տեղյա՞կ է:

— Առուաբառենան դեռ հետը չի խոսել: Ինձ հարցրեց՝ կուզե՞մ նրան ասել, քանի որ, բացի բժիշկ լինելուց, վերջիվերջո հիվանդի որդին եմ ու ախտորոշումը նրան հայտնելու պատասխանատուն: Կարծում եմ՝ իրավացի է: Քանի որ ես եմ ամենամեծ պատասխանատուն, որ չեմ նկատել խնդիրը, երբ դրա դեմ պայքարելու ժամանակ կար:

— Մեղավոր փնտրելու ժամանակը չէ: Երևի ama-ն ավելի շատ բան գիտի իր հիվանդության մասին, քան մեզ ասում է:

— Մեքենայի մեջ՝ ճանապարհին, բողոքում էր՝ ասելով, որ ամբողջ կյանքում դաշտանը ցավերով է եղել, փորի ներքևի մասում ցավեր է ունեցել:

Քույր և եղբայր նորից քայլեցին: Իջան Ակվարիումի աստիճաններով, հասան նավահանգիստ: Քաղաքում արդեն տեղ-տեղ վառվել էին էլեկտրական լույսերը:

— Ամեն դեպքում, Առուաբառենայի հետ պայմանավորվեցի պալիատիվ բուժման համար: Ամեն ինչ կարվի, որպեսզի ama-ն չտառապի:

Ներեան ձեռքը դրեց Շավիերի ուսին: Այդպես որոշ ժամանակ քայլեցին լուռ՝ իրար չնայելով, մինչև Ներեան նորից խոսեց: Հարցրեց՝ եղբայրը ինչ է անելու, երբ ama-ն այլևս չլինի:

— Դու գիտես, որ ես այս քաղաքում իր պատճառով եմ ապրում: Մի խոստում էր, որ aita-ին տվեցի նրա թաղման օրը: Ինքս իմ մեջ հորս ասացի՝ չանհանգստանաս, ես նրան լավ կնայեմ, մենակ չի մնա: Բայց դե՛, տեսնում ես՝ վերջում չկարողացա պահել խոստումս: Մտածում եմ կատարել նրա վաղուցվա ցանկությունը. որ նույն գերեզմանում լինեն՝ ավանի գերեզմանոցում: Հետո կգնամ: Ո՞ւր: Գաղափար չունեմ: Այստեղից հեռու, հաստատ: Որտեղ կարող եմ օգտակար լինել կարիք ունեցող մարդկանց: Իսկ դո՞ւ:

— Ես այստեղ կմնամ:

Շրջանցեցին Հին թաղամասի մարդաշատ փողոցները: Նրանց զրույցը շարունակվեց բուլվարի սրճարանի կանգնակի մոտ: Երեկոյան կողմ իրար հրաժեշտ տվեցին լուրջ, հանգիստ՝ այտ այտի հպելով: Նա մի կողմ գնաց, քույրը՝ մյուս: Այդ ժամին երկինքն արդեն սև էր, ու հետմիջօրեի տանելի ցրտին փոխարինել էր գիշերվա ցածր ջերմաստիճանը: Շավիերը մտամոլոր քայլում էր Էլկանո փողոցով, ու հանկարծ նրա քիմքը շոյեց բոված շագանակների բույրը: Գիպուսկոա հրապարակին խաչվող փողոցում էր շագանակ բովող սարքը: Տասներկու հատը 2.5 եվրո էր: Վճարեց: Քաղաքային խորհրդի ժամացույցը երեկոյան ժամը ութն ազդարարեց: Շավիերը, ափերի մեջ զգալով թղթե տոպրակի հաճելի ջերմությունը, տեղավորվեց հրապարակի նստարանին՝ տերևաթափ ծառի ճյուղերի միջից թափանցող լուսնի լույսի տակ: Հեշտությամբ մաքրեց առաջին շագանակը: Շատ լավն էր: Ճիշտ չափով էր բոված. ոչ կարծր էր, ոչ էլ այրած: Ու հաճելի տաքությունը, որը տարածվեց նրա բերանում, խտացնում էր արտաշնչվող գոլորշին: Երկրորդ շագանակը՝ նույնպես: Շատ լավն էր: Ոտքի կանգնեց: Համարյա լիքը տոպրակը շրջեց աղբամանի մեջ այնպես, որ շագանակները հատ-հատ ընկնում էին կուտակված աղբի վրա: Հետո քայլեց Ավենիդայի ուղղությամբ՝ խառնվելով ամբոխին:

Մի գիշեր՝ Կալամոչայում

Սովորաբար Միրենը Խոշե Մարիի մոտ էր գնում Gestoras Pro Amnistia ավտոբուսով: Խոշիանն էլ ժամանակ առ ժամանակ նրան ուղեկցում էր: Սկզբում այդպես էր: Հետո՝ տարիների ընթացքում, աստիճանաբար քիչ էր հետը ճամփորդում:

Տարիներ առաջ՝ ձմռան մի շաբաթ օր, Կալամոչայից մի քանի կիլոմետրի վրա մի արկած պատահեց: Դրանից հետո Խոշիանն այլևս չցանկացավ ճամփորդել: Անշուշտ, դա միակ պատճառը չէր: Մյուսը՝ հիմնականը, Միրենն էր: Տիրակալի մեկն էր, անընդհատ վիճում էին. հանկարծ զավակին բան չասես: Ոնց որ Խոշե Մարին իր *ոտքը լիներ*՝ աճուկի մասում: Աստված հեռու պահի. եթե դիպչես, անմիջապես վեր է թռչում, ա՛յ քեզ կնիկ:

Կալամոչայի պատահարի օրն առավոտյան գնացել էին Պիկասենտի բանտ՝ ընտանեկան դեմ դիմաց հանդիպման, բայց ոչ թե ավտոբուսով, այլ Ալֆոնսոյի ու Կատալինայի մեքենայով, որոնց տղան այն ժամանակ նույն քրեակատարողական հիմնարկում էր:

Դժվար է ասել, որ ամուսնական երկու զույգերը շատ մտերիմ էին: Միրենը թաքուն քննադատում էր նրանց, հիմնականում՝ բասկերեն չխոսելու համար: Խոշիանի համար մեկ էր, թե ինչպես են խոսում: Բայցևայնպես, նրանց չէր համակրում: Ինչո՞ւ: Ուսերն էր թոթվում. չգիտեմ:

Բայց դե, ի վերջո Ալֆոնսոն և Կատալինան իրենց ավանից էին, թեև 70-ականներին էին եկել երկրի հարավից: Միրենի կարծիքով՝ նրանց շընչելու ձևն էլ էր բասկերից տարբեր: Հատկապես կնոջ խոսելաձևից զգացվում էր իր ծննդավայրի շեշտը: Նրանց տղան ETA-ի մարտիկ էր դարձել ու այն ժամանակ Խոշե Մարիի հետ նույն բանտում էր, ու կարծես տղաներն իրար լավ էին հասկանում:

Մի օր դոն Սերապիոն Միրենին փողոցում բռնեցրեց: Համա՛ թե քիթն ամեն ինչի մեջ խոթողն է: Քահանան Կատալինայի հետ զրուցում էր քաղաքապետարանի շքամուտքի մոտ: Այս քահանան բոլորի հետ է խոսքի բռնվում: Հոգիներ ու մարմիններ է ղեկավարում: Կամ էլ փորձում է: Քանի որ պատարագին, նշանակալի օրերից դուրս, մարդ-մարդասան չի լինում:

Տեսավ Միրենին, որը կանգնել էր՝ տնական պանիր առնելու, ու կանչեց. Kaixo, Միրե՛ն, ու նա չէր կարող չլսելու տալ, քանի որ ութ քայլի վրա էր, այնպես որ հրաժարվեց պանիր առնելու մտքից ու մոտեցավ նրանց: Քահանան ասաց, որ պարզվում է՝ այստեղ ներկա Կատալինան ու ամուսինը մտածում են իրենց տղայի հետ ընտանեկան հանդիպման գնալ ճիշտ նույն օրը, ինչ և Միրենն ու Խոշիանը (քահանան դա էլ գիտեր):

Խոշիանը կեսօրին կնոջն ասաց.

— Այդպես է լինում, որովհետև լեզվիդ ես տալիս:

— Նա իմ խոստովանահայրն է:

— Ուրեմն, գնա՛, ուրիշ ավանում խոստովանի՛ր:

Այնպես որ, Միրենն ու Կատալինան (ճար չկար) դոն Սերապիոյի ներկայությամբ պայմանավորվեցին Ալֆոնսոյի մեքենայով չորսով գնալ Պիկասենտ: Եվ այնպես ստացվեց, որ քահանան քիչ էր մնում՝ չորսի համար էլ հոգեհանգստյան կարգ կատարեր:

Վթարը տեղի ունեցավ հետդարձի ճանապարհին: Մի քանի օր անց, երբ Ալֆոնսոն Տերուելից հեռախոսով զրուցեց լրագրողի հետ, նորությունը «*Էգին*» թերթում հայտնվեց: Դեպի Պիկասենտ գնալու ճանապարհին Խոշիանն առջևի նստարանին էր նստել՝ մեքենան վարող Ալֆոնսոյի կողքին, որը չամուռի մեկն է: Դրան հեչ չէր սիրում: Ամենագետ է: Մի վայրկյան ձայնը չի կտրում, ամեն ինչ գիտի՝ ֆուտբոլ, շարժիչ, սունկ: Ու ճանապարհին մի պահ սարսուռելայի կասետ դրեց: Միրենը, երբ նրանցից բաժանվեցին բանտի ներսում, կամացուկ ասաց.

— Նրանց արյան մեջ է: Քիչ էր մնում՝ «Վիվա՛ Իսպանիա» բղավեին:

Վերադարձին, երբ պիտի մեքենա նստեին, Խոշիանը տեսավ, որ Կատալինան առջևում էր նստել: Ստիպված հետևի նստարանին տեղավորվեց՝ Միրենի կողքը: Հազիվ տեղից շարժվել էին, երբ Խոշիանի ազդրը կսմթեց՝ կանխելու ամուսնու սկսած պատմությունը Խոշե Մարիի մասին:

Երկու օր անց արդեն տանն ասաց.

— Շնորհակալությո՛ւն ասա սուրբ Ինգնասիոյին, որ Կատալինան քո տեղն էր գրավել:

— Հաստատ իմ պահապան հրեշտակն ավելի խելացի է, քան նրանը:

Ալֆոնսոն, ձեռքերը ղեկին, սկսեց խոսել: Պատմում էր իր տղայի մասին, որը շատ է մարզվում, որ արդեն սկսել է անգլերեն սովորել: Ափսո՛ս, որ միայն մի կողմից պիտի հետը խոսես, մյուս ականջով համարյա բան

չի լսում: Արագությունը ավելացրեց, մի բեռնատար հետևում թողեց ու շարունակեց.

— Բռնելու ժամանակ լավ ծեծել են. դա է պատճառը:

Միրենը ժամանակ առ ժամանակ միջամտում էր:

— Բողոք չէի՞ք ներկայացրել:

— Իբր թե ո՞վ պիտի լսի… Մեր տղաները պետության ճիրաններում են:

— Խոշե Մարիին էլ են ծեծել: Խմբով: Քանի որ խոշոր է:

Խոշիանը ինքնամփոփ, ինչպես միշտ տխուր, Խոշե Մարիին հրաժեշտ տալուց հետո (դե՛, տղա՛ս, լավ մնաս), խոսակցությանն անհաղորդ, դուրս էր նայում պատուհանից: Անհաղորդ էր, բայց ոչ ամբողջովին: Վաղուց էին ճանապարհին, ու այս անգամ Միրենին զսպելու թաքուն նշան անելու ի՛ր հերթն էր: Երեկոյան կողմ էր, ու Տերուելի նահանգով էին անցնում: Ամայի, տեղ-տեղ ձնոտ դաշտեր, հեռվում՝ շարվեշարան սարեր, որոնք շուտով ձուլվելու էին մթության մեջ, ու դրսում՝ սարսափելի մի ցուրտ: Հանկարծ Կատալինան լեզվի սայթաքում ունեցավ: Գուցե մտածեց, որ կարող է սիրտը բացել, բայց չարժեր: Կամ էլ պարզապես չէր պատկերացնում, թե ինչ ծայրահեղության կարող էր հասնել Միրենի հայրենասիրական-քաղաքական եռանդը:

Հացադուլ անելու հանձնարարական էին փոխանցել Պիկասենտի ETA-ի անդամ բանտարկյալներին: Ընթացքը սա է. փաստաբանը գալիս ու ասում է՝ հացադուլ: Եվ Խոշե Մարին, որն այս հարցում, ինչպես և մյուս դեպքերում, շատ խիստ է, վերահսկում է իր գործընկերներին: Պինդ տղա է: Միրենը նրանով հպարտանում էր՝ հետո ավանում պատմելով, որ Խոշե Մարին երկաթից է, որ ոչ ոք չի կարող նրան կոտրել:

Այսուամենայնիվ Կատալինան պատմեց, որ իրենց թույլ էին տվել անձնական տեսակցության սենյակ տանել մի տոպրակ «մադլեն» բլիթներ, որոնք ինքն էր թխել: Ասաց, որ կախված նրանից, թե բանտի աշխատողներն ինչպես են վերաբերվում քեզ, կարող են թույլ տալ ուտելիքը կամ ոչ, ու որ նախկինում նրանց մերժել էին, իսկ այս անգամ թույլ էին տվել:

— Մեր *ներկայությամբ* ամբողջը կերավ:

Միրենը վեր թռավ.

— Իհարկե, քեզ թույլ են տվել՝ ուտելիք անցկացնես: Գիտեն, որ հացադուլ են անում, և ուզում են, որ խափանվի, որ միասնական չլինեն:

— Ա՛յ կնիկ, ոչ ոք չիմացավ:

— Դե՛, ես որ իմացա: Հացադուլը կամ բոլորը պիտի անեն, կամ ոչ ոք:

Էլ բան չավելացրեց. Խոշիանը թաքուն ձեռքով նշան արեց նրան: Մեքենայի մեջ անհարմար լռություն տիրեց, որից օգտվելով՝ Ալֆոնսոն սարսուռ միացրեց, ոչ թե առավոտվանը, այլ նման մի բան: Երկարուձիգ ճանապարհի ընթացքում իսպանական երաժշտություն էր ուղեկցելու իրենց.

...Հիմա արդեն գերչակի յուղը
Հեչ դժվար չէ ընդունել:
— Էդ՝ ո՞նց:
— Հիմա հաբով են տալիս,
ու նույն ազդեցությունն է ունենում...

Ու հանկարծ՝ ավտովթարը: Ի՞նչ պատահեց: Միրենը չի հիշում: Խոշիանը, իր դարդերով ու մտքերով, ձեռքերը ծալած, մրափում էր: Գրեթե չիմացավ՝ ինչ եղավ: Նրան Ալֆոնսոյի ուշունցը արթնացրեց ու Կատալինայի ճիչը: Ի՞նչ է կատարվում: Մեքենան մինչև դիմապակին խրվել էր ճամփեզրի հեղեղատի մեջ: Միրենն առաջինը դուրս եկավ: Խոշիանի դուռը չէր բացվում: Առջևի երկուսը լռում էին: Սարսուռը երգողները՝ նույնպես:

Միրենը դրսի կողմից Խոշիանի թևից բռնեց.

— Արի՛, դո՛ւրս արի:

Քաշեց թևից ու դուրս հանեց, ու մի քանի վայրկյանից զգացին, թե որքան ցուրտ է: Խոշիանը Միրենին հարցրեց՝ վնասվե՞լ էր, թե՞ ոչ:

— Ո՛չ: Սրանց պետք է դուրս հանել:

Դաշտում մենակ էին: Գիշերը՝ մի պարապուտում: Եվ առաջին աստղերով կետավորված պարզկա երկինքը անխուսափելի ցուրտ էր գուժում: Շտապեցին օգնել Ալֆոնսոյին: Դժվար չէր: Դուռ էլ չկար: Խոշիանը նրան դուրս քաշեց մեքենայից՝ բռնելով թևատակերից: Դեմքն ամբողջությամբ արյուն էր, դիմագծերը չէին երևում: Ուզում էր նրան քարքարոտ հողին պառկեցնել, բայց կարիքը չեղավ: Վնասվածքները լուրջ չէին: Կամ էլ նա էր այդպես ասում: Մի կտրվածք՝ ճակատին, մյուսը՝ գլխին: Նրա ճերմակ մազերը կարմիր էին ներկվել: Ուրիշ ոչինչ: Ու վախեցած էր կնոջ համար՝ մեքենայի ներսում անշարժ, լուռ, գլուխը մի ուսին ընկած: Մեքենայի մյուս կողմում Միրենը դուռը բացելու զուր ջանքեր էր գործադրում:

— Այստեղ եկե՛ք: Գուցե դուք կարողանաք:

Խոշիանը վազելով գնաց ու, *եսքոփիրոջ*, քաշեց դռան բռնակից ձուլարանի վառարանին սովոր հզոր բազուկներով ու կոշտուկներով ծածկված ձեռքերով՝ մի ոտքը հենած մեքենայի ծռմռված կողային մասին, ատամները սեղմած, մինչև որ բացեց-պոկեց անտեր դուռը, ու Կատալինան (ո՛չ արյուն, ո՛չ բան. ի՞նչ լավ է բուրում այս կինը) հոգեվարքային-գանգատվող տոնով շշնջում էր.

— Ոտքե՛րս, ոտքե՛րս…

Այդ ընթացքում Միրենը մայրուղու մեջտեղում սպիտակ մի ֆուրգոն կանգնեցրեց, որը գնում էր հանդիպակաց կողմով: Վարորդն առաջարկեց վիրավոր կնոջը տանել Տերուել և օգնեց նրան զգուշությամբ պառկեցնել թափքի վրա, մի տեղ էլ գտնվեց Ալֆոնսոյի համար, որը իր սվիտերը չալմայի պես փաթաթել էր գլխին՝ արնահոսությունը կանգնեցնելու համար: Ֆուրգոնը արագ անհետացավ համարյա կատարյալ մթության մեջ: Միրենն ու Խոշիանը բեռնախցիկից հանեցին իրենց և Ալֆոնսոյի ու Կատալինայի իրերը, որ հանկարծ չգողանան:

— Կատալինայի ոտքերը տեսա՞ր:

— Երկուսն էլ կոտրված էին: Հասկանալու համար բժիշկ լինելը պարտադիր չէր:

— Պետք է աղոթի, որ տեղը տեղին կարգի բերեն, բուժեն:

Անհյուրընկալ տարածքում լռություն տիրեց: Նրանք շտապեցին լրացուցիչ հագուստ հագնել: Կարգին ցուրտ է. հիմա ի՞նչ ենք անելու: Գաղափար նույնիսկ չունեին, թե որտեղ են: Տերուելի ու Սարագոսայի միջև էր, հաստատ: Ո՛չ լույսեր էին երևում, ո՛չ ճանապարհային ցուցանակներ: Այդ ամայի տարածքում նույնիսկ փոքր խրճիթ չկար, հովիվների մի տնակ, մի ծառուղի, որտեղ կկարողանային վատ եղանակից պատսպարվել:

Միրենը վրա բերեց.

— Հաստատ վնասվել ես: Ինձ ճիշտն ասա՛:

— Գրո՛ղը տանի, ասացի՝ ո՛չ:

— Վրադ արյուն կա:

— Ալֆոնսոյի արյունը կլինի:

— Մի բանով վիզդ փաթաթի՛ր, կմրսես: Նման բաներն անուշադրության պատճառով են լինում:

— Արի՛ չսկսենք: Պետք է գվարդիականներին տեղեկացնել:

— Մեռնեմ՝ չեմ խոսի Խոշե Մարիին խոշտանգողների հետ:

— Ուրեմն, ի՞նչ անենք:

— Մտածի՛ր:

Միրենը կարծես հիշում էր, որ քիչ առաջ մի գյուղի կողքով են անցել, բայց վստահ չէր: Խոշիանը բան չէր հիշում, քանի որ ճանապարհին քնած էր: Ամենաճիշտը կլիներ մեքենա կանգնեցնելը: Քիչ անց տեսան մի մեքենա, որը, լույսերը վառած, մոտենում էր: Նրան նշան չարեցին: Համոզված էին, որ վարորդը, տեսնելով ջարդուփշուր եղած մեքենան, կհասկանա՝ ինչ է կատարվել: Չկանգնեց:

— Ինչպե՞ս պիտի իմանան ու կանգնեն, եթե ձեռքով նշան չես անում:

— Դե՛, եթե այդքան խելոք ես, ինչո՞ւ դու ձեռքդ չես տնկում:

— Լսի՛ր, արի՛ հիմա չվիճենք, հա՞:

Մի քանի րոպե անց հաջորդ մեքենան կանգնեց: Հարցրեց՝ վիրավո՞ր էին: Ցրտից դողալով՝ ասացին՝ ո՛չ: Վարորդն ասաց, որ Կալամոչա է գնում, մոտիկ է, իր գյուղն է, ու կարող է հետը տանել: Տարավ: Ներկայացավ. Պասկուալ: Հիսունն անց մարդ էր՝ շատ մեծ փորով ու շատախոս: Երրորդ ոլորանին չհասած՝ հասցրեց պատմել սրտային առիթմիայի ու շաքարախտի մասին:

— Մենք դեռ Տերուելի նահանգո՞ւմ ենք:

— Այո՛, տիկի՛ն:

— Դե՛, ուրեմն, այսօր տուն չենք հասնի:

— Դժվար թե: Սարագոսա տանող վերջին ավտոբուսն արդեն գնացել է:

Միրենը մի քանի բառով պատմեց, թե որտեղից էին գալիս, ում հետ էին ճամփորդում, և թե ինչ էր պատահել:

— Դուք արձակո՞ւրդ էիք եկել:

— Այո՛, Բենիդորմ էինք եկել:

Մարդը նկատել էր Խոշիանի հագուստի վրայի արյան բծերը: Անհնար էր չնկատել դրանք: Ու նորից հարցրեց՝ վիրավոր չէ՞ր: Խոշիանը բացատրեց, որ իր արյունը չէր: Այդ ոմն Պասկուալը, երբ երևացին Կալամոչայի առաջին տները, արագոնացու իր արտահայտիչ շեշտով առաջարկեց.

— Գուցե իմ տո՞ւն գաք: Զավակներս Սարագոսայում են. մեծը բանկում է աշխատում, մյուս երկուսը համալսարանի ուսանող են, աղջիկս էլ Փարիզում է, ամուսնացած է ֆրանսիացի մի երաժշտի հետ. արտակարգ տիպ է: Կիրթ, հանգիստ: Իհարկե, մի բառ չի խոսում իսպաներեն, բայց իրար լավ ենք հասկանում: Հիմա կտեսնեք, ձեզ վստահեցնում եմ, որ տանս մի

վաշտի համար տեղ կա: Կհանգստանաք, արյան հետքերը կլվանաք, ու վաղն առավոտյան ձեզ հանգիստ կտանեմ Սարագոսայի կայարան, մեկ է, հենց այնտեղ էլ պիտի գնամ: Ես ամուրի եմ, ու, ինչպես ասացի, տունս մեծ է ու դատարկ:

Նրանց համար ախորժալի մի ընթրիք պատրաստեց: Փայտե գերաններով առաստաղով, ծանր ու սառը սավաններով մի ննջասենյակ տրամադրեց և հոգատար ու կենսուրախ՝ վաղ առավոտյան՝ նախաճաշից հետո, նրանց մեքենայով տարավ Սարագոսա: Միրենն ու Խոշիանը ուզում էին վճարել նրան: Չէ՛, որ չէ՛: Նրանք պնդում էին անվարժ ու ամաչկոտ: Երկու ձեռքով բռնելով իր փորը՝ Պասկուալը նրանց հայտնեց, որ արագոնացիների հայտնի համառությունը իր համառության համեմատ ոչինչ է: Ճանապարհին գովեց բասկերին: Ազնիվ ու աշխատող ժողովուրդ են: Միայն ETA-ի ահաբեկչությունն է վատ: Միմյանց հրաժեշտ տվեցին Պոտրիլոյի կայարանում: Կիրակի էր, ու հյուսիսային կտրող քամի էր: Հաջորդ օրը՝ երեկոյան, Միրենը գնաց Սան Սեբաստիանի փոստային բաժանմունք: Հո գիժ չէ՞ր՝ իրենց ավանինը գնար: Որ մարդիկ հետաքրքրվեի՞ն, թե նա ինչ կապ ունի Տերուելի նահանգից մի պարոնի հետ: Արկղում կար մի կիլոգրամ Տոլոսայի լոբի, խիլդայով* լի մի բանկա՝ պղպջակաշերտ ցելոֆանով փաթաթված, Իդիասաբալի մի գլուխ պանիր՝ վակուումային տոպրակով, ու այդքանը, որովհետև ուրիշ բանի համար տեղ չկար:

Խոշիանը ձեռ էր առնում.

— Կալամոչայի արագոնացուց համառն ես:

— Ոչ թե համառ եմ, այլ երախտապարտ:

— Տեսնենք, գուցե իսպանացի դառնաս:

— Գնա՛, կորի՛ր, տափա՛կ, համա՛ տափակն ես, է՛:

* Խիլդա, նախուտեստ՝ կծու պղպեղ, ձիթապտուղ և անչոուս ձուկ:

Թոռնիկի հետ

Ի՜նչ վատ վիճակ է, Խոշիա՛ն: Վա՛տ: Շա՜տ վատ: Մի որդիս բանտում է, ու գուցե նրան երբեք ազատության մեջ չտեսնեմ, քանի որ հաստատ դրանից շուտ կմեռնեմ: Մյուսը Բիլբաոյում է. ո՛չ զանգում է, ո՛չ գրում, ո՛չ էլ գալիս է՝ մեզ տեսնելու: Միրենը մտածում է, որ ամաչում է իր ընտանիքից: Աղջիկս էլ արդեն մեկ տարուց ավելի է, ինչ մոր հետ չի խոսում ու ամուսնու հետ էլ շատ վատ հարաբերությունների մեջ է: Խոշիանը Ռենտերիա տանող ավտոբուսի մեջ դարդերն իրար էր բերում, մտածում, թե իր ընտանիքի բախտը որքան չի բերել: Մի՞թե չէինք կարող մի քիչ ավելի նորմալ ընտանիք լինել: Ու հանկարծ մյուս ուղևորների հայացքներից գըլխի ընկավ, որ ինքն իր հետ բարձրաձայն է խոսում: Ծերերի նման խելքս թռցնում եմ: Դե՛, ծեր եմ, էլի՝ բա ի՞նչ եմ: Նստած էր ավտոբուսի հետնամասում՝ մեծահասակների ու հղիների համար նախատեսված տեղում:

Իջավ այն կանգառում, որտեղ միշտ իջնում էր: Այն ժամանակներն էին, երբ թոռներին Միրենից գաղտնի էր այցելում: Տնից դուրս գալիս ասում էր, որ հողամաս է գնում: Եվ իսկապես գնում էր. մի քիչ բանջարեղեն ու միրգ էր հավաքում, երբեմն նաև մի ճագար էր վերցնում (որին սատկեցնում ու հենց տեղում էլ մաշկում էր, քանի որ չէր կարող դա անել երեխաների ներկայությամբ) ու հետո ավտոբուս էր նստում արդյունաբերական գոտում:

Երբ արդեն զանգի կոճակը պիտի սեղմեր (ցելոֆանի տոպրակում՝ երեք-չորս պրաս, ցիկորի ու մի բուռ կաղին), տուն վերադառնալու ցանկություն ունեցավ: Գիլյերմոն բղավում էր, Արանչան բղավում էր, փոքրիկ Այնոան լաց էր լինում. մի խենթանոց: Զանգը տվեց: Դռան զանգի դինդոնի հետ բղավոցները կտրվեցին՝ բացի աղջնակի հեկեկոցից, որի ձայնն արդեն խզվել էր լացից: Մի տասը-տասներկու վայրկյան անց դուռը բացվեց: Հետը կերակուրի, մարմինների, փակ տարածքի միախառնված հոտ տարածվեց: Գիլյերմոն չոր ու կտրուկ բարևեց ու դուրս թռավ փողոց:

Ի՜նչ տհաճ վիճակ: Տունը՝ տակնուվրա, կեղտոտ: Արանչայի զայրացածլացակումած հայացքը՝ աչքերի տակի մուգ շրջանակներով, Խոշիանի տրամադրությունը գցեց: Հինգ տարեկան Այնոան, տեսնելով իր aitona-ին, լացը

կտրեց, վազեց՝ նայելու տոպրակում եղած հավանական նվերները: Նույն հետաքրքրությունից դրդված՝ յոթ տարեկան Էնդիկան նույնպես արագ մոտեցավ, հրեց քրոջը, որը պաշտպանվեց պատասխան հարվածով: Հետո երեխաները ընդհանուր հիասթափություն արտահայտեցին՝ տեսնելով, որ մեջը ընդամենը կանաչեղեն էր ու կաղին: Արանչան հարցրեց.

— Կուզե՞ք aitona-ի հետ դուրս գալ:

Երկուսն էլ միաժամանակ պատասխանեցին.

— Ո՛չ:

— Ինչո՞ւ ոչ: Ձեզ համար միշտ նվերիկներ է առնում:

Տղան գլուխը բացասաբար տարուբերեց.

— Ama, ես ձանձրանում եմ:

Խոշիանը չգիտի՝ ինչ ասի: Չի կարողանում նրանց հետաքրքրել, ոչ մի բան չի խոստանում: Հոգնած, անտարբեր տեսք ունի: Վերջիվերջո, հայացքը դեպի Արանչան դարձնելով, նրան ուժասպառ հարցնում է, թե ինչպես է:

— Ինչպես տեսնում ես: Շատ վատ: Աշխատանքս շատ է, տունը, երեխաները... ամուսինս հետս փալասի պես է վարվում: Նույնիսկ դժբախտ լինելու ժամանակ չունեմ:

— Կատալինային հիշո՞ւմ ես:

— Ո՞ր Կատալինային:

— Ալֆոնսոյի կնոջը:

— Որ ձեր էն պատահարից հետո կա՞ղ էր մնացել: Թերթում տեսա մահազդը:

— Երկար ժամանակ հիվանդ էր: Թաղումը վաղն է:

— Նրա տղան ի՞նչ եղավ:

— Նույն տեղում է: Բադախոսում է, կարծեմ: Քաջ էր ձևանում:

— Եղբորիցս էլ ավելի՞:

— Շատ ավելի:

Էնդիկան ընդհատում է խոսակցությունը.

— Ama, սոված եմ:

— Սառնարանից յոգուրտ վերցրո՛ւ:

— Չկա:

Արանչան, մայրական հնարքներ կիրառելով, երեխային համոզեց, որ գնա, aitona-ի հետ դրսում մի համեղ բան ուտի: Հորը խնդրեց, որ

երեխային տանի: Բա Այնոա՞ն: Կտրականապես հրաժարվեց նրանց հետ գնալ՝ անհաղորդ մնալով «բուլկի, թխվածք, կրեմ» գրավիչ բառերին: Նեղացած՝ ներքևի շուրթն էր ծռում: Այդպես էլ չասաց՝ ինչու չէր ուզում գնալ, ու չգնաց:

— Լա՛վ, aita, գնա՛ Էնդիկայի հետ:

— Կուզե՞ս՝ քեզ մի բան բերեմ, maitia:

Աղջնակը գլխի կտրուկ ու հուսահատ թափահարումով պատասխանեց՝ ո՛չ: Պապ ու թոռ դուրս եկան տնից: Շքամուտքից դուրս գալիս Էնդիկան թույլ չտվեց, որ պապը ձեռքը բռնի: Իրեն արդեն շատ մեծ էր համարում դրա համար: Մտան իրենց թաղի հացի խանութ, երեխան երկու *դոնաթս* խնդրեց, մեկը՝ շաքարով, մյուսը՝ շոկոլադով: Ու մինչ Խոշիանը մանրն էր հաշվում, երեխան՝ սոված, անկուշտ, կծեց դրանք: Երբ դուրս եկան փողոց, երկուսն էլ կերել էր:

Կանգ առավ ու շոկոլադոտ շուրթերով ասաց.

— Այստեղ ականը պայթեց: Ես aita-ի հետ հացի խանութում էի:

— Ի՞նչ ական:

— Այն, որ իմ սենյակի ապակիները փշրեց: Մի պարոն մահացավ, որ aita-իս ընկերն էր, Մանոլո էր անունը: Այ այնտեղ էր ընկած, aitona, այն սև մեքենայի տեղը: Ես տեսա:

— Բայց ինչո՞ւ նայեցիր:

— Չնայեցի:

— Բա, ուրեմն, ո՞նց տեսար:

— Դե՛, լավ, մի քիչ, ա՛յ էս աչքով նայեցի:

— Լա՛վ:

Առաջին անգամ չէր, որ երեխան ականի թեման էր մեջտեղ բերում: Սարսափելի պայթյունը հիշողությունից չէր ջնջվում: Բացի այդ՝ մեծանում է, հետաքրքրվում է մեծերի գործերով, հարցեր է տալիս:

Մանուկների զբոսայգում պապ ու թոռ նստեցին նստարանին: Երեխաների բղավոցներ, մանկասայլակներով մայրեր և հայրեր:

Հանկարծ Էնդիկան վրա բերեց.

— Aita-ն ասում է, որ ականը վատ մարդիկ էին դրել:

— Ոնց որ թե այդպես է: Կուզե՞ս՝ գնանք, մի բան խմենք:

— Երբ գվարդիականները նրանց բռնեն, նրանց կտանեն բանտ՝ osaba* Խոշե Մարիի նման:

— Aita-դ է այդպես ասում, հա՞:

— Ո՛չ, էդ ինձ Անխելիտա տատիկն է ասել:

Խոշիանը երեխայի հետ համաձայնելու ցանկություն ունեցավ մի պահ: Որ հետո այս ու այն կողմ այլ բաներ չպատմի: Թեման շուտ փակելու համար: Որդու մասին յուրաքանչյուր նմանատիպ հիշատակումը նրա համար բրածեծ լինելու պես էր:

— Osaba-ի լուսանկարը ցույց կտա՞ս:

Վաղուց էր, որ չէր խնդրել լուսանկարը նայել:

— Ինչի՞ համար ես ուզում:

— Դե՛, շո՛ւտ արա, aitona, ցո՛ւյց տուր:

Խոշիանը դրամապանակում փնտրեց գույնը գցած, ծալծլված լուսանկարը: Խոշե Մարին այդտեղ տասնութ տարեկան էր՝ ժպտադեմ, խիտ մազ-մորուքով: Այն ժամանակ քիչ էր մնում՝ հանդբոլի պրոֆեսիոնալ խաղացող դառնար:

— Ականջօղ ունի:

— Երբ մեծանաս, դու է՞լ ես կպցնելու:

— Ո՛չ, որովհետև ականջիդ մեջ ասեղ են խրում, որը ցավոտ է: Ճի՞շտ է, որ osaba Խոշե Մարին բանտում է, որովհետև շատ չար մարդ է:

— Քո Անխելիտա տատի՞կն է այդպես ասում:

— Ո՛չ, այդպես իմ aita-ն է ասում:

— Դե՛, երևի ինչ-որ բան արած կլինի: Չեմ կարծում, որ ականջօղի պատճառով է բանտում հայտնվել:

Քիչ անց Խոշիանը երեխայի հետ տուն վերադարձավ: Յուրաքանչյուր թոռնիկին հարյուր պեսետա մետաղադրամ տվեց, աղջկան՝ հինգհազարանոց թղթադրամ՝ իր ասելով՝ ընտանեկան բյուջեին մի քիչ նպաստելու համար, ու գնաց: Սան Սեբաստիան վերադառնալիս ավտոբուսում նրա հետ նույնը պատահեց, ինչ ցերեկը՝ գալիս: Այսի՞նքն: Դե՛, հանկարծ նկատեց, որ մարդիկ իրեն են նայում: Հավանաբար, ինքն իր հետ էր խոսում բարձրաձայն:

---

* Osaba (բասկ.), քեռի:

Ձառիվերի վերջում

Ինքն իրեն ասաց՝ քանի որ անձրևում է, չեմ գնա: Առավոտվա ժամը ինն էր: Պատուհանից դուրս նայեց: Անձրևում էր, բայց գնաց: Վրայից կընգուղով բաճկոն կհագնեմ, ջրակայուն տաբատ, ու Աստված առաջ: Երբ պատրաստվում էր դուրս գալ, Միրենն ասաց.

— Ո՞ւմ մտքով կանցնի այս եղանակին հեծանիվ քշել: Ի՞նչ է, կարծում ես՝ դեռ քսան տարեկա՞ն ես:

Արանչան, իր անվասայլակին նստած, բթամատը վեր տնկեց դեպի հայրը, բայց հասկանալի չէր՝ ծաղրելո՞վ, թե՞ ոգևորելով:

— Նույնիսկ աղջիկդ է վրադ ծիծաղում:

Խոշիանի կասկածները կապ չունեին ոչ իր առողջության, ոչ էլ իր ուժերի հետ:

Հապա տեսնենք՝ քանի՞ անգամ է հեծանվավազքի փուլերով անցել անձրևոտ օրերին: Անձրև գա, արև լինի, թե քամի, հիմա նա միայն կարճ տարածությունների է տրամադրվում. ամենաշատը հիսուն կամ վաթսուն կիլոմետր: Դե՛, պարզ է. տարիքը, վատ ինքնազգացողությունն ու զառիվերները, որոնք ժամանակի ընթացքում մարդու աչքին ուղղահայաց են թվում: Մոտ երեք տարի առաջ իր ընկերների հետ մի կիրակի քշեց մինչև Օնդառոա: Մի պատի՛ժ: Վերադարձին սիրտը թփթփում էր: Զգո՛ւյշ, Խոշիա՛ն, շա՛տ զգույշ: Ստիպված էր բազմիցս հանգստանալ: Ընթրիքին էլ ուշացավ: Զայրույթի մի ալիք:

Նրա կասկածը հեծանվի հետ էր կապված: Եթե թրջվի, ցեխոտվի, գուցե փչանա, մինչդեռ այս հեծանիվը (շրջանակը կարբոնային է, մեխանիկական փոխարկիչը՝ Կամպանյոլո*) սովորական չէ: Վրան շատ թանկ էր նստել. հեծանիվը կատարելագործելու նպատակով կամաց-կամաց մասերը փոխարինել էր ավելի լավերով ու թանկերով: Այնպես որ, նախքան քշելը՝ մտավ «Պագոետա»՝ կորտադո սուրճ խմելու, տրամադրվելու ու տեսնելու՝ գուցե երկինքը բացվի՞: Դեռ հաստատ չէր որոշել հեծանվով դուրս գալ մայրուղի:

* Կամպանյոլո (Compagnolo՝ իտալ.), հեծանիվների մասեր արտադրող հայտնի ընկերություն:

Մեկ էլ անձրևը կտրվեց: Ու ասես դա քիչ էր, երկինքը բացվեց, ու դեռ Սան Սեբաստիան չհասած՝ Մարտուտենեի մոտ արև դուրս եկավ: Խոշիանն իր նախընտրած սաղավարտով ու ձեռնոցներով էր, իր ակումբի մարզահագուստով՝ կանաչ-սպիտակ շապիկ, սև անդրավարտիք: Դե՛, չգիտեմ, այդպիսի լուրջ տեղի համա՞ր… Բայց հիմնականում պատճառն այն էր, որ Միրենը չկասկածի, հարցուփորձ չանի, չհանդիմանի:

Թեև դանդաղ, բայց առանց դժվարության, բարձրացավ Էգիյա թաղամասի զառիվերը: Բարձունքի վերջին հատվածում աջից տեսավ դպրոցի բակում խմբերի բաժանված երեխաների, որոնք աղմուկով խաղում էին: Ձախից ծաղիկների խանութ էր: Մտքով անցավ մի ծաղկեփունջ առնի՝ պարզ ու էժան, քանի որ ճոռոմություն չէր սիրում: Երբ հեծանվից իջավ, նոր գլխի ընկավ, որ կողպեքը տանն էր թողել:

Հեծանիվն այնպես տեղադրեց, որ խանութի ներսից տեսնի: Մի աչքը վրան՝ ասաց՝ ինչ նպատակի համար են ծաղիկները: Ընդհանուր առմամբ երկու րոպե էլ չմնաց խանութում: Նրան սկզբից մի փոքր փունջ ցույց տվեցին՝ զանազան ծաղիկներով: Չցանկացավ մյուսների վրա նայել: Ասաց, որ սա լավ է: Վճարեց ու դուրս եկավ ու մոտ քսան րոպե սպասեց գերեզմանոցի մուտքի մոտ՝ չհանելով սաղավարտը, որովհետև չէր ուզում ո՛չ ծաղիկները մի կողմ դնել, ո՛չ էլ հեծանվի ղեկը բաց թողնել:

Ճաղերի կողքին՝ պատի վրա, այցելության ժամերի ցուցանակ էր ամրացված, կողքին՝ ավելի փոքրի վրա, գրված էր, որ շներով ու հեծանիվներով մուտքն արգելվում է: Վա՛յ ես քո… Բա հիմա ի՞նչ անեմ: Այդ պահին քաղաքային ավտոբուսը հասավ ներքևի կանգառ: Բիչո՛րին իջավ ավտոբուսից: Սև վերարկուով էր: Եվ, տեսնելով ցուցանակը, Խոշիանին ասաց, որ չանհանգստանա.

— Արգելված է գերեզմանների արանքներով քշելը, ոչ թե հեծանիվը կողքով տանելը:

— Համոզվա՞ծ ես:

— Գնացինք, Խոշիա՛ն, քեզ բան եմ ասում:

Մտան առավոտվա այդ ժամերին դատարկ գերեզմանոց, թեև այնտեղ՝ վերևում, մաքրություն անող մարդիկ կային, որոնց առջևից աղմկոտ մի մեքենա էր գնում: Ու դրանից հետո հեծանվի մասին բա՞ն պիտի ասեն, որ ո՛չ աղմուկ է հանում, ո՛չ էլ ծուխ:

Առաջանալով թեթևակի ներքև իջնող արահետով, գերեզմանների ու

ծառերի (եղևնիներ, նոժիներ) միջով՝ մարմարի ու ցեմենտի գորշ թանձրության մեջ այսուայնտեղ տեսնում էին այլ միայնակ այցելուների: Խոշիանն իր հեծանիվի հետ զբաղեցնում էր արահետի կեսը: Բիչո՛րին ուղղորդում էր նրան՝ մեկ-երկու քայլ առաջ ընկած: Բայց երբեմն, երբ դեմքը դեպի Խոշիանն էր շրջում, նա տեսնում էր, որ Բիչո՛րին ժպտում է: Այս կինն ինչո՞ւ է ժպտում այս տխուր վայրում: Գիժ է. ես հո դա լա՞վ գիտեմ:

— Չգիտեի՝ գալո՞ւ էիր, թե՞ ոչ:

— Տեսնում ես:

— Խոսքիդ տեր մարդ ես:

— Դու աղջկաս հետ ինձ այս գործի մեջ քաշեցիր: Ես իմ խոստումը կատարեցի: Հիմա տեսնենք՝ դու քոնը՝ Միրենին չպատմելու մասով կկատարե՞ս:

— Էդ մասով կարող ես հանգիստ լինել: Արանչան իրավացի էր, երբ ասում էր, որ դու բարի սիրտ ունես: Հենց միայն ձեռքիդ ծաղկեփունջը դրա ապացույցն է: Չատոյին շատ դուր կգա:

Խոշիանը փորձում էր պաշտպանվել՝ չոր բարյացակամություն ցուցաբերելով, բայց այս կնոջ մտքերն ու գժությունները նրան զինաթափում էին:

— Լա՛վ, լա՛վ:

— Ու նա նախանձելու է, երբ տեսնի՝ ակումբի մարզահագուստով ես:

— Վերջացրո՛ւ:

— Դե՛, մտածեցի, որ նրա պատվին ես այդպես հագել:

Տեղ հասան: Հեռվում՝ ծովի կողմը, անձրևաբեր ամպեր էին կուտակվում, բայց «Պոլյոե» գերեզմանոցը դեռ վայելում էր արևը: Արահետի ասֆալտի վրա շարունակում էին անհետանալ թաց հետքերը: Խոշիանը լուրջ տեսքով (կաշկանդվա՞ծ) նայում էր պարզ խաչով ու չորս անուններով շիրմաքարին՝ վերից վար շարված: Չգիտեր՝ ովքեր էին ննջեցյալները, թեև մահվան թվերից (մեկը՝ 1963 թ.) ու երկրորդ ազգանվան համընկնումներից (բացառությամբ մեկի) կռահեց, որ միևնույն տոհմի մարդիկ են: Ներքևի շարքում իր ընկերոջ անունն էր: Մականունը չկար:

— Ահավասիկ: Տարիներ շարունակ սպասում է ավանի գերեզմանոց տեղափոխվելուն: Դա դեռ չենք արել՝ Գրեգորիո Օրդոնյեսի գերեզմանի հետ պատահածից խուսափելու համար: Նա ավելի վար է թաղված: Եթե կուզես, քեզ ցույց կտամ: Ժամանակին նրա գերեզմանը վիրավորական գրվածքներով էին նախշում: Դե՛, կարդացած կլինես թերթերում: Դուք՝ abertzale-ներդ, նույնիսկ մահացածներին հանգիստ չեք թողնում:

Խոշիանը գլխիկոր լռում է: Մտորո՞ւմ է, աղոթո՞ւմ է: Մեկ էլ հայացքը սևեռեց ընկերոջ անվան ու մահվան թվի վրա: Նրա մահը՝ իր իսկ շենքի անկյունում: Իր տան ու մեքենա-հեծանվի ավտոտնակի արանքում: Ու հիշեց, թե քանի տարեկան էր Չատոն կրակոցների անձրևոտ այն հետմիջօրեին:

Բիչո՛րին մի վայրկյան ձայնը չէր կտրում.

— Քեզ ասացի երեկ, որ տղադ ինձ նամակներ է գրել: Գիտես, շատ ուրախացա, երբ իմացա, որ ինքը չի եղել կրակողը:

Խոշիանը բերանը չի բացում: Այս մարդուց երկչոտ, մտածկոտ մի լռություն էր ճառագում, դրսից դեպի ներս և անցյալից դեպի այսօր եկող մի լռություն՝ ի հակադրություն Բիչո՛րիի ձայնային համառությանը, որն ամենևին չէր բռնում տեղի ու պահի մտերմիկությանը:

— Գուցե նրան ասե՞ս այն, ինչ ինձ ասացիր քո հողամասում: Կարծում եմ՝ դրա համար ես եկել:

Վերջապես մի շարժում արեց: Ի՞նչ շարժում: Դեմքը շրջեց դեպի Բիչո՛րին: Ունքամեջը մտահոգ, ունքերը կախ, մելամաղձոտ, հիմարավուն: Անթարթ աչքեր, որոնցում լղոզված մի աղաչանք է կուտակվում. «Գուցե ինձ հանգի՞ստ թողնես», «Գուցե մի քիչ հարգա՞նք ցուցաբերես»:

— Ինձ մենակ կթողնե՞ս, խնդրում եմ: Մի րոպեով:

Տեսավ՝ ինչպես է կինը դանդաղ հեռանում այն տեղով, որով երկուսով քիչ առաջ էին բարձրացել: Համոզվեց, որ Բիչո՛րին բավականաչափ հեռու է, որտեղից չի կարող ուսումնասիրել իր ժեստերը ու լսել իր շշնջոցը, ու նոր միայն դեմքը շրջեց դեպի շիրմաքարը:

Բիչո՛րին կանգ առավ մի երեսուն քայլի վրա: Անշարժ, աչքերն արևից պաշտպանելու համար ձեռքը ճակատին հենած, նայում էր Խոշիանին, որը ամուսնու գերեզմանի առջև էր: Գերեզմանների, շիրմաքարերի ու խաչերի արանքում հեծանվորդի իր գունագեղ մարզահագուստով և հեծանվով Խոշիանը մի զավեշտալի պատկեր էր ներկայացնում: Մի մարդ, որն իր հեծանվին նույն քնքշությամբ էր վերաբերվում, ինչ Չատոն:

Ու տեսավ՝ ինչպես է նա ծաղկեփունջը դնում ընկերոջ գերեզմանին: Որտեղի՞ց է դա գտել: Ավանի՞ց է հետը բերել: Չեմ կարծում, որ նման ռիսկի դիմեր. չէ՞ որ կինը կարող էր իմանալ: Խոշիանը, սաղավարտը ձեռքին, խաչակնքեց: Ու եթե բան էլ ասաց, կինը չէր կարող լսել, բայց այն պարզ փաստը, որ եկել էր գերեզմանոց՝ կատարելով երեկ հողամասում տված խոստումը, Բիչո՛րիին լիովին գոհացրեց:

Խոշիանն անսպասելիորեն ուղղվեց դեպի Բիչո՛րին՝ երկու ձեռքով տանելով հեծանիվը: Այցելությունն ավարտված էր (որքա՜ն արագ), այցելությունը մեկին, որը նրա ընկերն էր եղել, լավագույն ընկերը: Հասավ Բիչո՛րիին: Չկանգնելով, անհամբեր ձայնով, բայց բնական ձևացնելով՝ ասաց.

— Լա՛վ, ես գնացի:

— Շատ լավ էր, որ դու եկար:

Խոշիանը չպատասխանեց: Ինչո՞ւ էր այդքան շտապում: Եվ ինչո՞ւ այդքան կտրուկ հեռացավ: Պատասխանը չուշացավ: Խոշիանը հազիվ մի չորս քայլ արեց, ու լսվեց նրա առաջին հեկեկոցը: Արագացրեց քայլերը: Դեպի ելք էր գնում գլխիկոր՝ տանելով իր հեծանիվը, և ուսերն անտանելի ցնցվում էին:

Բաժանարար ապակին

Այն դեպքից քիչ առաջ, երբ բանտային մի պաշտոնյայի հետ լուրջ ընդհարում ունեցավ, և դրա պատճառով նրան Պիկասենտ բանտից տեղափոխեցին Ալբոլոտե, Խոշե Մարին վերջապես արժանացավ իր եղբոր այցին:

Մորը հաճախ էր գանգատվում: Թե ինչո՞ւ Գորկան մի օր չի գալիս. ես այնքա՞ն եմ ուզում նրան տեսնել: Միրենն էլ նրան պատասխանում էր, որ իրենց մոտ էլ չի գալիս՝ այդքան մոտիկ ապրելով, ու որ ո՛չ ինքը, ո՛չ էլ Խոշիանը չգիտեն՝ ինչ է կատարվում այդ տղայի հետ, որը կարծես մեզնից թաքնվում է:

Հազվադեպ հեռախոսային զրույցի ժամանակ Միրենը փորձեց Գորկային համոզել: Եվ ի՞նչ արեց: Դե՛, իր սովորության համաձայն՝ այնքան նախատեց ու կշտամբեց, որ պարզ է, է՛լ ավելի վատացրեց իրավիճակը: Ամիսներ անցան, մինչև նորից նրա մասին լսեցին:

Երբ Գորկան մի անգամ գաղտնի եկավ Ռենտերիայի իրենց բնակարան, Արանչան էլ միջամտեց: Նա մի անգամ կարողացել էր այցելել եղբորը: Ավելին չէր ստացվել, քանի որ Գիլյերմոն կնոջն ուղղակի արգելել էր, ինչպես ժամանակին էլ արգելել էր երեխաներին ծանոթացնել իրենց ահաբեկիչ քեռու հետ. դա՛ էր մնացել պակաս:

Արանչայի ողջամիտ, դառնությունից զուրկ, զուսպ խնդրանքը չհամոզեց Գորկային.

— Տեսնե՛նք:

Երբ ասում է՝ տեսնենք, իրականում նշանակում է՝ ոչ: Այդուհանդերձ, քրոջ խոսքը կպավ նրա սրտին: Ավելին՝ մի անդուր զգացում պատճառեց: Խղճի խա՞յթ էր: Երևի: Ամեն դեպքում, գլխացավից պրծնելու համար իրավիճակը նկարագրեց Ռամունչոյին՝ հարցնելով, թե նա ինչ կաներ: Ու Ռամունչոն իր փոխարեն որոշում կայացրեց: Ասաց, որ առանց ժամանակ կորցնելու պայմանավորվի՝ եղբորը տեսակցելու համար: Գորկան այդպես էլ արեց որոշ չկամությամբ, ու հաջորդ ամիս երեքով մեքենայով գնացին Պիկասենտ: Ռամունչոն քշում էր, նրա աղջիկը՝ Ամայան, որին հայրը խոստացել էր Վալենսիայում գնումների տանել, կողքին էր, Գորկան՝ հետևի

նստարանին՝ միայնակ, անտրամադիր. ճամփա ընկնելու առաջին իսկ պահից զղջաց, որ ձեռնարկել էր այս ուղևորությունը:

— Ինչպե՞ս կնկարագրեիր եղբորդ հետ կապը:

— Ես կասեի գոյություն չունեցող:

— Նրանից վախենո՞ւմ ես:

— Հարցազրո՞ւյց ես վերցնում:

— Հանուն քեզ եմ հետաքրքրվում: Վախենո՞ւմ ես: Այո՞, թե՞ ոչ:

— Առաջ՝ այո՛: Հիմա չգիտեմ: Նրան վաղուց չեմ տեսել:

— Այդ մասին խոսել չե՞ս ուզում:

— Գիտես, որ դա ցավ է պատճառում ինձ: Այնպես որ, չեմ հասկանում, թե ինչու ես օրս դառնացնում:

— Կներես: Վերջացավ հարցազրույցը: Հարգելի՛ ունկնդիրներ, մի քանի րոպե գովազդային դադար, ապա կշարունակենք մյուս թեմաներով մեր զրույցը:

Գորկան Ռամունչոյին ու Ամայային հրաժեշտ տվեց բանտի կայանատեղիում: Անճարակ ու անտրամադիր մտավ շենք: Ասես սպանդանոցի դարպասի առաջ կանգնած մի անասուն: Ըստ կարգի ստուգում անցնելուց հետո հեռախոսային խցիկի թիվն ասացին նրան: Նեղ տարածք էր, չոր, պլաստմասսե, անհարմար աթոռ, խեղդիչ օդ, ամեն ինչը՝ կեղտոտ, հատկապես՝ ապակին: Աջուձախից բոլորը խոսում էին բղավելով՝ բերանը խոսափողին կպցրած. ո՛վ գիտի, թե որքան բակտերիաներ էին մեջը կուտակվել:

Եղբորն ավելի շուտ տեսավ, քան նա՝ իրեն: Գորկայի ուշադրությունը գրավեց այն, թե որքան են սմքել նրա մկանները, ու որքան մազ է կորցրել: Հայացքը չէր կարողանում կտրել եղբոր՝ հանդբոլ խաղացողի հզոր ու պինդ ձեռքերից, որոնցով երեխա ժամանակ այդքան հիանում-վախենում էր, և որոնք ավելի ուշ մարդկային կյանքեր խլելու (միայն Խոշե Մարին գիտի՝ քանիսի) գործիքի էին վերածվել: Մի պահ թեթև ցնցվեց ու ծակող, տխուր երանություն ապրեց այն մտքից, որ ինքը ոչ իր եղբայրն է, ոչ էլ նրա տեղում է:

Խոշե Մարին երևի թե ինչ-որ բան տեսավ եղբոր դեմքին ու երբ նստեց ապակու առջև, այլևս չէր ժպտում: Ապակիով բաժանված՝ միմյանց նայեցին լուրջ, քննող հայացքով: Խոշե Մարին առաջինը խոսեց:

— Ափսո՛ս, չեմ կարող գրկել քեզ:

— Ոչինչ:

— Մեռնելու չափ ուզում էի քեզ տեսնել:

— Դե՛, տեսնում ես՝ այստեղ եմ:

— Մի տեսակ սառն ես: Ուրա՞խ չես, որ տեսար ինձ:

— Իհարկե, ուրախ եմ, բայց կնախընտրեի ուրիշ տեղում տեսնել քեզ:

— Ես էլ կուզեի, *դրամերը*:

«*Դրամերը*» կարող էր և չասել: Դա ուղղված էր հին ժամանակների Գորկային՝ այն ժամանակվա նիհար, քաշվող դեռահասին: Վերևից ներքև ասված բառեր, գլուխգովանի շեշտ: Գորկային դա դուր չեկավ, ու նա հետ քաշվեց՝ անթաքույց հեռանալով խոսափողից, ինչով կարծես ասեր եղբորը. «Սխալ ուղիով ես գնում, ես քո ենթական չեմ»: Գորկան մեծագույն խորշանքով էր ընդունում Խոշե Մարիի ամեն ինչը: Բացի այդ՝ խցիկում ծանր հոտ էր տիրում: Չե՞ն պատրաստվում օդափոխել: Ափսո՞ս: Բնավ: Խոշե Մարիի աչքերը (երևի թե այս տարիների ընթացքում ամենից քիչ փոխված բանը) այն նույն աչքերն էին, որոնցով նախքան սպանելը նայել էր իր զոհերին: Ու բաց ճակատը մարդասպանի ճակատ էր, ունքերը մարդասպանի էին, քիթը մարդասպանի էր, բերանը (ատամները՝ վատ վիճակում) մարդասպանի բերան էր: Այդպես եմ մտածում, բայց չարժի ասել: Ոչ էլ կհամարձակվեմ ասել:

Իրենց անձնական կյանքին վերաբերող մանրուքների մասին խոսեցին: Ամեն ինչ՝ մի տեսակ լակոնիկ ու մակերեսային: Երկու օտար, որ փոխադարձ վստահություն-մտերմություն են ձևացնում, որն իրականում այլևս գոյություն չունի: Զուր էին փորձում խոսել այն ժամանակների մասին, երբ ծնողների տանը մի սենյակում էին ապրում: Գորկան պաշտպանվելով հարցեր էր տալիս, որ ստիպված չլինի իր մասին խոսել: Այդ մկան ծակում անցկացրած քառասուն րոպեները հավիտենություն էին թվում նրան:

Անկասկած, Խոշե Մարիին էլ արդեն դուր չէր գալիս իրենց զրույցը: Ինչո՞ւ: Որովհետև ապակու մյուս կողմից չէր զգում համերաշխություն-ջերմություն, կարեկցանք-ըմբռնում: Էլ չասած, որ ժպիտ չկար: Գրո՜ղը տանի, ի՞նչ է կատարվում: Փորձում էր եղբոր աչքերից հասկանալ, բայց ոնց որ թե չէր հավանում իր տեսածը: Զգացմունքային արտահայտությունների սովոր չէր: Խոժոռվեց:

— Հոգուդ խորքում դատապարտում ես, չէ՞, մասնակցությունս զինված պայքարին: Եվ արհամարհում ես ինձ:

Գորկան պատրաստ չէր դրան: Լարվեց:

— Ինչո՞ւ ես դա ասում:

— Զգացվում է, որ aita-ները կյանքդ կերել են, որ տեսակցության գաս: Ինձ չես խաբի:

— Իմ կամքով եմ եկել:

— Սխալ չհասկանաս ինձ: Ես քեզ չեմ պահում, հատկապես, եթե որոշել ես վատթարացնել վիճակս: Թե՞ կարծում ես՝ գլխի չեմ:

— Այսքան երկար ճամփա չէի կտրի որևէ բան վատթարացնելու համար: Ոչ էլ փոքր եղբոր դերում լինելու համար: Բնականաբար, ինձ դուր չի գալիս այն, ինչը քեզ այստեղ է հասցրել: Երբեք դուր չի եկել:

— Նրանցից ես, որոնք համարում են՝ արժանի՞ եմ այստեղ լինելուն:

— Դա քո զոհերին հարցրո՛ւ:

— Ձերբակալելու պահից սկսած՝ շատ են ծեծել ինձ: Բայց ոչինչ այնքան ցավ չի պատճառել ինձ, որքան քո ասածը: Եվ սա իմ հարազատ եղբայրն է, Աստվա՛ծ իմ:

— Քեզ ասում եմ այն, ինչ մտածում եմ, որովհետև եղբայրդ եմ: Ուզում ես՝ ստե՞մ, քեզ շնորհավորե՞մ այն ցավի համար, որ պատճառել ես չգիտեմ քանի ընտանիքի: Ու հանուն ինչի՞:

— Ժողովրդիս փրկելու համար:

— Ուրիշների արյունը թափելո՞վ: Ի՞նչ լավ է:

— Այն կեղեքիչների, որոնք մեզ ճնշում են ամեն օր ու չեն թողնում՝ ազատ ապրենք:

— Ձեր սպանած երեխաներին է՞լ է վերաբերում:

— Եթե այս ապակին չլիներ, քեզ այնպես կբացատրեի՝ կհասկանայիր:

— Սպառնո՞ւմ ես:

— Այո՛, կարող ես այդպես համարել:

— Եթե ցանկանում ես, կարող ես վրաս կրակել: Դուք կրակում եք մի ժողովրդի անունից, որի կարծիքը երբեք չեք հարցրել:

— Լա՛վ, վերջացրինք: Տեսնում եմ՝ իրար չենք հասկանալու:

— Դու սկսեցիր:

— Մեզնից ոմանք լսել են հայրենիքի կանչը: Մյուսները զբաղված են՝ իրենց համար լավ կյանք ստեղծելով, ու հրաշալի ժամանակ են անցկացնում: Կարծում եմ, որ միշտ է այդպես եղել: Ոմանք իրենց զոհաբերում են, մյուսները՝ օգտվում:

— Ո՞վ է լավ կյանքով ապրում:

— Հաստատ՝ ոչ ես:

— Ռադիոհաղորդումներ եմ վարում բասկերեն, գրքեր եմ գրում բասկերեն, օգնում եմ մեր մշակույթին: Դա ժողովրդին ծառայելու իմ ձևն է, բայց կառուցողական ձև է, ու ճանապարհին լիքը որբ ու այրի չի թողնում:

— Օձի լեզու ունես: Զգացվում է, որ ռադիոյից ես: Ու լավ է ստացվում, չէ՞:

— Չեմ գանգատվում:

— Ինձ ասել են, որ դու տղամարդու հետ ես ապրում: Դու էիր պակաս, որ իմ արածը դատապարտես: Միշտ մի քիչ տարօրինակ էիր, տղա՛, բայց չէի պատկերացնում, որ այդ աստիճան:

Գորկան պապանձվեց, քարացավ, դեմքն այրվում էր զայրույթից:

Իսկ եղբայրը սպառնալից շարունակեց.

— Ama-ն կարծում է, որ դու մեզնից ամաչում ես: Ես որ ամաչում եմ՝ գյոթ եղբայր ունենալու համար, որի տանձին չէ մեր ազգանունը գետնով տալը: Դրա համար է, որ երբեք ավան չես գնում, չէ՞:

— Քեզ ո՞վ է ասել, որ տղամարդու հետ եմ ապրում:

— Ի՞նչ կարևոր է: Քո կարծիքով՝ մարդակործան իսպանական բանտում լուրեր չե՞ն հասնում ինձ:

— Ապրում եմ մի մարդու հետ, որին սիրում եմ, և որն ինձ է սիրում: Երևի թե քեզ համար չինարեն է հնչում: Մաուզերիստը ի՞նչ պիտի հասկանա՝ սերն ինչ է:

Վերջին այդ բառերը Գորկան ասաց՝ կտրուկ վեր կենալով, կատաղած հրելով աթոռը: Նորից բերանը մոտեցրեց խոսափողին, բայց երևի թե կուլ տվեց կոկորդում եղած ագրեսիվ բառերը: Շրջվեց ու երբ արդեն դուրս էր գալիս տոթ, կեղտոտ ու գարշահոտ այդ տեղից, թիկունքում լսեց, թե Խոշե Մարին ինչպես է եղբորն աղաչում մնալ, մի տեսակ նոր, երբեք չլսած հնազանդությամբ խնդրում, որ չգնա, որ մնա, որովհետև նոր էինք սկսել զրու…

Փակվող դուռը կտրեց վերջին նախադասությունը:

Վերադառնում էին Բիլբաո: Ճանապարհը երկար էր, ամառային մայրամուտը՝ կարմրադեղին, Ամայան քնած էր: Ռամունչոն Գորկային հարցրեց հանդիպման մասին՝ էլի կգա՞:

— Տեսնենք:

Այդքանով սահմանափակվեց: Հետո քնեց կամ էլ ձևացրեց, թե քնած է:

Մերսում

Ռամունչոն ի վերջո համաձայնեց պառկել մերսման սեղանի վրա (ինչպես պնդում էր Գորկան), բայց դա բան չէր փոխելու, որովհետև մերսում լիներ, թե ոչ, իր համար պարզ էր, որ ինքնասպան է լինելու: Խնդիրն ի՞նչ էր: Դե՛, իր նախկինը՝ այդ պոռնիկը, այդ օձը, որի կյանքի հիմնական նպատակն իր մահացու թույնը թափելն էր, մի կեղտոտ խաղ էր խաղացել իր դեմ:

Մոտ չորս շաբաթ առաջ Ռամունչոն գնացել էր Վիտորիա՝ Ամայայի հետևից: Աղջիկն այդ ժամանակ տասնվեց տարեկան էր: Գորկայի կարծիքով՝ այդ տարիքում մարդ շաբաթավերջը պետք է հոր հետ չանցկացնի, որքան էլ ծնողը նվերներ անի ու ամեն քմահաճույք հանդուրժի: Աղջիկը (թեև արդեն օրիորդ էր՝ կրծքով ու լկտի խոսելաձևով) գիրացել էր: Իբր գիրությունը քիչ էր այլանդակում նրան, դեռ մի բան էլ մաշկի բորբոքում ուներ. լիակատար դժբախտություն: Խայթող էր դարձել: Այդ պատճառով Ամայան բավական ագրեսիվ էր արտահայտում իր դըժբախտությունը:

Գորկան աշխատում էր հեռու մնալ, բայց երբեմն Ռամունչոյին այնքան էր խղճում, որ չէր դիմանում ու միջամտում էր:

— Չե՞ս տեսնում, որ քեզ չարչարում է:

— Իհարկե, տեսնում եմ: Ու ի՞նչ անեմ:

Ամսական երկու շաբաթավերջ Ռամունչոն աղջկան մեքենայով բերում էր Բիլբաո ու կիրակի օրը հետ էր տանում: Սովորական ժամին սեղմեց ավտոմատ բացվող դռան զանգը: Ոչ ոք չբացեց: Որոշ ժամանակ անցկացրեց կողքի բարում: Վերադարձավ: Նորից զանգեց: Բնակարանի պատուհաններում լույս չէր երևում փողոցից: Օձ-պոռնիկի մեքենան էլ որևէ տեղ կանգնած չէր: Օգտվելով նրանից, որ մի հարևան դուրս եկավ շքամուտքից, մտավ շենք ու բարձրացավ մինչև իր նախկին կնոջ բնակարան: Տարօրինակ էր, որ դռան առջևի գորգիկը չկար: Ռամունչոն զանգը տվեց, դուռը ծեծեց: Բում-բում՝ անպատասխան: Առաջին անգամ չէր, որ նման բան էր պատահում: Նյարդայնացավ, հայհոյեց չարակամ էգին, որ տարիներ շարունակ խոչընդոտում է հոր ու աղջկա հարաբերություններին:

Վերջիվերջո, ճարն ի՞նչ, Ռամունչոն մենակ վերադարձավ Բիլբաո՝ բարկացած ու տխուր: Ու հիմա ի՞նչ պիտի աներ իր գնած կինոյի տոմսերը: Հաստատ ուրիշ անգամների պես մայր ու աղջիկ շաբաթավերջ զբոսանքի էին գնացել (Մադրիդը շատ են սիրում) ու մոռացել էին հայտնել Ռամունչոյին: Կամ էլ չէին մոռացել, բայց չէին ասել, որ տառապի:

Գորկան թեթևություն զգաց: Հանդարտ շաբաթավերջ կունենան: Բանն այն է, որ աղջիկը մշտական գլխացավանքի աղբյուր էր: Երբ հնարավոր էր, Գորկան նրանից խուսափում էր. ռադիոյում ավելի երկար էր մնում, ժամերով զբոսնում էր, իր հանդիպումներն էր անցկացնում կամ որևէ մեկի հետ կեսօրվա ճաշի էր գնում: Գաղափարը տանը հնարավորին չափ քիչ մնալն էր:

Առաջ այդ ժամանակն օգտագործում էր՝ Արանչային այցելելու ու մի քանի ժամ քեռու դերում լինելու համար: Մի քանի անգամ մնացել էր քնելու՝ անհարմար դիրքով պառկելով հյուրասենյակի բազմոցին, բայց դա էլ վերջացավ: Արդեն բավական ժամանակ է, ինչ չի տեսել իր զարմիկներին, չնայած քույրը նրանից ներողություն էր խնդրել՝ լեզվից թռցնելու համար: Գորկան սկզբից ևեթ ենթադրում էր, որ Խոշե Մարիին քույրն էր (ապա էլ՝ ո՞վ) պատմել, որ փոքր եղբայրը տղամարդու հետ է ապրում Բիլբաոյում: Բա գաղտնիք պահողն այդպիսի բան կանի՞: Գորկային դավաճանել էր իր ընտանիքի միակ անդամը, որին վստահում էր, որին իրոք սիրում էր: Քրոջ աննրբանկատությունը չդատապարտեց: Նրան հրաժեշտ տվեց իր սովորական զուսպ ժեստերով ու բառերով, բայց այդ պահից ի վեր այլևս ո՛չ գնում էր Ռենտերիա, ո՛չ էլ հեռախոսով զրուցում:

Ռամունչոն ասում էր.

— Քո վատն այն է, որ ներել չգիտես:

— Իմ կարծիքով՝ խնդիրն այն է, որ ինձ չեն հարգել:

Աղջկանից լուր չունենալով ու վատ կանխազգացումով՝ Ռամունչոն մի քանի օր անց որոշեց շաբաթվա մեջ գնալ Վիտորիա:

— Հետս կգա՞ս:

— Հարցազրույց պիտի ձայնագրեմ:

— Խնդրո՜ւմ եմ:

Մի օր՝ հետմիջօրեին, միասին գնացին: Ու կրկնվեց նույն պատմությունը: Դռան զանգը, անլույս պատուհաններն ու օձ-պոռնիկի մեքենան, որը շրջակայքի փողոցներում չէր: Փոստարկղի վրա դեռ նրա անունն էր փակցված:

Ներսում ո՛չ նամակներ էին կուտակվել, ո՛չ գովազդային թերթիկներ, ինչպես սովորաբար լինում է, երբ բնակիչը որոշ ժամանակ բացակայում է տնից: Գուցե մեկի հետ պայմանավորվել է, որ պարբերաբար դատարկե՞ն փոստարկղը: Մտահոգությունը, կասկածը, վախերը հանգեցնում էին ավելի ու ավելի տարօրինակ ենթադրությունների: Գորկան առաջարկեց, որ բարձրանան նրա նախկին կնոջ բնակարան ու հարցուփորձ անեն դիմացի հարևանին:

— Փոխադրող ծառայությունից մարդիկ եկան ու ամեն ինչ իջեցրին՝ կահույքը, սառնարանը, ներքնակները:

— Ե՞րբ:

— Դե՛, մի երկու շաբաթ կլինի:

— Ու այդ օրից ո՛չ աղջկա՞ս եք տեսել, ո՛չ էլ նրա մո՞րը:

— Մտածեցի՝ օգոստոս է, հարևանների մեծ մասի պես արձակուրդ են գնում:

Ո՞վ է հետը կահույքը սար տանում կամ էլ սառնարանն ու ներքնակները՝ լողափ: Վերջին հույսը. զանգահարելով դպրոց՝ համոզվել, որ տեղափոխվել են: Սին հույս էր, քանի որ այս ժամանակ դասատուները փորի վրա փռված կլինեն որևէ տուրիստական վայրում: Բիլբաո վերադարձի ճանապարհին Ռամունչոն ակնարկեց դատարան դիմելու մտադրության մասին: Գորկան նրան տարհամոզեց: Որ մի քիչ սպասի, որ հաստատ այդ երկուսի մտքով անցած կլինի ամառը անցկացնելու համար մի տեղ գնալ՝ օգտվելով ճամփորդական գործակալության առաջարկից: Ամեն դեպքում, այս ամենից հանպատրաստից որոշման հոտ էր գալիս:

— Ինձ ինչո՞ւ չեն զգուշացրել:

— Մտածել են, որ դեմ կլինես: Ճիշտն ասա. դեմ կլինեիր, չէ՞:

— Ամայային տեսնելու իմ օրերին՝ այո՛:

— Տեսնո՞ւմ ես:

— Իսկ կահո՞ւյքը ոնց կբացատրես:

— Այդ առումով չգիտեմ, բայց հաստատ բացատրություն կա: Ասենք՝ Վիտորիայում մեկ այլ բնակարան են տեղափոխվել: Համաձայնի՛ր, որ քաղաքում ավելի լավ թաղամասեր կան, քան իրենց ապրած տեղը:

Նամակը սեպտեմբերին հասավ: Այդ առավոտ՝ կեսօրի կողմ, փոստարկղը Գորկան բացեց: Երբ տեսավ Միացյալ Նահանգների կնիքը, վատ կանխազգացում ունեցավ: Ծրարի հետևի մասում միայն ուղարկողի

անունն էր՝ Ամայա, և ուրիշ ոչինչ: Ո՛չ ազգանուն, ո՛չ էլ փոստային հասցե: Ու քանի որ այդ օրերին շատ բարդ աշխատանքային մթնոլորտ էր, ու տանը մշտապես ծանր լռություն էր տիրում, Գորկան որոշեց նամակը թաքցնել Ռամունչոյից: Նույնիսկ գայթակղություն ունեցավ ոչնչացնել այն՝ նրան ևս մի տառապանք չպատճառելու համար: Նամակը մի շաբաթ մոտը պահեց: Վերջիվերջո տվեց Ռամունչոյին՝ ձևացնելով, թե հենց նոր է հանել փոստարկղից:

Ռամունչոն նամակը կարդաց ու վազեց զուգարան՝ փսխելու. այնտեղից սրտաճմլիկ ձայներ էին լսվում, հեկեկոցներ, սարսափած ճիչեր: Ճմռթած թուղթն ընկած էր մնացել գորգին: Գորկան կարդաց.

«Aita, ama-ն աշխատանք է գտել Միացյալ Նահանգներում, ու հիմա գնում ենք՝ ընդմիշտ այնտեղ ապրելու: Խնդրում եմ, մեզ մի՛ փնտրիր: Երբ փող աշխատեմ, չափահաս դառնամ, կգամ՝ քեզ տեսնելու:

Ondo pasa*:

Ամայա»:

Այս աղջիկը նույնիսկ հեռվից խնդիրներ էր ստեղծում: Ու ի՜նչ սառնություն. մի օր ականջովս լսեցի ասածը.

— Aita, ինձ հանգի՛ստ թող, դու խղճուկի մեկն ես:

Բայց դա, պարզ է, չես կարող Ռամունչոյին հիշեցնել, որովհետև ցավից կմեռնի:

Գորկան նրան առաջարկեց ցնցուղի տակ մտնել ու մտքերն ի մի բերել: Հետո էլ ասաց, որ նրա ուզածի չափ կմերսի, դե՛, գիտես, հաճելի ավարտով, թեև Ռամունչոն՝ խեղճ մարդը, այդ պահին ինչի ասես՝ պատրաստ էր, բացի հաճույքից: Գորկան այնքան պնդեց, մինչև նա զիջեց՝ ասելով, որ իր համար մեկ է, քանի որ, ամեն դեպքում, մտածում էր վերջ տալ իր կյանքին:

— Հենց այսօր: Չգիտեմ՝ ինչ ձևով: Կմտածեմ: Բայց դու մի՛ անհանգըստացիր, տնից հեռու ինքնասպան կլինեմ, որպեսզի ոստիկանությունը քեզ չանհանգստացնի:

Ցնցուղի տակ ողբերգական մենախոսություն էր: Այդ ընթացքում Գորկան վերընթերցեց նամակը: Այդ թղթի կտորից սառնություն էր փչում: Տառասխալների բացակայությունը կասկածելի էր: Հաշվի առնելով, թե

* Ondo pasa (բասկ.), Քեզ՝ հաջողություն:

որքան վատ էր սովորում Ամայան՝ մի կերպ տեղափոխվելով դասարանից դասարան, վերջին տարին էլ մնաց նույն դասարանում: Մոր ինա՞ք էր: Հոտոտեց (թե ինչի՞ համար) ծրարը, հետո՝ նամակը:

Ռամունչոն, դեռ լրիվ չչորացած, դուրս եկավ լոգարանից: Նրա ակընհայտ ցավը ու նրա մի քիչ ծուռ, մերկ մարմինը՝ գունատ ու թավամազ, ծեր ու դժբախտ երեխայի տեսք էր տալիս նրան: Փորի վրա պառկեց մերսման սեղանի վրա ու փորձեց նորից լաց լինել, բայց նրա արցունքները երևի թե արդեն սպառվել էին: Այդ պատճառով վերսկսեց հենց այսօր տնից հեռու մի վայրում ինքնասպան լինելու պատմությունը: Այդ ընթացքում Գորկան յուղոտած ու ջերմ ձեռքերով մերսում էր նրա պարանոցը, ուսերը, մեջքը:

— Իմաստ չունի դատարան դիմելը: Ես վստահ եմ, որ մեր դատական օրենքը նման դեպքերը չի դասակարգում որպես անչափահասի առևանգում: Նրա մայրը կարող է ասել, որ այլ երկրում է ապրում աշխատանքի պատճառով ու որ աղջկաս տեսնելու հարցում երբեք չի խոչընդոտել ինձ: Ընդամենը պետք կլինի տասնհինգ օրը մեկ օդանավ նստել:

— Որքան գիտեմ, դեռ պարզ չէ, թե որտեղ են ապրում:

— Ավելին մտածելու կարիք չկա: Այդ կեղտոտ աղվեսը որքան կարողացել է, հեռու է փախել Ամայայի հետ: Չե՞ս հասկանում, որ նրա քամակը մրմռում էր, որ ես լավ հարաբերություններ ունեմ աղջկաս հետ:

— Իսկ եթե նամակը խաբելու համա՞ր է:

— Գրո՛ղը տանի, Գորկա՛, գրողական երևակայությանդ զոռ մի՛ տուր: Սա հո վեպ չէ՞: Սա դաժան իրականություն է:

Գորկան խնդրեց, որ շրջվի: Մերսեց նրա կուրծքն ու փորը, հատուկ դանդաղեց առնանդամի շուրջ, մինչև այն գրգռեց, շարունակեց ազդրերով ու նրան ասաց.

— Եթե վեպ գրեի, կպատկերացնեի, թե բաժանված կինը ձևացնում է, որ աղջկա հետ արտագաղթում է Միացյալ Նահանգներ: Նրա ընկերուհին կամ գործընկերուհին կհամաձայներ նախապես գրած նամակն ուղարկել Չիկագոյի կամ Սան Ֆրանցիսկոյի փոստային բաժանմունքից: Մայր ու աղջիկ կգնային, օրինակ, Մադրիդ՝ ապրելու, քանի որ Ամայային ու նախկին կնոջդ շատ է դուր գալիս մայրաքաղաքը: Իսկ հոր համար մի տեսակ հոգեկան խանգարում ունենալուց ու բուժում ստանալուց հետո համապատասխան մի վերջաբան կմտածեի: Բայց ոչ ինքնասպանություն: Դա չափազանց պարզունակ կլիներ: Գուցե գլխավոր կերպարը գնար

Ամերիկա ու այնտեղ աղջկան փնտրելու ընթացքում մի կնոջ հանդիպեր՝ Սամանթային՝ մարմնավաճառի ու թմրամոլի անցյալ ունեցող գայթակղիչ մի շիկահերի:

— Ի՞նչն է խանգարում՝ գրես:

— Տեսնենք: Հիմա զբաղված եմ:

Ու շարունակեց մերսումը, ջերմ ու մխիթարական խոսքերը, նույնիսկ Ռամունչոյի արագ ու սակավաշիթ սերմնաժայթքումից հետո:

Արաբական սրահ

Նշեցին «Գրան Հոտել Դոմինեի» ռեստորանում դեմ դիմաց նստած: Մտերմիկ, սիրահարված՝ նստած էին մի սեղանի մոտ, որ կպած էր մեծ պատուհանին՝ Գուգենհայմ թանգարանի մոխրափայլփլուն կորերի վրա բացվող տեսարանով: Հուլիսն էր, հաճելի եղանակ, երկինքը՝ կապույտ: Ռամունչոն ակնհայտորեն ոգևորված էր, գլուխը՝ տաքացած:

Ի՞նչ էին նշում: Նախորդ օրը խորհրդարանի ստորին պալատը հաստատել էր մի օրենք, որը հնարավոր էր դարձնում միևնույն սեռի անձանց ամուսնությունը: Դա Իսպանիայի սոցիալիստական կուսակցության գործն էր, մի կուսակցության, որից Ռամունչոն վաղուց ի վեր զզվում էր: Բայց հետագայում նա մտածելու է դրա շուրջ, ու հնարավոր է, որ հաջորդ ընտրությունների ժամանակ իր ձայնը նրանց տա՝ զուտ երախտագիտությունից, թեև նման դիրքորոշումը նախադեպ չի դարձնի:

Գորկան որևէ ընտրության չի մասնակցում: Ոչ երախտագիտություն է հայտնում, ոչ սատարում է, ոչ էլ պատժում: Ոչ թե մերժում է այն ամենը, ինչից կուսակցության ու քաղաքականության հոտ է գալիս, այլ պարզապես անտարբեր է: Գորկան լուրջ դեմքով բարձրացրեց գավաթն ու խմեց Ռամունչոյի (որն այդ առավոտ առանձնապես շատախոս էր) կենացը: Ռամունչոն ուրախ տոնով ասաց.

— Մի օր ամուսնության առաջարկություն եմ անելու քեզ:

— Զգացվում է, որ խմել ես:

— Լուրջ եմ ասում, bihotza*. դեռ շուտ է: Նախ՝ մի հատ տեսնենք, թե ինչ զարգացում կունենա այս նոր օրենքը:

— Ոնց որ թե ողջամտության նշույլներ ունես: Տե՛ս՝ չկորցնես:

— Ա՛յ մարդ, պետք է զգույշ լինենք: Ձո կարծիքով՝ այս հասարակությունը, որ դեռ վերջերս ամեն երեկո աղոթում էր, արդեն պատրա՞ստ է այս կարգի մեծ փոփոխության: Բայց տե՛ս, «ո՛վ դու պատանի, որ ոտքի

* Bihotza (բասկ.), սիրտ:

ելար, երբ լուսավորվեց բարձունքը Կոնկերոյի»*, նայում եմ քեզ էլի ու էլի, ու գիտե՞ս՝ ինչ եմ մտածում:

— Դե՛, ասա՛, ո՛վ պոետ:

— Դու պետք է արժանի լինես ամուսնությանը, սիրո՛ւնս:

— Դու՝ նույնպես, թե չէ ինչի տեղ ես դրել քեզ:

Քաղաքապետ Ասկունան հինգուկես տարի անց նրանց ամուսնացրեց քաղաքապետարանի Արաբական սրահում: Թեև արարողության ժամանակ նա կանգնած էր ճերմակ, հրաշալի վարդափնջի հետևում, նրա դեմքին երևում էին մահացու հիվանդության առաջին նշանները: Նրա ճառը՝ տեղ-տեղ հուզիչ, տեղ-տեղ զվարճալի, համեմված էր գրական մեջբերումներով և սքանչելի պատմություններով, որոնց մի մասը կապված էր Ռամունչոյի (որին րոպեն մեկ Ռամոն էր անվանում) հետ իրենց վաղեմի բարեկամությանը: Հրավիրվածները մի բոլ ծիծաղեցին, ու վերջում էլ բոլորի աչքերը խոնավացան: Նորապսակները փողկապով ու բաց մոխրագույն կոստյումներով էին: Մեկը նկատեց՝ երկվորյակների նման: Ամաչկոտությամբ համակված Գորկայի պատճառով համբույրը տափակ մի բան ստացվեց: Այն աստիճանի, որ Ասկունան աննրբանկատ ճարտասանությամբ իր բեմից պահանջեց կրկնել համբույրը, բայց այս անգամ՝ ավելի բնական: Ներկաներն ուրախ բացականչություններով արձագանքեցին քաղաքապետի առաջարկին, և նորապսակները գրկախառնված ենթարկվեցին ժողովրդի (մոտ քսան ընկերների և գործընկերների) պահանջին ու այնպիսի անբռնազբոս կրքով հպեցին շուրթերը, որ ծափերի ու սուլոցների մի ամբողջ ալիք առաջացրին:

Շնորհավորանքներ, գրկախառնություն, ոգևորիչ բառեր հնչեցին, և, իհարկե, մի կատակասեր ընկեր մաղթեց շատ զավակներ ունենալ: Բոլորը տեսան, որ նրանք ոչ միայն սիրահարված են, այլև սիրով են ամուսնանում: Բայց եթե այդ օրը Արաբական սրահում ներկաներից որևէ մեկը մտածում էր, թե այդ արարողությունը հապճեպ ու խենթ որոշման հետևանք է, բեմադրված խաղ, մի խոսքով՝ պարզապես քմահաճույք է, սխալվում էր: Ռամունչոն ու Գորկան ուրիշ զույգերի նման ամուսնացան գործնական պատճառներով: Նաև (երևի թե դա էր հիմնական պատճառը)

* Իսպանացի պոետ Լուիս Սերնուդայի (1902-1963) «Անդալուսցի պատանի» բանաստեղծությունից:

Ռամունչոյի վախի պատճառով, քանի որ մեկ տարի առաջ նրա մի երիկամը հեռացրել էին:

Նոր էր քառասունը բոլորել, երբ պարզվեց՝ ուռուցք ունի: Այս պահի դրությամբ ամեն ինչ լավ է: Ազատվել է հեմոդիալիզից, բայց չի բավարարում իրեն: Բժիշկներին՝ նույնպես: Մետաստազներ կա՞ն: Մինչև հիմա ոչ մի հատ չեն հայտնաբերել: Երբ երկուսով մենակ էին հիվանդասենյակում, որոշեցին օրինականացնել իրենց կապը: Գորկան սկզբում դիմադրում էր (ինչի՞ն է պետք, ի՞նչ է փոխելու), բայց հետո ընդունեց ընկերոջ փաստարկները՝ ժառանգությունը, ունեցվածքը՝ սկսած բնակարանից, որը երկուսիս անունով կձևակերպենք հենց ինձ դուրս գրեն, եթե, իհարկե, դուրս գրեն, ու նաև, օրինակ, թոշակը, որը, հիշի՛ր, դու ես ստանալու, երբ ես չլինեմ: Հիվանդանոցից տուն գալով՝ Ռամունչոն շտապեց իր կտակը գրել Գորկայի օգտին: Ու նրանից խոստում կորզեց, որ եթե հարկ լինի, նա Ամայային ֆինանսապես կօգնի:

Տասը տարուց ավելի էր, որ Ռամունչոն իր աղջկանից լուր չուներ: Գալիս-անցնում էին կարևոր օրերը՝ աղջկա ծննդյան օրը, սուրբծննդյան տոները:

— Տեսնես, ինձ հիշո՞ւմ է:

Ոչ մի բան չկար՝ ո՛չ նամակ, ո՛չ էլ բացիկ: Ռամունչոն տառապում էր: Հաճախ մենակ կամ Գորկայի օգնությամբ փորձում էր Ամայայի որևէ հետք գտնել համացանցի որոնող ծրագրերով: Փնտրտուքն ընդլայնելով՝ խորանում էր սոցիալական ցանցերի մեջ: Ու, համենայնդեպս, ներառում էր նրա մոր անունը: Մեկի կամ մյուսի անունը պետք է որ արտացոլված լիներ որևէ գրանցամատյանում, անդամների կամ մասնակիցների ցանկում, մի լուսանկարի տակ, դե՛, չգիտեմ, որևէ տեղ պիտի գրված լիներ: Գուցե իրենց անունն՞ն էին փոխել:

Յուրաքանչյուր տարի աղջկա ծննդյան օրվա, նաև Աստվածհայտնության օրվա կապակցությամբ համապատասխան նվեր էր առնում արդեն երիտասարդ կին դարձած Ամայայի համար: Գույնզգույն ժապավեններով ու շնորհավորական բացիկներով փաթեթները դիզում էր հագուստի պահարանի ներսում, ու դրանք հետզհետե ավելի շատ տեղ էին գրավում: Երբ Գորկան նրան հարցնում էր, թե ինչի համար ես դա անում, ինչու ես քեզ տանջում, նա պատասխանում էր.

— Սիրտս վկայում է, որ մի օր հետ է գալու: Ու ես ուզում եմ՝ իմանա, որ ոչ մի վայրկյան չեմ մոռացել իրեն: Խոստացի՛ր, որ եթե մեռնեմ, բոլոր նվերները կտաս նրան:

Գորկայի պարագայում ամուսնության ծրագրերը մի անխուսափելի խոչընդոտի էին բախվում. իր ծնողների հանգամանքը: Ոչ թե այն պատճառով, որ համաձայն չեն լինի իր ամուսնությանը (դրա վերաբերյալ համարյա կասկած չուներ), այլ թե որքան կամաչեն (գուցե ինքն էր այդպես պատկերացնում), երբ հարսանիքի մասին լուրն ավանով մեկ տարածվի:

Հազարից մեկ էր մոր հետ հեռախոսով խոսում: Ավելի հաճախ սկսեցին խոսել քրոջ կաթվածից հետո: Միշտ նույն թեմաներն էին՝ Արանչա, եղանակ, սնունդ, հարևաններ: Գրեթե ոչ մի բան չէին խոսում Խոշե Մարիի ու երբեք՝ Գորկայի անձնական կյանքի մասին: Գորկան լավագույն դեպքում առօրյա բաներ էր պատմում հաղորդավարի իր աշխատանքի մասին: Խոշիանը, որը ալերգիա ուներ հեռախոսից, հազվագյուտ էր վերցնում լսափողը: Սահմանափակվում էր Միրենին հանձնարարելով, որ իր անունից բարևի Գորկային ու հարցնի՝ երբ է գալու իրենց տեսության:

Գորկան վախենում էր, որ ծնողները կարող են վիճատվել ու մի անդուր տեսարան սարքել գլխին, ու դա էր նրան խանգարում ամուսնության որոշում կայացնել: Մյուս կողմից էլ՝ դե՛, ինչ ասեմ, Ռամունչոն էլ առանձնապես չէր պնդում: Ամուսնությունը ռոմանտիկ ու գեղեցիկ մի բան էր, բայց շտապ չէր: Հետո Ռամունչոն հիվանդացավ: Հետագայում Գորկային ասացին, որ գրեթե մահվան եզրին էր: Այդ ժամանակ էր, որ իրավիճակը փոխվեց: Ու ընդունելով իր վախկոտությունը, որը երբեք էլ չէր ժխտել, Գորկան որոշեց իր ընտանիքից գաղտնի ամուսնանալ: Ռամունչոն դեմ էր:

— Նույնիսկ խոսք լինել չի կարող: Եթե չես ուզում, նրանց մի՛ հրավիրիր: Մայրս էլ, որի գլուխը լավ չէ, իրեն հայելում չի ճանաչում, չի գալու: Բայց քո aita-ներին գոնե պիտի տեղեկացնես:

— Գիտես, չէ՞, որ չեմ համարձակվում:

— Լսի՛ր: Մտքովդ հանկարծ չանցնի կյանքդ ստի ու լռության վրա կառուցել: Ամենավատ տարբերակն է, վստահեցնում եմ:

— Ամեն դեպքում նրանց գրավոր կտեղեկացնեմ, ի՞նչ կասես: Հեռախոսով դժվար կլինի. ոտքերս կդողան:

Ու նրանց մի նամակ գրեց, որը թեև հակիրճ էր, բայց մի ամբողջ հետմիջօրե խլեց: Ռամունչոն այն կարդաց ընթրիքի ժամանակ, ճշգրտումներ մտցրեց և իր համաձայնությունը տվեց, որ ուղարկի: Հարսանիքից մեկ շաբաթ առաջ Գորկան վերջապես նամակն ուղարկելու խիզախություն ունեցավ: Պատասխան չստացավ: Որոշեց, որ ծնողներն

իրենից խորշում են, սարսափից ու ամոթից չեն համարձակվում քթները տնից դուրս հանել:

Նորապսակները քաղաքապետարանի աստիճաններով իջան՝ ձեռք ձեռքի տված ու երջանիկ: Այնտեղ նրանց սպասում էր բրնձի հայտնի անձրևը: Կողքով անցնող որոշ մեքենաներ ազդանշան էին տալիս: Հյուրերը «համբո՜ւյր, համբո՜ւյր» էին բղավում ու այնպիսի աղմուկ բարձրացրին, որ անցորդների ուշադրությունը գրավեցին: Էլի գրկախառնություններ ու մաղթանքներ եղան: Գորկայի մազերի մեջ բազմաթիվ բրնձահատիկներ էին մնացել: Երբ նրան ասացին, փորձեց ձեռքով թափ տալ: Հանկարծ հայացքն ընկավ գետաբերանին, ու տեսավ նրանց: Ո՞ւմ: Բա էլ ո՞վ պիտի լիներ: Իր ընտանիքն էր՝ դիմացի մայթին կանգնած: Երեքն էլ մի տեսակ հեռու էին, ասես վախենում էին խառնվել հյուրերին: Մայրը՝ անվասայլակով զբաղված, հայրը՝ իր բերետով և ուսերին էլ սվիտեր գցած:

Ռամունչոն նկատեց նրա տարօրինակ ռեակցիան ու դեմքի կտրուկ փոփոխությունը, որը նշանակում էր, որ իր ամուսնու հետ տարօրինակ բան է կատարվում:

— Ի՞նչ է եղել:

— Այստեղ են:

Ու գնացին նրանց ընդառաջ: Ռամունչոն՝ կենսուրախ, իսկ Գորկան՝ ապշած, լուրջ, լարված:

— Եկե՞լ եք:

Միրենը երգեցիկ ձայնով, գլխի կտրուկ շարժումով ասաց.

— Ինչպե՞ս չպիտի գայինք մեր տղայի հարսանիքին: Սա՞ է իմ փեսան:

Զուգված-զարդարված մի տիկին դարձած, վիզը ձգելով՝ այտը համբույրի համար տրամադրեց: Միրենը հազիվ հասցրեց Ռամունչոյին բասկերեն մի հարց տալ՝ դե՛, իհարկե, փորձելու համար՝ լեզուն գիտի՞:

Ռամոնն այնպես պատասխանեց, որ բոլորը ծիծաղեցին՝ բացի սգավորի դեմքով կանգնած Գորկայից: Բայց ինչո՞ւ: Բանն այն է՝ անկեղծորեն կարեկցում էր հորը, որը անկապ ժպիտով, լացակումած հայացքով կանգնած էր բազրիքի մոտ՝ ինչ անելն ու ասելը չիմանալով, ասես հանկարծ հայտնված լիներ մեկ ուրիշ մոլորակում:

Միրենը արագ ու վճռական միջամտեց.

— Լսի՛ր, Խոշիա՛ն, հո չե՞ս պատրաստվում լաց լինել:

Իսկ Արանչան, իր անվասայլակի մեջ նստած, անձայն ուրախության մի շատրվան էր:

Օդում թափահարում էր իր առողջ ձեռքը, լուռ բղավում էր, քահ-քահ ծիծաղում էր աչքերով: Ռամունչոն կռացավ ու ջերմորեն համբուրեց նրա ճակատը: Հետո լայն գրկեց նրա հորը՝ մեջքին թփթփացնելով: Խոշիանի ճակատը համարյա իր փողկապի բարձրության էր: Եվ վերջում էլեգանտ փեսան շատ տեղին ու շատ նուրբ նշեց, որ ուրախ է այդքան գեղեցիկ զոքանչ ունենալու համար: Միրենը, հաճույքից մեջն ուռչելով, ասաց.

— Տղայովս թիթիզանալու եմ Բիլբաո եկել: Նույնիսկ ինձ համար կոշիկ եմ գնել:

Բոլորը միանգամից նայեցին նրա ոտքերին:

Տաքսիները եկան: Հենց տեղ հասան, Միրենը Գորկայի թևն ընկավ, ու այդպես մտան ռեստորան: Այսինքն՝ ընտանիքը բանկետին մասնակցե՞ց: Դա ի՞նչ հարց էր: Բնականաբար:

Նորապսակները կողք կողքի նստեցին: Ռամունչոյի աջից դատարկ աթոռ կար. իր աղջկա համար էր: Իր հակիրճ ճառի ընթացքում այդպես բացատրեց հյուրերին: Գորկայի ձախից Միրենը նստեց, որը մի պահ սեղանի տակ տղային փոխանցեց հազար եվրոյով մի ծրար՝ հարսանիքի մեր նվերը: Ասաց, որ դրանից պակաս, իր կարծիքով, քիչ կլիներ: Ու նրա ականջին շշնջաց.

— Խոշե Մարին ինձ խնդրեց, որ իր բարեմաղթանքները փոխանցեմ քեզ:

Անտեսանելի որդին

Կիկեն շքեղ էր հագնված: Կոստյում, փողկապ և դրանց անհամապատասխան սպորտային հայտնի ապրանքանիշի կոշիկ, որովհետև հենց այդպես է որոշել: Ներեայի փեշն էլ ծնկից մի տասը սանտիմետր բարձր էր: Վարդագույն շրթներկ, աչքերի ստվարափոշի, ցանցավոր զուգագուլպաներ ու բարձրակրունկ կոշիկներ: Նայում են՝ թո՛ղ նայեն: Անցյալ դարի ավարտին ծանոթանալուց ի վեր երկուսն էլ ըմբոշխնել են ազատ, սադրիչ, կարողության տեր մարդկանց ցուցադրական շարժուձևի այդ պահերը: Իրենց՝ իրար միախառնված օծանելիքների բույրը տարածվում էր շուրջբոլորը:

Բարև՛, մենք այսինչն ու այնինչն ենք, և իրենց բաժին հասավ առաստաղի գերանները պահող հենասյուների միջև տեղադրված սեղանը: Լավ տեղ էր՝ խոհանոցի ու մուտքի դռներից հեռու: Ի՞նչ օր էր: Շաբաթ՝ երեկոյան ինն անց կես: Կիկեն հետմիջօրեին տեղեկացել էր, որ իր՝ նախորդ տարվա ներդրումը իբր Լոդոսայի պղպեղով (ի՞բր. բանն այն է, որ դրանք ցածր գնով Պերուից են ներկրում) պահածոների արտադրության մեջ փաստորեն մսխվել է: Այդ մասին էր պատմում Ներեային՝ անթերի սարքված իր ատամնաշարը ցուցադրող ժպիտով քողարկած: Պորտուեչե ռեստորան-խորովածանոցը լիքն էր:

Կիկեն, մենյուն ձեռքը, պատմում էր, բացատրում.

— Այս տեղը մանկությանս օրերին ընդամենը մի գյուղակ էր: Տղերքով գալիս էինք՝ ձուկ որսալու ընկուզենու ճյուղերով ու սովորական ձկնորսական կարթերով: Որպես խայծ՝ փափուկ հաց: Բայց այստեղ չէին որսում, որովհետև այս մակարդակի վրա գետը լրիվ սպիտակ էր, բայց, իրոք, լրիվ սպիտակ, երդվում եմ, կաթի ֆերմայի պատճառով: Այդ պատճառով ավելի վերև էինք գնում՝ Սիլվետիների երկաթի թափոններից էլ այնկողմ: Նույնիսկ իշխան էինք բռնում:

Ներեան նախուտեստներ առաջարկեց, ու Կիկեն, որ նրան չէր լսում, համաձայնեց՝ առանց ուշադրություն դարձնելու, թե ինչ է ասում: Երբ տե-

սավ սեղանին եղերդակով, սաղմոնով ամանն ու txangurro*-ով սկուտեղը, զարմացած հարցրեց.

— Դո՞ւ ես պատվիրել այս էշությունը:

Ներեան պատասխանեց, թե՝ այո՛, սիրելի՛ս, նա էլ ասաց, որ կբավարարվի սնկի ձվածեղով**: Կարմիր գինու շիշը՝ 45 եվրո, հետ ուղարկեց: Գլուխը տարուբերելով՝ հոտոտեց գավաթը, փակ աչքերով փորձեց գինին ու արհամարհական շարժումով բացասական որոշում կայացրեց: Մեկ այլ շիշ բերեցին: Հոտ քաշելու ու փորձելու պատմությունը կրկնվեց, ու վերջիվերջո ընդունեց գինին, բայց գինարվեստի դաս տվեց մատուցողուհուն՝ շեշտված վերամբարձ տառակերությամբ: Ներեայի հետ գավաթ գավաթի խփեցին: Ներեան ասաց.

— Մտքերդ կարդում եմ: Առաջին գինին լավն էր:

— Իհարկե: Նույնիսկ՝ սրանից էլ լավը: Բայց պետք է հեռավորություն պահել սպասավորներից՝ իշխող պահվածք որդեգրելով: Հիմա խոհանոցի աշխատողները կվախենան: Մեծ ջանք կթափեն: Նորմալ է: Ամբողջ կյանքը դրան են նվիրել: Ու հիմա ինչ էլ խնդրենք՝ լավագույնը կբերեն:

— Կամ ափսեի մեջ կթքեն: Թանձրուկի մեջ մի քիչ փրփուր եմ տեսնում: Չեմ փորձի:

— Եղերդակն ի՞նչ համ ունի:

— Եղերդակի: Իսկ սո՞ւնկը:

— Մնկի:

Շուտով ամուսնության 12-րդ տարին էին բոլորելու՝ անթիվ-անհամար կռիվ-զատումներից ու կրքոտ հաշտեցումներից հետո, բայց դեռ տարբեր բնակարաններում էին ապրում: Սա իմ տարածքն է, սա՝ քոնը: Քո աղբն այստեղ է, իմը՝ այնտեղ: Ու ծամելով, թանձրուկը հացին քսելով՝ խոսում էին այդ թեմայով, Կիկեն՝ մի տեսակ ուրախ հիացմունքով մի հայտնագործության պատճառով, որին հանկարծակի էր հանգել: Ինչի՞ մասին էր խոսքը: Հաշվարկել էր, որ ամուսնության առաջին վեց տարիների ընթացքում ինքն էր անընդհատ խնդրում, որ Ներեան գա՝ իր մոտ ապրելու (մի կտուրի տակ, մի անկողնում՝ դեռ ոչինչ, բայց ընդամենը մի լոգասենյակ կար), մինչդեռ դրանից հետո և մինչև հիմա՝ ևս վեց տարի (մի ամիս այսկողմ-այնկողմ), արդեն Ներեան էր խնդրողը, իսկ նա՝ մերժողը:

---

* Txangurro, ծովախեցգետին:

** Մնկով ձվածեղ, զեյթունի ձեթով պատրաստվող ձվածեղ՝ սնկով, սխտորով ու ազատքեղով:

— Դու գիտես, թե ինչու էի հրաժարվում: Մինչդեռ քո պատճառը չգիտեմ:

— Ինձ դուր էր գալիս քո գաղտնիքը: Պարզ է, որ չգիտեի՝ ինչ է, քանի որ գաղտնիք էր: Ինձ գրգռում էր այն գաղափարը, որ դու անձնական կյանքից կարևոր մի բան ես թաքցնում ինձնից, իսկ հետո հայտնվում եմ ես, քեզ դրանից զրկում եմ ու այն ոչնչացնում եմ: Ոնց որ բռնաբարելուց հետո վարտիքդ գողանան: Եվ տե՛ս, եթե ուշադիր նայենք, կորցնողը ես եմ: Հիասթափվողը ես եմ սիրած խաղալիքը կոտրած երեխայի պես: Ահա ինչու չեմ ուզում՝ միասին ապրենք: Ես մեծագույն ցավ կապրեմ, եթե քեզ այնքան լավ ճանաչեմ, որ մեր միջև տեղ չմնա թեկուզ փոքր մի անակընկալի համար:

Գաղտնազերծման պատճառը Բիչո՛րիի աննրբանկատությունն էր: Իսկ հետո գլխի ընկնելով, որ սխալ է գործել, իրեն միամիտի տեղ դրեց.

— Ո՞նց, բա դու չգիտեի՞ր:

Ներեան, Իկացան գոգին, նստած էր բազմոցին՝ Կիկեի կողքին: Ստի վրա բռնված մարդու վիճակում հայտնվեց: Բանն այն է, որ Կիկեին պատմել էր, թե հայրը թոքերի քաղցկեղից էր մահացել: Այդ պատմությանը համապատասխան մանրամասներ էր ավելացնում՝ ավելի արժանահավատ դարձնելու նպատակով:

Երբ ճշմարտությունը քողազերծվեց, Ներեան արդեն առանձին ապրելու պատճառ չէր տեսնում: Իր տանը, որ նա my palace էր անվանում, aita-ի մասին հիշողությունների մի թանգարան էր սարքել և երբեք չէր ուզի, որ դա տեսնողներ լինեին, նաև չէր ուզի լսել նրանց հարցերը, կարծիքները, տեսնել ձեռքեր, որոնք դիպչում են, վերցնում են, կեղտաբծեր են թողնում: Հայրական հուշիրերի մի մասը ցուցադրված էր, մյուսը (մեծ մասը) քողարկված էր փակ դռների հետևում՝ թղթապանակների, արկղերի ու պահարանների մեջ. լուսանկարներ, կտրածոներ մամուլից («ETA-ն սպանում է այսինչ տեղի գործարարին», «ETA-ն իր վրա է վերցնում պատասխանատվությունը, Herri Batasuna-ից բացի՝ մյուս բոլոր կուսակցությունները դատապարտում են»), մահացածի հագուստը, նրան պատկանող իրեր: Ինչպե՞ս թե՝ ի՞նչ իրեր: Կակտուսի ձևով մի մոմ, որ ես էի նրան փոքր ժամանակ նվիրել, գրիչ, հեծանվավազքի ու մուս խաղացողի հաղթանշաններ, փամփուշտի երկու ծակով վերնաշապիկ, գրասենյակային պիտույքներ,

մի քանի զույգ կոշիկ՝ սպանության օրը կրածը ներառյալ: Մի խոսքով՝ Ներեայի համար շատ կարևոր իրեր, որոնց մի մասը մորից էր ստացել, մյուսները՝ Շավիերից: Եվ հոր ատրճանակը:

Եղբայրն էր որոշել շապիկը մաքրման տանել: Եթե Ներեային մնար, ապա այն կպահպաներ ինչպես կար՝ արյան հետքերով: Երբ Կիկեն իմացավ, թե ինչպես է մահացել իր աները, որին երբեք չէր տեսել, Ներեան, ճիշտն ասած, հուշիրերը նրանից թաքցնելու կարիք այլևս չուներ, բայց այդժամ էլ պարզվեց, որ Կիկեն չէր ուզում, որ գնդակահարվածի իրեր լինեն իր կողքին: Լուսանկարները մի կերպ կհանդուրժեր: Դրանից ավելին, իր կարծիքով, սահմռկեցուցիչ էր: Ներեան որևէ բանից հրաժարվելուն պատրաստ չէր: Միայն դա՛ էր պակաս: Այդ պատճառով յուրաքանչյուրը շարունակեց իր տանն ապրել: Հաճախ էին հանդիպում՝ համարյա ամեն օր, բայց ոչ միշտ՝ ըստ հանգամանքների:

Կիկեն, իր սովորության համաձայն, բջջայինը սեղանին էր դրել՝ ափսեի մոտ, ու րոպեն մեկ հայացք էր գցում վրան: Շաբաթ օր էր, բայց բիզնեսը դադար չունի: Ու մինչ ուտում էր խորոված ծովամթերքը (Ներեան՝ Պորտուեչե ձողաձուկը), WhatsApp-ի ծնգոցները նոր հաղորդագրության մասին տեղեկացրին: Բան չկար, Էլիսալդեի ուղարկած հիմարությունն էր՝ զվարճալի, կարճ տեսագրություն, թե ինչպես է գնդակը շարունակ մի ճաղատ ֆուտբոլիստի դեմքին խփվում: Նրանք գործընկերներ են, ընկերներ, իրար կատակներ են ուղարկում: Ներեան դրա վերաբերյալ իր մտքերն ուներ.

— Նա փորձում է հասկանալ՝ ազա՞տ ես, որ այս գիշեր միասին գնաք ֆռֆռալու:

— Եթե Մարիսայի հետ չվիճեիր, հիմա չորսով այստեղ կընթրեինք ու ծիծաղից կմեռնեինք:

— Մինչև հիմա չեմ հասկանում՝ ոնց դրա աչքերը չհանեցի:

Իրար հետ լավ էին: Ընկերուհիներ՞ էին: Դե՛, պետք չէ չափազանցնել: Նրանց հարաբերությունը հերիքում էր հաճելի զրույցներ վարելուն, ժամանակ առ ժամանակ միասին Բիլբաոյի Էլ Կորտե Ինգլես* գնալուն, նրընջասենյակին վերաբերող որոշ խոստովանություններ, առանց շատ ինտիմ մանրամասների, փոխանակելուն: Պատահական չէր, քանի որ նրանց և՛

* Էլ Կորտե Ինգլես (իսպ.), Իսպանիայի առևտրային կենտրոնների ցանց:

բնավորությունն էր տարբեր, և՛ ճաշակը: Ու մի գեղեցիկ օր Բիլբաոյի Էլ Կորտե Ինգլեսի սրճարանում Մարիսան, որն, ըստ Ներեայի, որոշ նախանձ պահեր ունի, մեկ էլ բռնեց ու ասաց.

— Չեմ ուզում խառնվել ինձ չվերաբերող հարցերին, բայց ես քո տեղը լինեի՝ ամուսնուդ մի քիչ ավելի ուշադրության կենտրոնում կպահեի: Միայն տեսնես՝ որքան շոռաչք է կանանց հանդեպ:

Սան Սեբաստիան միասին չվերադարձան: Ներեան ավտոբուսով գնաց, մյուսը՝ իր մեքենայով: Մինչև հիմա չեն հաշտվել:

— Փորձեց մեր ամուսնական հարաբերությունները փչացնել, ու դա չեմ ներում նրան:

— Ձողաձուկը համո՞վ է:

— Այո՛, բայց կարմիր գինով լավ չէ:

— Ուրեմն հիմա սպիտակը կպատվիրենք:

— Էլիսալդեն այդ ապուշին չի դավաճանո՞ւմ:

— Անդադար:

— Այն տիպիկ ապուշներից է, որոնք իրենց խելոքի տեղ են դնում:

Մատուցողուհին սպիտակ գինու շիշը բերեց: Հարցրեց՝ կուզե՞ն փորձել: Կիկեն նրան խնդրեց-հրամայեց, որ թողնի սեղանին: Եթե գինին վատը լինի, նրան կկանչեն:

— Իմ այն նվիրած ոսկե շղթան՝ գինկոյի տերևով, էլ չես կրո՞ւմ:

— Գետը նետեցի այն օրը, երբ զայրացել էի: Բայց մի՛ անհանգստացիր. դրա ընկնելու ճիշտ տեղը հիշում եմ, երբևէ կարող եմ գտնել:

— Քեզ մի ուրիշը կնվիրեմ: Չեմ ուզում, որ մրսես:

Առավոտյան միայնակ մնալով հյուրանոցի իր համարում՝ Ներեան շատ էր բարկացել, ավելի շատ՝ ինքն իր վրա, քան Կիկեի: Նախ՝ չի հանդուրժում, երբ Կիկեն, փողոց դուրս գալով, ձևեր է թափում՝ իբր իրենց չունեցած երեխայի ձեռքն է բռնում: Լոնդոնում այդ ժեստը կրկնեց: Մի անգամ չէ, շատ անգամ: Ներեան հյուրանոցի պատուհանից տեսավ, ու դա խթանեց նրա զայրույթը: Կիկեն՝ կոստյումով, էլեգանտ, գնում էր հանդիպման և փողոցն անցնելու պահին բռնեց իր անտեսանելի երեխայի թաթիկը: Ենթադրում էր, որ Ներեան հինգերորդ հարկի պատուհանից կնայի՞: Արդեն մորս եմ նմանվում, որը նայում է, թե ինչպես ենք գնում: Ու այդ փաստը Ներեային ավելի զայրացրեց:

Ներեան հրաժարվեց քաղցրից, Կիկեն՝ ոչ. վերցրեց ֆլան, սև սուրճ ու մի գավաթ պաչարան՝ ճշտելուց հետո, թե ունեն իր վաճառած տեսակը:

Տարիներ շարունակ Ներեան համոզված էր, որ Կիկեն ստերջ է: Ու բանն այն է, որ ինքն էլ էր այդպես կարծում: Մի օր Ներեան նրան համոզեց, որ սերմի հետազոտություն անի: Ինչի՞ համար: Դե՛, չգիտեմ, երբեմն սպերմատոզոիդները քիչ են կամ շատ շարժուն չեն, ու դրա պատճառով բան չի ստացվում: Հետազոտության արդյունքն ապացուցեց, որ Կիկեի սերմը լավ որակի է: Նշանակում է, որ Ներեան է անպտուղ, բայց նա պաշտպանվում էր՝ ասելով.

— Կամ էլ դու լավ նշանառու չես:

Դրանից հետո Ներեան այլևս չէր փնտրում սերմատուների՝ Կիկեին արտաքնապես նման տղամարդկանց: Որովհետև եթե շիկահեր կամ սևամորթ երեխա ունենաս, ինչպե՞ս ես դա բացատրելու: Մտածում էր կկվի ձու ապահովել ամուսնուն, բայց չստացվեց: Ու դա էլ այն դեպքում, որ թեկնածուներն առատ էին:

Դրանից որոշ ժամանակ անց Կիկեն սկսել էր անտեսանելի մի երեխայի (որին չունի ու երբեք չի ունենա, առնվազն ինձ հետ) ձեռքը բռնել: Գիտեր էլ, որ այդ հիվանդագին խաղը (երեսով տալու ձև՞ը) ինձ նյարդայնացնում է: Կիկեն տառապում էր, Ներեան տառապում էր ու բարկանում, որովհետև Կիկեն տառապում էր:

— Հաշիվը, խնդրե՛մ:

Ներեան ավելի արագ գտնվեց կրեդիտ քարտը մատուցողուհուն տալու պահին:

Կիկեի հետ ուղարկած գինու արժեքի չափով թեյավճար թողեց: Ռեստորանից դուրս, նախքան մեքենա նստելը, գրկախառնվեցին՝ մթնշաղին աստղազարդ երկնքի տակ համբուրվելով ու իրար շոյելով:

— Վա՛յ քո, առանց վարտիքի ես:

— Որ չգողանաս:

— Շատ եմ հավանում ցայլքիդ հոտը: Հենց այստեղ քեզ կունենայի:

— Տեղը լավը չէ: Այստեղ գետը սպիտակ է դառնում:

— Դա նախկինում էր:

— Կնախընտրեի, որ գնայինք քո ասած մետաղական թափոններից վերև:

Ու քաղաք վերադառնալու փոխարեն՝ Իգարայի մայրուղով գնացին դեպի լեռնային վայրերը, դեպի տարածվող, ծառաշատ մթությունը:

118

Անկոչ այցելուն

Ներեան եղբոր միջոցով տեղեկացել էր, որ Բիչո՛րին ու Արանչան գրեթե ամեն առավոտ հանդիպում են ավանի հրապարակում: Շավիերը նույնպես նրան տեղյակ էր պահել, թե որ օրերին ու ժամերին էր նրա վաղեմի ընկերուհին ֆիզիոթերապիա ստանում հիվանդանոցում: Տեղեկությունը այցելության քողարկված առաջարկ էր պարունակում: Եվ Ներեան անսպասելի պոռթկումով որոշեց այցելել Արանչային: Բայց իմացիր՝ երբեմն նրան ցածրահասակ էկվադորցի մի կին է ուղեկցում, երբեմն՝ մայրը:

— Ինձ կկծի՞, թե ի՞նչ:

— Զգուշացնում եմ, մարդ ես, գուցե չես ուզում նրան հանդիպել:

Որքա՞ն ժամանակ է, որ իրար չէին տեսել: Ո՜ւֆ, այն ժամանակներից, երբ Ներեան իրավաբանականում էր սովորում Սան Սեբաստիանում: Սպասի՛ր՝ մտածեմ: Քսան տարուց էլ ավելի՝ նախքան Սարագոսա ուսանելու գնալս: Այն ժամանակ Արանչան արդեն ամուսնացած էր, շարունակում էր կոշիկի խանութում վաճառողուհի աշխատել ու իր ամուսնու հետ Ռենտերիայում էր ապրում: Նրան կորցրել էր տեսադաշտից, անցել էր մի տասնամյակ, հետո՝ երկրորդը, ու արդեն երրորդն էին թևակոխել: Իրենց վերջին հանդիպումից շատ տարիներ անց (ե՞րբ՝ չեմ էլ հիշում) Արանչան կաթված էր ստացել: Ներեան այդ մասին նույնպես Շավիերից էր իմացել:

— Ճիշտն ասած, վրադ կարող է ազդել նրա վիճակը:

— Էլ ինձ մի՛ պաշտպանիր, եղբայրի՛կ: Հետը խոսել հնարավո՞ր է:

— Ամեն ինչ հասկանում է: Հաղորդակցվելու համար iPad է օգտագործում: Նրան հարց տաս՝ պատասխանը կգրի: Գիտեմ, որ լոգոպեդի է այցելում, բայց չգիտեմ՝ արդեն ի վիճակի՞ է հասկանալի ձևով բառեր արտաբերել:

Մի չորեքշաբթի հետմիջօրե Ներեան հիվանդանոց գնաց: Հետևելով Շավիերի տված ցուցումներին՝ ներկայացավ այն անձին, որը պետք է ուղեկցեր: Արանչան միջանցքում մենակ էր, անվասայլակին նստած՝ ֆիզիոթերապևտին էր սպասում:

Հուզմունքից քիչ էր մնում՝ ընկնեի: Կարճ սանրվածք՝ բավականաչափ սպիտակ մազերով, մի ձեռքը սեղմված՝ անգործածելի, լարված պարա-

նոց, դիմագծերը՝ թեթևակի, բայց նկատելի դեֆորմացված: Մի քանի վայրկյան տևեց, մինչև Ներեան, ի դեմս այդ հիվանդ կնոջ, ճանաչեց իր դեռահասության ընկերուհուն: Ու առաջին միտքը, որ եկավ՝ թո՛ւ, կյանքը որքան դաժան է: Երկրորդ միտքը՝ հուսամ, որ չի բարկանա, որ չէի զգուշացրել այցիս մասին:

— Արանչա՛, գեղեցկուհի՛ս, տե՛ս՝ ո՛վ է եկել քեզ տեսության:

Մի ակնթարթ տևեց մինչև զարմանք-կասկածով թեքեց գլուխը: Ու հանկարծ մեկեն նրա ամբողջ դեմքը ձևափոխվեց՝ վերածվելով ուրախության բուռն ծամածռության: Ողջույնի համբույրը ստանալուց հետո երկարեց աջ ձեռքը՝ դիպչելու, բռնելու (ի՞նչ տխուր է), արդեն հետ քաշվող ընկերուհու հետ գրկախառնվելու համար: Արանչան փորձում էր ինչ-որ բաներ արձակել, բայց չէր ստացվում, ու այնքան էր ջանում արտահայտվել, որ մի պահ թվաց, թե խեղդվում է:

— Ձեզ մենակ թողնեմ. հաստատ շատ բան ունեք՝ իրար պատմելու:

Ներեան ջերմորեն, կարեկցելո՞վ ընկերուհու այտը շոյեց ափի հակառակ կողմով: Ու Արանչան վրան նայեց ճակատագրին հնազանդ հայացքով՝ կարծես ասելով. դե՛, տեսնում ես, սա է վիճակս: Կամ էլ՝ նման մի բան:

Հանդիպման դրամատիկ բնույթը մեղմելու համար Ներեան նախընտրեց շատախոսել և բացատրել, որ ամենը եղբորից էր իմացել, որն իր հերթին էր իմացել և այլն: Ու անկեղծանալով եզրակացրեց.

— Ինչ անասունություն է, չէ՞:

Արանչան, որն անվասայլակի ու իր կողքի արանքից արդեն հանել էր iPad-ը, գլխով անելով համաձայնեց ընկերուհու հետ: Գոգին տեղավորելով սարքը՝ գրեց. «Շատ ուրախ եմ քեզ տեսնելու համար»:

— Ես էլ: Ինչպե՞ս ես:

«Վատ»:

— Ի՞նչ հիմար հարց եմ տալիս: Կներես:

Ու տեսնելով, որ Արանչան ծիծաղում է, Ներեան նրան կրկնակեց, այն տարբերությամբ, որ իր շուրթերը սեղմված չէին:

«Ես բաժանվել եմ»:

Արանչայի սփրթնած, բարակ ցուցամատը վարժ թռչկոտում էր տառերի վրայով: Երբ ավարտում էր նախադասությունը, Ներեան նայում էր էկրանին ու կարդում էր.

«Նախկին ամուսինս լքել է ինձ: Թքա՛ծ»:

Արանչային հարցրեց՝ քանի երեխա ունի: Պատասխանը գիտեր, Շավիերն ասել էր, բայց Ներեան դժվար էր ընտելանում այս խոսք-գիր զրույցին ու հուսալով, որ կամաց-կամաց կստացվի ավելի բնական ձևով խոսել, առօրյա, ապուշ հարցեր էր տալիս:

Արանչան երկու մատը ցույց տվեց հաղթանակի ժեստով:

«Նրանք իմ կյանքի ամենամեծ սերն են: Հոր հետ են ապրում, բայց հաճախ ենք տեսնում իրար: Գուցե քիչ հետո գան, կծանոթացնեմ»:

Շարունակելով տառ առ տառ, բայց արագ գրել՝ նշեց նրանց տարիքը, անունները՝ նրանց նկարագրելով որպես խելացի, գեղեցիկ ու ջերմ երեխաների:

«Ինձ են քաշել»:

— Նրանցով հպարտանում ես, չէ՞:

Գլխի կտրուկ շարժումով, գոհ հաստատեց: Ու Ներեայի կյանքի մասին հարցրեց: Ներեան հակիրճ ասաց՝ ամուսնացած եմ, երեխա չունեմ, աշխատում եմ ֆինանսների նախարարությունում: Ու կռանալով էկրանին նորից նայելու համար՝ չկարողացավ խուսափել հուզմունքի զգացումից, երբ կարդաց, որ իր ընկերուհին իրեն շատ գեղեցիկ է համարում:

— Այդպես չէ: Տարիներն իմ դեպքում էլ են զգացվում:

«Aita-ներիս հետ եմ ապրում: Մամայիդ հաճախ եմ տեսնում»:

— Գիտեմ, պատմել է ինձ:

«Ցավում եմ, որ հիվանդ է»:

Ա՛, ուրեմն արդեն գիտի:

— Շավիերն ու ես աշխատում ենք նրա կողքին շատ լինել: Ավելի շատ՝ Շավիերը: Դե՛, գիտես, ամբողջ կյանքում մամայի տղան է եղել:

«Բիչո՛րիի ամենամեծ ցավն է, որ կմեռնի ու այդպես էլ չի լսի եղբորս խնդրած ներումը ձեր ընտանիքից»:

— Այո՛, մայրս այդ մխիթարանքի կարիքն ունի:

«Անընդհատ ճնշում եմ Խոշե Մարիին: Անդադար»:

— Նրան գրո՞ւմ ես:

Գլխով արեց՝ մի քանի անգամ իրար միացնելով ու հեռացնելով մատները, որպեսզի բացատրի, որ նրան շատ նամակներ, հաղորդագրություններ կամ նման բաներ է ուղարկում:

«Եղբայրս վախենում է»:

— Վախենո՞ւմ է:

«Որ Բիչո՛րին իր նամակը, որի մեջ ներողություն է խնդրում, մամուլին կտա: Ու որ իր ընկերները կիմանան»:

Միջանցքի խորքում ճերմակատամ ժպիտով, ոչ պակաս ճերմակ ու անբիծ խալաթով մի երիտասարդ հայտնվեց. ֆիզիոթերապևտն էր, որն ակնհայտ համակրանքով ասաց.

— Հը՞, գեղեցկուհի՛, այցելո՞ւ ունես:

Արանչան շտապեց ինչ-որ մի բան գրել iPad-ի էկրանին: Ֆիզիոթերապևտն անմիջապես համաձայնեց: Հետո Ներեային ասաց, որ այնտեղ սպասի, մինչև կանչեն: Ներեան մենակ մնաց միջանցքում: Տեսնես՝ սրանք ի՞նչ են մտածել: Դեմքներից դատելով՝ հաստատ մի ուրախ բան է: Քիչ անց նրան ներս կանչեցին: Մտավ վերականգնման սրահ: Նրա համար անակընկալ էին պատրաստել. Արանչան ֆիզիոթերապևտների օգնությամբ ոտքի էր կանգնել: Եվ անվստահ, լարված կարողացավ քայլ անել՝ առանց օգնության, չբռնվելով, մի կարճ քայլ՝ երերալով, վա՜յ, Աստված, բա որ ընկնի, հետո՝ ևս մի քայլ: Չորս քայլ: Բոլոր կողմերից նրան քաջալերեցին ու ծափահարեցին: Ներեան՝ նույնպես: Արցունքները հազիվ զսպեց:

Րոպեներ անց հրաժեշտ տվեց Արանչային՝ խոստանալով, որ էլի կգա՝ նրան տեսնելու: Ներեան քայլում էր միջանցքով իր մտածմունքների, ավելի շուտ՝ իր մտահոգությունների մեջ խորասուզված: Մոր մասին, իհարկե: Ու երբ հասել էր աստիճաններին՝ ուրախ եմ, որ եկար, մոտիկից մի ձայն նրան բարևեց կտրուկ ու չոր ողջույնով, որին նա մեքենայաբար պատասխանեց՝ չնայելով, թե ով է: Գլուխը շրջեց ու տեսավ միջանցքով հեռացող Միրենի մեջքը: Միրե՞նն էր: Նա էր, իհարկե, ու նրան ուղեկցում էին իրենից երկու գլուխ բարձր մի տղա ու շատ գեղեցիկ, երկար մազերը պոչ կապած մի աղջիկ: Իրենց տարիքի ու Միրենին ուղեկցելու պատճառով Ներեան գլխի ընկավ, որ (պարզից էլ պարզ էր) Արանչայի երեխաներն էին:

Համբերություն

Երեկոյան Ներեան զանգահարեց եղբորը: Խոստացել էր: Առանց շատ մանրամասնելու՝ պատմեց, թե ինչպես անցավ հետմիջօրեին իր հանդիպումը Արանչայի հետ: Չմոռացավ պատմել նաև, որ Միրենը բարևել էր:

— Չի կարող պատահել: Վստա՞հ ես:

— Կողքիս ուրիշ մեկը չկար, այնպես որ ինձ էր բարևում: Արագ «ողջույն» ասաց: Ժամանակ չթողեց նույնիսկ՝ դեմքին նայեմ:

Ու վերջում էլ անցավ իրեն ամենից շատ անհանգստացնող թեմային:

— Արանչան տեղյակ է ama-ի հիվանդության մասին:

— Ես չգիտեմ՝ նրան ինչ է հայտնի, քանի որ ես դեռ ama-ին չեմ հայտնել ախտորոշումը:

— Ama-ն հիմար չէ: Գիտի, որ ուռուցքաբանի մոտ ֆարինգիտի համար չեն գնում: Հաստատ կռահում է՝ ինչ խնդիր ունի, նույնիսկ եթե դրա անվանումը չգիտի:

— Շնորհակալ կլինեի, եթե իր մոտ գնայիր ու հող նախապատրաստեիր: Ես այս պահին շատ անտրամադիր եմ:

— Հանգի՛ստ եղիր: Վաղը ևեթ կգնամ:

— Այո՛, եթե կարելի է: Ու եթե փորձի հետդ վիճել, չվիճես:

Մոր համար մի ծաղկեփունջ գնեց: Հետո հասկացավ, որ հաջող գաղափար չէր: Հանկարծ գլխի ընկավ, բայց դե՛, մոր տուն գնալիս ծաղկավաճառի կողքով էր անցնում ու մտածեց՝ ծաղիկներ նվիրեմ: Բիչո՛րին, հենց ծաղիկները տեսավ, վրա բերեց.

— Լսի՛ր, ես դեռ չեմ մեռել:

Համբերությո՛ւն: Նախքան մտնելը՝ աստիճանահարթակին Ներեան հարցրեց դռան առջևի գորգիկի մասին, որը Լոնդոնից էր բերված:

— Էլի ես հարցրել դրա մասին: Երևի հասկացար, որ դուր չէր գալիս ինձ:

— Երբեք չէիր ասել:

— Աղջի՛կս, կան բաներ, որ ասելու կարիք չկա:

Համբերությո՛ւն, համբերությո՛ւն: Հիշում էր եղբոր թախանձագին խընդրանքը. ոչ մի դեպքում չվիճել:

— Ամուսինդ հետդ չէ՞: Նորից բաժանվե՞լ եք:

— Չէ՛, զբաղված է:

— Նա միշտ է զբաղված:

— Շատ գործ ունի, ama: Վատ մի՛ մտածիր:

Բիչո՛րին ծաղիկները ջրով կժի մեջ դրեց: Ասաց, որ լավ հոտ ունեն, ու շաբաթ օրը, եթե դեմ չես, դրանք Չատոյին կտանեմ: Ներեան մեղմորեն գանգատվեց, որ հյուրասենյակում ցուրտ է: Դա ասելով՝ նայեց դեպի պատշգամբի դուռը, որը կրնկի բաց էր:

— Բաց եմ թողել, որ եթե կատուն վերադառնա, մտնի: Արդեն մտածում եմ, որ մի վատ բան է եղել դրան:

— Երեկ գնացի՝ Արանչային տեսնելու:

— Այսօր առավոտյան պատմեց:

— Ա՛հ, լավ… Իրականում եկել էի՝ քեզ պատմելու, բայց եթե արդեն ամենը գիտես…

— Իր կողմից՝ այո՛: Քոնը՝ ո՛չ:

Համբերությո՛ւն: Նստեցին: Ներեան՝ մի կողմից, մայրը՝ սեղանիկի մյուս կողմից, որի վրա դրել էր ծաղիկներով կուժն ու երկու գավաթ լուծվող, առանց կոֆեինի սուրճ: Ներեան բացատրեց, թե ինչ նպատակով էր գնացել հիվանդանոց, և ինչպես անցավ իր հանդիպումը Արանչայի հետ: Բիչո՛րին նրան րոպեն մեկ ընդհատում էր.

— Այո՛, գիտեմ:

Դա Ներեային ավելի ու ավելի էր նյարդայնացնում, բայց համբերությո՛ւն: Խոր շո՛ւնչ քաշիր, աղջի՛կ: Հանգստություն և համբերություն: Մորն ուրիշ մի բան պատմեց: Ու Բիչո՛րին՝ էլի.

— Այո՛, գիտեմ: Հիմա էլ ինձ կասես, որ Արանչան վեց քայլ է արել առանց օգնության:

— Չորս:

— Դե՛, ինձ ասաց՝ վեց:

— Գնալիս նրա մորը տեսա: Այդ մասին է՞լ է պատմել Արանչան:

— Ո՛չ, այդ մասին՝ ոչ:

Պատշգամբի դռնից գիշերային զովություն էր գալիս, որին խառնվում էր ծովի խոնավության հոտը, որը հետզհետե ավելի ուժեղ էր զգացվում: Լո՞ւյս: Քիչ էր: Բիչո՛րիի համար բավարար էր: Իսկ Ներեան հանգիստ չէր. տան ներսում ասես քարանձավի մեջ լիներ: Եթե իմանայի՝ հետս լապտեր

կբերեի: Պատի ժամացույցն ալարկոտ, սովորական ազդարարեց իրիկվա ութը: Մթնոլորտը տարօրինակ էր, մի տեսակ ճնշող տխրություն էր տիրում, լուսավորությունն էլ վատն էր: Մի յուրահատուկ հոտ, որը թեև տհաճ չէիր անվանի, բայց հաճելի լինելուց էլ հեռու էր, կպած էր կահկարասինեերին, տունը զարդարող իրերին: Երբ մորս գրկում եմ, նույն այդ հոտն առնում եմ նրա հագուստից ու մարմնից:

— Կանգնեցի՞ր՝ հետը խոսելու համար:

— Չէ հա՛: Երբ գլխի ընկա, թե ով էր ինձ ողջունողը, իր թոռների հետ անցել էր կողքովս:

— Ա՛, իր թոռների հե՞տ էր: Ինչպիսի՞ն էին:

— Տղան՝ բարձրահասակ, աղջիկը՝ գեղեցիկ: Բայց միայն թիկունքից տեսա: Քեզ ասեմ, որ Արանչան մի քանի բան է պատմել, որի մասին ինձ չէիր ասել:

— Ի՞նչ:

— Ասաց, որ ցավում էր քո հիվանդության համար: Ես զարմացա, որ նա ինձնից ավելին գիտի:

— Կարծում եմ՝ դու տեղյակ ես: Որովհետև, որքան գիտեմ, երբեմն-երբեմն խոսում ես եղբորդ հետ: Բայց Շավիերը չգիտի, որ նախորդ օրը զանգահարել եմ Առուաբառենային: Բժիշկն ինձ ասաց, որ ամեն ինչի մասին խոսել է Շավիերի հետ, և որ նա ամեն ինչ կբացատրի: Դե՛, դա նախորդ շաբաթվա ուրբաթ օրն էր, ու ես դեռ սպասում եմ: Այդ ընթացքում եղբայրդ ամեն օր զանգահարել է ինձ: Քո կարծիքով՝ ինձ որևէ բան ասե՞լ է անալիզների արդյունքների մասին: Ոչ մի բառ: Ու հիմա էլ դու ես գալիս ծաղկեփնջով: Լավ թիմ եք կազմել:

— Ծաղիկները զուտ ջերմ զգացմունքների արտահայտություն են, ուրիշ՝ ոչ մի բան:

— Եթե ընտանիքի շրջանակում իրար հետ չխոսենք, նորմալ է, որ մեկը չիմանա՝ մյուսների հետ ինչ է տեղի ունենում:

— Դե՛, հիմա հետս խոսելու հնարավորություն ունես: Ու շնորհակալ կլինեի, եթե լույսը վառեիր: Կողքիդ նստած՝ դեմքդ չեմ տեսնում:

— Եթե լույսը վառեմ, մոծակները ներս կլցվեն:

Համբերությո՛ւն: Ներեան օձի պես հարցրեց մորը՝ հիշո՞ւմ է, թե ուր է դրել իր սուրճի բաժակը: Ու ձևացրեց, թե փնտրում է՝ ձեռքով խարխափելու շարժում անելով սեղանի վրայով: Դե՛, հերիք եղավ. կարող ես լույսը վա-

ռել, բայց նախ պատշգամբի դուռը փակի՛ր: Ժամանակ չկորցնելով՝ Ներեան մեծ հաճույքով արեց մոր ասածը: Նորից տեղը նստեց, ու Բիչո՛րին լուրջ, հաստատակամ նրան ասաց.

— Մինչև հիմա ապրել եմ, գուցե մի քիչ էլ ապրեմ: Գիտեմ, թե ինչ ունեմ մարմնիս մեջ: Քիմիաթերապիայով կամ նման տանջանքներով չեմ անցնելու: Ուզում եմ ամուսնուս միանալ, ժամը եկել է, ու ոչ ոք չի կարող արգելել ինձ: Ապրել ևս մեկ կամ երկու տարի՞: Հանուն ինչի՞: Ինձ շատ վաղուց են սպանել: Այդ ժամանակներից ի վեր ուրվականի պես մի բան եմ եղել: Լավագույն դեպքում՝ կես մարդ: Զուտ որովհետև մարդուց մի բան պիտի մնա, որ նա զգա իրեն պատճառված ցավը, ու բացի դա՝ երկու երեխատեր մարդը պիտի դեռ ոտքի մնա:

Ներեան ընդհատելու շարժում արեց: Բիչո՛րին սաստեց:

— Հիմա ե՛ս եմ խոսում: Ժառանգության մասով չմտահոգվեք: Ամեն ինչ կարգի է բերված: Ձեր միջև խնդիր չի լինի: Յուրաքանչյուրը հիսուն տոկոս կստանա: Հիմա ուշադիր լսի՛ր՝ ինչ եմ ասելու: Քե՛զ եմ ասելու, որովհետև եղբորդ հետ հնարավոր չէ խոսել այս թեմայով: Միանգամից վիատվում է:

Ներեան նայում էր մոր հանդարտ, վճռական, լրջմիտ դեմքին: Ու ասես կյանքում առաջին անգամ տեսներ այդ դեմքը: Երբեմն հայացքը գցում էր ծաղիկների վրա: Հիմա դրանք իրոք թաղումնային էին թվում:

— Իմ կամքը հետևյալն է: Ինձ կթաղեք aita-ի հետ Պոլյոեում դագաղս նրա դագաղի վրա կդնեք: Այնտեղ ևս մեկի համար տեղ կա: Խնդրում եմ՝ ամուսնական մատանիս մատիս թողնեք, ճիշտ ինչպես հորդ մատին թողեցինք: Ու իմ ամուսնության սպիտակ կոշիկները կհագցնես ինձ: Իմ սենյակի պահարանի երևացող մասում են: Սա չեմ կարող եղբորդ հանձնարարել: Ո՛չ հասկանում է, ո՛չ էլ ունակ է այդ ամենն անելու: Դու կին ես, ամեն բան պետք չէ բացատրել քեզ: Խնդրում եմ՝ El Diario Vasco-ում երկու մահազդ դնեք, մեկը՝ իսպաներեն, մյուսը՝ բասկերեն: Եվ որ երկուսի մեջ էլ aita-ի մականունը լինի: Ինձ համար ոչ մի հոգեհանգիստ չանեք: Իսկ հիմա ամենակարևորը, թեև իրականում ամեն ինչն է կարևոր: Եթե մեկ-երկու կամ մի քանի տարուց քաղաքական վիճակը կայունանա, ու իսկապես ահաբեկչությանը վերջ դրվի, մեզ երկուսիս կտեղափոխեք ավանի գերեզմանոց: Սա է իմ խնդրանքը:

— Հիմա ինչ որ ասացիր, դրա գոնե մի մասը Շավիերին ասե՞լ ես:

— Ա՛խր, ո՞նց հետը խոսեմ, եթե արդեն ահագին ժամանակ է՝ չի գալիս ինձ մոտ: Հեռախոսով էլ այս թեմաներով չեմ ուզում խոսել:

— Քանի որ այսքան անկեղծ ենք խոսում, իմացել եմ՝ դու ձգտում ես, որ Միրենի տղան քեզնից ներողություն խնդրի, ու Արանչան էլ քեզ այդ հարցում ձեռք է մեկնել: Ճի՞շտ է:

— Բա, քո կարծիքով, ինչի՞ համար եմ դեռ ապրում: Ինձ պետք է այդ ներողությունը: Ուզում եմ ու պահանջում եմ: Ու մինչև այն չլսեմ, չեմ մեռնի:

— Հպարտությունդ քեզ ուտում է:

— Դա հպարտություն չէ: Երբ շիրմաքարը տեղադրեք, ու Չատոյի հետ մնամ մենակ, նրան կասեմ՝ այդ ապուշը ներողություն խնդրեց, հիմա արդեն կարող ենք խաղաղությամբ ննջել:

Աղջիկն Օնդառոայից

Բանտային պայմանները չկոտրեցին նրան: Ու պետք է ասել՝ դրանք ծանր էին: Որոշ քրեակատարողականներում ավելի շատ, քան մյուսներում: Տես-նենք՝ ապագայում ինչ է սպասում իրեն: Ամեն ինչ ավելի ու ավելի է բար-դանում: Տարիները, պարզ է, հենց այնպես չեն անցնում, թեև նա փոխվել է, իհարկե, բայց դա կտրուկ, չոր փայտի կոտրվելու պես չի եղել: Հիմնա-կան պատճառն ուրիշ էր: Ի՞նչ էր: Խոշե Մարին բարոյական իր անկման սկիզբը վերագրում է Օնդառոայից այն աղջկան: Համոզված է: Այդ պատ-մությունից ի վեր, որն այնքան գեղեցիկ սկսվեց, տխրությունը վրա տվեց փայտոջիլի նման, *եսձերփիրոջ*, որը, առանց քո իմացության, քեզ կրծում ու կրծում է ու վերջում կահույքդ ամբողջովին ծակոտած է լինում:

Տեսասենյակի ապակուց այն կողմ իր ծերուկը երբեմն արտասվել էր: Ցավում էր ծերուկի համար, բայց այդ ցավը, ո՞նց ասեմ, հորը կպած էր մնում, այսինքն՝ այցելության ավարտին ծերունկն այն իր հետ էր տանում: Իսկ Խոշե Մարին այն ժամանակ տեղ չուներ ցավերի համար: Ամեն ինչից վեր Բասկերի երկիրն էր: Իր զոհաբերության, իր կյանքի իմաստն էր, իր ամեն ինչն էր: Երբ նայում էր, թե ինչպես էր հայրը հեռանում, իր զգացածն ի՞նչ էր, դե՛, գրո՜ղը տանի, հիասթափություն: Ճիշտ բառը դա է: Փափուկ հայր ունենալու հիասթափությունը, այն միտքը, որ թույլ մարդ է ծնել քեզ:

— Ama, ավելի լավ է՝ չգա:

— Չմտածե՛ս, մյուս անգամ նրան տանը կթողնեմ:

Մենության մեջ Խոշե Մարին իր թուլության նշաններն էր փնտրում այն մարդու նման, որն իր մարմինն է ուսումնասիրում, շատ գիտեմ, լու կամ տիզ գտնելու համար: Հնարավոր այդ նշանները փնտրում էր՝ դրանք վերացնելու կատաղի ցանկությամբ. հանկարծ չլինի, որ ինձ վարակեն հոգեբանական մի ախտով: Ու եթե բակում, հեռուստացույցի սենյակում կամ որևէ տեղ թուլացած, խոնավացած աչքերով մի ընկերոջ էր տես-նում, բարկանում էր նրա վրա, կարգապահություն էր պահանջում՝ մենք շարունակում ենք զինվոր մնալ, *ձերփիրոջ*: Թուլանա՞լ, թո՞ւյլ լինել: Ավելի շուտ թևը կտրել կտար:

Հացադուլները նույնպես նրան չկոտրեցին: Ու իմանաս՝ դրանք գարշելի են: Բայց դե՛, եթե պետք է հացադուլ արվի, ուրեմն պիտի արվի: Լինի կազմակերպության անդամի՝ ծանր հիվանդությամբ տառապող բանտարկյալի ազատ արձակելու համար, թե բանտային քաղաքականության դեմ բողոքելու համար (որովհետև ETA-ն այդպիսի հրաման է տվել իր ցանցի միջոցով), թե որևէ այլ պատճառով: Ու հսկում էր, որ իր ընկերները հարկ եղածից ավելի հաճախ չմոտենան բանտային կրպակին: Կամ էլ arruntak*-ներին չուղարկեն՝ շոկոլադ, տապակած կարտոֆիլ ու նման բաներ գնելու: Իր ամենաերկար հացադուլը քառասունմեկ օր տևեց. Ալբոլոտեում էր: Տոննայով ջուր էի խմում: Տասնինը կիլո նիհարել էր, ինչը սարսափելի վախեցրեց մորը հերթական այցի ժամանակ:

— Լսի՛ր, դու հո քաղցկեղ չունե՞ս:

Պատասխանեց, որ հրաշալի վիճակում է: Սուտ էր: Անընդհատ գլուխը պտտվում էր, ոչ մի բանի ուժ չուներ: Մորը չասաց նաև, որ արդեն օրեր շարունակ մեզը կարմիր է: Մտածում էր բժշկին ասել, բայց ի վերջո ոչ էլ ասաց՝ մի զզվանք ախտորոշում չլսելու համար: Հետո ժողով արեցին, բոլորը կողմ քվեարկեցին հացադուլը դադարեցնելուն, ու մի քանի օր անց մեզն արդեն նորմալ գույնի էր: Խոշե Մարին հացադուլներին է վերագրում իր մշտական փորկապությունն ու թութքը, որը նրան մինչև օրս պարբերաբար տանջում է:

Մեկուսացման երկարուձիգ ամիսները նույնպես նրան չկոտրեցին: Օրը քսան ժամ բանտախցում էր: Այն էլ ամռանը՝ դժոխային տապին: Բանտի անձնակազմն էլ հրամանները միայն բղավելով էր տալիս: Այցելությունները սահմանափակել էին. ութից տասը րոպե էին: Ու մեկ էլ գիշերային խուզարկությունների անասունությունը՝ երկու ժամը մեկ, կամ երբ ուզեին: Դրանց արանքում էլ դրսից խփում էին դռան մետաղին, որ *չքնի*: Մեկ էլ մտնում էին: Բղավոցներ, հանվի՛ր, գետնից հրումներ արա՛: Ու այդպես շարունակ: Բացի այդ՝ լուրջ հայհոյանքներ:

Երբ Միգել Անխել Բլանկոյի դեպքը** եղավ, երեք բանտապաններ Խոշե

---

* Arruntak (բասկ.), ETA բանտարկյալները այդպես էին անվանում մնացած՝ «սովորական» բանտարկյալներին:

** Միգել Անխել Բլանկո, Իսպանիայի ժողովրդական կուսակցության խորհրդի անդամ, որին 1997 թ. հուլիսի 10-ին առևանգել և երկու օր անց՝ հուլիս 12-ին, սպանել էր ETA-ն: Այդ սպանությունը շրջադարձային էր այն առումով, որ հասարակությանը ու հատկապես մամուլին մղեց ավելի ակտիվ ներգրավվել ETA-ի դեմ պայքարին:

Մարիին մի լավ ջարդ տվեցին: Իրականում խփողը մեկն էր: Մյուս երկուսն էլ իր թևերն էին բռնել: Դրանից երեք օր առաջ առևանգման լուրը հասել էր բանտ: Հենց Խոշե Մարին լսեց ETA-ի վերջնագիրը, ընկերոջն ասաց.

— Էդ տղու հերն անիծելու են:

Հուլիսի 12-ի երեկոյան ժամը յոթին հայտնի դարձավ, որ Բլանկոյի գըլխին երկու անգամ կրակել են: Նրան տարել էին Սան Սեբաստիանի հիվանդանոց: Կյանքի ու մահվան միջև էր: Առավոտվա վեցի լուրերով հայտնեցին նրա մահվան մասին: Մահով ավարտվող ահաբեկչություններ դեպքում բանտում մթնոլորտը լարվում էր: Աշխատողները սկսում էին վատ հայացքներ նետել: Դրանցից մեկը հարցրեց.

— Ի՞նչ է, գո՞հ եք:

Խոշե Մարին չէր հիշում, որ ժպտալիս լիներ: Գուցե և, բայց ոչ աշխատողի ենթադրած պատճառով: Գիշերը ձևացրին, թե խուզարկում են բանտախուցը, ու հարձակվեցին նրա վրա: Ո՛չ առաջին անգամ էր, ո՛չ վերջին:

— Սա՝ քո ծիծաղելու համար, քաքո՛տ ETA-ացի: Եթե քիչ է, ասա՛:

Տարիներ առաջ Պիկասենտում «սովորական» բանտարկյալների հետ կռվի մեջ քաշվեց: Ընթրիքի ժամանակ էր: Պատճա՞ռը: Մի հիմար բան: Իրականում բավական է, որ դեմքդ մի երկու հոպարների դուրը չգա: Ու թեև նրանց մեկ-երկու շարժումով, առանց դժվարության տապալեց, բայցևայնպես դրանցից մեկը հանկարծակիի բերելով աթոռով բացեց իր գլխի մաշկը: Արնահոսությունն ուժեղ էր, ութ կար դրեցին: Տնօրենը եկավ, և, խնդրեմ, մեկուսարան: Այդքան պատահարների մեջ՝ ևս մեկը: Ավելի վատ դեպքեր էլ են լինում, երբեմն մահով են ավարտվում: Ժամանակ անցավ, Խոշե Մարիին ուրիշ բանտ տեղափոխեցին, սկսեց ճաղատանալ ու մի օր հայելու մեջ տեսավ, որ իր մազերը նույնիսկ սպին չէին քողարկում:

Ինչևէ, շատ բաներ են պատահում: Դրանց մասին բանտից դուրս մեծ մասամբ չեն իմանում: Բացի այդ՝ մարդ նախընտրում է չհայտնել իր ընտանիքին՝ չանհանգստացնելու համար: Բայց մեկ է, Խոշե Մարին իրեն պինդ քարի պես է պահում՝ փոթորկի դիմաց անսասան կայմի նման, որովհետև, բացի ֆիզիկապես ուժեղ լինելուց, ներուժի մի ամբողջ պաշար ուներ, որն իրեն օգնում էր դիմանալ ատելությանը, բարոյազրկմանը ու գլխին եկած ամեն ինչին: Ի՞նչ ներուժի մասին է խոսքը: Նախևառաջ՝ իր խումբը: Խումբն ամենակարևորն է, ընկերների միավորում է: Մորն ասում էր.

— Նրանք իմ այստեղի ընտանիքն են:

Դրան գումարվում էր գաղափարական հավատարմությունը: Այստեղ անում էր այն, ինչին սովոր չէր ազատության մեջ: Ի՞նչ էր անում: Քաղաքականությամբ էր հետաքրքրվում: Նախկինում այդ ամբողջ խոսակցություններն ու տեսական բարբաջանքը, իր կարծիքով, միայն շեղում էին նպատակից: Ջինված պայքարն էր ամենակարճ ճանապարհը: Հիմա ուշադիր կարդում էր հոդվածները, թերթիկները կամ կազմակերպության հեղինակած տեքստերը: Չէր բավարարվում խիղճը հանգստացնելով, իբր շարունակում է պայքարի մաս կազմել, այլ նպատակադրված հավաքում էր պայքարը հիմնավորող համոզիչ փաստարկներ, որոնք ցույց կտային, որ այն արդար էր ու անհրաժեշտ: Ա՛, մեկ էլ, որ բասկ ժողովրդի մեծամասնությունը սատարում է իրենց: Այդ համոզմունքն էր նրան ուժեղ պահում: Ու հենց հնարավորություն էր լինում (օրինակ՝ շաբաթական ժողովների ընթացքում, երբ ETA-ի բանտարկյալները որոշում էին բանտի ներսում իրենց պահվածքի կանոնները՝ համաձայն դրսից ստացած ցուցումների), սկսում էր մենախոսել-քննարկել կրքոտ, մոլեռանդ, *եսդրանցփիրոջ*-ական ոճով:

Նա հատկապես ոգի էր առնում այն պահերին, երբ կարողանում էր բասկերեն խոսել որևէ ընկերոջ հետ կամ խմբում: Երբեմն երգում էին իրենց երկրի երգերը՝ Izarren Hautsa*, մի բան Լետեից, Լաբոայից կամ Բենիտո Լերչունդիից, ոչ շատ բարձրաձայն, որ խնդիր չունենան կամ կատակներ էին պատմում: Այդ դեպքերում Խոշե Մարիին ասես տեղափոխեին հեռու մի տեղ, որտեղ չկային հսկողներ, պատեր ու ճաղեր, որտեղ նա նույն կատակներն էր պատմում, իր ամենաբարձր ձայնով նույն երգերն էր երգում ու խմում էր սիդր, կալիմոչո կամ գարեջուր հին ժամանակների իր ընկերների հետ: Աչքերը փակ՝ զգում էր իր ավանի բույրն ու հողամասից հոր բերած պրասի, թարմ հնձած խոտի հոտը, որն իր համար ամենահաճելի բույրն էր: Արդեն Ալբոլոտեում, իսկ հետո ավելի շատ՝ Պուերտո I-ի մոդուլ 3-ում, նա սկսեց բանաստեղծություններ գրել: Դա նրան հաճելի զգացում էր պարգևում: Չէր համարձակվում դրանք որևէ մեկին ցույց տալ, որովհետև գիտեր, որ մի մեծ բան չէին, ու նաև ամոթխածության պատճառով: Գրելիս Գորկային էր հիշում, նրա սերը

* Izarren Hautsa (բասկ.), «Աստղափոշի»: Երգ, որի տեքստը գրել է Շավիեր Լետեն, երաժշտությունը՝ Միկել Լաբոան:

միայնության ու գրքերի հանդեպ: Տեսնես եղբայրը այդ պահերին ի՞նչ էր անում:

Կարոտի, խղճի խայթի ու պարտության մտքի դեմ Խոշե Մարիի ունեցած ամենաուժեղ հակաթույնն ատելությունն էր: Բանտում նրա մեջ ծնվել էր խոր ու դանդաղ մի զայրույթ: Քանի որ չէր կարող այն դուրս մղել, մշտավառ պահում էր կրծքում: Նույնիսկ այն օրերին, երբ զենք կար ձեռքին, նման բան չէր զգացել: Այն ժամանակ ուրիշ շարժառիթներ ուներ: Դե՛, չգիտեմ, պարտականության գիտակցումը: Պետք է մեկին մահապատժի՞ ենթարկել: Ուրեմն, երկու անգամ պետք է վրան կրակել. ով ուզում է՝ լինի: Իսկ հիմիկվանը մաքուր ու կարծր ատելություն էր՝ հետևանք իր ստացած հարվածների, նվաստացման և այն համոզմունքի, որ իր դեմ արվող ամեն ինչ իր ժողովրդի դեմ է արվում: Այդ ատելությունը Խոշե Մարիին զովացնում էր ամառային տապին և ջերմացնում էր ձմեռային գիշերները: Նրան պաշտպանում էր զգացմունքայնության հեղեղից: Եթե կարողանար հայացքով սպանել, չէր վարանի. բոլոր քրեակատարողական հիմնարկներում, որտեղ նստել էր, պատրաստ էր սպանություններ գործել:

Բայց այդ ժամանակ Այնչանեն հայտնվեց՝ Օնդառոայից մի աղջիկ՝ Խոշե Մարիից երկու տարի փոքր: Աշխատում էր մի ռեստորանում, որը կառավարում էին նրա ծնողները: Նախքան նրա հետ ծանոթանալը՝ Խոշե Մարին ուրիշ բասկ աղջիկներից էլ էր նամակներ ստացել: Բանն այն է, որ abertzale-ի ոգով herriko taberna*-ներում և այլ վայրերում ETA-ի բանտարկված անդամների լուսանկարներով պաստառներ էին փակցվում: Լուսանկարի կողքը սովորաբար գրված էր լինում բանտարկյալի անունը և բանտի անվանումը: Խոշե Մարին ու իր ընկերները որոշակի հաճախականությամբ նամակներ էին ստանում տարբեր աղջիկներից, որոնց համար նրանք իրական հերոսներ էին: Նամակները լի էին հիացմունքով ու համակրանքով, ոգի տալու և gudari-ներին մենակ չթողնելու ցանկությամբ: Նամակներ, որ ժամանակի ընթացքում գուցե վերածվեին սիրային ակընկալիքների:

Նախքան իրենց առաջին հանդիպումը՝ Խոշե Մարին ու Այնչանեն մի երկարուձիգ տարի նամակներ էին փոխանակում: Սկզբում բասկերեն

* Herriko taberna (բասկ.), բառացի՝ ժողովրդական խորտկարան: Զախ հայրենասերների հավաքատեղի:

էին իրար գրում: Անցան իսպաներենի, երբ պարզեցին, որ այդ ձևով նամակները ավելի արագ էին ստուգվում ու հասնում Խոշե Մարիին: Մի օր աղջիկը եկավ Պուերտո I-ի զրուցասենյակ՝ նրան տեսակցության: Գեր չէր, ավելի շուտ՝ խոշոր ու ուժեղ, գեղեցիկ էր, ծիծաղկոտ, բնական, մարդամոտ ու շատախոս: Աղջիկը պայմանավորվեց անձնական, ինտիմ հանդիպման մասին, հենց որ Խոշե Մարին, հաղթահարելով իր շշմած ու հաղթանդամ ամաչկոտությունը, նրան խոստովանեց, որ իրականում չի եղել, մինչև հիմա՝ երբեք, թեև իր ավանում ընկերուհի ուներ, բայց նա մոտ չթողնող էր:

— Թույլ չէր տալիս փողոցում համբուրել:

Մի պահ զրուցասենյակը լցվեց Այնչանեի հռհռոցով:

Խոշե Մարին թույլ տվեց, որ աղջիկը նրան ուղղորդի: Քնքշություն, շոյանք, սիրո շշունջներ ճաշակեց ու հաճույք ստացավ: Դա էր խնդիրը: Գիշերն անքուն էր, երբ հանկարծ կայծակի հարվածով հասկացավ (ասես բանտախցի առաստաղը վրան փլվեր), որ բաց է թողել կյանքի լավագույն մասը: Նախկինում էլ էր մտածել այդ մասին: Խնդիրն այն է, որ հիմա առաջին անգամ ֆիզիկապես զգաց, որ դեն է նետել իր երիտասարդությունը:

Օրեր անց՝ «Ատլետիկ»-«Ռեալ» ֆուտբոլային խաղը հեռուստացույցով դիտելիս, կենտրոնացավ ոչ թե գնդակի ու խաղային պահերի վրա, այլ այն մարդկանց, որոնք լցրել էին «Անոետա» մարզադաշտի տրիբունաները, իր նման բասկեր՝ icurriña-ներով, պաստառներով (որոշների վրա՝ պահանջ, որ բանտարկյալներին տեղափոխեն Բասկերի երկրի բանտերը), ու տեսնում էր՝ ինչպես են նրանք տեղից վեր թռչում, երգում ու ուրախանում: Նաև տեսավ այն պատկերները, որոնցով ուղեկցվում էր թերակղզում բարձր ջերմաստիճանի մասին լուրը. Լա Կոնչա լողափը լիքն էր լողազգեստով մարդկանցով՝ հանգստացող, գուցե և երջանիկ բասկերով, որոնք ճեմում էին, լողում ու արևի լոգանք ընդունում. սրբիչներին պառկած սիրահար զույգեր, մակույկներով տղաներ, երեխաներ, որ պլաստմասսե բահիկներով ավազն էին փորում: Ու առաջին անգամ բերանում, նույնիսկ բերանից էլ անդին՝ իր համոզմունքների ու մտորումների հենց կենտրոնում, դառը համ զգաց:

Այնչանեն ու նա ևս մի ինտիմ հանդիպում ունեցան՝ Խոշե Մարիի կըտրուկ ու փոքր-ինչ արագընթաց լիցքաթափումով: Ճիշտն ասած, այդ

սենյակը իր այդ մահճակալով, որի վրա, դե՛, արի՛ ու իմացի՛ր, թե որքան զույգեր են պառկել, նույնպես չէր տրամադրում ռոմանտիկ զգացումնե-րի: Խոշե Մարին, երբ մենակ մնաց, նորից նկատեց, որ մի բան իր ներ-սում ջանում էր տապալել իրեն, որ կայմը սկսում էր ճկվել, ու որ իր նավը վարընթաց գահավիժում էր: Որոշ ժամանակ անց Այնչանեն այլևս չգրեց: Լա՛վ, ենթադրում եմ, որ ուրիշին է հանդիպել: Նման բաներ պատահում են: Միակ խնդիրն այն է, որ բանտում դա ավելի մեծ ցավ է պատճառում:

Զրուցասենյակի խոսակցությունները

Սկզբում Միրենը ամիսը երկու-երեք անգամ էր գնում Խոշե Մարիին տեսակցության: Տնից դուրս էր գալիս վճռական, հերոսական, մարտական: Հասնելով բանտի շենք՝ է՛լ ավելի համարձակ էր դառնում, կիտում էր ունքերը, սեղմում ատամները: Բողոքում էր, որ զրուցասենյակը ոչ հիգիենիկ վիճակում է, վիճում էր, որ իր այցելության քառասուն րոպեն դեռ չի անցել, «դու»-ով դիմելով՝ ընդհարվում էր հերթապահ աշխատողների հետ՝ նրանց մեղադրելով «բասկ բանտարկյալներին» հեռավոր բանտերով մեկ ցրելու մեջ, կարծես թե համազգեստով ամեն ոք դրանում մեղավոր էր: Հարցնում էր, թե ինչո՞ւ են ընտանիքին ստիպում այդքան երկար ճամփա կտրել: Ի՞նչ տարբերություն՝ իր որդուն ա՛յս բանտում են պահում, թե՛ տնից ոչ հեռու մեկում, մեկ է, չորս պատի մեջ է, դրանք էլ ամեն տեղ նույնն են: Տիկի՛ն, եթե ցանկանում եք բողոք ներկայացնել, դիմե՛ք այսինչին: Ընդհարվում էին լեզու, առոգանություն, կամք, և մի օր Պիկասենտում մի դըժվար ճամփորդությունից հետո անիվը ծակվեց, ու քիչ էր մնում՝ մեռնեինք, նրան արգելեցին զրուցասենյակ մտնել: Կարճ ու կտրուկ: Կամ էլ Միրենն էր այդպես ավանում բոլորին ներկայացրել: Հետագայում հանգստացավ: Հանգստացա՞վ: Բնավ: Ուրեմն լիցքաթափվում էր ավտոբուսում՝ թե՛ գնալիս, թե՛ գալիս: Ժամանակի ընթացքում պոռթկումները պակասեցին: Ժամանակի հետ սովորեց կուլ տալ վրդովմունքը, հաշտվել:

Դեռ Խոշե Մարիի բանտարկության առաջին տարին չբոլորած՝ Միրենը սովորություն դարձրեց նրան ամիսը մեկ անգամ տեսնելը: Ու այդ ռիթմով էլ շարունակել է մինչև օրս քիչ բացառություններով, օրինակ՝ Արանչայի կաթվածի օրերին: Միրենը երեք ամիս շարունակ աղջկան էր խնամում ու այդ ընթացքում չկարողացավ այցելել Խոշե Մարիին: Իսկ Խոշիա՞նը: Կնոջը ուղեկցում է լավագույն դեպքում տարին երկու անգամ: Սկզբում ավելի հաճախ էր հետը գնում, բայց վիճում էին:

Խոշե Մարին և Միրենը միշտ բասկերեն էին խոսում, երբեմն, թեմայից կախված, առեղծվածային ձևով, շատ անգամ (ձայնագրվելուց վախենալով)՝ իրար գլխի գցելով:

— Խոսեչոն հեռացավ մեզնից: Թաղումը երկուշաբթի է: Դե՛, գիտես, եղածի պատճառով է: Արագընթաց քաղցկեղ էր:

— Իսկ մսի խանո՞ւթը:

— Խուանին է աշխատեցնում, ճարն ի՞նչ: Շատ մարդ է այնտեղից առնում: Որքան հնարավոր է, օգնում ենք:

Խոշե Մարին նկատում էր, որ Միրենը ջանում է նրա տրամադրությունը բարձրացնել: Նաև տեսնում էր մոր հպարտությունը, երբ ավանի նորությունները պատմելիս նշում էր այն մարդկանց անունները, որոնք իր մասին էին հարցնում ու բարևներ ուղարկում:

Մի անգամ, երբ տոներին եկել էր տղային տեսնելու, ասաց.

— Խորտկարանի մարդը քո լուսանկարն է խնդրել: Հիմա արդեն գիտեմ՝ ինչի համար է: Քաղաքապետարանի ճակատային պատի վրա եք դու և մյուսները: Այսքան մեծ չափի: Տակն էլ՝ անունները: Մեջտեղը համաներման պահանջով մի պաստառ կա: Ամեն առավոտ գնում եմ ու քեզ բարևում: Պատարագից որ դուրս եմ գալիս, առաջին տեսածս բանը ա՛յ այսքան մեծ քո դեմքն է: Մարդիկ ինձ փողոցում կանգնեցնում են: Ասում են, որ քեզ գըրկեմ: Ու եթե որևէ բանի կարիք ունենաս, չվարանես: Շուկայում ինձնից փող չեն ուզում վերցնել: Ես խնդրում եմ, որ վերցնեն: Երկար պնդում եմ, ի վերջո վերցնում են, որովհետև տեսնում են, որ ես առիթից օգտվող չեմ: Բայց եթե երկու կիլո կարտոֆիլ եմ առնում, չորսն են տալիս նույն փողով: Մեկ էլ տոպրակիս մեջ մի կապ հազար են դնում, թեև aita-ն էլ է բերում հողամասից: Զկնավաճառը՝ նույնը: Այն օրն ինձ բրամ ձուկ նվիրեց: Ա՛յ աղջիկ, այդպիսի բաներ մի՛ արա, ասացի: Ոչ էլ լսեց: Քաղաքապետարանի դիմաց հավաք էր: Բոլոր տղաները ձեզ համար երգում էին: Փշաքաղվեցի: Եվ թափառող երաժիշտները մեր տան տակ էլ են կանգնում՝ յուրաքանչյուրիս մի երգ երգելով: Ես Սուրբ Իգնասիոյին խնդրում եմ, որ քեզ պահապան լինի: Նրան շատ եմ աղոթում: Նրան ասում եմ՝ պահպանի՛ր զավակիս: Պատարագն ավարտվում է, ու մի որոշ ժամանակ եկեղեցում մենակ եմ մնում ու հետը խոսում: Մի քանի օր առաջ դոն Սերապիոն ինձ մոտեցավ: Ասում է, որ նույնպես աղոթում է քեզ համար ու իր օրհնանքը քեզ իմ միջոցով ուղարկեց:

— Մարդամեկն ինձ գրել է: Չախ abertzale-ները քաղաքապետարանում հող են նախապատրաստում, որ մի փողոց Խոկինի ու իմ անունով դնեն:

— Ա՛, չգիտեի:

— Հրաշալի կլիներ, բայց դժվար հաջողվի: Ասում են՝ քարոզչություն է:

— Պա՜հ, դրանք բան էլ չգիտեն:

Տարիներ ու կնճիռներ: Տարիներ ու ալեհեր մազեր և մազաթափություն: Միրենը մի օր հարցրեց.

— Լսի՛ր, դու լա՞վ ես ուտում:

— Տվածները ուտում եմ:

— Դե՛, ոնց որ մի քիչ նիհարել ես: Դու էն Պաչոյի մասին, որ քեզ հետ էր, բան գիտե՞ս:

— Վերջին լսածովս՝ Կասերես II-ում է:

— Դավաճանի մեկն է:

— Այսի՞նքն:

— Մյուսների հետ նամակ է ստորագրել:

— Հա՜, նա՞ էլ:

— Տաբատներն իջեցնում են, որ բաց թողնեն: Խուանին ինձ այն օրը հարցրեց՝ դու է՞լ ես հետները: Ասացի՝ գի՞ժ ես: Իմ Խոշե Մարի՞ն: Այնպիսի դեմքով նրան նայեցի, որ չեմ կարծում՝ նորից այդպիսի բան հարցնի:

Մի օր Միրենը եկավ ու տեսավ, որ տղան բարկացած է: Ի՞նչ է պատահել:

— Արանչան հեռախոսով պատմեց Գորկայի մասին:

— Բայց նրա մասին բան չգիտենք: Չե՞ս տեսնում, որ հետը քիչ ենք խոսում:

— Գյոթ է:

— Ինչի՞ց որոշեցիր:

Պատմեց մորը: Գորկան մի հոպարի հետ էր ապրում՝ ամենաճանր մեղքի մեջ մտնելով:

— Առաջին անգամ ուրախ եմ, որ բանտում եմ: Եթե դրսում լինեի, չգիտեմ՝ ինչ կանեի դրան:

— Դե՛, aita-ն որ իմանա, շատ կվրդովվի: Տղա՛ս, մեր ամեն ինչը ծուռ է ստացվում: Բախտներս չի բերում:

— Բա ավանի ժողովուրդն ի՞նչ կասի: Աստվա՜ծ իմ, նախընտրում եմ էստեղ լինել ու նրանց ասածը չլսել:

Խոշե Մարին բռունցք արած ձեռքերով, սեղմած ատամներով հայհոյում էր Գորկային.

— Փոքր ժամանակից արդեն մի տեսակ էր: Հիմա քեզ գյոթի մեր է սարքում, ինձ՝ գյոթի եղբայր, ու մեր ազգանունները գետնով է տալիս: Ես դեռ սպասում եմ, որ բարեհաճի ու գոնե մի անգամ գա՝ ինձ տեսնի:

Երբ անցողիկ հիվանդություններ, ընտանեկան որևէ խնդիր կամ անսպասելի մի բան Միրենին հնարավորություն չէին տալիս որդուն այցելել, ինչպե՞ս էր վարվում: Բաց թողած այցելությունը լրացնում էր հաջորդ ամիս՝ երկու անգամ գնալով բանտ: Նույնիսկ եթե քաջ գալով պիտի տեղ հասներ, գնում էր՝ զավակին տեսնելու: Իսկ եթե նրան Կանարյան կղզիներ տանեն, ինչպես բանտի պարետները քանիցս սպառնացել էին Խոշե Մարիին, ուրեմն կբռնեմ ու լողալ կսովորեմ. ինձնից հեռու չէ:

Տրտմությանը երբեք չտրվող այդ կինը՝ մշտապես ուժեղն ու պայքարողը, մի անգամ, այդքան տարիների ընթացքում մի անգամ կորցրեց իր երկաթե ինքնատիրապետումը: Աչքերին արցունք հայտնվեց, ձայնը դողաց: Ու Խոշե Մարին, նրան այդ վիճակում տեսնելով, մի տեսակ վախի-հուզմունքի զգացում ունեցավ ու չգիտեր՝ ինչ ասել: Երբեք չի մոռանա այդ այցը, որը մեջը վերջնականապես տապալեց մի բան, ինչ սկսել էր երերալ տարիներ առաջ, երբ Օնդառոայից այն աղջիկը նրան ծանոթացրեց ֆիզիկական սիրո հետ:

Արանչայի կաթվածից հետո էր: Միրենը հեռախոսով Խոշե Մարիին լուրջ ու կտրուկ հայտնեց ցավալի նորությունը, հետո երեք ամիս ինձ մոտ չէր գալիս, թեև ժամանակ առ ժամանակ զանգում էր ու ճշտապահորեն ուղարկում էր բանտային կրպակից գնումների համար նախատեսված գումարը:

— Այս պահին Կատալունիայի հիվանդանոցում է: Ավանի ժողովուրդն է կազմակերպել: Ինչ էլ պատմեմ՝ քիչ է: «Առանոյում» և բոլոր բարերում ու խանութներում Արանչայի համար դրամահավաք են սկսել: Այդ իմաստով մտահոգություն չունեմ:

— Բժիշկներն ի՞նչ են ասում:

— Փորձում են մեզ հույս տալ, բայց նրանց աչքերում տեսնում եմ ճշմարտությունը: Չեն կարծում, որ կմեռնի, բայց նա ո՛չ խոսելու է, ո՛չ քայլելու է, ո՛չ էլ մնացածը: Պատկերացրո՛ւ, որ զոնդով է սնվում, որն էստեղ՝ աղիների մեջ է մտցրած:

Այդ պահին էր, որ փղձկոցից ձայնը կտրվեց: Դեմքը ափերով փակեց: Ու մյուս կողմից Խոշե Մարին իր ձեռքերը ապակուն հպեց՝ չիմանալով ինչ ասել, բացի ama, ama-ից. նա, որ թեև նախկինը չէր, բայց դեռ հաղթանդամ էր, այս իրավիճակից ընկճված՝ անզոր երեխայի էր նման: Մի քանի րոպե անց Միրենը վերգտավ իրեն, ուրիշ թեմաների անցավ ու մինչև վերջ պահպանեց հանգստությունը:

Անցան տարիներ, այցելությունների շարաններ: Միրենը որդուն պատմեց.

— Նրան փոխանցեցի շնորհավորանքդ: Շատ գոհ էր: Ու շատ էլեգանտ: Գորշ կոստյումով ու փողկապով: Գուցե մյուս անգամ լուսանկարներ բերեմ: Քաղաքապետարանի դիմացն էինք սպասում: Քիչ անց դուրս եկան Գորկան ու իր ամուսինը: Անունը Ռամունչո է: Ես արդեն ընտելացել եմ նրան Գորկայի ամուսին անվանել: Լսի՛ր, ահագին լավ տիպ է: Մի աղջիկ ունի: Շատ տխուր պատմություն է: Մյուս անգամ քեզ կպատմեմ: Աստիճաններին նրանց լիքը ընկերներ էին սպասում ու սկսեցին նրանց վրա բրինձ շաղ տալ: Ես չգիտեի՝ Գորկան, մեզ տեսնելով, ինչ ռեակցիա կտար, բայց որ տեսան, սպասում ենք, անմիջապես մոտեցան: Իրականում մեզ չէին հրավիրել: Բայց դե՛, ինչ կարևոր է. այնտեղ էինք: Aita-ն կյանքս կերավ՝ ավանից դուրս գալուց սկսած: Մտածում էր, թե պիտի սաստեմ Գորկային: Ես էլ, թե՝ դե՛, լա՛վ, ձա՛յնդ կտրիր: Սելեստեի ամուսինն իր ֆուրգոնով մինչև Բիլբաո տարավ: Խեղճը փողոցում մինչև գիշերվա տասներկուսը սպասեց: Եթե նա չլիներ, չէինք կարողանալու Արանչային նստարանին նստեցնել: Միայն իմանաս, թե որքան դանդաղաշարժ է դարձել aita-ն: Ու քեզ ասեմ, որ ամեն ինչ շատ լավ անցավ: Ընթրիքը (քանի որ մնացինք ընթրելու) արտակարգ էր, ես էլ իմ նոր կոշիկներով Գորկայի մյուս կողմից էի նստած, ու լավ էր, շատ լավ: Ինչ ասեմ քեզ, տղա՛ս: Գորկան այնպիսին է, ինչպես որ կա: Խուանին ասում է, որ ավելի վատ բաներ էլ են լինում: Դրա մասին ահագին խոսել եմ սուրբ Իգնասիոյի հետ, ու նա ինձ ասում է, որ իրավացի եմ:

— Կարծում ես՝ եղբայրս երջանի՞կ է:

— Ես կասեի՝ այո:

— Ուրեմն՝ եղավ: Էլ դեսուդեն չընկնենք:

Քո բանտը, իմ բանտը

Իր խցում միայնակ՝ Խոշե Մարին՝ 43 տարեկան, որից տասնյոթը՝ բանտում, հրաժարվեց ETA-ից: Օրերից մի օր, նախքան պառկելը, հայացք գցեց քրոջ ուղարկած լուսանկարին ու ինքն իրեն ասաց՝ վե՛րջ: Հենց այդպես՝ պարզ ու հասարակ: Ոչ ոք չիմացավ, քանի որ ոչ մեկի չասաց իր որոշման մասին: Ոչ իր ընկերներին, ոչ էլ ընտանիքին: Ոչ մեկի: Իր որոշումը կայացրեց կազմակերպության՝ զինված պայքարից հրաժարվելու մասին հայտարարությունից կես տարի առաջ:

Դուրս եկավ ETA-ից ու լավ քնեց: Նախքան այդ մտքին գալն արդեն որոշ ժամանակ տատանվում էր իր համոզմունքների մեջ: Ամեն ինչ իր դերն էր խաղացել՝ միայնությունը, կասկածները, որոնք ամառային մոծակների պես անդադար պտտվում են շուրջդ, որոշ ահաբեկումներ, որոնց համար սովորաբար բերվող փաստարկներն ավելի ու ավելի դժվարությամբ էին որպես արդարացում ընկալվում, ընկերներ, որոնց սկզբում դասալիք էր համարում, իսկ հիմա նրանց հասկանում է ու նույնիսկ գաղտնի հիանում:

Վերջացա՛վ: Սրանից հետո՝ առանց ինձ: Ամիսներ անց նրա դեմքի ոչ մի մկանը չշարժվեց, երբ հեռուստացույցով տեսավ այդ երեք կնգուղավորներին հայտարարելիս, որ ETA-ն որոշել է զինված պայքարին վերջ տալ: Նրա համար մեկ չէր, պարզապես համարում էր, որ այդ խնդիրն այլևս իրենը չէ:

Ընկերը՝ շփոթված, շվարած, նրան հարցրեց, թե ինչ կարծիքի է:

— Բան չեմ կարծում: Ինչո՞ւ պիտի կարծիք ունենամ:

— Գրո՛ղը տանի, հոպա՛ր, համա՛ փոխվել ես:

Ուրիշ ժամանակ կվիճեր, երկարաշունչ ճառ կասեր: Հիմա խոսում էր զուտ այնքան, որքան պետք է, օրեր էին լինում՝ դա էլ չէր անում: Դարձել էր ինքնամփոփ, կասկածամիտ: Թվում էր, թե հանգիստ է, բայց տապալված ծառի հանգստություն էր: Նրա կանխամտածված միայնությունը ավելի շատ հոգնած մարդու միայնության էր վերածվում: Ու որքան հոգնած էր, նույնքան էլ թերահավատ էր: Նրա մտորումները կամաց-կամաց ձերբազատվում էին կարգախոսներից, արդարացում-փաստարկներից,

այդ ամբողջ խոսքային-զգացմունքային բլթոցներից, որոնցով երկարուձիգ տարիներ խլացրել էր իր ներքին ճշմարտությունը: Եվ ո՞րն էր այդ ճշմարտությունը: Դե՛, ո՞րը պիտի լինի: Այն, որ վնաս է տվել ու սպանել է: Հանուն ինչի՞: Պատասխանը դառնացնում էր. հանուն ոչ մի բանի: Այդքան արնահեղությունից հետո ո՛չ սոցիալիզմի հասան, ո՛չ անկախության: Ոչնչի՛: Խորապես համոզված էր, որ մի խարդավանքի զոհ է եղել:

Կարծում եմ, որ ama-ն, որ այդքան պաշտում է Իգնասիո Լոյոլացուն, գիտի, որ այդ սուրբը երիտասարդ ժամանակ նույնպես զենքի մարդ է եղել: Սպանե՞լ է: Խոշե Մարին տեղեկություններ փնտրեց բանտի գրադարանի հանրագիտարանում: Չգտավ, բայց հարյուր տոկոս համոզված էր, որ այդպես է եղել: Սպանել է, բայց սուրբ է: Սպանել է ու հիմա երևի երկնքում է:

Ինքը միտքը փոխել էր ո՛չ պատերազմի վերքերի, ո՛չ էլ բարեպաշտական գրքերի ընթերցումով: Իր կարծիքով՝ դրա համար բազմաթիվ պատճառներ կային: Կային նաև պատճառների պատճառներ, որոնք նոր պատճառների ու նոր վիճակին էին հանգեցրել: Նրա տեսադաշտը սահմանափակվում էր խցի չորս պատերով, նրան ճնշում էր այն ամենը, ինչ արել էր հանուն ինչ-որ սկզբունքների, որոնք ուրիշներն էին սահմանել, իսկ ինքը՝ ենթարկվող ու միամիտ, անվերապահորեն ընդունել էր:

Տարիներ շարունակ ինչ-որ հույսերից էր կախվում (առաջիկա ընտրություններ, Լիսաոռայի դաշնագիր*, բանակցություններ կառավարության հետ, կոնֆլիկտի միջազգայնացում), որոնք երբեք չէին իրականանում: Երբե՛ք: Այստեղ միակ իրականացող բանն այն է, որ մի տարին գլորվում է, և մյուսն է սկսվում: Ու մեկ էլ նրան հասավ այդ լուսանկարը, առաջինը, որի վրա քրոջն անվասայլակի վրա տեսավ, կացնի վերջին հարվածը, որը տապալեց ծառը: Կամ էլ՝ նավի կայմը, ի՞նչ տարբերություն:

Արանչան լուսանկարը սովորական փոստով էր ուղարկել: Դրա հետ հասած նամակում, որը, ինչպես միշտ, էկվադորցի խնամողի ձեռքով էր գրված, Խոշե Մարին կարդաց. «Խնդրում եմ ama-ին, որ լուսանկարս բերի քեզ: Ձև չկա: Ասում է, որ սպասեմ, որ վերջերս դու անտրամադիր ես: Բայց ուզում եմ, որ տեսնես՝ հիմա ինչպիսին եմ դարձել: Տեսքս թաքցնելն

* Բասկերի ազգային խնդիրները միասնական ուժերով լուծելու նպատակով Բասկերի ազգայնական կուսակցությունն ու մյուս կուսակցությունները, կառույցները, արհմիությունները Նավառայի նահանգի Լիսառա քաղաքում 1998 թ. սեպտեմբերի 12-ին ստորագրել են դաշնագիրը: ETA-ն սեպտեմբերի 16-ին հայտարարել է զինված պայքարը դադարեցնելու մասին:

իմաստ չունի: Եթե դրան նայենք, ես էլ լուսանկարով քեզ եմ տեսել՝ ճաղատ ու բավական մեծ կրկնակզակով, ու դու ավելի ու ավելի ես նմանվում aita-ին այն հիմարավուն տեսքով, որ հատուկ է մեր ընտանիքի տղամարդկանց»:

Խե՜ղճ քույրս: Նրան շարունակում էր սիրել նույնիսկ Ռենտերիայից այդ «իսպանահաչի» հետ ամուսնանալուց հետո, որն ի վերջո ստորաբար լքեց նրան: Ծրարից լուսանկարը հանեց ու ապշանքից ցնցվեց: Վա՜յ, վա՜յ, վա՜յ: Հիմա հասկանում էր, որ նախկինում ի վիճակի չէր հստակ պատկերացնել քրոջ հետ տեղի ունեցածը: Իր քո՜ւյրը: Նրա հաշմանդամության ու անվասայլակի ցավոտ, դաժան իրականությունը:

Լուսանկարվելու պահին Արանչան ուղիղ խցիկի մեջ էր նայել: Հիմա թըղթե քառակուսուց էր նայում եղբորը: Ժպիտից կկոցած նրա աչքերը Խոշե Մարիին ավելի փոքր թվացին, քան հիշում էր: Բերանը մի քիչ ծռված չէ՞: Ժպտալու չափազանցված այդ ձևը (ու խնդրում եմ՝ ինձ հեքիաթներ չպատմեք) հատուկ է դեմքի մկանները չկառավարող մարդկանց: Տարիքը զգացվում էր կնճիռներից ու շատ սպիտակած մազերից: Մազերը կտրել էին. ի՜նչ ափսոս: Կարճ սանրվածքը տգեղացնում էր նրան: iPad-ը գոգին էր, չգործող, սեղմված ձեռքին՝ խաղալիք-ապարանջան: Մի ոտքն էլ օրթոպեդիկ գուլպայի կամ սրնքակալի պես մի բանի մեջ էր. լավ չէր երևում:

Այդ նույն նամակում Արանչան նրան գրում էր. «Դու քո բանտում ես, ես էլ՝ իմ: Իմ բանտը իմ մարմինն է: Իմ բանտարկությունը ցմահ է: Դու մի օր դուրս կգաս քո բանտից: Ես՝ երբեք: Մի տարբերություն էլ կա մեր միջև: Դու քո արածի պատճառով ես այդտեղ: Իսկ ե՞ս ինչ եմ արել՝ այս պատիժը կրելու համար»: Այս վերջին նախադասությունը, ավելի շուտ՝ ամբողջ պարբերությունը, ուժեղ հարված էր Խոշե Մարիի սրտին: Այդ օրը դուրս չեկավ բակ: Խուսափեց զրույցներից: Ուտելիքին հազիվ կպավ: Գրադարան՝ վերջին ժամանակների իր ապաստանը, չգնաց: Պառկելուց քիչ առաջ նորից նայեց լուսանկարին ու որոշեց, առանց որևէ մեկին ասելու՝ ոչ ընկերներին, ոչ կազմակերպությանը, մոռանալ ETA-ն:

Մորն էլ չասաց:

Միրենը, քանի որ գիտեր, որ Արանչան լուսանկար է ուղարկել, իր հաջորդ այցելության ժամանակ նրան ուրիշներն էլ բերեց: Արանչան՝ ավանի հրապարակում, Արանչան՝ Սելեստեի հետ, aita-ի հետ՝ հողամասի մուտքի մոտ, Գորկայի ու նրա ամուսնու հետ՝ հարսանիքի օրը, տան խոհանոցում,

Արանչան՝ ոտքի վրա, ֆիզիոթերապիայի ընթացքում դողդողացող մի քանի քայլ գցելիս: Լուսանկարներ, որոնք Խոշե Մարին մեկնաբանեց հետաքրքրված ու անխռով՝ նույնիսկ կատակներ անելով: Դրանք իր վրա չազդեցին այնքան, որքան Արանչայի առաջին լուսանկարը:

Քույրը շարունակեց գրել, սակայն ոչ պարբերաբար: Կարող էր երկու նամակ ուղարկել մեկ շաբաթվա ընթացքում կամ էլ մեկ ամիս չգրել: Տարին ավարտվեց: Հունվարին Արանչան նրան ևս մի լուսանկար ուղարկեց: Հետևի կողմում գրված էր. «Լավագույն ընկերուհուս հետ»: Անվասայլակի հետևում Բիչո՛րին էր կանգնած՝ ոչ այդքան ուրախ, որքան Արանչան էր, բայցևայնպես ժպտադեմ: Խոշե Մարին դժվարությամբ ճանաչեց Չատոյի կնոջը, որը նիհարած էր ու ակնհայտորեն վատ վիճակում էր: Որքան ծեր է երևում: Ama-ից էլ շատ է ծերացել: Նամակում դրա բացատրությունը գտավ. «Բիչո՛րին շատ հիվանդ է»: Երկու տող ներքև. «Ինձ ամեն ինչ պատմում է: Իրար գրեթե ամեն օր ենք տեսնում: Շատ ենք ընկերացել: Գիտի, որ շատ ժամանակ չի մնացել իրեն: Բուժվել չի ուզում: Ինչի՞ն է պետք, եթե որևէ պատրանք չունի: Ինձ ասում է, որ դեռ դիմանում է ոտքի վրա, որովհետև քեզնից մարդասիրական մի քայլի է սպասում: Ուրիշ բան չի ցանկանում: Քո անճոռնի ու դժբախտ քույրը քեզ նույն բանն է խնդրում: Ինձ չհիասթափեցնես: Այլ կերպ ասած՝ ներում խնդրի՛ր նրանից: Քեզ համար մի մեծ բան չէ: Ցավալի կլինի, եթե չանես»:

Այս կանայք, համա՜ թե կարողանում են նեղը գցել մեզ: Մահճակալին փռված, անջատված՝ Խոշե Մարին նայում էր պատուհանից երևացող կապույտ երկնքի քառակուսուն: Երկար ժամանակ անշարժ մնաց՝ մի տեսակ անտարբեր, ձեռքերը ծոծրակի տակ դրած: Վերջապես մտորումները վրա տվեցին: Ավելի շատ՝ պատկերները: Մեկ էլ ժամանակը մեծ արագությամբ հետ գնաց: Ասես մի կինոժապավեն լիներ, որը իր կյանքը վերջից դեպի սկիզբ էր ցույց տալիս: Հանկարծ ու դուրս էր գալիս մի բանտից ու մյուսն էր մտնում ու հետո՝ ևս մեկը, հետո նրան ծեծում էին, հետո բանտարկում, նորից զինված պայքարի մեջ էր, հետո այն անձրևոտ հետմիջօրեն էր, երբ Չատոն նրա աչքերի մեջ նայեց, այն փաբը, որտեղ առաջին անգամ մարդ սպանեց, Ֆրանսիան, ավանը, ու երբ հասավ տասնինը տարեկան հասակին, բոլոր մտային արագընթաց պատկերները կտրուկ կանգ առան: Այդժամ Խոշե Մարին պատկերացրեց մեկ այլ ճակատագիր, որը պսակվում էր իր կյանքի մեծ երազան-

քի կատարմամբ՝ Բարսելոնայի հանդբոլի ակումբի հետ պայմանագիր կնքելով:

Եզրակացրեց, որ ներողություն խնդրելու համար ավելի մեծ քաջություն է պետք, քան զենքով կրակելու, քան ական պայթեցնելու: Դրանք ով ասես՝ կանի: Հերիք է լինել երիտասարդ, դյուրահավատ ու տաքարյուն: Ու միայն արիությունը բավարար չէ՝ կատարածդ վայրենություններն անկեղծորեն ուղղելու համար (թեկուզև միայն բառերով): Խոշե Մարիին ուրիշ բան էր կանգնեցնում: Ի՞նչը: Ի՞նչ իմանամ: Դե՛, լա՛վ, քաքլանի՛ մեկը, խոստովանի՛ր: Դե՛, գրո՛ղը տանի, բա որ պառավը բռնի ու նամակը մի լրագրողի ցույց տա, ու սկսվի էն ապաշխարած ահաբեկչի դասական կրկեսը, հետո էլ ավանում իր մասին վատ խոսեն ու լուսանկարը հանեն «Առանո» խորտկարանի պատի վրայից: Մայրը պարզապես կուշաթափվի:

Շրջանն ամբողջացավ

Ամպամած հետմիջօրե էր: Բիչո՛րին դուրս նայեց պատշգամբից՝ հասկանալու համար, թե ծովը ինչ եղանակ է խոստանում: Հորիզոնը ծայրից ծայր մթագնած էր: Ուժեղ անձրև էր գալիս, դու մենակ չես բարձրանա Պոլյոե, ես քեզ մեքենայով կտանեմ: Առավոտվա կողմ երբեմն ծիկրակում էր արևը: Հրապարակի անկյունում Բիչո՛րին սովորականի պես զրուցեց Արանչայի հետ: Կեսօր չեղած՝ նստեց ավտոբուս ու դեռ տուն չէր հասել, երբ երկնքից այնքան ջուր թափվեց, որ էլ չասած: Այդ պահից ի վեր անձրևը չէր դադարում:

Շավիերը հեռախոսով հարցրեց.

— Ի՞նչ մի գերեզմաններ գնալու օր է այս եղանակին:

— Կարևոր բաներ ունեմ Չատոյին պատմելու:

— Ama, խնդրում եմ, վե՛րջ տուր այդ խաղերիդ:

Ժամը չորսին եկավ մոր հետևից՝ անձրևանոցի ուսերը թաց: Բիչո՛րին արդեն պատրաստ էր: Հովանոցը վերցրեց ու նամակը գրպանը դրեց: Այս կնոջ աչքերում անընդհատ երջանկություն է կայծկլտում: Ու եթե երջանկություն էլ չէ, ապա ուրախություն: Շավիերը գիտի պատճառը: Երեկ երեկոյան երեքով հավաքվել էին: Ներեան անհանգստացած հարցրեց շտապ հավաքվելու պատճառը: Զավակների դեմքերը մտահոգ մռայլվում էին: Իսկ մայրը, չթաքցնելով էյֆորիան, նրանց ցույց տվեց նամակն ու կարդաց:

— Սա՞ էիր այդքան ցանկանում:

— Այո՛, հենց սա էր, աղջի՛կս:

— Դե՛, ի վերջո եղավ: Շնորհավո՛ր:

Հիմա իմանալու հերթը Չատոյինն է: Աստիճանահարթակին Շավիերը նկատեց, որ մայրը հողաթափերով էր տնից դուրս գալիս:

— Էլի լավ է, որ նկատեցիր:

Ճանապարհին ժամանակ առ ժամանակ Շավիերը, մեկ վայրկյանով հայացքը հեռացնելով երթևեկությունից, Բիչո՛րիին էր նայում: Իսկապես նրանով կարելի էր հիանալ՝ հաշվի առնելով, թե որքան հիվանդ էր: Իսկ դիմապակու մաքրիչները, չը՛խկ-չը՛խկ, իրենց գործն էին անում:

Բիչո՛րին ասաց.

— Նայում եմ այս անձրևին, ու չես կռահի, թե ինչի մասին եմ մտածում:

— Որ նույնպիսի անձրև էր գալիս, երբ aita-ին սպանեցին:

— Ի՞նչ իմացար:

— Դրանից հետո շատ անգամ է պատահել՝ նույն ուժգնությամբ անձրևի:

Մորն իջեցրեց գերեզմանոցի մուտքին հնարավորին չափ մոտ: Ջրհեղեղի հետմիջօրե էր: Բիչո՛րին իջավ դանդաղ, անճարակ շարժումով, ո՞վ գիտե, գուցե թաքցրած որովայնացավի պատճառով: Շավիերը հարցրեց՝ գուցե ցանկանում է, որ ուղեկցի՞ իրեն: Ո՛չ: Իսկ մորն այստե՞ղ պիտի սպասի: Դե՛, ինչպես կցանկանա, բայց ես առնվազն կես ժամ պիտի մնամ: Մոր ու որդու խոսակցության ընթացքում մեջընդմեջ միջամտում էին կաթիլները, որոնք կտրուկ չլմփոցով խփվում էին գետնին կամ ավելի աշխույժ հնչելով՝ ցատկում էին Բիչո՛րիի հովանոցից: Լավ է, որ գոնե քամի չկար: ՇՈՒՏՈՎ ՁԵՐ ՄԱՍԻՆ ԿԱՍՎԻ ՆՈՒՅՆԸ, ԻՆՁ ՀԻՄԱ ՄԵՐ ՄԱՍԻՆ ԵՆ ԱՍՈՒՄ. ՄԱՀԱՑԵ՛Լ ԵՆ: Չարագույժ ու պարզունակ մի գրություն: Բայց դե՛, մարդիկ դիմադրում են մոլորակին վերադարձնել նրանից ժամանակավորապես վերցրած ատոմները: Փաստորեն, տարօրինակն ու բացառիկը ողջ լինելն է: Շավիերը սպասեց մինչև սևազգեստ մայրը մտնի գերեզմանոց, միայն հետո մեքենայի համար կայանատեղի փնտրեց:

Թեև Բիչո՛րին ցելոֆանի քառակուսին ու գլխաշորը վերցրել էր, բայց ինչի՞ պիտի ծառայեին: Ինչպե՞ս պիտի նստեր թաց քարասալիկների վրա:

— Չատո՛, Չատիտո՛, չե՞ս լսում: Քեզ սպանելու օրվա նման է անձրևում: Քեզ համար այսօր նորություններ ունեմ:

Ու գերեզմանի առջև ոտքի վրա, հովանոցով պատսպարված, պատմեց, որ առանց Արանչայի, առանց նրա մեծահոգի միջամտության՝ չէր կարողանալու ավարտին հասցնել իր գործը: Արանչան փափկեցրեց ահաբեկչին, նրան համոզեց այդ քայլն անել: Բայց ինչպե՞ս: Դե՛, որովհետև սիրում է եղբորը: Իր եղբայրն է, հասկանում եմ: Բայց Արանչան չի արդարացնում նրա արածը: Հակառակը՝ այս ու այն կողմ չընկնելով, խիստ դատապարտում է: Բայց նա իր եղբայրն է: Արանչան փորձում է բոլոր հնարավոր միջոցներով նրան ազատագրել հենց իրենից, պոկել իր դաժան անցյալից: Եվ երբ իմացավ հեռավոր բանտում եղբոր խղճի խայթի մասին, իր iPad-ով ինձ գրեց. «Մի բան մեջը փոխվում է: Շատ է մտածում: Լավ նշան է»:

Բայց նաև ասաց, որ Խոշե Մարին վախենում է:

— Գրազ գա՞նք՝ չես պատկերացնում, թե ինչ է մտքով անցել:

Խոշե Մարին որոշել էր ներողության բացահայտ խնդրանք ուղարկելու փոխարեն Բիչո՛րիին սիմվոլիկ մի բան ուղարկել: Երևի թե շատ միայնակ է այդ տղան, լա՛վ, արդեն տղամարդը, որն առաջ ոչ մի բանի մասին չէր մտածում, իսկ հիմա, երևում է, չափից շատ է մտածում: Արանչան եղբորը նախապես տեղեկացրել էր, որ Բիչո՛րին ամենևին չի հավանելու այդ գաղափարը:

— Իհարկե, չհավանեցի: Այս ամենը երկու շաբաթ առաջ էր: Ների՛ր, որ չկարողացա գալ քեզ մոտ: Բայց այս նորությունների ու իմ ցավերի արանքում գերեզմանոց բարձրանալու հնարավորություն չունեի:

Խոշե Մարին ուզում էր (համա՛ թե մտքեր են) ինչ-որ բան ուղարկել: Ի՞նչ: Չեմ էլ պատկերացնում: Մի բան, որ կտեղավորվեր ծրարի մեջ: Մի լուսանկար, մի գծանկար: Այսինքն՝ Խոշե Մարին փոստով ուղարկածով իբր ներողություն էր խնդրելու:

— Արանչային ասացի, որ ես արդեն նման խաղեր չեմ խաղում: Նա էլ ինձ iPad-ով գրեց, որ եթե իմ տեղը լիներ, նույն բանը կասեր: Խնդիրն այն է, որ այդ խորամանկը վախենում է, որ եթե ինձ ներողությունով նամակ ուղարկի, ես վազելով մամուլին եմ փոխանցելու: Հապա դրա մտքերը տե՛ս: Այդքան տարիներ բանտում անցկացնելու պատճառով երևի մի քիչ խելքը թռցրել է: Իմ մտքով իսկ չէր անցել խոսել լրագրողների հետ: Վերջին բանն է, որ կարող էի ցանկանալ՝ հայտնվել թերթերում, ու որ գային իմ տուն՝ ինձ լուսանկարելու ու հարցեր տալու:

Այդ պատճառով Բիչո՛րին մերժել էր առաջարկը: Քիչ ժամանակ անց Արանչան հարցրեց՝ կարո՞ղ է Խոշե Մարիին վստահեցնել, որ նամակը գաղտնի կպահի: Խոստացավ նեղանալով, որ որևէ մեկը կարող է կասկածել իր ազնվությանը: Ու երեկ առավոտյան նամակը ստացավ:

— Կուզե՞ս՝ կարդամ:

Կարդաց (համարյա անգիր էր արել).

«Kaixo, Բիչո՛րի.

Քրոջս խորհրդով եմ քեզ գրում: Ես քչախոս եմ, այնպես որ կարևորն ասեմ: Քեզնից ու քո զավակներից ներողություն եմ խնդրում: Շատ եմ ցավում: Եթե *կարողանայի* ժամանակը հետ դարձնել, կանեի: Բայց չեմ կարող: Ներողությո՛ւն: Երանի կարողանաս ներել ինձ: Ես կրում եմ իմ պատիժը:

Լավագույն մաղթանքով՝ Խոշե Մարի»:

Անձրևը թափվում էր գերեզմանների ու ասֆալտապատ ճանապարհի վրա, որը եզերված էր ծառերով: Թաց շիրմաքարեր, ու լռության թարմ հոտ: Խիտ ամպերը ճախրում էին քաղաքի ու ավելի անդին՝ սարերի ու հեռավոր ծովի վրա: Ու ամբողջ գերեզմանոցում մարդու նշույլ չկար:

— Լա՞վ է, չէ՞: Այդ բառերի կարիքը շատ էի զգում, դե՛, ինձ գիտես, Չատո՛: Շուտով քեզ կմիանամ: Հիմա գիտեմ, որ խաղաղ եմ գալու քեզ մոտ: Մինչ այդ գերեզմանս տաքացրո՛ւ, ինչպես ժամանակին անկողինս էիր տաքացնում: Լա՛վ, գնամ, Շավիերը ինձ է սպասում: Երեխեքն արդեն գիտեն, որ երբ հնարավոր լինի, պետք է ավան տեղափոխեն մեզ: Այնպես որ, այդ կողմից կարող ես հանգիստ լինել: Հուսանք, որ իմ թաղման օրը այսօրվա պես անձրև չի գա: Թե չէ խեղճերը ոտքից գլուխ կթրջվեն: Նույնը՝ ծաղիկները:

Շավիերը մեքենայից իջավ ու ձեռքով ցույց տվեց մորը՝ որտեղ է մեքենան՝ մի երեսուն մետր ներքև: Դեռ անձրևում էր: Հարցրեց՝ կուզի՞ մի տեղ գնալ: Ո՛չ, տուն:

— Aita-ն քեզ բարևում է:

— Քեզ ու քեզ խոսելով՝ լավ ես զգում, չէ՞:

— Ինձ մխիթարում է: Մեկ է, ինձ ոչ ոք չի լսում: Բայց եթե պատահաբար կարծում ես՝ ցնդել եմ, գուցե սխալվում ես:

— Ես այդպիսի բան չասացի:

— Քանի չեմ մոռացել. Չատոն հարցնում է՝ ե՞րբ ես ամուսնանալու: Ասում է՝ արդեն ժամանակն է:

Մեքենայի մեջ լռություն տիրեց: Կանգնեցին կարմիր լույսի տակ գորշ, մառախլապատ փողոցում, ու Շավիերը նորից նայեց մորը:

— Գիտես, հիմա հաստատ կարծում եմ, որ ցնդել ես:

Լուսացույցի կանաչը փայլատակեց, ու Բիչո՛րին քրքջաց:

Թրջվածություն

Հետմիջօրե, ամպամած երկինք: Ճաշելուց հետո Միրենի տան առօրյան շարունակվում է: Միրենը նոր էր ավարտել փրփրան սպունգով ամանները լվանալը: Գոգնոցը կախեց դռան հետևը՝ մեխին, խոհանոցի պատուհանից դուրս նայեց՝ տեսնելու՝ անձրևը դադարե՞լ է: Ուժեղ անձրև էր գալիս, այդ պատճառով ճաշասենյակում աղջկան հայտնեց՝ այսօր չես կարող դուրս գալ:

— Ճիշտ կլինի՝ զանգես Սելեստեին, որ անիմաստ չգա-հասնի:

Խոշիանը՝ քնատ, լուռ, խոհանոցում մի լաթով ամաններն էր չորացնում:

Արանչան էլ՝ ձևացնելով, թե չի լսում մորը, iPad-ի էկրանին տառեր էր սեղմում:

— Էդ ի՞նչ ես գրում:

Գրածը ցույց տվեց մորը. «Մի բան կա, որ պիտի իմանաս, թեև հաստատ դուր չի գա քեզ»:

Միրենը կասկածանքով ասաց.

— Եթե այն կնոջ հետ է կապված, բան չպատմես: Դրա ինչն եմ ասել, քիչ է մնում՝ նրան մի օր հետդ տուն բերես:

Ձղային մատն ավելի արագ սկսեց գրել. «Մեր տանը միայն դու չգիտես»:

— Ի՞նչը չգիտեմ: Ինչի՞ մասին ես խոսում: Կարո՞ղ ես թատրոն չսարքել:

«Խոշե Մարին նրանից ներողություն է խնդրել»:

— Լսի՛ր, Խոշիա՛ն, դու դա գիտեի՞ր:

— Ի՞նչը:

— Հիմար մի՛ ձևացիր: Խոշե Մարիի մասին:

— Իհարկե: Արանչան նախքան ուտելը պատմեց:

— Ու ինչո՞ւ բան չես ասել ինձ:

— Ի՞նչ տարբերություն: Հիմա չե՞ն ասում քեզ:

Միրե՛ն, Միրե՛ն, իրոք, անսպասելի էր: Ինչ-որ բան էր ասում ատամների արանքից, հայհոյո՞ւմ էր: Չի՛ կարող պատահել, չէր հավատում: Այս հիմարները մի բան սխալ են հասկացել:

— Տասն օր առաջ իր մոտ էի: Ինձ բան չի պատմել:

Եկեղեցու զանգերը՝ տխուր ու գորշ, ժամը երեքն ազդարարեցին: Տիպ-տիպ-տիպ. Արանչայի նյարդային մատը խփում էր գոգը դրած iPad-ի էկրանին: «Չի համարձակվում քեզ ասել: Վախենում է քեզնից»:

Հոգնելով վիզը ձգելուց ու նոր բացահայտումներ կանխազգալով՝ Միրենն աթոռը մոտեցրեց անվասայլակին: Կազմուպատրաստ նստած էր. հիմա թող ամեն ինչ պատմեն: Իր բառերում ո՛չ դառնություն կար, ո՛չ էլ բարկություն: Բայց նեղացած էր, ու դրա պատճառով դիմագծերը լարված էին: Էկրանին իրար հետևից հայտնվող նախադասությունները մեկը մյուսից ավելի վիրավորական էին Միրենի համար:

«Նամակի մեջ նրանից ներողություն է խնդրում: Բիչո՛րին այսօր առավոտյան նամակը կարդաց ինձ համար»:

— Իսկ եթե հենց ի՞նքն է գրել նամակը: Բոլորը գիտեն, որ գիժ է:

«Խոշե Մարիի ձեռագիրը գիտեմ: Եղբայրս մեր ընտանիքում միակը չէ, որ ներում է խնդրել»:

— Էլ ո՞վ:

«Խոհանոցում հարցրո՛ւ»:

— Լսի՛ր, Խոշիա՛ն, հենց հիմա այստեղ արի՛: Տեսնենք, գուցե ինձ բացատրե՞ս՝ այդ ինչեր եք արել իմ թիկունքում:

Խոշիանը ճաշասենյակ մտավ՝ ձեռքերը հագուստին չորացնելով: Առանց հուզվելու, պարզ, ազատ ու վճռական, անկեղծ պատմեց եղածն ու գնաց սիեստա անելու:

Միրենը դիմեց աղջկան.

— Ուրի՞շ:

«Այդքանը»:

Ավելի ուշ, երբ մեկն անկողնում էր, մյուսը հեռուստանորություններ էր նայում, Միրենը որոշեց դուրս գալ: Կարիք չեղավ պատասխանել «Ո՞ւր ես գնում» հարցին, հրաժեշտ տալ էլ պետք չէր, ոչ էլ ուրիշ բան: Ննջասենյակ չմտնելու համար (դե՛, արի՛ ու իմացի՛ր, մեկ էլ Խոշիանն ու արթնանա) տան հագուստով դուրս եկավ փողոց: Դուրս գալիս դուռը զգուշավոր, ցավագին մի չխկոցով փակեց, որը բոլորովին նման չէր իրեն հատուկ զայրացած շրխկոցին:

Մսի խանութը փակ էր: Նորմալ էր. դեռ ժամը չորսը չկար: Ներսում լույս նկատեց ու մտավ (առաջին անգամ չէր) միջանցք: Խուանին կհասկանա

ինձ: Եթե ոչ նա, ապա էլ ո՞վ: Լուռ կիսախավարում տարածված էր ճարպի, մսի, երշիկի բույրը: Հարևանները, հուսանք, ընտելացել են այդ բույրին: Սեղմեց զանգի կոճակը, որը ճղճղան, աղաղակող ձայն արձակեց: Ամենայն հավանականությամբ հիմա դուռը կբացվի, ու կհայտնվի Խուանին՝ ընկերուհուն լսելու տրամադրությամբ: Միրենը պետք է ամեն գնով լիցքաթափվի, բառերին ազատություն տա:

Բայց ոչ: Դուռը փակ էր:

— Ո՞վ է:

— Ես եմ:

— Ո՞վ:

— Ես եմ՝ Միրենը:

Ներսից ասացին, որ մեկ րոպե սպասի: Ի՞նչ տարօրինակ է: Եթե ներսն ես, ի՞նչն է խանգարում դուռը բացելուն: Երբ տեսավ հերարձակ ընկերուհուն, գլխի ընկավ, որ նա մենակ չէ: Կարճ մնաց: Բարևեց տղամարդուն, որը չնայած տարիքին, լավ էր պահպանված: Ուրեմն, այս երկուսը միասի՞ն են: Անհարմար իրավիճակից դուրս գալու համար մի քիչ սա գնեց, մի հարյուր գրամ էլ՝ այն մյուսը:

— Կներես՝ այս ժամին գալուս համար, մինչև հիմա շատ զբաղված էի: Վաղը կվճարեմ:

— Մի՛ անհանգստացիր, ա՛յ կնիկ:

Դուրս եկավ փողոց՝ հետմիջօրեի անդուր եղանակին ու ջրափոսերին ընդառաջ: Նախքան եկեղեցի մտնելը՝ տոպրակը՝ գնած մսեղենով, նետեց աղբաման: Ոտքից գլուխ թրջված՝ նստեց նստարանին՝ իր սովորական տեղում: Խորանի տակ վառվում էին հիշատակի մոմերը: Որքա՜ն է իր կյանքում դրանք վառել՝ մտածելով տան բարեկեցության մասին, երկնային հովանավորություն խնդրելով իր երեխաների համար:

Եկեղեցին դատարկ էր, Միրենն էլ՝ թրջված: Եթե տերտերը հայտնվի, դուրս կգամ: Որևէ մեկի հետ խոսելու ցանկություն չուներ: Միայն՝ Լոյոլացի սրբի քանդակի հետ, որ այնտեղ էր՝ վերևում՝ պատվանդանին: Լա՛վ է, Իգնասիո՛, շատ լավ է: Համա՛ թե ինձ քաշեցիր: Վերջում ես եմ վատը դուրս գալու:

Նրան դառը կշտամբանքներ ուղղեց: Բարձրաձա՞յն, շշուկո՞վ: Ո՛չ, ինչպես միշտ, մտքում: Կասկածի տակ դրեց սրբի՝ մեծ հովանավոր լինելու կարողությունը: Սխալ ճանապարհ ես ընտրել: Հապա ասա՛՝ ինչո՞ւ մենք պիտի ներողություն խնդրենք: Բա GAL-ի հանցանքները՝ ի՞նչ: Որևէ մեկը դրա

համար ներողություն խնդրե՞լ է: Բա զորանոցներում ու կոմիսարիատնե-րում խոշտանգումների, բանտարկյալներին տարբեր բանտերով ցրելու ու բասկ ժողովրդին ճնշելու ու տարբեր վատ բաների համար խնդրե՞լ են: Ու եթե մեր արածն այդքան վատ էր, ինչո՞ւ մեզ ժամանակին չկանգնեցրիր: Թույլ ես տալիս, որ անենք, ու հետո պարզվում է, որ զոհաբերությունը ոչ մի բանի համար էր, որ հազարավոր բասկերս, որ սիրում ենք մերը, հի-մարների պես սխալվել ենք: Լա՜վ էլի, Իգնասիո՛, ամո՛թ է: Աղջկաս ոտքի կանգնեցրո՛ւ, տղայիս բանտից հանի՛ր, թե չէ այլևս երբեք քեզ հետ չեմ խոսի: Թո՛ւ, չե՞ս տեսնում, որ ես էլ եմ տառապում:

Վեր կացավ: Նստարանին, որին տասը-տասնհինգ րոպե նստած էր, խո-նավ մի օղակ մնաց: Եկեղեցում ցուրտ էր: Ու հանկարծ Միրենը կտրուկ դող զգաց: Վա՜յ Աստված, չհիվանդանամ հանկարծ: Դուրս եկավ փողոց, ու էլի անձրև էր գալիս: Երկինքը մթագնած էր, լույսը՝ քիչ, փողոցները՝ դատարկ: Աչքն ընկավ աղբամանին: Մսեղենով տոպրակը դեռ այնտեղ էր: Հանեց ու հետը տարավ տուն, որովհետև չենք կարող ուտելիքը ոչուփուչ անել:

Կիրակի առավոտ

Արդեն մի քանի շաբաթ կատվին չեմ տեսնում. Բիչո՛րին նախօրեին որոշել էր, որ եթե առավոտ արթնանա ու տեսնի, որ իրիկվա յոթին պատշգամբում թողած երկու կերակրամանները՝ մեկը ջրով, մյուսը՝ կերով, ձեռք տված չեն, ուրեմն Իկացային կորած կիամարի: Այսինքն՝ ի՞նչ պիտի աներ: Դե՛, կտըխրեր և ոչ միայն կերակրամանները կնետեր աղբաման, այլև ճանկերը քերելու ուղղահայաց հարմարանքը, որպես զուգարան ծառայող քարերով սկուտեղը, խոզանակը, մի խոսքով՝ կենդանու բոլոր պարագաները: Նախ և առաջ դեռ գիշերանոցով դուրս եկավ պատշգամբ: Ուսումնասիրեց պարզկա երկինքը, ծովի լայն շերտը, Սանտա Կլարա կղզին, Ուրգուլ սարն ու իրեն արտոնյալ համարեց, որ այդտեղ է ապրում: Չէ՞ որ իր օթյակից տեսարան է բացվում ծովախորշի վրա, թեև դիմացի տունը փակում է լողափի մասը: Հետո նայեց դեպի անկյուն ու տեսավ, որ կերակրամանները ձեռք տված չեն:

Դեռ առավոտվա յոթը չկար, երբ Միրենը զգաց, որ Խոշիանը հեծանիվը խոհանոց է մտցնում: Կիրակի է: Ի՞նչ ապուշ սովորություն է տան ներսում լաթով մաքրելն ու յուղելը: Մի օր ամուսինը նրան հարցրեց (կատակո՞վ), թե իրեն խանդո՞ւմ է հեծանվի պատճառով: Դե՛, հնարավոր է, որովհետև, ճիշտն ասենք, այդ մարդը նրան վերջին անգամ ե՞րբ է շոյել: Հիսո՛ւս քեզ Քրիստոս, նույնիսկ հղիացնելու ժամանակ չէր շոյել: Նրա քնքշանքը տարածվում է միայն հեծոյի, բարի գինու սափորի ու հողամասի վրա: Միրենը չուզեց անկողնուց վեր կենալ, որ խոհանոցում չհանդիպի նրան: Չէր ուզում հետը խոսել: Շատ վատ էր քնել: Ինչո՞ւ: Երաժշտության, հրավառության ու քեֆչիների պատճառով, որոնք ամբողջ գիշեր փողոցում աղմկում-աղաղակում էին: Առաջ սիրում էր ավանի տոնախմբությունները: Հիմա՝ ավելի ու ավելի քիչ: Չը՛խկ: Լսեց դռան փակվելու ձայնը: Խոշիանը դուրս եկավ: Ո՞ւր, ասաց, պիտի գնար: Պատկերացում չունեմ: Սավանների տակ կուչ եկած՝ Միրենը սպասեց հինգ րոպե՝ չլինի՞ Խոշիանը մի բան մոռացած լինի ու վերադառնա: Հետո անշտապ վեր կացավ:

Բիչո՛րին սրճեփի մեջ նախորդ օրվա մնացորդ գտավ: Ինքն իրեն ասաց, որ մի քիչ կաթով ու ծորակի ջրով մեկ բաժակի կհերիքի: Տաքացրած

սուրճ ու մի քիչ չոր հացի փշուր. սա էր իր ամբողջ նախաճաշը: Սենյակը կարգի բերելուց ու լողանալուց հետո Իկացայի իրերը հավաքեց ցելոֆանե տոպրակների մեջ: Սկզբից մի մասը նետեց աղբաման, հետո՝ մնացածը: Հետո տուն վերադարձավ՝ պայուսակը ու կերակուրի տուփը վերցնելու: Մեջը դրել էր կարտոֆիլով, պղպեղով ու տոմատի թանձրուկով եփած մսի մի բաժին, քանի որ նախատեսել էր կեսօրվա ճաշն ավանում ուտել: Փողոցով քայլելիս մի տեսակ տարօրինակ բան զգաց: Ցավեր չուներ, բայց մշտական գլխապտույտ էր զգում, այնպես որ մինչև ավտոբուսի կանգառ հասնելը ստիպված էր մի քանի անգամ կանգնել՝ շունչ քաշելու ու ուժերը վերականգնելու համար:

Սելեստեն ժամը իննին մտավ բնակարան: Բանալի ունի: Զանգը տալու կարիք չկա: Տարիների ընթացքում գրեթե ընտանիքի անդամի է վերածվել: Գալիս է, բարևում է, ուրախություն սփռում ու միանգամից զբաղվում խնամողի իր պարտականություններով: Օրվա առաջին գործը՝ Արանչային ցնցուղի տակ լողացնել: Ինչ կարողանում է ոտքի մնալ, առողջ ձեռքով բռնվելով պատի բռնակից, նրան լողացնելը ավելի հեշտ է դարձել: Միրենն ու Սելեստեն ծայրահեղ զգույշ են: Մեկը պահում է, մյուսն օճառում է Արանչային: Արդեն վարժվել են: Հինգ րոպեից ավելի չի տևում: Ու հետո երկուսով չորացնում են նրան: Մինչ չորացնում էին գունատ, գիրացած մարմինը, Արանչան անսպասելի ասաց՝ ama: Միրենը շտապ անջատեց ֆենը: Նրան թվաց, թե ականջին է լսվել: Քանի որ, պարզ է, չէր կարող վստահ լինել ֆենի աղմուկի պատճառով: Արանչան կրկնեց բառը: Նրա ձայնը և՛ նման էր, և՛ նման չէր իր նախկին ձայնին: Ամեն դեպքում ձայն էր: Հասկանալի մի ձայն: Սելեստեն նրան քաջալերեց ուրախ բացականչություններով: Միրենը հիշեց, որ փոքր ժամանակ Արանչայի առաջին բառը «ama» էր, որն ավելի շուտ արտասանեց, քան «aita»:

Տասն անց մի քիչ Բիչո՛րին իջավ ավտոբուսից: Երաժշտություն էր լսվում: Որտեղի՞ց: Ոչ հեռու տեղից: Ու տների ճակատները թղթե ծաղկաշղթաներով էին զարդարված: Նորմալ է, չէ՞, որ մարդիկ զբաղվում են ապրելով: Նախևառաջ ուղղվեց դեպի իր տուն: Հիմնականում՝ կերակուրի տուփից ազատվելու համար: Տան անկյունում հանդիպեց փողային մի նվագախմբի, որի երաժիշտները խմբված էին նույն տեղում, որտեղ հեռավոր մի օր իր ամուսինը չորս փամփուշտ ստացավ: Բո՛ւմ-բո՛ւմ: Կանաչ վերնաշապիկներ, սպիտակ տաբատներ: Իսկ մեծ թմբուկ խփողը,

դեմքը կարմրած ալկոհոլային երջանկությունից, կարծես նպատակ էր դրել իր գոչուն հարվածներով ոչնչացնել մյուս երաժիշտների նվագածը: Եվ այդպես շարունակ, մինչև երաժշտությունն ավարտվեց: Բիչո՛րին ճարահատյալ մայթից փողոց իջավ՝ նրանց շրջանցելու համար: Շաղակրատող խմբից ուրախ ձայն լսվեց՝ Aupa*, Բիչո՛րի: Նա կանգ չառնելով նույն կերպ պատասխանեց: Մի պահ նայեց նրանց կողմ, բայց չտեսավ, թե ով էր իրեն ողջունողը:

Միրենը շտապեցրեց նրանց: Սպասում էր Խոշե Մարիի կիրակնօրյա զանգին: Տղայի հետ խոսելիս սիրում է մենակ լինել: Դիմելով Սելեստեին՝ խնդրեց, որ աղջկան զբոսանքի տանի: Կապույտ երկինք, առավոտ, փողոցներում՝ տոնախմբություն: Հապա՛, հապա՛, գնացե՛ք ըմբոշխնելու: Վերջապես հեռախոսը զնգաց: Հինգ րոպե. ընդամենն այդքան են թույլ տալիս բանտարկյալին: Ա՜խ, եթե Միրենն ինքը կարողանար զանգահարել, բայց դրսից զանգերն արգելվում են: Խոշե Մարիից չթաքցրեց իր հրճվանքը. Արանչան լրիվ հասկանալի արտաբերել է «ama» բառը, հիմա կսովորի խոսել: Ու Խոշե Մարին նույնպես հուզվեց՝ իրեն հատուկ զուսպ ձևով: Նորություններ կա՞ն: Ոչ մի բան: Դե՛, մի բան կա: Բժշկի հետ խոսելուց հետո որոշել է վիրահատել թութքը: Էլ չի դիմանում: Ու հիմա, երբ այստեղ՝ հարավում, շոգերը վրա են տվել, տառապանքն աննկարագրելի է: Միրենն ակնարկեց ավանի տոնախմբությունը, բայց շատ չմանրամասնեց, որպեսզի տղան հետո չընկնի տխուր մտածմունքների մեջ: Դրա փոխարեն կրկնեց, որ Արանչան ցնցուղ ընդունելիս ասել է «ama»: Ու հինգ րոպեն սպառվեց:

Ավանի իր տանը Բիչո՛րին միկրոալիքային վառարան չուներ: Կերակուրի տուփի պարունակությունը շրջեց մի հին, բայց դեռ պիտանի կաթսայի մեջ ու ինքն իրեն ասաց՝ հիմա դուրս կգամ. վերադառնամ, կտաքացնեմ: Որոշեց նաև կես հաց առնել խանութից:

Այդ ընթացքում Միրենը ժամանակ խնայելու նպատակով աղացած ու տապակած միսը դասավորեց սկուտեղի վրա, վրան լցրեց բեշամել թանձրուկը ու եփած մանրացրած ծաղկակաղամբը շարեց վրան: Երբ պատարագից տուն գամ, վրան քերած պանիր կլցնեմ ու փուռը կդնեմ: Հեծանվորդն էլ, եթե ուշ գա, սառը կուտի:

---

* Aupa (բասկ.), այստեղ՝ ողջույն:

Տոնախմբություն, կիրակի, լավ եղանակ. հրապարակը լեփ-լեցուն էր: Վազվզող երեխաներ, զրուցող մարդիկ. բարերի բացօթյա սեղաննե-րի շուրջ ազատ տեղ չկար: Սաղարթախիտ լորենիները իրենց հաճելի ստվերը տարածում էին ասֆալտի վրա: Բիչո՛րին Արանչային գտավ նրա հավատարիմ խնամակալի հետ իրենց սովորական տեղում: Կռացավ, որ համբուրի իր ընկերուհուն: Մոտակայքում եկեղեցու աշտարակի զանգը հրավիրում էր ժամը տասներկուսի պատարագին: Սելեստեն շտապեց Բիչո՛րիին պատմել, որ Արանչան առավոտյան մի բառ է արտաբերել: Եր-կուսով դարձան դեպի Արանչան՝ բառը նորից լսելու ակնկալիքով: Արան-չան դժվարությամբ, բայց արտաբերեց: Բիչո՛րին հուզված բռնեց նրա ձեռքը: Ասաց, որ ի վերջո կստացվի, որ շարունակի պայքարել, ու որ ինքը սրտանց հաջողություն է ցանկանում: Արանչան իր ծուռ ժպիտով, ի նշան համաձայնության, մի քանի անգամ գլխով արեց:

Մոտ երկու ամիս էր, որ Միրենը պատարագին նստում էր ոչ իր սովո-րական տեղում: Լոյոլացի սրբի վրա բարկացած՝ անցել էր եկեղեցու աջ կողմը, բայց այսօր նորից նստեց սրբի արձանի մոտ: Դոն Սերապիոն քա-րոզում էր ծեր մարդու ձայնով, ձանձրալի, ճոռոմ, կրկնություններով: Բո-լոր պատարագները նույնն են, ինձ չհակաճառե՛ք: Նստարաններին տե-ղավորվել էին սակավաթիվ հավատացյալներ: Երիտասարդներ կայի՞ն: Այնտեղ՝ առջևում, երկու աղջիկներ էին նստած, ու վերջ: Միրենը մտովի շնորհակալություն հայտնեց սրբին խիստ, բայց կշտամբելու համեմատ ավելի մեղմ տոնով: Լավ սկիզբ է, Իգնասիո՛, բայց, ինչպես հասկանում ես, մի բան է մի բառ արտասանելը, ուրիշ բան է խոսել կարողանալը, չէ՞: Ավե-լիին ենք սպասում: Մյուսի համար էլ, խնդրում եմ, թութքի հարցը լուծի՛ր: Սա է ամբողջ խնդրածս, որովհետև տեսնում եմ, որ չես ուզում նրան բան-տից հանել: Վերջապես պատարագի ձայնն ընդհատեց իր մտորումները:

Բիչո՛րին հրապարակի անկյունում հրաժեշտ տվեց Արանչային ու Սե-լեստեին: Միրենը դուրս եկավ եկեղեցուց: Մեկը որոշել էր ժամանակ չկորցնելով մտնել հացի խանութ՝ մինչև փակվելը (եթե, իհարկե, արդեն փակ չեն), մյուսը՝ Արանչային ու Սելեստեին միանալ, գուցե հետները ապերետիվ խմել ու հետո տուն գնալ, ճաշով զբաղվել: Նրանք միմյանց նկատեցին մի հիսուն մետր հեռավորության վրա: Այդ պահին արևը Բի-չո՛րիի դեմքին էր խփում, ձեռքը ճակատին դրեց՝ պաշտպանվելով, ու, թո՛ւ, հիմա գլխի ընկած կլինի, որ տեսել եմ նրան, բայց ես ճանապարհիցս չեմ

շեղվի: Միրենը մոտենում էր կիրակնօրյա անհոգ ճեմանքով՝ լորենիների ստվերի տակով քայլելով, ու սա էլ ինձ է նայում, ու խելացին կարծում է, որ ճանապարհիցս կշեղվեմ: Ուղիղ դեմ հանդիման իրար էին մոտենում: Հրապարակում եղած բազմաթիվ մարդիկ դա նկատեցին: Երեխաները, ոչ, իհարկե, շարունակում էին վազվզել ու իրար ձայն տալ: Մեծահասակները սկսեցին իրար մեջ փսփսալ: Նայի՛ր, նայի՛ր: Այդքան էլ մտերիմ ընկերուհիներ էին:

Հանդիպումը երաժշտական կրպակի մոտ էր: Ջուսպ գրկախառնվեցին: Նախքան իրար բաց թողնելը՝ միմյանց աչքերի մեջ նայեցին: Իրար որևէ բան ասացի՞ն: Ոչ մի բան: Ոչինչ չասացին միմյանց:

Ալիս Տեր-Ղևոնդյան ծնվել է 1966թ. Երևանում: Գրականագետ է, դասախոս և թարգմանիչ, Բանասիրական գիտությունների թեկնածու, գիտական հոդվածների և մենագրության հեղինակ: Իսպաներենից հայերեն է թարգմանել Խուլիո Կորտասարի «Ցատկախաղ» և «Աստղադիտարանի արձակ» վեպերը, Կի՛նոյի «Մաֆալդան և ընկերները», արդի արգենտինացի գրողներ Դիեգո Տատյանի «Հետմիջօրե» պատմվածքների ժողովածուն, Մարիո Սամպաոլեսիի «Մալվիններ» և Աննա Արզումանյանի «Իմ անունը Հիմա է» պոետական վիպակները, ինչպես նաև ժամանակակից իսպանալեզու բանաստեղծների գործերի ընտրանիներ: Տեր-Ղևոնդյանի իսպաներեն թարգմանությամբ «Լեզուն հրդեհ է նաև. 20 հայ արդի պոետներ» բանաստեղծական ժողովածուն տպագրվել է Արգենտինայում, Մեքսիկայում և Կոլումբիայում, Լ.Խեչոյանի ու Հ. Երանյանի «Խոտերի մեջ լարը չէր երևում» պատմվածքների ընտրանին և Մ.Պետրոսյանի «Ատրճանակը կրակեց» բանաստեղծական ժողովածուն լույս են տեսել Արգենտինայում:

newmag 087

Ֆերնանդո Արամբուրու

Հայրենիք [Վեպ]

Թարգմանությունն իսպաներենից՝
Ալիս Տեր-Ղևոնդյանի

Թարգմանության խմբագիր՝
Գնել Նալբանդյան

Վերստուգող խմբագիր՝
Տաթևիկ Բաղդասարյան

Վերիֆիկանտ՝
Ավետիս Հարությունյան

Սրբագրիչ՝
Մարինե Մկրտչյան

Դիզայներ՝
Էդիկ Պողոսյան

Շապիկի լուսանկարը՝
© **Ysbrand Cosijn** / **Trevillion Images**

Հեղինակի լուսանկար
© **Ivan Giménez** / **Tusquets Editores**

Տառատեսակը՝
GHEA Narek, GHEA Aragast, հեղինակ՝ **Էդիկ Ղաբուզյան**
Վերնագրի գրությունը՝ **Էդիկ Պողոսյանի**

Տպագրության է տրվել 08.07.2022
Տպաքանակը՝ 500 օրինակ
Տպագրված է «Անտենոր» տպագրատանը
1-ին փողոց, Նոր Գյուղ համայնք, Կոտայքի մարզ 2239, ՀՀ

newmag
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Հրատարակչական ծրագրի ղեկավար՝
Արտակ Ալեքսանյան

Գլխավոր խմբագիր՝
Գևել Նալբանդյան

Գլխավոր դիզայներ՝
Էդիկ Պողոսյան

Մարկետինգի և վաճառքի ղեկավար՝
Գոհար Ալեքսանյան

Առաջխաղացման և զարգացման
ծրագրերի ղեկավար՝
Գոհար Մանուկյան

Հատուկ նախագծերի ղեկավար՝
Ավետիս Հարությունյան

«Նյու Մեգ» ՍՊԸ
Գրանցել է ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
Կենտրոնի տարածքային բաժինը 28.02.2011
Գրանցման վկայականը՝ 03Ա090961
Գրանցման համարը՝ 286.110.07868

+374 91 511 994
info@newmag.am
newmag.am

Արշակունյաց 4, 1-ին հարկ, Երևան 0023, ՀՀ